1286

22
U-76

W67

Ученику VII класса
Тифлисскаго
имени Намѣстника
Его Императорскаго Величества
на Кавказѣ
Графа И. И. Воронцова-Дашкова
Реальнаго училища
Загарянцу Григорію
Напутственное благословеніе
по случаю окончанія курса
„2" Іюня 1916 года.

Директоръ

Инспекторъ И. Поткоѣ

Законоучитель Свящ. Г. Абуладзе

220
482-ԱԱ
22
Զ-76
1004
16749-58

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳՐԱԲԱՌ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. Պետական Գրադարան
7/... 1922
Имени Мясникяна
Ա. ՄԱՍԻՍԻ ԱՆՎԱՆ
005

ԼՈՆԴՐԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿԻԼՊԵՐԴԻ ԵՒ ՐԻՒԻՆԿՊՈՆԻ

1895

2010

33417-Կ.Հ.

2001

ՅԱՆԿ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

		Էջեր
	Աւետարան	
1.	„ „ ըստ Մատթէոսի :	1
2.	„ „ ըստ Մարկոսի :	116
3.	„ „ ըստ Ղուկասու :	190
4.	„ „ ըստ Յովհաննու :	314
5.	Գործք առաքելոց :	408
	Մուղմ Պօղոսի Առաքելոյն	
6.	„ „ առ Հռովմայեցիսն :	530
7.	„ „ առ Կորնթ. առաջին :	580
8.	„ „ առ Կորնթ. երկրորդ :	629
9.	„ „ առ Գաղատացիսն :	662
10.	„ „ առ Եփեսացիսն :	679
11.	„ „ առ Փիլիպեցիսն :	696
12.	„ „ առ Կողոսացիսն :	708
13.	„ „ առ Թեսաղ. առաջին :	720
14.	„ „ առ Թեսաղ. երկրորդ :	731
15.	„ „ առ Տիմոթէոս առաջին :	737
16.	„ „ առ Տիմոթէոս երկրորդ :	751
17.	„ „ առ Տիտոս :	761
18.	„ „ առ Փիլեմոն :	767
19.	„ „ առ Եբրայեցիսն :	770
	Մուղմ Կաթուղիկեայց	
20.	„ „ Յակոբեայ :	808
21.	„ „ Պետրոսի առաջին :	821

		Էջ։
	Թուղթ Կաթուղիկեայց	
22.	„ „ Պետրոսի երկրորդ։	835
23.	„ „ Յովհաննու առաջին։	844
24.	„ „ Յովհաննու երկրորդ։	857
25.	„ „ Յովհաննու երրորդ։	859
26.	„ „ Յուդայի առաքելոյ։	861
27.	Յայտնութիւն Յովհաննու։	865

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու։
2 Աբրահամ ծնաւ զԻսահակ. Իսահակ ծնաւ զՅակովբ. Յակովբ ծնաւ զՅուդա, և զեղբարս
3 նորա։ Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա 'ի Թամարայ. Փարէս ծնաւ զԵզրոմն. Եզրոմն
4 ծնաւ զԱրամ։ Արամ ծնաւ զԱմինադաբ. Ամինադաբ ծնաւ զՆաասոն. Նաասոն ծնաւ
5 զՍաղմոն։ Սաղմոն ծնաւ զՌոսա 'ի Հռախաբայ. Ռոսա ծնաւ զՈբեդ 'ի Հռութայ. Ոբեդ ծնաւ զՅեսսէ. Յեսսէ
6 ծնաւ զԴաւիթ արքայ։ Դաւիթ արքայ ծնաւ զՍողոմոն 'ի
7 կնոջէն Ուրիայ։ Սողոմոն ծնաւ զՌոբովամ. Ռոբովամ ծնաւ
8 զԱբիա. Աբիա ծնաւ *զԱսափ։ Ասափ ծնաւ զՅովսափատ. Յովսափատ ծնաւ զՅովրամ.
9 Յովրամ ծնաւ զՈզիա։ Ոզիա ծնաւ զՅովաթամ. Յովաթամ ծնաւ զԱքազ. Աքազ ծնաւ

* 'Ի Յոյն զԱսա։ Ասա

1 Յիսուս Քրիստոսի Դաւթի որդւոյ Աբրահամի որդւոյ ծննդեան գիրքը։
2 Աբրահամը ծնաւ Իսահակին. Իսահակը ծնաւ Յակոբին. Յակոբը ծնաւ Յուդային և նորա
3 եղբայրներին. Յուդան ծնաւ Փարէսին և Զարային Թամարից. Փարէսը ծնաւ Եզրոնին.
4 Եզրոնը ծնաւ Արամին. Արամը ծնաւ Ամինադաբին. Ամինադաբը ծնաւ Նաասոնին. Նաասոնը ծնաւ Սաղմոնին.
5 Սաղմոնը ծնաւ Ռոսային Հռախաբից. Ռոսան ծնաւ Օբեդին Հռութից. Օբեդը ծնաւ Յեսսէին. Յեսսէն ծնաւ Դաւիթ
6 թագաւորին։ Դաւիթ թագաւորը ծնաւ Սողոմոնին Ուրիայի
7 կնոջից. Սողոմոնը ծնաւ Ռոբովամին. Ռոբովամը ծնաւ Աբիային. Աբիան ծնաւ Ասային.
8 Ասան ծնաւ Յովսափատին. Յովսափատը ծնաւ Յորամին. Յորամը ծնաւ Ոզիային.
9 Ոզիան ծնաւ Յովաթամին.

10 զԵզեկիա։ Եզեկիա ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ զԱմոն. Ամոն ծնաւ զՅոս-
11 իա։ Յոսիա ծնաւ զՅեքոնիա և զեղբարս նորա առ գերութեամբն Բաբելացւոց։
12 Յետ գերութեանն Բաբելացւոց ծնաւ Յեքոնիա զՍաղաթիել. Սաղաթիել ծնաւ զՕՉՕրաբա-
13 բել։ ՕՉՕրաբաբել ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵզիակիմ. Եզիակիմ ծնաւ զԱզովր։
14 Ազովր ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱքին. Աքին
15 ծնաւ զԵզիուդ։ Եզիուդ ծնաւ զԵզիազար. Եզիազար ծնաւ զՄատթան. Մատթան ծնաւ
16 զՅակովբ։ Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն Մարեմայ՝ * որում խոստացեալ զՄարիամ կոյս՝ յորմէ ծնաւ Յիսուս, որ
17 անուանեցաւ Քրիստոս։ Աբրդ ամենայն ազգք յԱբրահամէ մինչև ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք. և ի Դաւիթէ մինչև ի գերութիւնն Բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք. և ի գերութենէն Բաբելացւոց մինչև ի Քրիստոս ազգք չորեքտասանք։

18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս։ Խօսեցեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, մինչչև եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն
19 Սրբոյ։ Եւ Յովսէփ այր նորա, քանզի արդար էր, և ոչ Յօժամամբ ծնաւ Աբրահամ. Աբրահամ ծնաւ զԻսահակ. Իսահակ ծնաւ զՅակոբ. Յակոբ ծնաւ զԵզեկիա։ Եզեկիա ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ զԱմոն. Ամոն ծնաւ զՅոսիա։ Յոսիա ծնաւ զՅեքոնիա և զեղբարս նորա առ գերութեամբն Բաբելացւոց։ Յետ գերութեանն Բաբելացւոց ծնաւ Յեքոնիա զՍաղաթիել. Սաղաթիել ծնաւ զՕՉՕրաբաբել։ ՕՉՕրաբաբել ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵզիակիմ. Եզիակիմ ծնաւ զԱզովր։ Ազովր ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱքին. Աքին ծնաւ զԵզիուդ։ Եզիուդ ծնաւ զԵզիազար. Եզիազար ծնաւ զՄատթան. Մատթան ծնաւ զՅակոբ։ Յակոբ ծնաւ զՅովսէփ՝ Մարիամի մարդն, որից ծնուեցաւ Յիսուսը, որ ասի Քրիստոս։ Աբդ՝ բոլոր ազգերը Աբրահամից մինչև Դաւիթ տասնուչորս ազգ են, և Դաւիթից մինչև Բաբելոնի գերութիւնը տասնուչորս ազգ, և Բաբելոնի գերութիւնից մինչև Քրիստոս տասնուչորս ազգ։

Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն այսպէս էր. այսինքն նորա մայրը՝ Մարիամ նշանուած լինելով Յոսէփին՝ գտաւ մինչև նորանց իրար մօտ գալը Սուրբ Հոգւոյը յղացած գըտնուեցաւ։ Եւ Յոսէփ՝ նորա

18
19

* Ի Յոյնն էր։

կամէր առակել զնա, խորհեցաւ
20 լռելեայն արձակել զնա։ Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևեցաւ նմա և ասէ. Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմանէ ծնեալ է՝ ի Հոգւոյն
21 Սրբոյ է։ Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ
22 իւր ի մեղաց իւրեանց։ Զայլ այս ամենայն եղև, զի լցցի որ ասացաւն ի Տեառնէ ի ձեռն *Եսայեայ մարգարէի՝. Ահա
23 կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Իմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ
24 Աստուած։ Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն Տեառն, և առ զինքն
25 զկինն իւր։ Եւ ոչ գիտէր զնա մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և կոչեաց զանուն նորա Յիսուս։

ԳԼ. Բ

1 Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհեմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարևելից եկին Երու-
2 սաղէմ, և ասեն. Որ է որ ծնաւ

մարդը արդար լինելով, և նորան խայտառակել չուզելով, խորհեց ծածուկ արձակել նորան։ Եւ մինչդեռ նա մտածում էր այս, 20
ահա Տիրոջ հրեշտակը երազում երևեցաւ նորան և ասաց. Յոսէփ՝ Դաւթի որդի, մի վախենար էլ մօտ առնել քո կին՝ Մարիամին, վասն զի նորանում ծնուածը Սուրբ Հոգուն է։ 21
Եւ նա որդի կ՚ծնի, և նորա անունը Յիսուս կ՚դնես. վասն զի նա իր ժողովրդին կ՚փրկէ իրանց մեղքերից։ Եւ այս ամենը 22
եղաւ, որ կատարուի Տիրոջից ասուածը մարգարէի ձեռովն, որ ասում է. Ահա կոյսը կըյղանայ և որդի կ՚ծնի. և նորա անունն Իմմանուէլ կ՚կանչեն. 23
որ թարգմանվում է՝ Աստուած մեզ հետ։ Եւ Յոսէփը քնից 24
զարթնելով այնպէս արաւ, ինչպէս Տիրոջ հրեշտակը հրամայեց իրան. և առաւ իր կնիկն
էլ մօտ։ Եւ չէր գիտում նորան 25
մինչև որ նա իր անդրանիկ որդին ծնաւ. և նորա անունը կոչեց Յիսուս։

ԳԼ. Բ

Եւ երբոր Յիսուս ծնուեցաւ 1
Հրէաստանի Բեթղեհեմումը՝ Հերովդես թագաւորի օրերումը, ահա արևելքից մոգեր եկան Երուսաղէմ, Եւ ասա-

* Ի Յոյնն, մարգարէին

արքայն Հրէից. զի տեսաք
զաստղն նորա յարևելս, և եկաք
3 երկիրպագանել նմա։ Եւ իբրև
լուաւ արքայ Հերովդէս՝ խռո-
վեցաւ, և ամենայն Երուսաղէմ
4 ընդ նմա։ Եւ ժողովեալ զամե-
նայն զքահանայապետս և զդը-
պիրս ժողովրդեանն, հարցանէր
ի նոցանէ՝ թէ ուր ծնանիցի
5 Քրիստոսն։ Եւ նոքա ասեն
ցնա. Ի Բեթղեհեմ Հրէաստա-
նի. զի այսպէս գրեալ է ի ձեռն
6 մարգարէին։ Եւ դու Բեթ-
ղեհեմ երկիր Յուդայ, ոչինչ
կրտսեր ես յիշխանս Յուդայ.
ի քէն ելցէ ինձ իշխան, որ հո-
վուեսցէ զժողովուրդ իմ զԻս-
7 րայել։ Յայնժամ Հերովդէս
գաղտ կոչեաց զմոգսն, և ըստու-
գեաց ի նոցանէ զժամանակ
8 աստեղն երևելոյ. Եւ արձա-
կեալ զնոսա ի Բեթղեհեմ, ասէ.
Գնացէք ստուգեցէք վասն
մանկանն, և յորժամ գտանիցէք
ազդ արասջիք ինձ, զի և ես
9 եկեալ երկիրպագիցս նմա։ Եւ
նոքա իբրև լուան ի թագաւորէն՝
գնացին. և ահա աստղն զոր
տեսին յարևելս՝ առաջնորդեաց
նոցա, մինչև եկեալ եկաց ի
10 վերայ՝ ուր էր մանուկն։ Իբրև
տեսին զաստղն, խնդացին յոյժ
11 ուրախութիւն մեծ։ Եւ իբրև
մտին ի տուն տեսին զմանուկն
հանդերձ Մարեմաւ մօրն
իւրով, և անկեալ երկիրպագա-
նէին նմա. և բացեալ զգանձս
իւրեանց, մատուցին նմա զպատա-

ցին. Որտեղ է Հրէաների
2 ծնուած թագաւորը. վասն զի
մենք տեսանք նորա աստղը ա-
րևելքումը, և եկանք նորան
երկրպագելու։ Եւ երբոր Հե-
3 ռոդէս թագաւորը լսեց՝ շփոթ-
ուեցաւ, և բոլոր Երուսաղէմը
4 նորա հետ։ Եւ բոլոր քահանա-
յապետներին և ժողովրդի դը-
պիրներին ժողովելով՝ նորանցից
հարցրեց, թէ որտեղ պիտի
5 ծնուի Քրիստոսը։ Եւ նորանք
ասացին նորան. Հրէաստանի
Բեթղեհեմումը. վասն զի
այսպէս է գրուած մարգարէի
6 ձեռովն. Եւ դու, Բեթղեհեմ՝
Յուդայի երկիր, բնաւ փոքրա-
գոյն չես Յուդայի իշխանների
մէջ. վասն զի քեզանից իշխան
7 պիտի դուրս գայ, որ իմ Իսրա-
յէլ ժողովուրդը հովուէ։ Այն
ժամանակ Հերոդէսը մոգերին
թագուն կանչելով, նորանցից
8 ստուգեց այն երևող աստղի
ժամանակը։ Եւ նորանց Բեթ-
ղեհեմ ուղարկելով ասաց. Գնա-
ցէք ստոյգ իմացէք այն երե-
խայի համար, և երբոր գտնէք,
ինձ իմացրէք, որ ես էլ գամ
9 երկրպագեմ նորան։ Եւ նորանք՝
երբոր լսեցին թագաւորիցը՝
գնացին. և ահա այն աստղն,
որ տեսան արևելքումը, նորանց
առջև գնումէր, մինչև որ եկաւ
կանգնեց այն տեղի վերայ, ուր
10 էր երեխան։ Եւ երբոր այն
աստղը տեսան, մեծ ուրախու-
թիւնով ուրախացան շատ։ Եւ 11

բագս՝ ոսկի և կնդրուկ և զը-
12 մուռս։ Եւ հրաման առեալ ՝ի
տեսլեան չդառնալ անդրէն առ
Հերովդէս, ընդ այլ ճանա-
պարհ գնացին յաշխարհն իւր-
եանց։

13 Եւ իբրև գնացին նոքա անտի,
ահա հրեշտակ Տեառն երևեր
՝ի տեսլեան Յովսեփու և ասէր.
Արի առ զմանուկդ և զմայր իւր,
և փախիր Եգիպտոս, և անդ
լինիջիր ցորժամ ասացից քեզ.
քանզի ՝ի խնդիր * է Հերովդէս
14 կորուսանել զմանուկդ։ Եւ նա
յարուցեալ առ զմանուկն և
զմայր իւր գիշերի, և գնաց
Եգիպտոս, և անդ էր մինչև
15 ցվախճան Հերովդի։ Զի լցցի
ասացեալն ՝ի Տեառնէ ՝ի ձեռն
մարգարէին որ ասէ.

16 Յեգիպտոսէ կոչեցից զորդի
իմ։ Յայնժամ իբրև նեղս Հե-
ռովդէս թէ խաբեցաւ ՝ի մոգուց
անտի, բարկացաւ յոյժ. և ա-
ռաքեաց կոտորեաց զամենայն
մանկուանն որ էին ՝ի Բեթղեհեմ
և յամենայն սահմանս նորա՝
յերկուամեայից և ՝ի խոնարհ, ըստ
ժամանակին զոր ստուգեաց ՝ի
17 մոգուցն։ Յայնժամ կատարեցաւ

երբոր տունը մտան, * գտան
երեխային իր մայր՝ Մարիամի
հետ, և ընկած երկրպագեցին
նորան, և իրանց գանձերը բացին՝
ընծայ տուին նորան՝ ոսկի և
12 կնդրուկ և զմուռս։ Եւ երա-
զումՀրաման առնելուց չը դառ-
նալ Հերոդէսի մօտ.. Ի ուրիշ
ճանապարհով գնացին իրանց
երկիրը։

13 Եւ երբոր նորանք այն տեղից
գնացին, ահա Տիրոջ հրեշտակն
երևեցաւ երազում Յոսէփին և
ասաց. Վեր կաց վեր առ երե-
խային և նորա մօրը, և փախիր
Եգիպտոս, և մնա այն տեղ,
մինչև որ ասեմ քեզ. վասն զի
Հերոդէսը որոնելու է այդ երե-
խային որ կորցնէ նորան։ Եւ 14
նա վերկացաւ վեր առաւ երե-
խային և նորա մօրը գիշերով,
և տեղափոխուեցաւ գնաց Ե-
գիպտոս, և այն տեղ էր մինչև
Հերոդէսի վախճանը. Որ կա- 15
տարուի Տիրոջից ասուածը մար-
գարէի ձեռովը, որ ասումէ.
Եգիպտոսից կանչեցի իմ որդին։
Այն ժամանակ Հերոդէսը 16
տեսնելով թէ խաբուեցաւ մո-
գերից, շատ բարկացաւ. և ու-
ղարկեց կոտորեց այն ամեն երե-
խաներին, որ Բեթղեհեմումն և
նորա շրջակայքումն էին երկու
տարեկաններին և նորանցից ցա-
ծերը, այն ժամանակին նայելով
որ ստուգեց մոգերիցը։ Այն 17
ժամանակ կատարուեցաւ Երե-

* ՝Ի Յոյն, լինելոց

* Ըմանք՝ տեսան

ասացեալն 'ի ձեռն Երեմիայ
18 մարգարէի որ ասէ, Զայն գու-
ժեաց 'ի Հռամայ, ողբումն և
լալումն և աշխարումն յոյժ։
Հռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ
կամէր մխիթարիլ զի ոչ էին։
19 Եւ 'ի վախճանելն Հերովդի,
ահա հրեշտակ Տեառն 'ի տես-
20 լեան երևէր Յովսեփայ յԵգիպ-
տոս, Եւ ասէր. Արի՛ առ
զմանուկդ և զմայր իւր, և գնա՛
յերկիրն Իսրայէլի. զի մեռան
որ խնդրէին զանձն մանկանդ։
21 Եւ նա յարուցեալ առ զմանուկն
և զմայր նորա, և եկն յերկիրն
22 Իսրայէլի։ Եւ իբրև լուաւ
եթէ Արքեղայոս թագաւորեաց
Հրէաստանի փոխանակ Հերո-
դի հօրն իւրոյ, երկեաւ երթալ
անդր. և հրաման առեալ 'ի
տեսլեան, գնաց 'ի կողմանս
23 Գալիլեացւոց։ Եւ եկեալ բնա-
կեցաւ 'ի քաղաքին, որ կոչէր
Նազարէթ. զի լցի բան մար-
գարէիցն, թէ Նազովրեցի կո-
չեսցի։

ԳԼ. Գ

1 Յաւուրսն յայնոսիկ գայ Յով-
2 հաննէս մկրտիչ քարոզել յա-
նապատին Հրէաստանի, Եւ
ասել. Ապաշխարեցէք՝ զի մեր-
ձեալ է արքայութիւն երկնից։
3 Զի սա է վասն որոյ ասացաւ 'ի
ձեռն Եսայեայ մարգարէի, որ
ասէ. Զայն բարբառոյ յանա-
միա մարգարէի ձեռով ասածն,
որ ասում է. Զայն լսուեցաւ
Հռամայի մէջ՝ ողբ և լաց և կոծ. 18
Հռաքէլը իր որդոց վերայ լաց
էր լինում, և չէր կամենում
մխիթարուիլ, վասն զի չկան։
Եւ երբոր Հերովդէսը մեռաւ, 19
ահա Տիրոջ հրեշտակն երազում
երևեցաւ Յովսէփին Եգիպտոսում,
Եւ ասաց. Վեր կաց 20
վեր առ երեխային և նորա մօրը
և գնա Իսրայէլի երկիրը. քանզի
երեխայի կեանքը որոնողները
մեռել են։ Եւ նա վերկացաւ 21
վեր առաւ երեխային և նորա
մօրը և եկաւ Իսրայէլի երկիրը։
Եւ լսելով թէ Արքեղայոսն է 22
թագաւորում Հրէաստանի վե-
րայ իր հօր՝ Հերովդէսի տեղ,
վախեց գնալ այն տեղ, և երա-
զում պատգամ առնելով՝ գնաց
Գալիլեայի կողմերը. Եւ եկաւ 23
բնակեց այն քաղաքում՝ որ
Նազարէթ է ասվում. որ կա-
տարուի մարգարէների ձեռով
ասուածը թէ՝ Նազովրեցի կ'կո-
չուի։

ԳԼ. Գ

Այն օրերում եկաւ Յոհան- 1
նէս մկրտիչը, քարոզում էր
Հրէաստանի անապատումը, Եւ 2
ասում. Ապաշխարեցէք, վասն
զի մօտեցել է երկնքի թագաւո-
րութիւնը։ Վասն զի սա է այն 3
ասուածը Եսայի մարգարէի
ձեռովը, որ ասում է. Զայն

պատի, պատրաստ արարէք
զճանապարհ Տեառն, և ուղիղ
4 արարէք զշաւիղս նորա։ Եւ
ինքն Յովհաննէս ունէր հան-
դերձ 'ի ստևոյ ուղտու, և գօտի
մաշկեղէն ընդ մէջ իւր. և կե-
րակուր նորա էր մարախ և մեղր
5 վայրենի։ Յայնժամ ելանէին
առ նա ամենայն Երուսաղէմա-
6 ցիք, և ամենայն Հրէաստան,
և ամենայն կողմն Յորդանանու,
և մկրտէին 'ի նմանէ 'ի Յորդա-
նան, և խոստովան լինէին զմեղս
7 իւրեանց։ Եւ տեսեալ զբազումս
'ի սադուկեցւոցն և 'ի փարիսե-
ցւոց եկեալս 'ի մկրտութիւն
նորա, ասէ ցնոսա. Ծնունդք
իժից՝ Ո՞ ետցոյց ձեզ փախչել 'ի
8 բարկութենէն որ գալոցն է։
Արարէք այսուհետև պտուղ
արժանի ապաշխարութեան։
9 Եւ մի՛ համարիցիք ասել յան-
ձինս՝ թէ ունիմք մեք հայր զԱ-
բրահամ. ասեմ՝ ձեզ, Զի
կարող է Աստուած 'ի քարանցս
յայսցանէ յարուցանել որդիս
10 Աբրահամու։ Զի ահաւասիկ
տապար առ արմին ծառոց դնի.
ամենայն ծառ որ ոչ առնիցէ
զպտուղ բարի, հատանի և 'ի
11 հուր արկանի։ Ես մկրտեմ զձեզ
ջրով յապաշխարութիւն. բայց
որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է
քան զիս, և ես չեմ բաւական
բառնալ զկօշիկս նորա. նա մկըր-
տեսցէ զձեզ 'ի Հոգին Սուրբ և
12 'ի հուր։ Որոյ հեծանոցն 'ի
ձեռին իւրում. և սրբեսցէ զկալ

կանչողի անապատումը. պատ-
րաստ արէք Տիրոջ ճանապարհը,
ուղիղ արէք նորա շաւիղները։
Եւ ինքն Յովհաննէս իր հագուս- 4
տը ունէր ուղտի բրդից, և
կաշիէ գօտիկ իր մէջքին, և նորա
կերակուրն էր մարախ և վայրի
մեղր։ Այն ժամանակ դուրս 5
էին գնում նորա մօտ Երուսա-
ղէմը և բոլոր Հրէաստանը և
Յորդանանի բոլոր կողմերը,
Եւ մկրտվում էին Յորդանանի 6
մէջ նորանից՝ իրանց մեղքերը
խոստովանելով։ Եւ երբոր 7
տեսաւ որ Փարիսեցիներից և
Սադուկեցիներից շատերը գալիս
էին իր մկրտութեանը, ասաց
նորանց. Իժի զաւակներ, ո՞վ
ցոյց տուեց ձեզ փախչել այն
գալու բարկութիւնից։ Արդ 8
ապաշխարութեան արժանի պը-
տուղ արէք։ Եւ մի կարծէք ասել 9
ձեր միջումը՝ մենք հայր ունինք
Աբրահամին. վասն զի ասում
եմ՝ ձեզ, թէ Աստուած կարող է
այս քարերից որդիք յարուցանել
Աբրահամի համար։ Արդէն 10
կացին էլ ծառերի արմատին
դրած է. արդ ամեն ծառ, որ
բարի պտուղ չէ բերում, կ'կըտ-
րուի ու կրակի մէջ կ'գցուի։ Ես 11
ջրով եմ մկրտում ձեզ ապաշ-
խարութեան համար. բայց իմ
ետևից եկողն ինձանից զօրաւոր
է, որի կօշիկները վեր առնելու
ես արժանի չեմ. նա ձեզ կ'մկըր-
տէ Սուրբ Հոգով և կրակով։
Որ հոսելին նորա ձեռին է, և 12

իւր, և ժողովեսցէ զցորեանն 'ի շտեմարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով։

13 Այնժամ գայ Յիսուս 'ի Գալիլեէ 'ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել 'ի նմանէ։
14 Եւ Յովհաննէս արգելու զնա և ասէ. Ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել,
15 և դու առ ի՞նձ գաս։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Թո՛յլ տուր այժմ, զի այսպէս վայելէ մեզ լնուլ զամենայն արդարութիւն։ և ապա թոյլ ետնմա։
16 Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք և եղես զ՚Հոգին Աստուծոյ՝ զի ինքնէր իբրև զաղաւնի, և գայր 'ի վերայ
17 նորա։ Եւ ահա ձայն յերկնից որ ասէր. Դա՛ է Որդի իմ՝ սիրելի, ընդ որ հաճեցայ։

ԳԼ. Գ

1 Այնժամ վարեցաւ Յիսուս յանապատ 'ի Հոգւոյն փորձիլ
2 'ի Սատանայէ։ Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն
3 գիշեր՝ ապա քաղցեաւ։ Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա. Եթէ Որդի ես Աստուծոյ՝ ասա՛ զի քարինքս այսոքիկ հաց լի-
4 նիցին։ Դա պատասխանի ետ և ասէ. Գրեալ է թէ Ո՛չ հացիւ կ՚սրբէ իր կայը և իր ցորենը կ՚հաւաքէ շտեմարանը, իսկ յարդը կ՚այրէ անանցանելի կրակով։

13 Այն ժամանակ եկաւ Յիսուս Գալիլեայից Յորդանան Յովհաննէսի մօտ նորանից մկրտուելու։ Եւ Յովհաննէսն արգելում էր նորան և ասում. Ինձ պէտք է քեզանից մկրտուիլ. և դու ի՞նձ մօտ ես գալիս։ Եւ
15 Յիսուսը պատասխան տուաւ և ասաց նորան. Թո՛յլ տուր հիմա, վասն զի այսպէս է վայելում մեզ, որ ամեն արդարութիւն կատարենք։ Այնժամ թոյլ
16 տուաւ նորան։ Եւ մկրտուելուց յետոյ Յիսուսը շուտով դուրս եկաւ ջրից. և ահա երկինքը բացուեցաւ նորա համար, և տեսաւ Աստուծոյ Հոգուն որ վայր էր իջնում՝ աղաւնու պէս և
17 գալիս նորա վերայ։ Եւ ահա երկնքից ձայն էկաւ, որ ասում էր. Դա է իմ՝ սիրելի որդին, որին հաւանեցի։

ԳԼ. Գ

1 Այն ժամանակ Յիսուսը Հոգուն անապատը տարուեցաւ,
2 որ փորձուի սատանայից։ Եւ քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելուց յետոյ
3 սովից։ Եւ փորձիչը նորա մօտ գալով ասաց. Եթէ Աստուծոյ որդի ես, ասա որ այս քարերը
4 հաց լինին։ Դա էլ պատասխան տուաւ և ասաց. Գրուած է՝ Ոչ միայն կերցրէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ։

5 Այնժամ առեալ ածէ զնա Սատանայ 'ի քաղաքն սուրբ, և կացուցանէ զնա 'ի վերայ աշտարակի տաճարին, Եւ ասէ
6 ցնա. Եթէ Որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ աստի 'ի վայր. զի գրեալ է թէ Հրեշտակս իւրոց պատուիրեալ է վասն քո, և 'ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի երբէք
7 հարցես ընդ քարի զոտն քո։ Ասէ ցնա՝ "գարձեալ Յիսուս." գրեալ է թէ Ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո։
8 Դարձեալ առնու ածէ զնա Սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի, և զփառս նոցա, Եւ
9 ասէ ցնա. Զայս ամենայն քեզ տայց՝ եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ։ Այնժամ ասէ
10 ցնա Յիսուս. Երթ յետս իմ Սատանայ. զի գրեալ է Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես, և զնա միայն պաշտեսցես։ Ապա
11 եթող զնա Սատանայ, և ահա հրեշտակք մատեան և պաշտէին զնա։

12 Եւ իբրև լուաւ Յիսուս եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկ-
13 նեցաւ գնաց 'ի Գալիլեա. Եւ թողեալ զՆազարէթ, եկն միայն կերցրէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ։

5 Այն ժամանակ սատանան նորան առաւ տարաւ սուրբ քաղաքը, և կանգնեցրեց նորան տաճարի աշտարակի վերայ, Եւ
6 ասաց նորան. Եթէ Աստուծոյ որդի ես, քեզ այս գետնից վայր գցիր. վասն զի գրուած է՝ թէ իր հրեշտակներին կ՚հրամայէ քեզ համար, և ձեռների վերայ կ՚բարձրացնեն քեզ, որ քո ոտքը քարի չդիպցնես երբէք։
7 Յիսուսը նորան ասաց. Դարձեալ գրուած է, թէ Ա՛ի փորձիր Տիրոջը՝ քո Աստուծոյն։
8 Դարձեալ առաւ տարաւ նորան սատանան մի շատ բարձր լեառ՝ և ցոյց տուաւ նորան աշխարհի բոլոր թագաւորութիւնները և նորանց փառքը, Եւ
9 ասաց նորան. Այս ամենը քեզ կ՚տամ՝, եթէ ընկած երկրպագես ինձ։ Այն ժամանակ
10 ասաց նորան Յիսուսը. * Դէն գնա, սատանայ. վասն զի գրուած է Էէ Տիրոջը՝ քո Աստուծոյն երկրպագիր և միայն նորան պաշտիր։ Այն ժամանակ սա-
11 տանան թողեց նորան, և ահա հրեշտակներ մօտ եկան և ծառայում էին նորան։

12 Եւ երբոր Յիսուսը լսեց, թէ Յովհաննէսը մատնուեցաւ, հե-
13 ռացաւ գնաց Գալիլեա։ Եւ Նազարէթը թողած եկաւ բնա-

* 'Ի Յոյն. Յիսուս. Դարձեալ

* Ոմանք՝ յետս

ընակեցաւ 'ի Կափառնաում 'ի
ծովեզերին, 'ի սահմանս Զ-
14 բուղոնի և Նեփթաղիմայ. Զի
լցի բանն որ ասացաւ 'ի ձեռն
15 Եսայեայ մարգարէի. Երկիր
Զաբուղոնի և երկիր Նեփթա-
ղիմայ, ճանապարհ ծովու՝
յայնկոյս Յորդանանու, Գալի-
16 լեա Հեթանոսաց: Ժողովուրդ
որ նստէր 'ի խաւարի՝ եղեւ լոյս
մեծ. և որոց նստէին յաշխարհին
և 'ի ստուերս մահու՝ լոյս ծագ-
17 եաց նոցա: Յայնմ հետէ սկսաւ
քարոզել Յիսուս և ասել. Ա-
պաշխարեցէք զի մերձեալ է ար-
քայութիւն երկնից:

18 Մինչդեռ զգնայր Յիսուս ընդ
եղբ ծովուն Գալիլեացւոց, եղեւ
երկուս եղբարս, զՍիմոն զկո-
չեցեալն Պետրոս, և զԱնդրէաս
եղբայր նորա՝ արկեալ ուռկան
19 'ի ծով, քանզի ձկնորք էին: Եւ
ասէ ցնոսա. Եկայք զկնի իմ, և
արարից զձեզ որսորդս մարդ-
20 կան: Եւ նոցա թողեալ վաղվա-
ղակի * զգործսն գնացին զհետ
21 նորա: Եւ մատուցեալ անտի
յառաջ՝ եղեւ այլ երկուս եղ-
բարս, զՅակոբոս Զեբեդեայ և
զՅովհաննէս զեղբայր նորա 'ի
նաւի՝ Զեբեդեաւ հանդերձ
հարբն իւրեանց, մինչ կազմէին
զուռկանս իւրեանց, և կոչեաց
22 զնոսա: Նոցա թողեալ վաղ-
վաղակի զնաւն և զհայրն իւր-
եանց, գնացին զհետ նորա:

կեց Կափառնայում՝" ծովեզերեայ
գաղտաբնակ. Զաբուղոնի և Նեփ-
թաղիմի սահմաններումը. Որ 14
կատարուի Եսայի մարգարէի
ձեռով ասուածը, որ ասում է, 15
Զաբուղոնի երկիրը և Նեփթա-
ղիմի երկիրը՝ ծովու ճանապար-
հը՝ Յորդանանի այն կողմը,
հեթանոսաց Գալիլեան. Ժողո- 16
վուրդն, որ խաւարի մէջ նստած
էր, մեծ լոյս տեսաւ. և նորանց
որ մահի երկրումը և ստուերումը
նստած էին, լոյս ծագեց նորանց:
Այն ժամանակից Յիսուսն սկսեց 17
քարոզել և ասել. Ապաշխարե-
ցէք, վասնզի մօտեցել է երկն-
քի թագաւորութիւնը:
Եւ Յիսուսը Գալիլեացւոց 18
ծովի եզերումն գալիս՝ տեսաւ
երկու եղբարց՝ Սիմոնին որ
Պետրոս է կոչուած, և նորա
Անդրէաս եղբօրը, որ ուռկան
էին գցում ծովը, վասն զի ձկնորս
էին. Եւ ասաց նորանց. Իմ ետ- 19
եւից եկէք, և ձեզ մարդկանց
որսորդ կ'շինեմ: Եւ նորանք 20
շուտով իրանց ուռկանները թող-
ած նորա ետեւից գնացին: Եւ 21
այն տեղից առաջ գնալով ուրիշ
երկու եղբայրներին տեսաւ,
Զեբեդեան Յակոբոսին և նորա
եղբայր Յովհաննէսին նաւումն
իրանց հայր՝ Զեբեդէոսի հետ
իրանց ուռկանները շինելիս, և
նորանց կանչեց: Նորանք էլ 22
շուտով նաւն և իրանց հօրը
թողած, նորա ետեւից գնացին:

* 'Ի Յոյն, զուռկանսն

23 Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն
կողմն Գալիլեացւոց. ուսուցա-
նէր 'ի ժողովուրդս նոցա և
քարոզէր զաւետարանն արքայու-
թեան, և բժշկէր զամենայն
հիւանդութիւնս և զամենայն
24 ախտս 'ի ժողովրդեանն: Եւ ել
լուր նորա ընդ ամենայն երկիրն
Սիւրիա. և մատուցին առ նա
զամենայն հիւանդս՝ որ նեղեալ
էին 'ի պէս պէս ցաւս և 'ի տան-
ջանս, և զդիւահարս և զլուսա-
նոտս և զանդամալոյծս, և բժշկ-
25 կեաց զնոսա: Եւ երթային
զհետ նորա ժողովուրդք բա-
զումք 'ի Գալիլեէ և 'ի Դեկապո-
լեայ և Երուսաղէմ և 'ի Յուդա-
աստանէ, և յայնկոյս Յորդա-
նանու *, և բժշկեաց զնոսա՝:

ԳԼ. Ե

1 Եւ տեսեալ զժողովուրդսն ել
'ի լեառն. և իբրև նստաւ անդ՝
մատեան առ նա աշակերտք
2 նորա. Եւ բացեալ զբերան իւր
ուսուցանէր զնոսա և ասէր.

3 Երանի աղքատաց հոգւով, զի
նոցա է արքայութիւն երկնից:
4 Երանի սգաւորաց, զի նոքա
5 մխիթարեսցին: Երանի հեզաց,
զի նոքա ժառանգեսցեն զերկիր:
6 Երանի որ քաղցեալ և ծարաւի
իցեն արդարութեան, զի նոքա
7 յագեսցին: Երանի ողորմածաց,

Եւ Յիսուսը ման էր գալիս 23
բոլոր Գալիլեան՝ սովորեցնելով
նորանց ժողովարաններումը և
քարոզելով արքայութեան աւե-
տարանը, և ժողովրդի մէջ
եղած ամեն հիւանդութիւն և
ամեն ցաւ բժշկելով: Եւ նորա 24
համբաւը դուրս եկաւ բոլոր
Սիւրիա. և նորա մօտ բերին
ամեն հիւանդներին որ կերպ
կերպ ցաւերով և տանջանքնե-
րով նեղվում էին, և դիւահար-
ներ և լուսնոտներ և անդամա-
լոյծներ. և նորանց բժշկեց: Եւ 25
նորա ետեւից շատ ժողովուրդներ
էին գնում Գալիլեայից և Դե-
կապոլիսից՝ և Երուսաղէմից և
Յուդայաստանից և Յորդանանի
այն կողմից:

ԳԼ. Ե

Եւ ժողովուրդները տեսնելով 1
վեր ելաւ լեառը. և երբոր ինքը
նստեց, նորա աշակերտներն ե-
կան նորա մօտ: Եւ իր բերանը 2
բանալով նորանց սովորեցնում
էր և ասում՝.
Երանի հոգով աղքատներին, 3
վասն զի նորանցն է երկնից թա-
գաւորութիւնը: Երանի սգա- 4
ւորներին, վասն զի նորանք կ'մխի-
թարուին: Երանի հեզերին, 5
վասն զի նորանք կ'ժառանգեն
երկիրը: Երանի նորանց, որ 6
սոված և ծարաւ են արդարու-

* 'Ի Յոյն չէ:

զի նոքա ողորմութիւն գտցեն։
8 Երանի այնոցիկ՝ որ սուրբք են
սրտիւք, զի նոքա զԱստուած
9 տեսցեն։ Երանի խաղաղարա-
րաց, զի նոքա որդիք Աստուծոյ
10 կոչեսցին։ Երանի որ հալածեալ
իցեն վասն արդարութեան, զի
նոցա է արքայութիւն երկնից։
11 Երանի է ձեզ՝ յորժամ նախա-
տիցեն զձեզ և հալածեսցեն, և
ասիցեն զամենայն բան չար
12 զձէնջ սուտ վասն իմ։ Ցնծացէք
և ուրախ լերուք, զի վարձք ձեր
բազում են յերկինս. զի այսպէս
հալածեցին զմարգարէսն որ
յառաջ քան զձեզ էին։

13 Դուք էք աղ երկրի. ապա
թէ աղն անհամ՝ ի՞նչ յաղիցի.
ոչ իմիք ազդիցէ այնուհետև,
բայց եթէ ընկենուլ արտաքս,
և կոխան լինել ՝ի մարդկանէ։
14 Դուք էք լոյս աշխարհի. ոչ
կարէ քաղաք թաքչել՝ որ ՝ի
15 վերայ լերին կայցէ։ Եւ ոչ
լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ
գրուանաւ, այլ ՝ի վերայ աշ-
տանակի, և լոյս տայ ամենե-
16 ցուն որ ՝ի տանն իցեն։ Այնպէս
լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի
մարդկան, որպէս զի տեսցեն
զգործս ձեր բարիս, և փառա-
ւորեսցեն զՀայրն ձեր որ յեր-
կինս է։

թեան, վասն զի նորանք կ՚կշտա-
նան։ Երանի ողորմածներին, 7
վասն զի նորանք ողորմութիւն
կ՚գտանեն։ Երանի նորանց, որ 8
սրտով մաքուր են, վասն զի
նորանք Աստուծոյն կ՚տեսնեն։
Երանի խաղաղութիւն անողնե- 9
րին, վասն զի նորանք Աստուծոյ
որդիք կ՚կոչուին։ Երանի նո- 10
րանց՝ որ արդարութեան համար
հալածուած են, վասն զի նո-
րանցն է երկնից արքայութիւնը։
Երանի է ձեզ, երբոր կ՚նախատեն 11
ձեզ և կ՚հալածեն և ամեն չար
բան սուտ տեղը կ՚ասեն ձեր
վերայ իմ պատճառովը։ Ուրա- 12
խացէք և ցնծացէք, վասն զի ձեր
վարձքը շատ է երկնքումը.
որովհետև այսպէս հալածեցին
մարգարէներին, որ ձեզանից
առաջ էին։

13 Դուք էք երկրի աղը. եթէ
աղն անհամանայ, ի՞նչով կ՚ա-
զանուի. այլ ևս ոչնչի պէտք չէ,
միայն թէ դուրս գցուի և մարդ-
կանցից ոտնակոխ լինի։ Դուք 14
էք աշխարհի լոյսը. չէ կարող
թաքչել մի քաղաք, որ լեռան
վերայ կենում է։ Եւ ճրագը 15
չեն վառել և դնել գրուանի
տակ, այլ ճրագակալի վերայ,
և լոյս կ՚տայ ամենին՝ որ տան
մէջ են։ Այսպէս լուսաւորէ ձեր 16
լոյսը մարդկանց առջև, որ ձեր
բարի գործքերը տեսնեն, և
փառաւորեն ձեր Հօրն որ եր-
կնքումն է։

17 Մի՛ համարիք եթէ եկի լու-
ծանել զօրէնս կամ զմարգարէս.
ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։
18 Ամէն ասեմ ձեզ, Մինչև անցցեն
երկինք և երկիր, յոտա մի՝ * որ
նշանախեց մի է ոչ անցցէ յօրի-
նացն և ՝ի մարգարէից՝ մինչև
19 ամենայն եղիցի։ Որ որ լուծցէ
մի ինչ ՝ի պատուիրանաց յայս-
ցանէ ՝ի փոքրունց, և ուսուցէ
այնպէս զմարդիկ, փոքր կո-
չեսցի յարքայութեան երկնից.
իսկ որ արասցէ և ուսուցէ, նա
մեծ կոչեսցի յարքայութեան
20 երկնից։ Այլ ասեմ ձեզ,
Զի եթէ ոչ առաւելուցու ար-
դարութիւն ձեր աւելի քան
զդպրացն և զփարիսեցւոց, ոչ
մտանիցէք յարքայութիւն երկ-
նից։

21 Լուարուք զի ասացաւ առա-
ջնոցն թէ Մի՛ սպանաներ.
զի որ սպանանիցէ՝ պարտական
22 լիցի դատաստանի։ Այլ ես ասեմ
ձեզ, Եթէ ամենայն որ բարկա-
նայ եղբօր իւրում՝ տարապար-
տուց, պարտաւոր լիցի դատաս-
տանի. և որ ասիցէ ցեղբայր իւր
Յիմար, պարտաւոր լիցի ատենի,
և որ՝ ասիցէ ցեղբայր իւր
մորոս, պարտաւոր լիցի ՝ի գե-
23 հեն հրոյ։ Եթէ մատուցանիցես
զպատարագ քո ՝ի վերայ սեղա-
նոյ, և անդ յիշեսցես՝ եթէ

17 Մի կարծէք, թէ եկայ օրէնքը
կամ մարգարէները քանդելու.
չեկայ քանդելու, այլ կատա-
րելու։ Ամէն զի ճշմարիտն 18
ասում եմ ձեզ, մինչև երկինքն
և երկիրս անց կենան, օրէնքիցը
մէկ կէտ կամ մէկ պզտիկ նշա-
նագիր չի անցնիլ մինչև որ բո-
լորը կատարուի։ Որդ՝ ով որ 19
այս ամենափոքր պատուիրանք-
ներից մէկը քանդէ, և մարդ-
կանց այնպէս սովորեցնէ, նա
փոքրագոյն կ՚կոչուի երկնից
արքայութիւնումը. բայց նա որ
կ՚անէ և կ՚սովորեցնէ, նա մեծ
կ՚կոչուի երկնից արքայութի-
նումը։ Ամէն զի ասում եմ ձեզ, 20
Եթէ չաւելանայ ձեր արդա-
րութիւնն աւելի քան դպիրնե-
րինը և փարիսեցիներինը, ընաւ
չէք մտնիլ երկնից արքայու-
թիւնը։
Լսել էք, որ առաջիններին 21
ասուեցաւ, Մի սպանիր, և ով
որ սպանէ, պարտական կ՚լինի
դատաստանին։ Բայց ես ասում 22
եմ ձեզ՝ թէ ամեն ով որ զուր
տեղը բարկանայ իր եղբօրը,
պարտական կ՚լինի դատաստանին.
և ով որ իր եղբօրն ասէ՝ Յիմար,
պարտական կ՚լինի ատեանին. և
ով որ իր եղբօրն ասէ՝ Մորոս,
պարտական կ՚լինի գեհենի կրա-
կին։ Որդ՝ եթէ մատուցանես 23
սեղանի վերայ քո ընծան, և այն
տեղ յիշես, թէ քո եղբայրը

* ՝Ի Յոդն, կամ նշանախեց մի՝ ոչ անցցէ յօրինացն՝

եղբայր քո ունի ինչ խէթ զքէն,
21 թող զպատարագն քո առաջի սեղանոյն. երթ նախ հաշտեսա՛ց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն
25 քո: Լ՚եր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ՚ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն դահճի, և արկա-
26 նիցիս՚ի բանտ: Լ՚ամէն ասեմ քեզ. ո՛չ երանիցես անտի մինչև հատուցանիցես զյետին նաքարակիսն:

27 Լ՚ուարուք զի ասացաւ, Մ՚ի շնար. Բայց ես ասեմ ձեզ.
28 թէ ամենայն որ հայի՚ ի կին մարդ առ՚ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա՚ ի
29 սրտի իւրում: Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա և ընկեա՛ ՚ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի՚ ի գեհենն:
30 Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա՛ ՚ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ,
31 և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի՚ ի գեհենն: Լ՚ասացաւ, Եթէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակ-
32 մանն. Բայց ես ասեմ ձեզ, Եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ:

քեզ զէմ մէկ բան ունի, թող 24
այն տեղ քո ընծան սեղանի առջև. և գնա առաջ հաշտուիր քո եղբօր հետ. և յետոյ եկ ընծադ
մատուցրու: Լ՚ո ոսոխի հետ 25
շուտով միաբանուիր, քանի որ նորա հետ ճանապարհումն ես. որ մի գուցէ ոսոխը քեզ դատաւորին մատնէ, և դատաւորը քեզ մատնէ դահճին, և բանտը
գցուիս: Ա՛մէն ասեմ քեզ 26
քեզ. դուրս չես գալ այն տեղից, մինչև որ վերջի նաքարակիսը չմճարես:

Լ՚սել էք որ ասուեցաւ առա- 27
ջիններին, Թէ Շ՚նութիւն մի՛ անիր: Բայց ես ասում եմ ձեզ. 28
թէ ամեն ով որ մի կնկան վերայ մտիկ տայ նորան ցանկանալու համար, նա արդէն շնացաւ նորա
հետ իր սրտի մէջ: Եւ եթէ քո 29
աջ աչքը գայթակղեցնում է քեզ, հանիր նորան և քեզանից դէն գցիր, վասն զի լաւ է քեզ համար, որ քո անդամներից մէկը
կորչի, և քո բոլոր մարմինը չգցուի գեհենը: Եւ եթէ քո 30
աջ ձեռքը գայթակղեցնում է քեզ, կտրիր նորան և քեզանից դէն գցիր. վասն զի լաւ է քեզ համար՝ որ քո անդամներից մէկը
կորչի, և քո բոլոր մարմինը չգցուի գեհենը: Ասուեցաւ՝ թէ Ով որ իր կնիկն արձակէ, Լոդ արձակման թուղթ տայ 31
նորան, Բայց ես ասում եմ ձեզ. 32
թէ Ով որ իր կնիկն արձակէ առանց պոռնկութեան պատճառի, նա նորան շնութիւն անել է տալիս. և ով որ մի արձակածին առնէ, շնութիւն է անում:

33 Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն. Մ՚ի երդնուցուս սուտ, բայց հատուցես Տեառն
34 զերդմունս քո: Լ՚այլ ես ասեմ ձեզ Մ՚ենևին մի՛ երդնուլ, մի՛ յեր-
35 կինս՝ զի աթոռ է Աստուծոյ. Եւ մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, և՝ մի՛ յԵրուսաղէմ՝
36 զի քաղաք է մեծի Արքայի. Եւ մի՛ ՚ի գլուխս քո երդնուցուս, զի ո՛չ կարես մազ մի սպիտակ առնել
37 կամ թուխ: Լ՚այլ եղիցի ձեր բան՝ այո՛ այո, և ոչ՝ ոչ. զի աւելին քան զայն՝ ՚ի չարէն է:

38 Լ՚ուարուք զի ասացաւ. Ակն ընդ ական, և ատամն ընդ ատա-
39 ման: Լ՚այլ ես ասեմ ձեզ՝ Մ՚ի կալ հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո,
40 դարձո՛ նմա և զմիւսն: Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թո՛ղ ՚ի նա և զբաճ-
41 կոն քո: Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ
42 ընդ նմա և երկուս: Որում խնդրէ՚ ի քէն՝ տո՛ւր. և որ կամի փոխ առնուլ՚ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս:

43 Լ՚ուարուք ապաքէն զի ասացաւ՝. Սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո:
44 Լ՚այլ ես ասեմ ձեզ, Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնե-

ոի, նա նորան շնութիւն անել է տալիս. և ով որ մի արձակածին առնէ, շնութիւն է անում:

Դարձեալ լսել էք՝ որ ասուեցաւ 33
առաջիններին, Սուտ երդում մի անիր, բայց Տիրոջը վճարիր քո երդումները: Բայց ես ասում եմ 34
ձեզ. Բնաւ երդում մի անիր. ո՛չ երկնքովն՝ վասն զի աթոռ է Աստուծոյ. Եւ ոչ երկրովը՝ 35
վասն զի պատուանդան է նորա ոտքերի. և ո՛չ Երուսաղէմովն՝ վասն զի քաղաք է մեծ թագաւորի: Եւ ո՛չ քո գլխովն երդում 36
արա՝ վասն զի կարող չես մէկ մազ սպիտակ անել կամ սև: Բայց ձեր խօսքը լինի, այո՛ այո՛ 37
և ոչ՝ ոչ. և սորանից աւելին չարիցն է:

Լսել էք՝ որ ասուեցաւ աչք 38
աչքի տեղ, և ատամ՝ ատամի տեղ: Բայց ես ասում եմ ձեզ. 39
չարին հակառակ մի կենաք, այլ ով որ ապտակ տայ քո աջ երեսին, միւսն էլ նորան դարձրու:
Եւ ով որ ուզէ քեզ հետ դատ 40
վարել և քո շապիկն առնել, թո՛ռ բաճկոնն էլ թող նորա մօտ: Եւ 41
ով որ քեզ պահակ բռնած մէկ մղոն քշէ, նորա հետ երկուսը գնա: Քեզանից ինչ ուզողին 42
տուր. քեզանից փոխ առնել կամեցողից երես մի դարձնիր:

Լսել էք որ ասուեցաւ, քո 43
ընկերին սիրիր, և քո թշնամուն ատիր: Բայց ես ասում եմ ձեզ. 44
սիրեցէք ձեր թշնամիներին. օրհնեցէք ձեզ անիծողներին. բարի

ցէ՛ք զանիծիչս ձեր, բարի
արարէք ատելեաց ձերոց, և
աղօթս արարէք 'ի վերայ այ-
նոցիկ՝ որ լլկեն զձեզ և հալա-
45 ծեն. Օ՛ի եղիջիք որդիք Հօր
ձերոյ որ յերկինսն է. զի զարե-
գակն իւր ծագէ 'ի վերայ չարաց
և բարեաց, և ածէ անձրև 'ի
վերայ արդարոց և մեղաւորաց:
46 Օ՛ի եթէ սիրիցէք զայնոսիկ որ
սիրեսն զձեզ՝ զի՞նչ վարձք
իցեն. ո՞չ ապաքէն և մաքսաւորք
47 զնոյն գործեն: Եւ եթէ տայցէք
միայն ողջոյն * բարեկամաց
ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք. ո՞չ
ապաքէն մաքսաւորք † և մեղա-
48 ւորք՝ զնոյն գործեն: Արդ
եղերուք դուք կատարեալք
որպէս և Հայրն ձեր երկնաւոր
կատարեալ է:

ԳԼ. Զ.

1 Զգոյշ լերուք ողորմութեան
ձերում՝ մի առնել առաջի մարդ-
կան, որպէս թէ 'ի ցոյց ինչ
նոցա. զուցէ և վարձս ոչ ըն-
դունիցիք 'ի Հօրէն ձերմէ՝ որ
2 յերկինսն է: Այլ յորժամ
առնիցես ողորմութիւն, մի
հարկաներ փող առաջի քո,
որպէս կեղծաւորքն առնեն 'ի
ժողովուրդս և 'ի հրապարակս՝
որպէս զի փառաւորեսցին 'ի
մարդկանէ. ամէն ասեմ՝ ձեզ,
3 այն իսկ են վարձք նոցա: Այլ

* 'Ի Յոյնն, եղբարց
† 'Ի Յոյնն չէ։

արէք ձեզ ատողներին. և աղօթք
արէք ձեզ չարչարողների և ձեզ
հալածողների համար. Որ որդիք 45
լինիք ձեր Հօրն, որ երկնքումն
է. վասն զի նա իր արեգակը
ծագեցնում է չարերի և բարի-
ների վերայ, և անձրև է ածում
արդարների և անիրաւների վե- 46
րայ: Որովհետև՝ եթէ ձեզ սի-
րայ: Որովհետև՝ եթէ ձեզ սի-
բողներին սիրէք, ի՞նչ վարձք
ունիք. չէ՞ որ մաքսաւորներն էլ
նոյնն են անում: Եւ եթէ միայն 47
ձեր եղբայրներին բարև տաք,
ի՞նչ աւելի բան էք անում, չէ՞
որ մաքսաւորներն էլ են այնպէս
անում: Արդ դուք կատարեալ 48
եղիք, ինչպէս ձեր Հայրը որ
երկնքումն է, կատարեալ է:

ԳԼ. Զ.

Զգոյշ կացէք, որ ձեր ողոր- 1
մութիւնը մարդկանց առջև չա-
նէք, նորանցից տեսնուելու հա-
մար, եթէ ոչ՝ վարձք չունիք
ձեր Հօրից որ երկնքումն է:
Արդ՝ երբոր ողորմութիւն անես, 2
փող մի հնչեցնիր քո առջևը.
ինչպէս կեղծաւորներն են անում
ժողովարանների մէջ և փողոց-
ների մէջ, որ փառաւորուին
մարդկանցից. Ճշմարիտն ասում
եմ՝ ձեզ, նորանք իրանց վարձքն
առած են: Բայց դու երբոր 3

դու յորժամ ողորմութիւն առ-
նիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ
4 գործէ աջ քո. Որպէս զի եղիցի
ողորմութիւն քո 'ի ծածուկ և
Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ՝
հատուսցէ քեզ յայտնապէս:

5 Եւ յորժամ յաղօթս կայցես,
մի լինիցիս որպէս կեղծաւորքն.
զի սիրեն 'ի ժողովուրդս և յան-
կիւնս հրապարակաց կալ յաղօթս.
որպէս զի երևեսցին մարդկան.
ամէն ասեմ ձեզ, այն իսկ են
6 վարձք նոցա: Այլ դու յորժամ
կայցես յաղօթս, մուտ 'ի սենե-
կակ քո, և փակեա զդուռս քո,
և կաց յաղօթս առ Հայրն քո 'ի
ծածուկ. և Հայրն քո որ
տեսանէ 'ի ծածուկ, հատուսցէ
7 քեզ յայտնապէս: Եւ յորժամ
կայցէք յաղօթս, մի շատախօսք
լինիք իբրև զ՝ Եթանոսն. զի
համարին եթէ 'ի բազում խօսից
8 իւրեանց լսելի լինիցին: Արդ
մի նմանիցէք նոցա. զի գիտէ
Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ,
մինչև ձեր խնդրեալ ինչ իցէ 'ի
9 նմանէ: Եւ արդ այսպէս կացէք
դուք յաղօթս. Հայր մեր որ
յերկինս, սուրբ եղիցի անուն
քո:

10 Եկեսցէ արքայութիւն քո.
եղիցին կամք քո որպէս յերկինս
11 և յերկրի: Օ՛հաց մեր հան-
12 պաղորդ տուր մեզ այսր-
[illegible]
13 և մեք թողումք պարտա-
պանաց: Եւ [illegible] 'ի

ողորմութիւն անես, թող չիմա-
նայ քո ձախ յէ՞ջ. թէ ինչ է
գործում քո աջը. Որպէս զի քո 4
ողորմութիւնը ծածուկ լինի, և
քո Հայրն՝ որ ծածուկ տեսնում է,
յայտնապէս կ'հատուցանէ քեզ:

Եւ երբոր աղօթք անես, 5
չլինիս ինչպէս կեղծաւորները,
վասն զի նորանք սիրում են ժո-
ղովարանների մէջ և հրապարակ-
ների անկիւններում կանգնած
աղօթք անել, որ երևան մարդ-
կանց: Ճշմարիտն ասում եմ
ձեզ, որ նորանք իրանց վարձքն
առած են: Բայց դու երբոր 6
աղօթք անես, մտիր քո սենեակը
և դուռդ փակած աղօթք արա
դէպ ի քո Հայրը, որ ծածու-
կումն է. և քո Հայրն՝ որ ծա-
ծուկ տեսնում է, յայտ-
նապէս կ'հատուցանէ քեզ: Եւ 7
աղօթք անելիս շատախօս մի
լինիք ինչպէս հեթանոսները,
վասն զի նորանք կարծում են,
թէ իրանց շատ խօսելու համար
կ'լսուին: Արդ նորանց մի նմա- 8
նիք. վասն զի ձեր Հայրը գիտէ
թէ ի՞նչ բաներ պէտք են ձեզ,
ձեր նորանից խնդրելուցն առաջ:
Արդ դուք այսպէս աղօթք արէք. 9
Ո՞ր Հայր, որ երկնքումն 10
ես. սուրբ լինի քո անունը,
Գայ քո արքայութիւնը, լինի
[illegible], ինչպէս երկնքումն՝
թող մեզ զպարտքերս մեր երկրի վերայ: Ո՞ր 11
[illegible] Հացն տուր մեզ այս-
[illegible]: Եւ թող մեզ մեր պարտքերը, 12

(1004 / 19559) / 16749-58
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ
ИМЕНИА, МЯСНИ И НА
Ա. Մ ԱՍ Ի ...ԱՆԻ ԱՆՎԱՆ

փորձութիւն, այլ փրկեա՝ զմեզ
'ի չարէ. զի քո է արքայութիւն
և զօրութիւն և փառք յաւիտ-
14 եանս ամէն։ Զի եթէ թողուցուք
մարդկան զյանցանս նոցա, թող-
ցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր։
15 Այլ թէ ոչ թողուցուք մարդ-
կան զյանցանս նոցա, և ոչ
Հայրն ձեր թողցէ ձեզ զյան-
ցանս ձեր։

16 Եւ յորժամ պահիցէք՝ մի
լինիք իբրև զկեղծաւորսն տըրտ-
մեալք. որ ապականեն զերեսս
իւրեանց, որպէս զի երևեսցին
մարդկան թէ պահիցեն. ամէն
ասեմ ձեզ, Առն իսկ են վարձք
17 նոցա։ Այլ դու յորժամ պահի-
18 ցես, Օ՛ծ զգլուխ քո՝ և լուա
զերեսս քո, Զի մի երևեսցիս
մարդկան իբրև զպահօղ. այլ
Հօրն քում՝'ի ծածուկ. և Հայ-
րըն քո որ տեսանէ 'ի ծածուկ,
հատուսցէ քեզ յայտնապէս։

19 Մի՛ գանձէք ձեզ գանձս
յերկրի. ուր ցեց և ուտիճ
ապականեն, և ուր գողք ական
20 հատանեն և գողանան։ Այլ
գանձեցէք ձեզ գանձս յերկինս,
ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապա-
կանեն, և ոչ գողք ական հա-
21 տանեն, և գողանան։ Զի ուր
գանձք ձեր են անդ և սիրտք ձեր
եղիցին։

ինչպէս մենք էլ թողում ենք մեր
պարտականներին։ Եւ մի տանիր 13
մեզ փորձութեան մէջ. այլ ազա-
տիր մեզ չարիցը. վասն զի քո է
թագաւորութիւնը և զօրու-
թիւնը և փառքը յաւիտեան.
ամէն։ Վասն զի եթէ դուք 14
մարդկանց իրանց յանցանքները
թողէք, կ'թողէ ձեզ էլ ձեր
երկնաւոր Հայրը։ Իսկ եթէ 15
դուք մարդկանց չէք թողել
նորանց յանցանքները, ձեր
Հայրն էլ չի թողել ձեր յան-
ցանքները։

Եւ երբոր ծոմ էք պահում, 16
տրտում մի լինիք ինչպէս կեղ-
ծաւորները, վասն զի նորանք
իրանց երեսները տխրեցնում են,
որ մարդկանց ծոմ պահող երե-
ւան. ճշմարիտն ասում եմ ձեզ՝
թէ նորանք իրանց վարձքն առած
են։ Բայց դու ծոմ պահելիս, 17
իւղով օծիր քո գլուխը և երեսդ
լուա։ Որ մարդկանց չերևաս ծոմ 18
պահող, այլ քո Հօրը՝ որ ծա-
ծուկումն է. և քո Հայրն, որ
ծածուկ տեղը տեսնում է,
յայտնապէս կ'հատուցանէ քեզ։

Ձեզ համար գանձեր մի դիզէք 19
երկրիս վերայ. ուր որ ցեցն և
ժանգն ապականում են, և ուր
որ գողերը պոռը ծակում են և
գողանում։ Բայց ձեզ համար 20
գանձեր դիզեցէք երկնքումը,
ուր ոչ ցեց և ոչ ժանգ չեն
ապականում, և ուր գողերը
պոռը չեն ծակում և չեն գո-
ղանում։ Վասն զի ինչ տեղ որ 21

22 Հրաղ մարմնոյ ակն է. եթէ
ակն քո առատ է, ամենայն մար-
23 մին լուսաւոր եղիցի։ Այլ եթէ
ակն քո չար է ամենայն մար-
մին խաւարին եղիցի. իսկ արդ՝
եթէ լոյսդ որ 'ի քեզ է խաւար
24 է, խաւարն որչափ է։ Ոչ ոք
կարէ երկուց տէրանց ծառայել.
կամ զմին ատիցէ, և զմիւսն
սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և
զմիւսն արհամարհիցէ. ոչ կա-
րէք Աստուծոյ ծառայել և մա-
25 մոնայի։ Վասն այդորիկ ասեմ
ձեզ Մի՛ հոգայք վասն ոգւոց
ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ
ըմպիցէք. և մի՛ վասն մարմնոյ
ձերոյ՝ թէ զինչ ագանիցիք. ոչ
ապաքէն ոգի առաւել է քան
զկերակուր՝ և մարմին քան
26 զհանդերձ։ Հայեցարուք 'ի
թռչունս երկնից՝ զի ոչ վարեն և
ոչ հնձեն և ոչ ժողովեն 'ի շտե-
մարանս, և Հայրն ձեր երկնաւոր
կերակրէ զնոսա. ոչ ապաքէն
դուք առաւել էք քան զնոսա։
27 Իսկ արդ՝ ո՞'ի ձէնջ առ հոգալ
իւրում՝ յաւելուլ կարիցէ 'ի
28 հասակ իւր կանգուն մի։ Եւ
վասն հանդերձի զի՞ հոգայք.
հայեցարուք 'ի շուշանն վայ-
ելնի՝ որպէս աճէ. ոչ ջանայ և
29 ոչ նիւթէ։ Բայց ասեմ ձեզ՝ զի ոչ
Սողոմոն յամենայն 'ի փառսն
իւրում զգեցաւ իբրև զմի 'ի նո-
30 ցանէ. Իսկ եթէ զխոտն 'ի
վայրի, որ այսօր է և վաղիւն

ձեր գանձն է, այն տեղ կ'լինի և
ձեր սիրտը։

Մարմնոյ ճրագն աչքն է. 22
արդ թէ որ քո աչքը պարզ լինի,
քո բոլոր մարմինը լուսաւոր
կ'լինի։ Բայց թէ որ քո աչքը 23
չար լինի, քո բոլոր մարմինը
խաւար կ'լինի, Ուրեմն՝ այն
լոյսն՝ որ քեզանումն է՝ խաւար
է, ապա խաւարն որքան [illegible]։
Ոչ ով չէ կարող երկու տէրերի 24
ծառայել. վասն զի կամ մէկին
կ'ատէ՝ և միւսին կ'սիրէ, կամ
մէկին կ'մեծարէ և միւսին կ'ար-
համարհէ։ Չէք կարող Աս-
տուծոյն ծառայել և մամոնային։
Սորա համար ասում եմ ձեզ. 25
հոգս մի անէք ձեր անձի համար
Ինչ ի՞նչ պիտի ուտէք, և ի՞նչ
պիտի խմէք. և ոչ ձեր մարմնոյ
համար՝ Ինչ ի՞նչ պիտի հագնիք։
Չէ՞ որ հոգին աւելի է կերա-
կուրից, և մարմինը հագուս-
տից։ Մտիկ արէք երկնքի 26
թռչուններին, որ չեն սերմում,
և ոչ էլ հնձում, և ոչ ամբարների
մէջ ժողովում, և ձեր երկնաւոր
Հայրը կերակրում է նորանց.
չէ՞ որ դուք նորանցից աւելի լաւ
էք։ Իսկ՝ ձեզանից ով կարող 27
է հոգս անելով իր հասակի վերայ
մէկ կանգուն աւելացնել։ Եւ 28
հագուստի համար ի՞նչ էք հոգս
անում. մտիկ արէք դաշտի շու-
շաններին, Ինչպէս են մեծա-
նում. ոչ ջանք են անում՝ և ոչ
մանում։ Բայց ասում եմ ձեզ, 29
թէ Սողոմոնն էլ իր բոլոր փառ-

՝ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ. որչափ ևս առաւել զձեզ թերահաւատք:
31 Մի՛ այսուհետև հոգայցէք և ասիցէք. Զի՞նչ կերիցուք՝ կամ
32 զի՞նչ արբցուք՝ կամ զի՞նչ զգեցցուք: Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ
33 ամենայն: Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ
34 ամենայն յաւելցի ձեզ: Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուին՝ զի վաղուն վասն իւր հոգասցի. շատ է աւուրն չար իւր:

ԳԼ. Ի.

1 Մի՛ դատէք՝ զի մի՛ դատիցիք.
2 Զի որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք. և որով չափով
3 չափէք՝ չափեսցի ձեզ: Զի՞ տեսանես զչիւղ յական եղբօր քո և ի քում ականդ զգերանդ
4 ոչ տեսանես: Կամ՝ զիարդ ասես ցեղբայր քո, թող հանից զչիւղդ յականէ քումմէ. և ահաւադիկ ի քում ականդ գերան կայ:
5 Ագիրծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցես հանել զչիւղն յականէ
6 եղբօր քո: Մի՛ տայք զսրբութիւն ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ. որչափ ևս առաւել զձեզ թերահաւատք:
31 Մի՛ այսուհետև հոգայցէք և ասիցէք. Զի՞նչ կերիցուք՝ կամ
32 զի՞նչ արբցուք՝ կամ զի՞նչ զգեցցուք: Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ
33 ամենայն: Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ
34 ամենայն յաւելցի ձեզ: Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուին՝ զի վաղուն վասն իւր հոգասցի. շատ է աւուրն չար իւր:

ԳԼ. Ի.

1 Մի՛ դատէք, որ չդատուիք:
2 Զի՝ որ ինչ դատաստանով որ դատում էք, նոյնանով պիտի դատուիք. և ինչ չափով որ չափում էք, նոյնանով կ՝չափուի ձեզ:
3 Եւ ինչո՞ւ քո եղբօր աչքի միջի ծեղը տեսնում ես, և քո աչքի միջի գերանը չես նշմարում:
4 Կամ՝ ի՞նչպէս կ՝ասես քո եղբօրը. թող աչքիցդ ծեղը հանեմ՝. և ահա գերանը քո աչքի մէջ է:
5 Կեղծաւոր, առաջ քո աչքիցը գերանը հանիր, և յետոյ մտիկ կ՝տաս քո եղբօր աչքիցը ծեղը

հանելու: Սուրբ բանը մի՛ տաք շներին, ոչ էլ գցեցէք ձեր մարգարիտները խոզերի առջև. որ նորանց կոխեսցեն զնոսա, և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ:
7 Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, բախեցէք
8 և բացցի ձեզ: Զի ամենայն որ խնդրէ առնու, և որ հայցէ գտանէ, և որ բախէ բացցի նմա:
9 Ո՞ իցէ ի ձէնջ մարդ՝ ցոր խընդրիցէ որդի իւր հաց, միթէ քար
10 տայցէ նմա: Եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ ՃՃ տայցէ նմա:
11 Արդ՝ եթէ դուք որ չարդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ խընդրեն զնա:
12 Զամենայն որ միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա. զի այն իսկ են օրէնքն և մարգարէք:
13 Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի ՝ի կորուստ. և բազումք
11 են որ մտանեն ընդ նա: Քանզի անձուկ է դուռն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի ՝ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա:
15 Զգոյշ լերուք ՝ի սուտ մարգարէիցն որ գան առ ձեզ հան-

հանելու: Սուրբ բանը մի՛ տաք շներին, ոչ էլ գցեցէք ձեր մարգարիտները խոզերի առջև. որ նորանց կոխ չ՝տան իրանց ոտքերովը և յետ դառնան ձեզ պատառեն:
7 Խնդրեցէք և կ՝տրուի ձեզ. որոնեցէք և կ՝գտնէք, դուռը թակեցէք և կ՝բացուի ձեզ:
8 Զի՝ ամեն խնդրող առնում է, և որոնողը գտնում է. և դուռը թակողին կ՝բացուի:
9 Կամ՝ ո՞վ է ձեզանից այն մարդն, որ եթէ նորանից իր որդին հաց ուզէ, միթէ քար կ՝տայ նորան: Եւ եթէ ձուկ
10 ուզէ, միթէ ՃՃ կ՝տայ նորան:
11 Արդ՝ եթէ դուք՝ չար լինելով, գիտէք բարի պարգևներ տալ ձեր որդոցն. որքան աւելի ձեր Հայրը՝ որ երկնքումն է, բարիքներ կ՝տայ նորանց, որ խնդրում են իրանից:
12 Զամեն ինչ՝ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն մարդիկը, այնպէս էլ դուք արէք նորանց. վասն զի այս է օրէնքը և մարգարէքը:
13 Մտէք դռնովը նեղս մտէք. վասն զի լայն է դուռը և ընդարձակ ճանապարհը՝ որ կորուստն է տանում. և շատեր են նորանով գնացողները:
14 * Քանի՞ նեղ է դուռը՝ և նեղուացք է ճանապարհը, որ կեանքն է տանում. և քիչ են նորան գտնողները:
15 Զգոյշ կացէք սուտ մարգարէներից, որ գալիս են ձեզ մօտ

* Ոմանք՝ քանզի

գերձիւք ոչխարաց, և 'ի ներքոյ
16 են գայլք յափշտակողք: 'Ի
պտղոյ նոցա ծանիջիք զնոսա.
միթէ քաղիցեն 'ի փշոց խաղող՝
17 կամ 'ի տատասկէ թուզ: Այսպէս
ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի
առնէ, և ծառ չար՝ պտուղ չար
18 առնէ: Ո՛չ կարէ ծառ բարի
պտուղ չար առնել՝ և ոչ ծառ
19 չար պտուղ բարի առնել: Ամ-
ենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ
բարի, հատանի և 'ի հուր
20 արկանի: Այսպէս 'ի պտղոյ նոցա
ծանիջիք զնոսա:

21 Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր
Տէր, մտցէ յարքայութիւն երկ-
նից. այլ որ առնէ զկամս Հօր
22 իմոյ որ յերկինսն է: Բազումք
ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ.
Տէր Տէր՝ ո՞չ յանուն քո մար-
գարէացաք, և յանուն քո դեւս
հանաք, և յանուն քո զօրու-
23 թիւնս բազումս արարաք: Եւ
յայնժամ ասացից նոսա՝ եթէ
Ո՛չ երբէք գիտէի զձեզ. 'ի բաց
կացէք յինէն* ամենեքեան՝ որք
գործէիք զանօրէնութիւն:

21 Ամենայն որ լսէ զբանս իմ
զայսոսիկ՝ և առնէ զսոսա, նմա-
նեսցի առն իմաստնոյ՝ որ շինեաց
25 զտուն իւր 'ի վերայ վիմի: Իջին
անձրևք՝ և խաղացին գետք,
շնչեցին հողմք՝ և բախեցին
զտունն, և ոչ կործանեցաւ.
քանզի 'ի վերայ վիմի հաստա-

ոչխարների հանդերձներով,
բայց ներսեանց յափշտակող
գայլեր են: Իրանց պտուղներիցը 16
նորանց †ճանաչեցէք. միթէ
փշերից խաղող են քաղում,
կամ տատասկից թուզ: Այսպէս 17
ամեն բարի ծառ բարի պտուղ է
բերում, և չար ծառը չար պը-
տուղ է բերում: Չէ կարող բարի 18
ծառը չար պտուղ բերել, ոչ էլ
չար ծառը բարի պտուղ բերել:
Ամեն ծառ որ բարի պտուղ չէ 19
բերում, կտրվում է և կրակի մէջ
գցվում: Ուրեմն իրանց պտուղ- 20
ներիցը †ճանաչեցէք նորանց:

Ոչ թէ ամեն ինձ Տէր Տէր 21
ասողը կ'մտնէ երկնքի արքայու-
թիւնն. այլ նա որ կատարում է
իմ Հօր կամքը, որ երկնքումն
է: Շատերը կ'ասեն ինձ այն 22
օրը, Տէր Տէր, չէ՞ որ քո անու-
նովը մարգարէացանք, և քո
անունովը դևեր հանեցինք, և
քո անունովը շատ զօրութիւն-
ներ գործեցինք: Եւ այն ժա- 23
մանակ պարզ կ'ասեմ նորանց,
թէ Երբէք ձեզ չեմ ճանաչել.
ինձանից դէն գնացէք, ով անօ-
րէնութիւն գործողներ:

Արդ՝ ամեն ով որ իմ այս 24
խօսքերը լսում է և նորանց կա-
տարում, կ'նմանացնեմ նորան
մի իմաստուն մարդու, որ իր
տունը շինեց ժայռի վերայ: Եւ 25
անձրևն էլ եկաւ, գետերն էլ
վարարեցին, քամիներն էլ փչե-
ցին և այն տունը զարկեցին, և

* 'Ի Յոյնն էջ։

† կ'ճանաչէք

26 տեղ էր: Եւ ամենայն որ լսէ
զբանս իմ զայսոսիկ՝ և ոչ առնէ
զսոսա, նմանեսցի առն յիմարի՝
որ շինեաց զտուն իւր 'ի վերայ
27 աւազոյ: Իջին անձրևք՝ յարեան
գետք, շնչեցին հողմք՝ հարին
զտունն, և անկաւ. և էր կոր-
ծանումն նորա մեծ յոյժ:

28 Եւ եղև իբրև կատարեաց Յի-
սուս* զամենայն զբանս զայ-
սոսիկ, զարմանային ժողո-
վուրդքն ընդ վարդապետութիւն
29 նորա: Զի իբրև իշխանու-
թեանբ ուսուցանէր՝ և ոչ որպէս
գպիրքն:

ԳԼ. Բ

1 Ապ իբրև էջ 'ի լեռնէ անտի,
գնացին զկնի նորա ժողո-
2 վուրդք բազումք: Եւ ահա
մատուցեալ բորոտ մի, երկիր-
պագանէր նմա, և ասէր. Տէր՝
եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել:
3 Զգեաց զձեռն իւր և հասոյց 'ի
նա Յիսուս՝ և ասէ. Կամիմ՝
սրբեաց. և վաղվաղակի սրբեցաւ
4 'ի նմանէ բորոտութիւնն: Եւ
ասէ ցնա Յիսուս. Զգոյշ լեր՝
մի՝ ումեք ասիցես. այլ երթ ցոյց
զանձն քո քահանային, և մատո
զպատարագն, զոր հրամայեաց
Մովսէս 'ի վկայութիւն նոցա:

չկործանուեցաւ. վասն զի ժայռի
վերայ հաստատուած էր: Եւ 26
ամեն ով որ իմ այս խօսքերը
լսում է և նորանց չէ կատարում,
նա կ'նմանուի մի անխելք մար-
դու, որ իր տունը շինեց աւազի
վերայ: Եւ անձրևն էլ եկաւ, 27
գետերն էլ վարարեցին, քամի-
ներն էլ փչեցին, և այն տունը
զարկեցին, և կործանուեցաւ, և
նորա կործանումը մեծ էր:

Եւ եղաւ երբոր Յիսուսը 28
այս խօսքերը վերջացրեց, ժողո-
վուրդները զարմանում էին նո-
րա վարդապետութեան վերայ: 29
Այն զի իշխանութիւն ունե-
ցողի պէս էր սովորեցնում նո-
րանց, և ոչ թէ գպիրների պէս:

ԳԼ. Բ

Եւ երբոր լեռից իջաւ, 1
շատ ժողովուրդներ գնացին նո-
րա ետևից: Եւ ահա մի բորոտ 2
գալով երկրպագում էր նորան և
ասում. Տէր, թէ որ կամենաս,
կարող ես ինձ սրբել: Եւ Յի- 3
սուսը ձեռը մեկնելով նորան դի-
պաւ և ասաց. Կամենում եմ՝
սրբուիր. և շուտով նորա բորո-
տութիւնը սրբուեցաւ: Եւ Յի- 4
սուսը ասաց նորան. Զգոյշ կաց՝
ոչ ոքի չասես, այլ գնա քեզ ցոյց
տուր քահանային, և Մովսէսից
հրամայուած ընծան մատուցրու,
նորանց վկայութիւն լինելու
համար:

* 'Ի Յոյնն էջ։

5 Եւ մտեալ ՚ի Կափառնաում
մտեաւ առ նա Հարիւրապետ
6 մի, աղաչէր զնա, Եւ ասէր.
Տէր՝ մանուկ իմ անկեալ կայ ՚ի
տան անդամալոյծ՝ չարաչար
7 տանջեալ։ Ասէ ցնա Յիսուս. Ես
8 եկից՝ և բժշկեսցից զնա։ Պա-
տասխանի ետ Հարիւրապետն՝ և
ասէ. Տէր՝ չե՛մ բաւական՝ եթէ
ընդ յարկաւ իմով մտցես. այլ
ասա՛ բանիւ, և բժշկեսցի մա-
9 նուկն իմ։ Զի՝ և ես այր մի
եմ՝ ընդ իշխանութեամբ, ունիմ՝
ընդ ինձ զինուորս. ասեմ սմա
Երթ՝ և երթայ, և այլում թէ
Եկ՝ և գայ, և ծառայի իմում
10 թէ Արա զայս՝ և առնէ։ Իբրև
լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և
ասէ ցայնոսիկ՝ որ զկնան երթա-
յին. Ամէն ասեմ ձեզ՝ և ոչ
Իսրայէլի այսպիսի հաւատս
11 գտի երբէք։ Բայց ասեմ ձեզ
Զի բազումք յարևելից և յա-
րևմտից եկեսցեն՝ և բազմեսցին
ընդ Աբրահամու և ընդ Իսահա-
կայ և ընդ Յակովբու յարքա-
12 յութեան երկնից։ Եւ որդիքն
արքայութեան ելցեն ՚ի խաւարն
արտաքին. անդ եղիցի լայ և
13 կրճել ատամանց։ Եւ ասէ Յի-
սուս ցհարիւրապետն. Երթ՝ և
որպէս հաւատացերդ եղիցի քեզ.
և ողջացաւ մանուկն նորա* յա-
ւուր յայնմիկ։

14 Եւ եկեալ Յիսուս ՚ի տուն

Եւ երբոր Յիսուսը մտաւ 5
Կափառնայում՝ մի հարիւրա-
պետ եկաւ նորա մօտ, աղաչում
էր նորան, Եւ ասում. Տէր, իմ 6
ծառան անդամալոյծ ընկած է
տանը և չարաչար տանջվում է։
Յիսուսն էլ ասաց նորան. Ես 7
կ՚գամ կ՚բժշկեմ նորան։ Եւ 8
հարիւրապետը պատասխանելով
ասաց. Տէր, արժանի չեմ, որ
իմ յարկի տակը մտնես, այլ միայն
մի խօսք ասա՝ և իմ ծառան կ՚բը-
ժըշկուի։ Վասն զի ես էլ իշխա- 9
նութեան տակ գտնվող մարդ եմ.
և իմ յետ տակ զինուորներ
ունիմ. և ասում եմ սորան՝ գնա,
և գնում է, և ուրիշին՝ եկ, և
գալիս է. և ծառային՝ այս բանն
արա, և անում է։ Եւ երբոր 10
Յիսուսը լսեց, զարմացաւ և
ասաց էլ ետևից եկողներին.
Ճշմարիտն ասում եմ ձեզ. Իս-
րայէլի մէջ էլ այսպիսի հաւատք
չգտայ։ Եւ ասում եմ ձեզ, որ 11
շատերը արևելքից և արևմտից
կ՚գան, և կ՚նստեն Աբրահամի
և Իսահակի և Յակոբի հետ
երկնքի արքայութիւնում, Իսկ 12
արքայութեան որդիքը դուրս
կ՚գցուին դրսի խաւարը. այն-
տեղ կ՚լինի լացը և ատամների
կրճտելը։ Եւ Յիսուսն ասաց 13
հարիւրապետին. Գնա, և ինչ-
պէս որ հաւատացիր՝ թող այնպէս
լինի քեզ. և առողջացաւ նորա
տղան այն ժամումը։

Եւ երբոր Յիսուսն եկաւ 14

* ՚Ի Ցոյն, ՚ի ժամուն

Պետրոսի, ետես զի զբաղեալ նորա
15 անկեալ դնէր տապացեալ։ Կա-
լաւ զձեռանէ նորա՝ և եթող
զնա ջերմն. յոտն եկաց՝ և պաշ-
տէր զնոսա։
16 Իրրև եղև երեկոյ՝ մատուցին
առ նա դիւահարս բազումս, և
եհան զոգիսն բանիւ. և զամե-
17 նայն հիւանդսն բժշկեաց։ Զի
լցցի բանն՝ որ ասացաւ ՚ի ձեռն
Եսայեայ մարգարէի. Նա զհի-
ւանդութիւնս մեր վերացոյց,
և զցաւս մեր երարձ։
18 Տեսեալ Յիսուսի ժողովուրդս
բազումս զչուրև, հրամայեաց
19 երթալ յայնկոյս։ Եւ մատու-
ցեալ դպիր մի ասէ ցնա. Ո՛ար-
դապետ՝ եկից և ես զկնի քո յոր
20 վայր և երթիցես։ Ասէ ցնա
Յիսուս. Աղուէսուց որջք գոն՝
և թռչնոց երկնից բոյնք, այլ
Որդւոյ մարդոյ ո՛չ գոյ՝ ուր զգլուխ
21 զգլուխս իւր։ Եւ մի ոմն յաշա-
կերտացն նորա ասէ ցնա. Տէր՝
տուր ինձ հրաման՝ զի երթայց
22 նախ թաղեցից զհայր իմ։ Ասէ
ցնա Յիսուս. Եկ զկնի իմ, և
թո՛ղ տուր մեռելոցն թաղել
զմեռեալս իւրեանց։

23 Եւ իրրև եմուտ ՚ի նաւն,
գնացին զկնի նորա աշակերտքն
24 նորա։ Եւ ահա շարժումն մեծ
եղև ՚ի ծովուն՝ մինչ նաւին
ծածկել յալեաց անտի, և ինքն
25 ննջէր։ Եւ մատուցեալ աշակերտ-
քն յարուցին զնա և ասեն,
Տէր՝ փրկեա զմեզ՝ զի կորնչիմք։

Պետրոսի տունը, տեսաւ նորա
զոքանչը պառկած ջերմում էր։
Եւ նորա ձեռքից բռնեց, և ջերմը 15
թողեց նորան, և նա վեր կացաւ
և ծառայում էր նորանց։

Եւ երբոր իրիկուն եղաւ, շատ 16
դիւահարներ բերին նորա մօտ,
և խօսքով հանեց ոգիները, և
ամեն հիւանդներին բժշկեց. Որ 17
կատարուի Եսայի մարգարէի
ձեռով ասուածը, որ ասում է.
Նա մեր հիւանդութիւնները
վեր առաւ և դէր ցաւերը կրեց։

Եւ երբոր Յիսուսը շատ ժո- 18
ղովուրդներ տեսաւ իրան չորս
կողմովը, հրամայեց այն կողմը
գնալ։ Եւ մէկ դպիր մօտենալով 19
նորան ասաց. Ո՛ արդապետ, ես
քո ետևիցը կ՚գամ, որ տեղ էլ որ
գնաս։ Յիսուսն էլ ասաց նորան, 20
Աղուէսները որջեր ունին, և
երկնքի թռչունները՝ բոյներ.
բայց Որդին մարդոյ չունի որ
որ իր գլուխը դնէ։ Եւ նորա 21
աշակերտներից մի ուրիշն ասաց
նորան. Տէր, ինձ հրաման տուր՝
գնամ առաջ իմ հօրը թաղեմ։
Եւ Յիսուսը նորան ասաց. Իմ 22
ետևից եկ, և թող մեռելները
թաղեն իրանց մեռելներին։

Եւ երբոր մտաւ նաւը, նորա 23
աշակերտները գնացին նորա ետ-
ևից։ Եւ ահա մեծ ալեկոծում 24
եղաւ ծովի մէջ, որ նաւն էլ
ծածկվում էր ալիքներիցը. և
ինքն քնած էր։ Եւ նորա աշա- 25
կերտները մօտենալով նորան
զարթնեցրին և ասացին. Տէր,

26 Եւ ասէ ցնոսա. Ընդէր վատա-
սիրաք էք սակաւահաւատք.
յայնժամ յարուցեալ սաստեաց
հողմոցն և ծովուն, և եղև խա-
27 ղաղութիւն մեծ: Եւ մարդիկն
զարմացան՝ և ասէին. Որպիսի
ոք իցէ սա՝ զի և հողմք և ծով
հնազանդին սմա:

28 Եւ իբրև անց յայնկոյս յեր-
կիրն Գերգեսացւոց, պատահե-
ցին նմա դիւահարք երկու՝ ել-
եալք ի գերեզմանացն, չարա-
չարք յոյժ. որպէս զի չէր հնար
անցանել ումեք ընդ այն ճանա-
29 պարհ: Եւ ահա աղաղակեցին և
ասեն. Օ՜ի կայ մեր և քո Յի-
սուս Որդի Աստուծոյ, եկիր
30 տարաժամ տանջել զմեզ: Եւ
էր հեռագոյն ի նոցանէ երամակ
31 մի խոզից արօտական: Եւ դեւքն
աղաչէին զնա և ասէին. Եթէ
հանես զմեզ աստի, հրամայ
տուր մեզ երթալ յերամակ
32 խոզիցն: Եւ ասէ ցնոսա. Եր-
թա՛ք. և նոքա ելեալ գնացին
յերամակն խոզից. և զիմեաց
ամենայն երամակն ի դարէ անտի
33 ի ծով, և մեռան ի ջուրսն: Եւ
խոզարածքն փախեան, և եր-
թեալ ի քաղաքն պատմեցին
զամենայն, և զկիրս դիւահա-
34 րացն: Եւ ահա ամենայն քա-
ղաքն ել ընդ առաջ Յիսուսի.
իբրև տեսին զնա աղաչեցին զի
գնասցէ ի սահմանաց նոցա:

փրկիր մեզ, կորչումք ենք: Եւ 26
նորանց ասաց. Ինչո՞ւ վախկոտ
էք, սակաւահաւատներ: Այն
ժամանակ վեր կացաւ սաստեց
քամիներին և ծովին, և մեծ խա-
ղաղութիւն եղաւ: Իսկ մար- 27
դիկը զարմացան և ասում էին,
Սա ի՞նչպիսի մարդ է՝ որ քամի-
ներն և ծովն էլ հնազանդում
են սորան:

Եւ երբոր նա այն կողմը՝ 28
Գերգեսացւոց երկիրն անցաւ,
երկու դիւահարներ պատահե-
ցան նորան, գերեզմաններից
դուրս եկած՝ — շատ չար, մինչև
որ մէկը չէր կարող այն ճանա-
պարհովն անցնել: Եւ ահա 29
աղաղակեցին և ասացին. Որդի
ի՞նչ բան կայ մեզ հետ, Յիսուս՝
Որդի Աստուծոյ, եկել ես այս
տեղ ժամանակից առաջ մեզ
տանջելու: Եւ նորանցից հեռու 30
շատ խոզերի երամակ կար՝ որ
արածում էր: Եւ դեւերն աղա- 31
չում էին նորան և ասում. Եթէ
մեզ հանում ես, հրամայ տուր
մեզ այն խոզերի երամակը գնա-
լու: Եւ նորանց ասաց Գնա- 32
ցէք. և նորանք դուրս եկան և
գնացին խոզերի երամակի մէջ.
և ահա խոզերի բոլոր երամակն
այն գահավէժ տեղից վազեց
ծովը, և ջրերի մէջ մեռան: Եւ 33
խոզարածները փախան, և քաղա-
քը գնալով պատմեցին ամենը և
դիւահարների բանն էլ: Եւ 34
ահա բոլոր քաղաքը դուրս եկաւ
Յիսուսի առջևը, և երբոր նորան

տեսան, աղաչեցին որ գնայ
իրանց սահմաններից:

ԳԼ. Թ.

1 Եւ մտեալ ի նաւ անց յայն-
2 կոյս և եկն ի քաղաք իւր: Եւ
ահա մատուցին առ նա անդա-
մալոյծ մի, որ դնէր ի մահիճս.
և տեսեալ Յիսուսի զհաւատս
նոցա՝ ասէ ցանդամալոյծն.
*Թողեալ լիցին քեզ մեղք քո:
3 Եւ ահա ոմանք ի դպրացն
ասեն ընդ միտս. Հայհոյէ զա:
4 Եւ ծանուցեալ Յիսուսի զմտա-
հուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ընդ-
ի՞նչ խորհիք գուք չարիս՝ ի
5 սիրտս ձեր: Օ՞րինչ դիւրին է.
ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք
քո, թէ ասել Արի՛ և շրջեաց:
6 Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխա-
նութիւն ունի Որդի մարդոյ
յերկրի թողուլ զմեղս. յայնժամ
ասէ ցանդամալոյծն. Արի՝ առ
զմահիճս քո և երթ ի տուն քո:
7 Եւ յարուցեալ գնաց ի տուն
8 իւր: Իբրև տեսին ժողովուրդքն,
զարմացան, և փառաւորեցին զԱստուած զտուիչն այնպիսի
իշխանութեան մարդկան:

9 Եւ անցեալ ընդ այն Յիսուսի
նստեալ զայր մի, զի նստէր ի
մաքսաւորութեան Մատթէոս
անուն, և ասէ ցնա: Եկ զկնի իմ.

Եւ նաւը մտնելով անցաւ այն 1
կողմը, և եկաւ իր քաղաքը: Եւ 2
ահա մի անդամալոյծ բերին
նորա մօտ՝ մահճի մէջ դրած. և
Յիսուսը նորանց հաւատքը տես-
նելով՝ անդամալոյծին ասաց.
Քաջացիր, որդեակ, Քո մեղ-
քերը թողուած են քեզ: Եւ ահա 3
դպիրներից ոմանք իրանց մէջ
ասացին. Դա հայհոյում է: Եւ 4
Յիսուսը նորանց խորհուրդները
տեսնելով, ասաց. Ի՞նչու էք
չար բաներ խորհում ձեր սրտե-
րումը: Ա՞ն զի որն է աւելի 5
հեշտ. ասել՝ Քո մեղքերն թող-
ուած են քեզ, թէ ասել՝ Ա՛ռ
կաց և մտն եկ: Բայց որ իմա- 6
նաք, թէ Որդին մարդոյ իշխա-
նութիւն ունի երկրիս վերայ
մեղքեր թողելու. այն ժամանակ
անդամալոյծին ասաց. Ա՛ռ կաց
քո մահիճը վեր առ և գնա քո
տունը: Եւ նա վերկացաւ գնաց 7
իր տունը: Եւ ժողովուրդ- 8
ները տեսնելով զարմացան, և
Աստուծոյն փառաւորում էին,
որ այնպիսի իշխանութիւն է
տուել մարդկանց:

Եւ Յիսուսն այն տեղից 9
առաջ գնալով, տեսաւ մի մարդ,
որ նստած էր մաքսատանը,
անունը Մատթէոս, և նորան

* Ի Յոյն. Քաջալերեաց որդեակ,

և յարուցեալ գնաց զկնի նորա։
10 Եւ եղև իբրև բազմեալ էր նա
'ի տան, և ահա բազումք մաք-
սաւորք և մեղաւորք եկեալ և
բազմեալ էին ընդ Յիսուսի և
11 ընդ աշակերտս նորա։ Իբրև
տեսին փարիսեցիքն՝ ասեն ցա-
շակերտս նորա. Ընդէր ընդ
մաքսաւորս և ընդ մեղաւորս
12 ուտէ վարդապետն ձեր։ Իսկ
Յիսուս իբրև լուաւ՝ ասէ ցնոսա.
Ո՛չ է պիտոյ բժիշկ կարօղաց՝
13 այլ հիւանդաց։ Երթայք՝ ու-
սարուք զի՝ նչէ. Օղորմութիւն
կամիմ, և ոչ զոհ. զի ոչ եկի
կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։

14 Յայնժամ մատեան առ նա
աշակերտքն Յովհաննու՝ և
ասեն, Ընդէ՞ր մեք և փարիսե-
ցիքն պահեմք յաճախ, և քո
15 աշակերտքդ ոչ պահեն։ Ասէ
ցնոսա Յիսուս. Մի՝թէ մարթ
է՞նչ իցէ մանկանց առագաստի
սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ
նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝
յորժամ՝ բարձցի 'ի նոցանէ
փեսայն, և ապա պահեսցեն։
16 Ոչ ոք արկանէ կապերտ ան-
թափ 'ի վերայ հնացեալ ձորձոյ.
զի առնու եղանէ զլրութիւնն
նորա 'ի հանդերձէն, և ևս չար
17 պատառումն լինի։ Եւ ոչ ար-
կանեն գինի նոր 'ի տիկս հինս.
ապա թէ ոչ՝ տիկքն պատառին՝
ասաց. Իմ ետեւից եկ. և նա
վեր կացաւ գնաց նորա ետեւից։
10 Եւ եղաւ՝ երբոր նա տանը
սեղանի վերայ նստած էր,
և ահա շատ մաքսաւորներ և
մեղաւորներ եկեալ բազմել էին
Յիսուսի և նորա աշակերտների
11 հետ։ Եւ փարիսեցիքը տեսնե-
լով՝ նորա աշակերտներին ասա-
ցին. Ինչու համար մաքսաւոր-
ների և մեղաւորների հետ ու-
տում է ձեր վարդապետը։ Բայց
12 Յիսուսն երբոր լսեց, նորանց
ասաց, Կարողները բժշկի կարօտ
չեն, այլ հիւանդները։ Գնացէք
13 սովորեցէք՝ ի՞նչ է. Ողոր-
մութիւն եմ կամենում՝ և ոչ զոհ.
վասն զի ես չեմ եկել արդարներ-
ին կանչելու, այլ մեղաւոր-
ներին ապաշխարութեան։
14 Այն ժամանակ Յովհաննէսի
աշակերտները նորա մօտ եկան
և ասացին. Ինչու մենք և
փարիսեցիքը շատ ծոմ ենք պա-
հում, և քո աշակերտները ծոմ
չեն պահում։ Եւ Յիսուսը նո-
15 րանց ասաց. Մի՞թէ կարող են
հարսանիքի որդիքը սուգ անել,
քանի որ փեսան նորանց հետ է.
բայց օրեր կ'գան, որ փեսան
նորանցից վեր կ'առնուի, և այն
16 ժամանակ ծոմ կ'պահեն։ Ոչ ոք
չլուացուած կապերտից կար-
կատան չի գցիլ հին հանդերձի
վերայ, վասն զի նորա լրութիւնը
(կարկատանը) կ'առնէ հանդեր-
ձիցը, և պատառուածքն էլ աւելի
17 չար կ'լինի։ Եւ նոր գինին էլ

և գինին հեղուս, և տիկքն
կորնչին. այլ արկանեն զգինի
նոր 'ի տիկս նորս, և երկոքին
պահին։

18 Մինչդեռ նա զայս խօսէր
ընդ նոսա, ահա իշխան մի մա-
տուցեալ երկիրպագանէր նմա՝ և
ասէր. Դուստր իմ արդ ևս
վախճանեցաւ. այլ եկեալ դիցես
զձեռն քո 'ի վերայ նորա՝ և
19 կեցցէ։ Յարեաւ Յիսուս՝ և
գնաց զկնի նորա աշակերտօքն
հանդերձ։
20 Եւ ահա կին մի տեռատես
երկոտասանամեայ՝ մատուցեալ
յետոյ մերձեցաւ 'ի դրօշակ
21 հանդերձի նորա։ Զանգիւ ասէր
'ի մտի իւրում. Եթէ միայն մեր-
ձենամ 'ի հանդերձս նորա՝
22 փրկիմ։ Իսկ Յիսուս իբրև
դարձաւ և ետես զնա՝ ասէ.
Զաքալերեաց դուստր՝ հա-
ւատք քո կեցուցին զքեզ. և
փրկեցաւ կինն 'ի ժամէն յայ-
նմանէ։
23 Իբրև եկն Յիսուս 'ի տուն
իշխանին, և ետես զփողարան և
24 ամբոխս յոյժ*, Ասէ ցնոսա. 'Ի
բաց գնացէք, զի ոչ եթէ մեռեալ
25 է աղջիկդ՝ այլ ննջէ։ Եւ ծաղր
առնէին զնա. և իբրև եկ ամբոխն
'ի բաց, եմուտ կալաւ զձեռանէ
26 նորա, և յարեաւ աղջիկն։ Եւ
եկ համբաւս այս ընդ ամենայն
երկիրն ընդ այն։

հին տկերի մէջ չեն ածիլ. ապա
թէ ոչ՝ տկերը կ'պատառուին՝ և
գինին կ'թափուի, և տկերը
կ'կորչին. այլ նոր գինին նոր
տկերի մէջ կ'ածեն, և երկուսն
էլ կ'պահուին։
18 Դա այս բաները նորանց հետ
խօսելիս, ահա մի իշխան եկաւ
նորան երկրպագեց և ասաց. Իմ
աղջիկը արդէն մեռաւ, միայն
թէ եկ և ձեռդ նորա վերայ դիր՝
19 և կ'ապրի։ Եւ Յիսուսը վեր
կացաւ գնաց նորա ետեւից և
նորա աշակերտներն էլ։
20 Եւ ահա մի տասներկու տար-
ուայ տեռատես կին ետեւիցը մօտ
գալով նորա հանդերձի ծայրին
21 դիպաւ։ Վասն զի իր մտքումն
ասում էր՝ եթէ միայն նորա
հանդերձին դիպչիմ՝ կ'փրկուիմ։
22 Բայց երբոր Յիսուսը յետ դար-
ձաւ նորան տեսաւ և ասաց.
Զաքացիր, դուստր, քո հաւատ-
քը քեզ ապրեցրեց. և ազատ-
ուեցաւ կինը նոյն ժամից։
23 Եւ երբոր Յիսուսն եկաւ
իշխանի տունը և տեսաւ փող
փչողները և շփոթուած ամբոխը.
24 Նորանց ասաց. Դէն գնացէք,
վասն զի այդ աղջիկը մեռած չէ,
այլ քնած է։ Եւ նորանք ծաղր
էին անում նորան։ Եւ երբոր
25 ամբոխը դուրս գցուեցաւ, ինքն
ներս մտաւ՝ նորա ձեռքից բռնեց,
26 և աղջիկը վերկացաւ։ Եւ այս

* 'Ի Յոյն. և զամբոխն զի լային

27 Եւ մինչդեռ անցանէր ընդ
այն Յիսուս, զՀետ եղեն նորա
կոյրք երկու աղաղակէին՝ և
ասէին. Որդեմեաց մեզ Որդի
28 Դաւթի։ Եւ իբրև եկն ի տուն,
մատեան առ նա կոյրքն. և ասէ
ցնոսա Յիսուս. Հաւատայք՝
եթէ կարող եմ առնել ձեզ զայդ.
29 ասեն ցնա՝ Այո՛ Տէր։ Յայնժամ
մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ.
Ըստ հաւատոց ձերոց եղիցի
30 ձեզ։ Եւ բացան աչք նոցա. և
սաստեաց նոցա Յիսուս և ասէ.
Զգոյշ կացէք՝ մի ոք գիտասցէ։
31 Եւ նոքա երեալ համբաւեցին
զնա ընդ ամենայն երկիրն ընդ
այն։

32 Եւ յելանելն նոցա արտաքս,
ահա մատուցին առ նա այր մի
33 համր դիւահար։ Եւ յելանել
դիւին՝ խօսեցաւ համրն. և զար-
մացան ժողովուրդքն՝ և ասեն.
Թէ Եւ ոչ երբեք երևեցաւ
34 այսպիսի ինչ Իսրայէլի։ Իսկ
փարիսեցիքն ասէին, Թէ Իշխա-
նաւն դիւաց հանէ դա զդիւս։

35 Եւ շրջէր Յիսուս ընդ ամե-
նայն քաղաքս և ընդ գիւղս.
ուսուցանէր ի ժողովուրդս
նոցա, և քարոզէր զաւետարանն
արքայութեան. և բժշկէր զամե-
նայն ախտս և զամենայն հիւան-
դութիւնս ի ժողովրդեանն։
36 Եւ տեսեալ զժողովուրդսն՝

համբաւը դուրս եկաւ այն բոլոր
երկիրը։

Եւ Յիսուսն այն տեղից անց- 27
նելիս, երկու կոյր նորա ետևից
գնում էին, աղաղակում և
ասում. Որդեմիր մեզ, Որդի
Դաւթի։ Եւ երբոր տունը 28
մտաւ, կոյրերը նորա մօտ եկան.
և Յիսուսը նորանց ասաց. Հա-
ւատո՞ւմ էք թէ կարող եմ այդ
անել։ Նորան ասացին. Այո, 29
Տէր։ Այն ժամանակ նորանց
աչքերին դիպաւ և ասաց. Ձեր
հաւատքի պէս թող լինի ձեզ։
Եւ նորանց աչքերը բացուեցան։ 30
Եւ Յիսուսը նորանց սաստեց և
ասաց. Զգոյշ կացէք, ոչ ոք
չիմանայ։ Իսկ նորանք դուրս 31
գնացին հռչակեցին նորան այն
բոլոր երկրումը։

Եւ երբոր նորանք դուրս էին 32
գնում, ահա մի համր դիւահար
մարդ բերին նորա մօտ։ Եւ 33
երբոր դևը դուրս հանուեցաւ,
համրը խօսեց. և ժողովուրդ-
ները զարմացան և ասացին, թէ
Երբէք Իսրայէլի մէջ այսպիսի
բան չերևեցաւ։ Բայց փարի- 34
սեցիքն ասում էին, Դևերի իշ-
խանովն է հանում դևերը։

Եւ Յիսուսն ամեն քաղաք- 35
ները և գիւղերը ման էր գալիս,
նորանց ժողովարաններումը սո-
վորեցնելով, և արքայութեան
աւետարանը քարոզելով, և ժո-
ղովրդի մէջ ամեն ցաւն և ամեն
հիւանդութիւնը բժշկելով։ Եւ 36
ժողովուրդներին տեսնելով,

գթացաւ ի նոսա, զի էին
աշխատեալք և ցրուեալք իբրև
զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ։
37 Յայնժամ ասէ ցաշակերտսն
իւր. Հունձք բազում են՝ և
38 մշակք սակաւ։ Արդ աղաչեցէք
զՏէր հնձոց՝ զի հանցէ մշակս
ի հունձս իւր։

ԳԼ. Ժ.

1 Եւ կոչեցեալ առ ինքն զեր-
կոտասանեսին աշակերտսն իւր,
ետ նոցա իշխանութիւն այսոց
պղծոց հանել զնոսա, և բժշ-
կել զամենայն ցաւս և զամե-
նայն հիւանդութիւնս։
2 Եւ առաքելոցն երկոտասանից
էին անուանք այսոքիկ. առաջին
Սիմովն՝ անուանեալն Պետրոս և
3 Անդրէաս եղբայր նորա։ Յա-
կոբոս Զեբեդեայ, և Յով-
հաննէս եղբայր նորա. Փիլիպ-
պոս, և Բարթուղիմէոս. Թով-
մաս, և Մատթէոս մաքսաւոր.
Յակոբոս Ալփեայ, և Ղե-
4 բէոս՝ որ անուանեցաւ Թադէոս։
Սիմովն Կանանացի. և Յուդա
Իսկարիովտացի՝ որ և մատ-
նեացն զնա։
5 Զնոսա երկոտասանեսին առա-
քեաց Յիսուս, պատուիրեաց
նոցա՝ և ասէ. Ի ճանապարհ
Հեթանոսաց մի երթայցէք, և
ի քաղաք Սամարացւոց մի
6 մտանիցէք։ Այլ երթայք առա-
ւել առ ոչխարսն կորուսեալս
7 տանն Իսրայէլի։ Եւ իբրև եր-

գթացաւ նորանց վերայ, որ յոգնած
և ցիրուցան եղած էին, ինչպէս
ոչխարներ որ հովիւ չունին։
Այն ժամանակ իր աշակերտնե- 37
րին ասաց. Հունձքը շատ է,
բայց մշակները քիչ։ Արդ ա- 38
ղաչեցէք հնձի Տիրոջն, որ մշակ-
ներ հանէ իր հունձի մէջ։

ԳԼ. Ժ.

Եւ իր տասներկու աշակերտ- 1
ներին իր մօտ կանչեց, և նո-
րանց իշխանութիւն տուաւ պիղծ
հոգիների վերայ, որ նորանց
հաներն. և ամեն ցաւ և ամեն
հիւանդութիւն բժշկեն։
Եւ այն տասներկու առաքե- 2
լոց անունները այս են. առաջինը
Սիմոն՝ Պետրոս կոչուածը, և
նորա եղբայրն Անդրէաս։ Յա- 3
կոբոս Զեբեդեանն՝ և նորա
եղբայրը՝ Յովհաննէս. Փիլիպ-
պոս և Բարթուղիմէոս. Թովմաս
և Մատթէոս մաքսաւորը.
Յակոբոս Ալփեան. և Ղեբէոս
որ Թադէոս մականուանուեցաւ։
Սիմոն Կանանացին՝ և Յուդա 4
Իսկարիոտացին, որ մատնեց էլ
նորան։
Այս տասներկուսին ուղարկեց 5
Յիսուսը, նորանց պատուէր
տուաւ և ասաց. Հեթանոսների
ճանապարհ չգնաք, և Սամա-
րացոց քաղաք չմտնէք. Բայց 6
աւելի գնացէք Իսրայէլի տան
կորած ոչխարների մօտ։ Եւ 7
երբոր կ՚գնաք, քարոզեցէք և

Թայցէք բարողեցէք և ասացէք,
Թէ Ս՝երձեալ է արքայութիւն
8 երկնից։ Զհիւանդս բժշկեցէք,
զբորոտս սրբեցէք,* զդեւս հանէք,
9 ձրի առիք՝ և ձրի տուք. Ա՝ի
ստանայք ոսկի՝ և մի արծաթ՝ և
10 մի պղինձ ՝ի գօտիս ձեր։ Ա՝ի
պարկ ՝ի ճանապարհ, և մի
երկուս հանդերձս, մի կօշիկս,
մի ցուպ. զի արժանի է մշակն
11 կերակրոյ իւրոյ։ Յոր քաղաք
մտանիցէք կամ ՝ի գեօղ, հար-
ցանիցէք՝ Թէ ո՞ է ՝ի նմա
արժանի. և անդ լինիջիք՝ մինչև
12 ելանիցէք անտի։ Եւ իբրև
մտանիցէք ՝ի տունն, ողջոյն
տայջիք նմա†՝ և ասասցիք.
13 Ողջոյն տանս այսմիկ"։ Եթէ
իցէ տունն արժանի, եկեսցէ
ողջոյնն ձեր ՝ի վերայ նորա.
ապա Թէ ոչ իցէ արժանի,
ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։
14 Եւ որ ոչ ընկալցի զձեզ՝ և ոչ
լուիցէ բանից ձերոց, իբրև ելա-
նիցէք ՝ի տանէն կամ ՝ի քաղաքէն
յայնմանէ, Թօթափեսջիք զփո-
15 շին յոտից ձերոց։ Ամէն ասեմ
ձեզ՝ Դիւրագոյն լիցի երկրին
Սոդոմացւոց և Գոմորացւոց
յաւուրն դատաստանի, քան
քաղաքին այնմիկ։
16 Զհաւասիկ ես առաքեմ զձեզ
իբրև զոչխարս ՝ի մէջ գայլոց.
եղերուք այսուհետև խորագէտք
իբրև զօձս, և միամիտք իբրև
17 զաղաւնիս։ Զգոյշ լինիջիք ՝ի

ասացէք, Թէ երկնից արքայու-
Թիւնը մօտեցել է։ Հիւանդնե- 8
րին բժշկեցէք, բորոտներին
սրբեցէք, մեռեալներին յարու-
ցէք, դեւերը հանեցէք. ձրի առել
էք, ձրի տուէք։ Ոչ եր մի առնէք 9
ոսկի, և ոչ արծաթ, և ոչ պղինձ
ի՝ ձեր գօտիներուն մէջ։ Ոչ ճա- 10
նապարհի պարկ, և ոչ երկու
հանդերձ, և ոչ կօշիկներ, և ոչ
գաւազան. վասն զի մշակն իր
կերակրին արժանի է։ Եւ որ 11
քաղաք՝ կամ գիւղ որ մտնէք,
հարցրէք Թէ նորանում ով է
արժանի, և այն տեղ կացէք՝
մինչև որ այն գնաք։
Եւ երբոր տունը կ՝մտնէք, բարև 12
տուէք նորան։ Եւ եթէ այն 13
տունն արժանի է, ձեր բարևը
նորա վերայ գայ, բայց եթէ
արժանի չէ, ձեր բարևը յետ
դառնայ դէպի ձեզ։ Եւ ով որ 14
ձեզ չընդունի և ոչ էլ ձեր խօս-
քին ականջ դնէ, երբոր այն տա-
նիցը կամ այն քաղաքիցը դուրս
գնաք, ձեր ոտներուն փոշին Թօ-
Թափեցէք։ Ճշմարիտ ասում 15
եմ՝ ձեզ, որ Սոդոմացոց և Գո-
մորացոց երկրի համար աւելի
հեշտ կ՝լինի դատաստանի օրումը
քան Թէ այն քաղաքին։
Զհա ես ուղարկում եմ ձեզ 16
ինչպէս ոչխարներ գայլերի մէջ,
ուստի խորագէտ եղէք ինչպէս
օձերը, և միամիտ՝ ինչպէս աղաւ-
նիքը։ Եւ զգոյշ կացէք մարդ- 17

* ՝Ի Յունն, զմեռեալս յարուցէք,
† ՝Ի Յունն չկայ։

մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ
յատեանս. և ՝ի ժողովուրդս
18 իւրեանց տանջեսցեն զձեզ։ Եւ
առաջի դատաւորաց և թագա-
ւորաց տանիցեն զձեզ վասն իմ՝ ՝ի
վկայութիւն նոցա և Հեթա-
19 նոսաց։ Այլ յորժամ մատնեսցեն
զձեզ, մի հոգայցէք՝ Թէ որպէս
կամ՝ զի՞նչ խօսիցիք. զի տայցի
ձեզ ՝ի ժամուն յայնմիկ զինչ
20 խօսիցիք։ Զի ոչ եթէ դուք
իցէք՝ որ խօսիցիքն, այլ Հոգին
Հօր ձերոյ որ խօսիցի ՝ի ձեզ։
21 Ա՝ատանեսցէ եղբայր զեղբայր ՝ի
մահ, և հայր զորդի. և յա-
րիցեն որդիք ՝ի վերայ հարց և
22 սպանանիցեն զնոսա։ Եւ եղիջիք
ատելեալք յամենեցունց վասն
անուան իմոյ. իսկ որ համբեւ-
23 ռեսցէ ՝ի սպառ, նա կեցցէ։ Եւ
յորժամ հալածեսցեն զձեզ ՝ի
քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք
յայլ. և եթէ յայնմանէ հալա-
ծիցեն զձեզ՝ փախիջիք ՝ի միւս.
ամէն ասեմ՝ ձեզ՝ Ո՛չ սպառեսջիք
24 զքաղաքս Իսրայէլի՝ մինչև եւ-
կեսցէ Որդի մարդոյ։ Ո՛չ է աշա-
կերտ առաւել քան զվարդապետ,
և ոչ ծառայ քան զտէր իւր։
25 Հ՝ատ իցէ աշակերտին՝ եթէ
եղիցի իբրև զվարդապետ իւր,
և ծառային՝ իբրև զտէր իւր.
եթէ զտանուտէրն Բէեղզեբուղ
26 կոչեցին, որչափ ևս առաւել
զընտանիս նորա։ Ա՝ի այսու-
հետև երկնչիցիք՝ ՝ի նոցանէ. զի
ոչ ինչ է ՝ի ծածուկ՝ որ ոչ
յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ

կանցից. վասն զի ձեզ դատաս-
տանի կ՝մատնեն, և իրանց ժողո-
վարանների մէջ կ՝ծեծեն ձեզ,
Եւ կուսակալների և թագաւոր- 18
ների առջև կ՝տարուիք իմ՝ պատ-
ճառովը, որ սա նորանց և հե-
թանոսներին վկայութիւն լինի։
Բայց երբոր մատնեն ձեզ, հոգս 19
մի անէք՝ Ինչպէս կամ՝ ի՞նչ
պիտի խօսիք. վասն զի նոյն ժա-
մումը կ՝տրուի ձեզ ինչ որ պիտի
խօսիք։ Բանզի չէ թէ դուք էք 20
խօսողները, բայց ձեր Հօր
Հոգին, որ ձեզանում խօսում
է։ Եւ եղբայր եղբօրը մահու 21
կ՝մատնէ, և հայրը որդուն, և
որդիքը վեր կ՝կենան նրանց ծնո-
ղաց վերայ՝ և կ՝սպանեն նո-
րանց։ Եւ ամենից կ՝ատուիք իմ 22
անունի համար. բայց ով որ
կ՝համբերէ մինչև վերջը, նա
կ՝ապրի։ Եւ երբոր հալածեն 23
ձեզ այս քաղաքումը, փախէք
ուրիշը. վասն զի ճշմարիտն
ասում եմ՝ ձեզ, չէք վերջացնիլ
Իսրայէլի քաղաքները մինչև որ
Որդին մարդոյ կ՝գայ։ Աշակերտ 24
տը վարդապետիցը բարձր չէ,
և ոչ ծառան բարձր է իր տիրո-
ջիցը։ Բաւական է աշակերտին, 25
որ իր վարդապետի նման լինի, և
ծառան՝ իր տիրոջ նման։ Եթէ
տան տիրոջը Բէեղզեբուղ կոչե-
ցին, ապա որքան աւելի նորա
ընտանիքը։ Ուստի մի վախենաք 26
նորանցից. վասն զի ոչինչ չկայ
ծածուկ, որ յայտնուի, և թա-
գուն բան՝ որ չիմացուի։ Ինչ 27

27 ծանիցի։ Օ՛որ ասեմ ձեզ՝ ի
խաւարի՝ ասացէք ի լոյս. և զոր
լսէք յականջս՝ քարոզեցէք ի
28 վերայ տանիցաց։ Եւ մի երկնչիք
յայնցանէ՝ որ սպանանեն զմար-
մին, և զոգի ոչ կարեն սպանանել.
այլ երկերուք զուք առաւել
յայնմանէ՝ որ կարող է զոգի և
զմարմին կորուսանել՝ ի գեհենի։
29 Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք.
դանկի միոջ վաճառին, և մի ի
նոցանէ յերկիր ոչ անկցի առանց
30 Հօր ձերոյ։ Այլ ձեր և ամե-
նայն իսկ հեր գլխոյ թուեալ է։
31 Եւ արդ՝ մի երկնչիցիք՝ զի լաւ
էք քան զբազում ճնճղուկս։
32 Ամենայն որ խոստովանեսցի յիս
առաջի մարդկան, խոստովանե-
ցից և ես զնմանէ առաջի Հօր
33 իմոյ՝ որ յերկինսն է։ Եւ որ
ուրասցի զիս առաջի մարդկան,
ուրացայց և ես զդնա առաջի
34 Հօր իմոյ՝ որ յերկինսն է։ Մի՛
համարիք եթէ եկի արկանել
խաղաղութիւն յերկիր. ոչ եկի
արկանել խաղաղութիւն, այլ
35 սուր։ Պատսպի եկի քակել զայր
ի հօրէ իւրմէ, և զդուստր ի
մօրէ իւրմէ, և զհարսն ի սկեսրէ
36 իւրմէ։ Եւ թշնամիք առն
37 ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր
կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ
է ինձ արժանի. և որ սիրէ զուստր
կամ զդուստր առաւել քան զիս՝
38 չէ ինձ արժանի։ Եւ որ ոչ
առնու զխաչ իւր՝ և գայ զկնի
39 իմ, չէ ինձ արժանի։ Որ գտանէ
զանձն իւր, կորուսցէ զնա՝ և որ
որ ասում եմ ձեզ խաւարումը,
լոյսի մէջ ասացէք. և ինչ որ
ականջում լսում էք, կտրներին
վերայ քարոզեցէք։ Եւ մի 28
վախենաք նորանցից, որ մար-
մինն սպանում են և հոգին չեն
կարող սպանել, այլ աւելի
վախեցէք նորանից, որ կարող
է հոգին էլ մարմինն էլ կորցնել
գեհենի մէջ։ Ո՞չ որ երկու 29
ճնճղուկ մի դանկի են ծախվում,
և նորանցից մէկը չի ընկնիլ
գետինն առանց ձեր Հօր։ Իսկ 30
ձեր գլխի ամեն մազերն էլ հա-
մարուած են։ Ուրեմն մի վախե- 31
նաք. դուք շատ ճնճղուկներից
աւելի լաւ էք։ Արդ ամեն ով որ 32
ինձ մարդկանց առջև դաւանէ,
ես էլ նորան կ'դաւանեմ՝ իմ Հօր
առջև որ երկնքումն է։ Եւ ով 33
որ ինձ ուրանայ մարդկանց առ-
ջև, ես էլ կ'ուրանամ նորան իմ
Հօր առջև որ երկնքումն է։ Մի՛ 34
կարծէք՝ թէ եկայ երկրիս վերայ
խաղաղութիւն գցելու. չեկայ
խաղաղութիւն գցելու, այլ սուր։
Վասն զի եկայ բաժանելու 35
մարդն իր հօր դէմ, և աղջիկն
իր մօր դէմ, և հարսն իր սկեսրի
դէմ։ Եւ մարդոյ թշնամիներն 36
իր ընտանիքը կ'լինին։ Ով որ 37
հօրը կամ մօրը ինձանից աւելի
է սիրում, նա ինձ արժանի չէ.
և ով որ էլ որդին կամ աղջիկն
ինձանից աւելի է սիրում, նա
ինձ արժանի չէ։ Եւ ով որ չէ 38
առնում իր խաչն և իմ ետևից
գալիս, նա ինձ արժանի չէ։ Ով 39

կորոյս զանձն իւր վասն իմ,
40 գտցէ զնա։ Որ ընդունի զձեզ՝
զիս ընդունի, և որ զիս ընդ-
ունի՝ ընդունի զառաքիչն իմ։
41 Որ ընդունի զմարգարէ յանուն
մարգարէի՝ զվարձս մարգարէի
առցէ, և որ ընդունի զար-
դար յանուն արդարոյ՝ զվար-
42 ձքս արդարոյ առցէ։ Եւ որ
արբուսցէ միում՝ ի փոքրկանցս
յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ
միայն՝ յանուն աշակերտի, ամէն
ասեմ ձեզ, Ոչ կորուսցէ զվարձս
իւր։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղև իբրև կատարեաց
Յիսուս զպատուէր երկոտասա-
նից աշակերտացն իւրոց, գնաց
անտի քարոզել և ուսուցանել՝ ի
քաղաքս նոցա։

2 Իսկ Յովհաննէս իբրև լուաւ
՝ի բանտին զգործսն Քրիս-
տոսի, առաքեաց՝ ի ձեռն
3 աշակերտացն իւրոց, Եւ ասէ
ցնա. Դո՞ւ ես՝ որ գալոցն ես,
եթէ այլում ակն կալցուք։
4 Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ
ցնոսա. Գնացէք պատմեցէք
Յովհաննու, զոր լուայք և տեսէք։
5 Կայրք տեսանեն, կաղք գնան,
բորոտք սրբին, և խուլք լսեն, և
մեռեալք յառնեն, և աղքատք

որ իրան անձը գտնում է՝
կ'կորցնէ նորան. և ով որ իր
անձն ինձ համար կորցրեց՝
կ'գտնէ նորան։ Ով որ ձեզ ըն- 40
դունում է, ինձ է ընդունում.
և ով որ ինձ ընդունում է, ինձ
ուղարկողին է ընդունում։ Ով 41
որ մարգարէ է ընդունում մար-
գարէի անունով, նա մարգարէի
վարձք կ'առնէ. և ով որ արդար
է ընդունում արդարի անունով,
արդարի վարձք կ'առնէ։ Եւ ով 42
որ այս փոքրներից մէկին միայն
մի աման ցուրտ ջուր խմեցնէ
աշակերտի անունով, ճշմարիտն
ասում եմ ձեզ, նա չի կորցնիլ իր
վարձքը։

ԳԼ. ԺԱ.

Եւ եղաւ երբոր Յիսուսն իր 1
տասներկու աշակերտներին պա-
տուէր տալը վերջացրեց, այն
տեղից գնաց նորանց քաղաք-
ներումը սովորեցնելու և քարո-
զելու։
Եւ Յովհաննէսը բանտումը 2
Քրիստոսի գործքերը լսելով,
իր աշակերտներից երկուսն ու-
ղարկեց։ Եւ նորան ասաց, 3
Դո՞ւ ես այն որ գալու էիր, թէ
ուրիշի՞ սպասենք։ Եւ Յիսուսը 4
պատասխան տուաւ և նորանց
ասաց. Գնացէք Յովհաննէսին
պատմեցէք ինչ որ լսում էք և
տեսնում էք. Կայրերը տեսնում 5
են, և կաղերը գնում են, բո-
բոտները սրբվում են, և խուլերը

6 աւետարանին։ Եւ երանելի է
որ ոչ գայթակղեսցի յիս։

7 Եւ իբրև նոքա գնացին,
սկսաւ Յիսուս ասել ցժողո-
վուրդսն զՅովհաննէ. Զի՞նչ
ելէք տեսանել յանապատին,
8 եղէգն շարժուն ի հողմոյ։ Այլ
զի՞նչ ելէք տեսանել, մարդ ի
հանդերձս փափկութեան զար-
դարեալ. ահաւասիկ որ ըստ-
փուկսն զգեցեալ են՝ ի տունս
9 թագաւորաց են։ Այլ զի՞նչ
ելէք տեսանել. մարգարէ՞. այո՝
ասեմ ձեզ, Եւ առաւել ևս քան
10 զմարգարէ։ Զի նա է վասն
որոյ գրեալն է. Ահա ես առա-
քեցից զհրեշտակ իմ առաջի
երեսաց քոց՝ որ պատրաս-
տեսցէ զճանապարհս քո առաջի
11 քո։ Ամէն ասեմ ձեզ՝ Ոչ յա-
րուցեալ ի ծնունդս կանանց մե-
ծ քան զՅովհաննէս մկրտիչ.
բայց փոքրիկն յարքայութեան
12 երկնից մեծ է քան զնա։ Բայց
յաւուրցն Յովհաննու մկրտչի
մինչև ցայժմ՝ արքայութիւնն
երկնից բռնադատի, և բռունք
13 յափշտակեն զնա։ Քանզի
ամենայն օրէնք և մարգարէք
մինչև ցՅովհաննէս մարգարէ-
14 ացան։ Եւ թէ կամիք ընդունել՝
15 նա է Եղիա՝ որ գալոցն է։ Որ
ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։
16 Որմ՞ նմանեցուցից զազգս զայս.
նման է մանկտւոյ՝ որ նստիցին

յսում են, մեռելները յարութիւն
են առնում, և աղքատներին
աւետարան է քարոզվում։ Եւ 6
երանելի է նա, որ ինձ վերայ չի
գայթակղի։

Բայց երբոր նորանք գնացին, 7
Յիսուսն սկսեց ժողովուրդներին
ասել Յովհաննէսի համար. Ի՞նչ
տեսնելու դուրս գնացիք անա-
պատը, մի եղէգ քամուց շարժ-
ուած։ Այլ ի՞նչ տեսնելու 8
դուրս գնացիք. մի մարդ փա-
փուկ շորերով հագուած, ահա
փափուկ հագնողները թագա-
ւորաց տներումն են։ Բայց ի՞նչ 9
տեսնելու դուրս գնացիք, մի
մարգարէ՞. այո, ասում եմ ձեզ,
մարգարէից էլ շատ աւելին։
Այն զի սա այն է՝ որի համար 10
գրուած է. Ահա ես իմ հրեշ-
տակը ուղարկում եմ քո երեսի
առջև, որ քո ճանապարհը քո
առջև պատրաստէ։ Ճշմարիտն 11
ասում եմ ձեզ. կանանց ծնած-
ների մէջ չէ վեր կացել Յովհան-
նէս մկրտչից մի մեծը, բայց
երկնքի արքայութեան մէջ
փոքրը նորանից մեծ է։ Բայց 12
Յովհաննէս մկրտչի օրերից
մինչև հիմա երկնքի արքայու-
թիւնն ուժով է առնվում, և
ուժովներն յափշտակում են նո-
րան։ Այն զի ամեն մարգա- 13
րէքն և օրէնքը մինչև Յովհան-
նէսը մարգարէացան։ Եւ եթէ 14
կամենում էք ընդունել՝ նա է
Եղիան, որ գալու էր։ Ով որ 15
լսելու ականջ ունի՝ թող լսէ։

ի հրապարակս, կարդայցեն
17 զընկերս իւրեանց, Եւ ասիցեն.
Փող հարաք ձեզ՝ և ոչ կաքա-
ւեցէք, ողբացաք ձեզ՝ և ոչ
18 կոծեցարուք։ Եկն Յովհաննէս,
ոչ ուտէր և ոչ ըմպէր, և ասեն՝
19 Դև գոյ ի նմա։ Եկն Որդի
մարդոյ՝ ուտէ և ըմպէ. և ասեն,
Ահա այր կերող և արբցող,
բարեկամ մաքսաւորաց և մեղա-
ւորաց. և արդարացաւ իմաս-
տութիւն յորդւոց իւրոց։

20 Յայնժամ սկսաւ նախատել
զքաղաքսն՝ յորս եղեն բազում
զօրութիւնք նորա, և ոչ ապաշ-
21 խարեցին։ Վա՜յ քեզ Քորա-
զին, վա՜յ քեզ Բեթսայիդա.
զի եթէ ի Տիւրոս և ի Սիդոն
եղեալ էին զօրութիւնքն՝ որ ի
ձեզ եղեն, վաղու ևս արդեօք
խորգով և մոխրով ապաշխար-
22 եալ էր։ Բայց ասեմ ձեզ.
Դիւրագոյն լիցի երկրին Տիւ-
23 րոսի և Սիդոնի յաւուրն դատաս-
տանի՝ քան ձեզ։ Եւ դու Կա-
փառնաում,* մի մինչև յերկինս
բարձրացիս, այլ՝ մինչև ի
դժոխս իջցես. զի եթէ ի Սոդոմ
եղեալ էին զօրութիւնքն որ ի
քեզ եղեն, ապաքէն կային ևս
24 մինչև ցայսօր։ Բայց ասեմ ձեզ՝
Եթէ երկրին Սոդոմացւոց դիւ-

Բայց ումի՞ նմանեցնեմ այս ազգը, 16
այն տղայոց նման է, որ փողոց-
ներումը նստած իրանց ընկեր-
ներին կանչում են, Եւ ասում.
փող փչեցինք ձեզ համար, և 17
պար չեկաք. ողբացինք ձեզ հա-
մար, և կոծ չարիք։ Այն զի 18
Յովհաննէսն եկաւ, ոչ ուտում
էր և ոչ խմում էր. և ասում
են, Դև կայ նորանում։ Եկաւ 19
Որդին մարդոյ, ուտում է և
խմում է, և ասում են. Ահա
ուտող և գինի խմող մարդ,
մաքսաւորների և մեղաւորների
բարեկամ, և իմաստութիւնն
արդարացաւ իր որդիներիցը։

Այն ժամանակ սկսեց նախա- 20
տել այն քաղաքներին, որոնցում
եղան նորա հրաշքների շատերը,
վասն զի չապաշխարեցին։ Այ 21
քեզ, Քորազին. վայ քեզ, Բեթ-
սայիդա. վասն զի եթէ Տիւ-
րոսի և Սիդոնի մէջ եղած լինէին
այն հրաշքներն որ ձեր մէջ եղան,
շատոնց քրձով և մոխրով ապաշ-
խարել էին։ Բայց ասում եմ 22
ձեզ. Տիւրոսին և Սիդոնին
աւելի հեշտ կ'լինի դատաստանի
օրումը քան թէ ձեզ։ Եւ դու, 23
Կապառնաում, որ մինչև երկին-
քը բարձրացած ես, մինչև
դժոխքը կ'ցածանաս, վասն զի
եթէ Սոդոմի մէջ եղած լինէին
այն հրաշքներն որ քեզանում եղան, մինչև այսօր դեռ
կ'մնային։ Բայց ասում եմ ձեզ, 24

* 'Ի Յոյն, որ մինչև յերկինս բարձրացեալ ես,

բազդն լցի յաւուրն դատաստանի՝ քան քեզ։

25 Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. Խոստանամ զքեզ Հայր՝ Տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց, և
26 յայտնեցեր տղայոց։ Այո՛ Հայր. զի այսպէս հաճոյ եղև առաջի
27 քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. և ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, և ոչ զՀայրն ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի, և ում Որդին կամիցի
28 յայտնել։ Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ։
29 Առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հան-
30 գիստ անձանց ձերոց։ Օ՛ի լուծ իմ քաղցր է. և բեռն իմ փոքրոգի։

ԳԼ. ԺԲ

1 Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայսն նոցա ի շաբաթու. և աշակերտքն նորա քաղցեան, և սկսան հասկ կորզել և ուտել։
2 Փարիսեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա. Ահաւասիկ աշակերտք քո գործեն, զոր ոչ է արժան գոր-
3 ծել ի շաբաթու։ Եւ նա ասէ որ Սողոմայեցոց երկրի համար աւելի հեշտ կ՚լինի դատաստանի օրուն, քան թէ քեզ։

25 Յայն ժամանակին Յիսուսը պատասխան տուաւ և ասաց. Խոստանում եմ քեզանից, ով Հայր երկնքի և երկրի Տէր. որ իմաստուններից և գիտուններից այս բաները ծածկեցիր և
26 տղայոց յայտնեցիր։ Այո՛, ով Հայր. վասն զի այսպէս հաճոյ
27 եղաւ քո առջև։ Ամեն բան ինձ տրուեցաւ իմ Հօրից. և ոչ ով չէ ճանաչում Որդին՝ բայց միայն Հայրը. և ոչ ով չէ ճանաչում Հօրը՝ բայց միայն Որդին. և ում որ Որդին կամենայ
28 յայտնել։ Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ և բեռնաւորուածներ, և ես հանգիստ կ՚տամ
29 ձեզ։ Ձեզ վերայ առէք իմ լուծը և ինձանից սովորեցէք. վասն զի ես հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անձերի հա-
30 մար հանգստութիւն կ՚գտնէք։ Վասն զի իմ լուծը քաղցր է, և իմ բեռը թեթև։

ԳԼ. ԺԲ

1 Այն ժամանակ Յիսուսը շաբաթի օրը գնաց նորանց արտերի միջովը, և նորա աշակերտները սովեցին, և սկսեցան հասկ
2 պոկել և ուտել։ Եւ երբոր փարիսեցիները տեսան, նորան ասացին. Ահա քո աշակերտներն
3 անում են, ինչ որ արժան չէ

ցնոսա. Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ, յորժամ քաղցեաւն, եւ որ ընդ նմայն
4 էին։ Օ՛ի թարգ եմուտ ի տունն Աստուծոյ՝ և եկեր զՀացն զառաջաւորութեան. զոր ոչ էր օրէն նմա ուտել, և ոչ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։
5 Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի ի շաբաթս քահանայքն ի տաճարին պղծեն զշա-
6 բաթն՝ և անմեղք են։ Բայց ասեմ ձեզ՝ Օ՛ի մեծ քան զտա-
7 ճարն է աստ։ Եւ եթէ գիտէիք զինչ է Օ՛ողորմութիւն կամիմ՝ և ոչ զզոհ. ապա ոչ դատապարտէիք դուք զանպարտսն։
8 Օ՛ի տէր է շաբաթու՝ Որդին մարդոյ։

9 Եւ գնացեալ անտի * Յիսուս
10 եկն ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին ցնա՝ և ասեն, եթէ Պարտ իցէ՞ ի շաբա-
11 թու բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա ասէ ցնոսա. Ո՞վ է ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ի խորխորատ ի շաբաթու. միթէ
12 ոչ ունիցի և յարուցանիցէ զնա. Իսկ արդ որչափ ևս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է ի շաբաթու բարիս
13 գործել։ Յայնժամ ասէ ցայրն. Զգեա՛ զձեռն քո, և նա ձգեաց՝
14 և եղև ողջ իբրև զմիւսն։ Իսկ

3 շաբաթի օրն անել։ Դա էլ ասաց նորանց. Դուք չէք՞ կարդացել, թէ ինչ արաւ Դաւիթը, երբոր ինքը սովեց և նորա հետ լինողներն էլ։ Թէ ինչպէս Աստուծոյ
4 տունը մտաւ և առաջաւորութեան հացը կերաւ, որ օրինաւոր չէր նորան ուտել, և ոչ էլ նորա հետ լինողներին, բայց միայն քահանաներին։ Կամ չէք կարդա-
5 ցել օրէնքումը, որ քահանայքը շաբաթի օրերումն տաճարի մէջ շաբաթը պղծում են, և անմեղ են։ Բայց ասում եմ ձեզ՝ Որ
6 տաճարիցն էլ մեծն է այստեղ։ Բայց եթէ գիտէիք՝ ինչ է Ո-
7 ղորմութիւն եմ ուզում և ոչ թէ զոհ. դուք չէիք դատապարտիլ անմեղներին։ Վասն զի շաբաթի
8 էլ տէրն է Որդին մարդոյ։

9 Եւ Յիսուսը այն տեղից գնաց՝
10 եկաւ նորանց ժողովարանը։ Եւ ահա մի մարդ կար՝ ձեռը չորացած. նորան հարցրին և ասացին՝ թէ շաբաթի օրումն արժան է բժշկութիւն անել. որ նորա-
11 նից չարախօսեն։ Եւ նա ասաց նորանց. Ո՞վ կ՚լինի ձեզանից այն մարդն, որ մէկ ոչխար ունենայ, և եթէ նա ընկնի փոսի մէջ շաբաթի օրը, մի՞թէ չի բռնել
12 նորան և վեր հանել։ Դա որքան առաւել է մարդը ոչխարից. ապա ուրեմն արժան է շաբաթի
13 օրը բարիք գործել։ Այն ժամանակ ասաց այն մարդուն, Ձեռդ մեկնիր, նա էլ մեկնեց, և նա

* Ի Յոյն չէր։

փարիսեցիքն ելեալ արտաքս
խորհուրդ առին զնմանէ թէ
որպէս կորուսցեն զնա։

15 Եւ Յիսուս իբրև գիտաց,
մեկնեցաւ անտի. և գնացին
զհետ նորա ժողովուրդք բա-
զումք, և բժշկեաց զամենեսեան։
16 Եւ սաստեաց նոցա՝ զի մի՛ յայտ-
17 նեսցեն զնմանէ ումեք։ Օ՛ի
լցցի որ ասացաւն 'ի ձեռն Եսայ-
18 եայ մարգարէի։ Ահա մանուկ
իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝
ընդ որ հաճեցաւ անձն իմ.
եդից զՈգի իմ 'ի վերայ նորա,
և իրաւունս Հեթանոսաց պատ-
19 մեսցէ։ Ո՛չ հակառակեսցի՝ և
ո՛չ աղաղակեսցէ, և ո՛չ ոք
լուիցէ 'ի հրապարակս զբարբառ
20 նորա։ Օ՛ղեգն ջախջախեալ
ո՛չ փշրեսցէ, և զպատրոյգն
առկայծեալ ո՛չ շիջուսցէ. մինչև
հանցէ 'ի յաղթութիւն զդա-
21 տաստան. Եւ յանուն նորա Հե-
թանոսք յուսասցին։

22 Յայնժամ մատուցաւ առ նա
դիւահար մի կոյր և համր, և
բժշկեաց զնա. որպէս զի համրն
և կոյրն խօսիցի և տեսանիցէ։
23 Օ՛արմացան ամենայն ժողո-
վուրդքն՝ և ասէին. Ա՞յնթէ սա՞
իցէ* Որդիս Դաւթի՞։
24 Բայց փարիսեցիքն իբրև լուան՝
ասեն. Ո՛չ իւիք հանէ դա զդեւս՝
եթէ ոչ Բէեղզեբուղաւ իշխա-
25 նաւն դիւաց։ Իբրև գիտաց
Յիսուս զխորհուրդս նոցա՝ ասէ
ցոսա. Ամենայն թագաւորու-
թիւն բաժանեալ յանձն իւր՝
աւերի. և ամենայն քաղաք կամ
տուն բաժանեալ յանձն իւր՝
26 ո՛չ կացցէ։ Եւ եթէ Սատանայ
զՍատանայ հանէ. յանձն իւր
բաժանեցաւ. արդ զիա՞րդ կացցէ
27 թագաւորութիւն նորա։ Եւ
եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ
զդեւս՝ որդիքն ձեր ի՞նչպէս
հանեմ զդեւս՝ վասն այնորիկ նոքա եղիցին ձեր
28 դատաւորք։ Այլ թէ Հոգւով
Աստուծոյ հանեմ ես զդեւս,
ուրեմն հասեալ է 'ի վերայ ձեր
29 արքայութիւն Աստուծոյ։ Կամ
զիա՞րդ կարէ ոք մտանել 'ի տուն
հզօրի՝ և զգործիսն նորա յա-
փշտակել, եթէ ոչ նախ կապիցէ
զհզօրն, և ապա զտունն նորա
30 յափշտակիցէ։ Որ ո՛չ ընդ իս
է, հակառակ իմ է. և որ ո՛չ
31 ժողովէ ընդ իս ցրուէ։ Վասն
այդորիկ ասեմ ձեզ. Ամենայն
մեղք և հայհոյութիւնք թողցին
մարդկան. բայց զՀոգւոյն հայ-
32 հոյութիւն մի՛ թողցի*։ Եւ որ
ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝
թողցի նմա. բայց որ զՀոգւոյն
Սրբոյ ասիցէ՝ մի՛ թողցի նմա,
մի՛ յայսմ՝ աշխարհի և մի՛ 'ի
33 հանդերձելումն։ Կամ արարէք
ծառն բարի՝ և զպտուղ նորա
բարի, կամ արարէք ծառն չար՝
և զպտուղ նորա չար. քանզի 'ի
պտղոյ անտի ծառն ճանաչի։
34 Օ՛ձնունդք իժից. զիա՞րդ կարիցէք բարիս խօսել՝ որ չարքդ

խորհուրդքն իմանալով, ասաց
նորանց. Ամեն թագաւորու-
թիւն, որ իր դէմ բաժանուած
է, կ'աւերուի, և ամեն քաղաք
կամ տուն, որ իր դէմ բաժան-
26 ուած է չի մնալ։ Եւ թէ որ
սատանան սատանային հանում
է, իր դէմ բաժանուեցաւ. էլ
ի՞նչպէս նորա թագաւորութիւ-
նը կ'կենայ։ Եւ եթէ ես Բէ-
27 եղզեբուղով եմ հանում դեւերը,
ապա ձեր որդիքն ի՞նչով են
հանում. սորա համար նորանք
կ'լինին ձեր դատաւորներ։ Բայց
28 եթէ ես Աստուծոյ Հոգովն եմ
հանում դեւերը, ուրեմն Աստու-
ծոյ արքայութիւնը ձեզ վերայ
հասել է։ Կամ ի՞նչպէս մեկը
29 կարող է զօրաւոր մարդու տունը
մտնել՝ և նորա կարասիները
յափշտակել, եթէ առաջ չկապէ
այն զօրաւորին, և յետոյ նորա
տունը կ'յափշտակէ։ Ով որ
30 ինձ հետ չէ, ինձ հակառակ է.
և ով որ ինձ հետ չէ ժողովում՝
ցրվում է։ Սորա համար ասում
31 եմ ձեզ. Ամեն մեղք և հայհո-
յանք կ'թողուի մարդկանց,
բայց Հոգւոյն դէմ հայհոյանքը
32 չի թողուիլ մարդկանց։ Եւ ով
որ մարդոյ Որդւոյն դէմ բան
ասէ՝ կ'թողուի նորան. բայց
ով որ Սուրբ Հոգւոյն դէմ ասէ,
նորան չի թողուիլ, ոչ այս աշ-
խարհքումը և ոչ գալու աշխարհումը։
33 Կամ ծառը բարի արէք՝
և նորա պտուղն էլ բարի. կամ

* 'Ի Յոյն, որդին Դաւթի

* 'Ի Յոյն, մարդկան

էք. քանզի 'ի յաւելուածոյ սրտի
35 խօսի բերան։ Մարդ բարի՝ 'ի
բարի գանձուց սրտի իւրոյ հանէ
զբարիս. և մարդ չար՝ 'ի չար
գանձուց* սրտի իւրոյ՝ հանէ
36 զչարիս։ Բայց ասեմ ձեզ, թէ
ընդ ամենայն դատարկ բանի
զոր խօսիցին մարդիկ, տացեն
համար յաւուրն դատաստանի։
37 Զի 'ի բանից քոց արդարացիս,
և 'ի բանից քոց պարտաւո-
րեսցիս։

38 Այնժամ պատասխանի ե-
տուն նմա ոմանք 'ի դպրացն և 'ի
փարիսեցւոց՝ և ասեն. Ա՛ր դա-
պետ՝ կամիմք նշան ինչ տեսանել
39 'ի քէն։ Նա պատասխանի ետ՝
և ասէ ցնոսա. Ազգ չար և շնա-
ցող նշան խնդրէ. և նշան մի
տացի նմա, բայց նշանն Յով-
40 նանու մարգարէի։ Զի որպէս
էր Յովնան 'ի փոր կիտին զերիս
տիւս և զերիս գիշերս, նոյնպէս
եղիցի և Որդի մարդոյ 'ի սիրտ
երկրի զերիս տիւս և զերիս
41 գիշերս։ Արք Նինուէացիք յա-
րիցեն 'ի դատաստանի ընդ ազ-
գիս ընդ այսմիկ՝ և դատապար-
տեսցեն զսա, զի զղջացան 'ի
քարոզութեանն Յովնանու. և
արդ աւասիկ մեծ քան զՅովնան
ծառը չար արէք՝ և նորա պտուղն
էլ չար, վասն զի ծառն էր
պտղիցը կ'ճանաչուի։ Իժերի 34
զաւակներ, դուք ի՞նչպէս կա-
րող էք բարի բանէր խօսիլ՝ որ
չար էք. վասն զի սրտի աւելա-
ցածիցը կ'խօսի բերանը։ Բարի 35
մարդն իր սրտի բարի գանձիցը
բարիքները կ'հանէ, և չար
մարդն էր սրտի չար գանձիցը
չար բաներ կ'հանէ։ Բայց ա- 36
սում եմ՝ ձեզ, թէ ամէն դատարկ
խօսքի համար, որ մարդիկ
խօսին, նորա համար պատաս-
խան պիտի տան դատաստանի
օրը։ Վասն զի քո խօսքիցը 37
կ'արդարանաս, և քո խօսքիցը
կ'դատապարտուիս։

Այն ժամանակ դպիրներից և 38
փարիսեցիներից ոմանք պատաս-
խան տուին և ասացին. Ա՛ր դա-
պետ, ուզում ենք քեզանից մի
նշան տեսնել։ Նա էլ պատաս- 39
խան տուաւ և նորանց ասաց.
Չար և շնացող ազգը նշան է
ուզում, և նշան չի տրուիլ
նորան, բայց միայն Յովնան
մարգարէի նշանը։ Ա՛ սն զի 40
ինչպէս Յովնանը երեք օր և երեք
գիշեր կետի փորումն էր, այն-
պէս կ'լինի Որդին մարդոյ երեք
օր և երեք գիշեր երկրի սրտումը։
Նինուէացի մարդիկը վեր կ'կե- 41
նան դատաստանումը այս ազգի
հետ, և կ'դատապարտեն սորան.
վասն զի նորանք Յովնանու քա-
րոզութիւնովն ապաշխարեցին.

* Ի Ցոյն էր։

42 է ասա։ Դշխոյն հարաւոյ յա-
րիցէ 'ի դատաստանի ընդ ազգիս
ընդ այսմիկ՝ և դատապարտեսցէ
զսա. զի եկն 'ի ծագաց երկրի՝
լսել զիմաստութիւնն Սողոմոնի՝
և ահա մեծ քան զՍողոմոն է
ասա։

43 Բայց յորժամ այսն պիղծ
ելանէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ
անջրդի տեղիս. խնդրէ հան-
44 գիստ՝ և ոչ գտանէ։ Յայնժամ
ասէ. Դարձայց 'ի տուն իմ՝
ուստի ելի. և եկեալ գտանէ
զնա պարապորդ, մաքրեալ և
45 յարդարեալ։ Յայնժամ երթայ՝
և առնու ընդ իւր եօթն այլ
այսս չարագոյնս քան զինքն, և
մտեալ բնակէ անդ. և լինի
յետինն մարդոյն այնորիկ չար
քան զառաջինն. այնպէս եղիցի
և ազգիս այսմիկ չարի։

46 Մինչդեռ նա ընդ ժողո-
վուրդսն խօսէր, ահա մայր նորա
և եղբարք նորա կային արտաքոյ՝
47 և խնդրէին խօսել ընդ նմա։ Եւ
ասէ ոմն ցնա. Ահա մայր քո և
եղբարք քո կան արտաքոյ և
48 խնդրեն խօսել ընդ քեզ։ Նա
պատասխանի ետ այնմիկ՝ որ
ասացն ցնա, և ասէ։ Ո՞վ է իմ
մայր, կամ ո՞վ են իմ եղբարք։
49 Եւ ձգեալ զձեռն իւր յաշա-
կերտսն՝ ասէ. Ահա մայր իմ և
50 եղբարք իմ։ Զի որ առնիցէ
զկամն Հօր իմոյ որ յերկինսն
և ահա Յովնանից մեծն է այս
տեղ։ Հարաւի թագուհին վեր 42
կ'կենայ դատաստանումը այս
ազգի հետ, և կ'դատապարտէ
սորան. վասն զի երկրի ծայրե-
րից եկաւ Սողոմոնի իմաստու-
թիւնը լսելու. և ահա Սողոմո-
նից էլ մեծն է այս տեղ։

Եւ երբոր պիղծ ոգին դուրս 43
է գալիս մարդուց, անջուր տե-
ղերում մտն է գալիս հանգիստ
խնդրելով, և չէ գտնում։ Այն 44
ժամանակ ասում է, Յետ դառ-
նամ իմ տունը՝ որտեղից դուրս
եկայ, և գալիս նորան գտնում
է պարապ, սրբուած և յարդար-
ուած։ Այն ժամանակ գնում է 45
իրանից էլ աւելի չար եօթն ու-
րիշ ոգիներ է առնում իր հետ,
և մտնում բնակում է այն տեղ.
և այն մարդու յետինն աւելի
չար է լինում քան թէ առա-
ջինը. այսպէս կ'լինի և այս չար
ազգին։

Եւ նա տակաւին ժողո- 46
վուրդների հետ խօսելիս, ահա
նորա մայրը և նորա եղբարքը
դուրսը կանգնած՝ ուզում էին
նորա հետ խօսել։ Եւ մէկն 47
ասաց նորան. Ահա մայրդ և
եղբարքդ դուրսը կանգնած՝ ու-
զում են քեզ հետ խօսել։ Նա 48
էլ պատասխան տուաւ իրան
ասողին և ասաց. Ո՞վ է իմ
մայրը, և ո՞վ են իմ եղբարքը։
Եւ իր ձեռը դէպի իր աշակերտ- 49
ները մեկնելով ասաց. Ահա իմ
մայրը և իմ եղբարքը։ Ա՛ սն 50

է, նա է իմ եղբայր և քոյր և մայր։

ԳԼ. ԺԹ

1 Յաւուր յայնմիկ ելեալ Յի-
սուս 'ի տանէն՝ նստաւ առ ծո-
2 վեղերն։ Եւ ժողովեցան առ նա
ժողովուրդք բազումք, մինչև
մտանել նմա 'ի նաւն՝ և նստել.
և ամենայն ժողովուրդն կայր
3 առ ծովեզերբն. Եւ խօսէր ընդ
նոսա բազումս առակօք՝ և ասէր։

4 Ահա ել սերմանահան սեր-
մանել. և 'ի սերմանելն իւրում՝
էր որ անկաւ առ ճանապար-
հաւ, և եկն թռչուն* երկ-
5 նից՝ և եկեր զնա։ Եւ այլն
անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր
հող բազում. և վաղվաղակի
6 բուսաւ առ 'ի չգոյէ հիւթոյ
երկրին. 'ի ծագել արևու տա-
պացաւ, և զի ոչ գոյին արմատք՝
7 չորացաւ։ Եւ այլն անկաւ 'ի
մէջ փշոց, և ելին փուշքն և
8 հեղձուցին զնա։ Եւ այլն անկաւ
յերկիր բարի, և տայր պտուղ.
էր որ հարիւրաւոր, և էր որ
9 վաթսնաւոր, և էր որ երեսն-
նաւոր։ Որ ունիցի ականջս լսել-
ոյ, լուիցէ։

10 Եւ մատուցեալ աշակերտքն
ասեն ցնա. Ընդէր առակօք
11 խօսիս ընդ նոսա։ Նա պատաս-

զի ով որ իմ Հօր կամքը կատա-
րէ որ երկնքումն է, նա է իմ
եղբայրը, քոյրը և մայրը։

ԳԼ. ԺԹ

Այն օրումն Յիսուսը տանիցը 1
դուրս գալով ծովի մօտ նստեց։
Եւ շատ ժողովուրդներ նորա 2
մօտ ժողովուեցան, մինչև որ նա
նաւը մտաւ նստեց. և բոլոր
ժողովուրդը ծովի եզերն կան-
գնել էր։ Եւ նորանց հետ 3
շատ բաներ խօսեց առակներով
ասելով.

Ահա սերմ ցանողը դուրս 4
գնաց սերմ ցանելու. և նա սեր-
մելիս՝ մի քանիսը ճանապարհի
մօտ ընկաւ, և երկնքի թռչուն-
ներն եկան և կերան նորանց։
Եւ ուրիշներն ընկան քարքա- 5
ռուտ տեղ, ուր շատ հող չկար,
և շուտով բուսան՝ խոր հող
չունենալու պատճառովը։ Բայց 6
երբոր արեգակը ծագեց, տա-
պացաւ. և որովհետև արմատ
չունէին՝ չորացան։ Եւ ուրիշ- 7
ներն ընկան փշերի մէջ, և փշե-
րը դուրս եկան և խեղդեցին
նորանց։ Եւ ուրիշներն ընկան 8
բարի երկրի վերայ, և պտուղ
էին տալիս. որը հարիւր, և որը
վաթսուն, և որը երեսուն։ Ով 9
որ լսելու ականջ ունի, թող լսէ։
Եւ աշակերտները մօտ գալով 10
ասացին նորան. Ինչու առակ-
ներով ես խօսում նորանց հետ։

խանի հետ՝ և ասէ ցնոսա. Պանզի
ձեզ տուեալ է գիտել զխոր-
հուրդս արքայութեան երկնից,
12 և նոցա չէ տուեալ։ Զի որ
գուցէ տացի նմա և յաւելցի. և
որ ոչն գուցէ, և զոր ունիցին՝
13 բարձցի 'ի նմանէ։ Վասն այնո-
րիկ առակօք խօսիմ ընդ նոսա,
զի տեսանեն՝ և ոչ տեսանեն, և
լսեն՝ և ոչ լսեն, և ոչ առնուն 'ի
միտ։ Եւ կատարի առ նոսա
մարգարէութիւնն Եսայեայ՝ որ
ասէ. Լսելով լուիջիք՝ և մի՛
իմասջիք, և տեսանելով տեսջիք՝
15 և մի՛ տեսջիք։ Զի թանձրացաւ
սիրտ ժողովրդեանս այսորիկ, և
ականջօք իւրեանց ծանրունս
լուան, և զաչս իւրեանց կա-
փուցին. զի մի՛ երբէք տեսցեն
աչօք՝ և ականջօք լուիցեն՝ և
սրտիւք իմասցին, և դարձցին և
16 բժշկեցից զնոսա։ Բայց ձեր
երանի է աչացդ՝ զի տեսանեն,
և ականջաց ձերոց՝ զի լսեն։
17 Ամէն ասեմ ձեզ. Զի բազում
մարգարէք և արդարք ցանկա-
ցան տեսանել զոր տեսանէքդ՝ և
ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և
ոչ լուան։

18 Եւ արդ լուարուք դուք
19 զառակ սերմանացանին։ Յամե-
նայնէ՝ որ լսէ զբանն արքայու-
թեան և ոչ առնու 'ի միտ, գայ
չարն և յափշտակէ զսերման-
եալն 'ի սիրտ նորա. այն է որ առ

Ես էլ պատասխան տուաւ և 11
ասաց նորանց. Որովհետև ձեզ
տրուած է երկնքի արքայու-
թեան խորհուրդները գիտենալ,
բայց նորանց չէ տրուած։ Վասն 12
զի ով որ ունի՝ նորան կ'տրուի և
կ'աւելանայ. և ով որ չունի,
ունեցածն էլ կ'առնուի նորա-
նից։ Որովհամար եմ առակ- 13
ներով խօսում նորանց հետ, որ
տեսնելով չեն տեսնում, և լսե-
լով չեն լսում, և չեն իմանում։
Եւ նորանց վերայ կատարվում 14
է Եսայեայ մարգարէութիւնն,
որ ասում է. Լսելով կ'լսէք, և
չէք իմանալ, և տեսնելով կ'տես-
նէք, և չէք տեսնիլ։ Վասն զի 15
թանձրացաւ այս ժողովրդի սիր-
տը, և ականջներովը
ծանր լսեցին և իրանց աչքերը
խփեցին, մի գուցէ աչքերով
տեսնեն՝ և ականջներով լսեն, և
սրտով իմանան, և յետ դառ-
նան, և ես նորանց բժշկեմ։
Բայց երանելի են ձեր աչքերը՝ 16
որ տեսնում են, և ձեր ականջ-
ները՝ որ լսում են։ Վասն զի 17
ճշմարիտն ասում եմ ձեզ, որ
շատ մարգարէներ և արդարներ
ցանկացան տեսնել ինչ որ տես-
նում էք՝ և չտեսան, և լսել ինչ
որ լսում էք՝ և չլսեցին։

Դուք հիմա լսեցէք սերմ ցա- 18
նողի առակը։ Այն ամենից՝ որ 19
արքայութեան խօսքը լսում է և
չէ իմանում, գալիս է չարը՝ և
յափշտակում նորա սրտի մէջ
սերմածը. սա է ճանապարհի

* 'Ի Յոյն. չէ։

ճանապարհաւն սերմանեցաւ։
20 Եւ որ յապառաժին սերմանե-
ցաւ՝ այն է, որ իբրև լսէ զբանն,
և վաղվաղակի խնդութեամբ
21 ընդունի զնա։ Բայց քանզի ոչ
ունի արմատս յինքեան, այլ առ
ժամանակ մի է՝ ի լինել նեղու-
թեան և հալածանաց վասն
բանին՝ վաղվաղակի դայթակղի։
22 Իսկ որ ի մէջ փշոյն սերմանե-
ցաւ՝ այն է, որ իբրև լսէ զբանն,
և հոգք աշխարհիս և պատրանք
մեծութեան հեղձուցանեն զբա-
23 նն, և լինի անպտուղ։ Իսկ որ
յերկիրն բարի սերմանեցաւ՝
այն է, որ իբրև լսէ զբանն և ի
միտ առնու, և տայ զպտուղ, է
որ հարիւր, և է որ վաթսուն,
և է որ երեսուն։
24 Բայլ առակ արկ առ նոսա՝ և
ասէ. Նմանեցաւ արքայութիւն
երկնից առն, որ սերմանիցէ
սերմն բարի յագարակի իւրում։
25 Եւ ի քուն լինել մարդկան,
եկն թշնամին նորա և ցանեաց
ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն՝
26 և գնաց։ Եւ իբրև բուսաւ
խոտն՝ և արար պտուղ, ապա
27 երևեցաւ և որոմն։ Մատու-
ցեալ ծառայք տանուտեարանն
ասեն ցնա. Տէր, ո՞չ սերմն
բարի սերմանեցեր յագարակին
քում, արդ ուստի՞ ունիցի զո-
28 րոմն։ Եւ նա ասէ ցնոսա.
Բայր թշնամի արար զայն,
ասեն ցնա ծառայքն. Կամի՞ս զի
երթիցուք քաղեսցուք զայն ի
29 բաց։ Եւ նա ասէ ցնոսա. Մի,
մնա սերմածք։ Եւ քարքարուտ 20
տեղը սերմածը նա է, որ խօսքը
լսելիս շուտով ուրախութիւնով
ընդունում է նորան. Բայց ար- 21
մատ չունի իր մէջ, այլ ժամա-
նակաւոր է. և երբոր նեղու-
թիւն կամ հալածանք են լինում
այն խօսքի համար, շուտով
դայթակղում է։ Եւ փշերի մէջ 22
սերմածը նա է, որ խօսքը լսում
է, և այս աշխարհի հոգսերն և
հարստութեան խաբեբայութիւ-
նը խեղդում են այն խօսքը, և
անպտուղ է լինում։ Բայց բարի 23
երկրումը սերմածը նա է, որ
խօսքը լսում է և իմանում. որ
և պտուղ է տալիս, որը հարիւր,
և որը վաթսուն և որը երեսուն։

Մի ուրիշ առակ նորանց առ- 24
ջև դրաւ և ասաց. Երկնքի ար-
քայութիւնը նմանուեցաւ մի
մարդու, որ իր արտումը բարի
սերմ ցանեց։ Եւ մարդիկը քնա- 25
նալիս, նորա թշնամին եկաւ և
ցորենի մէջ որոմներ ցանեց և
գնաց։ Եւ երբոր խոտը բուսաւ՝ 26
և պտուղ տուաւ, այն ժամանակ
որոմներն էլ երևեցան։ Եւ տան 27
տիրոջ ծառաները մօտ գալով
ասացին նորան. Տէր, մի՞թէ
դու քո արտումը բարի սերմ
չսերմեցիր, ապա ինչ տեղից են
որոմները։ Նա էլ ասաց նորանց. 28
Թշնամի մարդ է արել այդ։
Ծառաներն էլ ասացին նորան.
Հիմա կամենո՞ւմ ես որ գնանք
քաղենք նորանց, դուրս հանենք։

դուցէ մինչ քաղեցէք զորոմն,
և զցորեանն ընդ նմին ի բաց
30 խլեցէք։ Թո՛յլ տուք երկոցունց
աճել ի միասին մինչև ի հունձս,
և ի ժամանակի հնձոցն ասացից
ցհնձողսն. Քաղեցէք նախ
զորոմն և կապեցէք զայդ խրո-
ձունս առ ի յայրել, և զցորեանն
ժողովեցէք ի շտեմարանս իմ։

31 Բայլ առակ արկ առ նոսա և
ասէ. Նման է արքայութիւն
երկնից հատոյ մանանխոյ, զոր
առեալ մարդոյ՝ սերմանեաց
32 յագարակի իւրում։ Որ փոքր
է քան զամենայն սերմանիս. և
յորժամ աճիցէ, մեծ է քան
զամենայն բանջարս. և լինի ծառ՝
մինչև գալ թռչնոց երկնից և
հանդչել յոստս նորա։

33 Բայլ առակ խօսեցաւ ընդ
նոսա և ասէ. Նման է արքայու-
թիւն երկնից խմորոյ, զոր առ-
եալ կնոջ թագուցց ի գրիւս երիս
ալիր՝ մինչև ամենայն խմորեցաւ։

34 Այս ամենայն խօսեցաւ
Յիսուս առակօք ընդ ժողո-
35 վուրդսն. և առանց առակի ոչինչ
խօսէր ընդ նոսա։ Որ ի լցի
ասացեալն ի մարգարէէն. Բա-
ցից առակօք զբերան իմ, բղխե-
ցից զծածկեալսն ի սկզբանէ
աշխարհի։

36 Յայնժամ թողեալ Յիսուսի
զժողովուրդսն՝ եկն ի տուն.
Նա էլ ասաց, ոչ. մի դուցէ 29
որոմները քաղելիս, ցորենն էլ
նորանց հետ պոկէք։ Թող տուք 30
էք որ երկուսը միասին մեծանան
մինչև հունձը, և հնձի ժամա-
նակին հնձողներին կ՚ասեմ.
Առաջ որոմները քաղեցէք և
նորանց խուրձ խուրձ կապեցէք
այրելու, իսկ ցորենը ժողովեցէք
իմ ամբարի մէջ։

Մի ուրիշ առակ դրաւ նո- 31
բանց առջև և ասաց. Երկնքի
արքայութիւնը նման է մանա-
նեխի հատի, որ մի մարդ առաւ
իր արտի մէջ սերմեց. Որ ամեն 32
սերմունքից փոքրն է, բայց
երբոր կ՚աճի, բոլոր բանջարնե-
րից մեծ է, և ծառ է լինում,
այնպէս որ երկնքի թռչունները
գալիս նորա ճղերումը հանգիստ
են առնում։

Մի ուրիշ առակ խօսեց նո- 33
բանց՝ ասաց. Երկնքի արքա-
յութիւնը նման է խմորի՝ որ մի
կին առաւ՝ և երեք չափ ալիւրի
մէջ թաքցրեց մինչև որ բոլորը
խմորուեցաւ։

Այս բոլորը Յիսուսն առակ- 34
ներով խօսեց ժողովուրդների
հետ, և առանց առակի չէր
խօսում նորանց հետ, Որ մար- 35
գարէի ձեռով ասուածը կատա-
րուի՝ որ ասում է, Առակներով
կ՚բանամ իմ բերանը, և դուրս
կ՚բղխեմ աշխարհքի սկզբից
ծածկուած բաները։

Այն ժամանակ Յիսուսն ժո- 36
ղովուրդներին թողելով՝ եկաւ

մատեան առ նա աշակերտքն
նորա՝ և ասեն, Մ՝եկնեա մեզ
զառակ որոմանցն ագարակի։
37 Նա պատասխանի ետ՝ և ասէ
ցնոսա. Որ սերմանէ զսերմն
38 բարի՝ է Որդի մարդոյ։ Եւ
ագարակն աշխարհս է. սերմն
բարի նոքա են՝ որ որդիքն ար-
քայութեան են. իսկ որոմն
39 որդիք չարին են։ Եւ թշնամին
որ վարեաց զայն՝ Սատանայ է.
և հունձքն կատարած աշխար-
հիս է. և հնձողքն հրեշտակք
40 են։ Որպէս ժողովի որոմն՝ և
ի հուր այրի, այնպէս եղիցի ի
41 կատարածի աշխարհիս։ Առաք-
եսցէ Որդի մարդոյ զհրեշտակս
իւր, և ժողովեսցեն յարքայու-
թենէ նորա զամենայն գայթակ-
ղութիւնս, և զայնոսիկ որք
42 գործեն զանօրէնութիւն։ Եւ
արկցեն զնոսա ի հնոց հրոյ.
անդ եղիցի լալ՝ և կրճել ատա-
43 մանց։ Յայնժամ՝ արդարքն ծա-
գեսցին իբրև զարեգակն յար-
քայութեան* երկնից։ Որ ու-
նիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

44 Դարձեալ նման է արքայու-
թիւն երկնից գանձի ծածկելոյ
յագարակի, զոր գտեալ մարդոյ՝
թագուցեալ. և ի խնդութենէ
անտի երթայ վաճառէ զամե-
նայն ինչ զոր ունի, և գնէ զա-
գարակն զայն։
45 Դարձեալ նման է արքայու-
թիւն երկնից առն վաճառա-
տուն, և նորա աշակերտքն
նորա մօտ եկան և ասացին.
Մ՝եկնիր մեզ արտի որոմների
առակը։ Նա էլ պատասխան 37
տուաւ և ասաց նորանց, Բարի
սերմը ցանողը Որդին մարդոյ է։
Եւ արտը աշխարհքս է, և բարի 38
սերմը նորանք են, որ արքայու-
թեան որդիքն են. և որոմները
չարի որդիքն են։ Եւ թշնամին, 39
որ նորանց սերմեց, սատանան է.
և հունձքն աշխարհքի վերջն է,
և հնձողները հրեշտակներն են։
Արդ ինչպէս որ որոմները հա- 40
ւաքվում են և կրակով այրվում,
այնպէս կ՝լինի աշխարհքիս վեր-
ջումը։ Որդին մարդոյ կ՝ու- 41
ղարկէ իր հրեշտակները, և
նորա արքայութիւնից կ՝հա-
ւաքեն բոլոր գայթակղութիւն-
ները և անօրէնութիւն գործող-
ներին։ Եւ կ՝գցեն նորանց կրակի 42
փուռանը մէջ. այնտեղ կը լինի
լացը և ատամների կրճտելը։
Այն ժամանակ արդարները կը 43
ծագին ինչպէս արեգակը իրանց
Հօր արքայութեան մէջ։ Ով
որ լսելու ականջ ունի թող լսէ։
Դարձեալ նման է երկնքի 44
արքայութիւնը մի արտի մէջ
թաքցրուած գանձի, որ նորան
մի մարդ գտնելով թաքցրեց, և
ուրախութիւնից գնում՝ ամեն
ինչ որ ունի՝ ծախում է, և արտը
առնում։
Դարձեալ նման է երկնքի 45
արքայութիւնը մի վաճառական

* Ի Յոյնն, Հօր իւրեանց։

կանի՝ որ խնդրիցէ մարգարիտս
46 գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատ-
ուական մարգարիտ՝ երթեալ
վաճառեաց զամենայն զոր ինչ
ունէր՝ և գնեաց զայն* մար-
գարիտ։
47 Դարձեալ նման է արքայու-
թիւն երկնից ուռկանի արկելոյ
ի ծով՝ և յամենայն ազգաց
48 ժողովելոյ։ Որ իբրև լցաւ,
հանեալ ի ցամաք՝ և նստեալ
ժողովեցին զբարի բարին յամանս,
և զվատանն ի բաց ընկեցին։
49 Այնպէս եղիցի ի կատարածի
աշխարհիս. ելցեն հրեշտակք՝
և մեկնեսցեն զչարս ի միջոյ
50 արդարոց, Եւ արկցեն զնոսա ի
հնոց հրոյն. անդ եղիցի լալ և
կրճել ատամանց։

51 Ասէ ցնոսա Յիսուս. Իմացա-
ք՞ զայս ամենայն. ասեն ցնա.
52 Այո՛ Տէր։ Եւ նա ասէ ցնոսա.
Վասն այսորիկ ամենայն գրիր
աշակերտեալ արքայութեան երկնից՝ նման է առն տանուտեառն,
որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր
և զհին։
53 Եւ եղև իբրև կատարեաց
Յիսուս զառակս զայսոսիկ՝ փո-
54 խեցաւ անտի։ Եւ եկեալ ի
գաւառս իւր՝ ուսուցանէր զնոսա
ի ժողովրդեանն նոցա, մինչև
զարմանալ նոցա և ասել. Սմա
ուստի՞ իցէ այս իմաստութիւն և
55 զօրութիւնք։ Ո՞չ սա է հիւսանն
որդի. ո՞չ մայր սորա կոչի
մարդու, որ գեղեցիկ մարգա-
46 բիտներ է որոնում։ Որ մի թան-
գագին մարգարիտ գտնելով,
գնաց ամեն ինչ որ ունէր՝ ծա-
խեց, և առաւ նորան։

47 Դարձեալ նման է երկնքի ար-
քայութիւնը ծովը գցուած ուռ-
կանի, որ ամեն տեսակից ժողո-
48 վում է։ Որ երբոր լցուեցաւ
ցամաքը հանեցին, ու նստեցին
լաւերը ժողովեցին ամանների
49 մէջ, և անպէտքները դուրս գցե-
ցին։ Այսպէս կ՝լինի աշխարհքի
վերջումը. հրեշտակները դուրս
50 կ՝գան և կ՝ջոկեն չարերին ար-
դարների միջից. Եւ կ՝գցեն նո-
51 բանց կրակի փուռանը մէջ. այնտեղ
կ՝լինի լացը և ատամների կրճ-
տելը։
Յիսուսը ասաց նորանց. Իմա- 51
ցա՞ք այդ բոլորը։ Ասացին նորան.
52 Այո՛, Տէր։ Նա էլ ասաց նո-
բանց. Որա համար ամեն գրիր,
որ երկնքի արքայութեանն է
աշակերտել, նման է տանտէր
մարդու, որ հանում է իր գանձի-
ցը նոր և հին բաներ։
Եւ եղաւ՝ երբոր Յիսուսը այս 53
առակները վերջացրեց, գնաց
54 այնտեղից, Եւ գալով իր հայ-
րենիքը, նորանց ժողովարանու-
մը սովորեցնում էր նորանց, այն-
պէս որ զարմանում էին նորանք
և ասում. ո՞րտեղից է սորան այս
իմաստութիւնը և զօրութիւն-
55 ները։ Չէ՞ որ սա հիւսան որդին

* Ի Յոյնն չէ։

Մարիամ. և եղբարք սորա
Յակոբոս և Յովսէս և Սիմոն և
56 Յուդա: Եւ քոյրք սորա ամենե-
քեան առ մեզ են. արդ ուստի է
57 սմա այս ամենայն: Եւ դայթակ-
ղէին ի նա. և Յիսուս ասէ
ցնոսա. Զի՞նչ մարգարէ անարգ՝
եթէ ոչ յիւրում գաւառի և
58 յիւրում տան: Եւ ոչ արար անդ
զօրութիւն բազումս վասն ան-
հաւատութեան նոցա:

ԳԼ. ԺԴ

1 Յայնմ ժամանակի լուաւ
Հերովդէս չորրորդապետ զլուր
2 Յիսուսի: Եւ ասէ ցծառայս
իւր. Նա է Յովհաննէս մկրտիչ,
նա յարեաւ ի մեռելոց, և վասն
այնորիկ զօրութիւնք լինին
նովաւ:
3 Քանզի Հերովդէս կալաւ
զՅովհաննէս, կապեաց զնա՝ և
եդ ի բանտի՝ վասն Հերովդեայ
կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա:
4 Զի ասէր ցնա Յովհաննէս.
Զի՞ արժան քեզ ունել զդա:
5 Եւ կամէր զնա սպանանել, բայց
երկնչէր ի ժողովրդենէ անտի.
քանզի իբրև զմարգարէ ունէին
6 զնա: Եւ իբրև եղեն ծնունդք
Հերովդի՝ կաքաւեաց դուստրն
Հերովդեայ ի մէջ բազմականին.
7 և հաճոյ թուեցաւ Հերովդի:
Ուստի և երդմամբ խոստացաւ
տալ նմա զինչ և խնդրեսցէ:

է. չէ՞ որ սորա մայրը Մարիամ
է կոչվում. և եղբարքը՝ Յակո-
բոս և Յովսէս և Սիմոն և Յուդաս:
Եւ չէ՞ որ սորա ամեն քոյրերը 56
մեզ մոտ են, ապա ո՞րտեղից է
սորան այս ամեն բանէրը: Եւ 57
դայթակղում էին նորա վերայ:
Յիսուսն էլ նորանց ասաց. Մի՞
մարգարէ անարգուած չէ, բայց
միայն իր հայրենիքի և իր տան
մէջ: Եւ այն տեղ շատ զօրու- 58
թիւններ չարաւ նորանց անհա-
ւատութեան պատճառովը:

ԳԼ. ԺԴ

Նոյն ժամանակը Հերոդէս 1
չորրորդապետը Յիսուսի համ-
բաւը լսեց. Եւ ասաց իր ծառաներ-
ին. Նա Յովհաննէս Մկրտիչն է. 2
նա մեռելների միջից յարութիւն
է առել. և նորա համար զօրու-
թիւններ են գործվում նորանով:
Վասնզի Հերոդէսը բռնեց 3
Յովհաննէսին, կապեց նորան և
բանտի մէջ դրաւ՝ իր եղբայր՝ Փի-
լիպպոսի կնոջ Հերոդիայի հա-
մար: Վասնզի Յովհաննէսը նո- 4
րան ասում էր, Ըն արժան չէ
քեզ, որ դորան կին ունենաս: Եւ 5
ուզում էր նորան սպանել, բայց
ժողովրդից վախում էր, վասնզի
նորան ընդունում էին ինչպէս
մարգարէ: Եւ երբոր Հերո- 6
դէսի ծննդեան օրն եղաւ,
Հերոդիայի աղջիկը հանդէսի մէջ
պարեց՝ և հաճոյ թուեցաւ Հե-
րոդէսին: Ուստի երդումով խոս- 7

8 Եւ նա յառաջագոյն իրատեալ՝ ի
մօրէ իւրմէ, Տո՛ւր ինձ, ասէ,
այսր՝ ի վերայ սկտեղ զգլուխն
9 Յովհաննու մկրտչի: Եւ տրըտ-
մեցաւ թագաւորն. բայց վասն
երդմանցն և բարձակցացն՝ հրա-
10 մայեաց տալ նմա: Եւ առաքեաց
գվնաստեաց զՅովհաննէս՝ ի
11 բանտի: Եւ բերաւ գլուխն նորա
սկտեղը՝ և տուաւ աղջկանն, և
12 տարաւ առ մայր իւր: Եւ
մատուցեալ աշակերտքն նորա՝
բարձին զմարմինն և թաղեցին՝
և եկեալ պատմեցին Յիսուսի:

13 Եւ իբրև լուաւ Յիսուս, գնաց
անտի նաւու յանապատ տեղի
առանձինն. իբրև լուան ժողո-
վուրդքն, գնացին զհետ նորա
հետի՝ ի քաղաքաց անտի:

14 Եւ իբրև ել* հետս ժողովուրդ
բազում, գթացաւ՝ ի նոսա, և
15 բժշկեաց զհիւանդս նոցա: Իբրև
ընդ երեկս եղև, մատեան առ
նա աշակերտքն՝ և ասեն. Տեղիս
անապատ է, և օրս տարաժա-
մեալ, արձակեա զժողովուրդսդ,
զի երթիցեն շուրջ՝ ի շէնսն՝
գնեսցեն իւրեանց կերակուրս:
16 Եւ ասէ Յիսուս. Ո՛չինչ պիտոյ
է դոցա երթալ. դո՛ւք տուք
17 դոցա ուտել: Եւ նոքա ասեն
ցնա. Ո՛չինչ ունիմք ասա՝ բայց
հինգ նկանակ և երկուս ձկունս:
18 Եւ ասէ ցնոսա. Բերէ՛ք այսր

տացաւ նորան տալ ինչ որ ուզէ:
Նա էլ առաջ իր մօրից խրատ 8
առած՝ ասաց. Տո՛ւր այստեղ
սկուտեղի վերայ Յովհաննէս Մ-
կրտչի գլուխը: Եւ թագաւորը 9
տրտմեցաւ, բայց իր երդմանց
և իր հետ նստողների համար՝
հրամայեց որ տրուի: Եւ ուղար- 10
կեց գլխատեց Յովհաննէսին բան-
տումը: Եւ նորա գլուխը բերին 11
սկուտեղի վերայ, և տուին աղջ-
կանը. և նա տարաւ իր մօրը:
Եւ նորա աշակերտներն եկան 12
մարմինը վեր առին և թաղեցին
նորան. և եկան պատմեցին Յի-
սուսին:
Եւ Յիսուսը լսելով, այնտե- 13
ղից նաւով գնաց առանձին մի
անապատ տեղ: Եւ ժողովուրդ-
ներն երբոր լսեցին, այն քա-
ղաքներից ոտով գնացին նորա
ետևից:
Եւ երբոր Յիսուսը դուրս 14
եկաւ, շատ ժողովուրդ տեսաւ,
և գթաց նորանց վերայ, և
բժշկեց նորանց հիւանդներին:
Եւ երբոր իրիկուն եղաւ, աշա- 15
կերտները նորա մոտ եկան և
ասացին. Տեղս անապատ է, և
ժամանակն արդէն անցել է. ժո-
ղովուրդներն արձակիր որ գնան
գիւղերն իրանց համար կերա-
կուր առնեն: Յիսուսն էլ ասաց 16
նորանց. Պէտք չէ որ գնան,
դուք տուէք դորանց ուտել:
Նորանք էլ ասացին նորան. 17
Մենք այստեղ բան չունինք,

* Ո՛ՀԱՆԻ Յիսուս՝

19 զայն։ Եւ հրամայեաց բազմե-
ցուցանել զժողովուրդսն 'ի վե-
րայ խոտոյ. և առեալ զհինգ
նկանակսն և զերկուս ձկունսն՝
հայեցաւ յերկինս, օրհնեաց, և
եբեկ՝ և եւ ցաշակերտսն զնկա-
նակսն, և աշակերտքն ժողո-
20 վրդոցն։ Կերան ամենեքեան՝ և
յագեցան, և բարձին զնշխարս
կոտորոցն երկոտասան սակաւի
21 լի։ Եւ որք կերանն՝ էին արք
իբրև հինգ հազար. թոռ զկա-
նայս և զմանկտի։

22 Եւ ստիպեաց վաղվաղակի
զաշակերտսն մտանել 'ի նաւ և
յառաջել յայնկոյս, մինչ ինքն
23 զժողովուրդսն արձակեսցէ։ Եւ
իբրև արձակեաց զժողովուրդսն,
ել 'ի լեառն առանձինն կալ յա-
ղօթիս. և իբրև ընդ երեկս եղև,
24 անդ էր միայն։ Եւ նաւն* մեկ-
նեալ էր 'ի ցամաքէն բազում՝
ասպարիսօք՝՝ ծփեալ յալեացն.
25 քանզի ընդդէմ էր հողմն։ Եւ
'ի չորրորդում պահու գիշերոյն
եկն առ նոսա Յիսուս գնալով 'ի
26 վերայ ծովուն։ Իբրև տեսին
զնա աշակերտքն զի գնայր 'ի
վերայ ծովուն, խռովեցան, և
ասեն, թէ Ուրաջք ինչ լիցէ. և
27 առ ահին աղաղակեցին։ Եւ
վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա
Յիսուս՝ և ասէ. Քաջալերեցարուք, ես եմ, մի՛ երկնչիք։
28 Պատասխանի ետ նմա Պետրոս՝

* 'Ի Յոյն, էր 'ի մէջ ծովուն՝

բայց միայն հինգ հաց և երկու
ձուկ։ Նա էլ ասաց. Նորանք 18
այստեղ բերէք ինձ մօտ։ Եւ 19
հրամայեց որ ժողովուրդները
խոտերի վերայ նստին. և հինգ
հացը և երկու ձուկն առաւ դէպի
երկինքը նայեց՝ օրհնեց, և
կտրեց, տուաւ աշակերտներին
հացերը, և աշակերտները ժո-
ղովուրդներին։ Եւ ամենքը կե- 20
րան և կշտացան, և կտորների
աւելցածը տասներկու բթոց լիքը
վեր առին։ Եւ ուտողները հինգ 21
հազարի չափ մարդիկ էին՝ բացի
կանանցից և երեխաներից։

Եւ Յիսուսը շուտով իր աշա- 22
կերտներին ստիպեց, որ նաւը
մտնեն և իրանից առաջ անցնեն
այն կողմը, մինչեւ որ ինքն այն
ժողովուրդներին արձակէ։ Եւ 23
երբոր ժողովուրդներին արձա-
կեց, վեր եաւ լեառը, առան-
ձին աղօթք անելու. և երբոր
իրիկուն եղաւ, միայն ինքն էր
այնտեղ։ Բայց նաւն արդէն 24
ծովի մէջ տեղն էր՝ ալէկոծ-
ւում էր, վասնզի քամին ներ-
հակ էր։ Եւ գիշերի չորրորդ 25
պահին Յիսուսը նորանց մօտ
եկաւ ծովի վերայ գնալով։ Եւ 26
աշակերտներն երբոր տեսան նո-
րան ծովի վերայ գնալիս, շփոթ-
ուեցան և ասացին, թէ աչքի
երեւոյթ բան է, և վախից աղա-
ղակեցին։ Եւ Յիսուսը շուտով 27
խօսեց նորանց հետ և ասաց.
Քաջ եղէք, ես եմ՝՝ մի՛ վախե-

և ասէ. Տէր՝ եթէ դու ես,
հրամայեա ինձ գալ առ քեզ 'ի
29 վերայ ջրոցս։ Եւ նա ասէ,
Եկ. և իջեալ 'ի նաւէն Պետրոս՝
գնաց 'ի վերայ ջրոցն,* և եկն
30 առ Յիսուս։ Եւ տեսեալ զհողմն
սաստիկ՝ երկեաւ. և իբրև սկսաւ
ընկղմիլ՝ աղաղակեաց՝ և ասէ.
31 Տէր՝ փրկեա զիս։ Եւ վաղվա-
ղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝
կալաւ զնա և ասէ. Թերա-
32 հաւատ՝ ընդէր երկմտեցեր։ Եւ
իբրև ելին 'ի նաւն՝ հանդարտեաց հողմն։ Եւ որ 'ի նաւին
33 էին՝ մատեան երկիրպագին նմա՝
և ասեն. Արդարև Որդի Աստուծոյ ես դու։

34 Եւ անցեալ եկին 'ի ցամաք
35 'ի Գենեսարէթ։ Եւ իբրև
ծանեան զնա արք տեղւոյն
այնորիկ, առաքեցին ընդ ամե-
նայն գաւառն՝ և ածին առ նա
36 զամենայն հիւանդս։ Եւ աղա-
չէին զնա, զի գոնէ միայն 'ի
քղանցս հանդերձի նորա մերձեսցին, և որ միանգամ մերձեցան՝
փրկեցան։

ԳԼ. ԺԵ

1 Յայնժամ մատեան առ Յի-
սուս՝ որ յԵրուսաղէմէ փարի-
սեցիքն և դպիրքն՝ և ասեն։
2 Ընդէր աշակերտքն քո անցանեն

* 'Ի Յոյն, զի եկեսցէ՝

նաք։ Եւ Պետրոսը պատաս- 28
խան տուաւ նորան և ասաց,
Տէր, եթէ դու ես, հրամայիր
ինձ, որ ջրերի վերայով քեզ
մօտ գամ։ Նա էլ ասաց, Եկ։ 29
Եւ Պետրոսը նաւից իջնելով
ջրերի վերայովն գնաց, որ գայ
Յիսուսի մօտ։ Եւ տեսնելով 30
որ քամին սաստիկ է, վախեցաւ,
և երբոր սկսեց ընկղմուիլ, աղա-
ղակեց և ասաց. Տէր, փրկիր
ինձ։ Եւ շուտով Յիսուսը իր 31
ձեռը մեկնեց՝ նորան բռնեց և
ասաց նորան. Թերահաւատ,
ինչու երկմտեցիր։ Եւ երբոր 32
նաւը մտան, քամին հանդարտեց։
Եւ նաւի մէջ լինողները մօտ 33
գալով նորան երկրպագեցին
և ասացին. Շ՛մարիտ՝ դու
Աստուծոյ Որդին ես։

Եւ միւս կողմն անցնելով ե- 34
կան Գեննեսարէթի երկիրը։ Եւ 35
այն տեղի մարդիկը նորան ճա-
նաչելով, ուղարկեցին բոլոր շրջակայքը և ամեն հիւանդները
նորա մօտ բերին։ Եւ նորան 36
աղաչում՝ էին՝ որ միայն նորա
հանդերձի ծայրին դիպչին. և
նորանք որ դիպան, փրկուեցան։

ԳԼ. ԺԵ

Այն ժամանակ Յիսուսի մօտ 1
եկան Երուսաղէմացի դպիրները
և փարիսեցիները, և ասացին. 2
Ինչու համար քո աշակերտները

զաւանդութեամբ ծերոցն. զի
ոչ լուանան զձեռս յորժամ հաց
3 ուտեն։ Եւ պատասխանի եւ՝
և ասէ ցնոսա. Իսկ դուք ընդէր
անցանէք զպատուիրանաւն Աս-
տուծոյ վասն ձերոյ աւանդու-
թեանն։ Զի Աստուած* ասաց.
4 Պատուեա՛ զհայր քո և զմայր։
5 Եւ որ բամբասէ զհայր կամ
զմայր՝ մահու վախճանեսցի։
6 Եւ դուք ասէք. Որ ասիցէ
զհայր իւր կամ զմայր իւր, Մա-
տաղ է զոր յինէն օգտիցես,
և ոչ պատուիցէ զհայր իւր և
զմայր իւր. և խոտէք զբանն
Աստուծոյ վասն ձերոյ աւանդու-
7 թեանն։ Կեղծաւորք՝ բարւոք
մարգարէացաւ ի վերայ ձեր
8 Եսայի՝ և ասէ։ Ժողովուրդս
այս շրթամբքն պատուէ զիս, և
սիրտ իւրեանց հեռացեալ մեկու-
9 սի է յինէն։ Զուր պաշտեն
զիս, ուսուցանեն վարդապետու-
թիւնս՝ զմարդկան պատուիրա-
10 եալս։ Եւ կոչեցեալ առ ինքն
զժողովուրդսն՝ ասէ ցնոսա.
11 Լուարուք և ի միտ առէք։ Ո՛չ
որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ
զմարդ, այլ որ ինչ ելանէ ի
բերանոյ՝ այն պղծէ զմարդ։

12 Յայնժամ մատուցեալ աշա-
կերտացն նորա ասեն ցնա. Գի-

ծերերի աւանդութիւնքն զանց են
անում, վասն զի իրանց ձեռները
չեն լուանում, երբոր հաց են
ուտում։ Եւ էլ պատասխան 3
տուաւ և ասաց նորանց. Ապա
դուք ինչո՞ւ էք Աստուծոյ պա-
տուիրանքը զանց անում ձեր
աւանդութեան համար։ Վասն 4
զի Աստուած պատուիրեց և
ասաց. Պատուիր քո հօրը և
մօրը։ Եւ իր հօրը կամ մօրը 5
բամբասողը մահով մեռնի։ Բայց 6
դուք ասում էք. Ով որ հօրը
կամ մօրը ասէ պատարագ է այն
որ ինձանից պիտի շահուէիր,
նա թող չպատուէ իր հօրը և իր
մօրը։ Եւ ձեր աւանդութեան
համար Աստուծոյ պատուէրը
խափանել էք։ Կեղծաւորներ, 7
լաւ մարգարէացաւ ձեր մասին
Եսային ասելով. Այս ժող- 8
ովուրդը իրան բերանովն է մոտե-
նում ինձ, և շրթունքներովն է
ինձ պատուում, բայց իրանց
սիրտն ինձանից հեռացած ջոկ-
ուած է։ Զուր տեղն են պաշ- 9
տում ինձ. վարդապետութիւն-
ներ սովորեցնելով, որ մարդկանց
պատուէրներ են։ Եւ ժողո- 10
վուրդներն իրան մոտ կանչելով,
ասաց նորանց. Լսեցէք և իմա-
ցէք։ Ոչ թէ բերանը մտնողն է 11
պղծում մարդուն, այլ բերանից
դուրս եկողը, նա է պղծում
մարդուն։
Այն ժամանակ նորա աշա- 12
կերտները մոտ գալով ասացին

* Ի Յոյն, պատուիրեաց՝ ասելով.

տեսն՝ զի փարիսեցիքն իբրև լու-
13 ան զբանն՝ գայթակղեցան։ Եւ
պատասխանի եւ նոցա և ասէ,
Ամենայն տունկ՝ զոր ոչ տնկեաց
Հայր իմ երկնաւոր, խլեսցի։
14 Թո՛յլ տուք զնոսա. կոյրք են
կուրաց առաջնորդք. կոյր կուրի
յորժամ առաջնորդէ՝ * սիսալէ,
և՝ երկոքին ի խորխորատ անկա-
15 նին։ Պատասխանի եւ նմա
Պետրոս և ասէ. Մեկնեա՛ մեզ
16 զառակս զայս։ Ասէ Յիսուս.
Տակաւին և դուք անմիտք էք։
17 Եւ ոչ իմանայք, եթէ ամենայն
որ մտանէ ի բերան, յորովայն
18 երթայ՝ և արտաքս ելանէ։ Իսկ
որ ելանէ ի բերանոյ՝ սրտե-
19 ան տի գայ. և այն պղծէ զմարդն։
Զի ի սրտէ ելանեն խոր-
հուրդք չարք՝ սպանութիւնք,
շնութիւնք, պոռնկութիւնք,
գողութիւնք, սուտ վկայու-
20 թիւնք, հայհոյութիւնք։ Այս
ամենայն է որ պղծէ զմար-
դն, այլ անլուայ ձեռօք ուտել՝
ոչ պղծէ զմարդ։

21 Եւ ելեալ անտի Յիսուսի
22 գնաց ի կողմանս Տիւրոսի և
Սիդոնի։ Եւ ահա կին մի Քա-
նանացի ի սահմանաց անտի
նոցա՝ ելեալ, աղաղակէր և ա-
սէր. Ողորմեա՛ ինձ Տէր որդի
Դաւթի, դուստր իմ չարաչար
23 այսահարի։ Եւ նա ոչ ետ նմա

նորան. Գիտեմ՝ որ փարիսեցի-
ներն այն խօսքը լսելով գայ-
թակղեցին։ Եւ էլ պատաս- 13
խան տուաւ և ասաց. Ամեն
տունկ, որ իմ երկնաւոր Հայրը
չտնկեց, կ'պոկուի։ Թողէք տուէք 14
նորանց. կոյր առաջնորդներ են
կոյրերի, և երբոր կոյրը կոյրին
առաջնորդէ, երկուսն էլ փոսի
մէջ կ'ընկնին։ Պետրոսը նորան 15
պատասխան տուաւ և ասաց.
Մեկնիր մեզ այս առակը։ Յի- 16
սուսն էլ ասաց. Դուք էլ տա-
կաւին անխելք էք։ Տակաւին 17
չէք հասկանում, թէ ամեն ինչ
որ բերանն է մտնում, փորն է
գնում և արտաքնոցն է գցվում։
Բայց բերանիցը դուրս եկող 18
բաները սրտիցն են դուրս գալիս
և նորանք են մարդուն պղծում։
Այ անզի սրտիցը դուրս են գա- 19
լիս չար խորհուրդներ, սպանու-
թիւններ, շնութիւններ, պոռնկ-
ութիւններ, գողութիւններ,
սուտ վկայութիւններ, հայհո-
յութիւններ։ Սորանք են մար- 20
դուն պղծողը, բայց անլուայ
ձեռքով ուտելը մարդուն չէ
պղծում։
Եւ Յիսուսը այնտեղից դուրս 21
եկաւ գնաց Տիւրոսի և Սիդոնի
կողմերը։ Եւ ահա մի Քանանա- 22
ցի կին այն սահմաններից դուրս
եկած աղաղակում էր նորան
և ասում. Ողորմիր ինձ, Տէր,
որդի Դաւթի, իմ աղջիկը չա-
րաչար դիւահարվում է։ Եւ 23

* Ի Յոյն. չէ։

պատասխանի, և մատուցեալ աշակերտքն Նորա աղաչէին զնա և ասէին. Լրձակեա՛ զնա զի
24 աղաղակէ զՀետ մեր: Նա պա-տասխանի ետ և ասէ. Ո՛չ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս
կորուսեալս տանն Իսրայէլի:
25 Եւ նա մատուցեալ երկիրպա-գանէր Նմա և ասէր. Տէր՝
26 օգնեա՛ ինձ: Պատասխանի՛ ետ Նմա և ասէ. Ո՛չ է բարւոք առնուլ զՀաց մանկանց՝ և ար-
27 կանել շանց: Եւ նա ասէ. Այո՛ Տէր, քանզի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց
'ի սեղանոյ տեառն իւրեանց:
28 Այնժամ՝ պատասխանի ետ Նմա Յիսուս և ասէ. Ո՛վ կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ
որպէս և կամիս. և բժշկեցաւ դուստր Նորա 'ի Նմին ժամու:

29 Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն 'ի ծովեզերն Գալիլեացւոց, և ելեալ 'ի լեառն նստէր անդ:
30 Մատեան առ Նա ժողովուրդք բազումք՝ որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս, կոյրս, համրս, միակողմանիս, և այլս բազումս. և ընկեցին զնոսա առ ոտս*
31 Նորա՝ և բժշկեաց զնոսա. Մինչև զարմանալ ժողովրդոցն որ տեսանէին, զի համրքն խօսէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, և փառաւորս առնէին զԱստուած Իսրայէլի:

Նա Նորան Ոչ խօսք պատասխան չտուաւ. և Նորա աշակերտներքը մօտ գալով աղաչում էին Նորան և ասում՝ արձակիր զորան, վասն-զի մեր ետեւիցն աղաղակում է:
24 Նա էլ պատասխան տուաւ և ասաց. Ես չեմ ուղարկուել՝ եթէ ոչ Իսրայէլի տան կորած ոչ-խարներին մօտ:
25 Այն կինն էլ եկաւ՝ Նորան երկրպագում էր և ասում՝ Տէր, օգնիր ինձ:
26 Նա էլ պա-տասխան տուաւ և ասաց. Լաւ չէ երեխաների հացն առնել և շներին գցել:
27 Նա էլ ասաց. Այո՛, Տէր, սակայն շներն էլ իրանց տէրերի սեղանից ընկած փշրանքներից են ուտում:
28 Այն ժամանակ Յիսուսը պատասխան տուաւ և ասաց Նորան. Ով կին, մեծ է քո հաւատքը. լինի քեզ ինչպէս ուզում ես. և Նորա աղջիկն բժշկուեց նոյն ժամից:
29 Եւ Յիսուսը այնտեղից գնա-լով Գալիլեայի ծովի մօտ եկաւ, և վեր ելաւ լեառն՝ այնտեղ նստեց:
30 Եւ շատ ժողովուրդներ եկան Նորա մօտ, որ իրանց հետ ունէին կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ, և ուրիշ շատեր, և Նորանց գցեցին Յիսուսի ոտ-քերը, և Նորանց բժշկեց:
31 Մինչև որ ժողովուրդները զարմա-նում էին, տեսնելով համրերին խօսելիս, հաշմանդամներին ա-ռողջ, կաղերին գնալիս և կոյրե-րին տեսնելիս. և փառաւորեցին Իսրայէլի Աստուծոյն:

* Ի Յոյն. Յիսուսի՝

32 Եւ կոչեցեալ առ ինքն Յի-սուսի զաշակերտսն՝ ասէ. Գթամ 'ի ժողովուրդդ, զի արդ երեք աւուրք են՝ զի կան առ իս, և ո՛չ ունին զինչ ուտիցեն. և արձա-կել զդոսա նոքին՝ չկամիմ՝, գուցէ նքթիցին զճանապար-
33 հայն: Ասեն ցնա աշակերտքն. Իսկ արդ մեզ յանապատի աստ ուստո՞ւցէ այնչափ հաց՝ մինչև յագեցուցանել զայսչափ ժողո-
34 վուրդ: Եւ ասէ ցնոսա Յիսուս, Քանի՞ նկանակ ունիք. և նոքա ասեն, Եօթն, և սակաւ ձկունս:
35 Եւ հրամայեաց ժողովրդեանն
36 բազմել 'ի վերայ գետնոյ: Եւ առեալ զեօթն նկանակն և զձկունսն՝ գոհացաւ և երեկ. և ետ ցաշակերտսն, և նոքա ժողո-
37 վրդեանն: Կերան ամենեքեան և յագեցան. բարձին զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիւղ լի:
38 Եւ որք կերանն՝ էին արք իրբև չորք հազարք. թող զկանայս և զմանկտի:
39 Իրբև արձակեաց զժողովուրդսն, ել 'ի նաւ՝ և եկն 'ի սահմանս Մագդալայ:

Եւ Յիսուսը իր աշակերտ-ները մօտ կանչելով ասաց. Գութս շարժում է այս ժողո-վրդի վերայ, վասնզի արդէն երեք օր է իմ մօտս են և բան չունին որ ուտեն. և Նորանց սոված ճանապարհ գցել չեմ ուզում, մի գուցէ նուաղեն ճանապարհին: Եւ Նորա աշակերտները Նորան ասացին. Ո՞րտեղից է մեզ այս անապա-տումը այնչափ հաց, որ այդ-քան ժողովուրդը կշտացնենք:
Եւ Յիսուսը Նորանց ասաց. Քանի՞ հաց ունիք. Նորանք էլ ասացին, Եօթը և մի քանի փոքր ձկներ: Եւ հրամայեց ժողո-վուրդներին, որ գետնի վերայ նստին: Եւ այն եօթն հացը և ձկներն առաւ, գոհացաւ կտրեց և իր աշակերտներին տուաւ, և աշակերտները ժողովրդին: Եւ ամենքը կերան և կշտացան. և կտորների աւելացածը եօթը զամ-բիւղ լիքը վեր առին: Եւ ու-տողները չորս հազար մարդիկ էին՝ կանանցից և երեխաներից զատ: Եւ ժողովուրդներն արձա-կելուց յետոյ մտաւ նաւն և եկաւ Մագդալէի սահմանները:

ԳԼ. ԺԱ.

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն և սադուկեցիքը, փորձելով խընդ-
2 րէին 'ի Նմանէ նշան յերկնից ցուցանել նոցա: Նա պատաս-խանի ետ՝ և ասէ ցնոսա, Որ-

ԳԼ. ԺԱ.

Եւ փարիսեցիներն և Սադու-կեցիները Նորա մօտ եկան, և փորձելով Նորանից ուզում էին երկնքիցը մի նշան ցոյց տալ Նորանց: Նա էլ պատասխան

ժամ երեկոյ լինի՝ ասէք, Պարզ
լինելոյ՝ զի կարմրացեալ է երկին։
3 Եւ առաւօտու՝ Այսօր մրրիկ,
զի շառագունի տրամութեամբ
երկին. Արդ զերեսս երկնի
կարէք քննել, իսկ զնշան ժամա-
4 նակիս ոչ կարէք գիտել։ Ազգ
չար և շնացող՝ նշան խնդրէ.
և նշան մի տացի նմա, բայց
նշանն Յովնանու մարգարէի. և
եթող զնոսա և գնաց։

5 Գնացին և աշակերտքն յայն-
կոյս, և մոռացան առնուլ հաց։
6 Ասէ ցնոսա Յիսուս. Տեսէք և
զգոյշ լերուք ի խմորոյ սադու-
7 կեցւոցն և փարիսեցւոցն։ Նոքա
խորհէին ընդ միմեանս՝ և ասէին՝
8 թէ հաց ոչ բարձաք։ Գիտաց
Յիսուս և ասէ. Օ՜ խորհիք ի
միտս ձեր թերահաւատք՝ եթէ
9 հաց ոչ ունիք։ Տակաւին չմա-
նայք՝ և ոչ յիշէք զհինգ նկանակն
ի հինգ հազարսն, և քանի սակա-
10 ի բարձիք։ Եւ ոչ զեօթն նկա-
նակն ի չորս հազարսն, և քանի
11 զամբիւղս բարձիք։ Արդ զիարդ
ոչ իմանայք՝ եթէ ոչ վասն հացի
ասացի ձեզ՝ զգոյշ լինել ի
խմորոյ փարիսեցւոցն և սադու-
12 կեցւոց։ Յայնժամ ի միտ
առին, թէ ոչ ասաց զգուշանալ
ի* խմորոյ, այլ յաղանդոյ փա-
րիսեցւոցն և սադուկեցւոց։

տուաւ և ասաց նորանց. Իրիկուն
դառած ժամանակ ասուած էք՝
պարզ կ'լինի, վասնզի երկինքը
կարմրեալ է։ Եւ առաւօտը. 3
Այսօր մրրիկ կ'լինի, վասնզի եր-
կինքը պղտորած կարմրացեալ է։
Կեղծաւորներ, երկնքի երեսը
գիտէք քննել, բայց ժամանակ-
ների նշանները չէք կարող։
Չար և շնացող ազգը նշան է 4
խնդրուած. և նշան չի տրուիլ
նորան, բայց միայն Յովնան մար-
գարէի նշանը։ Եւ նորանց
թողեց գնաց։

Եւ նորա աշակերտները այն 5
կողմը գնալու մոռացան հաց
վեր առնել։ Եւ Յիսուսը նո- 6
րանց ասաց. Տեսէք և զգոյշ
կացէք փարիսեցոց և Սադու-
կեցոց խմորից։ Իսկ նորանք 7
իրանց միջումը միտք էին անում
և ասում՝ թէ հաց չենք վեր
առել։ Եւ Յիսուսը այս խմա- 8
նալով ասաց. Ինչո՞ւ էք միտք
անում՝ ձեր միջումը, թերահա-
ւատներ, թէ հաց չէք վեր առել։
Տակաւին չէք իմանում, և չէք 9
էլ յիշում այն հինգ հացը հինգ
հազար մարդկանցը, և քանի՞
քթոց վեր առիք։ Ո՛չ էլ այն 10
եօթը հացը չորս հազար մարդ-
կանցը, և քանի՞ զամբիւղ վեր
առիք։ Ի՞նչպէս չէք իմանում, 11
որ հացի համար չասացի ձեզ՝
զգոյշ կենալ փարիսեցոց և Սա-
դուկեցոց խմորիցը։ Այն ժա- 12
մանակ հասկացան, որ չասաց

* Ի Յոյնն, հացի,

13 Եւ եկեալ Յիսուս ի կողմանս
Փիլիպպեայ Կեսարիայն, հար-
ցանէր ցաշակերտսն՝ և ասէր.
Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝
14 թէ իցէ Որդի մարդոյ։ Եւ նոքա
ասեն. Ոմն զՅովհաննէս մկրտիչ,
և այլք զԵղիա, և կէսք զԵրե-
միա, կամ զմի ոք ի մարգարէ-
15 իցն։ Ասէ ցնոսա. Իսկ դուք զո՞
16 ոք ասէք զինէն թէ իցեմ։ Պա-
տասխանի ետ Սիմոն Պետրոս՝ և
ասէ. Դու ես Քրիստոսն Որդի
17 Աստուծոյ կենդանւոյ. Պատաս-
խանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա.
Երանի քեզ Սիմոն որդի Յովնա-
նու, զի մարմին և արիւն ոչ
յայտնեաց քեզ՝ այլ Հայրն իմ որ
18 յերկինս է։ Եւ ես քեզ ասեմ.
Զի դու ես* վէմ, և ի վերայ
այդր վիմի շինեցից զեկեղեցի
իմ, և դրունք դժոխոց զնա
19 մի յաղթահարեսցեն։ Եւ տաց
քեզ փականս արքայութեան
երկնից. և զոր միանգամ կապես-
ցես յերկրի, եղիցի կապեալ
յերկինս. և զոր արձակեսցես
յերկրի, եղիցի արձակեալ յեր-
20 կինս։ Յայնժամ սաստեաց աշա-
կերտացն, զի մի ումեք ասիցեն՝
թէ նա է Քրիստոսն։

Հացի խմորիցն զգոյշ կենալ,
այլ փարիսեցոց և Սադուկեցոց
վարդապետութիւնից։
Եւ Յիսուսը դուրս գնաց Փի- 13
լիպպեայ Կեսարիայի կողմերը, և
իր աշակերտներին հարցնում էր
և ասում. Մարդիկ ինձ համար
ո՞վ են ասում, որ Որդին մար-
դոյ լինի։ Նորանք էլ ասացին. 14
Մինքը՝ Յովհաննէս Մկրտիչն է.
իսկ միւսները՝ Եղիան. Ուրիշ-
ներն էլ՝ Երեմիան, կամ Մար-
գարէից մէկը։ Նորանց ասաց. 15
Իսկ դուք ո՞վ էք ասում՝ ինձ
համար, որ լինիմ։ Սիմոն Պետ- 16
րոսը պատասխան առաւ և
ասաց. Դու ես Քրիստոսը՝ կեն-
դանի Աստուծոյ որդին։ Եւ 17
Յիսուսը պատասխան տուաւ և
ասաց նորան. Երանի քեզ,
Սիմոն որդի Յովնանի, վասն զի
մարմին և արիւն չյայտնեց քեզ,
բայց իմ Հայրը որ երկնքումն
է։ Ես էլ ասում եմ քեզ, որ 18
Դու ես *Պետրոս, և այդ վիմի
վերայ կ'շինեմ իմ եկեղեցին, և
դժոխքի դռները չեն յաղթիլ
նորան։ Եւ կ'տամ քեզ երկնքի 19
արքայութեան բանալիները, և
այն որ կապես երկրի վերայ,
կապուած կ'լինի երկնքումը. և
այն որ երկրի վերայ արձակես,
արձակուած կ'լինի երկնքումը։
Այն ժամանակ իր աշակերտնե- 20
րին պատուիրեց, որ ոչ ոքի չ'ա-
սեն, թէ նա Յիսուսն է Քրիս-
տոսը։

* Ի Յոյնն, Պետրոս,

* Զէմ

21 Յայնմ հետէ սկսաւ Յիսուս
ցուցանել աշակերտացն իւրոց՝
թէ պարտ է նմա երթալ Երու-
սաղէմ. և բազում՝ չարչարանս
չարչարիլ ՚ի քահանայապետից
և ՚ի դպրաց և ՚ի ծերոց ժողո-
վրդեանն՝ և սպանանիլ, և յերիր
22 աւուր յառնել: Եւ առեալ զնա
Մեկուսի Պետրոսի, սկսաւ կշտել
ընդ նմա՝ և ասել. Փա՛ռ լիցի
քեզ Տէր, մի՛ եղիցի քեզ այդ:
23 Եւ նա դարձեալ ՚ի Պետրոս՝
ասէ. Է՛րթ յետս իմ Սատանայ,
դայթակղութիւն իմ ես. զի ո՛չ
խորհիս դու զԱստուծոյն՝ այլ
զմարդկան:

24 Յայնժամ Յիսուս ասէ ցաշա-
կերտսն իւր. Եթէ ոք կամի
զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն,
և առցէ զխաչ իւր՝ և եկեսցէ
25 զկնի իմ: Զի որ կամիցի զանձն
իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա.
և որ կորուսցէ զանձն իւր վասն
26 իմ՝ գտցէ զնա: Զի՞նչ օգտիցի
մարդ՝ թէ զաշխարհս ամենայն
շահեսցի, և զանձն իւր տու-
ժեսցէ. կամ զի՞նչ տացէ մարդ
27 փրկանս ընդ անձին իւրոյ: Զի
գալոց է Որդի մարդոյ փառօք
Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտա-
կօք իւրովք, և յայնժամ՝ հա-
տուսցէ իւրաքանչիւր ըստ գործս
28 իւր: Ամէն ասեմ ձեզ. Զի
իցեն ոմանք ՚ի սոցանէ՝ որք աստ
կան, որք ո՛չ ճաշակեսցեն զմահ՝
մինչև տեսցեն զՈրդի մարդոյ
եկեալ արքայութեամբ իւրով:

Յետուհետև Յիսուսը սկսեց 21
աշակերտներին յայտնել, թէ
պէտք է նորան Երուսաղէմ գնալ
և ծերերից և քահանայապետ-
ներից և դպիրներից շատ չար-
չարանքով չարչարուիլ, սպա-
նուիլ և երրորդ օրումն յարու-
թիւն առնել: Եւ Պետրոսը 22
նորան մի կողմ տանելով սկսեց
նորան յանդիմանել և ասել՝ Փառ
լիցի քեզ, Տէր, այդ Բոնը չըլի-
նի քեզ: Եւ նա դարձաւ 23
ասաց Պետրոսին. Յետիցս գնա,
սատանայ, դայթակղութիւն ես
ինձ վանողդ դու միտք չես անում
Աստուծոյ այլ մարդկանց Բա-
նը:
Յայն ժամանակ Յիսուսը իր 24
աշակերտներին ասաց. Եթէ մե-
կը կամենում է իմ ետևից գալ,
թող իր անձն ուրանայ և իր
խաչն առնէ, և իմ ետևից գայ:
Այսպէս ով որ իր անձը ուզէ 25
ապրեցնել, կ՚կորցնէ նորան, և
ով որ իր անձն կորցնէ ինձ հա-
մար կ՚գտնէ նորան: Այսպէս 26
ի՞նչ օգուտ ունի մարդ, որ
բոլոր աշխարհքն ստանայ և իր
անձը կորցնէ. կամ ի՞նչ դին
կտայ մարդ իր անձը փրկելու
համար: Այսպէս Որդին մար- 27
դոյ գալու է իր Հօր փառքովն
իր հրեշտակների հետ. և այն
ժամանակ ամեն մէկին կը հա-
տուցանէ իր գործքերի համեմատ:
Հաշմարիտ ասում եմ ձեզ, 28
այստեղ կանգնողներից կան ո-
մանք, որ մահ չեն ճաշակիլ,

մինչև որ Որդին մարդոյ տես-
նեն իր թագաւորութիւնովը
գալիս:

ԳԼ. ԺԷ.

1 Եւ յետ վեց աւուր առնու
ընդ իւր Յիսուս զՊետրոս և
զՅակոբոս և զՅովհաննէս
զեղբայր նորա, և հանէ զնոսա
՚ի լեառն մի բարձր առանձին:
2 Եւ այլակերպեցաւ առաջի նոցա.
և լուսաւորեցան երեսք նորա
իբրև զարեգակն, և հանդերձք
նորա եղեն սպիտակ իբրև
3 զլոյս. Եւ ահա երևեցան նոցա
Մովսէս և Եղիա՝ որ խօսէին
4 ընդ նմա: Պատասխանի ետ
Պետրոս՝ և ասէ ցՅիսուս. Տէր՝
բարւոք է մեզ աստ լինել. եթէ
կամիս՝ արասցուք երիս տաղա-
ւարս՝ մի քեզ և մի Մովսիսի և
5 մի Եղիայի: Եւ մինչդեռ նա
խօսէր, ահա ամպ լուսաւոր հո-
վանի եղև ՚ի վերայ նոցա. ձայն
եղև յամպոյն՝ և ասէ. Դա՛ է
Որդի իմ սիրելի՝ ընդ որ հա-
6 ճեցայ, դմա՛ լուարուք: Իբրև
լուան աշակերտքն, անկան ՚ի
վերայ երեսաց իւրեանց՝ և երկ-
7 եան յոյժ: Եւ մատուցեալ
Յիսուս բռնեաց զնոսա՝ և
ասէ. Յո՛տն կացէք՝ և մի՛ երկն-
8 չիք: Զմբարձին զաչս իւրեանց
և ո՛չ զոք տեսին՝ բայց միայն
զՅիսուս:

9 Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ

մինչև որ Որդին մարդոյ տես-
նեն իր թագաւորութիւնովը
գալիս:

ԳԼ. ԺԷ.

Եւ վեց օրից յետոյ Յիսուսը 1
Պետրոսին և Յակոբին և նորա
եղբայր Յովհաննէսին իր հետ
առաւ, և նորանց առանձին մի
բարձր լեռ հանեց: Եւ նո- 2
րանց առջևը կերպարանափո-
խուեցաւ, և նորա երեսը փայ-
լեց ինչպէս արեգակը, և նորա
հանդերձները լուսոյ պէս սպի-
տակ եղան: Եւ ահա երևեցան 3
նորանց Մովսէսը և Եղիան, որ
նորա հետ խօսում էին: Եւ 4
Պետրոսը պատասխանեց և ասաց
Յիսուսին. Տէր, լաւ է որ մենք
այստեղ լինենք. եթէ կամենաս,
այստեղ երեք տաղաւար շինենք,
մէկը քեզ համար, մէկը՝ Մովսէ-
սին, և մէկը՝ Եղիային: Եւ 5
նա տակաւին խօսելիս, ահա մի
լուսաւոր ամպ հովանի եղաւ
նորանց վերայ. և ահա մի ձայն
եղաւ՝ այն ամպիցը և ասաց.
Դա է իմ սիրելի Որդին, որին
հաւանել եմ. դորան լսեցէք:
Եւ աշակերտները լսելով՝ իրանց 6
երեսների վերայ ընկան, և շատ
վախեցան: Եւ Յիսուսը մո- 7
տեցաւ նորանց բռնեց և ասաց.
Այսպէս երկացէք և մի՛ վախենաք:
Եւ իրանց աչքերը բարձրաց- 8
րին, ոչ ոչ ով չտեսան, բայց
միայն Յիսուսին:
Եւ նորանք լեռնիցը իջնելիս, 9

անտի, պատուիրեաց նոցա Յի-
սուս՝ և ասէ. Մի ումեք ասիցէք
զտեսիլն՝ մինչև Որդի մարդոյ 'ի
մեռելոց յարիցէ: Հարցին զնա
աշակերտքն և ասեն. Օ՞րինաւոր
դպիրքն ասեն, Եթէ Եղիայի
նախ պարտ է գալ: Պատասխանի
ետ Յիսուս՝ և ասէ զնոսա.
Եղիա գայ՝ և հաստատեսցէ
զամենայն: Բայլ ասեմ ձեզ՝ Օ՞ի
Եղիա եկեալ իսկ է. և ոչ ծան-
եան զնա, այլ արարին ընդ նա՝
զոր ինչ կամեցան. նոյնպէս և
Որդի մարդոյ հարկանիցէ է 'ի
նոցանէ: Յայնժամ 'ի միտ առին
աշակերտքն՝ թէ վասն Յովհան-
նու մկրտչի ասաց զնոսա:

Եւ իբրև եկին 'ի ժողովուրդն,
մատեաւ այր մի 'ի ծունր իջանէր
և ասէր. Տէր՝ ողորմեա՛ որդւոյ
իմում, զի լուսնոտի և չարաչար
հիւանդանայ. բազում՝ անգամ
անկանի 'ի հուր՝ և երբէք 'ի
ջուր: Եւ մատուցի զնա աշա-
կերտացն քոց՝ և ոչ կարացին
բժշկել: Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ. Ո՛վ ազգ անհաւատ
և թիւր, մինչև յե՞րբ իցեմ ընդ
ձեզ. մինչև յե՞րբ անսայցեմ
ձեզ. ածա՛ զնա առ իս: Եւ սաս-
տեաց 'ի նա Յիսուս՝ և ել 'ի
նմանէ դեւն, և բժշկեցաւ մա-
նուկն 'ի ժամն յայնմանէ:
Յայնժամ մատեան աշակերտքն
Յիսուսը Նորանց պատուիրեց և
ասաց. Ոչ ոքի չասէք այդ տե-
սիլքը, մինչև որ Որդին մարդոյ
մեռելների միջից յարութիւն առ-
նէ: Եւ նորա աշակերտները
հարցրին Նորանից և ասացին.
Այսպա՞ մինչև դպիրները ասում են,
թէ Առաջ Եղիան պէտք է գայ:
Յիսուսն էլ պատասխանեց և
ասաց Նորանց. Իրաւ առաջ Ե-
ղիան կը գայ և ամեն բան կ'վե-
րանորոգէ: Բայց ասում եմ
ձեզ, որ Եղիան արդէն եկել է,
և Նորան չճանաչեցին. այլ
ինչ որ ուզեցին՝ Նորան արին.
այնպէս էլ Որդին մարդոյ
չարչարուելու է Նորանցից:
Այն ժամանակ աշակերտները
հասկացան, թէ Յոհաննէս
Մկրտչի համար ասաց Նո-
րանց:

Եւ երբոր Նորանք ժողովրդի
մօտ եկան, մի մարդ մօտեցաւ
Նորան և առջևը ծունկ դնելով՝
Ասում էր. Տէր, իմ որդուն
ողորմիր, ոչ լուսնոտում է՝ և
չարաչար տանջվում է. վասնզի
շատ անգամ կրակն է ընկնում.
և շատ անգամ՝ ջուրը: Եւ Նորան
քո աշակերտների մօտ բերի,
և չկարողացան Նորան բժշկել:
Յիսուսն էլ պատասխանեց և
ասաց. Ով անհաւատ և խոտո-
րեալ ազգ, մինչև երբ պիտի
ձեզ հետ լինիմ, մինչև երբ պիտի
ձեզ համբերեմ. Նորան ինձ մօտ
բերէք այստեղ: Եւ Յիսուսը
Նորան սաստեց. և դեւը Նորանից

առանձին՝ և ասեն զՅիսուս.
մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել
զնա: Եւ *նա ասէ զնոսա:
Վասն թերահաւատութեան
ձերոյ. ամէն ասեմ ձեզ՝ Եթէ
ունիցիք հաւատս քան զհատն
մանանխոյ, ասասջիք լերինս
այսմիկ՝ փոխեցա՛ աստի անդր,
և փոխեսցի. և ոչինչ անհնարին
լինիցի ձեզ: Բայց այս ազգ ոչ
ելանէ եթէ ոչ աղօթիւք և պա-
հովք:

Եւ մինչդեռ շրջէին Նոքա
'ի Գալիլեայ՝ ասէ զնոսա Յի-
սուս. Մատնելոց է Որդի մար-
դոյ 'ի ձեռս մարդկան: Եւ սպան-
ցեն զնա, և յերիր աւուր
յարիցէ. և տրտմեցան յոյժ:

Իբրև եկին Նոքա 'ի Կափար-
նաում՝ մատեան՝ որք զերկդրա-
մեանն պահանջէին՝ առ Պետրոս,
և ասեն. Ո՞ արդ ապետն ձեր ոչ
տայ զերկդրամեանն, և ասէ
Այո: Եւ իբրև եմուտ 'ի տուն՝
յառաջեաց քան զնա Յիսուս և
ասէ. Օ՞ի՞նչդ թուի քեզ Սիմոն.
Թագաւորք † ազգաց յումմէ
առնուն զհարկս կամ զհատն,
յորդւոց իւրեանց՝ թէ յօտարաց:
Եւ իբրև ասաց՝ ‡ թէ Յօտարաց,

դուրս եկաւ, և տղան նոյն ժա-
մից բժշկուեցաւ: Այն ժա-
մանակ աշակերտները առանձին
Յիսուսի մօտ եկան և ասացին.
Մենք ինչո՞ւ չկարողացանք հա-
նել Նորան: Յիսուսն էլ ասաց
Նորանց, Ձեր անհաւատութեան
համար. վասնզի ճշմարիտն ա-
սում եմ ձեզ՝ թէ որ մանանեխի
հատի չափ հաւատք ունենաք,
այս լեռան կ'ասէք՝ փոխադրուիր
այստեղից այնտեղ, և կ'փոխա-
դրուի. և ոչինչ անկարելի չի
լինիլ ձեզ համար: Բայց այս
ցեղը ուրիշ բանով դուրս չի գալ
եթէ ոչ աղօթքով և ծոմով:

Եւ երբոր Նորանք Գալիլեայի
մէջ մտան էին գալիս, Յիսուսը
Նորանց ասաց. Որդին մարդոյ
մարդկանց ձեռքն է մատնուելու:
Եւ Նորան կ'սպանեն, և երրորդ
օրումը յարութիւն կ'առնէ. և
նոքանք շատ տրտմեցան:

Եւ երբոր Նորանք Կափար-
նայում եկան, երկդրամեան հաւքն
ուզողները Պետրոսի մօտ եկան
և ասացին. Ձեր վարդապետն
երկդրամեանը չէ՞ վճարում: Այս
ասաց՝ Այո: Եւ երբոր տունը
մտաւ, Յիսուսը Նորանից ա-
ռաջ սկսեց և ասաց, Ինչ
պէս է երևում, Սիմոն, երկրի
թագաւորներն ումից են առ-
նում՝ հարկը կամ տուրքը, իրանց
որդիքների՞նը, թէ օտարների՞նը:

* 'Ի Յոյն. Յիսուս
† 'Ի Յոյն. երկրի
‡ 'Ի Յոյն. Պետրոս

Ասէ ցնա Յիսուս՝ Ապա ուրեմն
26 աղատ են որդիքն։ Բայց զի մի գայթակղեցուսցուք զնոսա, երթ ՝ի ծով և ընկեա կարթ, և զառաջին ձուկն որ ելանիցէ առ և բաց զբերան նորա և գտանիցես սատեր, և զայն առեալ տացես նոցա ընդ իմ և ընդ քո։

ԳԼ. ԺԱ.

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս և ասեն. Ո՞վ իցէ* ՝ի մէնջ՝ մեծ յարքա-
2 յութեան երկնից։ Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի, կացոյց զնա ՝ի մէջ նոցա, Եւ
3 ասէ. Ամէն ասեմ ձեզ. Եթէ ոչ դարձջիք և եղիջիք իբրև զմանկատի, ոչ մտանիցէք յարքայու-
4 թիւն երկնից։ Արդ որ խոնարհեցուցանէ զանձն իբրև զմանուկս զայս, նա է մեծ յարքայութեան
5 երկնից։ Եւ որ ոք ընկալցի մանուկ մի այսպիսի յանուն իմ, զիս
6 ընդունի։ Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի ՝ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւատացելոց, լաւ է նմա եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա և ընկղմիցի ՝ի խորս ծովու։

7 Վա՛յ աշխարհի ՝ի գայթակղութեանց. հարկ է գալ գայթակղութեանց. բայց վա՛յ

Պետրոսը ասաց նորան. Օտար- 25
ներիցը։ Յիսուսը նորան ասաց. Ապա ուրեմն ազատ են որդիները։ Բայց որպէսզի նորանց 26
չ՚գայթակղեցնենք, գնա ծովը և կարթը գցիր, և առաջիկ դուրս եկող ձուկն առ՝ բերանը բաց, և մի սատեր կ՚գտնես. այն առ՝ տուր նորանց իմ և քո տեղ։

ԳԼ. ԺԱ.

Այն ժամումը աշակերտները 1
Յիսուսի մօտ եկան և ասացին. Ո՞վ է մեծ երկնքի արքայութեան մէջ։ Եւ Յիսուսը իր մօտ մի 2
երեխայ կանչելով, նորան կանգնեցրեց նորանց մէջ տեղը. Եւ 3
ասաց. Ճ՚շմարիտն ասում եմ ձեզ. եթէ դարձ չգաք և չլինիք երեխաների նման, չէք մտնիլ երկնքի արքայութիւնը։ Արդ 4
ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնէ, նա է մեծ երկնքի արքայութեան մէջ։ Եւ 5
ով որ մի այսպիսի երեխայ ընդունի իմ անունովը, ինձ է ընդունում։ Եւ ով որ գայ- 6
թակղեցնէ այս փոքրներից մէկին, որ հաւատում են ինձ, աւելի լաւ է նորան, որ մի իշու ջաղացի քար նորա վզիցը կախուի և ծովի անդունդում ընկղմուի։

Վա՛յ աշխարհքիս գայթակ- 7
ղութիւնների համար. վասնզի պէտք է որ գայթակղութիւն-

* ՝Ի Յոյնն, չէ։

մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն
8 գայցէ գայթակղութիւն։ Եթէ ձեռն քո կամ՝ ոտն գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ և ընկեա ՝ի քէն. լաւ իցէ քեզ միաձեռանի կամ կաղ մտանել ՝ի կեանս, քան թէ երկուս ձեռս
և երկուս ոտս ունել, և անկանել
9 ՝ի հուրն յաւիտենական։ Եւ եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ՝ի քէն. լաւ իցէ քեզ միականի մտանել ՝ի կեանս, քան երկուս աչս ունել՝ և անկանել՝ ՝ի գեհեն հրոյն։

10 Զգո՛յշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի ՝ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, Զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր
11 իմոյ՝ որ յերկինս է։ Զի եկն Որդի մարդոյ կեցուցանել զկո-
12 րուսեալն։ Զիա՞րդ թուի ձեզ. եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար՝ և մոլորիցի մի ՝ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն և զիններն ոչխարն ՝ի լերինս, և երթիցէ
13 խնդրիցէ զմոլորեալն։ Եւ եթէ լինիցի գտանել զնա, ամէն ասեմ ձեզ, զի ուրախ լինի ՝ի վերայ նորա առաւել քան ՝ի վերայ
14 իննսուն և ինուն նոցանց, որ չիցեն մոլորեալ։ Այսպէս ո՛չ են կամք առաջի Հօր* իմոյ որ յերկինս է՝ եթէ կորիցէ մի ՝ի փոքրըկանցս յայսցանէ։

նները գան, սակայն վա՛յ այն մարդուն, որի ձեռովը կը գայ գայթակղութիւնը։ Եւ եթէ քո 8
ձեռը կամ քո ոտը քեզ գայթակղեցնում է, կտրիր նորան և քեզանից դէն գցիր. լաւ է քեզ կաղ կամ հաշմանդամ մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք և երկու ոտք ունենալ՝ և յաւիտենական կրակը գցուիլ։ Եւ 9
թէ որ քո աչքը քեզ գայթակղեցնում է, հանիր նորան և քեզանից դէն գցիր, լաւ է քեզ մէկ աչքով մտնել կեանքը, քան թէ երկու աչք ունենալ՝ և կրակի գեհենը գցուիլ։

Զգոյշ կացէք, որ այս փոքր- 10
ներից մէկին չանարգէք. վասնզի ասում եմ ձեզ, որ նորանց հրեշտակները երկնքումը միշտ տեսնում են իմ՝ Հօր երեսը որ երկնքումն է։ Վասնզի Որդին 11
մարդոյ եկաւ, որ ապրեցնէ կորածը։ Ի՞նչպէս է երևում 12
ձեզ, եթէ մի մարդի հարիւր ոչխար լինի, և նորանցից մէկը մոլորի, նա չի՞ թողել իննսուն և իններն ոչխարը լեռներումը և գնալ այն մոլորածին որոնիլ։ Եւ եթէ լինի որ գտնէ նորան, 13
ճշմարիտն ասում եմ ձեզ, որ նորա վերայ աւելի կ՚ուրախանայ քան թէ այն իննսուն և իններ վերայ որ չեն մոլորած։ Այսպէս ձեր Հայրը՝ որ երկն- 14
քումն է, չէ կամենում, որ այս փոքրներից մէկը կորչի։

* ՝Ի Յոյնն, ձերոյ։

15 Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա յորժամ դու և նա միայն եցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայր
16 քո: Այլ թէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ միւս ևս՝ կամ երկուս. զի 'ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի
17 ամենայն բան: Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ասասջէր յեկեղեցւոջ. ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զՀեթանոսն և զմաքսաւոր:
18 Ամէն ասեմ ձեզ. Զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յեր-
19 կինս: Դարձեալ ասեմ ձեզ. Եթէ երկու 'ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա 'ի Հօրէ իմմէ որ յերկինս է:
20 Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա:

21 Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս՝ և ասէ. Տէր՝ քանիցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև ցեօթն
22 անգամ: Ասէ ցնա Յիսուս. Ո՛չ ասեմ քեզ՝ թէ մինչև ցեօթն անգամ, այլ մինչև ցեօթանասնեկին եօթն: Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ
23 համար առնուլ 'ի մէջ ծառայից

Եթէ քո եղբայրը քեզ դէմ մեղանչէ, գնա նորան յանդիմանիր՝ երբոր դու և նա մենակ լինիք. եթէ քեզ լսէ, քո եղբայրը շահեցիր: Այլ եթէ չլսէ, վերը առ մի կամ երկու ուրիշներ էլ քեզ հետ, վասնզի երկու կամ երեք վկայի բերանով ամեն բան կը հաստատուի: Այլ եթէ նորանց էլ չլսէ, ասա եկեղեցոյն, ապա եթէ եկեղեցոյն էլ չլսէ, թող լինի քեզ համար ինչպէս Հեթանոս կամ մաքսաւոր:
Ճշմարիտն ասում եմ ձեզ, ինչ որ երկրի վերայ կապէք, երկնքումն էլ կապուած կ'լինի, և ինչ որ երկրի վերայ արձակէք երկնքումն էլ արձակուած կ'լինի: Դարձեալ ասում եմ ձեզ՝ եթէ ձեզանից երկուսը երկրի վերայ միաբանուին՝ ամեն ինչ բանի համար որ խնդրեն, կ'լինի նորանց իմ Հօրից՝ որ երկնքումն է: Վասնզի ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունովը ժողովուած լինին՝ ես այնտեղ նորանց մէջ եմ:
Այն ժամանակ Պետրոսը նորա մօտ գալով ասաց. Տէր, քանի անգամ եթէ իմ եղբայրն ինձ դէմ մեղք անէ, և ես ներեմ նորան. մինչև եօթն անգամ: Յիսուսը նորան ասաց. Ասում եմ քեզ, մինչև եօթն անգամ, այլ մինչև եօթանասուն անգամ եօթը: Որա համար երկնքի արքայութիւնը նմանուեցաւ մի թագաւոր մարդու, որ

24 իւրոց: Եւ իբրև սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան
25 մի բիւր քանքարոյ: Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նորա, և զկին նորա՝ և զորդիս՝ և զամենայն որ զինչ և ունիցի՝ և
26 հատուցանել: Եւ անկեալ ծառայն երկիրպագանէր նմա՝ և ասէր.* Երկայնամիտ լեր առ
27 իս՝ և զամենայն հատուցից քեզ: Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա, և զփոխն
28 եթող նմա: Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի 'ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան՝ և կալեալ զնա խեղդէր՝ և ասէր. Հատո՛ ինձ զոր
29 պարտիսդ: Արդ անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա և ասէր. Երկայնամի՛տ լեր առ իս՝ և զամենայն հատու-
30 ցից քեզ: Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ արկ զնա 'ի բանտ մինչև
31 հատուսցէ զպարտն: Իբրև տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեն՝ տրամեցան յոյժ և եկեալ ցուցին տեառն իւրեանց
32 զամենայն որ ինչ եղեն: Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ. Ծառայ չար՝ զամենայն
33 զպարտն թողի քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս: Իսկ արդ ոչ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քում՝, որպէս և ես քեզ
34 ողորմեցայ: Եւ բարկացեալ տէրն նորա մատնեաց զնա դահ-

ուզեց իր ծառաների հետ հաշիւ տեսնել: Եւ երբոր սկսեց հաշիւը տեսնել, նորա մօտ մէկը բերուեցաւ տասն հազար քանքար պարտական: Այլ որովհետև չունէր վճարելու, նորա տէրը հրամայեց՝ որ նա և նորա կինն և նորա որդիքն և ամեն ինչ որ ունէր ծախսուի և պարտքը վճարուի: Եւ ծառան էլ երեսի վերայ ընկնելով երկրպագում էր նորան և ասում. Տէր, համբերիր ինձ համար, և բոլորը կ'հատուցանեմ քեզ: Տէրն էլ գթաց այն ծառայի վերայ՝ նորան արձակեց, և պարտքն էլ շնորհեց նորան: Եւ երբոր այն ծառան դուրս եկաւ, իր ծառայակիցներից մէկին գտաւ՝ որ իրան հարիւր դահեկան պարտական էր, և նորան բռնած խեղդում էր և ասում, Վճարիր ինձ ինչ որ պարտական ես: Հիմա նորա այն ծառայակիցը նորա ոտներն ընկաւ, նորան աղաչում էր և ասում. Համբերիր ինձ համար և բոլորը կ'հատուցանեմ քեզ: Այլ նա չէր կամենում, այլ գնաց նորան գցեց բանտը, մինչև որ պարտքը վճարէ: Երբ որ նորա ծառայակիցները տեսան եղած բաները շատ տրտմեցան և եկան իրանց տիրոջը յայտնեցին բոլոր եղածը: Այն ժամանակ նորա տէրը մօտը կանչեց նորան և ասաց. Չար ծառայ, ես այն բոլոր պարտքը

* 'Ի Ցայն, Տէր

ճաց, մինչև հատուցէ զամենայն
35 զպարտսն։ Նոյնպէս և Հայր
իմ՝ որ յերկինս է՝ արասցէ ձեզ,
եթէ ոչ թողուցուք իւրաքան-
չիւր եղբօր իւրում 'ի սրտից
ձերոց զյանցանս նոցա։

ԳԼ. ԺԹ.

1 Եւ եղև իբրև կատարեաց
Յիսուս զբանս զայսոսիկ, փոխե-
ցաւ 'ի Գալիլեէ և եկն 'ի
սահմանս Հրէաստանի յայնկոյս
2 Յորդանանու։ Եւ գնացին զհետ
նորա ժողովուրդք բազումք, և
բժշկեաց զնոսա անդ։
3 Եւ մատուցեալ առ նա փարի-
սեցիքն փորձէին զնա և ասէին,
եթէ Արժա՞ն իցէ ումեք ար-
ձակել զկին իւր ըստ ամենայն
4 վնասու։ Պատասխանի ետ նոցա
և ասէ, Ոչիցէ՞ ընթերցեալ ձեր՝
թէ որ հաստատեացն 'ի սկզբա-
նէ՝ արու և էգ արար զնոսա, և
5 ասէ։ Վասն այսորիկ թողցէ
այր զհայր և զմայր՝ և երթիցէ
զհետ կնոջ իւրոյ, և եղիցին եր-
6 կոքեան 'ի մարմին մի։ Արդ
ուրեմն ոչ են երկու՝ այլ մի
մարմին. արդ զոր Աստուած
զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ։
7 Ասեն ցնա. Իսկ Մովսէս ընդէ՞ր
շնորհեցի քեզ, որովհետև դու
աղաչեցիր ինձ։ Պէտք չէ՞ որ 33
դու էլ քո ծառայակցին ողոր-
մէիր՝ ինչպէս որ ես էլ քեզ
ողորմեցի։ Եւ նորա տէրը բար- 34
կանալով՝ նորան մատնեց դա-
հիճներին, մինչև որ բոլոր
պարտքը վճարէ նորան։ Այս- 35
պէս էլ իմ երկնաւոր Հայրը
կ'անէ ձեզ, եթէ դուք ամեն
մէկդ իր եղբօրը՝ ձեր բոլոր
սրտիցը չթողէք նորանց յան-
ցանքը։

ԳԼ. ԺԹ.

Եւ եղաւ երբոր Յիսուսը այս 1
խօսքերը վերջացրեց, Գալիլեա-
յիցը վեր կացաւ Հրէաստանի
կողմերն եկաւ, Յորդանանի
այն կողմը։ Եւ շատ ժո- 2
ղովուրդներ նորա ետևից գնա-
ցին, և նորանց այն տեղ բժշկեց։
Եւ փարիսեցիները նորա մօտ 3
եկան և նորան փորձելով ասում
էին նորան. Արժա՞ն է արդեօք
մարդուս, որ իր կինն արձակէ
ամեն որ և է պատճառի համար։
Նա էլ պատասխանեց և ասաց 4
նորանց. Չէ՞ք կարդացել թէ նա
որ սկզբիցն ստեղծեց, արու և
էգ ստեղծեց նորանց, և ասաց.
Որա համար մարդ էր հայրը և 5
մայրը կ'թողէ և իր կնոջը կ'յարի
և երկուսը կ'լինին մէկ մարմին։
Ուստի այլ ևս երկու չեն, այլ 6
մէկ մարմին. արդ այն որ Աս-
տուած միաւորեց, թող մարդը
չբաժանէ։ Նորան ասացին. 7

պատուիրեաց մեզ տալ թուղթ
8 մեկնելոյ և արձակել։ Ասէ
ցնոսա. Մովսէս վասն խստա-
սրտութեան ձերոյ հրամայեաց
ձեզ արձակել զկիանայս ձեր. այլ
'ի սկզբանէ ոչ եղև այնպէս։
9 Բայց ասեմ ձեզ, զի Ամենայն
որ արձակեսցէ զկին իւր՝ և ոչ
վասն պոռնկութեան, և առնիցէ
այլ՝ շնայ, և որ զարձակեալն
10 առնիցէ շնայ։ Ասեն ցնա աշա-
կերտքն իւր. Եթէ այդպէս ինչ
վնաս իցէ ընդ այր և ընդ կին,
11 լաւ է չամուսնանալ։ Եւ նա
ասէ ցնոսա. Ո՛չ ամենեքեան
բաւական են այդմ բանի, այլ
12 որոց տուեալ է։ Զի են ներ-
քինիք՝ որ յորովայնէ մօր իւր-
եանց ծնան այնպէս. և են
ներքինիք՝ որ 'ի մարդկանէ եղեն
ներքինիք. և են ներքինիք՝ որ
զանձինս իւրեանց արարին ներ-
քինիս վասն արքայութեան երկ-
նից. որ կարող է տանել՝
տարցի։

13 Յայնժամ մատուցան առ նա
մանկտի, զի ձեռն դիցէ 'ի վերայ
նոցա՝ և աղօթս արասցէ. և
աշակերտքն նորա սաստէին
14 նոցա։ Ասէ Յիսուս, Թոյլ
տուք մանկտւոյդ՝ և մի՛ արգելուք
զդոսա գալ առ իս, զի այդպի-
սեացդ է արքայութիւն երկնից։
15 Եւ եդեալ ձեռն 'ի վերայ նոցա
16 գնաց անտի։ Եւ ահա մատու-
ցեալ ոմն առ նա ասէ. Վար-
Ապա ինչ՞ Մովսէսը պատուիրեց
մեզ, արձակման թուղթ տալ
և արձակել նորան։ Նորանց 8
ասաց, թէ Մովսէսը ձեր քա-
րասրտութեան համար հրաման
տուաւ ձեզ, ձեր կանայքն ար-
ձակել. բայց սկզբից այնպէս
չեղաւ։ Եւ ասում եմ ձեզ, թէ 9
Ամեն ով որ իր կինն արձակէ,
առանց պոռնկութեան պատ-
ճառի և ուրիշն առնէ, շնու-
թիւն է գործում. և արձակուածն
առնողը շնութիւն է գործում։
Իր աշակերտները նորան ասացին. 10
Եթէ այդպէս է մարդու բանը
կնկան հետ, լաւ չէ ամուսնանալ։
Նա էլ ասաց նորանց. Ամենքը 11
չեն տանում այդ բանը, բայց
որոնց որ տրուած է։ Վասնզի 12
կան ներքինիք, որ մօր որովայ-
նից այնպէս են ծնուել. և կան
ներքինիք՝ որ մարդկանցից են
ներքինացրուել. և կան ներքի-
նիք՝ որ իրանց ներքինացրին
երկնքի արքայութեան համար.
ով որ կարող է տանել՝ թող
տանի։
Այն ժամանակ երեխաներ բե- 13
րուեցան նորա մօտ՝ որ ձեռքերը
դնէ նորանց վերայ և աղօթք
անէ. իսկ աշակերտները յանդի-
մանում էին նորանց։ Բայց 14
Յիսուսն ասաց. Թոյլ տուէք
այդ երեխաներին՝ և դորանց մի
արգելէք ինձ մօտ գալ. վասնզի
այդպիսիներին է երկնքի արքա-
յութիւնը։ Եւ նորանց վերայ 15
ձեռք դրաւ, և այնտեղից գնաց։

դապետ բարի՝ զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանս
17 յաւիտենականս։ Եւ նա ասէ ցնա. Օ՛ի* հարցանես զիս զբարւոյ, մի է բարի. եթէ
կամիս 'ի կեանսն † յաւիտենական մտանել՝ պահեա զպատուի-
18 րանսն։ Ասէ ցնա. Օ՞րս. ասէ ցնա Յիսուս, զՄ՛ի սպա-
նանիցես, և Մ՛ի շնար, և Մ՛ի գողանար, և Մ՛ի սուտ վկայեր,
19 Պատուեա զՀայր քո և զմայր, և Սիրեսցես զընկեր քո իբրև
20 զանձն քո։ Ասէ ցնա պատանին. Օ՛այդ ամենայն պահեցի 'ի
մանկութենէ իմմէ. արդ ի՞նչ իւիք
21 պակաս իցեմ։ Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիս կատարեալ լինել,
երթ վաճառեա զինչս քո և տո՛ւր աղքատաց. և ունիցիս
գանձս յերկինս, և ե՛կ զկնի իմ։
22 Իբրև լուաւ պատանին զբանն,
գնաց տրտմեալ, զի ունէր ստա-
ցուածս բազումս։

23 Ասէ Յիսուս ցաշակերտսն.
Ամէն ասեմ ձեզ. Օ՛ի դժուար
24 մտցէ մեծատուն յարքա-
յութիւն երկնից։ Դարձեալ
ասեմ ձեզ. Դիւրին է մալեաց
մտանել ընդ ծակ ասղան, քան
մեծատան յարքայութիւն Ա-
25 տուծոյ մտանել։ Իբրև լուան

Եւ ահա մէկն եկաւ նորա մօտ և 16
ասաց. Խարի վարդապետ, ի՞նչ
բարի բան գործեմ՝ որ յաւիտե-
նական կեանք ունենամ։ Նա 17
էլ ասաց նորան. Ինչո՞ւ ես ինձ
բարի ասում. ոչ ոք է բարի
բայց միայն մէկն Աստուած,
իսկ թէ որ կամիս յաւիտենական
կեանքը մտնել, պահիր պա-
տուիրանքները։ Նորան ասաց 18
Որո՞նք։ Յիսուսն էլ ասաց.
Սորանք, Մ՛ի սպանանիր, Մ՛ի
շնար, Մ՛ի գողանար, Մ՛ի սուտ
վկայեր. Պատուիր քո Հօրը և 19
քո մօրը, և սիրիր քո ընկերին
քո անձի պէս։ Պատանին նո- 20
րան ասաց. Այդ ամենն իմ երե-
խայութիւնից պահեցի. էլի՞նչ
բանով եմ պակաս։ Յիսուսը 21
նորան ասաց Եթէ կամենում ես
կատարեալ լինել, գնա ունե-
ցածներդ ծախիր՝ և տուր աղ-
քատներին, և գանձ կունենաս
երկնքումը, և եկ հետևիր ինձ։
Երբոր պատանին այս խօսքը 22
լսեց, տրտմած գնաց, վասնզի
շատ ստացուածք ունէր։

Յիսուսն էլ ասաց իր աշա- 23
կերտներին. Ճշմարիտն ասում
եմ ձեզ, որ հարուստը դժուար
կմտնէ երկնքի արքայութիւնը։
Այլ դարձեալ ասում եմ ձեզ. 24
Աւելի հեշտ է, որ մի ուղտ
ասեղի ծակովն անցնի, քան թէ
մի հարուստ Աստուծոյ արքա-

* 'Ի Յոյն՝, ասես զիս բարի, չէք ոք բարի բայց մի Աստուած.
† 'Ի Յոյն՝, չէ։

աշակերտքն՝ զարմացան յոյժ՝
և ասեն. Իսկ ո՞կարիցէ ապրել։
26 Հայեցաւ 'ի նոսա Յիսուս՝ և
ասէ. Այս 'ի մարդկանէ այդ
անկար է, այլ առ Աստուծոյ
ամենայն ինչ զօրաւոր։

27 Յայնժամ պատասխանի եւ
Պետրոս և ասէ ցնա. Այսոսիկ
մեք թողաք զամենայն և եկաք
զկնի քո, արդ զի՞նչ լինիցի
28 մեզ։ Ասէ ցնոսա Յիսուս.
Ամէն ասեմ ձեզ. Օ՛ի դուք որ
եկիք զկնի իմ, 'ի միւս անգամ
գալստեան՝ յորժամ նստցի Որդի
մարդոյ յաթոռ փառաց իւրոց,
նստջիք և դուք յերկոտասան
աթոռս՝ դատել զերկոտասան
29 ազգն Իսրայելի։ Եւ ամենայն
որ ոք եթող զտուն կամ զեղ-
բարս կամ զքոյրս կամ զՀայր կամ
զմայր կամ զկին կամ զորդիս
կամ զագարակս վասն անուան
իմոյ, հարիւրապատիկ առցէ և
զկեանսն յաւիտենականս ժա-
30 ռանգեսցէ։ Բազումք եղիցին
առաջինք յետինք՝ և յետինք
առաջինք։

ԳԼ. Ի

1 Թագի նման է արքայու-
թիւն երկնից առն տանու-
տեառն, որ ել ընդ առաւօտս 'ի
վարձու ունել մշակս յայգի իւր։
2 Եւ արկ վարձս մշակացն աւուրն
դահեկան, և առաքեաց զնոսա

յութիւնը մտնէ։ Եւ նորա 25
աշակերտներն երբոր լսեցին,
շատ զարմացան և ասացին. Այս-
ո՞վ կարող է փրկուիլ։ Յիսուսն 26
էլ նորանց մտիկ տալով ասաց.
Մարդկանց կողմանէ դա անկա-
րելի է, բայց Աստուծոյ կող-
մանէ ամեն բան կարելի է։

Այն ժամանակ Պետրոսը պա- 27
տասխանեց և ասաց նորան. Ահա
մենք ամեն բան թողինք և քո
ետևից եկանք. Հիմա ի՞նչ կ'լինի
մեզ. Յիսուսն էլ ասաց նորանց. 28
Ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ
դուք՝ իմ ետևից եկողներդ,
վերստին ծննդումը՝ երբոր Որդին
մարդոյ իր փառաց աթոռի վերայ
կ'նստի, դուք էլ տասներկու աթո-
ռի վերայ կ'նստիք՝ և Իսրայէլի
տասներկու ցեղերը կ'դատէք։
Եւ ամեն ով որ թողեց տներ, 29
կամ եղբարք՝ կամ քոյրեր, կամ
Հայր, կամ մայր կամ կին կամ
որդիք կամ արտեր իմ՝ անունի
համար, հարիւրապատիկ կ'առնէ
և յաւիտենական կեանքը կըժա-
ռանգէ։ Եւ շատ առաջիններ 30
յետինք կ'լինին, և յետիններ
առաջինք։

ԳԼ. Ի

Վասնզի նման է երկնքի ար- 1
քայութիւնը մի տանուտէր մար-
դու, որ առաւօտանց կանուխ
դուրս եկաւ իր այգու համար
մշակներ բռնելու։ Եւ մշակ- 2
ների հետ օրը մի դահեկանի

3 յայդի իւր. Եւ եղեալ զերրորդ
ժամուն՝ ետես այլ զկային
4 դատարկ 'ի հրապարակս։ Ասէ
և ցնոսա. Երթայք և դուք
յայդի իմ, և որ ինչ արժան
5 իցէ տացի ձեզ. Գնացին և նոքա.
և դարձեալ եղեալ զվեց ժամուն և
6 զկնն ժամուն՝ արար նոյնպէս։
Եւ զմետասաներորդ ժամուն եղ-
եալ եգիտ այլս՝ զկային դա-
տարկ, ասէ և ցնոսա. ընդէր
կայք ամենայն զօրս ցերեկ դատարկ։
7 Ասեն ցնա, Զի ոչ ոք կալաւ
զմեզ 'ի վարձու. ասէ ցնոսա.
Երթայք և դուք յայդին, և որ
8 ինչ արժան է առնուցուք։ Եւ
իբրև երեկոյ եղև՝ ասէ տէր
այգւոյն ցգաւառապետ իւր.
Կոչեա զմշակսն և տուր նոցա
վարձս՝ սկսեալ 'ի յետնոցն մինչև
9 ցառաջինսն։ Իբրև եկին որք
զմետասաներորդ ժամուն, առին
10 մէն մի դահեկան։ Եկեալ և
առաջինքն՝ համարէին թէ աւելի
առնուցուն, և առին մէն մի
11 դահեկան և նոքա։ Իբրև առին,
տրտնջէին զտանուտեառնէն՝ և
12 ասէին. Թէ զոքա յետինքդ մի
ժամ գործեցին, և հաստարակորդս
մեզ արարեր զգոսա, որ զծան-
րութիւն աւուրն բարձաք և
13 զտօթ։ Եւ պատասխանի ետ
միւսմ 'ի նոցանէ և ասէ. Ընկեր՝
չզրկեմ զքեզ, ոչ դահեկանի
14 փոխ սակ արկեր ընդ իս։ Առ
զքոյդ և երթ, եթէ կամիմ
յետնոցս տալ՝ որպէս և քեզ։
15 Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն

խօսելով, ուղարկեց նորանց իր
այգին։ Եւ ժամը երեքի մօտ 3
դուրս ելաւ՝ ուրիշներ տեսաւ,
որ հրապարակում պարապ
կանգնել էին։ Նորանց էլ ասաց. 4
Դուք էլ գնացէք այգին, և ինչ
որ արժան է կ'տամ ձեզ։ Նո- 5
րանք էլ գնացին. և դարձեալ
ժամը վեցին և իններն դուրս գա-
լով նոյնպէս արաւ։ Եւ ժամը 6
տասնումէկին էլ դուրս գա-
լով՝ ուրիշները գտաւ պարապ
կանգնած և ասաց նորանց. Ին-
չո՞ւ էք այստեղ բոլոր օրը պա-
րապ կանգնել։ Նորան ասա- 7
ցին. Որովհետև ոչ ոք մեզ
չվարձեց։ Նորանց ասաց. Դուք
էլ գնացէք այգին, և ինչ որ
արժան է կ'առնէք։ Եւ երբոր 8
իրիկուն եղաւ, այգու տէրն իր
տան վերակացուին ասաց. Ա՛շակ-
ներին կանչիր և նորանց վարձը
տուր՝ յետիններից սկսած մինչև
առաջինները։ Եւ ժամը տաս- 9
նուամէկինները գալով, մի մի
դահեկան առին։ Առաջիններն 10
էլ եկան՝ և կարծեցին, թէ
աւելի կ'առնեն. և նորանք էլ
մի մի դահեկան առին։ Բայց 11
երբոր առին, տան տիրոջից
տրտնջում էին և ասում. Թէ 12
այդ յետինները մէկ ժամ գոր-
ծեցին, և դորանց մեզ հետ
հաւասար արիր, որ օրի ծան-
րութիւնը և տաքութիւնը քա-
շեցինք։ Պատասխանի ետ 13
նորանցից մէկին և ասաց. Ընկեր,
չեմ զրկում քեզ. չէ՞ որ դու ինձ

յիմոս առնել զինչ և կամիմ.
կամ թէ ակն քո չար է, զի ես
16 առատս եմ։ Այսպէս եղիցին
յետինք առաջինք, և առաջինք
յետինք. զի բազումք են կոչ-
ցեալք, և սակաւք են ընտրեալք։

17 Իբրև ելանէր Յիսուս Երու-
սաղէմ, առ* զերկոտասանսն
առանձինն, և 'ի ճանապարհին
18 ասէ ցնոսա։ Ահաւասիկ ելա-
նեմք Երուսաղէմ. և Որդի
մարդոյ մատնեսցի քահանայա-
պետիցն և դպրաց. և դատա-
19 պարտեսցին զնա 'ի մահ. Եւ
մատնեսցեն զնա հեթանոսաց՝
այպանել և հարկանել՝ և 'ի խաչ
հանել, և յերիր աւուր յարիցէ։

20 Յայնժամ մատեաւ առ նա
մայր որդւոցն Զեբեդեայ որդ-
ւովքն իւրովք հանդերձ. եր-
կիրպագանէր՝ և խնդրէր ինչ 'ի
21 նմանէ։ Եւ նա ասէ ցնա.
Զի՞նչ կամիս. ասէ ցնա. Ասա՛
զի նստցին սոքա երկու որդիքս
իմ, մի ընդ աջմէ քումմէ և մի
22 ընդ ահեկէ յարքայութեան
քումմէ։ Պատասխանի ետ Յիսուս
և ասէ. Ո՞չ գիտէք զինչ խնդր-
էք. կարէ՞ք ըմպել զբաժակն

հետ մի դահեկանի համաձայնե-
ցիր։ Առնը առ և գնա. բայց 14
ես ուզում եմ՝ որ այս յետինին
տամ ինչպէս քեզ։ Կամ մի թէ 15
ես իշխանութիւն չունիմ՝ անե-
լու ինչ որ ուզեմ իմ ստացուած-
քին. կամ թէ քո աչքը չար է
որ ես բարերար եմ։ Այսպէս 16
յետիններն առաջինք կ'լինին, և
առաջիններն յետինք. վասնզի
շատերն են կանչուած. բայց քի-
չերն ընտրուած։

Երբոր Յիսուսը վեր էր 17
ելնում Երուսաղէմ, տասներկու
աշակերտներն առանձին իր հետ
առաւ ճանապարհումը և ասաց
նորանց. Ահա վեր ենք ելնում 18
Երուսաղէմ, և Որդին մարդոյ
կ'մատնուի քահանայապետներին
և դպիրներին և կ'դատապարտեն
նորան մահով. Եւ կ'մատնեն 19
նորան հեթանոսներին խայտա-
ռակելու և ծեծելու և խաչ
հանելու. և երրորդ օրումը յա-
րութիւն կ'առնէ։

Այն ժամանակ Զեբեդեայի 20
որդոց մայրը իր որդոց հետ
նորա մօտ եկաւ երկրպագեց, և
նորանից մի բան խնդրեց։ Ա՛յ 21
էլ ասաց նորան. Ի՞նչ ես ու-
զում։ Նորան ասաց. Ասա
որ իմ այս երկու որդիքը նստեն
մէկը քո աջ կողմը՝ և մէկը ձախ
կողմը քո արքայութիւնումը։
Յիսուսն էլ պատասխանեց և 22
ասաց. Չէք գիտում՝ թէ ի՞նչ
էք խնդրում. կարո՞ղ էք այն

* 'Ի Յունն, զերկոտասան աշակերտսն

զոր ես ըմպելոցն եմ, կամ զմկրտութիւն զոր ես մկրտելոցն եմ մկրտիլ. ասեն ցնա.
23 Կարող եմք: Ասէ ցնոսա * Յիսուս. Զբաժակն իմ ըմպիցէք, և զմկրտութիւն զոր ես մկրտելոց եմ մկրտիցիք, բայց † նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց ‡
24 տուեալ է 'ի Հօրէ իմմէ: Եւ լուեալ տասանցն բարկացան 'ի
25 վերայ երկուցն եղբարց: Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն և ասէ. Գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նոցա, և մեծամեծքն
26 իշխեն նոցա: Ո՛չ այնպէս իցէ և 'ի ձերում միջի. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր
27 պաշտօնեայ. Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր
28 ծառայ: Որպէս Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել, և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց:

29 Եւ յելանելն նոցա Յերիքովէ, գնացին զհետ նորա ժողովուրդք
30 բազումք: Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն. իբրև լուան թէ Յիսուս անցանէ աղաղակեցին և ասեն. Ողորմեա՛ մեզ § Յիսուս Որդի Դաւ-

բաժակը խմել որ ես եմ խմելու, կամ այն մկրտութիւնովն մկրտուիլ՝ որ ես եմ մկրտուելու: Ասորան ասացին. Կարող ենք: Եւ ասաց նորանց. Իմ բաժակը
23 կ'խմէք, և այն մկրտութիւնովն որ ես պիտի մկրտուիմ կ'մկրտուիք, բայց իմ աջ և ձախ կողմը նստեցնելն՝ իմն չէ տալ. այլ նորանց՝ որ իմ Հօրիցը պատրաստուած է: Եւ այն տասներն
24 երբոր լսեցին, նեղացան այն
25 երկու եղբարց վերայ: Յիսուսն էլ նորանց իրան մօտ կանչելով ասաց. Գիտէք, որ ազգերի իշխանները տիրում են նորանց վերայ, և մեծամեծները իշխում
26 են նորանց վերայ. Բայց այնպէս չլինի ձեր մէջ, այլ ձեզանից ով որ կամենայ մեծ լինել, թող
27 ձեզ ծառայ լինի: Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել,
28 թող ձեզ ծառայ լինի: Ինչպէս Որդին մարդոյ չեկաւ որ իրան ծառայեն, այլ որ ինքը ծառայէ, և շատերի փոխանակ իր անձն փրկանք տայ:

29 Եւ երբոր նորանք Երիքովից
30 դուրս եկան, շատ ժողովուրդներ գնացին նորա ետևից: Եւ ահա երկու կոյր այն ճանապարհի վերայ նստած էին. երբոր լսեցին՝ թէ Յիսուսն է անց կենում, աղաղակեցին և ասացին: Ողոր-

* 'Ի Յոյն. չէ:
† 'Ի Յոյն. նստիլն
‡ 'Ի Յոյն. պատրաստեալ
§ 'Ի Յոյն. Տէր՝

31 թիւ: Եւ ամբոխն սաստեաց նոցա զի լռեսցեն. և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին.
32 Տէր, ողորմեա՛ մեզ Որդի Դաւթի: Յոտեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա և ասէ, Զի՞նչ
33 կամիք զի արարիցից ձեզ. Ասեն ցնա. Տէր, զի բացցին աչք մեր:
34 Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին. և գնացին զհետ նորա:

ԳԼ. ԻԱ.

1 Իբրև մօտ եղեն յԵրուսաղէմ, և եկին 'ի Բեթփագէ մերձ 'ի լեառն Զիթենեաց. յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յա-
2 շակերտացն իւրոց: Եւ ասէ ցնոսա. Երթա՛ք 'ի գիւղն՝ որ առաջի ձեր է, և անդէն գտանէք էշ կապեալ՝ և յաւանակ ընդ
3 նմին, լուծէք ածէք ինձ: Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջէք, եթէ Տեառն իւրեանց պիտոյ են. և վաղվաղակի առա-
4 քեսցէ զնոսա: Բայց այս ամենայն եղև՝ զի լցցի բան մարգա-
5 բէին որ ասէ: Ասացէք դստեր Սիովնի. Ահա թագաւոր քո գայ քեզ հեզ, և հեծեալ յէշ և
6 յաւանակի իշոյ: Գնացին աշակերտքն, և արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս:
7 Եւ ածին զէշն և զյաւանակն, և արկին զնոքօք ձորձս իւրեանց. և նստաւ 'ի վերայ

միր մեզ, Տէր, որդի Դաւթի: Իսկ ամբոխն յանդիմանեց նո-
31 րանց՝ որ լռեն, բայց նոքանք էլ առաւել էին աղաղակում և ասում. Ողորմիր մեզ, Տէր, որդի
32 Դաւթի: Եւ Յիսուսը կանգնեց՝ կանչեց նորանց և ասաց. Ի՞նչ էք ուզում որ անեմ ձեզ:
33 Ասորան ասացին. Տէր, որ մեր
34 աչքերը բացուին: Յիսուսն էլ գթաց՝ նորանց աչքերին դիպաւ, և շուտով տեսան նորանց աչքերը, և նորա ետևից գնացին:

ԳԼ. ԻԱ.

Եւ երբոր Երուսաղէմին մո-
1 տեցան՝ և Բեթփագէ եկան Զիթենեաց լեռան մօտ, այն ժամանակ Յիսուսը երկու աշակերտ
2 ուղարկեց: Եւ ասաց նորանց. Գնացէք այդ գիւղը՝ որ ձեր առջևն է, և շուտով այնտեղ մի էշ կ'գտնէք կապած և մի աւանակ նորա հետ. արձակեցէք բերէք
3 ինձ մօտ: Եւ եթէ մէկը բան ասէ ձեզ. ասացէք, թէ Նորանք Տիրոջը պէտք են. և շուտով կ'ուղարկէ նորանց: Բայց
4 այս ամենը եղաւ, որ կատարուի մարգարէի ձեռով խօսածն, որ
5 ասում է. Ասացէք Սիոնի աղջկանը. Ահա քո թագաւորը քեզ մօտ է գալիս, հեզ՝ և էշի ու աւանակի քուռակը հեծած:
6 Աշակերտներն էլ գնացին և
7 արին ինչպէս որ Յիսուսը հրամայեց նորանց. Էշը և աւանակը բերին՝ և իրանց հան-

8 նոցա։ Եւ բազում ժողո-
վուրդք տարածեցին զհանդերձս
իւրեանց 'ի ճանապարհին, և
այլք հատանէին ոստս 'ի ծառոց՝
և տարածանէին 'ի ճանապար-
9 հին։ Եւ ժողովուրդքն որ
առաջին և զկնի երթային՝ աղա-
ղակէին և ասէին. Օրհնու-
թիւն Որդւոյ Դաւթի, օրհ-
նեալ որ գայ յանուն Տեառն*:
Օրհնութիւն 'ի բարձունս։

10 Եւ 'ի մտանելն նորա Յերու-
սաղէմ, դղրդեցաւ քաղաքն ամ-
11 նայն, և ասէ, Ո՞վ իցէ սա։ Եւ
ժողովուրդքն ասեն. Սա է մար-
գարէն Յիսուս որ 'ի Նազա-
րեթէ Գալիլեացւոց։

12 Եւ եմուտ Յիսուս 'ի տա-
ճարն †՝ և եհան արտաքս զա-
մենեսին, որ վաճառէին և
գնէին 'ի տաճարի անդ. և
զսեղանս հատաւաճառացն կոր-
ծանեաց՝ և զաթոռս աղաւնեվա-
13 ճառացն. Եւ ասէ ցնոսա.
Գրեալ է Տուն իմ տուն աղօթից
կոչեսցի. և դուք արարիք զդա
այրս աւազակաց։
14 Եւ մատեան առ նա կոյրք և
կաղք 'ի տաճարին, և բժշկեաց
15 զնոսա։ Իբրև տեսին քահանա-
յապետքն և գպիրք զքաջութիւնսն
զոր արար, և զմանկտին որ
աղաղակէին 'ի տաճարին և ասէ-

զերձները նորանց վերայ գցե-
ցին, և նորանց վերայ նստեց։
Եւ խիստ շատ ժողովուրդներ 8
իրանց հանդերձները ճանա-
պարհի վերայ փռեցին. ու-
րիշներն էլ ծառերից ճիւղեր
էին կտրում և ճանապարհումը
փռում։ Եւ առաջից և ետևից 9
գնացող ժողովուրդները աղա-
ղակում էին և ասում Ովսաննա
Որդւոյ Դաւթի, օրհնեալ է
Տիրոջ անունովն եկողը. Ովսան-
նա 'ի բարձունս։
Եւ երբոր նա Երուսաղէմը- 10
տաւ, բոլոր քաղաքը դղրդաց և
ասաց. Սա ո՞վ է։ Եւ ժողո- 11
վուրդներն ասում էին. Սա Յի-
սուս մարգարէն է Գալիլեայի
Նազարէթից։

Եւ Յիսուսը մտաւ Աստուծոյ 12
տաճարը և դուրս արաւ տա-
ճարի մէջ բոլոր ծախողներին և
առնողներին, և փող փոխող-
ների սեղանները և աղաւնի ծա-
խողների աթոռները կործանեց.
Եւ ասաց նորանց. Գրուած 13
է Իմ տունը աղօթքի տուն պիտի
կոչուի. և դուք աւազակների
այր էք արել զորան։
Եւ տաճարի մէջ կոյրեր և 14
կաղեր եկան նորա մօտ՝ և նո-
րանց բժշկեց։ Երբոր քահա- 15
նայապետները և գպիրները տե-
սան այն հրաշքները որ արաւ,
և այն երեխաներն էլ տաճա-

* 'Ի Յոյն, Ովսաննա
† 'Ի Յոյն, Աստուծոյ

ին,* Օրհնութիւն Որդւոյ
16 Դաւթի, բարկացան. Եւ ասեն
ցնա. Լսե՞ս զինչ ասեն դոքա.
ասէ ցնոսա Յիսուս՝ Այո, չիցէ՞
ընթերցեալ ձեր՝ թէ 'Ի բերա-
նոյ տղայոց և ստնդեայց կատա-
րեցեր զօրհնութիւն։

17 Եւ թողեալ զնոսա եկ արտա-
քոյ քաղաքին 'ի Բեթանիա, և
անդ ագաւ։
18 Եւ այգուցն իբրև դարձաւ
անդրէն 'ի քաղաքն քաղցեաւ։
19 Եւ տեսեալ թզենի մի 'ի վերայ
ճանապարհին՝ եկն 'ի նա, և
ոչինչ եգիտ 'ի նմա, բայց միայն
տերև. և ասէ ցնա. Ա՛յլ այսու-
հետև 'ի քէն պտուղ եղիցի
յաւիտեան. և առժամայն չորա-
20 ցաւ թզենին։ Իբրև տեսին
աշակերտքն՝ զարմացան և ասեն,
թէ Օ՞չ իարդ վաղվաղակի ցա-
21 մաքեցաւ թզենին։ Պատասխա-
նի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա.
Ամէն ասեմ ձեզ, Եթէ ունիցիք
հաւատս և ոչ երկմտիցէք, ոչ
միայն թզենւոյդ առնիցէք, այլ
թէպէտ և լերինդ ասիցէք բար-
22 ձի՛ր և անկի՛ր 'ի ծով, եղիցի։
Եւ զամենայն ինչ զոր և խնդրի-
ցէք յաղօթս հաւատովք՝ առնու-
23 ցուք։
Եւ իբրև եկն 'ի տաճարն,
մատեան առ նա մինչդեռ ուսու-
ցանէր, քահանայապետքն և ծերք
ժողովրդեանն՝ և ասեն. Որո՞վ

բում աղաղակելիս և ասելիս
Ովսաննա Որդւոյ Դաւթի, նե-
ղացան. Եւ ասացին նորան. 16
Լսո՞ւմ ես՝ դորանք ի՞նչ են
ասում։ Յիսուսն էլ ասաց նո-
րանց. Այո, դուք երբէք չէ՞ք
կարդացել՝ թէ մանուկների և
կաթնկերների բերանից օրհնու-
թիւն հաստատեցիր։
Եւ նորանց թողելով գնաց 17
քաղաքից դուրս Բեթանիա և
դիշերն այնտեղ մնաց։
Եւ առաւօտանց երբոր յետ 18
էր դառնում քաղաք, սովեց։
Եւ այն ճանապարհի վերայ մի 19
թզենի տեսնելով, գնաց նորա
մօտ, և նորա վերայ մի բան
չգտաւ բայց միայն տերև. և
նորան ասաց. Այլ ևս քեզանից
պտուղ չլինի յաւիտեան. և
իսկոյն չորացաւ թզենին։ Եւ 20
աշակերտները տեսնելով զար-
մացան և ասացին. Ի՞նչպէս
իսկոյն չորացաւ թզենին։ Յի-
սուսն էլ պատասխանեց և ասաց 21
նորանց. Ճշմարիտն ասում եմ
ձեզ. թէ որ հաւատք ունենաք
և չերկմտիք, ոչ թէ միայն
կ'անէք թզենուն եղածը, այլ
թէ որ այդ լեռան էլ ասէք՝ վեր
կաց և ընկիր ծովը, կ'լինի։ Եւ 22
ամէն ինչ որ աղօթքի մէջ խընդ-
րէք հաւատալով, կ'առնէք։
Եւ երբոր եկաւ տաճարը, նա 23
սովորեցնելիս, քահանայապետ-
ները և ժողովրդի ծերերը նորա
մօտ եկան և ասացին. Ինչ իշխա-

* 'Ի Յոյն, Ովսաննա

իշխանութեամբ առնես զայդ՝ և
ով ետ քեզ զիշխանութիւնդ
24 զայդ։ Պատասխանի ետ Յիսուս
և ասէ ցնոսա. Հարցից և ես
զձեզ բան մի. զոր թէ ասիցէք
ինձ, և ես ձեզ ասացից՝ որով
իշխանութեամբ առնեմ զայս։
25 Մկրտութիւն Յովհաննուս ուս-
տի էր՝ յերկնից, թէ ի մարդ-
կանէ. և նոքա խորհէին ընդ
26 միմս՝ և ասէին։ Եթէ ասեմք
Յերկնից, ասէ ցմեզ. Իսկ
ընդէր ոչ հաւատացիք նմա. և
եթէ ասեմք ի մարդկանէ,
երկնչիմք ի ժողովրդենէն. զի
ամենեքին զՅովհաննէս իբրև
27 զմարգարէ ունէին։ Պատաս-
խանի ետուն Յիսուսի, և ասեն.
Ո՛չ գիտեմք. ասէ ցնոսա և նա.
Եւ ոչ ես ասեմ ձեզ որով իշխա-
նութեամբ առնեմ զայս։

28 Բայց զինչդ թուի ձեզ. առն
միոջ էին երկու որդիք. և մա-
տուցեալ առ առաջինն ասէ.
Ո՛րդեակ՝ երթ այսօր գործեա
29 յայգւոջ։ Նա պատասխանի ետ
և ասէ. Երթամ տէր՝ և ոչ
30 չոգաւ։ Մատեաւ և առ միւսն,
և ասէ նոյնպէս. Նա պատաս-
խանի ետ և ասէ. Ո՛չ կամիմ,
բայց յետոյ զղջացաւ և չոգաւ
31 *յայգին։ Ո՞րդ ի յերկոցունց
արար զկամս հօրն. ասեն՝ Յե-
տինն. ասէ ցնոսա Յիսուս.

նութիւնով ես անում այդ բա-
ները, և ով տուաւ քեզ այդ
իշխանութիւնը։ Յիսուսն էլ 24
պատասխանեց և ասաց նորանց.
Ես էլ ձեզանից մէկ բան կ'հար-
ցնեմ. եթէ այն ինձ ասէք։ Ես
էլ ձեզ կ'ասեմ Ի՞նչ իշխա-
նութիւնով են անում այս բա-
ները։ Յովհաննէսի մկրտու- 25
թիւնը ո՞րտեղից էր, երկնքից
թէ մարդկանցից. և նորանք
իրանց մէջ միտք էին անում և
ասում. Եթէ ասենք՝ երկնքից, 26
կ'ասէ մեզ՝ Այդ ինչու չհաւա-
տացիք նորան. իսկ եթէ ասենք՝
մարդկանցից, ժողովրդից վա-
խենում ենք, վասնզի ամենքը
Յովհաննէսին մարգարէի տեղ
էին ընդունում։ Եւ պատասխա- 27
նեցին Յիսուսին և ասացին.
Չենք գիտում։ Նա էլ նորանց
ասաց. Ես էլ չեմ ասիլ ձեզ՝
Ի՞նչ իշխանութիւնով եմ
անում այս բաները։

Բայց ի՞նչպէս է երևում ձեզ. 28
մի մարդ երկու որդի ունէր. և
եկաւ առաջինին ասաց. Որդի,
գնա այսօր իմ այգումը բան
արա։ Նա էլ պատասխանեց 29
և ասաց. Չեմ կամենում. բայց
յետոյ զղջացաւ գնաց։ Եւ 30
միւսի մօտ գնաց և ասաց այն-
պէս. Նա էլ պատասխանեց և
ասաց. Կ'գնամ, տէր. և չգնաց։
Հիմա այս երկուսից ո՞րն արաւ 31
իր հօր կամքը։ Նորան ասացին.
Առաջինը։ Յիսուսը նորանց

* Ի Յոյն. էջ։

Ամէն ասեմ ձեզ, Օրի մաքսա-
ւորք և պոռնիկք յառաջեսցին
քան զձեզ յարքայութիւն* երկ-
32 նից։ Օրի եկն Յովհաննէս ճա-
նապարհաւ արդարութեան՝ և
ոչ հաւատացիք նմա. և մաք-
սաւորք և պոռնիկք հաւա-
տացին նմա. և դուք տեսիք՝ և
ոչ զղջացարուք յետոյ հաւա-
տալ նմա։

33 Այլ առակ լուարուք. Այր
մի էր տանուտէր որ տնկեաց
այգի, և ցանկով պատեաց զնա,
և փորեաց ի նմա հնձան, և
շինեաց աշտարակ. և ետ զնա
ցմշակս, և գնաց ի տար
34 աշխարհ։ Իբրև մերձեցաւ ժա-
մանակ պտղոյ, առաքեաց զծա-
ռայս իւր առ մշակսն՝ առնուլ
35 զպտուղս նորա։ Եւ կալեալ
մշակացն զծառայս նորա, զոմն
տանջեցին, զոմն սպանին, զոմն
36 քարկոծեցին։ Դարձեալ առա-
քեաց այլ ծառայս բազումս քան
զառաջինսն, և արարին նոցա
37 նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ
նոսա զորդի իւր, և ասէ. Թո-
ւրևս ամաչեսցին յորդւոյ աստի
38 իմմէ։ Իսկ մշակքն իբրև տե-
սին զորդին, ասեն ընդ միմս.
Սա է ժառանգն, եկայք սպան-
ցուք զսա և կալցուք զժառան-
39 գութիւն սորա։ Եւ առեալ
40 Հանին զնա արտաքոյ քան զայ-
գին՝ և սպանին։ Երդ յորժամ
եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ

ասաց։ Ճշմարիտն ասում եմ
ձեզ, որ մաքսաւորները և պոռ-
նիկները ձեզանից առաջ կ'մտ-
նեն Աստուծոյ արքայութիւնը։
Վասնզի Յովհաննէսն եկաւ ձեզ 32
մօտ արդարութեան ճանապար-
հով, և չհաւատացիք նորան,
բայց մաքսաւորները և պոռ-
նիկները հաւատացին նորան. և
դուք տեսնելով չզղջացիք յետոյ,
որ հաւատաք նորան։

Մի ուրիշ առակ լսեցէք. 33
Մի տանուտէր մարդ կար՝ որ
այգի տնկեց և նորան ցանկով
պատեց. և նորա մէջ հնձան
փորեց և աշտարակ շինեց. և
տուաւ նորան մշակների, և
գնաց հեռու աշխարհը։ Եւ 34
երբոր պտղի ժամանակը մօտե-
ցաւ, ուղարկեց իր ծառաներին
մշակների մօտ՝ նորա պտուղները
առնելու։ Եւ մշակները նորա 35
ծառաներին բռնեցին՝ մէկին տան-
ջեցին, մէկին սպանեցին, մէկին
քարկոծեցին։ Դարձեալ ուղար- 36
կեց ուրիշ ծառաներ առաջիններ-
ից շատ, և նորանց էլ այնպէս
արին։ Վերջապէս իր որդուն 37
նորանց մօտ ուղարկեց ասելով,
իմ որդուցը կ'ամաչեն։ Բայց 38
մշակներն որդուն տեսնելով,
իրանք իրանց ասացին. Սա է
ժառանգը, եկէք սորան սպա-
նենք, և նորա ժառանգութեանը
տիրենք։ Եւ բռնեցին նորան, 39
այգուցը դուրս հանեցին և սպա-
նեցին։ Երդ՝ երբոր այն այգու 40

* Ի Յոյն. Աստուծոյ

41 արասցէ մշակացն այնոցիկ։ Ասեն
ցնա. Չարսն չարաւ կորուսցէ. և զայդպիսի տացէ այլոց
մշակաց, որք տացեն նմա ըստ-
42 տուցս ի ժամու իւրեանց։ Ասէ
ցնոսա Յիսուս. Զիցէ՞ երբէք
ընթերցեալ ձեր ի գիրս.
Զվէմն զոր անարգեցին շի-
նողքն, նա եղև գլուխ անկեան.
ի Տեառնէ եղև այս, և է սքան-
43 չելի յաչս մեր։ Վասն այսորիկ
ասեմ ձեզ, Զի բարձցի ի ձէնջ
արքայութիւն Աստուծոյ, և
տացի ազգի որ առնիցէ զպտուղս
44 նորա։ Եւ որ անկցի ի վերայ
վիմիս այսորիկ՝ փշրեսցի, և
յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ
զնա։

45 Իրրև լուան քահանայա-
պետքն* և դպիրքն և փարիսեցիք
զառակս նորա, գիտացին թէ
46 վասն նոցա ասաց։ Եւ խնդրէին
զնա ունել, բայց երկեան ի
ժողովրդոցն. քանզի իբրև զմար-
գարէ ունէին զնա։

ԳԼ. ԻԸ

1 Պարձեալ պատասխանի ետ
Յիսուս, և ասէ ցնոսա առակօք։
2 Նմանեցաւ արքայութիւն եր-
կնից առն թագաւորի որ արար
3 հարսանիս որդւոյ իւրում։ Եւ
առաքեաց զծառայս իւր կոչել

տէրք գայ ի՞նչ կանէ այն մը-
շակներին։ Նորան ասացին. 41
Զարերին չարաչար կ'կորցնէ,
և այդին կ'տայ ուրիշ մշակների,
որ պտուղները կ'տան նորան
իրանց ժամանակներումը։ Յի- 42
սուսը նորանց ասաց. Երբէք
գուք չէ՞ք կարդացել գրքումը՝
Այն քարն, որ շինողներն
անարգեցին, նա եղաւ անկիւնի
գլուխ. սա Տէրոջէն եղաւ՝ և
մեր աչքերի առջև զարմանալի
է։ Որա համար ասում եմ՝ 43
ձեզ. որ Աստուծոյ արքայու-
թիւնը ձեզանից վեր կ'առնուի
և մի ազգի կ'տրուի, որ նորա
պտուղները կ'բերէ։ Եւ այս 44
քարի վերայ ընկնողը կ'փշրուի.
և ում վերայ որ նա ընկնի՝
կ'ջարդէ նորան։

Եւ երբոր քահանայապետ- 45
ները և Փարիսեցիները նորա
առակները լսեցին, հասկացան՝
որ իրանց համար է ասում։ Եւ 46
որոնում էին որ բռնեն նորան,
բայց ժողովուրդներէն վախե-
ցան. որովհետև նորան մար-
գարէի տեղ էին ընդունում։

ԳԼ. ԻԹ

Եւ Յիսուսը պատասխանեց 1
և դարձեալ ասաց նորանց առակ-
ներով, ասելով. Երկնքի արքա- 2
յութիւնը նմանեցաւ մի թա-
գաւոր մարդու, որ իր որդոյն
հարսանիք արաւ։ Եւ իր ծա- 3

* Ի Յոյն չէ։

ղջիրուհիքն ի հարսանիս. և
4 ոչ կամեցան գալ։ Դարձեալ
առաքեաց այլ ծառայս՝ և ասէ.
Ասացէք հրաւիրելոցն. Ահա-
ւասիկ զճաշ իմ պատրաստեցի,
զուարակք իմ և պարարակք
զեղեալ են, և ամենայն ինչ
պատրաստ է. եկայք ի հար-
5 սանիս։ Եւ նոքա յոյ լացեալ
գնացին՝ ոմն յագարակ իւր, և
6 ոմն ի վաճառ իւր. Եւ այլք
կալան զծառայս նորա թշնա-
7 մանեցին, և սպանին։ Իսկ թա-
գաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ,
և առաքեաց զզօրս իւր և սատա-
կեաց զսպանողսն զայնոսիկ, և
8 զքաղաքն նոցա այրեաց։ Յայն-
ժամ ասէ ցծառայս իւր. Հար-
սանիքս պատրաստ են, և հրա-
9 ւիրեալքն չէին արժանի։ Արդ
երթայք յանցս ճանապարհաց,
և զորս միանգամ գտանիցէք՝ կո-
10 չեցէք ի հարսանիս։ Եւ ելեալ
ծառայքն ի ճանապարհս ժողո-
վեցին զամենեսեան զորս և գտին՝
չարս և զբարիս. և լցան հար-
11 սանիքն բազմականօք։ Եւ մտեալ
թագաւորն հայել զբազմակա-
նօքն, ետես անդ այր մի՝ որ ոչ
էր զգեցեալ հանդերձ հարսան-
12 եաց։ Եւ ասէ ցնա. Ընկեր՝
զիա՞նդ մտեր այսր, զի ոչ ունէիր
13 հանդերձ հարսանեաց. և նա
պապանձեցաւ։ Յայնժամ ասէ
թագաւորն ցսպասաւորսն։ Կա-
պեցէք զոտս և զձեռս՝ և
հանէք զդա ի խաւարն արտա-
քին, անդ եղիցի լաւ և կրճել

ռաներն ուղարկեց՝ որ հարսա-
նիքի կանչեն հրաւիրուածներին.
և նորանք չկամեցան գալ։ Դար- 4
ձեալ ուրիշ ծառաներ ուղարկեց
և ասաց. Ասացէք հրաւիրուած-
ներին. ահա իմ ճաշը պատ-
րաստեցի. իմ արջառները և
մսացուները մորթուած են, և
բոլորը պատրաստ է. եկէք հար- 5
սանիքը։ Իսկ նորանք անհոգ
լինելով՝ գնացին, մէկն իր արտը,
միւսն իր առուտուրին։ Եւ 6
մնացածները նորա ծառաներին
բռնեցին՝ նախատեցին և սպա-
նեցին։ Բայց թագաւորը լսե- 7
լով բարկացաւ, և իր զօրքն
ուղարկեց այն սպանողներին սա-
տակեցրեց. և նորանց քաղաքն 8
այրեց. Այն ժամանակ իր ծա-
ռաներին ասաց. Հարսանիքը
պատրաստ է, բայց հրաւիրուած-
ներն արժանի չէին։ Արդ գնա- 9
ցէք դէպի ճանապարհների անց-
քերը, և ում՝ որ էլ գտնէք,
կանչեցէք հարսանիքը։ Եւ այն 10
ծառաները դուրս գնացին ճա-
նապարհները, և ժողովեցին
ամենին ում՝ որ գտան՝ չարը և
բարին, և հարսանիքը բազմա-
կաններով լցուեցաւ։ Բայց 11
երբոր թագաւորը մտաւ՝ որ
բազմականներին մտիկ անէ, այն-
տեղ մի մարդ տեսաւ՝ հարսա-
նիքի հանդերձ չհագած. Եւ 12
նորան ասաց. Ընկեր, ի՞նչպէս
մտար այստեղ, որ հարսանիքի
հանդերձ չունիս. և նա պա-
պանձուեցաւ։ Այն ժամանակ 13

14 առամանց։ Օվ բաղումք են
կոչեցեալք՝ և սակաւք են ընտրեալք։

15 Յայնժամ գնացեալ փարիսեցիքն, առին խորհուրդ* զնմանէ
թէ որպէս զնիցեն նմա որոգայթ
16 բանիւք։ Եւ առաքեն առ նա զաշակերտսն իւրեանց Հերովդիանոսօքն հանդերձ, և ասեն.
Ո՛ վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես. և ո՛չ է քեզ փոյթ
զումեքէ, և ո՛չ հայիս յերեսս
17 մարդոյ։ Արդ ասա՛ մեզ, զի՞արդ թուի քեզ, պարտ է հարկս
18 տալ Կայսեր՝ թէ ոչ։ Գիտաց Յիսուս զնոր ամանկութիւն նոցա, և ասէ. Օ՜վ փորձէք զիս
19 կեղծաւորք. Ցուցէք ինձ† զդահեկան հարկին. և նոքա
20 մատուցին նմա զդահեկան մի։ Եւ ասէ ցնոսա. Ո՞յր է պատկերս
21 այս կամ գիր։ Ասեն՝ Կայսեր. Յայնժամ ասէ ցնոսա. Երթա՛յք տո՛ւք զկայսերն կայսեր. և զԱ-
22 ստուծոյն Աստուծոյ։ Իբրև լուան՝ զարմացան. և թողին զնա և գնացին։

23 Յայնմ աւուր մատեան առ թագաւորն ասաց ծառաներին.
Դորա ոտներքը և ձեռներքը կապեցէք. վերս առէք զորան դրսի խաւարը գցեցէք, այնտեղ կ՝լինի լացը և ատամների կրճտելը։
Վասնզի շատեր են կանչուած, 14
բայց քիչեր՝ ընտրուած։

Այն ժամանակ փարիսեցիներքը գնացին նորա համար խորհուրդ արին, թէ ի՞նչպէս 15
խօսքով որոգայթ դնեն նորան։
Եւ իրանց աշակերտներին Հերոդիանոսների հետ նորա մոտ 16
ուղարկեցին և ասացին։ Ո՛ վարդապետ, գիտենք որ ճշմարիտ ես՝ և Աստուծոյ ճանապարհը ճշմարտութիւնով սովորեցնում ես, և ոչ մի մարդուց հոգս չունիս. վասնզի մարդու երեսպաշտութիւն չես անում։ Արդ՝ 17
ասա՛ մեզ, ի՞նչպէս է երևում՝ քեզ, Կայսրին հարկ տալ պէտք է, թէ չէ։ Եւ Յիսուսը նո- 18
րանց չարութիւնն իմանալով ասաց. Ինչո՞ւ էք փորձում ինձ,
կեղծաւորներ։ Ցոյց տուէք ինձ 19
հարկի ստակը, և նորանք մի դահեկան բերին տուին նորան.
Եւ նորանց ասաց. Այս պատ- 20
կերը կամ գիրը ո՞ւմն է։ Ասացին 21
նորան. Կայսեր։ Այն ժամանակ ասաց. Ուրեմն կայսրինը կայսրին տուէք, Աստուծոյնը Աստուծոյն։ Եւ լսելով, զարմա- 22
ցան. և նորան թողին գնացին։

Այն օրը Սադուկեցիները 23

* Ի Յոյն չէ։
† Ի Յոյն, զդրամ։

նա սադուկեցիքն, որ ասէին՝
24 թէ Չիք յարութիւն. հարցին
ցնա, Եւ ասեն. Ո՛ վարդապետ՝
Մովսէս ասաց Եթէ ոք մեռցի
անորդի արասցէ զկին նորա
եղբայր իւր, և յարուսցէ զա-
25 ւակ եղբօր իւրում։ Էին առ
մեզ եղբարք եօթն. առաջինն
արար կին և մեռաւ. և զի ո՛չ
ունէր զաւակ, ետթող զկինն իւր
26 եղբօր իւրում. Նոյնպէս և
երկրորդն՝ և երրորդն, մինչև
27 եօթներորդն։ Յետ ամենեցուն
28 մեռաւ և կինն։ Արդ՝ ի յարու-
թեան ո՞ր յեօթանցն եղիցի նա
29 կին. զի ամենեքին կալան զնա
կին։ Պատասխանի ետ նոցա
Յիսուս և ասէ. Մոլորեալք՝ ո՛չ
30 գիտէք զգիրս և ո՛չ զզօրութիւն
Աստուծոյ։ Օ՜ի՝ ի յարութեան
ո՛չ կանայս առնեն և ո՛չ արանց
լինին, այլ են իբրև զհրեշտակս*
31 յերկինս։ Բայց վասն յարու-
թեան մեռելոց չիցէ՞ ընթերցեալ
32 ձեր զասացեալն ձեզ յԱստու-
ծոյ. Ես եմ Աստուած Աբրա-
համու, Աստուած Իսահակայ,
և Աստուած Յակոբայ. և չէ
33 Աստուած՝ Աստուած մեռելոց՝
այլ կենդանեաց։ Իբրև լուան
ժողովուրդքն՝ զարմանային ընդ
վարդապետութիւն նորա։

նորա մոտ եկան՝ որ ասում էին
թէ յարութիւն չկայ. և նորան
հարցրին, Եւ ասացին. Ո՛ ար- 24
դապետ, Մովսէսն ասաց, եթէ
մի մարդ առանց զաւակի մեռնէ,
թող նորա եղբայրը նորա կինն
առնէ, և իր եղբօր համար
զաւակ յարուցանէ։ Հիմա մեզ 25
մոտ եօթն եղբարք կային. և
առաջինը կին առաւ և մեռաւ,
և որովհետև զաւակ չունէր՝
իրան կինը թողեց իր եղբօրը։
Այնպէս էլ երկրորդ Եղբայրը 26
և երրորդը՝ մինչև եօթներորդը։
Եւ ամենից յետոյ կինը մեռաւ։ 27
Հիմա յարութեան ժամանակին 28
այն եօթից որին կ՝լինի կին.
վասնզի ամենքը նորան ունեցան։
Յիսուսն էլ պատասխանեց և 29
ասաց նորանց. Մոլորուած էք,
որ գրքերը չէք գիտում, և
ոչ Աստուծոյ զօրութիւնը։ Ա- 30
մենքն յարութեան ժամանակին՝
ոչ կին են առնում, և ոչ մարդու գնում. այլ երկնքումն
Աստուծոյ հրեշտակների նման
են։ Իսկ մեռելների յարու- 31
թիւն առնելու համար, չէք կարդացել այն Աստուածանից ձեզ
խօսուածը որ ասում է. Ես 32
եմ Աբրահամի Աստուածը, և
Իսահակի Աստուածը, և Յակոբի
Աստուածը։ Աստուած մեռելների Աստուած չէ, այլ կենդա-
նիների։ Եւ ժողովուրդները 33
լսելով զարմանում էին նորա
վարդապետութեան վերայ։

* Ի Յոյն, Աստուծոյ

34 Իսկ փարիսեցիքն իրրև լուան՝
եթէ պապանձեցոյց զսադու-
կեցիսն, ժողովեցան ՚ի միասին.
35 և եհարց մի ոմն ՚ի նոցանէ* զնա
36 փորձելով, և ասէ։ Վարդա-
պետ՝ որ պատուիրան է մեծ
37 յօրէնս։ Եւ Յիսուս ասէ ցնա.
Սիրեսցես զՏէր Աստուած քո
յամենայն սրտէ քումմէ և յա-
մենայն անձնէ քումմէ և յամե-
38 նայն մտաց քոց։ Այս է մեծն և
39 առաջին պատուիրան։ Երկրորդն
նման սմին. Սիրեսցես զընկեր
40 քո՝ իրրև զանձն քո։ Յայս
երկուս պատուիրանս ամենայն
օրէնք և մարգարէք կախեալ
կան։
41 Եւ ՚ի ժողովել փարիսեցւոցն՝
եհարց ցնոսա Յիսուս, և ասէ։
42 Զիարդ թուի ձեզ վասն Քրիս-
տոսի, որ որդի է։ Ասեն ցնա.
43 Դաւթի։ Ասէ ցնոսա† Յիսուս.
Իսկ զիարդ Դաւիթ Հոգւովն
կոչէ զնա Տէր՝ և ասէ. Ասաց
44 Տէր ցՏէր իմ, Նստիր ընդ աջմէ
իմմէ մինչև եղից զթշնամիս քո
45 պատուանդան ոտից քոց։ Իսկ
եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ
46 զիարդ որդի նորա իցէ։ Եւ ոչ
ոք կարէր տալ նմա պատասխանի
բան մի, և ոչ իշխէր ոք յայնմ
օրէ հարցանել զնա և ոչ ինչ։

Բայց փարիսեցիներն երբոր 34
լսեցին, թէ Սադուկեցիներին
պապանձեցրեց, հաւաքուեցան
մէկտեղ։ Եւ նորանցից մէկը՝ 35
մի օրինական հարցրեց փորձե-
լով նորան և ասաց. Վարդա- 36
պետ, որ պատուիրանքն է մեծ
օրէնքումը, Յիսուսն էլ ասաց
նորան. Սիրիր քո Տէր Աս- 37
տուածը քո բոլոր սրտովը, քո
բոլոր անձովը՝ և քո բոլոր
մտքովը։ Սա է առաջին և մեծ 38
պատուիրանքը։ Երկրորդն էլ 39
սորան նման. Սիրիր քո ընկերը
քո անձի պէս։ Այս երկու 40
պատուիրանքից կախուած են բո-
լոր օրէնքը և մարգարէքը։
Եւ երբոր փարիսեցիները 41
հաւաքուած էին, Յիսուսը նո-
րանցից հարցրեց և ասաց. Ձեզ 42
ինչպէս է երևում Քրիստոսի
համար. ումի որդին է։ Նորան
ասացին. Դաւթի։ Նորանց 43
ասաց. Ապա ի՞նչպէս Դաւիթը
Հոգով նորան Տէր է կոչում,
ասելով. Տէրն իմ Տիրոջն ասաց.
Իմ աջ կողմը նստիր, մինչև քո 44
թշնամիները քո ոտաց պա-
տուանդան դնեմ։ Արդ եթէ 45
Դաւիթը նորան Տէր է կոչում,
ի՞նչպէս է նորա որդի։ Եւ ոչ 46
ոք չէր կարողանում մի բան պա-
տասխան տալ նորան. և այն
օրից յետոյ էլ մէկը չէր հա-
մարձակում նորանից մի բան
հարցնելու։

* Ի Յոյնն, օրինական մի
† Ի Յոյնն, չէ։

ԳԼ. ԻԳ.

1 Յայնժամ խօսեցաւ Յիսուս
ընդ ժողովուրդսն և ընդ աշա-
2 կերտսն իւր, և ասէ։ Յաթոռն
Մովսիսի նստան դպիրքն և փա-
3 րիսեցիք։ Զամենայն ինչ զոր
ասիցեն ձեզ՝ արարէք և պա-
հեցէք. բայց ըստ գործոցն
նոցա մի առնէք, զի ասեն և ոչ
4 առնեն։ Կապեն բեռինս ծանուս
և դժուարակիրս, և դնեն ՚ի
վերայ ուսոց մարդկան, և մա-
տամբ իւրեանց ոչ կամին շարժել
5 զնոսա։ Եւ զամենայն զգործս
իւրեանց առնեն ՚ի ցոյց մարդ-
կան. լայնեն զգրատանակս իւր-
եանց, և երկայնեն զբղանցս
6 հանդերձից իւրեանց։ Սիրեն
զյառաջագահս յընթրիս, և
զնախաթոռս ՚ի ժողովուրդս, և
7 զողջոյնս ՚ի հրապարակս։ Եւ
կոչել ՚ի մարդկանէ Ռաբբի
8 Ռաբբի։ Բայց դուք մի՛* զոք
կոչէք Վարդապետ՝, զի մի է
ձեր Ուսուցիչ. և ամենեքին
9 դուք եղբարք էք։ Եւ Հայր մի՛
կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է
10 Հայր՝ որ յերկինսն է։ Եւ մի՛
կոչեցիք ուսուցիչք, զի Ու-
11 սուցիչ ձեր † Քրիստոս է՝։ Եւ
մեծն ՚ի ձէնջ եղիցի ձեր սպա-
12 սաւոր։ Որ բարձրացուցանէ
զանձն խոնարհեսցի. և որ
խոնարհեցուցանէ զանձն բարձ-
րասցի։

ԳԼ. ԻԳ.

Այն ժամանակ Յիսուսը ժո- 1
ղովուրդների և իր աշակերտների
հետ խօսեց և ասաց. Մովսէսի 2
աթոռի վերայ դպիրները և փա-
րիսեցիները նստեցան։ Արդ՝ 3
ինչ էլ որ ասեն ձեզ պահել,
պահեցէք և արէք, բայց նո-
րանց գործերի պէս մի անէք.
վասնզի ասում են և չեն անում։
Վասնզի ծանր և դժուարակիր 4
բեռներ են կապում և դնում
մարդկանց ուսերին, բայց իրանց
մատովը չեն ուզում շարժել
նորանց։ Եւ իրանց բոլոր 5
գործքերն անում են մարդկանց
երևալու համար. իրանց գրա-
պանակները լայնացնում են և
իրանց հանդերձի քղանցքները
մեծացնում։ Սիրում են ընթ- 6
րիքներումն առաջին բազմոցը,
և ժողովարաններումն առաջին
աթոռները, և փողոցների մէջ
բարևներ առնելը։ Եւ մարդ- 7
կանցից Ռաբբի, Ռաբբի կո-
չուիլը։ Բայց դուք Ռաբբի 8
չկանչուիք, վասնզի մէկն է ձեր
ուսուցիչը, այսինքն Քրիստոս.
և դուք ամենքդ եղբարք էք։
Եւ երկրիս վերայ մէկին ձեզ 9
Հայր չկանչէք. վասնզի մէկն է
ձեր Հայրը, նա որ երկնքումն
է։ Ոչ էլ ուսուցիչներ կան- 10
չուեցէք, վասնզի մէկն է ձեր
ուսուցիչը, այսինքն Քրիստոս։

* Ի Յոյնն, կոչեցիք Ռաբբի
† Ի Յոյնն, մի է Քրիստոս

13 Վա՛յ ձեզ դպրաց և փարի-
սեցւոց կեղծաւորաց. զի փակէք
զարքայութիւն երկնից առաջի
մարդկան. դուք ոչ մտանէք, և
որոց մտանելն՝ չտայք թոյլ
14 մտանել։ Վա՛յ ձեզ դպրաց և
փարիսեցւոց՝ կեղծաւորաց. զի
ուտէք զտունս այրեաց պատճա-
ռանօք երկարէք զաղօթս, վասն
զի աւելի դատաստան ընդու-
15 նիցիք։ Վա՛յ ձեզ դպրաց և
փարիսեցւոց կեղծաւորաց. զի
յածէք ընդ ծով և ընդ ցամաք
առնել եկամուտ մի. և յորժամ
լինիցի, առնէք զնա որդի գե-
հենի կրկին ևս քան զձեզ։
16 Վա՛յ ձեզ առաջնորդք կոյրք,
զի ասէք՝ Որ երդնու 'ի տաճարն՝
չէ ինչ, բայց որ երդնու յոսկին
որ 'ի տաճարին է արժան է։
17 Մո՛ռաք և կոյրք՝ զի՞նչ մեծ է,
ոսկի՞ն՝ եթէ տաճարն որ սրբէ
18 զոսկին։ Եւ որ երդնու 'ի
սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու
'ի պատարագն որ 'ի վերայ նորա
19 է արժան է։ Յիմարք և կոյրք.
զի՞նչ մեծ է, պատարա՞գն, եթէ
սեղանն՝ որ սրբէ զպատարագն։
20 Իսկ արդ որ երդուաւ 'ի սե-
ղանն, երդնու 'ի նա և յամենայն
21 որ 'ի վերայ նորա է. Եւ որ
երդուաւ 'ի տաճարն, երդնու
22 'ի նա և 'ի բնակիչն նորա. Եւ
Եւ ձեզանից մեծը թող ձեր ծա- 11
ռան լինի։ Իվ որ իր անձը 12
բարձրացնէ կ'խոնարհուի. և
ով որ իր անձը խոնարհեցնէ
կ'բարձրանայ։

Իսկ վայ ձեզ, դպիրներ և 13
փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ
փակում էք երկնքի արքայու-
թիւնը մարդկանց առջև, վասնզի
ինքներդ չէք մտնում, և մըտ-
նողներին էլ թոյլ չէք տալիս
մտնել։ Վայ ձեզ, դպիրներ և 14
փարիսեցիներ՝ կեղծաւորներ, որ
ուտում էք որբևայրիների տնե-
րը, և պատճառանքով երկար
աղօթք անում. նորա համար
աւելի դատապարտութիւն կըս-
տանաք։ Վայ ձեզ, դպիրներ 15
և փարիսեցիներ՝ կեղծաւորներ,
որ շուռ էք գալիս ծովն ու ցա-
մաքը, որ մէկը նորահաւատ
անէք. և երբոր լինում է, նո-
րան ձեզանից երկու տակ աւելի
գեհենի որդի էք անում։ Վայ 16
ձեզ, կոյր առաջնորդներ, որ
ասում էք, ով որ տաճարովն
երդում անէ, մի բան չէ. բայց
ով որ տաճարի ոսկովն երդում
անէ, պարտական է։ Յիմար- 17
ներ և կոյրեր. որն է արդեօք
աւելի մեծ, ոսկի՞ն թէ տաճարը,
որ սրբում է ոսկուն։ Եւ, ով 18
որ սեղանովն երդում անէ, մի
բան չէ. բայց ով որ նորա
վերայ լինող պատարագովն եր-
դում անէ, պարտական է։ Յի- 19
մարներ և կոյրեր. որն է արդեօք
աւելի մեծ, պատարա՞գը թէ սե-

որ երդուաւ յերկինս, երդնու
յաթոռն Աստուծոյ՝ և յայն որ
23 նստին 'ի վերայ նորա։ Վա՛յ
ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղ-
ծաւորաց. զի տասանորդէք
զանանուխս և զսամիթն և զչա-
մանն, և թողեք զծանր ծանր
օրինացն՝ զդատաստան և զո-
ղորմութիւն և զհաւատս. զայս
արժան էր առնել՝ և զայն չթո-
24 ղուլ։ Առաջնորդք կոյրք, որ
զմժղուկս քամէք՝ և զուղտս
25 կլանէք։ Վա՛յ ձեզ դպրաց և
փարիսեցւոց կեղծաւորաց, զի
սրբէք զարտաքին զբաժակին և
զսկաւառակին, և 'ի ներքոյ
լի են յափշտակութեամբ և*
26 անխառնութեամբ։ Փարիսեցի՛
կոյր՝ սրբեա՛ նախ զներքին բա-
ժակին և զսկաւառակին, զի
լինիցի և արտաքինն նոցա սուրբ։
27 Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց
կեղծաւորաց. զի նման էք գե-
րեզմանաց բուելոց. որ արտաքոյ
երևին գեղեցիկ՝ և 'ի ներքոյ լի
են ոսկերօք մեռելոց և ամենայն
28 պղծութեամբ։ Այնպէս և
դուք արտաքոյ երևիք մարդկան
արդարք, և 'ի ներքոյ լի էք
կեղծաւորութեամբ և անօրէ-
29 նութեամբ։ Վա՛յ ձեզ դպրաց և
փարիսեցւոց կեղծաւորաց, զի
շինէք զշիրիմս մարգարէից՝ և
զարդարէք զգերեզմանս ար-
30 դարոց։ Եւ ասէք. Եթէ էաք
յաւուրս հարցն մերոց, ո՛չ հա-
զանը, որ սրբում է պատարա-
գին։ Արդ սեղանովն երդում 20
անողը նորանով՝ և այն բոլոր
բաներովն է երդում անում, որ
նորա վերայ են։ Եւ տաճա- 21
րովն երդում անողը՝ նորանով
և նորանում բնակողովն է եր-
դում անում։ Եւ երկնքովն 22
երդում անողը՝ Աստուծոյ աթո-
ռովն է երդում անում և նորա
վերայ նստողովը։ Վա՛յ ձեզ, 23
դպիրներ և փարիսեցիներ՝ կեղ-
ծաւորներ, որ անանուխի և
սամիթի և չամանի տասանորդը
տալիս էք, և թողում էք օրէնքի
ծանր ծանրէությունը՝ դատաստանը
և ողորմութիւնը և հաւատքը.
սա պէտք էր անել և այն չթողել։
Կոյր առաջնորդներ, որ մժեղը 24
քամում էք, բայց ուղտը կուլ
էք տալիս։ Վա՛յ ձեզ, դպիր- 25
ներ և փարիսեցիներ՝ կեղծա-
ւորներ, որ մաքրում էք բաժակի
և սկաւառակի դրսի կողմը,
բայց ներսևանց լիքն են յափը-
տակութիւնով և անիրաւու-
թիւնով։ Կոյր փարիսեցի, 26
առաջ մաքրիր բաժակի և սկաւա-
ռակի մէջը, որ նորանց դուրսն
էլ մաքուր լինի։ Վա՛յ ձեզ 27
դպիրներ և փարիսեցիներ՝ կեղ-
ծաւորներ, որ նման էք ծեփած
գերեզմանների, որ դրսևանց
գեղեցիկ են երևում, բայց ներ-
սևանց լիքն են մեռելների ոս-
կերքով և ամեն պղծութիւնով։

* Ոմանք, անիրաւութեամբ։

զորդէաք արեան մարգարէիցն։
31 Այսպէս ուրեմն վկայէք զանձանց՝
եթէ որդիք էք այնոցիկ՝ որ
32 կոտորէին զմարգարէսն։ Եւ
դուք լցէք զչափ հարցն ձերոց։
33 Օ՛ձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ
փախիցուք ՚ի դատաստանէ
34 գեհենին։ Այսր այդորիկ
ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ
մարգարէս և իմաստունս և
դպիրս, և ՚ի նոցանէ սպանա-
նիցէք և ՚ի խաչ հանիցէք, և
՚ի նոցանէ տանջիցէք ՚ի ժողո-
վուրդս ձեր, և հալածիցէք ՚ի
35 քաղաքէ ՚ի քաղաք։ Որպէս զի
եկեսցէ ՚ի վերայ ձեր ամենայն
արիւն արդար հեղեալ յերկրի.
յարենէն Աբելի արդարոյ մինչև
ցարիւնն Զաքարիայ որդւոյ
Բարաքեայ՝ զոր սպանիք ընդ
մէջ տաճարին և սեղանոյ։
36 Ամէն ասեմ ձեզ. Եկեսցէ այն
ամենայն ՚ի վերայ ազգիս այսո-
րիկ։

37 Երուսաղէմ, Երուսաղէմ, որ
կոտորէիր զմարգարէսն և քար-
կոծ առնէիր զառաքեալսն առ

Այնպէս էլ դուք՝ դրսևանց 28
արդար էք երևում մարդկանց,
բայց ներսևանց լիքն էք կեղ-
ծաւորութիւնով և անօրէնու-
թիւնով։ Այ ձեզ, դպիրներ 29
և փարիսեցիներ՝ կեղծաւորներ,
որ մարգարէների տապանները
շինում էք՝ և արդարների գե-
ղեցմանները զարդարում. Եւ 30
ասում էք, եթէ լինէինք մեր
հարանց օրերումը, մասնակից
չէինք լինիլ նորանց հետ մար-
գարէների արիւնին։ Ուրեմն 31
դուք ձեր մասին վկայում էք,
թէ որդիք էք մարգարէների
սպանողներին։ Եւ դուք ձեր 32
հարանց չափը լցրէք։ Օձեր, 33
իժերի զաւակներ, ի՞նչպէս
կ՚փախչիք գեհենի դատաստա-
նից։ Դորա համար, ահա 34
ես ձեզ մօտ մարգարէներ և
իմաստուններ և դպիրներ կ՚ու-
ղարկեմ. և նորանցից կ՚սպանէք
և կ՚խաչէք և նորանցից ձեր ժո-
ղովարաններում կ՚տանջէք՝ և
քաղաքից քաղաք կ՚հալածէք։
Որպէսզի ձեզ վերայ գայ ամեն 35
արդար արիւն, որ երկրի վերայ
թափուել է՝ արդար Աբելի
արիւնից մինչև Բարաքիայի
որդու Զաքարիայի արիւնը,
որին սպանեցիք տաճարի և սե-
ղանի մէջտեղը։ Ճշմարիտ
ասում եմ ձեզ, այս բոլորը 36
կ՚գայ այս ազգի վերայ։

Երուսաղէմ, Երուսաղէմ, 37
մարգարէները կոտորող, և քեզ
մօտ ուղարկուածները քարկո-

քեզ. քանիցս անգամ կամեցայ
ժողովել զմանկունս քո՝ զոր
օրինակ ժողովէ հաւ զձագս իւր
ընդ թևովք, և ո՛չ կամեցարուք։
38 Ահա թողեալ լիցի ձեզ տունդ 38
39 ձեր աւերակ։ Բայց ասեմ ձեզ՝
թէ Ո՛չ ևս տեսանիցէք զիս յայսմ
հետէ, մինչև ասիցէք, Օրհ-
նեալ եկեալ յանուն Տեառն։

ԳԼ. ԻԳ.

1 Եւ եղեալ արտաքս Յիսուս ՚ի
տաճարէն գնայր. և մատեան ա-
շակերտքն ցուցանել նմա ըշխի-
2 նուածս տաճարին։ Եւ* նա
պատասխանի ետ և՝ ասէ ցնոսա.
Տեսանէք զայդ ամենայն, ամէն
ասեմ ձեզ. Ո՛չ մնասցէ այդր
քար ՚ի քարի վերայ որ ո՛չ քակ-
տեսցի։
3 Եւ մինչդեռ նստէր ՚ի լերինն
Ձիթենեաց, մատեան առ նա
աշակերտքն առանձին և ասեն.
Ասա մեզ՝ երբ լինիցի այդ, և
կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գա-
լըստեանն, և վախճանի աշխարհ-
4 հիս։ Պատասխանի ետ Յիսուս,
և ասէ ցնոսա. Զգո՛յշ լերուք
5 գուցէ ոք զձեզ խաբիցէ։ Զի
բազումք գայցեն յանուն իմ, և
ասիցեն թէ Ես եմ Քրիստոս.
և զբազումս մոլորեցուցանիցեն։
6 Լսելոց էք պատերազմունս և
համբաւս պատերազմաց. զգո՛յշ
լերուք՝ մի խռովեսջիք, զի պարտ
է լինել այնմ ամենայնի, այլ

ծոց. քանի անգամ կամեցայ քո
երեխաները ժողովել, ինչպէս
հաւն ժողովում է իր ձագերը
թևերի տակ, և չկամեցաք։ Ահա 38
ձեր տունն աւերուած կ՚թողուի
ձեզ։ Այսուհետև ասում եմ ձեզ, 39
Էլ այսուհետև չէք տեսնիլ ինձ՝
մինչև որ ասէք. Օրհնեալ է
Տիրոջը անունով եկողը։

ԳԼ. ԻԳ.

Եւ Յիսուսը գուրս եկած 1
գնում էր տաճարից, և աշա-
կերտները մօտ եկան՝ որ ցոյց
տան նորան տաճարի շինուածքը։
Յիսուսն էլ պատասխանեց և 2
ասաց նորանց. Չէք տեսնո՞ւմ
այդ ամենը. ճշմարիտն ասում
եմ ձեզ. այդտեղ քար քարի
վերայ չի թողուիլ որ չքանդուի։
Եւ երբոր նա Ձիթենեաց 3
լեռան վերայ նստած էր, աշա-
կերտներն առանձին նորա մօտ
եկան և ասացին. Ասա մեզ,
այդ երբ կ՚լինի. և ի՞նչ կ՚լինի
քո գալստեան և աշխարհիս
վերջի նշանը։ Յիսուսն էլ պա- 4
տասխանեց և ասաց նորանց.
Զգոյշ կացէք, որ մէկը ձեզ
չխաբէ։ Այնպէս շատերը 5
կ՚գան իմ անունովը կ՚ասեն՝ ես
եմ Քրիստոսը. և շատերին կըմո-
լորեցնեն։ Կռիւներ և կռիւների 6
համբաւներ էք լսելու, զգոյշ
կացէք, որ չշփոթուիք. վասնզի
ամենը պէտք է լինի. բայց դեռ

* Ի Յոյն. Յիսուս

7 չև՛ է կատարած։ Յարիցէ ազգ
յազգի վերայ, և թագաւորու-
թիւն 'ի թագաւորութեան վե-
րայ. և եղիցին սովք և սրածու-
թիւնք և սասանութիւնք 'ի
8 տեղիս տեղիս։ Սակայն և այն
ամենայն սկիզբն է երկանց։
9 Յայնժամ մատնեսցեն զձեզ 'ի
նեղութիւնս, և սպանանիցեն
զձեզ. և եղիջիք ատելեալք
յամենայն ազգաց վասն անուան
10 իմոյ։ Եւ յայնժամ գայթակ-
ղեսցեն բազումք, և զմիմեանս
մատնեսցեն՝ և ատեսցեն ըզմի-
11 մեանս։ Եւ բազում սուտ մար-
գարէք յարիցեն, և զբազումս
12 մոլորեցուսցեն։ Եւ վասն բազ-
մանալոյ անօրէնութեան, ցա-
13 մաքեսցի սէր բազմաց։ Բայց որ
համբերեսցէ 'ի սպառ, նա
14 կեցցէ։ Եւ քարոզեսցի աւետա-
րանս արքայութեան ընդ ամե-
նայն տիեզերս՝ 'ի վկայութիւն
ամենայն հեթանոսաց, և ապա
եկեսցէ կատարած։
15 Արդ յորժամ՝ տեսանիցէք
զպղծութիւն աւերածոյն, որ
ասացեալն է 'ի ձեռն Դանիէլի
մարգարէի, զի կայցէ 'ի տեղ-
ւոջն սրբութեան, որ ընթեր-
16 նուն 'ի միտ առցէ։ Յայնժամ
որ 'ի Հրէաստանի իցեն՝ փա-
17 խիցեն 'ի լերինս։ Եւ որ 'ի
տանիս կայցէ, մի իջցէ առնուլ
18 ինչ 'ի տանէ իւրմէ. Եւ որ
յանդի իցէ, մի դարձցի յետս
19 առնուլ զձորձս իւր։ Բայց վա՛յ
իցէ յղեաց և սնտուաց յա-

վերջը չէ։ Ա՛ն ազգի ազգ ազգի 7
վերայ վեր կ'կենայ, և թագա-
ւորութիւն թագաւորութեան
վերայ. և սովեր կ'լինին. և
սաստիկ մահեր՝ և տեղ տեղ եր-
կրաշարժութիւններ կ'լինին։
Բայց այս ամենք՝ ցաւերի 8
սկիզբն է։ Այն ժամանակ ձեզ 9
նեղութեան կ'մատնեն. և ձեզ
կ'սպանեն, և իմ անունի համար
ամեն ազգերից ատուած կ'լինիք։
Եւ այն ժամանակ շատերը 10
կ'գայթակղին, և իրար կը մատ-
նեն և իրար կ'ատեն։ Եւ 11
շատ սուտ մարգարէք դուրս կը
գան՝ և շատերին կ'մոլորեցնեն։ 12
Եւ անօրէնութեան շատանալու
պատճառաւը՝ շատերի սէրը կը
պաղի։ Բայց ով որ մինչև 13
վերջը համբերէ՝ նա կ'փրկուի։
Եւ արքայութեան այս աւետա- 14
րանը բոլոր տիեզերքումը կըքա-
րոզուի ամեն հեթանոսներին
վկայութիւն լինելու համար, և
այն ժամանակ կ'գայ վերջը։
Արդ երբոր տեսնէք աւերածի 15
պղծութիւնը, Դանիէլ մարգա-
րէի ձեռքով ասուածը, սրբու-
թեան տեղումը կանգնած, կար-
դացողը մտածէ. Այն ժամանակ 16
նորանք, որ Հրէաստանումն են,
թող փախչին լեռները։ Ով որ 17
կտրի վերայ լինի՝ թող վեր
չ'գայ մի բան վեր առնելու իր
տանիցը։ Եւ ով որ յանդումն 18
է՝ թող յետ չդառնայ իր հան-
դերձները վեր առնելու։ Բայց 19
վայ յղիներին և ծիծ տուողներին

20 ուրբան յայնոսիկ։ Յաղօթս կա-
ցէք զի մի լինիցի փախուստն
ձեր ձմերանի, և մի 'ի շաբա-
21 թու։ Օ՛ի եղիցի յայնժամ
նեղութիւն մեծ, որպիսի ո՛չ եղև
'ի սկզբանէ արարածոց աշխարհի
մինչև ցայժմ, և ո՛չ այլ լիցի։
22 Եւ եթէ ո՛չ կարճէին աւուրքն
այնոքիկ, ո՛չ ապրէր ամենայն
մարմին. բայց վասն ընտրելոցն
կարճեսցին աւուրքն այնոքիկ։
23 Յայնժամ թէ որ ասիցէ ձեզ՝
Հաւասիկ աստ է Քրիստոս,
կամ անդ, մի հաւատայցէք։
24 Օ՛ի յարիցեն սուտ քրիստոսք և
սուտ մարգարէք. և տացեն
նշանս մեծամեծս և արուեստս,
մինչև մոլորեցուցանել՝ թէ հնար
25 ինչ իցէ և զընտրեալսն։ Հա
26 յառաջագոյն ասացի ձեզ։ Այս
եթէ ասիցեն ձեզ. Հաւանիկ
յանապատի է, մի ելանիցէք, և
թէ Հա յշտեմարանս է, մի
27 հաւատայցէք։ Օ՛ի որպէս փայ-
լակն որ ելանէ յարևելից և երևի
մինչև յարևմուտս, այնպէս
28 եղիցի գալուստն Որդւոյ մար-
դոյ։ Օ՛ի ուր դէզն իցէ, անդր
ժողովեսցին արծուիք։

29 Ա՛ղվաղակի յետ նեղու-
թեան աւուրցն այնոցիկ՝ արե-
գակն խաւարեսցի, և լուսին ո՛չ
տացէ զլոյս իւր, և աստեղք
30 անկցին յերկնից, և զօրու-
թիւնք երկնից շարժեսցին։ Եւ
ապա երևեսցի նշան Որդւոյ

այն օրերում։ Եւ աղօթք արէք, 20
որ ձեր փախչիլը ձմեռը չլինի,
ոչ էլ շաբաթ օրը։ Քանզի 21
այն ժամանակ մեծ նեղութիւն
կլինի. որ այնպիսին աշխարհքիս
սկզբից մինչև հիմայ չեղաւ,
և ոչ էլ երբէք կ'լինի։ Եւ 22
եթէ այն օրերն չկարճացնուէին,
ոչ մի մարմին չէր փրկուիլ.
բայց ընտրուածների համար այն
օրերը կ'կարճացնուին։ Այն 23
ժամանակ եթէ մէկն ասէ ձեզ՝
Հա այստեղ է Քրիստոսը, կամ
այնտեղ, չհաւատաք։ Ա՛ն զանազան 24
սուտ քրիստոսներ և սուտ մար-
գարէներ վեր կ'կենան. և մեծ
նշաններ և հրաշքներ ցոյց
կ'տան, մինչև որ եթէ կարելի
լինէր, ընտրուածներին էլ կըմո-
լորեցնէին։ Հա կանխաւ ա- 25
սացի ձեզ։ Արդ եթէ ասեն ձեզ. 26
Հա անապատումն է, դուրս
չ'գնաք. Հա ներսի սենեակումն
է. չհաւատաք։ Ա՛ն զանազան 27
ինչպէս կայծակը դուրս է գալիս
արևելքից և երևում մինչև արև-
մուտք, այնպէս էլ կ'լինի Որդոյ
մարդոյ գալուստը։ Ա՛ն զանազան 28
որտեղ մեռած մարմինը լինի,
այնտեղ կ'հաւաքուին արծիւ-
ները։
Եւ շուտով այն նեղութեան 29
օրերից յետոյ արեգակը կըխա-
ւարի, և լուսինն իր լոյսը չի
տար. և աստղերը երկնքից վայր
կ'ընկնին, և երկնքի զօրու-
թիւնները կ'շարժուին։ Եւ այն 30
ժամանակ կ'երևի Որդոյ մարդոյ

մարդոյ յերկինս, և յայնժամ
կոծեսցին ամենայն ազգք*. և
տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ
'ի վերայ ամպոց երկնից զօրու-
31 թեամբ և փառօք բազմաց: Եւ
առաքեսցէ զհրեշտակս իւր փո-
ղով մեծաւ, և ժողովեսցեն
զընտրեալս նորա 'ի չորից հող-
մոց՝ 'ի ծագաց երկնից մինչև 'ի
ծագս նոցա:

32 'Ի թզենւոյ անտի ուսարուք
զառակն. զի յորժամ նորա
ոստքն կակղացին և տերևն
ցցուիցի, գիտէք թէ մերձ է
33 ամառն: 'Նոյնպէս և դուք յոր-
ժամ տեսանիցէք զայս ամենայն,
գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս:
34 Ամէն ասեմ՝ ձեզ՝ եթէ Ո՛չ
անցցէ ազգս այս՝ մինչև այս
35 ամենայն եղիցի: Երկինք և երկիր
անցցեն, և բանք իմ՝ մի անցցեն:
36 Բայց վասն աւուրն այնորիկ
և ժամու, ոչ ոք գիտէ ոչ հրեշ-
տակք երկնից՝† և ոչ Որդի բայց
37 միայն Հայր": Այլ որպէս
աւուրքն 'Նոյի, այնպէս եղիցի
38 գալուստն Որդւոյ մարդոյ: Զի
որպէս էին յաւուրսն որ յառաջ
քան զջրհեղեղն, ուտէին և
ըմպէին, կանայս առնէին և
արանց լինէին, մինչև յօրն՝
յորում եմուտ 'Նոյ 'ի տապանն,
39 Եւ ոչ գիտացին մինչև եկն
ջրհեղեղն և երարձ զամենեսին.

նշանք երկնքումը, և այն ժա-
մանակ կոծ կ'անեն երկրի բոլոր
ազգերը. և կ'տեսնեն Որդին
մարդոյ գալիս երկնքի ամպերի
վերայ զօրութիւնով և շատ
փառքով: Եւ կ'ուղարկէ իր 31
հրեշտակները մեծաձայն փողով,
և նորա ընտրուածներին կըժո-
ղովեն չորս կողմից՝ երկնքի
ծայրերից մինչև նորա միւս
ծայրերը:

Թզենուցը սովորեցէք առակը. 32
երբոր նորա ճղերն արդէն կա-
կուղացել են և տերևը բուսել,
գիտէք որ մօտ է ամառը: Այս- 33
պէս էլ դուք. երբոր այս ամենը
տեսնէք, իմացէք որ մօտ է՝
դռներին է: Ճշմարիտն ասում 34
եմ ձեզ՝ Այս ազգը չի անցնիլ,
մինչև որ այս ամենը լինի:
Երկինքն ու երկիրս կ'անցնեն, 35
բայց իմ խօսքերս չեն անցնիլ:

Իսկ այն օրուայ և ժամի հա- 36
մար ոչ ոք չգիտէ, ոչ էլ եր-
կնքի հրեշտակները, բայց
միայն իմ Հայրը: Եւ ինչպէս 37
Եղան 'Նոյի օրերն, այնպէս
կ'լինի և Որդոյ մարդոյ գալուստը:
Այսպէս թէ ասիցէ ծառայն 38
չար 'ի սրտի իւրում, Տէր իմ
յամէ զգալ. Եւ սկսանիցի հար-
կանել զծառայակիցս իւր, ուտի-
ցէ և ըմպիցէ ընդ արբեցողս:
Գայցէ տէր ծառային այնորիկ՝
յաւուր յորում ոչ ակն ունիցի,
և 'ի ժամու յորում ոչ գիտիցէ.
51 Եւ կտրեսցէ զնա ընդ մէջ, և

* 'Ի Յոյն, երկրի
† 'Ի Յոյն, բայց միայն Հայր իմ

այնպէս եղիցի և գալուստն Որդ-
ւոյ մարդոյ:

40 Յայնժամ թէ իցեն երկու
յագարակի, մին առցի, և միւսն
41 թողցի: Եւ եթէ երկու* աղայ-
ցեն 'ի մի երկանս, մին առցի, և
միւսն թողցի:

42 Արթուն կացէք. զի ոչ գիտէք
յորում ժամու Տէրն ձեր գայ:
43 Այն գիտասջիք եթէ գիտէր
տանուտէրն՝ յորում պահու
գող գայ, հսկէր՝ և ոչ տայր
44 ական հատանել զտան իւրոյ.
Վասն այսորիկ և դուք եղերուք
պատրաստք, զի յորում ժամու
ոչ ակն ունիցիք՝ գայ Որդի
45 մարդոյ: Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ
ծառայ և իմաստուն, զոր կացոյց
տէր իւր 'ի վերայ ծառայից
46 իւրոց՝ տալ նոցա կերակուր 'ի
ժամու: Երանի՛ է ծառային
այնմիկ զոր եկեալ տէրն գտա-
47 նիցէ արարեալ այնպէս: Ամէն
ասեմ՝ ձեզ, Զի 'ի վերայ ամե-
նայն ընչից իւրոց կացուսցէ
զնա: Այլ թէ ասիցէ ծառայն
49 չար 'ի սրտի իւրում, Տէր իմ
յամէ զգալ. Եւ սկսանիցի հար-
կանել զծառայակիցս իւր, ուտի-
50 ցէ և ըմպիցէ ընդ արբեցողս:
Գայցէ տէր ծառային այնորիկ՝
յաւուր յորում ոչ ակն ունիցի,
և 'ի ժամու յորում ոչ գիտիցէ.
51 Եւ կտրեսցէ զնա ընդ մէջ, և

ամենքը վեր առաւ, այնպէս
կ'լինի և Որդոյ մարդոյ գա-
լուստը:

Այն ժամանակ երկու հոգի 40
կը լինին արտումը. մէկը կ'առ-
նուի՝ և մէկը կ'թողուի: Եւ 41
երկու հոգի մի ջաղացում կ'ա-
ղան՝ մէկը կ'առնուի և մէկը
կ'թողուի:

Արդ արթուն կացէք. վասնզի 42
չգիտէք թէ ո՞ր ժամում ձեր
Տէրը կ'գայ: Բայց այս իմա- 43
ցէք, որ եթէ տան տէրը գիտե-
նար թէ որ պահում կ'գայ գողը,
արթուն կ'կենար և թող չէր
տալ որ իր տունը ծակեն: Սորա 44
համար դուք էլ պատրաստ կա-
ցէք վասնզի այն ժամին, որ
դուք չէք կարծում, Որդին մար-
դոյ կ'գայ: Ուրեմն ո՞վ է այն 45
հաւատարիմ և իմաստուն ծա-
ռան, որին իր տէրն՝ իր ծառա-
ների վերայ դրաւ, որ նորանց
կերակուրը տայ ժամանակին:
Երանի այն ծառային, որ նորա 46
տէրը, երբոր գայ, նորան այն
պէս անելիս գտնէ: Ճշմարիտն 47
ասում եմ ձեզ, որ նորան իր
ամեն ունեցածների վերայ կ'դնէ:
Բայց եթէ այն չար ծառան իր 48
սրտումն ասէ, Իմ տէրը գալը
ուշացնում է. Եւ սկսէ իր ծա- 49
ռայակիցներին ծեծել՝ և արբե-
ցողների հետ ուտել և խմել:
Այն ծառայի տէրը մի օր կ'գայ, 50
որ նա չէ սպասում, և մի ժամ՝

* 'Ի Յոյն, կանայք

զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։

ԳԼ. ԻԵ

1 Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսայի* և հարսին։ 2 Հինգն ի նոցանէ յիմարք էին՝ և հինգն իմաստունք։ 3 Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ 4 Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց։ 5 Եւ ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին։ 6 Եւ ի մէջ գիշերի եղև բարբառ, Զհա՛ փեսայ գայ՝ արիք ընդ առաջ նորա։ 7 Յայնժամ յարեան ամենայն կուսանքն՝ և կազմեցին զլապտերս իւրեանց։ 8 Ասեն յիմարքն ցիմաստունսն, Տո՛ւք մեզ ցիւղոյդ ձերմէ, զի ահա շիջան նին լապտերքս մեր։ 9 Պատասխանի ետուն իմաստունքն՝ և ասեն. Գուցէ ո՛չ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք ի վաճառականս՝ և գնեսջիք ձեզ. 10 Իբրև նոքա գնացին գնել՝ եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն՝ և փակեցաւ դուռն։ 11 Յետոյ գան և այլ կուսանքն՝ և ասեն, Տէր, Տէր բաց մեզ։ 12 Նա պատասխանի ետ և ասէ. Ամէն ասեմ՝ ձեզ՝ թէ Ո՛չ գիտեմ զձեզ։ 13 Արթո՛ւն կացէք՝ զի ո՛չ գիտէք զօրն և ո՛չ զժամն։

14 Որպէս այր մի գնացեալ ի տարաշխարհ, կոչեաց զծառայս իւր՝ և ետ նոցա զինչս իւր. 15 Ումեմն ետ հինգ քանքար՝ և ումեմն երկուս՝ ումեմն մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, և գնաց։ 16 Զոդաւ վաղվաղակի որ առ զհինգն՝ գործեաց նոքօք, և շահեցաւ այլ ևս հինգ։ 17 Նոյնպէս և որ զերկուսն, շահեցաւ այլ ևս երկուս։ 18 Եւ որ զմին առ՝ գնաց փորեաց զերկիր, և թաղեաց զարծաթ տեառն իւրոյ։ 19 Յետ բաւական ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ՝ և առնէ համարս ի մէջ նոցա։ 20 Եւ մատուցեալ որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ ևս հինգ քանքար, և ասէ. Տէր՝ հինգ քանքար ետուր ցիս, արդ աւասիկ հինգ այլ ևս քանքար ի վերայ շահեցայ։ 21 Ասէ ցնա տէրն իւր. *Զնիւ զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։

* Ի Յոյն էր։

որ նա չգիտէ. Եւ նորան միջոցը կ'կտրէ, և նորա բաժինը կեղծաւորների հետ կ'դնէ. այնտեղ կ'լինի լացը և ատամների կրճտելը։

ԳԼ. ԻԵ

1 Այն ժամանակ կ'նմանի երկնքի արքայութիւնը տասն կուսանաց, որ իրանց լապտերները վեր առին և դուրս եկան փեսային դիմաւորելու։ 2 Նորանցից հինգը իմաստուն էին, և հինգը յիմար։ 3 Այն յիմարները վեր առին իրանց լապտերները, բայց ձէթ վեր չառին իրանց հետ։ 4 Սակայն իմաստուններն իրանց ամաններումը ձէթ վեր առին իրանց լապտերների հետ մէկտեղ։ 5 Եւ երբոր փեսան ուշացաւ, ամենքը թմրեցան և քնեցին։ 6 Եւ կէս գիշերին աղաղակ եղաւ՝ Ի՛ Զհա՛ փեսան գալիս է. դուրս եկէք նորան դիմաւորելու։ 7 Այն ժամանակ ամեն կուսանքը վեր կացան և իրանց լապտերները պատրաստեցին։ 8 Բայց յիմարներն ասացին իմաստուններին. Տուէք մեզ ձեր իւղից, վասնզի մեր լապտերները հանգչում են։ 9 Իմաստուններն էլ պատասխանեցին և ասացին. Ա՛ի գուցէ մեզ և ձեզ բաւական չլինի. բայց աւելի լաւ՝ գնացէք ծախողների մօտ և գնեցէք ձեզ համար։ 10 Եւ երբ որ նորանք գնացին գնելու, փեսան եկաւ. և պատրաստները նորա հետ հարսանիքը մտան, և դուռն փակուեցաւ։ 11 Յետոյ այն միւս կուսանքն էլ եկան և ասացին. Տէր, Տէր, բաց մեզ։ 12 Նա էլ պատասխանեց և ասաց. Ա՛մարիտն ասում եմ ձեզ. Ես չեմ ճանաչում ձեզ։ 13 Արդ՝ արթուն կացէք. որովհետև չէք գիտում՝ ոչ օրը և ոչ ժամը, թէ երբ Որդին մարդոյ կ'գայ։

14 Այ՝ անպէս ինչպէս մի մարդ, որ օտար երկիր էր գնում՝ իր ծառաներին կանչեց, և իր ունեցածը նորանց յանձնեց։ 15 Եւ մէկին հինգ քանքար տուաւ, և միւսին երկու, և միւսին մէկ, իւրաքանչիւրին իր կարողութեան չափ, և շուտով գնաց. 16 Եւ այն հինգ քանքար առնողը գնաց նորանցով բան արաւ և ուրիշ հինգ քանքար էլ շահեց։ 17 Այնպէս էլ նա՝ որ երկուսն առաւ, ուրիշ երկուս էլ շահեց։ 18 Իսկ այն մէկն առնողը գնաց՝ գետինը փորեց՝ և իր տիրոջ արծաթը թաքցրեց։ 19 Եւ շատ ժամանակից յետոյ գալիս է այն ծառաների տէրը և նորանցից հաշիւ առնում։ 20 Եւ այն հինգ քանքար առնողը մօտ եկաւ. ուրիշ հինգ քանքար էլ առաջ բերաւ և ասաց. Տէր, ինձ հինգ

* Ի Յոյն, Բարձրք է. ծառայ

ծառայ՝" բարի և Հաւատա-
րիմ, որովհետև 'ի սակաւուդ
Հաւատարիմ ես, 'ի վերայ
բազմաց կացուցից զքեզ. մուտ
յուրախութիւն տեառն քո:
22 Ա՝ռուցեալ և որդ զերկուս
քանքարսն առեալ էր, և ասէ.
Տէր՝ երկուս քանքարս եռուր
ցիս, աւասիկ երկուս ևս այլ
քանքարս՝ զոր 'ի վերայ շահե-
23 ցայ: Ասէ ցնա տէրն իւր. *Զ-
նիւ ծառայ՝" բարի և Հաւա-
տարիմ, որովհետև 'ի սակաւուդ
Հաւատարիմ ես, 'ի վերայ
բազմաց կացուցից զքեզ. մուտ
յուրախութիւն տեառն քո:
24 Ա՝ռուցեալ և որդ զմի քան-
քարն առեալ էր, և ասէ. Տէր՝
գիտէի †, զի այր մի խիստ ես,
հնձես զոր ոչ սերմանեցեր, և
ժողովես ուստի ոչ սփռեցեր.
25 Երկեայ, գնացի և թագուցի
զքանքարն քո յերկրի. արդ
26 աւասիկ քոյդ ցքեզ: Պատաս-
խանի ետ տէրն, և ասէ ցնա.
Ո՛ռայ չար և վատ. գիտէիր
եթէ հնձեմ ուստի ոչ սերմա-
նեցի, և ժողովեմ ուստի ոչ
27 սփռեցի. Պարտ էր քեզ ար-
կանել զարծաթդ իմ 'ի սեղա-
նաւորս, և եկեալ ես տոկոսեօք
28 պահանջէի զիմն: Արդ առէք 'ի
դմանէ զքանքարդ՝ և տուք այնմ
որ ունիցի՝ զտասն քանքարն:
29 Զի ամենայնի որ ունիցի՝ տացի
և յաւելցի. և որ ոչն ունիցի,
քանքար տուիր, տես, ուրիշ
հինգ քանքար էլ շահեցի նո-
21 բանց վերայ: Իր տէրն էլ
ասաց նորանց. Լա՛ւ, ծառայ՝
բարի և հաւատարիմ, քիչ բա-
ների վերայ հաւատարիմ էիր,
քեզ շատ բաների վերայ կ'դնեմ.
մտիր քո տիրոջ ուրախու-
22 թիւնը: Եւ այն երկու քան-
քար առնողն էլ մօտ եկաւ և
ասաց. Տէր, ինձ երկու քան-
23 քար տուիր. տես, երկու ուրիշ
քանքար էլ շահեցի նորանց
վերայ: Իր տէրը նորան ասաց.
Լա՛ւ, ծառայ՝ բարի և հաւա-
տարիմ. քիչ բաների վերայ
հաւատարիմ էիր, քեզ շատ բա-
24 ների վերայ կ'դնեմ. մտիր քո
տիրոջ ուրախութիւնը: Եւ այն
մէկ քանքար առնողն էլ մօտ
եկաւ և ասաց. Տէր, ճանաչում
էի քեզ, որ դու մի պինդ մարդ
ես. հնձում ես ուր որ չսերմա-
ցիր, և հաւաքում ես, ուր որ
25 չփռեցիր: Եւ վախենալով գնա-
ցի, թաքցրի քո քանքարը գետ-
նի մէջ. ահա առ քոնը: Նորա
26 տէրն էլ պատասխանեց և ասաց
նորան. Ո՛ռայ՝ չար և ծոյլ,
գիտէիր որ հնձում եմ ուր որ
չսերմացի, և հաւաքում եմ ուր
27 որ չփռեցի: Ուրեմն պէտք էր
որ իմ արծաթը սեղանաւորնե-
28 րին տայիր՝ և ես կը գայի տոկո-
սով կ'առնէի իմը: Արդ՝ առէք
դորանից քանքարը, և տուէք

* 'Ի Յոյնն, Բարուք է, ծառայ
† 'Ի Յոյնն, զքեզ

30 և զոր ունիցին. բարձցի 'ի
նմանէ: Եւ զծառայդ անպիտան
հանէք 'ի խաւարն արտաքին.
անդ եղիցի լալ և կրճել ատա-
մանց:

31 Եւ յորժամ եկեսցէ Որդի
մարդոյ փառօք իւրովք՝ և ամե-
նայն հրեշտակք ընդ նմա,
յայնժամ նստցի յաթոռ փառաց
32 իւրոց: Եւ ժողովեսցին առաջի
նորա ամենայն ազգք, և մեկ-
նեսցէ զնոսա 'ի միմեանց, որպէս
հովիւ զի մեկնեսցէ զոչխս
33 յայծեաց: Եւ կացուսցէ զոչ-
խսն ընդ աջմէ իւրմէ՝ և զայծեանն
'ի ձախմէ:
34 Յայնժամ ասասցէ թագաւորն
ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն
իցեն. Եկա՛յք օրհնեալք Հօրն
իմոյ, ժառանգեցէք զպատրաս-
տեալ ձեզ զարքայութիւնն 'ի
35 սկզբանէ աշխարհի: Զի քաղ-
ցեայ՝ և եռուք ինձ ուտել.
ծարաւեցի՝ և արբուցիք ինձ.
36 օտար էի՝ և ժողովեցիք զիս.
Ա՝երկ՝ և զգեցուցիք զիս.
հիւանդ էի՝ և տեսիք զիս. 'ի
37 բանտի էի՝ և եկիք առ իս:
Յայնժամ պատասխանի տացեն
նմա արդարքն և ասասցեն. Տէր,
ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝
38 և կերակրեցաք, կամ ծարաւի՝
և արբուցաք: Ե՞րբ տեսաք
39 զքեզ օտար՝ և ժողովեցաք, կամ
մերկ՝ և զգեցուցաք: Ե՞րբ տեսաք

տասը քանքարն ունեցողին:
29 Զի՝ ան զի ամեն ով որ ունի՝ նորան
կ'տրուի և կ'աւելանայ, բայց
նա որ չունի՝ նորանից այն ունե-
30 ցածն էլ վեր կ'առնուի: Եւ այն
անպիտան ծառային հանեցէք
դրսի խաւարը, այնտեղ կ'լինի
լացը և ատամների կրճտելը:
31 Եւ երբոր Որդին մարդոյ իր
փառքովը կ'գայ և ամեն սուրբ
հրեշտակները նորա հետ, այն
ժամանակ իր փառաց աթոռի
32 վերայ կ'նստի. Եւ ամեն ազգերը
կ'ժողովուին նորա առջևը, և
նորանց կ'բաժանէ իրարից ինչ-
պէս հովիւը բաժանում է ոչ-
33 խարներն այծերից. Եւ ոչխար-
ներն իր աջ կողմին կ'կանգնեցնէ,
իսկ այծերը՝ ձախ կողմին:
34 Այն ժամանակ թագաւորը
կ'ասէ իր աջ կողմիններին. Եկէք,
ով իմ Հօր օրհնածներ, ժա-
ռանգեցէք աշխարհքի սկզբից
35 ձեզ համար պատրաստուած
թագաւորութիւնը: Զի՝ ան զի
սովեցի, և տուիք ինձ՝ ուտել,
ծարաւեցի և խմեցրիք ինձ,
36 օտար էի, և ինձ ձեզ մօտ
առիք. Ա՝երկ էի, և հագցրիք
37 ինձ. հիւանդ էի, և ինձ այ-
ցելեցիք. բանտի մէջ էի, և ինձ
38 մօտ եկաք: Այն ժամանակ ար-
դարները կ'պատասխանեն նորան
և կ'ասեն. Տէր, ե՞րբ տեսանք
քեզ սոված, և կերակրեցինք,
կամ ծարաւ, և խմեցրինք: Ե՞րբ
39 տեսանք քեզ օտար, և մեզ մօտ
առինք, կամ մերկ, և հագցրինք:

զքեզ Հիւանդ կամ 'ի բանտի՝ և
40 եկաք առ քեզ։ Պատասխանի
տացէ թագաւորն և ասասցէ
ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, Որով-
հետև արարիք միում յեղբարցս
այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք։

41 Յայնժամ ասասցէ և ցայ-
նոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն.
Երթայք յինէն անիծեալք 'ի
հուրն յաւիտենական, որ պատ-
րաստեալ է Սատանայի և
42 հրեշտակաց նորա։ Զի քաղ-
ցեայ՝ և ոչ ետուք ինձ ուտել,
ծարաւեցի՝ և ոչ արբուցիք զիս.
43 Օտար էի՝ և ոչ ժողովեցիք
զիս, մերկ էի՝ և ոչ զգեցուցիք
զիս, հիւանդ և 'ի բանտի՝ և ոչ
44 տեսիք զիս։ Յայնժամ պա-
տասխանի տացեն և նոքա, և
ասասցեն. Տէր, երբ տեսաք
զքեզ քաղցեալ կամ ծարաւի
կամ՝ օտար կամ մերկ կամ
հիւանդ կամ 'ի բանտի, և ոչ
45 պաշտեցաք զքեզ։ Յայնժամ
պատասխանի տացէ նոցա, և
ասասցէ. Ամէն ասեմ ձեզ,
Որովհետև ոչ արարէք միում
'ի փոքրկանցս յայսոցանէ՝ և ոչ
ինձ արարէք։
46 Եւ երթիցեն նոքա 'ի տանջ-
անս յաւիտենականս, և ար-
դարքն 'ի կեանսն յաւիտենա-
կանս։

ԳԼ. ԻԹ.

1 Եւ եղև երբև կատարեաց
Յիսուս զամենայն զբանս զայ-
Երբ տեսանք քեզ հիւանդ, կամ 39
բանտի մէջ, և եկանք քեզ մօտ։
Թագաւորն էլ կ'պատասխանէ 40
և կ'ասէ նորանց. Ճշմարիտն
ասում եմ ձեզ, որովհետև
այս իմ փոքր եղբայրներից
մէկին արիք, ինձ արիք։
Այն ժամանակ կ'ասէ ձախ 41
կողմիններին էլ. Ինձանից դէն
գնացէք, ով անիծեալներ, յաւի-
տենական կրակին մէջ, որ
պատրաստուած է սատանայի և
նորա հրեշտակների համար։
Վասն զի ես սովեցի, և չտուիք 42
ինձ ուտել, ծարաւեցի, և ինձ
չխմեցրիք։ Օտար էի, և ինձ 43
ձեզ մօտ չառիք. մերկ էի, և ինձ
չհագցրիք. հիւանդ և բան-
տի մէջ էի, և ինձ չայցելե-
ցիք։ Այն ժամանակ նորանք էլ 44
կ'պատասխանեն և կ'ասեն. Տէր,
քեզ երբ տեսանք սոված, կամ
ծարաւ, կամ օտար, կամ մերկ,
կամ հիւանդ, կամ բանտի մէջ,
և քեզ ծառայութիւն չարինք։
Այն ժամանակ կ'պատասխանէ 45
նորանց և կ'ասէ. Ճշմարիտն
ասում եմ ձեզ՝ որովհետև այս
փոքրներից մէկին չարիք, ինձ
էլ չարիք։
Եւ սորանք կ'գնան յաւիտե- 46
նական տանջանքը, իսկ արդար-
ները յաւիտենական կեանքը։

ԳԼ. ԻԹ.

Եւ եղաւ երբոր Յիսուսը 1
այս ամէն խօսքերը վերջացրեց,

սոսիկ, ասէ ցաշակերտսն իւր։
2 Դիտէք, զի յետ երկուց ա-
ւուրց զատիկ լինի, և Որդի մար-
դոյ մատնի 'ի խաչ ելանել։
3 Յայնժամ ժողովեցան քահա-
նայապետքն և գպիրքն և ծերք
ժողովրդեանն 'ի սրահ քահա-
նայապետին՝ որում անուն էր
4 Կայիափա. Եւ արարին խոր-
հուրդ՝ զի նենգութեամբ կալցին
5 զՅիսուս՝ և սպանցին։ Բայց
ասէին, թէ Ո՛չ 'ի տօնի աստ՝
զի մի խռովութիւն լինիցի 'ի
ժողովրդեանն։
6 Իբրև եկն Յիսուս 'ի Բե-
թանիա 'ի տուն Սիմոնի բորոտի,
7 Ա՛տեաւ առ նա կին մի՝ որ
ունէր շիշ իւղոյ ծանրագնի, և
թափեաց 'ի գլուխ նորա 'ի
8 բազմականին։ Իբրև տեսին
աշակերտքն՝ բարկացան՝ և ասեն.
Ընդէ՞ր է կորուստ այդ իւղոյդ։
9 Զի մարթի էր վաճառել զդա
մեծագնի՝ և տալ աղքատաց։
10 Դիտաց Յիսուս և ասէ ցնոսա.
Զի՞ աշխատ առնէք զկնոջ,
11 գործ մի բարի գործեաց դա
յիս։ Զամենայն ժամ զաղքատս
ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ
12 Հանապազ ընդ ձեզ ունիք։ Ար-
կանելլ դորա զիւղդ 'ի մարմին
13 նակեաց։ Բայց ամէն ասեմ
ձեզ, զի Ուր և քարոզեսցի
աւետարանս այս ընդ ամենայն
աշխարհ՝ խօսեսցի և զոր արար
դա 'ի յիշատակ դորա։

իր աշակերտներին ասաց։ Դի- 2
տէք, որ երկու օրից յետոյ
զատիկ կ'լինի. և Որդին մարդոյ
կ'մատնուի խաչուելու։ Այն 3
ժամանակ քահանայապետները
և դպիրները և ժողովրդի ծերերը
ժողովուեցան այն քահանայա-
պետի սրահը, որի անունը Կայ-
իափա էր։ Եւ խորհուրդ արին 4
որ Յիսուսին բռնեն նենգու-
թեամբ և սպանեն։ Բայց ասում 5
էին, Այս տօնին ոչ, որ ժողովրդի
մէջ խռովութիւն չլինի։

Եւ երբոր Յիսուսը Բեթա- 6
նիա էր՝ Սիմոն բորոտի տանը,
Նորա մօտ մի կին եկաւ, որ մի 7
շիշ ծանրագին իւղ ունէր, և
նորա գլխի վերայ թափեց,
երբոր նա անկողնի նստած էր։
Նորա աշակերտներն էլ տեսնե- 8
լով նեղացան և ասացին. Ինչո՞ւ
է՞ այդ կորուստը։ Այդ 9
կարող էր այդ իւղը շատի ծա-
խուիլ և աղքատներին տրուիլ։
Յիսուսն էլ իմանալով ասաց 10
նորանց. Ինչո՞ւ էք այդ կնոջը
նեղութիւն տալիս, վասնզի դա
մի բարի բան գործեց ինձ վե-
րայ։ Վասնզի ամէն ժամանակ 11
աղքատներն ունիք ձեզ հետ.
բայց ինձ միշտ ձեզ հետ
չունիք։ Դա այդ իւղն իմ 12
մարմնի վերայ թափելով, իմ
թաղուելու նշանն արաւ։ Բայց 13
ճշմարիտն ասում եմ ձեզ,
ուր որ էլ բոլոր աշխարհի մէջ
այս աւետարանը քարոզուի,

14 Յայնժամ գնաց մի յերկո-
տասանեցն անուանեալ Յուդա
Սկարիովտացի՝ առ քահանա-
15 յապետն, և ասէ։ Օ՞րինչ
կամիք տալ ինձ, և ես մատնեցից
զնա ձեզ։ և նոքա* կշռեցին
16 նմա երեսուն արծաթի։ Եւ
յայնմ հետէ ինդրէր պարապ՝
զի մատնեսցէ զնա նոցա։

17 Եւ յառաջնում աւուր բա-
զարջակերացն մատեան աշա-
կերտքն առ Յիսուս՝ և ասեն.
Որ՞ կամիս՝ զի պատրաստես-
18 ցուք քեզ ուտել զզատիկն։ Եւ
նա ասէ ցնոսա. Երթայք ՝ի
քաղաքն առ այս անուն, և
ասացէք ցնա. Վարդապետ
ասէ, Ժամանակ իմ մերձեալ
է, առ քեզ առնեմ զզատիկ
19 աշակերտօքս հանդերձ։ Եւ
արարին աշակերտքն որպէս
հրամայեաց նոցա Յիսուս, և
պատրաստեցին զզատիկն։
20 Եւ իրրև երեկոյ եղև՝ կայր
բազմեալ ընդ երկոտասան աշա-
21 կերտսն։ Եւ մինչդեռ ուտէին
նոքա, ասէ. Ամէն ասեմ ձեզ,
զի մի ոմն ՝ի ձէնջ մատնելոց է
22 զիս։ Եւ տրտմեցան յոյժ.
սկսան ասել ցնա իւրաքանչիւր
ոք ՝ի նոցանէ. Այլեմէ՞ թէ իցեմ
23 Տէր։ ՝Նա պատասխանի ետ և
ասէ. Որ մխեաց ընդ իս զձեռն

կ՝խօսուի նա էլ, որ դա արաւ՝
դորա յիշատակի համար։

Այն ժամանակ տասներկուսից 14
մէկը, որ Յուդա Իսկարիոտացի
էր ասվում, գնաց քահանայա-
պետների մօտ և ասաց. Ի՞նչ էք 15
կամենում ինձ տալ, և ես ձեզ
մատնեմ նորան։ Եւ նոքանք
երեսուն արծաթի կշռեցին փո-
նոքան։ Եւ այնուհետև յարմար 16
ժամանակ էր որոնում, որ նորան
մատնէ։

Եւ բաղարջակերաց առաջին 17
օրն՝ աշակերտները Յիսուսի
մօտ եկան և ասացին նորան,
Որտեղ ես կամենում, որ քեզ
համար զատիկը պատրաստենք
ուտելու։ Նա էլ ասաց. Գնա- 18
ցէք քաղաքն՝ այս ինչի մօտ, և
ասացէք նորան. Վարդապետն
ասում է՝ Իմ ժամանակը մօտ
է. քեզ մօտ կ՝անեմ զատիկն
իմ աշակերտների հետ։ Եւ 19
աշակերտներն արին ինչպէս
Յիսուսը հրամայեց նորանց.
և զատիկը պատրաստեցին։

Եւ երբոր իրիկուն եղաւ 20
տասներկուսի հետ անդամ նստեց։
Եւ նորանք ուտելիս, ասաց. 21
Ճշմարիտն ասում եմ ձեզ, որ
ձեզանից մէկը կ՝մատնէ ինձ։ Եւ 22
շատ տրտմած՝ նորանց ամէն մէկն
սկսեցին նորան ասել. Միթէ՞ ես
եմ, Տէր։ Նա էլ պատասխանեց 23
և ասաց. Նա որ ինձ հետ իր
ձեռն սկաւառակի մէջ մտցրեց,

* Կամ, խոսացան

իւր ՝ի սկաւառակս՝ նա մատնե-
24 լոց է զիս։ Որդի մարդոյ երթայ՝
որպէս և գրեալ է վասն նորա.
բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոր
ձեռս Որդի մարդոյ մատնեսցի.
լաւ էր նմա՝ թէ չէր ծնեալ
25 մարդն այն։ Պատասխանի ետ
Յուդա՝ որ մատնելոցն էր զնա՝
և ասէ. Միթէ՞ ես իցեմ վար-
դապետ, ասէ ցնա՝ Դու ասացեր։
26 Եւ մինչդեռ ուտէին նոքա՝
առ Յիսուս հաց՝ օրհնեաց և
երեկ, և ետ աշակերտացն՝ և
ասէ. Առէք կերայք՝ այս է
27 մարմին իմ։ Եւ առեալ բաժակ
գոհացաւ՝ ետ նոցա և ասէ.
Արբէք ՝ի դմանէ ամենեքին։
28 Զի այդ է արիւն իմ նորոյ
ուխտի, որ ՝ի վերայ բազմաց
հեղանի ՝ի թողութիւն մեղաց։
29 Բայց ասեմ ձեզ. Ոչ ևս ար-
բից յայսմ հետէ ՝ի բերոյ
որթոյ մինչև ցօրն ցայն՝ յոր-
ժամ արբից զդա ընդ ձեզ նոր
յարքայութեան Հօր իմոյ։

30
31 Եւ օրհնեցին, և ելին ՝ի
լեառն Ձիթենեաց։ Յայնժամ
ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքին
դուք գայթակղելոց էք յինէն
յայսմ գիշերի. զի գրեալ է
թէ Հարից զՀովիւն և ցրուեսցին
32 ոչխարքն հօտին։ Եւ յետ
յառնելոյն իմոյ, յառաջեցից
33 քան զձեզ ՝ի Գալիլեա։ Պա-
տասխանի ետ Պետրոս՝ և ասէ
ցնա. Թէպէտ և ամենեքեան
գայթակղեսցին ՝ի քէն, սակայն

նա կ՝մատնէ ինձ։ Իրաւի մարդոյ 24
Որդին կ՝գնայ, ինչպէս նորա
համար գրուած է. բայց վայ
այն մարդոյն, որի ձեռով Որդին
մարդոյ կ՝մատնուի. լաւ էր
նորան, թէ այն մարդը ծնուած
չլինէր։ Յուդան էլ՝ նորա 25
մատնողը՝ պատասխանեց և ասաց.
Միթէ՞ ես եմ, Վարդապետ։
Նորան ասաց, դու ասացիր։
Եւ նորանք դեռ ուտում էին, 26
Յիսուսը հացն առաւ և օրհնե-
լով կտրեց, և աշակերտներին
տուաւ և ասաց. Առէք կերէք,
այս է իմ մարմինը։ Եւ բաժակն 27
առաւ, գոհացաւ, նորանց տուաւ
և ասաց. Խմեցէք դորանից ա-
մենքդ։ Վասնզի այդ է իմ 28
արիւնը նոր ուխտի, որ թափ-
վում է շատերի համար ՝ի
թողութիւն մեղաց։ Միայն 29
ասում եմ ձեզ, թէ այսուհետև
որթի այս բերբիցն էլ չեմ
խմիլ մինչև այն օրն, որ դորան
ձեզ հետ նոր կը խմեմ իմ Հօր
արքայութեան մէջ։

Եւ օրհներգելուց յետոյ 30
դուրս ելան Ձիթենեաց լեառը։
Այն ժամանակ Յիսուսը նո- 31
րանց ասաց. դուք ամենքդ այս
գիշեր կ՝գայթակղեք ինձանից.
վասնզի գրուած է՝ Հովիւը
կ՝զարնեմ՝ և հօտի ոչխարները
կ՝ցրուին։ Բայց իմ յարութիւն 32
առնելուցն յետոյ ձեզանից առաջ
կ՝գնամ Գալիլեա։ Պետրոսը 33
պատասխանեց և ասաց նորան.
Թէ և ամենքն էլ գայթակղին

31 ես ոչ գայթակղեցայց։ Եւ ասէ
ցնա Յիսուս. Եւ մեն ասեմ քեզ՝
Օր ի յայսմ գիշերի մինչև
հաւու խօսեալ իցէ, երիցս
35 ուրասցիս զիս։ Եւ ասէ ցնա Պետ-
րոս. Թէ և մեռանել հասանիցէ
ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց.
Նոյնպէս և ամենայն աշակերտքն
ասէին։

36 Յայնժամ գայ Յիսուս ընդ
նոսա ի գիւղ մի՝ որում անուն
էր Գեթսեմանի, և ասէ ցնոսա.
Նստարուք այդր, մինչև եր-
37 թայց կացից յաղօթս*։ Եւ
առեալ ընդ իւր զՊետրոս՝ և
զերկուս որդիսն Զեբեդեայ,
38 սկսաւ տրտմել և հոգալ։ Յայն-
ժամ ասէ ցնոսա. Տրտում է
ոգի իմ մինչև ի մահ, կացէք
39 աստ՝ և սկեցէք ընդ իս։ Եւ
մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝
անկաւ ի վերայ երեսաց իւրոց,
եկաց յաղօթս՝ և ասէ. Հայր
իմ, եթէ հնար է՝ անցցէ բա-
ժակս այս յինէն. բայց ոչ
որպէս ես կամիմ, այլ որպէս
40 դու։ Գայ առ աշակերտսն, և
գտանէ զնոսա ի քուն, և ասէ
ցՊետրոս. Այդպէս ոչ կարա-
ցէք մի ժամ արթուն կալ ընդ
41 իս։ Արթուն կացէք և աղօթս
արարէք՝ զի մի՛ անկանիցիք ի
փորձութիւն.† Հոգիս յօժար
42 է՝ բայց մարմինս տկար"։ Դար-
ձեալ երկրորդ անգամ գնաց՝

քեզանից, ես երբէք չեմ գայ-
թակղիլ։ Յիսուսը նորան ասաց.
34 Ճշմարիտն ասում եմ քեզ. այս
գիշեր դեռ հաւը չխօսած՝ երեք
անգամ կ'ուրանաս ինձ։ Պետ-
35 րոսը նորան ասաց. եթէ քեզ
հետ մեռնելու էլ լինիմ, չեմ
ուրանալ քեզ. այնպէս էլ բոլոր
աշակերտներն էին ասում։

Այն ժամանակ Յիսուսը նո-
36 րանց հետ մի տեղ եկաւ՝ անուն-
ը Գեթսեմանի, և ասաց աշա-
կերտներին. Այդտեղ նստեցէք.
մինչև որ գնամ աղօթք անեմ
այնտեղ։ Եւ Պետրոսին և
37 Զեբեդեայի երկու որդկանց
իր հետ առաւ, սկսեց տրտմիլ և
վշտանալ։ Յնժամանակ նորանց
38 ասաց. Հոգիս մեռնելու չափ
տրտմած է. այստեղ մնացէք,
և ինձ հետ արթուն կացէք։ Եւ
39 մի քիչ առաջ գնալով իր երեսի
վերայ ընկաւ, աղօթք էր անում
և ասում. Իմ Հայր, եթէ
կարելի է, թող այս բաժակն
ինձանից անցնի. սակայն ոչ թէ
ինչպէս ես եմ կամենում, այլ
ինչպէս դու։ Եւ աշակերտների
40 մօտ է գալիս, և նորանց քնի մէջ
է գտնում և ասում Պետրոսին.
Այդպէս՝ մէկ ժամ էլ չկարացիք
ինձ հետ արթուն կենալ։ Ար-
41 թուն կացէք և աղօթք արէք,
որ փորձութեան մէջ չմտնէք.
հոգին յօժար է, բայց մարմինը

* Ի Յոյն. անդր
† Ի Յոյն. հոգին յօժար է՝ բայց մարմինն տկար

եկաց յաղօթս Յիսուս՝ և ասէ.
Հայր իմ՝ եթէ հնար իցէ
անցանել յինէն բաժակս այս-
միկ, ապա թէ ոչ արբից զսա,
43 եղիցին կամք քո։ Եւ եկեալ
միւսանգամ եդիտ զնոսա ի
քուն, զի էին աչք իւրեանց
44 ծանրացեալք։ Եթող զնոսա և
գնաց. եկաց յաղօթս երրորդ
անգամ. և դարձեալ զնոյն բան
45 ասաց։ Յայնժամ գայ առ
աշակերտսն՝ և ասէ ցնոսա.
Ննջեցէք այսուհետև՝ և հան-
գերուք. զի ահա հասեալ է
ժամ, և Որդի մարդոյ մատնի ի
46 ձեռս մեղաւորաց։ Արիք երթիցուք
աստի, զի ահաւասիկ
եհաս՝ որ մատնելոցն է զիս։

47 Եւ մինչդեռ նա զայն խօսէր,
ահա Յուդա մի յերկոտասանից
եկն, և ընդ նմա ամբոխ բազում
սրովք և բրօք՝ ի քահանայա-
պետից և ի ծերոց ժողովր-
48 դեանն։ Եւ որ մատնելոցն էր
զնա, ետ նոցա նշան՝ և ասէ։
Ընդ որում ես համբուրեցից՝
49 նա է, զնա ունիցիք։ Եւ վաղ-
վաղակի մատուցեալ առ Յի-
սուս՝ ասէ. Ո՛ղջ լեր վարդապետ.
50 և համբուրեաց ընդ նմա։ Եւ
Յիսուս ասէ ցնա. Ընկեր, վասն
որոյ եկիրդ. յայնժամ մատու-
ցեալ արկին ձեռս ի Յիսուս, և
51 կալան զնա։ Եւ ահա մի ոմն
յայնցանէ՝ որ էին ընդ Յիսուսի,
ձգեաց զձեռն և եհան զսուր

տկար։ Դարձեալ երկրորդ ան-
42 գամ Յիսուսը գնաց, աղօթք
արաւ՝ և ասաց. Իմ Հայր, եթէ
կարելի չէ, որ այս բաժակն
ինձանից անցնի առանց իմ նո-
րան խմելուս, քո կամքը լինի։
Եւ գալով նորանց դարձեալ քը-
43 նի մէջ է գտնում. վասնզի նորանց
աչքերը ծանրացել էին։ Նո-
44 րանց թողնելով՝ դարձեալ գնաց,
և երրորդ անգամ տղօթք արաւ
և միևնոյն խօսքն ասաց։ Այն
45 ժամանակ իր աշակերտներին
մօտ է գալիս և նորանց ասում.
Այսուհետև քնեցէք և հանգըս-
տացէք. վասնզի ահա հասել է
ժամը, և Որդին մարդոյ մատնը-
վում է մեղաւորաց ձեռքը։
Ելէք կացէք գնանք, ահա 46
հասաւ ինձ մատնողը։

Եւ նա տակաւին խօսում 47
էր, ահա Յուդան, այն տաս-
ներկուսից մէկը եկաւ, և նորա
հետ մեծ ամբոխ սրերով և
բրերով, քահանայապետների
և ժողովրդի ծերերի կողմից։
Եւ նորան մատնողը նորանց 48
նշան էր տուել և ասել. Որին
որ համբուրեմ, նա է, բռնե-
ցէք նորան։ Եւ շուտով 49
Յիսուսի մօտ եկաւ և ասաց.
Բարև, վարդապետ. և նորան
համբուրեց։ Յիսուսն էլ ասաց 50
նորան. Ընկեր, ինչու համար
եկար. և այն ժամանակ մօտ
եկան՝ Յիսուսին ձեռք ձգեցին՝
և բռնեցին նորան։ Եւ ահա 51
Յիսուսի հետ լինողներից մէկը

իւր՝ և Եհար զծառայ քահանա-
յապետին, և 'ի բաց եհան
52 զունկն նորա։ Յայնժամ ասէ
ցնա Յիսուս. Դարձո՛ զսուր քո
'ի տեղի իւր. զի ամենեքեան՝ որ
սուր առնուցուն՝ սրով անկանի-
53 ցին։ Թէ համարիցիս՝ թէ ո՛չ
կարեմ* աղաչել զՀայր իմ. և
հասուցանիցէ ինձ † այժմ այսր՞
աւելի քան զերկոտասան ‡
54 գունդս հրեշտակաց։ Այլ
զիարդ լիցուն գիրք թէ այսպէս
պարտ է լինել։
55 Յայնժամ ասաց Յիսուս ցամ-
բոխն. Իբրև 'ի վերայ աւազակի
ելիք սուսերօք՝ և բրօք՝ ունել
զիս. Անապաղ առ ձեզ 'ի տա-
ճարին նստէի և ուսուցանէի,
56 և ո՛չ կալայք զիս։ Այլ այս
ամենայն եղև՝ զի լցցին գիրք
մարգարէիցն։ Յայնժամ աշա-
կերտքն ամենեքին թողին զնա
և փախեան։

57 Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝
ածին առ Կայիափա քահանա-
յապետ՝ ուր դպիրքն և ծերք
58 ժողովեալ էին։ Եւ Պետրոս
զՀետ նորա երթայր բացագոյն
մինչև 'ի սրահ քահանայապե-
տին. և մտեալ 'ի ներքս նստէր
ընդ սպասաւորսն տեսանել զկա-
59 տարածն։ Իսկ քահանայապետքն
և ամենայն ատեանն խնդրէին
սուտ վկայութիւն զՅիսուսէ,
ձեռք մեկնեց, իր սուրը հանեց,
և քահանայապետի ծառային
զարկելով ականջը կտրեց։ Այն 52
ժամանակ Յիսուսը նորան ասաց.
Սուրդ տեղը դիր. վասնզի բոլոր
սուր վեր առնողները սրով պի-
տի կորչին։ Կամ կարծում ես, 53
թէ չեմ կարող հիմա իմ Հօրն
աղաչել, որ հասցնէ ինձ աւելի
քան տասներկու գունդ հրեշ-
տակներ։ Բայց թէ՞նչպէս կ'կա-
տարուին գրքերը, թէ այսպէս 54
պէտք է լինել։

Այն ժամին Յիսուսն այն ամ- 55
բոխներին ասաց. Ինչպէս մի
աւազակի վերայ սրերով և բրե-
րով գուրս եկաք ինձ բռնելու.
ամեն օր ձեզ մօտ նստում էի
և տաճարումը սովորեցնում, և
չբռնեցիք ինձ։ Բայց այս ամենը 56
եղաւ, որ մարգարէների գրքերը
կատարուին։ Այն ժամանակ
բոլոր աշակերտները նորան թո-
ղին փախան։

Բայց նորանք Յիսուսին բռնե- 57
ցին տարան Կայիափա քահանա-
յապետի մօտ, ուր որ դպիրները
և ծերերը ժողովուած էին։
Պետրոսն էլ գնում էր նորա 58
ետևից հեռուանց մինչև քահա-
նայապետի սրահը, և ներս
մտաւ, ծառաների հետ նստեց
վերջը տեսնելու։ Բայց քահա- 59
նայապետները և ծերերը և բոլոր
ատեանը Յիսուսի դէմ սուտ

* 'Ի Յոյնն, այժմ աղաչել
† 'Ի Յոյնն չէ։
‡ 'Ի Յոյնն, լեգեոնն

60 զի սպանցին զնա. Եւ ոչ
գտանէին 'ի բազմաց սուտ վկա-
յիցն մատուցելոց. յետոյ մա-
տուցեալ երկու սուտ վկայք,
61 Ասէին՝ թէ Այս ասէր՝ Կարող
եմ քակել զտաճարն Աստուծոյ,
62 և զերիս աւուրս շինել։ Եւ
յարուցեալ քահանայապետն
ասէ ցնա. Ոչ տաս ինչ պատաս-
խանի, զինչ զոքա ամբաստանեն
63 զքեզ։ Եւ Յիսուս լուռ կայր.
Պատասխանի ետ քահանայա-
պետն և ասէ ցնա. Երդմնեցու-
ցանեմ զքեզ Աստուած
կենդանի, զի ասացես մեզ՝ թէ
64 դո՛ւ ես Քրիստոսն Որդի Աս-
տուծոյ։ Ասէ ցնա Յիսուս. Դու
ասացեր. բայց ասեմ ձեզ,
Յայտմ հետէ տեսանիցէք զՈրդի
մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրու-
թեան և եկեալ ընդ ամպս
65 երկնից։ Յայնժամ քահանայա-
պետն պատառեաց զՀանդերձս
իւր, և ասէ. Հայհոյեաց, զի՞
ևս պիտոյ են մեզ վկայք, ահա
արդ լուայք զՀայհոյութիւն
66 նորա. Զիա՞նչ հաճոյ է ձեզ.
Նոքա պատասխանի ետուն և
67 ասեն. Մահապարտ է։ Յայն-
ժամ թքին ընդ երեսս նորա, և
68 կոփեցին զնա. և ոմանք ապտա-
կեցին, և ասեն։ Մարգարեանց
մեզ Քրիստոսդ, ո՞վ է՝ որ
եհարն զքեզ։

69 Իսկ Պետրոս նստէր արտաքոյ

վկայութիւն էին որոնում, որ
նորան սպանեն և չգտան։ Եւ 60
թէպէտ շատ սուտ վկաներ էին
եկել, բայց չգտան. վերջապէս
երկու սուտ վկաներ առաջ եկան,
Եւ ասացին. Այս ասաց՝ ես 61
կարող եմ Աստուծոյ տաճարը
քանդել՝ և երեք օրումը շինել
նորան։ Եւ քահանայապետը 62
վեր կացաւ նորան ասաց. Ոչինչ
չե՞ս պատասխանում ինչ որ դո-
րանք քեզ դէմ վկայում են։
Եւ Յիսուսը լուռ էր կենում։ 63
Եւ քահանայապետը պատաս-
խանեց և ասաց նորան. Երդում
եմ տալիս քեզ կենդանի Աս-
տուծումը որ մեզ ասես, թէ
դո՞ւ ես Քրիստոսը Աստուծոյ
որդին։ Յիսուսն էլ նորան 64
ասաց. Դու ասացիր. սակայն
ասում եմ ձեզ, որ հիմիկուց
յետոյ կ'տեսնէք Որդին մարդոյ
Օրհնութեան աջ կողմը նստած՝
և երկնքի ամպերի վերայ գալիս։
Այն ժամանակ քահանայապետն 65
իր հանդերձները պատառեց և
ասաց, թէ Հայհոյեց. էլ ի՞նչ
պէտք են մեզ վկայք. ահա հիմա
դորա հայհոյանքը լսեցիք։
Ի՞նչպէս է երևում ձեզ։ Նո- 66
րանք էլ պատասխանեցին և
ասացին. Մահապարտ է։ Այն 67
ժամանակ թքեցին նորա երեսին,
և բռնցքով ծեծեցին նորան,
ոմանք էլ ապտակ տուին նորան,
ասելով Մարգարէացիր մեզ, 68
Քրիստոս, ո՞վ էր քեզ զարկողը։
Եւ Պետրոսը դուրսը նստած 69

'ի գաւթին. մատեաւ առ նա
աղախին մի, և ասէ. Եւ դու
ընդ Յիսուսի Գալիլեացւոյ էիր:
70 Նա ուրացաւ առաջի ամենեցուն՝
և ասէ, թէ Ո՛չ գիտեմ զինչ
71 խօսիս: Եւ իբրև ել նա արտաքս
քան զդուռնն՝ ետես զնա
այլ կին մի, և ասէ ցայնոսիկ՝
որ անդն կային. Եւ սա ընդ
Յիսուսի Նազովրացւոյ էր:
72 Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ,
73 թէ Ո՛չ գիտեմ զայրն: Եւ
յետ սակաւ միոյ մատուցեալ
որք կային անդ, ասեն ցՊետրոս.
Արդարև և դու 'ի նոցանէ ես,
քանզի և խօսք քո յայտ առնեն
74 զքեզ: Յայնժամ սկսաւ նզովել
և երդնուլ, թէ Ո՛չ գիտեմ
զայրն. և իսկոյն հաւ խօսեցաւ:
75 Եւ յիշեաց Պետրոս զբանն
Յիսուսի զոր ասաց, թէ Մինչչև
հաւու խօսեալ իցէ՝ երիցս ու-
րացիս զիս. և ելեալ արտաքս՝
ելաց դառնապէս:

ԳԼ. ԻԷ.

1 Իբրև այդ եղև, խորհուրդ
արարին ամենայն քահանայա-
պետքն և ծերք ժողովրդեանն
վասն Յիսուսի սպանանել զնա:
2 Կապեցին զնա, և առին զնացին,
և ետուն 'ի ձեռս Պոնտացւոյ
Պիղատոսի դատաւորի:
3 Յայնժամ տեսեալ Յուդայի՝
որ մատնեաց զնա, թէ պար-
էր սրահումբ, և մէկ աղախին
եկաւ նորա մօտ և ասաց. Դու
էլ Գալիլեացի Յիսուսի հետ
էիր: Նա էլ բոլորի առջեւ
ուրացաւ և ասաց. Չեմ գիտում
թէ ինչ ես ասում: Եւ երբոր
նա դուրսը՝ բակը գնաց, մի
ուրիշ կին նորան տեսաւ և այն-
տեղ լինողներին ասաց. Սա էլ
էր Նազովրեցի Յիսուսի հետ:
Եւ դարձեալ ուրացաւ երդում-
ով, թէ Ես այն մարդին չեմ
ճանաչում: Եւ քիչ ժամանակ
կից յետոյ այնտեղ կանգնողները
եկան և Պետրոսին ասացին.
Ճշմարիտ՝ դու էլ նորանցից ես.
վասնզի քո խօսելն էլ յայտնի է
անում քեզ: Այն ժամանակ
սկսեց անիծել և երդուիլ՝ թէ
այն մարդուն չեմ ճանաչում,
և շուտով հաւը խօսեց: Եւ
Պետրոսը յիշեց Յիսուսի այն
խօսքը, որ ասաց. թէ Հաւը
խօսելուց առաջ՝ երեք անգամ
կ'ուրանաս ինձ. և դուրս գնաց
դառնապէս լաց եղաւ:

ԳԼ. ԻԸ.

Եւ երբոր առաւօտ եղաւ, բո-
լոր քահանայապետները և ժո-
ղովրդի ծերերը Յիսուսի դէմ
խորհուրդ արին, որ սպանեն
նորան: Եւ նորան կապելով
տարան, և Պոնտացի Պիղատոս՝
կուսակալին յանձնեցին:
Այն ժամանակ նորա մատնիչ՝
Յուդան տեսնելով, որ դատա-

տաւորեցաւ, զղջացաւ և դար-
ձոյց * զարծաթն առ քահանա-
յապետսն և ծերս ժողովը-
4 դեանն", Եւ ասէ. Մեղայ, զի
մատնեցի զարիւն արդար. և
նոքա ասեն. Մեզ չէ փոյթ,
5 դու գիտես: Եւ ընկէց զարծաթն
'ի տաճարին՝ և գնաց, և հոգաւ
6 խեղդեցաւ: Իսկ քահանայապե-
տին առեալ զարծաթն՝ ասեն.
Ո՛չէ արժան ընդունել զայդ 'ի
կորբանն, քանզի գինք արեան
7 են: Խորհուրդ առեալ, գնեցին
ոչնու զագարակն բրտի 'ի գե-
8 րեզման օտարաց: Վասն այնո-
րիկ կոչեցաւ ագարակն այն,
Ագարակ արեան՝ մինչև յայսօր:
9 Յայնժամ լցաւ՝ որ ասացաւն 'ի
ձեռն Երեմիայ մարգարէի. Եւ
առին զերեսուն արծաթին զգինս
վաճառելոյն, զոր արկին յորդ-
10 ւոցն Իսրայելի: Եւ ետուն
զնա յագարակն բրտի. որպէս
Հրամայեաց ինձ Տէր:

11 Եւ Յիսուս եկաց առաջի
դատաւորին. և հարց զնա դա-
տաւորն՝ և ասէ. Դո՞ւ ես թա-
գաւորն Հրէից. Եւ Յիսուս
12 ասէ. Դու ասես: Եւ 'ի չա-
բախօսիլն նորա 'ի քահանայա-
13 պետից և 'ի ծերոց, ոչ ինչ ետ
պատասխանի: Յայնժամ ասէ
զնա Պիղատոս. Ո՞չ լսես՝ որչափ

պարտուեցաւ, զղջացած՝ այն ե-
րեսուն արծաթը յետ դարձրեց
քահանայապետներին և ծերե-
րին, Եւ ասաց, մեղք գործեցի՝
4 անմեղ արիւն մատնելով: Նո-
քանք էլ ասացին, Մեզ ինչ.
դու տես: Եւ արծաթը գցեց
5 տաճարի մէջ՝ հեռացաւ, և գնաց
խեղդուեցաւ: Եւ քահանայա-
6 պետներն որ արծաթն առին՝, ա-
սացին. Արժան չէ՝ զորան գան-
ձանակի մէջ ընդունել, որովհե-
տև արիւնի գին է: Եւ խորհուրդ
7 արին և նորանով բրուտի արտա-
տեղն առին, օտարականների գե-
րեզմանատեղի համար: Նորա
8 համար այն արտատեղը Արիւնի
արտ կոչուեցաւ մինչև այսօր:
9 Այն ժամանակ կատարուեցաւ
Երեմիա մարգարէի ձեռով ասուածը, Եւ երեսուն արծաթն
առին, այն ծախուածի գինը՝
որ Իսրայէլի որդիքներից առել
էին, Եւ նորան բրուտի արտին
10 տուին, ինչպէս հրամայեց ինձ
Տէրը:

11 Եւ Յիսուսը կանգնեց կուսա-
կալի առջեւը. և կուսակալը հար-
ցրեց նորան և ասաց. Դու՞ ես
Հրէից թագաւորը: Յիսուսն
էլ ասաց նորան, Դու ես ասում:
12 Եւ երբոր քահանայապետնե-
րիցը և ծերերիցը ամբաստան-
վում էր ոչ ինչ չպատասխանեց:
13 Այն ժամանակ Պիղատոսը ա-

* 'Ի Յոյն. զերեսուն արծաթին առ քահանայապետսն և ծերս

դոքա հակառակ քո վկայեն։
14 Եւ ոչ ետ նմա պատասխանի՝ և
ոչ բան մի, մինչև զարմանալ
զատաւորին յոյժ։

15 Բայց ըստ տօնի՝ սովոր էր
զատաւորն արձակել ժողովրդ-
եանն կապեալ մի՝ զոր կամէին։
16 Ունէին յայնժամ կապեալ մի
նշանաւոր, որում՝ անուն էր *
17 Յեսու Բարաբբա։ Իրրև ժողո-
վեցան, ասէ ցնոսա Պիղատոս.
Օ՞ր կամիք † յերկուց աստի զի
արձակեցից ձեզ, զՅեսու Բա-
րաբբա՞՝ եթէ զՅիսուս զան-
18 ուանեալն Քրիստոս։ Քանզի
գիտէր՝ թէ առ նախանձու մատ-
նեցին զնա։

19 Եւ մինչ նստէր յատենին
առաքեաց առ նա կինն իւր՝ և
ասէ. Զկայ ինչ քո և արդարոյն
այնորիկ, զի բազում անցք ան-
ցին ընդ իս այսօր յանուրջս
20 վասն նորա։ Իսկ քահանայա-
պետքն և ծերք հաւանեցուցին
զժողովուրդսն, զի խնդրեսցեն
զԲարաբբայն՝ և զՅիսուս կո-
21 րուսցեն։ Պատասխանի ետ
դատաւորն՝ և ասէ ցնոսա. Օ՞ր
կամիք զի արձակեցից ձեզ յեր-
22 կուց այսր։ և նոքա ասեն. զԲա-
բաբբա։ Ասէ ցնոսա Պիղատոս.
Իսկ զի՞ արարից զՅիսուս զա-
23 նուանեալն Քրիստոս։ Ասեն

սաց նորան. Զինչ լսում՝ ուրբաթի
բաներ են քեզ հակառակ վկա-
յում։ Եւ նորան իսկի մէկ բան 14
էլ չպատասխանեց. մինչև որ
կուսակալն էլ շատ զարմացաւ։
Բայց սովորութիւնն էր կուսա- 15
կալին տօնի ժամանակում մէկ
կապուած արձակել ժողովրդի
համար, որին որ ուզում էին։
Եւ այն ժամանակ մի նշանաւոր 16
բանտարկեալ ունէին, անունը
Բարաբբա։ Արդ երբոր նո- 17
բանք հաւաքուեցան, Պիղատոսը
ասաց նորանց. Որին էք ուզում,
որ ձեզ համար արձակեմ, Բա-
բաբբայի՞ն, թէ Յիսուսին, որ
Քրիստոս է կոչւում։ Վասնզի 18
գիտէր, որ նախանձով էին մատ-
նել նորան։
Եւ երբոր նա տեղն նստած 19
էր, նորա կինն հաղորդ ուղարկեց
նորա մօտ և ասաց. Այդ ար-
դար մարդոյ հետ դու բան չու-
նիս. վասնզի շատ բաներ քա-
շեցի այսօր նորա պատճառով։
Բայց քահանայապետները և 20
ծերերը ժողովրդին համոզեցին,
որ Բարաբբային ուզեն, իսկ
Յիսուսին կորցնեն։ Եւ կու- 21
սակալը պատասխանեց և ասաց
նորանց. Այս երկուսից որին էք
ուզում, որ արձակեմ ձեզ հա-
մար։ Եւ նորանք ասացին, Բա-
բաբբային։ Պիղատոսն ասաց 22
նորանց. Ապա ի՞նչ անեմ Յի-

* 'Ի Յոյնն չէ։
† 'Ի Յոյնն, զի արձակեցից ձեզ. զԲարաբբա։

ամենեքեան՝ խաչեսցի. և նա
ասէ, Օ՞ր նչ չար արար. և
նոքա առաւել ևս աղաղակէին
24 և ասէին, Խաչեսցի։ Եւ տես-
եալ Պիղատոսի թէ ոչ ինչ
օգնէ՝ այլ առաւել խռովութիւն
լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս
առաջի ժողովրդեանն՝ և ասէ.
Քաւեալ եմ ես յարենէ ար-
դարոյդ այդորիկ. դուք գի-
25 տասջիք։ Պատասխանի ետ ամե-
նայն ժողովուրդն՝ և ասէ.
Արիւն դորա 'ի վերայ մեր և 'ի
26 վերայ որդւոց մերոց։ Յայն-
ժամ արձակեաց նոցա զԲա-
բաբբայն, և զՅիսուսդան Հար-
եալ՝ ետ 'ի ձեռս՝ զի խաչեսցի։

27 Յայնժամ զինուորք դատա-
ւորին առին զՅիսուս յապարանս.
և ժողովեցին 'ի վերայ նորա
28 զամենայն զգունդն։ Մերկացին
զնա, և արկին զնովաւ քղամիդ
29 կարմիր։ Եւ բոլորեալ պսակ 'ի
փշոց՝ եդին 'ի գլուխ նորա. և
եղէգն յաջոյ ձեռին նորա. 'ի
ծունր իջեալ առաջի նորա՝ կա-
տակէին և ասէին. Ո՛ղջ լեր թա-
30 գաւոր Հրէից։ Եւ թքեալ 'ի
նա՝ առնուին զեղէգնն և ծեծէին
31 զգլուխ նորա։ Եւ յորժամ ձա-
ղեցին զնա, մերկացուցին 'ի
նմանէ զքղամիդն՝ և ագուցին
նմա զիւր հանդերձն, և տարան
զնա 'ի խաչ հանել։

32 Եւ ելեալ արտաքս՝ գտին այր

սուսին որ Քրիստոս է կոչւում։
Ամենքն ասացին. Թող խաչուի։
Եւ կուսակալն ասաց. Ապա 23
ի՞նչ չար բան է արել։ Բայց
նորանք էլ աւելի էին աղաղա-
կում և ասում, Խաչուի։ Պի- 24
ղատոսն էլ երբոր տեսաւ, թէ
ոչինչ օգուտ չէ անում, այլ
աւելի խռովութիւն է լինում,
ջուր առաւ՝ ձեռները լուաց ժո-
ղովրդի առջևը և ասաց. Ես այդ
արդարի արիւնից անմեղ եմ,
դուք տեսէք։ Եւ բոլոր ժողո- 25
վուրդը պատասխանեց և ասաց.
Նորա արիւնը մեզ վերայ և մեր
որդոց վերայ։ Այն ժամանակ 26
Բարաբբային արձակեց նորանց
համար, և Յիսուսին ծեծելուց
յետոյ յանձնեց որ խաչուի։
Այն ժամանակ կուսակալի 27
զինուորները Յիսուսին տարան
պալատը, և բոլոր զօրագունդը
հաւաքեցին նորա վերայ։ Եւ 28
նորան մերկացնելով, նորա վերայ
մի կարմիր քղամիդ գցեցին։
Եւ փշերից մի թագ ոլորեցին՝ 29
նորա գլխին դրին, և նորա աջ
ձեռին մի եղէգ. և նորա առջևը
ծունր դնելով ծաղր էին անում և
ասում. Ողջ լեր, Հրէից թա-
գաւոր։ Եւ նորա վերայ 30
թքելով՝ եղէգն առնում էին և
նորա գլուխը ծեծում։ Եւ երբ 31
որ ծաղր արին նորան, կարմիր
քղամիդը նորանից հանեցին՝ և
նորան հագցրին իր հանդերձնե-
րը, և տարան նորան խաչելու։
Եւ երբոր դուրս եկան, մի 32

մի Կիւրենացի՝ անուն Սիմոն, զնա կալան պահակ՝ զի բարձցէ
33 զխաչն նորա։ Եւ եկեալ ՚ի տեղին անուանեալ Գողգոթա,
34 որ է տեղի կառափելոյ։ Եւտուն նմա ըմպել գինի ընդ լեղի խառնեալ, և իբրև ճաշակեաց, ոչ
35 կամէր ըմպել։ Եւ հանեալ զնա ՚ի խաչ՝ բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ. զի լցի բանն՝ որ ասացաւ ՚ի մարգարէէն. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, և ՚ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկա-
36 նէին։ Եւ նստեալ պահէին զնա։
37 Եւ եդին ՚ի վերայ գլխոյ նորա՝ գրեալ զվնաս նորա՝ ԹԷ ԱՅՍ Է ՅԻՍՈՒՍ ԹԱԳԱՒՈՐՆ
38 ՀՐԷԻՑ։ Յայնժամ հանին ընդ նմա ՚ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ նորա և մի յահեկէ։

39 Եւ որ անցանէին՝ հայհոյէին զնա, շարժէին զգլուխս իւրեանց, Եւ ասէին.
40 Վա՛հ որ քակէիր զտաճարն, և զերիս աւուրս շինէիր զնա. ապրեցո՛ զքեզ, թէ Որդի ես Աստուծոյ՝ էջ ՚ի խաչէդ։
41 Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և
42 ծերովք՝ և ասէին. Զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել. եթէ թագաւոր է Իսրայելի՝ իջցէ այժմ ՚ի խաչէդ՝
43 և հաւատասցուք դմա. Եթէ յուսացաւ Աստուած, փրկեսցէ

Կիւրենացի մարդ գտան՝ անունը Սիմոն, Նորան պահակ բռնեցին,
33 որ Նորա խաչը վեր առնէ։ Եւ երբոր Գողգոթա ասուած տեղն
34 եկան, որ գանգի տեղ ասել է. Նորան լեղու հետ խառնած գինի տուին խմել. և երբոր ճա-
35 շակեց, չէր կամենում խմել։ Նորան խաչողներն էլ բաժանեցին Նորա հանդերձները՝ վիճակ գցելով, որ կատարուի մարգարէից ձեռով ասուածը՝ Իմ հանդերձներն իրանց մէջ բաժանեցին, և իմ պատմուճանի
36 վերայ վիճակ էին գցում։ Եւ
37 նստած պահում էին Նորան այնտեղ։ Եւ Նորա յանցանքը գրուած դրին իր գլխիցը վեր.
38 ԱՐ Է ՅԻՍՈՒՍ ՀՐԷԻՑ ԹԱԳԱՒՈՐԸ։ Էյն ժամանակ Նորա հետ երկու աւազակներ խաչուեցան՝ մէկը աջ կողմին և
39 միւսը ձախ կողմին։ Եւ անցնող դարձողները հայհոյում էին Նորան, իրանց գլխները շարժելով, և ասում.
40 Ով տաճարը քանդող՝ և երեք օրում շինող, ազատիր քեզ. եթէ Աստուծոյ Որդի ես, իջիր խաչիցը։
41 Էյնպէս էլ քահանայապետներն էին ծաղր անում դպիրների
42 և ծերերի հետ և ասում. Ուրիշներին ազատեց, ինքն իրան չէ կարողանում ազատել. թէ որ Իսրայէլի թագաւորն է, թող իջնէ հիմա խաչիցը, և կ՚հաւատանք
43 դորան։ Աստուծոյն յուսացաւ, հիմա թող փրկէ դորան, եթէ

այժմ զդա՝ եթէ կամի զդա. քանզի ասաց՝ եթէ Աստուծոյ
44 Որդի եմ։ Զնոյն և աւազակքն՝ որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա։
45 Եւ ՚ի վեց ժամէ աւուրն՝ խաւար եղև ՚ի վերայ ամենայն
46 երկրի մինչև ցինն ժամ։ Եւ զինն ժամուն գոչեաց Յիսուս ՚ի ձայն մեծ և ասէ. Էլի Էլի լամա սաբաքթանի. այսինքն է. Աստուած իմ, Աստուած իմ՝
47 ընդէր թողեր զիս։ Ոմանք յայնցանէ որ անդն կային, իբրև լուան՝ ասէին. զԵղիա
48 կարդայ դա։ Եւ վազվազակի ընթացաւ մի ոմն ՚ի նոցանէ՝ առ սպունգ լի քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպել նմա։ Եւ
49 կէսքն ասէին. թո՛ղ տեսցուք եթէ գա՞յ Եղիա փրկել զդա։

50 Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ և արձակեաց զոգին։
51 Եւ ահա վարագոյր տաճարին ցերաւ յերկուս՝ ՚ի վերուստ մինչև ՚ի վայր. և երկիր շարժեցաւ, և վէմք պա-
52 տառեցան։ Եւ գերեզմանք բացան, և բազում մարմինք
53 ննջեցելոց սրբոց յարեան։ Եւ ելեալ ՚ի գերեզմանաց յետ յարութեանն Նորա, մտին ՚ի քաղաքն սուրբ, և երևեցան բազմաց։
54 Իսկ հարիւրապետն և որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրև

ուզում է դորան. վասնզի ասաց,
44 թէ Աստուծոյ Որդի եմ։ Միւս Նոյնն էլ աւազակներն, որ Նորա հետ խաչուած էին, նախատում էին Նորան։
45 Եւ ժամը վեցից խաւար եղաւ բոլոր երկրի վերայ մինչև ինն
46 ժամը։ Եւ ժամը ինների դէմ, Յիսուսն մեծ ձայնով աղաղակեց և ասաց. Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի. այսինքն, Իմ Աստուած՝ իմ Աստուած, ինչո՞ւ թողեր
47 ինձ։ Այնտեղ կանգնածներից ոմանք էլ երբոր լսեցին, ասում էին՝ թէ Եղիային է կանչում
48 դա։ Եւ շուտով Նորանցից մէկը վազեց՝ մի սպունգ առաւ քացախով լցրեց, եղէգի վերայ անցրեց՝ և Նորան տուաւ, որ
49 խմէ. Եւ միւսներն ասում էին, թող տեսնենք, թէ Եղիան կ՚գա՞ դորան փրկելու։

50 Յիսուսը դարձեալ մեծ ձայնով կանչեց՝ և արձակեց հոգին։

Եւ ահա տաճարի վարագոյրն
51 ներքեւը երկու ճղուեցաւ՝ վերևիցը մինչև ցածը, և երկիրը շարժեց. և քարերը պատռուեցան։ Եւ
52 գերեզմանները բացուեցան. և շատ սուրբ ննջեցելոց մարմիններ
53 յարութիւն առին. Եւ գերեզմաններից դուրս գալով, Նորա յարութիւնից յետոյ, սուրբ քաղաքը մտան, և շատերին երևեցան։

54 Բայց հարիւրապետը և նոքանք, որ Նորա հետ Յիսուսին

տեսին զշարժումն և զկղեալսն,
երկեան յոյժ՝ և ասեն. Արդարև Աստուծոյ Որդի էր սա:

55 Այլն անդ կանայք բազումք,
կային ի հեռաստանէ՝ և հա-
յէին, որք եկին զկնի Յիսուսի
56 ի Գալիլեէ պաշտելն նա. Յորս
էր Մարիամ Մագդալենացի
և Մարիամ Յակոբայ՝ և
Յովսեայ մայր, և մայր որդւոցն
Զեբեդեայ:

57 Եւ իրրև երեկոյ եղև, եկն
այր մի մեծատուն Արիմաթեայ՝
որում անուն էր Յովսէփ. որ
և աշակերտեցաւ իսկ Յիսուսի:
58 Սա մատուցեալ առ Պիղատոս,
խնդրեաց զմարմին Յիսուսի.
յայնժամ Պիղատոս հրամայեաց
59 տալ զմարմին: Եւ առեալ
զմարմին Յովսէփ՝ պատեաց
60 առուրբ կտաւովք, Եւ եդ ի նոր
գերեզմանի զոր փորեաց ի
վիմի. և թաւալեցուցեալ կա-
փարիչ դրան գերեզմանին մէմ
61 մի մեծ՝ գնաց: Էր էր Մա-
րիամ Մագդալենացի՝ և միւս
Մարիամն, նստէին հանդէպ
գերեզմանին:
62 Եւ ի վաղիւ անդր՝ որ է յետ
ուրբաթուն, ժողովեցան քա-
հանայապետքն և փարիսեցիքն
63 առ Պիղատոս, Եւ ասեն. Տէր,
յիշեցաք զի մոլորեցուցիչն այն
ասէր՝ մինչ կենդանին էր, թէ
Յետ երից աւուրց յառնեմ.

պահում էին, երբոր երկրա-
շարժը և այն եղածները տեսան,
շատ վախեցան և ասացին.
Ճշմարիտ որ սա Աստուծոյ Որդի
էր:

Եւ այն տեղ շատ կանայք կա- 55
յին, որ հեռուանց մտիկ էին
տալիս, որ Գալիլեայից Յիսուսի
ետևիցն եկան նորան ծառայու-
թիւն անելու: Որոնց միջումն 56
էր Մարիամ Մագդալենացին՝
և Մարիամ Յակոբի և Յոսէի
մայրը՝ և Զեբեդիայի որդոց
մայրը:

Եւ երբոր իրիկուն եղաւ Արի- 57
մաթիայից մի հարուստ մարդ ե-
կաւ՝ անունը Յոսէփ, որ ինքն
էլ աշակերտ եղած էր Յիսուսին:
Սա գնաց Պիղատոսի մօտ և 58
Յիսուսի մարմինը խնդրեց. այն
ժամանակ Պիղատոս հրամայեց
որ մարմինը տուն: Եւ Յոսէփը 59
մարմինն առնելով՝ մաքուր կտա-
ւով պատանեց, Եւ դրաւ իր 60
նոր գերեզմանի մէջ, որ վէմի
մէջ փորել էր. և գերեզմանի
դրանը մի մեծ քար թաւալեց
գնաց: Եւ այնտեղ էր Մարիամ 61
Մագդալենացին և միւս Մա-
րիամը, գերեզմանի դիմացը
նստած:

Եւ հետևեալ օրը՝ որ ուրբա- 62
թից յետոյ է, քահանայապետ-
ները և փարիսեցիները հաւա-
քուեցան Պիղատոսի մօտ, Եւ 63
ասացին. Տէր, յիշումենք որ
այն մոլորեցուցիչը, դեռ կեն-
դանի, ասում էր. երեք օրից

61 Արդ հրամայեա զգուշանալ
գերեզմանին մինչև ցերեկ ա-
ւուրս, գուցէ եկեալ աշա-
կերտքն գիշերի՝ գողանայցեն
զնա, և ասիցեն ժողովրդեանն,
թէ Յարեաւ ի մեռելոց. և
լինիցի յետին մոլորութիւնն չար
65 քան զառաջինն: Ասէ ցնոսա
Պիղատոս. Ունիք զզօրականն,
երթայք զգուշացարուք որպէս
66 և գիտէք: Եւ նոքա երթեալ
զգուշացան գերեզմանին, և կնք-
քեցին զվէմն հանդերձ զօրա-
կանօքն:

ԳԼ. ԻԸ.

1 Եւ յերեկոյի շաբաթուն՝
յորում լուսանայր միաշաբա-
թին, եկն Մարիամ Մագդա-
ղենացին, և միւս Մարիամն՝
2 տեսանել զգերեզմանն: Եւ ահա
շարժումն մեծ եղև. զի հրեշ-
տակ Տեառն իջեալ յերկնից՝
մատուցեալ ի բաց թաւալեցոյց
զվէմն ի դրանց անտի, և
3 նստէր ի վերայ նորա. Եւ էր
տեսիլ նորա իբրև զփայլակն, և
հանդերձ նորա սպիտակ իբրև
4 զձիւն: Եւ յահէ անտի նորա
5 խուովեցան պահապանքն. և
եղեն իբրև զմեռեալս: Պատաս-
խանի ետ հրեշտակն՝ և ասէ
ցկանայսն. Մի երկնչիք դուք,
գիտեմ զի զՅիսուս զխաչելեալն
6 խնդրէք. Չէ՞ ասա, քանզի

յետոյ յարութիւն կ'առնեմ. 64
Ուրեմն հրամայիր, որ մինչև
երրորդ օրը գերեզմանն զգու-
շութիւնով պահեն. մի գուցէ
աշակերտները գիշերը գան՝ նո-
րան գողանան. և ժողովրդին
ասեն՝ Մեռելներից յարութիւն
առաւ, և յետին մոլորութիւնը
չար լինի, քանթէ առաջինը:
Պիղատոսն էլ ասաց նորանց. 65
Ունիք պահապան զինուորներ,
գնացէք՝ զգոյշ պահեցէք՝ ինչ-
պէս գիտէք: Նորանք էլ գնա- 66
ցին գերեզմանին պահպանու-
թիւն արին, քարը կնքելով
պահապան զինուորների հետ:

ԳԼ. ԻԸ.

Եւ շաբաթի իրիկունն՝ որ միա- 1
շաբաթի էր լուսանում, Մա-
րիամ Մագդալենացին եկաւ՝
և միւս Մարիամը գերեզմանը
տեսնելու: Եւ ահա մեծ շարժ 2
եղաւ, վասնզի Տիրոջը հրեշտա-
կը երկնքից իջաւ գնաց դռնիցն
այն քարը հեռու թաւալեց, և
նորա վերայ նստեց: Եւ նորա 3
կերպարանքը փայլակի պէս էր,
և նորա հագուստը ձիւնի պէս
սպիտակ: Եւ նորա ահիցը պա- 4
հապանները շփոթուեցան, և
մեռելի նման եղան: Եւ հրեշ- 5
տակը պատասխանեց և այն կա-
նանցն ասաց, Մի վախենաք
դուք, գիտեմ որ խաչուած
Յիսուսին էք որոնում: Այս- 6
տեղ չէ. վասնզի յարութիւն

յարեաւ, որպէս ասացն. եկայք
7 տեսէք զտեղին ուր կայր*: Եւ
վաղվաղակի երթայք ասացէք
աշակերտացն նորա՝ թէ Յարեաւ. և ահա յառաջանայ քան
զձեզ ի Գալիլեա, անդ տեսա-
նիցէք զնա. ահա ասացի ձեզ:
8 Եւ ելեալ վաղվաղակի ի գերեզ-
մանէ անտի ահիւ և խնդու-
թեամբ բազմամ՝ ընթանային
9 պատմել աշակերտացն: Եւ ահա
պատահեաց նոցա Յիսուս՝ և
ասէ. Ողջ էք. և նոքա մատու-
ցեալ կալան զոտս նորա՝ և
10 երկիրպագին նմա: Յայնժամ
ասէ ցնոսա Յիսուս. Մի՛
երկնչիք, երթայք ասացէք եղ-
բարցն իմոց՝ զի երթիցեն ի
Գալիլեա, և անդ տեսցեն զիս:

11 Իբրև նոքա գնացին, ահա
ոմանք ի զօրականացն եկին ի
քաղաքն՝ և պատմեցին քահանա-
յապետիցն զամենայն որ ինչ
12 եղեն: Եւ նոքա ժողովեալ
հանդերձ ծերովքն, խորհուրդ
առեալ արծաթի յոյժ եռուն
13 զօրականացն, Եւ ասեն. Ասա-
ջիք՝ եթէ Աշակերտքն նորա
եկեալ գիշերի գողացան զնա՝
14 մինչ մեք ի քուն էաք: Եւ
եթէ, լուր լիցի այդ առ դա-

առաւ, ինչպէս ասաց. եկէք,
տեսէք այնտեղը, ուր Տէրը
պառկած էր: Եւ շուտով 7
գնացէք նորա աշակերտներին
ասացէք, թէ յարութիւն առաւ
մեռելներից. և ահա նա ձեզա-
նից առաջ Գալիլեա կ'գնայ.
այնտեղ նորան կը տեսնէք. ահա
ասացի ձեզ: Եւ շուտով գե- 8
րեզմանից դուրս եկան՝ վախով
և մեծ ուրախութիւնով վազում
էին՝ նորա աշակերտներին պատ-
մելու: Եւ երբոր գնում էին 9
որ նորա աշակերտներին պատ-
մեն, և ահա Յիսուսը պատա-
հեց նորանց և ասաց. Ողջոյն
ձեզ. և նորանք մօտ եկան, նորա
ոտները բռնեցին և նորան երկր-
պագութիւն արին: Այն ժա- 10
մանակ Յիսուսը նորանց ասաց.
Մի՛ վախենաք. գնացէք իմ եղ-
բայրներին պատմեցէք, որ գնան
Գալիլեա, և այնտեղ կ'տեսնեն
ինձ:

Եւ երբոր նորանք գնացին. 11
ահա պահապան զինուորներից
ոմանք եկան քաղաքը և պատմե-
ցին քահանայապետներին բոլոր
եղածները: Եւ նոքանց ծերերի 12
հետ հաւաքուած խորհուրդ
արին, և շատ փող տուին զի-
նուորներին: Եւ ասացին. Ասա- 13
ցէք, թէ Նորա աշակերտները
գիշերը եկան գողացան նորան,
երբոր մենք քնած էինք: Եւ 14
եթէ այդ լուրը կուսակալին

* Ի Յոյն. Տէրն

տաւորն, մեք հաճեսցուք զնա՝
15 և զձեզ անհոգս արասցուք: Եւ
նոցա առեալ զարծաթն, արա-
րին, որպէս ուսանն. և ել
համբաւս այս ի Հրէից մինչև
ցայսօր:
16 Իսկ մետասան աշակերտքն
գնացին ի Գալիլեա ի
լեառնն՝ ուր ժամադիր եղև
17 նոցա Յիսուս: Իբրև տեսին
զնա, երկիրպագին նմա, և
18 ոմանք յերկուսցան: Եւ մա-
տուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ
նոսա՝ և ասէ. տուաւ ինձ ամե-
նայն իշխանութիւն յերկինս և
ի երկրի. * որպէս առաքեաց զիս
Հայր, և ես առաքեմ՝ զձեզ՝:
19 Գնացէք այսուհետև՝ աշա-
կերտեցէք զամենայն հեթանոսս.
մկրտեցէք զնոսա յանուն Հօր
և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:
20 Ուսուցէք նոցա պահել զամե-
նայն որ ինչ պատուիրեցի ձեզ.
և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ
զամենայն աւուրս, մինչև ի
կատարած աշխարհի:

* Ի Յոյն. էի:

հասնէ, մենք կ'համոզենք նո-
րան և ձեզ անհոգ կ'անենք:
Եւ նորանք փողն առնելով, այն- 15
պէս արին ինչպէս սովորեցրուած
էին. և այս լուրը հռչակուեցաւ
Հրէաների մէջ մինչև այսօր:
Բայց տասնումէկ աշակերտ- 16
ները գնացին Գալիլեա այն
լեառն որ Յիսուսը նորանց հրա-
մայել էր: Եւ երբոր նորան 17
տեսան, երկրպագութիւն արին
նորան, և ոմանք երկմտեցան:
Եւ Յիսուսը մօտ գալով նորանց 18
հետ խօսեց և ասաց. Ամեն
իշխանութիւնն ինձ տրուեցաւ
երկնքում և երկրում. Ուրեմն 19
գնացէք բոլոր ազգերը աշակեր-
տեցէք, նորանց մկրտելով յա-
նուն Հօր և Որդոյ և Հոգւոյն
Սրբոյ. Նորանց սովորեցնելով, 20
որ ամեն ինչ որ ձեզ պատուի-
րեցի պահեն. և ահա ես ձեզ
հետ եմ ամեն օր, մինչև աշ-
խարհի վերջը: Ամեն:

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ:
2 Որպէս և գրեալ է ի մարգարէս. Հաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհ քո
3 առաջի քո: Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղ
4 արարէք զշաւիղս նորա: Եւ եղև զի Յովհաննէս մկրտէր յանապատի, և քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան ի
5 թողութիւն մեղաց: Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն Երուսաղէմայ, և Երուսաղէմացիք ամենեքեան. և մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց:
6 Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստէ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա
7 մարախ՝ և մեղր վայրենի: Քարոզէր և ասէր. Գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ, որում՝ չեմ բաւական խոնարհել լուծանել
8 զկրացս կօշկաց նորա: Ես

Աստուածոյ Որդի Յիսուսի Քրիստոսի աւետարանի սկիզբն: 1

Ինչպէս գրուած է մարգարէներուն. Ահա ես իմ հրեշտակն ուղարկում եմ քո երեսի առջևից, որ պատրաստէ քո ճանապարհը քո առջև. Կանչողի ձայն անապատումը՝ պատրաստարէք Տիրոջ ճանապարհը, և շիտակ արէք նորա շաւիղները: 2 3
Յովհաննէսը անապատումը մկրտում էր, և ապաշխարութեան մկրտութիւն քարոզում՝ մեղաց թողութեան համար: Եւ գնում էր նորա մօտ Երուսաղէմի բոլոր երկիրը և ամեն Երուսաղէմացիք, և ամենքը նորանից մկրտվում էին Յորդանան գետումն, իրանց մեղքերը խոստովանելով: Եւ Յովհաննէսը ուղտի բուրդ էր հագած, և կաշուց գօտիկ իր մէջքին, և նորա կերակուրը մարախ և վայրի մեղը էր. Եւ քարոզելով ասում էր. Ինձանից զօրաւորը գալիս է իմ ետևից, որին ես արժանի չեմ խոնարհուիլ և նորա կօշկների 4 5 6 7

մկրտեցի զձեզ ջրով, և նա մկրտեսցէ զձեզ Հոգւովն Սրբով:

9 Եւ եղև յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի Նազարեթէ Գալիլեացւոց, և մկրտեցաւ ի
10 Յովհաննէ ի Յորդանան: Եւ նոյնժամայն ընդ վերանալ ի ջրոցն, ետես ցելեալ զերկինս, և զՀոգին* Աստուծոյ իբրև զաղաւնի՝ զի իջանէր ի վերայ
11 նորա: Ձայն եղև յերկնից և ասէ. Դու ես Որդի իմ սիրելի,
12 ընդ քեզ հաճեցայ: Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա յա-
13 նապատ: Եւ էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ի Սատանայէ, և էր ընդ գազանս. և հրեշտակք պաշտէին զնա:

14 Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն Յիսուս ի Գալիլեա.
15 քարոզէր զաւետարանն Աստուծոյ՝ և ասէր. Թէ կատարեալ է ժամանակ, և հասեալ է արքայութիւն Աստուծոյ. ապաշխարեցէք և հաւատացէք յաւետարանն:
16 Իբրև անցանէր առ ծովեզերբն Գալիլեացւոց, ետես զՍիմոնն և զԱնդրէաս զեղբայր Սիմոնի, զի արկեալ էր նոցա ուռկանս ի ծով. քանզի ձկնորսք
17 էին. Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք զկնի իմ և արարից զձեզ

կապն արձակել: Ես ջրով մկրտեցի ձեզ, բայց նա Սուրբ Հոգով կ՝մկրտէ ձեզ: 8

Եւ եղաւ այն օրերումն՝ որ Յիսուսը եկաւ Գալիլեացոց Նազարէթիցն, և մկրտուեցաւ Յովհաննէսից Յորդանանի մէջ: 9
Եւ շուտով որ ջրից դուրս է գալիս՝ տեսաւ երկինքը ճղուած, և Աստուծոյ Հոգին աղաւնու պէս՝ որ իջնում էր նորա վերայ: 10
Եւ ձայն եղաւ երկնքից՝ Դու ես իմ սիրելի Որդին, որին ես հաճեցայ: 11
Եւ շուտով Հոգին նորան անապատը հանեց: Եւ նա այն- 12
տեղ անապատումն էր քառասուն օր սատանայից փորձուելով. և գազանների հետ էր, և հրեշտակները ծառայում էին նորան: 13
Եւ Յովհաննէսը մատնուելուց յետոյ, Յիսուսը եկաւ Գալիլեա, Աստուծոյ աւետարանը քարոզում էր և ասում. Թէ ժամանակը կատարուել է, և Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է. ապաշխարեցէք, և հաւատացէք աւետարանին: 14 15
Գալիլեացոց ծովի մօտովն անցկենալիս, տեսաւ Սիմոնին և նորա եղբայր՝ Անդրէասին, որ ուռկան էին գցում ծովը. վանզի ձկնորս էին: Եւ Յիսուսը նորանց ասաց. Իմ ետևից եկէք, և ես կանեմ ձեզ, որ մարդ- 16 17

* Ի Յոյն. չէ:

18 լինել որսորդս մարդկան։ Եւ
վաղվաղակի թողեալ զուռկանն,
19 գնացին զհետ նորա։ Եւ մա-
տուցեալ անտի սակաւիկ մի
յառաջ, եւտես զՅակովբոս Օ-
ւրեզեայ՝ և զՅովհաննէս զեղ-
բայր նորա, և զնոսա ՚ի նաւին
մինչ կազմէին ուռկանս, և
20 կոչեաց զնոսա։ Եւ վաղվա-
ղակի թողեալ զհայրն իւրեանց
զՕւրեզեէս ՚ի նաւին վարձ-
կանօքն հանդերձ, գնացին զհետ
նորա։
21 Եւ մտանեն ՚ի Կափառնաում,
և իսկ և իսկ ՚ի շաբաթուն
մտեալ ՚ի ժողովուրդն, ուսու-
22 ցանէր զնոսա։ Եւ զարմանա-
յին ընդ վարդապետութիւն
նորա, զի ուսուցանէր զնոսա
իբրև իշխանութեամբ՝ և ոչ
23 որպէս դպիրքն։ Եւ էր ՚ի
ժողովրդեանն նոցա այր մի,
յորում այս պիղծ դայր ՚ի նմա.
24 որ աղաղակեաց՝ և ասէ. թո՛ղլ
տուր, զի կայ մեր և քո՝
Յիսուս Նազովրեցի, եկիր կո-
րուսանել զմեզ. գիտեմք զքեզ
ո՞վ ես Սուրբդ Աստուծոյ։
25 Սաստեաց ՚ի նա Յիսուս և ասէ.
26 Կարկեա՛ց և ելլ ՚ի դմանէ։ Եւ
զարկոյց զնա այսն պիղծ. և
աղաղակեաց ՚ի ձայն մեծ, և ելլ
27 ՚ի նմանէ։ Եւ զարմացան ա-
մենեքին, մինչև հցցել ընդ
միմեանս՝ և ասել. Օ՞ր մինչ է այս
նոր վարդապետութիւն, զի
իշխանութեամբ և այսոց պղծոց
28 սաստէ և հնազանդին սմա։ Եւ

կանց որսորդ լինիք։ Եւ շուտով 18
իրանց ուռկանները թողին և
նորա ետեւից գնացին։ Եւ այն- 19
տեղից մի քիչ առաջ գնալով,
Յակոբոս Օւրեզեայն և նո-
րա եղբայր՝ Յովհաննէսին տեսաւ,
որոնք էլ նաւի մէջ ուռկանները
շինում էին, և շուտով նորանց
կանչեց։ Եւ նորանք իրանց 20
հօրը՝ Օւրեզէոսին վարձկան-
ների հետ նաւի մէջ թողելով,
նորա ետեւից գնացին։

Եւ մտնում են Կափառնա- 21
ում. և շուտով շաբաթի օրը
ժողովարանը մտաւ և սովորեց-
նում էր։ Եւ զարմանում էին 22
նորա վարդապետութեան վե-
րայ. վասնզի սովորեցնում էր
նորանց՝ ինչպէս իշխանութիւն
ունեցող և ոչ թէ դպիրների
պէս։ Եւ նորանց ժողովարա- 23
նումը մի մարդ կար՝ պիղծ դեւով
բռնուած, և աղաղակեց և ասաց.
թո՛ղ տուր. ի՞նչ բան ունիս 24
մեզ հետ, Յիսուս Նազովրեցի.
եկար մեզ կորցնելու. գիտեմ
քեզ, թէ ո՞վ ես, Աստուծոյ
Սուրբդ։ Եւ Յիսուսը սաստեց 25
նորան և ասաց. Պապանձիր,
և դուրսից դուրս եկ։ Եւ 26
պիղծ դեւը սաստիկ թափահարեց
նորան, և մեծ ձայնով աղաղա-
կելով դուրս եկաւ նորանից։
Եւ ամենքը զարմացան, մինչև 27
որ իրանց մէջ հարցուփորձ էին
անում և ասում. Այ ի՞նչ է.
ի՞նչ նոր վարդապետութիւն է

եւ յուր նորա ընդ ամենայն
կողմն Գալիլեացւոց։

29 Եւ վաղվաղակի ելեալ ՚ի
ժողովրդենէն, եկն ՚ի տուն
Սիմոնի և Անդրեայ՝ Յակոբաւ
30 և Յովհաննու հանդերձ։ Եւ
զքաւնչ Սիմոնի դնէր ջերմա-
ցեալ, և վաղվաղակի ասեն
31 ցնա վասն նորա։ Եւ մատուցեալ
ցեալ յարոյց զնա՝ կալեալ զձե-
ռանէ նորա. և եթող զնա
32 տենդն՝ և պաշտէր զնոսա։ Եւ
իբրև երեկոյ եղև ՚ի մտանել
արեգականն, բերէին առ նա
զամենայն հիւանդս և զդիւա-
33 հարս. Եւ էր ամենայն քաղաքն
34 ժողովեալ առ դրունսն. Եւ
բժշկեաց բազում հիւանդս ՚ի
պէսպէս ախտից, և դեւս բա-
զումս ելհան. և ոչ տայր խօսել
դիւացն. զի գիտէին զնա * թէ
Քրիստոսն է։

35 Եւ ընդ այգն ընդ առաւօտն
յարուցեալ ելլ և գնաց յանա-
պատ տեղի, և անդ կայր յա-
ղօթս։
36 Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝
37 և որ ընդ նմայն էին։ Եւ իբրև
գտին զնա ասեն ցնա, թէ
38 Ամենեքին խնդրեն զքեզ։ Եւ
ասէ ցնոսա. Եկա՛յք երթիցուք
և յայլ մօտաւոր գիւղաքա-
ղաքսն, զի և անդ բարոզեցից.

* Ի Յայտն էր։

դա, որ իշխանութիւնով պիղծ
դեւերին էլ սաստում է՝ և հնա-
զանդում են իրան։ Եւ նորա 28
համբաւը շուտով դուրս գնաց
Գալիլեայի ամեն կողմերը։
Եւ շուտով ժողովարանից 29
դուրս գալով, եկան Սիմոնի և
Անդրէասի տունը՝ Յակոբի և
Յովհաննէսի հետ։ Եւ Սիմոնի 30
զոքանչը տենդից պառկած էր,
և շուտով նորա համար ասացին
նորան։ Եւ մօտ եկաւ վեր- 31
կացրեց նորան՝ ձեռքը բռնելով.
և շուտով տենդը թողեց նորան,
և նա ծառայում էր նորանց։
Եւ երբոր իրիկուն եղաւ, արե- 32
գակը մտնելիս, բոլորը հիւանդ-
ները և դիւահարները նորա մօտ
բերին։ Եւ բոլոր քաղաքը ժո- 33
ղովուած էր դրան առջևը։ Եւ 34
շատ հիւանդներին բժշկեց կերպ
կերպ ցաւերով, և շատ դեւեր
հանեց. և թոյլ չէր տալիս դեւե-
րին որ խօսին. վասնզի գիտում
էին նորան։
Եւ լուսածագին առաւօտանց 35
շատ կանուխ վերկացաւ՝ դուրս
եկաւ գնաց մի անապատ տեղ,
և այնտեղ աղօթք էր անում։
Եւ նորա ետեւից գնացին Սի- 36
մոնը և նորա հետ լինողները։
Եւ երբոր նորան գտան, ասա- 37
ցին նորան, թէ Ամենքը որո-
նում են քեզ։ Եւ նորանց 38
ասաց. Եկա՛յք այդ գիւղաքաղաք-
ներն էլ գնանք, որ այնտեղ էլ

39 զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ
քարոզէր ի ժողովուրդսն նոցա
ընդ ամենայն Գալիլեացիս, և
դևս հանէր։

40 Գայ առ նա բորոտ մի,
աղաչէր՝ ի ծունր իջանէր՝ և
ասէր. *Տէր՝ եթէ կամիս, կա-
41 րող ես զիս սրբել։ Իսկ Յիսուս
գթացեալ ձգեաց զձեռն, մեր-
ձեցաւ ի նա՝ և ասէ ցնա, Կամիմ՝
42 սրբեաց։ Եւ իբրև ասացն ցնա,
վաղվաղակի գնաց ի նմանէ
բորոտութիւնն՝ և սրբեցաւ։
43 Եւ սաստեալ նմա՝ եհան զնա
արտաքս վաղվաղակի, և ասէ.
44 Օգոյշ լեր մի ումեք ինչ
ասիցես. այլ երթ ցոյց զքեզ
քահանային, և մատո վասն
սրբութեան քո պատարագ՝ զոր
հրամայեաց Մովսէս, ի վե-
45 կայութիւն նոցա։ Եւ նա
եկեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և
հռչակ հարկանել զբանն, մինչ
ոչ ևս կարող լինել նմա յայտ-
նապէս ի քաղաք մտանել, այլ
արտաքոյ յանապատ տեղիս էր.
և գային առ նա յամենայն
կողմանց։

ԳԼ. Բ

1 Եւ մտեալ դարձեալ ի Կա-
փառնաւում յետ աւուրց, Լուր

* Ի Յոյն էր։

քարոզեմ. վասնզի սորա համար
եմ եկած։ Եւ բոլոր Գալի- 39
լեայի մէջ նորանց ժողովարան-
ներումը քարոզում էր, և դևերը
հանում։

Եւ մի բորոտ եկաւ նորա մօտ, 40
աղաչում էր նորան և ծունր էր
դնում առջևը և ասում նորան.
Թէ որ կամենաս՝ կարող ես ինձ
սրբել։ Յիսուսն էլ գթալով 41
ձեռը մեկնեց, նորան դիպաւ, և
ասաց նորան. Կամենում եմ,
սրբուիր։ Եւ երբոր ասաց 42
նորան, շուտով բորոտութիւնը
գնաց նորանից, և սրբուեցաւ։
Եւ նորան սաստելով՝ շուտով 43
դուրս հանեց նորան, և ասաց
նորան։ Օգոյշ կաց ոչ ոքի 44
ոչինչ չասես. այլ գնա՝ քեզ
ցոյց տուր քահանային, և քո
սրբութեան համար մատուցիր
այն, որ Մովսէսը հրամայեց,
նորանց վկայութիւն լինելու հա-
մար։ Եւ նա դուրս գնալով, 45
սկսեց շատ բաներ քարոզել և
այն բանը տարածել, մինչև որ
նա այլևս չէր կարողանում
յայտնապէս քաղաքը մտնել, այլ
դուրսը անապատ տեղերում էր,
և ամեն կողմերից գալիս էին
նորա մօտ։

ԳԼ. Բ

Եւ դարձեալ մտաւ Կափառ- 1
նայում հինգ օրից յետոյ,

եղև լսեցան թէ տանն է. և ժողո-
վեցան բազումք՝ մինչև տեղի ևս
չէր լինել՝ և ոչ առ դրանն. և
3 խօսէր նոցա զբանն։ Եւ գային
առ նա՝ բերէին անդամալոյծ մի
4 բարձեալ ի չորից։ Եւ իբրև
ոչ կարէին մերձենալ առ նա
յամբոխէ անտի, քակեցին
զտարին՝ ուր էր Յիսուս, և
բացեալ զառաստաղն իջուցին
զմահիճն յորում կայր ան-
5 դամալոյծն։ Եւ տեսեալ Յի-
սուսի զհաւատս նոցա, ասէ ցան-
դամալոյծն. Որդեակ թողեալ
6 լիցին քեզ մեղք քո։ Եւ էին
ոմանք ի դպրաց անտի՝ որ անդ
նստէին. և խորհէին ի սիրտս
7 իւրեանց. Օ՞րինչ է այս՝ որ
խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ
կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ
8 մի Աստուած։ Եւ գիտաց Յիսուս
յոգի իւր՝ թէ այնպէս խորհին
ի սիրտս իւրեանց, և ասէ. Օ՞ի
խորհիք զայդ ի սիրտս ձեր։
9 Օ՞րինչ դիւրին է, ասել ցան-
դամալոյծն՝ թողեալ լիցին քեզ
մեղք քո, եթէ ասել՝ Արի՛ առ
զմահիճս քո և *երթ ի տուն
10 քո՝։ Այլ զի գիտասջիք եթէ
իշխանութիւն ունի Որդի մար-
դոյ ի վերայ երկրի թողուլ
զմեղս, ասէ ցանդամալոյծն.
11 Ցքեզ ասեմ, Արի՛ առ զմահիճս
12 քո՝ և երթ ի տուն քո։ Եւ
յարեաւ վաղվաղակի առեալ
զմահիճն, ել առաջի ամենե-

Եւ լսեցաւ թէ տանն է, և 2
շուտով շատ մարդիկ ժողո-
վուեցան, մինչև որ տեղ չկար
և ոչ էլ դրան մօտ. և խօսում
էր նորանց Աստուծոյ խօսքը։
Եւ գալիս էին նորա մօտ, և մի 3
անդամալոյծ էին բերում չորս
հոգով վեր առած։ Եւ երբոր 4
չկարողացան մօտենալ նորան
ամբոխի պատճառաւ, այն
պատի ծածքը քանդեցին, ուր էր
Յիսուսը, և ծակ բանալով այն
մահիճն իջեցրին, որի վերայ
անդամալոյծը պառկած էր։ Յի- 5
սուսն էլ նորանց հաւատքը
տեսնելով, ասաց անդամալոյծին.
Որդեակ, թողուած լինին քեզ
քո մեղքերը։ Եւ դպիրներից 6
ոմանք այնտեղ նստած էին. և
իրանց սրտերումը միտք էին
անում. Ինչո՞ւ համար սա այս- 7
պէս հայհոյութիւններ է խօ-
սում. ո՞վ կարող է մեղք թողել,
եթէ ոչ մէկը՝ Աստուած։ Եւ 8
Յիսուսը իր հոգու մէջ շուտով
գիտաց թէ իրանց սրտումն
այսպէս են միտք անում, և
ասաց նորանց. Ինչո՞ւ էք ձեր
սրտերումն այդ բաները մտա-
ծում։ Ո՞րն է հեշտ. անդամա- 9
լոյծին ասել՝ թողուած լինին քեզ
քո մեղքերը, կամ ասել՝ Ա՛ել
կաց, քո մահիճն առ և մտն նկ։
Բայց որ իմանաք, թէ Որդին 10
մարդոյ իշխանութիւն ունի եր-
կրի վերայ մեղքեր թողելու.

* Ի Յոյն, շրջեաց

ցուն. մինչև զարմանալ ամենե-
ցուն, և փառաւոր առնել
զԱստուած՝ և ասել թէ Այս-
պիսի ինչ երբէք ոչ տեսաք:

13 Եւ էլ զարձեալ 'ի ծովեզրն,
և ամենայն ժողովուրդն գայր
առ նա. և ուսուցանէր զնոսա:
14 Եւ մինչդեռ անցանէր, ետես
զՂևի Ալփեայ՝ զի նստէր 'ի
մաքսաւորութեան՝ և ասէ ցնա.
Ե՛կ զկնի իմ. և յարուցեալ
15 գնաց զկնի նորա: Եւ եղև 'ի
բազմելն նորա 'ի տան նորա,
և բազում մաքսաւորք * բազ-
մեալ էին ընդ Յիսուսի՝ և ընդ
աշակերտսն նորա. քանզի էին
բազումք որ երթային զհետ
16 նորա: Իսկ դպիրքն և փա-
րիսեցիք իբրև տեսին՝ թէ ուտէ
ընդ մաքսաւորս և ընդ մեղա-
ւորս, ասեն ցաշակերտսն նորա.
Օ՞ի է՝ զի ընդ մեղաւորս և
ընդ մաքսաւորս † ուտէր և
17 ըմպէր՝: Իբրև լուաւ Յիսուս՝
ասէ ցնոսա. Ոչ ինչ է պիտոյ
բժիշկ ողջոց, այլ հիւանդաց,
և ո՛չ եկի կոչել զարդարս՝ այլ
զմեղաւորս:

* 'Ի Յոյնն, և մեղաւորք
† 'Ի Յոյնն, ուտէ և ըմպէ

(անդամալոյծին ասաց). Ասում
եմ քեզ. վեր կաց, քո մահիճն
առ և գնա քո տունը: Եւ նա 12
շուտով վերկացաւ, մահիճն
առաւ, և ամենի առջեւը դուրս
գնաց. մինչև որ ամենքը զար-
մանում էին և Աստուծոյն փա-
ռաւորում ասելով, թէ Երբէք
այսպիսի բան չենք տեսել:

Եւ դարձեալ ղէպի ծովի 13
եզրը դուրս գնաց, և բոլոր ժո-
ղովուրդը նորա մօտ էր գալիս.
և սովորեցնում էր նորանց: Եւ 14
անցնելիս տեսաւ Ղևի Ալփեա-
նին՝ նստած մաքսաւորութեան.
և նորան ասաց. Իմ ետևից եկ.
և վերկացաւ գնաց նորա ետևից:
Եւ եղաւ, երբոր նորա տանը 15
սեղանի վերայ նստած էր, շատ
մաքսաւորներ և մեղաւորներ
էլ Յիսուսի և նորա աշակերտ-
ների հետ սեղան էին նստած,
վասն զի շատ մարդիկ էին, որ
նորա ետևից գնում էին: Բայց 16
դպիրները և փարիսեցիները
տեսնելով որ մաքսաւորների և
մեղաւորների հետ ուտում է,
ասացին նորա աշակերտներին.
Այդ ինչ է, որ մաքսաւորների
և մեղաւորների հետ ուտում է
և խմում է: Եւ Յիսուսը երբ- 17
որ լսեց, ասաց նորանց. Ա-
ռողջներին բժիշկ պէտք չէ, այլ
հիւանդներին. չեկայ արդար-
ներին այլ մեղաւորներին կանչել
ապաշխարութեան:

18 Եւ էին աշակերտքն Յով-
հաննու՝ և * փարիսեցիքն 'ի
պահս. գան և ասեն ցնա.
Ընդէ՞ր աշակերտքն Յովհան-
նու՝ և * փարիսեցիքն պահեն,
և քո աշակերտքդ ոչ պահեն:
19 Եւ ասէ ցնոսա Յիսուս. Մի՞թէ
մա՞թի ինչ իցէ որդւոց առա-
գաստի մինչ ընդ նոսա իցէ
փեսայն՝ պահել. ցորքան ընդ
իւրեանս ունիցին զփեսայն, ոչ
20 է մարթ պահել: Այլ եկեսցեն
աւուրքն՝ յորժամ վերասցի 'ի
նոցանէ փեսայն, և ապա պա-
21 հեսցեն յաւուրն յայնմիկ: Ո՞չ
ոք կապերտ նոր անթափ ար-
կանէ 'ի վերայ հնացեալ ձորձոյ.
ապա թէ ոչ՝ առնու լրութեամբն
իւրով նորն 'ի հնոյ անտի, և
22 չար ևս պատառումն լինի: Եւ
ո՞չ ոք արկանէ գինի նոր 'ի տիկս
հինս. ապա թէ ոչ՝ պայթուցա-
նէ գինին զտիկսն. գինին հե-
ղու, և տիկքն կորնչին, այլ
գինի նոր 'ի տիկս նորա արկա-
նելի է:

23 Եւ եղև նմա 'ի շաբաթու
անցանել ընդ արտորայս. և
աշակերտքն 'ի գնալն իւրեանց՝
սկսան հասկ կորզել † և ուտել՝:
24 Եւ փարիսեցիքն ասեն ցնա.
Տես՝ զի՞նչ գործեն † աշա-
կերտքն քո՝՝ 'ի շաբաթու՝ զոր չէ՞

Եւ Յոհաննէսի աշակերտ- 18
ները և փարիսեցիները ծոմ էին
պահում և եկան նորան ասա-
ցին. Ինչո՞ւ Յոհաննէսի ու փա-
րիսեցիների աշակերտները ծոմ
են պահում, բայց քո աշա-
կերտները ծոմ չեն պահում:
Եւ Յիսուսը նորանց ասաց. 19
Մի՞թէ կարող են հարսանիքի
որդիքը ծոմ պահել՝ քանի որ
փեսան նորանց հետ է. քանի
որ փեսան իրանց հետ ունին,
չեն կարող ծոմ պահել: Բայց 20
օրեր կ'գան, որ փեսան նորան-
ցից վեր կ'առնուի, և ապա
այն օրերումը կ'պահեն: Եւ 21
ոչ ով չլուացուած կապերտից
կարկատան չի գցիլ հին հան-
գերձի վերայ, ապա թէ ոչ՝
նորն իր ուժովն այն հնիցն
կ'առնէ, և պատառուածքն էլ
աւելի չար կ'լինի: Եւ ոչ ով 22
նոր գինին հին տիկերի մէջ չի
ածիլ. ապա թէ ոչ՝ նոր գինին
տիկերը կ'պատառէ, և գինին
կ'թափուի, տիկերն էլ կ'կորչին.
այլ նոր գինին նոր տիկերի մէջ
պէտք է ածուի:

Եւ եղաւ որ նա շաբաթի 23
օրումն արտերի մէջովն անցնում
էր և նորա աշակերտներն սկսե-
ցին գնալ հասկ պոկելով: Եւ 24
փարիսեցիներն ասացին նորան.
Տես, ի՞նչ են գործում շա-
բաթի օրը, որ արժան չէ: Եւ 25

* 'Ի Յոյնն, փարիսեցւոցն
† 'Ի Յոյնն չէ:

25 արժան։ Եւ ասէ ցնոսա Յի-
սուս. Ո՞չ երբէք իցէ ընթեր-
ցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ,
յորժամ պիտոյն եղև՝ և քաղ-
ցեաւ նա և որ ընդ նմայն էին։
26 Օ՛խմբդ եմուտ 'ի տունն Աս-
տուծոյ առ Աբիաթարաւ քա-
հանայապետիւ, և զհացսն զա-
ռաջաւորութեան եկեր և ետ
այնոցիկ որ ընդ նմայն էին,
զոր ո՛չ էր օրէն ուտել, բայց
27 միայն քահանայիցն։ Եւ ասէ
ցնոսա. Շաբաթի վասն մար-
դոյ եղև, և ո՛չ եթէ մարդ վասն
28 շաբաթու։ Այսպէս ուրեմն՝ տէր
է Որդի մարդոյ և շաբաթու։

ԳԼ. Գ

1 Եւ եմուտ միւսանգամ 'ի
ժողովուրդն, և էր անդ այր
մի որոյ ձեռն գօսացեալ էր։
2 Եւ սպասէին նմա եթէ բժշ-
կիցէ զնա 'ի շաբաթուն՝ զի
3 չարախօսեսցեն զնմանէ։ Եւ
ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ
4 էր. Արի, անց 'ի մէջ։ Եւ ասէ
ցնոսա. Օ՛ի՞նչ արժան է 'ի
շաբաթու, բարի՞ ինչ գործել՝
եթէ չար առնել, ոգի՞ մի ապրե-
ցուցանել եթէ կորուսանել. և
5 նոքա լռեցին։ Եւ հայեցեալ
Յիսուսի զնոքօք լի ցասմամբ,
տրտմեալ վասն կուրութեան
սրտից նոցա՝ ասէ ցայրն. Զգեա՛
զձեռն քո. և նա ձգեաց, և
6 ողջացաւ ձեռն նորա։ Եւ ել-
եալ արտաքս վաղվաղակի փա-

նա ասաց նորանց. Դուք երբէք
չէ՞ք կարդացել, թէ Դաւիթն
ինչ արաւ, երբոր պէտք ունէր,
և սովեց ինքն և նորա հետն
լինողներն։ Ինչպէս Աստուծոյ 26
տունը մտաւ Աբիաթար քահա-
նայապետի օրին. և առաջա-
ւորութեան հացերը կերաւ, որ
ուրիշի օրէնք չէր ուտել, բայց
միայն քահանայից. և՝ իր հետ
լինողներին էլ տուաւ։ Եւ նո- 27
րանց ասաց. Շաբաթը մար-
դոյ համար եղաւ, և ոչ թէ
մարդը շաբաթի համար։ Ու- 28
րեմն Որդին մարդոյ շաբաթի
էլ տէրն է։

ԳԼ. Գ

Եւ դարձեալ ժողովարանը 1
մտաւ, և այնտեղ մի մարդ
կար՝ ձեռքը չորացած։ Եւ 2
սպասում էին նորան՝ թէ արդ-
եօք շաբաթ օրումն կ՚բժշկէ
նորան՝ որ չարախօսեն նորանից։
Եւ ասաց ձեռքը չորացած մար- 3
դուն. Կանգնիր մէջ տեղը։ Եւ 4
ասաց նորանց. Արժա՞ն է շա-
բաթի օրը բարի գործել՝ թէ
չար գործել. մի հոգի ապրեց-
նել՝ թէ սպանել. իսկ նորանք
լռեցին։ Ա՛յս էլ բարկութիւնով 5
չորս կողմովը նորանց մտիկ
տալով նորանց սրտերի կուրու-
թեան համար տրտմած՝ այն
մարդուն ասաց. Ձգեա՛ մեկնիր.
և նա մեկնեց, և նորա ձեռքը
ողջացաւ ինչպէս միւսը։ Եւ 6

բիսեցիքն՝ Հերովդիանոսօքն հան-
դերձ, խորհուրդ առնէին վասն
նորա՝ թէ զիա՞րդ կորուսցեն
զնա։
7 Իսկ Յիսուս աշակերտօքն
իւրովք գնաց 'ի ծովեղերն. և
բազում ժողովուրդ 'ի Գալի-
լեացւոց երթային զհետ նորա.
8 և 'ի Հրէաստանէ։ Եւ Յերու-
սաղէմէ *, և յայնկոյս Յորդա-
նանու, և որք 'ի Տիւրոսէ և 'ի
Սիդոնէ, բազում ժողովուրդ
իրրև լսէին որչափ ինչ առնէր,
9 գային առ նա։ Եւ ասէ ցա-
շակերտսն իւր, զի նաւակ մի
պատրաստական կայցէ նմա վասն
ամբոխին՝ զի մի նեղեսցեն զնա։
10 Զանգի զբազումն բժշկեաց.
մինչ գալ խռնել զնովաւ՝ զի
մերձեսցին առ նա, որք ունէին
11 ախտս ինչ։ Եւ այսք պիղծք
յորժամ տեսանէին զնա, ան-
կանէին առաջի նորա, աղաղա-
12 կէին և ասէին. Թէ Դու ես
Որդին Աստուծոյ. և նա յոյժ
սաստէր նոցա, զի մի յայտնի
առնիցեն զնա։

13 Ելանէ 'ի լեառն՝ և կոչէ առ
ինքն զորս ինքն կամեցաւ, և չո-
14 քան առ նա։ Եւ արար երկո-
տասանս՝ զի իցեն զնովաւ, և զի
առաքեսցէ զնոսա քարոզել.
15 Եւ ունել իշխանութիւն բժշկ-
ել զդիւս՝ և հանել զդևս։

փարիսեցիները շուտով դուրս
գնացին Հերոդէսեանների հետ,
նորա դէմ խորհուրդ էին անում,
թէ ինչպէս կորցնեն նորան։
Եւ Յիսուսը իր աշակերտ- 7
ների հետ ծովի մօտ գնաց. և
շատ բազմութիւն նորա ետևից
գնում էին Գալիլեայից և
Հրէաստանից։ Եւ Երուսա- 8
ղէմից, և Եդոմայից, և Յոր-
դանանի այն կողմից, և նորանք
էլ որ Տիւրոսի և Սիդոնի շրջա-
կայքից էին, շատ բազմութիւն,
երբոր լսում էին, թէ ինչ բաներ
էր անում, նորա մօտ էին
գալիս։ Եւ իր աշակերտներին 9
ասաց, որ մի պզտիկ նաւ
պատրաստ լինի իրան համար
այն ամբոխի պատճառով, որ
չնեղեն նորան։ Զանգի շա- 10
տերին բժշկեց. մինչև որ նորա
վերայ էին թափվում, որ նորան
դիպչեն, որոնք որ ցաւ ունէին։
Եւ պիղծ ոգիները երբոր նո- 11
րան տեսնում էին, ընկնում էին
նորա առջևը, աղաղակում էին
և ասում. Թէ Դու ես Աստու- 12
ծոյ Որդին. և նա շատ սաստում
էր նորանց, որ իրան չյայտնեն։
Եւ վեր եկաւ լեառը և իր 13
մօտ կանչեց որոնց որ ինքը
կամեցաւ. և նորա մօտ գնացին։
Եւ տասներկու հոգի կարգեց, 14
որ իր հետ լինին, և որ նո-
րանց ուղարկէ՝ քարոզելու։ Եւ 15
իշխանութիւն ունենան ցաւերը

* 'Ի Յոյն, և յԵդոմայ

16 Եւ եղ անուն Սիմոնի՝ Պետ-
17 րոս. Եւ Յակոբու Զեբեդեայ՝ և Յովհաննու եղբօրն Յակոբայ, եղ նոցա անուանս Բոանէրկէս, որ է Որդիք որոտ-
18 ման. Եւ զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթուղիմէոս, և զՄատթէոս զմաքսաւորն, և զԹովմաս, և զՅակոբոս Ալփեայ, և զԹադէոս, և զՍիմոն Կանանացի. Եւ զՅուդա Իսկարիովտացի, որ և մատնեացն զնա:

20 Գան ՚ի տուն, և գայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն. մինչ զի և հաց ևս ոչ ժամանել
21 ուտել նոցա: Եւ իբրև լուան որ իւրքն էին՝ ելին ունել զնա. զի համարէին թէ մոլեգնեալ
22 է: Եւ գրիչքն՝ որ յԵրուսաղէմէ իջեալ էին, ասէին թէ Բէելզեբուղ գոյ ՚ի նմա, և իշխանաւ դիւացն հանէ դա-
23 զդեւս: Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն, առակօք խօսէր ընդ նոսա. Զիա՞թէ կարէ Սատանայ զՍատանայ հանել:
24 Եւ արդ եթէ թագաւորութիւն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ թա-
25 գաւորութիւնն այն: Եւ եթէ տուն յանձն իւր բաժանեսցի,
26 ոչ կարէ կալ տունն: Եւ եթէ Սատանայ ՚ի վերայ անձին իւրոյ յարեաւ և բաժանեալ է, ոչ կարէ կալ. այլ վախճանեալ
27 է: Այլ ոչ ոք կարէ զկարասի հզօրի մտեալ ՚ի տուն նորա՝ բժշկելու՝ և զեւերսն հանելու. Եւ Սիմոնի անուանն Պետրոս
16 դրաւ: Եւ Զեբեդեան Յա-
17 կոբին՝ և Յակոբի եղբայր Յոհաննէսին. և նոցանց անուանն դրաւ, որ է որոտմանի որդիք. Եւ Անդ-
18 րէասին, և Փիլիպպոսին, և Բարթուղիմէոսին, և Մատթէոսին, և Թոմասին, և Յակոբոս Ալփեանին, և Թադէոսին, և Սիմոն Կանանացւոյն: Եւ Յուդա Իսկարիոտացւոյն,
19 նա որ մատնեաց էլ նորան:

Եւ եկան տուն, և դարձեալ
20 հաւաքուեցաւ ամբոխն, մինչև որ չկարողացան հաց էլ ուտել:
Եւ նորա ընտանիքն լսելով
21 դուրս եկան նորան բռնելու. վասնզի ասում էին թէ դժուել է: Եւ դպիրներն որ Երու-
22 սաղէմից իջեալ էին, ասում էին, թէ Բէելզեբուղ ունի, և թէ դեւերի իշխանովն է հանում դեւերը: Եւ նորանց իր մօտ
23 կանչելով առակներով ասում էր նորանց. Ի՞նչպէս սատանան կարող է սատանային հանել:
24 Եւ եթէ մի թագաւորութիւն իր միջումը բաժանուի, այն թա-
25 գաւորութիւնը կարող չէ կենալ: Եւ եթէ մի տուն իր միջումը բաժանուի, այն տունը
26 կարող չէ կենալ: Եւ եթէ սատանան իր անձի վերայ վերկացաւ և բաժանուած է, կարող չէ կենալ, այլ վերջացած
27 է: Ոչ ոք կարող չէ մի զօ-

աւար հարկանել, եթէ ոչ նախ զՀզօրն կապիցէ, և ապա զտունն
28 նորա աւար հարկանիցէ: Ամէն ասեմ ձեզ. զի Ամենայն թողցի որդւոց մարդկան մեղք և հայ-
29 հոյութիւնք՝ որչափ և հայհոյիցեն. Բայց որ հայհոյեսցէ զՀոգին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան այլ պարտապան լիցի յաւիտենից
30 մեղաց. Զի ասէին, թէ Ա՛յս պիղծ գոյ ՚ի նմա:

31 Գան եղբարքն և մայր նորա, և արտաքոյ կացեալ՝ յղեցին և
32 կոչէին զնա: Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր. և իբրև ասացին ցնա, Ա՛հաւասիկ մայր քո և եղբարք քո կան արտաքոյ, և խնդրեն զքեզ,
33 Պատասխանի ետ նոցա և ասէ. Ո՞վ է իմ մայր, կամ եղբարք:
34 Հայեցաւ շուրջ զկերև յաշակերտսն զի նստէին, և ասէ. Ա՛հաւասիկ մայր իմ և եղբարք
35 իմ. Զի որ առնիցէ զկամս Աստուծոյ, նա է իմ եղբայր և քոյր և մայր:

ԳԼ. Դ

1 Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերքն. և խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչև ՚ի նաւ մտանել նմա, և

բաւորի տունը մտնելով, նորա կարասիքը յափշտակել, եթէ առաջ այն զօրաւորին չկապէ, և ապա նորա տունը կը յափշտակէ: Ճշմարիտն ասում եմ
28 ձեզ՝ թէ Մարդկանց որդոցն ամէն մեղքերը և հայհոյանքները, որքան որ հայհոյեն էլ,
29 կ՚թողուին. Բայց ով որ Սուրբ Հոգին հայհոյէ, յաւիտեան թողութիւն չի ունենալ. այլ
30 յաւիտենական դատապարտութեան պարտական կը լինի: Այ ասելն ասում էին, թէ պիղծ ոգի կայ նորանում:

31 Եւ յետոյ նորա եղբարքը և մայրը եկան, և դուրսը կանգնած՝ նորա մօտ ուղարկեցին,
32 կանչեցին նորան: Եւ ժողովուրդը նորա չորս կողմովը նստած էր. և ասացին նորան. Ա՛հա մայրդ և եղբարքդ դուրսը
33 քեզ ուզում են: Եւ նորանց պատասխանեց և ասաց. Ո՞վ է իմ մայրը կամ իմ եղբարքը:
34 Եւ իր չորս կողմովը նստածներին մտիկ տուաւ և ասաց. Ա՛հա իմ մայրը և իմ եղբարքը:
35 Այ ասելն ով որ կատարէ Աստուծոյ կամքը, նա է իմ եղբայրը և քոյրը և մայրը:

ԳԼ. Դ

1 Եւ դարձեալ սկսեց ծովի մօտ սովորեցնել և շատ ամբոխ հաւաքուեցաւ նորա մօտ, մինչև որ նաւի մէջ մտաւ. և ծովի

նստել 'ի ծովուն. և ամենայն
ժողովուրդն ցծովեզերքն ըղցա-
2 մաքն ունէին: Եւ ուսուցանէր
զնոսա առակօք բազում մնչ. և
ասէր նոցա 'ի վարդապետու-
3 թեան իւրում: Լուարուք.
ահաւասիկ եկ սերմանող սեր-
4 մանել: Եւ եղև 'ի սերմանելն,
ոմն անկաւ առ ճանապարհաւ և
եկն թռչուն և եկեր զնա:
5 Եւ այլն անկաւ յապառաժի,
ուր ոչ գոյր հող բազում. և
վաղվաղակի բուսաւ. քանզի ոչ
6 գոյր հիւթ երկրին. Եւ յոր-
ժամ ծագեաց արև՝ ջեռաւ, և
զի ոչ գոյին արմատք՝ ցամաքե-
7 ցաւ: Եւ այլն անկաւ 'ի մէջ
փշոց. եկին փուշքն և հեղձու-
8 ցին զնա. և պտուղ ոչ եւ: Եւ
այլն անկաւ յերկիր բարւոք.
և եկեալ աճեցեալ տայր պտուղ,
և բերէր ընդ միոյ երեսուն և
ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ
9 հարիւր: Եւ ասէր. Որ ունիցի
10 ականջս լսելոյ՝ լուիցէ: Եւ
իբրև եղև առանձինն՝, հարցին
ցնա որ զնովաւն էին աշակեր-
11 տաքն հանդերձ՝ զառակն: Եւ
ասէ ցնոսա. Ձեզ տուեալ է
գիտել զխորհուրդս արքայու-
թեան Աստուծոյ, բայց նոցա
որ արտաքինքն են՝ ամենայն ինչ
12 առակօք լինի. Զի տեսանելով
տեսցեն և մի տեսցեն. և լսելով
լուիցեն և մի իմասցին. զի մի
երբեք դարձցին՝ և թողցի նոցա:
13 Եւ ասէ ցնոսա. Ո՞չ գիտէք
զառակս զայս, և զինչդ զամե-
վերայ նստաւ. և բոլոր ամբոխը
ծովի մնա ցամաքի վերայ էին:
2 Եւ շատ բաներ էր սովորեց-
նում նորանց առակներով. և իր
վարդապետութեան մէջ ասում
3 էր նորանց. Լսեցէք. ահա սերմ
ցանողը դուրս գնաց սերմ ցանե-
4 լու: Եւ եղաւ որ սերմանելու
ժամանակ մի քանին ճանա-
պարհի մնա ընկաւ, և երկնքի
թռչունները եկան և կերան
5 նորան: Եւ ուրիշն ընկաւ քար-
քարուտ տեղ, շատ հող չկար,
և շուտով բուսաւ՝ հողը խոր
6 չլինելուն համար: Եւ երբոր
արեգակը ծագեց՝ տաքացաւ և
արմատ չունենալուն համար չո-
7 բացաւ: Եւ ուրիշն ընկաւ փշե-
րի մէջ, և փշերն գուրս եկան
8 և խեղդեցին նորան. և պտուղ
չտուաւ: Եւ ուրիշն ընկաւ
բարի երկիրը, և պտուղ էր
տալիս, որ գուրս եկաւ և աճե-
ցաւ, և մէկը բերում էր երե-
սուն՝ և մէկը վաթսուն՝ և մէկը
9 հարիւր: Եւ ասում էր նո-
10 բանց. Ով որ լսելու ականջ
ունի՝ թող լսէ: Եւ երբոր
մենակ էր, նորա մնացեալները այն
տասներկուքի հետ հարցրին նո-
11 բան այն առակը: Եւ ասաց
նորանց. Ձեզ տրուած է Աս-
տուծոյ արքայութեան խոր-
հուրդը գիտել, բայց նորանց որ
12 դրսի են, ամեն բան առակներով
է լինում. Որ տեսնելով տես-
նեն՝ և չտեսնեն, և լսելով
լսեն և չմանան. մի գուցէ

14 նայն առակսն գիտիցէք: Որ
15 սերմանէն՝ զբանն սերմանէ: Եւ
նոքա են որ առ ճանապարհաւն,
ուր բանն սերմանի. և յորժամ
լսեն զնա, գայ Սատանայ և
հանէ զբանն սերմանեալ 'ի
16 սիրտս նոցա: Եւ նոքա են որ
յապառաժին սերմանեցան. որք
յորժամ լսիցեն զբանն, վաղվա-
ղակի խնդութեամբ ընդունին.
17 Եւ զի ոչ ունին արմատս յան-
ձինս, այլ առ ժամանակ մի են.
ապա 'ի հասանել նեղութեան
կամ հալածման վասն բանին,
18 վաղվաղակի գայթագղին: Իսկ
որ 'ի մէջ փշոցն սերմանեցան՝
նոքա են, որ իբրև զբանն լսեն,
19 Եւ հոգք աշխարհիս և պատ-
րանք մեծութեան* մտանեն և
հեղձուցանեն զբանն՝ և ան-
20 պտուղ լինի: Եւ նոքա են որ
յերկիրն բարւոք սերմանեցան,
որք լսեն զբանն՝ և ընդունին և
տան պտուղ՝ ընդ միոյ երեսուն
և ընդ միոյ վաթսուն և ընդ
միոյ հարիւր:

21 Եւ ասէ ցնոսա. Մի թէ գայ
ճրագ, զի ընդ գրուանաւ դնիցի,

* 'Ի Յոյն, և ցանկութիւն այլոց

գառնան, և մեղքերը թողուին
նորանց: Եւ նորանց ասաց. 13
Չէք գիտում այս առակը. և
թ'նչպէս ամեն առակները կ'գի-
տենաք: Սերմողը խօսքն է 14
սերմում: Եւ նորանք են ճա- 15
նապարհի վերայինները, ուր
բանը սերմնում է, և երբոր
լսում են, շուտով գալիս է
սատանան և վեր առնում նորանց
սրտերումը սերմուած խօսքը:
Նոյնպէս էլ քարքարուտ տեղը 16
սերմուածները նորանք են,
որոնք, երբոր խօսքը լսում են,
շուտով ուրախութիւնով ըն-
դունում են նորան. Եւ իրանց 17
մէջ արմատ չունին, այլ առ-
ժամանակեայ են. յետոյ երբոր
այն խօսքի համար նեղութիւն
կամ հալածմունք է լինում,
շուտով գայթակղում են: Եւ 18
փշերի մէջ սերմուածները նո-
րանք են, որ խօսքը լսում են,
Բայց աշխարհիս հոգսերը և 19
հարստութեան խաբէութիւնը և
ուրիշ բաների ցանկութիւն-
ները մտնում են խօսքը խեղ-
դում. և անպտուղ է լինում:
Բայց այն բարի երկրի վերայ 20
սերմուածները սորանք են, որ
խօսքը լսում են, և ընդունում
են, և պտուղ են տալիս՝ մէկը
երեսուն, և մէկը վաթսուն՝ և
մէկը հարիւր:
Եւ ասաց նորանց. Մի թէ 21
ճրագը գալիս է, որ գրուանի

կամ ընդ մահճաք. ոչ ապաքէն
'ի վերայ աշտանակի դնիցի:
22 Զի չէ ինչ 'ի ծածուկ որ թէ
ոչ յայտնեսցի. և ոչ եղև ինչ
գաղտնի, եթէ ոչ 'ի յայտ
23 գայցէ: Եթէ ոք ունիցի ականջս
լսելոյ, լուիցէ:
24 Եւ ասէ ցնոսա. Տեսէք զինչ
լսէքդ, և յաւելցի ձեզ որոց
լսէքդ: Որով չափով չափէք՝
25 նովին չափեսցի ձեզ: Որ ոք
ունիցի՝ տացի նմա. և որ ոչն
ունիցի՝ և զոր ունիցին՝ բարձցի
'ի նմանէ:

26 Եւ ասէր. Այսպէս է ար-
քայութիւն Աստուծոյ. որպէս
զի այր մի արկանիցէ սերմանիս
27 յերկիր. Եւ ննջիցէ և յառնիցէ
զցայգ և զցերեկ, և սերմանիքն
բուսանիցին և աճիցեն. և նա
28 ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին
բերէ զպտուղ. նախ զխոտն և
ապա զհասկն, ապա զցորեանն
29 ատաք 'ի հասկին: Այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվա-
զակի առաքի մանգաղ. զի
հասեալ են հունձքն:

30 Եւ ասէր. Որո՞վ նմանեցուս-
ցուք զարքայութիւնն Աստու-
ծոյ, կամ որո՞վ առակաւ առա-
31 կեսցուք զնա: Որպէս հատն
մանանեխոյ՝ որ յորժամ սերմա-
նիցի յերկրի, փոքրագոյն է
քան զամենայն սերմանիս որ են
32 յերկրի. Եւ յորժամ սերմա-
նիցի, բուսանի և լինի մեծ քան
կամ մահճի տակ դրուի. չէ՞
թէ որ ճրագակալի վերայ դրուի:
Ա՛սանզի ծածուկ բան չկայ, որ 22
չյայտնուի. և մի թաքուն բան
չեղաւ, որ դէպի յայտնութիւն
չգար: Եթէ մէկը լսելու ականջ 23
ունի, թող լսէ:
Եւ ասաց նորանց. Տեսէք՝ 24
ինչ էք լսում, ինչ չափով որ
չափէք նորանով էլ ձեզ կըչա-
փուի, և կ'աւելնայ ձեզ լսող-
ներիդ: Ա՛սանզի ով որ ունի, 25
նորան կը տրուի. և ով որ
չունի, այն էլ որ ունի՝ վեր
կ'առնուի նորանից:
Եւ ասում էր. այսպէս է 26
Աստուծոյ արքայութիւնն, որ-
պէս թէ մի մարդ սերմ դցէր
հողի մէջ: Եւ գիշեր ցերեկ 27
քնէ և վերկենայ. և սերմը
բուսնէ և աճի. այնպէս որ չէ
գիտում: Ա՛սանզի երկիրն ինքն 28
իրան պտուղ է բերում, առաջ
խոտը, յետոյ հասկը, և նրանից
յետոյ լցուած ցորեն հասկի
մէջ: Բայց երբոր պտուղը 29
կ'տայ, շուտով կ'ուղարկէ ման-
գաղը, վասնզի հունձքը հա-
սել է:
Եւ ասում էր. Ինչի՞ նմանե- 30
ցընենք Աստուծոյ արքայու-
թիւնը, կամ ի՞նչ առակով
առակի բերենք նորան: Նման 31
է մանանեխի հատի, որ երբոր
հողի մէջ սերմվում է, երկրիս
վերայ եղած ամեն սերմերից
փոքր է. Եւ երբոր սերմվում 32
է, բուսնում է և ամեն բան-

զամենայն բանջար, և արձակէ
ոստս մեծամեծս, մինչև բաւա-
կան լինել ընդ հովանեաւ նորա
թռչնոց երկնից բնակել:

33 Եւ այնպիսի առակօք խօսէր
ընդ նոսա զբանն, որպէս կարող
34 լինէին լսել. Եւ առանց առակի
ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց
առանձինն աշակերտացն իւրոց
մեկնէր զամենայն:

35 Եւ ասէ ցնոսա յաւուրն
յայնմիկ՝ իրրև ընդ երեկս լինէր.
Եկայք անցցուք յայն կողմն:
36 Թողուն զժողովուրդն, և առ-
նուն զնա նաւուն հանդերձ, և
զայլ ևս նաւսն որ էին ընդ նմա:
37 Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, և
զալիսն 'ի նաւն զկղզոյր, մինչ-
38 գրեթէ լի իսկ լինել: Եւ ինքն
ննջէր 'ի խելս նաւին 'ի վերայ
բարձի. զարթուցանէին զնա և
ասէին. Ա՛ստուած, ոչինչ է
քեզ փոյթ, զի կորնչիմք աւա-
39 սիկ: Եւ զարթուցեալ սաստեաց
հողմոյն և ծովուն, ասէ. Դա-
դարեա, կարկեաց, և դադարեաց
հողմն, և եղև խաղաղութիւն
40 մեծ: Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր
այդպէս վատասիրտք էք, չէ՞
ունիք հաւատս. և երկեան
երկիւղ մեծ, և ասէին ցմիմեանս.
Ո՞՛ ոք արդեօք իցէ սա, զի և
հողմ և ծով հնազանդին նմա:

ջարից աւելի մեծ է լինում, և
մեծ մեծ ճիւղեր է արձակում,
մինչև որ կարողանում են եր-
կնքի թռչունները նորա հո-
վանու տակ բնակել:
Եւ շատ այսպիսի առակնե- 33
րով խօսում էր նորանց հետ
խօսքը, ինչպէս որ նորանք կա-
րող էին լսել: Եւ առանց առակի 34
չէր խօսում նորանց հետ, բայց
առանձին իր աշակերտներին
ամեն բան մեկնում էր:
Եւ այն օրն, երբ որ իրիկուն 35
էր լինում, նորանց ասաց. Եկէ-
անցնենք այն կողմը: Եւ ժո- 36
ղովուրդը թողին, և նորան
նաւովն առին, ինչպէս էր նա-
ւումը. և ուրիշ նաւակներ էլ
կային նորա հետ: Եւ քամու 37
մեծ փոթորիկ էր լինում, և
ալիքները թափում էր նաւի
մէջ, մինչև որ համարեա ար-
դէն լցվում էր: Եւ ինքը նաւի 38
յետի կողմումը բարձի վերայ
քնած էր. և նորան զարթնեց-
նում են և ասում նորան. Ա՛ստ-
դածեա, հոգդ չէ՞, որ կոր-
չում ենք: Եւ նա զարթնելով 39
քամուն սաստեց, և ասաց ծո-
վին. լռիր, պապանձուիր. և
քամին դադարեց, և մեծ խա-
ղաղութիւն եղաւ: Եւ ասաց 40
նորանց. Ինչո՞ւ այդպէս վախ-
կոտ էք. ի՞նչպէս հաւատք չու-
նիք: Եւ մեծ վախով վախե-
ցան, և իրար ասում էին. Սա
ո՞վ է արդեօք, որ քամին էլ
ծովն էլ հնազանդում են սորան:

ԳԼ. Ե

1 Եւ եկն յայնկոյս ծովուն
2 յաշխարհն Գերգեսացւոց։ Եւ
ընդ ելանելն նորա ի նաւէ
անտի, պատահեաց նմա այր մի
ի գերեզմանացն՝ զոր ունէր
3 այս պիղծ։ Որոյ և բնակութիւն
իւր իսկ ի գերեզմանս էր. և ոչ
շղթայիւք ոք ևս կարէր կապել
4 զնա, Վասն բազում անգամ
ոտնակապօք և շղթայիւք կա-
պելոյ, և խզելոյ ի նմանէ
զշղթայսն, և զոտնակապսն
խորտակելոյ. և ոչ ոք կարէր
5 պարտել զնա. Այնուհանապազ զցայգ և զցերեկ ի գե-
րեզմանս և ի լերինս աղաղա-
կէր. և կոծէր զանձն իւր քա-
6 րամբք։ Իսկ եթէ տեսս զՅիսուս
ի հեռաստանէ, ընթացաւ և
7 երկիրպագաւ նմա։ Աղաղակեաց
ի ձայն մեծ՝ և ասէ, Օ՜ի կայ
իմ՝ և քո Յիսուս Որդի Աստու-
ծոյ բարձրելոյ. երդմնեցու-
ցանեմ զքեզ ՅԱստուած, մի
8 տանջեր զիս։ Զի ասէր
ցնա. Ե՛լ այսոր պիղծ ի մար-
9 դոյ այսի։ Եւ հարցանէր ցնա՝
թէ Օ՞ի՞նչ անուն է քո. և ասէ
ցնա. Լեգեովն անուն է իմ.
10 քանզի բազումք եմք։ Եւ աղա-
չէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ
զնոսա արտաքս քան զաշխարհն։
11 Եւ անդ էր առ լերամբն երա-
մակ մի խոզաց արօտական մեծ։
12 Աղաչեցին զնա ամենայն դեւքն
և ասեն, Առաքեա զմեզ ի

ԳԼ. Ե

Եւ եկան ծովի այն կողմն՝ 1
Գադարացւոց երկիրը։ Եւ երբ 2
որ նաւիցը զուրս եկաւ, նո-
րան խիզոյն պատահեց գերեզ-
մաններիցը մի մարդ պիղծ դեւով
բռնուած։ Որի բնակութիւնը 3
գերեզմաններումն էր. և ոչ ոք
շղթաներով էլ չէր կարող նո-
րան կապել։ Որովհետև շատ 4
անգամ ոտաց կապերով և շղ-
թաներով կապուել էր, բայց
նա շղթաները կտրատել և ոտաց
կապերը փշրել էր, և ոչ ոք
կարող չէր նորան նուաճել։
Եւ միշտ գիշեր ու ցերեկ գերեզ- 5
մաններումն և լեռներումն
աղաղակում էր. և ինքն իրան
ծեծում քարերով։ Բայց երբ 6
որ հեռուանց Յիսուսին տե-
սաւ, վազեց նորան երկրպա-
գութիւն արաւ։ Եւ մեծ ձայ- 7
նով աղաղակելով ասաց. Թող
քնչ բան կայ ինձ հետ, Յի-
սուս՝ Որդի Աստուծոյ բարձրե-
լոյ. Աստուծով երդում եմ
տալիս քեզ, մի տանջեր ինձ։
(Զի ասելն ասում էր նորան.
Դուրս եկ, պիղծ ոգի այդ մար-
դուցը։) Եւ հարցրեց նորան.
Անունդ ի՞նչ է. և նա պատաս-
խանեց և ասաց. Լեգեոն է իմ
անունը. վասնզի մենք շատ ենք։
Եւ շատ աղաչում էին նորան, 10
որ իրանց այն աշխարհիցը
դուրս չուղարկէ։ Եւ այնտեղ 11
լեռան մօտ խոզերի մի մեծ երա-

13 խոզն, զի մտցուք ի նոսա։ Եւ
հրամայեաց նոցա. և իբրև ելին
այսրն պիղծք՝ մտին ի խոզն,
և զիմեաց երամակն ի դարէ
անտի ի ծովն. էին իբրև երկու
հազարք, և հեղձնուին ի ծո-
14 վուն։ Եւ խոզարածքն փախեան.
և պատմեցին ի քաղաքի և յա-
գարակս, և ելին տեսանել զինչ
15 իցէ որ գործեցաւն։ Գան առ
Յիսուս, և տեսանեն զդիւա-
հարն զի նստէր զգեցեալ և
զգաստացեալ, որ ունէր զլե-
16 գէոնն. և զահի հարան։ Եւ
պատմեցին նոցա որոց տեսեալն
էր, թէ զինչ եղև այսահարին,
17 և զինչ վասն խոզիցն։ Եւ
սկսան աղաչել զնա գնալ ի
18 սահմանաց նոցա։ Եւ իբրև
եմուտ նա ի նաւն, աղաչէր
զնա դիւահարն՝, զի ընդ նմա
19 իցէ. Եւ Յիսուս ոչ ետ նմա
թոյլ, այլ ասէ ցնա. Ե՛րթ ի
տուն քո առ ընտանիս քո, և
պատմեա նոցա որ ինչ միանգամ
Տէր արար քեզ և ողորմեցաւ
20 քեզ։ Եւ չոքաւ՝ և սկսաւ
քարոզել ի Դեկապօլին, զոր
ինչ արար նմա Յիսուս, և
ամենեքին զարմանային։

21 Եւ իբրև անց Յիսուս միւս-

մակ կար, որ արածում էր։
Եւ բոլոր դեւերը նորան աղաչե- 12
ցին և ասացին. Ուղարկիր մեզ
այն խոզերի մէջ, որ նորանց
մէջ մտնենք։ Եւ Յիսուսը 13
հրաման տուաւ նորանց շու-
տով. և պիղծ դեւերը դուրս
եկան խոզերի մէջ մտան. և
երամակն այն գահավէժ տե-
ղիցը ծովի մէջ վազեց. և եր-
կու հազարի չափ էին. և ծո-
վումը խեղդվում էին։ Եւ 14
խոզարածները փախան և քա-
զաքումը և արտերումը պատ-
մեցին. և դուրս եկան տեսնելու
թէ ինչ է այդ եղածը։ Եւ 15
Յիսուսի մօտ եկան, և դիւա-
հարին տեսան նստած հագուած
և խելքը գլուխը եկած, նա՝ որ
լեգէոնն ունեցել էր. և վախե-
ցան։ Եւ նորանց պատմեցին 16
տեսնողները, թէ ինչ եղաւ այն
դիւահարին, և խոզերի մասին։
Եւ սկսեցին աղաչել նորան, 17
որ իրանց սահմաններիցը դուրս
գնայ։ Եւ երբոր նա նաւը 18
մտաւ, դիւահարն աղաչում էր
նորան, որ նորա հետ լինի։
Բայց Յիսուսը թոյլ չտուաւ 19
նորան, այլ ասաց նորան. Գնա՛
քո տունը քո ընտանեաց մօտ, և
նորանց պատմիր, թէ ինչ բաներ
արաւ քեզ Տէրը, և ողորմեց
քեզ։ Եւ նա գնաց և սկսեց 20
Դեկապօլիսի մէջ քարոզել, ինչ
բաներ որ Յիսուսը իրան արել
էր, և ամենքը զարմանում էին։
Եւ երբոր Յիսուսը նաւով 21

անգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր
22 առ ծովեզերքն։ Եւ ահա մի ՚ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր Յայրոս. և երբեւ
23 ետես զնա անկաւ առ ոտս նորա. Աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ Դուստր նորա մերձ է ՚ի մահ, զի եկեալ դնիցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և
24 կեցցէ։ Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա։

25 Եւ կին մի էր ՚ի տեառատեսութեան արեան զերկոտասան ամ.
26 Եւ յոյժ վշտացեալ ՚ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամենայն. և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զայրացեալ։
27 Երբեւ լուաւ զՅիսուսէ՝ եկն ՚ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն
28 եհար զհանդերձն նորա. Քանզի խորհէր ՚ի մտի, թէ միայն մերձեցայց ՚ի հանդերձս նորա՝
29 փրկեցայց։ Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա. և գիտաց ՚ի մարմին իւր թէ բժշկեցաւ ՚ի տանջանացն։
30 Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ ել ՚ի նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ. Ո՞վ մերձեցաւ
31 ՚ի հանդերձս իմ։ Եւ ասին ցնա աշակերտքն. Տեսանես զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես թէ Ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս

դարձեալ այն կողմն անցաւ, շատ ժողովուրդ նորա մնաց ժողովեցան, և նա ծովի մնաց էր։
Եւ ահա գալիս է ժողովրդա- 22
պետներից մէկը՝ անունը Յայրոս. և երբոր նորան տեսաւ, ընկաւ նորա ոտները. Եւ նո- 23
րան շատ աղաչում էր և ասում։ թէ Աղջիկս վախճանելու մօտ է, որ գաս, ձեռքդ նորա վերայ դնես, որպէսզի ազատուի և ապրի։ Եւ նորա հետ գնաց. 24
և շատ ժողովուրդ նորա ետևից գնում էին, և նորան նե- զում էին։
Եւ մի կին, որ արիւնի տե- 25
ւատեսութեան մէջ էր տասներ- կու տարի, Եւ շատ բժիշկնե- 26
րից շատ չարչարուել էր, և իր բոլոր ունեցածը ծախսել և ոչ- ինչ օգուտ չէր ստացել, այլ էլ աւելի էր դէպի վատը գնացել. Երբոր Յիսուսի համար լսեց, 27
ամբոխի մէջ ետևիցն եկաւ դի- պաւ նորա հանդերձին։ Ա՝ ասն- 28
զի ասում էր, որ եթէ միայն նորա հանդերձին մօտենամ, կ՚փրկուիմ։ Եւ շուտով նո- 29
րա արիւնի աղբիւրը ցամաքուե- ցաւ. և մարմնումն իմացաւ որ այն տանջանքիցը բժշկուեցաւ։
Եւ շուտով Յիսուսը իր ան- 30
ձումն իմացաւ, որ իրանից զօ- րութիւն դուրս գնաց, դար- ձաւ ամբոխի մէջ և ասաց. Ո՞վ դիպաւ իմ հանդերձին։ Եւ 31
նորա աշակերտներն ասացին նո- րան. Տեսնում ես այդ ամբոխը

32 իմ։ Եւ շուրջ հայէր տեսանել
33 թէ ո՞վ զայն արար։ Եւ կինն զարհուրեալ և դողացեալ* վասն որոյ գաղտն արար՝. քանզի գի- տէր զի՞նչ եղև նմա, եկն անկաւ առաջի նորա. և ասաց զամենայն
31 իրն ստուգութեամբ։ Եւ Յիսուս ասէ ցնա. Դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ՚ի խաղաղութիւն, և եղիջիր ողջ ՚ի տանջանաց քոց։

35 Մինչդեռ նա զայն խօսէր, գան ումանք ՚ի տանէ ժողովրդա- պետին՝ և ասեն. թէ Դուստրն քո մեռաւ, զի՞ ևս աշխատ
36 առնես զվարդապետդ։ Իսկ Յիսուս իբրև լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդա- պետն։ Մի երկնչիր, բայց միայն հաւատա։
37 Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս և զՅակո- բոս և զՅովհաննէս զեղ-
38 բայրն Յակոբայ։ Գայ ՚ի տուն ժողովրդապետին, և տե- սանէ ամբոխս յոյժ և լալականս,
39 և աղաղակ յոյժ։ Եւ մտեալ ՚ի ներքս՝ ասէ ցնոսա. Օ՞ի խռո- վեալ էք և լայք, մանուկն ոչ
40 է մեռեալ, այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր, և զնոսա որ ընդ նմայն

որ նեղացնում է քեզ, և ասում ես թէ ո՞վ իմ հանդերձին դի- պաւ։ Եւ չորս կողմն նայում 32
էր, որ տեսնէ այս բանն անողին։ Կինն էլ վախենալով և դողա- 33
լով, որովհետև գիտէր ինչ էլաւ իրան, եկաւ ընկաւ նորա առ- ջևը, և բոլոր ճշմարտութիւնն ասաց նորան։ Նա էլ ասաց 34
նորան. Դուստր, քո հաւատքն ազատեց քեզ, գնա խաղաղու- թեամբ, և քո տանջանքիցն առողջ եղիր։
Դեռ խօսելիս, ժողովը- 35
դապետի տանից գալիս են և ասում. թէ Աղջիկդ մեռաւ, էլ ինչու ես աշխատեցնում վարդապետին։ Եւ Յիսուսը 36
ասաց բանն խկոյն լսելով, ժո- ղովրդապետին ասաց. Մի վա- խենար, բայց միայն հաւատա։
Եւ ոչ ոքի թոյլ չտուաւ որ 37
իր հետ գնայ, բայց միայն Պետրոսին և Յակոբին և Յա- կոբի եղբայր՝ Յոհաննէսին. Եւ 38
եկաւ ժողովրդապետի տունն, և այնտեղ մեծամբոխ տեսաւ և լացողներ, և շատ աղաղակ անող- ներ. Եւ ներս մտաւ՝ նորանց 39
ասաց. Ի՞նչու էք շփոթվում՝ և լաց լինում. երեխան մեռած չէ, բայց քնած է։ Եւ ծիծա- 40
ղում էին նորա վերայ. բայց նա բոլորին դուրս հանեց, և առնելով երեխայի հօրը և մօրը և իր հետ լինողներին՝ մտաւ

* ՚Ի Յոյն էր։

էին, և մտանէ ուր դնէր
41 մանուկն։ Եւ կալեալ զձեռանէ
մանկանն, ասէ ցնա. Տալիթա
կում, որ թարգմանի, Աղջիկ
42 դու, քեզ ասեմ՝ արի։ Եւ վաղ-
վաղակի յարուաւ աղջիկն և
գնայր, քանզի էր ամաց իբրև
երկոտասանից. և զարմացան
43 մեծաւ զարմանալեաւք։ Եւ պա-
տուէր տայր նոցա յոյժ, զի մի՛
ոք գիտասցէ զայն. և ասաց
տալ նմա ուտել։

ԳԼ. Ը.

1 Եւ եղ անտի ելն՝ի գաւառ
իւր. և երթային զհետ նորա
2 աշակերտքն իւր։ Եւ եղև՝ի
շաբաթուն՝ սկսաւ ուսուցանել
՝ի ժողովրդեանն. և բազումք
իբրև լսէին՝ զարմանային* ընդ
վարդապետութիւն նորա՝,՚՚ և
ասէին. Ուստի՞ է սմա այս՝
կամ զի՞նչ է իմաստութիւնս որ
տուեալ է սմա, զի զզօրութիւնք
այսպիսիք՝ի ձեռաց սորա լինին։
3 Ո՞չ սա է † մանուկ հիւսանն՚՚,
և որդին Մ՝արեմայ, եղբայր
Յակոբայ և Յովսեայ և Յու-
դայի և Սիմոնի, և չի՞ցեն քոյրք
դորա աստ առ մեզ, և գայ-
թագղէին՝ի նա։ Եւ ասէ
ցնոսա. Ո՛չ է մարգարէ անարգ,
բայց եթէ՝ի գաւառի իւրում
և յազգատոհմի և՝ի տան

* ՝Ի Յոյնն էր
† ՝Ի Յոյնն, հիւսն

այն տեղն ուր երեխան պառկած
էր։ Եւ երեխայի ձեռքէր բռնե- 41
լով ասաց նորան. Տալիթա
կում. որ կ՝թարգմանուի, Ով
աղջիկ, (քեզ եմ ասում՝) վեր
կաց։ Եւ շուտով վերկացաւ 42
աղջիկը և ման էր գալիս, վասն-
զի տասներկու տարեկանի չափ
էր, և մեծ զարմանքով զար-
մացան։ Եւ նորանց շատ պա- 43
տուիրեց, որ ոչ ոք չիմանայ
այս. և ասաց, որ նորան լան
տան ուտելու։

ԳԼ. Ը.

Եւ այն տեղից դուրս գնաց, 1
եկաւ իր հայրենիքը. և նորա
աշակերտները նորա ետևից
գնում էին։ Եւ որովհետև 2
շաբաթ էր, սկսեց ժողովարանի
մէջ սովորեցնել. և շատերը
լսելով զարմանում էին և ասում։
Որտեղից է այս բաները,
կամ սա ի՞նչ իմաստութիւն է
որ տրուած է սորան, որ այսպիսի
զօրութիւններ էլ են լինում
սորա ձեռքովը։ Չէ՞ որ սա է 3
հիւսը՝ և Մ՝արիամի որդին,
Յակոբի և Յոսէի և Յուդայի և
Սիմոնի եղբայրը. և չէ՞ որ դորա
քոյրերը այստեղ մեզ մոտ են.
և նորա վերայ գայթակղում 4
էին։ Յիսուսն էլ նորանց ասաց.
թէ Մ՝արգարէ անարգ չէ, բայց
միայն իր հայրենեաց և իր

5 իւրում։ Եւ ոչ կարէր անդ և
ոչ մի ինչ զօրութիւն առնել,
բայց սակաւ հիւանդաց ձեռն
6 եդեալ բժշկէր զնոսա։ Եւ
զարմանայր վասն անհաւատու-
թեան նոցա։

7 Եւ շրջէր շուրջ զգաւառաւքն,
և ուսուցանէր։ Եւ կոչեաց առ
ինքն զերկոտասանսն, և սկսաւ
առաքել զնոսա երկուս երկուս,
և տայր նոցա իշխանութիւն՝ի
8 վերայ այսոց պղծոց։ Եւ պա-
տուիրեաց նոցա զի մի՛ ինչ
բարձցեն՝ի ճանապարհ, բայց
միայն գաւազան. մի՛ պարկ, մի՛
9 հաց, մի՛ պղինձ՝ի գօտիս։ Այլ
ագանել հողաթափս, և Մ՝ի
զգենուցուք, ասէ, երկուս պա-
10 րեգօտս։ Եւ ասէր ցնոսա.
Յորո՛ տուն մտանիցէք, անդէն
օթեւանս կալջի՛ք մինչև ելանի-
11 ցէք անտի։ Եւ որ ոչ ընկալ-
ցին զձեզ, և ոչ լուիցեն ձեզ,
յորժամ՝ ելանիցէք անտի՝ թօ-
թափեսջի՛ք զփոշի ոտից ձերոց
՝ի վկայութիւն նոցա։

12 Եւ ելեալ քարոզէին զի
13 ապաշխարեսցեն։ Եւ դեւս բա-
զումս հանէին. և օծանէին
իւղով զբազում հիւանդս և
բժշկէին զնոսա։
14 Եւ լուաւ արքայ Հերովդէս,

ազգականների և իր տան մէջ։
Եւ չէր կարողանում այնտեղ 5
ոչ մի զօրութիւն անել. բայց
միայն մի քանի հիւանդների
վերայ ձեռք դրաւ և բժշկեց։
Եւ նորանց անհաւատութեան 6
համար զարմանում էր։ Եւ
չորս կողմի գիւղերը ման էր
գալիս և սովորեցնում։

Եւ տասներկուսին իր մօտ 7
կանչեց, և սկսեց նորանց երկու
երկու ուղարկել, և նորանց
իշխանութիւն էր տալիս պիղծ
դևերի վերայ։ Եւ նորանց պա- 8
տուիրում էր, որ ճանապարհի
համար ոչինչ վեր չառնեն, բայց
միայն մի գաւազան. ոչ պարկ,
ոչ հաց, ոչ պղնձէ փող գօտու
մէջ. Այլ հողաթափ հագնին. 9
և երկու հանդերձ չհագնի՛ք։
Եւ նորանց ասում էր. Որ տուն 10
որ մտնէք, այնտեղ մնացէք,
մինչև որ այնտեղից դուրս գնաք։
Եւ որոնք որ ձեզ չընդունին, և 11
ձեզ ականջ էլ չդնեն, այն տե-
ղից դուրս գալիս՝ ձեր ոտների
տակի փոշին թօթափեցէք, նո-
րանց վկայութիւն լինելու հա-
մար։ Ճշմարիտն ասում եմ ձեզ՝
Սոդոմի և Գոմորի համար աւելի
հեշտ կ՝լինի դատաստանի օրումը
քան թէ այն քաղաքին։

Եւ դուրս ելան, քարոզում 12
էին, որ ապաշխարեն։ Եւ 13
շատ դևեր էին հանում, և շատ
հիւանդներին իւղով օծում՝ էին՝
և նորանց բժշկում էին։
Եւ Հերովդէս թագաւորը 14

.քանզի յայտնի եղև անուն նո-
ցա, և ասէր. թէ Յովհաննէս
մկրտիչ յարեաւ 'ի մեռելոց, և
վասն այնորիկ զօրութիւնք լի-
15 նին նովաւ: Այլք ասէին թէ
Եղիա է, իսկ այլքն թէ Մար-
գարէ է, կամ թէ իբրև զմի 'ի
16 մարգարէից: Իբրև լուաւ Հե-
րովդէս, ասէ. Զորոյ ես
զգլուխն հատի զՅովհաննու,
սա է նա, յարեաւ 'ի մեռելոց:

17 Զի ինքն Հերովդէս առա-
քեաց կալաւ զՅովհաննէս, և
կապեաց զնա և եդ 'ի բանտի
վասն Հերովդիայ կնոջ Փիլիպ-
պոսի եղբօր նորա, զի նա կին
18 արար զնա: Քանզի ասէր
Յովհաննէս ցՀերովդէս, թէ
Ո՛չ է օրէն քեզ ունել զկին
19 եղբօր քո: Եւ Հերովդիա
ոխացեալ էր ընդ նմա, և կամէր
սպանանել զնա, և ոչ կարէր:
20 Զի Հերովդէս երկնչէր 'ի
Յովհաննէ. քանզի գիտէր զնա
այր արդար և սուրբ, և սպասէր
նմա. և լուեալ 'ի նմանէ բա-
զում ինչ առնէր, և քաղցրու-
21 թեամբ լսէր նմա: Իբրև օր մի
լինէր պարապոյ, յորժամ ընթ-
րիս տայր Հերովդէս յաւուր
ծննդոց իւրոց՝ նախարարաց իւ-
րոց և հազարապետաց և մեծա-
22 մեծաց Գալիլեացւոց. Եւ 'ի
մտանել դստերն Հերովդիայ և
'ի կաքաւել, հաճոյ եղև Հե-
ղեց, (վասնզի նորա անունը
յայտնի եղաւ) և ասում էր,
թէ Յովհաննէս Մկրտիչը մեռելնե-
ների միջից յարութիւն առաւ,
և նորա համար զօրութիւններ
են գործվում նորանով: Ու-
րիշներն ասում էին, թէ Եղիան 15
է. ուրիշներն էլ ասում էին,
թէ մարգարէ է, կամ թէ մար-
գարէներից մէկի պէս: Եւ երբ 16
որ Հերովդէսը լսեց, ասաց. Սա
Յովհաննէսն է՝ որի գլուխը ես
կտրեցի. նա մեռելների միջից
յարութիւն է առել:

Վասնզի Հերովդէս ինքն ու- 17
ղարկեց, Յովհաննէսին բռնեց և
նորան կապեց բանտի մէջ իր
եղբօր՝ Փիլիպպոսի կնի՝ Հերո-
դիայի համար, վասնզի կին էր
առել նորան: Վասն զի Յո- 18
հաննէսը Հերովդէսին ասում էր,
թէ Օրէնք չէ քեզ՝ քո եղբօր
կին ունենալ: Եւ Հերովդիան 19
նորա դէմ ոխ էր պահում, և
ուզում էր սպանել նորան, և
չէր կարողանում: Քանզի Հե- 20
րովդէսը Յովհաննէսից վախում
էր՝ նորան արդար և սուրբ մարդ
ճանաչելով. և պահում էր նո-
րան. և նորանից լսելով՝ շատ
բան էր անում, և քաղցրութիւ-
նով լսում էր նորան: Եւ մի 21
յարմար օր պատահելով, երբոր
Հերովդէսը իր ծննդի օրումն
ընթրիք էր տալիս իր նախարար-
ներին և զօրապետներին և Գա-
լիլեացոց մեծամեծներին. Եւ 22
երբոր իսկ Հերովդիայի աղջիկն

բովդի և բաղմականացն: Ասէ
թագաւորն ցաղջիկն. Խնդրեա
յինէն զոր ինչ կամիս, և տաց
23 քեզ: Եւ երդուաւ նմա բա-
զում անգամ, թէ Զոր ինչ և
խնդրեսցես դու յինէն՝ տաց
քեզ, մինչև ցկէս թագաւորու-
24 թեան իմոյ: Նա ելեալ ասէ
ցմայր իւր. Զի՞նչ խնդրե-
ցից. և նա ասէ, Զգլուխն
25 Յովհաննու մկրտչի. Եւ մտեալ
անդրէն փութանակի առ թա-
գաւորն՝ ասէ. Կամիմ զի այժմ
տացես ինձ վաղվաղակի 'ի վերայ
սկտեղ զգլուխն Յովհաննու
26 մկրտչի: Եւ տրտմեցաւ յոյժ
թագաւորն. այլ վասն երդ-
մանցն և կոշնականացն, ոչ
27 կամեցաւ անարգել զնա. Եւ
առաքեաց վաղվաղակի թագա-
ւորն զահիճ, և հրամայեաց
բերել զգլուխն նորա. և չբաւ
28 զգլխատեաց զնա 'ի բանտին, Եւ
եբեր զգլուխն նորա սկտեղբ՝
և ետ ցաղջիկն, և աղջիկն տա-
29 բաւ նա մօր իւրում: Իբրև
լուան աշակերտքն նորա, եկին
բարձին զմարմինն և եդին 'ի
գերեզմանի:

30 Ժողովեցան առաքեալքն առ
Յիսուս, և պատմեցին նմա զա-
մենայն ինչ զոր արարին և զոր
31 ուսուցին: Եւ ասէ ցնոսա Յի-
սուս. Եկայք դուք առանձինն
յանապատ տեղի, և հանգիջիք
սակաւ մի. զի էին բաղումք որ
մտաւ՝ պար եկաւ, և Հերովդէսին
և նորա հետ նստածներին հա-
ճոյ եղաւ. թագաւորն ասաց
աղջկանը. Խնդրիր ինձանից
ինչ որ ուզես, և կ'տամ քեզ:
Եւ երդում՝ արաւ նորան՝ թէ 23
ինչ բան որ դու խնդրես ինձա-
նից, կ'տամ քեզ, մինչև իմ
թագաւորութեան կէսը: Նա 24
էլ դուրս գնաց ասաց իր մօրը,
Ի՞նչ խնդրեմ. և նա էլ ասաց,
Յովհաննէս Մկրտչի գլուխը:
Եւ իսկոյն շտապելով թա- 25
գաւորի մօտ գնաց խնդրեց և
ասաց. կամենում եմ որ հենց
հիմա սկուտեղի վերայ տաս ինձ
Յովհաննէս Մկրտչի գլուխը: 26
Եւ թագաւորն շատ տրտմեցաւ.
բայց իր երդմունքի և կանչուած
մարդկանց համար չկամեցաւ
անարգել նորան: Եւ թագա- 27
ւորը շուտով զահիճ ուղարկեց
և հրամայեց նորա գլուխը բե-
րել. նա էլ գնաց գլուխը
կտրեց բանտի մէջ: Եւ նորա 28
գլուխը սկուտեղով բերաւ և
աղջկանը տուաւ նորան, աղ-
ջիկն էլ տուաւ իր մօրը: Եւ 29
երբոր նորա աշակերտները լսե-
ցին, եկան նորա մարմինը վեր
առին և գերեզմանի մէջ դրին:

Եւ առաքեալները Յիսուսի 30
մօտ ժողովուեցան, և պատմե-
ցին նորան բոլորը՝ ինչ որ
արել, և ինչ որ սովորեցրել
էին: Եւ ասաց նորանց. Դուք 31
առանձին անապատ տեղ եկէք,
և մի քիչ հանգիստ առէք.

երթային և գային, և հաց ան-
32 գամ չժամանէին ուտել։ Եւ
գնացին նաւու յանապատ տեղի
33 առանձին։ Եւ տեսին զնոսա
զի երթային, և զգացին բա-
զումք. և հետի յամենայն քա-
ղաքաց խուռն ընթանային անդր,
34 և մրցենային առ նոսա. Եւ
ելեալ նոցա տեսս ամբոխ բազում, և
գթացաւ 'ի նոսա, զի էին իբրև
ոչխարք՝ որոց ո՛չ իցէ հովիւ. և
սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ։
35 Եւ իբրև բազում ժամ եղև,
մատուցեալ աշակերտքն ասէին.
Տեղիս անապատ է, մինչդեռ
36 աւուր կայ, Արձակեա զժողո-
վուրդդ, զի երթեալ շուրջ
յագարակս և 'ի գիւղս՝ գնեսցեն
իւրեանց 'զինչ ուտիցեն, զի
ասա ուտել ինչ ունին։
37 Ա՛յս պատասխանի ետ և ասէ
ցնոսա. Դուք տուք դոցա ուտել
ասեն ցնա. Երթիցուք գնես-
ցուք երկերիւր դահեկանի հաց,
38 և տացուք դոցա ուտել։ Ասէ
ցնոսա. Քանի՞ նկանակ ունիք՝
երթա՛ք տեսէք. իբրև գիտա-
ցին, ասեն ցնա. Հինգ՝ և եր-
39 կուս ձկունս։ Եւ հրամայեաց
նոցա բազմել երախանս երա-
խանս 'ի վերայ դալար խոտոյ։
40 Եւ բազմեցան դասք դասք՝ ուր
41 հարիւր և ուր յիսուն. Եւ
առեալ զհինգ նկանակն և զեր-
կուս ձկունսն, հայեցաւ յեր-
կինս, օրհնեաց՝ մանրեաց ընկա-
նակսն և ետ ցաշակերտսն զի
արկցեն նոցա, և զերկուս ձկուն-
քանզի եկող և գնացողներքը շատ
էին, և հաց ուտելու էլ ժամա-
նակ չունէին։ Եւ նաւով ա-
ռանձին անապատ տեղ գնացին։
33 Եւ ժողովուրդներքը տեսան նո-
րանց որ գնում էին, և շատերքը
ճանաչեցին նորան. և ամեն քա-
ղաքներից ոտով այնտեղ էին
վազում, և նորանից առաջ
եկան և նորա մօտ հաւաքուե-
34 ցան։ Եւ երբոր Յիսուսը զուրս
եկաւ շատ ամբոխ տեսաւ, և
նորանց վերայ գթաց. վասնզի
հովիւ չունեցող ոչխարների
պէս էին, և սկսեց նորանց շատ
բաներ սովորեցնել։ Եւ երբոր
35 արդէն շատ ժամանակը անցաւ,
նորա աշակերտները մօտն եկան
և ասացին, թէ այս տեղը անա-
պատ է, և ժամանակն էլ արդէն
36 ուշ։ Արձակիր դորանց, որ
չորս կողմի շէնքերն և գիւղերը
գնան իրանց համար հաց առնեն.
քանզի այստեղ ուտելու բան
37 չունին։ Ա՛յս էլ պատասխանեց
և նորանց ասաց. Դուք տուէք
դորանց ուտել. Նորանք էլ ասա-
ցին նորան, Գնա՞նք երկու հա-
38 բիւր դահեկանի հաց առնենք,
և դորանց տանք որ ուտեն։ Ա՛յս
էլ նորանց ասաց. Քանի՞ հատ
հաց ունիք. գնացէք և տեսէք.
39 երբ որ գիտացին, նորան ասա-
ցին. Հինգ, և երկու ձուկ։ Եւ
հրամայեց նորանց՝ որ ամենքը
40 դունդ դունդ կանանչ խոտի
վերայ նստեն։ Եւ կազմ դաս
նստեցին, հարիւր հարիւր՝ և

42 սրն բաշխեաց ամենեցուն։ Կե-
43 ան և յագեցան. Եւ բարձին
զնշխարսն երկոտասան սակաւի
41 լի, և 'ի ձկանց անտի։ Եւ էին
որ կերանն՝ իբրև արք հինգ
հազար.

45 Եւ նոյն ժամայն ճեպեաց
զաշակերտսն մտանել 'ի նաւ, և
յառաջագոյն քան զնա երթալ
յայնկոյս 'ի Բեթսայիդա, մինչ-
մինչ զժողովուրդսն արձակիցէ։
46 Եւ հրաժարեալ 'ի նոցանէ եկ
47 'ի լեառն կալ յաղօթս։ Եւ
իբրև երեկոյ եղև, էր նաւն 'ի
մէջ ծովուն, և ինքն 'ի ցամաքի։
48 Եւ ետես զնոսա հոգմսկոծեալս
'ի վարելն, զի էր հողմն ընդ-
դէմ նոցա. և զչորրորդ պահու
գիշերոյն գայ առ նոսա գնալով
'ի վերայ ծովուն. և կամէր
49 զանց առնել առ նոքօք։ Ա՛նքա
իբրև տեսին զի գնայր 'ի վերայ
ծովուն, համարեցան թէ առա-
ջօք ինչ լինիցի, և գաղաղակ
50 բարձին։ Քանզի ամենեքեան
տեսին զնա՝ և խռովեցան. և
նա անդէն վազվազակի խօսեցաւ
ընդ նոսա և ասէ. Քաջալերա-
ցարուք, ես եմ մի երկնչիք։
51 Եւ ել 'ի նաւն առ նոսա, և
դադարեաց հողմն։ Եւ առաւել
ևս յիմարեալ էին 'ի միտս
յիսուն յիսուն։ Եւ այն հինգ 41
հացն և երկու ձուկն առած
դէպի երկինքը նայեց՝ օրհնեց
կտրեց հացերը, և իր աշակերտ-
ներին տուաւ որ դնեն նորանց
առջևը. և այն երկու ձուկը բա-
ժանեց ամենին։ Եւ ամենքը 42
կերան և կշտացան, Եւ փշրանք- 43
ներից տասներկու կողով լիքը
վեր առին, և ձկներից էլ։ Եւ 44
հացը ուտողները հինգ հազարի
չափ մարդիկ էին։

Եւ շուտով ստիպեց իր աշա- 45
կերտներին, որ նաւը մտնեն, և
իրանից առաջ այն կողմը՝ Բեթ-
սայիդա գնան, մինչև որ ինքն
ժողովուրդին արձակէ։ Եւ 46
նորանցից բաժանուելով, վեր
ելաւ լեառը՝ աղօթք անելու։
Եւ երբոր իրիկուն եղաւ, նաւը 47
ծովի մէջտեղն էր, և ինքն միայն
ցամաքումը։ Եւ տեսաւ նո- 48
բանց, որ նաւելիս ալէկոծվում
էին, վասնզի քամին ներհակ էր
նորանց. և գիշերուայ չորրորդ
պահին ծովի վերայ գնալով՝
նորանց մօտ եկաւ, և ուզում
էր նորանցից անցնել։ Ա՛յնքանք 49
էլ, երբոր տեսան ծովի վերայ
գնալիս՝ կարծեցին թէ աչքի
երևոյթ բան լինի, և աղաղակ
բարձրացրին։ Ա՛յս ամենքը 50
նորան տեսան՝ և շփոթուեցան.
և շուտով խօսեց նորանց հետ
և ասաց. Քաջ եղէք, ես եմ,
մի վախենաք։ Եւ վեր ելաւ 51
նաւը նորանց մօտ՝ և քամին
դադարեց, և իրանց մէջ խիստ

իւրեանց, և զարմանային յոյժ:
52 Եւ զանազի՝ և ի վերայ հացին ոչ
խմացան, զի էր սիրտ նոցա
թմբեալ:
53 Եւ իբրև անցին յայնկոյս,
եկին յերկիրն Գենեսարէթ*:
54 Եւ իբրև ելին ի նաւէ անտի,
իսկ և իսկ ծանեան զնա արք
55 տեղւոյն այնորիկ: Եւ ընթա-
ցեալ այսր անդր ընդ ամենայն
գաւառն, սկսան մահճաւք բերել
զհիւանդս, ուր լսէին թէ անդ
56 իցէ: Եւ ուր և մտանէր ի
գեղս կամ ի քաղաքս կամ
յագարակս, ի հրապարակս
դնէին զախտաւորսս, և աղաչէին
զնա. զի զոնէ ի քղանցս հան-
դերձից նորա մերձենայցեն. և
որ միանգամ մերձեցանն՝ փրկ-
եցան:

ԳԼ: Ի:

1 Եւ ժողովեցան առ նա փա-
րիսեցիքն և ոմանք ի դպրացն՝
որ եկեալ էին յԵրուսաղէմէ:
2 Եւ տեսեալ զոմանս յաշակերտ-
ացն անտի, զի խառնակ ձեռաւք,
այսինքն է, անլուայ ուտէին
3 հաց, բամբասեցին. Զի փա-
րիսեցիքն և ամենայն Հրէայք՝
եթէ ոչ բռնալիր լուանան
զձեռս, հաց ոչ ուտեն. քան-
զի ունին զաւանդութիւն ծերոցն.

չափազանց ապշել էին, և զար-
մանում էին. Զ՝ ամենն այն հացի 52
վերայ էլ չխմացան. քանզի նո-
րանց սիրտը թմրած էր:
Եւ այն կողմն անցնելով, 53
Գեննեսարեթի երկիրը եկան,
և նաւէն խարիսխը գցեցին: Եւ 54
երբոր նորանք նաւիցը դուրս
եկան, ան փութոյն շուտով ճա-
նաչեցին նորան, Եւ գաւառի 55
կողմերը վազելով սկսեցին հի-
ւանդներին մահիճներով բերել,
որտեղ որ լսում էին՝ թէ այն-
տեղ է: Եւ որտեղ որ մտնում 56
էր՝ գիւղեր թէ քաղաքներ
թէ ագարակներ, հիւանդներին
հրապարակների մէջ էին դնում,
և նորան աղաչում որ գոնէ
հանդերձի ծայրին մօտենան. և
որոնք որ մօտեցան նորան, փրկ-
ուեցան:

ԳԼ: Ի:

Եւ ժողովուեցան նորա մօտ 1
փարիսեցիները և դպիրներից
ոմանք, որ Երուսաղէմից եկել
էին: Եւ երբոր տեսան, որ 2
նորա աշակերտներից մի քանիսը
խառնակ ձեռքով, այսինքն ա-
ռանց լուանալու հաց էին ուտում,
բամբասեցին: Զ՝ ամն զի փա- 3
րիսեցիները և բոլոր Հրէաները
թէ որ մի լաւ չլուանան ձեռ-
ները հաց չեն ուտում. որովհ-

* Ի Ցորդն, և հանին զնաւն ի ցամաք

4 Եւ ի հրապարակէ մտեալ՝ եթէ
ոչ նախ մկրտիցին, ոչ ուտեն.
և այլ ինչ բազում է՝ զոր ըն-
կալան ունել, մկրտութիւնս բա-
ժակաց և ստամանաց և պղնձեաց
5 և մահճաց: Զ՝ այս հարցանեն
զնա փարիսեցիքն և դպիրք՝ թէ
Ընդէր աշակերտքն քո ոչ գնան
ըստ աւանդութեան ծերոցն, այլ
խառնակ ձեռօք հաց ուտեն:
6 Զ՝այս պատասխանի ետ և ասէ
զնոսա. թէ Բարւոք մարգա-
րէացաւ Եսայի վասն ձեր կեղ-
ծաւորաց, որպէս ասաց. Ժո-
ղովուրդս այս շրթամբքն մեծարէ
զիս, և սիրտք նոցա հեռացեալ
7 ի բացեայ են յինէն: Զ՝ուր
պաշտեն զիս. ուսուցանեն վար-
դապետութիւնս զմարդկան պա-
8 տուիրեալս: Թողեալ զպատ-
ուիրանն Աստուծոյ, ունիք
զմարդկան աւանդութիւն, մկրտ-
ութիւնս ստամանց և բաժա-
կաց, և այլոց նմանեաց սոցին
9 առնէք բազումս: Եւ ասէ
զնոսա. Բարւոք խոտէք զպատ-
ուիրան Աստուծոյ, զի զձեր
աւանդութիւնն հաստատիցէք:
10 Զ՝ի Մովսէս ասէ, Պատուեա
զհայր քո և զմայր. և որ չարա-
խօսեսցէ զհօրէ կամ զմօրէ,
11 մահու վախճանեսցի: Եւ դուք
ասէք. Եթէ ասիցէ ոք ցհայր
կամ ցմայր կորբան, որ է պա-
տարագ, զոր յինէն օգտեսցիս.
12 Եւ ոչ ևս տայք թոյլ նմա առնել
13 ինչ հօրն կամ մօր: Եւ անարգ-
գէք զբանն Աստուծոյ ձերով-
հետև ծերերի աւանդութիւնն
են պահում: Եւ հրապարակից 4
որ գալիս էին, եթէ չըլուացուին,
չեն ուտում. և ուրիշ շատ բա-
ներ կան, որ ընդունեցին պա-
հել, բաժակների և անօթների
և պղնձէ ամանների և մահիճ-
ների լուացմունքներ: Ցնոյց 5
փարիսեցիները և Գրագիրները
հարցրին նորան, թէ Ինչու՞ քո
աշակերտները ծերերի աւան-
դութեան համեմատ չեն գնում.
այլ անլուայ ձեռքով հաց են
ուտում: Զ՝այս էլ պատասխանեց 6
և ասաց նորանց, թէ Եսային
լաւ մարգարէացաւ ձեզ կեղ-
ծաւորներիդ վերայ, ինչպէս
գրուած է. Զ՝այս ժողովուրդը
շրթունքներով է պատուում ինձ,
իսկ նորանց սիրտը ինձանից
հեռացած ջոկուած է: Եւ զուր 7
տեղն են պաշտում ինձ. սո-
վորեցնելով այնպիսի վարդա-
պետութիւններ որ մարդկանց
պատուէրներ էին: Զ՝ ամն զի Զ՝ս- 8
տուծոյ պատուիրանքը թողած՝
պահում էք մարդկանց աւան-
դութիւնը, անօթների և աման-
ների լուացմունքներ՝ և սորանց
նման էլ ուրիշ շատ բաներ էք
անում: Եւ նորանց ասաց. Լաւ 9
էք անարգում Զ՝աստուծոյ պա-
տուիրանքը, որ ձեր աւանդու-
թիւնը պինդ պահէք: Զ՝ ամն 10
զի Զ՝ՈՍԷՍ ասաց. Պատուիր քո
հօրը և քո մօրը. և նա որ հո-
րիցը կամ մօրիցը չարախօսու-
թիւն անէ, թող մահով մեռնի:

աւանդութեամբն, զոր աւանդեցիք, և բաղում ինչ այլ որ այսմ նման է առնէք։

11 Բայց դուք ասում էք, Եթէ մարդս հօրը կամ մօրը ասէ, Կորբան, (այսինքն պատարագ) այն որ ինձանից պէտք է շահուիս։ 12 Եւ այլ ևս թոյլ չէք տալիս նորան որ մի բան անէ իր հօրը կամ իր մօրը։ 13 Եւ Աստուծոյ խօսքն անարգում էք ձեր աւանդութիւնովն, որ աւանդեցիք։ և սորան նման ուրիշ էլ շատ բաներ էք անում։

14 Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողովուրդն, ասէ ցնոսա։ Լուարուք ինձ ամենեքեան և 15 ի միտ առէք։ Ոչինչ արտաքուստ ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ի նմանէ, այն է որ պղծէ 16 զմարդն։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

17 Եւ իբրև եմուտ ի տուն յամբոխէ անտի, հարցանէին զնա աշակերտքն վասն առակին։ 18 Եւ ասէ ցնոսա։ Այդպէս և դուք անմիտ էք։ ոչ իմանայք եթէ ամենայն որ արտաքուստ ի ներքս մտանէ ի մարդ, ոչ 19 կարէ զնա պղծել։ Զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն՝ և արտաքս ելանէ։ և սրբէ զամենայն կերակուրսն։ 20 Եւ ասէր, թէ Որ ինչ ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ։ 21 Զի ի ներքուստ ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն։ շնութիւնք, պոռնկութիւնք, 22 Գողութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիջութիւնք, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն։ 23 Այս ամենայն չարիք ի ներքուստ ելանեն, և պղծեն զմարդ։

24 Եւ անտի յարուցեալ՝ եկն ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի։ և մտեալ ի տուն ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ 25 կարաց ծածկել։ Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ։ եկն 26 անկաւ առաջի նորա։ Եւ կինն էր հեթանոս՝ Փիւնիկ Սորի յազգէ։ և աղաչէր զնա՝ զի զդևն հանցէ ի դստերէ նորա։ 27 Եւ Յիսուս ասէ ցնա։ Թո՛յլ տուր նախ յագեսցին մանկունք, զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց։ 28 Նա պատասխանի ետ և ասէ։ Տէր՝ և շունք ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին։ 29 Եւ ասէ ցնա։ Այսն այդր բանի երթ, ելգևն ի դստերէ քումմէ։ 30 Գնաց ի տուն իւր, և եգիտ ելեալ զդևն, և զդուստրն, զի անկեալ դնէր ի մահիճս։

31 Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն Տիւրոսի և Սիդոնի, և եկն ի ծովեզրն Գալիլեացւոց ի մէջ սահմանացն ի Դեկապոլիս։ 32 Եւ բերին առաջի

23 Այս ամենն չարք բաները ներսից են գուրս գալիս, և մարդն պղծում։

24 Եւ այն տեղից վերկացաւ՝ և եկաւ Տիւրոսի և Սիդոնի կողմերը. և տուն որ մտաւ՝ չէր ուզում որ մէկն իմանայ, բայց չկարողացաւ ծածկուիլ։ 25 Այսն զի նորա համար լսեց մի կին, որի աղջիկը պիղծ ոգի ունէր։ եկաւ նորա ոտքերի առջև ընկաւ։ 26 Եւ այն կինը Յոյն էր՝ ազգաւ Փիւնիկ Սորացի։ և աղաչում էր նորան, որ դևն իր աղջկանից դուրս հանէ։ 27 Յիսուսն էլ ասաց նորան։ Թող առաջ երեխաները կշտանան։ վասն զի լաւ չէ՝ երեխաների հացն առնել և շներին գցել։ 28 Նա էլ պատասխանեց և ասաց նորան։ Այո, Տէր, վասն զի շներն էլ սեղանի տակին երեխաների փշրանքից են ուտում։ 29 Եւ ասաց նորան, Այս խօսքի համար գնա, դևը դուրս եկաւ քո աղջկանից։ 30 Եւ իր տունը որ գնաց, գտաւ դևը դուրս եկած, և աղջիկն մահճի վերայ պառկած։

31 Եւ դարձեալ Տիւրոսի և Սիդոնի կողմերից դուրս գնաց, և Գալիլեացոց մօտ եկաւ՝ Դեկապոլիսի միջի կողմերը։ 32 Եւ մի խուլ և դժուարախօս բերին

նորա խուլ մի և համր. և
աղաչէին զի ձեռն դիցէ 'ի վերայ
33 նորա։ Եւ առեալ զնա մեկուսի
յամբոխէ անտի, արկ ըզմա-
տունս իւր ընդականջս նորա և
եթուք անդր. և կալաւ զլեզուէ
34 նորա, Հայեցաւ յերկինս՝ յոգ-
ւոց եհան՝ և ասէ. Ե՛փփա-
35 թայ՝ որ է բացիր։ Եւ նոյն
ժամայն բացան լսելիք նորա, և
լուծան կապանք լեզուի նորա,
36 և խօսէր ուղիղ։ Եւ պատուի-
րեաց նոցա զի մի ումեք ասի-
ցեն. և որչափ նա պատուիրէր
նոցա, նոքա ևս առաւել քարո-
37 զէին. Եւ ևս քան զևս զար-
մանային և ասէին. Հրամենայն
ինչ բարւոք գործեաց սա, զի
խլից լսել տայ և համրոց խօսել։

ԳԼ։ Ը.

1 Յաւուրսն յայնոսիկ զար-
ձեալ ժողովուրդ բազում էր, և
ինչ ո՛չ ունէին ուտել. կոչեաց
զաշակերտսն իւր՝ և ասէ ցնոսա։
2 Գթամ ես 'ի վերայ ժողովոր-
դեանդ, զի արդ երեք աւուրք
են՝ մինչ առ իս են, և ո՛չ ունին
3 զինչ ուտիցեն. Եւ եթէ ար-
ձակեմ զդոսա նօթիս 'ի տունս
իւրեանց՝ նքթիցեն 'ի ճանա-
պարհի. զի ոմանք 'ի դոցանէ 'ի
4 հեռաստանէ եկեալ են։ Պա-
տասխանի ետուն նմա աշա-
կերտքն նորա. Ուստի՞ կարես

նորան, և աղաչէում էին, որ
ձեռը դնէ նորա վերայ։ Եւ 33
նորան ամբոխիցը մի կողմ տարաւ,
իր մատները նորա ականջների
մէջ դրաւ և թքեց, և նորա
լեզուին դիպաւ։ Եւ դէպի 34
երկինքը նայելով հառաչեց և
ասաց նորան. Եփփաթա՝ այս-
ինքն բացուիր։ Եւ շուտով 35
նորա ականջները բացուեցան,
և նորա լեզուի կապն արձա-
կուեցաւ, և խօսում էր ուղիղ։
Եւ նորանց պատուիրեց՝ որ ոչ 36
ոքի չասեն. և որչափ նա պա-
տուիրում էր նորանց, նորանք
էլ աւելի էին քարոզում։ Եւ 37
չափից դուրս զարմանում էին
և ասում. Այս ամեն բան լաւ
գործեց. խուլերին լսել է տալիս՝
և համրներին խօսել։

ԳԼ։ Ը.

Այն օրերին՝ երբոր խիստ 1
շատ ժողովուրդ կար և բան
չունէին ուտելու, Յիսուսը իր
աշակերտներին կանչեց՝ և ասաց
նորանց. Խղճում է գալիս այդ 2
ժողովուրդի վերայ. վասն զի
արդէն երեք օր է ինձ մնա են,
և բան չունին որ ուտեն։ Եւ 3
եթէ նորանց սոված արձակեմ
իրանց տները, կ'թուլանան
ճանապարհին. վասն զի դորան-
ցից ոմանք հեռու տեղից են
եկել։ Նորա աշակերտները 4
պատասխանեցին նորան. Ո՞ր

յոգեցուցանել զդոսա հացիւ
5 յանապատի աստ։ Եւ հարց-
անէր զնոսա. Քանի՞ նկանակ
հաց ունիք. և նոքա ասեն
6 Եօթն։ Եւ հրամայեաց ժո-
ղովրդեանն բազմել 'ի վերայ
երկրի. և առեալ զեօթն նկա-
նակն՝ գոհացաւ՝ երեկ և տայր
ցաշակերտսն զի արկցեն. և
արկին առաջի ժողովրդեանն։
7 Եւ ձկունս սակաւ ունէին. և
զոյն ևս օրհնեաց, և հրամա-
8 յեաց արկանել։ Կերան և յա-
գեցան. և բարձին զնշխարս կո-
9 տորացն՝ եօթն զամբիւղ։ Եւ
էին որ կերանն իրրև չորք հա-
զարք. և արձակեաց զնոսա։
10 Եւ նոյն ժամայն մտեալ 'ի
նաւ հանդերձ աշակերտօքն՝ եկն
'ի կողմանս Դալմանունեայ։

11 Եկին փարիսեցիքն և սկսան
վիճել ընդ նմա, և խնդրէին
'ի նմանէ նշան յերկնից փորձե-
12 լով զնա։ Եւ զայրացաւ յոգի
իւր՝ և ասէ. Ազի՞ է զի ազգս այս
նշան խնդրէ. ամէն ասեմ՝ ձեզ,
թէ տացի նշան ազգիս այսմիկ։
13 Եթող զնոսա. դարձեալ եմուտ
'ի նաւ՝ և գնաց յայնկոյս։

14 Եւ մոռացան հաց բառնալ.
բայց միայն մի նկանակ ունէին
15 ընդ իւրեանս 'ի նաւին։ Եւ
պատուիրէր նոցա և ասէր.
Զգո՛յշ եղերուք 'ի խմորոյ անտի
փարիսեցւոց՝ և 'ի խմորոյ հե-

տեղից կարող է մէկը հացով
կշտացնել գորանց այստեղ՝
անապատում։ Եւ նորանց հար- 5
ցրեց՝ քանի՞ հաց ունիք։ Եւ
նորանք ասացին՝ Եօթն։ Եւ 6
ժողովրդին հրամայեց, որ գետ-
նի վերայ նստին. և այն եօթն
հացը առաւ, գոհացաւ, կտրեց,
և իր աշակերտներին էր տալիս,
որ դցեն. և գցեցին ժողովրդի
առջևը։ Մի քիչ ձուկ էլ 7
ունէին. և օրհնեց ու ասաց
որ նորանց էլ գցեն։ Կերան և 8
կշտացան. և կտորների աւել-
ցածը եօթը զամբիւղ վեր առին։
Եւ ուտողները չորս հազարի 9
չափ էին. և նորանց արձակեց։
Եւ շուտով իր աշակերտների 10
հետ նաւը մտաւ՝ և Դալմանու-
թայի կողմերն եկաւ։

Եւ փարիսեցիներն դուրս 11
եկան և սկսեցին նորա հետ
վիճել. և նորան փորձելով՝ նո-
րանցից նշան էին ուզում երկնի-
քից։ Եւ նա շատ զայրացաւ 12
իր հոգու մէջ և ասաց. Ի՞նչ
է, որ այս ազգը նշան է ու-
զում. ճշմարիտն ասում եմ ձեզ,
որ այս ազգին նշան չի տրուիլ։
Եւ նորանց թողեց, դարձեալ 13
նաւը մտաւ՝ և այն կողմը
գնաց։

Եւ մոռացան հաց վեր առ- 14
նել, և բաց ի մէկ հացից չունէին
իրանց հետ նաւի մէջ։ Եւ նո- 15
րանց պատուիրում էր և ասում.
Զգոյշ կացէք փարիսեցիների
խմորիցը և Հերոդէսեանների

16 բովդիանոսաց։ Եւ խորհէին
ընդ միմեանս և ասէին, թէ Օվ
17 հաց ոչ ունիմք։ Գիտաց Յի-
սուս և ասէ ցնոսա. Օվ՞ խոր-
հիք* ՝ի սիրտս ձեր թերահա-
ւատք՝՝ թէ հաց ոչ ունիք. տա-
կաւին ո՞չ իմանայք և ո՞չ յիշէք.
ապշութիւն ունի զսիրտս ձեր.
18 Աչք գոն և ոչ տեսանէք, ականջք
են և ոչ լսէք, և* ոչ իմա-
նայք տակաւին՝՝, և ոչ յիշէք։
19 Յորժամ զհինգ նկանակն ՝ի
հինգ հազարսն, և քանի՞սակա-
ռի լի բարձիք զկոտորոցն. և
20 ասեն, Երկոտասան։ Եւ յոր-
ժամ զեօթն նկանակն ՝ի չորս
հազարսն, քանի՞ զամբիւղ լի
բարձիք զկոտորոցն. և նոքա
21 ասեն, Եօթն։ Եւ ասէ ցնոսա.
Իսկ զի՞նդ ոչ իմանայք։

22 Գան ՝ի Բեթսայիդա. և
ածեն առաջի նորա կոյր մի, և
աղաչէին զնա՝ զի մերձեսցի ՝ի
23 նա։ Եւ առեալ զձեռանէ կու-
րին՝ եհան արտաքոյ շինին,
եթուք յաչս նորա, և ձեռն եդ
՝ի վերայ նորա. և հարցանէր
24 ցնա՝ թէ տեսանի՞ր ինչ։ Նա-
ցաւ և ասէր. Տեսանեմ զմար-
դիկս՝ զի շրջին իբրև զծառս։
25 Դարձեալ եդ ձեռս ՝ի վերայ
աչաց նորա. երաց, և տեսանէր.
ողջացաւ՝ և տեսանէր համար-
26 ձակ զամենայն։ Արձակեաց զնա
՝ի տուն իւր՝ և ասէ. Ի շինդ

* Ի Յոյնն էր։

խմորիցը։ Եւ իրար հետ միտք
16 էին անում և ասում, որովհետև
հաց չունինք։ Եւ Յիսուսը
17 իմանալով ասաց նորանց։ Ի՞նչ
էք միտք անում թէ հաց չու-
նիք. տակաւին չէ՞ք իմանում և
չէ՞ք յիշում. տակաւին թմրած
18 է ձեր սիրտը։ Աչք ունիք՝ և
չէ՞ք տեսնում. և ականջ ունիք՝
և չէ՞ք լսում. և չէ՞ք յիշում։
19 Երբոր այն հինգ հացը հինգ
հազարի համար կտրեցի, քանի՞
կողով լիքն վերը առիք նորա
կտորները. և նորան ասացին՝
Տասներկու։ Եւ երբոր եօթը
20 հացը չորս հազարին համար,
քանի՞ զամբիւղ լիքն վերը առիք
նորա կտորները. և նորանք
21 ասացին, Եօթն։ Եւ նորանց
ասաց. Այդ ի՞նչպէս չէք իմա-
նում։

Եւ գալիս է Բեթսայիդա. և
22 նորա առջևը մի կոյր են բերում
և նորան աղաչում, որ դիպչի
23 նորան։ Եւ կուրի ձեռքիցը
բռնեց՝ շէնիցը դուրս հանեց, և
նորա աչքերի մէջ թքելով, և
ձեռը վերան դնելով, նորան
հարցրեց, թէ մի բան տեսնում
24 է։ Եւ նա մտիկ տուաւ և
ասում էր. Մարդիկը տեսնում
եմ որ իբր ծառերի պէս՝ ման
25 են գալիս։ Յետոյ ձեռ-
ները դարձեալ նորա աչքերի
վերայ դրաւ և նորան նայել
տուաւ. և նա ողջացաւ՝ և ամեն

մի՛ մտանիցես,* այլ երթ ՝ի
տուն քո. և յորժամ ՝ի շէնն
մտանիցես՝ մի՛ ումեք ասիցես ՝ի
շինին՝։
27 Եւ ել Յիսուս աշակերտօքն
հանդերձ ՝ի շէնս Կեսարեայ
Փիլիպպեայ. և ՝ի ճանապար-
հին հարցանէր ցաշակերտսն և
ասէր. Օ՞ւ ուստեք ասեն զինէն
28 մարդիկս թէ իցեմ։ Նոքա
ետուն պատասխանի և ասեն.
Օ՞ յովհաննէս մկրտիչ, և այլք
Օ՞ Եղիա, և այլք Օ՞ մի ոք ՝ի
29 մարգարէից անտի։ Ասէ ցնոսա.
Իսկ դուք զի՞ ուստեք ասէք զի-
նէն թէ իցեմ. պատասխանի ետ
Պետրոս, և ասէ ցնա. Դու ես
30 Քրիստոսն։ Եւ սաստեաց ՝ի
նոսա՝ զի մի՛ ումեք ասիցեն
զնմանէ։

31 Եւ սկսաւ ուսուցանել զնոսա,
թէ պարտ է Որդւոյ մարդոյ
բազում՝ չարչարանս ընդունել,
և անարգիլ երիցանց և ՝ի քա-
հանայապետից և ՝ի դպրաց, և
մեռանել, և յետիր աւուր յառ-
32 նել։ Եւ համարձակ զբանն
խօսեցաւ. և առեալ զնա Մեկուսի
Պետրոսի՝ սկսաւ սաստել նմա։
33 Եւ նա դարձաւ ետես զաշա-
կերտսն, սաստեաց Պետրոսի և
ասէ. Երթ յետս իմ Սատա-
նայ. զի ոչ խորհիս դու զԱ-
ստուծոյն այլ զմարդկան։

* Ի Յոյնն, և մի՛ ումեք ասիցես ՝ի շինին

բան համարձակ տեսնում էր։
Եւ նորան ուղարկեց իր տունն 26
և ասաց. ոչ գեղը մտնես, ոչ
էլ գեղի մէջ մէկին ասես։

Եւ Յիսուսը իր աշակերտների 27
հետ դուրս գնաց Փիլիպպեայ
Կեսարիայի գեղերը. և ճանա-
պարհին հարցնում էր իր աշա-
կերտներին և ասում. Մարդիկ
ինձ համար ո՞վ են ասում, թէ
եմ։ Նորանք էլ պատասխանե- 28
ցին. Յովհաննէս մկրտիչը, և
ուրիշները Եղիան, ուրիշներն
էլ մարգարէից մէկը։ Նա էլ 29
ասաց նորանց. Ապա դուք ո՞վ
էք ասում ինձ համար, թէ եմ։
Պետրոսը պատասխանեց, և նո-
րան ասաց. Դու ես Քրիս-
տոսը։ Եւ նորանց սաստեց, 30
որ ոչ ոքի Բան չասեն իրան
համար։

Եւ սկսեց սովորեցնել նո- 31
րանց, թէ պէտք է Որդին մար-
դոյ շատ չարչարուի, և անար-
գուի ծերերից և քահանայա-
պետներից և դպիրներից, և
սպանուի և երեք օրից յետոյ
յարութիւն առնէ։ Եւ հա- 32
մարձակ խօսում էր այս խօսքը.
և Պետրոսը նորան մի կողմ
քաշեց՝ և սկսեց սաստել նորան։
Եւ նա դարձաւ, իր աշակերտ- 33
ներին տեսաւ՝ Պետրոսին սաս-
տեց և ասաց. Յետս գնա, սա-
տանայ, վասն զի դու Աստուծոյ

34 Եւ կոչեցեալ առ ինքն զբազ-
մութսն աշակերտսն հան-
գերձ՝ ասէ ցնոսա. Եթէ ոք
կամի զալ զկնի իմ՝ ուրասցի
զանձն իւր, և բարձցէ զխաչ
35 իւր, և եկեսցէ զկնի իմ։ Զի
որ կամիցի ապրեցուցանել
զանձն իւր, կորուսցէ զնա. և որ
կորուսցէ զանձն իւր վասն աւե-
տարանին, ապրեցուսցէ զնա։
36 Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ
զաշխարհս ամենայն շահեսցի,
37 և զանձն իւր տուժեսցէ։ Ի՞նչ-
զի զի՞նչ տացէ մարդ փոխանակ
38 անձին իւրոյ։ Զի որ ոք ամօթի
համարեսցի զիս և զբանս իմ՝ 'ի
շնացող և 'ի մեղաւոր
այսմիկ, և Որդի մարդոյ յամօթի
արասցէ զնա, յորժամ եկեսցէ
փառաւք Հօր իւրոյ* և հրեշտա-
39 կաց սրբոց"։ Եւ ասէ ցնոսա.
Ամէն ասեմ ձեզ. զի են ոմանք
'ի սոցանէ որ աստ կան, որք մի՛
ճաշակեսցեն զմահ՝ մինչև տես-
ցեն զարքայութիւն Աստուծոյ
եկեալ զօրութեամբ։

ԳԼ. Թ

1 Եւ յետ վեց աւուր առնու
ընդ իւր Յիսուս զՊետրոս և
զՅակոբոս և զՅովհաննէս, և
հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր
առանձինն. և յայլակերպս եղև
2 առաջի նոցա։ Եւ ձորձք նորա
եղեն փայլուն սպիտակ յոյժ,
որպէս թափիչք երկրի ոչ կարեն
3 այնպէս սպիտակացուցանել։ Եւ
երևեցաւ նոցա Եղիա Մովսէ-
սիւ հանդերձ, և խօսէին ընդ
4 Յիսուսի։ Պատասխանի ետ Պետ-
րոս՝ և ասէ ցՅիսուս. Ո՛ռբի
բարւոք է մեզ աստ լինել. և
արասցուք երիս տաղաւարս՝ մի
քեզ և մի Մովսէսի և մի
5 Եղիայի։ Զի՞նչ զի զիտէր
զինչ խօսէր, զի զարհուրեալ
6 էին։ Եւ եղև ամպ մի հովանի
'ի վերայ նոցա. ձայն եղև յամ-
պոյ անտի, և ասէ. Դա՛ է
Որդի իմ սիրելի, դմա՛ լուարուք։
7 Եւ յանկարծակի հայեցեալ
այսր անդր՝ ո՛չ ևս զոք ուրեք
տեսին, բայց միայն զՅիսուս
8 ընդ իւրեանս։ Եւ մինչդեռ
իջանէին 'ի լեռնէ անտի, պա-
տուիրեաց նոցա զի մի՛ ումեք
պատմեսցեն զոր տեսին, բայց
յորժամ Որդի մարդոյ 'ի մեռե-
9 լոց յարիցէ։ Եւ նոքա զբանն
'ի մտի ունէին, և խնդրէին
ընդ միմեանս՝ թէ զի՞նչ իցէ 'ի
10 մեռելոցն յառնել։ Հարցին ցնա
և ասեն. Զի՞նչ է այն զոր
դպիրքն ասեն՝ եթէ Նախ Ե-
11 ղիայի պարտ է գալ։ Նա պա-
տասխանի ետ նոցա և ասէ.
Եղիա նախ եկեալ յարդարեսցէ
զամենայն. իսկ զի՞նչդ գրեալ

բաներըդ չես միտք անում, այլ
մարդկանց բաները։

Եւ ժողովուրդն իր աշա- 34
կերտների հետ իրան մօտ կան-
չեց՝ և նորանց ասաց. Ով որ
ուզում է իմ ետևից գալ՝ թող
իր անձն ուրանայ, և իր խաչը
վեր առնէ, և իմ ետևից գայ։
Վասն զի ով որ կամենայ իր 35
անձն ապրեցնել՝ կ'կորցնէ նո-
րան. և ով որ իր անձն ինձ
համար և աւետարանի համար
կորցնէ, նա կ'ապրեցնէ նորան։
Ի՞նչ օգուտ է մարդու, 36
եթէ բոլոր աշխարհքս ստա-
նայ՝ և իր անձին վնաս տայ։
Կամ ի՞նչ փրկանք կ'տայ մարդ 37
իր անձի համար։ Վասն զի 38
ով որ ինձ և իմ խօսքերը ամօթ
համարէ այս շնացող և մեղաւոր
ազգի մէջ, Որդին մարդոյ էլ
նորան ամօթ կ'համարէ երբոր
գայ իր Հօր փառքովը և սուրբ
հրեշտակներովը։ Եւ նորանց 39
ասաց. Ճշմարիտն ասում եմ
ձեզ. թէ այս տեղ կանգնածնե-
րից ոմանք կան, որ մահ չեն
ճաշակիլ, մինչև որ տեսնեն
Աստուծոյ արքայութիւնը զօ-
րութիւնով եկած։

ԳԼ. Թ

1 Եւ վեց օրից յետոյ Յիսուսը
իր հետ առաւ Պետրոսին և

* 'Ի Յոյն. հանդերձ հրեշտակօք սրբովք

Յակոբին և Յովհաննէսին, և
հանեց նորանց մինակ առանձին
մի բարձր լեռան և այլակերպ-
պուեցաւ նորանց առջևը։ Եւ 2
նորա հանդերձները փայլուն
եղան՝ ձիւնի պէս շատ սպիտակ,
որ երկրիս վերայ թափիչը չէ
կարող այնպէս սպիտակացնել։
Եւ երևեցաւ նորանց Եղիան 3
Մովսէսի հետ և խօսում էին
Յիսուսի հետ։ Եւ Պետրոսը 4
պատասխանեց և ասաց Յիսու-
սին. Ո՛ռբի, լաւ է որ մենք
այստեղ լինինք. և երեք տա-
ղաւար շինենք, մէկը քեզ և
մէկը Մովսէսին և մէկը Եղիային։
Վասն զի չէր գիտում թէ ինչ 5
խօսէր, որովհետև զարհուրել
էին։ Եւ մի ամպ նորանց վե- 6
րայ հովանի եղաւ, այն ամպիցը
ձայն եկաւ՝ և ասաց, դա է իմ
սիրելի Որդին. դորան լսեցէք։
Եւ շուտով որ իրանց շուրջը 7
նայեցան, ոչ ոք չտեսան, բայց
միայն Յիսուսին իրանց հետ։
Եւ լեռնիցն իջնելիս, նորանց 8
պատուիրեց, որ ոչ մէկին չպատ-
մեն ինչ որ տեսան, բայց միայն
այն ժամանակն որ Որդին մար-
դոյ մեռելների միջից յարու-
թիւն առնէ։ Եւ այն խօսքը 9
պահեցին իրանց մօտ, և իրար
հարցնում էին, թէ ի՞նչ է
այն մեռելների միջից յարու-
թիւն առնելը։ Եւ նորան 10
հարցրին և ասացին. Ի՞նչ է,
դպիրներն ասում են, թէ
Պէտք է առաջ Եղիան գայ։

է զՈրդւոյ մարդոյ, զի բաղում
ինչ չարչարեսցի և անգոսնեսցի:
12 Այլ ես ասեմ՝ձեզ. Եթէ Եղիա
եկն, և արարին ընդ նմա զինչ
և կամեցան, որպէս և գրեալ է
վասն նորա:

13 Եւ եկեալ առ աշակերտսն,
տեսին ամբոխս շուրջ զնոքօք, և
զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա:
14 Եւ վաղվաղակի ամենայն ժո-
ղովուրդն իբրև տեսին զնա՝
զարմացան, և ընդ առաջ ընթացեալ
ողջոյն տային նմա:
15 Եւ եհարց զնոսա՝ թէ Օ՞րինչ
16 վիճէիք ընդ նոսա: Պատասխանի
ետ մի ոմն 'ի ժողովրդենէն և ասէ. Ո՛ վարդապետ՝
ածի զորդի իմ՝առ քեզ, զոր ունի
17 այս համր. Եւ ուր հասանէ՝
զարկուցանէ զնա. և փրփրէ և
կրճտէ զատամունս իւր և ցամաքի. և ասացի ցաշակերտսն
քո զի հանցեն, և ոչ կարացին
18 հանել զնա: Պատասխանի ետ
նոցա և ասէ, Ո՞վ ազգ անհաւատ, մինչև յե՞րբ իցեմ առ
ձեզ. մինչև ցե՞րբ անսայցեմ
19 ձեզ. ածէք զնա առ իս: Եւ
ածին զնա առ նա. իբրև ետես
զնա այսն, վաղվաղակի շարժեցաց զնա, և անկեալ յերկիր
20 թաւալէր և փրփրեայր: Եհարց
զհայր նորա և ասէ. Դ՞ինչ
ժամանակք են յորմէ հետէ այդ

Նա էլ պատասխանեց և ասաց 11
նորանց. Իրաւ Եղիան առաջ
կ՚գայ, և ամեն բան կարգի
կ՚դնէ. և ինչպէս գրուած է
Որդոյ մարդոյ համար, թէ շատ
պիտի չարչարուի և անարգուի:
Ա՛յլ ասումեմ՝ձեզ՝ թէ Եղիան 12
եկաւ էլ, և ինչեր ուզեցին,
նորան արին էլ. ինչպէս նորա
համար գրուած էր:

Եւ երբոր եկաւ աշակերտ- 13
ների մօտ, նորանց չորս կողմովը
շատ ամբոխ տեսաւ, և դպիրներին, որ նորանց հետ վիճում
էին: Եւ շուտով բոլոր ժողո- 14
վուրդը տեսնելով նորան, շատ
զարմացան և առաջ վազելով՝
նորան բարևում էին: Եւ 15
հարցրեց դպիրներին, Ինչ էիք
վիճում նորանց հետ: Եւ ժո- 16
ղովրդի միջից մէկը պատասխանեց և ասաց. Ո՛ վարդապետ, իմ՝
որդին քեզ մօտ բերի, որ համր
ոգի ունի: Եւ որտեղ որ նո- 17
բան հասնում է, գետնով է
տալիս նորան. և փրփրեցնում
է՝ և ատամները կրճտեցնում է
և ցամաքում է, և քո աշակերտներին ասացի, որ հանեն նորան,
բայց չկարողացին: Նա էլ պա- 18
տասխանեց և ասաց նորան. Ով
անհաւատ ազգ, մինչև ե՞րբ ձեզ
հետ պիտի լինիմ. մինչև ե՞րբ
ձեզ պիտի համբերեմ. նորան
ինձ մօտ բերէք: Եւ նորան 19
բերին նորա մօտ. և նորան որ
տեսաւ, շուտով ոգին թափահարեց նորան. և գետինն ընկած

եղև դմա. և նա ասէ. Դ՞ի մանկուութենէ: Խաղում անգամ՝ 'ի 21
հուր արկանէ զնա և 'ի ջուր՝ զի
կորուսցէ. արդ եթէ կարող ինչ
ես, օգնեա՛ մեզ Տէր՝ գթաց- 22
եալ 'ի վերայ մեր: Եւ Յիսուս
ասէ ցնա.* Ասացեր թէ կարող
ես՝. ամենայն ինչ հնարաւոր է
այնմ՝, որ հաւատայն: Եւ 23
վաղվաղակի աղաղակեաց հայր
մանկանն՝ և ասէ. Հաւատամ,
օգնեա՛ անհաւատութեանս ի-
մում: Իբրև ետես Յիսուս եթէ 24
կուտի ժողովուրդն 'ի վերայ,
սաստեաց այսոյն պղծոյ և ասէ.
Համրդ և խուլ այս՝ ես տամ
քեզ հրաման, ել 'ի դմանէ, և
այլ ևս մի՛ մտանիցես 'ի դա: Եւ 25
աղաղակեաց՝ և յոյժ ելկեաց
զնա, և ել. և եղև պատանեակն
իբրև զմեռեալ, մինչև բազմաց
իսկ ասել թէ Ա՛ռեաւ: Եւ 26
Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝
յարոյց զնա, և կանգնեցաւ:
Եւ իբրև եմուտ նա 'ի տուն, 27
աշակերտքն առանձինն հարցին
ցնա. Ա՞ռ ընդէ՞ր ո՞չ կարացաք
հանել զնա: Եւ ասէ ցնոսա. 28
Այդ ազգ ո՞չ իւիք ելանէ, եթէ
ո՞չ պահովք և աղօթիւք:

Թաւալում էր փրփրեցնելով: 20
Նորա հօրը հարցրեց, Որանի՞
ժամանակ է, որ այդ եղաւ դո-
բան. Նա էլ ասաց՝ Երեխայու-
թիւնից: Եւ շատ անգամ էլ 21
կրակի մէջ գցեց և ջրի մէջ, որ
դորան կորցնէ, սակայն եթէ մի
բան կարող ես, օգնիր մեզ՝
գթալով մեզ վերայ: Յիսուսն 22
էլ նորան ասաց. Այն եթէ
կարող ես հաւատալ, ամեն բան
կարելի է հաւատացողին: Եւ 23
շուտով տղայի հայրն աղաղա-
կեց՝ և արտասուքով ասաց,
Հաւատում եմ. Տէր, իմ
անհաւատութեանն օգնիր: Եւ 24
երբոր Յիսուսը տեսաւ՝ թէ
ամբոխը գիրքվում է, պիղծ ո-
գուն սաստեց և ասաց նորան.
Համր և խուլ ոգի, ես հրա-
մայում եմ քեզ, դորանից
դուրս եկ, և այլ ևս դորա մէջ
չմտնես: Եւ աղաղակելով և 25
սաստիկ թափահարելով նորան,
դուրս եկաւ. և նա մեռելի պէս
եղաւ. մինչև որ շատերն ասում
էին՝ թէ Ա՞ռեաւ: Եւ Յիսուսը 26
նորա ձեռքից բռնեց, վերկացրեց
նորան. և նա կանգնեց: Եւ 27
երբոր նա տուն մտաւ՝ աշա-
կերտներն առանձին հարցրին
նորան, թէ Ա՞նք ինչո՞ւ չկարո-
ղացանք հանել նորան: Եւ 28
ասաց նորանց. Այդ ցեղը ուրիշ
բանով անկարելի է դուրս գայ,
եթէ ո՞չ աղօթքով և ծոմով:

* 'Ի Յոյն, թէ կարող ես հաւատալ

29 Եւ անտի ելեալ անցանէին առ Գալիլեացւովք. և ոչ կամէր
30 եթէ ոք գիտասցէ: Զանգի ուսուցանէր զաշակերտսն իւր՝ և ասէր ցնոսա, թէ Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան, և սպանցեն զնա. և իբրև սպանցի՝ յերիր աւուր
31 յարիցէ: Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և երկնչէին հարցանել ցնա:

32 Եկն ի Կափառնաում. և իբրև եմուտ ի տուն, հարցանէր ցնոսա. Զի՞նչ վիճէիք ըզճա-
33 նապարհսն ընդ միմեանս: Եւ նոքա լուռ լինէին. քանզի ընդ միմեանս վիճէին ի ճանապարհին
34 թէ ո՞վ մեծ իցէ: Եւ իբրև նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն և ասէ ցնոսա. Եթէ ոք կամի առաջին լինել, եղիցի ամենեցուն
35 կրտսեր և ամենեցուն պաշտօնեայ: Եւ առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա. և ընկալեալ զնա ի գիրկս իւր, ասէ
36 ցնոսա: Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի. և որ զիս ընդունիցի, ոչ զիս ընդունի՝ այլ
37 զայն որ առաքեացն զիս: Պատասխանի ետ նմա Յովհաննէս և ասէ. Վարդապետ՝ տեսաք զոմն զի յանուն քո դեւս հանէր՝ և զմեր կնի ոչ շրջէր, և արգելաք զնա: Եւ նա ասէ. Մի
38 արգելուք զնա. զի ոչինչ է որ

Եւ այն տեղից դուրս եկած՝ 29
Գալիլեայի միջովն անցնում էին. և չէր ուզում որ մէկն իմանայ: Զանգի իր աշակերտ- 30
ներին սովորեցնում էր՝ և նորանց ասում՝ թէ Որդին մարդոյ մարդկանց ձեռքը պիտի մատնուի, և նորան կ՚սպանեն. բայց երբոր սպանուի, երրորդ օրումն յարութիւն կ՚առնէ: Իսկ նորանք այն խօսքը չէին 31
իմանում. և վախում էին հարցնել նորան:

Եւ Կափառնայում եկաւ. և 32
երբոր տանն էր, նորանց հարցնում էր՝ Ի՞նչ էիք ճանապարհին վիճում իրար հետ: Բայց 33
նորանք լռում էին վասն զի ճանապարհին իրար հետ վիճում էին թէ ո՞վ է մեծը: Եւ նստեց՝ 34
տասներկուսին կանչեց և ասաց նորանց. Եթէ մէկն ուզում է առաջինը լինել, թող ամենից յետին և ամենի պաշտօնեայ լինի: Եւ մի երեխայ առաւ, 35
կանգնեցրեց նորան նորանց միջումը. և նորան գրկելով ասաց նորանց. Ով որ այսպիսի 36
երեխաներից մէկին իմ անունովն ընդունի՝ ինձ է ընդունում. և ով որ ինձ ընդունի՝ ինձ չէ ընդունում, այլ ինձ ուղարկողն: Եւ Յովհաննէսը նորան 37
պատասխանեց և ասաց. Վարդապետ, մէկին տեսանք որ քո անունովը դեւեր էր հանում, և մեր ետևից չէր գալիս, և արգիլեցինք նորան, որովհետև

առնէ զօրութիւնս յանուն իմ,
39 և կարիցէ հայհոյել զիս: Զի որ ոչն է ընդ մեզ հակառակ, ի
40 մեր կոյս է: Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանունս յայս, թէ դուք Քրիստոսի էք, ամէն ասեմ՝ ձեզ՝ մի կորուսցէ
41 զվարձս իւր: Եւ որ ոք գայթագղեցուսցէ զմի ի փոքրկանցս՝ որ հաւատան յիս, լաւ էր նմա առաւել՝ եթէ արկեալ էր ընդ պարանոց նորա երկան
42 իշոյ, և ընկեցեալ ի ծով: Եւ եթէ գայթագղեցուսցէ զքեզ ձեռն քո. հատ ընկեա՛ ի քէն. զի լաւ իցէ քեզ խեղ մտանել ի կեանսն յաւիտենից, քան երկուս ձեռս ունել՝ և երթալ ի գեհեն
43 ի հուրն անշէջ: Որ որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ
44 շիջանի: Եւ եթէ ոտն քո գայթագղեցուսցէ զքեզ, հատ ընկեա՛ զնա ի քէն. լաւ իցէ քեզ կաղ մտանել ի կեանսն* յաւիտենից, քան երկուս ոտս ունել՝
45 և անկանել ի գեհեն ի հուրն անշէջ: Որ որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի:
46 Եւ եթէ ակն քո գայթագղեցուսցէ զքեզ, հան զնա ի բաց. լաւ իցէ քեզ միով ակամբ մտանել յարքայութիւն Աստուծոյ, քան երկուս աչս ունել և
47 անկանել ի գեհեն: Որ որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ
48 շիջանի: Զի ամենայն ինչ

մեր ետևից չէր գալիս: Յիսուսն 38
էլ ասաց. Մի արգիլէք նորան. վասն զի ոչ ով չկայ՝ որ իմ անունովը մի զօրութիւն անէ, և կարողանայ շուտով հայհոյել ինձ: Վասն զի ովոր մեզ հա- 39
կառակ չէ, մեր կողմն է: Որով- 40
հետև ով որ մի բաժակով ջուր խմեցնէ ձեզ իմ անունովը թէ դուք Քրիստոսինն էք, ճշմարիտ ասում եմ ձեզ, Ա՛յա չի կորցնիլ իր վարձքը: Եւ ով որ գայ- 41
թակղեցնէ այս փոքրիներից մէկին, որ ինձ հաւատում են, աւելի լաւ էր նորան, որ նորա վզին մի ջաղացի քար անցնուի, և ծովը գցուի: Եւ եթէ քո 42
ձեռքը քեզ գայթակղեցնէ՝ կտրիր նորան, վասն զի լաւ է քեզ՝ որ խեղ մտնես յաւիտենական կեանքը, քան երկու ձեռքն ունենաս՝ և գեհենը գնաս այն անանցանելի կրակի մէջ. Որտեղ 43
նորանց որդը չէ մեռնում՝ և կրակը չէ անցնում: Եւ եթէ 44
քո ոտքը քեզ գայթակղեցնէ՝ կտրիր նորան. լաւ է քեզ որ կաղ մտնես յաւիտենական կեանքը, քան թէ երկու ոտքն ունենաս՝ և գեհենը ընկնիս՝ այն անանցանելի կրակի մէջ. Որտեղ 45
նորանց որդը չէ մեռնում՝ և կրակը չէ անցնում: Եւ եթէ 46
քո աչքը քեզ գայթակղեցնէ, դուրս հանիր նորան. լաւ է քեզ՝ որ մէկ աչքով Աստուծոյ

* Ի Ցոյն՝ չէ։

հրով յաղեսցի, և ամենայն
49 ողջակէզ աղիւ յաղեսցի։ Բարւոք է աղ. և եթէ աղն անհամեսցի, ի՞նչ համեմեսցի. արդ ունիք կալարո՛ւք յանձինս ձեր զաղն, և խաղաղութիւն արարէ՛ք ընդ միմեանս։

ԳԼ. Ժ.

1 Եւ անտի յարուցեալ գայ ի սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու. և երթայր դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա, և որպէս սովոր էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա։

2 Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ և ասէին, եթէ Արժա՞ն իցէ առն
3 զկին իւր արձակել։ Եւ պատասխանի ետ Նոցա և ասէ. Օ՞ի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս։ Եւ նոքա ասեն. Մովսէս
4 հրաման ետ գիր մեկնելոյ գրել,
5 և արձակել։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց
6 ձեզ զպատուիրանն զայն։ Այլ ի սկզբանէ արարածոց, արու և էգ արար զնոսա Աստուած,
7 և ասէ։ Վասն այսորիկ թողցէ այր զՀայր իւր և զմայր և

արքայութիւնը մտնես, քան թէ երկու աչք ունենաս՝ և կրակի գեհենն ընկնիս։ Որտեղ նորանց
47 որդը չէ մեռնում՝ և կրակը չէ
48 անցնում։ Դանդի բոլորը կրակով պէտք է աղանուի, և ամեն
49 զոհ աղով պէտք է աղանուի։ Աղը բարի է. իսկ եթէ աղն անհամանայ, ինչ՞ով պիտի համովացնէք. աղ ունեցէք ձեր անձերումը, և իրար հետ խաղաղութիւն արէք։

ԳԼ. Ժ.

1 Եւ այն տեղից վերկացաւ եկաւ Հրէաստանի կողմերը՝ Յորդանանի այն կողմովը. և ժողովուրդները դարձեալ հաւաքվում էին նորա մօտ, և ինչպէս սովոր էր՝ դարձեալ սովորեցնում էր նորանց։

2 Բայց Փարիսեցիները մօտ եկան, նորան հարցրին, թէ Արժա՞ն է մարդուս որ կինը արձակէ. և փորձում էին նորան։ Եւ էլ պատասխանեց
3 և ասաց նորանց, Ո՞ւսկսն ի՞նչ պատուիրեց ձեզ։ Նորանք էլ
4 ասացին. Ո՞ւսկսս հրաման տուաւ արձակման թուղթ գրել, և
5 արձակել։ Եւ Յիսուսը պատասխանեց և ասաց նորանց. Ձեր քարասրտութեան համար այն պատուիրանքը գրեց ձեզ։
6 Բայց ստեղծագործութեան ըսկզբից Աստուած նորանց արու
7 և էգ արաւ, և ասաց. Որա

8 երթիցէ զՀետ կնոջ իւրոյ։ Եւ եղիցին երկուքն ի մարմին մի. և այնուհետև ո՛չ են երկու՝ այլ
9 մարմին մի։ Արդ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ։
10 Եւ ի տան դարձեալ աշակերտքն
11 զնոյն հարցին ցնա։ Եւ ասէ ցնոսա. Եթէ այր արձակեսցէ զկին իւր՝ և արասցէ այլ, շնայ։
12 Եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ և եղիցի առն այլում, շնայ։

13 Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ձեռն դիցէ նոցա. իսկ աշակերտքն սաստէին այնո-
14 ցիկ՝ որ մատուցանէին։ Որքա՛ւ ետես Յիսուս, բարկացեալ սաստեաց նոցա և ասէ. Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն
15 Աստուծոյ։ Ամէն ասեմ՝ ձեզ. Որ ո՛չ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ՝ ո՛չ
16 մտցէ ի նա։ Եւ առեալ զնոսա ի գիրկս ձեռն եդ ի վերայ՝ և օրհնեաց զնոսա։

17 Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճանապարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ընթացեալ ի ծունր իջանէր, հարցանէր ցնա՝ և ասէր. Վարդապետ բարի՝ զի՞նչ արարից զի զկեանսն յա-
18 ւիտենականս ժառանգեցից։ Եւ

համար մարդ իր հօրը և մօրը կ՚թողէ, և իր կնկան կ՚յարի.
8 Եւ երկուքը մէկ մարմին կ՚լինին. այնպէս որ այլ ևս երկու չեն՝ բայց մէկ մարմին։ Ուրեմն ինչ
9 որ Աստուած միաւորեց՝ թող մարդը չբաժանէ։ Եւ տանը
10 աշակերտները դարձեալ մի և նոյն բանը հարցրին նորանից։
11 Եւ ասաց նորանց. Ով որ կինն արձակէ և մի ուրիշն առնէ, շնութիւն է գործում նորա դէմ։
12 Եւ եթէ մի կին իր մարդուն արձակէ և ուրիշ մարդու գնայ, շնութիւն է գործում։

13 Եւ նորա մօտ երեխաներ էին բերում՝ որ դիպչի նորանց. բայց աշակերտները սաստում էին բերողներին։ Իսկ երբոր
14 Յիսուսը տեսաւ, բարկացաւ, և ասաց նորանց. Թոյլ տուէք երեխաներին ինձ մօտ գան, և մի արգիլէք գորանց. վասն զի այդպիսիներին է Աստուծոյ արքայութիւնը։
15 Ճշմարիտ ասում եմ՝ ձեզ, Ով որ Աստուծոյ արքայութիւնը չընդունի ինչպէս երեխայ, նա չի մտնիլ նորա
16 մէջ։ Եւ նորանց գիրկն առաւ, ձեռը դրաւ նորանց վերայ, և օրհնեց նորանց։

17 Եւ այնտեղից ճանապարհը գնալիս, մէկը վազելով եկաւ՝ ծունր դրաւ, նորան հարցնում էր և ասում. Բարի վարդապետ, ի՞նչ գործեմ, որ յաւիտենական
18 կեանքը ժառանգեմ։ Յիսուսն էլ ասաց նորան. Ինչո՞ւ ես ինձ

Յիսուս ասէ ցնա. Օ՞ի ասես զկս բարի. չի՛ք ոք բարի բայց
19 մի Աստուած: Օ՞պատուիրանս գիտես. Մի՛ շնար, Մի՛ սպա-
նաներ, Մի՛ գողանար, Մի՛ սուտ վկայեր.* Պատուեա՛
20 զՀայր քո և զմայր: Ասա պա-
տասխանի ետ և ասէ ցնա, Ա՛ռրդապետ՝ զայդ ամենայն
արարի 'ի մանկութենէ իմմէ, արդ զի՞նչ ևս պակաս իցեմ:
21 Եւ Յիսուս հայեցեալ 'ի նա սիրեաց զնա, և ասէ ցնա. Մի
ինչ պակաս է 'ի քէն. եթէ կամիս կատարեալ լինել, երթ
զոր ինչ ունիս վաճառեա՝ և տո՛ւր աղքատաց, և ունիցիս
գանձս յերկինս, և ա՛ռ զխաչն՝
22 և ե՛կ զկնի իմ: Եւ նա խոժոռեալ
ընդ բանն՝ գնաց տրտում. զի
23 ունէր ինչս բազումս: Եւ հայե-
ցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս,
ասէ ցաշակերտսն. Օ՛խարդ
դժուարին էր որ զինչսդ ունին,
մտանել յարքայութիւն Աստու-
24 ծոյ: Եւ աշակերտքն զարմա-
ցեալ էին 'ի վերայ բանիցն
Նորա. իսկ Յիսուս դարձեալ
պատասխանի ետ Նոցա և ասէ.
Ո՛րդեակք որչափ դժուարին է
յուսացելոց յինչս մտանել յար-
25 քայութիւն Աստուծոյ: Դիւրին
է մալեայ ընդ ծակ ասղան
անցանել, քան մեծատան յար-
քայութիւն Աստուծոյ մտանել:
26 Եւ նոքա առաւել ևս զարմա-
բարի ասում. ոչ ոք բարի չկայ,
բայց միայն մեկը՝ Աստուած:
Պատուիրանքները գիտես՝ Մի՛
19 շնար, Մի՛ սպանաներ, Մի՛
գողանար, Մի՛ սուտ վկայեր,
մի զրկեր, քո հօրը և մօրը
պատուիր: Ասա էլ պատասխանեց
20 և ասաց Նորան. Ա՛ռրդապետ,
այդ ամենն իմ երեխայութիւնից
պահել եմ: Յիսուսն էլ Նորան
21 մտիկ տուաւ՝ Նորան սիրեց, և
ասաց Նորան. Մի՛էկ բան պակաս
է քեզ, գնա, ինչ որ ունիս
ծախիր և աղքատներին տուր.
և գանձ կ'ունենաս երկնքումը.
և խաչն առած՝ եկ ինձ հետևիր:
Ասա էլ այն խօսքի համար 22
դժուարացած՝ գնաց տրտմած.
վասն զի շատ ապրանքի տէր էր:
Եւ Յիսուսը շուրջը նայելով՝ 23
ասաց իր աշակերտներին. Ի՞նչ-
քան դժուար է, որ ապրանք
ունեցողներն Աստուծոյ ար-
քայութիւնը մտնեն: Եւ աշա- 24
կերտները զարմացել էին Նորա
խօսքերի վերայ. բայց Յիսուսը
դարձեալ պատասխանեց և ասաց
Նորանց, Որդեակներ, ո՞րքան
դժուար է, որ իրանց ապրանքի
վերայ յուսացողները Աստուծոյ
արքայութիւնը մտնեն: Աւելի 25
հեշտ է, որ ուղտն ասղի ծակով
անցնէ, քան հարուստն Աս-
տուծոյ արքայութիւնը մտնէ:
Եւ Նորանք առաւել ևս զարմա- 26
նում էին, իրար ասելով. Ապա

* 'Ի Յոյն. Մի՛ զրկեր.

նային՝ և ասէին ընդ միմեանս.
27 Իսկ ո՞ կարասցէ ապրել: Հա-
յեցեալ ընդ նոսա Յիսուս՝ ասէ.
Առ 'ի մարդկանէ այդ անհնարին
է. այլ ոչ առ յԱստուծոյ:

28 Սկսաւ ասել ցնա Պետրոս.
Հաւասիկ մեք թողաք զամե-
29 նայն, և եկաք զկնի քո: Պա-
տասխանի ետ Յիսուս և ասէ.
Ամէն ասեմ ձեզ՝ Ոչ ոք է որ
եթող զտուն կամ զեղբարս կամ
զքոյրս կամ զհայր կամ զմայր
կամ զորդիս՝ կամ զագարակս
վասն իմ կամ վասն աւետա-
30 բանին. Եթէ ոչ առնուցու
հարիւրապատիկ այժմ յայսմ
ժամանակի՝ տունս և եղբարս և
քոյրս և մայրս և որդիս և ագա-
րակս հալածանօք հանդերձ, և
յաշխարհին որ գալոց է
31 զկեանսն յաւիտենականս: Օ՛ի
բազումք եղիցին առաջինք յե-
տինք՝ և յետինք առաջինք.

32 Եւ էին 'ի ճանապարհի
մինչդեռ ելանէին յԵրուսաղէմ.
և երթայր Յիսուս առաջի քան
զնոսա, և զարմացեալ էին որ
զհետն երթային՝ և երկնչէին:
Եւ առեալ միւսանգամ զերկո-
տասանսն առանձինն, սկսաւ
ասել նոցա զինչ անցք անցանելոց
33 իցեն ընդ նա: Թէ ահաւասիկ
ելանեմք յԵրուսաղէմ, և Որդի
մարդոյ մատնեսցի քահանայա-
պետիցն և դպրաց, և դատեսցեն

ոմ կարող է փրկուիլ: Յիսուսն 27
էլ Նորանց մտիկ տուաւ և ասաց.
Մարդկանց կողմանէ է անկա-
րելի, այլ ոչ թէ Աստուծոյ
կողմանէ. վասնզի ամեն բան
կարելի է Աստուծոյ կող-
մանէ:

Եւ Պետրոսը սկսեց Նորան 28
ասել. Ահա մենք ամեն բան
թողինք, և քո ետևից եկանք:
Յիսուսն էլ պատասխանեց և 29
ասաց. Ճշմարիտն ասում եմ
ձեզ, ոչ ոք չկայ, որ թողեց
տուն կամ եղբայրները կամ
քոյրերը կամ հայր կամ մայր
կամ կին կամ որդիք կամ
արտերը՝ ինձ համար կամ աւե-
տարանի համար: Որ հարիւրա- 30
պատիկ հիմա այս ժամանակումը
չառնէ տներ և եղբայրներ և
քոյրեր և մայրեր և որդիք և
արտեր հալածանքի հետ, և
գալու աշխարհքումը՝ յաւիտե-
նական կեանքը: Ա՛սն զի շատ 31
առաջիններ յետինք կ'լինին, և
յետիններն առաջինք:

Եւ ճանապարհի վերայ Երու- 32
սաղէմ էին գնում, և Յիսուսը
Նորանցից առաջ էր գնում, և
Նորանք զարմանում էին և հետ-
ևիցը գնալով վախենում էին:
Եւ տասներկուսին դարձեալ
առանձին առաւ մօտը, սկսեց
Նորանց ասել, թէ ինչ բաներ
են իրան պատահելու. Թէ 33
ահա վեր ենք ելլում Երու-
սաղէմ. և Որդին մարդոյ
կ'մատնուի քահանայապետնե-

զնա 'ի մահ, և մատնեսցեն զնա
34 հեթանոսաց. Եւ կատակեսցեն զնովաւ, և հարկանիցեն զնա, և թքանիցեն 'ի նա, և սպանցեն. և յերիր աւուր յարիցէ:

35 Եւ երթային առ Նովաւ Յակովբոս և Յովհաննէս որդիքն Զեբեդեայ, և ասեն ցնա. Վարդապետ կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք 'ի քէն՝ արասցես մեզ: 36 Եւ նա ասէ ցնոսա. Զի՞նչ կամիք յինէն զի արարիցէ
37 ձեզ: Եւ նոքա ասեն ցնա. Տո՛ւր մեզ զի նստցուք մի յաջմէ քումմէ և մի յահեկէ՝ 'ի փառսն
38 քում: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ո՛չ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել ըղբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ. կամ զմկրտութիւնն մկրտիլ՝ զոր ես
39 մկրտելոցն եմ: Եւ նոքա ասեն ցնա, Կարեմք. և Յիսուս ասէ ցնոսա. Զբաժակն զոր ես ըմպելոց եմ ըմպիցէք, և ըղմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ
40 մկրտիցիք. Այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ ո՛չ է իմ տալ, այլ որոց պատ-
41 րաստեալ իցէ: Եւ լուեալ զայն տասանցն, սկսան բարկանալ
42 Յակովբայ և Յովհաննու: Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, և ասէ ցնոսա. Գիտէք զի որ յանուան իշխանքն են հեթանոսաց, տիրեն նոցա. և
բին և զպիրներին. և նորան մահով կ'դատապարտեն, և նորան հեթանոսներին կ'մատնեն: Եւ նորան ծաղր կ'անեն, և նորան կ'ծեծեն, և նորա վերայ կ'թքեն, և կ'սպանեն նորան. և երրորդ օրումն յարութիւն կ'առնէ:

35 Եւ Զեբեդեայի որդիքն՝ Յակոբոս և Յովհաննէս նորա մօտ են գնում և ասում. Վարդապետ, ուզում ենք որ՝ ինչ որ քեզանից խնդրենք՝ մեզ անես:
36 Նա էլ նորանց ասաց, Ի՞նչ էք
37 ուզում որ ես ձեզ անեմ: Նորանք էլ ասացին նորան. Տուր մեզ, որ մէկը աջ կողմդ և միւսը ձախ կողմդ նստինք քո փառքում: Յիսուսն էլ ասաց
38 նորանց. Ձէք գիտում՝ ինչ էք խնդրում. կարո՞ղ էք խմել այն բաժակը որ ես պիտի խմեմ, կամ՝ այն մկրտութիւնովը մկրտուիլ՝ որով պիտի մկրտուիմ:
39 Նորանք էլ ասացին նորան. Կարող ենք: Յիսուսն էլ ասաց նորանց. Այն բաժակը որ ես պիտի խմեմ, կ'խմէք, և այն մկրտութիւնովն՝ որ ես պիտի մը-
40 կրտուիմ՝ կ'մկրտուիք: Բայց իմ՝ աջ և իմ՝ ձախ կողմը նստելն իմն չէ, որ տամ. այլ նորանց,
41 որ պատրաստուած է: Եւ այն տասները լսելով սկսեցին բարկանալ Յակոբի և Յովհաննէսի մասին:
42 Յիսուսն էլ նորանց իրան մօտ կանչեց, և ասաց նորանց. գիտէք՝ որ հեթանոսների իշխան

մեծամեծք նոցա, իշխեն նոցա:
43 Ո՛չ նոյնպէս իցէ և 'ի ձերում միջի. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտո-
44 նեայ. Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենեցուն
45 ծառայ: Զի Անդի և Որդի մարդոյ ո՛չ եկն առնուլ պաշտօն՝ այլ պաշտել, և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց:

46 Եւ գան յԵրիքով. և ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտաքն՝ և բազում ժողովրդով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանա-
47 պարհի: Իբրև լուաւ թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղակել և ասել. Որդի՛ Դաւթի Յիսուս ողորմեա՛ց ինձ:
48 Եւ սաստէին նմա բազումք զի լռեսցէ. և նա առաւել ևս աղաղակէր. Որդի՛ Դաւթի
49 ողորմեա՛ց ինձ: Օ՛տեղն առ Յիսուս՝ և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. Քաջալերեա՛ արի՛, կոչէ
50 զքեզ: Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ և եկն
51 առ Յիսուս: Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ, Ի՞նչ կամիս թէ արարիցէ քեզ. ասէ ցնա կոյրն. Ո՛ռբունի՝ զի
52 բացայց: Եւ Յիսուս ասէ ցնա, Ե՛րթ՝ հաւատք քո

Համարուողները տիրում են նորանց վերայ, և նորանց մեծամեծները իշխում՝ են նորանց
43 վերայ: Այնպէս չը պիտի լինի ձեր միջումը. այլ ձեզանից ով որ կամենայ մեծ լինել՝ թող
44 ձեզ պաշտօնեայ լինի: Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել, թող ամենի ծառայ
45 լինի: Որովհետև Որդին մարդոյ էլ չեկաւ, որ իրան ծառայեն, այլ ինքն ծառայէ, և իր անձը փրկանք տայ շատերի տեղ:

46 Եւ գալիս են Երիքով. և երբոր նա և նորա աշակերտները և շատ ժողովուրդ Երիքովից դուրս էին գալիս, Տիմէի որդի Բարտիմէոս կոյրը ճանապարհի վերայ նստած՝ մուրա-
47 նում էր: Եւ լսելով թէ Յիսուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել և ասել. Յիսուս՝ որդի Դաւթի, ողորմիր ինձ:
48 Եւ շատ մարդիկ սաստում էին նորան, որ լուռ կենայ. բայց նա էլ աւելի էր աղաղակում. Որդի Դաւթի, ողորմիր ինձ:
49 Եւ Յիսուսը կանգնեց և ասաց, որ նորան կանչեն. և կոյրին կանչեցին՝ և ասացին նորան. Քաջ եղիր, վեր կաց, քեզ
50 կանչում է: Նա էլ իր հանդերձը դէն գցեց՝ վերկացաւ և
51 Յիսուսի մօտ եկաւ: Եւ Յիսուսը պատասխանեց և նորան ասաց. Ի՞նչ ես կամենում, որ անեմ քեզ: Կոյրն էլ նորան

կեցուցին զքեզ. և վաղվաղակի
բացաւ, և երթայր զՀետ նորա
'ի ճանապարհին :

ԳԼ. ԺԸ.

1 Եւ յորժամ մերձ եղեն
Յերուսաղէմ 'ի Բեթփաքէ և
'ի Բեթանիա մօտ 'ի լեառն
Ձիթենեաց, առաքէ երկուս
2 յաշակերտաց անտի, Եւ ասէ
ցնոսա. Երթայք գուք 'ի գեօղդ՝
որ ընդդէմ ձեր կայ. և նոյն
ժամայն իբրև մտանէք 'ի նա,
գտանէք յաւանակ մի կապեալ.
յորոյ վերայ ոչ ոք 'ի մարդկանէ
նստաւ, լուծէք զնա և ածէք :
3 Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝ Եթէ
Օ՞ի լուծանէք զյաւանակդ, ա-
սասջիք եթէ Տեառն իւրում
պիտոյ է. և վաղվաղակի առա-
4 քեսցէ զնա այսր : Զոքան և
գտին զյաւանակն կապեալ առ
դուրս արտաքոյ 'ի փողոցի անդ,
5 և լուծին զնա. Եւ ոմանք
յորոց անդն կային, ասեն
ցնոսա. Օ՞ի գործէք, զի՞ լու-
6 ծանէք զյաւանակդ : Եւ նոքա
ասեն ցնոսա որպէս ասացն
Յիսուս. և թոյլ ետուն
7 նոցա : Բ.ձեն զյաւանակն առ
Յիսուս. և արկանեն 'ի վե-
րայ նորա հանդերձս, և նըս-
8 տաւ 'ի վերայ նորա : Եւ
բազումք զՀանդերձս իւրեանց
ասաց. Ոարբունի, որ տեսանեմ :
Յիսուսն էլ ասաց նորան. Դնա՝ 52
.բո հաւատքդ .քեզ ապրեցրեց.
և շուտով տեսնում էր, և ճա-
նապարհումը Յիսուսի ետևից
գնում էր :

ԳԼ. ԺԹ.

Եւ երբոր Երուսաղէմին մո- 1
տեցան, Բեթփագէ և Բեթա-
նիա՝ ձիթենեաց լեռան մօտ իր
աշակերտներից երկուսին ու-
ղարկեց: Եւ ասաց նորանց. գնա- 2
ցէք այդ ձեր առջևի գիւղը. և
շուտով երբոր նորա մէջ մտնէք,
մի կապած աւանակ կ'գտնէք
որի վերայ ոչ ոք չէ նստած.
նորան արձակեցէք բերէք: Եւ 3
եթէ մէկը ձեզ ասէ. Ինչո՞ւ
համար էք այդ անում. ասացէք՝
թէ նա պէտք է. և շուտով նո- 4
րան այստեղ կ'ուղարկէ: Գնա-
ցին, և աւանակը գտան դուրսը
փողոցի մէջ դրան մօտ կապած,
և նորան արձակեցին: Եւ այն- 5
տեղ կանգնածներից ոմանք ասա-
ցին նորանց. Ի՞նչ էք անում
դա, որ արձակում էք այդ
աւանակը: Նորանք էլ ասա- 6
ցին նորանց, ինչպէս Յիսուսը
հրամայեց. և թոյլ տուին նո-
րանց: Եւ աւանակը Յիսուսի 7
մօտ բերին. և նորա վերայ
գցեցին իրանց հանդերձները,
և նորա վերայ նստեց: Շա- 8
տերն էլ իրանց հանդերձները
ճանապարհին փռում էին, ու-

տարածանէին 'ի վերայ ճանա-
պարհին, և այլք ոստս 'ի ծառոց
հատանէին՝ և արկանէին զճա-
9 նապարհսն : Եւ որ առաջին և
զկնի երթային, աղաղակէին և
ասէին. Ովսաննայ բարձրելոյն:
10 Օրհնեալ որ գայդ յանուն
Տեառն. Օրհնեալ թագաւո-
րութիւնդ եկեալ հօր մերոյ
Դաւթի. խաղաղութիւն յեր-
կինս և փառք 'ի բարձունս:
11 Եւ եմուտ Յիսուս Յերուսա-
ղէմ 'ի տաճարն, և հայեցաւ
շուրջ զամենեքումբք. և զի էր
երեկոյացեալ ժամն, եկ 'ի Բե-
թանիա երկոտասանիւքն հան-
դերձ :
12 Եւ 'ի վաղիւ անդր մինչդեռ
ելանէին 'ի Բեթանիա, քաղ-
13 ցեաւ : Եւ ետես թզենի մի 'ի
բացուստ տերևալից. և եկն՝ թէ
գտանիցէ ինչ 'ի նմա. և իբրև
եկն 'ի նա՝ ոչինչ եգիտ, բայց
միայն տերև. զի ոչ իսկ էր ժա-
14 մանակ թզոյ : Պատասխանի ետ
և ասէ ցնա. Ա՞ի ևս ոք յաւի-
տեան 'ի քէն պտուղ կերիցէ.
և լսէին աշակերտքն նորա :

15 Գան Յերուսաղէմ. և մտեալ
'ի տաճարն՝ սկսաւ հանել զվա-
ճառականսն և զգնողս որ էին 'ի
տաճարին. և զսեղանս հատա-
վաճառացն ցրուեաց. և զաթոռս
աղաւնեվաճառացն կործանեաց.
16 Եւ ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ
ինչ անցուցանիցէ ընդ տաճարն.
բիշներն էլ ծառերից ճիւղեր
էին կտրում և ճանապարհին
փռում: Եւ առաջից գնացող- 9
ները և ետևից եկողները աղա-
ղակում էին և ասում՝ Ովսան-
նա. օրհնեալ է Տիրոջ անունով
եկողը. Օրհնեալ է Տիրոջ անու- 10
նով մեր Դաւիթի հօր եկող թա-
գաւորութիւնը. Ովսաննա 'ի
բարձունս:

Եւ Յիսուսը մտաւ Երուսա- 11
ղէմ՝ և տաճարի մէջ. և չորս
կողմով ամեն բանի մտիկ տուաւ.
և որովհետև արդէն իրիկուան
ժամանակ էր, դուրս գնաց
Բեթանիա տասներկուսի հետ:

Եւ հետևեալ օրն երբոր Բե- 12
թանիայից դուրս էին գալիս,
նա սովեց: Եւ հեռուանց մի 13
թզի ծառ տեսնելով, որ տերև-
ներ ունէր, գնաց թէ արդեօք
նորա վերա մի բան կ'գտնէ. և
երբոր եկաւ, մի բան չը գտաւ
բայց միայն տերևներ. վասնզի
թզի ժամանակ չէր: Յիսուսը 14
պատասխանեց և ասաց նորան.
այլ ևս ոչ ոք քեզանից յաւի-
տեան պտուղ չուտէ. և նո-
րա աշակերտները լսում էին :

Եւ եկան Երուսաղէմ. և 15
Յիսուսը տաճարը մտաւ, սկսեց
դուրս հանել տաճարումը ծա-
խողներին և առնողներին. և ստակ
փոխողների սեղանները, և ա-
ղաւնի ծախողների աթոռները
կործանեց: Եւ չէր թողում, 16
որ մէկը մի անօթ անցկացնէ

17 Եւ ուսուցանէր և ասէր ցնոսա. Գրեալ է, Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց, և դուք արարիք զդա
18 այրս աւազակաց. Լուան քահանայապետքն և դպիրք. և խնդրէին՝ թէ որպէս կորուսցեն զնա. բայց երկնչէին ի նմանէ. զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն նորա:

19 Եւ իբրև երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն ելա-
20 նէին: Եւ մինչդեռ այդուցն առնովաւ անցանէին, տեսին ըզթզենին ցամաքեալ յարմատոց:
21 Յիշեաց Պետրոս՝ և ասէ ցնա. Ռաբբի՝ ահաւասիկ թզենին զոր
22 անիծեր, ցամաքեցաւ: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Եթէ ունիցիք զհաւատսն Աս-
23 տուծոյ, Ամէն ասեմ ձեզ. Որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ Յարձիր և անկիր ի ծով, և ոչ երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւատայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա
24 զոր ինչ և ասիցէ: Վասն այսորիկ ասեմ ձեզ. Զամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք, և հաւատայցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ:
25 Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք, եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի և Հայրն ձեր որ յերկինս է, թողցէ ձեզ
26 զյանցանս ձեր: Զի եթէ դուք

տաճարի միջով: Եւ սովորեց-
17 նում էր և ասում նորանց, Գրուած չէ՞ թէ Իմ տունը աղօթքի տուն պիտի կոչուի ամեն ազգերի համար, իսկ դուք աւազակների բոյն արիք դորան:
18 Եւ դպիրները և քահանայապետները լսեցին, և ուզում էին թէ ինչպէս կորցնեն նորան. վասնզի վախում էին նորանից. քանզի բոլոր ժողովուրդը նորա վարդապետութեան վերայ զարմացել էր:
19 Եւ երբոր իրիկուն եղաւ,
20 քաղաքից դուրս եկաւ: Եւ առաւօտանց անցնելիս՝ տեսան
21 այն թզի ծառն արմատից չորացած: Եւ Պետրոսը յիշելով
22 ասաց նորան. Ռաբբի, տես այն թզենին, որ անիծեցիր, չորացաւ: Եւ Յիսուսը պատասխանեց և ասաց նորանց. Աստուծոյ հաւատքն ունեցէք:
23 Զի ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ ով որ այս լեռան ասէ՝ Վեր կաց և ծովն ընկիր, և իր սրտումն չերկմտի, բայց հաւատայ՝ թէ ինչ որ ասում է կ'լինի նորան, կ'լինի ինչ որ ասէ:
24 Որա համար ասում եմ ձեզ թէ Ամեն ինչ որ աղօթք անելով խնդրէք, հաւատացէք թէ կ'առնէք, և կ'լինի ձեզ:
25 Եւ որ ժամանակ որ կանգնէք՝ աղօթք անէք, ներեցէք եթէ մէկի դէմ բան ունենաք. որպէսզի ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է, ձեր յանցանքը թողէ ձեզ:
26 Բայց

ոչ թողուցուք, և ոչ Հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր:
27 Գան միւսանգամ Յերուսաղէմ. և մինչդեռ ի տաճարի անդ զգնայր, գան առ նա քահանայապետքն և դպիրք և ծերք,
28 Եւ ասեն ցնա. Որով իշխանութեամբ առնես զայդ, և ով ետ քեզ զիշխանութիւնդ զայդ:
29 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Հարցից և ես զձեզ բան մի, տուք ինձ պատասխանի. և ես ասացից ձեզ որով իշխա-
30 նութեամբ առնեմ զայս: Մկրտութիւնն Յովհաննուայ երկնից էր եթէ ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի:
31 Խորհէին ընդ միմեանս՝ և ասէին. Եթէ ասեմք եթէ Երկնից, ասէ ցմեզ. Իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա.
32 Այլ եթէ ասեմք՝ Ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն. զի ամենեքին գիտէին զՅովհաննէս՝ թէ մար-
33 գարէ էր: Պատասխանի ետուն և ասեն ցՅիսուս. Չգիտեմք: Եւ Յիսուս ետ նոցա պատասխանի և ասէ. Եւ ոչ ես ասեմ ձեզ, որով իշխանութեամբ առնեմ զայս:

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք՝ և ասել. Այր մի

եթէ դուք չներէք, ձեր Հայրն էլ որ երկնքումն է, ձեր յանցանքը չի ներիլ ձեզ:
27 Եւ դարձեալ Երուսաղէմ եկան. և նա տաճարումը մտնելիս, քահանայապետները և դպիրները և ծերերը նորա մօտ եկան.
28 Եւ ասացին նորան. Ինչ իշխանութիւնով ես առնում այդ և ով տուաւ քեզ այդ իշխանութիւնը որ այդ անես:
29 Յիսուսն էլ պատասխանեց և ասաց նորանց. Ես էլ ձեզանից մէկ բան հարցնեմ ու ինձ պատասխան տուէք, և ես էլ կ'ասեմ ձեզ՝ թէ ինչ իշխանութիւնով
30 եմ՝ անում այս: Յովհաննէսի մկրտութիւնն երկնքից էր, թէ մարդկանցից, պատասխան տուէք ինձ:
31 Եւ իրար հետ միտք էին անում՝ և ասում. Եթէ ասենք՝ Երկնքից, կ'ասէ, Ապա ինչու չհաւատացիք նորան:
32 Այլ թէ ասենք՝ Ի՞արդկանցից, ժողովրդից վախենում ենք. վասնզի ամենքը ընդունում էին Յովհաննէսին՝ թէ իրաւի մարգարէ էր:
33 Եւ պատասխանեցին և ասացին Յիսուսին. Չենք գիտում: Յիսուսն էլ նորանց պատասխանեց և ասաց. Ես էլ չեմ ասիլ ձեզ, թէ ինչ իշխանութիւնով եմ անում սոյս:

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսեց նորանց հետ առակներով խօսել՝ Ի՞նչ ասաց. Մի

տնկեաց այգի, և ած շուրջ
զնովաւ ցանգ, և գուբ հնձան
փորեաց, և շինեաց աշտարակ.
և ետ զնա ցմշակս, և գնաց՝ 'ի
2 տար աշխարհ: Եւ առաքեաց
առ մշակսն 'ի ժամանակի ծառայ
մի, զի 'ի մշակաց անտի առցէ 'ի
3 պտղոյ այգւոյն: Եւ նոցա
կալեալ դան հարին զնա, և
4 արձակեցին ունայն: Դարձեալ
առաքեաց առ նոսա այլ ծառայ,
և զնա կառափնաստեցին և
5 արձակեցին անարգեալ: Եւ
դարձեալ այլ առաքեաց, և զնա
սպանին. և զբազումս այլս՝
զոմանս հարկանէին և զոմանս
6 սպանանէին: Դպա որդի մի էր
իւր սիրելի, զնա առաքեաց առ
նոսա յետոյ, և ասէ. Թերևս
ամաչեսցեն յորդւոյ ասի իմմէ:
7 Իսկ մշակքն իրրև տեսին զնա
թէ գայ՝ ասեն ցմիմեանս. Ա՛ա
է ժառանգն, եկա՛յք սպանցուք
զսա. և մեր լիցի ժառանգու-
8 թիւնն: Եւ կալեալ զնա
սպանին, և հանին արտաքոյ
9 այգւոյն: Դրդ զի՞նչ արասցէ
տէր այգւոյն. եկեսցէ և կո-
րուսցէ զմշակսն, և տացէ
10 զայգին 'ի ձեռս այլոց: Եւ ո՞չ
զգիրն զայն իցէ ընթերցեալ
ձեր, թէ Օվէմն զոր անարգե-
ցին շինողքն, նա եղև գլուխ
11 անկեան: 'Ի Տեառնէ եղև
այս, և է սքանչելի յաչս մեր:

12 Եւ խնդրէին զնա ունել, և
մարդ այգի տնկեց, և նորան
պարիսպով շրջապատեց, և հնձան
փորեց, և աշտարակ շինեց, և
նորան մշակների տուաւ, և օտար
երկիր գնաց: Եւ ժամանակին 2
այն մշակների մօտ մի ծառայ
ուղարկեց, որ մշակներից այ-
գու պտղից առնէ: Նորանք 3
էլ բռնեցին՝ նորան ծեծեցին,
և դատարկ ճանապարհ դրին:
Եւ դարձեալ մի ուրիշ ծառայ 4
ուղարկեց նորանց մօտ. և քար-
կոծելով նորա գլուխը պատառե-
ցին և անպատուած արձակեցին:
Եւ դարձեալ ուրիշն ուղարկեց՝ 5
և նորան սպանեցին, և շատ
ուրիշներին, ոմանց ծեծում և
ոմանց սպանում էին: Լիմա 6
դեռ իր մէկ սիրելի որդի ունե-
նալով, նորան էլ ուղարկեց
նորանց մօտ վերջապէս և ասաց,
թէ Իմ որդուցս կամաչեն:
Բայց այն մշակներն իրար 7
ասացին, թէ Ա՛ա է ժառանգը.
եկէք սորան սպանենք, և ժա-
ռանգութիւնը մեզ կ'լինի: Եւ 8
նորան բռնեցին՝ սպանեցին և
հանեցին այգուցը դուրս. Դրդ 9
այգու տէրն ի՞նչ կ'անէ. կ'գայ
և մշակներին կը կորցնէ և
այգին ուրիշներին կը տայ: Եւ 10
դուք չէ՞ք կարդացել այն գրածը՝
Էն այն քարն՝ որ շինողներն
անարգեցին՝ նա եղաւ անկիւնի
գլուխ: Տերից եղաւ այս, և 11
մեր աչքերի առջևն զարմա-
նալի է:

Եւ ուզում էին նորան բռնել, 12

երկեան 'ի ժողովրդենէ անտի,
զի գիտացին թէ առ նոսա ասաց
զառակն. և թողին զնա և
գնացին:
13 Եւ առաքեն առ նա զոմանս 'ի
փարիսեցւոց անտի՝ և 'ի Հե-
րովդիանոսաց, զի զնա որսացեն
14 բանիւ: Եւ նոքա եկեալ հար-
ցանէին զնա ենթգութեամբ՝ և
ասէին, Ա՛մրգապետ, գիտեմք
զի ճշմարիտ ես, և ո՛չ ինչ փոյթ
է քեզ զումեքէ. զի ո՛չ հայիս յե-
րեսս մարդկան, այլ ճշմարտու-
թեամբ զճանապարհն Աստուծոյ
ուսուցանես. արդ՝ ասա՛ մեզ,
արժա՞ն է հարկս տալ կայսերի՝
թէ ո՛չ. տացո՞ւք եթէ ո՛չ
15 տացուք: Եւ Յիսուս գիտաց
զկեղծաւորութիւն նոցա, ասէ
ցնոսա. Ինչո՞ւ փորձէք զիս կեղ-
ծաւորք. բերէք ինձ դահեկան
16 մի զի տեսից: Եւ նոքա բերին.
և ասէ ցնոսա. Որո՞յ է պատկերս
այս կամ գիր. և նոքա ասեն
17 ցնա. Կայսերի: Պատասխանի
ետ Յիսուս և ասէ ցնոսա.
Երթա՛յք տո՛ւք զկայսերն կայսերի,
և զԱստուծոյն Աստուծոյ. և
զարմացան ընդ նա:
18 Դան առ նա սադուկեցիքն որ
ասեն՝ թէ Չկ'ք յարութիւն.
հարցանէին ցնա և ասէին:
19 Ա՛մրգապետ, Մովսէս գրեաց
մեզ. եթէ ուրուք եղբայր
մեռանիցի և թողուցու կին՝ և
որդի ո՛չ թողուցու. զի առցէ
եղբայր նորա զկին նորա, և յա-
րուսցէ զաւակ եղբաւր իւրում:
բայց ժողովրդիցը վախեցան.
վասնզի իմացան՝ թէ այն առակն
իրանց համար ասաց. և նորան
թողին և գնացին:
Եւ փարիսեցիներից և Հերո- 13
դէսեաններից մի քանի հոգի
նորա մօտ ուղարկեցին, որ խօս-
քով որսան նորան: Եւ նորանք 14
եկան և ասացին նորան. Ա՛մ-
գապետ, գիտենք՝ որ ճշմարիտ
ես, և ոչ ոքից հոգս չունիս,
վասնզի մարդոց երեսպաշտու-
թիւն չես անում, այլ Աստու-
ծոյ ճանապարհը ճշմարտու-
թիւնով սովորեցնում ես: Ար-
ժա՞ն է՝ Կայսրին հարկ տալ,
թէ չէ. տա՞նք, թէ չտանք:
Նա էլ իմանալով նորանց կեղ- 15
ծաւորութիւնը, ասաց նորանց.
Ինչո՞ւ էք փորձում ինձ, մի
դահեկան բերէք ինձ՝ որ տես-
նեմ: Նորանք էլ բերին: Եւ 16
ասաց նորանց. Այս պատկերը
կամ գիրը ո՞ւմն է: Նորանք
էլ ասացին նորան, Կայսրին: Յի- 17
սուսն էլ պատասխանեց և ասաց
նորանց. Կայսրինը կայսրին տու-
էք, և Աստուծոյնը՝ Աստուծոյն:
Եւ զարմացան նորա վերայ:
Եւ նորա մօտ եկան Սադու- 18
կեցիք, որ ասում են՝ թէ Յա-
րութիւն չկայ. նորան հարց-
րին և ասացին. Ա՛մրգապետ, 19
Մովսէս մեզ համար գրեց որ
եթէ մէկի եղբայրը մեռնի, և
կին թողէ, և որդիք չթողէ՝ որ
նորա եղբայրը նորա կինն առնէ,
և իր եղբօր համար զաւակ յա-

20 Արդ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն առ կին՝ և մեռաւ, և
21 ոչ եթող զաւակ։ Եւ երկրորդն առ զնոյնն՝ և մեռաւ, և ոչ նա
22 եթող զաւակ. նոյնպէս և երրորդն առ զնոյն։ Եւ եօթնե-
քեան իսկ. և ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն մեռաւ և կինն։
23 Արդ 'ի յարութեանն յորժամ յառնիցեն, ՚Ցր 'ի նոցանէ
լինիցի կինն. զի եօթնեքեան
24 կալան զնա կին. Պատասխանի
եւ Յիսուս և ասէ ցնոսա. Ո՞չ
վասն այդորիկ իսկ մոլորեալ էք.
զի ոչ գիտէք զգիրս՝ և ոչ զզօրու-
25 թիւնն Աստուծոյ։ Զի յորժամ
'ի մեռելոց յարիցեն, ոչ արք
կանայս առնեն, և ոչ կանայք
արանց լինին. այլ իբրև զՀրեշ-
տակս իցեն՝ որ յերկինս են։
26 Այլ վասն յարութեան մեռելոց
զի յառնեն, ո՞չ լուգ ընթերցեալ
ձեր 'ի գիրսն Մովսէսի 'ի մորենւ-
ւոջն. որպէս ասաց ցնա Աս-
տուած. Ե՛ս եմ, ասէ՝ Աստուած
Աբրահամու, Աստուած Իսա-
հակայ, և Աստուած Յակովբայ։
27 Եւ ոչ է Աստուած մեռելոց՝
այլ կենդանեաց. և արդ դուք
յոյժ մոլորեալ էք։

28 Եւ մատուցեալ մի ոմն 'ի
դպրացն՝ ասէր նոցա մինչ վի-
ճէին. իբրև ետես եթէ բարւոք
ետ նոցա զպատասխանին, եհարց
զնոսա։ Արդ եօթնք եղբարք
կային, և առաջինքն կին առաւ՝
և մեռնելիս զաւակ չթողեց։ Եւ
երկրորդը նորան առաւ՝ և մե-
ռաւ, և նա էլ զաւակ չթողեց.
այսպէս էլ երրորդը։ Եւ այն
եօթն էլ նորան առին և զաւակ
չթողին. և ամենից վերջը կինն
էլ մեռաւ։ Արդ յարութեան
ժամանակին երբոր յարութիւն
կ'առնեն, նորանցից որի՞ն կ'լինի
կին. վասնզի այն եօթն էլ
նորան կին առին։ Եւ Յիսուսը
պատասխանեց և ասաց նորանց.
Չէ՞ որ իսկ դորա համար մոլոր-
ուած էք, որ ոչ գիրքն էք
գիտում և ոչ Աստուծոյ զօրու-
թիւնը։ Վասնզի երբոր մեռելնե-
ների միջից յարութիւն կ'առ-
նեն, ոչ կին կ'առնեն՝ և ոչ
մարդու կ'գնան, այլ հրեշ-
տակների պէս են որ երկնքումն
են։ Սակայն մեռելների հա-
մար՝ թէ յարութիւն կ'առնեն,
դուք չէ՞ք կարդացել Մովսէսի
գրքումը մորենու մէջ, թէ Աս-
տուած ինչպէս խօսեց նորան և
ասաց. Ես եմ Աբրահամի Աս-
տուածը, և Իսահակի Աս-
տուածը, և Յակոբի Աստուա-
ծը։ Եւ Աստուած մեռելներին
չէ, բայց կենդանիների Աս-
տուած, ուրեմն դուք շատ մո-
լորուած էք։

Եւ դպիրներից մէկը մօտ եկաւ,
լսելով որ վիճում էին, և երբոր
տեսաւ թէ լաւ պատասխանեց
նորանց, նորան հարցրեց։ Ո՞րն

ցնա և ասէ, Ո՞ր պատուիրան է
29 առաջին։ Եւ Յիսուս ասէ ցնա.
Առաջին քան զամենայն՝ Լո՛ւր
30 Իսրայէլ, Տէր Աստուած մեր՝
Տէր մի է. և սիրեսցես զՏէր
Աստուած քո յամենայն սրտէ
քումմէ, և յամենայն անձնէ
քումմէ. և յամենայն մտաց
քոց, և յամենայն զօրութենէ
քումմէ. այս է առաջին պատուի-
31 րան։ Եւ երկրորդն նման սմին.
Սիրեսցես զընկեր քո՝ իբրև
զանձն քո. մեծ քան զսոսա այլ
32 պատուիրան ոչ գոյ։ Եւ ասէ
ցնա դպիրն. Խաբուռ է Վարդապետ. ճշմարտութեամբ ասա-
ցեր՝ թէ մի է Աստուած, և ոչ
33 գոյ այլ բաց 'ի նմանէ։ Եւ սի-
րելն զնա յամենայն սրտէ և
յամենայն զօրութենէ և յամե-
նայն մտաց, և սիրելն զընկերն
34 իբրև զանձն, առաւել է քան
զողջակէզս և զզոհս։ Եւ տե-
սեալ Յիսուսի թէ իմաստու-
թեամբ ետ զպատասխանին՝ ասէ
ցնա. Չէս հեռի յարքայու-
թենէ Աստուծոյ. և ոչ ևս ոք
իշխէր ինչ հարցանել ցնա։

35 Պատասխանի ետ Յիսուս և
ասէ, մինչ ուսուցանէր 'ի տա-
ճարին. Զի՞արդ ասեն դպիրքն,
36 եթէ Քրիստոսն որդի Դաւթի
է։ Եւ ինքն Դաւթի Հոգւովն
Սրբով ասէ. Ասաց Տէր ցՏէր
իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ՝
մինչև եդից զթշնամիս քո պա-
է ամենից առաջին պատուի-
29 րանքը։ Յիսուսն էլ նորան
պատասխանեց, թէ Ամեն պա-
տուիրանքներից առաջինը սա է,
Լսիր, Իսրայէլ, մեր Տէր Աս-
30 տուածը մէկ Տէր է. Եւ սիրիր
քո Տէր Աստուծոյն բոլոր սրբ-
տիցդ, և բոլոր անձիցդ, և
բոլոր մտքիցդ, և բոլոր զօ-
րութիւնիցդ. սա է առաջին պա-
տուիրանքը։ Եւ երկրորդը սո-
31 րա նման, Սիրիր քո ընկերը
քո անձին պէս. սորանցից աւելի
մեծ ուրիշ պատուիրանք չկայ։
Եւ դպիրը նորան ասաց. Լաւ,
32 վարդապետ, ճշմարտութեամբ
ասացիր՝ թէ մէկ է Աստուած,
նորանից բաց ուրիշ չկայ։ Եւ
33 նորան սիրելը բոլոր սրտից և
բոլոր մտքից և բոլոր անձից և
բոլոր զօրութիւնից, և ընկերն
անձին պէս սիրելը՝ աւելի է
քանթէ ամեն ողջակէզները և
զոհերը։ Եւ Յիսուսը նորան
34 տեսնելով, որ իմաստութեամբ
պատասխանեց, ասաց նորան.
Դու հեռու չես Աստուծոյ արք-
այութիւնից։ Եւ այլ ևս
ոչ ոք չէր համարձակում նո-
րան մի բան հարցնել։

Եւ Յիսուսը պատասխանեց
35 և ասաց, երբ որ տաճարումը
սովորեցնում էր. Ի՞նչպէս են
ասում՝ դպիրները, թէ Քրիս-
տոս Դաւթի որդի է։ Վասն-
36 զի ինքը Դաւթի սուրբ Հոգ-
ովն ասում է, Տէրն իմ՝ Տէրոջն
ասաց. Իմ աջ կողմը նստիր,

37 տուանդան ոտից քոց։ Որդ եթէ
ինքն իսկ Դաւիթ զնա Տէր
կոչէ՝ զիարդ իցէ որդի նորա. և
բազում ժողովուրդ լսէր նմա
քաղցրութեամբ։

38 Եւ ասէր ուսուցանելով 'ի
վարդապետութեան իւրում,
Զգոյշ լերուք 'ի դպրաց անտի,
որ կամին 'ի հանդերձս երևելիս
շրջել, զնախողջոյնս խնդրել 'ի
39 հրապարակս, Եւ զնախաթոռս
'ի ժողովուրդս, և զգահագլուխս
40 յընթրիս։ Որ ուտեն զտունս
այրեաց, պատճառանօք յեր-
կարեալ զաղօթս, զի աւելի ևս
դատաստանս ընկալցին։

41 Կայր Յիսուս ընդդէմ գան-
ձանակին, տեսանէր թէ զիարդ
ժողովուրդն արկանէր պղինձ 'ի
գանձանակն, և բազում մեծա-
42 տունք արկին բազում։ Եկն
այրի մի և արկ երկուս լումայս,
43 որ է նաբարակիտ մի. Եւ
կոչեցեալ առ ինքն զաշակերտսն,
ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ՝ զի
այրին այն տառապեալ շատ արկ
քան զամենեսեան՝ որ արկին 'ի
44 գանձանակն։ Զանազի ամենեքին
յաւելորդաց իւրեանց արկին.
այլ նա 'ի չքաւորութենէ իւրմէ՝
զամենայն ինչ զոր ունէր արկ
գոյիւ չափ զկեանս իւր։

մինչև որ քու թշնամիները
ոտացդ պատուանդան դնեմ։
37 Որդ Դաւիթ ինքն նորան Տէր
է ասում՝ ապա ի՞նչպէս նորա
որդի է, և շատ ժողովուրդ
քաղցրութեամբ լսում էր նորան։
38 Եւ իր վարդապետութեան
մէջ ասում էր նորանց, զգոյշ
կացէք դպիրներից, որ կամե-
նում են պայծառ հագուստնե-
րով մանգալ, և հրապարակնե-
րումը բարևներ ընդունել. Եւ 39
ժողովարանների մէջ առաջին
աթոռներ, և ընթրիքներում
առաջին բազմոցներ։ Որ որ- 40
բևայրների տները ուտում են,
և պատճառանքով երկար աղօթք
են անում. դորանք աւելի ևս
դատապարտութիւն կ'առնեն։

41 Եւ Յիսուսը գանձանակի դի-
մացը նստած մտիկ էր անում,
թէ ժողովուրդն ինչպէս էր
պղինձ գցում գանձանակը, և
շատ հարուստներ շատ բաներ
էին գցում։ Եւ մի աղքատ 42
որբևայրի եկաւ երկու լումայ
գցեց, որ մի նաբարակիտ է։ Եւ 43
իր աշակերտներին իրան մօտ
կանչեց, և ասաց նորանց. Ճշ-
մարիտ ասում եմ ձեզ՝ թէ այս
աղքատ որբևայրին գանձանակը
գցողների ամենից աւելի գցեց։
Զանազի ամենքն իրանց աւե- 44
լորդիցը գցեցին. բայց սա իր
չքաւորութիւնից ամէն ինչ որ
ունէր գցեց, իր կեանքի բոլոր
ապրուստը։

ԳԼ. ԺԳ

1 Եւ յելանելն նորա 'ի տա-
ճարէ անտի, ասէ ցնա մի
յաշակերտացն նորա. Վարդա-
պետ, տես որպիսի են քարինքս,
2 և որպիսի շինուածք։ Պա-
տասխանի ետ նմա Յիսուս և
ասէ. Տեսանե՞ս զայդ ամենայն
շինուածս, ամէն ասեմ ձեզ՝ եթէ
չ՚ թողցի այդր քար 'ի քարի
վերայ որ ոչ քակտեսցի։
3 Եւ մինչ նստէր նա 'ի լերինն
Զիթենեաց յանդիման տաճա-
րին, հարցանէին ցնա առան-
ձինն՝ Պետրոս և Յակոբոս և
Յովհաննէս և Անդրէաս։
4 Ասա մեզ, զորանք ե՞րբ
կ'լինին. և նշանն ի՞նչ է, երբոր
այդ բոլոր բաները պիտի կա-
տարուին։ Յիսուսն էլ պա-
տասխանեց և սկսեց նորանց
ասել. Զգոյշ կացէք, մի գուցէ
մէկը ձեզ խաբէ։ Զանազի 6
շատերը կ'գան իմ անունովը, և
կ'ասեն՝ թէ Ես եմ. և շատերը
կ'մոլորեցնեն։ Բայց երբոր պա- 7
տերազմներ և պատերազմների
համբաւներ կ'լսէք, մի շփո-
թուիք, վասնզի պէտք է որ լի-
նին. Բայց դեռ վերջը չէ։
Զանազի ազգ ազգի վերայ վեր 8
կ'կենայ, և թագաւորութիւն
թագաւորութեան վերայ. և
տեղ տեղ երկրաշարժներ կըլի-
նին, և սովեր և խռովութիւն-
ներ կ'լինին. սորանք նեղու-
թեանց սկիզբն են։ Բայց դուք 9

ԳԼ. ԺԳ

Եւ երբոր նա տաճարիցը 1
դուրս էր գալիս, նորա աշա-
կերտներիցը մէկը նորան ասաց.
Վարդապետ, տես ի՞նչպիսի
քարեր և ի՞նչպիսի շինուածներ։
Եւ Յիսուսը պատասխանեց և 2
ասաց նորան. Տեսնում ես այդ
մեծ շինուածները. քար քարի
վերայ չի թողուիլ՝ որ չը քան-
դուի։
Եւ երբոր նա Զիթենեաց 3
լեռան վերայ նստած էր տա-
ճարի դիմացը, Պետրոսը և Յա-
կոբոսը և Յոհաննէսը և Անդ-
րէասը առանձին հարցնում էին
նորան. Ասա մեզ, զորանք ե՞րբ 4
կ'լինին. և նշանն ի՞նչ է, երբոր
այդ բոլոր բաները պիտի կա-
տարուին։ Յիսուսն էլ պա- 5
տասխանեց և սկսեց նորանց
ասել. Զգոյշ կացէք, մի գուցէ
մէկը ձեզ խաբէ։ Զանազի 6
շատերը կ'գան իմ անունովը, և
կ'ասեն՝ թէ Ես եմ. և շատերը
կ'մոլորեցնեն։ Բայց երբոր պա- 7
տերազմներ և պատերազմների
համբաւներ կ'լսէք, մի շփո-
թուիք, վասնզի պէտք է որ լի-
նին. Բայց դեռ վերջը չէ։
Զանազի ազգ ազգի վերայ վեր 8
կ'կենայ, և թագաւորութիւն
թագաւորութեան վերայ. և
տեղ տեղ երկրաշարժներ կըլի-
նին, և սովեր և խռովութիւն-
ներ կ'լինին. սորանք նեղու-
թեանց սկիզբն են։ Բայց դուք 9

ցեն յատեանս, և ՝ի ժողո-
վուրդս տանջեցիք, և առաջի
դատաւորաց և թագաւորաց
կայցէք վասն իմ ՝ի վկայու-
10 թիւն նոցա, Եւ ամենայն
Հեթանոսաց*. բայց՝ նախ
պարտ է աւետարանիս քարոզել:
11 Այլ յորժամ տանիցին զձեզ
մատնել, մի յառաջագոյն հո-
գայցէք, և մի դիտաւ ածիցէք՝
թէ զի՞նչ խօսիցիք. այլ որ ինչ
տացի ձեզ ՝ի ժամուն յայնմիկ՝
զայն խօսիցիք. զի ո՛չ դուք էք
որ խօսիցիք՝ այլ Հոգին Սուրբ:
12 Մատնեսցէ եղբայր զեղբայր
՝ի մահ՝ և հայր զորդի. և յարի-
ցեն որդիք ՝ի վերայ հարց, և
13 սպանանիցեն զնոսա: Եւ եղիջիք
ատելեալք յամենեցունց վասն
անուան իմոյ. այլ որ համբե-
ւեսցէն ՝ի սպառ՝ նա կեցցէ:

14 Եւ յորժամ տեսանիցէք
զպղծութիւն աւերածին, զի
կայցէ ՝ի տեղւոջ ուր չիցէ
արժան. որ ընթեռնուն ՝ի միտ
առցէ: Յայնժամ որ ՝ի Հրէաս-
տանի իցեն՝ փախիցեն ՝ի
15 լերինս. Եւ որ ՝ի վերայ տան-
եացն իցէ՝ մի իջցէ ՝ի տուն, և
մի մտցէ բառնալ ինչ ՝ի տանէ
16 իւրմէ. Եւ որ յագարակին իցէ՝
մի դարձցի յետս առնուլ զձորձս
17 իւր: Բայց վա՛յ իցէ յղեաց և
ստնտուաց յաւուրսն յայնոսիկ:

զգոյշ կացէք ձեր անձերին,
վասնզի ձեզ ատեաններուն կ՝մատ-
նեն, և ժողովարանների մէջ
կ՝տանջուիք, և կուսակալների
և թագաւորների առջև կ՝կանգ-
նիք ինձ համար նորանց ՝ի վկա-
յութիւն: Եւ բոլոր ազգերին 10
պէտք է առաջ Աւետարանը քա-
րոզուի. Բայց երբոր ձեզ կըտա- 11
նին որ մատնեն, առաջուց հոգս
չանէք թէ ի՞նչ պիտի խօսիք, և
ոչ մտածեցէք. այլ ինչ որ այն
ժամումը կ՝տրուի ձեզ, այն խո-
սեցէք. քանզի դուք չէք՝ խօսող-
ները, բայց Սուրբ Հոգին:
Եւ եղբայր եղբօրը կ՝մատնէ 12
մահու, և հայրը որդուն. և
որդիք վեր կ՝կենան ծնողաց
վերայ, և նորանց կ՝սպանեն:
Եւ ամենին ատելի կը լինիք իմ 13
անունի համար. բայց ով որ
մինչև վերջը համբերէ՝ նա
կապրի:

Եւ երբոր տեսնէք աւերածի 14
պղծութիւնը, որ ասուած է
Դանիէլ մարգարէիցը, կանգ-
նած այն տեղումը որ արժան
չէ. (ով որ կարդում է, միտք
առնէ.) այն ժամանակ նորանք
որ Հրէաստանումն են, թող
լեառները փախչին: Եւ ով որ 15
կտրի վերայ է, թող չիջնէ տան
մէջ, և չմտնէ իր տանիցը մի
բան վեր առնելու: Եւ յան- 16
դումը լինողը թող յետ չդառ-
նայ իր հանդերձը առնելու:

* ՝Ի Ցոյն չէ։

18 Յաղօթս կացէք զի մի ձմերանի
19 լինիցի այն: Եղիցին աւուրքն
այնոքիկ նեղութեանց՝ որպիսի
ո՛չ եղեն երբէք այնպիսիք ՝ի
սկզբանէ արարածոց մինչև
20 ցայժմ, և մի այլ լիցի: Եւ եթէ
ոչ էր կարճեալ Աստուծոյ
զաւուրսն զայնոսիկ վասն ընտ-
րելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն
մարմին. այլ վասն ընտրելոցն
զորս ընտրեաց՝ կարճեաց զա-
21 ւուրսն զայնոսիկ: Յայնժամ եթէ
ոք ասիցէ ձեզ, եթէ Աստուածիկ
է Քրիստոսն՝ կամ աւանիկ,
22 մի հաւատայցէք: Զի յարիցեն
սուտ քրիստոսք և սուտ մարգա-
րէք, և տացեն նշանս և արա-
ւեստս՝ առ ՝ի մոլորեցուցանելոյ
եթէ հնար ինչ իցէ և զընտրե-
23 եալսն: Բայց դուք զգոյշ
լերուք՝ ահաւասիկ յառաջագոյն
ասացի ձեզ զամենայն:

24 Այլ յաւուրսն յայնոսիկ
յետ նեղութեանն այնորիկ,
արեգակն խաւարեսցի, և լուսին
25 ո՛չ տացէ զլոյս իւր: Եւ աստեղք
երկնից թափթափեսցին, և
զօրութիւնք յերկինս շարժես-
26 ցին: Եւ յայնժամ տեսցեն
զՈրդի մարդոյ եկեալ ամպովք՝
զօրութեամբ և փառաւք բազմօք:
27 Եւ յայնժամ առաքեսցէ զՀրեշ-
տակս իւր, և ժողովեսցէ
զընտրեալս իւր ՝ի չորից հողմոց՝
՝ի ծագաց երկրի մինչև ՝ի ծագս

Բայց վա՛յ այն օրերումը յղա- 17
ցածներին և ծիծ տուողներին:
Եւ աղօթք արէք, որ ձեր փախ- 18
չիլը ձմեռ ժամանակ չ՝լինի:
Վասնզի այն օրերը նեղութիւն- 19
ներ կ՝լինին, որ այնպիսիներ
աշխարհի սկզբիցը, որ Աստուած
ստեղծել է, մինչև հիմա չեն
եղած, և երբէք չեն լինիլ: Եւ 20
եթէ Տէրն այն օրերը չէր
կարճացրել, ոչ մի մարմին չէր
ապրիլ, բայց ընտրուածների
համար, որոնց ընտրեց, այն
օրերը կարճացրեց: Եւ այն 21
ժամանակ եթէ մէկը ձեզ ասէ.
Ահա այստեղ է Քրիստոսը,
կամ ահա այնտեղ, մի հաւա-
տաք: Վասնզի սուտ քրիստոս- 22
ներ և սուտ մարգարէներ վեր
կ՝կենան. և նշաններ և հրաշք-
ներ կ՝տան, որ եթէ կարելի
լինէր, ընտրուածներին էլ մո-
լորեցնեն: Բայց դուք զգոյշ 23
կացէք, ահա ասացի առաջուց
բոլորը:

Բայց այն օրերումն այն նե- 24
ղութիւնից յետոյ արեգակը
կ՝խաւարի, և լուսինն իր լոյսը
չի տալ: Եւ երկնքի աստղերը 25
կ՝թափուին, և երկնքումը լի-
նող զօրութիւնները կըշարժ-
ուին: Եւ այն ժամանակ 26
կ՝տեսնեն Որդին մարդոյ ամպե-
րով գալիս շատ զօրութիւնով
և փառքով: Եւ այն ժամա- 27
նակ իր հրեշտակները կ՝ուղար-
կէ, և իր ընտրուածներին չորս
կողմիցը կ՝ժողովէ, երկրի ծայ-

28 երկնից։ Բայց դուք ի թզենւոյ անտի ուսջիք զառակն. յորժամ տակաւ ոստքն նորա կակղանայցեն և տերև արձակիցի ի նմա, գիտէք թէ մերձ է
29 ամառն. Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է
30 առ դուրս։ Ամէն ասեմ ձեզ, թէ Ո՛չ անցցէ ազգս այս՝ մինչև
31 այս ամենայն եղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն։

32 Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու՝ ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք յերկինս՝ և ոչ Որդի,
33 բայց Հայր միայն։ Զգո՛յշ եղերուք. սկեցէք և կացէք յաղօթս. զի ո՛չ գիտէք երբ
34 ժամանակն իցէ։ Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ՝ թողուցու զտուն իւր. և տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն, և իւրաքանչիւր զգործս իւր, և դռնապանին պատուէր տայցէ, զի
35 արթուն լինիցի։ Արդ արթո՛ւն կացէք. զի ո՛չ գիտէք երբ տէր տանն գայցէ՝ յերեկոյեայ՝ եթէ ի մէջ գիշերի՝ եթէ ի հաւա-խօսի՝ եթէ ընդ առաւօտս։
36 Գուցէ եկեալ յանկարծակի՝
37 գտանիցէ զձեզ ի քուն։ Բայց զոր ձեզդ ասեմ, ամենեցուն ասեմ՝ Արթո՛ւն կացէք։

ԳԼ. ԺԴ

1 Եւ էր զատիկն և բաղարջա-

բիցը մինչև երկնքի ծայրը։
Բայց թզենուցը սովորեցէք 28
առակը. երբոր նորա ճղերը
արդէն կ'կակղին և տերևները
կ'արձակուին գիտէք թէ ամառը
մօտ է։ Այնպէս էլ դուք, երբ- 29
որ տեսնէք այս բոլորը լինելիս,
իմացէք թէ մօտիկ է դռներին։
Ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ 30
այս ազգը չի անցնիլ, մինչև որ
այս բոլորը լինի։ Երկինքն և 31
երկիրն կ'անցնին, բայց իմ
խօսքերը չեն անցնիլ։

Այն այն օրուայ և ժամի 32
համար ոչ ոք չգիտէ, ոչ հրեշ-
տակները երկնքումը և ոչ Որ-
դին, բայց միայն Հայրը։
Զգուշացէք, արթուն կացէք 33
և աղօթք արէք. վասնզի չըգի-
տէք թէ ժամանակը երբ է։
Ինչպէս մի մարդ, որ հեռու 34
աշխարհ գնալիս իր տունը
թողէ, և իր ծառաներին իշխա-
նութիւն տայ, և ամեն մէկին իր
գործը, և դռնապանին հրաման
տայ, որ արթուն կենայ։ Արդ 35
արթուն կացէք, վասնզի չըգի-
տէք թէ տանտէրը երբ կգայ,
իրիկո՞ւնը, թէ կէս գիշերը, թէ
հաւի խօսելու ժամանակին,
թէ առաւօտանց։ Որ չ'լինի 36
թէ յանկարծ գալով ձեզ քնած
գտնէ։ Բայց ինչ որ ձեզ 37
ասում եմ, ամենին եմ ասում.
Արթուն կացէք։

ԳԼ. ԺԴ

Եւ երկու օրից յետոյ զատիկն 1

կերք յետ երկուց աւուրց.
խնդրէին քահանայապետքն և
դպիրք՝ եթէ զի՞արդ զնա նենգաւ
2 կալեալ սպանանիցեն։ Բայց
ասէին՝ թէ Ո՛չ ի տօնի ասա,
զի մի՛ խռովութիւն լինիցի ի
ժողովրդեանն։

3 Եւ մինչ էր ի Բեթանիայ ի
տան Սիմոնի բորոտի բազմեալ,
եկն կին մի որ ունէր շիշ իւղոյ
նարդեան աղնուի մեծագնոյ, և
բեկեալ զշիշն՝ եհեղ ի վերայ
4 գլխոյ նորա։ Եւ աշակերտքն
զչարէին և ասէին. Ընդէ՞ր եղև
կորուստ իւղոյդ այդորիկ։
5 Արթի էր զայդ իւղ վաճառել
աւելի քան երեք հարիւր դա-
հեկանի, և տալ աղքատաց. և
6 զայրանային նմա յոյժ։ Եւ
Յիսուս ասէ ցնոսա. Թո՛յլ տուք
զնա՝ զի՞ աշխատ առնէք, զի
գործ մի բարի գործեաց դա՛յիս։
7 Յամենայն ժամ զաղքատս ընդ
ձեզ ունիք, և յորժամ կամիք՝
կարող էք առնել նոցա բարիս.
այլ զիս ո՛չ յամենայն ժամ ընդ
8 ձեզ ունիք։ Զոր զոր ունէրդ՝
արար. յառաջագոյն խնկեաց
զմարմին իմ ի նշան պատանաց։
9 Ամէն ասեմ ձեզ. Ուր և
քարոզեսցի աւետարանս այս ընդ
ամենայն աշխարհ, և զոր արար
դա՝ խօսեսցի վասն յիշատակի
դորին։

10 Եւ Յուդա Սկարիովտացի մի

էր և բաղարջակերք, և քահա-
նայապետներն և դպիրները որո-
նում էին։ Թէ ի՞նչպէս նո-
րան նենգութեամբ բռնեն սպա-
նեն։ Բայց ասում էին՝ Ոչ 2
տօնումն՝ ոչ, մի գուցէ ժո-
ղովրդի մէջ խռովութիւն լինի։

Եւ երբոր Բեթանիա էր, Սի- 3
մոն բորոտի տան սեղան նստած,
մի կին եկաւ՝ որ մի շիշ աղնիւ
թանգագին նարդոսի իւղ ունէր,
և շիշը կոտրեց՝ նորա գլխի վե-
րայ թափեց։ Բայց կային 4
ոմանք որ իրանց մէջ դժուարա-
ցան, ասելով. Ի՞նչու եղաւ
իւղի այդ կորուստը։ Վասնզի 5
կարելի էր դորան երեք հարիւր
դահեկանից աւելի թանգ ծա-
խել, և աղքատներին տալ, և
շատ զայրանում էին նորա վե-
րայ։ Յիսուսն էլ ասաց. Թողէք 6
տուէք դորան. ինչո՞ւ էք նեղու-
թիւն տալիս դորան. դա մի
բարի բան գործեց ինձ վերայ։
Վասնզի ամեն ժամանակ աղ- 7
քատներին ձեզ հետ ունիք, և
երբոր կամենաք՝ կարող էք նո-
րանց բարի անել. բայց ինձ
ամեն ժամանակ ձեզ հետ չու-
նիք։ Դա ինչ որ ունէր, արաւ. 8
առաջուց իմ մարմին օծեց՝ թաղ-
ման համար։ Ճշմարիտն ասում 9
եմ ձեզ, ուր որ այս աւետա-
րանը քարոզուի, բոլոր աշխարհ-
քի մէջ դորա յիշատակի հա-
մար նա էլ կ'խօսուի՝ որ դա
արաւ։

Եւ Յուդա Իսկարիոտացին՝ 10

յերկոտասանից անտի, գնաց առ
քահանայապետն զի մատնեսցէ
11 զնա նոցա։ Եւ որքա իբրև լուան՝
խնդացին, և խոստացան տալ
նմա արծաթ. և խնդրէր՝ թէ
զի՞արդ պարապով մատնեսցէ զնա։

12 Եւ յառաջնումաւուր բաղարջակերացն՝ յորժամ զզատիկն
զենուին, ասեն ցնա աշակերտքն.
Որ՞ր կամիս՝ երթիցուք պատ-
րաստեսցուք՝ զի կերիցես
13 զզատիկն։ Եւ առաքէ երկուս
յաշակերտաց անտի՝ և ասէ
ցնոսա. Երթայք ՚ի քաղաք, և
իբրև մտանիցէք ՚ի քաղաքն՝
պատահեսցէ ձեզ այր մի որ
սափոր ջրոյ յուս ունիցի,
14 երթայք զհետ նորա։ Եւ յո՞ր
տուն մտանիցէ, ասասջիք ցտա-
նուտէրն. Վարդապետ ասէ՝
Որ՞ր են իջևանքն, ուր աշակեր-
15 տօքս ուտիցեմ զզատիկն. Եւ
նա ցուցցէ ձեզ վերնատուն մի
մեծ զարդարեալ. անդ պատ-
16 րաստեսջի՛ք մեզ։ Եւ գնացին
պատրաստել աշակերտքն նորա.
եկին ՚ի քաղաքն՝ և գտին որպէս
ասացն նոցա. և պատրաստեցին
զզատիկն։
17 Եւ իբրև երեկոյ եղև՝ գայ
18 երկոտասանիւքն հանդերձ։ Եւ
իբրև բաղմեցան և դեռ ուտէին,
ասէ Յիսուս. Ամէն ասեմ՝ ձեզ՝
զի Մի՝ ոմն ՚ի ձէնջ մատնելոց է
19 զիս, որ ուտէ իսկ ընդ իս։ Եւ
նոքա սկսան տրտմել՝ և ասել մի

այն տասներկուսից մէկը՝ քա-
հանայապետների մօտ գնաց, որ
նորան մատնէ նորանց։ Որ- 11
բանք էլ երբոր լսեցին՝ ուրա-
խացան՝ և խոստացան նորան
արծաթ տալ. և որոնում էր
թէ ի՞նչպէս յարմար ժամանա-
կով մատնէ նորան։

Եւ բաղարջակերաց առաջին 12
օրը, երբոր զատկի գառն մոր-
թում էին, նորա աշակերտները
նորան ասացին. Ի՞նչ տեղ ես
կամենում, որ գնանք պատրաս-
տենք, որ զատիկն ուտես։ Եւ 13
իր աշակերտներից երկուսին
ուղարկեց և ասաց նորանց.
Գնացէք քաղաքը, և մի մարդ
կ՚պատահի ձեզ՝ որ ջրի կուժն
ու�ն տանում, նորա ետևից
գնացէք։ Եւ ուր որ մտնէ, այն 14
տան տիրոջն ասացէք, թէ Վար-
դապետն ասում է՝ Որ՞ր է՝ այն
իջևանը, ուր զատիկն ուտեմ
աշակերտներիս հետ։ Եւ նա 15
մի մեծ զարդարուած պատրաստ
վերնատուն ցոյց կ՚տայ ձեզ.
այն տեղ պատրաստեցէք մեզ
համար։ Եւ նորա աշակերտ- 16
ները ելան ու եկան քաղաքը, և
գտան ինչպէս նորանց ասաց. և
զատիկը պատրաստեցին.

Եւ երբոր իրիկուն եղաւ, 17
եկաւ տասներկուսին հետ. Եւ 18
երբոր սեղան նստեցին և ու-
տում էին, ասաց Յիսուսը.
Ճշմարիտն ասում եմ ձեզ,
որ ձեզանից մէկը կ՚մատնէ ինձ.
նա որ ինձ հետ ուտում է։ 19

ըստ միոջէ. Մի՞թէ ես իցեմ, և
20 միւսն՝ Մի՞թէ ես իցեմ։ Նա
պատասխանի ետ և ասէ ցնոսա.
Մի յերկոտասանից այսր, որ
մխնաց ընդ իս ՚ի սկաւառակդ։
21 Այլ Որդի մարդոյ երթայ
որպէս և գրեալ է վասն նորա.
բայց վա՜յ իցէ մարդոյն այնմիկ՝
յոյր ձեռս Որդի մարդոյ մատ-
նեսցի. լաւ էր նմա՝ թէ չէր իսկ
ծնեալ մարդն այն։

22 Եւ մինչդեռ ուտէին, առեալ
Յիսուսն հաց՝ օրհնեաց և երեկ՝
ետ նոցա, և ասէ. Առէք՝ այդ
23 է մարմին իմ։ Եւ առեալ
բաժակ՝ գոհացաւ և ետ նոցա,
և արբին ՚ի նմանէ ամենք-
24 եան։ Եւ ասէ ցնոսա. Այս է
արիւն իմ նորոյ ուխտի,
որ փոխանակ բազմաց հեղանի։
25 Ամէն ասեմ ձեզ, թէ Ո՛չ ևս
յաւելից ըմպել՝ ՚ի բերոյ որթոյ
մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից
զնա նոր յարքայութեան Աս-
տուծոյ։

26 Եւ գոհացեալ՝ ելին ՚ի լեառն
Ձիթենեաց։
27 Եւ ասէ ցնոսա Յիսուս.
Ամենեքին գայթագղելոց էք
յինէն այսմ՝ գիշերի. զի
գրեալ է. թէ Հարից զհովիւն՝
28 և ոչխարքն ցրուեսցին։ Այլ
յետ յարութեան իմոյ՝ յառա-
ջագոյն երթայց քան զձեզ ՚ի
29 Գալիլեա։ Պատասխանի ետ

Նորանք էլ սկսեցին տրտմել 19
և մէկը մէկից յետոյ նորան
ասել։ Մի՞թէ ես. և միւսը՝
Մի՞թէ ես։ Նա էլ պատաս- 20
խանեց և ասաց նորանց. Տաս-
ներկուսից մէկը՝ նա որ ձեռը
ինձ հետ սկաւառակի մէջ կոխեց։
Բայց Որդին մարդոյ կ՚գնայ՝ 21
ինչպէս նորա համար գրուած
է. սակայն վայ այն մարդուն,
որի ձեռքին Որդին մարդոյ
կ՚մատնուի, լաւ էր նորան,
եթէ ծնուած չլինէր այն մարդը։

Եւ նորանք ուտելիս, Ցի- 22
սուսը հաց առաւ՝ օրհնեց՝
կտրեց և տուաւ նորանց և ասաց.
Առէք կերէք. այս է իմ մար-
մինը։ Եւ բաժակն առաւ՝ գո- 23
հացաւ, տուաւ նորանց, և
ամենքը խմեցին նորանից։ Եւ 24
ասաց նորանց. Այս է իմ արիւնը
նոր ուխտի, որ շատերի հա-
մար թափվում է։ Ճշմա- 25
րիտն ասում եմ ձեզ. թէ այլ
ևս որթի բերքից չեմ խմիլ
մինչև այն օրն, երբոր նորան
նոր խմեմ Աստուծոյ արքայու-
թեան մէջ։

Եւ օրհներգելուց յետոյ 26
դուրս եկան ձիթենեաց լեռը։

Եւ Յիսուսը նորանց ասաց 27
թէ Ամենքդ այս գիշեր կրգայ-
թակղիք ինձանից. վասնզի
գրուած է Էն Հովիւը կըզար-
կեմ՝ և ոչխարները կը ցրուին։
Բայց իմ յարութիւն առնելուց 28
յետոյ ձեզանից առաջ կ՚գնամ՝
Գալիլեա։ Պետրոսն էլ ասաց 29

Պետրոս և ասէ ցնա. թէպէտ և
ամենեքին գայլազգեսցին, այլ
30 ես ոչ։ Եւ ասէ ցնա Յիսուս.
Ամէն ասեմ քեզ. թէ Դու իսկ
յայսմ գիշերի մինչև հաւու
խօսեալ իցէ* երիցս ուրասցիս
31 զիս։ Իսկ Պետրոս առաւել ևս
պնդէր և ասէր. Եթէ մեռանել
ևս հասանիցէ ընդ քեզ՝ զքեզ
ոչ ուրացայց. նոյնպէս և ամե-
նեքեան ասէին։

32 Գան ի գեօղն՝ որում անուն
էր Գեթսեմանի. և ասէ դաշա-
կերտսն. Նստարուք ասա՝ մինչև
33 ես յաղօթս կացից։ Եւ առնու
ընդ իւր զՊետրոս և զՅակովբոս
և զՅովհաննէս, և սկսաւ տխրել
34 և հոգալ։ Յայնժամ ասէ
ցնոսա. Տրտում է անձն իմ
մինչև ի մահ, մնացէք ասա՝ և
35 արթուն կացէք։ Եւ մատուցեալ
սակաւիկ մի յառաջ, անկաւ ի
վերայ երեսաց իւրոց յերկիր. և
կայր յաղօթս, զի եթէ հնար
ինչ է՝ անցցէ ի նմանէ ժամն։
36 Եւ ասէ. Աբբա Հայր՝ ամենայն
ինչ քեզ հնարաւոր է, անցո
զբաժակս զայս յինէն. բայց ոչ
որպէս ես կամիմ՝ այլ որպէս
37 դու կամիս։ Եւ գայ գտանէ
զնոսա զի ննջէին, և ասէ
ցՊետրոս. Սիմոն ննջես. ոչ
կարացեր ժամ մի արթուն կալ։
38 Արթուն կացէք և յաղօթս
կացէք, զի մի մտջիք ի փորձու-

* Ի Յոյն, երկիցս

նորան. թէև ամենքն ալ գայ-
թակղին, բայց ես ոչ։ Յի- 30
սուսն էլ նորան ասաց. Ճշմարիտ-
ապէս ասում եմ քեզ, թէ այսօր,
հէնց այս գիշերումը հաւը
երկու անգամ՝ չխօսած, երեք
անգամ կ'ուրանաս ինձ։ 31
Բայց
նա շատ առաւել ևս ասում էր.
թէ որ քեզ հետ մեռնել էլ
պէտք լինի ինձ, քեզ չեմ ուրա-
նալ. այնպէս էլ ամենքն էին
ասում։

Եւ եկան մի գիւղ՝ որի անու- 32
նը Գեթսեմանի էր. և իր աշա-
կերտներին ասաց. այստեղ նըս-
տեցէք, մինչև ես աղօթք անեմ։
Եւ Պետրոսին և Յակոբին և 33
Յովհաննէսին իր հետ առաւ,
և սկսեց զարհուրիլ և տխրիլ։
Եւ ասաց նորանց. Իմ անձը 34
մահու չափ խիստ տրտմած է.
այստեղ մնացէք և արթուն կա-
ցէք։ Եւ մի քիչ առաջ գնաց, 35
գետնի վերայ ընկաւ, և աղօթք
էր անում, որ եթէ կարելի է,
այն ժամն իրանից անցնէ։ Եւ 36
ասում էր. Աբբա, Հայր,
ամեն բան կարելի է քեզ. այս
բաժակն ինձանից անցրու. բայց
ոչ թէ ինչ որ ես եմ կամենում,
այլ ինչ որ դու։ Եւ գալիս է 37
գտնում նորանց քնած և ասում
Պետրոսին. Սիմոն, քնում ես,
չկարացիր մէկ ժամ արթուն
կենալ։ Արթուն կացէք և ա- 38
ղօթք արէք, որ փորձու թեան

թիւն. *ոգիս յօժար է՝ բայց
39 մարմինս տկար՝։ Եւ դարձեալ
չորաւ եկաց յաղօթս, և զնոյն
40 բանս ասաց։ Դարձաւ միւսան-
գամ՝ անդրէն, և եդիտ զնոսա զի
քուն. քանզի էին աչք նոցա
ծանրացեալ, և ոչ գիտէին թէ
զինչ պատասխանի տայցեն նմա։
41 Գայ երրորդ անգամ, և ասէ
ցնոսա. Ննջեցէք այսուհետև
և հանգերուք, զի հասեալ է
վախճան. եկն ժամ՝ և ահա
մատնի Որդի մարդոյ ի ձեռս
42 մեղաւորաց։ Օ՛ն արիք գնասց-
ուք. զի ահաւասիկ մերձեցաւ՝
որ մատնելոցն է զիս։
43 Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝
գայ Յուդա Իսկարիովտացի՝ մի
յերկոտասանից անտի, և ընդ
նմա ամբոխ սուսերօք և բրօք՝ ի
քահանայապետացն և ի դպրաց
44 և ի ծերոց։ Տուեալ էր նշան
մատնչին՝ և ասէր. Որ ընդ որում
ես համբուրեցից՝ նա է. կալջիք
զնա և տարջիք զգուշութեամբ։
45 Եւ մատուցեալ վաղվաղակի՝
ասէ ցնա. Ռաբբի Ռաբբի. և
46 համբուրեաց զնա։ Եւ նորա
արկին ի նա ձեռս՝ և կալան
47 զնա։ Եւ մի ոմն յայնցանէ՝ որ
զնովաւն կային՝ ձգեաց սուր, և
եհար զծառայ քահանայապե-
տին, և ի բաց եհան զականն
48 նորա։ Պատասխանի ետ Յիսուս
և ասէ ցնոսա. Իբրև ի վերայ
աւազակի ելիք սուսերօք և բրօք

* Ի Յոյն, հոգին յօժար է՝ բայց մարմինն տկար

մէջ չմտանէք. հոգին յօժար է,
բայց մարմինը տկար։ Եւ դար- 39
ձեալ գնաց աղօթք արաւ, նոյն
խօսքերն ասելով։ Եւ ետ դար- 40
ձաւ՝ նորանց դարձեալ քնած
գտաւ, վասն զի նորանց աչքերը
ծանրացել էին, և չէին գիտում՝
թէ ինչ պատասխանեն նորան։
Եւ երրորդ անգամն է գալիս 41
և ասում նորանց. Այսուհետև
քնեցէք և հանգիստ առէք. բա-
ւական է. ժամն եկաւ. ահա
Որդին մարդոյ մատնվում է
մեղաւորաց ձեռքը։ Վեր կա- 42
ցէք գնանք, ահա մատնեցաւ ինձ
մատնողը։
Եւ շուտով՝ դեռ նա խօսելիս՝ 43
եկաւ Յուդան՝ այն տասներկու-
սից մէկը, և նորա հետ շատ
ամբոխ սրերով և բրերով՝ քա-
հանայապետներից և դպիրնե-
րից և ծերերից։ Նորան 44
մատնողն էլ նորանց նշան էր
տուել՝ և ասել, Ում որ ես
համբուրեմ, նա է, նորան բռնե-
ցէք և զգուշութեամբ տարէք։
Եւ եկաւ, շուտով մատեցաւ 45
նորան և ասաց. Ռաբբի, Ռաբ-
բի, և համբուրեց նորան։ Եւ 46
նորանք իրանց ձեռքը գցեցին
նորա վերայ և բռնեցին նորան։
Եւ նորա մօտ կանգնածներից 47
մէկը սուրը քաշեց՝ քահանայա-
պետի ծառային զարկեց, և
ականջը կտրեց։ Եւ Յիսուսը 48
պատասխանեց և ասաց նորանց.

49 ունել զնա։ Հանապազ առ ձեզ
էի՝ և ուսուցանէի ի տաճարին,
և ոչ կալայք զնա։ այլ զի լցցին
50 գիրքք մարգարէին։ Յայնժամ
թողին զնա աշակերտքն ամենե-
51 քին՝ և փախեան։ Եւ ոմն երի-
տասարդ զհետ երթայր նորա՝
արկեալ զիւրև կտաւ մի ի
մերկուց։ ունէին զնա երիտա-
52 սարդքն։ Եւ նորա թողեալ
զկտաւն՝ փախեաւ մերկ ի
նոցանէ։

53 Եւ տարան զՅիսուս առ քա-
հանայապետն Կայիափա։ և
գային ընդ նմա ամենայն քահա-
նայապետքն և գրիչք և ծերք։
54 Եւ Պետրոս երթայր ի հեռաս-
տանէ զհետ նորա մինչև ի
ներքս իսկ ի գաւիթ քահանա-
յապետին, և նստէր ընդ սպա-
սաւորսն՝ և ջերմնայր առ լուսովն։
55 Իսկ քահանայապետքն և ամե-
նայն ատեանն, խնդրէին հակա-
ռակ Յիսուսի վկայութիւն ինչ,
զի սպանանիցեն զնա, և ոչ
56 գտանէին։ Զի բազումք սուտ
վկայութիւն վկայէին զնմանէ,
և նման միմանց ոչ էին վկայու-
57 թիւնքն։ Այլք յարուցեալ
վկայէին սուտ զնմանէ, և ասէին.
58 թէ մեք լուաք ի դմանէ՝ զի
ասէր։ Ես քակեցից զտաճարդ
զայդ ձեռագործ, և զերիս
աւուրս շինեցից այլ՝ առանց
59 ձեռագործի։ Սակայն և այնպէս
չէր նման վկայութիւնն նոցա։
60 Այլ յարուցեալ քահանայա-
պետն ի մէջ՝ հարցանէր զՅի-
սուս։ և ասէր։ Ոչինչ տաս պա-
տասխանի, զինչ գոքա զքէն
61 վկայեն։ Եւ նա լուռ և եթ
կայր՝ և չտայր ինչ պատասխանի։
Դարձեալ քահանայապետն
հարցանէր զնա կրկին անգամ և
ասէր։ Դո՞ւ ես Քրիստոս Որդի
62 Աստուծոյ օրհնելոյն։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնա։
Դու ասացեր՝ թէ ես եմ. բայց
տեսանիցէք զՈրդի մարդոյ
նստեալ ընդ աջմէ Զօրու-
թեանն, և եկեալ ընդ ամպս
63 երկնից։ Եւ քահանայապետն
պատառեաց վաղվաղակի զպատ-
մուճանս իւր՝ և ասէ։ Զի՞նչ
64 ևս պիտոյ են մեզ վկայք։ Ա՛հա
լուայք ամենեքին զՀայհոյու-
թիւն ի բերանոյ դորա, զինարդ
թուի ձեզ։ և ամենեքեան դա-
տապարտեցին զնա՝ թէ մահա-
պարտ է։
65 Եւ ոմանք սկսան թքանել
ընդ երեսս նորա, ձորձ զգլխով
արկանել՝ կոփել և ասել։ Մ՝ար-
գարէացո մեզ Քրիստոսդ՝ ո՞վ է
այն եհար զքեզ. և սպա-
սաւորքն ապտակս հանէին նմա։
66 Եւ Պետրոս մինչդեռ էր ի
խոնարհ ի գաւթին, գայ
աղախին մի քահանայապետին,
և տեսանէ զնա՝ զի ջերմնայր։
67 Հայեցաւ ընդ նա՝ և ասէ. Եւ
դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ
68 էիր։ Նա ուրացաւ և ասէ։ Ո՛չ
ճանաչեմ և ոչ գիտեմ զինչ
դուդ ասես՝ և իրրև ել յարտա-

պետն ի մէջ՝ հարցանէր զՅի-
սուս։ և ասէր։ Ոչինչ տաս պա-
տասխանի, զինչ գոքա զքէն
61 վկայեն։ Եւ նա լուռ և եթ
կայր՝ և չտայր ինչ պատասխանի։
Դարձեալ քահանայապետն
հարցանէր զնա կրկին անգամ և
ասէր։ Դո՞ւ ես Քրիստոս Որդի
62 Աստուծոյ օրհնելոյն։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնա։
Դու ասացեր՝ թէ ես եմ. բայց
տեսանիցէք զՈրդի մարդոյ
նստեալ ընդ աջմէ Զօրու-
թեանն, և եկեալ ընդ ամպս
63 երկնից։ Եւ քահանայապետն
պատառեաց վաղվաղակի զպատ-
մուճանս իւր՝ և ասէ։ Զի՞նչ
64 ևս պիտոյ են մեզ վկայք։ Ա՛հա
լուայք ամենեքին զՀայհոյու-
թիւն ի բերանոյ դորա, զինարդ
թուի ձեզ։ և ամենեքեան դա-
տապարտեցին զնա՝ թէ մահա-
պարտ է։
65 Եւ ոմանք սկսան թքանել
ընդ երեսս նորա, ձորձ զգլխով
արկանել՝ կոփել և ասել։ Մ՝ար-
գարէացո մեզ Քրիստոսդ՝ ո՞վ է
այն եհար զքեզ. և սպա-
սաւորքն ապտակս հանէին նմա։
66 Եւ Պետրոս մինչդեռ էր ի
խոնարհ ի գաւթին, գայ
աղախին մի քահանայապետին,
և տեսանէ զնա՝ զի ջերմնայր։
67 Հայեցաւ ընդ նա՝ և ասէ. Եւ
դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ
68 էիր։ Նա ուրացաւ և ասէ։ Ո՛չ
ճանաչեմ և ոչ գիտեմ զինչ
դուդ ասես՝ և իրրև ել յարտա-

60 չէր։ Եւ քահանայապետը վեր-
կացած մէջտեղը՝ Յիսուսին հար-
ցրեց և ասաց։ Ոչինչ չես պա-
տասխանում ինչ են վկայում
61 դորանք քեզ դէմ։ Իսկ նա
լուռ էր կենում՝ և ոչինչ պա-
տասխան չէր տալիս։ քա-
հանայապետը դարձեալ նորան
հարցնում էր և ասում։ Դո՞ւ ես
Քրիստոսը՝ Որդի օրհնելոյն։
62 Յիսուսն էլ պատասխանեց և
ասաց։ Ես եմ, և կը տեսնէք
Որդին մարդոյ զօրութեան աջ
կողմը նստած, և երկնքի ամ-
պերովն եկած։ Եւ քահանայա-
63 պետն իր հանդերձները պատռե-
լով ասաց։ Էլ ինչ պէտք է մեզ
վկաներ։ Լսեցիք հայհոյանքը։
64 ի՞նչպէս է երևում ձեզ։ Նորանք
էլ ամենքը դատապարտեցին նո-
րան, թէ Մահապարտ է։

65 Եւ ոմանք սկսեցին նորա երե-
սին թքել, և երեսը ծածկել։
և բռունցքով ծեծել նորան և
նորան ասել, Մարգարէացիր։
և սպասաւորները նորան ապտակ
էին տալիս։

66 Եւ երբոր Պետրոսը վարը
սրահումն էր, քահանայապետի
աղախիններից մէկը գալիս է։
67 Եւ տեսնում Պետրոսին, որ
տաքանում է, մտիկ է տալիս
նորան՝ և ասում։ Դու էլ էիր
Յիսուս Նազովրեցոյն հետ։
68 Բայց նա ուրացաւ և ասաց։
Չեմ ճանաչում։ և չեմ էլ հաս-

բին գաւիթն, և հաւ խօսեցաւ:
69 Դարձեալ նայեաց զնա աղախինն,
և սկսաւ ասել ցայնոսիկ որ
շուրջն կային, թէ Եւ սա 'ի նո-
70 ցանէ է: Եւ նա դարձեալ ուրա-
ցաւ, և յետ սակաւ միոյ՝ դար-
ձեալ որ շուրջն կային, ասեն
զՊետրոս. Արդարև և դու 'ի
նոցանէ ես քանզի Գալիլեացի
ես՝ և խօսքդ իսկ քո նման են:
71 Եւ նա սկսաւ նզովել երդնուլ և
ասել, թէ Ո՛չ գիտեմ զայրն՝
72 զորմէ դուք ասէք: Եւ նոյն-
ժամայն կրկին հաւ խօսեցաւ. և
յիշեաց Պետրոս զբանն՝ զոր
ասաց ցնա Յիսուս, թէ Զէ՛ լցէ
հաւու երիցս խօսեալ՝ զն դու
երիցս ուրացիս զիս. և սկսաւ
լալ:

ԳԼ. ԺԵ

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն
խորհուրդ արարեալ քահանա-
յապետքն հանդերձ ծերովքն
և գրագրաւ՝ և ամենայն ատեանն,
կապեցին զՅիսուս՝ և տարան
2 մատնեցին Պիղատոսի: Եհարց
զնա Պիղատոս և ասէ. Դո՞ւ ես
թագաւորն Հրէից. Նա պա-
տասխանի եւ նմա և ասէ՝ Դո՛ւ
3 ասես: Եւ չարախօսէին զնմանէ
յոյժ քահանայապետքն, և նա
4 ոչինչ տայր պատասխանի: Իսկ
Պիղատոս դարձեալ հարցանէր
զնա. Ոչինչ տաս պատասխանի,
կանուսմ, թէ դու ինչ ես ասում.
և դուրս գնաց նախասրահը և
հաւը խօսեց: Եւ աղախինը 69
նորան տեսաւ՝ դարձեալ սկսեց
ասել այնտեղ կանգնածներին.
թէ Այս նորանցից է: Բայց նա 70
դարձեալ ուրացաւ. և մի քիչ
յետոյ այնտեղ կանգնածները
դարձեալ ասացին Պետրոսին.
Ճշմարիտ՝ դու էլ նորանցից ես,
վասն զի Գալիլեացի ես և քո
լեզուն էլ նման է: Բայց նա 71
սկսեց անիծել և երդում անել
թէ չեմ գիտում այն մարդին,
որ դուք ասում էք: Եւ հաւն 72
երկրորդ անգամ խօսեց: Եւ
Պետրոսը յիշեց այն խօսքը,
որ Յիսուսը նորան ասաց. թէ
Հաւն դեռ երկու անգամ չխօ-
սած՝ դու երեք անգամ կուրա-
նաս ինձ. և սկսեց լալ:

ԳԼ. ԺԵ

1 Եւ շուտով առաւօտանց քա-
հանայապետները ծերերի և դը-
պիրների հետ՝ և բոլոր ատեանը
խորհուրդ արին, Յիսուսին կա-
պեցին՝ և տարան մատնեցին
2 Պիղատոսին: Եւ Պիղատոսը
նորան հարցրեց. Դո՞ւ ես Հրէից
թագաւորը. Նա էլ պատասխա-
նեց և ասաց նորան. Դու ես
3 ասում: Եւ քահանայապետ-
ները շատ ամբաստանութիւն-
4 ներ էին անում նորանից. Եւ
Պիղատոսը դարձեալ հարցրեց
նորան և ասաց. Ոչինչ պա-

տասխան չունիս տալիս, տես որ-
քան են վկայում քեզ դէմ:
5 Բայց Յիսուսը դարձեալ ոչ-
ինչ չպատասխանեց, մինչև որ
Պիղատոսը զարմացաւ:
6 Բայց ամեն տօնի ժամանակ
մէկ բանտարկեալ էր արձակում
նորանց համար, որին որ խընդ-
րում էին: Եւ Բարաբբա 7
ասուած մէկը կար այն խռովա-
բարների հետ կապուած, որ
իրանց խռովութիւնում մար-
դասպանութիւն էին արել: Եւ 8
ամբոխն սկսեց բարձր ձայնով
աղաղակել և խնդրել, որ անէ
ինչպէս միշտ անում էր նորանց:
9 Պիղատոսն էլ պատասխանեց
նորանց և ասաց. Կամենում էք՝
Հրէից թագաւորը կ'արձակեմ
ձեզ համար: Վասնզի գիտէր 10
որ նախանձով էին մատնել նո-
րան քահանայապետները: Բայց 11
քահանայապետներն ամբոխին
գրգռեցին, որ աւելի Բարաբ-
բային արձակէ նորանց համար:
12 Եւ Պիղատոսը դարձեալ պա-
տասխանեց նորանց և ասաց.
Ապա ի՞նչ էք ուզում որ անեմ
նորան որին ասում էք Հրէից
թագաւոր: Եւ նորանք դար- 13
ձեալ աղաղակեցին. Խաչիր
նորան: Պիղատոսն էլ նորանց 14
ասաց. Ապա ի՞նչ չար բան է
արել. և նորանք առաւել ևս
աղաղակում էին. Խաչիր դո-
րան: Բայց Պիղատոսը՝ որովհ- 15
ետև կամենում էր ամբոխի
կամքը հաճել, արձակեց նորանց

16 Եւ զլնուորքն տարան զնա 'ի
ներքս 'ի գաւիթն՝ ուր հրապա-
բակն էր. և կոչեն միանգամայն
17 զամենայն զգունդն, Եւ զգեցու-
ցանեն նմա քղամիդ կարմիր և
ծիրանիս, և եդին 'ի գլուխ
Նորա պսակ արարեալ 'ի փշոց:
18 Եւ սկսան ողջոյն տալ նմա՝ և
ասել: Ո՛ղջոյն արքայդ Հրէից:
19 Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ,
և թքանէին ընդ երեսս, և 'ի
ծունր իջեալ երկիրպագանէին
20 նմա: Եւ իբրև կատակեցին
զնա՝ մերկացուցին զքղամիդն
և զծիրանիս, և զգեցուցին
նմա զիւր հանդերձն, և ածին
արտաքս զնա 'ի խաչ հանցեն
զնա:
21 Եւ ունէին պահակ զՍիմոն
Կիւրենացի՝ որ ընդ այն անցա-
նէր՝ եկեալ յագարակէ, զՀայրն
Ալէքսանդրի և Ռուփայ. զնա
բարձցէ զխաչափայտն Նորա:
22 Եւ ածեն զնա 'ի Գողգոթա՝
տեղի. մի, որ թարգմանի տեղի
23 կառափեալոյ: Եւ տային նմա
գինի զմիսեալ, և նա ոչ առ. և
24 հանին զնա 'ի խաչ: Եւ բաժա-
նեցին զՀանդերձս Նորա, արկեալ
վիճակս 'ի վերայ թէ ո զինչ
25 առնուցու: Էր ժամ երրորդ՝ և
26 հանին զնա 'ի խաչ: Եւ էր գիր
վերագրեալ Նորա գրեալ՝ թէ Թա-
27 գաւոր է Հրէից: Եւ ընդ նմա
հանին 'ի խաչ երկուս աւազակս.

համար Բարաբբայն. և Յի-
սուսն ծեծեց Նորանց յանձնեց,
որ խաչուի:
Եւ զինուորները Նորան տա- 16
րան սրահի ներսը այսինքն պա-
լատը. և բոլոր գունդը մէկտեղ
կանչեցին: Եւ Նորան ծիրանի 17
հագցրին և փշերից շինած
պսակ դրին Նորա գլխին. Եւ 18
սկսեցին Նորան ողջոյն տալ.
Բարև, Հրէից թագաւոր: Եւ 19
Նորա գլուխն եղեգով ծեծում
էին, և Նորա երեսին թքում
էին՝ և ծունկ դնելով երկրպա-
գում էին Նորան: Եւ երբոր 20
ծաղը արին Նորան, այն ծիրանին
Նորանից հանեցին, և իր հան-
դերձները հագցրին, և դուրս
տարան որ խաչեն Նորան:

Եւ պահակ բռնեցին Սիմոն 21
Կիւրենացոյն, Ալէքսանդրի և
Ռուփոսի հօրն՝ որ արտիցը
գալով այն տեղից անցնում էր,
որ Նորա խաչը վեր առնէ: Եւ 22
տարան Նորան մի Գողգոթա
ասած տեղ, որ կ'թարգմանուի
գանկի տեղ: Եւ Նորան զըմբռ- 23
ասած գինի էին տալիս խմելու,
բայց Նա չառաւ: Եւ Նորան 24
խաչեցին՝ բաժանեցին Նորա
հանդերձները վիճակ գցելով
Նորանց վերայ՝ թէ ով ինչ պիտի
առնէ: Եւ ժամը երրորդն էր՝ 25
և Նորան խաչեցին: Եւ Նորա 26
յանցանքի գիրը գրուած էր՝
Հրէից թագաւորը: Եւ Նորա 27

մի ընդ աջմէ, և մի ընդ ահեկէ
28 Նորա: Եւ լցաւ գիրն որ ասէ,
թէ Ընդ անօրէնս համարեցաւ:
29 Եւ որք անցանէին՝ հայհոյէին
զնա շարժեալ զգլուխս իւրեանց
և ասէին. Ա՛հա որ քակէիր
զտաճարն և զերիս աւուրս
30 շինէիր. Փրկեցո զանձն քո և
31 էջ 'ի խաչէդ: Նոյնպէս և քա-
հանայապետից այսն արարեալ
ընդ միմեանս հանդերձ դպրօքն՝
ասէին. Զայլս ապրեցոյց՝ զանձն
32 ոչ կարէ ապրեցուցանել: Քրիս-
տոսդ արքայդ Իսրայէլի, իջցէ
այժմ 'ի խաչէ այսր, զի տես-
ցուք և հաւատացուք դմա. և
որ ընդ նմա 'ի խաչն ելեալ էին՝
նախատէին զնա:

33 Եւ իբրև վեց ժամ եղև՝
խաւար կալաւ զամենայն երկիր
մինչև ցինն ժամ: Եւ յիններորդ
ժամուն աղաղակեաց Յիսուս 'ի
ձայն մեծ, և ասէ. Էլի՝ Էլի՝
լամա սաբաքթանի. որ թարգ-
մանի. Աստուած իմ, Աստուած
35 իմ՝ ընդէր թողեր զիս: Եւ
ոմանք 'ի նոցանէ որ շուրջն
կային զնոսա՝ իբրև լուան, ա-
36 սէին թէ զԵղիա կարդայ: Եւ
ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ
մի քացախով, և հարեալ յեղե-
գան՝ տայր ըմպել նմա, և ասէ.
Թո՛ղլ տուր տեսցուք՝ գա՞յ Եղիա
իջուցանել զդա:

հետ երկու աւազակ խաչեցին,
մէկը Նորա աջ կողմին և մէկը
ձախ կողմին: Եւ կատարուե- 28
ցաւ այն գիրն, որ ասում է,
Անօրէնների հետ համարուեցաւ:
Եւ այնտեղով անցնողները Նո- 29
բան հայհոյում էին, իրանց
գլխները շարժելով ու ասելով.
Ա՛հա, ով տաճարը քանդող՝
ու երեք օրումը շինող: Փրկե- 30
ցրու քո անձը և իջիր խաչից:
Նոյնպէս էլ քահանայապետ- 31
ները գպիրների հետ միասին
ծաղր էին անում և ասում.
Ուրիշներին ապրեցրեց՝ իր անձը
չէ կարողանում ապրեցնել:
Քրիստոսը՝ Իսրայէլի թա- 32
գաւորը թող հիմա խաչից
իջնէ, որ տեսնենք և հա-
ւատանք. և Նորա հետ խա-
չուածներն էլ էին Նորան նա-
խատինք տալիս:
Եւ երբոր ժամը վեցը եկաւ, 33
խաւար եղաւ բոլոր երկրի վի-
րայ մինչև իններորդ ժամը: Եւ 34
իններորդ ժամին Յիսուսը մեծ
ձայնով աղաղակեց և ասաց.
Էլի Էլի լամա սաբաքթանի, որ
կ'թարգմանուի՝ Իմ Աստուած,
իմ Աստուած, ինչո՞ւ թողիր ինձ:
Եւ այնտեղ կանգնածներից 35
ոմանք, երբոր լսեցին, ասում
էին. Ահա Եղիային է կանչում:
Եւ մէկը վազեց մի սպունգ քա- 36
ցախով լցրեց, և եղեգի վերայ
դրաւ, տուաւ Նորան՝ որ խմէ,
և ասաց. Թողէք տեսնենք, Ե-
ղիան կ'գա՞յ որ Նորան վայր բերէ:

37 Եւ Յիսուս արձակեաց ձայն
38 մեծ՝ և ասէր զոգի։ Եւ վարա-
գոյր տաճարին պատառեցաւ
յերկուս ի վերուստ մինչև ի
39 խոնարհ։ Եւ տեսեալ հարիւ-
րապետին որ կայր անդ՝ եթէ
աղաղակեաց և ասէր զոգի,
ասէ. Արդարև այրս այս Որդի
40 Աստուծոյ էր։ Լին և կանայք՝
որ հայէին ի հեռաստանէ. յորս
էր Մարիամ Մագդաղենացի,
և Մարիամ Յակոբայ փոքր-
կան, և Յովսեայ մայրն. և
41 Սողոմէ. Որք յորժամ էին ի
Գալիլեա՝ զհետ զընթանային նորա և
պաշտէին զնա. և այլ բազում
կանայք որ ընդ նմա խակ ելեալ
էին յԵրուսաղէմ։

42 Եւ իրրև երեկոյ եղև՝ քանզի
ուրբաթ էր որ ի շաբաթին
43 մտանէր, Եկեալ Յովսէփ որ
յԱրիմաթեայն էր՝ այր պար-
կեշտ նախարար, որ և ինքն իսկ
ակն ունէր արքայութեանն
Աստուծոյ. համարձակեցաւ ե-
մուտ առ Պիղատոս, և խնդրեաց
44 զմարմին Յիսուսի։ Եւ Պիղա-
տոս զարմացաւ թէ այնչափ
վաղ մեռաւ. և կոչեցեալ առ
ինքն զհարիւրապետն՝ եհարց
զնա և ասէ, թէ Արդարև այն-
45 չափ վաղ մեռաւ։ Եւ իրրև
ստուգեաց ի հարիւրապետէ
անտի, շնորհեաց զմարմինն
46 Յովսեփայ։ Եւ Յովսէփ գնեաց
կտաւ՝ և իջուցեալ զնա պատեաց

Եւ Յիսուսը մեծ ձայն արձա- 37
կեց՝ և հոգին տուաւ։ Եւ տա- 38
ճարի վարագույրն երկու խոր
պատառուեցաւ՝ վերևից մինչև
ցածը։ Եւ հարիւրապետն, որ 39
այնտեղ նորա դիմացը կանգ-
նած էր, երբոր տեսաւ թէ Յի-
սուսը այսպէս աղաղակեց և
հոգի տուաւ, ասաց. Ճշմարիտ,
այս մարդն Աստուծոյ Որդի
էր։ Կանայք էլ կային, որ հե- 40
ռուանց մոտիկ էին տալիս, որոնց
միջումն էր Մարիամ Մագդա-
ղենացին, և Մարիամ փոքր
Յակոբի և Յոսէի մայրը, և
Սողոմէն, Որոնք և, երբոր նա 41
Գալիլեա էր, նորա ետևից
գնում և նորան ծառայում էին.
և ուրիշ շատ կանայք էլ, որ
նորա հետ Երուսաղէմ էին եկել։

Եւ երբոր արդէն իրիկուն 42
եղաւ, որովհետև ուրբաթ էր՝
այսինքն շաբաթից առաջի օրը.
Եկաւ Արիմաթացի Յոսէփը՝ 43
մի երևելի խորհրդական, որ
ինքն էլ Աստուծոյ արքայու-
թեանն սպասում էր. համար-
ձակելով մտաւ Պիղատոսի մոտ,
և խնդրեց Յիսուսի մարմինը։
Եւ Պիղատոսը զարմացաւ, թէ 44
արդէն մեռել է. և հարիւրա-
պետին իրան մոտ կանչեց, նո-
րան հարցրեց և ասաց, թէ շա-
տո՞նց է որ մեռաւ։ Եւ հա- 45
րիւրապետիցը տեղեկանալով,
մարմինը Յոսէփին շնորհեց։
Եւ Յոսէփը կտաւ առաւ և նո- 46
րան իջեցրեց կտաւով պատեց,

կտաւովն, և եդ ի գերեզմանի,
զոր էր փորեալ ի վիմէ. և
թաւալեցոյց վէմ մի ի դուռն
47 գերեզմանին։ Իսկ Մարիամ
Մագդաղենացի և Մարիամ
Յակոբայ և Յովսեայ, տեսին
զտեղին ուր եդաւ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ իրրև անց շաբաթն,
Մարիամ Մագդաղենացի՝ և
Մարիամ Յակոբայ՝ և Սո-
ղոմէ՝ հոգան պատրաստեցին
խունկս, զի եկեսցեն օծցեն զնա։
2 Եւ ընդ առաւօտս միաշաբա-
թուն գան ի գերեզմանն ընդ
3 արևադալն։ Եւ ասէին ցմի-
մեանս. Ո՞վ թաւալեցուսցէ մեզ
զվէմն ի դրաց գերեզմանին։
4 Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւա-
լեցուցեալ էր զվէմն ի գերեզ-
մանէն. քանզի էր մեծ յոյժ։
5 Եւ մտեալ ի ներքս ի գերեզ-
մանն՝ տեսին երիտասարդ մի՝
զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝
զգեցեալ պատմուճան սպիտակ,
6 և զարհուրեցան։ Եւ նա ասէ
ցնոսա. Մի երկնչիք. զՅիսուս
խնդրէք զՆազովրեցի ըզխա-
չեալսն. յարեաւ՝ չէ՛ աստ.
ահաւադիկ տեղին ուր եդին
7 զնա։ Այլ երթայք ասացէք
ցաշակերտս նորա և ցՊետրոս,
եթէ ահա յառաջագոյն եր-
թայ քան զձեզ ի Գալիլեա.
անդ տեսանիցէք զնա՝ որպէս
8 ասացն ձեզ։ Եւ իրրև լուան՝

և նորան մի գերեզմանի մէջ
դրաւ, որ փորուած էր քարից.
և մի քար թաւալեց գերեզմանի
դրան վերայ։ Եւ Մարիամ 47
Մագդաղենացին և Յոսէի մայրը
Մարիամն էլ տեսան այնտեղը,
ուր որ դրուեցաւ։

ԳԼ. ԺԱ.

Եւ երբոր շաբաթն անցաւ, 1
Մարիամ Մագդաղենացին և
Յակոբի մայրը՝ Մարիամը և
Սաղոմէն խունկեր առին, որ
գան նորան օծեն։ Եւ մեկշաբ- 2
թի առաւօտանց շատ կանուխ
արեգակը ծագելիս գալիս են
գերեզմանը։ Եւ իրար ասում 3
էին. Ով կ՚թաւալեցնէ քարը
մեզ համար գերեզմանի դռնիցը։
Եւ նայեցան տեսան, որ քարը 4
գերեզմանիցը հեռու էր թաւա-
լած, վասնզի շատ մեծ էր։
Եւ երբոր գերեզմանը մտան, մի 5
երիտասարդ տեսան՝ աջ կողմը
նստած՝ սպիտակ պատմուճան
հագած. և շատ զարհուրեցան։
Եւ նա ասաց նորանց. Մի զար- 6
հուրիք, դուք Յիսուսին՝ Նա-
զովրեցի խաչուածն էք որոնում.
յարութիւն առաւ, այստեղ չէ,
ահա այն տեղը՝ ուր որ նորան
դրին։ Այլ գնացէք, նորա 7
աշակերտներին և Պետրոսին
ասացէք, թէ նա ձեզանից առաջ
կը գնայ Գալիլեա. այնտեղ
կ՚տեսնէք նորան ինչպէս նա
ձեզ ասաց։ Եւ շուտով դուրս 8

ելին և փախեան 'ի գերեզմանէն. քանզի զահի հարեալ էին. և ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին:

9 Յարուցեալ Յիսուս առաւօտուն առաջինն միաշաբաթուն՝ երևեցաւ Մարիամու Մագդաղենացւոյ, յորմէ հանեալ էր
10 զեօթն դևն: Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին, մինչդեռ սգային և լային:
11 Նոքա իբրև լուան թէ կենդանի է՝ և երևեցաւ նմա, ոչ հաւատացին: Յետոյ երևեցաւ այլով
12 կերպարանաւ* որք երթային
13 յանդաստան՝: Նոքա չոքան պատմեցին այլոց, և ոչ նոցա
14 հաւատացին: Յետոյ մինչդեռ բազմեալ էին մեհեանքն, երևեցաւ նոցա, և թշնամանեաց զանհաւատութիւն նոցա, և զխստասրտութիւն. զի որ երևեցաւ նոցա յարուցեալ 'ի մեռելոց՝ և նոքա ոչ հաւատացին:

15 Եւ ասէ ցնոսա. Երթայք յաշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն
16 արարածոց: Որ հաւատայ և մկրտեսցի կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի:
17 Նշանք այսոքիկ՝ որ հաւատանն,

եկան փախան գերեզմանիցը, և նորանք զողով և սարսափով բռնուած էին, և ոչ ոքի ոչինչ չասացին, վասնզի վախենում էին:

9 Եւ Յիսուս երբոր յարութիւն առաւ՝ մէկշաբթի առաւօտանց առաջ երևեցաւ Մարիամ Մագդաղենացուն, որից եօթը դև էր հանել: Եւ նա
10 գնաց պատմեց նորա հետ լինողներին, որ սուգ էին անում և լաց լինում: Նորանք էլ
11 լսելով, թէ կենդանի է, և երևեցաւ նորան, չհաւատացին:
12 Սորանից յետոյ ուրիշ կերպարանքով երևեցաւ նորանցից երկուսին, որ ման գալով յանդն էին գնում:
13 Նորանք էլ գնացին այն միւսներին պատմեցին, բայց նորանց էլ չհաւատացին:
14 Վերջապէս երբոր այն տասնումէկը սեղան էին նստած, նորանց երևեցաւ և նորանց անհաւատութիւնը և քարասրտութիւնը յանդիմանեց, որ չըհաւատացին նորանց, որ նորան յարութիւն առած տեսել էին:
15 Եւ նորանց ասաց. Գնացէք բոլոր աշխարհք, աւետարանը քարոզեցէք ամեն արարածի:
16 Ով որ հաւատաց և մկրտուեցաւ՝ կ'փրկուի. և ով որ չհաւատաց՝ կը դատապարտուի:
17 Նորանց էլ, որ հաւատացին, այս

---

* 'Ի Յոյն, երկուցն 'ի նոցանէ, որք գնային և երթային յանդաստան:

երթիցեն զհետ այնոցիկ. յանուն իմ դևս հանցեն, լեզուս
18 *խօսեսցին: 'Ի ձեռս իւրեանց օձս բարձցեն, և եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեսցէ. 'ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ և բժշկեսցին:*
19 Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ
20 Հօր: Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր՝ Տեառն գործակցութեամբ. և զբանն հաստատէին ամենայն շնանօք՝ որ երթային զհետ նոցա:

նշանները կը հետևին. իմ անունովը դևեր կը հանեն, նոր լեզուներ կ'խօսին: Ձեր վերը
18 կ'առնեն, և եթէ մի մահադեղ խմեն, նորանց վնաս չի տալ. հիւանդների վերայ ձեռք կը դնեն, և կ'առողջանան:
19 Արդ Տէրը նորանց հետ խօսելուց յետոյ, երկինքն համբարձաւ, Աստուծոյ աջ կողմը
20 նստեց: Նորանք էլ դուրս գնացին, ամեն տեղ քարոզում էին, և Տէրը գործակցում էր նորանց և խօսքը հաստատում էր այն նշանները, որ հետևում էին: Ամէն:

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԱՌԱՔԻՆՈՅԻ բաղումք յօժա-
բերցին վերստին կարգել
զպատմութիւնն վասն իրացն
2 հաստատելոց ՝ի մեզ. Որպէս
աւանդեցին մեզ՝ որ ՝ի սկզբանէ
ականատեսք և սպասաւորք եղեն
3 բանին: Կամ՝ եղև և ինձ, որ ՝ի
սկզբանէ զհետ երթեալ էի
ամենայնի ճշմարտութեամբ,
կարգաւ գրել քեզ՝ քաջդ Թէո-
4 փիլէ. Զի ծանիցես զբանիցն՝
որոց աշակերտեցար, զճշմար-
տութիւն:
5 Եւ եղև յաւուրս Հերովդի
արքայի Հրէաստանի, քահանայ
ոմն՝ անուն Զաքարիա ՝ի դա-
սակարգէ Աբիայ. և կին նորա
՝ի դստերաց Ահարոնի, և անուն
6 նորա Եղիսաբեթ: Եւ էին
արդարք երկոքին առաջի Աս-
տուծոյ, գնային յամենայն պա-
տուիրանս և յիրաւունս Տեառն
7 անարատք: Եւ ոչ գոյր նոցա
որդեակ, քանզի Եղիսաբեթ
ամուլ էր. և երկոքեան անցեալ
էին զաւուրքք իւրեանց:
8 Եւ եղև ՝ի քահանայանալն

ՊՐՈՍ ՀԵՏԵԻ շատերքն ձեռ-
նարկեցին մեր մէջ հաստա-
տուած բաների պատմութիւնը
վերստին կարգել. Ինչպէս մեզ
աւանդեցին սկզբից ականատես
և խօսքին սպասաւոր լինողները.
Ես էլ, որ սկզբից բոլոր բա-
ներին ճշմարտութիւնով հե-
տևեցի, կամեցայ կարգաւ գրել
քեզ, ով պատուականդ Թէո-
փիլէ. Որ իմանաս այն բաների
ստուգութիւնը, որ սովորեցիր:

Հրէաստանի թագաւոր՝ Հե-
րոդէսի օրերումը մի քահանայ
եղաւ անունը Զաքարիա,
Աբիայի դասակարգութիւնից,
և նորա կին Ահարոնի աղջիկ-
ներից, և նորա անունն Եղի-
սաբեթ: Երկուսն էլ Աստու-
ծոյ առջևն արդար էին, և Տիրոջ
բոլոր պատուիրանքներումն և
իրաւունքներումն գնում էին
անարատ: Եւ նորանք զաւակ
չունէին, քանզի Եղիսաբեթը
ամուլ էր. և երկուսն էլ իրանց
օրերն անց էին կացրել:
Եւ եղաւ, երբոր նա քահա-

նորա ըստ կարգի աւուրցն հա-
9 սանելոյ առաջի Աստուծոյ, Ըստ
օրինի քահանայութեանն՝ եհաս
նմա խունկ արկանել՝ մտեալ ՝ի
10 տաճարն Տեառն: Եւ ամենայն
բազմութիւն ժողովրդեանն կա-
յին յաղօթս արտաքոյ՝ ՝ի ժամ
11 խնկոցն: Եւ երևեցաւ նմա
հրեշտակ Տեառն. զի կայր ընդ
աջմէ սեղանոյ խնկոցն:
12 Եւ խռովեցաւ Զաքարիա՝
իբրև ետես, և անկաւ ահ ՝ի վե-
13 րայ նորա: Ասէ ցնա հրեշտակն
Տեառն. Մի երկնչիր Զա-
քարիա՝ զի լսելի եղեն աղօթք
քո, և կին քո Եղիսաբեթ ծնցի
քեզ որդի՝ և կոչեսցես զանուն
14 նորա Յովհաննէս: Եւ եղեսցի
քեզ ուրախութիւն և ցնծու-
թիւն, և բազումք ՝ի ծննդեանն
15 նորա խնդասցեն: Զի եղեսցի
մեծ առաջի Տեառն. և գինի և
օղի մի՛ արբցէ. և Հոգւով
Սրբով լցցի անդստին յորովայնէ
16 մօր իւրոյ: Եւ զբազումս յորդ-
ւոցն Իսրայէլի դարձուսցէ ՝ի
17 Տէր Աստուած իւրեանց: Եւ
ինքն եկեսցէ առաջի նորա հոգ-
ւով և զօրութեամբ Եղիայի,
դարձուցանել զսիրտս հարց
յորդիս, և զանհաւանս յիմաս-
տութիւն արդարոց. պատրաս-
տել Տեառն ժողովուրդ կաղ-
18 մեալ: Եւ ասէ Զաքարիա
ցհրեշտակն. Եւ ՝ի՞նչ գիտացից
զայդ. զի ես ծեր եմ, և կին իմ

նայութիւն էր անում իրան
հասած դասակարգութեան օրե-
րումը Աստուծոյ առջևն, Քա- 9
հանայութեան սովորութեան
պէս, իրան ընկաւ որ Տիրոջ
տաճարը մտնէ խնկարկութիւն
անելու: Եւ ժողովրդի բոլոր 10
բազմութիւնը դուրսն աղօթք
էին անում խնկարկութեան ժա-
մանակին: Եւ Տիրոջ հրեշ- 11
տակն երևեցաւ նորան՝ կանգ-
նած խնկի սեղանի աջ կողմին:
Եւ Զաքարիան տեսնելով 12
շփոթուեցաւ, և վախ ընկաւ
նորա վերայ: Եւ հրեշտակն 13
ասաց նորան. Մի՛ վախեցիր,
Զաքարիա. վասնզի քո աղօթ-
քը լսուեցաւ, և քո կինն Եղի-
սաբեթի մի որդի կ'ծնի քեզ, և
նորա անունը Յովհաննէս կըկան-
չես: Եւ քեզ ուրախութիւն 14
և ցնծութիւն կ'լինի, և շատերը
նորա ծնունդովը կ'ուրախանան:
Քանզի նա մեծ կ'լինի Տիրոջ 15
առջև. և գինի և օղի չի խմիլ,
և դեռ իր մօր փորիցը Սուրբ
Հոգով կ'լցուի: Եւ Իսրայէլի 16
որդիքներից շատերին կ'դարձնէ
դէպի իրանց Տէր Աստուածը:
Եւ ինքն կ'գայ նորա առջևից 17
Եղիայի Հոգովն և զօրութիւ-
նովն, որ հարանց սրտերը դէպի
որդիքը դարձնէ. և անհնա-
զանդները արդարների իմաստու-
թեան մէջ, որ Տիրոջ համար
բարեկարգ ժողովուրդ պատ-
րաստէ: Եւ Զաքարիան ասաց 18
հրեշտակին. Ինչո՞վ ճանաչեմ

անցեալ զաւուրքդ իւրովք։
19 Պատասխանի եւ հրեշտակն՝ և
ասէ ցնա. Ես եմ Գաբրիէլ՝ որ
կամ առաջի Աստուծոյ, և
առաքեցայ խօսել ընդ քեզ՝ և
20 աւետարանել քեզ զայդ։ Եւ
ահա եղիցիս համր, և մի՛ կա-
րասցես խօսել մինչև ցօրն՝
յորում այդ լինիցի. փոխանակ
զի ոչ հաւատացեր բանից իմոց՝
որք լցցին ի ժամանակի իւր-
21 եանց։ Եւ ժողովուրդն ակն
ունէր Զաքարիայ, և զարմա-
նային ընդ յամէին նորա ի տա-
22 ճարին։ Եւ իբրև ել՝ ոչ կարէր
խօսել ընդ նոսա. և իմացան՝ թէ
տեսիլ եւեսս ի տաճարին. և նա
նշանացի խօսէր ընդ նոսա, և
23 կայր պապանձեալ։ Եւ եղև
իբրև լցան աւուրքն պաշտաման
24 նորա, գնաց ի տուն իւր։ Եւ
յետ աւուրցն այնոցիկ՝ յղացաւ
Եղիսաբեթ կինն նորա, և թա-
քուցանէր զանձն ամիսս հինգ,
25 և ասէր։ Զի՞նչ գործ գործեաց
ընդ իս Տէր յաւուրս՝ յորս
հայեցաւ յիս բառնալ զնախա-
տինս իմ ի մարդկանէ։

26 Եւ յամսեանն վեցերորդի՝
առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ
յԱստուծոյ ի քաղաք մի Գալի-
լեացւոյ, որում անուն էր
27 Նազարէթ, Առ կոյս խօսեցեալ

այդ բանը. վասնզի ես ծեր
եմ, և իմ կինն իր օրերն անց է
կացրել։ Եւ հրեշտակը պա- 19
տասխանեց և ասաց նորան. Ես
Գաբրիէլն եմ, որ Աստուծոյ
առջև կանգնում եմ, և ուղար-
կուեցայ քեզ հետ խօսելու և
այս բաները քեզ աւետիք տա-
լու։ Եւ ահա համր կ'լինիս, և 20
չես կարենալ խօսել, մինչև այն
օրն՝ որ այս բաները կ'լինի.
վասնզի չ'հաւատացիր իմ այս
խօսքերին՝ որ իրանց ժամանա-
կին կ'կատարուին։ Եւ ժողո- 21
վուրդը սպասում էր Զաքա-
րիային, և զարմանում էին նորա
տաճարի միջումն ուշանալու հա-
մար։ Եւ երբոր դուրս եկաւ, 22
չէր կարենում խօսել նորանց
հետ. և իմացան՝ որ տաճարի
մէջ տեսիլք է տեսել. և նա
նշաններով էր խօսում նորանց
հետ, և մնում պապանձուած։
Եւ եղաւ, երբոր նորա պաշ- 23
տօնի օրերը կատարուեցան,
գնաց իր տունը։ Եւ այն օրե- 24
րից յետոյ նորա Եղիսաբեթ
կինը յղացաւ, և հինգ ամիս
իր անձը ծածուկ պահում էր և
ասում՝ թէ այսպէս արաւ ինձ 25
Տէրն այս օրերումն, որ ինձ
վերայ նայեց՝ որ իմ նախատինքը
մարդկանց միջից վեր առնէ։

Եւ վեցերորդ ամսումը Գաբ- 26
րիէլ հրեշտակն Աստուածանից
ուղարկուեցաւ Գալիլեայի մի
քաղաք, որի անունը Նա-
զարէթ էր, Մի կոյսի մօտ, որ 27

առն, որում անուն էր Յովսէփ՝
ի տանէ Դաւթի. և անուն
28 կուսին Մարիամ։ Եւ եկեալ
առ նա՝ ասէ. Ուրախ լեր բեր-
29 կըբեալդ, Տէր ընդ քեզ։ Եւ նա
ընդ բանն խռովեցաւ, և խորհէր
ընդ միտս՝ թէ որպիսի ինչ իցէ
30 ողջոյնս այս։ Եւ ասէ ցնա հրեշ-
տակն. Մի՛ երկնչիր Մարիամ,
զի գտեր շնորհս յԱստուծոյ։
31 Եւ ահա յղաջիր՝ և ծնցես
որդի, և կոչեսցես զանուն նորա
32 Յիսուս։ Նա եղիցի մեծ, և
Որդի Բարձրելոյ կոչեսցի. և
տացէ նմա Տէր Աստուած զա-
թոռն Դաւթի հօր նորա. և
թագաւորեսցէ ի վերայ տանն
33 Յակովբայ ի յաւիտեանս. Եւ
թագաւորութեան նորա վախ-
34 ճան մի՛ լիցի։ Եւ ասէ Մարիամ
ցհրեշտակն. Զիարդ լինիցի ինձ
այդ, քանզի զայր ոչ գիտեմ։
35 Պատասխանի եւ հրեշտակն և
ասէ ցնա. Հոգի Սուրբ եկեսցէ
ի քեզ, և զօրութիւն Բարձրե-
լոյն հովանի լիցի ի վերայ քո.
քանզի և որ ծնանելոցն է ի քէն՝
սուրբ է, և Որդի Աստուծոյ
36 կոչեսցի։ Եւ ահա Եղիսաբեթ
ազգական քո՝ և նա յղի է ի
ծերութեան իւրում. և այս
վեցերորդ ամիս է նորա՝ որ
ամուլն կոչեցեալ էր. Զի ոչ
38 տկարասցի առ Աստուծոյ ամե-
նայն բան։ Եւ ասէ Մարիամ.
Ահաւասիկ՝ կամ աղախին Տեա-
ռըն, եղիցի ինձ ըստ բանի քում.
և գնաց ի նմանէ հրեշտակն։

նշանուած էր մի մարդոյ, որի
անունը Յովսէփ էր՝ Դաւթի տա-
նից. և այն կոյսի անունը
Մարիամ էր։ Եւ հրեշտակը 28
նորա մօտ գալով ասաց. Ողջոյն
քեզ, ով շնորհընկալ. Տէրը
քեզ հետ. օրհնեալ ես դու կա-
նանց մէջ։ Եւ նա նորան տես- 29
նելով շփոթուեցաւ նորա խօսքի
համար, և իր մտքումը մտածում
էր, թէ ինչպիսի բան պիտի լինի
այս ողջոյնը։ Եւ հրեշտակը 30
ասաց նորան. Մի՛ վախենար,
Մարիամ. քանզի Աստուածանից
շնորհք գտար։ Եւ ահա կը 31
յղանաս՝ և որդի կ'ծնիս. և
նորա անունը Յիսուս կ'կանչես։
Նա մեծ կ'լինի, և Որդի Բարձ- 32
րելոյն կ'կոչուի. և Տէր
Աստուած նորա Դաւթի հօր
աթոռը կ'տայ նորան. և կըթա-
գաւորէ Յակոբի տան վերայ
յաւիտեան. Եւ նորա թագա- 33
ւորութեանը վերջ չի լինիլ։ Եւ 34
Մարիամը ասաց հրեշտակին.
Սա թ՞ինչպէս կ'լինի. ըստ որում
ես այր չեմ գիտում։ Հրեշտակը 35
պատասխանեց և ասաց նորան.
Սուրբ Հոգին կ'գայ քեզ վերայ,
և Բարձրելոյն զօրութիւնը քեզ
վերայ կը հովանաւորէ, վասն
որոյ և այն ծնուած սուրբն էլ
Աստուծոյ Որդի կ'կոչուի։ Եւ 36
ահա քո ազգականն՝ Եղիսա-
բեթը, նա էլ մի որդիով յղի է
իր ծերութիւնումը. և սա այն
ամուլ կոչուածի վեցերորդ
ամիսն է։ Վանզի Աստուծոյ 37

39 Յարուցեալ Ա՝արիամ յա-
ւուրսն յայնոսիկ, գնաց 'ի
լեռնակողմն փութապէս 'ի քա-
40 ղաքն Յուդայ: Եւ եմուտ 'ի
տուն Զ՝աքարիայ, և ետ ողջոյն
41 Եղիսաբեթի: Եւ եղև իբրև
լուաւ զողջոյնն Ա՝արիամու
Եղիսաբեթ, խաղաց մանուկն
յորովայնի նորա. և լցաւ Եղի-
42 սաբեթ Հոգւով Սրբով. Եւ
'ի ձայն բարձր աղաղակեաց և
ասէ. Օրհնեալ ես դու 'ի կա-
նայս, և օրհնեալ է պտուղ
43 որովայնի քոյ: Եւ ուստի՞ է ինձ
այս, զի եկեսցէ մայր Տեառն
44 իմոյ առ իս: Զի ահաւասիկ՝
իբրև եղև ձայն ողջունի քոյ յա-
45 կանջս իմ, խաղաց ցնծալով
մանուկս յորովայնի իմում: Եւ
երանի որ հաւատացեալ՝ եթէ
եղիցի կատարումն ասացելոցս
46 նմա 'ի Տեառնէ: Եւ ասէ
Ա՝արիամ. Մեծացուսցէ անձն
47 իմ զՏէր: Եւ ցնծացաւ հոգի
48 իմ յԱ՝ստուած Փրկիչ իմ: Զի
հայեցաւ 'ի խոնարհութիւն
աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմ
հետէ երանեսցեն ինձ ամենայն
49 ազգք: Զի արար ինձ մեծամեծս
Հզօրն, և սուրբ է անուն նորա:
50 Եւ ողորմութիւն նորա ազգաց
51 յազգս երկիւղածաց իւրոց:
Զբաղ զօրութիւն բազկաւ իւրով.

առջև ոչ մի բան անկարելի չէ:
Ա՝արիամն էլ ասաց. Ահա Տիրոջ 38
աղախինն է՛. թող քո խօսքի պէս
լինի ինձ: Եւ հրեշտակը գնաց
նորանից:

Ա՝արիամն այն օրերումը վեր- 39
կացաւ՝ շտապելով լեռնակողմը
գնաց՝ Յուդայի քաղաքը. Եւ 40
Զ՝աքարիայի տունը մտաւ, և
Եղիսաբեթին բարևեց: Եւ 41
եղաւ, երբոր Եղիսաբեթը Ա՝ա-
րիամի բարևը լսեց, երեխան
նորա որովայնումը խաղաց. և
Եղիսաբեթը Սուրբ Հոգով
լցուեցաւ: Եւ մեծ ձայնով 42
աղաղակեց և ասաց. Օրհնեալ
ես դու կանանց մէջ. և օրհնեալ
է քո որովայնի պտուղը: Եւ սա 43
ինչ տեղից է ինձ, որ իմ Տիրոջ
մայրն ինձ մօտ եկաւ: Ա՝ա- 44
սընզի ահա, երբոր քո բարևի
ձայնն իմ ականջներին հասաւ,
երեխան որովայնումս ուրախա-
նալով խաղաց: Եւ երանի 45
նորան, որ հաւատաց, թէ այն
բաները կ'կատարուին, որ Տէրոջից
իրան ասուած են: Եւ Ա՝արիամը 46
ասաց. Թող իմ անձը փառա-
ւորէ Տիրոջը: Եւ իմ հոգին 47
ուրախացաւ իմ Փրկիչ Աստու-
ծուցը: Ա՝ասընզի իր աղախնոյ 48
խոնարհութեանը մտիկ տուաւ,
քանզի ահա այսուհետև բոլոր
ազգերը կ'երանեն ինձ: Ա՝ասընզի 49
հզօրը մեծամեծ բաներ արաւ
ինձ, և սուրբ է նորա անունը:
Եւ նորա ողորմութիւնը ազգից 50
ազգ նորանից վախեցողներին

ցրուեաց զամբարտաւանս մտօք
52 սրտից իւրեանց: Քակեաց
զՀզօրս յաթոռոց, և բարձրա-
53 ցոյց զխոնարհս: Զքաղցեալս
լցոյց բարութեամբ, և ըզմեծա-
տունս արձակեաց ունայնս:
54 Պաշտպանեաց Իսրայէլի ծա-
ռայի իւրում՝ յիշել զողորմու-
55 թիւնս: Որպէս խօսեցաւ առ
հարս մեր՝ Ա՝բրահամու և զաւա-
կի նորա յաւիտեան.

56 Եկաց Ա՝արիամ առ նմա
իբրև ամիսս երիս, և դարձաւ 'ի
տուն իւր:
57 Եւ Եղիսաբեթի լցան ժամա-
նակք ծնանելոյ, և ծնաւ որդի:
58 Եւ լուան որ շուրջ զնովաւ էին՝
և ալգատոհմ նորա, զի մեծ
արար Տէր զողորմութիւն իւր
ընդ նմա. և խնդային ընդ նմա:

59 Եւ եղև յաւուրն ութերորդի՝
եկին թլփատել զմանուկն, և
կոչէին զնա յանուն հօր իւրոյ
60 Զ՝աքարիա: Պատասխանի ետ
մայր նորա՝ և ասէ. Ո՛չ, այլ
61 կոչեսցի Յովհաննէս. Եւ ասեն
ցնա. Քանզի ոչ ոք է յազգի
քում, որոյ կոչի անուն Յով-
62 հաննէս: Ակնարկէին հօրն նորա՝
թէ զի՞նչ կամիցի կոչել զնա.
63 Եւ խնդրեաց տախտակ, գրեաց
և ասէ. Յովհաննէս է անուն
դորա. և զարմացան ամենեքին:
64 Եւ բացաւ բերան նորա վաղվա-
ղակի՝ և լեզու նորա, և խօսէր՝ և

Ելոյ է: Զօրութիւն արաւ իր 51
բազուկովը, ցրուեց ամբարտա-
ւաններին իրանց սրտի մտածմունքովը: Զօրաւորներին ա- 52
թոռներից իջեցրեց, և խոնարհ-
ներին բարձրացրեց: Սոված- 53
ներին բարիքներով լցրեց, և
հարուստներին դատարկ արձա-
կեց: Իր Իսրայէլ ծառային 54
պաշտպանեց իր ողորմութիւնը
յիշելով. Ինչպէս մեր հարանց 55
հետ խօսեց, Ա՝բրահամին և
նորա զաւակին՝ մինչև յաւիտեան:

Եւ Ա՝արիամն մնաց նորա մօտ 56
երեք ամսի չափ. և դարձաւ իր տունը:

Եւ Եղիսաբեթի ծնելու ժա- 57
մանակն լցաւ, և որդի ծնաւ:
Եւ նորա դրացիները և ազգա- 58
կանները լսեցին, թէ Տէրն իր
ողորմութիւնը մեծ արաւ նորա
վերայ. և ուրախանում էին
նորա հետ:

Եւ եղաւ՝ ութերորդ օրումն 59
եկան երեխային թլփատելու, և
նորան իր հօր անունովը Զ՝ա-
քարիա էին կոչում: Եւ նորա 60
մայրը պատասխանեց և ասաց.
Ոչ, այլ Յովհաննէս կոչուի:
Եւ ասացին նորան, թէ Ոչ ոք 61
չ'կայ քո ազգումը, որ այդ
անունովը կոչուի: Եւ նշան- 62
ներով հարցնում էին նորա հօրը,
թէ ի՞նչ է կամենում որ նա
կոչուի: Եւ նա տախտակ խնդ- 63
րեց, գրեց և ասաց, դորա
անունը Յովհաննէս է. և ամենքը
զարմացան: Եւ իսկոյն նորա 64

65 օրհնէր զԱստուած։ Եւ եղև ահ
'ի վերայ ամենեցուն որ բնակեալ էին
զայս, և որ շուրջ բնակեալ էին
զնոքօք. և ընդ ամենայն լեռնա-
կողմն Հրէաստանի պատմէին
66 ամենայն բանքս այսոքիկ։ Եւ
եղին ամենեքեան որ լսէինն՝ 'ի
սիրտս իւրեանց, և ասէին.
Զի՞նչ լինիցի մանուկս այս. և
ձեռն Տեառն էր ընդ նմա։

67 Եւ Զաքարիա հայր նորա
լցաւ Հոգւով Սրբով, մար-
68 գարէացաւ և ասէ. Օրհնեալ
Տէր Աստուած Իսրայէլի. զի
յայց եկ մեզ, և արար փրկու-
69 թիւն ժողովրդեան իւրում։ Եւ
յարոյց եղջիւր փրկութեան
մեզ 'ի տանէ Դաւթի ծառայի
70 իւրոյ։ Որպէս խօսեցաւ բերա-
նով սրբոց՝ որ յաւիտենից մար-
71 գարէքն նորա էին։ Փրկութիւն
'ի թշնամեաց մերոց, և 'ի ձեռաց
72 ամենայն ատելեաց մերոց։ Ա-
նել ողորմութիւն ընդ հարս
մեր, և յիշել զուխտն իւր սուրբ։
73 Զերդումն զոր երդուաւ Աբրա-
համու հօր մերում՝ տալ մեզ,
74 Առանց երկիւղի, 'ի ձեռաց
թշնամեաց մերոց փրկեալս։
75 Պաշտել զնա սրբութեամբ և
արդարութեամբ առաջի նորա՝
զամենայն աւուրս կենաց մերոց.
76 Եւ դո՛ւ մանուկ՝ Մարգարէ
Բարձրելոյ կոչեսջիր. զի երթիս
ցես առաջի երեսաց Տեառն՝
պատրաստել զճանապարհս նորա,
77 Տալ գիտութիւն փրկութեան
բերանը և լեզուն բացուեցաւ. և
խօսում էր՝ Աստուծոյն օրհնե-
լով։ Եւ ահ ընկաւ ամենքի 65
վերայ, որ նորանց չորս կողմովը
բնակում էին. և Հրէաստանի
բոլոր լեռնակողմումը այս ամեն
բաներըը պատմվում էին։ Եւ 66
բոլոր լսողներն իրանց սրտերումն
էին դնում և ասում. Այս երե-
խան ի՞նչ պիտի լինի։ Եւ Տի-
րոջ ձեռը նորա հետ էր։

Եւ նորա հայրը՝ Զաքարիան 67
Սուրբ Հոգով լցուեցաւ, մար-
գարէացաւ և ասաց. Օրհնեալ 68
է Իսրայէլի Տէր Աստուածը,
որ այցելութեան եկաւ, և փրը-
կութիւն արաւ իր ժողովրդի
համար։ Եւ փրկութեան եղ- 69
ջիւր վերկացրեց մեզ համար իր
Դաւթի ծառայի տանը։ Ինչ-
պէս որ խօսեց 'ի յաւիտենից իր 70
սուրբ մարգարէների բերանովը,
փրկութիւն մեր թշնամինե- 71
րից. և բոլոր մեզ ատողների
ձեռքից։ Որ մեր հարանց վե- 72
րայ ողորմութիւն անէ, և իր
սուրբ ուխտը յիշէ. Այն եր- 73
դումն, որ մեր հայր՝ Աբրա-
համին երդուաւ, որ մեզ տայ,
Որ մեր թշնամիների ձեռքից 74
ազատուած՝ աներկիւղ պաշտենք
իրան Սրբութիւնով և արդա- 75
րութիւնով նորա առջև մեր
կենաց բոլոր օրերումը։ Եւ 76
դու, երեխայ, Բարձրելոյն մար-
գարէ կ'կոչուիս. քանզի կ'գնաս
Տիրոջ երեսի առջևից նորա ճա-
նապարհները պատրաստելու, Որ 77

ժողովրդեան նորա, 'ի թողու-
78 թիւն մեղաց նոցա։ Ո՛ ասն
գթութեանց ողորմութեան Աս-
տուծոյ մերոյ, որովք այց
արասցէ մեզ արեգակն 'ի բար-
79 ձանց։ Երևել՝ որոց 'ի խաւարի
և 'ի ստուերս մահու նստէին.
ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս
խաղաղութեան։

80 Եւ մանուկն աճէր և զօրա-
նայր հոգւով. և էր յանապատս
մինչև յօր երևելոյ նորա Իսրա-
յէլի։

ԳԼՈՒԽ Բ

1 Եւ եղև ընդ աւուրսն ընդ
այնոսիկ եկ հրաման Օգոստոս
կայսերէ՝ աշխարհագիր առնել
2 ընդ ամենայն տիեզերս։ Այս
առաջին աշխարհագիր եղև 'ի
դատաւորութեան Սիրոց Կիւ-
3 րենեայ։ Եւ երթային ամենե-
քեան մտանել յաշխարհագիր
4 յիւրաքանչիւր քաղաքի։ Եկ և
Յովսէփ 'ի Գալիլեէ 'ի քաղաքէ
Նազարեթէ՝ 'ի Հրէաստան, 'ի
քաղաք Դաւթի, որ կոչի Բեթ-
ղեհէմ. վասն լինելոյ նորա 'ի
5 տանէ և յազգէ Դաւթի,
Մտանել յաշխարհագիր Մա-
րիամաւ հանդերձ՝ զոր խօսեալն
6 էր նմա, և էր յղի։ Եւ եղև 'ի
հասանելն նոցա անդր, լցան
7 աւուրքն ծնանելոյ նորա։ Եւ
ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և
պատեաց 'ի խանձարուրս՝ և եդ
նորա ժողովրդին տաս փրկու-
թեան գիտութիւնը իրանց մե-
78 ղաց թողութեան մէջ, Ո՛եր
Աստուծոյ գթած ողորմութեան
համար, որով ծագող արեգակը
79 վերևիցը այցելեց մեզ. Որ երևայ
խաւարումն և մահի ստուերումը
նստողներին. որ մեր ոտները
դէպի խաղաղութեան ճանա-
պարհն ուղղէ։

80 Եւ երեխան աճում էր և զօ-
րանում էր հոգով. և անապատ-
ներումն էր, մինչև այն օրն, որ
նա երևեցաւ Իսրայէլին։

ԳԼՈՒԽ Բ

1 Եւ այն օրերումն եղաւ, որ
հրաման դուրս եկաւ Օգոս-
տոս կայսրից, որ բոլոր աշխարհ
2 գրուի։ Այս առաջին աշխար-
հագիրն եղաւ Կիւրենի Սիւ-
րիայի կուսակալութեան ժամա-
նակումը։ Եւ ամենքը գնում 3
էին գրուելու՝ ամեն մէկն իր
քաղաքը։ Յովսէփն էլ Գալի- 4
լայիցը՝ Նազարէթի քաղաքիցը
գնաց Հրէաստան Դաւթի քա-
ղաքը, որ Բեթղեհէմ է կոչ-
վում. վասնզի նա Դաւթի տա-
նից և ազգից էր. Որ գրուի 5
իր նշանուած կնոջ Մարիամի
հետ, որ յղի էր։ Եւ եղաւ 6
երբոր նորանք այնտեղ էին.
նորա ծնելու օրերը լցան։ Եւ 7
իր անդրանիկ որդին ծնաւ, և
պատեց խանձարուրներով և մը-
սուրի մէջ դրաւ. որովհետև այն

զնա 'ի մսուր. զի ոչ զոյր նոցա
տեղի յիշևանին:
8 Եւ հովիւք էին 'ի տեղւոջն
յայնմիկ բացօթեայգք, որ պա-
հէին զպահպանութիւնս գիշե-
9 րոյ հօտից իւրեանց: Եւ հրեշ-
տակ Տեառն երևեցաւ նոցա, և
փառք Տեառն ծագեցին առ
նոսա. և երկեան երկիւղ մեծ:
10 Եւ ասէ ցնոսա հրեշտակն. Մի
երկնչիք՝ զի ահաւասիկ աւե-
տարանեմ՝ ձեզ ուրախութիւն
մեծ, որ եղիցի ամենայն ժողո-
11 վրդեանն: Զի ծնաւ ձեզ այսօր
Փրկիչ, որ է Օծեալ Տէր, 'ի
12 քաղաքի Դաւթի: Եւ այս
նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ
պատեալ 'ի խանձարուրս, և
13 եղեալ 'ի մսուր: Եւ յանկար-
ծակի եղև ընդ հրեշտակին ընդ
այնմիկ բազմութիւն զօրաց երկ-
14 նաւորաց, որ օրհնէին զԱս-
տուած՝ և ասէին: Փառք 'ի բար-
ձունս Աստուծոյ, և յերկիր
խաղաղութիւն, 'ի մարդիկ հա-
15 ճութիւն: Եւ եղև իբրև վերա-
ցան 'ի նոցանէ հրեշտակքն
յերկինս, ասեն ցմիմեանս հո-
վիւքն. Եկայք երթիցուք մինչև
ցԲեթղեհեմ, և տեսցուք զինչ
է բանս այս որ եղև. զոր Տէր
16 եցոյց մեզ: Եւ եկին փութա-
նակի, և գտին զԱրիամ և
զՅովսէփ, և զմանուկն եղեալ
17 'ի մսուր: Եւ ծանեան վասն
բանին՝ որ ասացաւ նոցա ըզման-
18 կանէն. Եւ ամենեքեան որ
լսէին, զարմանային վասն բա-

իշևանումը տեղ չէկար նորանց
համար:
8 Եւ այն տեղումը հովիւներ
կային դաշտումը կացող, որ
գիշերն իրանց հօտերը պա-
հում էին: Եւ ահա Տիրոջ
9 հրեշտակը կանգնեց նորանց առ-
ջև, և Տիրոջ փառքը նորանց
շուրջը ծագեց. և մեծ վախով
վախեցան: Եւ հրեշտակն ասաց
10 նորանց. Մի վախենաք, վասն-
զի ահա մեծ ուրախութիւն եմ
աւետում ձեզ, որ բոլոր ժողովը-
ղին պիտի լինի. թէ այսօր ձեզ
11 Փրկիչ ծնուաւ Դաւթի քաղա-
քումը. որ է Քրիստոս Տէրը:
Եւ այս լինի ձեզ նշան. մի
12 երեխայ կ'գտնէք խանձարուրնե-
րով պատած, և մսուրի մէջ
դրած: Եւ յանկարծակի այն
13 հրեշտակի հետ եղաւ երկնաւոր
զօրաց մի բազմութիւն, որ
Աստուծոյն օրհնում էին և
ասում. Փառք Աստուծոյ 'ի բար-
14 ձունս, և երկրի վերայ՝ խաղա-
ղութիւն, և մարդկանց մէջ՝ հա-
ճութիւն: Եւ եղաւ երբոր
15 հրեշտակները նորանցից վերա-
ցան երկինքը, այն հովիւ մար-
դիկն իրար ասացին. Եկէք
գնանք մինչև Բեթղեհեմ, և
տեսնենք այս եղած բանը, որ
Տէրը ցոյց տուաւ մեզ: Եւ
16 շտապելով եկան և գտան Ա-
րիամին և Յոսէփին, և երե-
խային՝ մսուրի մէջ դրած: Եւ
17 երբոր տեսան իմացին այն
բանն, որ այս երեխայի համար

նիցն՝ զոր խօսեցան ընդ նոսա
19 հովիւքն: Եւ Մարիամ զամե-
նայն զբանս զայսոսիկ պահէր,
20 և խնդամուտ լինէր 'ի սրտի
իւրում: Եւ դարձան հովիւքն,
փառաւորեալ և օրհնէին
զԱստուած վասն ամենայնի՝ զոր
լուան և տեսին. որպէս պատմե-
ցաւ նոցա:

21 Եւ իբրև լցան աւուրք ութ
թլփատել զնա, և կոչեցաւ
անուն նորա Յիսուս՝ որ կոչե-
ցեալն էր 'ի հրեշտակէն, մինչև
յղացեալ էր զնա. յորովայնի:
22 Եւ իբրև լցան աւուրք սրբու-
թեան նորա ըստ օրինացն Մովսէսի, ածին զնա յԵրուսաղէմ
յանդիման առնել Տեառն,
23 Որպէս և գրեալ է յօրէնս
Տեառն, թէ ամենայն արու որ
բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն
24 կոչեսցի: Եւ տալ պատարագս՝
ըստ ասացելոյն յօրէնս Տեառն,
զոյգս տատրակաց, կամ երկուս
ձագս աղաւնեաց:
25 Եւ ահա այր մի էր Երու-
սաղէմ, որոյ անուն էր Սիմէոն,
և էր այրն այն արդար և երկիւ-
ղած, և ակն ունէր մխիթարու-
թեանն Իսրայէլի, և Հոգի
26 Սուրբ էր 'ի նմա: Եւ էր նորա
հրաման առեալ 'ի Հոգւոյն
Սրբոյ՝ մի՛ տեսանել զմահ, մինչև
27 տեսցէ զՕծեալն Տեառն: Եւ
եկն Հոգւովն 'ի տաճարն. և
իբրև ածին ծնողքն զմանուկն

ասուեցաւ նորանց: Եւ բոլոր 18
լսողները զարմացան այն բաների
համար, որ հովիւները նորանց
հետ խօսեցան: Իսկ Մարիամ 19
այս բոլոր բաները պահում էր,
և իր սրտումը մտածում էր:
Եւ հովիւները ետ դարձան. 20
Աստուծոյն փառաբանում և օրհ-
նում էին այն բոլոր բաների
համար, որ լսեցին և տեսան,
ինչպէս որ նորանց ասուեցաւ:

Եւ երբոր ութ օր լրացաւ, որ 21
մանուկը թլփատուէր, նորա
անունը Յիսուս կոչուեցաւ, այն
որ հրեշտակիցը կոչուած էր՝ նա-
դեւ արգանդումը չյղացուած:
Եւ երբոր նորա սրբութեան 22
օրերը լրացան, Մովսէսի օրէնքի
պէս, նորան տարան Երուսաղէմ,
որ Տիրոջ առջև կանգնեցնեն:
Ինչպէս Տիրոջ օրէնքումը գրը- 23
ուած է, թէ Ամեն արու որ
արգանդ բանայ, Տիրոջ սուրբ
պիտի կոչուի: Եւ որ Տիրոջ 24
օրէնքումը ասածին պէս պատա-
րագ բերին մի զոյգ տատրակ,
կամ աղաւնու երկու ձագ:
Եւ ահա Երուսաղէմ մի 25
մարդ կար, որի անունը Սի-
մէոն էր, և այս մարդը արդար և
Աստուածավախ էր, և սպասում
էր Իսրայէլի մխիթարութեանը,
և Սուրբը Հոգի կար նորա վերայ:
Եւ նորան պատգամ էր եղած 26
Սուրբը Հոգուցը, որ մահ չըտես-
նէ, մինչև որ Տիրոջ Քրիս-
տոսին տեսնէ: Եւ Հոգովն 27
եկաւ տաճարը, և երբոր ծնողքը

Յիսուս՝ առնել նոցա ըստ սովո-
րութեան օրինացն 'ի վերայ
28 նորա. Եւ նա առ ընկալաւ զնա
'ի գիրկս իւր, և օրհնեաց
29 զԱստուած, և ասէ. Արդ՝ ար-
ձակես զծառայս քո Տէր ըստ
բանի քում 'ի խաղաղութիւն.
30 Զի տեսին աչք իմ զփրկութիւն
31 քո, Զոր պատրաստեցեր առաջի
32 ամենայն ժողովրդոց: Լոյս 'ի
յայտնութիւն հեթանոսաց, և
փառս ժողովրդեան քում Իսրա-
33 յէլի: Եւ էին հայրն և մայրն
նորա զարմացեալ 'ի վերայ
բանիցն, որ խօսէին զնմանէ:
34 Եւ օրհնեաց զնոսա Սիմէոնն, և
ասէ զՄարիամ մայր նորա.
Ահա սա կայ 'ի գլորումն և 'ի
կանգնումն բազմաց 'ի մէջ
Իսրայէլի, և 'ի նշան հակառա-
35 կութեան: Եւ ընդ քո իսկ անձն
անցցէ սուր. զի յայտնեսցին 'ի
բազում սրտից խորհուրդք:

36 Եւ անդ էր Աննա մարգարէ՝
դուստր Փանուէլի յազգէ Ասե-
րայ. սա ինքն անցեալ էր զա-
ւուրքքն բազմօք՝ կեցեալ ընդ առն
ամս եօթն 'ի կուսութենէ իւր մէ:
37 Եւ էր այրի ամաց իբրև ութ-
սուն և չորից. որ ոչ մեկնէր 'ի
տաճարէն, այլ պահօք և աղօ-
թիւք պաշտէր զցայգ և զցերեկ:
38 Եւ սա 'ի նմին ժամու յարու-
ցեալ՝ գոհանայր զՏեառնէ, և
խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝ որ

Յիսուս երեխային բերին, որ
օրէնքի սովորութեան պէս նո-
րա վերայ անեն: Եւ նա առաւ 28
նորան ընդունեց իր գիրկը, և
Աստուծոյն օրհնեց, և ասաց.
Հիմա արձակում ես քո ծա- 29
ռային, ով Տէր, քո խօսքի
պէս խաղաղութիւնով. Վա-
սընղի իմ աչքերը տեսան քո 30
փրկութիւնը, Որ պատրաստե- 31
ցիր ամեն ժողովուրդների առջև:
Լոյս՝ հեթանոսներին լուսաւո- 32
րելու, և փառք՝ քո Իսրայէլ
ժողովուրդի համար: Եւ Յո- 33
սէփը և նորա մայրը զարմացել
էին այն բաների վերայ, որ
նորա համար խօսվում էին:
Եւ Սիմէոնն օրհնեց նորանց, և 34
նորա մայր՝ Մարիամին ասաց.
Ահա սա կայ Իսրայէլի մէջ
շատերի համար ընկնելու և
կանգնելու պատճառ և հակա-
ռակութեան նշան: Եւ իսկ քո 35
անձովը սուր կ'անցնէ, որ շատ
սրտերից խորհուրդներ յայտ-
նուին:

Եւ այնտեղ էր Աննա մար- 36
գարէուհին՝ Փանուէլի աղջիկն՝
Ասերի ցեղից. սա ինքն շատ
օրեր էր անցրել, և իր կուսու-
թեան ժամանակից եօթն տարի
էր ապրել մարդոյ հետ. Եւ 37
ութսուն և չորս տարոյ չափ
որբևայրի էր, որ տաճարից
չէր հեռանում. Ծոյց ծոմերով
և աղօթքներով գիշեր ու ցերեկ
ծառայում էր Աստուծոյն: Այ 38
էլ նոյն ժամումը վերկացաւ՝

ակն ունէին փրկութեանն Երու-
սաղէմի:

39 Եւ իբրև կատարեցին զամե-
նայն ըստ օրինացն Տեառն, դար-
ձան անդրէն 'ի Գալիլեա 'ի քա-
40 ղաքն իւրեանց Նազարէթ: Եւ
մանուկն աճէր և զօրանայր լի
իմաստութեամբ. և շնորհք
Աստուծոյ էին 'ի վերայ նորա:
41 Եւ երթային ծնողք նորա
ամի ամի Երուսաղէմ 'ի տօն
42 զատկին: Եւ իբրև եղեն նորա
ամք երկոտասան, յելանել նոցա
Երուսաղէմ ըստ սովորութեան
43 տօնին, Եւ կատարել զաւուրսն՝
և դառնալ անդրէն, մնաց Յի-
սուս մանուկն Երուսաղէմ. և
44 ոչ գիտացին ծնողքն նորա: Կար-
ծէին զնմանէ՝ թէ ընդ ուղեկիցսն
իցէ. եկին իբրև աւուր միոյ
ճանապարհ՝ և խնդրէին զնա
ընդ դրացիսն և ընդ ծանօթս:
45 Եւ իբրև ոչ գտին, դարձան
անդրէն Երուսաղէմ խնդրել
46 զնա: Եւ եղև յետ երից ա-
ւուրց՝ գտին զնա 'ի տաճարին,
զի նստեր ընդ վարդապետսն,
լսէր 'ի նոցանէ, և հարցանէր
47 զնոսա: Զարմանային ամենե-
քեան որ լսէին 'ի նմանէ՝ ընդ
48 իմաստութիւնն և ընդ պատաս-
խանիս նորա: Եւ իբրև տեսին
զնա՝ սքանչացան. և ասէ զնա
մայրն իւր. Որդեակ՝ զի՞նչ
դործ դործեցեր դու ընդ մեզ.
ահաւասիկ հայր քո և ես տա-
49 ռապէաք՝ խնդրէաք զքեզ: Եւ

Տէրիցը գոհանում էր, որ Երու-
սաղէմի մէջ փրկութեանն սպա-
սում էին:

Եւ երբոր ամենը Տիրոջ օրէն- 39
քի պէս կատարեցին, ետ դար-
ձան Գալիլեա՝ իրանց Նազա-
րէթ քաղաքը: Երեխան էլ 40
աճում էր և զօրանում հոգով
իմաստութիւնով լցուած. և Ա-
ստուծոյ շնորհքը նորա վերայ էր:

Եւ նորա ծնողքը տարուց 41
տարի Երուսաղէմ էին գնում
զատկի տօնին: Եւ երբոր նա 42
տասներկու տարեկան եղաւ,
նորանք տօնի սովորութեան պէս
Երուսաղէմ գնացին, Եւ երբոր 43
օրերը կատարելուց յետոյ ետ
դարձան, Յիսուս տղան Երու-
սաղէմումը մնաց. և չիմացաւ
Յոսէփը և նորա մայրը, Եւ 44
կարծելով, թէ նա ճանապար-
հակիցների հետ կ'լինի, մի
օրուայ ճանապարհ եկան՝ և նո-
րան որոնում էին ազգականների
և ծանօթների մէջ: Եւ երբոր 45
նորան չգտան, ետ դարձան
Երուսաղէմ և որոնում էին նո-
րան: Եւ երեք օրից յետոյ 46
եղաւ, որ նորան տաճարի մէջ
գտան, վարդապետների մէջ նըս-
տած՝ նորանց ականջ էր դնում,
և նորանցից հարցնում էր: Եւ 47
ամենքն, որ նորանից լսում էին,
զարմանում էին նորա իմացո-
ղութեան և պատասխանների
վերայ: Եւ երբոր նորան տե- 48
սան, շատ սքանչացան. և նորա
մայրն ասաց նորան. Որդեակ,

ասէ ցնոսա. Զի՞ խնդրէիք զիս,
ոչ գիտէիք եթէ ՝ի տան Հօր
50 իմոյ պարտ է ինձ լինել։ Եւ
նոքա ոչ իմացան զբանն՝ զոր
51 խօսեցաւ ընդ նոսա։ Եւ էջ ընդ
նոսա, և գնաց ՝ի Նազարէթ.
և էր նոցա հնազանդ. և մայր
նորա պահէր զամենայն զբանսն
52 ՝ի սրտի իւրում։ Եւ Յիսուս
զարգանայր իմաստութեամբ և
հասակաւ՝ և շնորհօք Աստու-
ծոյ և ՝ի մարդկանէ։

ԳԼ. Գ

1 ՝Ի հնգետասաներորդի ամի
տէրութեանն Տիբերեայ կայ-
սեր, ՝ի դատաւորութեան Հռո-
մայեցոյ Պիղատոսի Պոնտացւոյ,
և ՝ի չորրորդպետութեան Գա-
լիլեացւոց Հերովդի, և ՝ի Փի-
լիպպոսի եղբօր նորա չորրորդ-
պետութեան Իտուրացւոց և
՝ի Տրաքոնացւոց աշխարհին, և
՝ի չորրորդպետութեան Լիւ-
2 սանեայ Աբիլենացւոյ, Եւ՝ ՝ի
քահանայապետութեան Աննայի
և Կայիափայ. եղև բան Աստու-
ծոյ ՝ի վերայ Յովհաննու
որդւոյ Զաքարիայ՝ յանապատի
3 անդ։ Եւ եկն յամենայն կողմն
Յորդանանու՝ քարոզել մկրտու-
թիւն ապաշխարութեան ՝ի թո-
ւին համար մեզ այսպէս
արիր. ահա, հայրդ և ես ցաւե-
լով որոնում էինք քեզ։ Եւ 49
նորանց ասաց. Ի՞նչու համար
էիք ինձ որոնում. չէիք գիտում՝
թէ պէտք է, որ ես իմ Հօր
պանը լինիմ։ Եւ նորանք չըհաս- 50
կացան այն խօսքը որ նորանց
հետ խօսեց։ Եւ նորանց հետ 51
իջաւ, և գնաց ՝Նազարէթ. և
նորանց հնազանդ էր. և նորա
մայրը այս բոլոր բաները պա-
հում էր իր սրտումը։ Եւ 52
Յիսուսը զարգանում էր իմաս-
տութիւնով և հասակով, և
շնորհքով՝ Աստուծոյ և մարդ-
կանց մօտ։

ԳԼ. Գ

Տիբերիոս կայսեր տէրութեան 1
տասն և հինգերորդ տարումը,
Պոնտացի Պիղատոսի Հրէաս-
տանի վերայ կուսակալութեան
ժամանակին, և Հերոդէսի՝ Գա-
լիլեայի վերայ չորրորդապետու-
թեան ժամանակին, և Լիւսա-
նիայի Աբիլենացւոց վերայ չոր-
րորդապետութեան ժամանակին,
Աննայի և Կայիափայի քա- 2
հանայապետութեան օրերումը
Աստուծոյ խօսքն եղաւ Զաքա-
րիայի որդի Յոհաննէսին անա-
պատումը։ Եւ նա եկաւ Յոր- 3
դանանի ամեն կողմերն, ապաշ-
խարութեան մկրտութիւնը քա-
րոզելով մեղաց թողութեան
համար։ Ինչպէս Եսայի մար- 4

4 զութիւն մեզաց։ Որպէս և գրբ-
եալ է ՝ի գիրս պատգամաց
Եսայեայ մարգարէի. Ձայն
բարբառոյ յանապատի. Պատ-
րաստ արարէք զճանապարհ
Տեառն, և ուղիղ արարէք ըզ-
5 շաւիղս նորա։ Ամենայն ձորք
լցին, և ամենայն լերինք և
բլուրք խոնարհեսցին. և եղիցին
դժուարինքն ՝ի դիւրինս, և առա-
պարքն ՝ի հարթ ճանապարհս.
6 Եւ տեսցէ ամենայն մարմին
զփրկութիւն Աստուծոյ։
7 Եւ ասէր ցժողովուրդսն ել-
եալս մկրտիլ ՝ի նմանէ. Ծնո-
ղանդք իժից՝ ո՞ցեցոյց ձեզ փախչել
՝ի բարկութենէն՝ որ գալոց է։
8 Արարէք այսուհետև պտուղս
արժանի ապաշխարութեան. և
մի՛ սկսանիցիք ասել՝ եթէ Ունիմք
հայր զԱբրահամ. զայս ասեմ
ձեզ, եթէ Կարող է Աստուած ՝ի
քարանցս յայսոցանէ յարուցանել
9 որդիս Աբրահամու։ Թայց
ահաւասիկ տապար առ արմին
ծառոց կայ. ամենայն ծառ որ
ոչ առնէ զպտուղ բարւոք,
հատանի և ՝ի հուր արկանի։
10 Հարցանէին զնա ժողովուրդքն
և ասէին. Իսկ արդ զի՞նչ գոր-
11 ծեսցուք։ Պատասխանի՝ և
ասէ ցնոսա. Որ իցեն երկու
հանդերձք՝ տայցէ զմին այնմ որ
ոչն գուցէ. և որ կայցէ կերա-
12 կուր՝ նոյնպէս արասցէ։ Եկին
և մաքսաւորքք մկրտիլ, ասեն
ցնա. Ո՛ վարդապետ՝ զի՞նչ գոր-
13 ծեսցուք։ Եւ նա ասէ ցնոսա.
գարէի խօսքերի գրքումն գրուած
է՝ որ ասում է Կանչողի ձայնը
անապատումը. պատրաստ արէք
Տիրոջ ճանապարհը, և ուղիղ
արէք նորա շաւիղները։ Ամեն 5
ձոր լցուի, և ամեն լեռ և բլուր
խոնարհուի. և դժուարները
հեշտ լինին, և խորտուբորտները
հարթ ճանապարհներ լինին։
Եւ ամեն մարմին Աստուծոյ փրկ- 6
ութիւնը տեսնէ։

Եւ այն ժողովուրդներին, 7
որ դուրս էին եկած նորանից
մկրտուելու, ասաց. Իժերի
զաւակներ, ո՞վ սովորեցրեց ձեզ
փախչիլ այն գալու բարկու-
թիւնից։ Արդ ապաշխարու- 8
թեան արժանի պտուղներ արէք.
և մի սկսէք ասել ձեր միջումը
մենք Աբրահամն ունինք հայր.
քանզի ասում եմ ձեզ, թէ Աս-
տուած կարող է այս քարերից
որդիք հանել Աբրահամի հա-
մար։ Թայց արդէն կացին էլ 9
ծառերի արմատին մօտ դրած է.
արդ ամեն ծառ, որ բարի պտուղ
չէ բերում, կ'կրտրուի և կրակի
մէջ կ'գցուի։ Եւ ժողովուրդ- 10
ները նորան հարցնում էին և
ասում. Ապա ի՞նչ անենք։ Եւ 11
պատասխանեց և ասաց նորանց.
՝Կա որ երկու հանդերձ ունի,
թող չունեցողին տայ. և նա
էլ, որ կերակուր ունի, թող
նոյնպէս անէ։ Եւ մաքսաւոր- 12
ներն էլ եկան մկրտուելու, և

Մի՛ ինչ աւելի քան ըղհրամայեալն ձեզ առնիցէք։ Հարցանէին զնա և ասէին. Եւ մեք զի՞նչ գործեսցուք. ասէ ցնոսա. Մի՛ զոք խուիցէք՝ և մի՛ զոք զըպարտիցէք, շա՛տ լիցին ձեզ թոշակքն ձեր։

Մի՛ինչ ակն ունէր ժողովուրդն՝ և խորհէին ամենեքեան 'ի սիրտս իւրեանց վասն Յովհաննու՝ մի՛թէ սա իցէ Քրիստոս։ Պատասխանի ետ ամենեցուն՝ և ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բաւական բառնալ զկօշիկս. նա մկրտեսցէ զձեզ Հոգւով Սրբով և հրով. Որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում սրբել զկալ իւր՝ և ժողովել զցորեանն 'ի շտեմարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով։ Բազում և այլ ինչ մխիթարութեամբ աւետարանէր ժողովրդեանն։ Բայց Հերովդէս չորրորդապետ յանդիմանեալ 'ի նմանէ վասն Հերովդիայ կնոջ եղբօր իւրոյ՝ և վասն ամենայն չարեացն զոր գործեաց Հերովդէս, Յաւել և զայն ևս 'ի վերայ ամենայնի, և եդ 'ի բանտի զՅովհաննէս։

Եւ եղև 'ի մկրտիլ ամենայն ժողովրդեանն, և ընդ Յիսուսի նոքան ասացին. Ո՛ մարդապետ, ինչ անենք։ Նա էլ ասաց նոքանց. Զձեզ հրամայածիցն աւելի ոչ մի բան մի անէք։ Եւ զինուորներն էլ էին հարցնում նորան և ասում. Մեզ մենք ի՞նչ անենք, նորանց էլ ասաց. Ոչ մէկին մի հարստահարէք, ոչ էլ զըպարտութիւն արէք, և ձեր թոշակովը բաւականացէք։

Ժողովուրդն էլ դեռ սպասելիս և ամենքն իրանց սրտերումն մտածելիս՝ Յոհաննէսի համար, մի գուցէ նա լինի Քրիստոսը։ Յոհաննէսն ամենին պատասխանեց և ասաց. Ես ջրով եմ մկրտում ձեզ, բայց ինձանից աւելի զօրաւորն է գալիս, որ ես արժանի չեմ նորա կօշիկների կապերը լուծելու. նա ձեզ Սուրբ Հոգով և կրակով կ'մկրտէ։ Որ հոսելին նորա ձեռին է, և իր կալը կ'սրբէ, և ցորենն իր ամբարը կ'ժողովէ, իսկ դարմանը կ'այրէ անշէջ հրով։ Եւ ուրիշ էլ շատ բաներ յորդորելով աւետիք էր տալիս ժողովրդին։ Բայց Հերոդէս չորրորդապետը՝ նորանից յանդիմանուած իր եղբօր Փիլիպպոսի կնկան Հերոդիայի մասին, և այն ամեն չար գործքերի համար, որ Հերոդէսը արաւ, Ամենի վերայ սա էլ աւելացրեց, որ Յոհաննէսին բանտի մէջ դրաւ։

Եւ բոլոր ժողովուրդի մկրտուելու ժամանակին եղաւ, որ

մկրտիլն՝ և կալ յաղօթս, բանալ երկնից, Եւ իջանել Հոգւոյն Սրբոյ մարմնաւոր տեսլեամբ իբրև աղաւնի 'ի վերայ նորա. և գալ ձայն յերկնից՝ որ ասէր. Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ։

Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրև երեսնից սկսեալ՝ որոց որպէս կարծէր որդի Յովսեփայ։ *Որ Յակովբայն՝. որ Հեղեայն. որ Մատթեայն։ Որ Ղևեայն. որ Մեղքեայն. որ Յաննեայն. որ Յովսեփայն։ Որ Մատթեայն. որ Ամովսայն. որ Նաւումայն. որ Եսղեայն. որ Նանգեայն։ Որ Մահաթայն. որ Մատտաթայն. որ Սեմեայն. որ Յովսեփեայն. որ Յովդայն։ Որ Յովհանայն. որ Ռեսայն. որ Զօրաբաբելն. որ Սաղաթիէլն. որ Ներեայն։ Որ Մելքեայն. որ Ադդեայն. որ Կոսամայն. որ Եղմոդադայն. որ Երայն։ Որ Յեսուայն. որ Եղիազարայն. որ Յովրամայն. որ Մատթայն. որ Ղևեայն։ Որ Սիմէոնին. որ Յուդային. որ Յովսեփայն. որ Յովնամայն. որ Եղեկիմայն։ Որ Մեղթայն. որ Մենայն. որ Մատտաթայն. որ Նաթանայն. որ Դաւթին։ Որ Յեսսեայն. որ Ովբեդայն. որ Բոոսայն. որ Սաղմոնայն. որ

* 'Ի Յակոբ էր։

երբոր Յիսուսն էլ մկրտուեցաւ՝ և աղօթք էր անում, երկինքը բացուեցաւ, Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր տեսիլքով աղաւնու պէս իջաւ նորա վերայ. և երկնքից ձայն եղաւ, որ ասում էր. Դու ես իմ սիրելի Որդին, քեզ հաճեցայ։

Եւ ինքն Յիսուս սկսած էր երեսուն տարեկանի չափ լինել, որ ինչպէս կարծվում էր, Յոսէփի որդին էր. և նա Հեղեին. և նա Մատթատի. Եւ նա Ղևիի. և նա Մեղքիի. և նա Յաննէի. և նա Յոսէփի. Եւ նա Մատտաթի. և նա Ամոսի. և նա Նաւումի. և նա Եսղիի. և նա Նանգէի. Եւ նա Մահաթի. և նա Մատտաթի. և նա Սեմէի. և նա Յոսէփի. և նա Յուդայի. Եւ նա Յոաննայի. և նա Ռէսայի. և նա Զօրաբաբելի. և նա Սաղաթիէլի. և նա Նէրէի. Եւ նա Մեղքիի. և նա Ադդէի. և նա Կոսամի. և նա Եղմոդամի. և նա Երի. Եւ նա Յոսէի. և նա Եղիազարի. և նա Յորէմի. և նա Մատթատի. և նա Ղևիի. Եւ նա Սիմէոնի. և նա Յուդայի. և նա Յոսէփի. և նա Յոնանի. և նա Երղիակիմի. Եւ նա Մելիայի. և նա Մայնանի. և նա Մատտաթի. և նա Նաթանի. և նա Դաւթի. Եւ նա Յեսսէի. և նա Յոբէդի. և նա Բոոսի. և նա

33 Ղաասովնին։ Որ Ամինադա-
բայն. որ Արամայն. *որ
Ազմեայն. որ Առնեայն.՝ որ
Եսրովնայն. որ Փարեսին. որ
34 Յուդային։ Որ Յակովբայն. որ
Իսահակայն. որ Աբրահամուն.
որ Թառային. որ Ղաքովբայն։
35 Որ Սերուքայն. որ Ռագաւայն.
որ Փաղեկայն. որ Եբերայն. որ
36 Սաղային։ Որ Կայնանայն. որ
Արփաքսադայն. որ Սեմայն.
37 որ Ղոյին. որ Ղամեքայն։ Որ
Մաթուսաղային. որ Ենովքայն.
որ Յարեդին. որ Մա-
38 ղաղեելին. որ Կայնանայն։ Որ
Ենովսայն. որ Սեթայն, որ
Ադամայն. որ Աստուծոյն։

ԳԼ. Դ

1 Եւ Յիսուս լի Հոգւով
Սրբով դարձաւ ի Յորդանանէ.
և վարէր Հոգւոյն յանապատ,
2 Յաւուրս քառասուն փորձեալ
ի Սատանայէ. և ոչ եկեր, և
ոչ արբ յաւուրսն յայնոսիկ. և
ի կատարելն նոցա քաղցեաւ։

3 Եւ ասէ ցնա Սատանայ. Եթէ
Որդի ես Աստուծու, ասա՛ քարիդ
4 այդմիկ՝ զի հաց լիցի։ Պատաս-
խանի ետ նմա Յիսուս՝ և ասէ.
Գրեալ է, եթէ Ո՛չ հացիւ
միայն կեցցէ մարդ, այլ ամե-
նայն բանիւ Աստուծոյ։
5 Եւ հանեալ զնա ի լեառն

Աղմանի, և նա Ղաասանի. Եւ 33
նա Ամինադաբի. և նա Արամի.
և նա Իսրոնի. և նա Փարեսի,
և նա Յուդայի. Եւ նա Յա-
կոբի. և նա Իսահակի. և նա
Աբրահամի. և նա Թարայի.
և նա Ղաքոբի. Եւ նա Սե- 35
ռուքի. և նա Ռագաւի. և նա
Փաղեկի. և նա Եբերի. և նա
Սաղայի. Եւ Կայնանի. և նա 36
Արփաքսատի. և նա Սէմի. և
նա Ղոյի. և նա Ղամեքի.
Եւ նա Մաթուսաղայի՝. և նա 37
Ենոքի. և նա Յարեդի. և նա
Մաղաղեէլի. և նա Կայնանի.
Եւ նա Ենոսի. և նա Սեթի, 38
և նա Ադամի. և նա Աստուծոյ։

ԳԼ. Դ

Եւ Յիսուսը Սուրբ Հոգւով 1
լցուած Յորդանանից ետ դար-
ձաւ և Հոգւոյն տարուեցաւ
անապատը։ Քառասուն օր սա- 2
տանայիցը փորձուեցաւ. և այն
օրերումը ոչինչ չկերաւ, և երբ
որ նորանք լցան, վերջապէս
սովեց։
Եւ սատանան նորան ասաց. 3
Եթէ Որդի ես Աստուծոյ, ասա
այդ քարերին որ հաց լինի։
Եւ Յիսուսը նորան պատասխա- 4
նեց և ասաց. Գրուած է, թէ
Ոչ միայն հացով կ՚ապրի մարդ,
այլ Աստուծոյ ամեն խօսքովը։
Եւ սատանան նորան մի բարձր 5

մի բարձր՝ եցոյց նմա զամենայն
թագաւորութիւնս աշխարհի՝ ի
6 վայրկեան ժամանակի։ Եւ ասէ
ցնա Սատանայ. Քեզ տաց
զայս ամենայն իշխանութիւն և
զփառս սոցա, զի ինձ տուեալ է,
7 և ում կամիմ՝ տամ զսա։ Արդ
դու եթէ առկեալ երկիրպագա-
նիցես առաջի իմ, քեզ եղիցի
8 ամենայն։ Պատասխանի ետ նմա
Յիսուս՝ և ասէ. Գրեալ է.
Երկիրպագցես Տեառն Աստու-
ծոյ քում, և զնա միայն պաշ-
տեսցես։

9 Եւ ած զնա Յերուսաղէմ, և
կացոյց ի վերայ աշտարակի
տաճարին, և ասէ ցնա. Եթէ
10 Որդի ես Աստուծոյ, արկ զքեզ
աստի ի վայր։ Զի գրեալ է՝
Եթէ Հրեշտակաց իւրոց պա-
տուիրեալ է վասն քո՝ պահել
11 զքեզ։ Զի ի վերայ ձեռաց
բարձցեն զքեզ, մի երբէք հար-
12 ցես զքարի զոտն քո։ Պատաս-
խանի ետ նմա Յիսուս՝ և ասէ.
Ասացեալ է, թէ Ո՛չ փորձեսցես
13 զՏէր Աստուած քո։ Եւ կա-
տարեալ զամենայն փորձութիւնն
Սատանայի, ի բաց եկաց ի
նմանէ առ ժամանակ մի։

14 Եւ դարձաւ Յիսուս զօրու-
թեամբ Հոգւոյն ի Գալիլեա.
և եղ համբաւ զնմանէ ընդ ամե-
15 նայն կողմանս գաւառին։ Եւ

լեառ հանեց՝ և աշխարհի բո-
լորը թագաւորութիւնները ցոյց
տուաւ նորան մի վայրկեանի մէջ։
Եւ սատանան ասաց նորան. 6
Այս բոլոր իշխանութիւնները
և սորանց փառքը քեզ կ՚տամ.
վասնզի ինձ է տրուած. և ում
որ կամենում եմ, տալիս եմ սո-
րան։ Արդ դու, եթէ իմ առջևը 7
ընկած երկրպագութիւն անես,
բոլորը քոնը կ՚լինի։ Եւ Յի- 8
սուսը նորան պատասխանեց և
ասաց. Գնա յետս, սատանայ.
գրուած է, թէ Տէր Աստուծոյն պէտք է երկրպագու-
թիւն անես, և նորան միայն
պաշտես։
Եւ տարաւ նորան Երուսա- 9
ղէմ, և տաճարի աշտարակի
վերայ կանգնեցրեց և ասաց
նորան. Եթէ Որդի ես Աստու-
ծոյ, այստեղից քեզ վայր գցիր։ 10
Այսպէս գրուած է, թէ Իր
հրեշտակներին կ՚հրամայէ քեզ
համար, որ քեզ պահեն։ Եւ 11
որ ձեռների վերայ քեզ վեր
առնեն, որ երբէք քո ոտը քարի
չդպցնես։ Յիսուսը նորան պա- 12
տասխանեց և ասաց, թէ Ասուած
է՝ Ի՝ փորձիր քո Տէր Աստու-
ծոյն։ Եւ սատանան երբոր 13
բոլոր փորձութիւնը կատարեց,
հեռացաւ նորանից մինչև մի
ժամանակ։
Եւ Յիսուսը Հոգոյ զօրու- 14
թիւնովը ետ դարձաւ Գալիլեա.
և նորա համբաւը դուրս գնաց
այն գաւառի ամեն կողմերը։

նա ուսուցանէր 'ի ժողովուրդս
նոցա փառաւորեալ յամենե-
ցունց։
16 Եւ եկն 'ի Նազարէթ՝ ուր
սնեալն էր. և եմուտ ըստ
սովորութեան իւրում յաւուրն
շաբաթուց 'ի ժողովուրդն։
17 Եւ ետուն նմա գիրս զԵսայեայ
մարգարէի. և յարեաւ ընթեր-
նուլ. և իբրև երաց զգիրսն՝
եգիտ զայն տեղի յորում գրեալն
18 էր։ Հոգի Տեառն 'ի վերայ
իմ, վասն որոյ և օծ իսկ զիս.
աւետարանել աղքատաց առա-
քեաց զիս, բժշկել զբեկեալս
19 սրտիւք. Քարոզել գերեաց
զթողութիւն, և կուրաց տեսա-
նել. արձակել զվիրաւորս 'ի թո-
ղութիւն, քարոզել զտարեկան
20 Տեառն ընդունելի։ Եւ խփեալ
զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն, և
նստաւ. և ամենեցուն որ 'ի
ժողովրդեանն էին աչք 'ի նա
21 հայէին։ Եւ սկսաւ ասել
ցնոսա. Այսօր լցան գիրքս այս
22 յականջս ձեր։ Եւ ամենեքին
վկայէին նմա, և զարմանային
ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին
'ի բերանոյ նորա, և ասէին. Ո՞չ
23 սա է որդին Յովսեփայ։ Եւ
ասէ ցնոսա. Այպաքէն ասիցէք
առ իս զառակս զայս. Բժիշկ՝
բժշկեա զանձն քո. որչափ
լուաք՝ զոր արարեր 'ի Կափառ-
նաում, արա և աստ 'ի քում
24 գաւառի։ Եւ ասէ. Ամէն ասեմ
ձեզ՝ թէ Ոչ մարգարէ ընդու-
25 նելի 'ի քաղաքի իւրում։ Արդարև
Եւ նա սովորեցնում էր նորանց 15
ժողովարաններում, և ամենից
փառաւորվում էր։
Եւ եկաւ Նազարէթ, ուր որ 16
մեծացել էր. և իր սովորու-
թեան պէս շաբաթ օրը ժողո-
վարանը մտաւ, և կանգնեց որ
կարդայ։ Եւ Եսայի մար- 17
գարէի գիրքը տուին նորան. և
երբոր գիրքը բացաւ՝ այն տեղը
գտաւ, ուր գրուած էր. Տիրոջ 18
Հոգին ինձ վերայ է. որի հա-
մար էլ օծեց ինձ. նա ինձ
ուղարկել է աղքատներին աւե-
տիք տալ, սրտով կոտրուածնե-
րին բժշկել, գերիներին թո- 19
ղութիւն քարոզել, և կոյրերին
տեսութիւն. խոցուածներին ար-
ձակել աղատելով, Տիրոջ ըն-
դունելի տարին քարոզել։ Եւ 20
գիրքը խփեց՝ պաշտօնեային
տուաւ, նստեց, և ժողովարանի
մէջ ամենքի աչքերը նորան էին
մտիկ տալիս։ Եւ սկսեց ասել 21
նորանց, թէ Այսօր այս գիրքը
կատարուեցաւ ձեր ականջնե-
րումը։ Եւ ամենքը վկայում 22
էին նորան, և զարմանում էին
այն շնորհաց խօսքերի վերայ,
որ դուրս էին գալիս նորա բերա-
նից. և ասում էին. Չէ՞ որ սա
Յոսէփի որդին է։ Եւ նորանց 23
ասաց, Ի հարկէ այս առակը
կ'ասէք ինձ. Բժիշկ, քո անձը
բժշկիր. որչափ բաներ լսեցինք՝
Կափառնայումի մէջ եղած, քո
հայրենիքումը՝ այստեղ էլ արա։
Եւ ասաց. Ճշմարիտն ասում 24

ասեմ ձեզ. զի բազում այրիք
էին յաւուրս Եղիայի 'ի մէջ
Իսրայէլի՝ յորժամ փակեցան
երկինք ղերիս ամն և զվեց ամիս,
և եղև սով մեծ ընդ ամենայն
26 երկիր։ Եւ ոչ առ մի 'ի նոցանէ
առաքեցաւ Եղիա, բայց միայն
'ի Սարեպթա Սիդոնացւոց՝ առ
27 կին մի այրի։ Եւ բազում
բորոտք էին Իսրայէլի առ
Եղիսէիս մարգարէիս. և ոչ ոք
'ի նոցանէ սրբեցաւ, բայց մի-
28 այն Նէեման Ասորի։ Եւ լցան
ամենեքին բարկութեամբ 'ի
ժողովրդեանն՝ իբրև լսէին զայս.
29 Եւ յարուցեալ հանին զնա
արտաքոյ քաղաքին, և ածին զնա
մինչև յարտեան լերինն՝ յորոյ
վերայ քաղաքն նոցա շինեալ
30 էր՝ գահավէժ առնել զնա։ Եւ
նա անցեալ ընդ մէջ նոցա՝
գնայր։

31 Եւ էջ 'ի Կափառնաում 'ի
քաղաքն Գալիլեացւոց, և
ուսուցանէր զնոսա 'ի շաբաթսն։
32 Եւ զարմանային ընդ վարդա-
պետութիւն նորա, զի իշխանու-
33 թեամբ էր բան նորա։ Եւ էր
'ի ժողովրդեանն այր մի, զոր
ունէր այս դիւի պղծոյ, և աղա-
34 ղակեաց 'ի ձայն մեծ, Ասէ.
Թո՛ւլացո՛ զի՞ կայ մեր և քո՝
Յիսուս Նազովրեցի, եկիր
եմ ձեզ, թէ ոչ մի մարգարէ
ընդունելի չէ իր հայրենիքումը։
Եւ Ճշմարտութեամբ ասում 25
եմ ձեզ, թէ Եղիայի օրերին
Իսրայէլի մէջ շատ որբևայրիներ
կային, երբոր երկինքը երեք
տարի և վեց ամիս փակուեցաւ,
այնպէս որ բոլոր երկրի վերայ
մեծ սով եղաւ։ Եւ Եղիան 26
նորանցից ոչ ոքի մօտ չուղարկ-
ուեցաւ, բայց միայն Սիդո-
նացոց Սարեպթան՝ մի որբևայրի
կնոջ մօտ։ Եւ շատ բորոտներ 27
կային Իսրայէլի մէջ Եղիսէ
մարգարէի ժամանակին. և նո-
րանցից ոչ ոք սրբուեցաւ, բայց
միայն Նէեման Սիւրիացին։
Եւ ամենքը բարկութիւնով 28
լցուեցան ժողովարանի մէջ, երբ-
որ այս լսեցին։ Եւ վերկա- 29
ցան՝ նորան քաղաքից դուրս
հանեցին, և տարան նորան
մինչև այն լեռան գլուխն՝ որի
վերայ նորանց քաղաքը շինուած
էր, որ բարձր տեղիցը վայր
գցեն նորան։ Իսկ նա նորանց 30
միջովն անցաւ գնաց։
Եւ իջաւ Կափառնայում՝ 31
Գալիլեացոց քաղաքը, և շա-
բաթ օրը սովորեցնում էր նո-
րանց։ Եւ զարմանում էին 32
նորա վարդապետութեան վե-
րայ, քանզի նորա խօսքը իշխա-
նութիւնով էր։ Եւ ժողովա- 33
բանումը մի մարդ կար, որ պիղծ
դև ունէր, և մեծ ձայնով աղա-
ղակեց, Եւ ասաց. Թո՛ղ տուր. 34
ի՞նչ բան ունիս մեզ հետ,

կորուսանիլ զմեզ. գիտեմք զքեզ՝ ով ես՝ Սուրբդ Աստուծոյ:
35 Պատասխան տուին Յիսուս՝ և ասէ. Պապանձեաց՝ և մի՛ դիմանէ. զգետնեաց զնա դէն՝ ի միջի անդ՝ և ելի՛ նմանէ, և ինչ ոչ վնասեաց
36 նմա: Եւ եղեն զարմանալիք՝ ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմեանս և ասէին. Օ՞ր ինչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ այսոց
37 պղծոց՝ և ելանեն: Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն:

38 Եւ յարուցեալ՝ ի ժողովրդոյն անտի, եմուտ՝ ի տուն Սիմովնի: Օ՞ղբանչ Սիմովնի տագնապէր ջերմամբ մեծաւ. և աղաչեցին զնա վասն նորա:
39 Եկաց առ նմա՝ սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ՝ և պաշտէր զնոսա:

40 Եւ ընդ արևուն մտանել՝ ամենեքեան, որոց էին հիւանդք՝ ի պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա: Եւ նա իւրաքանչիւր ումեք՝ ի նոցանէ դնէր ձեռս և բժշկէր
41 զնոսա: Ելանէին դեւք՝ ի բազմաց, աղաղակէին և ասէին. Եթէ Դու ես Որդի Աստուծոյ. և նա սաստէր՝ և ոչ տայր նոցա թոյլ խօսել, Յիսուս Նազովրեցի. գիտէր՝ թէ զնա կորցնելոյ. գիտեմ՝ քեզ՝ Ո՞վ դու ով ես, ով Աստուծոյ Սուրբդ:
35 Յիսուսը սաստեց նորան և ասաց. Պապանձիր և դուրս եկ դորանից. և դեւը նորան գետինն զարկեց մէջ տեղը՝ և դուրս եկաւ նորանից, և ոչ մի վնաս չ՝տուաւ նորան:
36 Եւ զարմանք եղաւ ամենքի վերայ, և իրար հետ խօսում էին և ասում. Այս ի՞նչ բան է, որ իշխանութիւնով և զօրութիւնով պիղծ ոգիներին սաստում է, և դուրս են գալիս:
37 Եւ նորա համբաւը գնում՝ էր շրջակայքի ամեն տեղը:

38 Եւ վերկացաւ ժողովարանից, և մտաւ Սիմոնի տունը. Սիմոնի զոքանչն էլ սաստիկ տենդով բռնուած էր. և նորան աղաչեցին նորա համար:
39 Եւ նորա մօտ կանգնեց՝ սաստեց տենդին. և պէնդը թողեց նորան. և նա իսկոյն վեր կացաւ՝ և ծառայում էր նորանց:
40 Եւ արեգակը մտնելիս՝ ամենքն, որ կերպ կերպ ցաւերով հիւանդներ ունէին, նորանց բերում էին նորա մօտ. նա էլ նորանց ամեն մէկի վերայ ձեռք
41 էր դնում՝ և բժշկում նորանց: Շատերից էլ դեւեր էին դուրս գալիս, աղաղակում և ասում, թէ Դու ես Քրիստոս Աստուծոյ Որդին. և նա սաստելով նորանց թոյլ չէր տալիս, որ

զի գիտէին զնա թէ Քրիստոսն է:
42 Եւ իբրև տիւ եղև՝ ելն գնաց յանապատ տեղի. և ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչև առ նա՝ և արգելուին զնա, զի մի գնասցէ՝ ի նոցանէ:

43 Եւ նա ասէ ցնոսա. Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել զարքայութիւն Աստուծոյ, զի յայն իսկ առաքեցայ:
44 Եւ քարոզէր՝ ի ժողովուրդսն Գալիլեացւոց:

ԳԼ. Ե

1 Եւ եղև՝ ի խռնել զնուաւ ժողովրդեանն՝ և լսել զբանն Աստուծոյ, և ինքն կայր առ
2 ծովակին Գէննեսարեթայ: Եւ ետես երկուս նաւս՝ զի կային առ ծովակին, և ձկնորսքն ելեալ՝ ի նոցանէ՝ լուանային զգործին:
3 Ել նա՝ ի մի նաւուցն՝ որ էր Սիմովնի, և աղաչեաց զնա՝ սակաւիկ մի տանել՝ ի ներքս՝ ի ցամաքէն. նստաւ՝ և ուսուցանէր՝ ի նաւէ անտի զժողովուրդսն:

4 Եւ իբրև լռեաց՝ ի խօսիցն, ասէ ցՍիմովն. Խաղացո՛՝ ի խորն, և արկէք զգործիս ձեր յորս:

խօսին. վասնզի գիտէին, թէ նա Քրիստոսն է:
Եւ երբոր ցերեկ եղաւ, 42
դուրս եկաւ գնաց անապատ տեղ. և ժողովուրդները որոնում էին նորան, և եկան մինչև նորա մօտ. և արգելում էին նորան, որ չգնայ իրանցից:
Ասա էլ ասաց նորանց, Ես 43
ուրիշ քաղաքներին էլ պէտք է Աստուծոյ արքայութիւնը աւետարանեմ. վասնզի իսկ սորա համար ուղարկուեցայ: Եւ քա- 44
րոզում էր Գալիլեայի ժողովարանների մէջ:

ԳԼ. Ե

Եւ եղաւ, երբոր ժողովուրդը 1
նորա վերայ կիսվում էր, Աստուծոյ խօսքը լսելու, և ինքն Գէննեսարեթի ծովակի մօտ կանգնած էր. Եւ երկու նաւ 2
տեսաւ՝ ծովակի մօտ կանգնած, ձկնորսներն էլ նորանցից դուրս էին եկած՝ և ուռկանները լուանում էին: Եւ մտաւ այն 3
նաւերի մէկի մէջ որ Սիմոնինն էր, և խնդրեց նորան նաւը ցամաքիցը մի քիչ ներս տանել. նստեց և նաւիցը սովորեցնում էր ժողովուրդներին:
Եւ երբոր խօսելուց դադարեց, Սիմոնին ասաց. Խաղացո՛ դէպի խորը տար, և ձեր ուռ- 4

5 Պատասխանի ետ Սիմովն և ասէ
ցնա. Վարդապետ զամենայն
գիշերս աշխատ եղեաք՝ և ոչինչ
կալաք. բայց վասն քո բանիդ՝
6 արկցուք զգործիս: Այս իրրև
արարին՝ փակեցին 'ի ներքս
բազմութիւն ձկանց յոյժ, մինչև
պարպատէին ուռկանք նոցա:
7 Եւ ակնարկէին որսակցացն 'ի
միւս նաւն՝ գալ օգնել նոցա. և
եկին, և լցան երկոքին նաւքն՝
մինչև մերձ յընկղմել նոցա:
8 Իրրև ետես Սիմովն Պետրոս՝
անկաւ առ ծունկսն Յիսուսի՝ և
ասէ. 'Ի բաց գնա յինէն Տէր,
9 զի այր մեղաւոր եմ ես: Քանզի
ահ պատեաց զնա, և զամենե-
սեան որ ընդ նմայն էին, վասն
որսոյ ձկանցն զորս ըմբռնեցին:
10 Նոյնպէս և զՅակովբոս և
զՅովհաննէս՝ զորդիսն Զեբե-
դեայ, որ էին որսակիցք Սի-
մովնի: Եւ ասէ ցՍիմովն
Յիսուս. Մի՛ երկնչիր՝ յայ-
սմՀետԷ զմարդիկ որսայցես 'ի
11 կեանս: Եւ հանեալ զնաւն 'ի
ցամաք, թողին զամենայն, և
գնացին զՀետ նորա:

12 Եւ եղև 'ի հասանելն նորա 'ի
մի քաղաքացն, և ահա այր մի լի
բորոտութեամբ՝ իրրև ետես
զՅիսուս, անկեալ 'ի վերայ
երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ.
Տէր եթէ կամիս, կարող ես զիս
13 սրբել: Զգեաց զձեռն իւր՝
կանեարդը գցեցէք որսի: Եւ
Սիմոն պատասխանեց և ասաց
նորան. Վարդապետ, բոլոր
գիշերն աշխատեցանք՝ և ոչինչ
չբռնեցինք, բայց քո խօսքի հա-
մար ուռկանը կ'ձգեմ: Եւ երբ-
որ այս արին, ձկների մի մեծ
բազմութիւն ներս փակեցին,
և նորանց ուռկանը պատռվում
էր: Եւ նշան էին անում միւս
նաւի մէջ լինող ընկերներին,
որ գան իրանց օգնեն. և եկան,
և երկու նաւը լցին, մինչև որ
թաղվում էին: Սիմոն Պետ-
րոսն էլ տեսնելով ընկաւ Յի-
սուսի ծնկերի առջև և ասաց.
Ինձանից դուրս գնա, վասնզի
ես մեղաւոր մարդ եմ, Տէր:
Քանզի ահ պատեց նորան և
ամենքին էլ, որ նորա հետ էին,
այն ձկների որսի համար որ
բռնեցին: Այնպէս էլ Զեբե-
դեայի որդիքներին՝ Յակոբին
և Յոհաննէսին, որ Սիմոնի ըն-
կերներն էին, և Յիսուսը Սի-
մոնին ասաց. Մի՛ վախե-
նար՝ այսուհետև մարդիկ որ-
սող կըլինիս: Եւ նաւերը
հանեցին ցամաքը, ամեն բա-
ները թողին, և նորա ետևից
գնացին:

Եւ եղաւ, երբոր նա քաղաք-
ներից մէկումն էր, ահա մի
մարդ բորոտութիւնով լիքն,
երբոր Յիսուսին տեսաւ, երեսի
վերայ ընկնելով, նորան աղա-
չեց՝ և ասաց. Տէր, եթէ կա-
մենաս, կարող ես ինձ սրբել:

հասոյց 'ի նա՝ և ասէ. Կամիմ՝
սրբեաց. և վաղվաղակի գնաց
14 'ի նմանէ բորոտութիւնն: Եւ
նա պատուիրեաց նմա՝ մի ումեք
ասել. այլ թէ երթ ցոյց զանձն
քո քահանային. և մատո պա-
տարագ վասն սրբութեան քո,
որպէս և հրամայեաց Մովսէս՝
15 'ի վկայութիւն նոցա: Եւ
յորդէր առաւել բանն զնմանէ.
և ժողովէին ժողովուրդք բա-
զումք լսել՝ և բժշկել 'ի հիւան-
16 դութենէ իւրեանց: Եւ նա
լոյս տայր յանապատ տեղիս, և
կայր յաղօթս:

17 Եւ եղև 'ի միում աւուրց՝ և
ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն
և օրինացն վարդապետք նստէին.
որ ժողովեալ էին յամենայն
քաղաքաց Գալիլեացւոց՝ և
Յուդէաստանի և Երուսաղէմի. և
զօրութիւն Տեառն էր 'ի
18 բժշկել զնոսա: Եւ ահա արք
բերէին մահճաւք զայր մի՝ որ էր
անդամալոյծ, և խնդրէին զնա
մուծանել 'ի ներքս՝ և դնել
19 առաջի նորա: Եւ իրրև ոչ
գտանէին թէ ընդ որ մուծանիցեն
զնա 'ի ներքս՝ վասն ամբոխին,
ելին 'ի տանիս, և 'ի ցուցոն կա-
խեցին զնա, և իջուցին մահճաւքն
հանդերձ 'ի մէջ առաջի Յիսուսի:
20 Եւ տեսեալ զհաւատն նոցա՝
ասէ ցնա. Այր դո՛՝ թողեալ
21 լիցին քեզ մեղք քո: Սկսան

13 Եւ նա իր ձեռը մեկնելով հաս-
ցրեց նորան և ասաց. Կամե-
նում եմ, սրբուիր. և շուտով
բորոտութիւնը հեռացաւ նո-
14 րանից: Եւ ինքն պատուիրեց
նորան, ոչոքի չասէ, այլ թէ՝
գնա, անձդ ցոյց տուր քահա-
նային, և քո սրբութեան հա-
մար ընծան բեր, ինչպէս Մով-
սէսը հրամայեց՝ նորանց ի
15 վկայութիւն: Այց նորա վե-
րայ խօսակցութիւնը առաւել
ևս տարածվում էր, և շատ ժո-
ղովուրդներ ժողովվում էին՝ որ
լսեն, և իրանց հիւանդութիւն-
ներից բժշկուին նորանով:
16 Իսկ նա քաշվում էր անապատ
տեղերանք, և աղօթք էր անում:

17 Եւ մէկ օր եղաւ, որ ինքն
սովորեցնում էր. և փարիսե-
ցիներն և օրինաց վարդապետ-
ները նստած էին, որ Գալիլեայի
ամեն գիւղաքաղաքներից և
Յուդէաստանից և Երուսաղէմից
հաւաքուած էին. և Տիրոջ զօ-
րութիւնը կար նորանց բժշկելու
18 համար: Եւ ահա մարդիկ մա-
հճով մի մարդ էին բերում, որ
անդամալոյծ էր, և ուզում էին
նորան ներս տանել, և նորա
19 առջևը դնել: Եւ երբոր չգտան
թէ որ տեղով նորան ներս տա-
նեն՝ այն ամբոխի պատճառովը,
վեր ելան կտուրը, և օճորքիցը
կախեցին նորան մահճովը մէջ-
տեղը Յիսուսի առջև: Եւ 20
նորանց հաւատը տեսնելով նո-
ցա ասաց. Ով մարդ, քու

խորհել դպիրքն և փարիսեցիքն,
և ասեն. Ո՞ է սա՝ որ խօսի
զՀայհոյութիւնս, ո՞վ կարէ թո-
ղուլ զմեղս՝ բայցմիայն Աստուած:
22 Իբրև գիտաց Յիսուս ըզխոր-
հուրդսն նոցա, պատասխանի ետ
և ասէ ցնոսա. Օ՞վ խորհիք ՝ի
23 սիրտս ձեր: Օ՞ր-ինչ դիւրագոյն
է. ասել՝ Թողեալ լիցին քեզ
մեղք քո, եթէ ասել՝ Արի և
24 գնա: Այլ զի գիտասջիք՝ եթէ
իշխանութիւն ունի Որդի մար-
դոյ յերկրի թողուլ զմեղս. ասէ
ցանդամալոյծն. Քեզ ասեմ՝
Արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ՝ի
25 տուն քո: Եւ առժամայն յա-
րուցեալ առաջի ամենեցուն՝ առ
զիւրև յորոյ վերայ անկեալ
դնէր, գնաց ՝ի տուն իւր, և
26 փառաւոր առնէր զԱստուած:
Զարմանք կալան զամենեսեան,
և փառաւոր առնէին զԱստ-
ուած. լի եղեն ահիւ, և ասեն,
եթէ Տեսաք այսօր նոր նշան:

27 Եւ յետ այնորիկ ել անտի՝ և
ետես մաքսաւոր մի՝ որում
անուն էր Ղևի, զի նստէր ՝ի
մաքսաւորութեան. և ասէ ցնա.
28 Ե՛կ զկնի իմ: Եւ թողեալ
զամենայն՝ յարեաւ գնաց զկնի
29 նորա: Եւ արար ընդունելու-
թիւն մեծ նմա Ղևի ՝ի տան
իւրում. և էր ժողովուրդ բա-
զում մաքսաւորաց, և այլոց՝ որ
մեզքերը թողուած լինին քեզ:
Եւ դպիրները և փարիսեցիներն 21
սկսեցին խորհել և ասել. Սա
ո՞վ է, որ հայհոյանք է խօսում.
ո՞վ կարող է մեղք թողել՝ բաց ի
միայն Աստուած: Յիսուսն էլ 22
երբոր նորանց խորհուրդներն
իմացաւ, պատասխանեց և նո-
րանց ասաց. Ի՞նչ էք խորհում
ձեր սրտերումը: Ո՞րն է աւելի 23
հեշտ. ասել՝ Մեղքերդ թո-
ղուած լինին քեզ, թէ ասել՝
Ա՛ր կաց և մանկ: Բայց 24
որ իմանաք, թէ Որդին մարդոյ
իշխանութիւն ունի երկրի վե-
րայ մեղքեր թողելու. անդա-
մալուծին ասաց, Քեզ եմ
ասում, Ա՛ր կաց և մահիճդ
առ, և գնա քո տունը: Եւ 25
իսկոյն նորանց առջևը վերկա-
ցաւ, իր վերայ առաւ այն որի
վերայ պառկած էր, գնաց իր
տունը՝ Աստուծոյն փառաւորե-
լով: Եւ զարմանք բռնեց ա- 26
մենքին, և փառք էին տալիս
Աստուծոյն. և ահով լցուեցան,
և ասում էին, թէ Նորանշան
բաներ տեսանք այսօր:
Եւ նորանից յետոյ Յիսուսը 27
դուրս գնաց և մի մաքսաւոր
տեսաւ՝ անունը Ղևի, մաքսա-
տանը նստած, և նորան ասաց,
Իմ ետևից եկ: Եւ նա ամեն 28
բան թողեց, վերկացաւ գնաց
նորա ետևից: Եւ Ղևին նո- 29
րան մեծ ընդունելութիւն արաւ
իր տան մէջ. և շատ բազմու-
թիւն կար մաքսաւորների և

30 էին բազմեալ ընդ նոսա: Եւ
տրտնջէին փարիսեցիքն և
դպիրքն նոցա զնմանէ առ ա-
շակերտսն նորա՝ և ասէին.
Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ
մեղաւորս ուտէք և ըմպէք:
31 Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ
ցնոսա. Ո՛չինչ են պիտոյ բժիշկք
32 ողջոց, այլ հիւանդաց: Եւ
ո՛չ եկի կոչել զարդարս, այլ
զմեղաւորս յապաշխարութիւն:
Եւ նոքա ասեն ցնա.

33 Ընդէ՞ր աշակերտքն Յով-
հաննու պահեն ստէպ՝ և խընդ-
րուածս առնեն, նոյնպէս և
փարիսեցւոցն. և քոյդ ուտեն և
34 ըմպեն: Եւ նա ասէ ցնոսա.
Մի՞թէ կարո՞ղ էք մանկանց
առագաստի, մինչ փեսայն ընդ
նոսա լցէ, հրաման տալ պահել:
35 Եկեսցեն աւուրքն՝ յորժամ
բարձցի ՝ի նոցանէ փեսայն, ապա
պահեսցեն յաւուրսն յայնոսիկ:
36 Ասաց և առակ մի առ նոսա,
թէ Ո՛չ ոք արկանէ ՝ի նոր
հանդերձէ ՝ի վերայ հնացեալ
ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն
պատառէ, և ընդ հնոյն չըմիա-
բանի կապերտն որ ՝ի նորոյն:
37 Եւ ոչ ո՛ք արկանէ գինի նոր ՝ի
տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայ-
թուցանէ գինին նոր զտիկսն
հինս. ինքն հեղու, և տիկքն
38 կորնչին: Այլ գինի նոր ՝ի
տիկս նորս արկանելի է, և եր-
39 կոքին պահին: Եւ ոչ ո՛ք
ըմպէ զհինն՝ և կամիցի զնորն.
ուրիշների, որ նորանց հետ
սեղան էին նստել: Եւ նորանց 30
դպիրները և փարիսեցիները
տրտնջում էին նորա աշակերտ-
ների մօտ և ասում. Ինչո՞ւ էք
մաքսաւորների և մեղաւորների
հետ ուտում և խմում: Եւ 31
Յիսուսը պատասխանեց և ասաց
նորանց. Առողջները կարօտ
չեն բժշկի, այլ հիւանդ-
ները: Չեմ եկել արդարներին 32
կանչելու, այլ մեղաւորներին
ապաշխարութեան:
Նորանք էլ ասացին նորան. 33
Ինչո՞ւ Յովհաննէսի աշակերտ-
ները ստէպ պաս են պահում և
աղօթքներ են անում, նոյնպէս
էլ փարիսեցիներինը. իսկ քո
աշակերտները ուտում են և
խմում: Նա էլ ասաց նորանց. 34
Մի՞թէ կարո՞ղ էք հարսանիքի
տղաներին, քանի որ փեսան
նորանց հետ է, ծոմ պահել
տալ: Բայց օրեր կ՝գան, և 35
երբոր փեսան վեր կ՝առնուի
նորանցից, ապա այն օրերումը
ծոմ կ՝պահեն: Մի՞ առակ էլ 36
ասաց նորանց, թէ Ոչ ով մի
նոր հանդերձի կարկատան հին
հանդերձի վերայ չի գցիլ. ապա
թէ ոչ, այն նորն էլ կ՝պատառէ,
և հնի հետ չի միաբանուիլ այն
կտորն որ նորից է: Եւ ոչ ով 37
նոր գինի հին տկերի մէջ չի
ածիլ, ապա թէ ոչ, նոր գինին
տկերը կ՝պատառէ. ինքն էլ
կը թափուի, տկերն էլ կը կոր-
չին: Այլ նոր գինին նոր տկերի 38

քանզի ասէ՝ թէ Հինն քաղցրա-
գոյն է։

ԳԼ. Զ.

1 Եւ եղև ՚ի շաբաթու յերկ-
րորդում՝ առաջնոյն՝ անցանել
նմա ընդ արտօրայսն. և աշա-
կերտքն նորա կորղէին հասկ՝
2 շփէին ընդ ափ, և ուտէին։ Եւ
ոմանք ՚ի փարիսեցւոցն ասեն
ցնոսա. Զի՞նչ գործէք՝ զոր
3 չէ՞ օրէն ՚ի շաբաթու։ Պա-
տասխանի ետ նոցա Յիսուս և
ասէ. Ոչի՞ ընթերցեալ ձեր՝
զոր արարն Դաւիթ, յորժամ
քաղցեաւն ինքն՝ և որ ընդ նմայն
4 էին։ Զի՞նդ եմուտ նա ՚ի
տունն Աստուծոյ, և զՀացն
զառաջաւորութեան եկեր՝ և
ետ այնոցիկ որ ընդ նմայն էին.
զոր ո՛չ էր օրէն ուտել
բայց միայն քահանայապետիցն։
5 Եւ ասէ ցնոսա. Տէր է Որդի
մարդոյ և շաբաթու։

6 Եւ եղև ՚ի միւսում շաբա-
թուն մտանել նմա ՚ի ժողո-
վուրդն՝ և ուսուցանել. և էր
անդ այր մի՝ և ձեռն իւր աջ
7 գօսացեալ էր։ Եւ սպասէին
նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ
՚ի շաբաթուն բժշկիցէ, զի գը-
տանիցեն չարախօսութիւն ըզ-
8 նմանէ։ Եւ նա գիտէր ըզխոր-
մէջ պէտք է ածուի, և երկուսն
էլ կ՚պահուին։ Եւ ո՛չ ոք 39
չ՚կայ, որ հինը խմէ շուտով
նորը կամենայ, վասնզի ասում
է, թէ Հինն աւելի քաղցր է։

ԳԼ. Զ.

Եւ երկրորդի առաջին շա- 1
բաթի օրումն եղաւ որ նա անց-
նում էր արտերի մէջով, և նորա
աշակերտներն հասկ էին պո-
կում՝ ափի մէջ շփում և ու-
տում։ Եւ փարիսեցիներից 2
ոմանք ասացին նորանց. Այդ
ինչո՞ւ էք անում, որ շաբաթի
օրն օրէնք չէ։ Եւ Յիսուսը 3
նորանց պատասխանեց և ասաց.
Դուք չէ՞ք կարդացել այն որ
Դաւիթն արաւ, երբոր սովեց
ինքը և նորա հետ լինողները.
Ինչպէս նա Աստուծոյ տունը 4
մտաւ, և առաջաւորութեան
հացերն առաւ և կերաւ, և իր
հետ լինողներին էլ տուաւ.
որոնց օրէնք չէր ուտել, բացի
միայն քահանաներին։ Եւ ասաց 5
նորանց, թէ Տէր է Որդին մար-
դոյ շաբաթի էլ։

Եւ միւս շաբաթի օրն էլ 6
եղաւ, որ ժողովարանը մտաւ՝ և
սովորեցնում էր. և այնտեղ մի
մարդ կար, և նորա աջ ձեռը
չորացած էր։ Եւ դպիրները 7
և փարիսեցիները սպասում էին
նորան, թէ շաբաթի օրումը
կ՚բժշկէ, որ նորանից չարա-
խօսելու պատճառ գտնեն։ Ա՛յս 8

հուրդքս նոցա. ասէ ցայսն՝ որոյ
ձեռնն գօսացեալ էր։ Արի՛ անց
՚ի մէջ. և նա յարուցեալ եկաց։
9 Ասէ ցնոսա Յիսուս. Հարցից
ինչ զձեզ. Զի՞նչ արժան է ՚ի
շաբաթու, բարի՞ ինչ առնել՝
եթէ չար գործել, ոգի մի
ապրեցուցանել՝ թէ կորուսանել։
10 Եւ հայեցեալ շուրջ զամենե-
քումբք զայրագին՝ ասէ ցնա.
Զգեա՛ զձեռն քո. և նա ձգեաց,
և հաստատեցաւ ձեռն նորա իբրև
11 զմիւսն։ Նոքա լցան յիմարու-
թեամբ. և խօսէին ընդ միմեանս՝
թէ զինչ առնիցեն Յիսուսի։

12 Եւ եղև ընդ աւուրսն ընդ
այնոսիկ՝ ել ՚ի լեառն կալ յաղո-
թիս, և հանէր զգիշերն ՚ի
13 գլուխ յաղօթսն Աստուծոյ։ Եւ
իբրև այդ եղև՝ կոչեաց զա-
շակերտսն իւր, և ընտրեաց ՚ի
նոցանէ երկոտասանս, զորս և
14 առաքեալս անուանեաց։ Ըզ Սի-
մոնն՝ զոր և Պետրոս անուա-
նեաց, և զԱնդրէաս զեղբայր
նորին, և զՅակովբոս, և
զՅովհաննէս, և զՓիլիպպոս,
15 և զԲարթողիմէոս, Եւ զՄատ-
թէոս և զԹովմաս, և զՅակով-
բոս Ալփեայ, և զՍիմոն
16 զկոչեցեալն Նախանձայոյզ, Եւ
զՅուդա Յակովբայ, և ըզՅու-
դա Իսկարիովտացի՝ որ եղև իսկ
17 մատնիչ։ Եւ իջեալ նոքօք
հանդերձ ՚ի տեղի մի տափա-
էլ գիտում էր նորանց խոր-
հուրդները, և այն մարդուն,
որի ձեռը չորացած էր, ասաց.
Վեր կաց և կանգնիր մէջ
տեղը. և նա վերկացաւ կանգ-
նեց։ Ասաց Յիսուսը ասաց նո- 9
րանց. Հարցնում եմ ձեզանից.
Ի՞նչ է արժան շաբաթի օրը,
բարի՞ բան անել՝ թէ չար գոր-
ծել. հոգի ապրեցնել՝ թէ կորց-
նել։ Եւ չորս կողմովը նորանց 10
ամենի վերայ նայելով՝ ասաց
այն մարդուն. ձեռդ մեկնիր,
նա էլ այնպէս արաւ. և նորա
ձեռքը առողջացաւ միւսի պէս։
Նորանք էլ կատաղութիւնով 11
լցուեցան, և իրար հետ խօսում
էին, թէ ի՞նչ անեն Յիսուսին։

Եւ այն օրերումն եղաւ, որ 12
ելաւ լեառը աղօթք անելու, և
բոլոր գիշերն անցրեց աղօթք
անելով դէպի Աստուած։ Եւ 13
երբոր առաւօտ եղաւ, կանչեց
իր աշակերտները, և ընտրեց
նորանցից տասներկուսին, որոնց
առաքեալ էլ անուանեց. Սի- 14
մոնին, որին Պետրոս էլ անուա-
նեց, և նորա եղբայրը՝ Անդրէ-
ասին, Յակոբին և Յոհաննէ-
սին, Փիլիպպոսին և Բարթուղի-
մէոսին. Մատթէոսին և Թով-
մասին, Յակոբոս Ալփեանին,
և նախանձայոյզ կոչուած Սի-
մոնին. Եւ Յակոբի Յուդային, 16
և Յուդայ Իսկարիոտացին, որ
մատնիչ էլ դառաւ։ Եւ իջաւ 17
նորանց հետ՝ մի տափարակ տեղ
կանգնեց. և այնպէս էր նորա

բակ. և ժողով աշակերտացն
նորա՝ և բազմութիւն յոյժ
ժողովրդեանն յամենայն Հրէ-
աստանէ, և Յերուսաղեմէ՝ և
յայնմ կողմանէ, և ի ծովե-
18 ղերէն Տիւրոսի և Սիդոնի. Որ
եկին լսել ի նմանէ՝ և բժշկել ի
հիւանդութենէ իւրեանց. և
նեղեալքն յայսոց պղծոց բժշշ-
19 կէին: Եւ ամենայն ժողովուրդն
խնդրէր մերձենալ ի նա,
զի զօրութիւն բազում ելանէր
ի նմանէ՝ և բժշկէր զամե-
նեսին:
20 Եւ նա ամբարձ զաչս իւր
յաշակերտսն իւր՝ և ասէ: Ե-
րանի՝ աղքատացդ հոգւով, զի
ձեր է արքայութիւնն Աստու-
21 ծոյ: Երանի որ քաղցեալ են
այժմ, զի յագեսցին: Երանի
որ լան այժմ, զի ծիծաղեսցին:
22 Երանի է ձեզ յորժամ ատիցեն
զձեզ մարդիկ, և յորժամ
որոշեսցեն զձեզ և նախատեսցեն,
և հանիցեն անուն չար զձէնջ
23 վասն Որդւոյ մարդոյ: Ուրախ
լիջիք յաւուր յայնմիկ և ցնծաս-
ջիք, զի ահա վարձք ձեր բա-
զում են յերկինս, ըստ դմին
օրինակի առնէին մարգարէիցն
24 հարք իւրեանց. Բայց վայ ձեզ
մեծատանցդ, զի ընկալայք
25 զմխիթարութիւն ձեր: Վա՜յ
ձեզ որ յագեալք էք այժմ՝ զի
քաղցիցէք. վայ ձեզ որ ծիծա-
ղիքդ այժմ, զի սգայցէք և
26 լայցէք: Վա՜յ ձեզ յորժամ
բարի ասիցեն զձէնջ ամենայն

աշակերտաներդ ժողովը և ժողո-
վրդի մեծ բազմութիւն բոլոր
Հրէաստանից և Երուսաղէմից
և Տիւրոսի և Սիդոնի ծովե-
զերքից, Որ եկան նորանից լս-
18 լու, և իրանց հիւանդութիւն-
ներից բժշկուելու. և պղծ
ոգիներից չարչարուողները. և
բժշկվում էին: Եւ բոլոր ժո-
19 ղովուրդը ուզում էր դիպչել
նորան, վասնզի նորանից զօրու-
թիւն էր դուրս գալիս և ամե-
նին բժշկում:

Եւ նա իր աչքերը դէպի իր
20 աշակերտները բարձրացրեց՝ և
ասաց. Երանի՝ աղքատներ-
իդ, վասնզի ձերն է Աստուծոյ
արքայութիւնը: Երանի՝ դեղ
21 որ հիմա սոված էք, վասնզի
պիտի կշտանաք. երանի՝ դեղ որ
հիմա լաց էք լինում, վասնզի
պիտի ծիծաղիք: Երանի՝ ձեզ,
22 երբոր մարդիկ ձեզ ատեն, և
երբոր ձեզ ջոկեն և նախատեն,
և ձեզ վերայ չար անուն հա-
նեն՝ Որդոյ մարդոյ պատճա-
ռով: Ուրախ եղէք այն օրում
23 և ցնծացէք, վասնզի ահա ձեր
վարձքը շատ է երկնքումը.
որովհետև այդպէս էին անում
մարգարէներին նորանց հայ-
24 բերը: Բայց վայ ձեզ՝ հարուստ-
ներիդ, վասնզի ձեր մխիթա-
25 րութիւնն ընդունեցիք: Վա՜յ
ձեզ՝ որ կշտացել էք, վասնզի
պիտի սովիք. վայ ձեզ՝ որ հիմա
ծիծաղում էք, վասնզի սուգ

մարդիկ, զի այդպէս առնէին
սուտ մարգարէիցն հարք նոցա:

27 Բայց ձեզ ասեմ որ լսէքդ.
Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի
28 արարէք ատելեաց ձերոց: Օրհ-
նեցէք զանիծիչս ձեր. աղօթս
արարէք ի վերայ նեղչաց
29 ձերոց: Որ հարկանէ զծնօտ քո՝
մատո՝ նմա և զմիւսն. և որ հանէ
ի քէն զբաճկոն քո՝ մի՛ արգե-
լուր ի նմանէ և զշապիկս:
30 Ամենայնի որ խնդրէ ի քէն՝
տո՛ւր, և զոր ինչ հանէ ոք ի
31 քէն՝ մի՛ պահանջէր: Եւ որպէս
կամիք թէ արասցեն ձեզ մարդ-
իկ, այնպէս արասջիք և դուք
32 նոցա: Եւ եթէ սիրէք դուք
զսիրելիս ձեր՝ զի՞նչ շնորհ է
ձեր. զի և մեղաւորք սիրեն
33 զսիրելիս իւրեանց: Եւ եթէ
բարի առնէք բարերարաց ձերոց՝
որ՞ շնորհ է ձեր. զի և մեղաւորք
34 զնոյն գործեն: Եւ եթէ տայք
փոխս այնոցիկ՝ յորոց ակն
ունիցիք առնուլ՝ որ՞ շնորհ է
ձեր. քանզի և մեղաւորք մեղա-
ւորաց փոխս տան, զի առցեն
35 անդրէն զկշիռն: Բայց սիրեցէք
զթշնամիս ձեր, և բարի արարէք
ատելեաց ձերոց. և տո՛ւք փոխ՝
ուստի ո՛չ ակն ունիցիք առնուլ.
և եղիցին վարձք ձեր բազում՝ և
եղիջիք որդիք Բարձրելոյ. զի
նա քաղցր է ի վերայ չարաց և
36 ապաշնորհաց: Եղերո՛ւք գթածք՝

պիտի անէք, և լաց պիտի լինիք:
Վա՜յ ձեզ՝ երբոր ամեն մարդիկ 26
ձեզանից բարի ասեն, վասնզի
այդպէս էին անում սուտ մար-
գարէներին նորանց հայրերը:
Բայց ձեզ՝ որ լսում էք, 27
ասում եմ. Սիրեցէք ձեր թշշ-
նամիները, բարի արէք ձեզ
ատողներին: Օրհնեցէք ձեզ 28
անիծողներին, աղօթք արէք ձեզ
նեղացնողների վերայ: Որ հա-
29 երեսին զարկողին միւսն էլ դէմ
արա. և նա՝ որ քո վերարկուն
քեզանից հանում է, շապիկդ
էլ մի արգելիր նորանից: Ամե- 30
նին՝ որ ուզում է քեզանից,
տուր, և քոնը առնողիցը ետ
մի առնիր: Եւ ինչպէս կամե- 31
նում էք՝ որ մարդիկ ձեզ անեն,
նոյնպէս էլ դուք արէք նորանց:
Եւ եթէ դուք ձեզ սիրողներին 32
սիրէք, ի՞նչ շնորհք է ձեզ,
վասնզի մեղաւորներն էլ են
իրանց սիրողներին սիրում: Եւ 33
եթէ ձեր բարերարներին բարի
անէք, ի՞նչ շնորհք է ձեզ,
վասնզի մեղաւորներն էլ են
այնպէս անում: Եւ եթէ փոխ 34
էք տալիս նորանց՝ որ նորանցից
յետ առնելու յոյս ունիք, ի՞նչ
շնորհք է ձեզ. վասնզի մեղա-
ւորներն էլ են մեղաւորներին
փոխ տալիս, որ հաւասար չափը
ետ առնեն: Բայց սիրեցէք 35
ձեր թշնամիներին, և բարի
արէք և փոխ տուէք ոչինչ ակն-
կալելով. և ձեր վարձքը շատ
կ՝լինի, և Բարձրելոյն որդիք

որպէս և Հայրն ձեր գթած է։
37 Մի՛ դատէք՝ և ոչ դատիցիք. մի՛
պատժէք՝ և ոչ պատժիցիք,
արձակեցէք և արձակիցիք։
38 Տո՛ւք՝ և տացի ձեզ. չափ
բարւոք թաթաղուն շարժուն
զերծուն՝ տացեն ի գոգս ձեր.
նովին չափով որով չափէք՝
չափեսցի ձեզ։

39 Ասաց և առակ մի առ նոսա.
Մի՞թէ կարիցէ՞ կոյր կուրի
առաջնորդել, ոչ ապաքէն եր-
կոքին ի խորխորատ անկանի-
40 ցին։ Ո՛չ է աշակերտ լաւ քան
զվարդապետ իւր. ամենայն
կատարեալն եղիցի իբրև ըզվար-
դապետ իւր։
41 Օ՞ի տեսանես զշիւղ յական
եղբօր քո, և ի քում ական
42 զգերանդ ոչ նշմարես։ Կամ
զի՞նդ կարես ասել ցեղբայր քո.
Ե՛ղբայր՝ թո՛ղ հանից զշիւղդ
յականէ քումմէ, և դու ի
քում ական զգերանդ ոչ տե-
սանես. կեղծաւոր՝ հան նախ
զգերանդ յականէ քումմէ, և
ապա հայեսջիր հանել զշիւղ
43 յականէ եղբօր քո։ Օ՛ի ոչ է
ծառ բարի՝ որ առնէ պտուղ չար,
և ոչ զարձեալ ծառ չար՝ որ առ-
44 նէ պտուղ բարի։ Օ՛ի իւրա-
քանչիւր ծառ ի պտղոյ իւրմէ
ճանաչի. զի ոչ եթէ ի փշոց
քաղեն թուզ, և ոչ ի մորենւոյ
կ՚ելնիք. վասնզի նա քաղցր է
երախտամոռներն և չարերն վե-
րայ։ Ուրեմն ողորմած եղէք,
ինչպէս ձեր Հայրն էլ ողորմած
է։ Եւ մի դատէք, և չէք դա-
տուիլ. մի դատապարտէք, և
չէք դատապարտուիլ. արձակե-
ցէք՝ և կ՚արձակուիք։ Տուէք և
կ՚տրուի ձեզ. լաւ չափով՝ թափ
տրուած շարժուած լիսիլեալը
կ՚տան ձեր գոգը. վասնզի այն
չափով որ չափէք, նորանով
կ՚չափուի ձեզ։
Մի՞թէ կարող է կոյրը կոյրին
առաջնորդել, չէ՞ որ երկուսն
էլ փոսը կ՚ընկնին։ Աշակերտն
իր վարդապետից բարձր չէ.
բայց ամեն կատարեալն իր վար-
դապետի պէս կ՚լինի։

Եւ ինչո՞ւ քո եղբօր աչքի
շիւղը տեսնում ես, և քո աչքի
միջի գերանը չես նշմարում։
Կամ ի՞նչպէս կարող ես եղբօրդ
ասել. Եղբայր, թողՔ քո աչքի
միջի շիւղը հանեմ, բայց քո
աչքի միջի գերանը չես տես-
նում. կեղծաւոր, առաջ քո
աչքիցը գերանը հանի՛ր, և ապա
մտիկ կ՚տաս, որ քո եղբօր
աչքիցը շիւղը հանես։ Վանդի
բարի ծառ չ՚կայ, որ չար
պտուղ բերէ. և ոչ էլ չար
ծառ, որ բարի պտուղ բերէ։
Վանդի ամեն մէկ ծառ իր պըտ-
ղոյն է ճանաչվում. վանդի
փշերից թուզ չեն քաղում, և

45 կթենն խաղող։ Ա՞րդ բարի՝ ի
բարի գանձուց սրտի իւրոյ
բղխէ զբարի, և մարդ չար՝ ի
չարէն բղխէ զչար. քանզի ի
յաւելուածոյ սրտին խօսի բե-
րան նորա։

46 Օ՞ի կոչէք զիս՝ Տէր՝ Տէր, և
47 զոր ասեմն ոչ առնէք։ Ամենայն
որ գայ առ իս, և լսէ զբանս իմ՝
և առնէ զնոսա, ցուցից ձեզ
48 ո՞ւմ նման է։ Նման է առն, որ
շինիցէ տուն. որ փորեաց և
խորեաց, և եդ հիմն ի վերայ
վիմի. ի յառնել հեղեղաց՝
բաղխեաց գետ զտունն, և ոչ
կարաց շարժել զնա. զի հաս-
տատեալ էր հիմն ի վերայ
49 վիմի։ Իսկ որ լսէ զբանս իմ՝ և
ոչ առնէ, նման է առն՝ որ շի-
նիցէ տուն ի վերայ հողոյ
առանց հիմանի. զոր բաղխեաց
գետ, և վաղվաղակի անկաւ, և
եղև կործանումն տանն այնորիկ
մեծ։

ԳԼ. Ի։

1 Եւ իբրև կատարեաց զամե-
նայն զբանս իւր ի լսելիս ժո-
ղովրդեանն, եմուտ ի Կափառ-
2 նաւում։ Հարիւրապետի ուրումն
ծառայ՝ չարաչար հիւանդա-
ցեալ՝ մերձ էր ի վախճանել, որ
3 էր նմա պատուական։ Իբրև
լուաւ զՅիսուսէ, առաքեաց
զծերսն ի Հրէից, աղաչէր
ոչ մորենուցը խաղող են կթում։
Մարդի մարդն իր սրտի բարի 45
գանձիցը բարիք է բղխում, և
չար մարդն իր սրտի չար գան-
ձիցը չարն է բղխում, վասնզի
սրտի աւելացածիցն է խօսում
նորա բերանը։
Եւ ինչո՞ւ էք ինձ Տէր Տէր 46
կոչում, և չէք անում՝ այն որ
ասում եմ։ Ամէն ով որ ինձ 47
մօտ է գալիս և իմ՝ խօսքերը
լսում՝ և նորանց անում, ցոյց
տամ ձեզ՝ թէ ո՞ւմ նման է։
Նման է մի տուն շինող մարդու, 48
որ փորեց և խորացրեց, և հիմը
քարի վերայ դրաւ, և երբոր ջրի
հեղեղներ եղան, գետն այն
տանը զարկեց, և չ՚կարաց շար-
ժել նորան, վասնզի քարի վե-
րայ էր հիմնուած։ Բայց Ի 49
խօսքերը լսող և չանողը, նման
է մի մարդու՝ որ տունը հողի
վերայ շինեց առանց հիմանի. որ
գետը նորան զարկեց, և շուտով
վայր ընկաւ. և այն տան կոր-
ծանումը մեծ եղաւ։

ԳԼ. Ի։

Եւ իր բոլոր խօսքերը ժո- 1
ղովրդի ականջներին խօսելը կա-
տարելուց յետոյ մտաւ Կա-
փառնայում։ Եւ մի հարիւ- 2
րապետի ծառայ հիւանդացած
մեռնելու մօտ էր, որ պա-
տուական էր նորա համար։ Եւ 3
Յիսուսի համար լսելով, Հրե-
էաներից ծերեր նորա մօտ

զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ
4 զծառայն նորա։ Եւ նորա
եկեալ առ Յիսուս՝ աղաչէին
զնա ասելով՝ և ասէին, թէ Ար-
ժանի է՝ որում զշնորհս զայս
5 առնես։ Զի սիրէ զազգս մեր,
և զժողովրդանոյն նա շինեաց
6 մեզ։ Եւ Յիսուս գնայր ընդ
նոսա։ Իբրև ոչինչ կարի հեռի
էր ի տանէն, յղեաց առ նա
հարիւրապետն բարեկամս, և
ասէ ցնա։ Տէր՝ մի ինչ աշխատ
լինիր, զի չեմ բաւական եթէ
ընդ յարկաւ իմով մտանիցես։
7 Այսն որոյ և ոչ զանձն հա-
մարեցայ արժանի առ քեզ
գալոյ։ այլ ասա բանիւ՝ և
8 բժշկեսցի մանուկս իմ։ Զի անդի
և ես այր մի եմ կարգեալ ընդ
իշխանութեամբ։ ունիմ ընդ
ինեւ զինուորս, և ասեմ սմա՝
Երթ, և երթայ։ և այլում
թէ Եկ, և գայ։ և ծառայի
իմում թէ Արա զայս, և առնէ։
9 Եւ իբրև լուաւ զայս Յիսուս՝
զարմացաւ, դարձաւ առ ժողո-
վուրդն որ երթային զհետ նորա՝
և ասէ։ Ամէն ասեմ ձեզ՝ թէ և
ոչ Իսրայէլի այսչափ հաւատս
10 գտի։ Եւ դարձան անդրէն
պատգամաւորքն ի տուն, և
գտին զծառայն հիւանդ՝ բժշկե-
կեալ։

11 Եւ եղև ի վաղիւն երթայր
ի քաղաք մի, որում անուն էր
Նային։ երթային ընդ նմա և
ուղարկեց՝ նորան աղաչելով, որ
գայ իր ծառային ապրեցնէ։
Նորանք էլ Յիսուսի մօտ եկան՝ 4
նորան թախանձանօք աղաչում
էին և ասում, թէ Արժանի է
նա, որ այս շնորհն անես նորան։
Այանզի մեր ազգին սիրում է, 5
և ժողովարանն էլ նա շինեց
մեզ համար։ Եւ Յիսուսը նո- 6
րանց հետ գնաց։ երբոր նա տա-
նիցը տակաւին շատ հեռու չէր,
հարիւրապետը բարեկամներ ու-
ղարկեց նորա մօտ և ասաց նո-
րան։ Տէր, մի յոգնիր, քանզի
արժանի չեմ, որ իմ յարկի տակ
մտնես։ Նորա համար ես իմ 7
անձն էլ արժանաւոր չըհա-
մարեցի քեզ մօտ գալու։ այլ
խօսքով ասա, և ծառաս կըբժըշ-
կուի։ Այանզի ես էլ իշխա- 8
նութեան տակ դրուած մարդ
եմ, որ իմ ձեռի տակ զինուորներ
ունիմ, և սորան ասում եմ՝
Գնա, և նա գնում է։ և ու-
րիշին՝ Եկ, և գալիս է։ և իմ
ծառային՝ Այս բանն արա, և
անում է։ Եւ Յիսուսը այս 9
լսելով զարմացաւ նորա վերայ,
և դարձաւ իր ետևից գնացող
ժողովրդին ասաց։ Ասում եմ
ձեզ՝ թէ Իսրայէլի մէջ էլ այս-
պիսի հաւատք չգտայ։ Եւ այն 10
ուղարկուած մարդիկը ետ դար-
ձան տուն, և հիւանդ ծառային
բժշկուած գտան։

Եւ յետևի օրը եղաւ, որ 11
Նային ասուած քաղաքն էր
գնում, և նորա հետ գնում էին

աշակերտք նորա, և ժողովուրդք
12 բազում։ Իբրև մերձ եղև ի
դուռն քաղաքին, և ահա
ելանէր մեռեալ մի՝ որդի միամօր
մօր իւրոյ, և նա էր այրի։ և
ժողովուրդ բազում քաղաքին
13 էր ընդ նմա։ Իբրև տեսս զնա
Տէր՝ գթացաւ ի նա՝ և ասէ։
11 Մի լար։ Եւ մատուցեալ
մերձեցաւ ի դագաղն։ և որք
բարձեալն տանէին՝ զտեղի առին։
և ասէ։ Պատանի դու՝ քեզ
15 ասեմ՝ արի։ Կանգնեցաւ և
նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել։
16 և ետ զնա ցմայր իւր։ Եւ ահ
կալաւ զամենեսին, և փառաւոր
առնէին զԱստուած՝ և ասէին,
թէ Այրգարէ ոմն մեծ յարու-
ցեալ է ի միջի մերում, և թէ
Այց արար Աստուած ժողովուր-
դեան իւրում ի բարութիւն։
17 Եւ ել զայս ամենայն
Հրէաստան վասն նորա, և ընդ
ամենայն կողմանս աշխարհին։
18 Եւ պատմեցին Յովհաննու
աշակերտքն իւր վասն ամենայնի
19 այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն
երկուս ոմանս յաշակերտացն
իւրոց Յովհաննէս, առաքեաց
առ Տէր և ասէ։ Դո՞ւ ես որ
գալոցն ես, եթէ այլում ակն
20 կալցուք։ Եւ եկեալ արքն առ
նա՝ ասեն։ Յովհաննէս մկրտիչ
առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ։
Դո՞ւ ես որ գալոցն ես՝ եթէ
21 այլում ակն կալցուք։ Եւ ի
նմին ժամու բժշկեաց ըղբա-
ղումս ի հիւանդութենանց և ի

նորա աշակերտներից շատերը և 12
շատ ժողովուրդ։ Եւ երբոր մո-
տեցաւ քաղաքի դրան, և ահա
մի մեռեալ էին դուրս բերում՝
իր մօր միածնունդ որդին։ և նա
որբևայրի էր։ և քաղաքիցն էլ մի
մեծ բազմութիւն կար նորա հետ։
Եւ Տէրը նորան տեսաւ՝ գթաց 13
նորա վերայ և ասաց նորան։
Մի լար։ Եւ մօտ եկաւ՝ դա- 14
գաղին դիպաւ։ և տանողները
կանգնեցին։ և ասաց։ Երիտա-
սարդ, քեզ եմ ասում՝ Այր
կաց։ Եւ մեռեալը վերկացաւ, 15
նստեց և սկսեց խօսել։ և նորան
տուաւ իր մօրը։ Եւ ահ բռնեց 16
ամենքին, և Աստուծոյն փառք
էին տալիս և ասում, թէ Մի
մեծ մարգարէ է վեր կացել մեր
մէջ, և թէ Աստուած իր ժո-
ղովրդին այցելել է։ Եւ այս 17
ձայնը նորա համար դուրս գնաց
բոլոր Հրէաստանը և բոլոր շըր-
ջակայքը։

Եւ Յովհաննէսին պատմեցին 18
իր աշակերտները այս բոլոր
բաների համար։ Եւ Յովհան- 19
նէս իր աշակերտներից երկուսին
կանչեց իրան մօտ, ուղարկեց
Յիսուսի մօտ, և ասաց։ Դո՞ւ ես
այն որ գալու է, թէ ուրիշի
սպասենք։ Այն մարդիկն էլ 20
նորա մօտ գալով ասացին։ Յո-
հաննէս մկրտիչը մեզ ուղարկել
է քեզ մօտ՝ և ասում է, Դո՞ւ
ես այն որ գալու է, թէ ուրիշի
սպասենք։ Եւ այն ժամին շա- 21
տերին բժշկեց հիւանդութիւն-

հարուածոց և յայսոց չարաց, և կուրաց բաղմաց շնորհեաց
22 տեսանել: Պատասխանի ետ նոցա և ասէ. Երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսիրդ և լուայք, զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն,
23 աղքատք աւետարանին. Եւ երանի ինչ՝ որ ոչ դայթագղեսցի յիս:

24 Եւ իբրև գնացին հրեշտակքն Յովհաննու, սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն Յովհաննու. Զի՞նչ ելէք յանապատն տեսանել, եղէգն շարժուն ի
25 հողմոյ: Այլ զի՞նչ ելէք տեսանել, այր ի հանդերձս փափկութեան զարդարեալ. ահաւասիկ որք ի հանդերձս երևելիս և ի փափկութեան են՝ յարքունիս
26 են: Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ. այո՛ ասեմ ձեզ՝ առաւել ևս քան զմարգարէ:
27 Զի սա է՝ վասն որոյ գրեալն է, թէ Ահա առաքեմ՝ ըստ հրեշտակ իմ առաջի քո՝ որ յարդարեսցէ զճանապարհս քո առաջի
28 քո: Ամէն ասեմ ձեզ. Մ՚եծ ի ծնունդս կանանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է. բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա:

ներից և չարչարանքից և չար ոգիներից, և շատ կոյրերին տեսնել շնորհեց: Եւ Յիսուսը 22
պատասխանեց և ասաց նորանց, Գնացէք Յովհաննէսին պատմեցէք ինչ որ տեսաք և լսեցիք, որ կոյրերը տեսնում են, կաղերը գնում են, բորոտները սրբվում են, խուլերը լսում են, մեռելները յարութիւն են առնում, աղքատներին աւետարան է քարոզվում: Եւ երանելի է նա, 23
որ ինձ վերայ չի դայթակղել:

Եւ երբոր Յովհաննէսի ուղարկած մարդիկը գնացին, սկսեց 24
ժողովուրդներին հետ Յովհաննէսի համար ասել, Ինչ՞ տեսնելու դուրս գնացիք անապատը, մի եղէգ քամուց շարժուած: Ապա ինչ՞ տեսնելու դուրս 25
գնացիք, մի մարդ՝ փափուկ հանդերձներ հագած. ահա նորանք որ փառաւոր հանդերձներում և փափկութիւնում են՝ թագաւորների պալատներումն են: Ապա ինչ՞ տեսնելու դուրս 26
գնացիք, մի մարգարէ՞. այո՛, ասում եմ ձեզ, որ մարգարէից էլ աւելին: Սա այն է, որի 27
համար գրուած է, թէ Ահա իմ հրեշտակն ուղարկում եմ քո առջևից, որ պատրաստէ քո ճանապարհը քո առջև, Ասանկի 28
ասում եմ ձեզ, որ կանանց ծնուածների մէջ Յովհաննէս մկրտչից աւելի մեծ մարգարէ ոչ ոք չկայ. բայց Աստուծոյ

արքայութեան միջի փոքրագոյնը նորանից մեծ է:

Եւ բոլոր ժողովուրդն երբոր 29
այս լսեցին՝ և մաքսաւորները՝ Աստուծոյն արդարացրին Յովհաննէսի մկրտութիւնովը մկրըտուելով: Բայց փարիսեցիները 30
և օրինականները անարգեցին Աստուծոյ խորհուրդն իրանց անձերի համար նորանից չմկրտուելով:

Տէրն էլ ասաց. Արդ ո՞ւմ 31
նմանեցնեմ այս ազգի մարդիկը. և ո՞ւմ են նման: Նման 32
են այն տղայոց, որ հրապարակումը նստած են և իրար կանչում են և ասում. Փող հնչեցինք ձեզ համար՝ և պար չեկաք, ողբ երգեցինք և չլացիք: Այ՝ ասնդի Յովհաննէս մկրտիչն 33
եկաւ, ոչ հաց էր ուտում, ոչ էլ գինի խմում, և ասում էք՝ դև ունի: Որդին մարդոյ եկաւ, ու- 34
տում է և խմում է, և ասում էք. Ահա ուտող և գինի խմող մարդ, մաքսաւորների և մեղաւորների բարեկամ: Եւ իմաստութիւնն 35
արդարացաւ բոլոր իր որդիներիցը:

Փարիսեցիներից մէկն աղա- 36
չում էր նորան, որ հաց ուտէ իր հետ. և մտաւ փարիսեցու տունը սեղան նստեց: Եւ ահա 37
այն քաղաքումը մի կին կար, որ մեղաւոր էր, երբոր իմացաւ, թէ փարիսեցու տանը սեղան է նստած, մի շիշ անուշահոտ իւղ բերաւ: Եւ նորա ոտաց մօտ 38

29 Եւ ամենայն ժողովուրդն իբրև լուաւ՝ և մաքսաւորքն, արդարացուցին զԱստուած. զի մկրտեցան ի մկրտութիւն Յով-
30 հաննու: Իսկ փարիսեցիքն և օրինականքն զխորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, զի ոչ մկրտեցան ի նմանէ:
31 Արդ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ, և ո՞ւմ
32 իցեն նմանօղք: Նման են մանկուց՝ որ ի հրապարակս նստիցին, կարդայցեն զմիմեանս և ասիցեն. Փող հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցիք. ողբացաք՝ և
33 ոչ լացիք: Եկն Յովհաննէս մկրտիչ՝ ոչ ուտէր և ոչ ըմպէր,
34 և ասէիք. Դև գոյ ի նմա: Եկն Որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ, և ասէք. Ահա այր կերող և արբեցող՝ բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց:
35 Եւ արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց:

36 Աղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ ճաշ ընդ նմա. և մտեալ ի տուն փարիսեցւոյն՝
37 բազմեցաւ: Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրև գիտաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի
38 իւղոյ աղնուի. Կայր յետոյ առ ոտս նորա՝ լայր, և արտասուօքն

սկսաւ թանալ զոտս նորա, և
հերով գլխոյ իւրոյ ընջէր. և
համբուրէր զոտս նորա, և
39 օծանէր իւղովն: Եւ տեսեալ
փարիսեցւոյն՝ որ կոչեացն զնա,
ասէր ընդ միտս իւր. Այս թէ
մարգարէ ոք էր, ապա գիտէր
թէ ո՞վ՝ և ո՞րպիսի ոք կին մեր-
ձենայ ՚ի սա. զի մեղաւոր է:
40 Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնա. Սիմովն՝ ունիմ ինչ ասել
քեզ. և նա ասէ. Ասա Ա՛ր-
41 դապետ. և ասէ. Երկու պար-
տապանք էին ուրումն փոխա-
տուի. մինն պարտէր հինգ
հարիւր դահեկան, և միւսն
42 յիսուն: Եւ իբրև ո՛չ գոյր
նոցա հատուցանել, երկոցունց
շնորհեաց. արդ ասա՝ ո՞վ
43 առաւել սիրեսցէ զնա: Ասէ
Սիմովն. Ինձ այսպէս թուի՝
եթէ որում զբազումն շնոր-
հեաց: Եւ նա ասէ ցնա. Ուղիղ
44 դատեցար: Եւ դարձեալ ՚ի
կինն կողմն, ասէ ցՍիմովն.
Տեսանե՞ս զայս կին, մտի ՚ի
տուն քո՝ ջուր ոտից իմոց ո՛չ
ետուր, իսկ սա արտասուօք
իւրովք եթաց զոտս իմ, և
45 հերով իւրով ընջեաց: Համ-
բոյր մի զու ո՛չ ետուր ինձ, սա
աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝
ո՛չ դադարեաց ՚ի համբուրելոյ
46 զոտս իմ: Իւղով զգլուխս իմ ո՛չ
օծեր, սա իւղով անուշիւ օծ:
47 Վասն որոյ ասեմ քեզ. Թող-
եա՛լ լիցին սմա մեղք իւր բա-
զում, զի յոյժ սիրեաց. զի
նորա ետեւից կանգնած, լաց էր
լինում, և սկսեց արտասունքով
նորա ոտները թրջել, և իր
գլխի մազերովը սրբում էր,
և նորա ոտները համբուրում էր,
և իւղովն օծում: Եւ փարիսե- 39
ցին էլ, որ նորան կանչել էր,
երբոր տեսաւ, իր մտքումն
ասում էր. Սա եթէ մի մար-
գարէ էր, ապա կ՚գիտենար՝ թէ
ով կամ ինչպիսի կին է նա, որ
իրան մօտենում է, քանզի
մեղաւոր է: Եւ Յիսուսը պա- 40
տասխանեց և ասաց նորան.
Սիմոն, մի բան ունիմ քեզ
ասելու. նա էլ ասաց. Ասա,
Ա՛ր դապետ. և ասաց. Ա՛ի 41
փոխ տուող երկու պարտական
ունէր, մէկը հինգ հարիւր դա-
հեկան էր պարտական և միւսը
յիսուն: Եւ երբոր նորանք 42
բան չունէին վճարելու, երկու-
քին էլ շնորհեց. արդ նորան-
ցից ո՞րն աւելի կ՚սիրէ նորան,
ասա: Սիմոնն էլ պատասխա- 43
նեց և ասաց. Ինձ այսպէս է
երևում, թէ նա՝ որ նորան շատ
շնորհեց. նա էլ ասաց նորան.
Ուղիղ դատեցիր: Եւ դառնա- 44
լով դէպի կինը, Սիմոնին ասաց.
Տեսնո՞ւմ ես այս կինը. քո
տունը մտայ, իմ ոտացը դու
ջուր չես տուել, բայց սա իր
արտասունքովը ոտներս թրջեց,
և իր գլխի մազերովը սրբեց:
Դու ինձ համբոյր չես տուել. 45
իսկ սա՝ քանի որ այստեղ եմ
մտել՝ ոտներս համբուրելուց

որում շատ թողուցու՝ շատ
սիրէ, և որում սակաւ՝ սակաւ:
48 Եւ ասէ ցնա. Թողեալ լիցին
49 քեզ մեղք քո: Եւ սկսան՝ որ
բազմեալն էին ընդ նմա՝ ասել
ընդ միտս իւրեանց. Ո՞վ է սա՝
50 որ զմեղս թողու: Եւ նա ասէ
ցկինն. Հաւատք քո կեցուցին
զքեզ՝ երթ ՚ի խաղաղութիւն:

ԳԼ. Ը.

1 Եւ եղև յետ այնորիկ՝ և
ինքն շրջէր ընդ քաղաքս և ընդ
գեօղս, քարոզէր և աւետարա-
նէր զարքայութիւն Աստուծոյ,
2 և երկոտասանքն ընդ նմա. Եւ
կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին
յայսոց չարաց և ՚ի հիւանդու-
թեանց. Մարիամ՝ որ կոչէր
Մագդաղենացի, յորմէ եօթն
3 դեւն ելեալ էր. Եւ Յովաննա
կին Խուզայ՝ հաղարապետին
Հերովդի, և Շուշան՝ և այլք՝
բազումք, որք պաշտէին զնա
յընչից իւրեանց:

4 Եւ ՚ի ժողովել բազում ժո-
ղովրդոց, և ըստ քաղաքաց
քաղաքացն եկելոց առ նա, ասէ

չդադարեց: Դու իւղով չ՚օծե- 46
ցիր իմ գլուխը. սա անուշա-
հոտ իւղով օծեց իմ ոտները:
Վասնորոյ ասում եմ քեզ. 47
Սորա շատ մեղքերն իրան թո-
ղուած կ՚լինին, վասնզի շատ
սիրեց. բայց որին որ քիչ
կ՚թողուի՝ նա քիչ կ՚սիրէ: Եւ 48
նորան ասաց. Քո մեղքերը թո-
ղուած լինին քեզ: Եւ նորա 49
հետ սեղան նստողներին սկսե-
ցին իրանց մտքումն ասել. Սա
ո՞վ է, որ մեղք էլ է թողում:
Եւ նա ասաց այն կնկանը. Քո 50
հաւատքն ապրեցրեց քեզ. գնա
խաղաղութիւնով:

ԳԼ. Ը.

Եւ նորանից յետոյ եղաւ, 1
որ նա ման էր գալիս քաղաք-
ները և գիւղերը քարոզելով և
Աստուծոյ արքայութիւնն աւե-
տարանելով. և այն տասներ-
կուքն էլ նորա հետ, Եւ մի 2
քանի կանայք, որ չար ոգիներից
և հիւանդութիւններից բժշկ-
կուած էին. Մագդաղենացի կո-
չուած Մարիամը, որ նորանից
եօթը դև էին դուրս ելել. Եւ 3
Յովհաննան՝ Հերոդէսի տան տե-
սուչ՝ Խուզայի կինը, և Շու-
շաննան, և շատ ուրիշներ, որ
իրանց ստացուածքներիցը նո-
րան ծառայութիւն էին անում:
Եւ երբոր մեծ բազմութիւն 4
էր հաւաքուած, և ամեն մէկ
քաղաքից նորա մօտ եկան, առա-

5 առակաւ։ Եվ սերմանացան
սերմանել զսերմանիս իւր.
և 'ի սերմանելն իւրում՝ էր
որ անկաւ առ ճանապարհաւ՝
և եղև կոխան, և թռչունք
6 երկնից կերան զնա։ Եւ այլն
անկաւ յապառաժի. և ընդ
բուսանելն՝ չորացաւ, առ 'ի
7 չգոյէ հիւթոյ։ Եւ այլն անկաւ
'ի մէջ փշոց, և ընդ նմին
բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա։
8 Եւ այլն անկաւ յերկիր բարի և
պարարտ, և բուսեալ՝ արար
պտուղ հարիւրապատիկ։ Այս
իբրև խօսեցաւ, ասէ. Որ
ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

9 Հարցանէին զնա աշա-
կերտքն. թէ զի՞նչ իցէ առակն։
10 Եւ նա ասէ. Ձեզ տուեալ է
գիտել զխորհուրդս արքայու-
թեան Աստուծոյ, բայց այլոցն
առակօք. զի տեսցեն՝ և մի
տեսցեն, և լուիցեն՝ և մի
իմացցին։
11 Բայց առակն այս ինչ է.
12 սերմն բանն Աստուծոյ է։ Եւ
որք առ ճանապարհաւն, այնո-
քիկ են որ լսեսն, և ապա գայ
Սատանայ՝ հանէ զբանն 'ի
սրտից նոցա, զի մի հաւատաս-
13 ցեն՝ և ապրեսցին։ Եւ որք
յապառաժին, որք յորժամ
լսիցեն, խնդութեամբ ընդու-
նին զբանն, և արմատս ոչ ու-
նիցին. որք առ ժամանակ մի
հաւատան, և 'ի ժամանակի
կով ասաց։ Սերմ ցանողը դուրս
գնաց իր սերմը ցանելու. և նա
սերմելիս՝ որը ճանապարհի մօտ
ընկաւ՝ և կոխուեցաւ, և երկնքի
թռչունները նորան կերան։
Եւ ուրիշը ապառաժի վերայ
ընկաւ. և բուսնելու ժամանա-
կին չորացաւ՝ հիւթի պակասու-
թեան պատճառովը։ Եւ ու-
րիշն ընկաւ փշերի մէջ, և
փշերը նորա հետ բուսան և
խեղդեցին նորան։ Եւ ուրիշն
ընկաւ այն բարի և պարարտ
երկրի վերայ. և բուսաւ՝ հա-
րիւրապատիկ պտուղ տուաւ.
այս բաները խօսելիս՝ աղաղա-
կեց. Ով որ լսելու ականջ ունի՝
թող լսէ։
Աշակերտներն էլ նորան
հարցնում էին, Ի՞նչ է այն
առակը։ Նա էլ ասաց. Ձեզ
տրուած է Աստուծոյ արքայու-
թեան խորհուրդները գիտել,
բայց ուրիշներին առակներով.
որ տեսնեն՝ և չտեսնեն, և լսեն՝
և չիմանան։
Արդ առակն այս է. Սերմը
Աստուծոյ խօսքն է։ Ճանա-
պարհի մօտերն էլ նորանք են,
որ լսում են. և յետոյ սատանան
գալիս է և խօսքը նորանց
սրտից հանում է, որ չըհաւա-
տան՝ և փրկուին։ Ապառաժի
վրայինքն էլ նորանք են, որ
երբոր լսեն, խօսքը ուրախու-
թիւնով ընդունում են. եւ սո-
րանք արմատ չ'ունին. մի առ
ժամանակ հաւատում են, բայց

14 փորձութեան հեռանան։ Իսկ
որ 'ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա
են, որ իբրև լսեն զբան՝ և 'ի
հոգս և 'ի մեծութիւն և 'ի
ցանկութիւն աշխարհիս ըղբա-
ղեալ, հեղձնուն և անպտուղ
15 լինին։ Իսկ որ յերկիրն պա-
րարտ, որոց բարուք և զուար-
թագին սրտիւ լուեալ զբանն՝
ընդունին, և տան պտուղ համբե-
րութեամբ։

16 Ոչ ոք լուցանէ ճրագ՝ և
թաքուցանէ ընդ կարասեաւ՝
կամ դնէ ընդ մահճաւք. այլ 'ի
վերայ աշտանակի դնէ, զի որ
17 մտանեն՝ զլոյս տեսցեն։ Զի՛ք
ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի.
և ոչ գաղտնի՝ որ ոչ ծանիցի, և
18 եկեսցէ 'ի յայտ։ Տեսէք
այսուհետև զիարդ լսէքդ. զի
որ գուցէ՝ տացի նմա, և որ
ոչն գուցէ՝ և զոր կարծէն թէ
ունիցի՝ բարձցի 'ի նմանէ։

19 Եկին առ նա մայրն և եղբարք
իւր, և ոչ կարէին հասանել
'ի նա՝ վասն բազմութեանն։
20 Ազգ եղև նմա՝ և ասեն. Ա՛այր
քո և եղբարք քո կան արտաքոյ՝
և կամին զքեզ տեսանել։ Եւ
ասէ ցնոսա. Ա՛այր իմ և
եղբարք իմ սոքա են, որ զբանն
Աստուծոյ լսեն և առնեն։

փորձութեան ժամանակին հե-
ռանում են։ Փշերի մէջ ըն-
կողն էլ նորանք են, որ խօսքը
լսած են լինում, բայց կեանքի
հոգսերից և հարստութիւնից
և զուարճութիւններից՝ գնա-
լով խեղդվում են, և անպը-
տուղ են լինում։ Բայց այն
պարարտ երկրի միջինը, նորանք
են, որ բարի և յօժար սրտով
խօսքը լսում և ընդունում են,
և համբերութիւնով պտուղ են
տալիս։

Ոչ ով ճրագ չէ վառիլ և
անօթով թաքցնիլ կամ մահճի
տակ դնիլ. այլ ճրագակալի վե-
րայ կ'դնէ, որ ներս մտնողները
լոյսը տեսնեն։ Դրանցի ծա-
ծուկ բան չկայ՝ որ չյայտնուի.
և ոչ թաքուն բան, որ չ'իմա-
ցուի և յայտնուի։ Ուրեմն
տեսէք թէ ինչպէս էք լսում.
վասնզի ով որ ունի, նորան
կ'տրուի, և ով որ չունի, նա
էլ որ կարծում է թէ ունի, նո-
րանից վեր կ'առնուի։
Եւ նորա մայրը և նորա եղ-
բարքը նորա մօտ եկան, և չէին
կարողանում նորա մօտ հասնել
բազմութեան պատճառով։ Նո-
րան խմաց արին և ասացին.
Ա՛այրդ և եղբարքդ դուրսը
կանգնած են՝ ուզում են քեզ
տեսնել։ Նա էլ պատասխա-
նեց և ասաց նորանց. Իմ մայրը
և իմ եղբարքը նորանք են, որ
Աստուծոյ խօսքը լսում են և
անում։

22 Եւ եղև 'ի միում աւուրց, ինքն էլ 'ի նաւ՝ և աշակերտքն նորա, և ասէ ցնոսա. Եկայք անցցուք յայնկոյս ծովակիս. և
23 գնացին։ Եւ մինչդեռ նաւէին՝ 'ի քուն եմուտ. և էջ մրրիկ հողմոյ 'ի ծովակն՝ և ուռնոյր,
21 և տագնապէին։ Մատուցեալ զարթուցին զնա և ասեն. Վարդապետ վարդապետ՝ կորնչիմք աւասիկ. և նա յարուցեալ սաստեաց հողմոյն և խռովութեան ջուրցն՝ և հանդարտեցին,
25 և եղև խաղաղութիւն։ Ասէ ցնոսա. Որ՞ եր հաւատք ձեր. և զահի հարեալ զարմացան, և ասէին ցմիմեանս. Մ'վ արդեօք իցէ սա՝ զի և հողմոց և ջրոց հրաման տայ, և հնազանդին սմա։

26 Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց. որ է յայնկոյս
27 հանդէպ Գալիլեայ։ Եւ ընդ ելանելն նորա 'ի ցամաք, պատահեաց այր մի 'ի քաղաքէն՝ յորում էին դեւք. և բազում ժամանակս չէր հանդերձ ըզգեցեալ՝ և ոչ 'ի տան բնակեալ,
28 այլ 'ի գերեզմանս։ Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. Օ՛ի կայ իմ և քո՝ Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ. աղաչեմ զքեզ՝ մի՛ տանջեր զիս։
29 Պատուիրեալ հրաման տայր այսոյն պղծոյ ելանել 'ի մարդոյ անտի.

Եւ մեկ օր եղաւ, որ նա նաւ 22
մտաւ, և նորա աշակերտներն
էլ և ասաց նորանց. Անց կենանք ծովակի միւս կողմը. և
ճանապարհ ընկան։ Եւ երբոր 23
նաւով գնում էին՝ նա քնեց.
և քամու փոթորիկ ընկաւ այն
ծովակի մէջ, և նա-ը լցվում
էր, և վտանգի մէջ էին։ Եւ 24
մօտ եկան, նորան արթնացրին
և ասացին. Վարդապետ, վարդապետ, կորչում ենք. նա էլ
վերկացաւ, և քամուն և ջրի
ալեկոծութեանը սաստեց, և
հանդարտեցին, և խաղաղութիւն եղաւ։ Եւ ասաց նորանց. 25
Որ՞ է ձեր հաւատքը, և խիստ
վախեցան զարմացան, և իրար
ասում էին. Սա ո՞վ է արդեօք
որ քամիներին և ջրերին էլ է
հրաման տալիս, և հնազանդում են սորան։

Եւ նաւով գնացին Գադա- 26
ցացոց երկիրը, որ Գալիլեայի
դիմացի կողմն է։ Եւ նա ցա- 27
մաքը դուրս գնալիս, քաղաքից մի մարդ պատահեց նորան, որ դեւեր ունէր բաւական ժամանակից հետէ, և հագուստ չէր հագած և տան մէջ չէր կենում այլ գերեզմաններում։
Եւ Յիսուսին որ տեսաւ, աղա- 28
ղակեց և նորա առջև ընկաւ,
և մեծ ձայնով ասաց. Ի՞նչ
բան կայ ինձ հետ, Յիսուս՝ որդի Բարձրելոյն Աստուծոյ. աղաչում եմ քեզ՝ մի տանջիր ինձ։ Պանդի նա պիղծ 29

զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր 'ի
շղթայս, և պահէր յերկաթս,
և խզէր զկապանսն, և վարէր 'ի
30 դիւէն յանապատս։ Եհարց ցնա Յիսուս և ասէ. Ո՞ի՞նչ անուն է քեզ։ Եւ նա ասէ, Լեգէոն. զի դեւք բազումք
31 մտեալ էին 'ի նա։ Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրաման տացէ նոցա
32 երթալ յանդունդս։ Եւ էր անդ երամակ մի խոզից բազմաց՝ արօտական 'ի լերինն, և աղաչէին զնա՝ զի հրաման տացէ նոցա մտանել 'ի նոսա. և հրաման տայեաց նոցա։ Եւ ելեալ դեւքն
33 յառնէն՝ մտին 'ի խոզեանն, և դիմեաց երամակն 'ի գահէ անտի
34 'ի ծովակն՝ և հեղձաւ։ Իբրև տեսին խոզարածքն զիրան որ եղեն՝ փախեան, և պատմեցին 'ի
35 քաղաքին և յագարակն։ Եւ իբրև ելին տեսանել զգործսն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի դեւքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստէր առ ոտսն Յիսուսի, և երկեան։
36 Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝ թէ զի՛արդ փրկեցաւ դիւա-
37 հարն։ Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւն շուրջ ըզկողմամբքն Գերգեսացւոց՝ գնալ 'ի սահմանացն նոցա, քանզի ահիւ մեծաւ տագնապէին, և նա մտեալ 'ի նաւ՝ դարձաւ
38 անդրէն։ Աղաչէր զնա այրն՝ ուստի դեւքն ելեալ էին՝ շրջել ընդ նմա. արձակեաց զնա՝ և

ոգուն հրամայում էր որ այն
մարդուցը դուրս գայ. որովհետև շատ ժամանակ էր որ
յափշտակել էր նորան, և
շղթաներով ու ոտնակապերով
կապուած պահվում էր, բայց
կապանքները կտրում էր, և
դեւիցը անապատ տեղեր էր
տարվում։ Յիսուսն էլ նորան 30
հարցրեց՝ և ասաց. Անունդ ի՞նչ
է. նա էլ ասաց. Լեգէօն,
քանզի շատ դեւեր էին մտած
նորա մէջ։ Եւ աղաչում էին 31
նորան, որ չ'հրամայէ նորանց
գնալ անդունդը։ Եւ այնտեղ 32
շատ խոզերի մի երամակ կար,
որ այն լեռան վերայ արածում
էին, և աղաչում էին նորան,
որ հրաման տայ իրանց մտնել
նորանց մէջ. և հրաման տուաւ
նորանց։ Դեւերն էլ այն մար- 33
դուցը դուրս եկան՝ խոզերի
մէջ մտան. և երամակն այն գահավէժ տեղիցը վազեց ծովակի
մէջ՝ և խեղդուեցաւ։ Խոզա- 34
րածներն էլ որ տեսան այն
եղած բաները, փախան և գնացին քաղաքի և շէների մէջ
պատմեցին։ Եւ դուրս ելան այն 35
եղած բանը տեսնելու։ Եւ Յիսուսի մօտ եկան, և նստած
գտան այն մարդը որից դեւերը
դուրս էին եկել, հագնուած և
զգաստացած Յիսուսի ոտների
մօտ. և վախեցան։ Եւ նորանք 36
էլ որ տեսել էին, պատմեցին
նորանց, թէ ինչպէս փրկուեցաւ դիւահարը։ Եւ Գադա- 37

39 ասէ. Դարձ՚ի տուն քո, և պատմեա զոր միանգամ՝ արար քեզ Աստուած. գնաց՚ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս:

40 Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան
41 ակն ունէին նմա: Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել
42 ՚ի տուն նորա. Զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրև երկոտասանից, և էր մերձ՚ի մահ: Եւ ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա:

43 Եւ կին մի էր՚ի տեառատեսութեան արեան ամաց երկոտասանից, որ՚ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ
44 բժշկիլ: Մատուցեալ յետոյ մերձեցաւ՚ի քղանցս հանդերձի նորա. և նոյն ժամայն՝ եկաց
45 բղխումն արեան նորա: Եւ ասէ Յիսուս. Ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս: Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս՝ և որ ընդ նմա էին. Ա՛ռդապետ՝ ժողովուրդք պնդեն և նեղեն
46 զքեզ: Եւ ասէ Յիսուս. Ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն:
47 Իբրև ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ՚ի նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի նորա, թէ վասն որոց իրաց մերձեցաւ՚ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն. և թէ որպէս
48 բժշկեցաւ առժամայն: Եւ ասէ. Դարձալերեաց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ, երթ՚ի խաղաղութիւն:

49 Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն՚ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա. Մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ
50 զդա: Իսկ Յիսուս՝ իբրև լուաւ. պատասխանի ետ նմա՝ և ասէ. Մի՛ երկնչիր, միայն
51 հաւատա՝ և կեցցէ: Եւ մտեալ՚ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և
52 զմայր նորա: Լային ամենեքեան՝ և կոծէին զնա. և նա ասէ. Մի՛ լայք՝ զի չէ
53 մեռեալ, այլ ննջէ: Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին
54 թէ մեռաւ: Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, Կալաւ

զնա՝ մանկանն՝ և մայրն՝ և որ ընդ նմա էին. Ա՛ռդապետ՝ ժողովուրդքդ պնդեն և նեղեն
46 զքեզ: Եւ ասէ Յիսուս. Ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն:
47 Իբրև ետես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ՚ի նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի նորա, թէ վասն որոց իրաց մերձեցաւ՚ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն. և թէ որպէս
48 բժշկեցաւ առժամայն: Եւ ասէ. Դարձալերեաց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ, երթ՚ի խաղաղութիւն:

49 Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն՚ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա. Մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ
50 զդա: Իսկ Յիսուս՝ իբրև լուաւ. պատասխանի ետ նմա՝ և ասէ. Մի՛ երկնչիր, միայն
51 հաւատա՝ և կեցցէ: Եւ մտեալ՚ի տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և
52 զմայր նորա: Լային ամենեքեան՝ և կոծէին զնա. և նա ասէ. Մի՛ լայք՝ զի չէ
53 մեռեալ, այլ ննջէ: Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին
54 թէ մեռաւ: Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, Կալաւ

ուրանում էին, ասաց Պետրոսը և նորա հետ լինողները. Ա՛ռդապետ, ժողովուրդները սղմում են քեզ և նեղում, և դու ասում ես. Ո՞վ է որ ինձ դիպաւ:
46 Եւ Յիսուսը ասաց. Մ՚էկը դիպաւ ինձ. վասնզի ես իմացայ՝ որ զօրութիւն դուրս եկաւ
47 ինձանից: Եւ երբոր տեսաւ կինը, որ ծածուկ չմնաց, դողալով եկաւ՝ նորա առջևը ընկաւ, և բոլոր ժողովրդի առջև պատմեց նորան, թէ ինչ պատճառով նորան դիպաւ, և
48 թէ ինչպէս իսկոյն բժշկուեցաւ: Այս էլ ասաց նորան. Դարձալերեաց, դուստր, քո հաւատքը բժշկեց քեզ, գնա խաղաղութիւնով:

49 Եւ նա տակաւին խօսելիս ժողովրդապետի տանից մէկն եկաւ, և նորան ասաց, թէ Աղջիկդ մեռաւ. մի աշխատեցնիլ
50 վարդապետին: Բայց Յիսուսը երբոր լսեց, նորան պատասխանեց և ասաց. Մի՛ վախենար,
51 միայն հաւատա, և կ՚ապրի: Եւ երբոր տունն էր մտնում, ոչ ոքի չթողեց ներս մտնել, բայց միայն Պետրոսին, և Յակոբին և Յովհաննէսին, և երեխայի
52 հօրը և մօրը: Եւ ամենքը լաց էին լինում և նորա վերայ սուգ անում. և նա ասաց. Լաց մի լինիք, մեռած չէ, այլ քնած
53 է: Բայց ծաղր էին անում՝ նորան, գիտենալով՝ որ մեռել է:
54 Իսկ նա ամենքին դուրս հանեց,

զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և
ասէ. Մարի՛ կայ մանուկ դու։
55 Եւ դարձաւ ոգի նորա, և
կանգնեցաւ վաղվաղակի. և
հրամայեաց տալ նմա ուտել։
56 Եւ զարմացան ծնողքն նորա.
և նա պատուիրէր մի՛ ումեք
ասել որ ինչ եղեւն։

ԳԼ. Թ.

1 Եւ կոչեցեալ զերկոտասան
առաքեալսն, ետ նոցա զօրու-
թիւն և իշխանութիւն ի վերայ
ամենայն դիւաց, և բժշկել
2 զհիւանդութիւնս։ Եւ առա-
քեաց զնոսա քարոզել զարքա-
յութիւնն Աստուծոյ, և բժշկել
3 զախտաժէտս։ Եւ ասէ ցնոսա.
Ա՛մի ինչ բառնայք ի ճանա-
պարհ. մի՛ գաւազան և մի՛ մա-
խաղ, մի՛ հաց, և մի՛ արծաթ.
մի՛ երկուս հանդերձս ունիցիք։
4 Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ
5 ագջիք, և անտի գնայցէք։ Եւ
որք ոչ ընդունիցին զձեզ, յոր-
ժամ ելանիցէք ի քաղաքէն
յայնմանէ, զփոշն ոտից ձերոց
թօթափեսջիք ի վկայութիւն
6 նոցա։ Եւ ելեալ շրջէին ընդ
քաղաքս և ընդ գեօղս՝ աւետա-
րանէին, և բժշկէին ընդ ամե-
նայն տեղիս։

7 Լուաւ Հերովդէս չորրորդա-
պետ զգործսն ամենայն. և
զարմանայր վասն աւելոյն յո-
և նորա ձեռիցը բռնելով՝ կան-
չեց և ասաց. Աղջիկ. վեր կաց,
55 Եւ նորա հոգին դարձաւ, և
իսկոյն կանգնեց. և հրամայեց,
որ նորան բան տան ուտելու։
56 Եւ նորա ծնողքը զարմացան.
և նա պատուիրեց, որ ոչ ոքի
չասեն եղածը։

ԳԼ. Թ.

Եւ իր տասներկու աշակերտ-
ներին կանչեց իր մօտ, և նորանց
զօրութիւն և իշխանութիւն
տուաւ բոլոր դևերի վերայ, և
հիւանդութիւններ բժշկելու։
Եւ նորանց ուղարկեց Աստու-
ծոյ արքայութիւնը քարոզելու,
և հիւանդներին բժշկելու։ Եւ
ասաց նորանց, ոչինչ վեր չառ-
նէք ճանապարհի համար. ոչ
գաւազաններ, ոչ պարկ, ոչ
հաց, ոչ արծաթ, ոչ երկու
երկու վերարկու ունեցէք։ Եւ
որ տուն որ մտնէք՝ այնտեղ
մնացէք, և այնտեղից դուրս
գնացէք։ Եւ որոնք որ ձեզ
չընդունին, այն քաղաքիցը դուրս
գնալիս, ձեր ոտներիցը փոշին
էլ թօթափեցէք՝ նորանց վկա-
յութիւն լինելու համար։ Եւ
դուրս գնացին՝ և ման էին գալիս
գիւղերը աւետարանը քարոզե-
լով, և ամեն տեղ բժշկութիւն-
ներ անելով։
Եւ Հերովդէս չորրորդապետը
լսեց նորանից եղած բոլոր
գործերը. և տարակուսանաց

8 մանց. թէ Յովհաննէս յար-
եաւ ի մեռելոց, և յոմանց՝
թէ Եղիա յայտնեցաւ, և
յայլոց՝ թէ Ա՝արդարէ ոմն
9 յառաջնոցն յարեաւ։ Ասէ
Հերովդէս. զՅովհաննէս ես
գլխատեցի. իսկ սա ո՞վ իցէ՝
զորմէ զայսպիսի իրս լսեմ. և
խնդրէր տեսանել զնա։

10 Դարձան առաքեալքն, և
պատմեցին նմա զամենայն զոր
արարին։ Եւ առեալ զնոսա՝
խուսեաց առանձինն ի տեղի
անապատ քաղաքի մերոյ, որում՝
11 անուն էր Բեթսայիդա։ Եւ
ժողովուրդքն իբրև գիտացին,
գնացին զհետ նորա. և ընկա-
լեալ զնոսա՝ խօսէր ընդ նոսա
վասն արքայութեան Աստուծոյ,
և որոց պէտք էին բժշկութեան՝
բժշկէր։
12 Եւ օրն սկսաւ տարաժամել.
մատեան երկոտասանքն և ասեն
ցնա. Արձակեա զժողովուրդսդ,
զի երթեալ շուրջ ի գիւղսն
և յագարակս հանգիցեն, և
գտցեն կերակուր, զի աստ
13 յանապատ տեղւոջ եմք։ Ասէ
ցնոսա. Դո՛ւք տուք դոցա
ուտել. և նոքա ասեն. Ո՛չ գոյ
մեր աւելի քան զհինգ նկա-
նակ և զերկուս ձկունս, բայց
եթէ երթիցուք գնեսցուք բա-
ւական ժողովրդեանդ կերա-
14 կուր։ Դանդի էին արք իբրև

մէջ էր նորա համար՝ որ ումանք
ասում էին. թէ Յովհաննէսը 8
մեռելներից յարութիւն է առել,
և ումանք էլ, թէ Եղիան յայտ-
նուել է. և ուրիշները, թէ
առաջի մարգարէներից մէկը յա-
րութիւն է առել։ Եւ Հերո- 9
դէսն ասաց. Յովհաննէսին ես
գլխատեցի. բայց սա ո՞վ է, որի
մասին ես այսպիսի բաներ եմ
լսում. և ուզում էր տեսնել
նորան։
Եւ առաքեալները դարձան և 10
պատմեցին նորան ինչ որ արին.
և նորանց առաւ և գնաց առան-
ձին մի անապատ տեղ՝ մի քա-
ղաքի մօտ, որ կոչվում էր
Բեթսայիդա։ Եւ ժողովուրդ- 11
ներն իմանալով, նորա ետևից
գնացին. և նորանց ընդունեց և
նորանց հետ Աստուծոյ արքա-
յութեան մասին խօսում էր, և
նորանց՝ որ բժշկութեան կա-
րօտ էին՝ բժշկում էր։
Եւ օրն սկսեց մթնել. տասն- 12
երկուսն էլ մօտ եկան և ասա-
ցին նորան, արձակիր այդ ժո-
ղովուրդը, որ շրջակայ գիւղերը
և շէնները գնան, հանգիստ առ-
նեն, և կերակուր գտնեն.
վասնզի այստեղ անապատ տե-
ղում ենք։ Եւ նորանց ասաց. 13
Դո՛ւք տուէք դորանց ուտել.
նորանք էլ ասացին. Ա՝նենք հինգ
հացից և երկու ձկնից աւելի
չունինք, եթէ ոչ՝ գնանք այդ
բոլոր ժողովրդի համար կերա-
կուր գնենք։ Ա՝ասնզի հինգ 14

հինգ հազար. ասէ ցաշա-
կերտսըն. Խազմեցուցէք զդոսա
15 դասս դասս՝ յիսուն յիսուն: Եւ
արարին այնպէս, և բազմեցու-
16 ցին զամենեսեան: Եւ առեալ
զհինգ նկանակն և զերկուս
ձկունսն՝ հայեցաւ յերկինս,
օրհնեաց, և եբեկ՝ և տայր
ցաշակերտսն արկանել ժո-
17 ղովրդեանն: Կերան և յագեցան
ամենեքեան. և բարձին զնշխարս
կոտորոցն՝ երկոտասան սակառի:

18 Եւ եղև 'ի կալն նորա յա-
ղօթս առանձինն, էին ընդ նմա
և աշակերտքն նորա. եհարց
զնոսա և ասէ. Զո՞ ոք ասեն
զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ:
19 Եւ նոցա պատասխանի տուեալ
ասեն. զՅովհաննէս մկրտիչ. և
այլք զԵղիա. իսկ այլք թէ
Մարգարէ ոք յառաջնոցն
20 յարեաւ: Ասէ ցնոսա. Դուք
զո՞վ ոք ասէք զինէն, թէ իցեմ.
պատասխանի ետ Պետրոս և
ասէ. զԲրիստոսն Աստուծոյ:
21 Նա սաստեաց 'ի նոսա, և պա-
տուիրեաց մի ումեք ասել զայն:
22 Եւ ասէ թէ Պարտ է Որդւոյ
մարդոյ բազումս չարչարիլ և
անարգիլ 'ի քահանայապետից և
'ի ծերոց և 'ի դպրաց, և ըսպա-
նանիլ՝ և յերիր աւուր յառնել:
23 Եւ ասէր առ ամենեսին. Եթէ
ոք կամի զինի իմ՝ գալ, ուրասցի
զանձն՝ և առցէ զխաչ իւր
հանապազ՝ և եկեսցէ զհետ իմ:
24 Զի որ կամիցի զանձն իւր

հաղարի չափ մարդիկ էին. և
իւր աշակերտներին ասաց. Նըս-
տեցրէք դորանց դաս դաս յիսուն
յիսուն: Եւ այնպէս արին, 15
և ամենքին նստեցրին: Եւ այն 16
հինգ հացն և երկու ձուկն
առաւ, դէպի երկինքը նայեց,
օրհնեց նորանց և կարեց, և
տալիս էր աշակերտներին, որ
ժողովրդի առջև դնեն: Ամենքը 17
կերան և կշտացան. և կտոր-
ների փշրանքները վեր առին
տասներկու քթոց:

Եւ եղաւ, երբոր նա առան- 18
ձին աղօթք էր անում, աշա-
կերտներն էլ նորա հետ էին.
և հարցրեց նորանց և ասաց.
Ժողովուրդներն ինձ համար ո՞վ
են ասում՝ թէ լինիմ: Նորանք 19
էլ պատասխանեցին և ասացին.
Յովհաննէս մկրտիչը, ուրիշներն
էլ՝ Եղիան, ուրիշներն էլ թէ
Առաջի մարգարէներից մէկը
յարութիւն է առել: Եւ նո- 20
րանց ասաց. Բայց դուք ո՞վ էք
ասում ինձ համար թէ լինիմ.
Պետրոսը պատասխանեց և ասաց.
Աստուծոյ Քրիստոսը: Նա 21
էլ սաստեց նորանց, և պա-
տուիրեց՝ որ այս բանը ոչ ոքի
չասեն: Եւ ասաց, թէ Պէտք 22
է Որդին մարդոյ շատ չարչա-
րուի և անարգուի ծերերից և
քահանայապետներից և դպիր-
ներից, և սպանուի և երրորդ
օրումը յարութիւն առնէ: Եւ 23
ամենքին ասում էր, եթէ մէկը
կամենում է իր ետևից գալ,

կեցուցանել՝ կորուսցէ զնա, և
որ կորուսցէ զանձն իւր վասն
25 իմ՝ կեցուսցէ զնա: Զի՞նչ
օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ
շահեսցի, և զանձն իւր կորուսցէ
26 կամ տուժեսցի: Զի որ ամօթ
համարեսցի զիս և զբանս իմ,
զնա և Որդի մարդոյ յամօթ
արասցէ՝ յորժամ գայցէ փառօք
իւրովք՝ և Հօր՝ և Հրեշտակաց
27 սրբոց: Բայց արդարև ասեմ՝
ձեզ, եթէ են ոմանք 'ի դոցանէ
որ այդր կան՝ որք մի՞ ճաշակես-
ցեն զմահ, մինչև տեսցեն
զարքայութիւն Աստուծոյ:

28 Եւ եղև յետ այսց բանից
իբրև աւուրք ութ, առեալ
զՊետրոս և զՅակովբոս և
զՅովհաննէս՝ ել 'ի լեառն կալ
29 յաղօթս: Եւ 'ի կալ նմա
յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց
նորա այլակերպ. և փոխեցաւ
հանդերձ նորա՝ և եղև սպիտակ
30 փայլուն: Եւ ահա արք երկու
խօսէին ընդ նմա, որ էին Մով-
31 սէս և Եղիա, Երևեալ փառօք.
և ասէին զելիցն նորա՝ զոր
կատարելոց էր Յերուսաղէմ:
32 Իսկ Պետրոս՝ և որ ընդ նմայն
էին՝ ծանրացեալք 'ի քնոյ՝ զար-
թեան, և տեսին զփառսն նորա՝
և զերկուս արսն որ կային առ
33 նմա: Եւ եղև 'ի մեկնելն նոցա

թող իր անձն ուրանայ և ամեն
օր իր խաչն առնէ և իմ ետևից
գայ: Վասնզի ով որ կամենայ 24
իր անձն ազատեցնել՝ կ'կորցնէ
նորան. և ով որ իր անձն կորցնէ
ինձ համար՝ նա կ'ազատեցնէ նո-
րան: Վասնզի ի՞նչ օգուտ է 25
մարդոյ, որ բոլոր աշխարհքս
ստանայ, և իր անձը կորցնէ,
կամ վնասուի: Վասնզի ով 26
որ ինձ և իմ խօսքերն ամօթ
համարէ, Որդին մարդոյ էլ
նորան ամօթ կ'համարէ, երբոր
գայ իր Հօրը և սուրբ հրեշ-
տակների փառքովը: Բայց ճըշ- 27
մարիտ ասում եմ՝ ձեզ. Այստեղ
կանգնածներիցը ոմանք կան,
որ մահ չեն ճաշակիլ, մինչև որ
Աստուծոյ արքայութիւնն տես-
նեն:

Եւ եղաւ, որ այս խօսքերիցն 28
ութ օրի չափ յետոյ, Պետրո-
սին և Յովհաննէսին և Յակոբին
առաւ՝ և վեր ելաւ լեառը
աղօթք անելու: Եւ եղաւ որ 29
նա աղօթք անելիս, նորա երեսի
կերպարանքն ուրիշ կերպ եղաւ.
և նորա հագուստը սպիտակ
փայլուն եղաւ: Եւ ահա եր- 30
կու մարդ խօսում էին նորա
հետ, որ Մովսէսն և Եղիան էին.
Նորանք փառքով երևեցած 31
խօսում էին նորա վախճանի
համար, որ Երուսաղէմումն կա-
տարելու էր: Բայց Պետրոսը 32
և նորա հետ լինողները քնով
ծանրացած էին, և երբոր
զարթնեցան՝ տեսան նորա փառ-

'ի նմանէ, ասէ Պետրոս ցՅի-
սուս. Ա՛ռդապետ՝ բարւոք է
մեզ աստ լինել, և արասցուք
երիս տաղաւարս, մի քեզ՝ և մի
Ա՛ռմսէսի և մի Եղիայի. և ո՛չ
34 գիտէր զինչ խօսէր: Եւ իբրև
զայս ասաց, եկն ամպ և հովանի
եղև 'ի վերայ նոցա. և երկեան
'ի մտանելն նոցա ընդ ամպովն:
35 Զայն եղև յամպոյն և ասէ.
Դա՛ է Որդի իմ ընտրեալ, դմա
36 լուարո՛ւք: Եւ ընդ լինել բար-
բառոյն՝ գտաւ Յիսուս միայն:
Եւ ինքեանք լռեցին. և ո՛չ
ումեք պատմեցին յաւուրսն
յայնոսիկ և ոչինչ յորոց
տեսին:

37 Եւ եղև 'ի վաղիւն՝ մինչ իջա-
նէին նոքա 'ի լեռնէ անտի, ընդ
առաջ եղև նմա ժողովուրդ բա-
38 զում: Եւ ահա այր 'ի ժողովուր-
դենէ անտի՝ աղաղակեաց և ասէ.
Ա՛ռդապետ՝ աղաչեմ զքեզ,
հայեաց յորդի իմ. զի միամնո՛ր է
39 ինձ: Եւ ահա այս հարկանի 'ի
նմա, և յանկարծ գոչէ. և
զարկուցանէ զնա՝ և թաւալե-
ցուցանէ զնա և փրփրեցուցանէ,
և հազիւ մեկնի 'ի նմանէ՝ խոր-
40 տակեալ զնա. Եւ աղաչեցի
զաշակերտսն քո զի հանցեն
41 զնա, և ո՛չ կարացին: Պատաս-
խանեաց ետ Յիսուս և ասէ. Ո՛վ

քը, և այն երկու մարդկանց որ
նորա մօտ կանգնած էին: Եւ 33
եղաւ որ նորանք նորանից հե-
ռանալիս, Պետրոսն ասաց Յի-
սուսին. Ա՛ռդապետ, լաւ է
մեզ համար այստեղ կենալ, և
երեք տաղաւար շինենք, մէկը
քեզ համար, և մէկը Ա՛ռմսէսին,
և մէկը Եղիային. և չէր գի-
տում՝ ինչ է խօսում: Եւ 34
երբոր նա այս ասում էր, մի
ամպ եկաւ և նորանց վերայ
հովանի արաւ. և վախեցան,
երբոր այն ամպի մէջ մտան:
Եւ ձայն եղաւ ամպիցն, որ 35
ասաց. Դա՛ է իմ սիրելի Որդին,
դորան լսեցէք: Եւ այն ձայնն 36
որ եղաւ, Յիսուսը մենակ գըտ-
նուեցաւ. և նորանք լռեցին, և
այն օրերումն ոչ ոքի ոչինչ
չպատմեցին այն բաներից, որ
տեսան:

Եւ հետևեալ օրը եղաւ որ 37
նորանք լեռնիցը իջնելիս, շատ
ժողովուրդ նորա առջևն եկաւ:
Եւ ահա ժողովրդիցը մի մարդ 38
աղաղակեց և ասաց. Ա՛ռդա-
պետ, աղաչում եմ քեզ, մտիկ
տուր իմ որդդոյն, որովհետև
միածնունդս է: Եւ ահա ոգի 39
բռնում է նորան, և յան-
կարծ գոռում է, և նորան
գետնով է տալիս փրփրեցնելով,
և հազիւ հեռանում է նորանից՝
նորան կոտրատելուց յետոյ: Եւ 40
ես քո աշակերտներին աղաչե-
ցի, որ հանեն նորան, բայց
չկարացին: Յիսուսն էլ պա- 41

աղգ անհաւատ և թիւր, մինչև
յո՞րս եղէց ընդ ձեզ՝ և ան-
սայցեմ ձեզ. մատո՛ այսր զորդին
42 քո: Եւ մինչդեռ մատչէր,
զարկոյց զնա դևն՝ և շարժեաց:
Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ,
և բժշկեաց զմանուկն. և ետ
զնա ցհայր իւր:

43 Եւ զարմանային ամենեքեան
'ի վերայ մեծամեծացն Աստու-
ծոյ. և 'ի զարմանալն ամենե-
ցուն 'ի վերայ ամենայնի զոր
առնէր, ասէ ցաշակերտսն իւր:

44 Դի՛ք դուք 'ի լսելիս ձեր զբանս
զայսոսիկ. զի Որդի մարդոյ
մատնելոց է 'ի ձեռս մարդկան:
45 Եւ նոքա ո՛չ գիտէին զբանն.
և էր ծածկեալ 'ի նոցանէ զի մի
գիտասցեն. և երկնչէին հար-
ցանել ցնա վասն բանին այ-
նորիկ:

46 Եմուտ խորհուրդ 'ի նոսա՝
թէ ո՞ արդեօք մեծ լցէ 'ի
47 նոցանէ: Յիսուս իբրև ծանեաւ
զխորհուրդս սրտից նոցա, առ
մանուկ մի՝ կացոյց 'ի մէջ
48 նոցա առ իւր, Եւ ասէ
ցնոսա. Որ ընկալցի զմանուկս
զայս յանուն իմ՝ զիս ընդու-
նի, և որ զիս ընդունիցի՝
ընդունի զառաքիչն իմ. զի որ

տասխանեց և ասաց. Ով ան-
հաւատ և թիւր ազգ, մինչև
ի՞րս ձեզ հետ պիտի լինիմ՝ և
համբերեմ ձեզ. քո որդին
այստեղ բեր: Եւ նա դեռ 42
մօտ գալիս՝ դևը գետնով
զարկեց նորան և շատ սաստիկ
թափահարեց. Իսկ Յիսուսը
սաստեց պիղծ ոգուն, և տղային
բժշկեց. և նորան տուաւ իր
հօրը:

Եւ ամենքը զարմանում էին 43
Աստուծոյ մեծափառութեան
վերայ. և երբոր ամենքը
զարմանում էին այն բոլոր
բաների վերայ, որ Յիսուսը
անում էր, իր աշակերտներին
ասաց.

Այս խօսքերը դուք ձեր ա- 44
կանջներում՝ դրէք. վասնզի Որ-
դին մարդոյ մարդկանց ձեռքն
է մատնուելու: Բայց նորանք 45
չէին իմանում այն խօսքը և
ծածկուած էր նորանցից, որ
չհասկանան նորան. և վախում՝
էին հարցնել նորան այն բանի
համար:

Մի խորհուրդ էլ մտաւ նո- 46
րանց մէջ՝ այն թէ՝ նորանցից
ո՞վ լինի մեծը: Յիսուսն էլ 47
նորանց սրտերի մտածմունքներն
իմանալով մի երեխայ առաւ՝ և
նորան կանգնեցրեց իրան մօտ,
Եւ ասաց նորանց. Ով որ այս 48
երեխային ընդունի իմ անու-
նովը, ինձ է ընդունում. և ով
որ ինձ ընդունի, ինձ ուղար-

փոքրիկն է յամենեսին 'ի ձեզ՝
նա եղիցի մեծ։

49 Պատասխանի ետ Յովհան-
նէս՝ և ասէ. Վարդապետ՝
տեսաք զոմն որ յանուն քո դևս
հանէր՝ և արգելաք զնա, զի ոչ
50 շրջի ընդ մեզ։ Ասէ ցնոսա
Յիսուս. Մի՛ արգելուք, զի որ
ոչն է ձեր թշնամի՝ 'ի ձեր
կողմն է։

51 Եւ եղև 'ի կատարել աւուրց
վերանալոյ նորա՝ և ինքն զերեսս
հաստատեաց երթալ Յերու-
52 սաղէմ։ Եւ առաքեաց հրեշտակս
առաջի երեսաց իւրոց. և իբրև
չոքան՝ մտին 'ի գիւղ մի Սամա-
բացւոց՝ պատրաստել ինչ նմա։
53 Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ
եդեալ էր նորա երթալ Յերու-
54 սաղէմ։ Իբրև տեսին աշակերտքն
Յակովբոս և Յովհաննէս,
ասեն. Տէր՝ կամիս զի ասասցուք, և իջցէ հուր յերկնից՝ և
55 սատակեսցէ զնոսա։ Դարձաւ
սաստեաց 'ի նոսա՝ և ասէ. Ո՛չ
գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք։
56 Զի Որդի մարդոյ ոչ եկն
զոգիս մարդկան կորուսանել՝ այլ
կեցուցանել։ և գնացին յայլ
գեօղ։

57 Եւ մինչդեռ երթային նոքա
'ի ճանապարհի, ասէ ոմն ցնա.
Եկից զկնի քո՝ յոր վայր և

կողին է ընդունում. քանզի ով
որ ձեր ամենիդ մէջ շատ փոքրն
է, նա մեծ կ'լինի։

Յովհաննէսն էլ պատասխա-
նեց և ասաց. Վարդապետ,
մեկը տեսանք, որ քո անունովը
դևեր էր հանում՝, և արգիլե-
ցինք նորան, քանզի մեզ հետ
չէ մտնում։ Եւ Յիսուսը
նորանց ասաց. Մի՛ արգելէք
նորան. քանզի ով որ մեզ հա-
կառակ չէ, մեր կողմն է։

Եւ եղաւ, երբոր նորա վերա-
նալու օրերը կատարվում էին,
և նա իր երեսը հաստատեց՝ որ
գնայ Երուսաղէմ։ Եւ իր
երեսի առջևն պատգամաւորներ
ուղարկեց. և գնացին՝ Սամա-
բացոց մի գիւղ մտան, որ նորա
համար բան պատրաստեն։ Բայց
չընդունեցին նորան, վասնզի
նորա երեսը ուղղված էր
Երուսաղէմ գնալու։ Երբոր
նորա աշակերտները Յակոբոս
և Յոհաննէս տեսան՝ ասացին.
Տէր՝ կամենում ես ասենք, կրակ
իջնէ երկնքիցը և նորանց սատ-
կեցնէ ինչպէս Եղիան էլ արաւ։
Նա էլ դարձաւ՝ սաստեց նո-
րանց և ասաց. Չէք գիտում՝
թէ որ հոգոյ էք դուք։ Դան-
զի Որդին մարդոյ չեկաւ՝ մարդ-
կանց հոգիները կորցնելու, այլ
ապրեցնելու. և գնացին ուրիշ
գիւղ։

Եւ եղաւ որ նորանք գնալիս,
ճանապարհին մի մարդ նորան
ասաց. Ես քո ետևիցը կ'գամ՝

58 երթիցես։ Ասէ ցնա Յիսուս.
Աղուէսուց որջք գոն, և թռչ-
նոց երկնից դադարք. և Որդւոյ
մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ
զգլուխս։

59 Ասէ ցմիւս ևս. Ե՛կ զկնի
իմ. և նա ասէ. Տէր հրաման
տուր ինձ՝ երթալ նախ թաղել
60 զհայր իմ։ Ասէ ցնա Յիսուս.
Թո՛ղ զմեռեալսն թաղել զմեռ-
եալս իւրեանց, և դու երթ
պատմեա՛ զարքայութիւն Ա-
ստուծոյ։

61 Ասէ և այլ ոմն. Եկից զկնի
քո Տէր, բայց նախ հրաման
տուր ինձ՝ հրաժարել 'ի տանէ
62 իմմէ։ Ասէ ցնա Յիսուս. Ոչ
ոք արկանէ ձեռն զմաճով՝ և
հայիցի յետս, եթէ յաջողեալ
լցէ արքայութեան Աստուծոյ։

ԳԼ. Ժ.

1 Յետ այսորիկ երևեցոյց Տէր
և այլ ևս եօթանասուն և եր-
կուս. և առաքեաց զնոսա եր-
կուս երկուս առաջի իւր յամե-
նայն քաղաքս և 'ի տեղիս, ուր
2 ինքն երթալոց էր։ Եւ ասէ
ցնոսա. Հունձք բազում են՝ և
մշակք սակաւ. արդ աղաչեցէք
զՏէր հնձոց, զի հանցէ մշակս
3 'ի հունձս իւր։ Երթա՛յք, ահա
առաքեմ զձեզ իբրև զգառինս
4 'ի մէջ գայլոց։ Մի՛ բառնայք

որտեղ որ գնաս, Տէր։ Յի-
սուսն էլ նորան ասաց. Աղուէս-
ները որջեր ունին, և երկնքի
թռչունները բոյներ. բայց Որ-
դին մարդոյ տեղ չունի, որ
գլուխը դնէ։

Մի ուրիշն էլ ասաց. Իմ
ետևիցն եկ. և նա ասաց. Տէր,
հրաման տուր, որ գնամ առաջ
իմ հայրը թաղեմ։ Յիսուսը
նորան ասաց. Թող մեռելներն
իրանց մեռելներին թաղեն, իսկ
դու գնա Աստուծոյ արքայու-
թիւնը քարոզիր։

Մի ուրիշն էլ ասաց. Տէր,
քո ետևից կ'գամ. միայն թէ
առաջ հրաման տուր ինձ, որ
իմ տանը բարև մնա անեմ։
Յիսուսն էլ նորան ասաց. Ոչ
ով որ ձեռքը մաճի վերայ է
գցում և ետևին մտիկ անում,
յարմար չէ Աստուծոյ արքա-
յութեան համար։

ԳԼ. Ժ.

Սորանցից յետոյ Տէրն ու-
րիշ եօթանասուն հոգի էլ կար-
գեց. և նորանց երկու երկու իր
երեսի առջև ուղարկեց այն բո-
լոր քաղաքներն և տեղերը, որ
տեղ որ ինքն գնալու էր։ Եւ
ասում էր նորանց. Հունձքը
շատ է, բայց մշակները քիչ.
ուրեմն աղաչեցէք հնձի Տիրոջն,
որ մշակներ հանէ իր հունձքը։
Գնացէք. ահա ես ուղարկում
եմ ձեզ ինչպէս գառներ գայ-

.քսակ, մի՛ մսխող, մի՛ կօշիկս. և ՝ի ճանապարհի ումեք ողջոյն
5 մի՛ տայցէք: Յոր տուն մտանիցէք, նախ ասասջիք թէ Ողջոյն
6 տանս այսմիկ. Եւ եթէ իցէ անդ որդի ողջունի, հանդիցէ ՝ի վերայ նորա ողջոյնն ձեր.
7 ապա թէ ոչ՝ ՝ի ձեզ դարձցի: Եւ ՝ի նմին տան ագանիջիք, ուտիջիք և ըմպիջիք ՝ի նոցանէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ. մի՛ փոխիցիք տանէ ՝ի տուն:
8 Յոր քաղաք մտանիցէք՝ և ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ
9 առաջի դնիցեն ձեր. Եւ բժըշկեսջիք որ ՝ի նմա հիւանդք իցեն. և ասասջիք նոցա, Մերձեալ է ՝ի վերայ ձեր արքայու-
10 թիւն Աստուծոյ: Իսկ յոր քաղաք մտանիցէք՝ և ո՛չ ընդունիցին զձեզ, իբրև ելանիցէք ՝ի հրապարակս նորա, ասասջիք.
11 Եւ զփոշիս որ կռուեալ է ՝ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք ՝ի ձեզ. բայց զայս գիտասջիք զի մերձեալ է ար-
12 քայութիւն Աստուծոյ: Ասեմ ձեզ, Օ՛ի Սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ:
13 Վա՛յ քեզ Քորազին. վա՛յ քեզ Բեթսայիդա. զի եթէ ՝ի Տիւրոս և ՝ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ՝ի ձեզ, վաղուց ևս արդեօք ՝ի խորտ և ՝ի մոխիր նստեալ ապաշխարեալ էր:
14 Բայց Տիւրոսի և Սիդոնի ընդարձակագոյն լիցի

4 լերի մէջ: Վասն որ մի առնէք ոչ քսակ, ոչ պարկ, ոչ կօշիկներ. և ճանապարհին ոչ ոքի բարև
5 չ՝տաք: Եւ որ տուն որ մտնէք, առաջ ասացէք՝ խաղաղութիւն
6 այս տանը: Եւ թէ որ այնտեղ խաղաղութեան որդի լինի, ձեր խաղաղութիւնը նորա վերայ կը
7 մնայ. ապա թէ ոչ՝ դէպի ձեզ նո՛ կ՝դառնայ: Եւ այն տանը մնացէք, նորանց ունեցածիցը
8 կերէք և խմեցէք. քանզի մշակն իր վարձքին արժանի է. տա-
9 նից տուն մի փոխուիք: Եւ որ քաղաք որ մտնէք, և ձեզ ընդունին, կերէք՝ ինչ որ կ՝դնեն
10 ձեր առջևն: Եւ նորա միջի հիւանդներին բժշկեցէք. և նորանց ասացէք՝ Եկ Աստուծոյ
11 արքայութիւնը մօտեցել է ձեզ վերայ: Բայց որ քաղաք որ մտնէք, և ձեզ չ՝ընդունին՝ դուրս դալով նորա հրապարակները՝ ասացէք. Այն փոշին
12 էլ, որ ձեր քաղաքիցը մեր ոտքերին է կպել, թօթափում ենք ձեզ վերայ. միայն թէ սա գիտացէք, որ Աստուծոյ արքա-
13 յութիւնը մօտեցել է ձեզ: Եւ ասում եմ ձեզ, որ Սոդոմացոց համար աւելի հեշտ կ՝լինի այն օրումը՝ քան թէ այն քաղաքին:
14 Վա՛յ քեզ, Քորազին. վա՛յ քեզ, Բեթսայիդա. քանզի եթէ Տիւրոսի և Սիդոնի մէջ եղած լինէին այն զօրութիւնները՝ որ ձեր մէջ եղան; վաղուց քուրձի և մոխրի մէջ նստած ապաշ-

15 ՝ի դատաստանի՝ քան ձեզ: Եւ դո՛ Կափառնաում, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև
16 ՝ի դժոխս իջցես: Որ ձեզ լսէ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. և որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. և որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ որ զիսն առաքեաց:

17 Դարձան եօթանասուն և երկուքն խնդութեամբ և ասեն. Տէր և դեւք հնազանդին մեզ
18 յանուն քո: Եւ ասէ ցնոսա. Տեսանէի զՍատանայ անկեալ
19 յերկնից իբրև զփայլակն: Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թշնամւոյն, և ձեզ
20 ոչինչ մեղանչիցեն: Բայց ընդայն մի՛ խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ. այլ խնդացէք զի անուանք ձեր գրեալ են յերկինս:

21 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւովն Սրբով և ասէ. Դոհանամ զքէն Հա՛յր՝ Տէր երկնից և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ՝ի գիտնոց՝
22 և յայտնեցեր զայս տղայոց. այո՛ Հա՛յր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո: Ամենայն ինչ տուաւ ինձ ՝ի Հօրէ իմմէ. և ոչքո գիտէ թէ ո՞վ է Որդի, եթէ ոչ՝

14 խարեալ էին: Սակայն Տիւրոսի և Սիդոնի համար աւելի հեշտ կ՝լինի դատաստանումը քան թէ
15 ձեզ: Եւ դո՛, Կափառնայում, որ մինչև երկինքը բարձրացած ես, մինչև դժոխքը պիտի ցածնաս:
16 Ով որ ձեզ է լսում, ինձ է լսում. և ով որ ձեզ է անարգում, ինձ է անարգում. և ով որ ինձ է անարգում, ինձ ուղարկողին է անարգում:
17 Եւ այն եօթանասունքը ուրախութիւնով ետ դարձան և ասացին. Տէր, դեւերն էլ հնազանդում են մեզ քո անունովը:
18 Եւ նորանց ասաց. Տեսնում էի սատանին, որ կայծակի պէս երկնքիցը վայր էր ընկնում:
19 Ահա իշխանութիւնը տուի ձեզ, որ կոխէք օձերի և կարիճների վերայ և թշնամու բոլոր զօրութեանը վերայ, և ձեզ ոչինչ
20 վնաս չի անիլ: Սակայն նորա համար մի ուրախանաք՝ որ ոգիները ձեզ հնազանդում են, բայց առաւել ուրախացէք, որ ձեր անունները երկնքումն գրուած են:
21 Նոյն ժամումն Յիսուսը Հոգովը ցնծաց և ասաց. Դոհանում եմ քեզանից, Հայր, երկնքի և երկրի Տէր, որ իմաստուններից և գիտուններից այս բաները ծածկեցիր և տղայոց յայտնեցիր: Այո, ով Հայր. վասնզի այսպէս հաճոյ եղաւ քո առջև.
22 Ամեն բան տրուեցաւ ինձ իմ Հօրիցը. և ոչ ով

Հայր, և ո՛ է Հայր՝ եթէ ոչ՝ Որդի, և ում կամիցի Որդին յայտնել:

23 Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն՝ ասէ. Երանի աչաց՝ որ տեսանիցեն զոր տեսանէք դոքա:
24 Ասեմ ձեզ. զի բազում մարգարէք և թագաւորք կամեցան տեսանել զոր դուք տեսանէք, և ո՛չ տեսին. և լսել զոր լսէք դոքա. և ո՛չ լուան:

25 Եւ ահա յարեաւ ոմն օրինակն՝ փորձէր զնա և ասէր. Վարդապետ՝ զի՞նչ գործեցից՝ զի զկեանսն յաւիտենականս
26 ժառանգեցից: Եւ նա ասէ ցնա. Յօրէնս զի՞նչ գրեալ է,
27 որպէս ընթեռնուս: Նա պատասխանի ետ՝ և ասէ. Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց. և զընկեր քո իբրև
28 զանձն քո: Եւ ասէ ցնա. Ուղիղ ետուր զպատասխանիդ,
29 զայդ արա՝ և կեցցես: Նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս. Եւ ո՞վ է
30 իմ ընկեր: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Այր մի իջանէր յԵրուսաղէմէ յԵրիքով, և անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա՝ և վէրս ի վերայ եղին, թողին կիսամահ և

չէ գիտում՝ թէ ով է Որդին, բայց միայն Հայրը. և ով է Հայրը՝ բայց միայն Որդին, և ում Որդին կամենայ յայտնել:

23 Եւ դարձաւ դէպի աշակերտներն առանձին՝ և ասաց. Երանի այն աչքերին՝ որ տեսնում են այն, որ դուք տեսնում էք:
24 Այն զի ասում եմ ձեզ, թէ շատ մարգարէներ և թագաւորներ կամեցան տեսնել այն որ դուք էք տեսնում, և չ՝տեսան. և լսել այն որ դուք էք լսում, և չ՝լսեցին:

25 Եւ ահա մէկ օրինական վերկացաւ՝ Նորան փորձում էր ասելով. Վարդապետ, ի՞նչ գործելով կարող եմ որ յաւիտենական կեանքը
26 ժառանգեմ: Նա էլ ասաց Նորան. Օրէնքումն ի՞նչ է գրուած, ի՞նչպէս ես կարդում:
27 Նա էլ պատասխանեց և ասաց. Սիրիր քո Տէր Աստուածը քո բոլոր սրտիցը, քո բոլոր անձիցը, քո բոլոր զօրութիւնիցը, և քո բոլոր մտքիցը. և քո ընկերը
28 քո անձի պէս: Եւ Նորան ասաց. Ուղիղ պատասխանեցիր. այդ
29 արա՝ և կ՝ապրիս: Իսկ նա՝ որովհետև կամենում էր իր անձն արդարացնել՝ Յիսուսին
30 ասաց. Եւ իմ ընկերն ո՞վ է: Յիսուսն էլ պատասխանեց և ասաց. Մի մարդ Երուսաղէմից իջնում էր Երիքով. և աւազակների յեռ՝ ընկաւ, Նորանք էլ մերկացրին Նորան՝ և խոցոտեցին Նորան, կիսամահ թողին՝

31 գնացին: Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ զնա՝ զանց
32 արար: Նոյնպէս և Ղևտացի մի՝ եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես
33 և զանց արար: Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ
34 զնա՝ գթացաւ: Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա, արկեալ ի վերայ ձէթ և գինի. և եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի, և
35 դարմանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր՝ իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս՝ և ասէ. Դարման տար դմա, և զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ
36 գալստեան իմում հատուցից քեզ: Արդ՝ ո՞ յերեցունց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազա-
37 կացն: Եւ նա ասէ. Որ արար զողորմութիւնն ի վերայ նորա. Ասէ ցնա Յիսուս. Ե՛րթ և դու՝ արա՛ նոյնպէս:

38 Եւ եղև ի գնալն նոցա, և ինքն եմուտ ի գեօղ մի. և կին ոմն անուն Մարթա ընկալաւ
39 զնա ի տան իւրում: Եւ Նորա էր քոյր մի, որում անուն էր Մարիամ, որ և եկն նստաւ առ ոտսն Տեառն, և լսէր զբանս
40 Նորա: Եւ Մարթա զբաղեալ էր ի բազում սպասու. եկն

գնացին: Եւ դիպուածով մի քահանայ էր իջնում նոյն ճանապարհովը, և Նորան տեսաւ՝ անցաւ: Նոյնպէս էլ մի Ղևտացի այնտեղն հասաւ եկաւ և տեսաւ անցաւ: Մի Սամարացի էլ, որ ճանապարհորդում էր, եկաւ այնտեղ և Նորան տեսնելով գթաց: Եւ մօտ եկաւ՝ Նորա խոցերը փաթաթեց վերան ձէթի և գինի ածելով. և իր անասունի վերայ դրած տարաւ Նորան մի իջևան, և Նորան հոգ տարաւ: Եւ հետևեալ օրն երբոր այն տեղից դուրս էր գնում, երկու դահեկան հանեց և իջևանի տիրոջը տուաւ և ասաց Նորան. Դորան հոգ տար, և ինչ որ դորա համար ծախք անես, ես միւսանգամ եռ դառնալիս կը-
վճարեմ քեզ: Իմա այն երե-
քից որն է երևում քեզ՝ թէ ընկերը է եղել այն աւազակների յեռ՝ ընկած մարդոյն: Նա էլ ասաց. Նա՝ որ ողորմութիւն արաւ Նորան: Ապա Յիսուսը Նորան ասաց. Գնա, դու էլ այնպէս արա:

Եւ եղաւ որ Նորանք գնալիս, ինքն էլ մի գիւղ մտաւ. և մի կին՝ անունը Մարթա՝ ընդունեց Նորան իր տանը: Եւ Նա մի քոյր ունէր՝ անունը Մարիամ. և սա Տիրոջ ոտների մօտ նստեց, և Նորա խօսքը լսում էր: Մարթան էլ ծառայութեան համար շատ զբաղմունքի

եկաց առ Նմա՝ և ասէ. Տէր
ոչինչ է փոյթ քեզ, զի քոյրդ
իմ միայն ետթող զիս ի սպասու.
արդ ասա դմա զի օգնեսցէ ինձ։
41 Պատասխանի ետ Յիսուս և
ասէ. Մարթա, Մարթա՝ դու
հոգաս՝ և զբաղում իւիք ըզբա-
42 զեալ ես. Բայց ասա սակաւ
ինչ պիտոյ է. Մարիամ մասն
բարի ընտրեաց, որ ոչ բարձցի
ի նմանէ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղև ի տեղւոջ ուրեք
կալ յաղօթս. և իբրև դադա-
րեաց՝ ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. Տէր՝ ուսո՛ մեզ
յաղօթս կալ, որպէս և Յովհաննէս ուսոյցն աշակերտաց
2 իւրոց։ Ասէ ցնոսա. Յորժամ կայցէք յաղօթս, ասասջի՛ք.
Հայր մեր՝ սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո։
3 Հաց մեր հանապազորդ տո՛ւր
4 մեզ զօրբստօրէն։ Եւ թո՛ղ մեզ
զմեղս մեր. զի և մեք թողումք
ամենայնի՝ որ պարտիցի մեզ. և
մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն։

5 Եւ ասէ ցնոսա. Ո՞վ է ի
ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, և
երթայցէ առ նա ի մէջ
գիշերի, և ասիցէ ցնա. Բարե-

մէջ էր. Եկա՛ կանգնեց և ասաց.
Տէր, հոգդ չէ՞ որ քոյրս ինձ
մենակ թողեց ծառայելու. ու-
րեմն ասա դորան, որ օգնէ ինձ։
Պատասխանեց Յիսուսը և ասաց 41
Նորան. Մարթա, Մարթա՛ դու
հոգաս ես քաշում և շատ բանե-
րով զբաղուած ես. Բայց մէկ 42
բան է պէտք. Մարիամը բարի
բաժինն ընտրեց, որ վեր չի
առնուիլ Նորանից։

ԳԼ. ԺԱ.

Եւ եղաւ որ մի տեղ աղօթք 1
էր անում. և երբոր դադարեց,
իր աշակերտներից մէկն ասաց
Նորան. Տէր, սովորեցրու մեզ
աղօթք անել, ինչպէս Յովհան-
նէսն էլ իր աշակերտներին
սովորեցրեց։ Եւ ասաց Նո- 2
րանց. Երբոր աղօթք անէք,
ասացէք. Ո՛ Հայր, որ երկն-
քումն ես, քո անունը սուրբ
լինի. քո արքայութիւնը գայ։
Քո կամքը լինի՝ ինչպէս երկն-
քումն այնպէս էլ երկրիս վերայ։
Մեր ամեն օրուայ հացը օրէց 3
օր տուր մեզ։ Եւ թող մեզ 4
մեր մեղքերը. քանզի մենք էլ
թողում ենք ամենին, որ պար-
տական է մեզ. և մեզ փոր-
ձանքի մէջ մի տանիր, այլ
փրկիր մեզ չարիցը։
Եւ Նորանց ասաց. Ձեզա- 5
նից ո՞վ է, որ բարեկամ ու-
նենայ, և կէս գիշերին Նորա
մօտ գնայ, և Նորան ասէ.

6 կամ՝ տուր ինձ փոխ երիս
նկանակս։ Զի բարեկամ իմ
եկն առ իս յուղղոյ, և ոչինչ
7 ունիմ դնել առաջի նորա։ Եւ
նա ի ներքուստ տայցէ պատաս-
խանի և ասիցէ. Մի՛ աշխատ
առներ զիս. զի դուրքդ փակեալ
են, և մանկունքս ընդ ինև կան
յանկողնի. ո՛չ կարեմ յառնել
8 և տալ քեզ։ Ասեմ ձեզ. Եթէ
ոչ յարուցեալ տայցէ նմա վա-
սըն բարեկամութեանն, սակայն
վասն ժուութեանն յարուցեալ
տայցէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ։
9 Եւ ես ասեմ ձեզ, Խնդրեցէք՝
և տացի ձեզ, Հայցեցէք՝ և
գտջիք, բախեցէք՝ և բացցի
10 ձեզ։ Զի ամենայն որ խնդրէ՝
առնու, և որ հայցէ՝ գտանէ՝, և
11 որ բախէ՝ բացցի նմա։ Յո՞ ոք
ի ձէնջ Հայր՝ խնդրիցէ որդի
իւր ձուկն, միթէ փոխանակ
12 ձկանն ՃՃ տայցէ նմա։ Եւ կամ
խնդրիցէ ձու, միթէ կարի՞Ճ
13 տայցէ նմա։ Իսկ եթէ դուք որ
չարքդ էք՝ գիտէք պարգևս
բարիս տալ որդւոց ձերոց,
որչափ ևս առաւել Հայր ձեր
յերկնից տացէ* բարիս այնո-
ցիկ, որ խնդրենն ի նմանէ։

14 Եւ հանէր դև մի համր. և

Բարեկամ, ինձ երեք հաց փոխ
տուր։ Որովհետև իմ բարեկամն 6
ինձ մօտ եկաւ ճանապարհից,
և բան չունիմ՝ որ նորա առջև
դնեմ։ Եւ նա պատասխանէ 7
ներսիցն և ասէ. Մի յոգնեց-
նիր ինձ. դուռն արդէն փակ-
ուած է, և երեխաներս ինձ
հետ անկողնումն են. չեմ կա-
րող վեր կենալ և տալ քեզ։
Ասում եմ ձեզ, եթէ վեր էլ 8
չկենայ և Նորան տայ, Նորա
բարեկամ լինելու համար, սա-
կայն Նորա աներեսութեան հա-
մար վեր կ'կենայ և կ'տայ
Նորան ինչ որ էլ պէտք լինի։
Եւ ես ասում եմ ձեզ. Խնդրե- 9
ցէք՝ և կ'տրուի ձեզ, որոնեցէք
և կ'գտնէք, դո՛ռը թակեցէք՝
և կ'բացուի ձեզ։ Վասնզի 10
ամեն ով որ խնդրում է՝ առ-
նում է, և ով որ որոնում է՝
գտնում է, և ով որ դո՛ռը
թակում է՝ բացվում է Նորան։
Եւ ձեզանից ո՞ր Հօրիցն իր որդին 11
հաց ուզէ, միթէ քար կ'տայ
Նորան. կամ եթէ ձուկ՝ մի՞թէ
ձկան տեղ ՃՃ կ'տայ Նորան։
Եւ կամ ձու ուզէ, մի՞թէ 12
կարիՃ կ'տայ Նորան։ Արդ 13
եթէ դուք, որ չար էք՝ գիտում՝
էք բարի պարգևներ տալ ձեր որ-
դոցը, էլ ո՞րքան աւելի երկնաւոր
Հայրը Սուրբ Հոգի կ'տայ
Նորանց, որ ուզում են Նորանից։
Եւ մի դև էր հանում, որ 14

* Ի Յոյն, զՍուրբ Հոգին

եղև յելանել դիւին խօսեցաւ
համբն, և զարմացան ամենայն
15 ժողովուրդքն։ Եւ ոմանք ի
նոցանէ ասեն. Բէելզեբուղաւ
իշխանաւն դիւաց հանէ դա
16 զդևս։ Եւ այլք փորձէին՝ և
նշան յերկնից խնդրէին ի
17 նմանէ։ Իսկ նորա գիտացեալ
զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա.
Ամենայն թագաւորութիւն բա-
ժանեալ յանձն՝ աւերի, և տուն
բաժանեալ յանձն՝ կործանի։
18 Այսպէս եթէ և Սատանայ բաժա-
նեցաւ յանձնէ, զիարդ կայցէ
թագաւորութիւն նորա. զի
ասէք զինէն եթէ Բէելզեբու-
ղաւ իշխանաւն դիւաց հանէ դա
19 զդևս։ Եթէ ես Բէելզեբուղաւ
հանեմ զդևս. որդիքն ձեր ի-
հանիցեն. վասն այդորիկ նոքին
20 եղիցին ձեր դատաւորք։ Իսկ
եթէ մատամբ Աստուծոյ հանեմ
զդևս, ապա հասեալ է ի վերայ
ձեր արքայութիւն Աստուծոյ։
21 Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ
զտուն իւր, ի խաղաղութեան
22 են ինչք նորա։ Այլ եթէ
հզօրագոյն քան զնա ի վերայ
եկեալ յաղթեսցէ նմա, ըզսպա-
ռազինութիւնն հանէ՝ յոր
յուսացեալ էր, և զաւար նորա
23 բաշխեսցէ։ Որ ոչ է ընդ իս՝
հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ
ընդ իս, ցրուէ։

համբ էր. և եղաւ որ դևը
դուրս գալիս համբը խօսեց. և
ժողովուրդները զարմացան։ Եւ
նորանցից ոմանք ասացին. Դա
դևերի իշխան՝ Բէելզեբուղովն
է հանում դևերը։ Ուրիշներն
էլ փորձելով մի նշան էին
խնդրում նորանից երկնքից։
Այլ նա նորանց մտածմունք-
ները իմանալով ասաց նորանց.
Ամեն թագաւորութիւն, որ իր
մէջ բաժնուած է՝ կ'աւերուի,
և տուն՝ տան դէմ բաժնուած
կ'կործանուի։ Այսպէս եթէ սա-
տանան ինքն իրան դէմ բաժա-
նուած է, նորա թագաւորու-
թիւնն ինչպէս կ'կենայ. վասնզի
ասում էք, ես Բէելզեբուղովն
եմ հանում դևերը։ Եթէ ես
Բէելզեբուղովն եմ հանում
դևերը, ապա ձեր որդիքն ինչով
են հանում. դորա համար նո-
րանք կ'լինին ձեր դատաւոր-
ները։ Այլ եթէ Աստուծոյ
մատովն եմ հանում դևերն,
ուրեմն Աստուծոյ արքայու-
թիւնն ձեզ վերայ հասել է։
Երբոր զօրաւորը զինուորուած
իր տունը պահէ, նորա ստա-
ցուածքը խաղաղութեան մէջ
է։ Այլ եթէ նորանցից էլ
աւելի զօրաւորը գայ՝ նորան
յաղթէ, նորա զէնքերը՝ որ
յոյսն նորանց վերայ էր դրել,
կ'հանէ և նորա աւարը կ'բաժնէ։
Ով որ ինձ հետ չէ՝ ինձ հա-
կառակ է, և ով որ ինձ հետ
չէ ժողովում՝ ցրվում է։

24 Յորժամ այսն պիղծ ելանիցէ
ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին
տեղիս, խնդրէ հանգիստ. և
իբրև ոչ գտանէ, ասէ. Դարձայց
անդրէն ի տուն իմ ուստի
25 ելի։ Եւ գայ գտանէ մաքրեալ
26 և յարդարեալ։ Յայնժամ
երթայ և առնու եօթն այլ այսս
չար ևս քան զինքն, և մտանէ
բնակէ անդ. և լինի յետինն
մարդոյն այնորիկ չար քան
զառաջինն։

27 Եւ եղև մինչդեռ խօսէր
զայս, ձայն եբարձ կին մի ի
ժողովրդենէ անտի և ասէ.
Երանի է որովայնին՝ որ կրեացն
զքեզ, և ստեանցն որ դիեցուցին
28 զքեզ։ Եւ նա ասէ. Այո՛ երանի
այնոցիկ է, որ լսեն զբանն
Աստուծոյ՝ և առնեն։
29 Եւ ի դիզանել ի վերայ
նորա ժողովրդոցն՝ սկսաւ ասել.
Ազգս այս ազգ չար է. նշան
խնդրէ, և նշան յերկնից ոչ տացի
սմա՝ բայց նշանն Յովնանու։
30 Զի որպէս եղև Յովնան նշան
Նինուէացւոց, այնպէս եղիցի և
Որդի մարդոյ ազգիս այսմիկ։
31 Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դա-
տաստանի ընդ արս ազգիս այսո-
րիկ՝ և դատապարտեսցէ զսոսա,
զի եկն ի ծագաց երկրի լսել զի-
մաստութիւնն Սողոմոնի. և ահա
առաւել քան զՍողոմոն է աստ։
32 Արք Նինուէացիք յարիցեն
ի դատաստանի ընդ ազգիս ընդ

Երբոր պիղծ ոգին դուրս է 24
գալիս մարդուցը՝ անջուր տեղ-
բանքում ման է գալիս և հան-
գիստ որոնում. և երբոր չէ
գտնում՝ ասում է. Ետ դառ-
նամ իմ տունը՝ որտեղից դուրս
եկայ։ Եւ գալիս՝ նորան սրբը- 25
ուած և զարդարուած է գըտ-
նում։ Այն ժամանակ գնում 26
է և իրանից էլ աւելի չար եօթն
ոգիներ է առնում՝ և մտնում
բնակվում է այնտեղ, և այն
մարդու յետինն աւելի չար է
լինում քան թէ առաջինը։

Եւ եղաւ որ նա այս խօսելիս, 27
ժողովրդի միջից մի կին ձայն
բարձրացրեց և ասաց. Երանի
այն փորին՝ որ քեզ կրեց, և
այն ծծերին՝ որ քեզ ծծեցրին։
Նա էլ ասաց. Այո՛, երանի 28
նորանց, որ Աստուծոյ խօսքը
լսում՝ են և նորան պահում։

Եւ երբոր ժողովուրդները 29
նորա վերայ դիզվում էին, սկսեց
ասել. Այս ազգը չար է. նշան
է խնդրում, և նշան չի տրուիլ
սորան՝ բայց միայն Յոնան մար-
գարէի նշանը։ Այնպէս 30
Յոնան նշան եղաւ Նի-
նուէացոց համար, այնպէս էլ
Որդին մարդոյ այս ազգին կըլի-
նի։ Հարաւի թագուհին դա- 31
տաստանումը վեր կ'կենայ այս
ազգի մարդկանց հետ և կրդա-
տապարտէ նորանց, որովհետև
երկրի ծայրերիցն եկաւ Սողո-
մոնի իմաստութիւնը լսելու, և
ահա Սողոմոնից էլ աւելին է

այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա, զի ապաշխարեցին 'ի քարոզութեանն Յովհաննու. և ահա առաւել քան զՅովհան է աստ:

33 Ո՛չ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ 'ի թաքստեան, և ոչ ընդ գրուանաւ. այլ 'ի վերայ աշտանակի, զի որ մտանեն՝ լոյս
34 տեսանիցեն: Ճրագ մարմնոյ ակն է. յորժամ ակն առատ է, ամենայն մարմին լուսաւոր եղիցի. և երբ ակն չար է, և
35 մարմին խաւարին եղիցի: Արդ զգո՛յշ լեր՝ գուցէ լոյսդ որ 'ի քեզ
36 է՝ խաւար իցէ: Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր է՝ և չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի լուսաւոր ամենայն. որպէս յորժամ ճրագն նշուլիւք լուսաւորեսցէ զքեզ:

37 Եւ մինչդեռ խօսէր զայս, աղաչէր զնա ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա. և նա
38 մտեալ բազմեցաւ: Իբրև ետես փարիսեցին՝ զարմացաւ, զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան
39 զճաշ: Ասէ ցնա Տէր. Այժմ դուք փարիսեցիք զարտաքին բաժակին և զպնակին սրբէք. և ներքինն ձեր լի է յափշտակութեամբ և չարութեամբ:
40 Անմիտք՝ ո՞չ ապաքէն որ զարտաքինն արար՝ և զներքինն նոյն
41 արար: Բայց աղէ զարժանն այս տեղ: Նինուէի մարդիկը դատաստանումը վեր կ'կենան այս ազգի հետ և կ'դատապարտեն սորան, որովհետև նորանք Յոնանու քարոզութիւնովն ապաշխարեցին. և ահա Յոնանիցն էլ աւելին է այստեղ:

Ոչ ով ճրագը չէ վառում՝ 33
և թաքուն տեղ դնում և ոչ գրուանի տակ, այլ ճրագակալի վերայ, որ ներս մտնողները լոյսը տեսնեն: Մարմնոյ ճրագը 34
աչքն է, արդ երբոր աչքդ պարզ է, բոլոր մարմինդ էլ լուսաւոր կ'լինի. բայց երբոր չար է, մարմինդ էլ խաւար կ'լինի: Ուրեմն՝ զգոյշ կաց, մի գուցէ 35
այն լոյսն, որ քեզանում է, խաւար լինի: Եթէ բոլոր մար- 36
մինդ լուսաւոր է և ոչ մի խաւար մասն չկայ, բոլորը լուսաւոր կ'լինի. ինչպէս երբոր ճրագն իր ճառագայթովը լուսաւորէ քեզ:

Եւ նա այս խօսելիս, մէկ 37
փարիսեցի աղաչում էր նորան, որ նորա մօտ հաց ուտէ. և նա մտաւ սեղան նստեց: Փարիսե- 38
ցին էլ տեսնելով զարմացաւ, որ ճաշից առաջ չ'լուացուեց:
Տէրն էլ ասաց նորան. Հիմա 39
դուք փարիսեցիներդ բաժակի և պնակի դրսի կողմը սրբում էք. բայց ձեր ներսը լիքն է յափշտակութիւնով և չարութիւնով: Անմիտներ, չէ՞ որ 40
դուրսը անողը ներսն էլ արաւ:
Բայց ինչ ունեցածիցը ողորմու- 41
թիւն տուէք, և ահա ամենայն սուրբ է ձեր: Այլ
42 վա՛յ ձեզ փարիսեցւոց, զի տասանորդէքզանանուխ և զփեգենայ և զամենայն բանջար, և անցանէք զիրաւամբք և զսիրոմն Աստուծոյ. զայս արժան էր առնել՝ և զայնու ոչ անցանել:
43 Վա՛յ ձեզ փարիսեցւոց, զի սիրէք զբարձրագահս 'ի ժողովուրդս, և զնախողջոյնս 'ի
44 հրապարակս: Վա՛յ ձեզ՝ զի էք դուք իբրև զգերեզմանս անյայտս, և մարդիկ զնան 'ի վերայ՝ և ոչ գիտեն:

45 Պատասխանի ետ ոմն յօրինականացն՝ և ասէ ցնա. Վարդապետ զայդ բանս ասելով՝ և
46 զմեզ թշնամանես: Եւ նա ասէ. Եւ ձեզ վա՛յ օրինականացդ, զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, և դուք մատամբ միով 'ի բեռինսն ոչ մերձենայք:
47 Վա՛յ ձեզ՝ զի շինէք զշիրիմս մարգարէիցն, և հարքն ձեր
48 սպանին զնոսա: Այսպէս ուրեմն վկայէք՝ եթէ կամակիցք էք գործոց հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին զնոսա, և դուք
49 զգերեզմանս նոցա շինէք: Վասն այնորիկ իմաստութիւնն Աստուծոյ ասաց. Առաքեցից 'ի նոսա մարգարէս և առաքեալս, և 'ի նոցանէ սպանանիցեն և հա-

թիւն տուէք, և ահա ամեն բաներ սուրբ են ձեզ համար:
Բայց վայ ձեզ փարիսեցիներիդ, 42
որ անանուխի և փեգենայի և ամեն բանջարի տասանորդ էք տալիս, և Աստուծոյ իրաւունքը և սէրը զանց էք անում. այս պէտք էր անել, և նորանք չթողել: Վա՛յ ձեզ փարիսե- 43
ցիներիդ, որ ժողովարանների մէջ առաջի աթոռներն էք սիրում, և հրապարակներում բարևները: Վա՛յ ձեզ՝ 44
գպիրներիդ և փարիսեցիներիդ, կեղծաւորներ, որ դուք այն գերեզմանների պէս էք, որ անյայտ են, և մարդիկը որ նորանց վերայ գնում են՝ չեն գիտում:

Եւ պատասխանեց օրինա- 45
կաններից մէկը և ասաց նորան. Վարդապետ, այդ ասելով մեզ էլ ես նախատինք տալիս: Նա 46
էլ ասաց, Եւ ձեզ օրինականներիդ էլ վայ. քանզի դժուար տանելի բեռներ էք բեռնում մարդկանց, և դուք ձեր մատների մէկովը չէք մօտենում այն բեռներին: Վա՛յ ձեզ, որ 47
մարգարէների գերեզմանները շինում էք, և հէնց ձեր հարքն սպանեցին նորանց: Այսպէս ուրեմն 48
վկայում էք և հաւանում էք ձեր հարանց գործքերին. որովհետև նորանք կոտորեցին նորանց, և դուք շինում էք նորանց գերեզմանները: Սորա 49
համար Աստուծոյ իմաստու-

50 լածիցն։ Օ՛լի խնդրեսցի արիւն
ամենայն մարգարէից՝ հեղեալ՚ի
սկզբանէ աշխարհի՝ յազգէ
51 յայդմանէ. Յարենէն Ա՛բելի
մինչև յարիւնն Զ՛աքարիայ
կորուսելոյ ընդ սեղանն և ընդ
տաճարն. այո՛ ասեմ ձեզ՝
Խնդրեսցի յազգէ յայդմանէ։
52 Վա՛յ ձեզ օրինականացդ. զի
թաքուցանէք զվարանս գիտու-
թեանն. դուք ո՛չ մտանէք, և
որ մտանելոցն են՝ արգելուք։

53 Եւ՚ի խօսելն զայս ամենայն
առ նոսա* առաջի ամենայն
ժողովրդեանն զամենի հարկա-
նէին. և՝ սկսան դպիրքն և
փարիսեցիք զչարել՝ և գրգռել
54 ընդ նմա վասն բազում իրաց. Եւ
սպասել որսալ ինչ բանս՚ի
բերանոյ նորա զի չարախօսեսցեն
զնմանէ։

ԳԼ. ԺԴ

1 Որովք՚ի կուտել բիւրաւորաց
ժողովրդեանն՝ մինչև կոխել
զմիմեանս, սկսաւ ասել ցաշա-
կերտսն իւր. Նախ՝ զգոյշ
լերուք անձանց՚ի խմորոյ փա-
րիսեցւոցն, որ է կեղծաւորու-
2 թիւն։ Օ՛լի ո՛չինչ է՚ի ծածուկ
որ ոչ յայտնեսցի, և գաղտնի

թիւնն էլ ասաց. Մարգարէներ
և առաքեալներ կ՚ուղարկեմ
նորանց մօտ, և նորանցից կըս-
պանեն և կ՚հալածեն։ Որ 50
բոլոր մարգարէների արիւնն,
որ աշխարհի սկզբից թա-
փուած է, այս ազգիցը պա-
հանջուի, Ա՛բելի արիւնից մին- 51
չև Զ՛աքարիայի արիւնը, որ
սեղանի և տաճարի մէջ կորաւ,
այո՛, ասում եմ ձեզ, այս աղ-
գիցը կ՚պահանջուի։ Վա՛յ ձեզ՝ 52
օրինականներիդ, որ գիտու-
թեան բանալիքը վեր էք առել.
դուք չէք մտել, և մտնողնե-
րին էլ արգիլել էք։
Եւ երբոր այս բաներն ա- 53
սում էր նորանց, դպիրները և
փարիսեցիներն սկսեցին սաստիկ
ստիպել, և շատ բաների հա-
մար նորա հետ հակառակել.
Եւ նորան աչքի տակ առած՝ 54
ուզում էին, նորա բերանից
մի բան որսալ, որ ամբաստա-
նեն նորան։

ԳԼ. ԺԵ

Ա՛յն միջոցին երբոր հա- 1
զարներով ժողովուրդները դիզ-
վում էին՝ մինչև որ իրար կոխ
էին տալիս, սկսեց իր աշա-
կերտներին ասել. Ա՛ռաջ ձեր
անձերը զգոյշ պահեցէք փա-
րիսեցւոց խմորից, որ է կեղ-
ծաւորութիւնը։ Վա՛սնզի ոչ- 2

* Ի Յոյնն էր։

3 որ ո՛չ ծանիցի։ Վա՛սն զի զոր
ինչ ասիցէք՚ի խաւարի, լսելի
լիցի՚ի լոյս. և զոր յունկանէն
խօսեցարուք՚ի շտեմարանս,
քարոզեսցի՚ի վերայ տանեաց։
4 Բայց ձեզ ասեմ սիրելեաց
իմոց. Մի՛ զարհուրիցիք յայն-
ցանէ՝ որ սպանանեն զմարմին, և
յետ այնորիկ աւելի ինչ ո՛չ
5 ունիցին առնել։ Ա՛յլ ցուցից
ձեզ յումմէ երկնչիցիք. Երկն-
չիջի՛ք յայնմանէ՝ որ յետ
սպանանելոյ ունի իշխանութիւն
արկանել՚ի գեհենն. այո՛ ասեմ
6 ձեզ՝ Յայնմանէ երկնչիջի՛ք։ Ո՞չ
ապաքէն հինգ ձագ երկուց
դանգաց վաճառի, և մի՚ի
նոցանէ ո՛չ է մոռացեալ առաջի
7 Աստուծոյ։ Ա՛յլ ձեր և ամ-
ենայն իսկ հեր գլխոյ թուեալ է.
մի՛ երկնչիք, զի քան զբազում
8 ձագս լաւ էք դուք։ Ասեմ ձեզ,
զի Ամենայն որ խոստովանեսցի
յիս առաջի մարդկան, և Որդի
մարդոյ խոստովանեսցի զնմանէ
առաջի հրեշտակաց Աստուծոյ։
9 Եւ որ ուրացի զիս առաջի
մարդկան, ուրացեալ լիցի առաջի
10 հրեշտակաց Աստուծոյ։ Եւ
ամենայն որ ասէ բան զՈրդւոյ՝
թողցի նմա. բայց որ զՀոգին
Սուրբ հայհոյիցէ, մի՛ թողցի
11 նմա։ Ա՛յլ յորժամ տանիցին
զձեզ՚ի ժողովուրդս և՚ի պե-
տութիւնս և յիշխանութիւնս,
մի՛ հոգայցէք՝ որպէս թէ զի՞նչ
12 պատասխանի տայցէք, կամ
զի՞նչ ասիցէք։ Օ՛լի Հոգին

ինչ չ՚կայ ծածուկ, որ չը յայտ-
նուի. և թաքուն, որ չիմա-
ցուի։ Ուստի ինչ որ խաւա- 3
րումն ասեցիք, լուսոյ մէջ
կ՚լսուի. և ինչ որ ներսի սե-
նեակներումն ականջում խօսե-
ցիք, կտուրների վերայ կըքա-
րոզուի։ Բայց ասում եմ ձեզ՝ 4
իմ սիրելիներին. Մի՛ վախե-
նաք նորանցից՝ որ մարմինն
սպանում են, և նորանից յետոյ
աւելի բան չունին՝ որ անեն։
Բայց ցոյց տամ ձեզ, թէ ումից 5
պէտք է վախենաք. Նորանից
վախեցէք, որ սպանելուց յետոյ
իշխանութիւն ունի գեհենի
մէջ գցելու. այո՛, ասում եմ
ձեզ՝ նորանից վախեցէք։ Չէ՞ 6
որ հինգ ճնճղուկ երկու դանկի
են ծախվում. և նորանցից մէկն
էլ Աստուծոյ առջև մոռացուած
չէ։ Բայց ձեր գլխի բոլոր 7
մազերն էլ համարուած են.
ուրեմն մի վախենաք. վասնզի
դուք շատ ճնճղուկներից աւելի
լաւ էք։ Իսկ ասում եմ ձեզ, 8
ով Ամեն ով որ ինձ մարդ-
կանց առջև դաւանէ, Որդին
մարդոյ էլ նորան կ՚դաւանէ
Աստուծոյ հրեշտակների առջև։
Եւ ով որ ինձ ուրանայ մարդ- 9
կանց առջև, նա էլ կ՚ուրացուի
Աստուծոյ հրեշտակների առջև։
Եւ ամեն ով որ Որդոյ մարդոյ 10
դէմ բան ասէ, կ՚թողուի նո-
րան. բայց ով որ Սուրբ Հո-
գոյն դէմ հայհոյեց, նորան
չի թողուիլ։ Եւ երբոր տանեն 11

Այուրբ ուսուսցէ ձեզ 'ի նմին
ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել։

13 Այսէ ոմն 'ի ժողովրդենէն ցնա,
Ա՛րդապետ՝ ասա՛ ցեղբայր իմ
բաժանել ընդ իս զժառանգու-
14 թիւնն։ Եւ նա ասէ ցնա. Այր
դու՝ ո՞ կացոյց զիս դատաւոր
կամ բաժանարար 'ի վերայ
15 ձեր։ Եւ ասէ ցնոսա. Տեսէք և
զգո՛յշ լերուք յամենայն ագա-
հութենէ, զի ո՛չ եթէ 'ի
մթերից ընչից ուրուք իցեն
16 կեանք նորա։ Խօսեցաւ առ
նոսա առակ մի՝ և ասէ. Այն
ուրումն մեծատան ետուն անդք
17 տոհմականս. Եւ խորհէր 'ի
միտս իւր՝ և ասէր. Զի՞ գործ-
ցեցից՝ զի ո՛չ գոյ տեղի ուր
18 ժողովեցից զարդիւնս իմ։ Եւ
ասէ. Կ'իտեմ զինչ արարից.
քակեցից զշտեմարանս իմ, և ևս
մեծամեծս շինեցից, և անդր ժո-
ղովեցից զցորեան և զամենայն
19 բարութիւնս իմ։ Եւ ասացից
ցանձն իմ. Ա՛նձն՝ ունիս բա-
զում բարութիւնս համբարեալ
ամաց բազմաց. հանգէ՛ր՝ կեր
20 ա՛րբ՝ և ուրախ լեր։ Այսէ ցնա
Աստուած. Ա՛նմիտ՝ յայսմ
գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց
պահանջիցեն, իսկ զոր պատրաս-
21 տեցերն՝ ո՞ւմ լինիցի։ Նոյնպէս
ձեզ ժողովարանները և դա-
տաւորների և պետութիւնների
առջև, հոգս մի՛ անէք՝ թէ ինչ-
պէս ու ի՞նչ պատասխանէք,
կամ ի՞նչ ասէք։ Ա՛սանզի Սուրբ 12
Հոգին նոյն ժամուն՝ կ'սովորե-
ցընէ ձեզ՝ թէ ինչ պէտք է
խօսել։

Եւ ժողովրդիցը մէկն ասաց 13
նորան. Ա՛րդապետ, իմ եղ-
բօրն ասա, որ ժառանգու-
թիւնն ինձ հետ բաժանէ։ Նա 14
էլ ասաց նորան. Ա՞որ դ, ո՞վ
կարգեց ինձ ձեզ վերայ դա-
տաւոր կամ բաժանարար։ Եւ 15
նորանց ասաց. Տեսէք և զգոյշ
կացէք ագահութենից, քանզի
մարդուս ապրանքների առաւե-
լութիւնից չէ նորա կեանքը։
Եւ նորանց մի առակ խօսեց և 16
ասաց. Ա՛ի հարուստ մարդոյ
արտը առատ պտուղ տուաւ։
Եւ իր մտքումը մտածում էր 17
և ասում. Ի՞նչ անեմ, որ տեղ
չունիմ որ իմ պտուղներն
այնտեղ ժողովեմ։ Եւ ասաց. 18
Այս կանեմ. իմ շտեմարանները
քանդեմ, և աւելի մեծերը շի-
նեմ, և իմ բոլոր բերքերն ու
բարիքները այնտեղ ժողովեմ։
Եւ իմ անձին ասեմ. Ո՛վ անձն, 19
շատ բարիքներ ունիս շատ տա-
րիների համար ամբարուած.
հանգչիր, կեր, խմիր, զուար-
ճացիր։ Բայց Աստուած նո- 20
րան ասաց. անմիտ. իսկ այս
գիշերումը հոգիդ քեզանից ետ
կ'պահանջեն. ապա այս որ

և որ դանձէ անձին, և ո՛չ
յԱստուած մեծանայցէ։

22 Ասէ ցաշակերտսն իւր. Ա՛ս-
այդորիկ ասեմ՝ ձեզ. մի՛ հոգայք
ընդ ոգւոյ՝ թէ զի՞նչ ուտիցէք,
և մի՛ ընդ մարմնոյ՝ թէ զի՞նչ
23 զգենուցուք։ Զի ոգի առաւել
է քան զկերակուր՝ և մարմին
24 քան զհանդերձ։ Հայեցարո՛ւք
ընդ ագռաւս, զի ո՛չ սերմանեն
և ո՛չ հնձեն. որոց ո՛չ գոն ըշտե-
մարանք՝ և ո՛չ համբարանոցք և
Աստուած կերակրէ զնոսա. ո՞ր-
չափ ևս առաւել զձեզ՝ որ լաւ էք
25 քան զթռչունս։ Ո՞վ 'ի ձէնջ
առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ 'ի
26 հասակ իւր կանգուն մի։ Իսկ
արդ եթէ 'ի փոքրուն չէք բաւա-
կան՝ վասն այլոցն զի՞ հոգայցէք։
27 Հայեցարո՛ւք ընդ շուշանն՝
որպէս աճէ, ո՛չ ջանայ՝ և ո՛չ
նիւթէ. ասեմ՝ ձեզ, Եւ ո՛չ
Սողոմոն յամենայն 'ի փառսն
իւր զգեցաւ իբրև զմի 'ի նոցանէ.
28 Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր 'ի
բացի է՝ և վաղիւ 'ի հնոց ար-
կանելի Աստուած այնպէս ըզգե-
ցուցանէ. ո՞րչափ ևս առաւել
29 զձեզ թերահաւատք։ Եւ դուք
մի՛ խնդրէք՝ զինչ ուտիցէք կամ
զի՞նչ ըմպիցէք, և մի՛ զբաղնուք.
30 Զի զայն ամենայն հեթանոսք
աշխարհի խնդրեն. այլ ձեր
Հայր գիտէ՝ զի պիտոյ է
31 այն ամենայն։ Բայց խընդ-
րեցէք զարքայութիւն Աս-
պատրաստեցիր՝ ո՞ւմ կ'լինի։
Այսպէս էլ նա՝ որ իր անձին 21
համար գանձ է հաւաքում, և
Աստուծով չէ հարուստ։

Իր աշակերտներին էլ ասաց. 22
Դորա համար ասում եմ ձեզ.
հոգս մի անէք ձեր անձի հա-
մար՝ թէ ինչ պիտի ուտէք. ոչ
էլ մարմնոյ համար՝ թէ ինչ
պիտի հագնիք։ Հոգին աւելի 23
է կերակուրից, և մարմինը հա-
գուստից։ Ա՛տիկ արէք ագ- 24
ռաւներին, որ ոչ սերմում են
և ոչ հնձում են. որոնք ոչ
շտեմարաններ ունին և ոչ
ամբարներ, և Աստուած կերա-
կրում է նորանց. դուք որքան
աւելի էք թռչուններից։ Ձե- 25
զանից ո՞վ կարող է իր հոգս
անելովն իր հասակի վերայ մէկ
կանգուն աւելացնել։ Արդ եթէ 26
ամենափոքր բանի համար կա-
րող չէք, ի՞նչու էք ուրիշ
բաների համար հոգս անում։
Ա՛տիկ արէք շուշաններին. 27
ինչպէս են մեծանում. ոչ ջանք
են անում և ոչ մանում. բայց
ասում եմ ձեզ Սողոմոնն էլ
իր բոլոր փառքի մէջ նորանց
մէկի նման չ'հագաւ։ Իսկ 28
եթէ յանդի խոտն, որ այս օր
կայ և էգուց փուռն մէջ է
գցվում, Աստուած այնպէս է
հագցնում, որքան ևս առաւել
ձեզ, թերահաւատներ։ Եւ 29
դուք մի՛ որոնէք թէ ինչ ուտէք
կամ ինչ խմէք, և մի՛ գըր-
գռուիք։ Զանզի այդ բոլոր 30

տուծոյ. և այն ամենայն յաւելցի ձեզ։

32 Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ
33 ձեզ զարքայութիւն։ Վաճառեցէք զինչս ձեր, և տուք ողորմութիւն. և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, և ոչ ցեց ապա-
34 կանէ։ Զի ուր գանձն ձեր է,
35 անդ և սիրտք ձեր եղիցին։ Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս՝ և ճրագունք լուցեալք։
36 Եւ դուք նմանողք մարդկան՝ որ ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ 'ի հարսանեաց. զի յորժամ գայցէ և բախիցէ, վաղվաղակի բանայցեն
37 նմա։ Երանի՛ իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթուն. ամէն ասեմ ձեզ՝ զի Գօտի ընդ մէջ ածցէ՝ և բազմեցուսցէ զնոսա, և անցեալ պաշտիցէ զնոսա։
38 Եւ եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ և գտցէ այնպէս, երանելի են ծա-
39 ռայքն այնոքիկ։ Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր, և չտայր թոյլ ական
40 հատանել 'ի տան իւրում։ Եւ դուք եղերուք պատրաստք՝ զի

բաներն աշխարհքի հեթանոսներն են որոնում. բայց ձեր Հայրը գիտում է՝ որ գործանք
31 ձեզ պէտք են։ Սակայն Աստուծոյ արքայութիւնն խնդրեցէք, և այդ բոլորը կ'աւելնայ ձեզ։

32 Մի՛ վախենար, փոքր հօտ. վասնզի ձեր Հայրն հաճեցաւ,
33 որ արքայութիւնը տայ ձեզ։ Ձեր ստացուածքը ծախեցէք և ողորմութիւն տուէք. ձեզ համար չհինացող քսակներ շինեցէք՝ անպակաս գանձ՝ երկնքումն, որտեղ գող չէ մօտենում և ոչ էլ ցեց է ապականում։ Որտեղ որ ձեր
34 գանձն է, այնտեղ էլ ձեր
35 սրտերը կ'լինին։ Թող ձեր գօտիկները պինդ կապուած լինին մէջքին, և ճրագները վառուած։
36 Եւ դուք նման էք մարդկանց, որ սպասում են իրանց տիրոջը, թէ երբ ետ կ'դառնայ հարսանիքից. որ երբ որ գայ և դռնակը թակէ,
37 շուտով բանան նորա համար։ Երանի այն ծառաներին, որ տէրը գալիս՝ արթուն գտնէ նորանց. ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ գօտիկը մէջքը կ'կապէ և նորանց սեղան կ'նստեցնէ
38 և առաջ եկած կ'ծառայէ նորանց։ Եւ եթէ երկրորդ կամ
39 երրորդ պահին գայ՝ և այնպէս գտնէ, երանի այն ծառաներին։ Բայց սա իմացէք, որ եթէ տան տէրը գիտէր՝ թէ գողն ի՞ր

յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ։

41 Ասէ Պետրոս. Տէր՝ առ մեզ ասացեր զառակդ զայդ՝ եթէ առ
42 ամենեսեան։ Եւ ասէ Տէր. Ո՞վ իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն, զոր կացոյց տէր իւր 'ի վերայ գերդաստանի իւրոյ տալ 'ի ժամու զկերակուրս։
43 Երանի՛ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ
44 արարեալ այնպէս։ Արդարև ասեմ ձեզ, զի 'Ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ
45 զնա։ Այլ եթէ ասիցէ ծառայն այն 'ի սրտի իւրում. Յամ տէր իմ 'ի գալ, և սկսանիցի հարկանել զծառայսն և զաղախնայս, ուտել և ըմպել և արբենալ։
46 Եկեսցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ակն ոչ ունիցի, և 'ի ժամու յորում ոչ գիտիցէ, ընդ մէջ կտրեսցէ զնա, և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ։
47 Եւ ծառայ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ
48 գան բազում։ Եւ որ ոչն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ. ամենայնի՝ որում շատ տուաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ, և որում բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն 'ի նմանէ։

ժամին կ'գայ. արթուն կ'կենար և թող չէր տալ իր տունը
40 ծակել։ Արդ դուք էլ պատրաստ եղէք, վասնզի այն ժամին, որ չէք կարծում, Որդին մարդոյ կ'գայ։

41 Եւ Պետրոսը ասաց նորան. Տէր. այդ առակը մեզ ես
42 ասում, թէ ամենքին էլ։ Տէրն էլ ասաց. Ուրեմն ո՞վ է այն հաւատարիմ և իմաստուն տընտեսն, որին իր տէրը իր գերդաստանի վերայ կարգեց, որ նորանց կերակուրը տայ ժամանակին։ Երանի այն ծառա-
43 յին, որ իր տէրը՝ երբոր գայ, այնպէս անելիս գտնէ նորան։
44 Ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ իր բոլոր ստացուածքի
45 վերայ կ'դնէ նորան։ Բայց եթէ այն ծառան իր սրտումն ասէ, Իմ տէրն ուշանում է գալ, և սկսէ ծառաներին և աղախիններին ծեծել, ուտել ու
46 խմել և արբենալ։ Կ'գայ այն ծառայի տէրն այն օրը, որ նա չէ սպասում, և այն ժամին, որ նա չէ գիտում, և նորա միջնցը կ'կտրէ, և նորա բաժինն անհաւատների հետ կ'դնէ։ Եւ
47 այն ծառան, որ իր տիրոջ կամքը գիտենալով չէ պատրաստել և ոչ էլ արել նորա կամացը պէս,
48 շատ ծեծ կ'ուտէ։ Եւ նա որ չ'գիտենալով ծեծի արժանի բան գործեց, քիչ կ'ծեծուի. այն ամենին որ շատ տրուեց՝ նորանից շատ կ'ուզուի. և ում որ

49 Հուր եկի արկանել յերկիր. և զի՞նչ կամիմ թէ արդէն իսկ
50 բորբոքեր։ Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտիլ, և զինչդ փու-
51 թամ մինչև կատարեսցի։ Հա-մարիք եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր. Ո՛չ՝ ասեմ ձեզ,
52 այլ բաժին։ Օվ եղիցին յայսմ հետէ հինգ ի տան միում բաժանեալք, երեքն
53 յերկուց, և երկուքն յերիս։ Բաժանեսցի հայր յորդւոյ՝ և որդի ի հօրէ, մայր ի դստերէ՝
և դուստրն ի մօրէ, սկեսուր ի հարսնէ՝ և հարսն ի սկեսրէ իւրմէ։

54 Ասաց և ցժողովուրդսն. Յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ
յարևմտից. իսկոյն ասէք՝ թէ
55 Անձրև գայ, և լինի այնպէս. Եւ յորժամ հարաւ շնչեալ, ասէք
թէ Խորշակ լինի, և լինի այն-
56 պէս։ Կեղծաւորք՝ զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել, իսկ
57 զժամանակս զայս զի՞նչդ ոչ փորձէք։ Ընդէ՞ր և յանձանց
58 իսկ ոչ ընտրէք զարժանն։ Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան, ի ճանա-
պարհի տուր զհաշիւն զեր-
ծանել՝ի նմանէ. զի գուցէ քար-
շիցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի, և դահիճն արկանիցէ ի բանտ.
շատ պահ տրուեցաւ՝ նորանից էլ աւելի կ՚պահանջեն։

Ես եկայ որ կրակ գցեմ երկրիս վերայ. և ի՞նչ ուզում
եմ, որ արդէն իսկ բորբոքուեր։ Բայց մի մկրտութիւն ունիմ մկրտուելու. և ի՞նչպէս հոգս եմ քաշում, մինչև որ կատարուի։ Կարծո՞ւմ էք թէ եկայ խաղաղութիւն տալ երկրիս վերայ. Ոչ. ասում եմ ձեզ, այլ բաժանմունք։ Այսունկի այսուհետև հինգ հոգի մէկ տան մէջ բաժին բաժին կ՚լինին, երեքն երկուսի դէմ, և երկուսն երեքի դէմ։ Հայրը կ՚բաժնուի որդուցը, և որդին հօրիցը, մայրն աղջկանիցը, և աղջիկը մօրիցը, սկեսուրը հարսիցը, և հարսն իր սկեսրիցը։

Եւ ժողովուրդներին էլ ասաց. Երբոր տեսնում էք արևմտիցն ամպ դուրս գալիս, շուտով
ասում էք. Անձրև կ՚գայ, և
այնպէս է լինում. Եւ հա-
րաւային քամին փչելիս, ասում էք՝ թէ Շո՞գ կ՚լինի, և այնպէս է լինում. Կեղծաւորներ, երկրի և երկնքի երեսը գիտէք փորձել. բայց ի՞նչպէս չէք այս ժամանակը փորձում։ Եւ ինչո՞ւ իսկ ձեզանից էլ չէք ընտրում արժանին։ Երբոր քո հակառակ ոսոխի հետ իշխանի մօտ
ես գնում, ճանապարհին տուր տալիքը, որ նորա ձեռքիցն աղատուիս. մի գուցէ քեզ դատաւորի մօտ քաշէ, և դա-

59 Ասեմ քեզ. Ո՛չ ելանիցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին ընիոնն։

ԳԼ. ԺԹ

1 Եկին ոմանք ի նմին ժամանակի, և պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս
2 նոցա։ Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Համարիք եթէ այն Գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս, զի
3 զայնպիսի անցս կրեցին։ Ո՛չ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս
4 կորնչիջիք։ Կամ նոքա ութուտասանքն, յորոց վերայ աշտարակն անկաւ ի Սելոամ, և սպան զնոսա. Համարիք եթէ նոքա պարտապանք եղեն քան
5 զամենայն մարդիկ՝ որ բնակեալ են Երուսաղէմ։ Ո՛չ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք.

6 Ասաց և զառակս զայս. Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. և եկն խնդրել
պտուղ ի նմանէ՝ և ոչ եգիտ։
7 Ասէ ցայգեգործն. Ահա երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ՝ և

տաւորը քեզ դահճին մատնէ, և դահիճը բանտի մէջ գցէ։ Ասում եմ քեզ. Այն տեղից 59
դուրս չես գալ, մինչև որ վերջի դանկն էլ չվճարես։

ԳԼ. ԺԹ

Այդ ժամանակումը եկան 1
ոմանք և պատմեցին նորա այն Գալիլեացիների մասին, որոնց արիւնը Պիղատոս նորանց մատաղի հետ խառնեց։ Յիսուսն 2
էլ պատասխանեց և ասաց նորանց. Կարծո՞ւմ էք, թէ այդ Գալիլեացիներն աւելի մեղաւոր էին քանթէ բոլոր Գալիլեացիները, որ այդպիսի բաներ քաշեցին։ Ոչ, ասում եմ ձեզ. 3
այլ եթէ չապաշխարէք, ամենքդ էլ այնպէս կ՚կորչիք. Կամ այն տասնուութ հոգին, 4
որոնց վերայ Սելոամի միջի աշտարակը վայր ընկաւ, և նորանց սպանեց. կարծո՞ւմ էք, թէ նորանք աւելի պարտաւոր էին քան թէ Երուսաղէմումն բնակող բոլոր մարդիկը։ Ո՛չ, 5
ասում եմ ձեզ. այլ եթէ չապաշխարէք, ամենքդ էլ այնպէս կ՚կորչիք։

Ասյս առակն էլ ասաց. Մի 6
մարդ իր այգու մէջ մի թզենի էր տնկել. և եկաւ, նորա վերայ պտուղ որոնելու, և չգտաւ։ Եւ այգեպանին ասաց. 7
Ահա երեք տարի է, որ գալիս եմ պտուղ որոնելու այդ թզե-

ոչ գտանեմ. արդ՝ կտրեա՛ զդա,
ընդէ՞ր և զերկիրդ խափանէ։
8 Եւ պատասխանի ետ և ասէ.
Տէր, թո՛ղ զդա այս ամ ևս.
մինչև շուրջ զդովաւ բրեցից և
9 արկից աղբ. յետերևս արասցէ
պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ ևս
հատցես զդա։

10 Եւ ուսուցանէր ի միում ի
ժողովրդանոցացն ի շաբաթս։
11 Եւ ահա կին մի՝ զոր ունէր այս
հիւանդութեան ամն ութու-
տասն, և էր կարկամեալ, և ոչկա-
12 րէր ամենևին ի վեր հայել։ Եւ
տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց
առ ինքն՝ և ասէ ցնա. Կի՛ն դու՝
արձակեալ ես ի հիւանդութենէ
13 քումմէ։ Եւ եդ ի վերայ նորա
ձեռն, և առժամայն ուղղեցաւ,
և փառաւոր առնէր զԱստուած։
14 Պատասխանի ետ ժողովրդա-
պետն՝ ցասուցեալ թէ ընդէ՞ր ի
շաբաթու բժշկեաց Յիսուս, և
ասէ ցժողովուրդն. Վեց օր է՝
յորս արժան է գործել. յայսն
եկա՛յք բժշկեցարո՛ւք, և մի՛
15 յաւուր շաբաթու. Պատաս-
խանի ետ նմա Տէր՝ և ասէ.
Կեղծաւորք՝ իւրաքանչիւր ոք ի
ձէնջ ի շաբաթու ո՞չ արձակէ
զեզն իւր կամ զէշ ի մսրդ՝ և
16 տանի տայ ջուր։ Իսկ այս՝
դուստր Աբրահամու էր. զոր
կապեաց Սատանայ ահաւադիկ
ութուտասն ամ, ո՞չ էր արժան
արձակել ի կապանաց անտի ի
17 շաբաթու։ Եւ զայս իբրև
նու վերայ, և չեմ գտնում.
կտրիր դորան, ինչո՞ւ դա եր-
կիրն էլ խափանէ։ Այս էլ 8
պատասխանեց և ասաց. Տէր,
այս տարի էլ թող դորան,
մինչև որ դորա չորս կողմովը
փորեմ և աղբ ածեմ։ Յետերևս 9
պտուղ բերէ, ապա եթէ ոչ,
եկող տարին կտրիր դորան։

Եւ ժողովարաններից մէկու- 10
մը սովորեցնում էր շաբաթ
օրը։ Եւ ահա մի կին կար, 11
որ հիւանդութեան ոգի ունէր
տասնութ տարի. և կծկուած
էր, և ամենևին չէր կարում
դէպի վեր նայել։ Եւ Յիսուսը 12
նորան տեսնելով, իրան մօտ
կանչեց և ասաց նորան. Ով
կին, արձակուած ես քո հի-
ւանդութիւնից։ Եւ ձեռքը 13
դրաւ նորա վերայ, և շուտով
ուղղուեցաւ, և փառաւորում
էր Աստուծոյն։ Իսկ ժողո- 14
վարանի գլխաւորը շատ բար-
կացած, որ Յիսուսը շաբաթ
օրը բժշկեց, պատասխանեց և
ասաց ժողովրդին. Վեց օր
կայ, որ նորանցում պէտք է
գործել. հիմա այն օրերը եկէք
բժշկուեցէք, և ոչ թէ շաբաթ
օրը։ Տէրն էլ պատասխանեց 15
նորան և ասաց. Կեղծաւոր,
ձեզանից ամեն մէկը շաբաթ
օրն իր եզը կամ էշը չէ՞ արձա-
կում մսուրիցը և տանում
ջուր տալիս։ Այց սա՝ Աբրա- 16
համի աղջիկը լինելով, որին
սատանան ահա տասնութ տարի

ասէր, յամօթ լինէին ամենեքին
որ հակառակն կային նմա. և
ամենայն ժողովուրդն ուրախ
լինէր ի վերայ ամենայն փա-
ռաւորութեանցն, որ գործէին
ի նմանէ։

18 Եւ ասէր. Ո՞ւմ նման է ար-
քայութիւն Աստուծոյ, և որո՞ւմ
նմանութեան նմանեցուցից զնա։
19 Նման է հատոյ մանանխոյ. զոր
առեալ մարդոյ՝ արկ ի պարտէզ
իւր. աճեաց և եղև ծառ, և
թռչունք երկնից բնակեալ էին
յոստս նորա։

20 Եւ դարձեալ ասէ. Ո՞ւմ
նմանեցուցից զարքայութիւն
21 Աստուծոյ. Նման է խմորոյ՝
զոր առեալ կնոջ թաքուցեալ
երից գրուանց՝ մինչև խմորեցաւ
ամենայն։

22 Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ
գեօղս՝ ուսուցանէր. և ճանա-
պարհ արարեալ Յերուսաղէմ,
23 Ասէ ոմն ցնա. Տէր եթէ սակաւք
իցեն՝ որ ապրելոց իցեն. և նա
24 ասէ ցնոսա. Ջանացարո՛ւք
մտանել ընդ դուռն նեղ. ասեմ՝
ձեզ՝ զի Բազումք խնդրեսցեն
25 մտանել՝ և ոչ կարասցեն։ Յորմէ
հետէ մտցէ տանուտէրն՝ և
փակեսցէ զդուռնն, և ըսկսա-
նիցիք կալ արտաքոյ՝ և բախել
զդուռնն, և ասել. Տէ՛ր Տէր՝

էր, որ կապել էր, արժան չէ՞ր
որ շաբաթ օրն այն կապանքից
արձակուէր։ Եւ երբոր նա 17
այս ասաց, ամօթով էին լինում
ամենքն, որ հակառակում էին
նորան. և բոլոր ժողովուրդն
ուրախանում էր այն ամեն փա-
ռաւոր գործերի համար, որ
նորանով լինում էին։

Եւ ասում էր. Աստուծոյ 18
արքայութիւնն ինչի՞ նման է.
և ի՞նչի նմանեցնեմ նորան։
Մանանեխի հատի նման է, որն 19
մի մարդ առաւ իր պարտէզի
մէջ ցանեց. և մեծացաւ և մեծ
ծառ եղաւ, և երկնքի թռչուն-
ները նորա ճղերի վերայ բնակե-
ցան։

Եւ դարձեալ ասաց. ինչի՞ 20
նմանեցնեմ Աստուծոյ արքա-
յութիւնը. Նման է խմորի, որ 21
նորան մի կին առաւ և երեք
չափ ալիւրի մէջ թաքցրեց,
մինչև որ բոլորը խմորուե-
ցաւ։

Եւ ման էր գալիս քաղաք- 22
ները և գիւղերը՝ և սովորեց-
նում էր. և ճանապարհ ընկած
գնում էր դէպի Երուսաղէմ.
Եւ մէկն ասաց նորան. Տէր, 23
մի՞թէ քիչ են փրկուողները.
նա էլ ասաց նորանց. Ջանք 24
արէք, որ նեղ դռնովը ներս
մտնէք. քանզի՝ ասում եմ ձեզ,
շատերը կուզեն մտնել և չեն
կարենալ։ Յորանից յետոյ որ 25
տան տէրն կելնէ և դուռը
կ՚փակէ. և կ՚սկսէք դուրսը

բաց մեզ. և պատասխանի տուեալ ասիցէ ձեզ Ո՛չ գիտեմ զձեզ
26 ուստի էք: Յայնժամ սկսանիջիք ասել. Կերաք առաջի քո
և արբաք, և ի հրապարակս
27 մեր ուսուցեր: Եւ ասիցէ. Ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ
ուստի էք. ի բաց կացէք յինէն
ամենայն մշակքդ անիրաւու-
28 թեան: Անդ եղիցի լալ և կրճել
ատամանց. յորժամ տեսանիցէք
զԱբրահամ և զԻսահակ և
զՅակովբ և զամենայն մար-
գարէս յարքայութեան Աստու-
ծոյ, և զձեզ հանեալ արտաքս:
29 Եւ եկեսցեն յարևելից և
յարևմտից և ի հիւսիսոյ և ի
հարաւոյ, և բազմեսցին յար-
30 քայութեան Աստուծոյ: Եւ
ահա լցեն յետինք՝ որ եղիցին
առաջինք, և լցեն առաջինք՝ որ
լինիցին յետինք:

31 Ի նմին աւուր մատեան
ոմանք փարիսեցիք, և ասեն
ցնա. Ե՛լ և գնա՝ ասի, զի
Հերովդէս կամի սպանանել
32 զքեզ: Եւ ասէ ցնոսա. Երթայք ասացէք աղուեսուն այն-
միկ. Ահաւասիկ հանեմ դեւս,
և բժշկութիւնս կատարեմ այսօր
և վաղիւ, և յերիր աւուր
33 կատարիմ: Բայց պարտ է այսօր
և վաղիւ և ի միւսում աւուր
գնալ. զի ոչ է մարթ մարգարէի
կորնչիլ արտաքոյ քան զԵրու-
սաղեմ և դուրը թակել և
ասել. Տէր Տէր, բաց մեզ. և
պատասխանելով կ'ասէ ձեզ.
Զեմ ճանաչում ձեզ, Ի՞նչ
տեղից էք: Այն ժամանակ 26
կ'սկսէք ասել. Մենք քո առջև
կերանք և խմեցինք, և դու մեր
հրապարակներումը սովորեցրիր:
Եւ կ'ասէ. Ասում եմ ձեզ, Ես 27
չեմ ճանաչում ձեզ, Ի՞նչ
տեղից էք. հեռու կացէք ինձանից, բոլոր անիրաւութիւն գործողներդ: Այնտեղ կ'լինի 28
լացը և ատամների կրճտելն.
երբոր կ'տեսնէք Աբրահամին և
Իսահակին և Յակոբին և բոլոր
մարգարէներին Աստուծոյ արքայութեան մէջ, իսկ ձեզ՝ դուրս
հանած: Եւ կ'գան արևելքից 29
և արևմտից, և հիւսիսից և հարաւից, և կ'նստեն Աստուծոյ
արքայութիւնումը: Եւ ահա 30
յետիններ կան՝ որ առաջիններ
կ'լինին. և առաջիններ կան՝ որ
յետիններ կ'լինին:
Այն օրումը մի քանի փարի- 31
սեցիք մօտ եկան և Նորան
ասացին. Դուրս եկ և գնա
այստեղից. քանզի Հերոդէս
կամենում է քեզ սպանել: Եւ 32
Նորանց ասաց. Գնացէք ասացէք այն աղուէսին. Ահա դեւեր
եմ հանում և բժշկութիւններ
եմ կատարում այսօր և էգուց.
և երրորդ օրը կ'կատարուիմ:
Սակայն այսօր և էգուց և միւս 33
օրը պէտք է գնամ. քանզի
կարելի չէ որ մի մարգարէ

34 սպանեմ: Երուսաղեմ Երուսա-
ղեմ՝ որ կոտորէիր զմարգարէս.
և քարկոծ առնէիր զառաքեալսն
առ քեզ. քանիցս անգամ կամե-
ցայ ժողովել զորդիս քո, որպէս
հաւ զձագս իւր ընդ թեւովք, և
35 ոչ կամեցարուք: Ահա թողեալ
լիցի ձեզ տուն ձեր: Բայց ասեմ
ձեզ, եթէ Ո՛չ ևս տեսանիցէք
զիս, մինչև ասիցէք՝ օրհնեալ
եկեալն յանուն Տեառն:

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղև ի մտանելն Նորա ի
տուն ուրումն իշխանացն փարի-
սեցւոց ի շաբաթու ուտել հաց,
2 և Նոքա սպասէին նմա. Եւ
ահա այր ոմն էր անդ ջրգողեալ
3 առաջի Նորա: Պատասխանի ետ
Յիսուս՝ և ասէ ցօրինաւորսն և
ցփարիսեցիս. Եթէ Արժա՞ն իցէ
4 ի շաբաթու բժշկել: Եւ Նոքա
լուռ եղեն. և բռնեն հարեալ
զնմանէ՝ բժշկեաց զնա, և
5 արձակեաց: Եւ ասէ ցնոսա.
Ո՞յր ուրուք ի ձէնջ էշ կամ
եզն՝ անկանիցի ի ջրհոր, և ոչ
վաղվաղակի հանիցէ զնա յաւուր
6 շաբաթու: Եւ ոչ կարացին
տալ նմա պատասխանի առ այն:
7 Ասաց և առ կոչնականսն
առակ մի, հայեցեալ թէ զիարդ
բարձընտիր լինէին, ասէ ցնոսա.
8 Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի
Երուսաղէմիցը դուրս կորչի:
Երուսաղէմ, Երուսաղէմ, մար- 34
գարէները կոտորող, և քեզ
մօտ ուղարկուածները քարկոծող. քանի՞ անգամ կամեցայ
քո որդիները ժողովել ինչպէս
հաւն իր ձագերը թեւերի տակն
է ժողովում. և չկամեցաք: Ահա 35
ձեր տունը աւերակ է թողվում
ձեզ. բայց ճշմարիտն ասում
եմ ձեզ, թէ Ինձ էլ չէք տեսնիլ,
մինչև գայ ժամանակն, որ ասէք.
Օրհնեալ է Տիրոջ անունով
եկողը:

ԳԼ. ԺԴ

Եւ եղաւ, երբոր նա մի շա- 1
բաթի օր փարիսեցոց իշխանների
մէկի տունը մտաւ հաց ուտելու,
և Նորանք սպասում էին Նորան:
Եւ ահա մի ջրգողուած մարդ 2
կար Նորա առջև: Եւ Յիսուսը 3
պատասխանեց և օրինականներին
և փարիսեցիներին ասաց. Թէ
Արժա՞ն է շաբաթի օրը բժշկութիւն անել: Եւ Նորանք լռեցին. 4
և բռնեց բժշկեց Նորան և
արձակեց: Եւ պատասխանեց 5
Նորանց և ասաց. Ձեզանից ո՞րի
էշը կամ եզը ջրհորի մէջ ընկնի,
և նա շուտով չի հանիլ Նորան
շաբաթի օրումն: Եւ չկարողա- 6
ցան պատասխանել Նորան այդ
բանի համար:
Եւ այն կանչուած մարդկանց 7
էլ մի առակ խօսեց, տեսնելով
թէ ինչպէս առաջի տեղերն էին

հարսանիս՝ կամ 'ի կոչունս, մի՛
բաղմիցիս յառաջին բարձին. գուցէ պատուականագոյն ևս
բան զքեզ իցէ կոչեցեալ 'ի
9 նմանէ. Եւ եկեալ՝ որ զքեզն և
զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ. Տո՛ւր
սմա տեղի. և ապա սկսանիցիս
ամօթով զյետին տեղին ունել:
10 Այլ յորժամ կոչիցիս, երթիջ-
ի՛ր բաղմիսջի՛ր 'ի յետին տեղւոջ.
զի յորժամ՝ գայցէ որ կոչեացն
զքեզ, ասիցէ ցքեզ. Դարեկամ
'ի վեր մատիր. յայնժամ
եղիցին քեզ փառք առաջի բար-
11 ձակցացն քոց: Զի ամենայն որ
բարձրացուցանէ զանձն, խո-
նարհեսցի. և որ խոնարհեցու-
ցանէ զանձն, բարձրասցի:

12 Ասէ և ցկոչնատէրն. Յորժամ
առնիցես ճաշ կամ՝ ընթրիս, մի՛
կոչեր զբարեկամս քո, և մի՛
զեղբարս քո, և մի՛ զազգա-
կանս քո, և մի՛ զդրացս
քո, և մի՛ զմեծամեծս. զի
մի՛ և նոքա փոխարէն կոչեսցեն
զքեզ, և լինիցի քեզ հատու-
13 ցումն: Այլ յորժամ առնիցես
ընդունելութիւն, կոչեա՛ զաղ-
քատս և զխեղս և զկաղս և
14 զկոյրս: Եւ երանելի լինիցիս.
զի ո՛չ ունին փոխարէն հատու-
ցանելոյ քեզ. և հատուսցի քեզ
փոխարէն 'ի յարութեան ար-
դարոց:

8 ընթրում. և ասաց նորանց.
Երբոր մէկից հարսանիք ես
կանչվում, մի նստիր առաջի
բարձի վերայ. մի գուցէ քեզա-
նից մի առաւել պատուաւորը
լինի կանչուած նորա կողմից:
9 Եւ նա՝ որ քեզ և նորան կանչեց,
գայ և քեզ ասէ. Սորան տեղ
տուր. և այն ժամանակ սկսես
ամօթով վերջի տեղը նստել:
10 Հայց երբոր կանչվում ես,
գնա վերջի տեղը նստիր. որ-
պէսզի, երբոր քեզ կանչողը
գայ, ասէ քեզ. Դարեկամ,
վերև նստիր. այն ժամանակ
քեզ հետ նստողների առջև փառք
11 կ'լինի քեզ: Վասնզի ամեն ով
որ իր անձը բարձրացնում է՝
կ'խոնարհուի. և ով որ իր անձը
խոնարհեցնում է, կ'բարձրա-
նայ:
12 Եւ իրան կանչողին էլ ասաց.
Երբոր ճաշ կամ՝ ընթրիք ես
անում, մի կանչիր քո բարե-
կամներիդ, և ոչ քո եղբայրնե-
րիդ, և ոչ քո ազգականներիդ,
և ոչ քո հարուստ հարևան-
ներիդ, մի գուցէ նորանք էլ
նորա փոխարէն կանչեն քեզ և
հատուցում՝ լինի քեզ: Այլ
13 երբոր հացկերութիւն ես անում,
կանչիր աղքատներին, խեղերին,
կաղերին, կոյրերին: Եւ երանելի
14 կ'լինիս. որովհետև չունին
որ փոխարէն վճարեն քեզ.
քանզի արդարների յարութեան
ժամանակին կ'լինի քեզ հատու-
ցումն:

15 Իբրև լուաւ զայս ոմն 'ի
բաղմականացն՝ ասէ ցնա. Երանի՛
որ կերիցէ ճաշ յարքայութեան
16 Աստուծոյ: Եւ նա ասէ. Այր
ոմն գործեաց ընթրիս, և
17 հրաւիրեաց զբազումս: Եւ
առաքեաց զծառայ իւր 'ի ժամու
ընթրեացն կոչել զհրաւիրեալսն՝
թէ Եկայք, զի ահաւասիկ
18 պատրաստ է ամենայն ինչ: Եւ
սկսան մի ըստ միոջէ՝ ամենեքեան
հրաժարել. առաջինն ասէ.
Արգարակ գնեցի, և հարկ է
ելանել, տեսանել զնա, աղաչեմ
19 զքեզ կա՛լ զիս հրաժարեալ: Եւ
միւսն ասէ. Լուծս հինգ եզանց
գնեցի, և երթամ փորձել
զնոսա, աղաչեմ՝ զքեզ կա՛լ զիս
20 հրաժարեալ: Եւ միւսն ասէ.
Կին ածի, և վասն այնորիկ ո՛չ
21 կարեմ գալ: Եւ եկեալ ծառայն
պատմեաց զայն տեառն իւրում:
Յայնժամ բարկացեալ տանու-
տէրն՝ ասէ ցծառայն իւր. Ե՛լ
վաղվաղակի 'ի հրապարակս և
'ի փողոցս քաղաքիդ, և զաղքատս
և զխեղս և զկաղս և զկոյրս մտցէ
22 այսր: Եւ ասէ ծառայն. Տէր՝
եղև զոր հրամայեցերն, և կայ
23 ևս տեղի: Եւ ասէ տէրն
ցծառայն. Ե՛լ 'ի ճանապարհս
և 'ի ցանգս, և արա՛ այսր
մտանել, զի լցցի տունս իմ:
24 Ասեմ ձեզ, զի Ո՛չ ոք յայնց
կոչեցելոց ճաշակեսցէ յընթ-
րեաց իմոց:

15 Եւ երբոր սեղան նստողներից
մէկն այս բաները լսեց, Նորան
ասաց. Երանի՛ Նորան, որ
Աստուծոյ արքայութիւնումը
հաց կ'ուտէ: Եւ նա ասաց 16
Նորան. Մ'ի մարդ մեծ ընթրիք
արաւ և շատերին հրաւիրեց:
Եւ ընթրիքի ժամանակին իր 17
ծառան ուղարկեց, որ հրաւի-
րածներին ասէ. Եկէք, որով-
հետև արդէն ամենը պատրաստ է:
Եւ ամենքն սկսեցին մէկ մէկ ետ 18
քաշուիլ. առաջինն ասաց նո-
րան. Արգարակ առի, և պէտք
է գնամ՝ Նորան տեսնեմ. աղա-
չում եմ քեզ, ինձ հրաժար-
ուած համարիր: Եւ միւսն 19
ասաց. Հինգ լուծ եզ առի, և
գնում եմ որ Նորանց փորձեմ.
աղաչում եմ քեզ, ինձ հրաժա-
րուած համարիր: Եւ միւսն 20
ասաց. Կին եմ առել, և Նորա
համար չեմ կարող գալ: Եւ 21
այն ծառան եկաւ, այս բաներն
պատմեց իր տիրոջը. այն ժամա-
նակ տան տէրը բարկացած ասաց
իր ծառային. Դուրս գնա
շուտով քաղաքի հրապարակ-
ները և փողոցները, և աղքատ-
ներին և խեղերին, և կաղերին
և կոյրերին մտցրու այստեղ:
Եւ ծառան ասաց. Տէր, 22
եղաւ ինչպէս հրամայեցիր, և
դեռ էլ տեղ կայ: Եւ տէրն 23
ասաց ծառային. Դուրս գնա
ճանապարհները և ցանգերը,
և ստիպիր այս տեղ մտնեն, որ
իմ տունը լցուի: Վասնզի ասում 24

25 Եւ երթային ընդ նմա ժողո-
վուրդք բազումք. դարձաւ՝ և
26 ասէ ցնոսա։ Եթէ ոք գայ առ
իս՝ և ոչ ատեայ զհայր իւր և
զմայր և զկին և զորդիս և զեղ-
բարս և զքոյրս, նա և զանձն ևս
իւր, ոչ կարէ իմ աշակերտ
27 լինել։ Զի որ ոչ բառնայ
զխաչ իւր՝ և գայ զկնի իմ, ոչ
28 կարէ իմ աշակերտ լինել։ Որ
ոք ՝ի ձէնջ կամիցի շինել աշտա-
րակ, և ոչ նախ նստեալ հա-
մարիցի զծախսն՝ եթէ ունիցի
29 բաւական ՝ի կատարումն. Զի
գուցէ իբրև արկանիցէ հիմն՝ և
ոչ կարիցէ կատարել, ամենեքին
որ տեսանիցեն, սկսանիցին ծաղր
30 առնել զնա, Եւ ասել. Թէ
Այս այր սկսաւ շինել, և ոչ
31 կարաց կատարել։ Կամ որ
թագաւոր՝ երթեալ տայցէ
պատերազմ ընդ այլում թա-
գաւորի. և ոչ նստեալ նախ
խորհիցի, եթէ կարօղ իցէ տասն
հազարաւ զդէմ ունել զայնորիկ՝
որ գայցէ ՝ի վերայ նորա քսան
32 հազարաւ։ Այլապէս թէ ոչ՝ մինչ-
զեւ հեռագոյն իցէ, հրեշտա-
կութիւն առաքեալ՝ աղաչեսցէ
33 ՝ի խաղաղութիւն։ Արդ՝ այսպէս
ամենայն ոք ՝ի ձէնջ՝ որ ոչ հրաժ-
արեսցէ յամենայն ընչից
իւրոց, ոչ կարէ իմ աշակերտ
34 լինել։ Բարւոք է աղ. ապա
թէ աղն անհամեսցի. ի՞նչ համ-

եմ ձեզ, թէ այն կանչուած
մարդկանցից ոչ մէկն իմ ընթ-
ացքը չի ճաշակիլ։
Եւ շատ ժողովուրդներ գնում 25
էին նորա հետ. և դարձաւ
նորանց ասաց. Եթէ մէկն ինձ 26
մօտ գայ, և չատէ իր հօրը և
մօրը, կնոջը և որդիքներին, և
եղբայրներին և քոյրերին, և
հէնց իր անձին էլ. նա չէ կա-
րող իմ աշակերտ լինիլ։ Եւ 27
ով որ իր խաչը վերը չառնէ և
իմ ետևից գայ, նա չէ կարող
իմ աշակերտ լինիլ։ Ո՞վ ասնղի 28
ձեզանից ոմ է, որ կամենայ
աշտարակ շինել, և առաջ չ՚նստի
և ծախսը հաշուէ թէ աւարտե-
լու համար բաւական ունի։
Որ մի գուցէ երբոր հիմքը դնէ 29
և չ՚կարողանայ աւարտել, ամեն
տեսնողներն սկսեն ծաղր անել
նորան, Եւ ասել. թէ այս 30
մարդն սկսեց շինել, և չըկարո-
ղացաւ աւարտել։ Կամ որ 31
թագաւոր է, որ գնայ ուրիշ
թագաւորի հետ պատերազմ
անելու. մի՞թէ չնստել առաջ
խորհուրդ անել՝ թէ տասն հա-
զարով կարող է դէմ կենալ
նորան, որ քսան հազարով
գալիս է իր վերայ։ Այլապէս թէ 32
ոչ, քանի որ նա հեռու է,
պատգամաւոր կ՚ուղարկէ՝ և
կ՚աղաչէ, որ խաղաղութիւն անէ։
Արդ այսպէս էլ ձեզանից ամեն 33
մէկն, որ իր բոլոր ապրանքիցը
չ՚հրաժարուի, չէ կարող ինձ
աշակերտ լինել։ Աղը լա- բան 34

35 մեսցի։ Ո՛չ յերկիր՝ և ոչ յաղբ
է պիտանացու, այլ ընկենուլ
զնա արտաքս։ Որ ունիցի
ականջս լսելոյ լուիցէ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ էին մերձ առ նա ամենայն
մաքսաւորք և մեղաւորք՝ լսել ՝ի
2 նմանէ։ Տրտնջէին փարիսեցիքն
և դպիրքն՝ և ասէին. Ընդէ՞ր սա
զմեղաւորս ընդունի՝ և ուտէ ընդ
նոսա։

3 Ասաց առ նոսա զառակս
4 զայս։ Որ ոք իցէ ՝ի ձէնջ մարդ՝
որոյ իցէ հարիւր ոչխար, և
կորուսանիցէ մի ՝ի նոցանէ. ոչ
թողուցու զիննսուն և զիններ
յանապատի, և երթայցէ զհետ
կորուսելոյն՝ մինչև գտանիցէ
5 զնա։ Եւ իբրև գտանէ, դնէ
զնա ՝ի վերայ ուսոց իւրոց
6 խնդալով, Եւ երթայ ՝ի տուն.
կոչէ զբարեկամս և զդրացիս, և
ասէ ցնոսա. Ուրախ եղերուք
ընդ իս, զի գտի զոչխարս իմ
7 զկորուսեալ։ Ասեմ ձեզ. զի
Այսպէս է ուրախութիւն յեր-
կինս վասն միոյ մեղաւորի որ
ապաշխարիցէ՝ քան վասն իննսուն
և իններ արդարոց՝ որոց չիցէ
8 պիտոյ ապաշխարութիւն։ Կամ
ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք
տասն. և եթէ կորուսանիցէ
դրամ մի, ոչ լուցանիցէ ճրագ,

է. բայց եթէ աղն անհամանայ,
ի՞նչով պիտի համեղանայ։ Ոչ 35
հողի համար է պիտանի և ոչ
աղբի համար, այլ դուրս կ՚գցեն
նորան. ով որ լսելու ականջ
ունի, թող լսէ։

ԳԼ. ԺԵ

Եւ բոլոր մաքսաւորներն և 1
մեղաւորները մօտենում էին
նորան, որ լսեն նորանից։ Եւ 2
փարիսեցիներն և դպիրները
տրտնջում էին և ասում. Թէ
Այս ընդունում է մեղաւորնե-
րին և նորանց հետ ուտում։
Եւ այս առակն ասաց նո- 3
րանց։ Ձեզանից ո՞վ է այն 4
մարդն, որ հարիւր ոչխար ունե-
նայ, և նորանցից մէկը կորցնէ.
չի՞ թողիլ իննսուն և իններն անա-
պատում, և այն կորածի ետևից
գնալ, մինչև որ գտնէ նորան։
Եւ երբոր գտնէ, ուրախանա- 5
լով իր ուսերի վերայ կ՚դնէ
նորան. Եւ տուն գալով, բա- 6
րեկամներին և դրացիներին
կ՚կանչէ և նորանց կ՚ասէ. Ուրա-
խացէք ինձ հետ. վասնզի իմ
կորած ոչխարը գտայ։ Ասում 7
եմ ձեզ, թէ այսպէս ուրախու-
թիւն կ՚լինի երկնքում մէկ
մեղաւորի համար, որ ապաշ-
խարէ, քան թէ իննսուն և իններ
արդարների համար, որոնց ա-
պաշխարութիւն պէտք չէ։ Կամ 8
ո՞վ է այն կինն, որ տասն դրամ
ունենայ, և եթէ մէկ դրամ կոր-

և ածիցէ աւել ՝ի տան, և
խնդրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ:
9 Եւ իբրև գտանէ, կոչէ զբարե-
կամս և զդրացիս՝ և ասէ.
Ուրախ լերուք ընդ իս, զի գտի
10 զդրամն իմ՝ զոր կորուսի: Այն-
պէս՝ ասեմ ձեզ, Ուրախութիւն
եղիցի առաջի հրեշտակաց Աս-
տուծոյ ՝ի վերայ միոյ մեղաւորի՝
որ ապաշխարիցէ:

11 Եւ ասէ. Այն միջէն երկու
12 որդիք. Այսպէս կրտսերն ՝ի նոցանէ
ցհայրն. Հայր՝ տուր ինձ
բաժին, որ անկանի յընչից. և
նա բաժանեաց նոցա զկեանսն:
13 Եւ յետ ոչ բազում աւուրց՝
ժողովեալ զամենայն կրտսեր
որդեայն՝ գնաց յաշխարհ հեռի.
և անդ վատնեաց զինչս իւր,
զի կեայր անառակութեամբ:
14 Եւ իբրև սպառեաց զամենայն,
եղև սով սաստիկ յաշխարհին
յայնմիկ, և սկսաւ ինքն չքաւո-
15 րել: Եւ գնացեալ յարեցաւ ՝ի
մի ոմն ՝ի քաղաքացւոց աշխար-
հին այնորիկ. և յղեաց զնա
յագարակ իւր՝ արածել խոզս:
16 Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր
յեղջերէն զոր խոզքն ուտէին, և
17 ոչ ոք տայր նմա: Եւ եկեալ ՝ի
միտս իւր՝ ասէ. Քանի՞ վարձ-
կանք իցեն ՝ի տան հօր իմոյ
հացալիցք, և ես աստ սովամահ
18 կորնչիմ: Յարուցեալ գնացից
առ հայր իմ, և ասացից ցնա.
Հայր՝ մեղայ յերկինս և առաջի
19 քո. Եւ ոչ ևս եմ արժանի
ցընչէ, ճրագ չի՞ վառիլ և տունն
աւելիլ և սաստիկ որոնիլ, մինչև
որ գտանէ: Եւ երբ որ կ՚գտնէ, 9
բարեկամներին և դրացիներին
կ՚կանչէ և կ՚ասէ. Ուրախացէք
ինձ հետ. վասնզի դրամը գտայ,
որ կորցրել էի: Ասում եմ 10
ձեզ, այսպէս էլ Աստուծոյ
հրեշտակների առջև ուրախու-
թիւն կ՚լինի մէկ մեղաւորի հա-
մար որ կ՚ապաշխարէ:

Եւ ասաց. Մի՞ մարդ երկու 11
որդի ունէր. Եւ նորանցից 12
փոքրն ասաց հօրը. Հայր,
տուր ինձ ինչ որ բաժին կ՚հասնէ
ինձ ապրանքներից, և նա իր
ապրանքը բաժանեց նորանց:
Եւ շատ օր չ՚անցած՝ փոքր 13
որդին ամեն բաները ժողովեց
հեռու երկիր գնաց. և այնտեղ
իր ստացուածքը վատնեց, անա-
ռակ ապրելով. Եւ երբ որ 14
բոլորը հատցրեց, սաստիկ սով
եղաւ այն երկրումը և ինքն
սկսեց չքաւորել: Եւ գնաց 15
այն երկրի քաղաքացիների մէկի
մօտ մտաւ. և նա նորան ուղար-
կեց իր յանդն, որ խոզ արա-
ծեցնէ: Եւ նա ցանկանում էր՝ 16
իր փորն լցնել այն եղջիւրնե-
րովն, որ խոզերն ուտում էին,
բայց ոչ ոք չէր տալիս նո-
րան: Եւ ինքն իրան գա- 17
լով ասաց. Քանի՞ վարձկաններ
ունի իմ հայրը՝ հացով լցուած.
և ես այս տեղ սովամահ կոր-
չում եմ: Կեր կենամ՝ գնամ 18
իմ հօր մօտ, և նորան ասեմ.

կոչիլ որդի քո, արա զիս իբրև
20 զմի ՝ի վարձկանաց քոց: Եւ
յարուցեալ եկն առ հայր իւր.
և մինչդեռ հեռագոյն էր, ետես
զնա հայրն՝ և գթացաւ. յար-
եաւ և ընթացաւ ընդ առաջ.
անկաւ զպարանոցաւն նորա, և
21 համբուրեաց զնա: Եւ ասէ
ցնա որդին. Հայր՝ մեղայ յեր-
կինս և առաջի քո, ոչ ևս եմ
22 արժանի կոչիլ որդի քո: Ասէ
հայրն ցծառայս իւր. Կաղվա-
զակի հանէք զպատմուճանն
առաջին, և ագուցէք նմա, և
տուք զմատանին ՝ի ձեռն նորա,
23 և կօշիկս յոտս նորա. Եւ ածէք
զեզն պարարակ՝ զենէք, կերի-
24 ցուք և ուրախ լիցուք. Զի
այս որդի իմ մեռեալ էր՝ և
եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ.
25 և սկսան ուրախ լինել: Եւ էր
երէց որդին նորա յագարակի.
և մինչդեռ գայր և մերձ եղև ՝ի
տունն, լուաւ զձայն երգոց և
26 զպարուց. Եւ կոչեցեալ առ
ինքն զմի ՝ի ծառայիցն՝ հարցա-
27 նէր թէ զի՞նչ իցէ այն: Եւ նա
ասէ ցնա. զի Եղբայր քո եկեալ
է, և եղեն հայր քո զեզն պա-
րարակ, զի ողջամբ ընկալաւ
28 զնա: Բարկացաւ՝ և ոչ կամէր
մտանել, և հայրն ելեալ ար-
29 տաքս՝ աղաչէր զնա: Պատաս-
խանի ետ և ասէ ցհայրն. Այս
քանի ամք են՝ զի ծառայեմ քեզ,
և երբէք զպատուիրանաւ քով
ոչ անցի. ուլ մի երբէք ոչ
ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ

հայր, մեղայ երկնքի դէմ և
քո առջև: Եւ այլևս արժանի 19
չեմ՝ քո որդի կոչուելու. ինձ
քո վարձկանների մէկի պէս
արա: Եւ վերկացաւ եկաւ իր 20
հօր մօտ: Եւ դեռ որ նա
հեռու էր, հայրը տեսաւ նորան
և գութը շարժուեց. և վազեց՝
նորա վզովն ընկաւ, և համ-
բուրեց նորան: Եւ որդին ասաց 21
նորան. Հայր, մեղանչեցի երա-
կընքի դէմ և քո առջև, և այլ
ևս չեմ արժանի քո որդի
կոչուելու: Հայրն էլ ասաց 22
իր ծառաներին. Առաջի պատ-
մուճանը հանեցէք և հագցրէք
նորան, և մատանի դրէք նորա
ձեռին, և կօշիկներ նորա ոտնե-
րին: Եւ մնացու եզը բերէք 23
մորթեցէք, և ուտենք՝ ուրախ
լինինք: Վասնզի այս իմ որդին 24
մեռած էր, և կենդանացաւ. և
կորած էր, և գտնուեցաւ. և
սկսեցին զուարճանալ: Եւ նորա 25
մեծ որդին յանդումն էր. և
երբոր եկաւ տանը մօտեցաւ,
երգերի և պար գալու ձայնը
լսեց: Եւ ծառաներից մէկին 26
կանչեց իրան մօտ, հարցնում
էր թէ այդ ինչ է: Նա էլ 27
ասաց նորան. Թէ Եղբայրդ
եկել է, և քո հայրը մնացու
եզը մորթեց, որովհետև ողջ
և առողջ ընդունեց նորան: Եւ 28
նա բարկացաւ, և չէր ուզում
ներս մտնել, բայց հայրը դուրս
եկաւ, աղաչում էր նորան:
Նա էլ պատասխանեց և ասաց 29

30 բարեկամն իմ։ Յորժամ եկն որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զներս դմա
31 զեղջն պարարակ։ Եւ ասէ ցնա. Որդեակ՝ դու Հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո
32 է. Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայրդ քո այս մեռեալ էր՝ և եկեաց, կորուսեալ էր՝ և գտաւ։

ԳԼ. ԺԸ.

1 Եւ ասէ առ աշակերտսն. Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես. և եղև զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատ-
2 նիցէ զինչս նորա։ Կոչեաց՝ և ասէ ցնա. Զի՞նչ է այս զոր լսեմս զքէն, տուր զՀամար տնտեսութեան քո. զի ոչ ևս
3 կարես լինել տնտես։ Ասէ ընդ միտս իւր տնտեսն. Զի՞նչ գործեցից, զի տէր իմ՝ Հանէ զտնտեսութիւնս. գործել՝ ոչ կարեմ. մուրանալ՝ ամաչեմ։
4 Գիտեմ զինչ արարից. զի յորժամ ՝ի բաց լինիցիմ՝ ՝ի տնտեսութենէս՝ ընկալցին զիս
5 ՝ի տունս իւրեանց։ Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ՝ի

հօրը. Ահա այսքան տարի է, որ քեզ ծառայում եմ, և քո պատուէրից երբէք դուրս չեմ եկել. բայց ինձ երբէք մի ուլ չտուիր, որ իմ բարեկամների հետ ուրախ լինիմ։ Իսկ երբոր 30
այդ քո որդին եկաւ, որ քո ապրանքը պոռնիկների հետ կերաւ, մնացու եղը մորթեցիր դորա համար։ Նա էլ ասաց 31
Նորան. Որդեակ, դու ամեն ժամանակ ինձ հետ ես, և ամեն ինչ որ իմս է՝ քոնն է։ Այց 32
ուրախ լինել և խնդալ պէտք էր. վասնզի այս քո եղբայրը մեռած էր և կենդանացաւ. կորած էր և գտնուեցաւ։

ԳԼ. ԺԸ.

Եւ իր աշակերտներին էլ 1
ասաց. Մի մարդ կար հարուստ, որ մի տնտես ունէր. և Նորանից գանգատ եղաւ Նորան, իբր թէ նա վատնում է Նորա ստացուածքը։ Եւ Նորան կանչեց 2
և ասաց. Այ ի՞նչ է որ լսում եմ քեզանից. տուր քո տնտեսութեան համարը. վասնզի այլ ևս կարող չես տնտես լինել։ Տնտեսն էլ իր մտքում ասաց. 3
Ի՞նչ անեմ, որ իմ տէրը տընտեսութիւնն ինձանից առնում է. երկիր հերկել չեմ կարող, մուրանալ ամաչում եմ։ Գիտեմ 4
ինչ կ՚անեմ, որ՝ երբոր տընտեսութիւնից դուրս գամ, մարդիկ կ՚ընդունեն ինձ իրանց տներում։

պարտապանաց տեառն իւրոյ, ասէ ցառաջինն. Քանի՞ ինչ
6 պարտիս տեառն իմոյ։ Եւ նա ասէ. Հարիւր մար ձիթոյ. ասէ ցնա, Կա՛ զգիր քո, և նիստ գրեա վաղվաղակի յիսուն։
7 Դարձեալ ասէ ցմիւսն. Դու քանի՞ ինչ պարտիս. և նա ասէ. Հարիւր քոռ ցորենոյ. և ասէ ցնա. Կա՛ զգիր քո, և նի՛ստ
8 գրեա ութսուն։ Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար. զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս
9 լուսոյ յազգս իւրեանց։ Եւ ես ձեզ ասեմ. Արարէք ձեզ բարեկամս ՝ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասիցէ այն՝ ընկալցին զձեզ ՝ի
10 յարկսն յաւիտենականս։ Որ ՝ի փոքուն հաւատարիմ է, և ՝ի բազմին հաւատարիմ է, և որ ՝ի փոքուն անիրաւ է, և ՝ի
11 բազմին անիրաւ է։ Իսկ արդ՝ եթէ յանիրաւ մամոնային չեղէք հաւատարիմք, զճշմարիտն ձեզ
12 ո՞ հաւատասցէ։ Եւ եթէ յօտարին չեղէք հաւատարիմք, զձերն ո՞տացէ ձեզ։

13 Ոչ ոք ծառայ կարէ երկուց տէրանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ՝ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ, ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի։

Եւ իր տիրոջ պարտականներին 5
մէկ մէկ իրան մօտ կանչեց և ասաց առաջինին. Ինչքան ես
6 պարտական իմ տիրոջը։ Նա էլ ասաց. Հարիւր մար ձէթ. և Նորան ասաց. առ գիրդ, և նստիր՝ շուտով գրիր յիսուն։
7 Յետոյ միւսին ասաց. Դու ինչքան ես պարտական. Նա էլ ասաց. Հարիւր քոռ ցորեն. և Նորան ասաց. Առ գիրդ և գրիր
8 ութսուն։ Եւ տէրը գովեց անիրաւ տնտեսին, որ իմաստութիւնով գործեց. վասնզի այս աշխարհքի որդիքը լուսոյ որդիներից աւելի իմաստուն են
9 իրանց ցեղի մէջ։ Եւ ես ասում եմ ձեզ. Անիրաւ մամոնայիցը բարեկամներ արէք ձեզ համար. որ երբոր պակասուիք, յաւիտենական բնակարանների մէջ կ՚ընդունեն ձեզ։ Որ
10 ինչ բանի մէջ հաւատարիմը, շատ բանի մէջ էլ հաւատարիմ է. և քիչ բանի մէջ անիրաւը, շատ բանի
11 մէջ էլ անիրաւ է։ Արդ թէ որ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտն ո՞վ կ՚տայ ձեր ձեռքը։ Եւ եթէ
12 օտար բանի մէջ հաւատարիմ չեղաք, ձերն ո՞վ կ՚տայ ձեզ։

13 Ոչ մի ծառայ չէ կարող երկու տիրոջ ծառայել. վասնզի կամ մէկին կ՚ատէ և միւսին կ՚սիրէ. կամ մէկին կ՚պատուէ և միւսին կ՚արհամարհէ. կարող չէք Աստուծոյ ծառայել և մամոնային։

14 Իբրև լսէին դայս ամենայն փարիսեցիքն՝ քանզի արծաթասէրք էին, և անդոսնէին
15 զնա։ Եւ ասէ ցնոսա. Դուք էք որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն Աստուած գիտէ զսիրտս ձեր. զի որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ։
16 Օրէնքն և մարգարէքն մինչև ցՅովհաննէս. յայնմ հետէ արքայութիւն Աստուծոյ աւետարանի, և ամենայն ոք զնա
17 բռնաբարէ։ Դիւրին իցէ երկնից և երկրի անցանել, քան յօրինացն միոյ նշանախնդրի անկանել։
18 Ամենայն որ արձակէ զկին իւր՝ և առնէ այլ, շնայ. և որ զարձակեալն առնէ, շնայ։

19 Այր ոմն էր մեծատուն, և ագանէր բեհեղս և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առա-
20 տապէս։ Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս՝ անկեալ զնէրառդրան
21 Նորա վիրաւորեալ. Եւ ցանկայր յագել՝ի փշրանացն՝ որ անկանէին՝ի սեղանոյ մեծատանն. այլ և շունք ևս գային, և
22 լիզուին զվէրս նորա։ Եւ եղև մեռանել աղքատին, և տանել հրեշտակաց զնա՝ի գոգն Աբրահամու. մեռաւ և մեծատունն
23 և թաղեցաւ։ Եւ՝ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ՝ի տանջանսն էր. ետես զԱբրա-

Այս բոլոր բաները լսում էին փարիսեցիները, որ արծաթասէր էին, և ծիծաղում էին նորա վերայ։ Եւ նորանց ասաց. Դուք էք, որ մարդկանց առջև ձեր անձերն արդարացնում էք, բայց Աստուած գիտէ ձեր սրտերը. վասնզի մարդկանց առջև բարձրը պիղծ է Աստուծոյ առջև։ Օրէնքը և մարգարէքը մինչև Յովհաննէսն են. նորանից յետոյ Աստուծոյ արքայութիւնն է աւետարանվում, և ամեն մարդ ուժով է մտնում նորա մէջ։ Եւ աւելի հեշտ է որ երկինքն և երկիրս անցնեն, քան թէ օրէնքի մէկ պզտիկ նշանագիրը վայր ընկնէ։ Ամեն ով որ արձակում է իր կինը և ուրիշն առնում, շնութիւն է գործում, և ամեն որ արձակուածն առնում է, շնութիւն է գործում։

Եւ մի մարդ կար հարուստ, և շատ աղնիւ ծիրանի և բեհեղ էր հագնում. և ամեն օր զուարճութիւն էր անում փառաւոր։ Մի աղքատ մարդ էլ կար, անունը Ղազարոս. որ նորա դրան մօտ գցուած էր խոցերով լիքն. Եւ ցանկանում էր իրան կշտացնել այն փշրանքներից, որ հարուստի սեղանից ընկնում էին. այլ և շներն էլ գալիս էին և նորա խոցերը լիզում էին։ Եւ եղաւ որ աղքատը մեռաւ, և հրեշտակները տարան նորան Աբրահամի գոգը. հարուստն էլ մեռաւ՝ և թաղուեցաւ։ Եւ

համ՝ի հեռաստանէ, և զԼազարոս՝ի գոգ նորա հանգուցեալ։
24 Եւ նա աղաղակեաց և ասէ. Այր Աբրահամ՝ ողորմեա՛ ինձ, և առաքեա՛ զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ՝ի ջուր, և զովացուցցէ զլեզու իմ, զի պապակիմ՝ի
25 տապդ սատի։ Եւ ասէ ցնա Աբրահամ. Ո՛րդեակ՝ յիշեա՛ զի ընկալար անդրէն զբարիս քո՝ի կեանսն քում։ և Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ սա աստ մխիթարի, և դու այդր
26 պապակիս։ Եւ՝ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցին աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն, և ոչ այսր՝ի առ մեզ անցանել։
27 Եւ ասէ. Արդ աղաչեմ զքեզ Հայր, զի արձակեսցես զդա՝ի
28 տուն հօր իմոյ. Են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի տացէ նոցա վկայութիւն. զի մի՛ և նոքա գայցեն յայս տեղի
29 տանջանաց։ Եւ ասէ Աբրահամ. Ունին զՄովսէս և զմարգարէս, նոցա լուիցեն։ Եւ նա ասէ.
30 Ո՛չ՝ Հայր Աբրահամ, բայց եթէ՝ի մեռելոց ոք երթիցէ առ
31 նոսա, և ապաշխարեսցեն։ Եւ ասէ ցնա. Եթէ Մովսէսի և մարգարէիցն ոչ լսեն, և ոչ թէ՝ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն։

դժոխքումն՝ մինչ տանջանքի մէջ էր գտնվում, իր աչքերը բարձրացրեց, Աբրահամին տեսաւ հեռուանց, և Ղազարոսին էլ նորա գոգումը։ Եւ նա աղաղակեց և ասաց. Այր Աբրահամ, ինձ ողորմիր, և Ղազարոսին ուղարկիր, որ իր մատի ծայրը թրջէ ջրով, և իմ լեզուն հովացնէ. վասնզի այս կրակի բոցի մէջ տանջվում եմ։ Աբրահամն էլ ասաց. Որդեակ, յիշիր, որ դու ընդունեցիր քո բարիքը քո կեանքումը, և նմանապէս էլ Ղազարոսը՝ չարչարանքները. և հիմա սա այս տեղ մխիթարվում է, իսկ դու տանջվում ես։ Եւ՝ի վերայ այսր ամենայնի մեր և ձեր մէջ մեծ անդունդ է հաստատուած, որ այս տեղից ձեզ մօտ անցնել ուզողները չկարողանան, և ոչ էլ այդ տեղից մեզ մօտ անցնեն։ Եւ ասաց. Ուրեմն աղաչում եմ քեզ, Հայր, որ դորան ուղարկես իմ հօր տունը։ Վասն զի ես հինգ եղբայր ունիմ. որ նորանց վկայութիւն տայ, որ նորանք էլ չգան այս տանջանքի տեղը։ Աբրահամն ասաց նորան, Նորանք Մովսէսին և մարգարէներին ունին, թող նորանց լսեն։ Նա էլ ասաց. Ոչ, Հայր Աբրահամ, այլ եթէ մեռելներից մէկը նորանց մօտ գնայ, կ՝ապաշխարեն։ Եւ նորան ասաց. Եթէ Մովսէսին և մարգարէներին ականջ չեն դնում,

ԳԼ. ԺԱ.

1 Ասաց և առ աշակերտսն իւր. Ո՛չ է մարթ չգալ գայթագղուլթեան. բայց վա՛յ այնմիկ է՝
2 յոյր ձեռն գայցէ: Լաւ էր նմա՝ թէ վէմ երկանաքար կախէր զպարանոցէ նորա՝ և անկանէր ՚ի ծով, քան թէ գայթագղեցուցանէ զմի ոք ՚ի փոքրկանցս յայսցանէ:
3 Զգո՛յշ կացէք անձանց. եթէ մեղիցէ եղբայր քո, սաստեա՛ նմա. և եթէ ապաշխարիցէ,
4 թո՛ղ նմա: Եւ եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, և եօթն անգամ դարձցի ՚ի քեզ՝ և ասիցէ, Ապաշխարեմ, թողցես նմա:
5 Եւ ասեն առաքեալքն ցՏէր.
6 Յաւելլ մեզ հաւատս: Եւ ասէ Տէր. Եթէ ունիցիք հաւատս քան զՀատ մանանխոյ, և ասիցէք թզենւոյս այսմիկ, Խլեա՛ց և տնկեա՛ց ՚ի ծովու, և հնա-
7 զանդեսցի ձեզ:
Իսկ ո՞վ ոք ՚ի ձէնջ, որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրև մտանիցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի, թէ
8 Ելանց բազմեա՛ց: Այլ ո՞չ ասիցէ ցնա, թէ Պատրաստեա զինչ ընթրեալոց իցեմ, և գօտի ածեալ պաշտեա՛ զիս՝ մինչև կերայց և արբից, և ապա կերիցես և արբի-
9 ցես դու: Այ՞ի թէ շնո՞րհ ինչ ունի-
չեն էլ համոզուիլ, եթէ մեռելներից մէկը յարութիւն առնէ:

ԳԼ. ԺԱ.

1 Եւ աշակերտներին ասաց. Անկարելի է, որ գայթակղութիւններ չ՚գան. բայց վայ նորան որի ձեռովը կ՚գան: Աւելի
2 լաւ է նորան, որ նորա վզիցը մի իշու ջաղացի քար կախուէր և ծովը գցուէր, քան թէ այս փոքրներից մէկին գայթակղեցնէ:
3 Զգոյշ կացէք անձերից: Եթէ քո եղբայրը մեղանչէ քեզ դէմ, յանդիմանիր նորան. և եթէ ապաշխարէ, ներիր նորան:
4 Եւ եթէ օրն եօթն անգամ քեզ դէմ մեղանչէ՝ և եօթն անգամ քեզ մօտ դառնայ և ասէ՝ Ապաշխարում եմ, ներիր նորան:
5 Եւ առաքեալներն ասացին Տիրոջն. Ա՛ր հաւատքն աւելցրու:
6 Եւ Տէրն ասաց. Եթէ մանանեխի հատի չափ հաւատք ունենայիք, և այս թզենուն կ՚ասէիք. Պոկուիր և ծովի մէջ տնկուիր, և կ՚հնազանդուէր ձեզ:
7 Բայց ձեզանից ո՞վ է նա, որ մի հողագործ կամ հովիւ ծառայ ունենայ, որ երբոր յանդիցը գայ պուն մտնէ, շուտով ասէ
8 նորան, թէ Եկ սեղան նստիր: Այլ չէ՞ ասիլ նորան, Լէ պատրաստիր ինչ որ իրիկունս պիտի ուտեմ, և գօտիդ կապիր ինձ ծառայիր, մինչև որ ուտեմ և
9 խմեմ, և յետոյ դու էլ կ՚ուտես
ցի ծառային այնմիկ, զի արար զամենայն հրամանն: Նոյնպէս և դուք՝ յորժամ առնիցէք զամենայն հրամայեալն ձեզ, ասասջի՛ք թէ Ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել, արարաք:

11 Եւ եղև մինչև երթայր նա Յերուսաղէմ, և ինքն անցանէր
12 ընդ մէջ Սամարեայ և Գալիլեացւոց: Եւ մինչդեռ մտանէր ՚ի գեօղ ուրեմն, պատահեցան նմա տասն այր բորոտ որք
13 կացին ՚ի հեռաստանէ. Բարձին զձայնս՝ և ասեն. Յիսո՛ւս Վարդապետ՝ ողորմեա՛ց մեզ:
14 Եւ իբրև ետես զնոսա, ասէ ցնոսա. Երթա՛յք ցուցէ՛ք զանձինս քահանայիցն. և եղև իբրև գնացին, առժամայն սրբեցան:
15 Ա՛ի ոմն ՚ի նոցանէ իբրև ետես՝ եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն՝ ՚ի ձայն մեծ փառաւորառնէր զԱստուած. Ընկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց առ ոտս
17 նորա, և գոհանայր զնմանէ. և ինքն էր Սամարացի: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ո՞չ տասն սոքա սրբեցան, իսկ արդ՝
18 ինուինքն ո՞ւր են: Ո՛չ գտան
19 դառնալ տալ փառս Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս: Եւ ասէ ցնա. Արի՛ գնա՛. զի հաւատք քո կենդանացին զքեզ:

և կ՚խմես: Ա՞յրթէ այն ծա- 9
ռայիցը շնորհակալ կ՚լինի, որ այն բոլոր իրան հրամայուածներն արաւ. չ՚կարծեմ: Այն- 10
պէս էլ դուք, երբոր բոլոր ձեզ հրամայուած բաներն անէք, ասացէք, թէ Ա՛նք անպիտան ծառաներ ենք. վասն զի այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու:
Եւ եղաւ՝ երբոր նա Երու- 11
սաղէմ՝ էր գնում, ինքն Սամարիայի և Գալիլեայի միջովն էր անցնում: Եւ նա մի գիւղ 12
մտնելիս, տասն բորոտ մարդիկ պատահեցան նորան, որ հեռուանց կանգնեցին, Եւ իրանց 13
ձայնը բարձրացին և ասացին. Յիսուս՝ Վարդապետ, մեզ ողորմիր: Եւ երբոր տեսաւ՝ 14
ասաց նորանց. Գնացէք ձեր անձերը քահանաներին ցոյց տուէք. և եղաւ, որ նորանք գնալիս՝ սրբուեցան. Եւ նո- 15
րանցից մէկն, երբոր տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դարձաւ բարձր ձայնով փառաւորում էր Աստուծոյն: Եւ իր երեսի 16
վերայ ընկաւ նորա ոտների առջև, և գոհանում էր նորանից. և ինքն Սամարացի էր: Յիսուսն էլ պատասխանեց և 17
ասաց. Չէ՞ որ տասն էլ սրբուեցան. ապա այն ինն ո՞ւր են: Չ՚գտնուեցան ետ դառնողներ, 18
որ Աստուծոյն փառք տան, բացի այս այլազգին: Եւ 19
ասաց նորան. Վեր կաց՝

20 Իբրև հարցաւ ՝ի փարիսեցւոցն՝ թէ Ե՞րբ գայցէ արքայութիւն Աստուծոյ. պատասխանի ետ նոցա՝ և ասէ. Ո՛չ գայ արքայութիւն Աստուծոյ
21 խտրանօք. Եւ չասիցեն թէ Ահաւասիկ աստ է՝ կամ՝ անդ. զի ահա արքայութիւն Աստուծոյ ՝ի ներքս ՝ի ձեզ է:

22 Ասաց և առ աշակերտսն. Եկեսցին աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրսն Որդոյ մարդոյ տեսա-
23 նել՝ և ոչ տեսանիցէք: Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ Ահաւասիկ է՝ կամ՝ անդ, մի երթայցէք զհետ:
24 Զի որպէս փայլակն փայլատակեալ ՝ի ներքոյ երկնից՝ ընդ երկնիւք ծագիցէ, նոյնպէս և Որդի մարդոյ յաւուրսն իւրում:
25 Բայց նախ պարտ է նմա բազումս չարչարիլ՝ և խոտիլ
26 յազգէս յայսմանէ: Եւ որպէս եղև յաւուրսն Նոյի, նոյնպէս եղիցի և յաւուրս Որդւոյ
27 մարդոյ: Ուտէին, ըմպէին, կանայս առնէին, և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ Նոյ ՝ի տապանն, և եկն ջրհեղեղն՝ և կորոյս զամենեսին:
28 Նոյնպէս և որպէս յաւուրսն Ղովտայ եղև, ուտէին, ըմպէին, գնէին, վաճառէին, տնկէին,
29 շինէին. Եւ յորում աւուր ել Ղովտ ՝ի Սոդոմայ, տեղաց հուր և ծծումբ յերկնից՝ և կո-

գնա. քո հաւատքն ապրեցուցեց քեզ:

Երբոր փարիսեցիներից հարցուեցաւ, թէ Աստուծոյ արքայութիւնն ե՞րբ պիտի գայ, պատասխանեց նոցանց և ասաց. Աստուծոյ արքայութիւնը դրսի նշանով չի գալ: Ոչ էլ կ՚ասեն, 20 21
Ի՞նչ Ահա այս տեղ է, կամ՝ ահա այն տեղ է. քանզի ահա Աստուծոյ արքայութիւնը հէնց ձեր ներսումն է:

Աշակերտներին էլ ասաց. 22
Օրեր կ՚գան, որ դուք կըցանկանաք Որդոյ մարդոյ օրերից մէկը տեսնել, և չէք տեսնիլ:
Եւ ձեզ կ՚ասեն՝ Ահա այս տեղ 23
է, կամ՝ ահա այն տեղ է, չ՚գնաք և ետևիցը չ՚հետևիք:
Ա՛սանզի ինչպէս կայծակն որ 24
փայլում՝ երկնքի տակիցը լոյս է տալիս մինչև երկնքի ջ–ո տակը, այնպէս էլ կ՚լինի Որդին մարդոյ իր օրումը: Բայց առաջ պէտք 25
է նա շատ չարչարուի և անարգուի այս ազգիցը: Եւ ինչպէս 26
եղաւ Նոյի օրերումն, այնպէս էլ կ՚լինի Որդոյ մարդոյ օրերումը: Ուտում էին՝ խմում էին՝ 27
կին էին առնում՝ և մարդու էին գնում, մինչև այն օրն՝ որ Նոյ մտաւ տապանը. և ջրհեղեղն եկաւ և ամենքին կորցրեց:
Նմանապէս էլ ինչպէս Ղովտի 28
օրերումն եղաւ. ուտում էին, խմում էին, առնում էին՝ ծախում էին, տնկում էին՝ շինում էին: Եւ այն օրն որ Ղովտը 29

30 ելայ զամենեսին: Ըստ նմին օրինակի եղիցի և յաւուրն, յորում Որդի մարդոյ յայտնե-
31 լոց է. Զայնմ աւուր որ կայցէ ՝ի տանիս՝ և կարասի իւր ՝ի տան, մի՛ իջցէ առնուլ զայն. և որ յանդի իցէ, նոյնպէս մի՛
32 դարձցի յետս: Յիշեցէք զկինն
33 Ղովտայ: Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա. և որ կորուսցէ, ապրե-
34 ցուսցէ զնա: Ասեմ ձեզ. Զայնմ գիշերի՝ թէ եղիցին երկու ՝ի մի մահիճս, մին առցի՝
35 և միւսն թողցի. Եւ եթէ եղիցին երկու* աղալ ՝ի միասին, մին առցի՝ և միւսն թողցի. և
36 եթէ իցեն երկու յանդի, մին առցի՝ և միւսն թողցի: Պատասխանի ետուն և ասեն ցնա.
37 Յո՞ Տէր: Եւ նա ասէ ցնոսա. Ուր մարմին է, անդր և արծուիք ժողովեսցին:

ԳԼ. ԺԸ.

1 Ասաց և առակ մի նոցա՝ առ այն, թէ պարտ է յամենայն ժամ՝ կալ նոցա յաղօթս՝ և մի
2 ձանձրանալ: Ասէ. Դատաւոր մի էր ՝ի քաղաքի ուրեմն, յԱս-

Սոդոմիցը զուրս եկաւ, կրակ և ծծումբ տեղաց երկնքիցը և ամենին կորցրեց: Նոյն կեր- 30
պովն էլ կ՚լինի այն օրերումը, որ Որդին մարդոյ կ՚յայտնուի:
Այն օրերումն ով որ կտրի վե- 31
րայ լինի և իր բաները տան մէջ, թող չիջնէ նորանց առնելու. և յանդումն լինողն էլ այն-
պէս թող ետ չ՚դառնայ: Յիշե- 32
ցէք Ղովտի կինը: Ով որ ուզէ 33
իր անձն ապրեցնել, կ՚կորցնէ նորան. և ով որ կորցնէ նորան, կ՚ապրեցնէ նորան: Ասում եմ 34
ձեզ. Նոյն գիշերումն երկու հոգի մէկ մահճի մէջ կ՚լինին, մէկը կ՚առնուի և միւսը կըթողուի: Երկու հոգի միասին 35
աղալու վերայ կ՚լինի, մէկը կ՚առնուի և միւսը կ՚թողուի. և երկու հոգի յանդումն կըլինին, մէկը կ՚առնուի և միւսը կ՚թողուի: Եւ պատասխանե- 36
ցին և նորան ասացին. Տէր, ո՞ր տեղ: Նա էլ ասաց նո- 37
րանց. Որ տեղ մարմին է, արծիւներն էլ այնտեղ կըհաւաքուին:

ԳԼ. ԺԸ.

Ա՛ի առակ էլ ասաց նորանց՝ 1
նորա վերայ թէ պէտք է ամեն ժամանակ աղօթք անել և
չ՚ձանձրանալ: Եւ ասաց. Ա՛ի 2
դատաւոր կար մի քաղաքում, որ

* ՝Ի Յոյն. կանայք

տուծոյ ոչ երկնչէր՝ և ի մարդ-
3 կանէ ոչ ամաչէր։ Եւ այրի մի
էր ի նմին քաղաքի, գայր առ
նա և ասէր. Դատ արա ինձ
4 յոսոխէ իմմէ։ Եւ ոչ կամէր ի
բաղում ժամանակս. յետ այնո-
րիկ ասէ ի մտի իւրում, Եթէ և
Աստուծոյ ոչ երկնչիմ, և ի
5 մարդկանէ ոչ ամաչեմ, Զոնէ
վասն աշխատ առնելոյ զիս
այրուոյն՝ արարից նմա դատ, զի
մի՛ լիսպառ եկեալ թախանձիցէ
6 զիս։ Եւ ասէ Տէր. Լուարուք
զինչ դատաւորն անիրաւութեան
7 ասէր։ Իսկ Աստուած՝ ո՞չ
առնիցէ վրէժխնդրութիւն ծա-
ռայից իւրոց, որ աղաղակեն առ
նա ի տուէ և ի գիշերի, և
երկայնամիտ միայն լինիցի առ
8 նոսա։ Այո՛ ասեմ ձեզ. զի
Արասցէ վրէժխնդրութիւն նոցա
վաղվաղակի. իսկ Որդի մարդոյ
եկեալ՝ գտանիցէ՞ արդեօք հա-
ւատս յերկրի։

9 Ասաց և առ ոմանս պանծա-
ցեալս, յանձինս, թէ արդարք
իցեն՝ և խոտիցեն զբաղումս,
10 զառակս զայս։ Արք երկու ելին
ի տաճարն կալ յաղօթս, մին
փարիսեցի՝ և միւսն մաքսաւոր։
11 Փարիսեցին կայր մեկուսի, և
զայս առանձինն աղօթս մատու-
ցանէր. Աստուած իմ՝ գոհա-
նամ զքէն, զի ոչ եմ իբրև
զայլս ի մարդկանէ, զյափշտա-
Աստուածանից չէր վախենում,
և մարդկանցից չէր ամաչում։
Եւ մի որբևայրի էլ կար այն 3
քաղաքումը, և նորա մօտ էր
գալիս և ասում, Իրաւունք արա
ինձ իմ ոսոխիցը։ Եւ նա մի 4
ժամանակ չկամեցաւ. նորանից
յետոյ իր մտքումն ասաց. Թէ
և Աստուածանից չեմ վախե-
նում, և մարդկանցից չեմ ամա-
չում։ Սակայն որովհետև այս 5
որբևայրին յոգնեցնում է ինձ,
իրաւունք անեմ նորան, որ վեր-
ջապէս չգայ ինձ ձանձրացնէ։
Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ 6
անիրաւ դատաւորն ինչ է ա-
սում։ Բայց Աստուած մի՞թէ 7
իր ընտրեալների համար իրա-
ւունք չի անիլ, որ ցերեկ և
գիշեր աղաղակում են դէպի
նա, թէ և նորանց վերայ եր-
կայնամիտ էլ լինի։ Ասում 8
եմ ձեզ, թէ Շուտով իրա-
ւունք կ'անէ նորանց համար։
Սակայն Որդին մարդոյ գալիս՝
արդեօք հաւատք կ'գտնէ՞ երկ-
րի վերայ։

Ոմանց էլ, որ իրանցում վըս- 9
տահ էին, թէ արդար են և
ուրիշներին ոչ ինչ էին համա-
րում, այս առակն ասաց. Եր-
կու մարդ վեր ելան տաճարն 10
աղօթք անելու. մէկը Փարիսեցի
և միւսը մաքսաւոր։ Փարիսե- 11
ցին առանձին կանգնած այս
աղօթքն էր անում. Ով Աս-
տուած, գոհանում եմ քեզանից,
որ չեմ ինչպէս ուրիշ մար-

կողքս և զանիրաւս և զշունս,
կամ իբրև զայս մաքսաւոր։
12 Այլ պահեմ երկիցս ի շաբա-
թու, և տամ տասանորդս
յամենայն ստացուածոց իմոց։
13 Եւ մաքսաւորն կայր մեկուսի, և
ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս
ամբառնալ. այլ կոծէր զկուրծս
իւր՝ և ասէր. Աստուած՝ քաւեա՝
14 զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ.
Այլ սա արդարացեալ՝ ի տուն
իւր քան զնա. զի ամենայն որ
բարձրացուցանէ զանձն իւր,
խոնարհեսցի. և որ խոնարհեցու-
ցանէ զանձն, բարձրասցի։

15 Մատուցանէին առ նա և
մանկտի՝ զի մերձենայցէ ի նոսա.
իբրև տեսին աշակերտքն՝ սաս-
16 տէին նոցա։ Իսկ Յիսուս
կոչեցեալ զնոսա առ ինքն՝ ասէ.
Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ
իս, և մի՛ արգելուք զդոսա. զի
այդպիսեացդ է արքայութիւն
17 Աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ.
Որ ոչ ընդունիցի զարքայութիւն
Աստուծոյ իբրև զմանուկ, ոչ
մտցէ ի նա։

18 Եւ եհարց զնա ոմն իշխան՝ և
ասէ. Վարդապետ բարի զի՞նչ
գործեցից, զի զկեանսն յաւի-
19 տենականս ժառանգեցից։ Ասէ
ցնա Յիսուս. Զի՞ ասես զիս
բարի. չիք ոք բարի՝ բայց մի
20 Աստուած։ Զպատուիրանս դի-

գիկը յափշտակող, անիրաւ,
շնացող, կամ ինչպէս էլ այս
մաքսաւորը։ Շաբաթը երկու 12
անգամ ծոմ եմ պահում, և իմ
բոլոր ստացուածքներիցը տա-
սանորդ եմ տալիս։ Եւ մաք- 13
սաւորը հեռու կանգնած իր
աչքերն էլ չէր կամենում դէպի
երկինքը բարձրացնել. այլ իր
կուրծքը ծեծում էր և ասում.
Ով Աստուած, քաւիր ինձ
մեղաւորիս։ Ասում եմ ձեզ, 14
թէ Սա արդարացած իջաւ իր
տունը քան թէ նա. քանզի
ամեն ինքն իրան բարձրացնողը
կ'խոնարհուի, և ինքն իրան
խոնարհացնողը կ'բարձրանայ։

Երեխաներ էլ էին բերում 15
նորա մօտ, որ նորանց դիպչի.
աշակերտներն էլ երբոր տեսան,
յանդիմանում էին նորանց։
Բայց Յիսուսը նորանց իրան 16
մօտ կանչեց, և ասաց. Թոյլ
տուէք երեխաներին ինձ մօտ
գալ, և մի արգելէք դորանց.
վասնզի այդպիսիներին է Աս-
տուծոյ արքայութիւնը։ Ճշ- 17
մարիտն ասում եմ ձեզ. թէ Ով
որ Աստուծոյ արքայութիւնը
չընդունի ինչպէս երեխայ՝ նա
չի մտնիլ նորա մէջ։

Եւ մէկ իշխան հարցրեց նո- 18
րան և ասաց. Բարի վարդապետ,
ի՞նչ գործեմ, որ յաւիտենական
կեանքը ժառանգեմ։ Յիսուսն 19
էլ նորան ասաց. Ի՞նչու ես ինձ
բարի ասում. ոչ ով բարի չէ
բացի մէկը՝ Աստուած։ Պա- 20

տես. Մի՛ շնար, Մի՛ սպանաներ, Մի՛ գողանար, Մի՛ սուտ վկայեր, Պատուեա՛ զՀայր քո և
21 զմայրդ: Եւ նա ասէ. Այդ ամենայն պահեցի ՚ի մանկութենէ իմմէ: Իբրև լուաւ զայն
22 Յիսուս՝ ասէ ցնա. Միւս ևս պակաս է քեզ. զամենայն ինչ զոր ունիս, վաճառեա՛ և տո՛ւր աղքատաց, և ունիցիս գանձս
23 յերկինս. և եկ զկնի իմ: Նա իբրև լուաւ զայս՝ տրտմեցաւ. քանզի էր մեծատուն յոյժ:
24 Իբրև ետես զնա Յիսուս տրըտմեալ, ասէ. Որպէս դժուարաւ որ ինչս ունիցին՝ մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ:
25 Դիւրագոյն իցէ մալեսոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աս-
26 տուծոյ մտանել: Եւ որ լուանն՝ ասէին. Եւ ո՞ կարիցէ ապրել:
27 Եւ նա ասէ. Անհնարինք առ ՚ի մարդկանէ, հնարաւորք են
28 Աստուծոյ: Եւ ասէ Պետրոս. Ահաւասիկ մեք թողաք զամենայն ինչ զմեր, և եկաք զկնի
29 քո: Եւ նա ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ. եթէ Ոչ ոք է՝ որ եթող զտունս, կամ՝ զծնողս, կամ՝ զեղբարս, կամ՝ զկին, կամ՝ զորդիս՝ վասն արքայութեան
30 Աստուծոյ, եթէ ոչ առնուցու բազմապատիկ ՚ի ժամանակի յայսմիկ. և յաշխարհին որ գալոցն է՝ զկեանսն յաւիտենական ժառանգեսցէ:

տուիրանքներդ գիտես. Մի՛ շնար, Մի՛ սպանաներ, Մի՛ գողանար, Մի՛ սուտ վկայեր, պատուիր քո հօրդ և մօրդ: Նա էլ ասաց. 21
Այդ ամենն իմ երեխայութիւնիցը պահել եմ: Յիսուսն էլ 22
երբոր այս լսեց՝ նորան ասաց. Մէկ բան տակաւին պակաս է քեզ. ամեն ինչ որ ունիս՝ ծախիր, և աղքատներին տուր, և գանձ կունենաս երկնքումը, և եկ հետևիր ինձ: Նա էլ այս 23
լսելով տրտմեցաւ. վասն զի սաստիկ հարուստ էր: Յիսուսն 24
էլ երբոր նորան տրտմած տեսաւ, ասաց. Որչափէս դժուար կ'մտնեն Աստուծոյ արքայութիւնը նորանք, որ ստացուածքներ ունին: Ավ՝ ասնզի աւելի 25
հեշտ է որ ուղտն ասեղի ծակովանցնէ, քան թէ հարուստն Աստուծոյ արքայութիւնը մտնէ: Եւ նորանք որ լսեցին՝ ասում 26
էին. Էլ ո՞վ կարող է ապրիլ: Նա էլ ասաց. Այն բաներն որ 27
կարելի չեն մարդկանց մօտ, կարելի են Աստուծոյ մօտ: Եւ 28
Պետրոսը ասաց. Ահա մենք բոլորը թողնինք և քո ետևից եկանք: Նա էլ ասաց նորանց. 29
Շմարիտն ասում եմ ձեզ, թէ Ոչ ով չկայ, որ թողել է տուն, կամ՝ ծնողներ, կամ՝ եղբայրներ, կամ՝ կին, կամ՝ որդիք՝ Աստուծոյ արքայութեան համար. Որ բազ- 30
մապատիկ չ'առնէ այս ժամանակումը, և այն գալու աշխարհքումը յաւիտենական կեանքը:

31 Եւ առեալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ ցնոսա. Ահաւասիկ ելանեմք Յերուսաղէմ, և կատարեսցին ամենայն գրքերն մարգարէիւք վասն Որդ-
32 ւոյ մարդոյ: Զի մատնեսցի Հեթանոսաց, և կատակեսցի.
33 Եւ հարկանիցեն, և սպանանիցեն զնա, և յերիր աւուր յա-
34 րիցէ: Եւ նոքա ոչինչ իմացան յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ ՚ի նոցանէ, և ոչ գիտէին զասացեալսն:

35 Եւ եղև ՚ի մօտեցն Նորա Յերիքովայ, կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ:
36 Իբրև լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ
37 Զի՞նչ իցէ այն: Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ:
38 Աղաղակեաց և ասէ. Յիսուս Որդի Դաւթի՝
39 ողորմեա՛ց ինձ: Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա ևս առաւել աղաղակէր, Որդի Դաւթի՝ ողոր-
40 մեա՛ց ինձ: Զատեալ առ Յիսուս, և հրամայեաց ածել զնա առ իւր. և իբրև մերձ եղև առ նա,
41 եհարց զնա և ասէ. Զի՞նչ կամիս դո՛ւ զի արարից քեզ. և նա ասէ. Տէր՝ զի բացցին աչք
42 իմ՝ և տեսից: Եւ Յիսուս ասէ ցնա. Հայեա՛ց, հաւատք քո
43 կեցուցին զքեզ: Եւ առժամայն ետես, և երթայր զհետ

Եւ այն տասներկուսին մօտն առաւ և ասաց նորանց. Ահա վեր ենք ելլում Երուսաղէմ. և կ'կատարուին մարգարէների ձեռովն Որդոյ մարդոյ համար բոլոր գրուածները: Ավ՝ ասնզի 31 32
հեթանոսներին կ'մատնուի, և ծաղր կ'լինի, կ'հայհոյուի, և նորա վերայ կ'թքուի: Եւ 33
կ'ծեծեն կ'սպանեն նորան. և երրորդ օրը յարութիւն կ'առնէ: Եւ նորանք սորանցից ոչ ինչ 34
չիմացան, և խօսքը ծածկուած էր նորանցից, և ասած բանները չէին իմանում:

Եւ եղաւ, որ նա Երիքովին 35
մօտենալիս, մի կոյր ճանապարհի վերայ նստած մուրանում էր: Եւ երբոր ժողովրդի 36
անցնելը լսեց, հարցնում էր՝ թէ Դա ի՞նչ է: Եւ պատմեցին նորան, թէ Յիսուս Նազովրեցին է անցնում: Եւ նա 37 38
աղաղակեց և ասաց. Յիսուս՝ որդի Դաւթի, ինձ ողորմիր: Եւ նորանք՝ որ առջևից գնում 39
էին, յանդիմանում էին նորան, որ լռէ. իսկ նա էլ աւելի էր աղաղակում. Որդի Դաւթի, ինձ ողորմիր: Յիսուսն էլ կանգ- 40
նեց և հրամայեց. որ նորան իրան մօտ բերեն. և երբոր նա մօտ եկաւ, հարցրեց նորան և 41
ասաց. Ի՞նչ ես ուզում, որ անեմ քեզ. և նա ասաց. Տէր, 42
որ տեսնեմ: Եւ Յիսուսն էլ ասաց նորան. Տես. քո հաւատքը ապրեցրեց քեզ: Եւ իսկոյն 43

նորա՝ և փառաւոր առնէր զԱ-
տուած. և ամենայն ժողովը-
դեանն տեսեալ, տայր օրհնու-
թիւն Աստուծոյ:

ԳԼ. ԺԹ.

1 Եւ մտեալ շրջէր ընդ Ե-
2 րիքովս: Եւ ահա այր մի
անուն կոչեցեալ Զաքէոս, և
նա էր մաքսապետ, և ինքն
3 մեծատուն. Եւ խնդրէր տեսա-
նել՝ եթէ ո՞վ իցէ Յիսուս, և
ոչ կարէր ի բազմութենէն,
4 զի կարճ էր հասակաւ: Եւ
ընթացեալ յառաջս, ել ի ժան-
տաթզենին՝ զի տեսանիցէ զնա.
քանզի ընդ այն իսկ անցանելոց
5 էր: Իբրև եկն ի տեղին՝ հայե-
ցաւ ի վերս Յիսուս՝ և ասէ
ցնա. Զաքէ՝ փութա՛ էջ այսր,
զի այսօր ի տան քում՝ արժան
6 է ինձ ագանել: Փութացաւ
և էջ՝ և ընկալաւ զնա ուրա-
7 խութեամբ: Իբրև տեսին ա-
մենեքին, տրտնջէին և ասէին՝
թէ Առ առն մեղաւորի եմուտ
8 լուծանել: Եկն եկաց Զա-
քէոս՝ և ասէ ցՏէր. Տէր՝ ահա
զկէս ընչից իմոց տաց աղքա-
տաց. և եթէ զոք զրկեցի, հա-
9 տուցից չորեքկին: Եւ ասէ
ցնա Յիսուս. Այսօր եղև փրկ-
ութիւն տանս այսմիկ. քանզի
10 և սա որդի Աբրահամու է: Զի
եկն Որդի մարդոյ խնդրել և
կեցուցանել զկորուսեալն:

տեսնում էր, և նորա ետեւից
գնում էր՝ Աստուծոյն փառա-
ւորելով. և բոլոր ժողովուրդը
որ տեսաւ՝ օրհնութիւն էր տա-
լիս Աստուծոյն:

ԳԼ. ԺԹ.

Եւ մտաւ՝ Երիքովն միջովն 1
անցնում էր: Եւ ահա մի մարդ՝ 2
անունը Զաքէոս կոչուած, որ
նա մաքսապետ էր, և ինքն
հարուստ էր: Եւ ուզում էր 3
Յիսուսին տեսնել թէ ով է,
բայց բազմութեան պատճառով
չէր կարողանում, քանզի հա-
սակով կարճ էր: Եւ առաջ 4
վազեց՝ վեր եկաւ մի ժանտա-
թզենու, որ տեսնէ նորան. վասնզի
այնտեղովն պիտի անցնէր: Եւ 5
երբոր այն տեղն եկաւ, Յի-
սուսը վեր նայեց և նորան
ասաց. Զաքէ, շուտ արա իջիր.
վասնզի պէտք է ինձ այսօր քո
տանը կենալ: Նա շտապելով 6
իջաւ և ուրախութիւնով ըն-
դունեց նորան: Եւ բոլոր տես- 7
նողները տրտնջում էին և ա-
սում. թէ Ո՞եղաւոր մարդու
մօտ մտաւ հանդիստ առնելու:
Զաքէոսն Եկա՛ կանգնեց և 8
Տիրոջն ասաց. Տէր, ահա իմ
ապրանքներով կէսն աղքատնե-
րին կ՚տամ. և եթէ մէկին զրկել 9
եմ՝ չորեքպատիկ կ՚վճարեմ:
Յիսուսն էլ նորան ասաց. թէ
Այսօր փրկութիւն եղաւ այս
տանը. վասնզի սա էլ Աբրա-

11 Եւ մինչդեռ նոքա զայն
լսէին, յաւել առակ մի՝ և ասէ,
վասն մերձենալոյ նորա Յերու-
սաղէմ, և համարելոյ նոցա եթէ
առժամայն յայտնելոց է արքա-
12 յութիւն Աստուծոյ: Ասէ. Այր
ոմն ազնուական գնաց յաշխարհ
հեռի՝ առնուլիւր թագաւորու-
13 թիւն, և դառնալ: Եւ կոչե-
ցեալ զծառայս իւր՝ ետ նոցա
տասն մնաս, և ասէ ցնոսա.
Յարգեցէք զայդ մինչև եկիցէ:
14 Եւ քաղաքացիքն նորա ատէին
զնա, առաքեցին հրեշտակս
զկնի նորա՝ և ասեն. թէ Ո՛չ
կամիմք թագաւորել դմա՝ ի
15 վերայ մեր: Եւ եղև դառնալ
նմա՝ առեալ զթագաւորու-
թիւնն. և կոչեալ զծառայսն՝
որոց տուեալ էր զարծաթն, զի
գիտասցէ թէ ո՞ զինչ շահեցաւ:
16 Եկն առաջինն և ասէ. Տէր՝
մնասն քո՝ տասն մնաս արար:
17 Եւ ասէ ցնա. Զնիւ ծառայ և
բարի, զի ի փոքուդ հաւատա-
րիմ եղեր, լիջիր իշխանութիւն
ունել ի վերայ տասն քա-
18 ղաքի: Եկն երկրորդն և ասէ.
Ո՝նասն քո արար հինգ մնաս:
19 Ասէ և ցնա, Եւ դու լիջիր ի
20 վերայ հինգ քաղաքաց: Եկն
միւսն և ասէ. Տէր՝ ահա մնասն
քո՝ զոր ունէի՝ ծրարեալ ի
21 վարշամակի. Երկնչէի ի քէն,
զի այր ստամբակ ես. բառնաս՝

համի որդի է: Վասնզի Որդին 10
մարդոյ եկաւ, որ որոնէ և
ապրեցնէ կորածին:
Եւ դեռ որ նորանք այս 11
բաները լսում էին, մի առակ
աւելցրեց և ասաց, որովհետև
Երուսաղէմին մօտենում էր, և
նորանք կարծում էին, թէ Աս-
տուծոյ արքայութիւնը իսկոյն
յայտնուելու է: Ապա ասաց. 12
Մի ազնուական գնաց հեռու
երկիր, որ թագաւորութիւն
առնէ իրան համար և ետ դառ-
նայ: Եւ իր տասն ծառաներին 13
կանչեց, տասն մնաս տուաւ նո-
րանց, և ասաց նորանց. Առնեց-
ուք մինչև որ դամ: Բայց նորա 14
քաղաքացիներն ատում էին նո-
րան. և նորա ետևիցը պատգա-
մաւորներ ուղարկեցին և ասա-
ցին. Չենք ուզում որ դա թա-
գաւորէ մեզ վերայ: Եւ եղաւ՝ 15
որ նա թագաւորութիւնն առած
ետ դարձաւ. և ասաց որ կանչեն
այն ծառաներին, որոնց տուել
էր արծաթը, որ գիտայ, թէ
ով շահուեցաւ: Եւ առաջինն 16
եկաւ և ասաց. Տէր, քո մնասը
շահեց տասն մնաս: Եւ նորան 17
ասաց. Լա՛ւ, բարի ծառայ, ո-
րովհետև քիչումը հաւատարիմ
եղար, տասն քաղաքի վերայ
իշխանութիւն ունեցիր: Եւ 18
երկրորդն եկաւ և ասաց. Տէր
քո մնասը հինգ մնաս շահեց:
Նորան էլ ասաց. Դու էլ հինգ 19
քաղաքի վերայ եղիր: Եւ ու- 20
րիշն էլ եկաւ և ասաց. Տէր,

զոր ոչ եղիր, և հնձես՝ զոր ոչ
22 սերմանեցեր։ Եւ ասէ ցնա.
Ի բերանոյ քումմէ դատեցայց
զքեզ ծառայ անհաւատ. գի-
տէիր թէ ես այր մի ստամբակ
եմ, բառնամ՝ զոր ոչ եդի, և
հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի։
23 Եւ ընդէր ոչ եռուր զարծաթն
իմ ի սեղանաւորս, և եկեալ
24 ես տոկոսեօք պահանջէի։ Եւ
ասէ ցսպասաւորսն, Առէք ի
գմանէ զմնասն, և տարայք տուք
այնմ՝ որ ունիցի զտասն մնասն։
25 Եւ ասեն ցնա. Տէր՝ ունի տասն
26 մնաս։ Ասեմ ձեզ, եթէ Ամե-
նայնի որ ունիցի, տացի. և
յայնմանէ որ ոչն ունիցի, և
զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ։
27 Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ,
որ ոչն կամէին զիս թագաւորել
ի վերայ նոցա, ածէք այսր, և
28 սպանէք առաջի իմ։ Եւ իբրև
զայս ասաց, գնաց յառաջ ելա-
նել յԵրուսաղէմ։

29 Եւ եղև իբրև մերձեցաւ ի
Բեթփագէ և ի Բեթանիա
մօտ ի լեառնն՝ որ կոչի Զիթե-
նեաց, առաքեաց երկուս յա-
շակերտացն իւրոց՝ և ասէ.
30 Երթայք դուք ի գեօղն՝ որ
հանդէպ մեր կայ. յոր իբրև
մտանիք՝ գտանիցիք յաւանակ
ահա քո մնասը՝ որ վարշամանի
մէջ պատած պահում էի։
31 Ոչ ոմանդ վախենում էի քեզա-
նից. որովհետև դու պինդ
մարդ ես. վեր ես առնում ինչ
որ չես դրել, և հնձում ես ինչ
որ չես սերմել։ Եւ ասաց նո-
22 բան. Տէր բերանիցը քեզ դա-
տում եմ, չար ծառայ. գիտէիր
որ ես պինդ մարդ եմ, որ վեր
եմ առնում ինչ որ չեմ դրել,
և հնձում եմ ինչ որ չեմ
սերմել։ Այլ ինչու իմ արծաթը
23 սեղանաւորներին չտուիր, որ
ես գայի շահով ետ առնէի նո-
24 բան։ Եւ այն տեղ կանգնողնե-
րին ասաց. Առէք զորանից
մնասը, և տուէք տասն մնասն
25 ունեցողին։ Եւ նորան ասացին.
Տէր, տասն մնաս ունի։
26 Զան-
գի ասում եմ ձեզ, թէ ամեն
ունեցողին կ'տրուի. և չունե-
ցողիցը նա էլ որ ունի, վեր
27 կ'առնուի։ Իսկ այն իմ թշնամի-
ներին, որ չէին ուզում, որ ես
նորանց վերայ թագաւորեմ,
այս տեղ բերէք և սպանեցէք
28 իմ առջև։ Եւ երբոր այս ասաց,
առաջ գնաց, որ վեր ելնէ
Երուսաղէմ։

29 Եւ եղաւ երբոր Բեթփա-
գէին և Բեթանիային մօտեցաւ,
այն լեռան մօտ՝ որ Զիթենեաց
լեռ է կոչվում, իր աշակերտ-
ներից երկուսին ուղարկեց և
30 ասաց. Գնացէք այդ գիմացի
գիւղը, և երբ որ մէջը մտնէք
մի կապած աւանակ կ'գտնէք,

կապեալ, յորում ոք ի մարդ-
կանէ երբէք ոչ նստաւ. լուծէք
31 զնա և ածէք։ Եւ եթէ ոք
հարցանիցէ զձեզ՝ թէ Ընդէր
լուծանէք, այսպէս ասասջիք
32 ցնա. թէ Տեառն իւրում պիտոյ
է։ Իբրև չոքան որ առաքե-
ցանն, գտին որպէս ասացն ցնոսա,
33 կոյր յաւանակն։ Եւ մինչ-
դեռ լուծանէին զյաւանակն,
ասեն տէրքն նորա ցնոսա.
Զի՞ լուծանէք զյաւանակդ։
34 Եւ նոքա ասեն. Տեառն իւ-
35 րում պիտոյ է։ Եւ ածին զնա
առ Յիսուս. և արկին զնովաւ
հանդերձս, և հեծուցին զՅի-
36 սուս։ Եւ մինչդեռ երթայր,
զհանդերձս իւրեանց տարա-
37 ծանէին զճանապարհաւն։ Եւ
իբրև այն ինչ մերձ եղև ի զառ ի
վայր լերինն Զիթենեաց, սկսաւ
ամենայն բազմութիւն աշակեր-
տացն ուրախութեամբ օրհնել
զԱստուած ի ձայն մեծ վասն
ամենայն եղելոց զօրութեանցն՝
38 զոր տեսին. Եւ ասէին. Օրհ-
նեալ որ գայ թագաւորդ յա-
նուն Տեառն. խաղաղութիւն
յերկինս, և փառք ի բար-
39 ձունս։ Եւ ոմանք ի փարիսեց-
ւոցն յամբոխէ անտի՝ ասեն
ցնա. Վարդապետ, սաստեա՛
40 աշակերտացդ քոց, Պատաս-
խանի ետ՝ և ասէ. Ասեմ ձեզ՝
զի եթէ դոքա լռեսցեն, քա-
րինքդ աղաղակեսցեն։

որի վերայ երբէք ոչ մի մարդ
նստած չէ, նորան արձակեցէք
բերէք։ Եւ եթէ մէկը հարցնէ
31 ձեզ՝ Ինչու էք արձակում,
նորան այսպէս ասացէք թէ
Տիրոջը պէտք է սա։ Ուզար-
32 կուածներն էլ երբոր գնացին,
այնպէս գտան ինչպէս նորանց
ասաց։ Եւ նորանք աւանակն
33 արձակելիս՝ նորա տէրերն ասա-
ցին նորանց. Ինչու էք արձա-
կում այդ աւանակը։ Նորանք
34 էլ ասացին. Տիրոջը պէտք է
սա։ Եւ նորան բերին Յիսուսի
35 մօտ. և իրանց հանդերձները
աւանակի վերայ գցեցին, և
Յիսուսին հեծեցրին։ Եւ նորա
36 գնալու ժամանակին իրանց հան-
դերձները փռում էին ճանա-
37 պարհի վերայ։ Եւ երբոր նա
արդէն մօտեցաւ Զիթենեաց լե-
ռան զառիվայրին, աշակերտ-
ների բոլոր բազմութիւնն ուրա-
խութիւնով սկսեց օրհնութիւն
ասել Աստուծոյն բարձր ձայ-
նով՝ այն բոլոր զօրութիւնների
համար, որ տեսել էին։ Եւ
38 ասում՝ էին. Օրհնեալ է
Տիրոջը անունովն եկող թա-
գաւորը. խաղաղութիւն երկնի
երկնքում և փառք ի բարձունս։
39 Եւ Փարիսեցիներից ոմանք ժո-
ղովուրդի միջից նորան ասա-
ցին. Վարդապետ, յանդիմանիր
աշակերտներիդ։ Եւ նա պա-
40 տասխանեց և ասաց՝ Ասում եմ
ձեզ՝ որ եթէ սորանք լռեն,
քարերն են աղաղակելու։

41 Եւ իրրև մերձեցաւ, տեսեալ
զքաղաքն՝ եկաց 'ի վերայ նորա,
42 և ասէ. Եթէ գիտէիր դու
զոնէ յաւուրս յայսմիկ ըղձա-
դաղութիւնն քո. բայց այժմ
43 ծածկեցաւ յերեսաց քոց: Զի
եկեսցեն աւուրք 'ի վերայ քո,
և պատեսցեն զքեզ թշնամիք քո
պատնէշ, և պաշարեսցեն զքեզ,
և նեղեսցեն զքեզ յամենայն
44 կողմանց. Եւ յատակեսցեն
զքեզ, և զորդիս քո 'ի քեզ. և
ոչ թողուցուն քար 'ի քարի
վերայ յամենայնի 'ի քեզ. փո-
խանակ զի ոչ ծանեար ըղձա-
մանակ այցելութեան քո:

45 Եւ մտեալ 'ի տաճարն սկսաւ
հանել զաղաւնեվաճառսն, և
զգնողս. և զսեղանս հատաւա-
46 ճառացն ցրուեաց: Եւ ասէ
ցնոսա. Գրեալ է՝ Եւ եղիցի
տուն իմ տուն աղօթից, և դուք
արարիք զդա այրս աւազակաց:
47 Եւ ուսուցանէր զնոսա հա-
նապազ 'ի տաճարին. իսկ քա-
հանայապետքն և դպիրք և
գլխաւորք ժողովրդեանն խնդ-
48 րէին զնա կորուսանել, Եւ ոչ
գտանէին՝ թէ զինչ արասցեն.
զի ժողովուրդն ամենայն կա-
խեալ կայր զնմանէ 'ի լսել:

ԳԼ. Ի

1 Եւ եղև 'ի միում աւուրցն
յայնցանէ, մինչդեռ ուսուցա-
նէր զժողովուրդն 'ի տաճարի
Եւ երբոր մօտեցաւ, տեսաւ 41
քաղաքին, լացաւ նորա վերայ
և ասաց. Եթէ դու էլ իմա- 42
նայիր՝ գոնեա քո այս օրուան
օրը քո խաղաղութեան մասին.
բայց հիմա ծածկուեցաւ քո
աչքերից: Վասնզի օրեր կ'գան 43
քեզ վերայ, և քո թշնամիները
չորս կողմովդ պատնէշ կըպա-
տեն, և կ'պաշարեն քեզ և
ամեն կողմից քեզ կ'նեղացնեն.
Եւ հիմնայատակ կ'անեն քեզ 44
և քո որդիքն էլ քո միջումը. և
չեն թողիլ քո միջումը քար
քարի վերայ. փոխանակ որ՝
չ'ճանաչեցիր քեզ այցելելու
ժամանակը:

Եւ տաճարը մտաւ, սկսեց 45
դուրս հանել նորանում ծախող-
ներին և առնողներին. Եւ նո- 46
րանց ասաց. Գրուած է՝ Ես
իմ տունն աղօթքի տուն է, և
դուք նորան աւազակների այր
էք արել:

Եւ ամեն օր սովորեցնում 47
էր նորան տաճարումը. բայց
քահանայապետները և դպիր-
ները ուզում էին կորցնել նո-
րան, ժողովուրդի գլխաւորներն
էլ: Եւ չէին գտնում՝ թէ ինչ 48
անեն. քանզի բոլոր ժողովուրդը
նորանից կախուած էր լսելով:

ԳԼ. Ի

Եւ եղաւ որ այն օրերի մէկին 1
նա տաճարումը ժողովրդին սո-
վորեցնելիս և աւետարանելիս,

անդ՝ և աւետարանէր, հասին
'ի վերայ քահանայապետքն և
2 դպիրք ծերովքն հանդերձ, Եւ
ասեն ցնա. Ասա մեզ՝ որովք
իշխանութեամբն գործես դու
զայդ, կամ ով է՝ որ ետ քեզ
3 զայդ իշխանութիւն. Պատաս-
խանի ետ և ասէ ցնոսա. Հարց-
ցից և ես ձեզ բան մի, և ասա-
4 ցէք ինձ: Մկրտութիւնն Յով-
հաննու յերկնից էր՝ եթէ 'ի
5 մարդկանէ: Եւ նոքա խոր-
հեցան 'ի միտս իւրեանց՝ և
6 ասեն. Եթէ ասեմք Յերկնից,
ասէ. Իսկ ընդէ՞ր ոչ հաւատա-
ցէք նմա. և եթէ ասեմք 'Ի
մարդկանէ, ամենայն ժողո-
վուրդն քարկոծ առնեն զմեզ.
զի հաստատեալ է 'ի միտս
զՅովհաննէ, թէ մարգարէ է:
7 Եւ պատասխանի ետուն՝ չգիտել
8 թէ ուստի լցէ: Եւ Յիսուս
ասէ ցնոսա. Եւ ոչ ես ասեմ
ձեզ որով իշխանութեամբ առ-
նեմ զայս:

9 Սկսաւ ասել առ ժողովուրդն՝
զառակս զայս. Այր ոմն տըն-
կեաց այգի, և ետ զնա մշակաց.
և ինքն գնաց 'ի ճանապարհ ժա-
10 մանակս բազում: Եւ 'ի ժա-
մու՝ առաքեաց առ մշակսն ծա-
ռայ, զի 'ի պտղոյ այգւոյն
տացեն նմա. և մշակքն գան
հարին զնա, և արձակեցին ու-
11 նայն: Եւ յաւել միւս ևս
ծառայ յղել. նոքա և զնա ևս
գան հարին՝ անարգեցին, և
12 առաքեցին ունայն: Եւ յաւել

քահանայապետները և դպիր-
ները ծերերի հետ վերայ հա-
սան: Եւ ասացին նորան. Ասա 2
մեզ, ի՞նչ իշխանութիւնով ես
անում այդ բաները, կամ ո՞վ
է այդ իշխանութիւնը քեզ
տուողը: Եւ պատասխանեց և 3
ասաց նորանց. Ես էլ ձեզ մէկ
բան հարցնեմ, և ասացէք ինձ.
Յովհաննէսի մկրտութիւնը երկն- 4
քի՞ցն էր, թէ մարդկանցից: Եւ 5
նորանք իրանց միջումը միտք
արին և ասացին. Եթէ ասենք, 6
Երկնքիցը. կ'ասէ. Ապա ինչո՞ւ
չ'հաւատացիք նորան. և եթէ
ասենք, Մարդկանցից, բոլոր
ժողովուրդը կ'քարկոծէ մեզ.
վասնզի համոզուած են թէ Յո-
հաննէսը մարգարէ է: Եւ 7
պատասխանեցին չ'գիտեն, թէ
որ տեղից է: Եւ Յիսուսն էլ 8
նորանց ասաց. Ես էլ ձեզ
չեմ ասիլ՝ թէ ինչ իշխանու-
թիւնով եմ անում այս բաները:

Եւ սկսեց այս առակն ասել 9
ժողովրդին. Մի մարդ այգի
տնկեց, և մշակների տուաւ
նորան, և ինքն օտարութիւն
գնաց շատ ժամանակով: Եւ 10
ժամանակին մի ծառայ ուղարկեց
մշակների մօտ, որ այգու պըտ-
ղից իրան տան. բայց մշակ-
ները ծեծեցին նորան և դա-
տարկ ետ ուղարկեցին: Եւ նո- 11
րա վերայ մի ուրիշ ծառայ էլ
ուղարկեց. և նորանք նորան
էլ ծեծեցին, անպատիւ արին և

զերրորդն առաքել. Նոքա և զնա
վերաւորեցին, և հանին ար-
13 տաքս: Աստ տէր այգւոյն.
Զի՞նչ արարից, առաքեցից
զորդի իմ սիրելի, թերևս 'ի
14 սմանէ պատկառեսցին: Իբրև
տեսին զնա մշակքն, խորհեցան
ընդ միմեանս և ասեն. Սա է
ժառանգն. սպանցուք զսա, զի
մեր լինիցի ժառանգութիւնն:
15 Եւ հանին զնա արտաքս քան
զայգին՝ և սպանին. արդ զի՞նչ
արասցէ ընդ նոսա տէր այգւոյն.
16 Ո՞չ ապաքէն գայցէ և կորուս-
սանիցէ զմշակսն զայնոսիկ և
տացէ զայգին այլոց. իբրև
լուան՝ ասեն. Չարաւ մի լիցի:
17 Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝
ասէ. Իսկ զի՞նչ իցէ այն որ
գրեալն է. թէ Քարն զոր
անարգեցին շինողքն, նա եղև
18 գլուխ անկեան: Ամենայն՝ որ
ընդհարցի ընդ վէմս ընդ այս՝
խորտակեսցի, և յորոյ վերայ
19 անկցի՝ հոսեսցէ զնա: Եւ
խնդրէին դպիրքն և քահանա-
յապետք արկանել 'ի նա ձեռս
'ի նմին ժամու, և երկեան 'ի
ժողովրդենէն. զի գիտացին թէ
առ նոսա ասաց զառակն զայն:

20 Եւ ապա սպասեցին, և ա-
ռաքեցին զաւաճանս կեղծա-
ւորեալս զանձինս առ արդարս
ունել, զի ըմբռնեսցեն զնա
բանիւք, առ 'ի մատնել զնա
դատարկ ետ ուղարկեցին: Եւ 12
նորա վերայ մի երրորդն էլ
ուղարկեց. նորանք նորան էլ
վիրաւորեցինու դուրս հանեցին:
Եւ այգու տէրն ասաց. Ի՞նչ 13
անեմ. իմ սիրելի որդին ու-
ղարկեմ, գուցէ նորան տեսնել-
լով ամաչեն: Բայց մշակներն 14
երբոր նորան տեսան՝ իրար հետ
խորհուրդ արին և ասացին.
Սա է ժառանգը. եկէք սպա-
նենք սորան, որ ժառանգու-
թիւնը մերը լինի: Եւ այգուցը 15
դուրս հանեցին նորան և սպա-
նեցին. արդ այգու տէրն ի՞նչ
կ'անէ նորանց: Կ'գայ և այն 16
մշակներին կ'կորցնէ, և այգին
ուրիշների կ'տայ: Լսողներն
էլ ասացին. Չարաւ լիցի: Իսկ 17
նա մտիկ տուաւ նորանց և
ասաց. Ապա ի՞նչ է այն գրը-
ուածը, թէ Քարն՝ որ
շինողներն անարգեցին, նա ան-
կիւնի գլուխ եղաւ: Ամեն այս 18
քարի վերայ ընկողը կ'փշրուի,
և ում՝ վերայ որ նա ընկնի,
կ'ջարդէ նորան: Եւ քահա- 19
նայապետներն և դպիրները նոյն
ժամումն ուզում էին ձեռք ձր-
գել նորա վերայ, բայց ժո-
ղովրդից վախեցան. վասնզի
իմացան, որ իրանց համար ասաց
այն առակը:

Եւ դարանամուտ լինելով՝ 20
խաբերայ մարդիկ ուղարկեցին,
որ կեղծաւորութիւնով իրանց
անձերն արդար էին ցոյց տալիս,
որ խօսքով բռնեն նորան՝ տե-

պետութեան և իշխանութեան
21 դատաւորին: Հարցին ցնա և
ասեն. Ո՛ վարդապետ, գիտեմք
եթէ ուղիղ խօսիս և ուսու-
ցանես, և ո՛չ առնուս ակն՝ այլ
ճշմարտութեամբ զճանապարհն
22 Աստուծոյ ուսուցանես: Արժա՞ն
է մեզ Կայսեր հարկս տալ՝
23 թէ ո՛չ: Եւ նայեցեալ ընդ
խորամանկութիւն նոցա՝ ասէ
24 ցնոսա. Ցուցէք ինձ զդահե-
կանն. և նոքա ցուցին. և ասէ
Զի՞ր պատկեր և զգիր ունի.
պատասխանի ետուն և ասեն՝
25 զԿայսեր: Եւ նա ասէ ցնոսա.
Արդ երթայք տո՛ւք զԿայսերն
Կայսեր, և զԱստուծոյն Աս-
26 տուծոյ: Եւ ո՛չ կարացին զնա
ըմբռնել բանիւք առաջի ժողո-
վրդեանն. և զարմացեալ ընդ
պատասխանին նորա՝ լռեցին:

27 Ա՞տուցեալ ոմանք 'ի սա-
դուկեցւոցն՝ որք հակառակէին
28 չլինել յարութեան, հարցին
ցնա՝ և ասեն. Ո՛ վարդապետ՝
Ա՞ովսէս գրեաց մեզ, եթէ
ուրուք եղբայր մեռանիցի, որոյ
իցէ կին և նա անորդի իցէ, զի
առնուցու եղբայր նորա զկինն,
և յարուսցէ զաւակ եղբօր
29 իւրում: Արդ եօթն եղբարք
էին. և առաջնոյն առեալ կին՝
30 մեռաւ անորդի: Առ զնա և
31 երկրորդն, մեռաւ և նա ա-
նորդի: Առ զնա և երրորդն
նոյնպէս և եօթանեքին, և ո՛չ
բութեան և կուսակալի իշխա-
նութեանը նորան մատնելու
համար: Եւ նորան հարցրին 21
և ասացին. Ո՛ վարդապետ, գի-
տենք որ ուղիղ ես խօսում և
սովորեցնում, և երեսպաշտու-
թիւն չես անում. այլ ճշմար-
տութիւնով սովորեցնում ես
Աստուծոյ ճանապարհը: Արժ- 22
ա՞ն է մեզ՝ Կայսրին հարկ
տալ թէ ոչ: Նորանց խորա- 23
մանկութիւնը հասկանալով, ա-
սաց նորանց. Ինչո՞ւ էք փոր-
ձում ինձ. Ցոյց տուէք ինձ մի 24
դահեկան. Ո՞ւմ՝ պատկերն և
գիրն ունի ասա. Պատասխանե-
ցին և ասացին. Կայսեր: Եւ 25
նա ասաց նորանց: Ուրեմն կայս-
րինը կայսրին տուէք, և Աստու-
ծոյնը Աստուծոյն: Եւ չկարացին 26
խօսքով բռնել նորան ժողովրդի
առջևը. և նորա պատասխանի
վերայ զարմանալով լռեցին:

Սադուկեցիներիցն, որ հա- 27
կառակում են թէ յարութիւն
չկայ, ոմանք մօտ եկան և
հարցրին նորան, Եւ ասացին. 28
Ո՛ վարդապետ, Ա՞օսէս գրեց
մեզ, եթէ մէկի եղբայրը մեռնէ,
որ կին ունենայ, և ինքն անորդի
մեռնէ, որ նորա եղբայրն այն
կինն առնէ և իր եղբօր համար
զաւակ յարուցանէ: Հիմա եօթն 29
եղբարք կային, և առաջինն կին
առաւ և առանց զաւակի մեռաւ:
Եւ երկրորդն առաւ այն կինը, 30
և նա էլ մեռաւ առանց զաւակի:
Երրորդն էլ առաւ նորան. 31

32 թողլն որդիս։ Մ՝եռաւ և կինն։
33 Արդ՝ ի յարութեան ո՞ւմ՝ ի նո-
ցանէ լինիցի կին. զի եօթանե-
34 քին կալան զնա կին։ Պատաս-
խանի ետ Նոցա Յիսուս և ասէ.
Որդիք աշխարհիս այսորիկ կա-
նայս առնեն՝ և արանց լինին։
35 Իսկ որ արժանի լինիցին այնմ
աշխարհի հասանել՝ և յարու-
թեանն որ՝ ի մեռելոց, ո՛չ կա-
նայս առնեն, և ո՛չ արանց
36 լինին։ Զանգի և ո՛չ մեռանել
ևս կարեն, զի հաւասար հրեշ-
տակաց են՝ և որդիք Աստուծոյ.
քանզի յարութեան որդիք են։
37 Այլ զի յառնեն մեռեալք,
և Մովսէս գուշակեաց՝ ի
մորենւոջն, որպէս ասէ զՏեառ-
նէ Աստուծոյ Աբրահամու և
զԱստուծոյ Սահակայ և զԱս-
38 տուծոյ Յակովբայ։ Եւ Աս-
տուած չէ՛ մեռելոց՝ այլ կենդա-
նեաց, զի ամենեքին նմա կեն-
39 դանի են։ Պատասխանի ետուն
ոմանք՝ ի դպրացն և ասեն.
Վարդապետ՝ բարւոք ասացեր։
40 Եւ ո՛չ ևս ոք իշխէր հարցանել
զնա՝ և ոչինչ։

41 Ասէ և առ նոսա. Օ՞խարդ
ասեն զՔրիստոսէ՝ թէ որդի է
42 Դաւթի. Օ՞ի ինքն Դաւիթ
ասէ՝ ի գիրս Սաղմոսաց. Ասաց
այսպէս Հէնց այն եօթն էլ
և որդիք չթողլն, և մեռան։
Եւ ամենից յետոյ այն կինն էլ 32
մեռաւ։ Արդ յարութեան ժա- 33
մանակին նորանցից որին պիտի
լինի կին. վասնզի այն եօթն
էլ կին առին նորան։ Եւ Յի- 34
սուսը պատասխանեց և ասաց
նորանց. Այս աշխարհի որ-
դիքը կին են առնում և մարդու-
են գնում։ Բայց նորանք որ 35
արժանի լինին այն աշխարհքին
հասանելու և մեռելներից յարու-
թիւն առնելու, ոչ կին կ՝առ-
նեն և ոչ մարդու կ՝գնան։
Եւ ոչ իսկ կարող են մեռնել, 36
վասնզի հրեշտակների հաւա-
սար են և Աստուծոյ որդիք,
յարութեան որդիք լինելով։
Բայց թէ մեռելները յարու- 37
թիւն կ՝առնեն, Մ՝օսէսն էլ
մարգարէացաւ մորենու մօտ,
ինչպէս Տիրոջ համար ասում
է՝ Աստուած Աբրահամու և
Աստուած Իսահակայ և Աս-
տուած Յակոբայ։ Իսկ Աս- 38
տուած մեռելների չէ, այլ կեն-
դանիների. վասնզի ամենքը կեն-
դանի են նորան։ Դպիրներից 39
ոմանք պատասխանեցին և ասա-
ցին. Վարդապետ, լաւ ասա-
ցիր. Եւ այլ ևս չէին համար- 40
ձակում նորանից ոչ մի բան
հարցնելու։

Եւ նորանց ասաց. Ի՞նչպէս 41
են ասում՝ Քրիստոսի համար՝
թէ Դաւթի որդի է։ Եւ 42
Դաւիթ ինքն Սաղմոսաց գրբ-

Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ
43 իմմէ, Մինչև եդից զթշնամիս
քո պատուանդան ոտից քոց։
44 Իսկ արդ եթէ Դաւիթ զնա
Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա
ի՞նչ է։

45 Եւ լուիլու ամենայն ժողո-
վրդեանն ասէ ցաշակերտսն.
46 Զգո՛ւշ լերուք՝ ի դպրացն, որ
կամին պատմուճանօք շրջել, և
սիրեն ողջոյնս՝ ի հրապարակս՝
և զնախաթոռս՝ ի ժողովուրդս,
47 և զբարձերէցս յընթրիս։ Որ
ուտեն զտունս այրեաց, և
պատճառանօք յերկարեն զա-
ղօթքս։ Նոքա ընկալցին աւելի
դատաստանս։

ԳԼ. ԻԸ

1 Եւ հայեցեալ ետես զմեծա-
տունսըն՝ որ արկանէին զտուրս
2 իւրեանց՝ ի գանձանակն։ Ետես
և զկին ոմն այրի աղքատ, որ
3 արկ անդր երկուս լումայս։ Եւ
ասէ. Արդարև ասեմ ձեզ.
զի այրին այն աղքատ՝ աւելի
4 արկ քան զամենեսին։ Զամենեքին
նոքա՝ ի մթերից իւրեանց
արկին յընծայսն Աստուծոյ.
բայց նա՝ ի կարօտութենէ իւրմէ
զամենայն զկեանս իւր զոր
ունէր՝ արկ։

.քումն ասում է. Տէրն իմ Տի-
րոջն ասաց՝ Իմ՝աջ կողմը նստիր,
Մինչև որ .քո թշնամիները
ոտացդ պատուանդան դնեմ։ 43
Արդ եթէ Դաւիթ Տէր է 44
կոչում նորան, ապա ի՞նչպէս
է նորա որդի։

Եւ երբոր բոլոր ժողովուրդը 45
լսում էր, ասաց իր աշակերտ-
ներին. Զգոյշ կացէք դպիր-
ներից, որ փառաւոր պատմու- 46
ճաններով կամենում են ման-
գալ և սիրում են հրապարակ-
ներումը բարև առնելը, և
ժողովարանների մէջ առաջին
աթոռները, և ընթրիքներումը
վերևի տեղերը։ Որ որբևայ- 47
րիների տներն ուտում են, և
պատճառանքով երկար աղօթք
են անում. նորանք աւելի դա-
տապարտութիւն կ՝ընդունին։

ԳԼ. ԻԸ

Եւ մտիկ տուաւ, տեսաւ հա- 1
րուստներին, որ իրանց տուրքը
գանձանակն էին գցում։ Մ՝ի 2
որբ եայրի աղքատ կին էլ
տեսաւ, որ երկու լումայ գցեց
այնտեղ։ Եւ ասաց. Ճշմարիտ 3
ասում եմ՝ ձեզ, թէ այս աղքատ
որբևայրին ամենից աւելի գցեց։
Վասն զի նորանք ամենքն 4
իրանց աւելցածներից գցեցին
Աստուծոյ ընծաների մէջ, իսկ
սա իր կարօտութիւնից իր բո-
լոր ապրուստն՝ որ ունէր
գցեց։

5 Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ Գեղեցիկ վիմօք և աշտա-
բակօք զարդարեալ է, ասէ. Այդ ամենայն զոր տեսանէք,
6 եկեսցեն աւուրքն՝ յորս ոչ թողցի այդր քար ի քարի վե-
7 րայ, որ ոչ քակտեսցի: Հարցին զնա՝ ասեն. Վարդապետ՝
ե՞րբ լինիցի այդ, և զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինե-
8 լոց իցէ: Եւ նա ասէ. Զգոյշ կացէք, մի խաբիցիք. զի բա-
զումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ Ես եմ, և մերձեցաւ
ժամանակ. մի երթայցէք զկնի
9 նոցա: Եւ յորժամ լսիցէք պա-
տերազմունս և խռովութիւնս՝
մի զարհուրիցիք. զի պարտ է
նախ այնմ լինել. այլ ոչ առ-
10 ժամայն կատարած: Յայն-
ժամ ասէ ցնոսա. Յարիցէ
ազգ յազգի վերայ. և թա-
11 գաւորութիւն ի թագաւորու-
թեան վերայ: Եւ շարժմունք
մեծամեծք. և ի տեղիս տեղիս
սովք և սրածութիւնք, եղիցին
արհաւիրք և նշանք մեծամեծք
12 յերկնից: Այլ յառաջ քան
զայս ամենայն, մխեսցեն զձեռս
իւրեանց ի ձեզ՝ և հալածեսցեն.
մատնեսցեն ի ժողովուրդս և ի
բանտս, և տանիցին առաջի դա-
տաւորաց և թագաւորաց վասն
13 անուան իմոյ: Եւ լինիցի ձեզ
14 այն ի վկայութիւն: Արդ դիք
ի սիրտս ձեր՝ մի յառաջագոյն
15 կրթել տալոյ պատասխանի: Զի
ես տաց ձեզ բերան և իմաստու-

Եւ երբոր ոմանք ասում էին 5
տաճարի համար, թէ Գեղեցիկ
քարերով և աշտարակներով
զարդարուած է, ասաց. Այդ 6
բոլորն որ տեսնում էք, օրեր
կ'գան, որ այդ տեղ քար քարի
վերայ չի թողուիլ որ չքքան-
գուի: Եւ հարցրին նորան և 7
ասացին. Վարդապետ, երբ
կ'լինին սորանք և ի՞նչ է նշանը՝
երբոր այդ լինի: Այս էլ ասաց. 8
Զգոյշ կացէք՝ մի խաբուիք.
վասնզի շատերը կ'գան իմ
անունովը և կասեն, թէ Ես եմ.
և ժամանակը մօտեցաւ. արդ
նորանց ետևից մի գնաք: Այլ 9
երբ որ պատերազմներ և խռով-
ութիւններ կ'լսէք, մի զար-
հուրիք. քանզի պէտք է, որ
առաջ նա լինի, բայց դեռ շու-
տով վերջը չէ: Այն ժամանակ 10
նորանց ասաց. Ազգ ազգի վե-
րայ վեր կ'կենայ և թագաւո-
րութիւն թագաւորութեան վե-
րայ: Եւ մեծամեծ դեղնա- 11
շարժներ և տեղ տեղ սովեր և
սաստիկ մահեր կ'լինին. և երկին-
քից ահաւոր բաներ և մեծա-
մեծ նշաններ կ'լինին: Այլ 12
այս բոլոր բաներից առաջ
իրանց ձեռները ձեզ վերայ կը-
ձգեն և կ'հալածեն. ժողովա-
բաններին և բանտերի մէջ կըմատ-
նեն, և կ'տանեն թագաւորների
և կուսակալների առաջ՝ իմ
անուան համար: Եւ դա կ'լինի 13
ձեզ վկայութեան համար: Արդ 14
ձեր սրտի մէջ դրէք, որ առա-

թիւն, որում ոչ կարիցեն կալ
հակառակ՝ կամ տալ պատաս-
16 խանի ամենայն հակառակորդքն
ձեր: Մատնեսջիք և ի ծնողաց
և յեղբարց և յազգականաց և
ի բարեկամաց, և սպանանիցեն
17 ի ձէնջ. Եւ եղիջիք ատելեալք
յամենեցունց վասն անուան
18 իմոյ. Եւ մազ մի ի գլխոյ
19 ձերմէ ոչ կորիցէ: Եւ համ-
բերութեամբ ձերով, ստասջիք
զոգիս ձեր.

20 Այլ յորժամ տեսանիցէք
շուրջ պատեալ զօրօք զԵրու-
սաղէմ, յայնժամ գիտասջիք
21 թէ մերձ է աւեր նորա: Յայն-
ժամ որ ի Հրէաստանի իցեն՝
փախիցեն ի լերինս, և որ ի
միջի նորա իցեն՝ խուսեսցեն. և
որ ի գաւառսն իցեն՝ մի մտցեն
22 ի նա. Զի աւուրքն վրէժխնդ-
րութեան են այնոքիկ՝ առ ի
կատարելոյ ամենայն գրելոց:
23 Այլ վա՜յ իցէ յղեւաց և ըստն-
տուաց յաւուրսն յայնոսիկ. զի
եղիցի տագնապ մեծ ի վերայ
երկրի, և բարկութիւն ժողո-
24 վրդեանն այնմիկ: Եւ անկցին
ի սուր սուսերի, և գերեսցին
յամենայն Հեթանոսս. և Երու-
սաղէմ եղիցի կոխան յազգաց՝
մինչև կատարեսցին ժամանակք
25 հեթանոսաց: Եւ եղիցին նշանք
յարեգակն և ի լուսին և յաս-
տեղսս. և յերկրի տագնապ

ջուց հոգս չանէք պատաս-
խանելու համար: Վասնզի ես 15
բերան և իմաստութիւն կ'տամ
ձեզ, որին չեն կարողանալ
հակառակ խօսիլ և ոչ ընդդի-
մանալ ձեր բոլոր հակառա-
կորդները: Եւ կ'մատնուիք 16
ծնողներից և եղբայրներից և
ազգականներից և բարեկամնե-
րից էլ և ձեղանից կ'սպանեն:
Եւ բոլորին ատելի կ'լինիք իմ 17
անուան համար: Եւ ձեր գլ- 18
խից մէկ մազ չի կորչիլ: Եւ 19
ձեր համբերութեամբը կ'շահէք
ձեր հոգիները:

Այլ երբոր կ'տեսնէք Երու- 20
սաղէմը զօրքերով շրջապա-
տուած, այն ժամանակ գիտա-
ցէք, թէ նորա աւերումը մօտ
է: Այն ժամանակ նորանք, 21
որ Հրէաստանումն են, թող
լեռները փախչին. և նորանք,
որ նորա միջումն են, թող
հեռանան. և նորանք, որ նորա
գաւառներումն են, թող չըմտ-
նեն նորա մէջ: Վասնզի այն 22
օրերը վրէժխնդրութեան օրեր
են, որ ամեն գրուածները կա-
տարուին: Այլ այն օրերումը 23
վա՜յ յղիներին և ծիծ տուողնե-
րին. քանզի մեծ նեղութիւն
կ'լինի երկրիս վերայ, և բար-
կութիւն այդ ժողովրդի վերայ:
Եւ սրի բերանով կ'ընկնին, և 24
բոլոր հեթանոսների մէջ գերի
կ'տարուին. և Երուսաղէմը
հեթանոսներից ոտնակոխ կ'լինի,
մինչև որ հեթանոսների ժա-

հեթանոսաց՝ յահեղ բարբառոյ
իբրև ծովու և խռովութեան.
26 Յելանելոյ ոգւոց մարդկան
յերկիւղէ՝ և 'ի կարծեաց եկելոց
'ի վերայ տիեզերաց. զի զօրու-
27 թիւնք երկնից շարժեսցին։ Եւ
յայնժամ՝ տեսցեն զՈրդի մար-
դոյ եկեալ՝ ամպովք զօրու-
28 թեամբ և փառօք բազմաք։ Եւ
յորժամ սկսանիցի այս ել-
նել, ամբարձջիք և բարձրացուս-
ջիք զգլուխս ձեր. զի մերձ է
փրկութիւն ձեր։

29 Եւ ասաց առակ մի նոցա.
Տեսէք զթզենիդ և զամենայն
30 ծառս։ Յորժամ ցուցանիցեն
զպտուղ իւրեանց, տեսանէք և
'ի նոցանէ ճանաչէք եթէ մերձ
31 է ամառն։ Այնպէս և դուք՝
յորժամ տեսանիցէք զայս ամ-
նայն եղեալ՝ գիտասջիք թէ մերձ
է արքայութիւն Աստուծոյ։
32 Ամէն ասեմ՝ ձեզ. թէ Ոչ
անցցէ ազգս այս, մինչև այս
33 ամենայն լինիցի։ Երկինք և
երկիր անցցեն՝ և բանք իմ ոչ
34 անցանիցեն։ Զգոյշ լերուք
անձանց, գուցէ ծանրանայցեն
սիրտք ձեր շուայտութեամբ և
արբեցութեամբ և հոգովք
աշխարհականաց, և յանկար-
ծակի հասանիցէ 'ի վերայ ձեր
մանակնեքը կատարուին։ Եւ 25
նշաններ կ'լինին արեգակումբ
և լուսնումբ և աստղներումբ,
և երկրի վերայ հեթանոսների
խռովութեան տագնապելով,
ծովը կ'գոչէ և կ'ծփան ալիք-
ները։ Որովհետև մարդկանց 26
սրտերը կ'նուաղին վախից և
այն բաների սպասելուցն, որ
բոլոր աշխարհքի վերայ պիտի
գան. վասնզի երկնքի զօրու-
թիւնները կ'շարժուին։ Եւ 27
այն ժամանակ կ'տեսնեն Որդին
մարդոյ ամպերի վերայ եկած
զօրութեամբ և մեծ փառքով։
Եւ երբոր այս բաները կ'կսկսին 28
լինիլ, վեր հանեցէք և բարձ-
բացրէք ձեր գլխները. վասնզի
ձեր փրկութիւնը մօտ է։
Եւ նորանց մի առակ ասաց. 29
Տեսէք թզենին և բոլոր ծա-
ռները։ Երբոր արդէն բողբո-
30 ջած են, տեսնելով՝ ինքներդ
իմանում էք, թէ ամառը մօտ
31 է։ Այնպէս էլ դուք. երբոր 31
այս բոլոր բաները եղած տես-
նէք, գիտացէք, որ Աստուծոյ
արքայութիւնը մօտ է։ Ճշ- 32
մարիտ ասում՝ եմ ձեզ, թէ
այս ազգը չի անցնիլ, մինչև՝
այս բոլորը լինի։ Երկինքն և 33
երկիրս կ'անցնեն, բայց իմ
խօսքերը չեն անցնիլ։ Զգոյշ 34
կացէք անձներիդ, մի գուցէ
ձեր սրտերն ծանրանան շատա-
կերութեամբ և արբեցութեամբ
և ապրուստի հոգսերով, և այն
օրը յանկարծ հասնէ ձեզ վե-

35 օրն այն. Զի իբրև զորոգայթ
հասանիցէ 'ի վերայ ամենեցուն,
որ բնակեալ են ընդ ամենայն
36 երեսս երկրի։ Արթուն կացէք
այսուհետև, յամենայն ժամ
աղօթս արարէք, զի արժանի
լինիջիք զերծանել յայնմ՝ յամե-
նայնէ որ լինելոց է, և կալ
առաջի Որդւոյ մարդոյ։
37 Եւ 'ի տուէ 'ի տաճարին
ուսուցանէր, և զգիշերս ելեալ
ագանէր 'ի լերինն՝ որ կոչէր
38 Ձիթենեաց։ Եւ ամենայն ժո-
ղովուրդն կանխէր ընդ առաւօտս
առ նա 'ի տաճարն լսել 'ի
նմանէ։

ԳԼ. ԻԲ

1 Մերձեցաւ տօն բաղարջա-
2 կերացն՝ որ կոչէր Պասքա. Եւ
խնդրէին քահանայապետքն և
դպիրքն՝ թէ որպէս սպանանիցեն
զնա. բայց երկնչէին 'ի ժողո-
վրդենէ անտի։
3 Ապա եմուտ Սատանայ 'ի
Յուդա 'ի կոչեցեալն Իսկա-
4 ریովտացի, որ էր 'ի թուոյ
երկոտասանից։ Ազգաւ եդ
բանս ընդ քահանայապետսն և
ընդ դպիրս և ընդ իշխանս
5 ժողովրդեանն, զի մատնեսցէ
զնա նոցա։ Եւ խնդացին, և
խոստացան տալ նմա արծաթ։
6 Եւ յանձն առ, և խնդրէր
պարապ մատնել զնա նոցա՝
մեկուսի յամբոխէն։

բայ. Ա՝ ասնզի որոգայթի պէս 35
կ'հասնէ այն ամենքի վերայ,
որ բոլոր երկրի երեսի վերայ
բնակած են։ Ուրեմն արթուն 36
կացէք, և ամեն ժամանակ ա-
ղօթք արէք, որ արժանի լինիք
աղատուիլ այն բոլոր բանե-
րից, որ պիտի լինին, և կանգ-
նել Որդոյ մարդոյ առջև։
Եւ ցերեկները տաճարումը 37
սովորեցնում՝ էր և գիշերները
դուրս էր գալիս և կենում՝ այն
լեռան վերայ, որ Ձիթենեաց
լեռան էր կոչվում։ Եւ բոլոր 38
ժողովուրդն առաւօտանց կա-
նուխգնում էր տաճարն նորա
մօտ նորանից լսելու։

ԳԼ. ԻԲ

Եւ բաղարջակերաց տօնը 1
մօտեցաւ, որ զատիկ է կոչվում։
Եւ քահանայապետներն և դը- 2
պիրները որոնում էին, թէ
ինչպէս սպանեն նորան. վասնզի
ժողովրդից վախենում էին։
Սատանան էլ մտաւ Իսկա- 3
ریովտացի ասուած Յուդայի մէջ,
որ տասներկուսի թուից էր։
Եւ գնաց քահանայապետների և 4
իշխանների հետ խօսք կապեց,
թէ նորան ինչպէս մատնէ նո-
րանց։ Եւ նորանք ուրախա- 5
ցան և խոստացան՝ արծաթ տալ
նորան։ Եւ նա խօսք տուաւ 6
և յարմար ժամանակ էր որո-
նում՝ որ նորան մատնէ նորանց
առանց ամբոխի։

7 Եկն օր բաղարջակերացն,
յորում՝ օրէն էր զենուլ զզատ-
8 սեքն։ Եւ առաքեաց զՊետրոս
և զՅովհաննէս՝ և ասէ. Երթայք պատրաստեցէք մեզ
9 զզատսէքն՝ զի կերիցուք։ Եւ
նոքա ասեն. Որ՞ կամիս զի
10 պատրաստեսցուք։ Եւ ասէ
ցնոսա. Ահա իբրև մտանիցէք
'ի քաղաքն, պատահեսցէ ձեզ
այր մի բարձեալ սափոր ջրոյ.
երթիջիք զհետ նորա 'ի տունն
11 յոր մտանիցէ. Եւ ասասջիք
ցտանուտէր տանն. Ասէ արդապետ
ասէ քեզ. Որ՞ն են վանքն իմ.
յորում զզատսէքն ուտիցեմ
12 աշակերտօքս հանդերձ։ Եւ նա
ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ
զարդարեալ, և անդ պատրաս-
13 տեսջիք։ Եւ գնացեալ գտին
որպէս և ասացն նոցա. և պատ-
րաստեցին զզատսէքն։

14 Եւ իբրև ժամ եղև՝ բազմե-
ցաւ, և երկոտասան առաքեալքն
15 ընդ նմա։ Եւ ասէ ցնոսա.
Յանկանալով ցանկացայ զայս
պասսէք ուտել ընդ ձեզ՝ մինչև
16 չարչարեալ իցեմ։ Բայց ասեմ
ձեզ, թէ ոչ ևս կերայց 'ի սմանէ՝
մինչև լցցի յարքայութեան
17 Աստուծոյ։ Եւ ընկալեալ բա-
ժակ՝ գոհացաւ և ասէ. Առէք
զայդ՝ և բաժանեցէք 'ի ձեզ։
18 Ասեմ ձեզ՝ թէ Ցայսմ հետէ
ոչ արբից 'ի բերոյ որթոյ՝ մինչև
եկեսցէ արքայութիւն Աստուծոյ։

Եւ բաղարջակերաց օրն եկաւ, 7
որում պէտք էր զատիկը մոր-
թել։ Եւ Պետրոսին և Յո- 8
հաննէսին ուղարկեց և ասաց.
Գնացէք զատիկը պատրաստե-
ցէք մեզ համար որ ուտենք,
և նորանք ասացին. Ի՞նչ տեղ 9
ես կամենում, որ պատրաս-
տենք։ Նա էլ ասաց նորանց. 10
Ահա երբոր քաղաքը կ'մտնէք,
մի մարդ կ'պատահի ձեզ, որ
ջրի կուժ է տառում. նորա ետևից
գնացէք այն տունն, որ նա
կ'մտնէ։ Եւ տան տիրոջն ա- 11
սացէք. Ասէ արդապետն ասում
է քեզ, Որ՞ է այն օթևանը,
ուր զատիկն ուտեմ աշակերտ-
ներիս հետ։ Եւ նա ձեզ մի 12
մեծ վերնատուն ցոյց կ'տայ
զարդարուած. այնտեղ պատ-
րաստեցէք։ Եւ գնացին այն- 13
պէս գտան, ինչպէս ասաց նո-
րանց. և զատիկը պատրաստե-
ցին։

Եւ երբոր ժամն եղաւ, սե- 14
ղան նստեց. և տասներկու
առաքեալներն էլ նորա հետ։
Եւ նորանց ասաց. Յանկանա- 15
լով ցանկացայ այս զատիկը
ձեզ հետ ուտել իմ չարչարվե-
լուցն առաջ։ Ասելով ասում 16
եմ ձեզ, թէ սորանից էլ երբէք
չեմ ուտիլ, մինչև որ կատա-
րուի Աստուծոյ արքայութիւ-
նումը։ Եւ բաժակն առաւ՝ 17
գոհացաւ և ասաց. Առէք գո-
րան և ձեր միջումը բաժանե-
ցէք։ Ասելով ասում եմ ձեզ, 18

19 Եւ առեալ հաց՝ գոհացաւ,
երբեկ և ետ նոցա՝ և ասէ. Այս
է մարմին իմ, որ վասն բազմաց
տուեալ. զայս արասջիք առ
20 իմոյ յիշատակի։ Նոյնպէս և
զբաժակն յետ ընթրեացն առ՝
և ասէ. Այս բաժակ է նոր
ուխտ իմով արեամբ վասն ձեր
հեղլոյ։

21 Բայց աւասիկ ձեռն մատնչի
22 իմոյ ընդ իս 'ի սեղանս։ Եւ
Որդի մարդոյ ըստ սահմանելոյն
երթայ, բայց վա՜յ մարդոյն
այնմիկ՝ յոյր ձեռն մատնիցի։
23 Եւ նոքա սկսան խնդրել ընդ
միմեանս, թէ ո՞վ է 'ի նոցանէ՝
որ զայն գործելոց իցէ։

24 Եւ եղև հակառակութիւն 'ի
մէջ նոցա. թէ ո՞ 'ի նոցանէ
25 համարիցի մեծ։ Եւ նա ասէ
ցնոսա. Թագաւորք ազգաց
տիրեն նոցա, և որ իշխեն նոցա
26 բարերարք կոչին. Այլ դուք
ոչ այնպէս. այլ որ մեծն է 'ի
ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն, և
առաջնորդն իբրև զսպասաւորն։
27 Ո՞վ է մեծ, բազմա՞ն՝ եթէ
սպասաւորն, ո՞չ ապաքէն բազ-
մաւն. բայց ես եմ 'ի միջի
28 ձերում իբրև սպասաւոր։ Եւ
դուք էք՝ որ ցանգ կայիք ընդ
29 իս 'ի փորձութիւնս իմ. Եւ ես
ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր

թէ որթի բերբիցն էլ չեմ խմիլ,
մինչև որ Աստուծոյ արքայու-
թիւնը գայ։

Եւ հաց առաւ, գոհացաւ, 19
կտրեց և նորանց տուաւ, և
ասաց. Այս է իմ մարմինը,
որ ձեզ համար տրվում է. այս
արէք իմ յիշատակի համար։
Այնպէս էլ ընթրիքից յետոյ 20
բաժակն առաւ, և ասաց. Այս
բաժակը նոր ուխտն է իմ արիւ-
նովը, որ ձեզ համար թափ-
վում է։

Սակայն ահա իմ մատնողի 21
ձեռն ինձ հետ սեղանի վերայ
է։ Եւ Որդին մարդոյ գնում 22
է ինչպէս սահմանուած է. բայց
վայ այն մարդուն, որի ձեռովն
կ'մատնուի։ Եւ նորանք ըսկսե- 23
ցին հարցուփորձ անել իրանց
մէջ, թէ իրանցից ո՞վ է արդեօք
նա, որ այն բանը գործելու է։

Նորանց միջումն հակառա- 24
կութիւն էլ եղաւ, թէ իրան-
ցից ո՞վ պիտի մեծ համարուի։
Եւ նա ասաց նորանց. Ազգերի 25
թագաւորները տիրապետում
են նորանց վերայ, և նորանց
վերայ իշխանութիւն անողները
բարերար են կոչվում։ Բայց 26
դուք ոչ այնպէս. այլ ձեր միջի
մեծը՝ թող փոքրագոյնի պէս
լինի, և առաջնորդը ծառայողի
պէս։ Որանցի՞ ո՞վ է մեծ. սե- 27
ղան նստո՞ղը թէ ծառայո՞ղը.
չէ՞ որ սեղան նստողը. բայց ես
ձեր միջումը ծառայողի պէս
եմ։ Իսկ դուք էք, որ միշտ 28

իմ ուխտեաց ինձ զարքայու-
30 թիւն. Օ՛ի ուտիցէք և ըմպիցէք
'ի սեղան իմ յարքայութեանն
իմում, և նստիցէք յերկոտասան
աթոռս՝ դատել զերկոտասան
ազգ Իսրայէլի:

31 Եւ ասէ Տէր. Սիմոն Սիմոն
ահա Սատանայ խնդրեաց զձեզ
32 խարբալել իբրև զցորեան. Բայց
ես աղաչեցի վասն քո՝ զի մի
պակասեսցին հաւատք քո. և
դու երբեմն դարձցիս՝ և հաստա-
33 տեսցես զեղբարս քո: Եւ նա
ասէ ցնա. Տէր՝ ընդ քեզ պատ-
րաստ եմ և 'ի բանտ և 'ի մահ
34 երթալ: Եւ նա ասէ ցնա.
Ասեմ քեզ Պետրէ, չիցէ այսօր
հաւու խօսեալ՝ մինչև երիցս
ուրացիս զիս չգիտել:

35 Եւ ասէ ցնոսա. Յորժամ
առաքեցի զձեզ առանց քսակի և
մախաղի և կօշկաց, միթէ
կարօտացաք իմիք: Եւ նոքա
36 ասեն, Եւ ո՛չ իմիք: Ապա ասէ.
Բայց այժմ որ ունիցի քսակ՝
բարձցէ, նոյնպէս և մախաղ. և
որ ոչն ունիցի, վաճառեսցէ
զձորձս իւր՝ և գնեսցէ իւր
37 սուսեր: Բայց ասեմ ձեզ. զի
այս ևս որ գրեալ է՝ պարտ է զի
կատարեսցի յիս, թէ ընդ
անօրէնս համարեցաւ. զի որ
վասն իմ ինչ է՝ վճարեալ է:

ինձ հետ կենում էիք իմ փոր-
ձութիւններումը: Եւ ես ուխ- 29
տում եմ ձեզ Թագաւորութիւն՝
ինչպէս իմ Հայրն էլ ինձ թա-
գաւորութիւն ուխտեց. Որ ու- 30
տէք և խմէք իմ սեղանի վերայ
իմ արքայութիւնումը, և ա-
թոռների վերայ նստէք՝ Իս-
րայէլի տասներկու ցեղին դա-
տաստան անելու համար:

Եւ Տէրն ասաց. Սիմոն 31
Սիմոն. ահա սատանան ձեզ
ուզեց, որ խաղալէ ցորենի պէս.
Բայց ես աղաչեցի քեզ համար, 32
որ քո հաւատքը չ'պակասի. և
դու երբ դառնաս, եղբայրնե-
րիդ հաստատիր: Նա էլ ասաց 33
Նորան. Տէր. ես պատրաստ եմ
քեզ հետ բանտը և մահն էլ
գնալու: Եւ նա ասաց. Ասում 34
եմ քեզ, Պետրոս, այսօր հաւը
չի խօսիլ, մինչև որ դու երեք
անգամ կ'ուրանաս՝ չ'գիտել
ինձ:

Եւ Նորանց ասաց. Երբոր 35
ուղարկեցի ձեզ առանց քսակի,
և պարկի և կօշիկների, միթէ
կարօտեցաք մի բանի: Նորանք 36
էլ ասացին. Ոչինչի. ապա ա-
սաց Նորանց. Բայց հիմա քսակ
ունեցողը թող առնէ, այնպէս
էլ պարկը. և չունեցողը՝ թող
իր հանդերձը ծախէ և իրան
համար սուր առնէ: Վ ասանդ 37
ասում եմ ձեզ, թէ դեռ այս
գրուածն էլ պէտք է կատարուի
ինձանում, թէ Անօրէնների հետ
համարուեցաւ. քանզի ինչ որ

38 Եւ նոքա ասեն. Տէր՝ ահաւասիկ
են աստ երկու սուրք, և նա
ասէ ցնոսա. Բաւական են:

39 Եւ ելեալ գնաց ըստ սովորու-
թեանն 'ի լեառն Ձիթենեաց.
գնացին զհետ նորա և աշա-
40 կերտքն: Իբրև եհաս 'ի տեղին՝
ասէ ցնոսա. Յաղօթս կացէք
41 չմտանել 'ի փորձութիւն: Եւ
ինքն մեկնեցաւ 'ի նոցանէ իբրև
42 քարնկէց մի, եդ ծունր՝ կայր
յաղօթս, Եւ ասէր. Հայր եթէ
կամիս՝ անցո՛ զբաժակս զայս
43 յինէն. բայց ո՛չ իմ կամք՝ այլ
քոդ լիցին: Եւ երևեցաւ նմա
հրեշտակ յերկնից և զօրացու-
ցանէր զնա. և էր 'ի տագնապի,
44 և մտադիւրութեամբ ևս կայր
յաղօթս: Եւ հոսէին 'ի նմանէ
քրտունք իբրև զկայլակս արեան՝
45 ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր:
Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկն
46 առ աշակերտսն, եգիտ զնոսա 'ի
քուն 'ի տրտմութենէն. Եւ
ասէ ցնոսա. Ինչ՞ ննջէք, արի՛ք
կացէք յաղօթս՝ զի մի մտանի-
ցէք 'ի փորձութիւն:

47 Եւ մինչդեռ խօսէր, ահաւա-
սիկ ամբոխ. և որ կոչէրն
Յուդա՝ մի յերկոտասանիցն ա-
ռաջնորդէր նոցա: Իբրև մերձե-
ցաւ առ Յիսուս՝ համբուրեաց

ինձ համար ասուած է, կա-
տարվում է: Նորանք էլ 38
ասացին. Տէր, ահա այստեղ
երկու սուր կայ. և նա ասաց
Նորանց. Բաւական է:

Եւ դուրս ելաւ իր սովորու- 39
թեան պէս՝ գնաց Ձիթենեաց
լեառը, և աշակերտներն էլ
Նորա ետևից գնացին: Եւ երբ- 40
որ այն տեղը հասաւ, Նորանց
ասաց. Աղօթք արէք, որ փոր-
ձութեան մէջ չ'մտնէք: Եւ 41
ինքն Նորանցից հեռացաւ մի
քարընկէցի չափ, ծունկ դրաւ,
աղօթք էր անում. Եւ ասում. 42
Հայր, եթէ կամիս այս բա-
ժակը անցրու ինձանից. սա-
կայն ոչ թէ իմ կամքը՝ բայց
քո կամքը լինի: Եւ հրեշտակ 43
երևեցաւ Նորան երկնքիցը, և
զօրացնում էր Նորան, և տագ-
նապի մէջ լինելով, աւելի եռան-
դով էր աղօթք անում: Եւ 44
Նորա քրտինքն էր ինչպէս
արիւնի կաթիլք, որ թափ-
վում են երկրի վերայ: Եւ 45
աղօթքից վերկացաւ եկաւ իր
աշակերտների մօտ, և Նորանց
քնի մէջ գտաւ տրտմութիւնից.
Եւ ասաց Նորանց. Ինչո՞ւ էք 46
քնում. վերկացէք, աղօթք արէք,
որ փորձութեան մէջ չըմըտ-
նէք:

Եւ նա տակաւին խօսելիս, 47
ահա մի ամբոխ. և Յուդայ
կոչուածը՝ այն տասներկուսիցը
մէկը՝ գնում էր Նորանց առջև.
և մօտեցաւ Յիսուսին, որ

զնա. *քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ ընդ որում
48 ես համբուրեցից, նա է՝ զնա
ունկնցիք։" Ասէ ցնա Յիսուս.
Յո՛ւդա՝ համբուրելովն մատնես
49 զՈրդի մարդոյ։ Իբրև տեսին որ
զնովաւն էին՝ որ ինչ եղեւն, ասեն
ցնա. Տէ՛ր՝ հարցուք զնոսա
50 սրով։ Եւ եհար մի ոմն ՝ի
նոցանէ զքահանայապետին ծա-
ռայ, և ՝ի բաց եհան զաջոյ
51 ունկն նորա։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ. Թո՛ղ
տուք մինչև ցայդ վայր. և մատու-
ցեալ յունկնն՝ բժշկեաց զնա։
52 Եւ ասէ ցեկեալսն ՝ի վերայ
Նորա՝ զքահանայապետն և ցիշ-
խանսն տաճարին և ցծերս.
Իբրև ՝ի վերայ աւազակի եկիք
53 սուսերօք և բրօք։ Հանապազ
ընդ ձեզ էի ՝ի տաճարին, և ո՛չ
ձգեցիք ձեռս յիս. այլ այս է
ձեր ժամ, և իշխանութիւն
խաւարի։
54 Եւ կալեալ զնա՝ ածին և
մուծին ՝ի տուն քահանայապե-
տին. և Պետրոս երթայր զկնի
55 Նորա հեռագոյն։ Իբրև լուցին
կրակ ՝ի մէջ գաւթին՝ և նստան
շուրջ, նստաւ և Պետրոս ՝ի
56 մէջ նոցա։ Եւ տես զնա աղախին
ոմն՝ զի նստէր առ լոյսն,
հայեցաւ ընդ նա և ասէ. Եւ
սա ընդ նոսա էր՝ որ ընդ նմայն։
57 Իսկ Պետրոս ուրացաւ և
ասէ. Ո՛չ գիտեմ զնա կին։

* ՝Ի Յոյն չէր։

48 համբուրէ Նորան. Յիսուսն էլ
Նորան ասաց. Յուդա, համբոյ-
րո՞վ ես Որդին մարդոյ մատ-
նում։ Երբոր Նորա հետ լի-
նողները տեսան, թէ ինչ է
լինելու, Նորան ասացին. Տէր,
սրով զարկե՞նք։ Եւ Նորան-
ցից մէկը քահանայապետի ծա-
ռային զարկեց, և Նորա աջ
ականջը կտրեց։ Յիսուսն էլ
պատասխանեց և ասաց. Թող
տուէք մինչ այդ վայր. և Նորա
ականջին մօտեցաւ և բժշկեց
Նորան։ Եւ Յիսուսը ասաց
իրան վերայ եկած քահանա-
յապետներին և տաճարի իշխան-
ներին և ծերերին. ինչպէս մի
աւազակի՞ վերայ դուրս եկաք
սրերով և բրերով։ Ես որ
ամեն օր ձեզ հետ էի տաճա-
րումը, ձեռք չ՚ձգեցիք ինձ
վերայ. բայց սա ձեր ժամն է
և խաւարի իշխանութիւնը։

Եւ Նորան բռնեցին տարան,
և մոցրին քահանայապետի տու-
նը. Պետրոսն էլ հեռուանց
գնում էր Նորա ետևից։ Եւ
երբոր սրահի մէջ կրակ էին
վառել և չորս կողմով նստել,
Պետրոսն էլ նստեց Նորանց
միջումը։ Մ՚ի աղախին տեսնե-
լով Նորան՝ լուսոյ մօտ նստած,
անտղեց Նորան ասաց. Սա
էլ Նորա հետ էր։ Բայց
նա ուրացաւ և ասաց. Ով կին,

58 դու։ Եւ յետ սակաւ միոյ այլ
ոմն ետես զնա, և ասէ. Եւ դու
՝ի նոցանէ ես. և Պետրոս ասէ.
59 Ա՛յր դու չեմ ՝ի նոցանէ։ Եւ
իբրև ժամ մի անց ՝ի վերայ,
այլ ոմն վիճէր և ասէր. Այոյդ
և սա ընդ նմա էր, քանզի
60 Գալիլեացի է։ Ասէ Պետրոս.
Ա՛յր դու՝ չգիտեմ զինչ խօ-
սիսդ. և առ ժամայն մինչդեռ
նա զայն ասէր, խօսեցաւ հաւ։
61 Դարձաւ Տէր՝ և հայեցաւ ՝ի
Պետրոս. և յիշեաց Պետրոս
զբանն Տեառն՝ զոր ասաց ցնա.
Մ՚ինչչև հաւու խօսեալ լցէ,
երիցս ուրասցիս՝ չգիտել զիս։
62 Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառ-
նապէս։

63 Եւ արքն, որ պահէին զնա,
այպն առնէին զնովաւ, և հար-
64 կանէին։ Ծածկէին զերեսս
Նորա և տանջէին. և հարցանէին
ցնա և ասէին. Մ՚արգարեաց՝
65 ո՞վ է որ եհարն զքեզ։ Եւ այլ
բազում ինչ հայհոյութեամբ
խօսէին ՝ի նա։

66 Եւ իբրև այդ եղև, ժողովե-
ցաւ ծերակոյտ ժողովրդեանն՝
քահանայապետքն և գպիրք, և
հանին ածին զնա յատեանն
իւրեանց՝ և ասեն. Եթէ դու ես
Քրիստոսն, ասա՛ մեզ։ Ասէ
ցնոսա. Եթէ ասացից ձեզ,
68 սակայն ո՛չ հաւատայք. Եւ
ես Նորան չեմ գիտում։ Եւ 58
մի քիչ յետոյ ուրիշը տեսաւ
Նորան և ասաց. Դու էլ Նո-
րանցից ես. Պետրոսն էլ ասաց.
Ով մարդ, Նրանցից չեմ։ Եւ 59
մէկ ժամու չափ էլ որ անցաւ,
մէկ ուրիշը վիճում էր և ասում.
Ճշմարիտ որ սա էլ Նորա
հետ էր. վասնզի Գալիլեացի
է։ Պետրոսն էլ ասաց. Մ՚արդ, 60
չգիտեմ, թէ դու ինչ ես
ասում. և խսկոյն նա դեռ ասե-
լիս՝ հաւը խօսեց։ Եւ Տէրը 61
դարձաւ մոտիկ տուաւ Պետրո-
սին, և Պետրոսը յիշեց Տիրոջ
խօսքը, որ ասաց Նորան, թէ
Մ՚ինչև հաւի խօսելը, երեք
անգամ կ՚ուրանաս ինձ։ Եւ 62
դուրս գնաց Պետրոսը՝ դառնա-
պէս լացաւ։

Եւ Յիսուսին պահող մար- 63
դիկը ծաղր էին անում Նորան և
ծեծում։ Եւ Նորա աչքերը ծած- 64
կում էին և երեսին զարկում,
և Նորան հարցնում էին և
ասում. Մ՚արգարէացիր՝ ո՞վ է
նա, որ քեզ զարկեց։ Եւ 65
ուրիշ շատ բաներ էլ հայ-
հոյանքով խօսում՝ էին Նորա
դէմ։

Եւ երբոր առաւօտ եղաւ, 66
ժողովրդի ծերակոյտը՝ քահա-
նայապետներն և գպիրները ժո-
ղովուեցան, և Նորան հանեցին
տարան իրանց ատեանը, և
ասացին. Եթէ դու Քրիստոսն
ես, ասա մեզ։ Եւ Նորանց ա- 67
սաց. Եթէ ասում՝ ձեզ, դուք

եթէ հարցից ինչ զձեզ, չտայք
ինձ պատասխանի, կամ արձակեցէք։ Այլ այսմ հետէ
Նստցի Որդի մարդոյ ընդ աջմէ
զօրութեանն Աստուծոյ։ Եւ
ասեն ամենեքեան։ Ուրեմն դու
ես Որդին Աստուծոյ։ և նա ասէ
ցնոսա։ Դուք ասէք, թէ ես
եմ։ Եւ նոքա ասեն։ Այլ ինչ
ևս պիտոյ է մեզ վկայութիւն,
զի մեզէն իսկ լուաք ի բերանոյ
դորա։

ԳԼ. ԻԳ.

1 Եւ յարուցեալ ամենայն բազ-
մութիւնն նոցա, ածին զնա առ
2 Պիղատոս։ Եւ սկսան չարախօս
լինել զնմանէ և ասել։ Գտաք
զսա՝ զի թիւրէր զազգս մեր, և
արգելոյր ի տալոյ հարկս
Կայսեր, և ասէր զանձնէ՝ եթէ
3 Քրիստոսն իցէ թագաւոր։ Իսկ
Պիղատոս եհարց զնա և ասէ։
Դո՞ւ ես թագաւորն Հրէից։ Նա
պատասխանի ետ նմա և ասէ.
4 Դո՛ւ ասացեր։ Ասէ Պիղատոս
ցքահանայապետսն և ցքժողո-
վուրդսն։ Ոչգտանեմ ինչ վնաս
5 յառնս այսմիկ։ Եւ նոքա
պնդէին և ասէին։ եթէ խռովէ
զժողովուրդս, ուսուցանէ ընդ
ամենայն Հրէաստան՝ սկսեալ ի
6 Գալիլեէ մինչև ցայսր։ Իսկ
Պիղատոս իբրև լուաւ զԳալիլեէ,
եհարց եթէ Գալիլեացի իցէ
7 այրն։ Եւ իբրև գիտաց թէ
չէք հաւատալ։ Եւ եթէ ձեզ 68
հարցնեմ էլ, ինձ պատասխան
չէք տալ, կամ ինձ արձակիլ։
Այլ այսուհետև Որդին մար- 69
դոյ նստած կ'լինի Աստուծոյ
զօրութեան աջ կողմը։ Եւ 70
ամենքն ասացին։ Ուրեմն դո՞ւ
Աստուծոյ Որդին ես։ և նա
ասաց նորանց։ Դուք էք ասում,
որ ես եմ։ Նորանք էլ ասա- 71
ցին։ Այլ ի՞նչ պէտք է մեզ
վկայութիւն, վասնզի մենք ինք-
ներս լսեցինք դորա բերանից։

ԳԼ. ԻԴ.

Եւ նորանց բոլոր բազմու- 1
թիւնը վերկացաւ, և նորան
տարան Պիղատոսի մօտ։ Եւ 2
սկսեցին չարախօսութիւն անել
նորանից և ասել։ Սորան գտանք
որ ազգին ծռում էր՝ և արգե-
լում էր կայսեր հարկ տալ՝
ինքն իրան համար ասելով,
թէ Քրիստոս՝ թագաւորն է։
Այլ Պիղատոս հարցրեց նո- 3
րան և ասաց։ Դո՞ւ ես Հրէից
թագաւորը։ Նա պատասխանեց
նորան և ասաց։ Դու ասացիր։
Պիղատոսն էլ ասաց քահանա- 4
յապետներին և ժողովուրդնե-
րին։ Ես մի յանցանք չեմ
գտնում այս մարդումը։ Այլ 5
նորանք սաստկացնում էին և
ասում։ թէ ժողովուրդները
խռովեցնում է բոլոր Հրէաս-
տանի մէջ սովորեցնելով։ Գա-
լիլեայից սկսած մինչև այս-

յիշխանութենէ Հերովդի է,
ետ տանել զնա առ Հերովդէս.
քանզի և նա Երուսաղէմ էր
յաւուրսն յայնոսիկ։

8 Եւ Հերովդէս իբրև ետես
զՅիսուս, ուրախ եղև յոյժ.
զի ցանկայր ի բազում ժամա-
նակաց տեսանել զնա. քանզի
լսէր բազում անգամ զնմանէ,
և ակն ունէր նշան ինչ լեալ՝
9 տեսանել ի նմանէ։ Հարցանէր
զնա բանիւք բազմօք, և նա
ոչինչ ետ նմա պատասխանի։
10 Կային քահանայապետքն և
դպիրք՝ և պնդագոյնս չարախօ-
11 սէին զնմանէ։ Արհամարհեաց
զնա և Հերովդէ հանդերձ իւ-
րովք զօրականօքն. և ոյսպն
արարեալ, արկ զնովաւ հան-
դերձս սպիտակս, և ետ տանել
12 անդրէն առ Պիղատոս։ Եւ եղեն
բարեկամք Պիղատոս և Հերով-
դէս յաւուր յայնմիկ. քանզի
յառաջ թշնամիք էին միմեանց։

13 Կոչեաց Պիղատոս զքահա-
նայապետսն և զիշխանս և
14 զժողովուրդն, Եւ ասէ ցնոսա.
Ածիք մատուցիք ինձ զայրս զայս
իբրև զխոտորեցուցիչ ժողովուր-
դեանն. և ահաւասիկ առաջի
ձեր դատեցայ, և վնաս ինչ ոչ
գտի յառնս յայսմիկ՝ զորոյ
դուք չարախօսէքդ զդմանէ։

տեղ։ Պիղատոս էլ երբոր Գա- 6
լիլեան լսեց, հարցրեց, թէ այդ
մարդը Գալիլեացի՞ է։ Եւ իմա- 7
նալով թէ Հերովդէսի իշխանու-
թիւնից է, տանել տուաւ նո-
րան Հերովդէսի մօտ, որ նա էլ
այն օրերը Երուսաղէմումն էր։
Հերովդէսն էլ Յիսուսին տես- 8
նելով շատ ուրախացաւ. վասն
զի շատ ժամանակից ուզում էր
տեսնել նորան. որովհետև նո-
րա համար շատ բաներ էր
լսել. և յոյս ունէր թէ մի
նշան կ'տեսնէ նորանից եղած։
Շատ խօսքերով հարցնում էր 9
նորան, բայց նա ոչինչ պա-
տասխան չ'տուաւ նորան։ Գա- 10
հանայապետներն և դպիրները
կանգնած էին, և շատ սաստիկ
չարախօսում էին նորանից։ Հե- 11
րոդէսն էլ իր զինուորների հետ
անարգեց նորան. և ծաղր անե-
լով՝ մի սպիտակ հանդերձ հագ-
ցրեց նորան, և ետ տանել
տուաւ Պիղատոսի մօտ։ Եւ 12
Պիղատոսն ու Հերոդէսը բարե-
կամ եղան այն օրը միմեանց
հետ. վասնզի առաջ իրար դէմ
թշնամութեան մէջ էին։

Պիղատոսն էլ կանչեց քահա- 13
նայապետներին և իշխաններին
և ժողովրդին։ Եւ նորանց ա- 14
սաց. Դուք այս մարդին ինձ
մօտ բերիք իբրև ժողովուրդը
մոլորեցնող. և ահա ձեր առջև
դատելով ոչ մի յանցանք չրգը-
տայ այս մարդումն այն բաների
համար, որ դուք չարախօսում

15 Բայլ և ոչ Հերովդէս, քանզի
եղուս տանել զդա առ նա. և
արդ ոչինչ մահու արժանի է
16 գործեալ դորա. Խրատեցից
17 զդա, և արձակեցից: Օվ հարկ
էր մի մի ըստ տօնի արձակել
18 նոցա: Եւ նոքա աղաղակէին
ամենայն բազմութիւնքն՝ և
ասէին. Բարձ զդա՝ և արձակեա
19 մեզ զԲարաբբա. Որ էր վասն
խռովութեան իրիք եղելոյ ի
քաղաքին և սպանութեան մըտ-
20 եալ ի բանտ: Դարձեալ Պիղա-
տոս սկսաւ խօսել. քանզի կամէր
21 արձակել զՅիսուս: Եւ նոքա
անդրէն աղաղակէին և ասէին.
22 Ի խաչ հան զդա: Եւ նա
երիցս ասէ ցնոսա. Օ՞ինչ չար
արար սա. ոչինչ վնաս մահու
գտի ի սմա. խրատեցից զսա և
23 արձակեցից: Եւ նոքա ստիպէին
մեծաձայն՝ և խնդրէին զնա ի
խաչ հանել. և զօրանային
բարբառք նոցա և քահանայա-
24 պետիցն: Եւ Պիղատոս հաւա-
նեցաւ առնել զհայցուածս նո-
25 ցա: Արձակեաց նոցա զԲարաբ-
բայն՝ զոր վասն խռովութեան և
սպանութեան արկեալ էր ի
բանտ, զոր և խնդրէին իսկ. և
զՅիսուս մատնեաց կամաց նոցա:

26 Իբրև առին զնացին զնա,
էք դորանից: Եւ ոչ էլ Հե-
15 րոդէսը. վասնզի ձեզ տանել
տուի նորա մօտ. և ահա մեռ-
նելու արժանի ոչինչ չէ գոր-
16 ծել դա: Արդ խրատեմ դորան՝
17 և արձակեմ: Վասնզի հար-
կաւոր էր, որ տօնի ժամանա-
կին մի հարկ արձակէր նորանց
18 համար: Իսկ նորանք բոլոր
բազմութեամբ աղաղակում էին
և ասում. Վէր առ դորան, և
արձակիր մեզ համար Բարաբ-
բային, Որը քաղաքումն եղած
19 մի խռովութեան և մարդա-
սպանութեան համար բանտն էր
դցուած: Եւ Պիղատոսն դար-
20 ձեալ խօսեց դէպի նորանց,
կամենալով արձակել Յիսուսին:
21 Իսկ նորանք աղաղակում էին և
22 ասում. Խաչիր, Խաչիր դորան:
Եւ նա երրորդ անգամ ասաց
նորանց. Այդ ի՞նչ չար բան
գործեց սա. ոչինչ մեռնելու
յանցանք չգտայ սորանում.
կ'խրատեմ սորան և կ'արձակեմ.
23 Բայց նորանք բարձր ձայնով
ստիպում էին և խնդրում էին,
որ նա խաչուի. և նորանց և
24 քահանայապետների աղաղակը
զօրանում էր: Եւ Պիղատոսը
25 վճռեց, որ նորանց խնդիրքը
լինի: Արձակեց նորանց համար
խռովութեան և մարդասպանու-
թեան համար բանտի մէջ դըց-
ուածը, որին խնդրում էին. և
Յիսուսին մատնեց նորանց կա-
մացը:

26 Եւ երբոր նորան տանում

ըմբռնեցին զոմն Սիմոն Կիւրե-
նացի՝ որ գայր յանդէ. եդին ի
վերայ նորա զխաչն բերել զկնի
27 Յիսուսի: Եւ երթայր զհետ
նորա բազմութիւն ժողովր-
դեանն, և կանանց՝ որ կոծէին
28 և աշխարէին զնա: Դարձաւ
Յիսուս և ասէ ցնոսա. Դստերք
Երուսաղէմի՝ մի լայք ի վերայ
իմ, այլ լացէք ի վերայ ան-
ձանց և ի վերայ որդւոց ձերոց:
Օվ եկեսցեն աւուրք, յորս
ասիցեն՝ թէ Երանի՝ ամլոց և
29 որովայնից՝ որ ոչ ծնան, և
ստեանց՝ որ ոչ զիեցուցին:
30 Յայնժամ սկսանիցին ասել
լերանց՝ թէ Անկերուք ի վերայ
մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէք
31 զմեզ: Օվ եթէ ընդ փայտ
դալար զայս առնեն, ընդ չորն
զի՞նչ լինիցի:

32 Ածին և այլ երկուս չարա-
գործս՝ սպանանել ընդ նմա:
33 Իբրև հասան ի տեղին կոչե-
ցեալ Գագաթն, անդ հանին
զնա ի խաչ. և զչարագործսն՝
զոմն ընդ աջմէ՝ և զոմն ընդ
34 ձախմէ խաչեցին: Եւ Յիսուս
ասէ. Հայր՝ թող դոցա, զի ոչ
գիտեն՝ զինչ գործեն: Եւ ի
բաժանել զհանդերձս նորա,
35 արկին վիճակս: Եւ կայր
ժողովուրդն հայեցեալ. ան-
դրոնէին զնա իշխանքն հանդերձ
նոքօք՝ և ասէին. Զայլս ապրե-
ցոյց, ապրեցուսցէ և զանձն՝
եթէ զա է Քրիստոս Որդի

էին, Սիմոն Կիւրենացի անուն-ած
մէկին բռնեցին, որ յանդիցը
գալիս էր. խաչը նորա վերայ
դրին, որ Յիսուսի ետևից տանէ:
Եւ շատ ժողովուրդ էր գնում 27
նորա ետևից. և կանայք էլ,
որ կոծ և սուգ էին անում
նորա վերայ: Յիսուսն էլ դար- 28
ձաւ՝ նորանց ասաց. Երուսաղէմի
աղջիկներ, լաց մի լինիք ինձ
վերայ, այլ լաց եղէք ձեզ
վերայ և ձեր որդոց վերայ:
Վասնզի ահա օրեր կ'գան, որ 29
կ'ասեն. Երանի ամուլներին և
այն փորերին, որ չ'ծնան, և
այն ծծերին, որ չ'ծծեցրին:
Այն ժամանակ կ'սկսեն ասել 30
լեռանց. Վրայ ընկէք, և
բլուրներին՝ ծածկեցէք մեզ:
Վասնզի եթէ կանանչ փայտին 31
այս բաներն են անում, ապա
չորին ի՞նչ կ'լինի:

Ուրիշ երկու չարագործ մար- 32
դիկ էլ տարան, որ նորա հետ
սպանեն: Եւ երբոր եկան այն 33
տեղը որ գագաթն էր կոչվում,
այն տեղ խաչեցին նորան և
այն չարագործներին, մէկը աջ
կողմը և միւսը ձախ կողմը:
Եւ Յիսուսը ասաց. Հայր, 34
թողիր դորանց. վասնզի չեն
գիտում թէ ինչ են անում. և
նորա հանդերձները բաժանելիս,
վիճակ ցցեցին: Եւ ժողովուրդը 35
կանգնած նայում էր. իշխան-
ներն էլ նորանց հետ ծաղր
էին անում՝ և ասում. ուրիշնե-
րին ապրեցրեց, թող իրան էլ

36 Աստուծոյ ընտրեալն։ Այսն
առնէին զնա և զենուորքն,
եկեալ առաջի՝ մատուցանէին
37 նմա քացախ, Եւ ասէին. Եթէ
դու ես Թագաւորն Հրէից
38 փրկեա զանձն քո։ Եւ էր գիր
գրեալ ի վերայ նորա Յու-
նարէն և Դաղմատերէն և
Եբրայեցերէն գրով, Եթէ Սա
է արքայն Հրէից։

39 Իսկ մի ոմն ի կախելոց չա-
րագործացն հայհոյէր զնա, և
ասէր. Ոչ դու ես Քրիստոսն՝
փրկեա զանձն քո և զմեզ։
40 Պատասխանի ետ ընկերն սաս-
տելով նմա և ասէ. Զերկնչիս
դու զԱստուծոյ՝ զի ի նմին
41 պատժի կաս։ Եւ մեք յիրաւի,
զի արժանի՝ որոց գործեցաքն՝
առնումք զհատուցումն. և սա
42 ապիրատ ինչ ոչ գործեաց։ Եւ
ասէ ցՅիսուս. Յիշեա զիս Տէր՝
յորժամ գայցես արքայու-
43 թեամբ քով։ Եւ ասէ ցնա
Յիսուս. Ամէն ասեմ քեզ.
Այսօր ընդ իս իցես ի դրախ-
տին։

44 Եւ էր իբրև վեցերորդ ժամ.
և խաւար եղև ի վերայ ամե-
նայն երկրի մինչև ցիններորդ
ժամ. խաւարեցաւ արեգակն։
45 Եւ հերձաւ վարագոյր տաճարին
46 ընդ մէջ։ Եւ կարդաց Յիսուս
ի ձայն մեծ՝ և ասէ. Հայր՝ ի
ապրեցնէ, եթէ դա է Քրիս-
տոսն, Աստուծոյ ընտրուածը։
Օ՛ինուորներն էլ էին ծաղր
անում նորան. և մօտ գալով
քացախ էին տալիս նորան.
Եւ ասում. Եթէ դու ես Հրէից
Թագաւորը, փրկիր քո անձը։
Եւ մի գիր էր գրուած նորա
վերայ, Յունարէն, Հռոմայե-
ցերէն և Եբրայեցերէն գրերով,
Էէ Սա է Հրէից Թագա-
ւորը։

Եւ այն կախուած չարա-
գործներից մէկը հայհոյում էր
նորան և ասում. Եթէ դու ես
Քրիստոսը. փրկիր քո անձը և
մեզ։ Իսկ միւսը պատասխանեց
սաստելով նորան՝ և ասաց. Եւ
դու չե՞ս վախենում Աստուածա-
նից, որ հէնց նոյն պատժի մէջ
ես։ Ու մենք՝ իրաւունքով Էն-
պոպիոնած. վասնզի մեր արած
գործքերին արժանի հատուցումն
ենք առնում։ Իսկ սա ոչ մի
անտեղի բան չ'գործեց։ Եւ
ասաց Յիսուսին. Տէր, ինձ
յիշիր, երբոր գաս քո Թագաւո-
րութիւնովը։ Եւ Յիսուսը ա-
սաց նորան. Ճշմարիտն ասում
եմ քեզ, Դու այսօր ինձ հետ
դրախտումը կ'լինիս։

Եւ ժամը վեցի դէմ էր. և
բոլոր երկրի վերայ խաւար
եղաւ մինչև ինն ժամը։ Եւ արե-
գակը խաւարեցաւ, և տաճարի
վարագոյրը միջից ճղուեցաւ։
Եւ Յիսուսը մեծ ձայնով կան-
չեց և ասաց. Հայր, հոգիս

ձեռս քո աւանդեմ՝ զհոգի իմ.
զայս իբրև ասաց, եհան զոգի։
47 Եւ տեսեալ հարիւրապետին՝
զոր ինչ եղև, փառաւոր արար
զԱստուած՝ և ասէ. Արդարև՝
48 այրս այս արդար էր։ Եւ ամե-
նայն ժողովուրդքն որ եկեալ
էին, և տեսանէին զտեսիլն
զայն՝ և զգործ, բախէին ըզկուր-
49 ծըս՝ և դառնային։ Կային և
ամենայն ծանօթքն նորա ի
հեռաստանէ. և կանայք որ եկ-
եալ էին զհետ նորա ի Գալիլեէ
տեսանէին զայն։

50 Եւ ահա այր մի՝ անուն
Յովսէփ, որ էր նախարար՝ այր
51 բարեգործ և արդար. Սա չէր
միաբանեալ ընդ խորհուրդս և
ընդ գործս նոցա. Արիմաթ-
եայ քաղաքէ Հրէից, որ և ինքն
52 Աստուծոյ։ Սա մատուցեալ առ
Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն
53 Յիսուսի. Եւ իջուցեալ զնա՝
պատեաց պաստառակալաւ, և
54 եդ ի կռածոյ գերեզմանին՝ ուր
էր բնաւ զոք եղեալ։ Եւ օրն
էր ուրբաթ, և շաբաթ լու-
սանայր։

55 Եւ երթային զհետ նորա
կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա
ի Գալիլեէ. տեսին զգերեզ-
մանն, և որպէս եդաւ մարմին
56 նորա։ Դարձան, և պատրաս-
քո ձեռքն եմ աւանդում. և այս
ասելով հոգի տուաւ։

47 Եւ հարիւրապետը եղածը
տեսնելով, Աստուծոյն փառք
տուաւ և ասաց. Յիրաւի այս
48 մարդն արդար էր։ Եւ բոլոր ժո-
ղովուրդները, որ այս տեսարանը
դիտելու համար եկել էին,
եղած բաները տեսնելով՝ իրանց
կուրծքերը թակում էին և յետ
49 դառնում։ Նորա բոլոր ծա-
նօթներն էլ հեռուանց կանգ-
նած էին, և այն կանայքն էլ,
որ Գալիլեայից նորա ետևից
եկել էին և տեսնում էին այս
բաները։

50 Եւ ահա մի մարդ՝ անունը
Յոսէփ, որ խորհրդական էր,
բարեգործ և արդար մարդ։
51 (Սա չէր միաբանուել նորանց
խորհրդի և գործքերի հետ.)
Հրէաների Արիմաթիա քա-
ղաքիցը, որ ինքն էլ հէնց սպա-
սում էր Աստուծոյ արքայու-
52 թեանը։ Սա գնաց Պիղատոսի
մօտ և Յիսուսի մարմինը խընդ-
53 րեց։ Եւ վայր բերաւ նորան,
ագնիւ կտաւով պատեց, և
քարից փորած գերեզմանի մէջ
դրաւ՝ ուր երբէք մի մարդ
54 դրուած չէր։ Եւ օրը ուր-
բաթի էր, և շաբաթի էր լուսա-
նում։

55 Եւ այն կանայքն էլ, որ Գա-
լիլեայիցը նորա հետ եկել էին՝
գնում էին նորա ետևից, տե-
սան գերեզմանը, և թէ ինչ-
պէս դրուեց նորա մարմինը։

տեցին խունկս և իւղս. և 'ի
շաբաթուն հանդարտեցին վասն
պատուիրանին:

ԳԼ. ԻԳ

1 Բայց 'ի միաշաբաթուն վաղ
քաջ ընդ առաւօտն եկին 'ի
գերեզմանն. բերին զխունկսն
զոր պատրաստեցին, և այլ
2 կանայք ընդ նոսա. Եւ գտին
զվէմն թաւալեցուցեալ 'ի գե-
3 րեզմանէ անտի: Եւ մտեալ 'ի
ներքս՝ ո՛չ գտին զմարմինն Տեառն
4 Յիսուսի: Եւ եղև ընդ հիանալն
նոցա վասն այնորիկ, և ահա
արք երկու հասին առ նոսա 'ի
5 հանդերձս լուսաւորս: Եւ իբրև
զահի հարան, և խոնարհեցու-
ցին զերեսս իւրեանց յերկիր,
ասեն ցնոսա. Օ՞ի խնդրէք զոչ-
6 կենդանին ընդ մեռեալս: Չէ՞
ասա՝ այլ յարեաւ. յիշեցէք՝
որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ
7 էրն 'ի Գալիլեայ, Եւ ասէր.
թէ Պարտ է Որդւոյ մարդոյ
մատնիլ 'ի ձեռս մարդոց մեղա-
ւորաց, և 'ի խաչ ելանել՝ և
8 յերրորդ աւուր յառնել: Եւ
9 յիշեցին զբանսն նորա: Եւ
դարձան պատմեցին զայս ամե-
նայն մետասանիցն, և այլոցն
10 ամենեցուն: Եւ էին Մարիամ
Մագդաղենացի և Յովհաննա
և Մարիամ Յակովբայ, և
այլք ընդ նոսա՝ որ պատմեցին
11 զայս առաքելոցն: Եւ երևե-

Եւ յետ դարձան, խնկեր և 56
իւղեր պատրաստեցին. բայց,
շաբաթ օրը հանդարտ մնացին
պատուիրանքի համեմատ:

ԳԼ. ԻԳ

Բայց մէկ շաբթի օրը առաւօ- 1
տանց կանուխ եկան գերեզմանը,
և բերին այն խնկերը, որ
պատրաստեցին. և ոմանք էլ
նորանց հետ: Եւ քարը գե- 2
րեզմանիցը հեռու թաւալած
գտան: Եւ երբոր ներս մտան, 3
չէր Յիսուսի մարմինը չգտան:
Եւ եղաւ երբոր նորա հա- 4
մար շատ հիացել էին, և ահա
երկու մարդ հասան նորանց
լուսաւոր հանդերձներով: Եւ 5
երբոր նորանք ահով լցուեցան,
և իրանց երեսները դէպի երկիր
խոնարհեցրին, նորանց ասացին.
Ինչ էք կենդանին մեռելների
մէջ որոնում: Այս տեղ չէ, 6
այլ յարութիւն առաւ. յիշեցէք
ինչպէս նա ձեզ հետ խօսեց,
երբոր Գալիլեայումն էր. Որ 7
ասում էր, թէ պէտք է Որդին
մարդոյ մեղաւոր մարդկանց ձեռ-
քը մատնուի՝ և խաչուի և եր-
րորդ օրը յարութիւն առնէ:
Եւ նորա խօսքերը յիշեցին: 8
Եւ գերեզմանիցը ետ դարձան 9
և այս բոլոր բաները պատմե-
ցին տասնումէկին և բոլոր ու-
րիշներին: Եւ էին Մարիամ 10
Մագդաղենացին, և Յոհան-
նան, և Յակոբայ Մարիամը,

ցան առաջի նոցա շաղփաղփու-
թիւն բանքն նոցա՝ և չհաւա-
12 տային նոցա: Բայց Պետրոս
յարուցեալ ընթացաւ 'ի գերեզ-
մանն, և հայեցեալ տեսանէ
զկտաւսն լոկ՝ զի կային. և գնաց
ընդ միտս զարմացեալ, թէ
զինչ եղև:

13 Եւ ահա երկուք 'ի նոցանէ
երթային 'ի նմին աւուր 'ի
գեօղ մի, որ հեռի էր Յերու-
սաղեմէ հարիւր և վաթսուն
ասպարիսաւ, և էր անուն նորա
14 Եմմաուս: Եւ նոքա խօսէին
ընդ միմեանս վասն ամենայն
15 անցիցն անցելոց: Եւ եղև ընդ
խօսելն նոցա և ընդ վիճել՝ և
16 ինքն իսկ Յիսուս մերձեցաւ՝ և
երթայր ընդ նոսա. Եւ նոցա
աչք կալեալ էին առ 'ի չճանա-
չելոյ զնա, Եւ ասէ ցնոսա.
17 Օ՞ինչ են բանքդ՝ վասն որոց
վիճիքդ ընդ միմեանս՝ մինչդեռ
18 գնայքդ, և տրտմեալ էք: Պա-
տասխանի ետ մի ոմն 'ի նոցանէ
որում՝ անուն էր Կղէովպաս և
ասէ ցնա. Դո՞ւ միայն կաս
Յերուսաղէմ, որ ոչ գիտացեր
19 զինչ գործեցաւ 'ի նմա յաւուրսս
Յայսմիկ: Եւ ասէ ցնոսա.
Օ՞ինչ. և նոքա ասեն. ըզՅի-
սուսէ Նազովրեցւոյ, որ եղև
այր մարգարէ՝ հզօր արդեամբք
20 և բանիւք առաջի Աստուծոյ, և
ամենայն ժողովրդեանն: Որպէս

և նորանց հետ ուրիշներն էլ,
որ այս բաները ասում էին
առաքեալներին: Եւ նորանց 11
խօսքերը ցնորք երևեցաւ նո-
րանց առջև, և չէին հաւատում
նորանց: Բայց Պետրոսը վեր 12
կացաւ վազեց գերեզմանը,
և ծռելով տեսաւ կտաւները
մենակ դրուած. և գնաց իր
մտքումն զարմանալով եղածի
վերայ:
Եւ ահա նորանցից երկուսը 13
մի և նոյն օրը մի գիւղ էին
գնում, որ վաթսուն ասպարէզ
Երուսաղէմիցը հեռու էր, ա-
նունն Եմմաուս: Եւ նորանք 14
իրար հետ խօսում էին այն
բոլոր անցած բաների համար:
Եւ եղաւ որ նորանք խօսելիս 15
և վիճաբանելիս, հէնց ինքն
Յիսուսը մօտեցաւ և գնում էր
նորանց հետ: Բայց նորանց 16
աչքերը բռնուած էին, որ չըճա-
նաչեն նորան: Եւ նորանց ա- 17
սաց. Այդ ինչ բաներ են,
զորանց համար իրար հետ վի-
ճում էք գնալիս, և տրտմած
էք: Եւ պատասխանեց նո- 18
րանցից մէկը, անունը Կղէոպաս,
և ասաց նորան. Դու ես միայն
բնակում Երուսաղէմումն, որ
չիմացար այն բաները, որ այս
օրերը եղան նորանում: Եւ 19
նա ասաց նորանց. Ո՞ր բաներ.
և նորանք ասացին. Յիսուս
Նազորեցու մասին, որ մի մար-
գարէ մարդ էր, զօրաւոր գործ-
քերով Աստուծոյ և բոլոր ժո-

մատնեցին զնա քահանայապետ-
քին՝ և իշխանքն մեր ՝ի դատաս-
տան մահու՝ և հանին զնա ՝ի
21 խաչ։ Ա՝նք ակն ունէաք՝ թէ
նա է որ փրկելոցն է զԻս-
րայէլ. այլ և հանդերձ այսու
ամենայնիւ, այս երրորդ օր է՝
յորմէ հետէ այն գործեցաւ։
22 Այլ և կանայք ոմանք ՝ի մէնջ
զարմացուցին զմեզ. որք կան-
խեալ ընդ առաւօտս չոգան ՝ի
23 գերեզմանն, Եւ ոչ գտին
զմարմինն նորա. եկին և ասեն,
թէ և տեսիլ ևս հրեշտակաց
տեսին, որք ասէին զնմանէ՝ թէ
24 կենդանի է։ Եւ գնացին ոմանք
՝ի մէնջ ՝ի գերեզմանն, և գտին
նոյնպէս՝ որպէս և կանայքն
ասացին. բայց զնա ոչ տեսին.
25 Եւ նա ասէ ցնոսա. Ո՞վ անմիտք
և հեղգասիրտք ՝ի հաւատալ
յամենայնի, զոր խօսեցան մար-
26 գարէքն։ Ո՞չ զնոյնս պարտ էր
չարչարիլ Քրիստոսի, և մտա-
27 նել ՝ի փառս իւր։ Եւ սկսեալ
՝ի Մ՝ովսէսէ՝ և յամենայն մար-
գարէից, մեկնէր նոցա՝ որ ինչ
յամենայն գիրս գրեալէ զնմանէ։
28 Իբրև մերձեցան ՝ի գեօղն յոր
երթային, և նա պատճառէր
հեռագոյն ևս ուրէք երթալ։
29 Եւ բռնադատեցին զնա՝ և ասեն.
Այս մեզ ագիր, զի ընդ երեկս է՝
և տարաժամեալ է օրս, և եմուտ
30 ագանել անդ ընդ նոսա։ Եւ
եղև ՝ի բազմելն նորա ընդ նոսա,
առեալ զՀացն՝ օրհնեաց, երեկ
31 և ետ նոցա։ Եւ նոցա բացան

զովրդի առջև։ Թէ ինչպէս 20
մեր քահանայապետներն և իշ-
խանները մահու դատաստանի
մատնեցին նորան, և խաչեցին
նորան։ Իսկ մենք յոյս ու- 21
նէինք թէ նա է, որ Իսրայէլին
փրկելու էր. այլ այսու ամե-
նայնիւ սա երրորդ օրն է, որ
այս բաները եղան։ Բայց մի 22
քանի կանայք էլ մեր միջեցը
զարմացրին մեզ, որ առաւօտանց
կանուխ գնացին գերեզմանը։
Եւ նորա մարմինը չ՚գտած՝ 23
եկան և ասացին, թէ հրեշ-
տակների տեսիլք են տեսել, որ
ասում էին, թէ նա կենդանի է։
Եւ մեզանից ոմանք գնացին 24
գերեզմանը, և իսկ այնպէս
գտան, ինչպէս կանայքն ասա-
ցին, բայց նորան չ՚տեսան։ Եւ 25
նա ասաց նորանց. Ով անմիտներ
և թուլասիրտներ, հաւատա-
լու այն բոլոր բաներին, որ
մարգարէները խօսեցան։ Չէ՞ 26
որ պէտք էր՝ որ Քրիստոսը այս
չարչարանքները քաշէր և իր
փառքը մտներ։ Եւ սկսեց 27
Մ՝օսէսից և բոլոր մարգարէնե-
րից, մեկնում էր նորանց՝ ինչ
որ գրքերի մէջ գրուած էր իր
մասին։ Եւ մօտեցան այն գիւ- 28
ղին, ուր գնում էին. և նա
այնպէս էր ցոյց տալիս, թէ
աւելի հեռու տեղ է գնում։
Եւ բռնադատեցին նորան և 29
ասացին. Մ՝նա մեզ հետ,
վասնզի իրիկւայ դէմ է և օրս
իջել է. և մտաւ որ նորանց

աչք՝ և ծանեան զնա. և նա եղև
32 ՝ի նոցանէ անհետացեալ։ Եւ ասեն
ցմիմեանս. Ո՞չ իսկ և սիրտք մեր
ճմլէին ՝ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ
մեզ զճանապարհն. և որպէս
բանայր մեզ զգիրս։

33 Եւ յարուցեալ նոյնժամայն՝
դարձան յԵրուսաղէմ, և գտին
ժողովեալ զմետասանսն՝ և զորս
34 ընդ նոսայն էին. Եւ ասեն՝ թէ
Արդարև յարեաւ Տէր՝ և
35 երևեցաւ Սիմովնի։ Եւ նոքա
պատմէին զայն որ զճանապար-
հայնն, և թէ զհարդ ետ ծանօթս
նոցա ՝ի բեկանել հացին։

36 Մ՝ինչդեռ զայն խօսէին, ինքն
իսկ Յիսուս եկաց ՝ի մէջ նոցա՝ և
ասէ ցնոսա. Խաղաղութիւն ընդ
37 ձեզ,* ես եմ, մի՛ երկնչիք՝։ Եւ
զահի հարեալ երկնչէին, և
համարէին ոգի ինչ տեսանել։
38 Եւ ասէ ցնոսա. Ա՞յ խռովեալ
էք՝ և ընդէ՞ր խորհուրդք ելանեն
39 ՝ի սիրտս ձեր։ Տեսէք զձեռս իմ՝
և զոտս, զի ես նոյն եմ.
Շօշափեցէք զիս և տեսէք. զի

հետ մնայ։ Եւ եղաւ երբոր 30
նա նորանց հետ սեղան նստեց,
հաց առաւ՝ օրհնեց, կտրեց և
տուաւ նորանց։ Եւ նորանց 31
աչքերը բացուեցան և նորան
ճանաչեցին. և նա անհետացաւ
եղաւ նորանցից։ Եւ իրար ա- 32
սացին. Չէ՞ որ մեր սրտերը
բորբոքվում էին մեզանում՝,
երբոր ճանապարհին մեզ
հետ խօսում էր, և ինչպէս
գրքերը բաց էր անում մեզ
համար։
Եւ նոյն ժամին վերկացան՝ 33
յետ դարձան Երուսաղէմ, և
այն տասնումէկին ժողովուած
գտան, և նորանց հետ լինողնե-
րին. Եւ ասացին. թէ Արդ- 34
արև Տէրը յարութիւն է
առել, և երևացել Սիմոնին։
Եւ նորանք պատմում էին այն 35
որ ճանապարհին եղաւ, և
թէ ինչպէս իրան ճանաչեցրեց
իրանց՝ հաց կտրելու ժամա-
նակին։
Եւ նորանք այս խօսելիս, 36
Յիսուս ինքն կանգնեց նորանց
միջումը և նորանց ասաց. Խա-
ղաղութիւն ձեզ։ Եւ նորանք 37
զարհուրելով վախեցած, հա-
մարում էին, թէ հոգի են տես-
նում։ Եւ նորանց ասաց. 38
Ինչո՞ւ էք շփոթուած. ինչո՞ւ
համար խորհուրդներ են վերկե-
նում ձեր սրտերումը։ Տեսէք 39
իմ ձեռները և իմ ոտները,

* Ի Յոյն՝ էջ։

ոգի՝ մարմին և ոսկերս ո՛չ ունի,
որպէս զիս տեսանէք զի ունիմ։
40 Եւ զայս ասացեալ ետոյց նոցա
զձեռսն և զոտս։

41 Եւ մինչդեռ տակաւին չըհա-
ւատային ՝ի խնդութենէն՝ և
զարմացեալ էին, ասէ ցնոսա.
42 Ունի՞ք ինչ կերակուր աստ։ Եւ
նոքա ետուն նմա ձկան խորո-
վելոյ մասն, և խորիսխ մեղու։
43 Եւ առ՝ եկեր առաջի նոցա,* և
44 զմնացորդսն ետ նոցա"։ Եւ ասէ
ցնոսա. Այս բանք են զոր խօ-
սեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզն
էի, թէ Պարտ է լնուլ ամենայն
գրեալքն յօրէնսն Մովսէսի և ՝ի
մարգարէս և ՝ի սաղմոսն վասն
45 իմ։ Յայնժամ եբաց զմիտս
46 նոցա իմանալ զգիրս։ Եւ ասէ
ցնոսա, թէ Այսպէս պարտ էր
չարչարիլ Քրիստոսի, և յառ-
նել ՝ի մեռելոց յաւուր երրոր-
47 դի. Եւ քարոզել յանուն նորա
ապաշխարութիւն և թողութիւն
մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ
48 յԵրուսաղեմէ։ Եւ դուք էք
49 վկայք այսոցիկ։ Եւ ահա ես
առաքեմ զաւետիս Հօր իմոյ ՝ի
ձեզ. և դուք նստարուք ՝ի
քաղաքիս Երուսաղէմ, մինչև
զգենուցուք զզօրութիւն ՝ի բար-
ձանց։

որ ես ինքս եմ. շօշափեցէք ինձ
և տեսէք. քանզի հոգին՝ մար-
մին և ոսկերք չունի, ինչպէս
ինձ էք տեսնում որ ունիմ։ Եւ 40
այս որ ասաց, ձեռնեն և
ոտները ցոյց տուաւ նորանց։
Եւ քանի որ դեռ չէին հաւա- 41
տում ուրախութիւնից և զար-
մացած էին, ասաց նորանց.
Կերակուր ունի՞ք այս տեղ։
Եւ նորանք խորոված ձկան 42
կտոր տուին նորան՝ և մեղրա-
խորիսխ։ Եւ առաւ կերաւ նո- 43
րանց առջև։ Եւ ասաց նո- 44
րանց. Այս բաներն են՝
որ ձեզ հետ խօսեցի, քանի որ
ձեզ հետ էի, թէ պէտք է կա-
տարուի Մովսէսի օրէնքումն և
մարգարէներումն և սաղմոսնե-
րումը բոլոր ինձ համար գրու-
ածները։ Այն ժամանակ նո- 45
րանց միտքը բացաւ, որ գրքերն
իմանան։ Եւ նորանց ասաց. 46
թէ Այսպէս է գրուած, և այս-
պէս պէտք էր, Քրիստոսին
չարչարուիլ և երրորդ օրը
մեռելների միջից յարութիւն
առնել. Եւ նորա անունովը 47
ապաշխարութիւն և մեղաց թո-
ղութիւն քարոզուիլ բոլոր ազ-
գերի մէջ Երուսաղէմից սկսած։
Եւ դուք այս բաների համար 48
վկաներ էք։ Եւ ահա ես իմ 49
Հօր աւետիքը կ՚ուղարկեմ
ձեզ վերայ. դուք էլ նստե-
ցէք Երուսաղէմ քաղաքումը,

* ՝Ի Յոյն էր։

50 Եհան զնոսա մինչև ՝ի Բեթա-
նիա, և ամբարձեալ զձեռս իւր՝
51 օրհնեաց զնոսա։ Եւ եղև
յօրհնելն նորա զնոսա, մեկնե-
ցաւ ՝ի նոցանէ, և վերանայր
52 յերկինս։ Եւ նոքա երկիրպա-
գեալ նմա՝ դարձան յԵրուսա-
ղէմ ուրախութեամբ մեծաւ։
53 Եւ էին հանապազ ՝ի տաճարին,
գովէին և օրհնէին զԱստուած։

մինչև վերևիցը զօրութիւն
հագնիք։
Եւ նորանց հանեց մինչև Բե- 50
թանիա, և իր ձեռները բարձ-
րացրեց և օրհնեց նորանց։
Եւ եղաւ որ նա նորանց օրհնե- 51
լիս, ջոկուեց նորանցից, և վե-
րանում էր երկինքը։ Եւ նո- 52
րանք երկրպագեցին նորան, և
մեծ ուրախութիւնով յետ դար-
ձան Երուսաղէմ։ Եւ ամեն 53
ժամանակ տաճարումն էին. գո-
վում և օրհնում էին Աստու-
ծոյն։ Ամէն։

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԳԼՈՒԽ Ա

1 ԻՍԿԶԲԸՆՆ էր Բանն. և Բանն էր առ Աստուած.
2 և Աստուած էր Բանն։ Նա էր
3 ի սկզբանէ առ Աստուած։ Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց
Նորա եղև և ոչինչ՝ որ ինչ
4 եղևն։ Նովաւ կեանք էր, և
5 կեանքն էր լոյս մարդկան. Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու։

6 Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհան-
7 նէս։ Սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն Լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ։
8 Ո՛չ էր նա Լոյսն. այլ զի վկայեսցի վասն Լուսոյն.

9 Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝
10 որ գալոց է յաշխարհ։ Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև. և աշխարհ զնա ոչ ծան-
11 եաւ։ Յիւրսն եկն, և իւրքն զնա
12 ոչ ընկալան։ Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց

Ա ԿԶԲՈՒՄՆ էր Բանը. և Բանն Աստուծոյ մօտ էր.
2 և Աստուած էր Բանը։ Նա սկզբումն Աստուծոյ մօտ էր։
3 Ամեն ինչ նորանով եղաւ, և առանց Նորան ոչինչ չեղաւ, ինչ որ եղաւ։
4 Նորանով էր կեանք, և կեանքը մարդկանց
5 լոյսն էր։ Եւ լոյսը խաւարումը լոյս է տալիս, և խաւարը չիմացաւ Նորան։

6 Մի մարդ եղաւ Աստուածանից ուղարկուած, անունը Յովհաննէս։
7 Սա վկայութեան համար եկաւ, որ այն Լուսոյ համար վկայէ. որ ամենքը Նորանով հաւատան։
8 Նա չէր Լոյսն, այլ որ Լուսոյն համար վկայէ։

9 Էր ճշմարիտ Լոյսն, որ ամեն մարդուն լուսաւորում է,
10 որ գալիս է աշխարհքը։ Աշխարհքումն էր, և աշխարհքը Նորանով եղաւ, և աշխարհքը
11 Նորան չ՚ճանաչեց։ Իրաններին մէջ եկաւ, և իրանները Նորան
12 չ՚ընդունեցին։ Բայց որոնք որ Նորան ընդունեցին, իշխանու-

հաւատացեն յանուն նորա.
13 Որք ոչ յարենէ՝ և ոչ ի կամաց մարմնոյ՝ և ոչ ի կամաց առն,
14 այլ յԱստուծոյ ծնան։ Եւ Բանն մարմին եղև՝ և բնակեաց ի մեզ. և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ։

15 Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց և ասէ. Սա է՝ զորմէ ասէի, Որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղև. զի
16 նախ քան զիս էր։ Զի ի լրութենէ անտի նորա՝ մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ
17 շնորհաց։ Զի օրէնքն ի ձեռն Մովսէսի տուան. շնորհքն և ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն։

18 զԱստուած ոչ ոք ետես երբէք, բայց միածինն Որդի որ է ի ծոց Հօր, նա պատմեաց։

19 Եւ այս է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին առ նա Հրէայքն յԵրուսաղեմէ քահանայս և Ղևտացիս, զի հարցցեն ցնա՝ թէ Դու
20 ո՞ւ ես։ Եւ խոստովան եղև, և ոչ ուրացաւ. խոստովան եղև՝ թէ Ես ոչ եմ Քրիստոսն։
21 Եւ հարցին ցնա. Իսկ ո՞վ ես դու, Եղիա՞ ես. և ասէ. Ո՛չ եմ։ Իսկ մարգարէ՞ն ես դու.

թիւն տուաւ նորանց Աստուծոյ որդիք լինելու՝ նորանց, որ նորա
անուանը հաւատում են։ Որոնք 13
ոչ արիւնից և ոչ մարմնոյ կամքից, և ոչ մարդոյ կամքից, այլ Աստուածանից ծնուեցան։ Եւ 14
բանը մարմին եղաւ՝ և բնակեց մեր մէջ. և նորա փառքը տեսանք՝ ինչպէս Հօրից Եղած միածնի փառք. շնորհքով և ճշմարտութիւնով լիքն։

Յովհաննէս վկայում է նորա 15
համար. և աղաղակեց և ասաց. Սա էր, որի համար ասում էի, Ում ետևանից յետոյ եկողը, ինձանից առաջ եղաւ. վասնզի ինձանից առաջ էր։ Եւ նորա 16
լիութիւնից մենք ամենքս առինք շնորհք շնորհքի տեղ։ Քանզի օրէնքը Մովսէսի ձեռովը 17
տրուեցաւ. շնորհքը և ճշմարտութիւնը Յիսուսի Քրիստոսի ձեռովն եղան։

Աստուծոյն ոչ ով երբէք չէ 18
տեսել. Բայց միածին Որդին, Հօր ծոցումը լինողը, նա պատմեց։

Եւ այս է Յովհաննէսի վկա- 19
յութիւնը, երբոր Հրէաներն Երուսաղէմից քահանաներ և Ղևտացիներ ուղարկեցին նորա մօտ, որ հարցնեն նորան, Ում
ով ես։ Եւ նա խոստովանեցաւ 20
և չ՚ուրացաւ. և խոստովանեցաւ, թէ Ես չեմ Քրիստոսը։ Եւ 21
նորան հարցրին. Ապա ով. Եղիան ես. և ասաց. Չեմ. մարգարէ՞ն ես դու. և պա-

22 պատասխանի ետ՝ թէ Ո՛չ։ Իսկ
ասա մեզ՝ Դու ո՞վ ես, զի պա-
տասխանի տարցուք՝ որոց առա-
քեցինն զմեզ. զի՞ ասես վասն
23 քո։ Ասէ. Ես՝ ձայն բարբառոյ
յանապատի, ուղիղ արարէք
զճանապարհս Տեառն, որպէս
24 ասաց Եսայի մարգարէ։ Եւ
որք առաքեցանն՝ ի փարիսեց-
25 ւոց անտի էին։ Հարցին ցնա՝ և
ասեն, Իսկ զի՞ մկրտես՝ եթէ
դու չես Քրիստոսն, և ո՛չ
26 Եղիա, և ո՛չ մարգարէն։ Պա-
տասխանի ետ նոցա Յովհաննէս՝
և ասէ. Ես մկրտեմ զձեզ
ջրով. ի միջի ձերում կայ,
27 զորն դուք ո՛չ գիտէք։ Որ զկիր
իմ գալոցն է, որում չե՛մն
արժանի՝ եթէ լուծից զխարարաց
28 կօշկաց նորա։ Այս ի Բեթա-
բարայ եղև յայնկոյս Յորդանա-
նու, ուր էրն Յովհաննէս՝ և
մկրտէր։

29 Ի վաղիւ անդր տեսանէ
զՅիսուս՝ զի գայր առ նա, և
ասէ. Ահաւասիկ Գառնն Աս-
տուծոյ՝ որ բառնայ զմեղս
30 աշխարհի։ Սա է՝ վասն որոյ
ես ասէի, զկնի իմ՝ գայ այր՝
որ առաջի իմ եղև, զի յառաջ
31 իսկ էր քան զիս։ Եւ ես ո՛չ
գիտէի զնա. այլ զի յայտնի
լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ
32 եկի ես ջրով մկրտել։ Ա կայեաց
Յովհաննէս և ասէ, թէ Տե-
սանէի զՀոգին՝ զի իջանէր
տասխանեց։ Ոչ։ Արդ ասա-
ցին նորան. Այս ո՞վ ես, որ
պատասխան տանք մեզ ուղար-
կողներին. ի՞նչ ես ասում քեզ
համար։ Ասաց. Ես եմ ձայն
կանչողի անապատումը, Ի-
ուղղեցէք Տիրոջ ճանապարհը,
ինչպէս Եսայի մարգարէն ա-
սաց։ Եւ ուղարկուածներդ փա-
րիսեցիներից էին։ Եւ նորան
հարցրին և ասացին. Այս
ինչո՞ւ ես մկրտում, եթէ դու
ոչ Քրիստոսն ես և ոչ Եղիան,
և ոչ մարգարէն։ Յոհան-
նէսը պատասխանեց նորանց
և ասաց. Ես ջրով եմ մկրտում.
բայց ձեր միջումը կայ մի՝,
որին դուք չէք գիտում։ Նա
է ինձանից յետոյ եկողը, որ
ինձանից առաջ եղաւ. որ ես
արժանի չեմ, նորա կօշիկների
կապը արձակելու։ Սա Բե-
թաբարայումն եղաւ, Յորդա-
նանի այն կողմը. ուր Յոհան-
նէսը մկրտում էր։

Հետևեալ օրը Յոհաննէս
տեսնում է Յիսուսին իրան մօտ
գալիս, և ասում է. Ահա Աս-
տուծոյ Գառն, որ վեր է
առնում աշխարհի մեղքը։ Սա
է, որի համար ես ասում էի,
Ի՞նձանից յետոյ մի մարդ
է գալիս, որ ինձանից առաջ
եղաւ, վասնզի ինձանից առաջ
էր։ Եւ ես նորան չէի գի-
տում. այլ որ յայտնի լինի
Իսրայէլին, նորա համար ես
եկայ ջրով մկրտելու։ Եւ վկա-

իրրև զաղաւնի յերկնից, և
33 հանգչէր ի վերայ նորա։ Եւ
ես ո՛չ գիտէի զնա. այլ որ
առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա
ասաց ցիս. Յորմ վերայ տեսա-
նիցես զՀոգին, զի իջանիցէ և
հանգչիցի ի վերայ նորա, նա
է՝ որ մկրտէ Հոգւովն Սրբով։
34 Եւ ես տեսի և վկայեցի եթէ
Սա է Որդին Աստուծոյ։

35 Ի վաղիւ անդր կայր Յով-
հաննէս, և յաշակերտաց անտի
36 նորա երկու։ Եւ նայեցեալ ընդ
Յիսուսի՝ զի զգնայր, ասէ.
Ահաւասիկ Գառն
37 Աստուծոյ։ Լուան ի նմանէ
երկու աշակերտքն՝ զի խօսէր,
և գնացին զհետ Յիսուսի։
38 Իրրև դարձաւ Յիսուս և ետես
զնոսա՝ զի երթային զհետ նորա,
ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք.
նոքա ասեն ցնա. Ռաբբի, որ
թարգմանեալ կոչի Վարդա-
պետ, ո՞ւր են օթևանք քո։
39 Ասէ ցնոսա. Եկայք և տեսէք.
եկին և տեսին՝ ուր էին օթե-
վանք նորա, և առ նմա ագան
այն օր, զի ժամ էր իրրև տաս-
40 ներորդ։ Էր Անդրէաս եղբայր
Սիմովնի Պետրոսի, մի յերկուց
անտի, որ լուանն ի Յովհաննէ՝
41 և գնացին զկնի նորա։ Գտանէ
սա նախ զեղբայր իւր զՍիմոն,
և ասէ ցնա. Գտաք զՄեսիայն՝
42 որ թարգմանի Քրիստոս։ Սա
յեց Յոհաննէսը և ասաց, թէ
Տեսնում էի Հոգին, որ աղաւ-
նու պէս վայր էր գալիս երկնք-
ից և նորա վերայ մնում։ Եւ 33
ես չէի գիտում նորան. բայց
նա որ ինձ ուղարկեց ջրով
մկրտելու, նա ասաց ինձ թէ
Որի վերայ որ տեսնես Հոգին
վայր գալիս և նորա վերայ
մնում, նա է Սուրբը Հոգով
մկրտողը։ Եւ ես տեսայ և 34
վկայեցի, թէ Սա է Աստուծոյ
Որդին։

Հետևեալ օրն դարձեալ 35
կանգնած էր Յոհաննէսը, և
նորա աշակերտներից երկուսը։
Եւ մտիկ տուաւ Յիսուսին, որ 36
ման էր գալիս, և ասաց. Ահա
Աստուծոյ Գառն։ Եւ այն եր- 37
կու աշակերտները լսեցին նո-
րանից՝ որ խօսում էր, և Յի-
սուսի ետևից գնացին։ Յիսուսն 38
էլ դարձաւ նորանց տեսաւ, որ
գնում էին իր ետևից, և ասաց
նորանց. Ի՞նչ էք ուզում. նո-
քանք ասացին նորան։ Ռաբբի,
(որ թարգմանուած ասվում է՝
վարդապետ.) ո՞ր տեղ ես կենում։
Նորանց ասաց. Եկէք և տեսէք. 39
եկան և տեսան Ի՞նչ որտեղ էր
կենում. և այն օրը նորա մօտ
մնացին. ժամն էլ տասնի մօտ
էր։ Անդրէասը՝ վէմ Սիմոնի 40
եղբայրն՝ այն երկուսից մէկն
էր, որ Յոհաննէսիցը լսեցին և
նորա ետևից գնացին։ Սա ա- 41
ռաջ իր Սիմոն եղբօրն է գըտ-
նում և նորան ասում. Մեսիան

ած զնա առ Յիսուս. Հայեցեալ
ընդ նա Յիսուսի՝ ասէ, Դու ես
Սիմոն որդի Յովնանու, դու կո-
չեսցիս Կեփաս, որ թարգմանի
Պետրոս:

43 Ի վաղիւ անդր կամեցաւ
ելանել ի Գալիլեա. գտանէ
զՓիլիպպոս, և ասէ ցնա Յի-
44 սուս. Ե՛կ զկնի իմ: Եւ
էր Փիլիպպոս ի Բեթսայիդա,
ի քաղաքէ Անդրեայ և Պետ-
45 րոսի: Գտանէ Փիլիպպոս
զՆաթանայէլ, և ասէ ցնա.
Զորմէ գրեաց Մովսէս յօ-
րէնսն՝ և մարգարէքն. գտաք
զՅիսուս զորդի Յովսեփայ ի
46 Նազարեթէ: Ասէ ցնա Նա-
թանայէլ. Իսկ ի Նազարեթէ՝
մարթ ի՞նչ իցէ բարւոյ իմիք
լինել. ասէ ցնա Փիլիպպոս.
47 Ե՛կ և տես: Իբրև ետես Յիսուս
զՆաթանայէլ զի գայր առ նա,
ասէ վասն նորա, Ահա արդարև
Իսրայելացի՝ յորում նենգու-
48 թիւն ոչ գոյ: Ասէ ցնա Նա-
թանայէլ. Ուստի՞ ճանաչես
զիս. պատասխանի ետ Յիսուս
և ասէ ցնա. Մինչչև էր Փիլիպ-
պոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր ի
ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ:
49 Պատասխանի ետ նմա Նաթա-
նայէլ և ասէ. Ո՛ռաբբի՝ դու ես
Որդի Աստուծոյ, Դու ես թա-
50 գաւորն Իսրայէլի: Պատասխանի
ետ նմա Յիսուս և ասէ. Փո-

գտել ենք (որ թարգմանվում
է Քրիստոս): Եւ բերաւ նո- 42
րան Յիսուսի մօտ. Յիսուսն
էլ նորան մտիկ տուաւ և ասաց.
Դու Սիմոնն ես՝ Յովնանի որ-
դին. դու պիտի կոչուիս Կե-
փաս, (որ թարգմանվում է
Պետրոս):

Հետևեալ օրը կամեցաւ Յի- 43
սուսը դուրս գնալ Գալիլեայ.
և գտնում է Փիլիպպոսին, և
ասում նորան. Իմ ետևից եկ:
Փիլիպպոսն էլ Բեթսայիդայից 44
էր, Անդրեասի և Պետրոսի քա-
ղաքից: Փիլիպպոսն էլ գըտ- 45
նում է. Նաթանայէլին և
ասում նորան. Նա որի մասին
գրեց Մովսէս օրէնքումը, և
մարգարէները էլ, գտանք՝ Յո-
սէփի որդի Յիսուսին՝ Նա-
զարէթից: Եւ Նաթանայէլ 46
նորան ասաց. կարելի՞ է Նազա-
րէթից մի բարի բան լինել.
Փիլիպպոսը նորան ասաց. Եկ
և տես: Յիսուսը տեսաւ Նա- 47
թանայէլին իրան մօտ գալիս՝ և
ասաց նորա համար. Ահա ճիշտ
Իսրայէլացի, որում նենգու-
թիւն չկայ: Նաթանայէլ ա- 48
սում է նորան. Ի՞նչ տեղից ես
ճանաչում ինձ. Յիսուսը պա-
տասխանեց և ասաց նորան.
Փիլիպպոսը դեռ քեզ չըկան-
չած՝ քեզ տեսայ որ թզենու
տակն էիր. Նաթանայէլը պա- 49
տասխանեց և ասաց. Ռաբբի,
դու Աստուծոյ Որդին ես. Դու
ես Իսրայէլի թագաւորը: Յի- 50

խանակ զի ասացի քեզ՝ թէ տե-
սի ի ներքոյ թզենւոյն, հաւա-
տաս. մեծամեծս ես քան զայս
51 տեսցես: Եւ ասէ ցնա. Ամէն
ամէն ասեմ ձեզ, տեսանիցէք
զերկինս բացեալ, և զհրեշ-
տակս Աստուծոյ՝ զի ելանիցեն և
իջանիցեն ի վերայ Որդւոյ
մարդոյ:

ԳԼ. Բ

1 Եւ յաւուրն երրորդի հար-
սանիք էին ի Կանա Գալիլեաց-
ւոց. և անդ էր մայրն Յի-
2 սուսի: Կոչեցաւ և Յիսուս և
աշակերտքն նորա ի հարսանիսն:
3 Եւ ի պակասել գինւոյն, ասէ
մայրն ցՅիսուս. Գինի ո՛չ
4 ունին: Եւ ասէ ցնա Յիսուս.
Օ՛ի՞ կայ իմ և քո՝ կին դու, չե՛
5 է հասեալ ժամանակ իմ: Ասէ
մայրն նորա ցսպասաւորսն.
Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջի՛ք:
6 Անդ էին թակոյկք կճեայք վեց՝
ըստ սրբութեան Հրէից. տա-
նէին մի մի ի նոցանէ մարս
7 երկուս կամ երիս: Ասէ ցնոսա
Յիսուս. Լցէ՛ք զթակոյկսդ
ջրով. և լցին զնոսա մինչև ի
8 վեր: Եւ ասէ ցնոսա. Արդ
առէ՛ք և բերէ՛ք տաճարապետիս.
9 և նոքա բերին: Եւ իբրև ճա-
շակեաց տաճարապետն զջուրն
գինի եղեալ, և ո՛չ գիտէր ուստի
իցէ. բայց սպասաւորքն գիտէին՝

սուսը պատասխանեց և ասաց
նորան. Որովհետև ասացի քեզ
թէ թզենու տակ տեսայ քեզ,
հաւատում ես, սորանցից էլ
աւելի մեծ բաներ կ'տեսնես:
Եւ նորան ասաց. Ճշմարիտն 51
ճշմարիտն ասում եմ ձեզ, այ-
սուհետև կ'տեսնէք երկինքը բա-
ցուած, և Աստուծոյ հրեշտակ-
ներին ելնելիս և իջնելիս Որդոյ
մարդոյ վերայ:

ԳԼ. Բ

Եւ երրորդ օրը հարսանիք 1
էր Գալիլեայի Կանայումը, և
Յիսուսի մայրն այն տեղ էր:
Յիսուսն էլ կանչուեցաւ այն 2
հարսանիքը և նորա աշակերտ-
ներն էլ: Եւ երբոր գինին 3
պակասեց, Յիսուսի մայրը ա-
սաց նորան. Գինի չունին:
Յիսուսը նորան ասաց, Դեղ 4
ի՞նչ բան կայ ինձ հետ, կին.
իմ ժամանակը դեռ չէ հասել:
Նորա մայրն ասաց սպասա- 5
ւորներին. Ինչ որ ասէ ձեզ,
արէք: Այն տեղ վեց քարէ 6
կարաս կային Հրէաների մաք-
րուելու համար, որոնցից ամեն
մէկը երկու կամ երեք մար էին
տանում: Յիսուսը նորանց ա- 7
սաց. Լցրէք կարասները ջրով
լցրէք. և նորանց լցրին մինչև
վեր: Եւ նորանց ասաց. Հիմա 8
առէք և տարէք սեղանապետի
համար. և նորանք տարին: Եւ 9
երբոր վերակացուն այն գինի

որք արկին զջուրն, խօսի ընդ
փեսային տաճարապետն, Եւ
10 ասէ. Ամենայն մարդ զանոյշ
գինին յառաջագոյն պաշտէ. և
յորժամ արբենան, յայն-
ժամ զյոռին. դու պահեցեր
զանոյշ գինիդ մինչև ցայժմ:
11 Այս արար սկիզբն նշանաց
Յիսուս 'ի Կանա Գալիլեացւոց,
և յայտնեաց զփառս իւր, և
հաւատացին 'ի նա աշակերտքն
նորա:

12 Յետ այսորիկ էջ Յիսուս 'ի
Կափառնաում, ինքն և մայր
իւր և եղբարք իւր*. և անդ
լինէր՝ ոչ բազում՝ ինչ աւուրս:

13 Եւ էր մերձ զատիկն Հրէից,
և եկ Յիսուս Յերուսաղէմ.
14 Եւ եգիտ 'ի տաճարին զի
վաճառէին զարջառս և զոչխարս
և զաղաւնիս, և զլումափոխսն՝
15 որ նստէին: Եւ արար խարա-
զան չուանեայ, և եհան զամե-
նեսին 'ի տաճարէն, զոչխարսն և
զարջառս, և զդրլինձս հատուա-
ճառացն ցրուեաց, և զսեղանսն
16 կործանեաց: Եւ որ աղաւնիսն
վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք
զայդ ասսի, և մի առնէք զտուն
17 Հօր իմոյ՝ տուն վաճառի: Ապա
յիշեցին աշակերտքն նորա, թէ
գրեալ է. Նախանձ տան քո
կերիցէ զիս:

* 'Ի Ցոյն, և աշակերտքն իւր

ջուրը ճաշակեց, (և չէր գի-
տում թէ ինչ տեղից է. բայց
սպասաւորները գիտէին՝ որ
ջուրն լցրել էին) սեղանապետը
փեսային կանչեց, Եւ նորան
ասաց. Ամեն մարդ առաջ լաւ
գինին է տալիս. և երբոր արբե-
նան, այն ժամանակ վատը. դու
լաւ գինին մինչև հիմա պահե-
ցիր: Նշանների սկիզբը Յի-
սուսը այս արաւ Գալիլեայի
Կանայումը. և իր փառքը յայտ-
նեց. և նորա աշակերտները
հաւատացին նորան:

Յորանից յետոյ Յիսուսը իջաւ
Կափառնայում՝ ինքն և իր
մայրը և իր եղբայրները և իր
աշակերտները. և շատ օրեր
չմնացին այնտեղ:

Եւ Հրէից զատիկը մօտ էր,
և Յիսուսը եկաւ Երուսաղէմ:
Եւ տաճարումը գտաւ եզներ և
ոչխարներ և աղաւնիներ ծա-
խողներին, և սեղանաւորներին
նստած. Եւ չուանից խարա-
զան շինեց, և ամենին տաճա-
ռից դուրս հանեց՝ ոչխարներն
էլ և եզներն էլ, և սեղանաւոր-
ների դրլինձները ցրուեց և
տախտակները կործանեց: Եւ
աղաւնի ծախողներին ասաց. Դո-
րանց վեր առէք այստեղից. իմ
Հօր տունը մի անէք առուտուրի
տուն: Եւ նորա աշակերտները
յիշեցին, թէ գրուած է,
Քո տան նախանձը կերաւ ինձ:

18 Պատասխանի ետուն Հրէայքն
և ասեն ցնա՝. Զի՞նչ նշան
ցուցանես դու մեզ՝ զի զայդ
19 առնես: Պատասխանի ետ Յի-
սուս՝ և ասէ ցնոսա. Քակեցէք
զտաճարդ զայդ, և զերիս ա-
20 ւուրս կանգնեցից զդա: Ասեն
ցնա Հրէայքն. Քառասուն և
զվեց ամ շինեցաւ տաճարս այս,
և դու զերիս աւուրս կանգնես
21 զսա: Բայց նա ասէր վասն
22 տաճարի մարմնոյն իւրոյ: Իսկ
յորժամ յարեաւն 'ի մեռելոց,
յիշեցին աշակերտքն նորա, թէ
այս է՝ զոր ասացն. և հաւատա-
ցին գրոյն, և բանին՝ զոր ասաց
Յիսուս:

23 Եւ իբրև էր Յերուսաղէմ 'ի
զատկին 'ի տօնի, բազումք
հաւատացին յանուն նորա. զի
տեսանէին զնշանս՝ զոր առնէր:
24 Բայց ինքն Յիսուս ոչ հաւա-
տայր զանձն նոցա. քանզի
25 ինքն գիտէր զամենայն. Եւ զի
ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ
վասն մարդոյ՝ զի ինքն իսկ
գիտէր՝ զինչ կրէր 'ի մարդն:

ԳԼ. Գ

1 Եւ էր այր մի 'ի փարիսեցւոց
անտի՝ Նիկոդեմոս անուն նորա՝
2 իշխան Հրէից: Սա եկն առ նա
գիշերի՝ և ասէ ցնա. Ռաբբի՝

Բրդ Հրէաները պատասխա-
նեցին և ասացին նորան. Ի՞նչ
նշան ես ցոյց տալիս մեզ, որ
անում ես այդ: Յիսուսը պա-
տասխանեց և ասաց նորանց.
Քանդեցէք այդ տաճարը, և
երեք օրում կ'կանգնեցնեմ դո-
րան: Հրէաներն էլ ասացին.
Այս տաճարը քառասուն և վեց
տարում շինուեցաւ, և դու
երեք օրումն կ'կանգնեցնես դո-
րան: Բայց նա իր մարմնոյ
տաճարի համար էր ասում:
Ապա երբոր նա մեռելների
միջից յարութիւն առաւ, նո-
րա աշակերտները յիշեցին,
թէ նա ասաց նորանց այս
բանը. և հաւատացին գրքին՝
և այն խօսքին, որ ասաց Յի-
սուսը:

Եւ երբոր Երուսաղէմումն
էր զատկի տօնին, շատ մարդիկ
հաւատացին նորա անունը.
տեսնելով նորա այն նշանները,
որ անում էր: Բայց ինքն Յի-
սուս իր անձը չէր հաւատում
նորանց. քանզի ինքն ամենը
գիտէր: Եւ որովհետև պէտք
չէր որ մէկը վկայէր մարդու
համար. քանզի ինքը գիտէր,
թէ ինչ կար մարդումը:

ԳԼ. Գ

Եւ փարիսեցիներից մի մարդ
կար՝ անունը Նիկոդիմոս՝ Հր-
էաների իշխան: Սա գիշերը
Յիսուսի մօտ եկաւ և ասաց

գիտեմք եթէ Յ.ստուծոյ եկեալ
ես վարդապետ. զի ո՛չ ոք կարէ
զայդ նշանսդ առնել՝ զոր դուդ
առնես, եթէ ոչ Յ.ստուած իցէ
3 ընդ նմա։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնա. Յ.մէն ամէն
ասեմ քեզ, Եթէ ո՛չ ոք ծնցի
վերստին՝ ո՛չ կարէ տեսանել
4 զարքայութիւն Յ.ստուծոյ։ Յ.սէ
ցնա Նիկոդեմոս. Ո՞ւմարդ կարէ
մարդ ծնանել՝ որ ծերն իցէ.
միթէ մանրի՞ն ինչ իցէ անդրէն
յորովայն մօր իւրոյ երկին
5 մտանել՝ և ծնանել։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ. Յ.մէն
ամէն ասեմ քեզ, Եթէ ո՛չ ոք
ծնցի ՚ի ջրոյ և ՚ի Հոգւոյ, ո՛չ
կարէ մտանել յարքայութիւնն
6 Յ.ստուծոյ։ Զի ծնեալն ՚ի
մարմնոյ՝ մարմին է, և ծնեալն ՚ի
7 Հոգւոյ՝ հոգի է։ Դու մի՛
զարմանար, թէ ասացի քեզ՝
Պարտ է ձեզ ծնանել վերստին։
8 Զի հողմ՝ ուր կամի շնչէ. և
զձայն նորա լսես. այլ ո՛չ գիտես՝
ուստի՞ գայ, կամ յո՞ երթայ.
սոյնպէս և ամենայն ծնեալն ՚ի
9 Հոգւոյն։ Պատասխանի ետ
Նիկոդեմոս և ասէ ցնա. Զի՞նդ
10 մարթի այդմ լինել։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնա.
Դու ես վարդապետ Իսրայէլի՝
11 և զայդ ո՞չ գիտես։ Յ.մէն ամէն
ասեմ քեզ. զի զոր ինչ գիտեմք՝
խօսիմք, և զոր տեսաք վկայեմք,
և զվկայութիւն մեր ո՛չ ընդու-
12 նիք։ Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս
ասացի ձեզ՝ և ո՛չ հաւատայք.

նորան. Ոսաբբի, գիտենք որ
Յ.ստուածանից վարդապետ ես
եկել. քանզի ոչ ոք չէ կարող
այդ նշաններն անել՝ որ դու
ես անում, եթէ Յ.ստուած նո-
3 ցա հետ չ՚լինի։ Յիսուսը պա-
տասխանեց և ասաց նորան.
Ճ՚շմարիտն ճշմարիտն ասում
եմ քեզ. Եթէ մէկը վերստին
4 չ՚ծնուի՝ կարող չէ Յ.ստուծոյ
արքայութիւնը տեսնել։ Նի-
կոդեմոս նորան ասաց. Ո՞արդ
ի՞նչպէս կարող է ծնուիլ՝ որ
ծեր է. միթէ կարող է երկ-
5 րորդ անգամ իր մօր արգանդը
մտնել և ծնուիլ։ Յիսուս պա-
տասխանեց. Ճ՚շմարիտն ճշմա-
ր՚ի՞տն ասում եմ քեզ. Եթէ
մէկը ջրից և Հոգուց չ՚ծնուի,
6 նա կարող չէ Յ.ստուծոյ արքա-
յութիւնը մտնել։ Ո՞արմնուցը
7 ծնուածը մարմին է. և Հո-
գուցը ծնուածը հոգի է։ Ո՞ի
զարմանար՝ որ ասացի քեզ, թէ
Պէտք է ձեզ՝ վերստին ծնուիլ։
8 Զամին որտեղ ուզում է՝
փչում է, և նորա ձայնը լսում
ես. բայց չ՚գիտես թէ որ
տեղից է գալիս և որտեղ է
9 գնում. այսպէս է ամեն Հո-
գուցը ծնուածը։ Նիկոդեմոսը
պատասխանեց և ասաց նորան.
10 Այդ ի՞նչպէս կարող է լինիլ։
Յիսուսը պատասխանեց և ասաց
նորան. Դու ես Իսրայէլի վար-
դապետը, և այս չե՞ս գիտում։
11 Ճ՚շմարիտն ճշմարիտն ասում
եմ քեզ, թէ ինչ որ գիտում

զիմարդ եթէ զերկնաւորսն ասա-
ցից՝ հաւատայցէք։
13 Եւ ոչ ոք ելել յերկինս, եթէ
ոչ՝ որ էջն յերկնից՝ Որդին
14 մարդոյ, որ էն յերկինս։ Եւ
որպէս Ա՞ովսէս բարձրացոյց
զօձն յանապատին, նոյնպէս
15 բարձրանալ պարտ է Որդւոյ
մարդոյ։ Զի ամենայն որ
հաւատայ ՚ի նա՝ մի՛ կորիցէ,
16 այլ ընկալցի զկեանսն յաւիտե-
նականս։ Զի այնպէս սիրեաց
Յ.ստուած զաշխարհ՝ մինչև
զՈրդին իւր միածին ետ. զի ա-
մենայն որ հաւատայ ՚ի նա՝ մի՛
17 կորիցէ, այլ ընկալցի զկեանսն
յաւիտենականս։ Զի ո՛չ առա-
քեաց Յ.ստուած զՈրդի իւր
յաշխարհ՝ թէ դատեսցի զաշ-
18 խարհ, այլ զի փրկեսցի աշխարհ
նովաւ։ Որ հաւատայ ՚ի նա,
ո՛չ դատապարտեսցի. և որ ո՛չ
հաւատայ ՚ի նա՝ արդէն իսկ
դատապարտեալ է. զի ո՛չ
19 հաւատաց յանուն միածնի Որդ-
ւոյն Յ.ստուծոյ։ Եւ այս իսկ
է դատաստան. զի լոյս եկն
յաշխարհ, և սիրեցին մարդիկ
զկաւար առաւել քան զլոյս. զի
20 էին գործք իւրեանց չարու-
թեան։ Զի ամենայն որ զչար
գործէ՝ ատեայ զլոյս. և ո՛չ գայ
առ լոյսն, զի մի՛ յանդիմանես-

ենք՝ խօսում ենք, և ինչ որ
տեսանք՝ վկայում ենք. և մեր
վկայութիւնը չէք ընդունում։
Եթէ երկրաւոր բաներն ասացի 12
ձեզ, և չէք հաւատում, ապա
ի՞նչպէս կ՚հաւատաք, եթէ
երկնաւոր բաներն ասեմ։
Եւ ոչ ով վեր չելաւ եր- 13
կինքը, եթէ ոչ երկնքից իջնողը՝
Որդին մարդոյ՝ նա որ երկնքը-
քումն է։ Եւ ինչպէս Ա՞օսէս 14
օձը բարձրացրեց անապատումը,
այնպէս պէտք է մարդոյ Որ-
դոյն բարձրացուել. Որ ամեն 15
նորան հաւատացողը չ՚կորչի,
այլ յաւիտենական կեանքն ու-
նենայ։ Վասնզի Յ.ստուած 16
այնպէս սիրեց աշխարհքը, որ
իր միածին Որդին տուաւ, որ
ամեն նորան հաւատացողը
չ՚կորչի, այլ յաւիտենական
կեանքն ունենայ։ Զանզի Յ.ս- 17
տուած իր Որդին չուղարկեց
աշխարհքը, որ աշխարհքին
դատէ, այլ որ աշխարհքը նո-
ւանով փրկուի։ Նորան հա- 18
ւատացողը չի դատապարտուիլ.
իսկ չ՚հաւատացողն արդէն պա-
տապարտուած է. որովհետև
չ՚հաւատաց Յ.ստուծոյ միածին
Որդոյ անունը։ Եւ սա է 19
դատաստանն, որ լոյսն եկաւ
աշխարհքը, և մարդիկ խաւարն
աւելի սիրեցին քան թէ լոյսն,
վասնզի նորանց գործքերը չար
էին։ Զանզի ամեն չար գոր- 20
ծողը ատում է լոյսին, և չէ
գալիս դէպի լոյսն, որ նորա

21 ցին գործք նորա։ Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա, թէ Աստուծով գործեցան։

22 Յետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտքն նորա յերկիրն Հրէաստանի. և անդ շրջէր նոքօք հանդերձ և մկրտէր։
23 Մկրտէր և Յովհաննէս ի Այենովն մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք էին անդ. և
24 գային՝ և մկրտէին։ Զի չէ՛ ևս էր արկեալ զՅովհաննէս ի բանտ։

25 Եւ եղև խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէից
26 վասն սրբութեան։ Եկին առ Յովհաննէս՝ և ասեն ցնա. Ռաբբի՝ որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որում դուն վկայեցեր, ահաւանիկ նա մկրտէ՝ և ամենեքին գան առ նա։
27 Պատասխանի ետ Յովհաննէս՝ և ասէ. Ո՛չ կարէ մարդ առնուլ յանձնէ և ոչինչ՝ եթէ ո՛չ ետցէ տուեալ նմա յերկնից ի
28 վերուստ։ Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ Չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա։ Որ
29 ունի հարսն՝ նա է փեսայ. իսկ բարեկամ փեսային՝ որ կայ և լսէ նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ այս ուրախութիւն որ իմն
30 է, լցեալ է։ Նմա պարտ է

գործքերը չ՚յանդիմանուին։
21 Իսկ ճշմարտութիւն գործողը գալիս է դէպի լոյսն, որ նորա գործքերն յայտնուին, վասնզի Աստուծով գործուեցան։

22 Սորանից յետոյ եկաւ Յիսուսը և նորա աշակերտները Հրէաստանի երկիրը. և այնտեղ նորանց հետ մնալ էր գալիս
23 և մկրտում էր։ Եւ Յովհաննէսն էլ Այենոնումն էր մկրտում՝ Սաղեմայ մօտ. որովհետև այնտեղ շատ ջուր կար.
24 և գալիս էին և մկրտվում էին։ Վասնզի Յովհաննէսը դեռ բանտի մէջ չէր գցուած։

25 Արդ Յովհաննէսի աշակերտները Հրէաների հետ վէճ ունեցան մաքրութեան համար։
26 Եւ Յովհաննէսի մօտ եկան և ասացին նորան. Ռաբբի, նա որ Յորդանանի այն կողմումն էր քեզ հետ, որի համար դու վկայեցիր, ահա նա մկրտում
27 է, և ամենքը նորա մօտ են գալիս։ Յովհաննէսը պատասխանեց և ասաց. Մարդ չէ կարող ոչինչ վեր առնել, եթէ
28 երկնքիցը տրուած չլինի նորան։ Դուք ինքներդ վկայում էք ինձ համար, որ ասացի ձեզ, թէ Ես Քրիստոսը չեմ, այլ թէ նորա առջևից ուղարկուած
29 եմ։ Հարսն ունեցողն է փեսայ. բայց փեսայի բարեկամը, որ կանգնած է և լսում է նորան, ուրախութիւնով ուրախանում է փեսայի ձայնի հա-

31 աճել, և ինձ մեղմանալ։ Որ ի վերուստն գայ՝ ի վերոյ է քան զամենայն. որ յերկրէ աստի է,
32 յերկրէ է և յերկրէ խօսի։ Որ յերկնիցն գայ, զոր ինչ ետես և զոր լուաւ՝ վկայէ. և զվկայութիւն նորա ոչ ոք
33 ընդունի։ Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է։
34 Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին։
35 Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ետ ի ձեռս նորա։
36 Որ հաւատայ Որդի, ընդունի զկեանսն յաւիտենականս. և որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս, աղ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա։

ԳԼ. Դ

1 Իբրև գիտաց Յիսուս՝ եթէ լուան փարիսեցիքն՝ եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ,
2 և մկրտէ քան զՅովհաննէս. Թարգմանի ոչ եթէ Յիսուս ինքնին մկրտէր՝ այլ աշակերտքն նորա.
3 Եթող զՀրէաստան երկիր, և եկն միւսանգամ ի Գալիլեա։
4 Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա։
5 Գայ նա ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար. մերձ ի դեղն զոր ետ

մար. արդ իմ այս ուրախութիւնը լցուած է։ Նորան պէտք
30 է աճել, և ինձ փոքրանալ։
31 Վերևից եկողն ամենից վեր է. երկրիցը լինողը երկրիցն է և երկրիցն է խօսում։ Երկնքից
32 եկողն ամենից վեր է. ինչ որ տեսաւ և լսեց, նա է վկայում. և նորա վկայութիւնը ոչ ով
33 չէ ընդունում։ Նորա վկայութիւնն ընդունողը կնքեց, թէ Աստուած ճշմարիտ է։
34 Թարգմանի նա՝ որին Աստուած ուղարկեց, Աստուծոյ բանն է խօսում. վասնզի Աստուած Հոգին չափով չէ տալիս։
35 Հայրը սիրում է Որդուն, և ամեն բան նորա ձեռքն է տուել։ Որդուն
36 հաւատացողը յաւիտենական կեանք ունի. իսկ Որդուն չընդունողը կեանքը չի տեսնիլ, այլ Աստուծոյ բարկութիւնը մնում է նորա վերայ։

ԳԼ. Դ

Եւ երբոր Տէրն իմացաւ, որ
1 փարիսեցիները լսեցին, թէ Յիսուսը աւելի աշակերտներ է անում և մկրտում քան թէ Յո-
2 հաննէսը։ (Թէպէտև Յիսուսը ինքն չէր մկրտում՝ այլ նորա
3 աշակերտները.) Հրէաստանի երկիրը թողեց և դարձեալ
4 եկաւ Գալիլեա։ Եւ պէտք էր
5 որ Սամարիայի միջովն անցնէր։ Արդ նա Սամարիայի մի քաղաքն եկաւ, անունը Սիւքար,

Յակովբ որդւոյ իւրում Յով-
6 սեփայ։ Եւ անդ էր աղբիւր մի
Յակոբայ. և Յիսուս վաստա-
կեալ ՝ի ճանապարհէն, նստէր
՝ի վերայ աղբերն, և էր ժամ
իբրև վեցերորդ։

7 Գայ կին մի ՝ի Սամարեայ
հանել ջուր ասէ ցնա Յիսուս.
8 Տո՛ւր ինձ ըմպել։ Օ՛ի աշա-
կերտքն նորա երթեալ էին ՝ի
քաղաք անդր՝ զի կերակուրս
9 գնեսցեն։ Ասէ ցնա կինն Սա-
մարացի. Դո՞ւ՝ որ Հրէայդ
ես, զիարդ յինէն ըմպել խնդրես
՝ի կնոջէ Սամարացւոյ. զի ո՛չ
երբէք խառնակին Հրէայք ընդ
10 Սամարացիս։ Պատասխանի ետ
նմա Յիսուս և ասէ. Եթէ
գիտէիր դու զպարգևսն Աս-
տուծոյ, և ո՞վ է՝ որ ասէդ
ցքեզ՝ թէ Տուր ինձ ըմպել. դու
արդեօք խնդրէիր ՝ի նմանէ՝ և
11 տայր քեզ ջուր կենդանի։ Ասէ
ցնա կինն. Տէր՝ դու քանզի և
դո՛յլ իսկ ո՛չ ունիս, և ջրհորս
խոր է. իսկ արդ՝ ուստո՞ւ ունիցիս
12 ջուրն կենդանի։ Մի թէ դու
մե՞ծ ինչ ոք իցես քան զՀայրն
մեր Յակովբ՝ որ զայս ջրհոր ետ
մեզ. և ինքն աստի արբ՝ և
որդիքն նորա, և խաշինքն նորա։
13 Պատասխանի ետ նմա Յիսուս և
ասէ. Ամենայն որ ըմպէ ՝ի
ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ
ծարաւէ. բայց որ ըմպէ ՝ի
ջրոյն՝ զոր ես տայ նմա, մի՛
14 ծարաւեսցէ յաւիտեան։ Այլ
այն տեղի մօտ, որ Յակոբ
տուաւ իր որդի Յոսէփին։ Եւ
Յակոբի մի աղբիւրը կար այն-
տեղ. և Յիսուսը ճանապար-
հիցը վաստակած այն աղբիւրի
վերայ նստեց. և ժամը վեցին
դէմ էր։

Գրդ Սամարիայից մի կին
եկաւ, որ ջուր հանէ. Յիսուսը
նորան ասաց. Լինձ ջուր տուր
խմեմ։ Այ՝ ասնդի նորա աշա-
կերտները քաղաքն էին գնացել,
որ կերակուր առնեն։ Սամա-
րացի կինն էլ ասաց նորան.
Դու՝ որ Հրէայ ես, ի՞նչպէս
ես լինձանից ջուր ուզում խմել,
որ մի Սամարացի կին եմ.
որովհետև Հրէաները չեն
խառնվում Սամարացոց հետ։
Յիսուսը պատասխանեց և ասաց
նորան, Եթէ Աստուծոյ պար-
գևը գիտենայիր, և թէ ով
է նա, որ քեզ ասում է, թէ
տուր ինձ խմել, ապա դու նո-
րանից կ՝խնդրէիր, և նա կեն-
դանի ջուր կ՝տար քեզ։ Կինը
նորան ասաց. Տէր, դու դոյլ
էլ չունիս, և հորը խոր է.
ապա ո՞րտեղից ունիս կենդանի
ջուրը։ Մի՞թէ դու աւելի
մեծ ես քան մեր Հայր Յակոբը,
որ այս հորը տուաւ մեզ. և
ինքն սորանից խմեց, և նորա
որդիքը և նորա անասունները։
Յիսուսը պատասխանեց և ա-
սաց նորան. Ամեն այդ ջրիցը
խմողը դարձեալ կ՝ծարաւի. բայց
ով որ խմէ այն ջրիցը, որ ես

ջուրն զոր ես տայ նմա, եղեցի
նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ՝ի
15 կեանսն յաւիտենականս։ Ասէ
ցնա կինն. Տէ՛ր՝ տուր ինձ
զջուրն զայն, զի մի՛ ծարաւեցից,
և մի՛ եկից այսր՝ հանել ջուր։
16 Ասէ ցնա Յիսուս. Ե՛րթ
կոչեա՛ զայր քո՝ և եկ այսր։
17 Պատասխանի ետ նմա կինն և
ասէ. Չի՛ք իմ այր. ասէ ցնա
Յիսուս. Խարեալ ասացեր՝ թէ
18 Չի՛ք իմ այր. Օ՛ի հինգ այր
փոխեալ է քո, և զոր այժմ
ունիս՝ չէ՛ քո այր. զայդ արդար
19 ասացեր։ Ասէ ցնա կինն. Տէր՝
թուի ինձ, թէ մարգարէ իցես
20 դու։ Հարքն մեր ՝ի լերինս
յայսմիկ երկիր պագին. և դուք
ասէք՝ եթէ Յերուսաղէմ և եթէ
տեղի, ուր արժան իցէ երկիր
21 պագանել։ Ասէ ցնա Յիսուս.
Կին դու՝ հաւատա՛ ինձ, զի
եկեսցէ ժամանակ՝ յորժամ ո՛չ
՝ի լերինս յայսմիկ և ո՛չ Յերու-
սաղէմ երկիր պագանիցեն Հօր։
22 Դուք երկիր պագանէք՝ որում
ո՛չն գիտէք, մեք երկիր պա-
գանեմք որում գիտեմքն. զի
23 փրկութիւն ՝ի Հրէից է։ Այլ
եկեսցէ ժամանակ՝ և այժմ իսկ
է, յորժամ ճշմարիտքն երկրը-
պագուք երկիր պագանիցեն Հօր
Հոգւով և ճշմարտութեամբ.
քանզի և Հայր այնպիսի երկրը-
պագուս իւր խնդրէ։

կ՝տամ նորան, նա յաւիտեան
չի ծարաւիլ։ Այլ այն ջուրն, 14
որ ես կ՝տամ նորան, ջրի
աղբիւր կ՝լինի նորանում, որ
յաւիտենական կենաց մէջ կ՝բղ-
խէ։ Կինը նորան ասաց. Տէր, 15
տուր ինձ այն ջուրը, որ չըծա-
ռաւիմ, և չ՝գամ այստեղ ջուր
հանելու։ Յիսուսը նորան ա- 16
սաց. Գնա կանչիր քո մար-
դուն, և եկ այստեղ։ Կինը 17
պատասխանեց և ասաց. Ես
մարդ չունիմ. Յիսուսը նորան
ասաց. Լաւ ասացիր, թէ մարդ
չունիմ։ Այ՝ ասնդի դու հինգ 18
մարդ ես ունեցել, և նա որ
հիմա ունիս, քո մարդը չէ.
դա ճշմարիտ ասացիր։ Կինը 19
նորան ասաց. Տէր, տեսնում
եմ որ դու մարգարէ ես։ Ա՛ռ 20
հարքն այս լեռնումը երկր-
պագութիւն արին. և դուք
ասում էք, թէ Երուսաղէմումն
է այն տեղը, ուր պէտք է
երկրպագութիւն անել։ Յի- 21
սուսը նորան ասաց. Կին. հա-
ւատա ինձ, որ ժամանակ կ՝գայ։
որ այն ժամանակ ոչ այս լեռ-
նումն կ՝երկրպագէք Հօրը, և
ոչ էլ Երուսաղէմումը։ Դուք 22
երկրպագում էք նորան, որ
չէք գիտում. մենք երկրը-
պագում ենք նորան, որ գի-
տում ենք. որովհետև փրկու-
թիւնը Հրէաներից է։ Այդ 23
ժամանակ կ՝գայ, և հիմա է,
որ ճշմարիտ երկրպագողները
հոգով և ճշմարտութիւնով

24 Հոգի է Աստուած, և երկրը-
պագուաց նորա՝ հոգւով և
ճշմարտութեամբ պարտ է երկիր
25 պագանել։ Ասէ ցնա կինն,
Գիտեմ զի Մեսիայ գայ՝
անուանեալն Քրիստոս. յոր-
ժամ եկեսցէ, նա պատմեսցէ
26 մեզ զամենայն։ Ասէ ցնա Յի-
սուս. Ես եմ՝ որ խօսիմ ընդ
27 քեզ։ Եւ յայն բան եկին աշա-
կերտքն նորա, և զարմանային՝
զի ընդ կնոջն խօսէր. բայց
ոչինչ ասաց ի նոցանէ, թէ
Զի՞նչ խնդրես, կամ՝ զի՞նչ
28 խօսիս ընդ դմա։ Եթող կինն
զսափորն իւր՝ և չոգաւ ի
քաղաքն, և ասէ ցմարդիկն։
29 Եկա՛յք տեսէք զայր մի. որ
ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ՝
գործեալ է. միթէ նա՞ իցէ
30 Քրիստոսն։ Ելին ի քաղաքէն՝
և գային առ նա։
31 Եւ մինչչև եկեալ էին նոքա,
աղաչէին զնա աշակերտքն և
32 ասէին. Ռաբբի՝ հա՛ց կեր։ Նա
ասէ ցնոսա. Ես կերակուր
ունիմ ուտել, զոր դուքն ո՛չ
33 գիտէք։ Ասէին աշակերտքն ընդ
միմեանս. Մի՝թէ երի՞ր ինչ ոք
34 դմա ուտել։ Ասէ ցնոսա Յի-
սուս. Իմ կերակուր այն է՝ զի
արարիցց զկամն այնորիս որ
առաքեացն զիս, և կատարեցից
35 զգործն նորա։ Ո՞չ դուք ասէք՝
Եթէ Այլ ևս չորք ամիսք են,
կ՚երկրպագեն Հօրը, քանզի
Հայրն էլ այսպէս է ուզում՝ իր
երկրպագողներին։

Աստուած Հոգի է, և նո-
24 բան երկրպագողները պէտք է
հոգով և ճշմարտութիւնով
25 երկրպագեն։ Կինն ասաց նո-
բան. Գիտեմ, որ Մեսիան
պիտի գայ (որ Քրիստոս է
կոչվում)։ Երբոր նա կ՚գայ,
26 ամեն բան կ՚պատմէ մեզ։ Յի-
սուսը նորան ասաց. Ես եմ,
27 որ քեզ հետ խօսում եմ։ Եւ
սորա վերայ եկան նորա աշա-
կերտները, և զարմանում էին,
որ կնոջ հետ խօսում էր. բայց
ոչ ոք չասաց, Ի՞նչ ես ուզում,
կամ Ի՞նչ ես խօսում դորա հետ։
28 Կինն էլ իր կուժը թողեց, և
գնաց քաղաք, և մարդկանց ա-
29 սաց. Եկէք տեսէք մի մարդ,
որ ինձ ասաց բոլորը ինչ որ
գործել եմ։ արդեօք նա՞ է Քրիս-
30 տոսը։ Եւ դուրս եկան քաղա-
քից, նորա մօտ էին գալիս։
31 Եւ այն միջոցին աշակերտ-
ները խնդրում էին նորան և
32 ասում. Ռաբբի՝ կեր։ Նա էլ
ասաց նորանց. Ես կերակուր
ունիմ ուտելու, որ դուք չէք
33 գիտում։ Աշակերտներն էլ իրար
ասում էին. Արդեօք մի մարդ
դորան բան բերաւ ուտելու։
34 Յիսուսը ասաց նորանց. Իմ
կերակուրը նա է, որ ինձ ու-
ղարկողի կամքն անեմ, և նորա
35 գործը կատարեմ։ Մի՞թէ դուք
չէք ասում, թէ Դեռ չորս ամիս

և հունձք գան. ահաւասիկ ես
ասեմ ձեզ. Բարձրացրէք զաչս
ձեր, և տեսէք զարտորայսն, զի
սպիտակացեալ են՝ և ի հունձս
36 հասեալ։ Եւ որ հնձէն՝ վարձս
առնու, և ժողովէ զպտուղ ի
կեանսն յաւիտենականս. զի որ
սերմանէն և որ հնձէ՝ հասարակ
37 ցնծասցին։ Այսն իսկ է բանն
ճշմարիտ, զի Այլ է որ սեր-
38 մանէ, և այլ է որ հնձէ։ Ես
առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ
դուք վաստակեցէք. այլք վաս-
տակեցին, և դուք ի վաստակս
նոցա մտէք։

39 Եւ ի քաղաքէն յայնմանէ
Սամարացւոց՝ բազումք հաւա-
տացին ի նա, վասն բանի
կնոջն վկայելոյ՝ եթէ ասաց ինձ
զամենայն, որ ինչ իմ գոր-
40 ծեալ էր։ Իսկ իբրև եկին առ
նա Սամարացիքն, աղաչէին զնա
լինել առ նոսա. և եղև անդ
41 աւուրս երկուս։ Եւ ևս բա-
զումք հաւատացին ի նա վասն
42 բանին նորա։ Եւ ասէին ցկինն,
թէ Ո՛չ այսուհետև վասն քո
խօսիցդ հաւատամք, զի մեզէն
իսկ լուաք ի դմանէ. և գիտեմք
եթէ դա՛ է ճշմարտիւ փրկիչ
աշխարհաց։

43 Եւ յետ երկուց աւուրց ել
անտի և գնաց ի Գալիլեա։
44 Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝
եթէ Մարգարէ յիւրում գա-
45 ւառի պատիւ ոչ ունի։ Այլ
կայ, և հունձքը կ՚գայ. ահա
ես ասում եմ ձեզ. Բարձրա-
ցրէք ձեր աչքերը, և տեսէք
արտերը, որ սպիտակացել են
36 և արդէն հնձին հասել։ Եւ
հնձողը վարձք է առնում, և
յաւիտենական կենաց մէջ պտուղ
ժողովում. որ սերմողը և հնձողը
37 իրար հետ ուրախանան։ Դան-
զի սորանում ճշմարիտ է այն
խօսքը, թէ Ուրիշ է սերմողը,
38 և ուրիշ է հնձողը։ Ես ու-
զարկեցի ձեզ հնձել այն, որ
դուք չաշխատեցիք. ուրիշներն
աշխատեցին, և դուք նորանց
աշխատանքի մէջ մտաք։

39 Եւ Սամարացոց այն քաղա-
քից շատերը հաւատացին նո-
բան այն կնոջ խօսքի համար,
որ վկայում էր, թէ Ասաց
ինձ բոլորը ինչ որ գործել էի։
40 Դրդ երբոր Սամարացիք նորա
մօտ եկան, նորան աղաչեցին,
որ իրանց մօտ մնայ. և երկու
41 օր մնաց այնտեղ։ Եւ էլ շա-
տերը հաւատացին նորան՝ նորա
42 խօսքի համար։ Եւ այն կնոջ
էլ ասում էին, թէ Այլ ևս
քո խօսքերի պատճառով չենք
հաւատում. վասնզի մենք ինքներս
լսեցինք, և գիտենք որ ճշմար-
տապէս սա է աշխարհի փրը-
կիչը՝ Քրիստոսը։

43 Եւ երկու օրից յետոյ այն-
տեղից դուրս եկաւ գնաց Գա-
44 լիլեա։ Վասնզի Քրիստոս ինքն
վկայեց, թէ Մարգարէն իր
հայրենիքումը պատիւ չունի։

յորժամ եկն նա 'ի Գալիլեա,
ընկալան զնա Գալիլեացիքն. զի
տեսեալ ևս էր զամենայն նշանսն,
զոր արար Յերուսաղէմ 'ի
տօնին. քանզի և նոքա եկեալ
էին 'ի տօնն:
46 Եկն դարձեալ 'ի Կանա Գա-
լիլեացւոց՝ ուր արար զջուրն
գինի: Եւ անդ էր թագաւորաղն
մի, որոյ որդի նորա հիւանդ
47 կայր 'ի Կափառնաում: Լա
իբրև լուաւ, եթէ Յիսուս եկ-
եալ է 'ի Հրէաստանէ 'ի Գա-
լիլեա, եկն առ նա՝ և աղաչէր
զի իջցէ և բժշկեսցէ զորդի
նորա. քանզի մերձ էր 'ի
48 մեռանել: Ասէ ցնա Յիսուս.
Եթէ ոչ նշանս ինչ և արուեստս
49 տեսանէք՝ ո՛չ հաւատայք: Ասէ
ցնա թագաւորաղն. Տէր՝ էջ
մինչև մեռեալ իցէ մանուկն
50 իմ: Ասէ ցնա Յիսուս. Ե՛րթ՝
որդին քո կենդանի է. և հաւա-
տաց այրն բանին՝ զոր ասաց
51 նմա Յիսուս, և գնաց: Եւ
մինչդեռ իջանէր, ընդ առաջ
եղեն նմա ծառայքն նորա.
ասեսցես ետուն և ասեն, թէ
Ա՛նուկն նորա կենդանի է:
52 Հարցանէր ցնոսա վասն ժա-
մուն՝ յորում՝ ապաքինեաց. և
ասեն ցնա. Երէկ յեօթներորդ
ժամու եթող զնա ջերմն:
53 Գիտաց հայրն նորա՝ եթէ
յայնմ ժամու՝ յորում ասացն
ցնա Յիսուս՝ թէ Որդին քո
կենդանի է. և հաւատաց ինքն
54 և ամենայն տուն իւր: Այս

Բայց երբոր Գալիլեա եկաւ, 45
Գալիլեացիներն ընդունեցին նո-
րան. տեսնելով այն բոլորն,
որ տօնին արաւ Երուսաղէ-
մումը. քանզի նոքանք էլ
եկել էին այն տօնին:
Եւ Յիսուսը դարձեալ եկաւ 46
Գալիլեայի Կանան, ուր ջուրը
գինի արաւ. մի թագաւորացեղ
մարդ կար, որի որդին Կա-
փառնայումի մէջ հիւանդ էր:
Լա լսելով թէ Յիսուսը Հրէ- 47
աստանիցն եկել է Գալիլեա.
եկաւ նորա մօտ և աղաչում էր,
որ իջնէ և իր որդուն բժշկէ.
վասնզի մեռնելու մօտ էր: Յի- 48
սուսն էլ նորան ասաց, Եթէ
նշաններ և հրաշքներ չ'տեսնէք՝
չէք հաւատալ: Թագաւորա- 49
ցեղը նորան ասաց. Տէր, իջիր
դեռ քանի որ չէ մեռել տղան:
Յիսուսը նորան ասաց. Գնա, 50
քո որդին կենդանի է. և մարդը
հաւատաց այն խօսքին՝ որ Յի-
սուսը նորան ասաց, և գնաց:
Եւ դեռ որ իջնում էր, նորա 51
ծառաները նորան դիմաւորեցին
և աւետիս տուին և ասացին,
թէ Որդի տղան կենդանի է:
Լա էլ նորանց հարցնում էր 52
այն ժամի համար, որում սկսեց
լաւանալ. և նորան ասացին,
թէ Երէկ ժամը եօթնին տենդը
թողեց նորան: Այն ժամա- 53
նակ հայրն իմացաւ, թէ նոյն
ժամին է, որ Յիսուսը նորան
ասաց, թէ Որդին կեն-
դանի է. և հաւատաց ինքն և

դարձեալ երկրորդ նշանս արար
Յիսուս՝ եկեալ 'ի Հրէաստանէ
'ի Գալիլեա:

ԳԼ. Ե

1 Յետ այսորիկ տօն էր Հրէից.
և ել Յիսուս Յերուսաղէմ:
2 Եւ էր Յերուսաղէմ 'ի Պրո-
բատիկէ աւազանին, որ կո-
չէր Եբրայեցերէն Բեթհեզդա,
3 հինգ սրահ: Յորս անկեալ գնէր
բազմութիւն յոյժ հիւանդաց՝
կուրաց, կաղաց, գօսացելոց,
որ ակն ունէին ջրոցն յուզելոյ:
4 Եւ հրեշտակ Տեառն իջանէր
ըստ ժամանակի յաւազանն՝ և
յուզէր զջուրն, և որ նախ 'ի
շարժումն ջուրցն իջանէր, բը-
ժշկէր՝ ո՛չ ունելով նշան հիւան-
5 դութեան: Եւ անդ էր այր մի,
որոյ երեսուն և ութ ամ էր
'ի հիւանդութեան իւրում:
6 Զնա իբրև ետես Յիսուս զի
անկեալ գնէր, և գիտաց եթէ
բազում ժամանակք են այնու-
հետև, ասէ ցնա. Կամիս ողջ
7 լինել: Պատասխանի ետ նմա
հիւանդն. Տէր ո՛չ զոք ունիմ,
թէ յորժամ ջուրքն յուզիցին
արկցէ զիս յաւազանն, և մինչ
8 ես գանգաղիմ, այլ ոք քան զիս
յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա
9 Յիսուս. Արի՛ առ զմահիճս քո՝
և գնա՛: Եւ ողջացաւ այրն, և
յարեաւ՝ առ զմահիճս իւր՝ և
ընթացաւ. և էր շաբաթ յաւուրն

Նորա բոլոր տունը: Այս դարձեալ երկրորդ նշան արաւ Յի- 54
սուսը, երբոր Հրէաստանիցն
եկաւ Գալիլեա:

ԳԼ. Ե

Որանից յետոյ տօն էր 1
Հրէաների. և Յիսուսը վեր
եկաւ Երուսաղէմ: Եւ Երու- 2
սաղէմի մէջ Պրոպատիկէ աւա-
զանի մօտ, որ երբայեցերէն
Բեթհեզդա է կոչվում, հինգ
սրահ կայ: Նորանցում խիստ 3
շատ հիւանդներ կային՝ պառ-
կած. կոյրեր, կաղեր, չորա-
ցածներ, որ ջրի շարժելուն էին
սպասում: Այ ասնզի Տիրոջ 4
հրեշտակը ժամանակ ժամանակ
վայր էր գալիս այն աւազանը և
ջուրը շարժում. և ջրի շար-
ժուելուց յետոյ նորա մէջ ա-
ռաջ մտնողը բժշկվում էր ինչ
հիւանդութիւն էլ որ ունենար:
Եւ այն տեղ մի մարդ կար, որ 5
երեսուն և ութ տարի հի-
ւանդութեան մէջ էր: Երբոր 6
Յիսուսը նորան պառկած տե-
սաւ, և գիտաց, թէ արդէն
շատ ժամանակից է, նորան ա-
սաց. Կամենա՞ս ես ողջ լինել:
Հիւանդը պատասխանեց նորան. 7
Տէր, մարդ չունիմ, որ՝ երբոր
ջուրը շարժվում է՝ ինձ աւա-
զանի մէջ դցէ. և մինչև որ ես
գալիս եմ, ուրիշն ինձանից ա-
ռաջ իջնում է մէջը: Յիսուսը 8
նորան ասաց. Ա՛ր կաց, մահի-

10 յայնմիկ։ Այսն Հրէայքն
ցրժշկեալն. Շաբաթ է՝ և ոչ է
արժան քեզ առնուլ զմահիճս
11 քո։ Պատասխանի ետ նոցա և
ասէ. Որ բժշկեացն զիս, նա
ասաց ցիս. Ա՛ռ զմահիճս քո՝ և
12 գնա։ Հարցին ցնա և ասեն.
Ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ.
Ա՛ռ զմահիճս քո՝ և շրջեա՛ց։
13 Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ
ո՞վ իցէ. քանզի Յիսուս խոյս
ետ վասն ամբոխին 'ի տեղւոջէ
14 անտի։ Յետ այսորիկ գտանէ
զնա Յիսուս 'ի տաճարին. և
ասէ ցնա. Ահաւադիկ ողջացար,
մի՛ ևս մեղանչեր՝ զի մի՛ չար ևս
15 ինչ լինիցի քեզ։ Գնաց այրն՝ և
պատմեաց Հրէիցն, եթէ Յի-
սուս էր՝ որ բժշկեացն զիս։

16 Եւ վասն այնորիկ հալածէին
զՅիսուս Հրէայքն, զի զայն
17 առնէր 'ի շաբաթու։ Եւ Յի-
սուս պատասխանի ետ նոցա.
Հայր իմ մինչև ցայժմ գործէ,
18 և ես գործեմ։ Վասն այնորիկ
առաւել խնդրէին Հրէայքն
սպանանել զնա. զի ոչ միայն
լուծանէր զշաբաթս, այլ և
Հայր իւր կոչէր զԱստուած, և
հաւասար առնէր զանձն Ա-
ստուծոյ։

9 ճրդ առ ևման եկ։ Եւ մարդն
իսկոյն ողջացաւ, և վեր առաւ
իր մահիճը և ման էր գալիս.
և օրը շաբաթ էր։ Հրէաներն 10
էլ ասացին բժշկուածին. Շա-
բաթ է. արժան չէ քեզ, որ
մահիճդ վեր առնես։ Նա պա- 11
տասխանեց նորանց. Նա՝ որ
ինձ բժշկեց, նա ասաց ինձ.
Մահիճդ առ և ման եկ։ Ասդ 12
հարցրին նորան և ասացին. Ո՞վ
է այն մարդն, որ քեզ ասաց.
Մահիճդ առ և ման եկ։ Բայց 13
բժշկուածը չէր գիտում թէ
ո՞վ է. վասնզի Յիսուսը այն
տեղն ամբոխի պատճառովը խոյս
տուաւ։ Յորանից յետոյ Յի- 14
սուսը նորան գտաւ տաճարումը՝
և նորան ասաց. Ահա ողջացար,
այլ ևս չմեղանչես, որ էլ աւելի
չար բան չ'լինի քեզ։ Մարդը 15
գնաց և Հրէաներին պատմեց,
թէ Յիսուսն է, որ նորան
առողջացրել է։

Եւ նորա համար Հրէաները 16
Յիսուսին հալածում էին, և
ուզում էին նորան սպանել, որ
շաբաթ օրն անում էր այն
բանը։ Եւ Յիսուսը պատաս- 17
խանեց նորանց. Իմ Հայրը
մինչև հիմա գործում է, և ես
էլ գործում եմ։ Նորա հա- 18
մար Հրէաներն էլ աւելի ու-
զում էին սպանել նորան. որ
ոչ թէ միայն շաբաթ օրն էր
քանդում, այլ Աստուծոյն էլ
իրան Հայր էր ասում, իր անձն
Աստուծոյն հաւասար անելով։

19 Պատասխանի ետ Յիսուս և
ասէ ցնոսա. Ամէն ամէն ասեմ
ձեզ. ոչ կարէ Որդի* մարդոյ
առնել յանձնէ և ոչինչ, եթէ
ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ,
զի զոր նայն առնէ, զնոյն և
20 Որդին նմին նման գործէ։ Զի
Հայր սիրէ զՈրդի, և զամենայն
ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն
առնէ. և մեծամեծս ևս քան
զսոյնս ցուցանէ նմա զգործս,
ընդ որ դուք զարմանայք։
21 Զի որպէս Հայր յարուցանէ
զմեռեալս և կենդանի առնէ,
նոյնպէս և Որդի՝ զորս կամի
22 կենդանի առնէ։ Եւ ոչ եթէ
Հայր դատի զոք՝ այլ զամենայն
դատաստան ետ Որդոյ իւրոյ.
23 Զի ամենեքեան պատուեսցեն
զՈրդի՝ որպէս պատուեն զՀայր։
Որ ոչ պատուէ զՈրդին, ոչ
պատուէ զՀայր զառաքիչն նո-
24 րա։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի
Որ զբանն իմ լսէ, և հաւատայ
այնմ՝ որ առաքեացն զիս,
ընդունի զկեանսն յաւիտենա-
կանս. և 'ի դատաստան ոչ
մտանէ, այլ փոխեցաւ 'ի մահ-
25 ուանէ 'ի կեանս։ Ամէն ամէն
ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝
և արդէն իսկ է, յորժամ մե-
ռեալք լսիցեն ձայնի Որդւոյն
Աստուծոյ. և որք լսիցեն՝
26 կեցցեն։ Զի որպէս Հայր
ունի կեանս յանձին իւրում,
նոյնպէս ետ և Որդւոյ ունել

19 Յիսուսը պատասխանեց և
ասաց նորանց. Ա՛մէն ամէն ասեմ
ձեզ. ոչ կարէ Որդի մարդոյ
առնել յանձնէ և ոչինչ անելը, թէ
որ չտեսանէ Հօրն
անելիս. վասնզի ինչ որ նա
անում է, հենց Որդին էլ այն
բանը նորա նման է անում։
Վասնզի Հայրը սիրում է 20
Որդոյն, և ամեն բան ցոյց է
տալիս նորան, որ ինքն անում
է, և սորանցից էլ աւելի մեծ
մեծ գործքեր ցոյց կ'տայ նո-
րան, որ դուք զարմանաք։
Վասնզի ինչպէս որ Հայրը 21
մեռելներին յարուցանում է և
կենդանի անում, այնպէս էլ
Որդին, որոնց որ կամենում է,
կենդանի է անում։ Վասնզի 22
Հայրը ոչ մէկին էլ չէ դատում,
այլ ամեն դատաստանը տուաւ
Որդոյն։ Որ ամենքը պատուեն 23
Որդոյն, ինչպէս որ պատու-
ում են Հօրը. Որդոյն չըպա-
տուողը՝ Հօրն էլ չէ պատու-
ում, որ ուղարկեց նորան։
Ա՛մէն ամէն ասում 24
եմ ձեզ. թէ իմ խօսքիս լսողը,
և ինձ ուղարկողին հաւատա-
ցողը յաւիտենական կեանք ունի.
և դատաստան չի մտնիլ, այլ
մահիցը փոխուեցաւ դէպի
կեանք։ Ա՛մէն ամէն 25
ասում եմ ձեզ. թէ ժամանակ
կ'գայ՝ և հիմա է, որ մեռել-
ներն Աստուծոյ Որդոյ ձայնը

* 'Ի Յոյնն չէր։

27 կեանս յանձին իւրում. Եւ
իշխանութիւն ետ նմա դատաս-
28 տան առնել. և զի Որդի մարդոյ
է Ընդ այն զի զարմանայք. զի
Եկեսցէ ժամանակ՝ յորում ամե-
նեքին որ ի գերեզմանս կայցեն,
29 լուիցեն ձայնի նորա, Եւ եկես-
ցեն արտաքս. որոց զբարիս
գործեալ իցէ՝ ի յարութիւն
կենաց. և որոց զչար արարեալ՝
ի յարութիւն դատաստանաց:
30 Ո՛չ կարեմ ես յանձնէ առնել
և ոչինչ. այլ որպէս լսեմ՝
դատեմ, և դատաստանն իմ արդար
է. զի ոչ խնդրեմ զկամս իմ,
այլ զկամս այնորիկ՝ որ առա-
քեացն զիս:

31 Եթէ ես վկայեմ վասն իմ,
վկայութիւնն իմ չէ՛ ճշմարիտ:
32 Այլ է՝ որ վկայէ վասն իմ. և
դուք գիտէք, եթէ ճշմարիտ է
վկայութիւնն զոր վկայեաց
33 վասն իմ: Դուք առաքեցիք առ
Յովհաննէս՝ և վկայեաց ճըշ-
34 մարտութեանն: Այլ ես ոչ
եթէ ի մարդկանէ առնում
վկայութիւն. այլ զայս ասեմ՝
35 զի դուք ապրեսջիք: Նա էր
ճրագն՝ որ լուցեալ էր և ծագէր.
և դուք կամեցարուք ցնծալ առ
ժամանակ մի ի լոյս նորա:
36 Այլ ես ունիմ վկայութիւն մեծ

կ՚լսեն, և լսողներքը կ՚ապրին:
Վասնզի ինչպէս որ Հայրն իր 26
անձնումը կեանք ունի, այնպէս
էլ Որդին տուաւ՝ որ իր ան-
ձնումն կեանք ունենայ: Եւ 27
նորան իշխանութիւն տուաւ,
որ դատաստան էլ անէ. որովհետև Որդի մարդոյ է. Սորա 28
վերայ մի զարմանաք. որովհետև ժամանակ կ՚գայ, որ ա-
մենքն՝ որ գերեզմաններուն են,
նորա ձայնը կ՚լսեն, Եւ դուրս 29
կ՚գան, նորանք, որ բարի են
գործեալ, դէպի կենաց յարու-
թիւնը, և նորանք, որ չար են
արեալ, դէպի դատաստանի յա-
րութիւնը: Ես ինձանից չեմ 30
կարող ոչինչ անել. ինչպէս
լսում եմ՝ այնպէս եմ դա-
տում, և իմ դատաստանն ար-
դար է. քանզի իմ կամքը չեմ
որոնում, այլ ինձ ուղարկող
Հօր կամքը:
Եթէ ես ինձ համար վկայեմ, 31
իմ վկայութիւնը ճշմարիտ չէ:
Ուրիշն է որ ինձ համար վկա- 32
յում է. և գիտեմ որ ճշմարիտ
է այն վկայութիւնը, որ վկա-
յում է ինձ համար: Դուք 33
ուղարկեցիք Յովհաննէսի մօտ
և նա վկայութիւն տուաւ ճըշ-
մարտութեանը: Իսկ ես ոչ 34
թէ մարդկանցից եմ առնում
վկայութիւնը. այլ սա ասում
եմ, որ դուք ապրիք: Նա 35
այն ճրագն էր՝ որ վառվում
էր և լոյս էր տալիս. և դուք
կամեցաք մի առ ժամանակ ու-

ևս քան զՅովհաննու. զգործս՝
զորս ետ ցիս Հայր՝ զի կատա-
րեցից զնոսա. նոքին իսկ գործքն
զոր գործեմ, վկայեն վասն իմ,
37 եթէ Հայր առաքեաց զիս. Եւ
որ առաքեացն զիս Հայր՝ նա
վկայեաց վասն իմ: Դուք ոչ
զձայն նորա երբէք լուարուք.
38 և ոչ զտեսիլ նորա տեսէք: Եւ
ոչ զբան նորա ունիք ի ձեզ
բնակեալ. զի զոր նա առաքեաց՝
դուք նմա ոչ հաւատայք:
39 Քննեցէք զգիրս. զի դուք
համարիք նոքօք ունել զկեանսն
յաւիտենականս. և նոքին իսկ
են՝ որ վկայեն վասն իմ*, որովք
40 համարիք ունել կեանս՝. Եւ
դուք ոչ կամիք գալ առ իս՝ զի
41 զկեանսն ունիցիք: Ես փառս ՚ի
42 մարդկանէ ոչ առնում: Այլ
գիտեմ զձեզ՝ թէ զսէրն Աս-
43 տուծոյ ոչ ունիք յանձինս: Ես
եկի յանուն Հօր իմոյ՝ և ոչ
ընդունիք զիս. եթէ այլ որ
եկեսցէ յիւր անուն, զնա
44 ընդունիցիք: Օ՞հաւրդ կարէք
դուք հաւատալ. զի փառս ՚ի
միմեանց առնուք, և զփառս
զառ ՚ի միոյն Աստուծոյ ոչ
45 խնդրէք: Մ՚ի համարիք՝ եթէ
ես չարախօս ինչ իցեմ զձէնջ
առ Հօր. գոյ որ չարախօս կայ
զձէնջ՝ Մովսէս, յոր դուքն
46 յուսացեալ էք: Օ՞ի եթէ հա-
ւատայիք դուք Մովսեսի, հա-
ւատայիք արդեօք և ինձ. զի նա

բարանալ նորա լուսովը: Այլ 36
ես աւելի մեծ վկայութիւն ու-
նիմ՝ քան թէ Յովհաննէսը,
այսինքն այն գործքերն, որ
Հայրն ինձ տուաւ, որ կա-
տարեմ նորանց. նոյն այն
գործքերն՝ որ գործում եմ, ինձ
համար վկայում են, թէ
Հայրն ուղարկեց ինձ: Եւ ինձ 37
ուղարկող Հայրն ինքն ինձ
համար վկայեց. դուք ոչ նորա
ձայնը լսեցիք երբէք, և ոչ
նորա կերպարանքը տեսաք. Եւ 38
ոչ նորա խօսքն ունիք բնակած
ձեզանում. վասնզի այն որ նա
ուղարկեց, դուք չէք հաւա-
տում նորան: Քննեցէք գրը- 39
քերն. որ դուք կարծում էք
թէ նորանցով ունիք յաւիտե-
նական կեանք՝ և նորանք են,
որ ինձ համար վկայում են:
Եւ չէք կամենում ինձ մօտ 40
գալ, որ կեանք ունենաք: Ես 41
մարդկանցից փառք չեմ առ-
նում: Այլ ճանաչում եմ ձեզ, 42
որ Աստուծոյ սէրը չունիք ձեր
անձներումը: Ես իմ Հօր ա- 43
նունովն եկայ, և ինձ չէք
ընդունում. եթէ ուրիշը գայ
իր անունովն, նորան կ՚ընդու-
նիք: Ինչպէս կարող էք դուք 44
հաւատալ, որ իրարից էք փառք
առնում, և այն փառքն որ
միայն Աստուածանից է, չէք
որոնում: Մ՚ի կարծէք, թէ 45
ես Հօր մօտ կ՚չարախօսեմ ձե-

* ՚Ի Յոյնն էր։

47 վասն իմ իսկ գրեաց։ Զի եթէ
Նորա գրոցն ոչ հաւատայք.
զիարդ իմոց բանիցս հաւա-
տայցէք։

ԳԼ. Զ.

1 Յետ այսորիկ գնաց Յիսուս
յայնկոյս ծովուն Գալիլեացւոց
2 Տիբերեայ. Եւ զհետ երթայր
Նորա ժողովուրդ բազում. զի
տեսանէին զնշանսն՝ զոր առնէր
3 ի վերայ հիւանդաց։ Եւ ելա
Յիսուս, և անդ նստէր
4 աշակերտաւքն հանդերձ։ Եւ էր
մերձ զատիկ տօնն Հրէից։

5 Բարձ ի վեր զաչս իւր Յի-
սուս և եմուտ, զի ժողովուրդ
բազում գայր առ նա. ասէ
ցՓիլիպպոս. Ուստի գնեսցուք
6 հաց՝ զի կերիցեն դոքա։ Զայս
ասէր փորձելով զնա. այլ ինքն
գիտէր զինչ առնելոցն էր։
7 Պատասխանի ետ նմա Փիլիպ-
պոս. Երկերիւր դահեկանի
հաց չէ դոցա բաւական,
թեպէտ և իւրաքանչիւրոքս սա-
8 կաւ ինչ առնուցու։ Ասէ ցնա
մի յաշակերտացն Նորա, Անդ-
րէաս՝ եղբայր Սիմովնի Ա մի.
9 Այ՝ աստ պատանեակ մի, որ
զանից. կայ Դէն որ ձեզանից
շարախօսում է՝ Աօսէն, որի
վերայ գուք ձեր յոյսը դրել
էք. Վասնզի եթէ գուք Աօ- 46
սէսին հաւատայիք, ինձէլ կըհա-
ւատայիք. քանզի նա ինձ հա-
մար գրեց։ Բայց եթէ Նորա 47
գրքերին չէք հաւատում, ինչ-
պէս իմ խօսքերին կ՚հաւատաք։

ԳԼ. Զ.

Որանից յետոյ գնաց Յի- 1
սուսը Գալիլեայի Տիբերեա ծովի
միւս կողմը։ Եւ շատ ժողո- 2
վուրդ գնում էր Նորա ետևից.
որովհետև տեսնում էին Նորա
նշաններն, որ անում էր հի-
ւանդների վերայ։ Յիսուսն էլ 3
վեր եաւ լեառը, և նստեց
իր աշակերտների հետ այնտեղ։
Եւ Հրէաների զատիկ տօնը 4
մօտ էր։

Յիսուսն էլ իր աչքերը բարձ- 5
րացրեց և տեսաւ, որ շատ
ժողովուրդ էր գալիս իրան մօտ,
ասաց Փիլիպպոսին. Ի՞նչ
տեղից հաց առնենք, որ դորանք
ուտեն։ Բայց այս ասաց՝ նո- 6
րան փորձելով. վասնզի ինքն
գիտէր, թէ ինչ պիտի անէր։
Փիլիպպոսը պատասխանեց նո- 7
րան. Երկու հարիւր դահե-
կանի հաց բաւական չէ դորանց,
որ դորանից ամեն մէկը մի քիչ
առնէ։ Նորա աշակերտներից 8
մէկն, Անդրէասը՝ վէմ Սիմոնի
եղբայրն՝ ասաց Նորան. Այս- 9

ունի հինգ նկանակ գարեղէն՝ և
երկուս ձկունս. այլ այն զինչ
10 է առ այդչափ մարդիկ։ Ասէ
Յիսուս. Հաղմեցուցէք ըղմար-
դիկդ. և էր խոտ յոյժ ի
տեղւոյն. և բազմեցան մար-
դիկն թուով իբրև հինգ հազար։
11 Եւ առ զհացն Յիսուս, և
գոհացաւ՝ և բաշխեաց բազմա-
կանացն. նոյնպէս և ի ձկանցն
12 որչափ և կամեցան։ Եւ իբրև
յագեցան, ասէ ցաշակերտսն.
Ժողովեցէք զնշխարեալ կո-
տորսդ զի մի ինչ կորիցէ։
13 Ժողովեցին, և լցին երկոտասան
սակառի զկոտորոցն ի հինգ
գարեղէն նկանակէ անտի, որ
14 յաւելաւ ի կերողացն։ Իսկ
մարդիկն՝ իբրև տեսին զնշանսն
զոր արար՝ ասէին, եթէ Այ՝ է
ճշմարիտ մարգարէն, որ գալոց
էր յաշխարհ։

15 Յիսուս իբրև գիտաց եթէ
գալոց են յափշտակել զնա, զի
արասցեն զնա թագաւոր, գնաց
16 դարձեալ ի լեառն միայն։ Եւ
իբրև երեկոյ եղև, իջին աշա-
17 կերտքն Նորա ի ծովեզրն։ Եւ
մտեալ ի նաւ՝ դային յայնկոյս
ծովուն ի Կափառնաում. և
իբրև նսեմացաւ, և չև ևս եկեալ
18 էր առ նոսա Յիսուս։ Եւ ծովն ի
սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր։
19 Եւ վարեալ իբրև ասպարէզս
քսան և հինգ կամ երեսուն,
տեղ մէկ տղայ կայ, որ հինգ
գարէ հաց ունի և երկու փոքր
ձուկ. բայց սա ի՞նչ է այդ
չափ մարդկանց համար։ Յի- 10
սուսն էլ ասաց. Ա՝արդկանցը
նստեցրէք. և շատ խոտ կար
այն տեղը. և մարդիկը նստե-
ցան համարով իբր հինգ հա-
զար։ Եւ Յիսուսը հացերն 11
առաւ՝ գոհացաւ և բաժանեց
աշակերտներին, և աշակերտ-
ներն էլ նստողներին. նոյնպէս
էլ ձկներիցը որչափ որ կամե-
ցան։ Եւ երբոր կշտացան, ա- 12
սաց իր աշակերտներին. Ժո-
ղովեցէք աւելցած կտորները՝ որ
բան չ՚կորչի։ Եւ ժողովեցին, 13
և կտորներից տասն երկու կո-
ղով լցրին այն հինգ գարէ
հացիցն, որ ուտողներիցն ա-
ւելացաւ։ Բայց մարդիկն՝ երբ- 14
որ տեսան այս նշանն որ արաւ
Յիսուսը, ասում էին՝ թէ Այ
է ճշմարտապէս այն մարգարէն
որ պիտի աշխարհք գար։

Յիսուսն էլ իմանալով թէ 15
գալու են իրան յափշտակելու,
որ թագաւոր շինեն իրան, դար-
ձեալ գնաց լեառը մէնակ։ Եւ 16
երբոր իրիկուն եղաւ, նորա
աշակերտները իջան ծովի եզրը.
Եւ նաւը մտնելով գնացին ծովի 17
այն կողմը՝ Կափառնաում. և
արդէն մթնել էր, և Յի-
սուսը չէր եկել նորանց մօտ։
Եւ ծովն էլ սաստիկ քամու 18
փչելուցը յուզվում էր։ Եւ 19
երբոր քսան և հինգ կամ երե-

տեսանէին զՅիսուս՝ զի գնայր
'ի վերայ ծովուն՝ և մերձ էր 'ի
20 նաւն, զարհուրեցան յոյժ։ Նա
ասէ ցնոսա. Ե՛ս եմ՝ մի երկիւ-
21 ղիք։ Եւ կամէին ընդունել զնա
'ի նաւն. և վաղվաղակի եհաս
նաւն յերկիրն՝ յոր երթային։

22 Ի վաղիւ անդր ժողովուրդն՝
որ կայր յայնկոյս ծովուն,
տեսանէր թէ այլ նաւ ոչ գոյր
անդ բայց միայն 'ի միոյն, յոր
մտին աշակերտքն Յիսուսի. և
զի չէր մտեալ Յիսուս ընդ ա-
շակերտսն իւր 'ի նաւն. բայց
միայն աշակերտքն նորա գնա-
23 ցին։ Իրրև այլ նաւք գային 'ի
Տիբերեայ մօտ յայն տեղին՝ ուր
24 զհացն կերան։ Իսկ իրրև ետես
ժողովուրդն եթէ Յիսուս ոչ
է անդ՝ և ոչ աշակերտքն նորա,
առին նոքա զնաւսն, և եկին 'ի
Կափառնաում խնդրել զՅի-
25 սուս։ Եւ իրրև գտին զնա
յայնկոյս ծովուն, ասեն ցնա.
26 Ռաբբի՝ ե՞րբ եկիր այսր։ Պա-
տասխանի ետ նոցա Յիսուս և
ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ.
Խնդրէք զիս, իրր ոչ եթէ զի
նշանս ինչ տեսէք, այլ զի
կերայք 'ի հացէ անտի՝ և յա-
27 գեցարուք։ Երթայք գործեցէք՝
մի զկորստական կերակուրն,
այլ զկերակուրն, որ մնայ 'ի
կեանսն յաւիտենականս, զոր
Որդին մարդոյ տացէ ձեզ.
քանզի զնա Հայր կնքեաց Ա-
սուն ասպարէզն չափ առաջ
գնացել էին, տեսան Յիսուսին
ծովին վերայ գալիս, որ նաւին
մօտենում էր և վախեցան։ Նա 20
էլ ասաց նորանց. Ես եմ, մի
վախենաք։ Եւ կամենում էին 21
նորան ընդունել նաւի մէջ. և
նաւը շուտով հասաւ այն եր-
կիրը, որ գնում էին։

Հետևեալ օրն այն ժողո- 22
վուրդը, որ ծովի այն կողմն
էր, տեսնելով որ ուրիշ նաւ
չկար այն տեղ մէկիցը չոկ՝ որ
նորա աշակերտները նորա մէջ
մտան. և որ Յիսուսը իր աշա-
կերտների հետ նաւը չէր մտած,
բայց միայն նորա աշակերտ-
ները գնացին։ Բայց Տիբե- 23
րեայից ուրիշ նաւեր եկան
այն տեղի մօտ, ուր հացը
կերան Տէրոջ գոհանալովը։
Երբ երբոր ժողովուրդը տեսաւ, 24
որ Յիսուսն այն տեղ չէ, և
ոչ էլ նորա աշակերտները,
իրանք էլ նաւերը մտան և եկան
Կափառնայում, Յիսուսին որո-
նելով։ Եւ երբոր նորան ծովի 25
այն կողմին գտան, նորան ա-
սացին. Ռաբբի, ե՞րբ եկար
այս տեղ։ Յիսուսը պատասխա- 26
նեց նորանց և ասաց. Ճշմա-
րիտն ճշմարիտն ասում եմ ձեզ.
Դուք ինձ որոնում էք՝ ոչ թէ
նորա համար որ նշաններ տե-
սաք, բայց որ հացիցը կերաք
և կշտացաք։ Գործեցէք ոչ 27
թէ կորչելու կերակուրը, այլ
այն կերակուրն, որ մնացող

28 տուած։ Ասեն ցնա. Օ՞ր-
առնիցեմք՝ զի զգործսն Աստու-
29 ծոյ գործեսցուք։ Պատասխանի
ետ Յիսուս, և ասէ ցնոսա.
Այս է գործն Աստուծոյ, զի
հաւատասջիք յայն՝ որ առա-
30 քեացն զնս։ Ասեն ցնա. Օ՞ր-
նչ նշան առնիցես՝ զի տեսցուք և
հաւատասցուք, զի՞նչ գործիցես։
31 Հարքն մեր կերան զմանանայն
յանապատի անդ՝ որպէս և
գրեալ է. Հաց երկնից ետ
32 նոցա ուտել։ Ասէ ցնոսա Յի-
սուս. Ամէն ասեմ ձեզ. եթէ
ոչ Մովսէս ետ ձեզ զհացն
երկնից, այլ Հայրն իմ տայ
ձեզ զհացն երկնից զճշմարիտ։
33 Օ՛ի հաց Աստուծոյ է, որ
իջանէ երկնից՝ և կեանս տայ
34 աշխարհի։ Ասեն ցնա. Տէր՝
յամենայն ժամ տուր մեզ
35 զհացն զայն։ Ասէ ցնոսա Յի-
սուս. Ես եմ հացն կենաց. որ
գայ առ իս ոչ քաղցիցէ, և որ
հաւատայ յիս՝ ոչ երբէք ծա-
36 րաւեսցի։ Այլ ասացի ձեզ՝ թէ
տեսէք զիս, և ոչ հաւատայք։
37 Յամենայն՝ զոր տայ ինձ Հայր,
առ իս եկեսցէ. և որ գայ առ
38 իս, ոչ հանից արտաքս։ Օ՛ի
իջի ես յերկնից, ոչ զի զկամս
իմ արարից այլ զկամս այնորիկ՝
որ առաքեացն զիս։

է յաւիտենական կեանքի մէջ,
որ Որդին մարդոյ կ'տայ ձեզ.
վասնզի Աստուած Հայրը կնք-
եց նորան։ Բրդ նորան ա- 28
սացին. Ի՞նչ անենք, որ Ա-
ստուծոյ գործքերը գործենք։
Յիսուսն էլ պատասխանեց և 29
նորանց ասաց. Սա է Աստու-
ծոյ գործը, որ հաւատաք նո-
րան, որին նա ուղարկեց։ Եւ 30
նորան ասացին. Ապա դու ի՞նչ
նշան ես անում, որ տեսնենք
և հաւատանք, ի՞նչ ես գոր-
ծում։ Մեր հարքն անապա-
տումը մանանայ կերան. ինչ-
պէս գրուած է Ե՝Ե՝ Երկնքիցը
հաց տուաւ նորանց ուտելու։
Յիսուսն էլ նորանց ասաց. 32
Ճշմարիտն ճշմարիտն ասում
եմ ձեզ. Ոչ թէ Մովսէսը
տուաւ ձեզ այն հացը երկն-
քից, այլ իմ Հայրը տալիս է
ձեզ երկնքից ճշմարիտ հացը։
Վասնզի Աստուծոյ հացը նա 33
է՝ որ երկնքիցն է իջնում, և որ
աշխարհքին կեանք է տալիս։
Նորանք էլ ասացին. Տէր, 34
ամեն ժամանակ տուր մեզ այդ
հացը։ Յիսուսն էլ նորանց ա- 35
սաց. Ես եմ կենաց հացը. ինձ
մօտ եկողը չի սովիլ, և ինձ
հաւատացողը երբէք չի ծա-
րաւիլ։ Բայց ասացի ձեզ, թէ 36
տեսաք էլ ինձ. և չէք հաւա-
տում։ Այն ամենը որ Հայրն 37
ինձ է տալիս, ինձ մօտ կ'գայ.
և ինձ մօտ եկողին դուրս չեմ
հանիլ։ Վասնզի ես իջայ երկն- 38

39 Այս են կամք Հօր իմոյ, որ առաքեացն զիս. զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսցից
'ի նմանէ, այլ յարուցից զնա
40 յաւուրն յետնում: Այլ են կամք Հօր իմոյ. զի ամենայն որ տեսանիցէ զՈրդի և հաւատայցէ
'ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենականս. և ես յարուցից
զնա յաւուրն յետնում:
41 Տրտնջէին զնմանէ Հրէայքն,
զի ասաց թէ Ես եմ Հացն իջեալ
42 յերկնից, Եւ ասէին. ոչ սա է Յիսուս որդին Յովսեփու,
զորոյ մեք գիտեմք զՀայրն և զմայր. իսկ արդ՝ զիա՞րդ ասէ՝
43 թէ Ես յերկնից իջի: Պատասխանի ետ Յիսուս, և ասէ
ցնոսա. Մի՛ քրթմնջէք ընդ
44 միմեանս: Ոչ ո՛ք կարէ գալ առ
իս, եթէ ոչ Հայրն՝ որ զիս
առաքեաց՝ ձգեսցէ զնա. և ես
յարուցից զնա յաւուրն յետ-
45 նում: Գրեալ է 'ի մարգարէս,
Եւ եղիցին ամենեքեան ուսեալք
Աստուծոյ. ամենայն որ լսէ
'ի Հօրէ՝ և ուսանի, գայ առ
46 իս. Իբրև ոչ եթէ զՀայր
ուրուք տեսեալ իցէ, եթէ ո՛չ՝
որ էն Աստուծոյ, նա ետես
47 զՀայր: Ամէն ամէն ասեմ
ձեզ. զի Որ հաւատայ յիս՝
ընդունի զկեանսն յաւիտենա-
48 կանս: Ես եմ Հացն կենաց:
49 Հարքն ձեր կերան զմանանայն
.քիցը, որ ոչ թէ իմ կամքն
անեմ, այլ ինձ ուղարկողի
կամքը:
Սա է ինձ ուղարկող Հօր 39
կամքը, որ այն ամենն որ նա
ինձ տուաւ, նորանից չընկոր-
նեմ. այլ յետին օրումը յա-
րուցանեմ նորան: Եւ սա է 40
ինձ ուղարկողի կամքն, որ ամեն
ով որ տեսանէ Որդոյն և հա-
ւատայ նորան, յաւիտենական
կեանք ունենայ. և ես յետին
օրումը կ'յարուցանեմ նորան:
Հրէաներն էլ տրտնջում էին 41
նորանից, որ ասաց, Ես եմ
երկնքից իջած հացը: Եւ ա- 42
սում էին. Զի՞ որ սա Յիսուսն
է Յոսէփի որդին, որի հօրը
և մօրը ճանաչում ենք. ապա
սա թի՞նչպէս է ասում, Ես եր-
կնքիցն եմ իջել: Յիսուսն էլ 43
պատասխանեց և ասաց նորանց.
Մի՛ տրտնջաք իրար հետ: Ոչ 44
ով կարող չէ ինձ մօտ գալ,
եթէ Հայրն՝ որ ինձ ուղարկեց՝
չքաշէ նորան. և ես յետին
օրումը կ'յարուցանեմ նորան:
Գրուած է մարգարէների մէջ 45
Ես՝ Եւ ամենքն Աստուածանից
սովորած կ'լինին. արդ ամեն ով
որ Հօրիցը լսում և սովորում՝
է, գալիս է ինձ մօտ: Իբր չէ 46
թէ մէկը տեսել է Հօրն. բայց
միայն նա, որ Աստուածանից է,
նա տեսել է Հօրը: Ամէն ամէն 47
ձշմարիտն ասում եմ ձեզ. Ինձ 48
հաւատացողը յաւիտենական
կեանք ունի. Ես եմ կենաց հա-

50 յանապատին՝ և մեռան: Այս է
հացն, որ յերկնից իջեալ է. զի
որ ուտիցէ ոք 'ի սմանէ՝ մի՛
51 մեռանիցի. Ես եմ հացն կեն-
դանի, որ յերկնից իջեալ.
52 Եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայս-
մանէ՝ կեցցէ 'ի յաւիտեան. և
հացն զոր ես տաց՝ մարմին իմ
է, զոր ես տաց վասն կենաց
աշխարհի:

53 Մարտնչէին ընդ միմեանս
Հրէայքն և ասէին. Զիա՞րդ
կարէ սա տալ մեզ զմարմինն իւր
54 յուտել: Ասէ ցնոսա Յիսուս.
Ամէն ամէն ասեմ ձեզ. Եթէ
ոչ կերիջիք զմարմին Որդւոյ
մարդոյ՝ և արբջիք զարիւն
Նորա, ոչ ունիք կեանս յան-
55 ձինքս: Որ ուտէ զմարմին իմ՝ և
ըմպէ զարիւն իմ, ունի զկեանսն
յաւիտենականս. և ես յարու-
ցից զնա յաւուրն յետնում:
56 Զի մարմին իմ ճշմարիտ
կերակուր է, և արիւն իմ
57 ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ
զմարմին իմ և ըմպէ զարիւն
իմ, յիս բնակեսցէ, և ես 'ի
58 նմա: Որպէս առաքեաց զիս
կենդանին Հայր, և ես կեն-
դանի եմ վասն Հօր. և որ
ուտէն զիս, և նա կեցցէ վասն
59 իմ: Այս է հացն՝ որ յերկնից
իջեալ. ոչ որպէս կերան հարքն
ձեր զմանանայն՝ և մեռան. որ
ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւի-
տեան:

ցը: Ձեր հարքը մանանան կերան 49
անապատումը, և մեռան: Սա 50
է այն հացն, որ երկնքիցն է
իջնում որ եթէ մէկը սորանից
ուտէ, չի մեռնիլ: Ես եմ կեն- 51
դանի հացն, որ երկնքիցն է
իջել: Եթէ մէկն այս հացիցն 52
ուտէ, յաւիտեան կ'ապրի. և
այն հացն՝ որ ես կ'տամ՝ իմ
մարմինն է, որ ես Նորան
աշխարհքի կենաց համար կը-
տամ:
Հրէաներն էլ իրար հետ 53
կռուում էին և ասում. Սա
թի՞նչպէս կարող է իր մարմինը
տալ մեզ ուտելու համար:
Յիսուսն էլ Նորանց ասաց. 54
Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ
ձեզ, Եթէ Որդոյ մարդոյ մար-
մինը չուտէք և Նորա արիւնը
չխմէք, կեանք չունիք ձեր
անձերումը: Իմ մարմինը ու- 55
տողը և իմ արիւնը խմողը յաւի-
տենական կեանք ունի. և ես
յետին օրումը կ'յարուցանեմ
Նորան: Վասնզի իմ մարմինը 56
ճշմարտապէս կերակուր է, և
իմ արիւնը ճշմարտապէս խըմ-
ելիք է: Իմ մարմինն ուտողը և 57
իմ արիւնը խմողը մնում է ինձա-
նում, և ես Նորանում: Ինչ- 58
պէս ինձ ուղարկեց կենդանի
Հայրը, և ես կենդանի եմ Հօր
համար. այնպէս էլ նա որ ինձ
ուտում է, կենդանի կ'լինի ինձ
համար: Սա է այն հացն՝ որ 59
երկնքիցն է իջել. ոչ թէ ինչ-
պէս ձեր հարքը մանանան կերան

60 Օ՛այս ասաց 'ի ժողովրդեանն՝ յուսուցանելն 'ի Կապառնաում։
61 Եւ բազումք յաշակերտացն իբրև լուան՝ ասեն. Խիստ է բանդ այդ, ո՞ կարէ լսել զմա։
62 Իբրև գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն նորա, ասէ ցնոսա. Այդ գայթակղեցուցանէ՞ զձեզ։
63 Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ուր
64 զառաջինն։ Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ
65 ձեզ՝ հոգի է և կեանք։ Այլ են ոմանք 'ի ձէնջ՝ որ ոչ հաւատան. քանզի գիտէր Յիսուս 'ի ըսկզբանէ, ո՞վ են այնոքիկ՝ որ ոչն հաւատան, և ո՞վ է այն՝ որ
66 մատնելոցն է զնա։ Եւ ասէր. Վասն այնորիկ ասացի ձեզ՝ թէ ոչ՞ք կարէ գալ առ իս, եթէ ոչ լիցէ տուեալ նմա 'ի Հօրէ իմմէ։

67 Յայսմանէ բազումք յաշակերտացն նորա չոգան յետս, և
68 ոչ ևս շրջէին ընդ նմա։ Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն. Մի՞թէ և դո՞ւք կամիք
69 երթալ։ Պատասխանի ետ նմա Սիմոն Պետրոս Տէր՝ առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս։
70 Եւ մեք և մեռան. այս հացն ուտողը յաւիտեան կ'ապրի։

Այս ասաց ժողովարանումը երբ որ Կափառնայումի մէջ սովորեցնում էր։

Եւ նորա աշակերտներից շատերը որ լսեցին, ասացին. Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել զորան։ Այց երբոր Յիսուսը գիտաց իր անձնումը, թէ իր աշակերտները տրտնջում էին զորա համար, նորանց ասաց. Դա՞ է գայթակղեցնում ձեզ։ Այսպա եթէ Որդին մարդոյ տեսնէք՝ վերը գնալիս, ուր առաջ էր։ Հոգին է կենդանացնողը, մարմինը ոչինչ օգուտ չէ տալիս. այն բանն որ ես ձեզ հետ խօսեցի, հոգի է և կեանք է։ Այց ձեզանից կան ոմանք, որ չեն հաւատում, վասնզի Յիսուսը սկզբից գիտէր, ո՞վ են չհաւատացողները, և ով է նա՝ որ պիտի մատնէր իրան։ Եւ ասաց. Նորա համար ասացի ձեզ՝ թէ ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ, եթէ իմ Հօրից տրուած չլինի նորան։

Սորանից յետոյ նորա աշակերտներից շատերը յետ գընացին, և այլ ևս ման չէին գալիս նորա հետ։ Յիսուսն էլ ասաց այն տասներկուսին, Մի՞թէ դուք էլ ուզում էք գնալ։ Սիմոն Պետրոսն էլ պատասխանեց նորան. Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յաւիտենական կենաց

հաւատացաք և ծանեաք՝ եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ։
71 Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի, և միդ 'ի
72 ձէնջ սատանայ է։ Եւ ասէր զՍիմոնիեան Յուդայէ Ակարիովտացւոյ. զի նա իսկ մատնելոց էր զնա. և մի էր յերկոտասանից։

ԳԼ. Ի.

1 Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս 'ի Գալիլեա. քանզի ոչ կամէր 'ի Հրէաստանի շրջել. զի խնդրէին զնա Հրէայքն սպանանել։

2 Եւ էր մերձ տօնն Հրէից
3 տաղաւարահարաց։ Ասեն ցնա եղբարքն նորա։ Գնա՛ աստի և երթ 'ի Հրէաստան, զի և աշակերտքն քո տեսցեն զգործսդ
4 քո՝ զոր գործես։ Օ՛չ ոչոք է՝ որ 'ի ծածուկ ինչ գործէ՝ և խնդրէ ինքն համարձակ լինել. եթէ զայդ գործես, յայտնեա
5 զանձն քո աշխարհի։ Քանզի և եղբարքն իսկ չէին հաւատա-
6 ցեալ 'ի նա։ Ասէ ցնոսա Յիսուս. Ժամանակ իմ չե՛ է հասեալ. բայց ձեր ժամանակ յամենայն ժամու պատրաստ է։
7 Ո՛չ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց զիս ատեայ. զի ես

խօսքեր ունիս դու։ Եւ մենք 70
հաւատացինք և ճանաչեցինք, թէ դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին։ Յի- 71
սուսը պատասխանեց նորանց. Չէ՞ որ ես ձեզ տասներկուսիդ ընտրեցի, և ձեզանից մէկը սատանայ է։ Եւ սա Իսկարիո- 72
տացի Սիմոնեան Յուդային էր ասում. քանզի նա էր մատնելու նորան. և ինքը տասներկուսից մէկն էր։

ԳԼ. Ի.

Եւ սորանից յետոյ Յիսուսը 1
ման էր գալիս Գալիլեայի մէջ. վասնզի չէր կամենում Հրէաստանումը ման գալ, որովհետև Հրէաները որոնում էին սպանել նորան։

Եւ Հրէաների տաղաւարա- 2
հարաց տօնը մօտիկ էր։ Եւ 3
նորա եղբայրներն ասացին նորան. Այս տեղից դուրս եկ և գնա Հրէաստան, որ քո աշակերտներն էլ տեսնեն քո գործքերը, որ գործում ես։ Վասն 4
զի ոչ ով չկայ՝ որ թաքուն մի բան անէ, և ուզէ ճանաչուած լինել, եթէ դու այդ բաները գործում ես, քո անձը յայտնիր աշխարհքին։ Որովհետև 5
իր եղբայրներն էլ չէին հաւատում նորան։ Յիսուսն էլ 6
ասաց նորանց. Իմ ժամանակը դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է։

վկայեմ վասն նորա՝ եթէ գործ-
8 քքն իւր չարութեան են։ Դուք
երթայք ի տունն յայն, ես ոչ
երթամ ի տունն յայն։ զի իմ
9 ժամանակ չէ՛ է լցեալ։ Այս
իրրև ասաց՝ ինքն մնաց անդէն ի
10 Գալիլեա։ Իրրև ելին եղբարքն
նորա, ապա և ինքն ել ի տունն.
ոչ յայտնի, այլ իբրև ի ծա-
ծուկ։

11 Եւ Հրէայքն խնդրէին զնա
ի տունի անդ՝ և ասէին, Որ-
12 ի՞ցէ նա։ Եւ բազմութիւն էր ըստ-
մանեալ ի ժողովուրդսն։ կէսքն
ասէին՝ թէ Բարւոք է։ այլքն
ասէին, Ո՛չ՝ այլ մոլորեցուցանէ
13 զժողովուրդն։ Եւ ոչ ոք հա-
մարձակ խօսէր զնմանէ՝ վասն
երկիւղին Հրէից։

14 Իրրև տունն ընդմիջեցաւ, ել
Յիսուս ի տաճարն՝ և ուսու-
15 ցանէր։ Զարմանային Հրէ-
այքն և ասէին. Զիարդ զգիրս
գիտէ սա, զի ուսեալ չունաւ
16 չէր։ Պատասխանի ետ նոցա
Յիսուս և ասէ. Իմ վարդապե-
տութիւնս չէ՛ իմ, այլ այնորիկ՝
17 որ առաքեաց զիս։ Եթէ ոք
կամի զկամս նորա առնել՝ գի-
տասցէ վասն վարդապետու-
թեանս, Աստուծոյ իցէ արդեօք՝ եթէ ես ինչ յանձնէ
Աշխարհքը կարող չէ ձեզ ա-
տել. բայց ինձ ատում է,
վասնզի ես նորա համար վրկա-
յում եմ, թէ նորա գործքերը
չար են։ Դուք գնացէք այն 8
տունը, ես դեռ չեմ գնում այն
տունը, որովհետև իմ ժամա-
նակը դեռ լրացած չէ։ Այս 9
որ նորանց ասաց, մնաց Գա-
լիլեայում։ Երբոր նորա եղ- 10
բայրները գնացին, այն ժա-
մանակ ինքն էլ գնաց այն տունը,
ոչ թէ յայտնի, այլ իբր գաղտ-
նաբար։

Եւ Հրէաները որոնում էին 11
նորան այն տունումը և ասում,
Որտեղ է նա։ Եւ ժողովո- 12
դոց մէջ շատ զրոյցք կար՝ նորա
համար. ոմանք ասում էին,
թէ Բարի մարդ է. ուրիշներն
էլ ասում էին։ Ոչ, այլ ժո-
ղովրդին մոլորեցնում է։ Այ- 13
կայն ոչ ով համարձակ չէր
խօսում նորա վերայ՝ Հրէից
վախի համար։

Եւ երբոր տունն արդէն կէս 14
եղաւ, Յիսուսը վեր ելաւ տա-
ճարը և սովորեցնում էր։ Եւ 15
Հրէաները զարմանում էին և
ասում. Այս ի՞նչպէս է գիտում
գրքերը, առանց սովորած լինե-
լու։ Յիսուսը պատասխանեց 16
նորանց և ասաց. Իմ վարդապե-
տութիւնն իմն չէ, այլ ինձ ու-
ղարկողինն է։ Եթէ մէկը կամ- 17
նում է նորա կամքն անել, նա
կ'իմանայ այս վարդապետու-
թեան համար, թէ արդեօք

18 իմմէ խօսիմ. Որ յանձնէ իւրմէ
խօսի՝ փառս անձին իւրում
խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս
այնորիկ որ առաքեացն զնա՝ նա
ճշմարիտ է, և անիրաւութիւն
19 ոչ գոյ ի նմա։ Ո՞չ Մովսէս
ետ ձեզ զօրէնս, և ոչ ոք ի
20 ձէնջ առնէ զօրէնսն։ Զի՞ իրնդ-
րէք զիս սպանանել. պատաս-
խանի ետ ժողովուրդն և ասէ.
Դև գոյ ի քեզ. ո՞վ խնդրէ
21 զքեզ սպանանել։ Պատասխանի
ետ Նոցա Յիսուս և ասէ. Գործ-
մի գործեցի, և ամենեքին զար-
22 մացեալ էք։ Վասն այնորիկ
Մովսէս ետ ձեզ թլփատու-
թիւն. զի ոչ եթէ ի Մովսէսէ
էր, այլ ի հարց անտի. և ի
շաբաթու թլփատէք զմարդ։
23 Իսկ արդ՝ եթէ թլփատութիւն
առնու մարդ ի շաբաթու, զի
մի օրէնքն Մովսէսի լուծցին.
ընդ իս ցասուցեալ էք՝ զի ողջոյն
իսկ մարդ բժշկեցի ի շաբաթու։

24 Մի՛ ըստ աչս դատէք, այլ
ուղիղ դատաստան արարէք։
25 Ասէին ոմանք յԵրուսաղէ-
26 մացւոց անտի. Ո՞չ նա է սա՝
զոր խնդրէին սպանանել. Եւ
աւասիկ յայտնապէս խօսի, և
չասեն ինչ ընդ դմա. գուցէ
արդեօք և իշխանքն գիտացին՝
27 թէ սա իցէ Քրիստոսն։ Այլ
զսա գիտեմք ուստի է. իսկ
Քրիստոսն յորժամ գայցէ,
28 ոչի՞ք գիտէ ուստի է։ Աղաղա-

Աստուածանից է, կամ եթէ
ես իմ անձիցն եմ խօսում։ 18
Իր անձիցը խօսողը, իր անձի
փառքն է որոնում. բայց նա որ
իրան ուղարկողի փառքն է որո-
նում, նա ճշմարիտ է և անի-
րաւութիւն չկայ նորանում։
Չէ՞ որ Մովսէս տուաւ ձեզ 19
օրէնքը, և ձեզանից ոչ ով չէ
կատարում օրէնքը։ Ի՞նչու էք 20
ուզում ինձ սպանել։ Ժողո-
վուրդը պատասխանեց և ասաց.
Դև ունիս. ո՞վ է ուզում քեզ
սպանել։ Յիսուսը պատասխա- 21
նեց և ասաց նորանց. Մէկ
գործ գործեցի, և ամենքդ զար-
մացել էք։ Նորա համար Մով- 22
սէս ձեզ տուաւ թլփատու-
թիւնը, (ոչ թէ Մովսէսից է,
այլ հայրերից.) և շաբաթ օրը
մարդ էք թլփատում։ Եթէ մարդ 23
շաբաթ օրումն թլփատութիւն
է ընդունում, որ Մովսէսի օրէնքը
չքանդուի, ինձ վերայ բար-
կանում էք, որ ես ամբողջ
մարդ բժշկեցի շաբաթ օրը։

Ճշգրիտ երևութով մի դատէք, 24
այլ ուղիղ դատաստան արէք։

Արդ Երուսաղէմացիներից ո- 25
մանք ասում էին. Չէ՞ որ սա նա
է, որին ուզում են սպանել։
Եւ ահա համարձակ խօսում է, 26
և ոչինչ չեն ասում դորան. մի
գուցէ իրաւ իշխաններն էլ իմա-
ցան, որ սա է ճշմարտապէս
Քրիստոսը։ Բայց սորան գի- 27
տենք, թէ որ տեղից է. իսկ
Քրիստոսն երբոր գայ, ոչ ոք

կեաց Յիսուս 'ի տաճարին, ուսուցանէր՝ և ասէր. Եւ զիս գիտէք, և ուստի եմ՝ գիտէք. և յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմարիտ որ առաքեացն զիս՝ զոր դուքն ոչ գիտէք:
29 Ես գիտեմ զնա, զի 'ի նմանէ իսկ եմ, և նա առաքեաց զիս:
30 Խնդրէին զնա ունել՝* և ել 'ի ձեռաց նոցա.՝՝ և ոչՀ՝ արկ 'ի նա ձեռն. զի չեւ՛ էր հասեալ
31 ժամ նորա. Եւ բազումք 'ի ժողովրդենէն հաւատացին 'ի նա, և ասէին. Արիւտոսն յորժամ գայցէ՝ միթէ աւելի՞ ինչ նշանս առնիցէ՝ քան զոր սայս առնէ:

32 Եւ լուան փարիսեցիքն ըզբանս զայսոսիկ ժողովրդեանն զնմանէ. և առաքեցին քահանայապետքն և փարիսեցիք սպասաւորս՝ զի կալցին զնա: Ասէ Յիսուս. Փոքր
33 մի ևս ժամանակ ընդ ձեզ եմ. և երթամ առ այն՝ որ առաքեացն
34 զիս: Խնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք. և ուր եմն երթամ,
35 դուք ոչ կարէք գալ: Ասեն Հրէայքն ընդ միմեանս. Իսկ յո՞ երթայցէ զա՝ զի մեք ոչ գտանիցեմք զդա. միթէ 'ի սփիւռս հեթանոսաց երթայցէ՝ և ուսուցանիցէ զհեթանոսս:
36 Օ՞ր՝նչ է բանն այն՝ զոր ասաց. Խնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք.

չեմ գիտենալ թէ որ տեղից է:
28 Յիսուսն էլ՝ մինչ սովորեցնում էր, այն ատեն աղաղակեց տաճարումն ասելով՝ Ինձ էլ էք գիտում և գիտում էլ էք թէ ինչ տեղից եմ. և ես իմ անձիցը չեմ եկել. այլ ճշմարիտ է ինձ ուղարկողը որին դուք չէք գիտում:
29 Իսկ ես գիտեմ նորան, վասնզի նորանից եմ, և նա ուղարկեց
30 ինձ: Եւ ուզում էին բռնել նորան. բայց ոչ ոք ձեռք չ'ձգեց նորա վերայ. քանզի նորա ժամը
31 դեռ չէր հասել: Եւ ժողովրդից շատերը հաւատացին նորան և ասում էին. Թէ Արիւտոս երբոր գայ, արդեօ՞ք դորանցից աւելի նշաններ կ'անէ, քան որ սա արաւ:

32 Եւ փարիսեցիները լսեցին ժողովրդից, որ այդ բաները տրանջում էին նորա համար. և փարիսեցիներն և քահանայապետներն սպասաւորներ ուղարկեցին, որ բռնեն նորան:
33 Յիսուսն էլ ասաց նորանց. Դեռ մի քիչ ժամանակ ձեզ հետ եմ, և գնում եմ ինձ ուղարկողի մօտ: Ինձ կ'որոնէք և
34 չէք գտնիլ, և որ տեղ որ ես եմ,
35 դուք չէք կարող գալ: Հրէաներն էլ իրար ասացին. Դա ո՞ր տեղ է գնալու, որ մենք չը գըտնենք զորան. արդեօ՞ք Հելլենացոց ցրուած ժողովուրդներին մօտն է գնալու և Հելլենացիներին

* 'Ի Յ«ին» չէ:

և ուր եմն երթամ, դուք ոչ կարէք գալ:

37 'Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր Յիսուս՝ աղաղակէր և ասէր. Եթէ ոք ծարաւի իցէ՝
38 եկեսցէ առ իս, և արբցէ: Որ հաւատայ յիս՝ որպէս և ասեն գիրքն, Գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանուութեան:
39 Այս ասէր վասն Հոգւոյն՝ զոր ընդունելոց էին որ հաւատային 'ի նա. զի չեւ՛ էր Հոգի, քանզի Յիսուս չեւ՛
40 էր փառաւորեալ: Ոմանք 'ի ժողովրդենէն իբրև լսէին զբանս զայս, ասէին. Սա է ճշմարիտ
41 մարգարէն: Այլքն ասէին՝ Սա է Արիւտոսն. իսկ կէսքն ասէին՝ Մի՞թէ 'ի Գալիլեէ՞ գալոց
42 իցէ Արիւտոսն: Ո՞չ գիրքն ասեն, եթէ 'ի զաւակէ Դաւթի, և 'ի Բեթղէհէմ՝ գեղէ՝ ուր Դաւիթն էր, գալոց է
43 Արիւտոս: Եւ եղև հերձուած 'ի մէջ ժողովրդեանն վասն
44 նորա: Եւ ոմանք 'ի նոցանէ կամեցան ունել զնա. այլ ոչ՞ոք մխեաց 'ի նա ձեռս:

45 Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայապետսն և փարիսեցիս, և ասեն սոքա ցնոսա. Ընդէ՞ր ոչ ածէք զնա
է սովորեցնելու: Ի՞նչ է այն 36
խօսքն, որ ասաց. Ես Ինձ կ'որոնէք և չէք գտնիլ, և որտեղ որ ես եմ, դուք չէք կարող գալ:

37 Եւ տօնի վերջին մեծ օրումը Յիսուսը կանգնած էր աղաղակեց և ասաց. Եթէ մէկը ծարաւի է, թող ինձ մօտ գայ, և խմէ:
38 Ինձ հաւատացողը, ինչպէս գիրքն ասում է, Նորա փորիցը կենդանի ջրերի գետեր կ'ըղխին:
39 Սա ասաց Հոգոյն համար, որ ընդունելու էին նորան հաւատացողները, քանզի դեռ Հոգին Սուրբը տրուած չէր, որովհետև Յիսուսը դեռ չէր փառաւորուած:
40 Բազմ ժողովրդից շատերը, երբոր այս խօսքը լսեցին, ասում էին. Սա ճշմարտապէս այն մարգարէն է:
41 Ուրիշներն ասում էին. Սա Արիւտոսն է. և էլ ուրիշներն ասում էին. Մի՞թէ Արիւտոսը Գալիլեայից կ'գայ:
42 Չէ՞ որ գիրքն ասում է, Արիւտոս Դաւթի սերունդից և Բեթղէհէմ գիւղից կ'գայ, որտեղ Դաւիթն էր:
43 Եւ տարաձայնութիւն եղաւ ժողովրդի մէջ նորա համար:
44 Եւ նորանցից ոմանք կամեցան բռնել նորան. Բայց ոչ ոք ձեռք չ'ձգեց նորա վերայ:

45 Եւ սպասաւորները եկան քահանայապետների և փարիսեցիների մօտ. և սորանք ասացին նորանց. Ի՞նչու համար նորան

46 այսր։ Պատասխանի ետուն սպասաւորքն՝ և ասեն. Ո՛չ
երբէք այնպէս խօսեցաւ մարդ՝
47 որպէս այրն այն։ Պատասխանի
ետուն փարիսեցիքն՝ և ասեն.
Մի՛թէ և դո՛ւք մոլորեցարուք։
48 Մի՛թէ ոք յիշխանացն հաւատաց
՝ի նա՝ կամ՝ ՝ի փարիսեցւոց.
49 Այլ այն խաժամուժ ամբոխ,
որ ո՛չ գիտէ զօրէնս, և նզովեալ
50 են։ Ասէ Նիկոդեմոս ցնոսա՝ որ
եկեալն էր առ նա գիշերի յա-
ռաջագոյն՝ և մի էր ՝ի նոցանէ։
51 Մի՛թէ օրէնքն մեր դատի՞ն
զմարդ՝ եթէ ոչ լսեն ինչ նախ
՝ի նմանէ, կամ՝ գիտեն զինչ
52 գործէ։ Պատասխանի ետուն
նմա և ասեն. Մի՛թէ և դու ևս
՝ի Գալիլեա՞ իցես. քննեա՛ և
տես, զի մարգարէ ՝ի Գալիլեա
53 ո՛չ յառնէ։ Եւ գնացին իւրա-
քանչիւրոք ՝ի տեղի իւր։

ԳԼ. Ը.

1 Իսկ Յիսուս գնաց ՝ի լեառն
2 Ձիթենեաց. Եւ ընդ առաւօտն
դարձեալ եկն ՝ի տաճարն. և
գայր առ նա ամենայն ժողո-
վուրդն. և նստեալ ուսուցանէր
3 զնոսա։ Բծին առ նա դպիրքն
և քահանայապետքն և փարիսե-
ցիք՝ կին մի ըմբռնեալ ՝ի շընու-
թեան. և կացուցեալ զնա
4 առաջի, Ասեն ցնա. Ա՛ր դա-
պետ, կինս այս ըմբռնեալ՝ ինքն
5 յայտնապէս շնացեալ է։ Եւ

էրերիք։ Սպասաւորները պա-
տասխանեցին. Երբէք մի մարդ
այսպէս չ՚խօսեց ինչպէս այս
մարդը։ Փարիսեցիքն էլ պա- 47
տասխանեցին և ասացին. Մի՞թէ
դուք էլ մոլորուեցաք։ Մի՞թէ 48
իշխաններից կամ՝ փարիսեցի-
ներից մէկը հաւատաց նորան։
Այլ այդ ռամիկ ժողովուրդը, 49
որ օրէնքը չէ գիտում, անի-
ծուած են։ Նիկոդիմոսը, որ 50
գիշերը նորա մօտ էր եկել,
նորանցից մէկը լինելով, ասաց
նորանց. Մի՞թէ մեր օրէնքը 51
մի մարդի դատում է, եթէ ա-
ռաջ չ՚լսէ նորանից և չ՚գիտե-
նայ, թէ ինչ է գործում։ Պա- 52
տասխանեցին և ասացին նորան.
Մի՞թէ դու էլ Գալիլեայից
ես. քննիր և տես, որ Գալի-
լեայիցը մարգարէ դուրս չէ
եկել։ Եւ ամեն մէկը գնաց իր 53
տունը։

ԳԼ. Ը.

Եւ Յիսուսը գնաց Ձիթենեաց 1
լեառը։ Եւ առաւօտանց դարձ- 2
եալ եկաւ տաճարը, և բոլոր
ժողովուրդը նորա մօտ էր գա-
լիս. և նստած սովորեցնում էր
նորանց։ Դպիրները և փարի- 3
սեցիները մի կին բերին նորա
մօտ՝ շնութեան մէջ բռնուած,
և նորան մէջ տեղը կանգնե-
ցնելով՝ նորան ասացին. Ա՛ր- 4
դապետ, այս կինը բռնուել է
յայտնապէս շնանալիս։ Եւ 5

յօրէնս Մովսէս մեզ պատ-
ուիրեաց զայսպիսիս քարկոծել.
արդ դու զի՞նչ ասես վասն
6 դորա։ Զայս ասէին փորձելով
զնա՝ զի ունիցին ամբաստանու-
թիւն զնմանէ. իսկ Յիսուս ՝ի
խոնարհ նայելով գրէր մատամբն
7 յերկրի։ Իսկ երբեւ ստիպեցին
հարցանելով զնա, հայեցեալ
՝ի վեր՝ ասէ ցնոսա. Ընդեղն ՝ի
ձէնջ՝ նախ նա ընկեսցէ քար ՝ի
8 վերայ դորա։ Եւ դարձեալ ՝ի
խոնարհ նայելով՝ գրէր յերկրի։
9 Եւ լուեալ ելանէին մի ըստ
միոջէ՝ սկսեալ յառաջնոցն մինչև
՝ի վերջինս. և մնաց միայն Յի-
սուս, և կինն կայր առաջի նորա։
10 Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ
ցնա. Կի՛ն դու՝ ո՞ւր են, ոչ ոք
11 զքեզ դատապարտեաց։ Եւ
ասէ. Ո՛չ Տէր. և ասէ Յի-
սուս. Եւ ո՛չ ես դատապարտեմ
զքեզ, երթ՝ յայսմ հետէ մի՛
մեղանչեր։

12 Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա
Յիսուս, և ասէ. Ես եմ լոյս
աշխարհի. որ գայ զինի իմ,
ընդ խաւար մի՛ գնասցէ. այլ
13 ընկալցի զլոյսն կենաց։ Ասեն
ցնա փարիսեցիքն. դու վասն

օրէնքումը Մովսէս պատուի-
րեց մեզ, որ այսպիսիները
քարկոծուին. Հիմա դու ի՞նչ
ես ասում։ Բայց այս բանն 6
ասում էին նորան փորձելով,
որ չարախօսեն նորանից։ Բայց
Յիսուսը դէպի ցած ծռուելով՝
մատովը գրում էր հողի վերայ։
Բայց երբոր ստիպում էին 7
հարցնելով նորան, վեր նայեց՝
և ասաց. Ձեզանից ով որ
անմեղ է, թող առաջ նա քար
գցէ դորա վերայ։ Եւ դար- 8
ձեալ դէպի ցած ծռուելով՝
գրում էր հողի վերայ։ Լո- 9
րանք էլ երբոր սա լսեցին և
իրանց խղճմտանքիցը յան-
դիմանուեցան՝ մէկը մէկի ետևից
դուրս էին գնում՝ ծերերից
սկսած մինչև յետինները. և
Յիսուսը միայն մնաց, և
կինը կանգնած մէջ տեղը։
Յիսուսն էլ վեր նայեց, ոչ ոքի 10
չտեսաւ այն կնկանից զոկ, և
ասաց նորան. Ով կին, ո՞ւր են
այն քո դանդատաւորները. ոչ
ով քեզ չդատապարտեց։ Նա 11
էլ ասաց. Ո՛չ, ով Տէր. և
Յիսուսն էլ ասաց նորան. Ես
էլ չեմ քեզ դատապարտում.
գնա, և այսուհետև մեղք մի
գործիր։

Բրդ Յիսուսը դարձեալ խօսեց 12
նորանց հետ և ասաց. Ես եմ
աշխարհի լոյսը. ով որ իմ ե-
տևից գայ, նա խաւարումը չի
գնալ, այլ կենաց լոյսը կ՚ընդու-
նի։ Փարիսեցիները էլ ասացին 13

անձին քո վկայես՝ և վկայու-
14 թիւն քո չէ ճշմարիտ։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա.
Թէպէտ և ես վկայեմ վասն
անձին իմոյ՝ վկայութիւն իմ
ճշմարիտ է. զի գիտեմ ուստի
եկի՝ և յո՛ երթամ. բայց դուք
ո՛չ գիտէք ուստի գամ՝ կամ յո՛
15 երթամ։ Դուք ըստ մարմնոյ
դատիք. ես ո՛չ դատիմ և ո՛չ
16 զոք. Թէպէտ և դատիմ ես
զոք՝ դատաստանն իմ ճշմարիտ
է. զի չեմ միայն, այլ ես՝ և որ
17 առաքեացն զիս Հայր։ Եւ
յօրէնսն իսկ ձեր գրեալ է՝ թէ
Երկուց մարդոց վկայութիւն
18 ճշմարիտ է։ Ես եմ որ վկա-
յեմ վասն իմ, և վկայէ վասն
իմ՝ որ առաքեացն զիս Հայր։
19 Ասէին ցնա. Որ՞ է Հայր քո.
պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնոսա, Ո՛չ զիս գիտէք՝ և
ո՛չ զ-Հայրն իմ. եթէ զիս գի-
տէիք, և զ-Հայրն իմ թերևս
գիտէիք։

20 Այս բանս խօսեցաւ 'ի տան
գանձին՝ յորժամ ուսուցանէր
'ի տաճարի անդ. և ոչ՞ք կա-
լաւ զնա, զի չէ՛ ևս հասեալ էր
ժամ նորա։

21 Ասէ դարձեալ ցնոսա Յի-
սուս. Ես երթամ, և խնդրիցէք
զիս, և 'ի մեղս ձեր մեռանիցիք.
զի ուր ես երթամ, դուք ոչ
նորան. Դու քո անձի համար
ես վկայում. քո վկայութիւնը
ճշմարիտ չէ։ Յիսուսը պա- 14
տասխանեց և ասաց նորանց.
Թէ և ես վկայեմ իմ անձի
համար, իմ վկայութիւնը ճշմա-
րիտ է. վասնզի գիտեմ թէ
որտեղից եկայ և որտեղ եմ
գնում. բայց դուք չէք գի-
տում, թէ որտեղից եմ գալիս,
և որտեղ եմ գնում։ Դուք 15
ըստ մարմնոյ էք դատում. ես
չեմ դատում ոչ մէկին էլ։ Եւ 16
եթէ ես դատեմ էլ, իմ դա-
տաստանը ճշմարիտ է. վասնզի
ես միայն չեմ, այլ ես և ինձ
ուղարկող Հայրը։ Եւ ձեր 17
օրէնքումն էլ գրուած է, թէ
Երկու մարդկանց վկայութիւնը
ճշմարիտ է։ Ես եմ, որ ինձ 18
համար վկայում եմ, և վկայում
է ինձ համար ինձ ուղարկող
Հայրը։ Եւ ասում էին նո- 19
րան. Որ է քո Հայրը. Յի-
սուսը պատասխանեց. Ոչ ինձ
էք գիտում, և ոչ իմ Հօրը.
եթէ ինձ գիտենայիք, իմ Հօրն
էլ կ'գիտենայիք։

20 Այս բանը Յիսուսը գան-
ձատան մէջ խօսեց նորանց
հետ տաճարումը սովորեց-
նելիս. և ոչ ով չբռնեց
նորան. վասնզի դեռ նորա
ժամը չէր հասել։

21 Յիսուսը դարձեալ ասաց նո-
րանց. Ես գնում եմ, և ինձ
կ'որոնէք. և ձեր մեղաց մէջ
կ'մեռնիք, որ տեղ որ ես եմ

22 կարէք գալ։ Ասէին Հրե-
այքն. Մի՞թէ զի-ւրովի՞ն եր-
թայցէ, զի ասէ՝ թէ Ուր եսն
երթամ՝՝ դուք ո՛չ կարէք գալ։
23 Եւ ասէ ցնոսա. Դուք 'ի ներ-
քուստ աստի էք, և ես 'ի վե-
րուստ անտի եմ. դուք յաշ-
խարհէ աստի էք, ես չեմ յայսմ
24 աշխարհէ։ Այլ ասացի ձեզ՝
թէ 'ի մեղս ձեր մեռանիցիք. զի
թէ ո՛չ հաւատայցէք թէ ես եմ,
25 մեռանիցիք 'ի մեղս ձեր։ Ասեն
ցնա. Դու ո՞վ ես. ասէ ցնոսա
Յիսուս. Կա՛ս զի և խօսիմն
26 իսկ ընդ ձեզ։ Բազում ինչ
ունիմ վասն ձեր խօսել և
դատել. այլ որ առաքեացն զիս՝
ճշմարիտ է. և ես զոր լուայ 'ի
նմանէ, զայն խօսիմ յաշխարհի։
27 Եւ ո՛չ գիտացին՝ թէ զ-Հօրէ
ասէր ցնոսա։

28 Ասէ ցնոսա Յիսուս. Յորժամ
բարձրացուցանիցէք զՈրդի մար-
դոյ՝ յայնժամ գիտասջի՛ք թէ
ես եմ. և յանձնէ իմմէ ինչ ո՛չ
առնեմ. այլ որպէս ուսոյց զիս
29 Հայրն իմ, զայն խօսիմ։ Եւ
որ առաքեացն զիս՝ ընդ իս է.
ո՛չ եթող զիս միայն, զի ես
զՀաճոյս նորա առնեմ հանա-
պազ։

30 Երբև զայս խօսեցաւ՝ բա-
զումք հաւատացին 'ի նա։

գնում, դուք չէք կարող գալ։
Հրէաներն էլ ասում էին. 22
Մի՞թէ ինքն իրան կ'սպանէ,
որ ասում է, թէ Որտեղ որ ես
եմ գնում, դուք չէք կարող
գալ։ Եւ ասաց նորանց. 23
Դուք ներքևիցն էք, ես վերևի-
ցն եմ. դուք այս աշխարհիցն
էք, ես այս աշխարհիցը չեմ։
Արդ ասացի ձեզ, թէ Ձեր 24
մեղաց մէջ կ'մեռնիք. քանզի
եթէ չ'հաւատաք թէ ես եմ,
ձեր մեղաց մէջ կ'մեռնիք։ Եւ 25
ասացին նորան. Դու ո՞վ ես.
և Յիսուսը ասաց նորանց.
Առաջ այն, որ խօսում էլ եմ
ձեզ հետ։ Շատ բան ունիմ 26
ձեզ համար խօսելու և դատե-
լու. բայց ինձ ուղարկողը ճըշ-
մարիտ է, և ես ինչ որ նորանից
լսեցի, այն եմ խօսում աշ-
խարհքի մէջ։ Չիմացան, թէ 27
Հօր համար էր ասում նո-
րանց։

Յիսուսն էլ ասաց նորանց. 28
Երբոր Որդին մարդոյ կբբար-
ձրացնէք, այն ժամանակ կ'ի-
մանաք, թէ ես եմ. և իմ անձիցն
ոչինչ չեմ անում. այլ ինչպէս
իմ Հայրը սովորեցրեց ինձ,
այն եմ խօսում։ Եւ ինձ 29
ուղարկողն ինձ հետ է. ինձ
մենակ չէ թողել Հայրը, վասնզի
ես միշտ նորան հաճելի բաներն
եմ անում.

Երբոր նա այս բաները խօսում 30
էր, շատերը հաւատացին նո-
րան։

31 Եւ ասէր Յիսուս առ Հրէայսն հաւատացեալս. Եթէ դուք կացջիք ի բանին իմում, ճշմարիտ
32 աշակերտք իմ էք. Եւ ծանիջիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ:
33 Պատասխանի ետուն նմա և ասեն. Օ՜աւակ Աբրահամու եմք, և ոչ ումեք երբէք ծառայեցաք. զիա՞րդ ասես թէ
34 Ազատք լինիջիք: Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. Եթէ Ամենայն որ առնէ զմեղս. ծառայ է մեղաց:
35 Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ ի տան, իսկ որդին յաւի-
36 տեան կայ: Իսկ արդ՝ եթէ Որդին զձեզ ազատեցուսցէ,
37 ճշմարիտ ազատք լինիջիք: Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք. այլ խնդրէք սպանանել զիս, զի բանին իմոյ չէ՛ք տեղի ի
38 ձեզ: Ես՝ զոր տեսի առ Հօր իմում, խօսիմ, և դուք՝ զոր լուարուք ի Հօրէն ձերմէ՝
39 առնէք: Պատասխանի ետուն նմա և ասեն. Հայր մեր Աբրահամ է. ասէ ցնոսա Յիսուս. Եթէ որդիք Աբրահամու էիք՝ զգործսն Աբրահամու գործէիք:
40 Այլ այժմիկ խնդրէք սպանանել զիս՝ զայր մի, որ ձեզ զճշմարտութիւն խօսեցայ՝ զոր լուայ ի Հօրէ իմմէ. զայդ
41 Աբրահամ ոչ արար: Դուք առնէք զգործս հօրն ձերոյ. ասեն ցնա. Մի՛ք ի պոռնկութենէ ե՛մք ծնեալ. մի է Հայր

Եւ Յիսուսը իրան հաւատացած Հրէաներին ասաց. Եթէ դուք իմ խօսքի մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներն էք: Եւ ճշմարտութիւնը կը ճանաչէք. և ճշմարտութիւնը կ'ազատէ ձեզ: Պատասխանեցին նորան. Մենք Աբրահամի զաւակ ենք, և ոչ ոքի երբէք չենք ծառայել. դու ի՞նչպէս ես ասում, թէ ազատ կ'լինիք: Յիսուսը պատասխանեց նոցանց. Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ Ամեն ով որ մեղք է գործում, մեղքի ծառայ է: Օտառան էլ յաւիտեան չի կենում տան մէջ. որդին կենում է յաւիտեան: Ուրեմն եթէ Որդին ազատէ ձեզ, յիրաւի ազատ կ'լինիք: Գիտեմ որ Աբրահամի զաւակ էք. բայց ուզում էք ինձ սպանել. վասն զի իմ խօսքը տեղ չունի ձեզանում. Ես ինչ որ տեսայ իմ Հօր մօտ, խօսում եմ. և դուք՝ ինչ որ ձեր հօրից տեսաք, անում էք: Պատասխանեցին և ասացին նորան. Մեր հայրն Աբրահամն է. Յիսուսը նորանց ասաց. Եթէ Աբրահամի որդիք լինէիք, Աբրահամի գործքերը կ'գործէիք: Բայց հիմա ուզում էք ինձ սպանել, մի մարդի, որ ճշմարտութիւնն եմ խօսել ձեզ. որ Աստուածանից լսեցի. այդ բանն Աբրահամ չ'արաւ: Դուք ձեր հօր գործքերն էք անում. և ասացին

42 մեր Աստուած: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ Աստուած էր Հայր ձեր, սիրէիք արդեօք զիս. զի ես յԱստուծոյ ելի՝ և եկի. և ոչ եթէ յանձնէ ինչ եկի, այլ նա առաքեաց զիս:
43 Ընդէ՞ր զխօսս իմ ոչ գիտէք դուք. վասն զի ոչ կարէք լսել
44 զբանն իմ: Դուք ի հօրէ ի՝ի Սատանայէ էք. և ըղձանկութիւնս հօրն ձերոյ կամիք առնել. զի նա մարդասպան էր ի սկզբանէ, և ի՝ ճշմարտութեան ոչ եկաց. զի ոչ գոյ ճշմարտութիւն ի նմա. յորժամ խօսիցի սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սուտ է և հայր
45 նորա: Իսկ ես՝ զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հաւատայք
46 ինձ: Ո՞ ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մեղաց. Եթէ ըղձմարիտն ասեմ ձեզ՝ ընդէ՞ր ոչ
47 հաւատայք ինձ: Որ էն յԱստուծոյ՝ զբանս Աստուծոյ լսէ. և դուք վասն այնորիկ ոչ լսէք,
48 զի չէք յԱստուծոյ: Պատասխանի ետուն Հրէայքն՝ և ասեն ցնա. Ո՞չ բարւոք ասեմք մեք՝ եթէ Սամարացի ես դու, և դև
49 գոյ ի քեզ: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ցիս դև ոչ գոյ՝ այլ պատուեմ զՀայր իմ,
50 և դուք անարգէք զիս: Ես ոչ խնդրեմ զփառս իմ. է որ
51 խնդրէն, և դատի: Ամէն ամէն ասեմ ձեզ, Եթէ ոք զբանն իմ պահեսցէ՝ զմահ մի՛ տեսցէ ի
52 յաւիտեան: Ասեն ցնա Հրէ-

Նորան. Մենք պոռնկութիւնից չենք ծնուած. մէկ Հայր ունինք, այսինքն Աստուած: Յիսուսն էլ նորանց ասաց. Եթէ ձեր Հայրն Աստուած լինէր, ինձ կ'սիրէիք. վասնզի ես Աստուածանից դուրս ելայ և եկայ. որովհետև ոչ թէ իմ անձիցն եկայ, այլ նա ուղարկեց ինձ: Ինչո՞ւ համար իմ խօսքը չէք իմանում. Նորա համար որ դուք չէք կարող իմ խօսքը լսել: Դուք սատանայ հօրից էք, և կամենում էք ձեր հօր ցանկութիւններն անել. նա սկզբից մարդասպան էր, և ճշմարտութեան մէջ չ'կացաւ, որովհետև ճշմարտութիւն չ'կայ Նորանում. երբոր սուտն է խօսում, իրաններից է խօսում, քանզի ստախօս է և Նորա (ստութեան) հայրը: Բայց ես, որովհետև ճշմարտութիւնն եմ խօսում, ինձ չէք հաւատում: Ձեզանից ո՞վ կարող է ինձ մեղաց համարյանդիմանել. բայց եթէ ճշմարտութիւնն եմ ասում, ինչո՞ւ չէք հաւատում ինձ: Աստուածանից լինողը Աստուծոյ խօսքերը լսում է. Նորա համար դուք չէք ականջ դնում, որ Աստուածանից չէք: Հրէաները պատասխանեցին և ասացին Նորան. Չէ՞ որ մենք լաւ ենք ասում, թէ դու Սամարացի ես, և դև ունիս: Յիսուսը պատասխանեց. Ես դև չունիմ, այլ իմ Հօրը պատուում եմ, և դուք անպատ-

այքն. Արդ՝ գիտացաք թէ դև
գոյ 'ի քեզ. Աբրահամ մեռաւ՝
և մարգարէքն. և դու ասես՝
Եթէ ոք զբանն իմ պահեսցէ,
մի՛ ճաշակեսցէ զմահ 'ի յաւի-
53 տեան: Մի՞թէ դու մի՞ծ ինչ ոք
ի՞նչս քան զՀայրս մեր Աբրահամ,
որ մեռաւ, և մարգարէքն մե-
ռան. արդ՝ դու զի՞ առնես
54 զքեզ: Պատասխանի ետ Յիսուս.
Եթէ ես փառաւորեմ զանձն
իմ, փառք իմ ոչինչ են. է
Հայր՝ որ փառաւորէ զիս, զորմէ
դուքն ասէք՝ թէ Աստուած մեր
55 է, Եւ ո՛չ ճանաչէք զնա. բայց
ես գիտեմ՝ զնա. և թէ ասեմ՝,
թէ ո՛չ գիտեմ զնա՝ ձեզ նման
սուտ լինիմ. այլ գիտեմ զնա,
56 և զբան նորա պահեմ: Աբրա-
համ Հայր ձեր ցանկացաւ
տեսանել զօր իմ, ետես՝ և
57 ուրախ եղև: Ասեն ցնա Հրէա-
այքն. Յիսուն ամ չէ՛ ես է
քո, և զԱբրահամ՝ տեսե՞ր:
58 Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն
ամէն ասեմ ձեզ. յառաջ քան
զ լինելն Աբրահամու եմ՝ ես:
59 Վերցին առին զի արկցեն 'ի
վերայ նորա. և Յիսուս խոյս
ետ, և ել գնաց 'ի տաճարէ
անտի:

ուսում էք ինձ: Եւ ես իմ 50
փառքը չեմ որոնում. կայ որո-
նողը և դատողը: Ա՛մէն ամէն 51
ճշմարիտն ասում եմ ձեզ.
Եթէ մէկն իմ խօսքը պահէ,
նա մահ չի տեսնիլ յաւիտեան:
Հրէաներն էլ ասացին նորան. 52
Հիմա իմացանք, որ դև ունիս.
Աբրահամը մեռաւ և մարգարէ-
ներն էլ. և դու ասում ես,
Եթէ մէկն իմ խօսքը պահէ,
մահ չի ճաշակիլ յաւիտեան:
Մի՞թէ դու աւելի մեծ ես քան 53
մեր Հայր Աբրահամը, որ
մեռաւ և մարգարէներն էլ մե-
ռան. դու քեզ ո՞ի ես անում:
Յիսուսը պատասխանեց. Եթէ 54
ես իմ անձը փառաւորեմ, իմ
փառքը ոչինչ է. Հայրն է ինձ
փառաւորողը, որի համար դուք
ասում էք, թէ Ձեր Աս-
տուածն է. Եւ չէք ճանաչում 55
նորան. Բայց ես գիտում եմ
նորան. և եթէ ասեմ, թէ չեմ
գիտում՝ նորան, ձեզ նման
կ'լինիմ ստախօս. բայց գիտում
եմ նորան, և նորա խօսքը
պահում եմ: Աբրահամ՝ ձեր 56
Հայրը ցանկացաւ, որ իմ օրը
տեսնէ, և տեսաւ, և ուրախացաւ
էլ: Հրէաները նորան ասացին. 57
Դու դեռ յիսուն տարեկան
չես, և Աբրահամի՞ն տեսար:
Յիսուսը նորանց ասաց. Ա՛մէն 58
ամէն ասում եմ ձեզ.
Աբրահամի լինելուցն առաջ եմ
ես: Եւ քարեր վեր առան, որ 59
նորա վերայ գցեն. Բայց Յի-

սուսը ծածկուեցաւ, և դուրս
ելաւ գնաց տաճարից՝ նորանց
միջովն անցնելով. և այսպէս
գնաց հեռացաւ:

ԳԼ. Թ

Եւ անցկենալիս մի մարդ տե- 1
սաւ կոյր 'ի ծնէ: Եւ նորա 2
աշակերտները հարցրին նորան և
ասացին. Ռաբբի, ո՞վ է մեղան-
չել, սա թէ իր ծնողքը, որ
կոյր ծնուեցաւ: Յիսուսը պա- 3
տասխանեց. Ոչ դա է մեղանչել
և ոչ էլ իր ծնողքը. այլ որ
Աստուծոյ գործքերը յայտնի
լինին գործանում: Ինձ պէտք 4
է նորա գործքերը գործել, որ
ինձ ուղարկեց, մինչև որ օր
կայ. գիշերը գալիս է, որ այն
ժամանակ ոչ ոք կարող չէ գոր-
ծել: Դանի որ աշխարհքումն 5
եմ, լոյս եմ աշխարհքի. Այս 6
ասելով թքեց գետնին, և
թքիցը ցեխ շինեց, և ցեխը
քսեց կոյրի աչքերին, Եւ 7
նորան ասաց. Գնա՝ լուացուիր
Սելոամայ աւազանումը, որ
թարգմանվում է՝ ուղարկուած.
և գնաց լուացուեցաւ, եկաւ և
տեսնում էր: Բայց դրացիները 8
և նորանք որ առաջուց տեսել
էին նորան, որ կոյր էր, ասում
էին՝ Չէ՞ որ սա է այն նստող
մուրացողը: Ուրիշներն ասում 9
էին, թէ Նա է. ուրիշներն էլ.
թէ Նորան նման է. բայց ինքն
ասում էր թէ Ես եմ: Եւ 10

ԳԼ. Թ

1 Եւ մինչդեռ անցանէր՝ ետես
2 այր մի կոյր 'ի ծնէ. Եւ հարցին
ցնա աշակերտքն նորա՝ և ասեն.
Ռաբբի՝ ո՞ր վնաս է, սորա՞ թէ
հօր և մօր իւրոյ, զի կոյր
3 ծնցի: Պատասխանի ետ Յի-
սուս. Ո՛չ դորա վնաս է, և ոչ
հօր և մօրի իւրոյ. այլ զի
յայտնի լիցին գործքն Աստուծոյ
4 'ի դմա: Եւ ինձ պարտ է
գործել զգործս այնորիկ՝ որ
առաքեացն զիս, մինչ աւուր
կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչոք
5 կարէ գործել: Մինչդեռ յաշ-
խարհի եմ, լոյս եմ աշխարհի:
6 Այս իբրև ասաց, ենթուք 'ի
գետին՝ և արար կաւ 'ի թքոյն,
և ծեփեաց զկաւն 'ի վերայ
7 աչաց կուրին, Եւ ասէ ցնա.
Երթի՝ լուա յաւազանին Սելոա-
մայ. որ թարգմանի Առա-
քեալ. չոգաւ լուացաւ, եկն, և
8 տեսանէր: Իսկ դրացիքն՝ և
որոց տեսեալն էր զնա յառա-
ջագոյն՝ թէ մուրացին էր,
ասէին. Ո՞չ սա էր՝ որ նստէրն
և մուրանայր. կէսքն ասէին.
9 Նա է: Այլքն ասէին. Ո՛չ՝
այլ նման է նմա. և ինքն ասէր՝
10 թէ Ես եմ: Ասեն ցնա. Իսկ
11 զի՞նդ բացան աչք քո: Նա ետ

պատասխանի. Այր մի՝ որում
Յիսուսն ասեն, կաւ արար՝ և
ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս.
Երթ ի Սելոամ և լուա.
զոգայ, լուացայ՝ և տեսանեմ:
12 Այսն ցնա. Որ է նա. ասէ
ցնոսա. Ոչ գիտեմ:

13 Այծին առ փարիսեցիսն զնա,
14 որ երբեմն կոյրն էր: Եւ էր
շաբաթ՝ յորժամ զկաւն արար
Յիսուս. և երաց զաչս կուրին:
15 Դարձեալ հարցանէին զնա
փարիսեցիքն, թէ զի՞նդ տե-
սանես. և նա ասէ ցնոսա. Կաւ
եդ ի վերայ աչաց իմոց, և
16 և լուացայ՝ և տեսանեմ: Այսն
ոմանք ի փարիսեցւոցն. Ոչ է
այրն այն յԱստուծոյ, զի
զշաբաթս ոչ պահէ, կէսքն
ասէին. Իսկ զի՞նդ կարէ մարդ
մեղաւոր այսպիսի նշանս առնել.
և էին հերձուածք ի մէջ նոցա:
17 Այսն դարձեալ ցկոյրն. Դու
զի՞ասես վասն նորա՝ զի երաց
զաչս քո. և նա ասէր՝ թէ
18 Մարգարէ է: Եւ ոչ հաւա-
տային Հրէայքն զնմանէ՝ թէ
կոյր էր՝ և բացաւ. մինչև
կոչեցին զծնողս բացելոյն.
19 Հարցին ցնոսա և ասեն՝ Սո՞ւ է
որդին ձեր, զորմէ դուքն ասէիք,
եթէ կոյր ծնաւ. արդ զի՞նդ
20 տեսանէ: Պատասխանի ետուն
նոցա ծնողքն նորա և ասեն. Գի-
տեմք զի սա է որդին մեր, և զի
նորան ասում էին. Այս
աչքերդ ի՞նչպէս բացուեցան:
11 Նա պատասխանեց և ասաց.
Մի մարդ՝ անունը Յիսուս,
ցեղս շինեց և աչքերիս քսեց, և
ինձ ասաց. Գնա Սելոամ աւա-
զանը, և լուացուիր. գնացի և
լուացուեցայ, և տեսնում եմ:
Եւ նորան ասացին. Ո՞ւր է նա.
12 ասաց. Չեմ գիտում:
Փարիսեցիների մօտ տարան
13 նորան, որ մի ժամանակ կոյր
էր: Եւ շաբաթ օր էր, երբոր
14 Յիսուսը ցեղը շինեց և նորա
աչքերը բացաւ: Փարիսեցիները
15 դարձեալ հարցնում էին նորան,
թէ ի՞նչպէս տեսաւ. և նա նո-
րանց ասաց. Ցեղս դրաւ իմ
աչքերի վերայ, և լուացուեցայ,
16 և տեսնում եմ: Եւ փարիսե-
ցիներից ոմանք ասացին. Այն
մարդն Աստուածանից չէ պահում.
ուրիշներն ասում էին, Ի՞նչպէս
կարող է մի մեղաւոր մարդ
այսպիսի նշաններ անել. և բա-
ժանմունք կար նորանց մէջ:
17 Դարձեալ ասացին կոյրին. Դու
ի՞նչ ես ասում նորա համար,
որ աչքերդ բացաւ. և նա ասաց,
18 թէ Մարգարէ է: Եւ Հրէա-
ները չէին հաւատում նորա
համար, թէ կոյր էր և բա-
ցուեցաւ. մինչև որ աչքը բաց-
19 ուածի ծնողքը կանչեցին. Նո-
րանց հարցրին և ասացին. Սո՞
է ձեր որդին, որի համար ասում
էք դուք, թէ կոյր ծնուեցաւ.

21 կոյր ծնաւ. Բայց զի՞նդ այժմդ
տեսանէ՝ ոչ գիտեմք. կամ թէ
ո՞ երաց զաչս դորա՝ մեք ոչ
գիտեմք. ցդա իսկ հարցէք,
ինքնին ի չափ հասեալ է, ինքն
22 իսկ խօսեսցի վասն իւր: Այս
ասացին ծնողքն նորա. զի եր-
կընչէին ի Հրէից. քանզի
ուխտ եդեալ էր Հրէից, եթէ
ոք խոստովանեսցի զնա Քրիս-
տոս՝ ի բաց կացցէ ի ժողովը-
23 դենէն: Վասն այնորիկ ասացին
ծնողքն նորա, թէ Ինքնին ի
չափ հասեալ է, ցնա իսկ հար-
24 ցէք: Դարձեալ կրկին անդամ
կոչեցին զայրն՝ որ կոյրն էր, և
ասեն ցնա. Տո՛ւր փառս Ա-
տուծոյ, մեք գիտեմք զի այրն
25 այն մեղաւոր է: Եւ նա ասէ.
Թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ.
բայց զայս գիտեմ, զի կոյր էի՝
26 և արդ տեսանեմ: Դարձեալ
ասեն ցնա. Զի՞նչ արար քեզ.
27 զի՞նդ երաց զաչս քո: Պատաս-
խանի ետ նոցա. Այժմ ասացի
ձեզ՝ և ոչ լուարուք. զի՞նչ կամիք
միւսանգամ լսել. միթէ և
դուք կամիք աշակերտել նմա:
28 Նորա հայհոյէին զնա՝ և
ասէին. Դու լիցիր նորա աշա-
29 կերտ. մեք Մովսէսի աշակերտք
եմք: Մեք գիտեմք՝ զի ընդ
Մովսէսի խօսեցաւ Աստուած.
զսա ոչ գիտեմք ուստի իցէ:
30 Պատասխանի ետ այրն և ասէ
ցնոսա. Այդ իսկ են սքանչելիք.
զի դուք ոչ գիտէք ուստի
31 իցէ, և զիմ աչս երաց: Գի-
տեմք թէ ոչ մեղաւորս լսէ Աստուած.
ապա ի՞նչպէս է տեսնում հիմա:
20 Նորա ծնողքն պատասխանեցին
և ասացին. Գիտում ենք, որ
սա է մեր որդին, և թէ կոյր
21 ծնուեցաւ. Բայց թէ հիմա
ի՞նչպէս է տեսնում, չգիտենք
կամ ո՞վ բացաւ նորա աչքերը
մենք չգիտենք. ինքն չափահաս
22 է. իրան հարցրէք. թող ինքն
խօսի իրան համար: Նորա
ծնողքն այս ասացին. վասնզի
Հրէաներից վախենում էին.
քանզի Հրէաները արդէն միա-
սին որոշել էին, որ եթէ մէկը
Քրիստոս դաւանէ նորան, ժո-
23 ղովարանից դուրս լինի: Նորա
համար նորա ծնողքը ասացին,
24 թէ Ինքն չափահաս է, իրանից
հարցրէք: Յետոյ երկրորդ
անգամ կանչեցին այն մարդուն,
25 որ կոյր էր, և նորան ասացին.
Աստուծոն փառք տուր. մենք
գիտենք, որ այն մարդը մեղաւոր
26 է: Նա էլ պատասխանեց և
27 ասաց. Թէ մեղաւոր է, ես
չգիտեմ. մէկ բան եմ գիտում,
որ կոյր էի և հիմա տեսնում
26 եմ: Եւ դարձեալ ասացին
նորան. Ի՞նչ արաւ քեզ.
27 ի՞նչպէս բացաւ աչքերդ: Նո-
րանց պատասխանեց. Արդէն
ձեզ ասացի և չլսեցիք ի՞նչու էք
դարձեալ կամենում լսել. մի՞թէ
դուք էլ էք կամենում նորան
28 աշակերտ լինել: Նորանք հայ-
հոյեցին նորան և ասացին. Դու
ես նորա աշակերտ. իսկ մենք
Մովսէսի աշակերտներն ենք:

տեմք զի Աստուած մեղաւորաց
ոչ լսէ. բայց եթէ աստուա-
ծապաշտ որ իցէ, և զկամս նորա
32 առնիցէ, նմա լսէ: Ի յաւիտե-
նից որ ոչ լուաւ՝ եթէ երաց որ
զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ:
33 Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն
այն՝ ոչ կարէր առնել ինչ:
34 Պատասխանի ետուն և ասեն
ցնա. Ի մեղս իսկ ծնեալ ես
ամենեքին, և դու վարդապետ
լինիս մեր. և հանին զնա ար-
տաքս:

35 Լուաւ Յիսուս՝ եթէ հանին
զնա արտաքս, և իբրև եգիտ
զնա՝ ասէ ցնա. Դու հաւատաս
36 յՈրդի Աստուծոյ: Նա պա-
տասխանի ետ և ասէ. Տէր ո՞վ
37 է՝ զի հաւատացից ի նա: Ասէ
ցնա Յիսուս. Եւ տեսեր զնա,
38 և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է: Եւ
նա ասէ. Հաւատամ Տէր, և
երկիր եպագ նմա:

39 Եւ ասէ Յիսուս. Ի դա-
տաստան եկի յաշխարհս այս,
զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն, և
որք տեսանենն՝ կուրացին:

40 Լուան ոմանք ի փարիսեցւոց՝
Մենք գիտենք, որ Աստուած 29
Մովսէսի հետ խօսեաց. բայց
սորան չենք գիտում, Ի՞ր
տեղից է: Արդը պատաս- 30
խանեաց և նորանց ասաց. Հէնց
դա է զարմանալին որ դուք չէք
գիտում, թէ որ տեղից է, և նա
իմ աչքերը բացաւ: Եւ գի- 31
տենք, որ Աստուած մեղաւոր-
ներին չէ լսում. այլ եթէ մէկը
աստուածապաշտ է՝ և նորա
կամքը կատարում է, նորան
լսում է: Յաւիտենից հետէ չէ 32
լսուած որ մէկը կոյր ծնուածի
աչքերը բացաւ: Եթէ սա Աս- 33
տուածանից չէր, ոչինչ չէր
կարող անել: Պատասխանեցին 34
և նորան ասացին. Դու բոլորո-
վին մեղքի մէջ ես ծնուել, և
դու ես մեզ սովորեցնում. և
դուրս արին նորան:

Յիսուսը լսեց, որ նորան 35
դուրս արին և նորան գտաւ և
ասաց նորան. Դու հաւատո՞ւմ
ես Աստուծոյ Որդոյն: Նա պա- 36
տասխանեց և ասաց. Տէր, ո՞վ
է նա՝ որ հաւատամ նորան:
Յիսուսն էլ նորան ասաց. Տեսար 37
էլ նորան. և քեզ հետ խօսողն
էլ նա ինքն է: Եւ նա ասաց.
Հաւատում եմ, Տէր, և երկրը- 38
պագեց նորան:

Եւ Յիսուսը ասաց. Ես 39
դատաստանի համար եկայ այս
աշխարհքը, որ չ'տեսնողները
տեսնեն, և տեսնողները կու-
րանան:

Եւ Փարիսեցիներից ոմանք, 40
ուոցն՝ որք ընդ նմա էին, և
ասեն ցնա. Մի՞թէ և մեք կո՞յրք
41 իցեմք: Ասէ ցնոսա Յիսուս.
Եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր
մեղ. բայց արդ ասէք՝ եթէ
Տեսանեմք, և մեղքն ձեր ի
ձեզ հաստատեալ են:

ԳԼ. Ժ

1 Ամէն ամէն ասեմ ձեզ. Որ
ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ
ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ
այլ ելանէ՝ նա գող է, և աւա-
2 զակ: Իսկ որ մտանէ ընդ
դուռն, հովիւ է ոչխարաց:
3 Նմա դռնապանն բանայ, և
ոչխարքն ձայնի նորա լսեն. և
զիւր ոչխարսն կոչէ յանուանէ,
4 և հանէ զնոսա: Եւ յորժամ՝*
զիւրն զամենայն՝ հանիցէ,
առաջի նոցա երթայ՝ և ոչխարքն
զհետ նորա երթան, զի ճա-
5 նաչեն զձայն նորա: Օտարի
զհետ ոչ երթիցեն, այլ փա-
խիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչեն
զձայն օտարաց.

6 Զայս առակ ասաց նոցա
Յիսուս, և նոքա ոչ գիտէին
եթէ զինչ էր որ խօսէրն ընդ
7 նոսա: Դարձեալ ասէ ցնոսա
Յիսուս. Ամէն ամէն ասեմ՝

* Ի Յունն, զիւր ոչխարն

որ նորա հետ էին, լսեցին այս,
և ասացին նորան. Մի՞թէ 41
մենք էլ կոյր ենք: Յիսուսը
նորանց ասաց. Եթէ կոյր
լինէիք, մեղք չէիք ունենալ.
բայց հիմա ասում էք, թէ՝
Տեսնում ենք. նորա համար
ձեր մեղքերը մնում են:

ԳԼ. Ժ

Ճշմարիտն ճշմարիտն ասում 1
եմ ձեզ. Ով որ դռնովն
չէ մտնում աչխարների գա-
ւիթը, այլ ուրիշ կողմից է վեր
ելլում, նա գող է և աւազակ:
Բայց դռնովը մտնողը, ոչխար- 2
ների հովիւն է: Դռնապանը 3
նորա համար բաց է անում. և
ոչխարները նորա ձայնին լսում
են, և իր ոչխարներն իրանց
անունովը կանչում է, և նո-
րանց դուրս է հանում: Եւ 4
երբոր իր ոչխարները դուրս է
հանում, նորանց առջևից գնում
է, և ոչխարները նորա ետևից
գնում են. վասնզի նորա ձայնը
ճանաչում են: Բայց օտարի 5
ետևից չեն գնում. այլ նորանից
փախչում են, որովհետև օտար-
ների ձայնը չեն ճանաչում:

Այս առակը Յիսուսը ասաց 6
նորանց. բայց նորանք չէին
գիտում, թէ ինչ էր այն որ
խօսում էր նորանց հետ: Յի- 7
սուսը դարձեալ նորանց ասաց.

ձեզ, զի Ես եմ դուռն ոչխա-
8 բաց։ Ամենեքեան՝ որ յառաջ
քան զիս եկին, գողք էին և
աւազակք. այլ ոչ լուան նոցա
9 ոչխարքն։ Ես եմ դուռն. ընդ
իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ.
մտցէ, և ելցէ, և ճարակ գտցէ։
10 Գողն ոչ գայ՝ եթէ ոչ՝ զի
գողասցի և սպանցէ և կորուսցէ.
ես եկի զի զկեանս ունիցին, և
առաւել ևս ունիցին։

11 Ես եմ հովիւն քաջ. հովիւ
քաջ զանձն իւր դնէ ՚ի վերայ
12 ոչխարաց։ Իսկ վարձկանն՝ որ
ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են
ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն
զի գայ՝ թողու զոչխարսն և
փախչի. և գայլն յափշտակէ
13 զնոսա և ցրուէ. Վասնզի վարձ-
կան է, և չէ փոյթ նմա վասն
14 ոչխարացն։ Ես եմ հովիւն
քաջ, և ճանաչեմ զիմն՝ և
15 ճանաչիմ յիմոցն։ Որպէս գիտէ
զիս Հայր, գիտեմ՝ և ես
զՀայր. և զանձն իմ դնեմ ՚ի
16 վերայ ոչխարաց։ Եւ՝ այլ
ևս ոչխարք են իմ, որ ոչ են
յայսմ գաւթէ. և զայն ևս
պարտ է ինձ ածել այսր, և
ձայնի իմում լուիցեն, և եղիցին
17 մի հօտ և մի հովիւ. Վասն
այնորիկ սիրէ զիս Հայր իմ՝ զի
ես դնեմ զանձն իմ. զի միւս-
18 անգամ առից զնա։ Ոչ ոք հանէ
զնա յինէն. այլ ես դնեմ զնա
անձամբ իմով. իշխանութիւն

Ճշմարիտն ճշմարիտն ասում
եմ ձեզ, թէ Ես եմ ոչխարների
8 դուռը։ Ամենքն՝ որ ինձանից
առաջ եկան, գողեր են և
աւազակներ. և ոչխարներն էլ
9 նորանց չլսեցին։ Ես եմ դուռը.
եթէ մէկն ինձանով ներս մտնէ,
կ՚ապրի. և կ՚մտնէ և դուրս
10 կ՚գայ, և արօտ կ՚գտնէ։ Գողն
չէ գալիս, բայց միայն որ գո-
ղանայ և սպանէ և կորցնէ. ես
եկայ որ կեանք ունենան, և էլ
աւելի ունենան։

11 Ես եմ բարի հովիւը. բարի
հովիւն իր անձը դնում է ոչխար-
12 ների վերայ։ Բայց վարձկա-
նը՝ որ հովիւ չէ, որ ոչխար-
ները իրը չեն, տեսնում է
գայլին գալիս, և թողում է
ոչխարներն և փախչում. և
գայլը յափշտակում է նորանց
13 և ցրվում է ոչխարներին։ Եւ
վարձկանն փախչում է, որով-
հետև վարձկան է, և ոչխար-
14 ների համար հոգս չունի։ Ես
եմ բարի Հովիւը, և իմիններին
15 ճանաչում եմ, և իմիններիցն
էլ ճանաչվում եմ։ Ինչպէս
Հայրն է ինձ ճանաչում, ես էլ
ճանաչում եմ Հօրը, և իմ
անձը դնում եմ ոչխարների
16 համար։ Եւ ուրիշ ոչխարներ
էլ ունիմ, որ այս գաւթիցը
չեն, և նորանց էլ պէտք է, որ
բերեմ. և իմ ձայնին կ՚լսեն,
17 և մէկ հօտ և մէկ հովիւ կ՚լինին։
Նորա համար իմ Հայրը սի-
ում է ինձ, որ իմ անձը դնում

ունիմ դնել զնա, և իշխանու-
թիւն ունիմ միւսանգամ առ-
նուլ զնա. զայս պատուէր առի
19 ՚ի Հօրէ իմմէ։ Պարձեալ
հերձուած լինէր ՚ի մէջ Հրէից
20 վասն բանիցս այսոցիկ։ Եւ
ասէին բազումք ՚ի նոցանէ. Դև
գոյ ՚ի նմա և մոլեգնի, զի՞ բնաւ
21 լսէք նմա։ Այլքն ասէին. Այս-
պիսի բանք ոչ դիւահարի են.
միթէ դև կարէ՞ զաչս կուրի
բանալ։

22 Եղեն յայնժամ նաւակա-
տիքն Յերուսաղէմ, և ձմեռն
23 էր. Եւ շրջէր Յիսուս ՚ի տա-
ճարին՝ ՚ի սրահին Սողոմոնի։
24 Շուրջ եղեն զնովաւ Հրէայքն
և ասեն, Մինչև յի՞րբ թափես
զոգիս մեր, եթէ դու ես Քրիս-
տոսն՝ ասա մեզ համարձակ։
25 Պատասխանի ետ նոցա Յի-
սուս և ասէ. Ասացի ձեզ՝ և
ոչ հաւատայք ինձ. զգործսն
զոր ես գործեմ յանուն Հօր
իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն
26 իմ։ Այլ դուք ոչ հաւատայք,
զի չէք յոչխարաց անտի իմոց։
27 Ոչխարք իմ ձայնի իմում լսեն,
և ես ճանաչեմ զնոսա, և զկնի
28 իմ գան. Եւ ես տամ նոցա
զկեանսն յաւիտենականս. և
մի՛ կորիցեն յաւիտեան, և մի՛

եմ, որպէսզի դարձեալ առնեմ
18 նորան։ Ոչ ոք նորան վերս
չիառնում ինձանից. այլ ես
ինքս ինձանից եմ դնում նո-
րան. իշխանութիւն ունիմ նո-
րան դնելու և իշխանութիւն
ունիմ նորան դարձեալ առնե-
լու. այս պատուէրն առի իմ
19 Հօրիցը։ Արդ դարձեալ բա-
ժանմունք եղաւ Հրէից մէջ
20 այս խօսքերի համար։ Եւ նո-
րանցից շատերն ասում էին, թէ
Դև ունի, և գժվում է. ինչո՞ւ
21 էք ականջ դնում նորան։ Ու-
րիշներն ասում էին. Այս խօս-
քերը դիւահարի խօսքեր չեն.
մի՞թէ դևը կարող է կոյրի
աչքերը բանալ։

22 Այն ժամանակ Երուսաղէ-
մումը նաւակատիքը տօն եղաւ,
23 և ձմեռն էր։ Եւ Յիսուսը
ման էր գալիս տաճարումը Սո-
24 ղոմոնի սրահի մէջ։ Հրէաներն
էլ նորան շրջապատեցին և
ասացին նորան. Մինչև ե՞րբ
մեր հոգիները թափում ես.
եթէ դու ես Քրիստոսը, հա-
25 մարձակ ասիր մեզ։ Յիսուսը
պատասխանեց նորանց. Ասացի
ձեզ, և չէք հաւատում. այն
գործքերը որ իմ Հօր անու-
նովը գործում եմ, նորանք
26 վկայում են ինձ համար։ Բայց
դուք չէք հաւատում. վասնզի
իմ ոչխարներիցը չէք, ինչպէս
27 որ ասացի ձեզ։ Իմ ոչխար-
ները իմ ձայնին լսում են, և
ես ճանաչում եմ նորանց, և

ոք յափշտակեսցէ զնոսա 'ի
29 ձեռաց իմոց։ Հայրն իմ՝ որ ետ
ինձ զնոսա, մեծ է քան զամենայն,
և ոչ ոք կարէ յափշտակել 'ի
30 ձեռաց Հօր իմոյ։ Ես և Հայր
իմ մի եմք։

31 Վասն առին Հրէայքն զի
32 քարկոծ արասցեն զնա։ Պա-
տասխանի ետ նոցա Յիսուս.
Բազում՝ գործս բարիս ցուցի
ձեզ 'ի Հօրէ իմմէ. վասն որո՞ի
գործոյ 'ի նոցանէ քարկոծ
33 առնէք զիս։ Պատասխանի
ետուն նմա Հրէայքն. Վասն
բարւոյ գործոյ ո՛չ առնեմք
զքեզ քարկոծ, այլ վասն հայ-
հոյութեան. և զի դու մարդ
ես, և զանձն քո Աստուած
34 առնես։ Պատասխանի ետ նոցա
Յիսուս՝ Ո՞չ յօրէնս ձեր գրեալ
է. Ես ասացի թէ աստուածք
35 իցէք։ Իսկ եթէ զնոսա աս-
տուածս ասէ, առ որս բանն
Աստուծոյ եղև, և չէ՞ մարթ
36 եղծանել գրոյն. Իսկ զոր
Հայր սրբեաց՝ և առաքեաց
յաշխարհ, դուք ասէք՝ թէ
Հայհոյես. զի ասացի՝ թէ
37 Որդի Աստուծոյ եմ։ Եթէ ո՛չ
գործեմ զգործս Հօր իմոյ,
38 մի՛ հաւատայք ինձ։ Այլա թէ
գործեմ, թէ և ինձ ո՛չ հաւա-
տայք, սակայն գործոցն հաւա-
տացէ՛ք. զի գիտասջիք և

իմ ետևից գալիս են։ Եւ ես 28
յաւիտենական կեանք եմ տա-
լիս նորանց, և յաւիտեան չեն
կորչիլ, և ոչ ով չի յափշտա-
կիլ նորանց իմ ձեռքից։ 29
Իմ Հայրն որ նորանց տուաւ
ինձ, ամենից մեծ է, և ոչ ով
կարող չէ իմ Հօր ձեռքիցն
յափշտակել նորանց։ Ես և 30
Հայրը մէկ ենք։

Հրէաները դարձեալ քարեր 31
վերս առին, որ նորան քարկո-
ծեն։ Յիսուսը նորանց պա- 32
տասխանեց. Շատ բարի գործ-
քեր ցոյց տուի ձեզ իմ Հօրիցը.
նորանցից ո՞ր գործի համար էք
ինձ քարկոծում։ Հրէաները 33
պատասխանեցին և ասացին.
Բարի գործքի համար քեզ
չենք քարկոծում, այլ հայ-
հոյութեան համար. և որ դու
մարդ գոլով՝ քո անձն Աստուած
ես անում։ Յիսուսը նորանց 34
պատասխանեց. Գրուած չէ՞ ձեր
օրէնքումը, թէ Ես ասացի՝ Աս-
տուածներ էք։ Եթէ նորանց 35
Աստուածներ է ասում, որ Աս-
տուծոյ խօսքն եղաւ նորանց.
(և կարելի չէ որ գիրքը եղծա-
նուի.) Այդ նորան որ Հայրը 36
սրբեց և ուղարկեց աշխարհ.
դուք ասում էք՞, թէ Հայ-
հոյում ես, որ ասացի, թէ Աս-
տուծոյ Որդի եմ։ Եթէ իմ 37
Հօր գործքը չեմ գործում,
մի հաւատաք ինձ։ Այդ եթէ 38
գործում եմ, թէ և ինձ էլ
չհաւատաք, գոնէ գործքերին

ծանիջիք՝ եթէ Հայր յիս է, և
ես 'ի Հայր։

39 Դարձեալ խնդրէին զնա ու-
40 նել, և էլ 'ի ձեռաց նոցա։ Եւ
գնաց միւսանգամ յայնկոյս
Յորդանանու՝ 'ի տեղին, ուր էր
Յովհաննէս զառաջինն՝ և մկրտ-
41 էր, և անդ լինէր։ Եկին բա-
զումք առ նա՝ և ասին. զի
Յովհաննէս նշան ինչ ո՛չ արար։
42 Այլ զամենայն, զոր ասաց
Յովհաննէս վասն նորա, ճըշ-
մարիտ էր. և բազումք հաւա-
տացին 'ի նա անդ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս
'ի Բեթանիա, 'ի գեղջէ Մա-
րեմայ, և Մարթայի քեռ-
2 նորա։ Այս այն Մարիամ էր
որ օծ զՏէրն իւղով և ջնջեաց
զոտս նորա հերով իւրով. որոյ
եղբայրն Ղազարոս հիւանդ էր։
3 Առաքեցին առ նա քոյրքն նորա՝
և ասին. Տէր՝ ահաւասիկ զոր
դուն սիրէիր՝ հիւանդացեալ է։
4 Իբրև լուաւ Յիսուս, ասէ.
Այն հիւանդութիւն չէ 'ի մահ,
այլ վասն փառացն Աստուծոյ.
զի փառաւոր լիցի Որդի Աս-
5 տուծոյ այնուիկ։ Եւ սիրէր
Յիսուս զՄարթա և զքոյր
նորա զՄարիամ և զՂազար։
6 Իբրև լուաւ թէ հիւանդացեալ

հաւատացէք, որ ճանաչէք և
հաւատաք, թէ Հայրն ինձա-
նում է և ես նորա մէջ։

Դարձեալ ուզում՝ էին նո- 39
րան բռնել, բայց նորանց ձեռ-
քիցը դուրս եկաւ։ Եւ դար- 40
ձեալ գնաց Յորդանանի այն
կողմը, այն տեղը, որ Յո-
հաննէսն էր առաջուց և մկրտ-
ում էր. և այնտեղ էր կենում։
Եւ շատերը նորա մօտ եկան և 41
ասում էին. թէ Յոհաննէսը
ոչ մի նշան չգործեց։ Այլ 42
բոլորն ինչ որ Յոհաննէսը նորա
համար ասաց, ճշմարիտ էր. և
այնտեղ շատերը հաւատացին
նորան։

ԳԼ. ԺԲ.

Եւ մի հիւանդ կար, անունը 1
Ղազարոս, Բեթանեայիցը,
Մարիամի և նորա քոյր Մար-
թայի գիւղիցը։ Մարիամն էլ 2
նա էր, որ Տիրոջը իւղով օծեց
և նորա ոտները սրբեց իր
մազերով. որի եղբայրը Ղա-
զարոս հիւանդ էր։ Եւ նորա 3
քոյրերն ուղարկեցին նորա մօտ
և ասացին. Տէր, ահա նա՝
որին դու սիրում ես՝ հիւանդա-
ցել է։ Յիսուսն էլ երբոր 4
լսեց, ասաց. Այն հիւանդու-
թիւնը մեռնելու համար չէ,
այլ Աստուծոյ փառաց համար,
որ Որդին Աստուծոյ նորանով
փառաւորուի։ Եւ Յիսուսը 5
սիրում էր Մարթային և նորա

է, զտեղի կալաւ անդէն ուր
7 էրն՝ աւուրս երկուս։ Ապա
յետ այնորիկ ասէ ցնոսա,
Եկայք երթիցուք միւսանգամ
8 ՝ի Հրէաստան։ Ասեն ցնա
աշակերտքն, Ռաբբի՝ այժմ ևս
խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ
առնել. և դարձեալ երթաս
9 անդրէն։ Պատասխանի ետ
Յիսուս. Ոչ երկոտասան ժամ
է աւուր եթէ ոք գնայ ՝ի տու-
ընջեան՝ ոչ գայթակղի. զի զլոյս
աշխարհիս այսորիկ տեսանէ.
10 Ապա թէ ոք գնայ գիշերի՝
գայթակղի, զի լոյս ոչ գոյ
11 ընդ նմա։ Այս իբրև ասաց,
յետ այսորիկ ասէ ցնոսա.
Ղազարոս բարեկամ մեր նըն-
ջեաց, այլ երթամ զի զարթու-
12 ցից զնա։ Ասեն ցնա աշա-
կերտքն, Տէր՝ եթէ ննջեաց
13 ապա ապրի։ Այլ Յիսուս վասն
մահուն Նորա ասէր. Նոցա
այսպէս թուեցաւ՝ թէ վասն
14 ննջելոյ քնոյն ասէ։ Յայնժամ
ասէ ցնոսա Յիսուս յայտնա-
15 պէս. Ղազարոս մեռաւ, Եւ ես
ուրախ եմ վասն ձեր, զի դուք
հաւատասջիք ինձ, զի ես չէի
անդ. բայց արդ եկայք երթի-
16 ցուք առ նա։ Ասէ Թովմաս՝
անուանեալն Երկուորեակ՝ ցա-
շակերտակիցսն. Օ՛ն՝ եկայք և
մեք՝ զի ընդ նմա մեռցուք։

քրոջը և Ղազարոսին։ Եւ երբ
6 որ լսեց, թէ նա հիւանդ է,
այն ժամանակ երկու օր մնաց
7 այն տեղը, ուր էր։ Ապա նո-
րանից յետոյ ասաց աշակերտ-
ներին. Եկէք դարձեալ գնանք
8 Հրէաստան։ Աշակերտներն ա-
սացին Նորան. Ռաբբի, հիմա
Հրէաներն ուզում էին քեզ
քարկոծել. և դարձեալ այն
9 տեղ ես գնում։ Յիսուսը պա-
տասխանեց. Չէ՞ որ օրը տասն-
երկու ժամ ունի. եթէ մէկը
ցերեկը մանի գայ, չի գայթակ-
ղիլ. վասնզի այս աշխարհքի
10 լոյսը տեսնում է։ Իսկ եթէ
մէկը գիշերը մանի գայ, կըգայ-
թակղի. որովհետև լոյս չկայ
11 Նորանում։ Այս ասաց, և սո-
րանից յետոյ ասաց Նորանց.
Մեր Ղազարոս բարեկամը
քնեց. բայց կ՚գնամ, որ զարթ-
12 նեցնեմ Նորան։ Եւ Նորա ա-
շակերտներն ասացին Նորան.
Տէր, թէ որ քնել է՝ կ՚առողջա-
նայ։ Բայց Յիսուսը Նորա
13 մահուան համար էր ասել.
բայց Նորանք կարծում էին, թէ
քուն քնելու համար էր ասում։
14 Այն ժամանակ Յիսուսը յայտ-
նի ասաց Նորանց. Ղազարոսը
15 մեռաւ։ Եւ ես ուրախ եմ ձեզ
համար, որ դուք հաւատաք
ինձ, որ ես այն տեղ չէի. Բայց
16 գնանք Նորա մոտ։ Եւ ասաց
Թովմաս (Երկուորեակ կոչուածն)
աշակերտակիցներին. Մենք էլ
գնանք Նորա հետ մեռնինք։

17 Եկն Յիսուս եգիտ զնա
չորեքօրեայ ՝ի գերեզմանի։
18 Եւ էր Բեթանիա մերձ Երու-
սաղէմ՝ իբրև ասպարիսաք հնգե-
19 տասան։ Բազումք ՝ի Հրէից
անտի եկեալ էին առ Մարթա
և Մարիամ, զի մխիթարեսցեն
20 զնոսա վասն եղբօրն։ Մարթա
իբրև լուաւ՝ թէ Յիսուս գայ,
ընդ առաջ գնաց Նորա. բայց
Մարիամ նստէր անդէն ՝ի
21 տան։ Ասէ Մարթա ցՅիսուս.
Տէր՝ եթէ աստ լեալ էիր,
22 եղբայրն իմ չէր մեռեալ. Այլ
և արդ գիտեմ, եթէ զոր ինչ
խնդրեսցես զԱստուծոյ՝ տացէ
23 քեզ Աստուած։ Ասէ ցնա Յի-
սուս, Յարիցէ եղբայրն քո։
24 Ասէ ցնա Մարթա. Գիտեմ
զի յարիցէ ՝ի յարութեան՝
25 յաւուրն յետնում։ Ասէ ցնա
Յիսուս. Ես իսկ եմ յարու-
թիւն և կեանք. որ հաւատայ
յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ.
26 Եւ ամենայն որ կենդանի է՝ և
հաւատայ յիս, մի՛ մեռցի ՝ի
յաւիտեան. հաւատաս այսմիկ։
27 Ասէ ցնա. Այո՛ Տէր՝ ես հա-
ւատացի՝ եթէ դու ես Քրիս-
տոսն Որդի Աստուծոյ, որ յաշ-
28 խարհ գալոց էիր։ Եւ զայս
իբրև ասաց, գնաց և կոչեաց
զՄարիամ զքոյր իւր լռելեայն՝
և ասէ. Վարդապետ եկեալ
29 է և կոչէ զքեզ։ Նա իբրև
լուաւ՝ յարեաւ վաղվաղակի, և
30 եկն առ նա։ Չև ևս էր եկեալ
Յիսուս ՝ի գեօղն. այլ էր

Յիսուսն էլ եկաւ՝ Նորան 17
արդէն չորս օր գերեզմանի մէջ
դրուած գտաւ։ Եւ Բեթանիան 18
մօտ էր Երուսաղէմին տասն և
հինգ ասպարէզի չափով։ Եւ 19
Հրէաներից շատերը եկել էին
Մարթայի և Մարիամի մօտ,
որ մխիթարեն Նորանց իրանց
եղբօր մասին։ Արդ երբոր Մար- 20
թան լսեց, թէ Յիսուսը գալիս
է, գնաց Նորան դիմաւորելու.
բայց Մարիամը տանը նստած
էր։ Եւ ասաց Մարթան Յի- 21
սուսին. Տէր, եթէ այս տեղ
լինէիր, իմ եղբայրը չէր մեռ-
նիլ։ Բայց հիմա էլ գիտեմ, 22
թէ ինչ որ Աստուածանից խնդ-
րես, Աստուած կ՚տայ քեզ։
Յիսուսը Նորան ասաց. Քո 23
եղբայրը յարութիւն կ՚առնէ։
Մարթան Նորան ասաց. Գիտեմ 24
որ յարութիւն կ՚առնէ յարու-
թիւնում՝ յետին օրը։ Յի- 25
սուսը Նորան ասաց. Ես եմ
յարութիւնը և կեանքը. ինձ
հաւատացողը թէև մեռնի էլ,
կ՚ապրի։ Եւ ամեն ով որ կեն- 26
դանի է և ինձ հաւատում է,
յաւիտեան չի մեռնիլ. հաւա-
տո՞ւմ ես սորան։ Նորան ա- 27
սաց. Այո՛, Տէր, ես հաւա-
տացել եմ, թէ դու ես Քրիս-
տոսն՝ Աստուծոյ Որդին, որ
պէտք է աշխարհք գայիր։ Եւ 28
երբոր այս ասաց, գնաց թա-
քուն կանչեց իր Մարիամ քրոջը,
և ասաց. Վարդապետը եկել
է և կանչում է քեզ։ Նա 29

անդէն 'ի տեղւոջն՝ ուր ընդ
31 առաջ եղև նմա Մ՝արթա։ Իսկ
Հրեայքն՝ որ էին ընդ նմա 'ի
տան անդ՝ և մխիթարէին զնա,
իբրև տեսին զՄ՝արիամ՝ թէ
յարեաւ վաղվաղակի և գնաց,
գնացին և նոքա զհետ նորա,
համարէին թէ 'ի գերեզմանն
32 երթայ՝ զի լացցէ անդ։ Իսկ
Մ՝արիամ՝ իբրև եկն ուր էրն
Յիսուս՝ և տեսս զնա, անկաւ
առ ոտս նորա և ասէ. Տէր՝ եթէ
աստ էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ
33 եղբայրն իմ։ Յիսուս իբրև
տեսս զնա զի լայր, և որ ընդ
նմա էին Հրէայքն, լային, սը-
ռովեցաւ յոգի իւր իբրև զայ-
բացեալ, Եւ ասէ. Որ՞ եդիք
34 զնա. ասեն ցնա. Տէ՛ր՝ եկ և
35 տես։ Եւ արտասուեաց Յի-
36 սուս։ Ասէին Հրէայքն. Տեսէք
37 որչափ սիրէր զնա։ Կէսքն 'ի
նոցանէ ասէին. Ո՞չ կարէր սա,
որ երաց զաչս կուրին, առնել՝
38 զի և սա մի մեռցի։ Յիսուս
դարձեալ զայրացեալ ընդ միտս
իւր, գայ 'ի գերեզմանն. և էր
այր մի, և վէմ մի եդեալ 'ի
39 վերայ նորա։ Եւ ասէ Յիսուս.
'Ի բաց արարէք զվէմդ. ասէ
ցնա Մ՝արթա՝ քոյր մեռելոյն.
Տէր արդ հոտեալ իցէ, քանզի
40 չորեքօրեայ է։ Ասէ ցնա Յի-
սուս. Ո՞չ ասացի քեզ՝ եթէ
հաւատասցես, տեսցես զփառսն
41 Աստուծոյ։ Եւ իբրև 'ի վեր
առին զվէմն, Յիսուս ամբարձ
զաչս իւր 'ի վեր, և ասէ. Հա՛յր՝
երբեւ լուցս, շուտով վերկացաւ,
և եկաւ նորա մօտ։ Յիսուսը 30
դեռ չէր եկել գիւղը, այլ այն
տեղն էր, ուր Մ՝արթան եկաւ
նորա առջևը։ Բայց Հրէա- 31
ներն, որ տանը նորա հետ էին
և նորան մխիթարում էին,
երբոր Մ՝արիամին տեսան, թէ
շուտով վերկացաւ և գնաց,
նորա ետևից գնացին, ասելով
թէ Գերեզմանն է գնում, որ
այն տեղ լայ։ Բայց Մ՝արիամը 32
երբոր այն տեղ եկաւ, ուր
Յիսուսն էր, և տեսաւ նորան,
նորա ոտներն ընկաւ և ասաց
նորան. Տէր, եթէ այս տեղ
լինէիր, իմ եղբայրը չէր մեռ-
նիլ։ Յիսուսն էլ երբոր նորան 33
տեսաւ որ լաց էր լինում, և
նորա հետ եկած Հրէաներն էլ
որ լաց էին լինում, իր հոգովը
խռովեցաւ և յուզուեցաւ։ Եւ 34
ասաց. Ո՞ւր դրիք նորան. նո-
րան ասացին. Տէր, եկ և տես։ 35
Յիսուսը արտասուեց։ Հրէա- 36
ներն ասում էին. Տես ի՞նչ-
պէս էր սիրում նորան։ Կո- 37
րանցից էլ ոմանք ասում էին.
Մ՝ի՞թէ սա որ կոյրի աչքերը
բացաւ, չէր կարող անել՝ որ
սա էլ չմեռնի։ Եւ Յիսուսը 38
դարձեալ խռոված եկաւ գերեզ-
մանը. և այն մի քարայր էր,
և մի քար նորա վերայ դրուած։
Յիսուսը ասաց. Հանեցէք քարը վեր 39
առէք. մեռելի քոյրը՝ Մ՝արթան
ասաց նորան. Տէր, արդէն
հոտած է. վասնզի չորս օրուան՝

գոհանամ զքեզն, զի լուար ինձ։
42 Եւ ես գիտէի զի յամենայն
ժամ լսես ինձ. այլ վասն ժո-
ղովրդեանս որ շուրջ կան՝ առ-
նեմ, զի հաւատասցեն՝ թէ դու
43 առաքեցեր զիս։ Այս իբրև
ասաց, 'ի ձայն մեծ աղաղակեաց
և ասէ. Ղազարէ՝ արի՛ ելա
44 արտաքս։ Եւ ել մեռեալն ոտիւք
կապելովք, և ձեռօքն երիզա-
պնդօք և երեսօքն վարշամա-
կապատօք. և ասէ ցնոսա Յի-
սուս. Լուծէք զդա՝ և թողէք՝
երթալ։

45 Բազումք 'ի Հրէից՝ որ
եկեալ էին առ Մ՝արեմաւս,
իբրև տեսին զոր արարն՝ հաւա-
46 տացին 'ի նա։ Եւ ոմանք 'ի
նոցանէ գնացին առ փարիսե-
ցիսն, պատմեցին նոցա՝ զոր
արարն Յիսուս։

47 Ժողովեցին քահանայապետ-
քըն և փարիսեցիքն ատեան, և
ասեն. Զի՞նչ արասցուք, զի
այրն այն բազում նշանս առնէ։
48 Եթէ թողումք զնա այնպէս,
ամենեքին հաւատան 'ի նա. և
գայցեն Հռոմք՝ և բառնայցեն
49 զաղգս մեր՝ և զտեղի։ Մ՝ի ոմն
'ի նոցանէ՝ անուն Կայիափա, որ

է։ Յիսուսը նորան ասաց. 40
Ասացի՞ քեզ, որ եթէ հաւա-
տաս, Աստուծոյ փառքը կըտես-
նես։ Եւ քարը վեր առին, 41
ուր որ մեռելը դրուած էր. Յի-
սուսն էլ իր աչքերը դէպի վեր
բարձրացրեց և ասաց. Հայր,
գոհանում եմ քեզանից, որ ինձ
լսեցիր։ Եւ ես գիտէի, որ 42
միշտ լսում ես ինձ. բայց այս
շրջակայ ժողովրդի համար ա-
սացի, որ հաւատան թէ դու
ուղարկեցիր ինձ։ Եւ այս ա- 43
սելով՝ մեծ ձայնով աղաղակեց.
Ղազարէ, եկ դուրս։ Եւ 44
մեռելը դուրս եկաւ՝ ոտները և
և ձեռները պատանով կապած,
և երեսը վարշամակով պատած։
Յիսուսը նորանց ասաց. Ը-
ձակեցէք դորան, և թողէք
գնայ։
Եւ Հրէաներից շատերը, որ 45
Մ՝արիամի մօտ էին եկել և
տեսան ինչ որ արաւ Յիսուսը,
հաւատացին նորան։ Եւ նո- 46
րանցից էլ ոմանք գնացին Փա-
րիսեցիների մօտ, և ասացին
նորանց, Ինչ որ Յիսուսը
արաւ։
Եւ քահանայապետները և 47
Փարիսեցիները ատեան ժողովե-
ցին, և ասացին. Ի՞նչ անենք,
որ այդ մարդը շատ նշաններ
է անում։ Եթէ դորան այդպէս 48
թողնենք, ամենքը կ՚հաւատան
դորան, և Հռոմայեցիք կ՚գան
վեր կ՚առնեն մեր երկիրն էլ և
ազգն էլ։ Եւ նորանցից մէկը՝ 49

քահանայապետ էր տարեցն
այնորիկ, ասէ ցնոսա. Դուք
50 ոչինչ գիտէք, Եւ ո՛չ բնաւ
խորհեալ իսկ, թէ լա՛ւ է մեզ՝ զի
այր մի մեռանիցի ՚ի վերայ
ժողովրդեանս, և մի՛ ամենայն
51 ազգս կորիցէ։ Այս ոչ յանձնէ
ինչ ասաց. այլ զի քահանայա-
պետ էր տարեցն այնորիկ,
մարգարէացաւ՝ եթէ մեռանելոց
էր Յիսուս ՚ի վերայ ազգին.
52 Եւ ո՛չ ՚ի վերայ ազգին միայն,
այլ զի և զորդիսն Աստուծոյ
զցրուեալսն ժողովեսցէ ՚ի մի։

53 Այսպա յայնմ օրէ խորհուրդ
54 արարին՝ զի սպանցեն զնա։ Եւ
Յիսուս այնուհետև ո՛չ եթէ
համարձակ շրջէր ՚ի մէջ Հրէ-
ից. այլ գնաց անտի յերկիր մի՝
որ մերձ էր յանապատ, ՚ի քա-
ղաք մի՝ որում անուն էր Եփ-
րայիմ, և անդ լինէր աշակեր-
տաւքն հանդերձ։

55 Եւ էր մերձ զատիկն Հրէից.
և բազումք ելին Յերուսաղէմ
՚ի գաւառէ անտի յառաջագոյն
քան զզատիկն, զի սրբեսցեն
56 զանձինս իւրեանց։ Խնդրէին
զՅիսուս, և ասէին ընդ միմեանս
մինչ կային ՚ի տաճարին.
Այ՞ի՞նքդ թուի ձեզ՝ եթէ ո՞չ
գայցէ ՚ի տօն այսր. պատուէր
տուեալ էր քահանայապետիցն
և փարիսեցւոց, զի թէ ոք
գիտասցէ թէ ուր է, գու-
շակեսցէ զնմանէ՝ զի կալցին
զնա։

Կայիափան, որ այն տարուայ
քահանայապետն էր, ասաց նո-
րանց. Դուք ոչինչ չգիտէք,
Եւ չէք էլ մտածում, թէ լաւ
է մեզ համար՝ որ մէկ մարդ
մեռնի ժողովրդի վերայ, քան
թէ բոլոր ազգը կորչի։ Բայց
սա իրանից չասաց. այլ որովհետև այն տարուայ քահանայապետն էր, մարգարէացաւ՝ թէ Յիսուսը պիտի մեռնէր ազգի համար։ Եւ ոչ թէ միայն ազգի համար, այլ որ Աստուծոյ ցրուած որդիքն էլ մէկ տեղ ժողովէ։

Արդ այն օրից հետէ խորհուրդ արին, որ նորան սպանեն։ Յիսուսն էլ համարձակ չէր մնում գալիս Հրէից մէջ. այլ այն տեղից գնաց մի երկիր, անապատի մօտ, Եփրայեմ՝ ասուած քաղաքը. և այն տեղ էր կենում իր աշակերտների հետ։

Եւ Հրէաների զատիկը մօտ էր, և այն գաւառից շատերը զատկից առաջ վեր ելան Երուսաղէմ, որ իրանց անձերը սրբեն։ Եւ որոնում էին Յիսուսին, և իրար ասում էին՝ տաճարումը կանգնած. Ի՞նչպէս է երևում ձեզ. մի՞թէ այս տօնին չի գալ. բայց քահանայապետները և փարիսեցիները հրաման էին տուել, որ՝ եթէ մէկը գիտենայ թէ ուր է, իմաց տայ, որ բռնեն նորան։

ԳԼ. ԺԲ

1 Իսկ Յիսուս վեց աւուրբ
յառաջ քան զզատիկն եկն ՚ի
Բեթանիա, ուր էր Ղազար
մեռեալն, զոր յարոյցն ՚ի
2 մեռելոց։ Եւ արարին անդ նմա
ընթրիս՝ և ՚ի սպասու կայր
Մարթա, և Ղազար մի էր ՚ի
3 բազմելոց ընդ նմա։ Իսկ
Մարեմայ առեալ լիտր մի
իւղոյ նարդեան ազնուի մեծա-
գնոյ, օծ զոտսն Յիսուսի, և
հերովք իւրովք մաքրէր զոտս
նորա. և տունն լի եղև ՚ի
4 հոտոյ իւղոյն։ Ասէ մի ոմն յա-
շակերտաց անտի՝ Յուդա Ի-
կարիովտացի, որ մատնելոցն էր
5 զնա։ Ընդէ՞ր ոչ իւղդ այդ
վաճառեցաւ երեք հարիւր
դենարի, և տուաւ աղքատաց։
6 Այս ասաց՝ ո՛չ զի զաղքատաց
ինչ փոյթ էր նմա. այլ զի գող
էր՝ և զարկղն ինքն ունէր. և որ
7 ինչ անկանէր՝ նա կրէր։ Ասէ
Յիսուս. Թո՛ղ տուր դմա, զի
յօրն պատանաց իմոց պահեսցէ
8 զայդ. Աղքատս յամենայն
ժամ ընդ ձեզ ունիք. զիս ո՛չ
հանապազ ընդ ձեզ ունիք։

9 Իբրև գիտաց ժողովուրդ
բազում ՚ի Հրէից թէ անդ է՝
եկին. ո՛չ միայն վասն Յիսուսի,
այլ զի և զՂազար տեսցեն, զոր
10 յարոյցն ՚ի մեռելոց։ Խոր-
հուրդ արարին քահանայա-
պետքն, զի և զՂազար սպան-

ԳԼ. ԺԳ

Եւ Յիսուսը զատկից վեց օր 1
առաջ եկաւ Բեթանիա, որ տեղ
մեռեալ Ղազարոսն էր, որին
մեռելներից յարոյց։ Եւ այն 2
տեղ հացկերութիւն արին նորա
համար. և Մարթա ծառայում
էր, և Ղազարոսը նորա հետ
նստողներից մէկն էր։ Մարիամն 3
էլ մի լիտր նարդոսի ազնիւ մե-
ծագին իւղ առաւ, Յիսուսի
ոտները օծեց, և իր մազերովը
սրբում էր նորա ոտները. և
տունը լցուեցաւ իւղի հոտով։
Եւ ասաց նորա աշակերտներից 4
մէկը՝ Յուդա Սիմոնեան Ի-
կարիոտացին, որ նորան մատ-
նելու էր՝ Ինչո՞ւ համար այդ 5
իւղը երեք հարիւր դենարի
չ՚ծախուեցաւ, և աղքատներին
տրուեցաւ։ Բայց սա ասաց, 6
ոչ թէ որովհետև աղքատների
համար նորա հոգն էր. այլ որ
գող էր՝ և քսակ ունէր, և ին-
կածը պահում էր։ Յիսուսն 7
էլ ասաց. Թո՛ղ տուր գորան,
նա իմ պատանքի օրուան համար
էր պահել այդ։ Աղքատներին 8
աղքատներին միշտ ձեզ հետ
ունիք. բայց ինձ միշտ չ՚ունիք։
Եւ Հրէաներից շատ ժողո- 9
վուրդ գիտաց, թէ նա այն տեղ
է, և եկան, ոչ թէ միայն
Յիսուսի համար, այլ որ Ղա-
զարոսին էլ տեսնեն, որին մե-
ռելներից յարոյց։ Քահա- 10
նայապետներն էլ խորհուրդ

11 ցեն. Պանդխտութիւնք 'ի Հրէից երթային* և հաւատային 'ի Յիսուս:

12 'Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ եկեալ էր 'ի տօնն,
13 իբրև լուան թէ գայ Յիսուս յԵրուսաղէմ, առին ոստս արմաւենեաց՝ և ելին ընդ առաջ նորա՝ աղաղակէին և ասէին. Ովսաննայ, օրհնեալ որ գայդ յանուն Տեառն՝ թագաւորդ
14 Իսրայէլի: Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ 'ի վերայ նորա,
15 որպէս և գրեալ է: Մի երկնչիր դուստր Սիոնի՝ ահաւադիկ թագաւոր քո գայ նստեալ 'ի
16 վերայ յաւանակի իշոյ: Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զառաջինն, այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ յիշեցին, եթէ այն էր՝ որ գրեալն էր վասն նորա, և զայն արարին նմա:
17 Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա, թէ զՂազար կոչեաց ևեթ 'ի գերեզմանէն. և յարոյց
18 զնա 'ի մեռելոց: Եւ վասն այնորիկ ընդ առաջ եղև նմա ժողովուրդն, զի լուան եթէ զայն նշանս արարեալ էր նորա:
19 Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. Տեսանէք՝ զի ոչինչ օգտիք. ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց.

* 'Ի Յոյնն, վասն նորա

արին, որ Ղազարոսին էլ սպանեն: Ազանդի Հրէաներից շատերը նորա պատճառով գնում էին և հաւատում էին Յիսուսին:
12 Նորա հետևեալ օրը շատ ժողովուրդ, որ եկել էին տօնը, երբոր լսեցին, թէ Յիսուսը գալիս է Երուսաղէմ,
13 Բրմաւի ծառերի ճուղեր առին, և դուրս գնացին նորա առջևը, աղաղակում էին. Ովսաննայ, օրհնեալ որ Տիրոջ անունովը գալիս ես, ով Իսրայէլի թագաւոր:
14 Եւ Յիսուսը մի աւանակ գտաւ, և նորա վերայ նստեց. ինչպէս գրուած է՝
15 Եւ Սիոնի աղջիկ, ահա քո թագաւորը գալիս է՝ իշու աւանակի վերայ նստած:
16 Եւ նորա աշակերտներն առաջ չիմացան այս բանը. բայց երբոր Յիսուսը փառաւորուեցաւ՝ այն ժամանակ յիշեցին, թէ այս նորա համար գրուածն էր. և այն բանը արին նորան: Եւ ժողովուրդն՝ որ
17 նորա հետ էր, վկայում էր, թէ զՂազարոսին գերեզմանիցը դուրս կանչեց. և մեռելներից յարոյց նորան:
18 Եւ նորա համար էլ ժողովուրդը գնաց նորա առջևը, վասնզի լսեցին թէ նա արել էր այն նշանը:
19 Բայց փարիսեցիներն իրար մէջ ասում էին. Տեսնում էք, որ ոչինչ օգուտ չունիք. ահա աշխարհքը նորա ետևից գնաց:

20 Այլն անդ ոմանք և Հելլենացիք՝ նոսք յելելոցն անդր, զի երկիր-
21 պագանիցեն 'ի տօնին: Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ 'ի Բեթսայիդա Գալիլեացւոցն էր, աղաչէին զնա և ասէին. Տէր՝
22 կամիմք զՅիսուս տեսանել: Գայ Փիլիպպոս և ասէ զԱնդրէաս. Անդրէաս և Փիլիպպոս ասեն
23 զՅիսուս: Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա և ասէ. Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ:

24 Ամէն ամէն ասեմ ձեզ. Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ
25 յերկիր մեռանիցի, Ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, 'ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա:
26 Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եմն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ՝ պատուեսցէ զնա Հայրն իմ:
27 Այժմ անձն իմ խռովեալ է. և զի՞նչ ասացից, եթէ Հայր՝ ազատեցո՛ զիս 'ի ժամէ աստի յայսմանէ. այլ վասն այնորիկ եկի 'ի ժամս յայս:
28 Հայր՝ փառաւորեա զանուն քո. եկն բարբառ յերկնից. Եւ փառաւորեա արարի, և դարձեալ
29 փառաւորեցի: Եւ ժողո-

Եւ կային ոմանք Հելլենացիք՝ նորանցից, որ եկել էին այն տեղ, որ երկրպագեն այն
21 տօնին: Նորանք եկան Փիլիպպոսի մօտ որ Գալիլեայի Բեթսայիդայից էր, նորան խնդրում էին և ասում. Տէր, կամենում ենք Յիսուսին տեսնել: Փիլիպպոսը գալիս է
22 Անդրէասին ասում. Անդրէասն և Փիլիպպոսն ասում են Յիսուսին: Յիսուսն էլ պատասխանեց նորանց՝ և ասաց. Ժամը
23 հասաւ, որ Որդին մարդոյ փառաւորուի:

24 Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ. եթէ ցորենի հատը հողի մէջ չընկնի և մեռնի, Ինքը մենակ կ'մնայ. բայց եթէ մեռնի, շատ պտուղ
25 կ'բերէ: Որ անձը սիրողը՝ կ'կորցնէ նորան, և իր անձն ատողը այս աշխարհքումը, յաւիտենական կենաց մէջ կ'պահէ
26 նորան: Եթէ մէկը ծառայէ ինձ, թող նա իմ ետևից գայ. և ուր ես եմ՝, այն տեղ էլ իմ պաշտօնեան կ'լինի. եթէ մէկը ծառայէ
27 ինձ, Հայրը կ'պատուէ նորան: Հիմա իմ անձը խռոված է. և
28 ի՞նչ ասեմ. Հայր, ազատիր ինձ այս ժամից. սակայն իսկ սորա համար եկայ այս ժամի մէջ: Հայր, փառաւորիր քո անունը:
29 Եւ երկնքից ձայն եկաւ, Ես փառաւորեցի էլ և դարձեալ կ'փառաւորեմ: Եւ ժողովուրդը, որ կանգնած էր և լսում

վուրդն որ կայր և լսէր՝ ասէին, Որոտումն լինել. կէսքն ասէին. Հրեշտակ խօսեցաւ ընդ նմա:
30 Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. Ո՛չ վասն իմ՝ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր:
31 Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի
32 արտաքս: Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենսին ձգեցից առ իս: Օ՝այս
33 ասէր, նշանակեալ՝ թէ որով մահու մեռանելոց իցէ: Պա-
34 տասխանի ետ նմա ժողովուրդն. Մ՝ենք օրէնքիցս լուաք յօրինաց՝ եթէ Քրիստոսն յաւիտեան կայ, և դու զիարդ ասես՝ թէ պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ.
35 ո՞վ է այն Որդին մարդոյ: Ասէ ցնոսա Յիսուս. Փոքր միւս ևս ժամանակ լոյս ընդ ձեզ է. գնացէ՛ք մինչդեռ զլոյսն ունիք, զի մի խաւար ձեզ հասցէ. զի որ գնայ ի խաւարի, ո՛չ գիտէ
36 յո՛ երթայ: Մ՝ինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէ՛ք ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք. զայս խօսեցաւ Յիսուս, և չոգաւ՝ թաքեաւ ի նոցանէ:
37 Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա. և նոքա ո՛չ
38 հաւատային ի նա. Օ՝ի լցցի բանն Եսայեայ մարգարէի՝ զոր ասացն. Տէր՝ ո՞ հաւատաց ի լուր մեր, և բազուկ Տեառն
39 ո՞ւմ յայտնեցաւ: Վասն այնորիկ ո՛չ կարէին հաւատալ, զի

էր, ասում էին, Որոտմունք եղաւ. ուրիշներն ասում էին. Հրեշտակ խօսեց նորա հետ:
30 Յիսուսը պատասխանեց և ասաց. Այս ձայնը ոչ թէ ինձ համար եղաւ, այլ ձեզ համար: Հիմա
31 դատաստան է այս աշխարհքի. հիմա այս աշխարհքի իշխանը դուրս կ՝գցուի: Եւ ես երբոր
32 բարձրանամ երկրիցը, ամենքին կ՝քաշեմ ինձ մօտ: Եւ այս
33 ասում էր, որ ցոյց տայ, թէ ինչպիսի մահով պիտի մեռնի:
34 Ժողովուրդը պատասխանեց նոցան. Մ՝ենք օրէնքիցը լսեցինք, թէ Քրիստոսը յաւիտեան կ՝կենայ. և դու ի՞նչպէս ես ասում՝, թէ պէտք է Որդին մարդոյ բարձրանայ. ո՞վ է այն
35 Որդին մարդոյ: Յիսուսն էլ ասաց նորանց. Մի քիչ ժամանակ դեռ լոյսը ձեզ հետ է. գնացէք, քանի որ լոյսն ունիք, որ խաւարը ձեզ չ՝հասնէ. և
36 խաւարումը գնացողը չէ գիտում, թէ ո՞ւր է գնում: Քանի որ լոյսն ունիք, հաւատացէք լուսոյն, որ լուսոյ որդիք լինիք: Յիսուսը այս բանը խօսեց, և գնաց թաքնուեցաւ նորանցից:
37 Եւ թէպէտ այնքան նշաններ նա արել էր նորանց առջև. նո-
38 ր՝անք չէին հաւատում նորան. որ Եսայի մարգարէի խօսքը կատարուի, որ ասաց. Տէր, ո՞վ հաւատաց մեր խօսքին, և Տիրոջ բազուկը ո՞ւմ յայտնուեցաւ: Նորա համար չէին կա-
39 ցաւ:

40 միւսանգամ ասէ Եսայի. Թէ կուրացոյց զաչս նոցա, և ապշեցոյց զսիրտս նոցա. զի մի տեսցեն աչօք, և իմասցին սրտիւք, և դարձցին՝ և բժշկեցից
41 զնոսա: Օ՝այս ասաց Եսայի՝ զի տեսեալ զփառս նորա, և խօսեցաւ
42 վասն նորա: Բայց սակայն և յիշխանաց անտի բազումք հաւատացին ի նա. այլ վասն փարիսեցւոցն ո՛չ յայտնէին, զի մի՝ ի ժողովրդենէն ելանիցեն:
43 Քանզի սիրեցին զփառս մարդկան՝ առաւել քան զփառսն Աստուծոյ:

44 Եւ Յիսուս աղաղակէր և ասէր. Որ հաւատայ յիս՝ ո՛չ հաւատայ յիս, այլ յայն՝ որ
45 առաքեացն զիս: Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ առա-
46 քեացն զիս: Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս՝ ի խաւարի մի՛ մնասցէ:
47 Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց, և ո՛չ պահեսցէ, ես ո՛չ դատիմ զնա. քանզի ո՛չ եկի՝ թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկե-
48 ցից զաշխարհ: Որ անարգէ զիս, և ո՛չ ընդունի զբանս իմ, գոյ որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ, նա դատի զնա
49 յաւուրն յետնում: Օ՝ի ես յանձնէ իմմէ ո՛չ խօսեցայ. այլ որ առաքեացն զիս Հայր, նա
50 ետ ինձ պատուէր զինչ ասացից՝ և զինչ խօսեցայց: Եւ գիտեմ՝՝

բողանում հաւատալ. վասնզի
Եսային դարձեալ ասում է.
40 Նորանց աչքերը կուրացրեց, և նորանց սրտերը թմրացրեց, որ աչքով չ՝տեսնեն, և սրտով չ՝իմանան, և դառնան՝ և ես բժշկեմ նորանց: Եսային սա
41 ասաց, երբոր նորա փառքը տեսաւ, և նորա համար խօսեց:
42 Բայց և այնպէս իշխաններիցը շատերը հաւատացին նորան. սակայն փարիսեցիների պատճառովը չէին դաւանում, որ ժողովարանիցը դուրս չ՝գցուին:
43 Վասնզի մարդկանց փառքն աւելի սիրեցին քան թէ Աստուծոյ փառքը:

44 Եւ Յիսուսը աղաղակում էր և ասում. Ինձ հաւատացողը չէ թէ ինձ է հաւատում, այլ ինձ
45 ուղարկողին: Եւ ինձ տեսնողը, ինձ ուղարկողին է տեսնում:
46 Ես լոյս եկայ աշխարհքը, որ ամեն ինձ հաւատացողը խաւարի
47 մէջ չ՝մնայ: Եւ եթէ մէկն իմ խօսքերին լսէ և չ՝հաւատայ, ես չեմ դատիլ նորան. քանզի ես չ՝եկայ որ աշխարհքը դատեմ, այլ որ փրկեմ աշխարհքը:
48 Ինձ անարգողը և իմ խօսքերը չ՝ընդունողը ունի իրան դատողին, այն խօսքն՝ որ ես խօսեցի, նա կ՝դատէ նորան յետին
49 օրը: Որովհետև ես իմ անձիցը չ՝խօսեցի. բայց ինձ ուղարկող Հայրը, նա պատուէր տուաւ ինձ, թէ ինչպիսի ասեմ և ինչ
50 պիտի խօսեմ: Եւ գիտեմ, որ

եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք. արդ զոր են խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն՝ այնպէս խօսիմ։

ԳԼ. ԺԹ.

1 Յառաջագոյն քան զտօնն զատկի՝ գիտաց Յիսուս, թէ հասեալ է ժամ նորա՝ զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր. *սիրեաց զիւրսն՝ որ յաշխարհի աստ են. խսպառ սիրեաց զնոսա։
2 Եւ ի լինել ընթրեացն, Սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ՝ զի մատնեսցէ զնա Յուդա Սիմոնի Իսկարիովտացւոյ.
3 Գիտաց Յիսուս՝ զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա, և թէ Յստուծոյ ել՝ և առ
4 Յստուած երթայ. Յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհանդերձն, և առեալ զենջակ մի՝
5 սփածաւ։ Եւ ապա առեալ ջուր՝ արկ ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սրբէր զենջակաւն՝ զոր սփածեալ
6 էր։ Գայ առ Սիմոն Պետրոս. և նա ասէ ցնա. Տէր՝ դո՞ւ զիմ
7 զոտս լուանաս։ Պատասխանի ետ Նմա Յիսուս՝ և ասէ. Զոր ինչ ես գործեմ, դու այժմ ոչ գիտես. բայց ապա գիտասջիր։ Ասէ ցնա Պետրոս.

* Ի Յոյնս, սիրեա։

նորա պատուիրանքը յաւիտենական կեանք է. ուրեմն ինչ որ ես խօսում եմ, ինչպէս Հայրն ասաց ինձ՝ այնպէս եմ խօսում։

ԳԼ. ԺԹ.

1 Զատկի տօնից առաջ՝ Յիսուսը գիտաց, որ իր ժամը հասել է, որ այս աշխարհքից փոխուի դէպի Հայրը, իրանները՝ որ այս աշխարհքումն են՝ սիրեց. և մինչև վերջը սիրեց նորանց։
2 Եւ երբոր ընթրիք էր լինում, սատանան արդէն Յուդա Սիմոնեան Իսկարիոտացու սրտի մէջ էր գցել, որ մատնէ նորան։
3 Յիսուսը գիտենալով որ Հայրն ամէն բան իր ձեռքն է տուել, և որ Յստուածանից դուրս եկաւ, և Յստուծոյ մօտ է գնում.
4 Ընթրիքից վերկացաւ և հանդերձները վայր դրաւ, և մի ղենջակ առաւ իր մէջքը
5 պատեց։ Յետոյ ջուր ածեց կոնքը, և սկսեց աշակերտների ոտները լուանալ, և այն ղենջակով սրբել որ մէջքին պատած էր։
6 Եւ Սիմոն Պետրոսի մօտ եկաւ. և նա նորան ասաց.
7 Տէր, դո՞ւ ես իմ ոտները լուանում։ Յիսուսը պատասխանեց և ասաց նորան. Ինչ որ ես անում եմ, դու հիմա չես

8 Ո՛չ լուասցես զոտս իմ յաւիտեան. պատասխանի ետ նմա Յիսուս. Եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ ուրիս ընդ իս մասն։
9 Ասէ ցնա Սիմոնն Պետրոս. Տէր՝ մի միայն զոտս իմ՝ այլ և
10 զձեռս և զգլուխս։ Ասէ ցնա Յիսուս. Լուացելոյն չէ՛ ինչ պիտոյ՝ բայց զի՛ զոտսն լուանայցէ. քանզի ամենեին սուրբ է. և դուք սուրբ էք, այլ ոչ
11 ամենեքին։ Զի գիտէր զայն՝ որ մատնելոցն էր զնա՝. վասն այնորիկ ասաց՝ թէ Ո՛չ ամենե-
12 քին սուրբ էք։ Եւ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհանդերձն իւր՝ և դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնոսա. Գիտէ՞ք
13 զինչ արարիդ ձեզ։ Դուք կոչէք զիս Վարդապետ և Տէր. և բարւոք ասէք, քանզի եմ
14 իսկ։ Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ Տէրս և Վարդապետս, և դուք պարտիք ըզմի-
15 մեանց ոտս լուանալ։ Զի օրինակ մի ետուս ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիջիք։

16 Ամէն ամէն ասեմ ձեզ. Ո՛չ է ծառայ մեծ քան զտէր իւր. և
17 ոչ առաքեալ՝ մեծ քան զայն որ առաքեացն զնա։ Եթէ զայս գիտէք, երանելի ես էք՝ եթէ
18 առնիցէք զայս։ Ո՛չ վասն ամենեցուն ձեր ասեմ. զի ես գիտեմ, զորս ընտրեցիդ. այլ

իմանում, բայց սորանից յետոյ կ'իմանաս։ Պետրոսը նորան ասաց. Դու իմ ոտները չես լուանալ յաւիտեան. Յիսուսը պատասխանեց նորան. Եթէ քեզ չ'լուանամ, ինձ հետ բաժին չունիս։ Սիմոն Պետրոսը ասաց նորան. Տէր, ոչ թէ իմ ոտները միայն, այլ իմ ձեռները և գլուխն էլ։ Յիսուսը նորան ասաց. Լուացածին բան պէտք չէ, բացի ոտները լուանալ. այլ բոլորովին մաքուր է. և դուք մաքուր էք, բայց ոչ թէ ամենքդ։ Վասնզի գիտէր իրան մատնիչին. նորա համար ասաց, ոչ թէ ամենքդ մաքուր էք։ Եւ երբոր նորանց ոտները լուացաւ, իր հանդերձներն առաւ՝ և դարձեալ սեղան նստեց, և նորանց ասաց. Գիտէ՞ք ես ինչ արի ձեզ։ Դուք ինձ կանչում էք Վարդապետ և Տէր, և լաւ էք ասում, քանզի եմ։ Արդ եթէ ես՝ Տէրս և Վարդապետս՝ ձեր ոտները լուացի, դուք էլ պէտք է իրար ոտները լուանաք։ Վասնզի ձեզ օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզի արի, դուք էլ անէք։

Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ. Ծառան իր տիրոջից մեծ չէ. ոչ էլ ուղարկուածը մեծ է իրան ուղարկողից։ Եթէ այս գիտէք, երանելի էք՝ թէ որ այս անէք։ Ձեր բոլորիդ համար չեմ ասում. ես գիտեմ նորանց, որ ընտրեցի. բայց որ

զի լցցի գիրն, թէ Որ ուտէր
ընդ իս հաց՝ արար ինձ խաբէուն։
19 Թիւն։ Յայսմ հետէ իսկ ասեմ
ձեզ մինչև եղեալ, զի յորժամ
լինիցի՝ հաւատասջիք թէ ես եմ։
20 Ամէն ամէն ասեմ ձեզ. Որ
ընդունի զոր ոք ես առաքեցից,
զիս ընդունի. և որ զիս ընդու-
նի, ընդունի զայն՝ որ առա-
քեացն զիս։

21 Այս իրրև ասաց Յիսուս,
խռովեցաւ յոգի իւր՝ վկայեաց
և ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ,
զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է
22 զիս։ Այրէին ընդ միմեանս
աշակերտքն տարակուսեալք,
23 թէ զո՞ւմմէ ասիցէ։ Եւ էր մի
ոմն յաշակերտացն բազմեալ առ
Յիսուսիւ, զոր սիրէրն Յիսուս։
24 Ակնարկէ նմա Սիմովն Պետրոս
հարցանել՝ ո՞վ իցէ, վասն որոյ
25 ասէն։ Եւ նա անկեալ զլանջքն
Յիսուսի, ասէ ցնա. Տէր՝ ո՞վ է։
26 Պատասխանի ետ Յիսուս և
ասէ. Այն է՝ որում ես թացիւ
զպատառն և տայ. և թացեալ
զպատառն տայ Յուդայի Սկա-
27 ριովթացւոյ։ Եւ յետ պատա-
ռոյն՝ ապա եմուտ ի նա Սա-
տանայ, և ասէ ցնա Յիսուս.
Արդ՝ զոր ինչ առնելոց ես՝ արա
28 վաղվաղակի։ Եւ զայս ոչ ոք
իմացաւ ի բազմականաց անտի,
29 թէ առ ինչ ասաց ցնա։ Այլ
ոմանք համարէին, թէ զի
զարկղն ունէր Յուդա, ասաց
նմա Յիսուս, Գնեա՛ ինչ որ
գիրքը կատարուի, թէ Նա որ
ինձ հետ հաց էր ուտում, ինձ
դէմ իրան կրունկը բարձրաց-
ուց։ Հիմիկուց ասում եմ 19
ձեզ՝ լինելուց առաջ, որ երբոր
լինի՝ հաւատաք թէ ես եմ։
Ճշմարիտն ճշմարիտն ասում 20
եմ ձեզ. Ով որ ընդունէ նոքան,
որ ես կ'ուղարկեմ, ինձ է ընդու-
նում. և ինձ ընդունողը ինձ
ուղարկողին է ընդունում։

Յիսուսը այս ասելով տրըտ- 21
մեցաւ հոգով, և վկայեց և
ասաց. Ճշմարիտն ճշմարիտն
ասում եմ ձեզ, թէ Ձեզանից
մէկը կ'մատնէ ինձ։ Աշակերտ- 22
ներն էլ իրար մտիկ էին տալիս
տարակուսած, թէ ո՞ւմ համար
է ասում։ Եւ նորա աշակերտ- 23
ներից մէկը Յիսուսի գոգին
նստած էր, որին Յիսուսը
սիրում էր։ Սիմոն Պետրոսը 24
նորան ակնարկեց հարցնել՝ թէ
նա ո՞վ է, որի համար ասում
է։ Եւ նա Յիսուսի լանջքովն 25
ընկած, ասաց նորան. Տէր, ո՞վ
է։ Յիսուսը պատասխանեց. 26
Նա է՝ որ ես պատառը թաց
կ'անեմ և նորան կ'տամ. և
պատառը թաց արաւ և տուաւ
Յուդա Սիմոնեան Իսկարիովթա-
ցոյն։ Եւ պատառիցն յետոյ 27
սատանան մտաւ նորա մէջ. և
Յիսուսը նորան ասաց. Ինչ որ
անում ես՝ շուտով արա։ Եւ 28
այս բանը սեղան նստողներից
ոչ ոք չիմացաւ, թէ ինչ պատ-
ճառով ասաց նորան։ Վասնզի 29

պիտոյ իցէ մեզ ի տօնիս. և կամ՝
30 զի աղքատաց ինչ տացէ։ Իսկ
նորա առեալ զպատառն՝ եկ
արտաքս վաղվաղակի. և էր
գիշեր։

31 Եւ իրրև եկ, ասէ Յի-
սուս. Այժմ փառաւորեցաւ
Որդի մարդոյ. և Աստուած
32 փառաւորեցաւ ի նմա։ Այլ
եթէ Աստուած փառաւորեցաւ ի
նմա, և Աստուած փառաւորեսցէ
զնա յանձն իւր. և վաղվաղակի
33 փառաւորեսցէ զնա։ Որդեակք
իմ՝ փոքր ինչ ժամանակ ընդ
ձեզ եմ. խնդրիցէք զիս. և
որպէս ասացի ցՀրէայսն, եթէ
Ուր եան երթամ, դուք ո՛չ կարէք
34 գալ. և արդ ձեզ ասեմ։ Պա-
տուիրան նոր տամ ձեզ, զի
սիրիցէք զմիմեանս. որպէս սի-
րեցի ես զձեզ, զի և դուք
35 սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ
գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ
աշակերտք էր, եթէ սիրիցէք
36 զմիմեանս։ Ասէ ցնա Սիմովն
Պետրոս. Տէր՝ յո՞վ երթաս.
պատասխանի ետ Յիսուս, Ուր
եան երթամ՝ դու ո՛չ կարես
այժմ գալ զկնի իմ, բայց ապա
37 եկեսցես զկնի իմ։ Ասէ ցնա
Պետրոս. Տէր՝ ընդէ՞ր ոչ կարիցեմ
գալ այժմ զկնի քո. արդէն
զանձն իմ իսկ եղից ի վերայ
38 քո։ Պատասխանի ետ Յիսուս.
Զանձն քո դիցես ի վերայ իմ.
ոմանք կարծում էին, թէ որով-
հետև Յուդան քսակն ունէր,
Յիսուսը նորան ասաց, Ինչ առ՝
ինչ որ այս տօնին պէտք է մեզ.
կամ թէ՝ աղքատներին բան
տայ։ Եւ նա երբոր պատառն 30
առաւ, շուտով դուրս գնաց. և
գիշեր էր։

Եւ երբոր դուրս գնաց, Յի- 31
սուսը ասաց. Հիմա Որդին
մարդոյ փառաւորուեցաւ. և
Աստուած նորանում փառաւո-
րուեցաւ։ Եթէ Աստուած նո- 32
րանում փառաւորուեցաւ, Աս-
տուած էլ նորան կ'փառաւորէ
իր անձումը. և շուտով կըփա-
ռաւորէ նորան։ Որդեակք, տա- 33
կաւին մի քիչ ժամանակ էլ
ձեզ հետ եմ. ինձ կ'որոնէք, և
ինչպէս Հրէաներին ասացի, թէ
Որտեղ որ ես եմ գնում, դուք
չէք կարող գալ. և հիմա էլ
ձեզ եմ ասում։ Նոր պատ- 34
ուիրանք եմ տալիս ձեզ, որ
իրար սիրէք. ինչպէս ես ձեզ
սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք։
Սորանով կ'գիտենան ամենքը 35
թէ իմ աշակերտներն էք, եթէ
իրար վերայ սէր ունենաք։
Սիմոն Պետրոս նորան ասաց. 36
Տէր, ո՞ւր ես գնում. Յիսուսը
պատասխանեց նորան. Որ տեղ
որ գնում եմ, դու հիմա չես
կարող իմ ետևից գալ. բայց
յետոյ իմ ետևից կ'գաս։ Պետ- 37
րոսը նորան ասաց. Տէր, ինչո՞ւ
չեմ կարող հիմա քո ետևից
գալ. իմ անձը քեզ համար

ամէն ամէն ասեմ քեզ. ԶԼ՛ իցէ հաւու խօսեալ, մինչ դու երիցս ուրասցիս զիս։

ԳԼ. ԺԴ

1 Մի՛ խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատացէք յԱստուած, 2 և յիս հաւատացէք։ Ի տան Հօր իմոյ օթեւանք բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, թէ Երթամ պատրաստեմ 3 ձեզ տեղի։ Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ և առնում զձեզ առ իս. զի ուր եմն իցեմ, և դուք 4 անդ իցէք։ Եւ ուր երթամն՝ գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք։

5 Ասէ ցնա Թովմաս. Տէր՝ ոչ գիտեմք յո՞ երթաս, և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գի- 6 տել։ Ասէ ցնա Յիսուս, Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք. ոչո՛ւք գայ առ 7 Հայր՝ եթէ ոչ ինձ։ Եթէ զիս գիտէիք՝ ապա և զՀայրն իմ գիտէիք, և այսուհետև գիտասջիք զնա։

8 Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր՝ ցո՛ց մեզ զՀայր՝ և շատ է մեզ։ 9 Ասէ ցնա Յիսուս. Այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, և ո՞չ կ՚գնեմ։ Յիսուսը պատասխա- 38 նեց Նորան. Քո անձը՞ կ՚գնես ինձ համար. ճշմարիտն ճշմարիտն ասում եմ քեզ, որ հաւը դեռ չի խօսիլ, որ դու երեք անգամ կ՚ուրանաս ինձ։

ԳԼ. ԺԴ

Ձեր սրտերը թող չխռովին. 1 Աստուծոյն հաւատացէք, և ինձ հաւատացէք։ Իմ Հօր տանը 2 շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզ կ՚ասէի. գնում եմ ձեզ հասար տեղ պատրաստելու։ Եւ եթէ գնամ և ձեզ 3 համար տեղ պատրաստեմ, դարձեալ կ՚գամ և ձեզ ինձ մօտ կառնեմ. որ ուր ես եմ, դուք էլ լինիք։ Եւ որ տեղ որ ես 4 գնում եմ՝ գիտէք, և ճանապարհը գիտէք։

Թովմասը Նորան ասաց. Տէր, 5 չենք գիտում որ տեղ ես գնում. և ի՞նչպէս կարող ենք ճանապարհը գիտենալ։ Յիսուսը 6 Նորան ասաց. Ես եմ ճանապարհը և ճշմարտութիւնը և կեանքը. ոչ ով չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով։ Եթէ 7 ինձ գիտենայիք, իմ Հօրն էլ կ՚գիտենայիք. և սորանից յետոյ կ՚գիտենաք Նորան և տեսաք Նորան։

Փիլիպպոսը Նորան ասաց. 8 Տէր, Հայրը ցոյց տուր մեզ, և բաւական է մեզ։ Յիսուսը Նո- 9 րան ասաց. Այսքան ժամանակ

ծանեար զիս Փիլիպպէ. որ ետեսն զիս՝ ետես զՀայրն. և դու զի՞արդ ասես՝ եթէ ցո՛ց մեզ 10 զՀայր։ Ո՞չ հաւատաս՝ եթէ ես ի Հայր, և Հայր յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ, ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն՝ որ յիս բնակեալ է, 11 նա գործէ զգործսն։ Հաւատացէք ինձ, եթէ ես ի Հայր՝ և Հայր 12 յիս է։ Այլապէս թէ ո՛չ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ. Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ Որ հաւատայն յիս, զգործսն զոր ես գործեմ՝ և նա գործեսցէ, և մեծամեծս ևս քան զնոսս գործեսցէ. զի ես առ 13 Հայր երթամ։ Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարիցց զայն. զի փառաւորեսցի Հայր 14 Որդի։ Եթէ զոր ինչ խնդրիցէք* յինէն՝ արարիցց զայն։

15 Եթէ սիրէք զիս զպատուի- 16 րանս իմ պահեսջիք։ Եւ ես աղաչեցից զՀայր, և այլ Խիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւի- 17 տեան. զՀոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ո՛չ կարէ ընդունել. զի ո՛չ տեսանէ զնա, և ո՛չ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ

* Ի Յոյն, յանուն իմ

ձեզ հետ եմ, և ինձ չճանաչեցի՞ր, Փիլիպպոս. ինձ տեսնողը Հօրը տեսաւ. և դու ի՞նչպէս ես ասում. Հայրը ցոյց տուր մեզ։ Չհա՞ս հաւատում, որ 10 ես Հօր մէջ եմ, և Հայրն ինձանում է, այն բանն՝ որ ես խօսում եմ ձեզ հետ, իմ անձիցը չեմ խօսում. բայց Հայրն՝ որ ինձանում բնակած է, նա է գործում գործքերը։ Հաւա- 11 տացէք ինձ, որ ես Հօր մէջ եմ, և Հայրն ինձանում է։ Այլապէս 12 թէ ոչ, իսկ այն գործքերի համար հաւատացէք ինձ. ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ, Ով ինձ հաւատացողը այն գործքերն որ ես գործում եմ, նա էլ կ՚գործէ, և նորանից էլ աւելի մեծ բաներ կ՚գործէ. վասնզի ես իմ Հօր մօտ եմ գնում։ Եւ 13 ինչ որ էլ խնդրէք իմ անունովը, այն կ՚անեմ, որ Հայրը փառաւորուի Որդումը։ Եթէ իմ 14 անունովը մի բան խնդրէք, ես կ՚անեմ։

Եթէ ինձ սիրում էք, իմ 15 պատուիրանքները պահեցէք։ Եւ ես Հօրը կ՚աղաչեմ, և 16 ուրիշ Խիթարիչ կ՚տայ ձեզ, որ միայ ձեզ հետ յաւիտեան։ Ճշմարտութեան Հոգին, որին 17 աշխարհքս կարող չէ ընդունել. վասնզի չէ տեսնում նորան, և ոչ ճանաչում նորան. բայց դուք նորան ճանա-

ընակեսցէ՝ և ընդ ձեզ եղիցի։
18 Ո՛չ թողից զձեզ որբս. գամ
19 առ ձեզ։ Փոքր միւս ևս՝ և աշխարհս ո՛չ ևս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք կեն-
20 դանի լինելոց էք։ Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես 'ի Հօր իմում՝ և դուք յիս՝ և
21 ես 'ի ձեզ։ Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի 'ի Հօրէ իմմէ. և ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս։

22 Ասէ ցնա Յուդա՝ ո՛չ Ակարիովտացին. Տէր՝ զի՞ եղև՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ և ո՛չ
23 աշխարհի։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք, և օթևանս
24 առ նմա արասցուք. Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ո՛չ պահէ. և բանն իմ զոր լսէք՝ ո՛չ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս։
25 Այս խօսեցայ ընդ ձեզ՝
26 մինչ առ ձեզս եմ։ Իսկ Մխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ զամենայն՝ որ ինչ
27 ասացի ձեզ։ Խաղաղութիւն թողում՝ ձեզ, զխաղաղութիւն զիմ՝ տամ ձեզ. ո՛չ որպէս
չուտ էք, վասնզի ձեզ մատ է մնում և ձեզ հետ կ'լինի։ Զձեզ
18 որբ չեմ թողիլ. կ'գամ ձեզ
19 մատ։ Մի փոքր ժամանակ էլ, և աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ, բայց դուք կ'տեսնէք ինձ. վասն զի ես կենդանի եմ, և դուք
20 կենդանի կ'լինիք։ Յն օրը դուք կ'ճանաչէք, որ ես իմ Հօր մէջ եմ, և դուք ինձանում,
21 և ես ձեզանում։ Ով որ իմ պատուիրանքներն ունի և նորանց պահում է, նա է ինձ սիրողը. և ինձ սիրողը իմ Հօրիցը կ'սիրուի. և ես կ'սիրեմ նորան, և ինձ կ'յայտնեմ նորան։

Ասաց նորան Յուդան՝ ոչ թէ
22 Իսկարիոտացին. Տէր, ի՞նչ է, որ մեզ կ'յայտնես քեզ՝ և աշ-
23 խարհքին ոչ։ Յիսուսը պատասխանեց և նորան ասաց. Եթէ մէկն ինձ սիրում է, իմ խօսքը կ'պահէ և իմ Հայրը կ'սիրէ նորան. և նորա մատը կ'գանք և բնակութիւն կ'անենք
24 նորա մատ։ Ինձ չ'սիրողը իմ խօսքերը չէ պահում. և այն խօսքը որ լսում էք՝ իմն չէ, այլ ինձ ուղարկող Հօրը։
25 Այս խօսեցի ձեզ հետ՝ քանի
26 որ ձեզ մատ եմ։ Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կ'ուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կ'սովորեցնէ ձեզ, և կ'յիշեցնէ ձեզ ամեն ինչ
27 որ ձեզ ասացի։ Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ

աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի խռովեսցին սիրտք ձեր, և մի
28 զանգիտեսցին։ Լուայք, զի ասացի ես ձեզ՝ թէ Երթամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ թէ ես առ Հայր երթամ, զի
29 Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմ ասացի ձեզ մինչև եղեալ. զի յորժամ լինիցի՝
30 հաւատասջիք։ Ո՛չ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այսորիկ՝ և
31 յիս ինչ ո՛չ գտանէ։ Այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՀայր. և որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ. օ՛ն արի՛ք՝ գնասցո՛ւք ասսի։

ԳԼ. ԺԵ

1 Եւ եմ որթն ճշմարիտ, և
2 Հայր իմ մշակ է։ Ամենայն ուռ որ յիս է՝ և ո՛չ բերէ պտուղ՝ կտրէ զնա. և ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առաւել ևս պտղաբեր լիցի։
3 Դուք արդէն իսկ սուրբք էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ
4 ձեզ։ Կացէ՛ք յիս՝ և ես 'ի ձեզ. որպէս ուռն ո՛չ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝ եթէ ո՛չ յիս
5 հաստատեալ իցէք։ Ես եմ որթ՝ և դուք ուռ. որ հաստա-

ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չ'խռովի և չ'վախենայ։ Լսեցիք, որ ես ասացի ձեզ, Ես
28 Գնում եմ, և կ'գամ ձեզ մատ. եթէ ինձ սիրէիք, ապա ուրախ կ'լինէիք՝ որ ասացի, Հօր մատ եմ գնում. վասնզի իմ Հայրը մեծ է ինձանից։
29 Եւ հիմա ասացի ձեզ՝ լինելուց առաջ. որ երբոր լինի, հաւատաք։ Այլևս շատ չեմ խօսիլ
30 ձեզ հետ, վասնզի այս աշխարհքի իշխանը գալիս է, և ինձանում
31 ոչինչ չունի։ Այլ որպէս զի աշխարհքը գիտենայ, թէ ես սիրում եմ Հօրը. և ինչպէս Հայրը պատուիրեց ինձ, այնպէս եմ անում. վեր կացէք, գնանք այս տեղից։

ԳԼ. ԺԵ

1 Ես եմ ճշմարիտ որթը, և իմ
2 Հայրը մշակն է։ Ամեն ճիւղ, որ ինձանում է և պտուղ չէ բերում, նորան կտրում է. և ամեն պտուղ բերողին մաքրում է, որ էլ աւելի պտղաբեր լինի։
3 Դուք արդէն մաքուր էք այն
4 խօսքի համար, որ ձեզ հետ խօսեցի։ Կացէք ինձանում՝ և ես ձեզանում. ինչպէս որ ճիւղն իր անձինը կարող չէ պտուղ բերել, եթէ որթումն չ'մնայ. այսպէս ոչ էլ դուք՝ եթէ ինձանում չ'մնաք։ Ես որթն եմ՝
5 և դուք ճիւղերը. նա՝ որ ինձա-

տեալ է յիս՝ և ես ի նա, նա
բերէ պտուղ յոյժ. զի առանց
6 իմ ոչինչ կարէք առնել։ Եթէ
ոք ոչ է հաստատեալ յիս, եկ
նա արտաքս իբրև զուռն՝ և
ցամաքեցաւ, և ժողովին զնա,
և ի հուր արկանեն՝ և այրի։
7 Եթէ կայցէք յիս՝ և բանք իմ
ի ձեզ կայցեն, որ ինչ կամիցիք
խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ։
8 Յայսմիկ փառաւորեցաւ Հայր
իմ, զի պտուղ յոյժ բերիցէք.
և եղիջիք իմ աշակերտք։

9 Որպէս սիրեաց զիս Հայր, և
ես սիրեցի զձեզ. հաստատուն
10 կացէք ի սէր իմ։ Եթէ
պահիցէք զպատուիրանս իմ,
կացջիք ի սէր իմ. որպէս ես
զպատուիրանս Հօր իմոյ պա-
հեցի, և կամ ի սէր նորա։
11 Այս խօսեցայ ընդ ձեզ, զի
ուրախութիւնն իմ ի ձեզ լիցէ,
և ձեր ուրախութիւն լցեալ
12 եղիցի։ Այս է պատուէր իմ,
զի սիրեսջիք զմիմեանս, որպէս
13 և ես զձեզ սիրեցի։ Մեծ ևս
քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ
զանձն իւր դիցէ ի վերայ
14 բարեկամաց իւրոց։ Դուք բա-
րեկամք էք իմ, եթէ առնիցէք՝
զոր ես պատուիրեմ ձեզ։
15 Ո՛չ ևս կոչեմ զձեզ ծառայս,
զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ
տէրն նորա. այլ զձեզ կոչեցի
բարեկամս, զի զամենայն, զոր
նում է մնում, և ես նորանում,
նա շատ պտուղ է բերում. որով-
հետև առանց ինձ չէք կարող
ոչինչ անել։ Եթէ մէկն ինձա-
նում չէ մնում, նա դուրս
կ'գցուի ինչպէս ճիւղը, և
կ'չորանայ. և ժողովում են
նորանց և կրակի մէջ գցում,
և այրվում է։ Եթէ կենաք
ինձանում՝ և իմ խօսքերը ձե-
զանում կենան, ինչ որ էլ կա-
մենաք, կ'խնդրէք, և կ'լինի
ձեզ։ Որանով փառաւորուեցաւ
իմ Հայրը, որ շատ պտուղ
բերէք. և իմ աշակերտները
լինիք։

Ինչպէս իմ Հայրն ինձ սիրեց,
ես էլ ձեզ սիրեցի. կացէք իմ
սիրոյ մէջ։ Եթէ իմ պատուի-
րանքները պահէք, իմ սիրոյ
մէջը կ'կենաք. ինչպէս ես իմ
Հօր պատուիրանքները պա-
հեցի, և կենում եմ նորա
սիրոյ մէջ։ Այս խօսեցի ձեզ
հետ, որ իմ ուրախութիւնը
ձեզանում մնայ, և ձեր ուրա-
խութիւնը լցուած լինի։ Սա է
իմ պատուիրանքը, որ իրար
սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի։
Ոչ ով նորանից աւելի մեծ սէր
չունի, որ մէկն իր անձը դնէ իր
բարեկամների համար։ Դուք
իմ բարեկամներն էք, եթէ
անէք ինչ որ ես պատուիրում
եմ ձեզ։ Այլ ևս ծառայ չեմ
ասում ձեզ, վասնզի ծառան
չէ գիտում, թէ իր տէրն ինչ է
գործում. բայց ձեզ բարեկամ

լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի
16 ձեզ։ Ո՛չ եթէ դուք ընտ-
րեցիք զիս, այլ ես ընտրեցի
զձեզ, և եդի զձեզ՝ զի դուք
երթայցէք և պտղաբերիք լինի-
ցիք. և պտուղն ձեր կացցէ. և
զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ
իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։
17 Այս պատուիրեմ, զի սիրես-
ջիք զմիմեանս։

18 Եթէ աշխարհ զձեզ ատեայ.
գիտասջիք զի նախ զիս ատեաց։
19 Եթէ յաշխարհէ աստի էիք՝
աշխարհ զուրսն սիրէր արդեօք.
բայց զի չէք յաշխարհէ. այլ
ես ընտրեցի զձեզ յաշխարհէ,
վասն այնորիկ ատեայ զձեզ
20 աշխարհ։ Յիշեցէք զբանն զոր
ասացի ձեզ. թէ Ո՛չ է ծառայ
մեծ քան զտէր իւր. եթէ զիս
հալածեցին, ապա և զձեզ հա-
լածեսցեն. եթէ զբանն իմ
պահեցին, ապա և զձերն պա-
21 հեսցեն։ Այլ զնոցնս արասցեն
ընդ ձեզ վասն անուան իմոյ.
զի ոչ գիտեն զայն՝ որ առա-
22 քեացն զիս։ Իմ եթէ չէր
եկեալ՝ և խօսեցեալ ընդ նոսա,
մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց
արդ չի՛ք պատճառք վասն մեղաց
23 իւրեանց։ Որ զիս ատեայ, և
24 զՀայրն իմ ատեայ։ Եթէ
զգործսն չէր գործեալ ի նոսա,
զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ
ինչ ոչ գոյր նոցա, բայց արդ
տեսին և ատեցին և զիս և
25 զՀայր իմ։ Այլ զի լցցի բանն,
որ յօրէնս նոցա գրեալ է,
ասացի, վասնզի ամէն ինչ որ
լսեցի իմ Հօրիցն, իմացրի ձեզ։
16 Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք.
այլ ես ընտրեցի ձեզ, և ձեզ
դրի, որ դուք գնաք և պտուղ
բերէք. և ձեր պտուղը մնայ.
որպէս զի ինչ որ իմ Հօրիցը
խնդրէք իմ անունովը, տայ
17 ձեզ։ Սա եմ պատուիրում
ձեզ, որ իրար սիրէք։

18 Եթէ աշխարհքը ձեզ ա-
տում է, գիտացէք, որ ինձ ձե-
զանից առաջ է ատել։ Եթէ
19 այս աշխարհքիցը լինէիք, ապա
աշխարհքն իրանը կ'սիրէր.
բայց որովհետև աշխարհքիցը
չէք. այլ ես ձեզ ընտրեցի աշ-
խարհքից, նորա համար աշ-
20 խարհքն ատում է ձեզ։ Յիշե-
ցէք այն խօսքն, որ ես ասացի
ձեզ. Ըէ ծառան իր Տիրոջից
մեծ չէ. եթէ ինձ հալածեցին,
ձեզ էլ կ'հալածեն. եթէ իմ
խօսքը պահեցին՝ ձերն էլ կըպա-
21 հեն։ Բայց այս ամենը կ'անեն
ձեզ իմ անունի համար. քանզի
չ'ճանաչեցին ինձ ուղարկողին։
22 Եթէ ես չէի եկել և նորանց
հետ խօսացել, նորանք մեղք
չէին ունենալ բայց հիմա պատ-
23 ճառ չունին իրանց մեղաց հա-
մար։ Ինձ ատողն իմ Հօրն
24 էլ է ատում։ Եթէ այն գործ-
քերը չէի գործել նորանց մի-
ջումն, որ մէկ ուրիշը չ'գործեց,
մեղք չէին ունենալ. բայց հիմա
տեսան էլ, և ատեցին ինձ էլ և
25 իմ Հօրն էլ։ Այլ որպէս զի

թէ Աստեղին զիս տարապար-
26 տուց։ Բայց յորժամ եկեսցէ Մխիթարիչն զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ զՀոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ.
27 Եւ դուք վկայէք՝ զի ի սկզբանէ ընդ իս էք։

ԳԼ. ԺԸ.

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի
2 գայթակղիսջիք։ Ի ժողովարանաց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, համարիցի պաշտօն մատուցանել
3 Աստուծոյ։ Եւ զայն արասցեն ընդ ձեզ. քանզի ոչ ծանեան
4 զՀայր՝ և ոչ զիս։ Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշիցէք՝ թէ ես ասացի ձեզ։

5 Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի։ Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ. և ոչինչ ի ձէնջ հարցանէ զիս,
6 թէ Յո՞ երթաս։ Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմութիւն
7 ելից զսիրտս ձեր։ Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ Մխիթարիչն

այն խօսքը կատարուի, որ նոցանց օրէնքումը գրուած է, թէ, Օրուր տեղն ատեցին ինձ։
Բայց երբոր Մխիթարիչը կը- 26
գայ, ես Հօրիցը կ'ուղարկեմ ձեզ, ճշմարտութեան Հոգին, որ Հօրիցն է դուրս գալիս, նա կ'վկայէ ինձ համար։ Եւ դուք 27
էլ կ'վկայէք, վասնզի սկզբիցն ինձ հետ էք։

ԳԼ. ԺԸ.

Այս խօսեցի ձեզ հետ, որ 1
չ'գայթակղիք։ Իրանց ժողո- 2
վարաններիցը ձեզ դուրս կը հանեն. բայց ժամանակ կ'գայ՝ որ ամեն ով որ սպանէ ձեզ, կը կարծէ, թէ Աստուծոյ պաշտօն է մատուցանում։ Եւ սա կ'անեն 3
ձեզ. որովհետև ոչ Հօրը ճանաչեցին և ոչ ինձ։ Բայց 4
այս էլ խօսեցի ձեզ հետ, որ երբոր ժամանակը գայ, սորանք յիշէք, թէ ես ասացի ձեզ։ Բայց այս բաներն սկզբից չ'ասացի ձեզ. քանզի ես ձեզ հետ էի։

Բայց հիմա ինձ ուղարկողի 5
մօտ եմ գնում. և ձեզանից ոչ մէկը չէ հարցնում ինձ, Ո՞ւր ես գնում։ Այլ որովհետև 6
այս բաները խօսեցի ձեզ հետ, տրտմութիւնը լցրեց ձեր սիրտը։ Բայց ես ճշմարտութիւնն 7
եմ ասում ձեզ, Ահա լաւ է ձեզ համար, որ ես գնամ. վասնզի եթէ չ'գնամ, Մխիթարիչը

ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ
երթամ, առաքեցից զնա առ
8 ձեզ։ Եւ նա եկեալ՝ յանդիմանեսցէ զաշխարհս վասն մեղաց՝
և վասն արդարութեան՝ և վասն
9 դատաստանի։ Վասն մեղաց՝ զի
10 ոչ հաւատան յիս. Վասն արդարութեան՝ զի առ Հայր
իմ երթամ, և ոչ ևս տեսանէք
11 զիս. Վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դա-
12 տապարտեալ է։ Եւս բազում
ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ
կարէք հանդարտել այժմիկ։
13 Յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի ոչ եթէ յանձնէ
ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ՝
խօսիցի, և զգալոցն պատմեսցէ
14 ձեզ։ Նա զիս փառաւորեսցէ,
զի յիմմէ առնի առնուցու՝ և
15 պատմեսցէ ձեզ։ Զամենայն
ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն
այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ առնի առնուցու՝ և պատ-
մեսցէ ձեզ։

16 Փոքր մի, և ոչ ևս տեսանէք
զիս, և ապա սակաւիկ մի՝ և
տեսանիցէք զիս. և ես երթամ
առ Հայր։
17 Ասէին ոմանք յաշակերտաց
անտի ցմիմեանս. Զի՞նչ է այս՝
զոր ասէ ցմեզ, թէ փոքր մի՝ և
ոչ տեսանէք զիս, և դարձեալ
սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս.
և թէ ես առ Հայր երթամ։

չէ գալ ձեզ մօտ. բայց եթէ
գնամ, նորան կ'ուղարկեմ ձեզ
մօտ։ Եւ նա՝ երբոր գայ 8
աշխարհքին կ'յանդիմանէ մեղաց համար, և արդարութեան համար, և դատաստանի համար։
Մեղաց համար, որովհետև ինձ 9
չեն հաւատում. Արդարու- 10
թեան համար, որովհետև ես
իմ Հօր մօտ եմ գնում, և ինձ
այլ ևս չէք տեսնիլ։ Եւ Դա- 11
տաստանի համար, որովհետև
այս աշխարհքի իշխանը դատապարտուած է։ Ցակաւին շատ 12
բան ունիմ ձեզ ասելու, բայց
հիմա չէք կարող տանիլ։ Բայց 13
երբոր նա՝ ճշմարտութեան
Հոգին կ'գայ, նա կ'առաջնորդէ
ձեզ ամեն ճշմարտութեան մէջ.
վասնզի իր անձիցը չի խօսիլ,
այլ ինչ որ կ'լսէ՝ կ'խօսի, և
գալու բաները կ'պատմէ ձեզ։
Նա ինձ կ'փառաւորէ, վասնզի 14
իմիցը կ'առնէ և կ'պատմէ ձեզ։
Ամեն ինչ որ Հայրն ունի՝ իմն 15
է. նորա համար ասացի ձեզ,
թէ իմիցը կ'առնէ և կ'պատմէ
ձեզ։
Մի քիչ ժամանակ էլ, և չէք 16
տեսնիլ ինձ. և դարձեալ մի
քիչ, և կ'տեսնէք ինձ. որովհետև
ես Հօր մօտ եմ գնում։
Նորա աշակերտներից ոմանք 17
իրար ասում էին. Սա ի՞նչ է,
որ ասում է մեզ. Մի քիչ
ժամանակ՝ և չէք տեսնիլ ինձ, և
դարձեալ մի քիչ, և կ'տեսնէք
ինձ. և, թէ Ես Հօր մօտ եմ

18 Եւ ասէին, Օ՞րինչ իցէ այն փոքր միւս ևն. չգիտեմք զինչ
19 խօսի։ Գիտաց Յիսուս եթէ կամէին ցնա հարցանել, և ասէ
ցնոսա. Ո՞ այն այդորիկ խնդրէք ընդ միմեանս՝ զի ասացի թէ
փոքր մի՝ և ո՛չ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ միւս ևս,
20 և տեսանիցէք զիս։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ողբաս-
ջիք դուք, և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմու-
թիւնն ձեր յուրախութիւն
21 եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հաս-
եալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ո՛չ ևս յիշէ
զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշ-
22 խարհ։ Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ
տեսից զձեզ, և ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութիւնն
23 ձեր ոչ՝ք հանիցէ ՚ի ձէնջ։ Եւ յայնմ աւուր զիս ինչ ո՛չ հար-
ցանիցէք։ Ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր ինչ խնդրիցէք ՚ի
Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ
24 ձեզ։ Մինչև ցայժմ ոչինչ խնդրեցիք յանուն իմ. խնդրե-
ցէք, և առնուցուք. զի ուրա-
խութիւնն ձեր լցեալ իցէ։
25 Այս առակօք խօսեցայ ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յոր-
ժամ ո՛չ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս
26 զՀօրէ պատմեցից ձեզ։ Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ.

գնում։ Եւ ասում էին. Ի՞նչ 18
է այն որ ասում է՝ Փոքր ժա-
մանակ. չենք գիտում, թէ ինչ
է խօսում։ Եւ Յիսուսը իմա- 19
ցաւ, որ ուզում էին հարցնել
իրան, և ասաց նորանց. Որո՞
համար էք հարցնում իրար, որ
ասացի, Քէ Ա՛ի քիչ ժամանակ,
և չէք տեսնիլ ինձ, և դարձեալ
մի քիչ, և կ՚տեսնէք ինձ։
Ճշմարիտն ճշմարիտն ասում 20
եմ՝ ձեզ. որ դուք լաց կ՚լինիք և
կ՚ողբաք և աշխարհքը կ՚ուրա-
խանայ. դուք կ՚տրտմիք, այլ
ձեր տրտմութիւնն ուրախու-
թիւն կ՚լինի։ Կինն, երբոր 21
ծնում է, տրտմութիւն ունի,
վասնզի նորա ժամանակն հասել
է, բայց երբոր երեխան ծնեց,
նեղութիւնն էլ չէ յիշում
այն ուրախութեան համար, որ
մի մարդ ծնուեցաւ աշխարհքի
մէջ։ Եւ դուք էլ հիմա տրտմու- 22
թիւն ունիք, բայց դարձեալ
կ՚տեսնեմ ձեզ, և ձեր սիրտը
կ՚ուրախանայ. և ձեր ուրա-
խութիւնը ոչ ոք չի առնիլ ձե-
զանից։ Եւ այն օրը ոչինչ չէք 23
հարցնիլ ինձ. Ճշմարիտն ճշմա-
րիտն ասում եմ ձեզ, թէ ինչ
որ Հօրից խնդրէք իմ անու-
նովը, կ՚տայ ձեզ։ Մինչև 24
հիմա ոչինչ չխնդրեցիք իմ
անունովը. խնդրեցէք և կ՚առ-
նէք, որ ձեր ուրախութիւնը
կատարեալ լինի։ Այս բաներն 25
առակով խօսեցի ձեզ հետ.
բայց ժամանակ կ՚գայ, որ էլ

և ո՛չ ասեմ ձեզ՝ եթէ ես
աղաչելոյց զՀայր վասն ձեր.
27 Օ՛ի ինքն իսկ Հայր սիրէ
զձեզ՝ զի դուք զիս սիրեցիք, և
հաւատացիք՝ եթէ ես Այստու-
28 ծոյ ելի։ Ելի ՚ի Հօրէ՝ և եկի
յաշխարհ. դարձեալ թողում
զաշխարհ, և երթամ առ Հայր։

29 Ասեն ցնա աշակերտքն. Ահա
արդ յայտնութեամբ խօսիս. և
առակ և ո՛չ մի ինչ ասես։
30 Այժմիկ գիտեմք՝ եթէ գիտես
զամենայն. ոչինչ պիտոյ է՝ եթէ
ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ
հաւատամք՝ եթէ Այստուծոյ
31 ելեր։ Պատասխանի ետ նոցա
Յիսուս, և ասէ. Այժմ հա-
32 ւատացք։ Ահա եկեսցէ ժամ,
և եկեալ իսկ է, զի ցրուեսջիք
յիւրաքանչիւր տեղիս, և զիս
միայն թողուցուք. և չեմ
միայն, զի Հայր ընդ իս է։

33 Այս խօսեցայ ընդ ձեզ, զի
ընդ իս խաղաղութիւն ունիցիք.
յաշխարհի ասա նեղութիւն
ունիցիք, այլ քաջալերացա-
ցուք, զի ես յաղթեցի աշ-
խարհի։

ԳԼ. ԺԷ.

1 Այս իբրև խօսեցաւ Յի-

առակով չեմ խօսիլ ձեզ հետ.
այլ յայտնապէս կ՚պատմեմ ձեզ
Հօր համար։ Այն օրումն իմ 26
անունովը կ՚խնդրէք. և չեմ
ասում ձեզ, թէ ես ձեզ համար
կ՚աղաչեմ Հօրը։ Քանզի 27
Հայրն ինքն սիրում է ձեզ.
որովհետև դուք ինձ սիրել էք
և հաւատացել էք, թէ ես Այս-
տուածանից դուրս եկայ։ Հօ- 28
րից դուրս եկայ և եկայ աշ-
խարհք. դարձեալ թողում եմ
աշխարհքը և Հօր մօտ գնում։
Աշակերտները նորան ասա- 29
ցին. Ահա հիմա յայտնի ես
խօսում, և ոչ մի առակ չես
ասում։ Հիմա գիտենք, որ դու 30
բոլորը գիտում ես. և պէտք դ
չէ, որ մէկը հարցնէ քեզ. սո-
ւրանով հաւատում ենք, թէ
դու Այստուածանից դուրս եկար։ 31
Յիսուսը պատասխանեց նորանց.
Հիմա հաւատում էք։ Ահա 32
ժամանակ կ՚գայ, և հիմա եկած
է, որ ամէն մէկդ կ՚ցրուիք իր
տեղը, և ինձ մենակ կ՚թողէք.
բայց մենակ չեմ. վասնզի
Հայրն ինձ հետ է։
Այս խօսեցի ձեզ հետ, որ 33
ինձանում խաղաղութիւն ունե-
նաք. աշխարհքումը նեղու-
թիւն կ՚ունենաք. բայց քա-
ջացէք, ես յաղթել եմ աշ-
խարհքին։

ԳԼ. ԺԷ.

Յիսուսը այս խօսեց, և իր 1

սուս, ամրարձ զաչս իւր յեր-
կինս և ասէ. Հայր՝ հասեալ է
ժամ, փառաւորեա զՈրդի քո,
զի և Որդի քո փառաւորեսցէ
2 զքեզ։ Որպէս ետուր նմա
իշխանութիւն ամենայն մար-
մնոյ, զի ամենայնի, զոր ետուր
նմա, տացէ զկեանսն յաւիտե-
3 նականս։ Այս են յաւիտենա-
կան կեանք, զի ծանիցեն զքեզ
միայն ճշմարիտ Աստուած՝ և
զոր առաքեցեր զՅիսուս Քրիս-
4 տոս։ Ես զքեզ փառաւորեցի
յերկրի. զգործն կատարեցի,
զոր ետուր ցիս՝ զի արարից.
5 Եւ այժմ փառաւորեա զիս
Հայր՝ առ ի քէն փառօքն՝ զոր
ունէի յառաջ քան զ լինելն
6 աշխարհի առ ի քէն։ Յայտ-
նեցի զանուն քո մարդկան՝ զորս
ետուր ինձ յաշխարհէ. քո էին,
և ինձ ետուր զնոսա. և զբանն
7 քո պահեցին։ Արդ գիտացին՝
եթէ զամենայն ինչ զոր ետուր
8 ինձ, առ ի քէն են. Զի զբանն՝
զոր ետուր ինձ՝ ետու նոցա. և
նոքա ընկալան, և ծանեան
ճշմարտութեամբ՝ թէ առ ի քէն
ելի. և հաւատացին՝ եթէ դու
9 առաքեցեր զիս։ Արդ ես վասն
նոցա աղաչեմ, և ոչ վասն
աշխարհի աղաչեմ. այլ վասն
նոցա՝ զորս ետուրն ինձ, զի քո
10 են։ Եւ որ ինչ իմ է, ամենայն
քո է. և որ ինչ քո է, այն իմ
է. և փառաւորեալ եմ ի
11 նոսա։ Եւ ես ոչ և՛ս եմ
յաշխարհի, և նոքա յաշխարհի

աչքերը բարձրացրեց դէպի
երկինքն և ասաց. Հայր, ժամը
հասել է, փառաւորիր քո Որ-
դոյդ, որ քո Որդին էլ քեզ փա-
2 ռաւորէ։ Ինչպէս նորան իշխա-
նութիւն տուիր ամեն մարմնոյ
Ֆէրայ որ յաւիտենական կեանք
տայ այն ամենին՝ որ տուիր նո-
3 րան։ Եւ սա է յաւիտենական
կեանքը, որ ճանաչեն քեզ
միայն ճշմարիտ Աստուած. և
4 նորան; որ ուղարկեցիր՝ Յի-
սուսին Քրիստոսին։ Ես քեզ
փառաւորեցի երկրի վերայ.
5 այն գործը կատարեցի, որ տուիր
ինձ՝ որ անեմ։ Եւ հիմա, փա-
ռաւորիր ինձ դու, Հայր, քեզ
մօտ այն փառքովն, որ աշխարհ-
6 քի լինելուցն առաջ ունէի քեզ
մօտ։ Քո անունը յայտնեցի
մարդկանց, որ աշխարհքիցը
տուիր ինձ. քո էին, և ինձ
տուիր նորանց. և քո խօսքը
7 պահեցին։ Հիմա իմացան, որ
ամենն որ ինձ տուիր՝ քեզա-
8 նից է. Որովհետև այն խօսքն՝
որ ինձ տուիր, նորանց տուի. և
նորանք ընդունեցին, և ճշմար-
տութեամբ իմացան, որ քեզա-
նից դուրս եկայ. և հաւատա-
9 ցին, թէ դու ուղարկեցիր ինձ։
Ես նորանց համար եմ աղաչում,
ոչ թէ աշխարհքի համար եմ
աղաչում. այլ նորանց համար՝
որ ինձ տուիր, վասնզի քո էին։
10 Եւ ինչ որ իմս է, բոլորը քո է.
և ինչ որ քո է՝ իմս է. և ես
փառաւորուած եմ նորանցում։

են, և ես առ քեզ գամ. Հայր
Սուրբ՝ պահեա զնոսա յանուն
քո, որով ետուրն ինձ, զի
եղիցին մի, որպէս և մեք մի
12 եմք։ Մինչ էի յաշխարհի ընդ
նոսա, ես պահէի զնոսա յանուն
քո* որով ետուրն ինձ, և
պահեցի. և ոչիւր ի նոցանէ
կորեաւ, բայց որդին կորստեան,
զի գիրն լցցի։

13 Բայց արդ առ քեզ գամ. և
զայս խօսիմ յաշխարհի, զի
ունիցին զուրախութիւնն իմ՝
14 լիով յանձինս իւրեանց։ Ես
ետու նոցա զբանն քո. և
աշխարհս ատեաց զնոսա, զի
չեն յաշխարհէ, որպէս և ես
15 չեմ յաշխարհէ։ Ո՛չ զայս
աղաչեմ, զի բարձցես զնոսա
յաշխարհէ, այլ զի պահեսցես
16 զնոսա ի չարէ։ Յաշխարհէ
աստի չեն, որպէս և ես չեմ
17 յաշխարհէ։ Սուրբ արա զնոսա
ճշմարտութեամբ քով. զի քո
18 բանդ ճշմարտութիւն է։ Որ-
պէս զիս առաքեցեր յաշխարհ.
և ես առաքեցի զնոսա յաշ-
19 խարհ։ Եւ ի վերայ նոցա ես
սուրբ առնեմ զանձն իմ՝, զի
եղիցին և նոքա սրբեալք ճըշ-
20 մարտութեամբ։ Այլ ոչ վասն
նոցա միայն աղաչեմ, այլ և

Եւ ես՝ այլ ևս աշխարհքումն 11
չեմ, իսկ նորանք աշխարհքումն
են, և ես քեզ մօտ եմ գալիս.
ով Հայր Սուրբ, պահիր
նորանց քո անունովը, որոնց
տուիր ինձ. որ մէկ լինին, ինչ-
պէս մենք։ Երբոր աշխարհքումը 12
նորանց հետ էի, ես էի պահում՝
նորանց քո անունովը. նորանց
որ տուիր ինձ, պահեցի. և
նորանցից ոչ մէկը չկորաւ. բայց
միայն կորուստի որդին, որ
գիրը կատարուի։

Բայց հիմա քեզ մօտ եմ 13
գալիս. և այս բանը խօսում եմ
աշխարհքումը, որ իմ ուրախու-
թիւնը կատարեալ ունենան ի-
րանց անձներումը։ Եւ քո 14
խօսքը նորանց տուի, և աշ-
խարհքը նորանց ատեց, քանզի
աշխարհքիցը չեն, ինչպէս ես
էլ աշխարհքիցը չեմ։ Ես չեմ՝ 15
աղաչում, որ աշխարհքիցը վեր
առնես նորանց. այլ որ նորանց
պահես չարիցը։ Այս աշ- 16
խարհքիցը չեն, ինչպէս ես էլ
աշխարհքիցը չեմ։ Նորանց 17
սուրբը արա քո ճշմարտու-
թիւնովը. քո խօսքը ճշմարտու-
թիւն է։ Ինչպէս ինձ ուղար- 18
կեցիր աշխարհք, ես էլ նորանց
ուղարկեցի աշխարհք։ Եւ ես 19
նորանց վերայ իմ անձը սուրբ
եմ անում՝, որ նորանք էլ
ճշմարտութիւնով սրբուած լի-

* Ի Յունն, զորս ետուրն ինձ պահեցի

վասն ամենայն հաւատացելոց
21 բանիւն նոցա յիս. Զի ամե-
նեքին մի լիցին, որպէս դու
Հայր յիս՝ և ես ի քեզ, զի և
նոքա ի մեզ լիցին. զի և աշխարհ
հաւատասցէ՝ եթէ դու առա-
22 քեցեր զիս: Եւ ես՝ զփառսն զոր
ետուր ինձ՝ ետուս նոցա, զի լիցին
23 մի՝ որպէս և մեք մի եմք: Ես
ի նոսա և դու յիս, զի եղիցին
կատարեալք ի մի. և գիտասցէ
աշխարհ՝ եթէ դու առաքա-
ցեր զիս. և սիրեցի զնոսա որպէս
24 դու զիս սիրեցեր: Հայր՝ զորս
ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր ես-
եմ, և նոքա լիցին ընդ իս. զի
տեսանիցեն զփառսն իմ, զոր
ետուրն ցիս. զի սիրեցեր զիս
յառաջ քան զ լինելն աշխարհի:
25 Հայր արդար՝ և աշխարհ զքեզ
ոչ ծանեաւ. այլ ես զքեզ
ծանեայ. և նոքա ծանեան՝ եթէ
26 դու առաքեցեր զիս: Եւ ծա-
նուցի նոցա զանուն քո՝ և
ծանուցից. զի սէրն՝ զոր սիրե-
ցեր զիս ի նոսա լիցէ, և ես ի
նոսա:

ԳԼ. ԺԸ.

1 Զայս իբրև ասաց Յիսուս,
ել աշակերտաւքն հանդերձ յայն-
նին: Բայց ոչ թէ միայն նո-
20 բանց համար եմ աղաչում,
այլ նոքանց համար էլ, որ
նոքանց խօսքովը կ'հաւատան
21 ինձ: Որ ամենքը մէկ լինին,
ինչպէս դու, Հայր, ինձանում,
և ես քեզանում, որ նոքանք էլ
մեզանում մէկ լինին. որ աշ-
խարհքը հաւատայ, թէ դու
22 ուղարկեցիր ինձ: Եւ ես այն
փառքն՝ որ ինձ տուիր՝ նոքանց
տուի, որ մէկ լինին՝ ինչպէս
23 մենք էլ մէկ ենք: Ես նոքան-
ցում՝ և դու ինձանում, որ
կատարեալ լինին միութիւնում,
որպէս զի աշխարհքը գիտենայ,
թէ դու ուղարկեցիր ինձ. և
սիրեցիր նոքանց՝ ինչպէս ինձ
24 սիրեցիր: Հայր, նոքանք որ
ինձ տուիր, կամենում եմ, որ
ինչ տեղ որ ես եմ՝ նոքանք էլ
ինձ հետ լինին. որ իմ՝ փառքը
տեսնեն, որ տուիր ինձ. որով-
հետև աշխարհքի հիմնելուցն
25 առաջ սիրեցիր ինձ: Հայր
արդար. և աշխարհքը չըճա-
նաչեց քեզ, բայց ես ճանաչեցի
քեզ, և նոքանք ճանաչեցին որ
26 դու ուղարկեցիր ինձ: Եւ քո
անունը ճանաչեցրի նոքանց, և
կ'ճանաչեցնեմ. որ այն սէրն,
որով ինձ սիրեցիր՝ նոքանցում
լինի, և ես էլ նոքանցում:

ԳԼ. ԺԹ.

1 Յիսուսը այս ասելուց յետոյ
իր աշակերտների հետ դուրս

կոյս ձորոյն Կեդրոնի, ուր էր
պարտէզ, յոր եմուտ ինքն և
աշակերտաքն իւր:

2 Գիտէր և Յուդա, որ զնա
մատնելոց էր՝ զտեղն, զի բա-
զում անգամ ժողովեալ էր
անդր Յիսուսի աշակերտաւքն
3 հանդերձ: Եւ Յուդայի առեալ
ընդ իւր զգունդն, և ի քահա-
նայապետիցն և ի փարիսեցւոց
սպասաւորս, գայ անդր ջահիւք
4 և լապտերաւք և զինուք. Իսկ
Յիսուս իբրև ետես զայն ամե-
նայն եկեալ ի վերայ նորա, ել
և ասէ ցնոսա. Զո՞ խնդրէք:
5 Պատասխանի ետուն նմա. զՅի-
սուս Նազովրեցի. ասէ ցնոսա
Յիսուս. Ե՛ս եմ. կայր ընդ
նոսա և Յուդա՝ որ մատնէրն
6 զնա: Իբրև ասաց՝ թէ Ես եմ,
յետս յետս չոգան՝ և զարկան
7 զգետնի: Դարձեալ եհարց
զնոսա. Զո՞ խնդրէք՝ և նոքա
ասեն, զՅիսուս Նազովրեցի:
8 Պատասխանի ետ նոցա Յիսուս.
Ասացի ձեզ թէ Ես եմ. արդ՝
եթէ զիս խնդրէք՝ թո՛յլ տուք
9 դոցա երթալ: Զի լցցի բանն՝
զոր ասաց. թէ Զոր ետուրն
ցիս՝ ո՛չ կորուսից ի նոցանէ՝ և
10 ո՛չ զոք: Իսկ Սիմոն Պետրոս՝
քանզի ունէր սուր, ձգեաց զնա՝
եհար զքահանայապետին ծա-
ռայ, և ի բա՛ց առ զունկն նորա
զաջոյ. և էր անուն ծառային
11 Մ՝ալքոս: Ասէ Յիսուս ցՊետ-
րոս. Ա՛րկ զսուրդ անդրէն ի
գնաց Կեդրոնի ձորի միւս
կողմը, որ տեղ մի պարտէզ
կար. որի մէջ մտաւ ինքն և իր
աշակերտները:
Յուդան՝ նորան մատնողն էլ 2
գիտէր այն տեղը. վասնզի Յի-
սուսը շատ անգամ ժողովուել
էր այն տեղ իր աշակերտների
հետ: Եւ Յուդան զինուորներ 3
գունդը և քահանայապետներից
և փարիսեցիներից սպասաւորներ
առնելով եկաւ այն տեղ ջա-
հերով և լապտերներով և զէն-
քերով: Բայց Յիսուսը՝ երբոր 4
տեսաւ այն ամենն, որ իր վերայ
էր գալիս, դուրս եկաւ նորանց
ասաց. Ո՞ւմ էք ուզում: Պա- 5
տասխանեցին նորան. Յիսուս
Նազովրեցոյն. Յիսուսը նորանց
ասաց. Ես եմ. Յուդան՝ նո-
րան մատնողն էլ կանգնած էր
նորանց հետ: Երբոր ասաց 6
նորանց թէ Ես եմ, ետ ետ
գնացին, և գետնի վերայ ընկան:
Եւ դարձեալ հարցրեց նորանց, 7
Ո՞ւմ էք ուզում. և նորանք
ասացին. Յիսուս Նազովրեցոյն:
Յիսուսը պատասխանեց. Ձեզ 8
ասացի թէ Ես եմ. արդ թէ որ
ինձ էք ուզում, թող տուէք
դորանց, որ գնան: Որ կա- 9
տարուի այն խօսքն որ ասաց,
թէ Նորանց որ ինձ տուիր,
նորանցից ոչ մէկն էլ չկորցրի:
Բայց Սիմոն Պետրոսն, որ սուր 10
ունէր, քաշեց նորան և քահա-
նայապետի ծառային զարկեց,
և նորա աջ ականջը կտրեց. և

պատեանս իւր. զբաժակն զոր
ետ ինձ Հայրն՝ ոչ ըմպիցեմ
զնա։

12 Իսկ գունդն և հազարապետն
և սպասաւորքն Հրէից կալան
13 զՅիսուս՝ և կապեցին. Եւ
ածին զնա նախ առ Աննա՝ որ էր
աներ Կայիափայի. որ քահա-
նայապետն էր տարւոյն այնո-
14 րիկ։ Եւ էր այս այն Կայիափա էր՝
որ խրատն ետ Հրէից, եթէ
Լաւ է առն միում մեռանել ի
15 վերայ ժողովրդեանն։ Եւ ետ-
թային զհետ Յիսուսի Սիմովն
Պետրոս՝ և միւս աշակերտն։
Եւ աշակերտն այն քանզի
ծանօթ էր քահանայապետին՝
եմուտ ընդ Յիսուսի ի գաւիթ
16 քահանայապետին։ Եւ Պետրոս
կայր առ դրանն արտաքոյ. եկ
միւս աշակերտն՝ որ էր ծանօթ
քահանայապետին՝ և ասաց
ցդռնապանն՝ և եմոյծ ի ներքս
17 զՊետրոս։ Ասէ աղջիկն որ
դռնապանն էր՝ ցՊետրոս.
Ա՛յիթէ և դո՞ւ յաշակերտաց
առնն այնորիկ իցես. և նա ասէ՝
18 Ո՛չ եմ։ Կային անդ ծառայքն
և սպասաւորքն խարոյկ արկեալ՝
քանզի ցուրտ էր՝ և ջերմանային.
կայր ընդ նոսա և Պետրոս՝ և
19 ջերմնայր։ Եւ քահանայապետն
եհարց զՅիսուս վասն աշա-
կերտացն՝ և վասն վարդապե-
տին։

այն ծառայի անունը Մ՝ազքոս
էր։ Յիսուսն էլ Պետրոսին 11
ասաց. Դուրդ գցիր իր պա-
տեանի մէջ. այն բաժակն որ
իմ Հայրը տուաւ ինձ, ես այն
չիմպիտ։

Եւ զինուորքն գունդը և 12
հազարապետը և Հրէաների
սպասաւորները բռնեցին Յի-
սուսին, և կապեցին նորան. Եւ 13
տարան նորան առաջ Աննայի
մօտ. քանզի Կայիափայի աներն
էր. որ այն տարուայ քահանա-
յապետն էր։ Սա այն Կայիա- 14
փան էր, որ Հրէաներին խրատ
տուաւ, թէ Լաւ է, մէկ մարդ
կորչի ժողովրդի վերայ։ Եւ 15
Սիմոն Պետրոսը և միւս աշա-
կերտը գնում էին Յիսուսի
ետևից։ Այն աշակերտը ճա-
նաչ էր քահանայապետին, և
Յիսուսի հետ մտաւ քահա-
նայապետի սրահը։ Պետրոսն 16
էլ դրան մօտ կանգնած էր
դուրսը. այն միւս աշակերտն,
որ քահանայապետին ճանաչ
էր, դուրս եկաւ և դռնապանին
ասաց, և Պետրոսին ներս
մտցրեց։ Եւ այն աղջիկն՝ 17
որ դռնապան էր՝ Պետրոսին
ասաց. Չէ՞ որ դու էլ այն
մարդու աշակերտներիցն ես.
և նա ասաց, Չեմ։ Ծառաներն 18
ու սպասաւորները էլ կանգնել
էին՝ կրակ արած, վասնզի ցուրտ
էր, և տաքանում էին. Պետրոսն
էլ նորանց հետ կանգնած էր և
տաքանում էր։ Եւ քահա- 19

20 տուԹեան նորա։ Պատասխանի
ետ նմա Յիսուս. Ես յայտնա-
պէս խօսեցայ յաշխարհի. ես
յամենայն ժամ ուսուցի ի
ժողովրդեանն, և ի տաճարի
անդ՝ ուր ամենայն Հրէայք
ժողովեալ էին, և ի ծածուկ
21 ինչ ոչ խօսեցայ։ Զի՞ հարցա-
նես զիս. հարց զայնոսիկ՝ որ
լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ
նոսա. ահաւասիկ նոքա գիտեն
22 զինչ ասացի ես։ Երբև նա
զայն ասաց, մի ոմն ի սպասաւո-
րացն որ անդ կայր, ած ապտակ
Յիսուսի՝ և ասէ. Այդպէս
պատասխանի տաս քահանայա-
23 պետիդ։ Եւ Յիսուս ասէ ցնա.
Եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա
վասն չարին, իսկ եթէ բարի,
24 ընդէ՞ր հարկանես զիս։ Եւ
առաքեաց զնա Աննա կապեալ
առ Կայիափա քահանայապետ։
25 Եւ Սիմոն Պետրոս կայր անդ՝
և ջերմնայր. ասեն ցնա՝ Ա՞յիթէ
և դո՞ւ յաշակերտաց անտի նորա
իցես. նա ուրացաւ և ասէ՝ Թէ
26 Չեմ։ Եւ ասէ մի ոմն ի ծա-
ռայից քահանայապետին՝ ազգա-
կան այնորիկ, զորոյ զունկն
եհատ Պետրոս. Ո՞չ ես իսկ
տեսի զքեզ ի պարտիզն անդ
27 ընդ նմա։ Դարձեալ ուրացաւ
Պետրոս. և վաղվաղակի հաւ
խօսեցաւ։

28 Եւ ածեն զՅիսուս ի վա-

նայապետը Յիսուսին հարցրեց
նորա աշակերտների համար,
և նորա վարդապետութեան
համար։ Յիսուսը պատասխա- 20
նեց նորան. Ես յայտնի խօսեցի
աշխարհքին. ես միշտ ամենայն
ժողովրդեանց, և տաճարում,
որտեղ ամեն տեղից Հրէաները
ժողովվում են, և ծածուկ
ոչինչ չխօսեցի։ Ինչո՞ւ ես ինձ 21
հարցնում. լսողներին հարց-
րու, թէ ինչ խօսեցի նորանց.
ահա նորանք գիտեն, ես ինչ
եմ ասել։ Երբոր նա սա ասաց, 22
սպասաւորներից մէկն, որ այն
տեղ կանգնած էր, Յիսուսին
ապտակ տուաւ և ասաց. Այդ-
պէ՞ս ես պատասխանում քո քա-
հանայապետին։ Յիսուսը նո- 23
րան պատասխանեց. Եթէ չար
խօսեցի, վկայիր այն չարի հա-
մար. բայց եթէ բարի ասացի,
ինչո՞ւ ես զարկում ինձ։ Եւ 24
Աննան նորան կապած ուղարկեց
Կայիափա քահանայապետի մօտ։
Եւ Սիմոն Պետրոսը կանգնած 25
տաքանում էր. նորան ասացին,
Չէ՞ որ դու էլ նորա աշակերտ-
ներիցն ես. նա ուրացաւ և ա-
սաց՝ Չեմ։ Եւ քահանայա- 26
պետի ծառաներից մէկը, որ
ազգական էր նորան, որի ա-
կանջը Պետրոսը կտրեց, ասաց.
Չէ՞ որ ես տեսայ քեզ այն
պարտէզումը նորա հետ։ Եւ 27
Պետրոսը դարձեալ ուրացաւ.
և շուտով հաւը խօսեց։

Եւ Յիսուսին Կայիափայի 28

նացն Կայիափայ յապարանս
դատաւորին. և էր այգուց. և
նոքա ոչ մտին յապարանսն, զի
մի պղծեսցին, այլ զի ուտիցեն
29 զզատիկն: Եւ առ նոսա Պիղա-
տոս արտաքս՝ և ասէ. Զի՞նչ
չարախօսութիւն մատուցա-
30 նէք զարնէն զայնմանէ: Պա-
տասխանի ետուն և ասեն
ցնա. Եթէ չէր չարագործ
այրն այն, ապա ոչ մատնէաք
31 զնա քեզ: Ասէ ցնոսա Պիղա-
տոս. Առէք զնա դուք, և ըստ
ձերոց օրինացն դատեցարուք.
ասեն ցնա Հրէայքն. Մեզ ոչ է
32 արժան սպանանել զոք: Զի
լցցի բանն Յիսուսի զոր ասաց,
նշանակեալ՝ թէ որով մահու
33 մեռանելոց լիցէ: Եմուտ միւս-
անգամ յապարանսն Պիղատոս,
կոչեաց զՅիսուս՝ և ասէ ցնա.
Դո՞ւ ես թագաւորն Հրէից:
34 Պատասխանի ետ Յիսուս. Ի
քէ՞ն ասես զայդ՝ եթէ այլք
35 ասացին քեզ զլինէն: Պատաս-
խանի ետ Պիղատոս. Մի՝թէ և
ես Հրէա՞ լիցեմ. ազգն քո
և քահանայապետք մատնեցին
զքեզ ինձ. զի՞նչ գործ գործեալ
36 է քո: Պատասխանի ետ Յիսուս.
Իմ արքայութիւն չէ յայսմ
աշխարհէ. եթէ յաշխարհէ
աստի էր արքայութիւն իմ,
սպասաւորքն իմ մարտնէին
արդեօք՝ զի մի մատնեցայց
Հրէից. բայց արդ՝ թագաւո-
37 րութիւնն իմ չէ աստի: Ասէ
ցնա Պիղատոս. Ապա թէ
թագաւոր ես դու՞. Պատասխանի ետ Յիսուս.
Դու ասես՝ թէ թագաւոր լիցեմ.
Ես յայդ իսկ ծնեալ եմ, և
ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհս,
զի վկայեցից ճշմարտութեանն.
ամենայն որ ի ճշմարտութենէ
38 է՝ լսէ բարբառոյ իմոյ: Ասէ
ցնա Պիղատոս. Զի՞նչ է
ճշմարտութիւն. զայս իբրև
ասաց, դարձեալ ել առ Հրէա-
յսն՝ և ասէ ցնոսա. Ես՝ և ոչ
մի ինչ պատճառս գտանեմ ի
39 նմա: Բայց է ձեր սովորու-
թիւն, զի զմի ոք արձակեցից
ձեզ ի զատկիս. արդ կամիք՝ զի
40 արձակեցից ձեզ զթագաւորն
Հրէից: Աղաղակեցին ամենե-
քեան՝ և ասէին. Մի՛ զդա,
այլ զԲարաբբա. և էր Բա-
բաբբայն այն աւազակ:

ԳԼ. ԺԹ

1 Յայնժամ առ Պիղատոս
2 զՅիսուս՝ և գան եհար: Եւ
զինուորացն արարեալ պսակ ի
փշոց՝ եդին ի գլուխս նորա, և
զգեցուցին նմա հանդերձ ծի-
3 րանի. Եւ գային առ նա, և
ասէին, Ո՛ղջ եր արքայ Հրէից.
4 և հանէին նմա ապտակս: Եւ
դարձեալ Պիղատոս արտաքս և
ասէ ցնոսա. Ահա ածեմ զնա
արտաքս առ ձեզ, զի գիտասջիք
էէ: Պիղատոսն էլ ասաց նորան. 37
Ապա ուրեմն դու թագաւոր
ես. պատասխանեց Յիսուսը.
Դու ես ասում որ ես թա-
գաւոր եմ. ես դորա համար եմ
ծնուել և եկել աշխարհք, որ
ճշմարտութեանը վկայեմ. ա-
մեն ով որ ճշմարտութիւնից է՝
իմ ձայնին լսում է: Պիղատոսը 38
նորան ասաց. Ի՞նչ է ճշմար-
տութիւնը: Եւ սա ասելով
դարձեալ դուրս գնաց Հրէաների
մօտ և նորանց ասաց. Ես ոչ մի
յանցանք չեմ գտնում նորա-
նում: Բայց ձեր սովորութիւնն 39
է, որ զատկին մի մարդ արձա-
կեմ ձեզ համար. արդ կամե-
նո՞ւմ էք, որ Հրէաների թա-
գաւորն արձակեմ ձեզ համար:
Եւ ամենքն դարձեալ աղաղակե- 40
ցին և ասում էին. Ոչ թէ
դորան՝ այլ Բարաբբային. և
այդ Բարաբբան մի աւազակ
էր:

ԳԼ. ԺԹ

Այն ժամանակ առաւ Պիղա- 1
տոսը Յիսուսին և ծեծեց: Եւ 2
զինուորները փշերից պսակ շի-
նեցին, նորա գլխին դրին, և
ծիրանի հանդերձ հագցրին նո-
րան: Եւ ասում էին. Ողջ 3
կաց, Հրէից թագաւոր. և
ապտակներ էին տալիս նորան:
Պիղատոսը դարձեալ դուրս 4
գնաց և նորանց ասաց. Ահա
նորան դուրս եմ բերում ձեզ

թէ ես վնաս ինչ ի նմա ոչ
5 գտանեմ։ Եւ Յիսուս արտաքս,
և ունէր պսակ ի փշոց՝ և
հանդերձ ծիրանի. և ասէ
ցնոսա. Ահա այրդ* ցձեզ։
6 Իբրև տեսին զնա քահանայա-
պետքն և սպասաւորքն, զաղա-
ղակ բարձին՝ և ասեն. Ի
խաչ հան՝ ի խաչ հան զդա.
ասէ ցնոսա Պիղատոս. Առէք
զդա ի ձեզ, և ձեզէն հանէք ի
խաչ. զի ես ի դմա վնաս
7 ինչ ոչ գտանեմ։ Պատասխանի
ետուն նմա Հրէայքն. Մ՝ենք
օրէնս ունիմք. և ըստ օրինաց
մերոց պարտի մեռանել. զի
զանձն իւր Որդի Աստուծոյ
8 արար. Իբրև լուաւ զբանս
զայս Պիղատոս, առաւել ևս
9 երկեաւ։ Եմուտ դարձեալ
անդրէն յապարանսն, և ասէ
ցՅիսուս. Ուստի՞ ես դու. և
Յիսուս ոչ ետ նմա պատաս-
10 խանի։ Ասէ ցնա Պիղատոս.
Ինդ իս ո՞չ խօսիս, ո՞չ գիտես
եթէ իշխանութիւն ունիմ հա-
նել զքեզ ի խաչ, և իշխանու-
թիւն ունիմ արձակել զքեզ։
11 Պատասխանի ետ Յիսուս. Ո՛չ
ունէիր դու իշխանութիւն ի
վերայ իմ՝ և ոչ մի, եթէ ոչ էր
տուեալ քեզ ի վերուստ. վասն
այնորիկ որ մատնեացն զիս քեզ,
12 նորա մեծ մեղք են։ Եւ յայն-
մանէ Պիղատոս խնդրէր արձա-
կել զնա. և Հրէայքն աղաղա-

* Ի Յոյն էր։

մօտ, որ գիտենաք թէ ես ոչ
մի յանցանք չեմ գտնում նո-
ր ա ն ո ւ մ։ Եւ Յիսուսը դուրս 5
եկաւ և փշեղէն պսակն և ծիրա-
նի հագուստը հագած. և նո-
ր ա ն ց ասաց. Ահա այն մարդը։
Երբոր քահանայապետները և 6
սպասաւորները նորան տե-
սան, աղաղակեցին՝ և ասացին.
Խաչէր, խաչէր։ Պիղատոսը նո-
ր ա ն ց ասաց. Դուք առէք դո-
ր ա ն, և խաչեցէք. վասնզի ես
յանցանք չեմ՝ գտնում դորա-
նում։ Հրէաները պատասխա- 7
նեցին նորան. Մ՝ենք օրէնք
ունինք, և մեր օրէնքի համեմատ
պէտք է մեռնի. վասնզի իր անձն
Աստուծոյ Որդի արաւ։ Երբոր 8
Պիղատոսը այս խօսքը լսեց,
էլ աւելի վախեցաւ։ Եւ դար- 9
ձեալ մտաւ պալատը, և Յի-
սուսին ասաց. Դու ի՞նչ տեղից
ես. և Յիսուսը չպատասխանեց
նորան։ Պիղատոսն էլ ասաց 10
նորան. Ինձ հետ չե՞ս խօսում.
միթէ չես գիտում, որ իշխա-
նութիւն ունիմ քեզ խաչելու,
և իշխանութիւն ունիմ քեզ
արձակելու։ Յիսուսը պատաս- 11
խանեց. Դու ոչինչ իշխանու-
թիւն չէիր ունենալ ինձ վերայ,
եթէ վերևիցը տրուած չլինէր
քեզ. նորա համար՝ նա որ ինձ
մատնեց քեզ, նորա մեղքն աւելի
մեծ է։ Եւ նորանից յետոյ 12
Պիղատոսը ուզում էր նորան

կէին և ասէին. Եթէ զդա ար-
ձակես՝ չես բարեկամ Կայսեր.
ամենայն ոք որ թագաւոր կոչէ
զանձն իւր, հակառակ է
13 Կայսեր։ Իսկ Պիղատոս իբրև
լուաւ զբանս զայսոսիկ, ած
զՅիսուս արտաքս. և նստաւ ի
վերայ բեմին, ի տեղւոջն որ
կոչէր Քարայատակ, և Եբ-
14 րայեցերէն Կապպաթա։ Էր
ուրբաթն զատկի. և էր ժամ
իբրև վեցերորդ, և ասէ
ց Հրէայսն. Ահա թագաւորդ
15 ձեր ցձեզ։ Եւ նոքա աղաղա-
կէին, Հարձ՝ ի մէնջ բարձ՝ ի
մէնջ՝ և հան զդա ի խաչ. ասէ
ցնոսա Պիղատոս. Ես զթա-
գաւորդ ձեր ի խաչ հանիցեմ.
պատասխանի ետուն քահա-
նայապետքն. Չի՞ք մեր թա-
գաւոր՝ բաց ի Կայսերէ։
16 Յայնժամ ետ զնա ի ձեռս
նոցա, զի ի խաչ ելանիցէ։
17 Եւ նոքա առեալ տանէին
զնա. և բարձեալ էր ինքնին
զխաչափայտն. և ելանէր ի
տեղին՝ որ անուանեալ էր
Գագաթն, և կոչէր Եբրայե-
18 ցերէն Գողգոթա. Ուր և ի
խաչն իսկ հանին զնա. և ընդ
նմա երկուս ևս այլս աստի և
անտի, և ի միջի զՅիսուս։
19 Գրեաց և տախտակ մի Պիղա-
տոս, և եդ ի վերայ խաչին. և
էր գրեալ. ՅԻՍՈՒՍ ՆԱ-
ԶԱՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ
20 ՀՐԷԻՑ։ Զայն տախտակ
ընթերցան բազումք ի Հրէից,

արձակել. բայց Հրէաներն ա-
ղաղակում էին և ասում. Եթէ
դորան արձակես՝ կայսրի բարե-
կամ չես. ամեն ոք որ իր անձը
թագաւոր է կոչում, նա կայս-
րին հակառակ է։ Պիղատոսն 13
էլ երբոր այս խօսքը լսեց,
Յիսուսին դուրս բերաւ, և
բեմի վերայ նստեց, այն տեղն՝
որ Քարայատակ էր կոչվում,
և Եբրայեցերէն Կապպաթա։
Եւ զատկի ուրբաթն էր՝ ժամը 14
իբր վեցը, և Հրէաներին ա-
սաց. Ահա ձեր թագաւորը։
Իսկ նորանք աղաղակում էին. 15
Վեր առ, վեր առ՝ և խաչէր
դորան. Պիղատոսը նորանց ա-
սաց. Ձեր թագաւորը խաչեմ։
Քահանայապետները պատաս-
խանեցին. Մ՝ենք թագաւոր
չունինք բացի Կայսրից։ Այն 16
ժամանակ նորան տուաւ նո-
ր ա ն ց ձեռքը, որ խաչուի։
Եւ նորանք առան տարան 17
Յիսուսին. և խաչափայտն ինքն
վերկալած, դուրս գնաց այն
տեղն, որ Գագաթան էր ասվում, որ Եբրայեցերէն Գողգո-
թա է կոչվում։ Այն տեղ խաչ 18
հանեցին նորան. և նորա հետ
երկու ուրիշին՝ այս կողմը և
այն կողմը, և Յիսուսին մէջ
տեղը։ Պիղատոսը մի տախտակ 19
էլ գրեց, և խաչի վերայ դրաւ.
և գրուած էր. ՅԻՍՈՒՍ ՆԱ-
ԶԱՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ
ՀՐԷԻՑ։ Եւ այս տախտակը 20
Հրէաներից շատերը կարդա-

զի մօտ էր ՝ի քաղաք անդր
տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս.
և էր գրեալ Եբրայեցերէն,
Յաղմատերէն և Յունարէն:
21 Ասեն ցՊիղատոս քահանայա-
պետքն Հրէից. Մի գրեր
Թագաւոր Հրէից, այլ թէ
Կա ասաց՝ Թագաւոր եմ
22 Հրէից: Պատասխանի ետ Պի-
ղատոս. Զոր ինչ գրեցի՝ գրեցի.

23 Իսկ զինուորքն երբև հանին ՝ի
խաչ զՅիսուս, առին զհան-
դերձս նորա՝ և արարին չորս
մասունս, իւրաքանչիւր զին-
ուորի մասն. իսկ զպատմու-
ճանն՝ քանզի էր առանց կա-
րանի՝ ՝ի վերուստ փորանկեալ
24 ամենեւին. Ասեն ցմիմեանս.
Մի պատառեսցուք զայդ, այլ
արկցուք վիճակս ՝ի վերայ
դորա՝ ում՝ և ելցէ. զի լցցի
գիրն՝ որ ասէ. Բաժանեցին
զհանդերձս իմ՝ յիւրեանս, և ՝ի
վերայ պատմուճանի իմոյ վի-
ճակս արկին: Զինուորքն զայս
ինչ գործեցին.
25 Եւ կային առ խաչին Յի-
սուսի մայրն նորա, և քոյր մօր
նորա Մարիամ Կղէոփայայ,
և Մարիամ Մագդաղենացի:
26 Յիսուս երբև ետես զմայրն և
զաշակերտն՝ զոր սիրէր, զի
կայր մօտ. ասէ ցմայրն, Կին
27 դու՝ ահա որդի քո: Ապա ասէ
ցաշակերտն. Ահա մայր քո. և
յայնմ՝ ժամանակէ առ աշա-
28 կերտն զնա առ իւր: Յետ
ցին. վասնզի քաղաքին մօտ էր
այն տեղն ուր Յիսուսը խա-
չուեցաւ. և գրուած էր Եբ-
րայեցերէն, Յունարէն և Լա-
տիներէն: Եւ Հրէաների քա- 21
հանայապետներն ասացին Պի-
ղատոսին. Մի գրիլ Թագաւոր
Հրէից, այլ թէ նա ասաց, Ես
Թագաւոր եմ Հրէից: Պիղա- 22
տոսը պատասխանեց. Ինչ որ
գրեցի՝ գրեցի:

Բայց զինուորներն՝ երբոր 23
Յիսուսին խաչ հանեցին, նորա
հանդերձներն առան՝ և չորս
բաժին արին, ամեն մէկ զինուորի
համար մի բաժին. բայց պատ-
մուճանը՝ որովհետև առանց
կարի էր, վերևիցը վայր բոլորը
հիւսուած. Ուստի իրար ասա-
ցին. Որան չ՚պատառենք, 24
այլ վիճակ գցենք դորա վերայ,
թէ ումը լինի. որ գիրքը կա-
տարուի, որ ասում է. Թէ իմ
հանդերձներն իրանց մէջ բա-
ժանեցին և իմ՝ պատմուճանի
վերայ վիճակ գցեցին. և զին-
ուորներն արին այդ բանը:

Եւ Յիսուսի խաչի մօտ կանգ- 25
նած էին նորա մայրը, և նորա
մօր քոյրը՝ Մարիամ՝ Կղէոպայի
կնոջ, և Մարիամ Մագդաղե-
նացին: Յիսուսն էլ տեսնելով 26
իր մօրը և այն աշակերտին՝ որ
սիրում՝ էր, որ մօտիկ կանգնած
էր, իր մօրն ասաց. Ով կին,
ահա քո որդին: Յետոյ ասաց 27
աշակերտին. Ահա քո մայրը.
և այն ժամանակից այն աշա-

այսորիկ իրրև գիտաց Յիսուս,
եթէ ահա ամենայն ինչ կա-
տարեալ է, զի կատարեսցի
29 գիրն, ասէ. Ծարաւի իմ: Եւ
անդ կայր ման ինչ լի քա-
ցախով. և նոցա սպունգ լցեալ
քացախով* ընդ լեզուս՝ շուրջ
եդեալ զմշտկաւ զոպայի՝ մա-
30 տուցին ՝ի բերան նորա: Իբրև
առ Յիսուս զքացախն* հան-
դերձ լեզուին՝ ասէ. Ամենայն
ինչ կատարեալ է. և խոնարհե-
ցուցեալ զգլուխն՝ աւանդեաց
զոգին:
31 Իսկ Հրէայքն՝ քանզի ուր-
բաթի էր, զի մի անդէն ՝ի խաչին
ագանիցին մարմինքն մինչև
ցշաբաթն, զի էր օր մեծ շաբա-
թուն այնորիկ. աղաչեցին
զՊիղատոս՝ զի խորտակեսցեն
զբարձս նոցա՝ և բարձցին:
32 Եկին զինուորքն, և զառաջնոյն
խորտակեցին զբարձս, նոյնպէս
և զմիւսոյն՝ որ ընդ նմա ՝ի խաչն
33 ելեալ էր: Բայց իրրև եկին առ
Յիսուս՝ և տեսին զի այն ինչ
մեռեալ էր, ոչ խորտակեցին
34 զբարձս նորա. Այլ մի ոմն ՝ի
զինուորացն տիգաւ խոցեաց
զկողս նորա. և ել վաղվաղակի
35 արիւն և ջուր. Եւ որ ետեսն՝
վկայեաց. և ճշմարիտ է վկա-
յութիւն նորա. և նա գիտէ
թէ ճշմարիտ ասէ. զի և դուք
36 հաւատասջիք: Այս եղև՝ զի
լցցի գիրն. եթէ Ոսկր նորա մի
կերտն իրան մօտ առաւ նորան:
Յորանից յետոյ Յիսուսը իմա- 28
նալով, որ ամեն բան արդէն
կատարուած է, որպէս զի գիրքը
կատարուի ասաց. Ծարաւ եմ:
Եւ մի ման կար քացախով 29
լիքն. և նորանք մի սպունգ
լցրին քացախով և զոպայի մըշ-
տիկի վերայ դրած՝ նորա բերա-
նին մօտեցրին: Եւ երբոր Յի- 30
սուսը քացախն առաւ՝ ասաց.
Կատարուած է. և գլուխը խո-
նարհեցնելով՝ հոգին աւանդեց:

Բայց Հրէաները, որովհետև 31
ուրբաթի օր էր, որպէսզի մար-
մինները չ՚մնան խաչի վերայ
շաբաթի օրը, վասնզի այն շա-
բաթի օրը մեծ էր, Պիղատոսին
աղաչեցին, որ նորանց սրունգ-
ները ջարդեն. և վեր առնուին:
Զինուորներն էլ եկան և ա- 32
ռաջինի սրունգները ջարդեցին,
այնպէս էլ միւսինը, որ նորա
հետ խաչուած էր: Բայց երբ 33
որ Յիսուսի մօտ եկան և տե-
սան նորան արդէն մեռած, նորա
սրունգները չ՚ջարդեցին: Այլ 34
զինուորներից մէկը գեղարդով
նորա կողը խոցեց. և շուտով
արիւն և ջուր դուրս եկաւ:
Եւ նա որ այս տեսաւ՝ վկայեց. 35
և նորա վկայութիւնը ճշմարիտ
է. և նա գիտէ որ ճշմարիտ է
ասում՝, որ դուք հաւատաք:
Այսանզի սա եղաւ, որ գիրքը 36

* ՝Ի Յոյնն էր։

37 փշրեսցի։ Եւ դարձեալ միւս գիր ասէ, եթէ Հայեսցին 'ի նա՝ յոր խոցեցինն։

38 Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ, որ յԱրիմաթեայ էր՝ աշակերտ Յիսուսի 'ի ծածուկ՝ վասն ահին Հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսուսի. և հրամայեաց Պիղատոս. եկն
39 և երարձ զնա։ Եկն և Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս 'ի գիշերի զառաջինն. և երեր զմուռս խառն ընդ հալուէս՝ իբրև լտերս հարիւր։
40 Առին զմարմինն Յիսուսի, և պատեցին կտաւովք՝ խնկովք հանդերձ, որպէս օրէն էր
41 Հրէից պատել։ Եւ էր 'ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ. և 'ի պարտիզն անդ գերեզման նոր, յորում ոչ ոք
42 երբէք էր եդեալ։ Ընդ վասն ուրբաթուն Հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅիսուս։

ԳԼ. Ի

1 Եւ 'ի միաշաբաթուոջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյսն 'ի գերեզման անդր, և տեսանէ զվէմն բարձեալ 'ի դրաց գեկատարուի, ըէ Նորա ոսկորը չպիտի փշրուի։ Եւ դարձեալ մի ուրիշ գիրք ասում է, ըէ Մտիկ կ'տան նորան, որ խոցեցին։

Սորանից յետոյ Պիղատոսին աղաչեց Յովսէփը, որ Արիմաթեայեցին էր, (որ աշակերտ լինելով Յիսուսին, բայց Հրէից վախի պատճառովը ծածկուած էր) որ Յիսուսի մարմինն վեր առնէ. և Պիղատոսը հրաման տուաւ. և նա եկաւ և վեր առաւ Յիսուսի մարմինը։ Նիկոդիմոսն էլ եկաւ՝ (որ առաջ Յիսուսի մօտ էր եկել գիշերով) և զմուռս բերաւ հալուէի հետ խառնած՝ հարիւր լտրի չափ։ Եւ Յիսուսի մարմինն առան, և այն խնկերի հետ կտաւներով պատեցին, ինչպէս Հրէաներին օրէնքը էր պատել։ Եւ այն տեղը, որ խաչուեցաւ, մի պարտէզ կար, և այն պարտէզումը մի նոր գերեզման, որում երբէք ոչ ոք չէր դրուած։ Եւ այն տեղ դրին Յիսուսին Հրէաների ուրբաթի համար, որովհետև գերեզմանը մօտ էր։

ԳԼ. Ի

Եւ մէկ շաբթի օրը Մարիամ Մագդաղենացին առաւօտանց՝ տակաւին մութ՝ գալիս է գերեզմանը, և տեսնում քարը գերեզմանից վեր առած։

2 ըեզմանին։ Այդ ընթանայ՝ և գայ առ Սիմոն Պետրոս և առ միւս աշակերտն՝ զոր սիրէրն Յիսուս, և ասէ ցնոսա. Բարձին զՏէրն 'ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։
3 Եւ Պետրոս և միւս աշակերտն՝
4 և գային 'ի գերեզմանն. Ընթանային երկոքեան 'ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս՝ և եկն նախ 'ի գերեզ-
5 մանն։ Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ կտաւքն,
6 բայց 'ի ներքս ոչ եմուտ։ Եկն և Սիմոն Պետրոս՝ որ գայրն զկնի նորա, և եմուտ 'ի գերեզ-
7 մանն, և տեսանէ զկտաւսն՝ զի կային անդ. Եւ վարշամակն որ էր 'ի գլուխս նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն
8 ծալեալ 'ի մի կողմն։ Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն 'ի գերեզմանն, ետես և հաւա-
9 տաց. Զի չեւ'ս գիտէին զգիրս՝ թէ Պարտ է նմա 'ի մեռելոց
10 յառնել։ Ազգան դարձեալ առ միմեանս աշակերտքն։

11 Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին՝ և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ 'ի
12 գերեզմանն, Եւ տեսանէ երկուս հրեշտակս 'ի սպիտակս, զի նստէին մի 'ի սնարից և մի յանոտից՝ ուր կայր մարմինն
13 Յիսուսի։ Եւ նոքա ասեն ցնա.

2 Այդպա վազում է գալիս Սիմոն Պետրոսի և միւս աշակերտի մօտ, որին Յիսուսը սիրում էր, և ասում նորանց. Տիրոջը վեր առին գերեզմանիցը, և չենք գիտում, ըէ որտեղ դրին նո-
3 րան։ Եւ դուրս եկաւ Պետ-
4 րոսը և միւս աշակերտը, և գալիս էին գերեզմանը։ Եւ
5 երկուքը միասին վազում էին. և միւս աշակերտը վազեց շուտով անցաւ Պետրոսիցը, և առաջ եկաւ գերեզմանը։ Եւ
6 ծռելով տեսնում է կտաւները դրած. բայց ներս չմտաւ։ Սիմոն Պետրոսն էլ հասաւ որ
7 նորա ետևից գալիս էր, և մտաւ գերեզմանը, և տեսնում է կտաւները դրած. Եւ վարշա-
8 մակն՝ որ նորա գլխի վերայ էր, կտաւների հետ չէր, այլ ջոկ ծալած մի առանձին տեղ։ Այն-
9 ժամանակ միւս աշակերտն էլ ներս մտաւ, նա որ առաջ էր գերեզմանը եկել, տեսաւ և հաւատաց։ Վասնզի տակաւին չէին գիտում գիրքը, թէ Պէտք է նա մեռելներից յարութիւն
10 առնէ։ Եւ աշակերտներն դարձեալ իրար մօտ եկան։

11 Բայց Մարիամը գերեզմանի մօտ կանգնած էր դուրսը և լաց էր լինում. և լաց լինելիս ծռեց, մտնի պոռա գերեզմանի մէջ.
12 Եւ տեսնում է երկու հրեշտակ՝ սպիտակ հանդերձներով նըստած, մէկը գլխի կողմը և միւսը ոտների կողմը, որ տեղ Յի-

Կին դու՝ զի՞ լաս. ասէ ցնոսա.
Օ՛յ բարձին զՏէրն իմ՝ ի գե-
րեզմանէ ասի, և ո՛չ գիտեմ՝
14 ուր եդին զնա։ Այս իբրև
ասաց, դարձաւ ի Թիկունս կոյս,
և տեսանէ զՅիսուս զի կայր.
և ո՛չ գիտէր թէ Յիսուս իցէ։
15 Ասէ ցնա Յիսուս. Կին դու՝
զի՞ լաս, զո՞ խնդրես. Նմա այս-
պէս թուեցաւ թէ պարտիզպանն
իցէ, ասէ ցնա. Տէ՛ր՝ եթէ դու
բարձեր զնա՝ ասա՛ ինձ ուր եդիր
16 զնա, զի ես առից զնա։ Ասէ
ցնա Յիսուս. Մա՛րիամ. և նա
դարձաւ, և ասէ ցնա Եբրայե-
ցերէն. Ռաբբունի, որ թարգ-
17 մանի՝ Վարդապետ։ Ասէ ցնա
Յիսուս. Մի՛ մերձենար յիս,
զի չեւեւս ելեալ եմ առ Հայր
իմ. այլ երթ դու առ եղբարսն
իմ, և ասա՛ ցնոսա. Ելանեմ ես
առ Հայրն իմ՝ և առ Հայր
ձեր, և Աստուածն իմ՝ և Աս-
18 տուած ձեր։ Գայ Մարիամ
Մագդաղենացի՝ և պատմէ ա-
շակերտացն, եթէ ետես նա
զՏէր, և զայս ինչ ասաց ցնա։

19 Եւ էր երեկոյ ի միաշաբաթ-
ւոջ աւուրն. և դրօք փակե-
լովք՝ ուր էին աշակերտքն ժո-
ղովեալ վասն ահին Հրէից,
եկն Յիսուս՝ և եկաց ի միջև

սուսի մարմինը դրուած էր։
Եւ նորանք ասացին նորան. 13
Ով կին, ինչո՞ւ ես լաց լինում.
Նորանց ասաց. Նորա համար
որ իմ Տիրոջը վեր առան, և
չգիտեմ՝ թէ ուր դրին նորան։
Եւ երբոր սա ասաց, դարձաւ 14
իր յետին կողմը, և Յիսուսին
տեսաւ՝ կանգնած. և չգիտէր
թէ Յիսուսն է։ Յիսուսը նո- 15
րան ասաց. Կին, ինչո՞ւ ես լաց
լինում, ո՞ւմ ես որոնում. Նա
էլ կարծելով թէ պարտիզպանն
է, ասաց նորան. Տէր, եթէ
դու վեր առիր նորան, ասա ինձ՝
ուր ես դրել նորան, որ ես
վեր առնեմ նորան։ Յիսուսը 16
նորան ասաց. Մարիամ. և
նա դարձաւ և ասաց նորան.
Ռաբբունի, որ կ՚թարգմանուի
Վարդապետ։ Յիսուսը նորան 17
ասաց. Մի դպչիր ինձ, որով-
հետև դեռ չեմ վեր ելել իմ
Հօր մօտ. բայց դու գնա իմ
եղբայրների մօտ, և նորանց
ասա. Ես վեր եմ ելնում իմ
Հօր մօտ՝ և ձեր Հօր մօտ, իմ
Աստուծոյ մօտ և ձեր Աստու-
ծոյ մօտ։ Մարիամ Մագ- 18
դաղենացին գալիս է աշակերտ-
ներին պատմում, թէ Տեսաւ
Տիրոջը և այս բանն իրան
ասաց։

Եւ մէկ շաբթի օրը, երբոր 19
իրիկուն էր՝ և դռները փա-
կուած, այն տեղ որ աշակերտ-
ները ժողովուած էին Հրէաների
վախից, Յիսուսը եկաւ և նո-

նոցա, և ասէ ցնոսա. Ողջո՛յն
20 ընդ ձեզ։ Իբրև զայս ասաց՝
եցոյց նոցա զձեռսն և զկողս
իւր. և խնդացին աշակերտքն
21 իբրև տեսին զՏէր։ Ասէ ցնոսա
դարձեալ. Ողջո՛յն ընդ ձեզ,
որպէս առաքեաց զիս Հայր իմ,
22 և ես առաքեմ զձեզ։ Եւ զայս
իբրև ասաց՝ փչեաց ի նոսա՝ և
ասէ. Առէք Հոգի Սուրբ։
23 Եթէ ումեք թողուցուք զմեղս՝
թողեալ լիցի նոցա. եթէ զու-
րուք ունիցիք՝ կալեալ լիցի։

24 Իսկ Թովմաս մի յերկոտա-
սանիցն՝ անուանեալն Երկու-
որեակ, ո՛չ էր ընդ նոսա՝ յոր-
25 ժամ եկն Յիսուս։ Ասէին ցնա
այլ աշակերտքն, եթէ Տեսաք
զՏէր. և նա ասէ ցնոսա. Եթէ
ո՛չ տեսից ի ձեռս նորա զնշան
բևեռացն, և արկից զմատուս
իմ ի տեղիս բևեռացն, և մխե-
ցից զձեռս իմ ի կողս նորա,
ո՛չ հաւատամ։

26 Եւ յետ ութ աւուր դարձ-
եալ էին ի ներքս աշակերտքն,
և Թովմաս ընդ նոսա. գայ
Յիսուս դրօքն փակելովք. և
եկաց ի մէջ, և ասէ Ողջո՛յն ընդ
27 ձեզ։ Ապա ասէ ցԹովմաս.
Բեր զմատուն քո՝ և արկ այսր,
և տես զձեռս իմ, և բեր զձեռն
քո՝ և մխեա՛ ի կողս իմ, և մի՛
լինիր անհաւատ, այլ հաւա-
28 տացեալ։ Պատասխանի ետ

բանց մէջ կանգնեց, և նորանց
ասաց. Խաղաղութիւն ձեզ։ Եւ 20
սա ասելով իր ձեռները և իր
կողը ցոյց տուաւ նորանց. և
աշակերտները ուրախացան՝ երբ
որ Տիրոջը տեսան։ Յիսուսը 21
դարձեալ ասաց նորանց. Խա-
ղաղութիւն ձեզ, ինչպէս իմ
Հայրն ինձ ուղարկեց, ես էլ
ձեզ եմ՝ ուղարկում։ Եւ սա 22
ասելով փչեց նորանց վերայ և
ասաց. Առէք Սուրբ Հոգին։
Որոնց մեղքը որ թողէք՝ թող- 23
ուած կ՚լինի նորանց. որոնցը որ
բռնէք՝ բռնուած կ՚լինի։

Բայց Թովմասը՝ տասներկու- 24
սից մէկը՝ Երկուորեակ կոչ-
ուածը, նորանց հետ չէր, երբոր
Յիսուսը եկաւ։ Մի՞ւս աշա- 25
կերտներն ասում էին նորան,
Մենք Տիրոջը տեսանք. իսկ նա
ասաց նորանց, Եթէ նորա
ձեռներումն բևեռների նշանը
չտեսնեմ, և իմ մատը չդնեմ
բևեռների տեղը, և իմ ձեռքը
չկոխեմ նորա կողը, չեմ հա-
ւատալ։

Եւ ութ օրից յետոյ աշա- 26
կերտները դարձեալ ներսումն
էին, և Թովմասն էլ նորանց
հետ. Յիսուսը՝ դռները փակ
լինելով՝ եկաւ և նորանց միջումը
կանգնեց և ասաց. Խաղաղու-
թիւն ձեզ։ Յետոյ Թովմասին 27
ասաց. Բեր քո մատը այս տեղ,
և տես իմ ձեռները, և քո
ձեռքը բեր՝ և իմ կողը կոխիր,
և մի լինիր անհաւատ՝ այլ հա-

Թովմաս և ասէ ցնա. Տէր իմ՝
29 և Աստուած իմ։ Ասէ ցնա
Յիսուս. Այդ զի տեսերդ զիս
և հաւատացեր. երանի՛ որոց
ոչ իցէ տեսեալ՝ և հաւատասցեն։

30 Բազում և այլ նշանս արար
Յիսուս առաջի աշակերտաց
իւրոց՝ որ ոչ է գրեալ ՚ի գիրս
31 յայսմիկ։ Այլ այս այնչափ
ինչ գրեցաւ՝ զի հաւատայցէք
եթէ Յիսուս Քրիստոս է Որդի
Աստուծոյ. և զի հաւատայ-
ցէք, և զկեանսն յաւիտենականս
ընդունիցիք յանուն նորա։

ԳԼ. ԻԸ

1 Յետայսորիկ դարձեալ յայտ-
նեաց զանձն իւր Յիսուս
աշակերտացն իւրոց առ ծովե-
զերքն Տիբերեայ, և յայտնեաց
2 այսպէս։ Էին ՚ի միասին Սի-
մովն Պետրոս, և Թովմաս
անուանեալն Երկուորեակ, և
Նաթանայէլ՝ որ ՚ի Կանայ
Գալիլեացւոց, և որդիքն Զե-
բեդեայ, և այլք յաշակերտաց
3 անտի երկու։ Ասէ ցնոսա Սի-
մովն Պետրոս. Երթամ ձուկն
որսալ. ասեն ցնա. Գամք և
մեք ընդ քեզ. գնացին և մտին
՚ի նաւ՝ և յայնմ գիշերի կա-
4 լան և ոչինչ։ Իբրև այդ եղև՝
կայր Յիսուս յեղը ծովուն,
բայց ոչ ծանեան աշակերտքն
5 թէ Յիսուս իցէ։ Ասէ ցնոսա
ասացեալ։ Եւ Թովմասը պա-
տասխանեց և ասաց Նորան. Իմ 28
Տէրը, և իմ Աստուածը։ Յի- 29
սուսը Նորան ասաց. Որովհետև
տեսար ինձ՝ հաւատացիր. երանի
Նորանց, որ չեն տեսնում և
հաւատում են։

Յիսուսը ուրիշ էլ շատ նշան- 30
ներ արաւ իր աշակերտների
առջև, որ չեն գրուած այս
գրքումը։ Բայց սորանք գրուե- 31
ցան՝ որ հաւատաք, թէ Յի-
սուսն է Քրիստոսը՝ Աստուծոյ
Որդին. և որ հաւատալով
կեանք ունենաք Նորա անու-
նովը։

ԳԼ. ԻԸ

Սորանից յետոյ Յիսուսը 1
դարձեալ իր անձը յայտնեց իր
աշակերտներին Տիբերեայ ծովի
եզերին մօտ. և այսպէս յայտնեց։
Միասին էին Սիմոն Պետրոսը, 2
և Երկուորեակ անուանուած
Թովմասը, և Նաթանայէլն՝ որ
Գալիլեայի Կանայիցն է, և Զե-
բեդեայի որդիները, և Նորա աշա-
կերտներից ուրիշներկուքն էլ։
Սիմոն Պետրոսը Նորանց ասաց. 3
Գնում եմ ձուկ բռնելու. Նո-
րան ասացին. Մենք էլ գանք
քեզ հետ. գնացին և շուտով
մտան նաւը, և այն գիշերը
ոչինչ չբռնեցին։ Երբոր ար- 4
դէն առաւօտ եղաւ, Յիսուսը
ծովի եզրումը կանգնած էր,
սակայն աշակերտները չըճա-

Յիսուս. Մանկունք՝ միթէ ու-
նիք ինչ ուտելոյ. պատասխանի
6 ետուն և ասեն ցնա, Ո՛չ։ Ասէ
ցնոսա. Արկէք յաջակողմն նաւին
զուռկանդ, և գտանիցէք. ար-
կին, և ոչ կարէին ձգել ՚ի
բազմութենէ անտի ձկանցն։
7 Ասէ աշակերտն այն, զոր սի-
րէրն Յիսուս՝ ցՊետրոս. Տէր
է այն. Սիմովն Պետրոս իբրև
լուաւ թէ Տէր է, արկաւ զիւրև
զսփածանելին՝ քանզի մերկ էր,
8 և ընկէց զինքն ՚ի ծովն։ Եւ
այլ աշակերտքն նաւուն իսկ
գային, քանզի չէին հեռի ՚ի
ցամաքէն. այլ իբրև երկերիւր
կանգնաւ՝ քարշէին զգործին
9 հանդերձ ձկամբքն։ Իբրև ելին
՚ի ցամաք, տեսանեն կրակեղ
կայծականց, և ձուկն մի ՚ի
10 վերայ, և հաց։ Ասէ ցնոսա
Յիսուս. Բերէք ՚ի ձկանց այսմ՝
զոր դուք կալարուք այժմիկ։
11 Ելուտ Սիմովն Պետրոս, և
ձգէր զգործին ՚ի ցամաք՝ լի
մեծամեծ ձկամբք, հարիւր յի-
սուն և երիւք. և այնչափ ինչ
կայր, և ոչ պատառեցաւ գոր-
12 ծին։ Ասէ ցնոսա Յիսուս.
Եկայք ճաշակեցէք. և ոչ ոք
յաշակերտացն իշխէր հարցա-
նել՝ թէ Դու ո՞վ ես, զի գի-
13 տէին թէ Տէրն է։ Գայ Յի-
սուս՝ և առնու զՀացն՝ և տայ
նոցա, նոյնպէս և զձուկնն։
14 Այս երիցս անգամ երևեցաւ
Յիսուս աշակերտացն՝ յարու-
ցեալ ՚ի մեռելոց։

նաչեցին, թէ Յիսուսն է։ Իսկ 5
Յիսուսը Նորանց ասաց. Տղայք,
ուտելու բան ունիք. պատաս-
խանեցին Նորան, Ոչ։ Նա 6
էլ ասաց Նորանց. Ուռկանը
նաւի աջի կողմը գցեցէք, և
կ՚գտնէք. Նորանք էլ գցեցին,
և՝ էլ չէին կարողանում քաշել՝
ձկների շատութեան պատճա-
ռովը։ Այն աշակերտն՝ որ Յի- 7
սուսը սիրում էր Նորան՝ Պետ-
րոսին ասաց, Տէրն է նա։ Սի-
մոն Պետրոսն երբոր լսեց՝ թէ
Տէրն է, վերարկուն իրան վե-
րայ առաւ, քանզի մերկ էր, և
զինքն ծովը գցեց։ Իսկ միւս 8
աշակերտները գալիս էին նա-
ւակովն. վասնզի ցամաքիցը հե-
ռու չէին. այլ երկու հարիւր
կանգունի չափ, և ուռկանը
ձկներովը քաշում էին։ Երբոր 9
դուրս եկան ցամաքը, տեսան
ածուխի կրակ վառած, և նորա
վերայ ձուկ դրած և հաց. Յի- 10
սուսը Նորանց ասաց. Բերէք
այդ ձկներից՝ որ հիմա բռնե-
ցիք։ Սիմոն Պետրոսը մտաւ և 11
ուռկանը քաշեց դէպի ցամաքը՝
մեծ մեծ ձկներով լիքն՝ հարիւր
յիսուն և երիք հատ. և այդ-
քան լինելով գործիքը չ՚պատա-
ռուեցաւ։ Յիսուսը Նորանց 12
ասաց. Եկէք ճաշեցէք. և ա-
շակերտներից ոչ ով չէր հա-
մարձակում հարցնել՝ թէ Դու
ո՞վ ես. վասնզի գիտէին, որ
Տէրն է։ Յիսուսն էլ եկաւ՝ և 13
հացն առաւ՝ և Նորանց տուաւ.

15 Եւ իբրև ճաշեցին, ասէ
ցՍիմովն Պետրոս Յիսուս. Սի-
մովն Յովհաննու, սիրեսն զիս
առաւել քան զդոսա. ասէ ցնա.
Այո՛ Տէր, և դու գիտես զի
սիրեմ զքեզ. ասէ ցնա՝ Արա-
16 ծեա՛ զգառինս իմ: Դարձեալ
ասէ ցնա. Սիմովն Յովհաննու,
սիրեսն զիս. ասէ ցնա. Այո՛
Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ
զքեզ. ասէ ցնա՝ Արածեա՛ զոչ-
17 խարս իմ: Ասէ ցնա երիցս
անգամ. Սիմովն Յովհաննու,
սիրեսն զիս. տրտմեցաւ Պետրոս,
զի ասացն ցնա երիցս՝ թէ Սիրեսն
զիս. և ասէ ցնա, Տէր՝ դու
զամենայն գիտես. և դու իսկ
զամենայն ճանաչես, և եթէ
սիրեմ զքեզ. ասէ ցնա Յիսուս.
18 Արածեա՛ զոչխարս իմ: Ամէն
ամէն ասեմ քեզ՝ զի մինչ մա-
նուկն էիր, անձամբ անձին գօտի
ածէիր՝ և երթայիր յո՛ և կա-
մէիր. և յորժամ ծերասցիս,
ձեռս 'ի վեր կալցես. և այլք
ածցեն քեզ գօտի, և տարցին՝
19 ուր ոչն կամիցիս: Այս ա-
սաց՝ նշանակեալ թէ որով մա-
հու փառաւոր առնիցէ զԱս-
տուած. և զայս իբրև ասաց, ասէ
20 ցնա. Ե՛կ զկնի իմ: Դարձաւ
Պետրոս՝ և տեսանէ զաշակերտն՝
զոր սիրէր Յիսուս, զի երթայր
և նոյնպէս էլ ձուկը: Սա եր-
բորդ անգամն է որ Յիսուսը
իր աշակերտներին երևեցաւ,
մեռելներից յարութիւն առնե-
լուց յետոյ:

Եւ երբոր ճաշեցին, Յի- 15
սուսը ասաց Սիմոն Պետրոսին.
Սիմոն Յոհանի որդի, սիրո՞ւմ
ես ինձ զորանցից աւելի, Նորան
ասաց. Այո, Տէր, դու գիտես՝
որ սիրում եմ քեզ, Նորան
ասաց. Արածեցրու իմ գառնե-
րը: Դարձեալ ասաց Նորան. 16
Սիմոն Յոհանի որդի, սիրո՞ւմ
ես ինձ. Նորան ասաց. Այո,
Տէր, դու գիտես որ սիրում
եմ քեզ. Նորան ասաց. Արա-
ծեցրու իմ ոչխարները: Եր- 17
բորդ անգամն ասաց Նորան.
Սիմոն Յոհանի որդի, սիրո՞ւմ
ես ինձ: Պետրոսը տրտմեցաւ.
որովհետև երրորդ անգամ Նո-
րան ասաց՝ Լէ՞ Սիրո՞ւմ ես ինձ.
և Նորան ասաց. Տէր, դու ամեն
բան գիտես, դու գիտես, որ
սիրում եմ քեզ. Յիսուսը Նո-
րան ասաց. Արածեցրու իմ
ոչխարները: Ճշմարիտն ճշ- 18
մարիտն ասում եմ քեզ, երբոր
պատանի էիր՝ ինքդ էիր գօտիդ
կապում՝ և մեն գալիս որ տեղ
որ ուզում էիր. բայց երբոր
կ'ծերանաս, ձեռներդ կ'մեկնես.
և ուրիշը գօտի կ'կապէ, և
կ'տանէ՝ որտեղ որ չես ուզիլ:
Սա ասաց՝ ցոյց տալով թէ նա 19
ի՞նչ մահով կ'փառաւորէ Աս-
տուծոյն. և սա ասելուց յետոյ,

զկնի, որ և անկաւ զլանջքն
Նորա՝ և ասէ. Տէր ո՞վ է՝ որ
21 մատնելոցն է զքեզ: Այնա տե-
սեալ Պետրոսի, ասէ ցՅիսուս.
22 Տէր՝ իսկ սա զի՞: Ասէ ցնա
Յիսուս. Եթէ կամիմ, զի կացցէ
դա՝ մինչև ես գամ. քեզ զի՞
23 փոյթ է դու ե՛կ զկնի իմ: Եւ
ել բանս այս յեղբարս՝ և հա-
մարեցան թէ աշակերտն այն
ո՛չ մեռանիցի. և ո՛չ ասաց Նմա
Յիսուս եթէ ո՛չ մեռանիցի.
այլ թէ կամիմ ես՝ թէ կացցէ
դա՝ մինչև ես գամ:

24 Այս աշակերտ է որ վկայէ
վասն այսոցիկ. որ և գրեացն
իսկ զայսոսիկ. և գիտեմք, եթէ
ճշմարիտ է վկայութիւն Նորա:
25 Բայց է և այլ ինչ բազում
զոր արար Յիսուս. զոր եթէ
գրեալ էր մի ըստ միոջէ, կար-
ծեմ թէ և ո՛չ աշխարհս բաւա-
կան էր տանել զգիրսն՝ որ թէ
գրեալ էին:

Նորան ասաց. Իմ ետևից եկ.
Պետրոսն էլ դարձաւ՝ տեսաւ 20
այն աշակերտին, որին Յիսուսը
սիրում էր, որ ետևիցը գալիս
էր, նա՝ որ էլ Նորա լանջքովն
ընկաւ և ասաց. Տէր, ո՞վ է
քեզ մատնողը: Պետրոսը սորան 21
տեսանելով, Յիսուսին ասաց.
Տէր, բայց սա ի՞նչ: Յիսուսը 22
Նորան ասաց. Եթէ կամենում
եմ, որ դա կենայ, մինչև ես
գամ. քո՞ զ ինչ, դու իմ ետևից
եկ: Եւ այս խօսքը դուրս 23
եկաւ եղբայրների մէջ, թէ
այն աշակերտը չի մեռնիլ. և
Յիսուսը չասաց Նորան, թէ
չի մեռնիլ. այլ եթէ կամենում
եմ որ դա կենայ մինչև ես գամ.
քո՞զ ինչ:

Սա այն աշակերտն է, որ 24
այս բաների համար վկայում է,
և այս բաներն էլ գրեց, և
գիտենք որ Նորա վկայութիւնը
ճշմարիտ է: Բայց ուրիշ էլ 25
շատ բաներ կան, որ Յիսուսը
արաւ, որոնք եթէ մէկ մէկ
գրուած լինէին, կարծում եմ
թէ աշխարհքս էլ բաւական
չէր լինիլ այն գրուած գրքերը
տանելու: Ամէն:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

ԳԼՈՒԽ Ա

1 ԶՐԱՆՆ առաջին՝ զոր ա-
բարի վասն ամենայնի ո՛
Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս
2 առնել և ուսուցանել, Մինչև
յօրն պատուիրելոյ առաքելոցն
Ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, զորս
3 ընտրեացն, և վերացաւ: Որոց
յանդիման կացոյց զինքն կեն-
դանի յետ չարչարանացն իւրոց
Ի բազում արուեստս՝ յաւուրս
քառասուն երևել նոցա՝ և ասել
վասն արքայութեանն Աստու-
4 ծոյ: Եւ Ի հաղորդել ընդ
նոսա հացիւ, պատուէր տայր
նոցա՝ Յերուսաղեմէ մի՛ մեկնել,
այլ սպասել աւետեացն Հօր՝
5 զոր լուարուբն յինէն: Զի
Յովհաննէս մկրտեաց Ի ջուր.
այլ դուք մկրտիցիք Ի Հոգին
Սուրբ, ո՛չ յետ բազում ինչ
6 աւուրցս այսոցիկ: Եւ նոքա
մատուցեալ հարցանէին զնա՝ և
ասէին. Տէր՝ եթէ Ի ժամա-
նակի՞ ասա յայսմիկ հասու-
ցանելոց իցես զարքայութիւն
7 Իսրայէլի: Ասէ ցնոսա. Ո՛չ

Ա ԱՌԱՋԻՆ պատմութիւնն 1
արի, ով Թէոփիլէ, ամեն
բանի համար, որ Յիսուսը սկսեց
անել և սովորեցնել, Մինչև 2
այն օրն, որ Սուրբ Հոգոյ
ձեռամբն պատուէր տուաւ իր
ընտրած առաքեալներին, և վե-
րացաւ. Որոնց էլ իր էար- 3
չարանքից յետոյ իրան կեն-
դանի կանգնացրեց շատ ապա-
ցոյցներով. քառասուն օրուայ
միջոցին երևալով նորանց՝ և
Աստուծոյ արքայութեան հա-
մար խօսելով. Եւ նորանց միա- 4
սին ժողովուած ժամանակը,
պատուէր էր տալիս նորանց՝
Երուսաղէմից չհեռանալ, այլ
սպասել Հօր աւետիքին, որ՝
ասաց՝ ինձանից լսեցիք: Որով- 5
հետև Յոհաննէսը մի՛ միայն ջրով
մկրտեց. բայց դուք Սուրբ Հո-
գով կ'մկրտուիք, ոչ թէ շատ
օրեր սորանից յետոյ: Եւ նո- 6
րանք մէկ տեղ գալով՝ հարց-
նում էին նորան և ասում. Տէր,
այս ժամանակումն ես կանգնեց-

է ձեզ գիտել զժամն և զժամա-
նակս, զոր Հայր եդ յիւրում
8 իշխանութեան. Այլ առջիք
զօրութիւն Ի հասանել Հոգւոյն
Սրբոյ Ի վերայ ձեր. և եղիջիք
ինձ վկայք Յերուսաղէմ և
յամենայն Հրէաստանի և Ի
Սամարիա, և մինչև Ի ծագս
9 երկրի: Եւ զայս իբրև ասաց՝
մինչդեռ հայէին նոքա՝ վե-
րացաւ. և ամպն կալաւ զնա
10 յաչաց նոցա: Եւ մինչդեռ
պշուցեալ էին ընդ երկինս
երթալոյ նորա, և ահաւասիկ
արք երկու երևեցան նոցա Ի
հանդերձս սպիտակս, Որք և
ասացին. Արք Գալիլեացիք՝
զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս:
11 Այս Յիսուս՝ որ վերացաւն Ի
ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ
զոր օրինակ տեսիք զնա երթալ
12 յերկինս: Այսպ դարձան Յերու-
սաղէմ՝ յանուանեալ լեռնէն
Ձիթենեաց. որ է մերձ Յերու-
սաղէմ ըստ շաբաթու ճանա-
պարհի:

13 Եւ իբրև մտին, ելին Ի
վերնատունն՝ ուր վանքն իսկ
էին. Պետրոս և Յակոբոս,
Յովհաննէս և Անդրէաս, Փի-
լիպպոս և Թովմաս, Բարթո-
ղոմէոս և Մատթէոս, Յակո-
բոս Ալփեան և Շմաւոն
Նախանձայոյզ և Յուդա Յա-
նում Իսրայէլի թագաւորու- 7
թիւնը: Եւ ասաց նորանց. Ձեր
Բանը չէ գիտենալ ժամերը և
ժամանակները, որ Հայրն իր
իշխանութիւնումն դրաւ: Բայց 8
դուք զօրութիւն կ'առնէք՝ երբ
որ Հոգին ձեզ վերայ կ'գայ,
և իմ վկաները կ'լինիք Երու-
սաղէմումն և բոլոր Հրէաստանի
և Սամարիայի մէջ, մինչև եր-
կրի ծայրերը: Եւ երբոր այս 9
ասաց, նորանք նայելիս՝ վեր-
կացաւ. և մի ամպ վեր առաւ
նորան նորանց աչքերից: Եւ 10
դեռ որ նորանք աչքերը ուղղած
մտիկ էին տալիս դէպի երկինքը
նորա գնալուն, և ահա երկու
մարդիկ երևեցան նորանց սպի-
տակ հանդերձներով, Որ և 11
ասացին. Ով Գալիլեացի մար-
դիկ, ի՞նչ էք կանգնել և մտիկ
էք անում՝ դէպի երկինքը. այս
Յիսուսն, որ ձեզանից վերա-
ցաւ երկինքը, այսպէս կ'գայ
ինչպէս նորան տեսաք երկինքը
գնալիս: Այն ժամանակ Ձի- 12
թենեաց անուանուած լեռնիցը
ետ դարձան Երուսաղէմ, որ
մօտ է Երուսաղէմին շաբաթ
օրուայ ճանապարհի չափ:
Եւ երբոր մտան, վեր ելան 13
վերնատունը՝ որտեղ բնակած
էին. Պետրոսը և Յակոբոսը,
Յոհաննէսը և Անդրէասը, Փի-
լիպպոսը և Թովմասը, Բար-
թողիմէոսը և Մատթէոսը, Յա-
կոբոս Ալփեանը և Սիմոն Նա-
խանձայոյզը՝ և Յուդա Յակո-

14 կովբեան։ Սոքա ամենեքեան
էին հանապազորդեալ միաբան
յաղօթս հանդերձ կանամբք, և
Մարեմաւ մարրն Յիսուսի՝ և
եղբարքն նորա։
15 Եւ յաւուրսն յայնոսիկ յա-
րուցեալ Պետրոս ի մէջ եղ-
բարցն՝ ասէ. և էր անդ բազ-
մութիւն անուանց իբրև հարիւր
16 և քսանից։ Մարք եղբարք՝ պարտ
էր կատարել գրոյն, զոր յառա-
ջագոյն ասաց Հոգին Սուրբ ի
բերանոյ Դաւթի՝ վասն Յու-
դայի, որ եղև առաջնորդ
17 ունելեացն Յիսուսի. Զի ի
թիւս մեր էր՝ ընդ մեզ, և
հասեալ էր նմա վիճակ պաշտա-
18 մանս այսորիկ։ Սա ստացաւ
գեօղ ի վարձուց անիրաւու-
թեան. և ուռուցեալ հերձաւ
ընդ մէջ՝ և հեղաւ ամենայն փոր
19 նորա։ Եւ յայտնի եղև ամե-
նեցուն՝ որ բնակեալ են Յերու-
սաղէմ. մինչև կոչել գեղջն
այնմիկ բարբառովն իւրեանց
Ակեղդամայ. այսինքն է՝ Դեղ
20 արեան։ Զի գրեալ է ի գիրս
Սաղմոսաց. Եղիցի բնակու-
թիւն նորա աւերակ, և մի՛ ոք
իցէ որ բնակիցէ ի նմա. և
21 զկարգ նորա առցէ այլ։ Արդ՝
պարտ է յարանցս յայսցանէ
եկելոցս ընդ մեզ յամենայն
ժամանակի, յորում եմուտ և
ել առ մեզ Տէր Յիսուս,
22 Սկսեալ ի մկրտութենէն Յով-
հաննու մինչև ցօրն՝ յորում
վերացաւ ի մէնջ, վկայ յարու-
թեանն։ Սորանք ամենքքն միշտ 14
միաբան աղօթք և աղաչանք էին
անուամբ կանանց հետ, և Յի-
սուսի մայր Մարիամի և նորա
եղբայրների հետ։
Եւ այն օրերումն Պետրոս 15
վերկացաւ եղբայրների մէջ ա-
սաց, և այն տեղ հարիւր և
քսան հոգիների չափ բազմու-
թիւն կային։ Մարդիկ եղբարք, 16
պէտք էր այն գրուածքն կա-
տարուէր, որ առաջուց ասաց
Սուրբ Հոգին Դաւթի բերա-
նովն Յուդայի համար, որ Յի-
սուսի բռնողներին առաջնորդ
եղաւ։ Որ՝ նա մեզ հետ հա- 17
մարուած էր. և այս պաշտօնի
վիճակը նորան էլ հասել էր։
Արդ սա անիրաւութեան վարձ- 18
քովն մի ագարակ ստացաւ. և
գլխի վայր ընկնելով՝ միջնցը
ճղուեցաւ, և նորա բոլոր փորը
դուրս թափուեցաւ։ Եւ յայտ- 19
նի եղաւ Երուսաղէմի բոլոր
բնակիչներին. մինչև որ այն
ագարակի անունն իրանց լե-
զուովը Ակեղդամայ կոչուեցաւ.
որ է ասել՝ Արիւնի ագարակ։
Վասնզի Սաղմոսաց գրքումն 20
գրուած է, Եղէ Նորա բնակու-
թիւնը աւերակ պիտի լինի, և
նորանում բնակող չլինի. և
նորա կարգ ուրիշն առնէ։ Հիմա 21
պէտք է այս մարդկանցիցը, որ
մեզ հետ են եղել այն բոլոր
ժամանակն, որ Տէր Յիսուսը
մեզ հետ մտաւ և դուրս եկաւ,
Յովհաննէսի մկրտութիւնից 22

թեան նորա ընդ մեզ լինել
23 միում՝ ի սոցանէ։ Եւ կացու-
ցին երկուս. զՅովսէփ՝ որում
Բարսաբայն կոչէին, որ անուա-
նեցաւն Յուստոս. և զՄատա-
24 թեա։ Եւ կացեալ յաղօթս՝
ասեն. Դու Տէր՝ սրտագէտ
ամենայնի՝ յայտնեա՛ զմի ոք՝
զոր ընտրեցեր ի սոցանէ յեր-
25 կոցունց, Առնուլ զվիճակ
պաշտամանս այսորիկ՝ և զառա-
քելութեան, յորմէ անկաւ
Յուդաս՝ գնալ ի տեղի իւր։
26 Եւ ետուն վիճակս նոցա, և
ելանէր վիճակն Մատաթեայ.
և համարեցաւ ընդ մետասան
առաքեալսն։

ԳԼ. Բ

1 Եւ ի կատարել աւուրցն
Պենտէկոստէից էին ամենեքեան
2 միաբան ի միասին։ Եւ եղև
յանկարծակի հնչիւն յերկնից՝
եկեալ իբրև սաստիկ հողմոյ. և
լցից զամենայն տունն յորում
3 նստէին։ Եւ երևեցան նոցա
բաժանեալ լեզուք իբրև ի
հրոյ. և նստաւ իւրաքանչիւր
4 ի վերայ նոցա։ Եւ լցան ամե-
նեքեան Հոգւովն Սրբովն. և
սկսան խօսել յայլ և յայլ
լեզուս՝ որպէս և Հոգին տայր
5 բարբառել նոցա։ Եւ էին
Յերուսաղէմ՝ բնակեալ Հրէայք՝
արք երկիւղածք՝ յամենայն

սկսած մինչև այն օրն, որ մե-
զանից վերացաւ. սորանցից մէկը
մեզ հետ վկայ լինի նորա յա-
րութեանը։ Եւ երկու հոգի 23
կանգնեցրին՝ Յոսէփին՝ որ Բար-
սաբա էր կոչվում, որ Յուս-
տոս անուանուեցաւ, և Մատ-
թիային։ Եւ աղօթք անելով 24
ասացին. Դու, Տէր, ամենի
սրտագէտ. այս երկուսից մէկը
յայտնիր, որին ընտրեցիր, Որ 25
այս պաշտօնի և առաքելու-
թեան վիճակն առնէ, որից
Յուդան ընկաւ՝ իր տեղը գնա-
լու համար։ Եւ նորանց վերայ 26
վիճակ գցեցին, և վիճակն ընկաւ
Մատթիայի վերայ, և նա
տասնումէկ առաքելոց հետ հա-
մարուեցաւ։

ԳԼ. Բ

Եւ երբոր Պենտէկոստէի օրե- 1
րը լրացան, և ամենքը միաբան
մէկտեղ էին։ Եւ յանկարծակի 2
երկնքիցը մի հնչիւն եղաւ՝ սաս-
տիկ փչող քամու պէս. և լցրեց
բոլոր տունը՝ ուր նստած էին։
Եւ երևեցան նորանց բաժա- 3
նուած լեզուներ ինչպէս կրա-
կից. և նստեց նորանց ամեն մէկի
վերայ։ Եւ ամենքը Սուրբ Հո- 4
գով լցուեցան, և սկսեցին ու-
րիշ լեզուներով խօսել, ինչպէս
որ Հոգին նորանց խօսել էր
տալիս։ Եւ Երուսաղէմումը 5
բնակած էին Հրէաներ՝ Աս-
տուածավախ մարդիկ՝ երկնքի

աղգաց՝ որ ՝ի ներքոյ երկնից։
6 Եւ իբրև եղև բարբառս այս՝
եկն միաբան բազմութիւնն՝ և
խռնեցաւ. զի լսէին յիւրա-
քանչիւր լեզուս խօսել նոցա։
7 Աբանչանային ամենեքեան, և
զարմանային՝ և ասէին ընդ
միմեանս. Ո՞չ աւասիկ ամենեքին
սոքա որք խօսին՝ Գալիլեացիք
8 են. Եւ զի՞նդ լսեմք մեք յիւրա-
քանչիւր բարբառս մեր՝ յորում
9 ծնեալ եմք։ Պարթևք և
Մարք և Իլամացիք՝ և որ
բնակեալ են ՝ի Միջագետս, ՝ի
Հրէաստանի և ՝ի Կամիրս, ՝ի
10 Պոնտոս և Ասիա. ՝Ի Փռիւ-
գիայ և ՝ի Պամփիւլիայ՝ Եգ-
իպտոս և ՝ի կողմանս Լիբիա-
ցւոց, որ ընդ Կիւրենացիս, և
11 որ եկք Հռովմայեցիք. Հրէ-
այք՝ և եկք նոցուն, Կրետացիք
և Արաբացիք՝ լսեմք խօսիլ
նոցա ՝ի մեր լեզուս զմեծամեծս
12 Աստուծոյ։ Աբանչանային ամե-
նեքեան զարմացեալք, և ասէին
ցմիմեանս. Զի՞նչ կամիցի այս
13 լինել։ Եւ կիսոցն ընդ խաղ
արկեալ ասէին, թէ Քաղցուա-
լից իցեն։

14 Յարուցեալ Պետրոս հան-
դերձ մետասանիւքն՝ ամբարձ
զձայն իւր՝ և խօսեցաւ ընդ
նոսա. Արք Հրէաստանեայք՝ և
որ բնակեալ էք Երուսաղէմ
ամենեքին, այս ձեզ յայտնի
լիցի՝ և ունկն դիք բանից իմոց։

տակի ամեն ազգերից։ Եւ երբ 6
որ այս ձայնը եղաւ, բազմու-
թիւնն եկաւ մէկտեղ և կիտուե-
ցաւ. որովհետև ամեն մէկը
լսում էր նորանց, որ իր լեզուով
խօսում էին։ Եւ ամենքը 7
հիանում էին և զարմանում, և
իրար ասում էին. Ահա
սորանք ամենքը, որ խօսում են,
Գալիլեացի են։ Եւ ի՞նչպէս 8
մենք ամեն մէկս մեր լեզուովը
լսում ենք որ նորանում ծնուած
ենք. Պարթևներ և Մարք 9
և Եղամացիք, և բնակողներ
Միջագետի, Հռէաստանի և
Կապադովկիայի, Պոնտոսի և Ա-
սիայի մէջ, Փռիւգայի և Պամ- 10
փիլիայի մէջ, Եգիպտոսումն,
և Լիբիացոց կողմերումը Կիւ-
րենէի մօտ, և նորահակ Հռո-
մայեցիք. Հրէաներ և նորա- 11
հաւատներ, Կրէտացիք և Արա-
բացիք, լսում ենք, որ նորանք
մեր լեզուներովը Աստուծոյ մե-
ծամեծ բաները խօսում են։
Եւ հիանում էին ամենքն և 12
զարմանում, և մէկը միւսին ա-
սում էին՝ Սա ի՞նչ պիտի
լինի։ Իսկ ուրիշները ծաղր 13
անելով ասում էին, քաղցուով
արբած են։

Եւ վերկացաւ Պետրոսն այն 14
տասնումէկի հետ, իր ձայնը
բարձրացրեց, և նորանց հետ
խօսեց. Ով Հրէաստանցի մար-
դիկ, և ամենքդ՝ որ բնակված
էք Երուսաղէմումը, սա ձեզ
յայտնի լինի, և իմ խօսքերին

15 Ո՛չ որպէս դուք կարծէք՝ թէ
սոքա արբեալ իցեն. զի դեռ
16 երեք ժամք են աւուրս։ Այլ
այս է՝ որ ասացաւ ՝ի ձեռն
17 մարգարէին Յովելեայ։ Եւ
եղիցի յետ այսորիկ յաւուրս
յետինս՝ ասէ Աստուած, հեղից
ՀՈգւոյ իմմէ ՝ի վերայ ամենայն
մարմնոյ. և մարգարէացցին
ուստերք ձեր, և դստերք ձեր.
և երիտասարդք ձեր տեսիլս
տեսցեն, և ծերք ձեր երազովք
18 երազեսցին։ Եւ ՝ի վերայ ծա-
ռայից իմոց՝ և ՝ի վերայ աղախ-
նանց իմոց՝ յաւուրս յայնոսիկ
հեղից ՀՈգւոյ իմմէ, և մար-
19 գարէացցին։ Եւ տաց նշանս
յերկինս ՝ի վեր՝ և նշանս
երկիր ՝ի խոնարհ, արիւն և
20 հուր և մրրիկ ծխոյ։ Արեգակն
դարձցի ՝ի խաւար, և լուսին
յարիւն՝ մինչչև եկեալ իցէ օր
21 Տեառն մեծ և երևելի։ Եւ
եղիցի ամենայն որ կարդասցէ
զանուն Տեառն՝ կեցցէ։

22 Արք Իսրայէլացիք, լուարուք
զբանս զայսոսիկ. զՅիսուս
Նազովրեցի՝ այր ցուցեալ
ՅԱստուծոյ ՝ի ձեզ զօրութեամբ
և նշանօք և արուեստիւք, զոր
արար նովաւ Աստուած ՝ի միջի
ձերում. որպէս և դուք իսկ
23 գիտէք. Զնա նկատեալ խոր-
հրդով և կանխագիտութեամբն
Աստուծոյ՝ մատնեալ ՝ի ձեռս
անօրինաց՝ բևեռեալ ՝ի փայտի
24 սպանեք. Զոր Աստուած յա-

15 ականջ դրէք։ Քանզի չէ թէ,
ինչպէս դուք էք կարծում, սո-
րանք արբած են. որովհետև
օրուայ երրորդ ժամն է։ Այլ 16
այս Յովել Մարգարէի ձե-
ռովն ասուածն է, Եւ կ'լինի 17
յետի օրերումն, ասում է Աս-
տուած, որ իմ Հոգուցը կըթա-
փեմ ամեն մարմնոյ վերայ, և
ձեր որդիները և ձեր աղջիկ-
ները կ'մարգարէանան. և ձեր
երիտասարդները տեսիլքներ կը
տեսնեն, և ձեր ծերերը երազ-
ներ կ'տեսնեն։ Եւ իմ ծա- 18
ռաների վերայ և իմ աղախին-
ների վերայ էլ այն օրերումն
իմ Հոգուցը կ'թափեմ, և
կ'մարգարէանան։ Եւ նշաններ 19
կ'տամ վերևն երկնքումն, և
նշաններ ներքևն երկրումը, ա-
րիւն և կրակ և ծխի մրրիկ։
Արեգակը խաւար կ'դառնայ, 20
և լուսինն արիւն, Տիրոջ մեծ և
երևելի օրը դեռ չեկած։ Եւ 21
կ'լինի, ամեն ով որ Տիրոջ
անունը կ'կանչէ կ'փրկուի։

Ով Իսրայէլացի մարդիկ, այս 22
խօսքերը լսեցէք. Յիսուս Նա-
զովրեցին՝ այն մարդը՝ որ Աս-
տուածանից ցոյց տրուեցաւ ձե-
զանում զօրութիւններով և
հրաշքներով և նշաններով, որ
Աստուած նորա ձեռովն արաւ
ձեր միջումը. ինչպէս դուք էլ
գիտէք. Նորան, որ Աստուծոյ 23
սահմանուած խորհրդովն և
կանխագիտութեամբը մատնու-
ած էր, առիք անօրէնների ձեռ-

բոյց՝ լուծեալ զերկունս մահու. քանզի ոչ էր հնար բռնել
25 նմա ի նմանէ։ Դաւիթ իսկ ասէ զնմանէ. Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի ընդ աջմէ իմմէ
26 է, զի մի՛ սասանեցայց։ Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ, ևս և մարմին իմ բնակեսցէ յուսով։
27 Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս՝ և ոչ տացես Սրբոյ քում տեսանել զապականութիւն։
28 Օրանուցեր ինձ զճանապարհս կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ յերեսաց քոց
29 *ի քաղցրութենէ՝։ Եւ՛բք եղբարք՝ պարտ է համարձակութեամբ ասել վասն նահապետին Դաւթի. զի մեռաւ՝ և թաղեցաւ. և գերեզման նորա կայ ի միջի մերում մինչև ցայսօր։
30 Զի մարգարէ էր, և գիտէր՝ եթէ երդմամբ երդուաւ նմա Աստուած ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նո-
31 ցա։ Յառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վասն յարութեանն Քրիստոսի. զի ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս՝ և ոչ մարմին նորա տեսս զապականութիւն։
32 Զայս Յիսուս յարոյց Աստուած՝ որում ամենեքին մեք
33 վկայեմք։ Եւ զաջմէն Աստուծոյ բարձրացեալ, զաւետիս Հոգւոյն Սրբոյ ընկալեալ ի Հօրէ՝

* ՝Ի Յոյն էր։

քով փայտի վերայ բևեռած,
24 սպանեցիք։ Որին Աստուած յարոյց՝ մահի ցաւերը լուծելով. վասնզի կարելի չէր, որ նա
25 բռնուի նորանից։ Վասնզի Դաւիթ ասում է նորա համար. Առաջուց տեսնում էի Տիրոջն ամեն ժամանակ իմ առջև. վասնզի իմ աջ կողմն է, որ չսասանիմ։ Սորա համար իմ սիրտն
26 ուրախ եղաւ, և լեզուս ցնծացաւ, և իմ մարմինն էլ յուսով կ'բնակէ։ Որովհետև իմ անձը
27 չես թողել դժոխքում մը, և ոչ էլ քո Սրբոյն ապականութիւն տեսնել կ'տաս։ Կեանքի
28 ճանապարհները ճանաչեցրիր ինձ. քո երեսի ուրախութիւնովը կ'լցնես ինձ։ Ա՝ստղիկ
29 եղբարք, պէտք է համարձակութեամբ ասեմ ձեզ Դաւիթ նահապետի համար. թէ նա մեռաւ էլ՝ թաղուեցաւ էլ. և նորա գերեզմանը մինչև այսօր մեր
30 միջումն է։ Իսկ որովհետև մարգարէ էր, և գիտէր, որ Աստուած երդումով երդուաւ նորան, որ նորա երանքի պտղիցը մարմնոյ կողմանէ յարուցանէ Քրիստոսին նորա աթոռի վե-
31 րայ նստեցնելու համար։ Առաջուց իմացած՝ խօսեց Քրիստոսի յարութեան համար, թէ նորա հոգին դժոխքումը չ'թողուեցաւ՝ և ոչ էլ նորա մարմինն
32 ապականութիւն տեսաւ։ Սոյն

սիրտեաց զայս, զոր դուք իսկ
34 տեսանէք՝ և լսէք։ Զի ոչ եթէ Դաւիթ եկն յերկինս. ասէ իսկ
35 ինքն՝ Ասաց Տէր ցՏէր իմ, Նստիր ընդ աջմէ իմմէ՝ Մինչև
36 եղից զթշնամիս քո պատուան-դան ոտից քոց։ Երդ ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունն Իսրայէլի, զի և Տէր զնա՝ և Օծեալ Աստուած արար. զայն Յիսուս՝ զոր դուք խաչեցէք։

37 Եւ լուեալ զայս՝ զղջացան ի սիրտս իւրեանց. և ասեն ցՊետրոս՝ և ցայլ առաքեալսն. Եւ զի՞նչ գործեսցուք ա՛յր-
38 եղբարք։ Ասէ ցնոսա Պետրոս. Ապաշաւեցէ՛ք՝ և մկրտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց, և ընկալջիք զաւետիս Հոգւոյն
39 Սրբոյ. Զի ձեզ են աւետիքս՝ և որդւոց ձերոց, և ամենայն հեռաւորաց՝ զորս կոչեսցէ Տէր
40 Աստուած մեր։ Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն դնէր, և մխիթարէր զնոսա՝ և ասէր. Ապրեցարո՛ւք յազգէ այսմ խոտորելոյ։
41 Ոմանց յօժարութեամբ ընկալեալ զբան նորա մկրտեցան. և յաւելան յաւուր յայն-

այս Յիսուսին Աստուած յարոյց՝ որի վկաներն ենք մենք
33 ամենքս։ Երդ Աստուծոյ աջովը բարձրացած. և Սուրբ Հոգոյ աւետիքը Հօրից առած, թափեց այս, որ դուք հիմա տես-
34 նում և լսում էք։ Վասնզի ոչ թէ Դաւիթի վեր ելաւ երկինքը. բայց ինքն ասում է, Տէրն իմ Տիրոջն՝ ասաց. Իմ աջ
35 կողմը նստիր, Մինչև քո թշնամիները քո ոտաց պատուանդան դնեմ։
36 Հիմա թող ստոյգ գիտենայ Իսրայէլի բոլոր տունը, որ Աստուած նորան Տէր և Օծեալ արաւ, սոյն այս Յիսուսին, որին դուք խաչեցիք։

37 Եւ երբոր այս լսեցին, ինքնայ սրտերումը զղջացին. և ասացին Պետրոսին և միւս առաքեալներին, Ի՞նչ անենք, մարդիկ եղբարք։
38 Պետրոսն էլ նորանց ասաց. Ապաշխարեցէք՝ և ձեզանից ամեն մէկն թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղաց թողութեան համար, և Սուրբ Հոգոյ պարգևը
39 կ'ընդունիք։ Վասնզի ձեզ և ձեր որդոց համար է այս աւետիքը, և այն ամեն հեռաւորների համար, որոնց մեր Տէր Աստուածը
40 կ'կանչէ։ Եւ ուրիշ շատ խօսքերով վկայութիւն էր գնում, և յորդորում և ասում. Ազատուեցէք այս թիւր ազգիցը։
41 Եւ նորանք որ նորա խօսքը յօժարութեամբ ընդունեցին՝ մկրտուեցան. և այն օրն երեք

միկ ոգիք իբրև երեք հա-
զարք։
42 Եւ էին հանապազորդեալք
վարդապետութեան առաքելոցն,
և հաղորդութեան՝ և բեկանե-
լոյ հացին, և աղօթից։
43 Եւ լինէր ամենայն անձին՝ ահ
և երկիւղ. բազում՝ նշանք և
արուեստք ՝ի ձեռս առաքելոցն
44 գործէին։ Ամենայն հաւա-
տացեալքն էին ՝ի միասին, և
ունէին զամենայն ինչ հասարա-
45 կաց։ Եւ զստացուածս և զինչս
վաճառէին, և բաշխէին զայն
ամենեցուն՝ ում զիարդ պիտոյ
46 ինչ լինէր։ Հանապազօր կան-
խեալ միաբանութեամբ ՝ի տա-
ճարն, և առանին՝ բեկանէին
զհացն, և առնուին կերակուր
ուրախութեամբ և միամտու-
47 թեամբ սրտի. Օրհնէին զԱս-
տուած՝ և ունէին շնորհս առ
ամենայն ժողովուրդն. և Տէր
յաւելոյր ՝ի փրկեալսն հանա-
պազօր ՝ի նոյն։

ԳԼ. Գ

1 Պետրոս և Յովհաննէս եկա-
նէին ՝ի տաճար անդր յիններորդ
2 ժամու աղօթիցն։ Եւ էր այր մի
կաղ յորովայնէ մօր իւրոյ՝ զոր
բարձեալ դնէին հանապազ առ
դրան տաճարին, որ կոչէր
Գեղեցիկ. խնդրել ողորմու-
թիւն յայնցանէ՝ որ մտանէին ՝ի
3 տաճարն։ Որոյ տեսեալ զՊետ-
հաղարի չափ հոգիք աւելա-
ցան։
Եւ միշտ հետևում էին ա- 42
ռաքելոց վարդապետութեանը և
հաղորդութեանը, և հացի կըտ-
ելոյն՝ և աղօթքներին։
Եւ ամեն անձի վերայ վախ 43
եկաւ. շատ հրաշքներ և նշան-
ներ էլ էին գործվում առաքե-
լոց ձեռքովը։ Եւ բոլոր հա- 44
ւատացեալներն իրար հետ մէկ
տեղ էին, և ամեն բան հասա-
բակաց ունէին։ Եւ ապրանք- 45
ները և բոլոր բաները ծա-
խում էին, և բաշխում էին այն
ամենին, ում ինչ բան որ
պէտք էր լինում։ Ամեն օր 46
միաբանութեամբ տաճարումն
էին լինում, և հաց էին կտրում
տներումը, ուրախութիւնով և
սրտի միամտութիւնով կերա-
կուր էին ուտում. Աստուծոյն 47
օրհնում էին, և բոլոր ժո-
ղովրդի առջև շնորհք ունէին. և
Տէրն ամեն օր փրկուածներին
աւելացնում էր եկեղեցու հետ։

ԳԼ. Գ

Պետրոսն և Յովհաննէսը գը- 1
նում էին միասին տաճարն ին-
ներորդ ժամի աղօթքին։ Եւ 2
մի մարդ կար իր մօր որովայ-
նիցը կաղ, որին վերկալած՝
ամեն օր դնում էին տաճարի
այն դրան մօտ, որ գեղեցիկ
էր կոչվում, տաճարը մտողնե-
րից ողորմութիւն խնդրելու

րոս և զՅովհաննէս՝ զի մտանէին
՝ի տաճարն, աղաչէր ողորմու-
4 թիւն առնուլ։ Հայեցաւ ՝ի նա
Պետրոս Յովհաննու հանդերձ,
5 և ասէ. Հայեաց ՝ի մեզ։ Կա-
դարձաւ ՝ի նոսա, և ակն ունէր
առնուլ ինչ ՝ի նոցանէ։
6 Եւ ասէ Պետրոս. Արծաթ և
ոսկի ոչ ունիմ. բայց զոր
ունիմն՝ զայս տաց քեզ։ Յանուն
Յիսուսի Քրիստոսի Նազովրե-
7 ցւոյ արի և գնա։ Եւ
կալեալ զաջոյ ձեռանէ նորա՝
յարոյց զնա. և անդէն հաս-
տատեցան բարձք նորա՝ և
8 սրունք. ՝Ի վեր վազեաց և
սկսաւ գնալ. և եմուտ ընդ նոսա
՝ի տաճարն. գնայր և վազվազէր՝
9 և օրհնէր զԱստուած։ Եւ
ետես ամենայն ժողովուրդն
զնա, զի գնայր՝ և օրհնէր
10 զԱստուած. Եւ գիտէին զնա՝ զի
սա էր, որ նստէր վասն ողոր-
մութեան առ Գեղեցիկ դրան
տաճարին, և լցան զարմանալեօք
՝ի վերայ նշանին՝ որ եղև։

11 Եւ մինչ նա ունէր զՊետրոս
և զՅովհաննէս, ընթացաւ
ամենայն ժողովուրդն առ նոսա
՝ի սրահն՝ որ կոչէր Սողովմոնի՝
12 զարմացեալք։ Իբրև ետես
Պետրոս, պատասխանի ետ ժո-
ղովրդեանն. Ա՛րք Իսրայէլացիք՝
համար։ Երբոր նա տեսաւ 3
Պետրոսին և Յովհաննէսին, որ
գնում էին մտնեն տաճարը,
աղաչում էր, որ ողորմութիւն
առնէ նորանցից։ Պետրոսը Յո- 4
հաննէսի հետ մտիկ արաւ նո-
րան և ասաց. Ա՛հեղ նայիր։
Կա էլ ուշը դարձրեց դէպի 5
նորանց, սպասելով որ մի բան
առնէ նորանցից։ Պետրոսն էլ 6
ասաց. Արծաթ և ոսկի չու-
նիմ. բայց ինչ որ ունիմ, այն
քեզ կ'տամ. Յիսուսի Քրիս-
տոսի՝ Նազովրեցու անունովը
վեր կաց և մտն եկ։ Եւ աջ 7
ձեռքիցը բռնեց՝ վերկացրեց նո-
րան. և շուտով հաստատուե-
ցան նորա սրունքը և բարձքը։
Վեր թռաւ կանգնեց և մտն էր 8
գալիս, և նորանց հետ մտաւ
տաճարը մտն գալով և վազ տա-
լով՝ և Աստուծոյն օրհնելով։
Եւ բոլոր ժողովուրդը տեսաւ 9
նորան, որ մտն էր գալիս և
Աստուծոյն օրհնում էր։ Եւ 10
ճանաչում էին նորան, որ սա
էր, որ ողորմութեան համար
նստում էր տաճարի գեղեցիկ
դրանը. և լցուեցան երկիւղով
և զարմանքով այն եղած նշանի
համար։
Եւ քանի որ այն բժշկուած 11
կաղը Պետրոսին և Յովհաննէսին
բռնած էր, բոլոր ժողովուրդը
վազեց նորանց մօտ այն սրահն,
որ Սողոմոնի սրահ էր կոչվում՝
զարմացած։ Երբոր Պետրոսը 12
տեսաւ, պատասխանեց ժո-

զի զարմացեալ էք ՝ի վերայ այսորիկ՝ կամ ընդ մեզ զի՞ էք
պշուցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ ինչ՝ կամ քաջու-
թեամբ արարեալ իցէ գնալդ
13 դմա։ Աստուած Աբրահամու՝ և Աստուած Սահակայ և Աս-
տուած Յակովբայ, Աստուած հարցն մերոց փառաւորեաց
զՈրդի իւր զՅիսուս, զոր դուքն մատնեցիք՝ և ուրացայք առաջի
Պիղատոսի, ՝ի դատել նորա
14 արձակել։ Եւ դուք զՍուրբն և զարդարն ուրացայք և խնդրե-
ցիք այր մի* մահապարտ
15 շնորհել ձեզ։ Եւ զառաջնորդ կենացն սպանիք, զոր Աստուած
յարոյց ՝ի մեռելոց. որում մեք
16 իսկ վկայեմք։ Եւ հաւատովք անուան նորա զսա՝ զոր տեսանէք
և գիտէք, հաստատեաց անուն նորա. և հաւատքն որք նովաւ,
ետուն դմա զառողջութիւնս զայս՝ յանդիման ձեր ամենե-
17 ցուն։ Եւ արդ եղբարք՝ գիտեմ զի անգիտութեամբ արարիք՝
18 որպէս և իշխանքն ձեր։ Այլ Աստուած՝ որպէս յառաջագոյն
պատմեաց ՝ի բերանոյ ամենայն մարգարէից զչարչարելն Քրիս-
տոսի իւրոյ՝ նոյնպէս և կա-
19 տարեաց։ Արդ՝ ապաշաւեցէք և դարձարուք ՝ի ջնջել զմեղս ձեր.
20 Որպէս զի եկեսցեն ժամանակք հանգստեան յերեսաց Տեառն.
և առաքեսցէ զյառաջագոյն

զոմիոքն։ Ով Իսրայէլացի մար-
դիկ, ինչո՞ւ էք զարմացել սորա
վերայ, կամ մե՞զ վերայ ինչո՞ւ
էք սաստիկ նայում, իբր թէ
մենք մեր զօրութիւնով և քա-
ջութիւնով արած լինինք, որ
դա ման դայ։ Աբրահամի և 13
Իսահակի և Յակոբի Աստուածը՝
մեր հարանց Աստուածը փա-
ռաւորեց իր Որդի Յիսուսին,
որին դուք մատնեցիք, և ուրա-
ցաք Պիղատոսի առջև երբոր
նա դատում էր՝ որ արձակէ
նորան։ Եւ դուք այն Սուրբին 14
և Արդարին ուրացաք. և խնդրե-
ցիք մի մահապարտ մարդ շնոր-
հել ձեզ։ Իսկ կենաց Առաջ- 15
նորդին սպանեցիք, որին Աս-
տուած մեռելներից յարոյց. որի
վկաներն ենք մենք։ Եւ նորա 16
անունի հաւատքովը սորան՝ որ
տեսնում էք և ճանաչում էք,
նորա անունը հաստատեց. և
հաւատքն՝ որ նորանով է՝ այս
առողջութիւնը տուաւ դորան
ձեր ամենի առջև։ Եւ հիմա, 17
եղբարք, գիտեմ, որ անգիտու-
թեամբ արիք՝ ինչպէս ձեր իշ-
խաններն էլ։ Բայց Աստուած, 18
ինչ որ առաջուց բոլոր մար-
գարէների բերանովը պատմեց՝
Քրիստոսի չարչարուելու հա-
մար, այնպէս էլ կատարեց։
Ուրեմն զղջացէք և ետ դարձ- 19
էք, որ ձեր մեղքերը ջնջուին.
Որ Տիրոջ երեսից հանգստա- 20

* ՝Ի Յոյն, սպանող

նկատեալն ձեզ՝ զՅիսուս Քրիս-
21 տոս։ Զոր պարտ է երկնից
ընդունել մինչև ՝ի ժամանակս
ամենեցուն հաստատելոյ. զորոց
խօսեցաւ Աստուած ՝ի բերանոյ
սրբոց մարգարէից։

22 Մովսէս ասաց զՏարսն մեր,
թէ Մարգարէ յարուսցէ ձեզ
Տէր Աստուած ձեր յեղբարց
ձերոց իբրև զիս, նմա լուիջիք՝
ըստ ամենայնի, որ զինչ և
23 խօսեսցի առ ձեզ։ Եւ եղիցի
ամենայն անձն՝ որ ո՛չ լուիցէ
մարգարէին այնմիկ՝ սատակեսցի
24 ՝ի ժողովրդենէն։ Եւ ամենայն
մարգարէք՝ որ ՝ի Սամուէլէ և
այսր խօսեցան, և պատմեցին
25 զաւուրս զայսոսիկ։ Դուք էք
որդիք մարգարէիցն՝ և ուխտին
զոր ուխտեաց Աստուած ընդ
հարսն ձեր, և ասէ զԱբրահամ,
՝Ի զաւակի քում օրհնեսցին
26 ամենայն ազգք երկրի։ Ձեզ
նախ յարոյց Աստուած զՈրդի
իւր, և առաքեաց զնա օրհնել
զձեզ՝ ՝ի դառնալ ձեզ իւրաքան-
չիւր ՝ի չարեաց ձերոց։

ԳԼ. Դ

1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ

նալու ժամանակները գան. և
ուղարկէ առաջուց ձեզ համար
քարոզուած Յիսուս Քրիստո-
սին. Որին երկինքը պէտք է 21
ընդունի, մինչև այն ամեն
բաների հաստատուելու ժամա-
նակները. որոնց համար խօսեց
Աստուած իր բոլոր սուրբ մար-
գարէների բերանովը յաւիտե-
նից հետէ։

Մարգարէ Մովսէս հարանցն 22
ասաց, թէ Ձեր Տէր Աստուածը
մարգարէ վեր կ՚կացնէ ձեզ
համար ձեր եղբայրների միջից
ինձ նման, նորան լսեցէք ամեն
բանի համար՝ ինչ որ խօսի ձեզ։
Եւ կ՚լինի, որ ամեն անձն որ 23
այն մարգարէին չ՚լսէ, նա ժո-
ղովրդի միջից թող սատա-
կուի։ Եւ բոլոր մարգարէներն 24
որ Սամուէլից հետէ մարգա-
րէացան, այս օրերը պատմեցին։
Դուք էք այն մարգարէների 25
որդիքը՝ և այն ուխտի, որ Աս-
տուած մեր հարանց հետ հաս-
տատեց, և Աբրահամին ասաց.
Եւ քո զաւակովը պիտի օրհ-
նուին երկրի բոլոր ազգերը։
Աստուած առաջ ձեզ համար 26
վերկացրեց իր Որդի Յիսու-
սին, և նորան ուղարկեց՝ որ նա
ձեզ օրհնէ, որ ամեն մէկը յետ
դառնաք ձեր չարութիւնն-
երից։

ԳԼ. Դ

1 Եւ նորանք տակաւին ժո-

ժողովրդեանն, հասին 'ի վերայ
նոցա քահանայապետքն և իշ-
խանք տաճարին և սադուկե-
2 ցիքն, Հայրագնեալք՝ վասն
ուսուցանելոյ նոցա զժողովուր-
դըն՝ և պատմելոյ Յիսուսիս
3 զյարութիւն մեռելոց: Ա՛խեցին
'ի նոսա զձեռս իւրեանց, և
եդին զնոսա 'ի բանտի մինչև
'ի վաղիւն, զի էր ընդ երեկս:
4 Իսկ բազումք 'ի լսողաց բանին՝
հաւատացին. և եղև թիւ մարդ-
կան իբրև հազարաց հնգից:

5 Եւ եղև 'ի վաղիւ անդր
ժողովել նոցա զիշխանսն և
զերիցունս և զգպիրսն Յերու-
6 սաղէմ, Եւ զԱննա քահա-
նայապետ և զԿայիափա, և
զՅովհաննէս և զԱղեքսան-
դրոս, և որք միանգամ էին
7 յազգէ քահանայութեան: Եւ
կացուցեալ զնոսա 'ի մէջ՝ հար-
ցանէին. Որովք զօրութեամբ
կամ որովք անուամբ արարէք
8 դուք զայս: Յայնժամ Պետրոս
լցեալ Հոգւով Սրբով՝ ասէ
զնոսա. Իշխանք ժողովրդեան՝
9 և երիցունք Իսրայէլի. Եթէ
արժան ինչ իցէ դատել զմեզ
այսօր վասն երախտեաց առն
միոյ տկարի, որով սա բժշշ-
10 կեցաւ: Յայտնի լիցի ամենե-
ցուն ձեզ՝ և ամենայն ժողովը-
դեանդ Իսրայէլի. զի յանուն
Յիսուսի Քրիստոսի Նազովրե-

ցւոյ՝ զոր դուք խաչեցէք՝
զոր Աստուած յարոյց 'ի մեռե-
լոց, նովաւ սա կայ աւասիկ
11 առաջի ձեր ողջացեալ: Նա է
վէմն անարգեալ 'ի ձէնջ շինող-
ացս, որ եղև գլուխ անկեան.
12 Եւ չիք այլով իւիք փրկու-
թիւն. զի և ոչ անուն այլ գոյ
'ի ներքոյ երկնից տուեալ 'ի
մարդիկ՝ որով արժան իցէ
կեալ մեզ:

13 Հայեցեալ 'ի համարձակու-
թիւնն Պետրոսի և Յովհաննու,
և 'ի վերայ հասեալ՝ թէ արք
տգէտք և առանց դպրութեան
են, զարմանային. զի ճանաչէին
զնոսա թէ ընդ Յիսուսի էին.
14 Եւ զայրն ևս տեսանէին զբժշ-
կեալն՝ զի կայր ընդ նոսա. և
ոչինչ կարէին տալ պատաս-
15 խանի: Եւ հրամայեալ նոցա
արտաքս քան զատեանն ելանել,
խորհեցան ընդ միմեանս, Եւ
16 ասեն. Զի՞նչ արասցուք ա-
րանցս այսոցիկ՝ զի երևելի նշան
եղև 'ի ձեռն սոցա. ամենայն իսկ
բնակչաց Երուսաղէմի յայտ է,
17 և ոչ կարեմք ուրանալ: Այլ զի
մի առաւել ճարակեսցի 'ի ժո-
ղովուրդն, սպառնասցուք նոցա՝
մի՛ ևս խօսել յանունն յայն՝ մի՛
18 ումեք 'ի մարդկանէ: Եւ
կոչեցեալ զնոսա պատուիրեցին
ամենևին մի՛ խօսել՝ և մի՛ ուսու-
19 ցանել յանուն Յիսուսի: Իսկ
Պետրոս և Յովհաննէս պա-

զողովրդեան հետ խօսելիս քահանայա-
պետները և տաճարի իշխանը
և Սադուկեցիք նորանց վերայ
2 հասան, Աստիկ բարկացած
նորա համար՝ որ նորանք ժո-
ղովրդին սովորեցնում էին, և
քարոզում էին Յիսուսի ձեռովը
մեռելներից յարութիւն առ-
նելը: Եւ իրանց ձեռները դցե-
3 ցին նորանց վերայ, և բանտի
մէջ դրին մինչև առաւօտը.
վասն զի արդէն իրիկուն էր:
4 Եւ այս խօսքը լսողներից շա-
տերը հաւատացին. և մարդ-
կանց համարը հինգ հազարի
չափ եղաւ:
5 Եւ հետևեալ օրը եղաւ, որ
նորանց իշխանները և երէցները
6 և դպիրները ժողովուեցան Ե-
րուսաղէմ. Եւ Աննա քահա-
նայապետը և Կայիափան, և
Յովհաննէսը և Աղեքսանդրոսը,
7 և այն ամենը որ քահանայական
ցեղից էին: Եւ նորանց կանգ-
նեցնելով մէջտեղը՝ հարցնում
էին. Ի՞նչ զօրութիւնով
8 կամ որ անունով արիք դուք
այս: Այն ժամանակ Պետրոսը
Սուրբ Հոգով լցուած նորանց
ասաց. Ով ժողովրդի իշխան-
ներ՝ և Իսրայէլի երէցներ.
9 Եթէ մենք այսօր հարցաքնը-
վում ենք մի տկար մարդու
երախտիք անելու համար, թէ
ում ձեռովը սա բժշկուեցաւ.
10 թող յայտնի լինի ձեզ ամենիդ՝
և բոլոր Իսրայէլի ժողովուրդ-
դիդ, որ Յիսուսի Քրիստոսի՝

Նազովրեցու անունովը՝ որին
դուք խաչեցիք, Ի՛ որին Աս-
տուած յարոյց մեռելներից, նո-
րանով սա հիմա ձեր առջև
11 առողջ կանգնած է: Նա է
ձեզանից՝ շինողներիդ անար-
գուած քարը, որ անկիւնի գլուխ
12 եղաւ: Եւ էլ մի ուրիշ ոչ
մէկով փրկութիւն չ'կայ. որով-
հետև ուրիշ անուն էլ չ'կայ
երկնքի ներքև մարդկանց տը-
րուած, որով կարելի լինի մեզ
փրկուիլ:
13 Եւ Պետրոսի և Յովհաննէսի
համարձակութիւնը տեսնելով,
և գիտենալով, որ առանց ուս-
մունքի և տգէտ մարդիկ են,
զարմանում էին. միայն ճա-
նաչում էին նորանց՝ որ Յի-
սուսի հետ էին: Եւ այն բժշ-
14 կուած մարդուն էլ տեսնելով
նորանց հետ կանգնած, ոչինչ
15 չունէին պատասխանելու: Եւ
հրամայեցին նորանց, որ ա-
տեանից դուրս գնան, և իրար
հետ խորհուրդ արին, Եւ
16 ասացին. Ի՞նչ անենք այս
մարդկանցը, որ երևելի նշան
եղաւ սորանց ձեռովը. որ Երու-
սաղէմի մէջ բոլոր բնակողներին
յայտնի է, և կարող չենք
17 ուրանալ: Այլ որպէս զի
աւելի չ'տարածուի ժողովրդի
մէջ, սաստիկ սպառնանք նո-
րանց, որ այլ ևս այն անունովը
չ'խօսին մարդկանց ոչ մէկի
18 հետ: Եւ նորանց կանչեցին՝
պատուէր տուին, որ ամենևին

տասխանի Տուն և ասեն ցնոսա.
Եթէ արժա՞ն իցէ առաջի
Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել
քան Աստուծոյ, ընտրեցէք:
20 Այլ մեք ո՛չ կարեմք՝ զոր
տեսաքն և լուաք՝ չխօսել:
21 Նոքա սպառնացեալ արձա-
կեցին զնոսա, և ոչինչ գտեալ՝
թէ որպէս պատուհասեսցեն
զնոսա՝ վասն ժողովրդեանն. զի
ամենեքեան փառաւոր առնէին
զԱստուած՝ վասն իրացն եղելոց:
22 Զի ամաց էր այրն՝ աւելի քան
զքառասուն, յորոյ վերայ եղև
նշանս այս բժշկութեան:

23 Եւ անտի արձակեալ՝ եկին
առ իւրեանցսն, և պատմեցին
որչափ ինչ ասացին ցնոսա քա-
հանայապետքն և երիցունքն:
24 Եւ նոցա լուեալ ամբարձին
զձայնս իւրեանց առ Աստուած՝
և ասեն. Դո՛ւ Տէր Աստուած՝
որ արարեր զերկինս և զերկիր
և զծով և զամենայն որ ի նոսա.
25 Որ ի բերանոյ* հօր մերոյ՝
Դաւթի ծառայի քո՝* ի ձեռն
Հոգւոյն Սրբոյ՝ ասացեր.
Զի՞մ խռովեցան հեթանոսք և
ժողովուրդք խորհեցան ի սը-
26 նոտիս. Յանդիման եղեն թա-
գաւորք երկրի և իշխանք ժո-
ղովեցան ի միասին վասն Տեա-

չխօսին, և ոչ էլ սովորեցնեն
Յիսուսի անունովը: Այլ 19
Պետրոսը և Յովհաննէսը պա-
տասխանեցին նոքանց և ասացին.
Եթէ արժա՞ն է Աստուծոյ առ-
ջև՝ որ ձեզ աւելի ականջ դնենք
քան թէ Աստուծոյն, դուք
դատեցէք: Վասնզի մենք չենք 20
կարող այն որ տեսանք և լսե-
ցինք, չխօսիլ: Իսկ նոքանք 21
սպառնալով արձակեցին նոքանց,
և ոչինչ չգտնելով թէ ինչպէս
պատիժ տան նոքանց՝ ժողովրդի
պատճառովը. վասնզի ամենքն
էլ այն եղածի համար փառք էին
տալիս Աստուծոյն: Զի անդի այն 22
մարդը քառասուն տարուց աւելի
էր, որի վերայ այս բժշկու-
թեան նշանը եղաւ:

Եւ արձակուելուց յետոյ եկան 23
իրանցներին մօտ, և պատմեցին
ինչ որ քահանայապետները
և երէցներն ասացին նոքանց:
Եւ նոքանք երբոր լսեցին, 24
միաբանութեամբ իրանց ձայնե-
րը բարձրացրին դէպի Աստուած
և ասացին. Տէր, դու ես Աս-
տուած, որ արիր երկինքը և
երկիրը՝ ծովը և նոքանց մէջի
բոլոր բաները: Որ քո Դաւիթ 25
ծառայի բերանովը խօսեցիր և
ասացիր. Ի՞նչու համար ազ-
գերը խռովեցան՝ և ժողովուրդ-
ներն ունայն բաներ մտածեցին:
Երկրի թագաւորները վերկա- 26
ցան, և իշխանները մէկտեղ

* Ի Յոյն չկայ:

27 ոքն և վասն Օծելոյ նորա: Ժո-
ղովեցան արդարև ի քաղաքիս
յայսմիկ ի վերայ սրբոյ Որդւոյ
քո Յիսուսի՝ զոր օծերն՝ Հե-
րովդէս և Պոնտոս Պիղատոս՝
ազգօք և ժողովրդովք Իսրա-
28 յէլի, Առնել որչափ ձեռն քո
և կամք յառաջագոյն սահման-
29 նեցին լինել: Եւ արդ Տէր՝
հայեաց ի սպառնալիս նոցա,
և տուր ծառայից քոց ամե-
նայն համարձակութեամբ խօսել
30 զբանն քո. Ի ձգելդ ձեռն քո ի
բժշկութիւն, և նշանս և արու-
եստս՝ լինել անուամբն սրբոյ
31 Որդւոյ քո Յիսուսի: Եւ մինչ
կային նոքա յաղօթս՝ շար-
ժեցաւ տեղին՝ յորում էին ժո-
ղովեալ, և լցան ամենեքին
Հոգւով Սրբով. և խօսէին
զբանն Աստուծոյ համարձակու-
թեամբ:

32 Եւ բազմութեան հաւատա-
ցելոցն էր սիրտ և անձն մի. և
ոչո՛ք ի նոցանէ ասէր զընչէից
իւրոց թէ իւր իցէ. այլ էր
նոցա ամենայն ինչ հասարակաց:
33 Եւ զօրութեամբ բազմաւ-
տային վկայութիւն առաքելքն
զյարութեանն Տեառն Յիսուսի
Քրիստոսի. և շնորհք մեծամեծք
էին ի վերայ ամենեցուն նոցա:
34 Եւ ոչո՛ք կարօտէր ի նոսա. զի
որ միանգամ տեարքն էին
գեղից կամ ապարանից՝ վաճա-
ռէին և բերէին զգինս վաճա-
35 ռելոցն: Դնէին առ ոտս առա-

հաւաքուեցան Տիրոջ դէմ և
նորա Օծեալի դէմ: Վասնզի 27
արդարև հաւաքուեցան քո
սուրբ Որդի Յիսուսի վերայ,
որին օծեցիր. Հերովդէսը և
Պոնտացի Պիղատոսը՝ հեթա-
նոսների հետ և Իսրայէլի ժո-
ղովուրդների հետ, Որ անեն՝ 28
ինչ որ քո ձեռը և կամքն ա-
ռաջուց սահմանեց լինելու: Եւ 29
հիմա, Տէր, նայիր նոքանց
սպառնալիքին, և տուր քո ծա-
ռաներին, բոլոր համարձակու-
թիւնով քո խօսքը խօսել. Որ 30
քո ձեռը մեկնես, որ բժշկու-
թիւն, և նշաններ և հրաշքներ
լինին, քո սուրբը Որդի Յիսուսի
անունովը: Եւ նոքանք աղօթք 31
անելիս՝ շարժուեցաւ այն տեղը,
ուր որ ժողովուած էին, և
ամենքը Սուրբը Հոգով լցուե-
ցան. և Աստուծոյ խօսքը խօ-
սում էին համարձակութեամբ:

Եւ հաւատացելոց բազմու- 32
թեան սիրտը և հոգին մէկ էր.
և ոչ ոք չէր ասում իր ապրան-
քի մէկի համար՝ թէ իրանն են.
այլ նոքանց համար ամեն բաները
հասարակաց էր: Եւ առա- 33
քեալները մեծ զօրութիւնով
վկայութիւն էին տալիս Տէր
Յիսուսի յարութեան համար.
և մեծ շնորհք կար նոքանց
ամենի վերայ. Որովհետև նո- 34
քանց մէջ ոչ մէկը կարօտու-
թիւն չունէր. վասնզի նոքանք
որ ագարակների կամ տների
տէր էին, ծախում էին, և ծա-

քելոցն. և բաշխէին իւրաքան-
չիւր՝ որպէս ումեք պիտոյ ինչ
36 լինէր: Յովսէփ՝ որ կոչեցաւն
Բառնաբաս յառաքելոց անտի,
որ թարգմանի որդի մխիթարու-
թեան, Ղեւտացի՝ յազգէ Կիպ-
37 րացի. Իր նորա գիւղ, վաճա-
ռեաց և երեր զգինեն եդ առ
ոտս առաքելոցն:

ԳԼ. Ե

1 Իսկ այր ոմն Անանիա անուն,
հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ՝
2 վաճառեաց ագարակ. Եւ խոր-
եաց 'ի գնոց անտի՝ գիտելով և
կնոջն. և երեր մասն ինչ եդ առ
3 ոտս առաքելոցն: Ասէ Պետրոս.
Անանիա՝ ընդէր ելից Սատանայ
զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն
Սրբոյ, և խորել 'ի գնոց գեղջն.
4 Ոչ ապաքէն մինչ կայրն՝ քո էր,
և 'ի վաճառելն՝ ընդ քո իշխա-
նութեամբ էր. զի՞ է զի եդիր
'ի սրտի քում զկրս զայս. ո՛չ
ստեցեր մարդկան, այլ Աս-
5 տուծոյ: Եւ լուեալ Անանիա
զբանս զայսոսիկ՝ անկաւ և եհան
զոգի. և եղև ահ մեծ 'ի վերայ
ամենեցուն՝ որ լուանն զայն:
6 Յոտն կացին երիտասարդքն՝ և
ամփոփեցին զնա, և տարան
7 թաղեցին: Եւ եղև իբրև ժամք
երեք անցին, և կին նորա ո՛չ
գիտէր զինչ եղեալն էր, եմուտ
խուսածի գինը բերում էին, 35
Առաքելոց ոտներն մօտ էին
դնում. և ամեն մէկին տրվում
էր ինչ որ պէտք էր ունենում:
Եւ Յովսէսը որ առաքեալնե-
րից Բառնաբաս կոչուեցաւ, որ 36
Մխիթարութեան որդի կը-
թարգմանուի, Ղեւտացի, ծնն-
դեամբ Կիպրացի. Նա մի ա-
գարակ ունէր, ծախեց և գինը 37
բերաւ առաքելոց ոտների մօտ
դրաւ:

ԳԼ. Ե

Եւ մի մարդ՝ անունն Ան- 1
նիա, իր Սափիրա կնոջ հետ՝ մի
կալուածք ծախեց: Եւ նորա 2
գնիցը թաքցրեց, որ կինն էլ
գիտէր. և մի բաժինը բերաւ
առաքելոց ոտների մօտ դրաւ:
Եւ Պետրոսը ասաց. Անանիա, 3
ինչո՞ւ համար սատանան քո
սիրտը լցրեց, որ դու սուտ
խօսես Սուրբ Հոգւոյն, և
ագարակի գնիցը թաքցնես: 4
Չէ՞ որ նա որ կենում էր՝ քոնն
էր, և ծախուած էլ քո իշխա-
նութեան տակն էր. ինչ է՝ որ
այս բանը դրիր քո սրտի մէջ.
ոչ թէ մարդկանց սուտ
խօսեցիր, այլ Աստուծոյն: Եւ 5
Անանիան հէնց որ այս խօսքը
լսեց, վայր ընկաւ և հոգին
հանեց. և մեծ վախ եղաւ ա-
մենքի վերայ, որ այդ լսեցին:
Երիտասարդներն էլ վերկացան՝ 6
պատանեցին նորան, և տարան

'ի ներքս. Պատասխանի եւ նմա
8 Պետրոս և ասէ. Ասա դու ինձ՝
թէ այնչափ գնոց զգեօղն վա-
ճառեցիք. և նա ասէ. Այո՛
9 այնչափ: Եւ ասէ ցնա Պետ-
րոս. Զի՞ է զի միաբանե-
ցայք դուք փորձել զՀոգին
Տեառն. ահա ոտքն՝ որ թաղեցին
զայրն քո 'ի դրան, հանցեն և
10 զքեզ: Եւ անկաւ անդէն առ
ոտս նորա՝ և եհան զոգի. մտին
երիտասարդքն՝ գտին զնա մեռ-
եալ, և հանին թաղեցին առ
11 առն իւրում: Եւ եղև երկիւղ
մեծ 'ի վերայ ամենայն եկեղե-
ցւոյն, և 'ի վերայ ամենեցուն՝
որ լուան զայն:

12 Եւ 'ի ձեռս առաքելոց լինէին
նշանք և արուեստք բազումք 'ի
ժողովրդեանն. և էին միաբան
ամենեքեան 'ի սրահին Սողով-
13 մոնի: Եւ յայլոց անտի ոչինչ
իշխէր՝ մերձենալ առ նոսա. այլ
յարգէր զնոսա ժողովուրդն:
14 Եւ առաւել ևս յաւելուին
հաւատացեալքն 'ի Տէր, բազ-
մութիւն արանց և կանանց.
15 Մինչև 'ի հրապարակն հանել
զհիւանդս, և դնել պատգարա-
կօք և մահճօք իւրեանց, զի
ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ
Հովանի նորա հասցէ ումեք 'ի
16 նոցանէ: Եւ ժողովէր բազմու-
թիւն շուրջ 'ի քաղաքաց անտի
թաղեցին: Եւ եղաւ երբ որ 7
երեք ժամի չափ անցաւ, նորա
կինն որ չէր գիտում եղածը՝
ներս մտաւ: Պետրոսը պատաս- 8
խանեց նորան և ասաց. Ասա
ինձ՝ թէ այնչափի ծախեցիք
ագարակը. նա էլ ասաց. Այո,
այն չափի: Պետրոսն էլ ասաց 9
նորան. Ինչ է՝ որ միաբանե-
ցաք դուք, որ Տիրոջ Հոգին
փորձէք. ահա քո մարդը թա-
ղողների ոտները դրան մօտ են,
քեզ էլ կ'հանեն: Եւ իսկոյն 10
վայր ընկաւ նորա ոտների առջև՝
և հոգին հանեց. երիտասարդ-
ներն էլ ներս մտան՝ նորան
մեռած գտան, և հանեցին՝ իր
մարդի մօտ թաղեցին: Եւ մեծ 11
ահ եղաւ բոլոր եկեղեցու վե-
րայ, և ամենքի վերայ որ այս
լսեցին:
Եւ առաքեալների ձեռովը 12
շատ նշաններ և հրաշքներ էին
լինում ժողովրդի մէջ. ամենքը
միաբան Սողոմոնի սրահումն
էին: Եւ ուրիշներից ոչ ոք 13
էր համարձակում յարիլ նո-
րանց. բայց ժողովուրդը մեծա-
րում էր նորանց: Եւ առաւել 14
ևս շատանում էին Տիրոջ հա-
ւատացեալները, Ի էղա մի
բազմութիւն մարդկանց և կա-
նանց: Մինչև որ հիւանդնե- 15
րին հանում էին հրապարակ-
ները, և իրանց պատգարակնե-
րովն և մահիճներովն այն տեղ
էին դնում, որ Պետրոսը անց-
նելիս, գոնէ նորա Հովանին

Երուսաղէմ, բերէին ըղձիւանդս և զնեղեալս յայսոց պղծոց. որք և բժշկէին ամենեքեան:

17 Յարուցեալ քահանայապետն, և ամենեքին որ ընդ նմա՝ և աղանդ սադուկեցւոց՝ լցան նախանձու: 18 Եւ արկին զձեռս յառաքեալսն, և եդին զնոսա 19 հրապարակաւ 'ի բանտի: Այլ հրեշտակ Տեառն զդիշերի երեց զդուրս բանտին, և հանեալ 20 զնոսա՝ ասէ. Գնացէք՝ կացէք 'ի տաճարին. և խօսեցարուք ընդ ժողովրդեանն զամենայն 21 պատգամս կենացս այսոցիկ: Եւ իբրև լուան, մտին ընդ առաւօտն 'ի տաճարն՝ և ուսուցանէին: Եկն քահանայապետն՝ և որ ընդ նմա, կոչեցին միաբան դատեանն՝ և զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի, և առաքեցին 'ի բանտն ածել 22 զնոսա: Եւ իբրև եկին սպասաւորքն՝ ոչ գտին զնոսա 'ի բանտին. դարձեալ անդրէն 23 պատմեցին, Եւ ասեն. Թէ Զբանտն գտաք փակեալ ամենայն զգուշութեամբ, և ըզպահապանսն՝ զի կային առ դրանն. բացաք՝ և 'ի ներքս զոք ոչ 24 գտաք: Իբրև լուան զբանս զայս *իշխանք տաճարին՝ և

* 'Ի Յոյն. քահանայքն և

Նորանցից մէկի վերայ ընկնէ: Եւ 16
շրջակայ քաղաքներից բազմութիւնքն հաւաքվում էին Երուսաղէմ, որ բերում էին հիւանդներին և պիղծ ոգիներից չարչարուածներին, որոնք ամենքն էլ բժշկվում էին:

Եւ վերկացաւ քահանայա- 17
պետը և ամենքն որ նորա հետ էին, և Սադուկեցոց աղանդը, և նախանձով լցուեցան. Եւ 18
ձեռք դցեցին առաքեալներին, և նորանց դրին հասարակաց բանտի մէջ: Բայց Տիրոջ հրեշ- 19
տակը գիշերով բանտի դռները բացաւ, և նորանց դուրս հանելով ասաց. Գնացէք և կանգ- 20
նեցէք տաճարի մէջ և այս կեանքի բոլոր հրամանները խօսեցէք ժողովրդի հետ: Եւ երբ 21
որ լսեցին, առաւօտանց մտան տաճարը և սովորեցնում էին. քահանայապետն էլ եկաւ և նորանք էլ որ նորա հետ էին, և կանչեցին ատեանը և Իսրայէլի որդոց բոլոր ծերակոյտն մէկ տեղ, և ուղարկեցին բանտը որ բերեն նորանց: Եւ երբոր 22
սպասաւորները եկան, նորանց չգտան բանտի մէջ. և ետ դարձան պատմեցին: Եւ ասացին. 23
Թէ Բանտը բոլոր զգուշութեամբ փակած գտանք, և պահապաններն էլ դուրսը դրան մօտ կանգնած. բայց երբոր բաց արինք՝ ներսումն ոչ ովքն

քահանայապետն՝ հիանային վասն նոցա, թէ զի՞նչ արդեօք
25 լինիցի այն: Եւ եկն ոմն պատմեաց նոցա՝ թէ Ահա արքն՝ զորս եդիք 'ի բանտի՝ կամ 'ի տաճարին, և ուսուցանեն զժո-
26 ղովուրդն: Յայնժամ երթեալ իշխանն սպասաւորօքն հանդերձ՝ զնոսա ոչ բռնութեամբ. քանզի երկնչէին 'ի ժողովրդենէն՝ զի մի քարկոծեսցին: Եւ
27 ածեալ զնոսա՝ կացուցին յատենի. եհարց զնոսա քահանա-
28 յապետն, Եւ ասէ. Ոչ պատուիրելով պատուիրեցաք ձեզ՝ մի ուսուցանել յանուն յայն. և արդ՝ ահաւասիկ լցիք զԵրուսաղէմ ուսմամբ ձերով, և կամիք ածել 'ի վերայ մեր զարիւն զառն զայնորիկ:

29 Պատասխանի ետ Պետրոս և այլ առաքեալքն և ասեն. Հնազանդել պարտ է Աստուծոյ
30 առաւել քան մարդկան: Աստուած հարցն մերոց յարոյց զՅիսուս՝ զոր դուք սպանիք
31 կախեալ զփայտէ: Զնա Աստուած առաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջովն իւրով տալ ապաշխարութիւն Իսրայէլի՝ և
32 թողութիւն մեղաց: Եւ մեք եմք վկայք բանիցս այսոցիկ, և Հոգին Սուրբ՝ զոր ետ Աստուած հնազանդելոց իւրոց:
33 Եւ նոքա իբրև լուան, առա-

չգտանք: Եւ երբոր քահա- 24
նայապետը և տաճարի իշխանը այս խօսքը լսեցին, հիանում էին նորանց համար, թէ սա ինչ պիտի լինի: Եւ մէկն եկաւ 25
նորանց պատմեց, թէ Ահա այն մարդիկն, որ բանտի մէջ դրիք, տաճարումը կանգնած սովորեցնում են ժողովրդին: Այն ժա- 26
մանակ իշխանն սպասաւորների հետ գնաց՝ նորանց բերաւ առանց բռնութեան. քանզի ժողովրդից վախենում էին՝ որ չքարկոծեն: Եւ երբոր բերին 27
նորանց՝ կանգնեցրին ատեանումը. և քահանայապետը հարցրեց նորանց, Եւ ասաց. Ձէ՞ որ 28
պատուիրելով պատուիրեցինք ձեզ՝ չսովորեցնել այդ անունովը. և ահա Երուսաղէմը լցրիք ձեր ուսմունքովը, և կամենում էք այն մարդու արիւնը մեզ վերայ ձգել:

Պետրոսը և առաքեալները 29
պատասխանելով ասացին. Աստուծոյ պէտք է աւելի հնազանդել քան թէ մարդկանց: Ա՛ռ Հարանց Աստուածը յա- 30
րոյց Յիսուսին՝ որին դուք փայտից կախած սպանեցիք: Աս- 31
տուած նորան Առաջնորդ և Փրկիչ բարձրացրեց իր աջովն, որ Իսրայէլին ապաշխարութիւն և մեղաց թողութիւն տայ: Եւ մենք նորա վկաներն ենք 32
այս բաների համար, և Սուրբ Հոգին էլ, որ Աստուած իրան հնազանդողներին տուաւ: Եւ 33

տանային՝ և խորհէին սպանանել զնոսա։

31 Յարուցեալ ոմն ի մէջ ատենին վարիսեցի՝ որում՝ անուն էր Գամաղիէլ, օրէնսուսոյց՝ պատուական ամենայն ժողովրդեանն. հրամայեաց սակաւիկ
35 մի զարան արտաքս տանել։ Եւ ասէ ցնոսա. Ա՛րք Իսրայէլացիք՝ հայեցարուք ի ձեզ վասն արանցս այսոցիկ՝ զինչ արժան
36 իցէ գործել։ Յառաջ քան զաւուրս զայսոսիկ յարեաւ Թեւդաս՝ ասել զանձնէ, թէ իցէ ոմն. յոր անկան արք թուով իբրև չորեքհարիւր. որ սպանեալ՝ և ամենեքեան որ միաբան էին ընդ նմա, քակտեցան՝ և
37 եղեն յոչինչ։ Յետ նորա յարեաւ Յուդա Գալիլեացի՝ յաւուրս աշխարհագրին. և ապստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի իւր. և նա կորեաւ՝ և ամենեքեան որ նմայն հաւա-
38 նեալ էին, ցրուեցան։ Եւ զարդիս ասեմ ձեզ. Ի բաց կացէք յարանցդ յայդցանէ՝ և թոյլ տուք դոցա. զի թէ ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ
39 կամ գործդ, քակտեսցի։ Այլապէս թէ Աստուծոյ է՝ ոչ կարէք քակտել զդոսա. գուցէ և աստուածամարտք գտանիցիք։
40 Հաւանեցան նմա. և կոչեցեալ զառաքեալսն՝ գան հարին, և պատուիրեցին մի ևս խօսել յանուն Յիսուսի. և արձակեցին

նորանք երբոր լսեցին, կատարեալ էին. և խորհում էին, որ նորանց սպանեն։

Բայց մի փարիսեցի վերկացաւ ատեանումն՝ անունը Գամաղիէլ, օրէնքի վարդապետ՝ բոլոր ժողովրդի առջև պատուական, հրամայեց առաքեալներին մի քիչ դուրս տանել, Եւ
35 նորանց ասաց. Իսրայէլացի մարդիկ, զգուշացէք այս մարդկանց համար, թէ ի՞նչ պիտի անէք։ Քանզի այս օրերից
36 առաջ Թեւդասը վերկացաւ՝ ասելով թէ ինքն մի բան է. որ թուով չորս հարիւրի չափ մարդիկ նորան յարեցան. որ ինքն սպանուեցաւ՝ և ամենքն էլ՝ որ նորան հնազանդել էին,
37 ցրուեցան և ոչինչ եղան։ Լուրանից յետոյ Գալիլեացի Յուդան վերկացաւ աշխարհագրի օրերումը. և շատ ժողովուրդ ապստամբեցրեց իրան՝ յետոյը. նա էլ կորաւ՝ և ամենքն էլ
38 որ նորան հնազանդել էին, ցիրուցան եղան։ Եւ հիմա ասում եմ ձեզ. Հեռու կացէք այդ մարդկանցից, և թողէք զորանց. քանզի եթէ այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է, կ'քանդուի. Բայց
39 եթէ Աստուածանից է, չէք կարող քանդել զորան. մի գուցէ Աստուծոյ դէմ կռիւ անող էլ
40 գտնուիք։ Նորանք էլ համոզուեցան նորան. և առաքեալներին կանչեցին՝ ծեծեցին,

41 զնոսա։ Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուան Տեառն արժանի եղեն
42 անարգելոյ։ Եւ զամենայն օր ի տաճարին և առանին ոչ դադարէին ուսուցանել և աւետարանել զՅիսուս Քրիստոս։

ԳԼ. Զ.

1 Եւ յաւուրսն յայնոսիկ՝ ի բազմանալ աշակերտացն, եղև տրտունջ Յունաց առ Եբրայեցիսն. զի արհամարհեալ լինէին ի պաշտամանն հանա-
2 պազորդ այրիք նոցա։ Կոչեցին երկոտասանքն զբազմութիւն աշակերտացն՝ և ասեն. Ո՛չ է հաճոյ մեզ թողուլ զբանն Աստուծոյ և պաշտել զսեղանս.
3 Ընտրեցէք եղբարք վկայեալս ի ձէնջ արս եօթն, (լիս Հոգւով Սրբով և իմաստութեամբ.) զորս կացուսցուք ի վերայ
4 պիտոյիցս այսոցիկ. Եւ մեք աղօթից և պաշտաման* և բանին
5 հպատակ լիցուք։ Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի ամենայն բազմութեանն. և ընտրեցին զՍտեփանոս՝ այր լի հաւատով և Հոգւով Սրբով, և զՓիլիպպոս և զՊրոքորոն և զՆիկանորոն

և պատուէր տուին, որ չխօսեն Յիսուսի անունովը. և արձակեցին նորանց։ Իսկ նորանք
41 ուրախանալով գնացին ատենի երեսից, որովհետև արժանի եղան նորա անունի համար
42 անարգուիլ։ Եւ բոլոր օրը չէին դադարում տաճարումը և տներումը սովորեցնել և Յիսուսին Քրիստոսին աւետարանել։

ԳԼ. Զ.

1 Եւ այն օրերումն՝ երբոր աշակերտները շատացան, Հելլենացոց կողմանէ տրտունջ եղաւ Եբրայեցոց դէմ. թէ նորանց որբևայրիքը ամեն օրուան մատակարարութեանց մէջ անտես
2 էին լինում։ Եւ տաներկուքը կանչեցին աշակերտների բազմութիւնը և ասացին. Ա՝նիրաւունք չէ որ Աստուծոյ խօսքը թողած սեղանին ծառայենք։
3 Իսա, եղբայրք, ձեզանից եօթը վկայուած մարդիկ ընտրեցէք, Սուրբ Հոգով և իմաստութիւնով լցուած, որոնց այս
4 պիտոյից վերայ դնենք։ Իսկ մենք աղօթքին և խօսքի պաշտամունքին հետևինք։
5 Եւ այս խօսքը բոլոր բազմութեան առջև հաւանելի երևեցաւ. և ընտրեցին Ստեփանոսին որ Սուրբ Հոգով և հաւատքով լցուած

* Ի Յոյն չէ։

և զՏիմոնՔա և զՊարմենա, և
զՆիկողայոս զեկն Ընտիոքացի.
6 Որս կացուցին առաջի առա-
քելոցն՝ և աղօթս արարեալ.
եդին ՚ի վերայ նոցա զձեռս:
7 Եւ բանն Աստուծոյ աճէր. և
բազմանայր թիւ աշակերտացն
յոյժ յԵրուսաղէմ. և բա-
զում ժողովք ՚ի քահանայիցն
անսային հաւատոցն:

8 Ստեփանոս՝ այր լի շնորհօք
և զօրութեամբ, առնէր արու-
եստս և նշանս մեծամեծս ՚ի ժո-
9 ղովրդեանն: Յարեան ոմանք ՚ի
ժողովրդենէն, որ կոչէր Լիբերտացւոց
և Կիւրենացւոց և Աղեքսանդրացւոց՝ և որ ՚ի Կիլիկեցւոց՝
և Ասիա, վիճել ընդ Ստեփա-
10 նոսի. Եւ ոչ կարէին զդէմ
ունել զիմաստութեանն և զՀոգ-
11 ւոյն, որով խօսէր: Յայն-
ժամ հրապուրեցին արս ոմանս
ասել. թէ Լուաք զդորա խօսել
բանս հայհոյութեան ՚ի Աստ-
12 ուծս և յԱստուած: Եւ խռո-
վեցին զժողովուրդն և զերի-
ցունս և զդպիրսն. և հասեալ ՚ի
վերայ՝ յափշտակեցին զնա՝ և
13 ածին յատեան: Եւ կացուցին
վկայս սուտս՝ որ ասէին, Այրս
այս ոչ դադարէ խօսել բանս
հայհոյութեան զտեղւոյն սրբոյ
14 և զօրինացն: Լուաք ՚ի դմանէ
զի ասէր՝ թէ Յիսուս Նազովրեցի՝ նա քակեսցէ զտեղիս
մարդէր, և Փիլիպպոսին և Պրո-
խորոսին և Նիկանորին և Տի-
մոնին և Պարմենային և Ն-
տիոքացի նորահաւատ Նիկո-
ղայոսին: Որոնց կանգնեցին 6
առաքելոցն առջև. և աղօթք
անելով ձեռք դրին նորանց վե-
րայ: Եւ Աստուծոյ խօսքը 7
աճում էր և աշակերտների
համարը խիստ շատանում էր
Երուսաղէմում. և քահանանե-
րից էլ շատ բազմութիւն հնա-
զանդվում էին հաւատքին:

Ստեփանոսն էլ հաւատքով 8
և զօրութիւնով լցուած, մեծ
մեծ հրաշքներ և նշաններ էր
անում ժողովրդի մէջ: Եւ 9
վերկացան ոմանք այն ժողովա-
րանից՝ որ Լիբերտինացոց էր
կոչվում. և Կիւրենացիներից և
Աղեքսանդրացիներից և նորան-
ցից որ Կիլիկիայից և Ասիայից
էին, և վիճաբանում էին Ստե-
փաննոսի հետ. Եւ չէին կարո- 10
ղանում դէմ կենալ այն իմաս-
տութեանը՝ և այն հոգոյն,
որով նա խօսում էր: Այն ժա- 11
մանակ ֆ ֆանի մարդկանց
հրապուրեցին որ ասեն, թէ
Մենք լսեցինք դորանից, որ
հայհոյութեան բաներ էր խօ-
սում՝ Մովսէսի և Աստուծոյ
դէմ: Եւ ժողովրդին և երէց- 12
ներին և դպիրներին գրգռեցին.
և վերայ հասան յափշտակեցին
նորան՝ և տարան ատեանը. Եւ
սուտ վկաներ կանգնեցրին, որ
ասում էին. Այս մարդը չէ 13

զայս, և փոխեսցէ զօրէնս՝ զոր
15 ետ մեզ Մովսէս: Եւ հայեցեալ
՚ի նա ամենեցուն որ նստէին
յատենին, տեսին զերեսս նորա
եբրև զերեսս հրեշտակի:

ԳԼ. Ի.

1 Ասէ քահանայապետն՝ թէ
Արդարև այդ այդպէս իցէ:
2 Եւ նա ասէ. Արք եղբարք և
հարք՝ լուարուք ինձ: Աստուած
փառաց երևեցաւ Հօր մերում
Աբրահամու մինչդեռ ՚ի միջա-
գետս էր, մինչչև բնակեցու-
ցեալ էր զնա ՚ի Խառան. և ասէ
3 ցնա: Ե՛լ յերկրէ քումմէ և
յազգէ քումմէ, և ՚ի յերկիր՝
4 զոր ցուցից քեզ: Յայնժամ
ելեալ յերկրէն Քաղդէացւոց
բնակեցաւ ՚ի Խառան. և անտի
յետ մեռանելոյ Հօր նորա՝
փոխեաց, և պանդխտեցոյց զնա
յերկրիս յայսմիկ, յորում
5 դուք այժմ բնակեալ էք: Եւ
ոչ ետ նմա ժառանգութիւն ՚ի
սմա, և ոչ քայլ մի ոտին. և
խոստացաւ տալ նմա զսա ՚ի
բնակութիւն, և զաւակի նորա
յետ նորա, մինչ ոչ գոյր նորա
6 որդի: Խօսեցաւ Աստուած
այսպէս, թէ Եղիցի զաւակ
դադարում այս սուրբ տեղոյ և
օրէնքի դէմ՝ հայհոյութեան
բաներ խօսելուց: Քանզի մենք 14
լսեցինք դորանից՝ որ ասում էր,
թէ Այս Յիսուս Նազովրեցին
այս տեղը կ՚քանդէ, և կ՚փոխէ
Մովսէսի մեզ տուած սովորու-
թիւնները: Եւ ատեանումը 15
նստողների ամենը երբոր մտիկ
տուին նորան՝ նորա երեսը հրեշ-
տակի երեսի նման տեսան:

ԳԼ. Ի.

Եւ քահանայապետն ասաց. 1
թէ Արդեօք այդ բաներն այդպէս
են: Նա էլ ասաց. Մարդիկ 2
եղբարք և հարք, լսեցէք. Փա-
ռաց Աստուածն երևեցաւ մեր
հայր Աբրահամին, որ Մինչ-
գետումն էր, գնա Խառանի մէջ
չբնակուած. և ասաց նորան.
Դուրս եկ քո երկրից և քո 3
ազգից, և եկ այն երկիրն՝ որ
ես ցոյց կ՚տամ քեզ: Այն ժա- 4
մանակ Քաղդէացոց երկրից
դուրս եկաւ՝ Խառանումն բնա-
կեցաւ. և այն տեղից նորա հօր
մեռնելուց յետոյ՝ նորան փո-
խադրեց, և պանդխտացրեց այս
երկրումը, որում դուք հիմա
բնակած էք: Եւ սորանում ժա- 5
ռանգութիւն չ՚տուաւ նորան, և
ոչ էլ մի ոտքի քայլի փէղ, և
խոստացաւ նորան այս տեղը
ստացուածք տալ նորան. և նո-
րանից յետոյ՝ նորա զաւակին,
նա դեռ որդի չունեցած: Եւ 6

նորա պանդուխտ յօտար երկրի. և ծառայեցուսցեն զնա՝ և
չարչարեսցեն զմն չորեքհա-
7 րիւր։ Եւ զաղգն որում ծա-
ռայեսցեն՝ դատեցայց ես, ասէ
Աստուած. և յետ այսորիկ
ելցեն՝ և պաշտեսցեն զիս 'ի
8 տեղւոջս յայսմիկ։ Եւ ետ նմա
ուխտ թլփատութեան. և ապա
ծնաւ զԻսահակ. և թլփատեաց
զնա յաւուր ութերորդի. և
Իսահակ զՅակովբ. և Յակովբ
9 զերկոտասան նահապետսն։ Եւ
նահապետքն նախանձեալ ընդ
Յովսէփայ՝ վաճառեցին յԵ-
գիպտոս. և էր Աստուած ընդ
10 նմա։ Եւ փրկեաց զնա յամե-
նայն նեղութեանց նորա. և ետ
նմա շնորհս և իմաստութիւն
առաջի փարաւոնի արքային
Եգիպտացւոց. և կացոյց զնա
իշխան Եգիպտացւոցն՝ և ամե-
11 նայն տան նորա։ Եւ եկն սով
յամենայն երկիրն Եգիպտոսի,
և 'ի Քանան նեղութիւն մեծ.
և ոչ գտանէին կերակուր հարքն
12 մեր։ Եւ լուեալ Յակովբայ
թէ գտանի կերակուր յԵ-
գիպտոս՝ առաքեաց զՀարսն մեր
13 յառաջագոյն։ Եւ յերկրորդ-
դումն ետ ծանօթս Յովսէփ
եղբարց իւրոց. և յայտնի եղև
14 ազգն նորա փարաւոնի։ Առա-
քեաց Յովսէփ՝ և կոչեաց զՅա-
կովբ զՀայր իւր, և զամենայն
ազգատոհմն՝ ոգիս եօթանասուն
15 և հինգ։ Եւ էջ Յակովբ
յԵգիպտոս՝ և վախճանեցաւ

Աստուած այսպէս խօսեց. թէ
Նորա զաւակը պանդուխտ կը
լինի օտար երկրի մէջ. և կը ծա-
ռայեցնեն նորան, և կ'չարչարեն
չորս հարիւր տարի։ Եւ այն 7
ազգին, որին կ'ծառայեն, նո-
րան ես կ'դատեմ, ասաց Աս-
տուած. և սորանից յետոյ
դուրս կ'գան՝ և այս տեղ ինձ
կ'պաշտեն։ Եւ նորան թլփա- 8
տութեան ուխտը տուաւ. և
յետոյ Իսահակին ծնաւ, և
ութերորդ օրը թլփատեց նո-
րան. և Իսահակը Յակոբին, և
Յակոբը տասներկու նահապետ-
ներին։ Եւ նահապետները նա- 9
խանձելով Յոսէփի վերայ՝
ծախեցին Եգիպտոս. և Աս-
տուած նորա հետ էր։ Եւ 10
փրկեց նորան իր բոլոր նեղու-
թիւններից. և նորան շնորհք
և իմաստութիւն տուաւ Եգիպ-
տոսի փարաւոն թագաւորի
առջև. և նորան իշխան կանգ-
նեցրեց Եգիպտոսի և իր բոլոր
տան վերայ։ Եւ սով եկաւ 11
Եգիպտոսի բոլոր երկիրը՝ և
Քանան էլ, և մեծ նեղութիւն.
և մեր հարքը կերակուր չէին
գտնում։ Եւ Յակոբը լսելով 12
թէ Եգիպտոսումը ցորեն կայ,
մեր հարանցն ուղարկեց առաջին
անգամը։ Եւ երկրորդումը Յո- 13
սէփ իրան ճանաչել տուաւ իր
եղբայրներին. և Յոսէփի ազգը
յայտնի եղաւ փարաւոնին։ Յո- 14
սէփ էլ ուղարկեց և կանչեց
իր Հայր՝ Յակոբին, և բոլոր

16 ինքն և հարքն մեր։ Եւ փո-
խեցան 'ի Սիւքեմ և եդան
յայրին, զոր ստացաւ Աբրա-
համ՝ գնոց արծաթոյ յորդւոցն
17 Եմովրայ՝ 'ի Սիւքեմ։ Իբրև
մերձեցաւ ժամանակ աւետեացն՝
զոր խոստացաւ Աստուած Աբ-
րահամու, ածեաց ժողովուրդն՝
և բազմացաւ յԵգիպտոս.
18 Մինչև յարեաւ այլ թագաւոր
յԵգիպտոս՝ որ ոչ ճանաչէր
19 զՅովսէփ։ Նա հնարեցաւ
ազգին մերում, և չարչարեաց
զՀարսն մեր առնել ընկեցիկ
զմանկունս նոցա՝ զի մի ապրես-
20 ցին։ Յորում ժամանակի ծնաւ
և Մովսէս՝ և էր կայտառ
առաջի Աստուծոյ. որ և սնաւ
'ի տան հօր իւրոյ ամիս երիս։
21 Եւ յընկեցիկն առնել զնա՝
երարձ զնա դուստր փարաւոնի,
և սնոյց զնա իւր յորդեդիրս։
22 Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն
իմաստութեամբ Եգիպտացւոցն.
և էր զօրաւոր բանիւք և գոր-
23 ծովք իւրովք։ Իբրև լցաւ նորա
քառասնամեայ ժամանակ, անկաւ
'ի սիրտ նորա շրջել զեղբարբքն
իւրովք՝ զորդւովքն Իսրայէլի։
24 Եւ տեսեալ զոմն զրկեալ՝
զչարեցաւ, և խնդրեաց զվրէժ
զրկելոյն՝ սպանեալ զԵգիպ-
25 տացին։ Օ՛մտաւ ածէր թէ
իմասցին եղբարք նորա, զի
Աստուած 'ի ձեռն նորա տալոց
էր զփրկութիւն նոցա. և նոքա
26 ոչ իմացան։ Եւ 'ի վաղիւ անդր
երևեցաւ նոցա մինչև մարտն-

ազգատոհմին՝ եօթանասուն և
հինգ հոգիք։ Եւ Յակոբ իջաւ 15
Եգիպտոս, և վախճանեցաւ
ինքն և մեր հարքը։ Եւ փո- 16
խադրուեցան Սիւքեմ, դրուե-
ցան այն գերեզմանում՝ որ
Աբրահամ Սիւքեմի հօր Եմ-
բայի որդիներից առաւ արծա-
թով։ Եւ երբոր աւետիքի 17
ժամանակը մօտեցաւ՝ որ Աս-
տուած Աբրահամին երդումով
խոստացել էր, ժողովուրդը ա-
ճեց և շատացաւ Եգիպտոսումն.
Մինչև որ մի ուրիշ թագաւոր 18
վերկացաւ Եգիպտոսումը՝ որ
Յոսէփին չէր ճանաչում։ Նա 19
հնարք գործածեց մեր ազգի
դէմ, և մեր հարանցը չար-
չարեց՝ որ իրանց երեխաները
դուրս գցեն, որ չապրին։ Որ 20
այն ժամանակ Մովսէսն էլ ծնը-
ուեցաւ, և գեղեցիկ էր Աստու-
ծոյ առջև. որ իր հօր տանն
երեք ամիս կերակրուեցաւ։ Եւ 21
երբ որ դուրս գցեցին նորան,
փարաւոնի աղջիկը վեր առաւ
նորան և մեծացրեց նորան՝ իրան
իբրև որդի։ Եւ Մովսէս վար- 22
ժուեցաւ Եգիպտացոց բոլոր
իմաստութիւնովը. և զօրաւոր
էր խօսքերով և գործքերով։
Եւ երբոր նորա քառասուն տա- 23
րեկան ժամանակը լրացաւ, նորա
սրտի մէջ ընկաւ՝ որ իր եղբայր-
ներին՝ Իսրայէլի որդիներին
այցելութիւն անէ։ Եւ երբոր 24
տեսաւ, որ մէկը զրկուած էր,
պաշտպանեց և այն զրկուածի

էին՝ և վարեաց զնոսա 'ի խա-
զաղութիւն, ասէ. Ա՛ռք եղբարք
էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս:
27 Իսկ որ զրկէր զնկերն,
մերժեաց զնա՝ և ասէ. Ո՞
կացոյց զքեզ իշխան և դատաւոր
28 'ի վերայ մեր: Այլեթէ սպանա-
նել կամիցիս զս՝ զնրբրինակ
սպաներ երէկ զԵգիպտացին:
29 Եւ փախեաւ Այսուհետև
բանիցս յայսցանէ, և եղև
պանդուխտ յերկրին Մադիա-
մու. ուր ծնաւ երկուս որդիս:

30 Եւ 'ի կատարել ամացն քա-
ռասանից, երևեցաւ նմա յանա-
պատի լերինն Սինայ հրեշտակ
Տեառն 'ի բոց հրոյ մորենւոյն:
31 Եւ Այսուհետև տեսեալ՝ զար-
մացաւ ընդ տեսիլն, և 'ի
մատչելն նորա նշմարել՝ եղև
32 ձայն Տեառն. Ես եմ Աստուած
հարց քոց, Աստուած Աբրա-
համու՝ և Սահակայ՝ և Յակովբայ. և զահի հարեալ Այսուհետև
33 սէաս՝ ոչ իշխեր հայել: Եւ ասէ
ցնա Տէր. Լո՛ւծ զկօշիկս ոտից
քոց, զի տեղիդ յորում դուդ
34 կացեր՝ երկիր սուրբ է: Տեսա-
նելով տեսի զչարչարանս ժո-

զովրդեան իմոյ՝ որ յԵգիպտոս,
25 և լուայ հեծութեան նոցա՝ և
իջի փրկել զնոսա. և արդ եկ
առաքեցից զքեզ յԵգիպտոս:
35 Զայն Այսուհետև՝ զոր ուրացանն
և ասեն. Ո՞ կացոյց զքեզ
իշխան և դատաւոր 'ի վերայ
մեր, զնա Աստուած իշխան և
փրկիչ առաքեաց 'ի ձեռն հր-
ելշտակին, որ երևեցաւ նմա 'ի
36 մորենւոջն: Զա եհան զնոսա՝
արարեալ նշանս և արուեստս
յերկրին Եգիպտացւոց՝ և 'ի
կարմիր ծովուն, և յանապատին՝
37 ամս քառասուն: Այս Այսուհետև
է, որ ասաց ցորդիսն Իսրայէլի.
Այսուհետև յարուցցէ ձեզ Տէր
Աստուած ձեր յեղբարց ձերոց
38 իբրև զիս, նմա լուիջիք: Սա է
որ եղև յեկեղեցւոջն յանա-
պատին ընդ հրեշտակին, որ
խօսեցաւ ընդ նմա 'ի լերինն
Սինայ՝ և ընդ հարսն մեր. որ
ընկալաւ զպատգամս կենդանիս՝
39 տալ մեզ: Որում ոչ կամեցան
հնազանդ լինել հարքն մեր.
այլ մերժեցին և դարձան սրբ-
40 տիւք իւրեանց յԵգիպտոս: Եւ
ասեն ցԱհարովն. Արա մեզ
աստուածս, որ երթայցեն ա-
ռաջի մեր. զի Այսուհետև՝ զայն
որ եհան զմեզ յերկրէն Եգիպ-
տացւոց, ոչ գիտեմք զի՞ եղև
41 նմա: Եւ արարին յաւուրսն
յայնոսիկ որթ, և մատուցին
զոհս կռոց, և ուրախ լինէին 'ի
42 գործս ձեռաց իւրեանց: Դար-
ձոյց Աստուած և մատնեաց

զոհ կանգնել ես. սուրբ երկիր
է: Տեսանելով տեսայ իմ ժո- 34
զովրդի չարչարանքներն որ Ե-
գիպտոսումն է, և լսեցի նո-
րանց հառաչանքը և իջայ որ
նորանց փրկեմ. և հիմա եկ,
զքեզ ուղարկեմ Եգիպտոս: Զայն 35
այն Այսուհետև՝ որին ուրացան
և ասացին. Դրեզ ո՞վ կանգ-
նեցրեց մեզ վերայ իշխան և
դատաւոր, Աստուած նորան
իշխան և փրկիչ ուղարկեց
հրեշտակի ձեռամբն, որ մորե-
նումն երևեցաւ նորան: Զա 36
հանեց նորանց՝ և հրաշքներ և
նշաններ արաւ Եգիպտոսի եր-
կրումը, և Կարմիր ծովումն, և
անապատումը քառասուն տարի:
Սա այն Այսուհետև է, որ ասաց 37
Իսրայէլի որդոցը. Զձեր Տէր
Աստուածը մի մարգարէ վեր
կ'կացնէ ձեզ համար ձեր եղ-
բայրներիցն ինձ նման. նորան
լսեցէք: Սա է՝ որ եղաւ ժո- 38
զովրդի մէջ անապատումն այն
հրեշտակի հետ, որի հետ Սի-
նայ լեռնումը խօսեց՝ և մեր
հարանց հետ. որ կենդանի
պատգամներ առաւ՝ որ տայ
մեզ: Որին մեր հարքը չկամե- 39
ցան հնազանդ լինել. այլ մեր-
ժեցին և իրանց սրտերով, ետ
դարձան Եգիպտոս. Եւ Ահա- 40
րոնին ասացին. Այսուհետև՝ մեզ համար
աստուածներ շինիր, որ մեր առջև
գնան. քանզի այն Այսուհետև՝ որ
Եգիպտոսի երկրիցը մեզ հանեց,
չենք գիտում ի՞նչ եղաւ նո-

զնոսա 'ի պաշտօն զօրութեան
երկնից. որպէս և գրեալ է 'ի
գիրս մարգարէից. Մ'ելիք
զոհս և պատարագս մատուցէք
ինձ զամս քառասուն՝ յանապա-
43 տին տունդ Իսրայէլի. Եւ առիք
զվրանն Մ'ողոքայ, և զաստղն
աստուծոյն Ռեմփայ, զպատ-
կերսն՝ զոր արարիք երկիրպա-
գանելոյ նոցա. և փոխեցից զձեզ
44 յայնկողմն Բաբելացւոց: Խո-
րանն վկայութեան էր ընդ
հարսն մեր յանապատին. որպէս
հրաման. ետ՝ որ խօսէրն ընդ
Մ'ովսէսի, առնել զայն ըստ
45 օրինակին՝ զոր ետես: Օ՞որ և
ընկալեալ բերին հարքն մեր
հանդերձ Յեսուաւ 'ի վիճակ
ազգացն, զորս մերժեաց Աստ-
ուած յերեսաց հարցն մերոց
46 մինչև յաւուրս Դաւթի, Որ
եգիտ շնորհս առաջի Աստու-
ծոյ, և խնդրեաց գտանել
զյարկս Աստուծոյ Յակովբայ:
47 Նա և Սողոմոն շինեաց նմա
48 տուն: Այլ ո՞չ եթէ Բարձ-
րեալն 'ի ձեռագործ տաճարս
բնակէ. այլ որպէս մարգարէն
49 ասէ. Երկինքս աթոռ իմ են. և
երկիրս պատուանդան ոտից
իմոց. ո՞րպիսի տուն շինեցիք
ինձ՝ ասէ Տէր. կամ զի՞նչ
50 տեղի հանգստեան իմոյ. Ո՞չ
ձեռն իմ արար զայս ամենայն:
51 Խստապարանոցք և անթլփատք
սրտիւք և ականջօք. դուք
հանապազ Հոգւոյն Սրբոյ
հակառակ կայք. որպէս հարքն

ռան: Եւ այն օրերումն մի 41
հորթ շինեցին, և զոհ մատու-
ցին կուռքին և ուրախանային իմ
իրանց ձեռաց գործքերովը: Եւ 42
Աստուած երեսը դարձուց և
նորանց մատնեց՝ որ երկնքի զօ-
րութեանը պաշտեն. ինչպէս որ
գրուած է մարգարէների գրք-
քումն. Մ'ելիք զոհեր և պա-
տարագներ բերիք ինձ քառա-
սուն տարի անապատումն, ովք
Իսրայէլի տուն. Եւ Մ'ողոքի 43
վրանն առիք, և ձեր Ռեմփա
աստուծոյ աստղն. այն պատկեր-
ներն որ արիք նորանց երկրպա-
գութիւն տալու համար. և ձեզ
կ'փոխադրեմ Բաբիլոնից այն
կողմը: Վկայութեան խորանը 44
մեր հարանց հետ անապատումն
էր. ինչպէս հրաման տուաւ
Մ'օսէսի հետ խօսողը, որ նո-
րան անէ այն օրինակի պէս՝ որ
տեսաւ: Որ նորան մեր հարքն 45
էլ առին բերին Յեսուայ հետ
այն ազգերի կալուածքը, որ Ա-
տուած դուրս արաւ մեր հա-
րանց երեսիցը. մինչև Դաւթի
օրերը, Որ Աստուծոյ առջև 46
շնորհք գտաւ, և խնդրեց՝ որ
Յակոբի Աստուծոյ համար բնա-
կարան գտնէ: Բայց Սողոմոնը 47
շինեց նորա համար տուն. Սա- 48
կայն Բարձրեալն ոչ թէ ձե-
ռագործ տաճարներում է բնա-
կում, ինչպէս մարգարէն ա-
սում է. Երկինքն իմ աթոռն 49
է, և երկիրն իմ ոտից պատ-
ուանդան. ի՞նչպիսի տուն պիտի

52 ձեր, և դուք: Օ՞ի 'ի մարգա-
բէից ոչ հալածեցին հարքն
ձեր. և սպանին զայնոսիկ՝ որ
յառաջագոյն պատմեցին վասն
գալստեան Արդարոյն, որոյ
դուք այժմ մատնիչք և սպանողք
53 եղէք. Ոյք առիք զօրէնս 'ի
հրամանս հրեշտակաց, և ոչ
պահեցիք:

54 Եւ լուեալ զայս զայրանային
'ի սիրտս իւրեանց, և կրճտէին
զատամունս 'ի վերայ նորա:
55 Եւ նա էր լի Հոգւով Սրբով.
հայեցաւ յերկինս՝ և ետես
զփառս Աստուծոյ և զՅիսուս,
զի կայր ընդ աջմէ Աստուծոյ,
և ասէ. Ահա տեսանեմ զերկինս
բացեալ՝ և զՈրդի մարդոյ զի
կայ ընդ աջմէ Աստուծոյ:
56 Աղաղակեալ 'ի ձայն մեծ՝ լսցին
զականջս իւրեանց, և դիմեցին
առ հասարակ 'ի վերայ նորա:
57 Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝
քարկոծէին. և վկայքն զնէին
զձորձս իւրեանց առ ոտս երիտա-
սարդի միոջ՝ որ կոչէր Սաւուղ:
58 Եւ քարկոծ առնէին զՍտե-
փանոս, որ կարդայր և ասէր.
59 Տէր Յիսուս՝ ընկալ զոգի իմ:

շինէք ինձ համար, ասում է
Տէրը, կամ ո՞րն է իմ հանգիստ
առնելու տեղը: Զի՞նչ որ իմ 50
ձեռն արաւ այս ամենքը: Խրս- 51
տապարանոցներ՝ և սրտերով և
ականջներով չ'թլփատուածներ.
դուք միշտ Սուրբը Հոգւոյն հա-
կառակում էք. ինչպէս ձեր
հարքն՝ այնպէս էլ դուք.
Մ'արգարէներից ո՞րին չ'հալա- 52
ծեցին ձեր հարքը, և սպանե-
ցին նորանց՝ որ առաջուց պատ-
մեցին այն Արդարի գալստեան
համար, որի դուք հիմա մատ-
նիչներն և սպանողներն եղաք.
Որ օրէնքն առիք հրեշտակների 53
մատակարարութեամբն և չըպա-
հեցիք:

Եւ այս խօսքերը լսելով, 54
իրանց սրտերումը կատաղում
էին, և ատամները կրճտեցնում
էին նորա վերայ: Իսկ նա 55
լցուած Սուրբ Հոգւով՝ դէպի
երկինքը նայեց և Աստուծոյ
փառքը տեսաւ, և Յիսուսին
կանգնած Աստուծոյ աջ կողմումը. Եւ ասաց. Ահա տես-
նում եմ երկինքը բացուած, և
Մ'արդոյ Որդին կանգնած Աս-
տուծոյ աջ կողմումը: Իսկ նո- 56
քա մեծաձայն աղաղակելով
խլեցին իրանց ականջները, և
միասին յարձակուեցան նորա
վերայ: Եւ քաղաքից դուրս 57
հանելով նորան քարկոծում էին.
և վկաներն իրանց հանդերձները
դնում էին մի երիտասարդի
ոտաց մօտ՝ որ Սաղոս էր կոչ-

Եդ ծունր՝ աղաղակեաց 'ի ձայն
բարձր. Տէր՝ մի համարիր
դոցա զայս մեղս. և զայս իբրև
ասաց՝ ննջեաց. և Սողոս էր
կամակից սպանման նորա:

ԳԼ. Ը.

1 Եւ եղև յաւուր յայնմիկ
հալածումն մեծ 'ի վերայ
եկեղեցւոյն Յերուսաղէմ. և
ամենեքեան ցրուեցան 'ի գեղս
Հրէաստանի և 'ի Սամարիա
2 բաց յառաքելոցն: Եւ բարձին
զՍտեփանոս արք երկիւղածք՝
և արարին կոծ մեծ 'ի վերայ
նորա:
3 Բայց Սողոս վնասակար էր
եկեղեցւոյն. 'ի տունս տունս
մտանէր քարշէր զարս և
զկանայս՝ մատնէր 'ի բանտ:

4 Եւ սփռեալքն՝ շրջէին աւե-
5 տարանէին զբանն: Իսկ Փիլիպ-
պոս իջեալ 'ի քաղաքն Սամա-
բացւոց՝ քարոզէր նոցա զՔրիս-
6 տոս: Ունկն դնէին ժողո-
վուրդքն բանիցն Փիլիպպոսի
միաբան՝ 'ի լսել նոցա և 'ի
տեսանել զնշանս, զոր առնէր:
7 Քանզի բազումք որ ունէին
զայսս պիղծս՝ աղաղակէին 'ի
8 ձայն մեծ, և ելանէին: Եւ

58 վում: Եւ քարկոծում էին
Ստեփանոսին, որ կանչէր էր
և ասէր. Տէր Յիսուս, ընդու-
59 ներ իմ հոգին: Եւ ծունր
դրաւ՝ և բարձր ձայնով աղա-
դակեաց. Տէր, այդ մեղքս մի
համարիր դորանց համար. և
այս ասելով ննջեաց. և Սողոս
կամակից էր նորա սպանուե-
լուն:

ԳԼ. Ը.

1 Եւ այն օրերումն մեծ հա-
լածմունք եղաւ Երուսաղէմումն
լինող եկեղեցւոյ վերայ. և ա-
մենքն ցրուեցան Հրէաստանի
և Սամարիայի երկիրներն մէջ,
2 բացի առաքեալներից: Եւ Ա-
տուածավախ մարդիկ Ստեփա-
նոսին վեր առին՝ և մեծ սուգ
արին նորա վերայ:
3 Բայց Սողոս վնաս էր տալիս
եկեղեցւոյն. և տանից տուն էր
մտնում, և մարդկանց և կա-
նանց քաշում՝ մատնում բանտի
մէջ:
4 Իսկ ցրուածները ման էին
գալիս՝ խօսքն աւետարանելով:
5 Եւ Փիլիպպոս իջաւ Սամարիայի
մի քաղաքը՝ և Քրիստոսին
6 քարոզում էր նորանց: Ժո-
ղովուրդներն էլ միաբան ականջ
էին դնում Փիլիպպոսի խօսած-
ներին, լսելով և տեսնելով այն
7 նշաններն, որ անում էր:
Վասնզի պիղծ ոգիներ ունե-
ցողների շատերից մեծաձայն

բազում անդամալոյծք և կաղք
9 բժշկէին: Եւ եղև ուրախու-
թիւն մեծ 'ի քաղաքին յայնմիկ:
Այր ոմն անուն Սիմոն՝ յառա-
ջագոյն էր 'ի քաղաքին. մոգ էր,
և ապշեցուցանէր զազգն Սա-
մարացւոց. ասել զանձնէ՝ թէ
10 իցէ մեծ ոմն: Յոր հայէին
ամենեքին 'ի փոքուէ մինչև 'ի
մեծամեծս. և ասէին. Սա՛ է
զօրութիւն Աստուծոյ, որ կոչի
11 մեծ: Հայէին 'ի նա վասն բա-
զում ժամանակաց մոգու-
թեամբն ապշեցուցանելոյ
12 զնոսա: Բայց յորժամ հաւա-
տացին Փիլիպպոսի, որ աւետա-
րանէր վասն արքայութեանն
Աստուծոյ, և անուանն Յիսուսի
Քրիստոսի, մկրտէին ամենե-
13 քեան արք և կանայք: Այլ
և ինքն Սիմոն հաւատաց, և
մկրտեալ կանխէր առ Փի-
լիպպոս. տեսեալ զնշանսն և
զմեծամեծ զօրութիւնսն որք
14 լինէին, զարմանայր: Իբրև
լուան՝ որ յԵրուսաղէմ առա-
քեալքն էին, թէ և 'ի Սամարիա
ընկալան զբանն Աստուծոյ,
առաքեցին առ նոսա զՊետրոս
15 և զՅովհաննէս: Որք իջեալ
կացին յաղօթս 'ի վերայ նոցա,
որպէս զի առցին զՀոգին
16 Սուրբ. Օվ ցայնժամ չևևս
էր և ոչ 'ի վերայ միոյ նոցա
հասեալ. բայց միայն մկրտեալքն
էին յանուն Տեառն Յիսուսի:
17 Յայնժամ եդին զձեռս 'ի վերայ
նոցա՝ և առնուին Հոգի Սուրբ:

աղաղակելով դուրս էին գալիս:
Եւ շատ անդամալոյծներ և 8
կաղեր բժշկվում էին: Եւ մեծ 9
ուրախութիւն եղաւ այն քա-
ղաքումը: Եւ մի մարդ՝ անունը
Սիմոն, առաջուց այն քաղա-
քումն մոգութիւն էր անում, և
Սամարացոց ազգին ապշեցնում
էր. ասելով թէ ինքն մի մեծ
բան է: Որին ամենքն էլ՝ փոքր- 10
ից մինչև մեծը մտիկ էին ա-
նում, և ասում. Ահա է Աս-
տուծոյ այն մեծ զօրութիւնը:
Եւ մտիկ էին անում նորան. 11
վասնզի շատ ժամանակ մոգու-
թիւններով ապշեցրել էր նո-
րանց: Բայց երբոր հաւատա- 12
ցին Փիլիպպոսին, որ աւետա-
րանում էր Աստուծոյ արքայու-
թեան և Յիսուսի Քրիստոսի
անուան բաները, ամենքն էլ
մկրտվում էին՝ թէ մարդիկ և
թէ կանայք: Եւ Սիմոն ինքն 13
էլ հաւատաց, և երբ որ մկրտ-
ուեցաւ՝ միշտ Փիլիպպոսի հետ
էր. և տեսնելով այն նշաններն
և մեծ մեծ զօրութիւններն, որ
լինում էին, զարմանում էր:
Երբոր Երուսաղէմ լինող ա- 14
ռաքեալները լսեցին, թէ Սա-
մարիան Աստուծոյ խօսքը ըն-
դունեց, Պետրոսին և Յովհան-
նէսին ուղարկեցին նորանց մոտ:
Որոնք իջան և աղօթք արին նո- 15
րանց վերայ, որ Սուրբ Հոգին
առնեն. Վասնզի դեռ նորան- 16
ցից ոչ մէկի վերայ չէր իջել
միայն Տէր Յիսուսի անունովը

18 Տեսեալ Սիմոնի՝ թէ ձեռն 'ի
վերայ դնելով առաքելոցն՝
տուեալ լինի Հոգին Սուրբ,
մատոյց նոցա ինչս՝ և ասէ.
19 Տուք և ինձ զիշխանութիւնս
զայս, զի յոյր վերայ դնիցեմ
զձեռս՝ առցէ Հոգի Սուրբ:
20 Եւ Պետրոս ասէ ցնա. Արծաթ
.քո ընդ .քեզ լիցի 'ի կորուստ, զի
զպարգևսն Աստուծոյ համարե-
21 ցար ընչիւք ստանալ: Ո՛չ գոյ
.քեզ մասն և վիճակ 'ի բանիդ
յայդմիկ. .քանզի սիրտ .քո ո՛չ է
22 ուղիղ առաջի Աստուծոյ: Ապա-
շաւեա դու 'ի չարեացդ .քոց
յայդցանէ, և աղաչեա զՏէր.
թերևս թողութիւն լիցի .քեզ 'ի
մեղմէս խորհրդոց սրտի .քո:
23 Քանզի 'ի դառնութիւն մաղձի,
և 'ի կնճիռն անիրաւութեան
24 տեսանեմ զքեզ: Պատասխանի
ետ Սիմոն և ասէ. Աղաչեցէք
դուք վասն իմ զՏէր, զի մի
ինչ եկեսցէ 'ի վերայ իմ՝ յորոց
25 դուքդ ասացիք: Եւ նոցա
եղեալ զվկայութիւն խօսեցան
զբանն Աստուծոյ, և դարձան
Յերուսաղէմ. և 'ի բազում
գեօղս Սամարացւոցն աւետա-
բանէին:

26 Հրեշտակ Տեառն խօսեցաւ
առ Փիլիպպոս՝ և ասէ. Արի՛ և
գնա դու 'ի կողմն հարաւոյ ընդ
ճանապարհն որ իջանէ Յերու-

մկրտուած էին: Այն ժամանակ 17
ձեռները դրին նորանց վերայ,
և նորանք ընդունում էին Սուրբ
Հոգին: Սիմոնն երբոր տեսաւ՝ 18
թէ առաքելոց ձեռք դնելովը՝
Սուրբ Հոգին տրվում է, փող
բերաւ նորանց և ասաց. Ինձ 19
էլ տուէք այս իշխանութիւնն,
որ ում վերայ ձեռք դնեմ՝
Սուրբ Հոգին առնէ: Պետ- 20
րոսն էլ ասաց նորան. Քո ար-
ծաթը քեզ հետ կորչի. որով-
հետև դու կարծեցիր, թէ
Աստուծոյ պարգևը փողով կ'առ-
նուի: Դու բաժին և վիճակ 21
չունիս այդ բանումը. վասնզի
սիրտդ ուղիղ չէ Աստուծոյ
առջև: Արդ ապաշխարիր քո 22
այդ չարութիւնից՝ և Աս-
տուծոյն աղաչիր, որ թերևս
թողուի քեզ քո սրտի չար խոր-
հուրդը: Վասնզի տեսնում եմ 23
քեզ՝ որ դառն մաղձի և անի-
րաւութեան կապանքի մէջ ես:
Սիմոնն էլ պատասխանեց և 24
ասաց. Դուք ինձ համար ա-
ղօթք արէք Տիրոջը, որ ինձ
վերայ մի բան չգայ նորանցից,
որ դուք ասացիք: Եւ նորանք 25
վկայութիւն տալով՝ և Տիրոջ
խօսքը խօսելով, ետ դարձան
Երուսաղէմ. և Սամարացոց շատ
գիւղերի մէջ աւետարանում
էին:

Եւ Տիրոջ հրեշտակը խօսեց 26
Փիլիպպոսի հետ և ասաց.
Վեր կաց և գնա հարաւային
կողմն՝ այն ճանապարհը, որ

սաղէմ 'ի Գազայ. զի այս է
27 անապատ: Եւ յարեաւ գնաց:
Եւ ահաւասիկ այր մի Եթիոպ-
պացի, ներքինի Հզօր՝ Կանդա-
կայ տիկնոջ Եթիոպացւոց, որ
էր 'ի վերայ ամենայն գանձուց
նորա. որ եկեալ էր երկիրպա-
28 գանել Յերուսաղէմ, Եւ էր
անդրէն դարձեալ. և նստեալ 'ի
կառս իւրում, ընթեռնոյր
29 զմարգարէն զԵսայի: Ասէ
Հոգին ցՓիլիպպոս. Մատիր՝ և
յարեաց 'ի կառսդ յայդոսիկ:
30 Եւ ընթացեալ Փիլիպպոս՝ լսէր
զի ընթեռնոյր զԵսայի մար-
գարէ, և ասէ. Դիտիցեսո՞ ար-
31 դեօք զոր ընթեռնուցուսդ: Եւ
նա ասէ՝ Օ՛խմբդ կարիցեմ, թէ
ոք ո՛չ առաջնորդեսցէ ինձ. և
աղաչեաց զՓիլիպպոս ելանել
32 նստել ընդ նմա: Եւ զլուս
գրոցն՝ զոր ընթեռնոյր՝ էր այս.
Իբրև զոչխար 'ի սպանդ վարե-
ցաւ, և իբրև զոր ոչ առաջի
կտրչի իւրոյ անմռունչ, այնպէս
33 ո՛չ բանայ զբերան իւր: 'Ի
խոնարհութեան նորա դատաս-
տան նորա բարձաւ, և զազ-
գատոհմն նորա ո՞ պատմեսցէ. զի
բառնան յերկրէ կեանք նորա:
34 Պատասխանի ետ ներքինին Փի-
լիպպոսի, և ասէ. Աղաչեմ
զքեզ՝ վասն ո՞յր ասէ մարգարէն
զայս, վասն իւր, եթէ վասն
35 այլոյ ուրուք: Երաց Փիլիպպոս
զբերան իւր, և սկսեալ 'ի գրոցս
յայսցանէ՝ աւետարանեաց նմա
36 զՅիսուս: Իբրև երթային զճա-

Երուսաղէմիցն իջնում է Գա-
զայ, որ է անապատ: Եւ վեր 27
կացաւ գնաց. և ահա մի Եթիո-
պացի մարդ, Եթիոպացոց Կան-
դակա թագուհու ներքինի մի
իշխանը, որ նորա բոլոր գանձի
վերայ էր, որ եկել էր Երու-
սաղէմ երկրպագութիւն անելու:
Եւ ետ դառնալիս իր կառքումը 28
նստած կարդում էր Եսայեայ
մարգարէի գիրքը: Հոգին էլ 29
Փիլիպպոսին ասաց. Մօտեցիր
և հասիր այդ կառքին: Եւ 30
Փիլիպպոս առաջ վազելով լսեց
որ Եսայեայ մարգարէի գիրքն
էր կարդում, և ասաց. Հաս-
կանում ես արդեօք կարդա-
ցածդ: Նա էլ ասաց՝ Ինչ- 31
պէս կ'կարենամ, եթէ մէկը
չառաջնորդէ ինձ. և Փիլիպ-
պոսին աղաչեց, որ վեր նստէ
նորա հետ: Եւ գրքի 32
պարունակութիւնն որ կարդում
էր՝ այս էր. Ինչպէս ոչխար
վարուեցաւ մորթուելու. և ինչ-
պէս գառն իր խուզողի առջև
լռեաց կացած՝ այնպէս չէ բա-
նում իր բերանը: Նորա խո- 33
նարհութիւնովը նորա դատաս-
տանը վեր առնուեցաւ, նորա
ցեղն ով պիտի պատմէ. վասնզի
նորա կեանքը երկրից վեր է
առնվում: Եւ ներքինին պա- 34
տասխանեց Փիլիպպոսին և ա-
սաց. Աղաչում եմ քեզ, մար-
գարէն, սա ո՞ւմ համար է
ասում. իրա՞ն համար, թէ մի
ուրիշի՞ համար: Փիլիպպոսն 35

նապարհայն, եկին 'ի ջուր ինչ,
և ասէ Ներբինին. Ահաւասիկ
ջուր՝ զի՞նչ արգելու զիս 'ի
37 մկրտելոյ։ Եւ ասէ ցնա. Եթէ
հաւատաս բոլորով սրտիւ. քոյ՝
մարթ է։ Պատասխանի ետ և
ասէ. Հաւատամ՝ եթէ Յիսուս
Քրիստոս է Որդի Աստուծոյ։
38 Եւ հրամայեաց կացուցանել
զկառն. և իջին երկոքեան 'ի
ջուրն՝ Փիլիպպոս և Ներբինին,
39 և մկրտեաց զնա։ Եւ երբև
ելին 'ի ջրոյ անտի՝ *Հոգին
Սուրբ եկն 'ի վերայ Ներբինւոյն.
և հրեշտակ Տեառն յափշտա-
կեաց զՓիլիպպոս՝, և ո՛չ ևս
ետես զնա Ներբինին. և գնայր
զճանապարհ իւր ուրախու-
40 թեամբ։ Բայց Փիլիպպոս գտաւ
Ազովտոս. և շրջեալ աւետա-
բանէր ամենայն քաղաքացն,
մինչև 'ի գալ Նորա 'ի Կեսարիա։

ԳԼ. Թ.

1 Իսկ Սօղոս տակաւին լցեալ
սպառնալեօք և սպանմամբ ա-
շակերտացն Տեառն, մատու-
ցեալ առ քահանայապետն՝
2 խնդրեաց 'ի նմանէ թուղթս 'ի
Դամասկոս առ ժողովուրդսն.

* 'Ի Յոյնն, Հոգի Տեառն տարաւ տակեաց զՓիլիպպոս

էլ իր բերանը բացաւ, և այս
գրքիցը սկսած՝ Յիսուսն աւե-
տարանեց Նորան։ Երբոր ճա- 36
նապարհումը գնում էին, եկան
մի ջրի մօտ. և Ներբինին ասաց.
Ահա ջուր, ի՞նչ է արգելում
ինձ, որ մկրտուիմ։ Եւ Նորան 37
ասաց Փիլիպպոսը. Եթէ բոլոր
սրտից հաւատում ես, կարելի
է. և նա պատասխանեց և ա-
սաց. Հաւատում եմ՝ թէ Աս-
տուծոյ Որդին է Յիսուս Քրիս-
տոսը։ Եւ հրաման տուաւ որ 38
կառքը կանգնէ. և երկուսն էլ
իջան ջուրը՝ Փիլիպպոսը և Ներ-
բինին, և մկրտեց Նորան։ Եւ 39
երբոր ջրից դուրս եկան, Տի-
րոջ Հոգին Փիլիպպոսին յափշ-
տակեց, և Ներբինին այլ ևս
չ'տեսաւ Նորան. և ուրախու-
թեամբ գնում էր իր ճանա-
պարհը։ Եւ Փիլիպպոսը գտա- 40
նուեցաւ Ազոտոսումը. և ման
գալով աւետարանում էր ամեն
քաղաքներին մինչև որ եկաւ
Կեսարիա։

ԳԼ. Թ.

Բայց Սօղոսը՝ դեռ սպառ- 1
նալիք և մահ շնչելով Տիրոջ
աշակերտների վերայ, քահա-
նայապետի մօտ եկաւ, Եւ նո- 2
բանից թղթեր խնդրեց Դա-
մասկոս՝ ժողովարանների վերայ.

որպէս թէ զոք գտցէ զայնր
ճանապարհի՝ արս կամ կա-
նայս, կապեալս ածցէ Յերու-
3 սաղէմ։ Եւ ընդ երթալ Նորա՝
եղև մերձենալ 'ի Դամասկոս.
յանկարծակի շուրջ զնովաւ
փայլատակեաց լոյս յերկնից։
4 Եւ անկեալ յերկիր, լուաւ
բարբառ որ ասէր ցնա. Սաւուղ,
5 Սաւուղ՝ զի՞ հալածես զիս։ Եւ
ասէ՝ Ո՞վ ես Տէր։ Եւ նա ասէ.
Ես եմ Յիսուս զոր դուն հա-
լածես. խիստ է քեզ ընդդէմ
6 խթանի աքացել։ Եւ զար-
հուրեալ՝ և անշշունչ լեալ
ասաց. Տէր՝ զիս զի՞նչ կամիս
7 առնել։ Եւ ասէ ցնա Տէր.
Արի՛ յոտն կաց՝ և մտ 'ի
քաղաքդ, և պատմեսցի քեզ՝
զինչ պարտ իցէ առնել. իսկ
արքն՝ որ ընդ նմայն երթային,
կային անշշունչ. զձայնն միայն
լսէին՝ բայց տեսանէին և ոչինչ։
8 Յարեաւ Սօղոս յերկրէ անտի,
և աչքք բացաք ոչ զի՛ք տեսանէր,
զձեռանէ առեալ Նորա՝ մուծին
9 'ի Դամասկոս։ Եւ էր անդ ա-
ւուրս երիս՝ և ո՛չ տեսանէր, և
ո՛չ եկեր և ո՛չ արբ։

10 Եւ էր ոմն աշակերտ 'ի Դա-
մասկոս Անանիա անուն. ասէ
ցնա Տէր 'ի տեսլեան, Ա՛նա-
նիա. և նա ասէ, Ահաւասիկ եմ
11 Տէր։ Եւ ասէ ցնա Տէր.
Յո՛ն կաց և գնա՛ ընդ փողոցն
որ կոչի Ուղիղ, և խնդրեսցես

որ եթէ մէկին գտնէ այն ճանա-
պարհին հետևող՝ մարդիկ կամ
կանայք, Նորանց կապած բերէ
Երուսաղէմ։ Եւ նա գնալիս 3
մօտեցաւ Դամասկոսին, և յան-
կարծակի Նորա չորս կողմովը
լոյս փայլեց երկնքիցը։ Եւ 4
գետնի վերայ ընկած մի ձայն
լսեց, որ ասում էր Նորան,
Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ ես ինձ
հալածում։ Եւ նա ասաց. Ո՞վ 5
ես, Տէր. և Տէրն ասաց. Ես
Յիսուսն՝ եմ, որին դու հալա-
ծում ես. դժուար է քեզ՝ խթա-
նին քացի տալ։ Եւ դողալով 6
ու զարհուրելով ասաց. Տէր,
ի՞նչ ես կամենում որ անեմ։
Եւ Տէրն ասաց Նորան. Կանգ- 7
նիր և մտիր քաղաքը, և կ'ա-
սուի քեզ՝ թէ ինչ է պէտք քեզ
անել. բայց այն մարդիկն՝ որ
Նորա հետ գնում էին, ապուշ
կանգնած էին. ձայնը լսում
էին, բայց ոչինչ չէին տես-
նում։ Սօղոս էլ վերկացաւ 8
գետնիցը, իր աչքերը բաց անե-
լով ոչ ոքին չէր տեսնում, և
Նորա ձեռքիցը բռնած մտցրին
Դամասկոս։ Եւ երեք օր չէր 9
տեսնում. և ոչ ուտում և ոչ
խմում էր։
Եւ Դամասկոսումը մի աշա- 10
կերտ կար՝ անունն Անանիա, և
Տէրը տեսիլքի մէջ Նորան ա-
սաց. Անանիա. և նա ասաց.
Ահա ես, Տէր։ Եւ Տէրը Նո- 11
րան ասաց. Վեր կաց գնա այն
փողոցն՝ որ կոչվում է ուղիղ.

յապարանն Յուդա՝ Սօղոս
անուն զՏարսոնացի՝ զի կայ դեռ
12 յաղօթս։ Եւ ետես ՚ի տեսլեան
այր մի Անանիա անուն՝ մտեալ
և եդեալ ՚ի վերայ նորա ձեռն,
13 որպէս զի տեսցէ։ Պատասխանի
ետ Անանիա, Տէր՝ լուայ ՚ի
բազմաց վասն առնն այնորիկ՝
որչափ արար չարիս սրբոց քոց
14 յԵրուսաղէմ։ Եւ ասա ունի
իշխանութիւն ՚ի քահանայա-
պետից կապել զամենեսեան, որ
15 կարդան զանուն քո։ Ասէ ցնա
Տէր։ Երթ դու։ զի անօթ
ընտրութեան է ինձ նա, կրել
զանուն իմ առաջի հեթանոսաց՝
և թագաւորաց՝ և որդւոցն
16 Իսրայէլի։ Քանզի ես իսկ
ցուցից նմա՝ որչափ պարտ իցէ
նմա չարչարիլ վասն անուան
17 իմոյ։ Եւ գնաց Անանիա՝ և
եմուտ յապարանն։ և եդեալ
՚ի վերայ նորա ձեռս, ասէ։
Սաւուղ եղբայր՝ ՚ի վերս հայ-
եաց, Տէր առաքեաց զիս,
Յիսուս՝ որ երևեցաւն քեզ ՚ի
ճանապարհին՝ յորում գայիր։
որպէս զի տեսցես և լցցիս Հոգ-
18 ւով Սրբով։ Եւ վազվաղակի
անկան յաչաց նորա իբրև
կեղևանք։ ետես՝ և յարեաւ
19 մկրտեցաւ։ Եւ առեալ կերա-
կուր՝ զօրացաւ։ և եղև ՚ի Դա-
մասկոս ընդ աշակերտսն ա-
ւուրս ինչ։

20 Եւ վազվաղակի ՚ի ժողո-

և Յուդայի տանը որոնիր մի
Սօղոս անուն Տարսոնացի մարդ։
քանզի ահա աղօթք է անում։
Եւ տեսիլքի մէջ տեսաւ մի 12
Անանիա անուն մարդ, որ մտաւ
և ձեռն դրաւ իրան վերայ, որ
տեսնէ։ Անանիան էլ պատա- 13
խանեց։ Տէր, ես այն մարդու
համար շատերից լսեցի, թէ
որչափ չարիք արաւ քո սուրբե-
րին Երուսաղէմումը։ Եւ այս- 14
տեղ էլ քահանայապետներիցն
իշխանութիւն ունի, որ այն
ամենքին կապէ, որ քո անունը
կանչում են։ Տէրն էլ ասաց 15
նորան։ Գնա, վանդի նա ինձ
համար ընտրուած անօթ է, որ
իմ անունը տանէ հեթանոս-
ների, թագաւորների՝ և Իս-
րայէլի որդոց առջևը։ Ա ասնդի 16
ես ցոյց կ'տամ նորան, Ինչ որ-
չափ պիտի չարչարուի իմ ան-
ուան համար։ Եւ Անանիան 17
գնաց՝ և մտաւ այն տունը։ և
ձեռները դրաւ նորա վերայ,
և ասաց։ Սաւուղ եղբայր, Տէրն
ուղարկեց ինձ, այն Յիսուսն
որ երևեցաւ քեզ ճանապար-
հումը, որ գալիս էիր, որ
տեսնես՝ և Սուրբ Հոգով լցուիս։
Եւ շուտով նորա աչքերիցը 18
կեղևների պէս վայր ընկան։ և
իսկոյն տեսաւ, և վերկացաւ
մկրտուեցաւ։ Եւ կերակուր ա- 19
ռաւ՝ զօրացաւ։ Եւ Սօղոս մի
քանի օր Դամասկոսումը լինող
աշակերտների հետ եղաւ։

Եւ շուտով ժողովարաննե- 20

վուրդսն քարոզեաց զՅիսուս,
թէ սա է Որդին Աստուծոյ։
21 Զարմացեալ էին ամենեքեան,
որ լսէին։ և ասէին։ Ո՞չ սա էր՝
որ աւար հարկանէր յԵրու-
սաղէմ զայնոսիկ, որ կարդային
զանուն Յիսուսի։ և այսր նմին
իրի եկեալ է, զի կապեալս
զսոսա տարցի առ քահանայա-
22 պետսն։ Բայց Սօղոս առաւել ևս
զօրանայր՝ և յաղթահարէր
զՀրէայսն, որ բնակեալ էին ՚ի
Դամասկոս։ և խելամտեցու-
ցանէր թէ սա է Քրիստոս։
23 Իբրև կատարէին աւուրք բա-
զումք, խորհեցան Հրէայքն
24 սպանանել զնա։ Յայտնեցաւ
Սօղոսի նենգութիւն նոցա։
քանզի պահէին զդրուսն ՚ի տուէ
և ՚ի գիշերի՝ որպէս զի սպանցեն
25 զնա։ Եւ առեալ զնա աշա-
կերտացն ՚ի գիշերի՝ ընդ պա-
րիսպն կախեալ իջուցին վան-
դակաւ։
26 Իբրև եկն Սօղոս յԵրուսա-
ղէմ՝ ընդելանէր յարիլ յա-
շակերտսն։ և ամենեքեան երկն-
չէին ՚ի նմանէ, չհաւատային
27 թէ իցէ աշակերտ։ Բայց Բառ-
նաբաս առեալ զնա՝ ած առ
առաքեալսն։ և պատմեաց նոցա՝
որպէս ՚ի ճանապարհին ետես
զՏէր, և զի խօսեցաւ ընդ
նմա։ և զի ՚ի Դամասկոս հա-
մարձակեցաւ յանուն Յիսուսի։
28 Եւ էր ընդ նոսա՝ ՚ի մտանել և
ելանել յԵրուսաղէմ, համար-
29 ձակեալ յանուն Տեառն։ Խօ-

ռումը Քրիստոսին քարոզեց,
թէ Սա է Աստուծոյ Որդին։
Ամենքն էլ՝ որ լսում էին, զար- 21
մանում էին և ասում։ Չէ՞
որ սա էր՝ որ Երուսաղէմումը
հալածում էր այս անունը կան-
չողներին։ և հենց նորա հա-
մար է այս տեղ եկել, որ
սորանց կապած տանէ քահանա-
յապետների մօտ։ Բայց Սօղոսն 22
աւելի ևս զօրանում էր՝ և
յաղթում էր այն Հրէաներին,
որ Դամասկոսումն բնակած էին,
ապացուցանելով թէ սա է
Քրիստոսը։ Երբոր բաւական 23
օրեր լրացան, Հրէաները խոր-
հուրդ արին՝ որ սպանեն նորան։
Բայց նորանց նենգութիւնը 24
յայտնուեցաւ Սօղոսին, քանզի
գիշեր և ցերեկ դռները պա-
հում էին՝ որ նորան սպանեն։
Աշակերտներն էլ նորան գիշե- 25
րով առին, և զամբիւղով պարա-
սպիցը կախելով իջեցրին։
Եւ երբոր Սօղոսը Երու- 26
սաղէմ եկաւ, ջանք էր անում,
որ աշակերտների հետ միաւո-
րուի։ և ամենքը նորանից վա-
խենում էին, և չէին հաւա-
տում՝ թէ աշակերտ է։ Բայց 27
Բառնաբասը նորան առաւ
տարաւ, առաքեալների մօտ։
և նորանց պատմեց՝ թէ ինչ-
պէս ճանապարհումը Տիրոջը
տեսաւ, և թէ նորա հետ
խօսեց, և ինչպէս Դամասկո-
սումը համարձակ քարոզեց Յի-
սուսի անունը։ Եւ նորանց հետ 28

սէր և վիճէր ընդ Յոյնսն. և
նոքա խոկային սպանանել զնա:
30 Եւ իմացեալ եղբարց՝ իջուցին
զնա 'ի Կեսարիա, և առաքեցին
զնա 'ի Տարսոն.

31 Բայց եկեղեցին ընդ ամենայն
Հրէաստան՝ և 'ի Սամարիա և 'ի
Գալիլեա ունէր խաղաղութիւն,
շինեալ և երթեալ զՀետ երկիւղն
Տեառն. և մխիթարութեամբ
Հոգւոյն Սրբոյ բազմանայր:

32 Եւ եղև 'ի շրջելն Պետրոսի
առ ամենեքումբք, իջանել նմա
և առ սուրբսն՝ որ բնակեալ էին
33 'ի Լիւդիայ: Եւ եգիտ անդ
այր մի, որում անուն էր
Ենեա, ութամեան դնէր 'ի
34 մահիճս անդամալոյծ: Եւ ասէ
ցնա Պետրոս. Ենեա՝ բժշկէ
զքեզ Տէր Յիսուս Քրիստոս,
արի և քեզէն թօթափեա զան-
կողինս քո. և վաղվաղակի
35 յարեաւ: Եւ տեսին զնա ա-
մենեքեան, որ բնակեալ էին 'ի
Լիւդիայ և 'ի Սարոնայ, որք
36 և դարձան իսկ 'ի Տէր: Եւ 'ի
Յոպպէ էր կին ոմն աշակեր-
տեալ անուն Տաբիթա՝ որ
թարգմանեալ կոչի Ա.յծեմիկ.
սա էր լի գործովք բարեօք և
ողորմութեամբք զոր առնէր:
37 Եւ եղև յաւուրսն յայնոսիկ
էր Երուսաղէմումք մտնելով
և դուրս գալով, և Տէր Յի-
սուսի անունը Համարձակ քա-
ջողելով: Եւ Հելլենախօսներին 29
հետ էլ խօսում էր՝ և վիճա-
բանութիւն էր անում. և նո-
քանք որոնում էին, որ սպանեն
նորան: Եւ եղբարքն իմանա- 30
լով, նորան իջեցրին Կեսարիա,
և ուղարկեցին նորան Տարսոն:

Բայց եկեղեցիները բոլոր 31
Հրէաստանի՝ Գալիլիայի և Սա-
մարիայի մէջ խաղաղութիւն
ունէին, շինվում էին և Տիրոջ
երկիւղն հետևում. և Սուրբ
Հոգոյ մխիթարութեամբը շա-
տանում էին:

Եւ եղաւ երբոր Պետրոսը 32
մեն էր գալիս ամեն տեղ, եկաւ
այն սրբերի մօտ, որ Լիւդիայի
մէջ բնակած էին: Եւ այն տեղ 33
մի մարդ գտաւ, անունը Ենեա
որ ութ տարի մահիճի մէջ
անդամալոյծ դրած էր: Եւ 34
Պետրոսը ասաց Նորան. Ենեա,
Տէր Յիսուս Քրիստոսը քեզ
բժշկէ, վեր կաց և անկողինդ
շինիր. և շուտով վերկացաւ:
Եւ տեսան Նորան ամենքն որ 35
բնակած էին Լիւդիայի և Սա-
րոնի մէջ, որոնք դարձան դէպի
Տէրը: Եւ Յոպպէի մէջ մի 36
աշակերտ եղած կին կար՝ ա-
նունը Տաբիթա, որ թարգ-
մանուած ասվում է Ա.յծեմիկ.
սա լիքն էր բարի գործքերով
և ողորմութիւններով, որ ա-
նում էր: Եւ եղաւ այն օրե- 37

հիւանդանալ նմա և մեռանել.
լուացին զնա՝ և եդին 'ի դստիկոնի
38 անդ: Եւ մերձ էր Լիւդիա 'ի
Յոպպէ. աշակերտացն լուեալ
եթէ Պետրոս անդ է, առա-
քեցին երկուս արս առ նա՝
աղաչել, զի մի՛ դանդաղեսցի
39 գալ առ նոսա: Եւ յարուցեալ
Պետրոս՝ եկն ընդ նոսա. զոր
իբրև եկն՝ հանին 'ի վերնա-
տունն. և կացին շուրջ զնովաւ
պարիւրն ամենայն. լային և
ցուցանէին զձորձս և զՀան-
գերձս, որչափ առնէր նոցա
40 Ա.յծեմիկն: Եւ հանեալ ար-
տաքս զամենեսեան Պետրոսի,
եդ ծունր՝ եկաց յաղօթս. և
դարձաւ 'ի մարմինն և ասէ.
Տաբիթա՝ արի՛ կաց յանուն
Տեառն Յիսուսի Քրիստոսի. և
նա եբաց զաչս իւր, և տեսեալ
զՊետրոս նստաւ կանգուն:
41 Զեռն ետ նմա՝ և յարոյց զնա.
կոչեաց զորբսն և զայրիս,
առաջի կացոյց զնա կենդանի:
42 Եւ յայտնի եղև ընդ ամենայն
Յոպպէ. և հաւատացին բա-
զումք 'ի Տէր: Եւ եղև աւուրս
43 բազումս լինել նմա 'ի Յոպպէ
առ ումեմն Սիմոնի խաղա-
խորդի:

ԳԼ. Ժ.

1 Ա.յր մի էր 'ի Կեսարիա

ռումն, որ նա հիւանդացաւ և
մեռաւ. և նորան լուացին դրին
վերնատունը: Եւ Լիւդիան 38
Յոպպէին մօտիկ լինելով, ա-
շակերտները լսեցին՝ թէ Պետ-
րոսը այն տեղ է, նորա մօտ
երկու մարդ ուղարկեցին աղա-
չելու, որ չ'ուշանայ նորանց
մօտ գալ: Եւ Պետրոսը վեր- 39
կացաւ եկաւ նորանց հետ. և
երբ որ եկաւ, նորան հանեցին
այն վերնատունը. և ամեն
որբևայրիները նորա չորս կող-
մովը կանգնեցին, լաց էին
լինում և ցոյց տալիս այն հա-
գուստները և այն հանդերձները
որ Ա.յծեմիկը շինում էր,
քանի որ նորանց հետ էր: Եւ 40
Պետրոսը ամենին դուրս հանեց,
ծունկ դրաւ՝ աղօթք արաւ. և
դարձաւ դէպի մարմինն և ասաց.
Տաբիթա, վեր կաց. և նա
աչքերը բաց արաւ. և Պետ-
րոսին որ տեսաւ ուղիղ նստեց:
Եւ նա ձեռը տուաւ նորան՝ 41
և վեր կացրեց նորան. և կան-
չեց սուրբերին և որբևայրիներ-
րին, և նոքանց առջև կենդանի
կանգնեցրեց նորան: Եւ յայտ- 42
նի եղաւ բոլոր Յոպպէի մէջ,
և շատերը հաւատացին Տիրոջը.
Եւ նա շատ օր մնաց Յոպ- 43
պէումը՝ մի կաշեգործ Սիմոնի
մօտ:

ԳԼ. Ժ.

Կեսարիայումը մի մարդ կար՝ 1

անուն Կուռնէլիոս՝ հարիւրա-
պետ, 'ի գնդէ որ կոչէր Իտա-
2 լացի. Բարեպաշտն՝ և երկիւ-
ղած յԱստուծոյ ամենայն տամբ
իւրով. առնէր ողորմութիւնս
բազումս 'ի ժողովրդեանն. և
յաղօթս կայր առ Աստուած
3 յամենայն ժամ: Ետես 'ի տես-
լեան յայտնապէս զիններորդ
ժամուս աւուրն զհրեշտակ Աս-
տուծոյ, զի մտանէր առ նա՝ և
4 ասէր ցնա. Կուռնէլիէ: Եւ նա
հայեցեալ ընդ նա՝ զարհուռ-
եցաւ և ասէ. Օ՞ր է տէր. Եւ
ասէ ցնա. Աղօթք քո՝ և ողոր-
մութիւնք քո ելին յիշատակաւ
5 առաջի Աստուծոյ: Եւ արդ
յղեա արս 'ի Յոպպէ՝ և կոչեա
զՍիմոն զոմն՝ որ կոչի Պետրոս.
6 Նա մտեալ է առ Սիմոնի
ումեմն խաղախորդի, որոյ է
7 տունն մերձ 'ի ծով: Եւ իբրև
գնաց հրեշտակն որ խօսէր ընդ
նմա, կոչեաց երկուս 'ի ծա-
ռայից իւրոց՝ և զինուոր մի
բարեպաշտն 'ի սպասաւորացն
8 իւրոց, Եւ պատմեալ նոցա
զամենայն՝ առաքեաց զնոսա 'ի
Յոպպէ:

9 Եւ 'ի վաղիւ անդր 'ի ճանա-
պարհ անկանելն նոցա՝ և մօտ 'ի
քաղաքն լինելն, ել Պետրոս 'ի
տանիսն կալ յաղօթս զվեցերորդ
10 ժամուն: Պաղցեաւ՝ և կամէր
ճաշակել. և 'ի պատրաստելն

անունը Կուռնէլիոս՝ հարիւրա-
պետ, Իտալացի կոչուած գնդ-
ի մը. Բարեպաշտ և աստուա- 2
ծավախ իր բոլոր տունովը.
շատ ողորմութիւններ էր ա-
նում ժողովրդին, և ամեն ժա-
մանակ աղօթք անում դէպի
Աստուած: Նա օրուան իրիկ- 3
ունները ժամին տեսիլքի մէջ
յայտնի տեսաւ Աստուծոյ հրեշ-
տակը, որ մտնելով նորա մօտ՝
ասում էր նորան. Կուռնէլիոս:
Նա էլ նորան նայելով շատ 4
վախով բռնուեցաւ, և ասաց.
Ի՞նչ է, Տէր. և նա ասաց նո-
րան. Քո աղօթքներն ու քո
ողորմութիւնները վեր ելան
Աստուծոյ առջև՝ յիշատակի հա-
մար: Եւ հիմա մարդիկ ու- 5
ղարկիր Յոպպէ, և կ'անչիր
Սիմոնին, որ Պետրոս է կոչ-
ւում: Նա հիւր է մի կաշե- 6
գործ Սիմոնի մօտ, որի տունը
ծովի մօտ է. նա կ'ասէ քեզ
ինչ պէտք է անել: Եւ երբոր 7
գնաց այն հրեշտակն՝ որ Կուռ-
նէլիոսի հետ խօսում էր, իր
ծառաներից երկուսին՝ և իր
սպասաւորներից մէկ բարեպաշտ
զինուոր կանչեց. Եւ բոլորը 8
պատմեց նորանց, և ուղարկեց
նորանց Յոպպէ:

Եւ հետևեալ օրն երբոր 9
նորանք ճանապարհ ընկան, և
այն քաղաքին մօտեցան, Պետ-
րոսը վեր ելաւ կտուրը վեց
ժամի մօտերը աղօթք անելու:
Սովից՝ և կամենում էր ճաշել, 10

նոցա՝ եղև 'ի վերայ նորա զար-
11 մացումն: Եւ տեսանէր զերկինս
բացեալ, և զչորեցունց տանոց
կապեալ անօթ ինչ իբրև զկտա-
ւոյ մեծի, իջեալ նստեալ 'ի
12 վերայ երկրի. Յորում էին
ամենայն չորքոտանիք և սողունք
երկրի՝ և թռչունք երկնից:
13 Եւ եղև ձայն առ նա. Արի՛
14 Պետրոս, զեն և կեր: Եւ
Պետրոս ասէ. Չա՛ռ լեցի Տէր,
զի ոչ երբէք կերայ խառնակ
15 ինչ և անսուրբ: Ձայն եղև
կրկին անգամ՝ առ նա. Օ՞ր
Աստուած սրբեաց՝ դու մի՛
16 պղծեր: Այս եղև երիցս, և
17 վերացաւ անօթն յերկինս: Եւ
մինչդեռ զարմացեալ էր ընդ
միտս Պետրոս՝ թէ զի՞նչ իցէ տե-
սիլն զոր ետես. ահա արքն առա-
քեալք 'ի Կուռնէլեայ՝ հարցին
զապարանիցն Սիմոնի, կացին
18 առ դրանն. Կոչեցին և հար-
ցանէին, եթէ Սիմոն որ կոչի
19 Պետրոս՝ ասա մտեալ իցէ: Եւ
մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր
վասն տեսլեանն, ասէ Հոգին
ցնա. Ահաւասիկ արք ոմանք
20 խնդրեն զքեզ: Արա՛ էջ՝ և
երթ ընդ նոսա առանց իրիք
խղճելոյ, զի ես առաքեցի
21 զնոսա: Եւ իբրև էջ Պետրոս
առ նոսա, ասէ. Ահաւասիկ ես
եմ՝ զոր խնդրէքն. զի՞նչ իրք
22 են՝ վասն որոյ եկիքդ: Եւ
նոքա ասեն, Կուռնէլիոս հա-
րիւրապետ՝ այր արդար և
երկիւղած Աստուծոյ, վկայ-

և նորանց Հերոդոս պատրաս-
տելիս՝ յափշտակութիւն եղաւ
նորա վերայ: Եւ տեսաւ եր- 11
կինքը բացուած. և մի մեծ
կտաւի պէս անօթ չորս ծայրերից
կապած՝ իջաւ երկրի վերայ,
Որի մէջ կային երկրի ամեն 12
կերպ չորքոտանիները և գա-
զանները և սողունները և եր-
կնքի թռչունները: Եւ ձայն 13
եղաւ նորան. Ա՛ռ կաց, Պետ-
րոս, մորթիր՝ և կեր: Պետ-
րոսն էլ ասաց. Չա՛ռ լեցի, 14
Տէր, որովհետև ես երբէք
պղծ կամ անմաքուր բան չ'կե-
րայ: Եւ դարձեալ երկրորդ 15
անգամ ձայն Էկաւ նորան, Այն
որ Աստուած սրբեց, դու պղծ
մի համարիր: Այս երեք ան- 16
գամ եղաւ, և այն անօթը
վերացաւ երկինքը: Եւ երբոր 17
Պետրոսը զարմացած էր իր
մտքումը, թէ ինչ պիտի լինի
այն տեսիլքը՝ որ տեսաւ. և
ահա Կուռնէլիոսից ուղարկուած
մարդիկը՝ Սիմոնի տունը որոնե-
լով դրան մօտ կանգնեցին. Եւ 18
կանչելով հարցնում էին, թէ
Սիմոնն՝ որ Պետրոս է կոչվում՝
այս տեղ է հիւր: Եւ դեռ 19
Պետրոսը այն տեսիլքի համար
միտք էր անում, Հոգին նորան
ասաց. Ահա երեք մարդիկ քեզ
որոնում են: Այց վեր կաց 20
իջիր. և գնա նորանց հետ ա-
ռանց խղճմտանք անելու, վասն
զի ես եմ՝ ուղարկել նորանց:
Եւ Պետրոսը իջաւ այն մարդ- 21

եալ յամենայն ազգէն Հրէից. հրաման առ 'ի հրեշտակէ սրբոյ՝ կոչելոյ զքեզ 'ի տուն իւր՝ և լսել բանս 'ի քէն:

23 Կոչեաց զնոսա 'ի ներքս՝ և առ իւր ագոյց. և 'ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս գնաց ընդ նոսա. և ոմանք յեղբարց անտի՝ որ 'ի Յոպպէ էին՝ եկին
24 ընդ նմա: Եւ 'ի վաղիւ անդր մտին 'ի Կեսարիա. և Կուռնէլիոս մնայր նոցա, կոչեցեալ զաղգատոհմն իւր՝ և զկարեւոր բարեկամսն:
25 Եւ եղև 'ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ եղև նմա Կուռնէլիոս, անկեալ առ ոտսն՝ երկիրպագա-
26 նէր: Եւ Պետրոս կանգնեաց զնա՝ և ասէ. Յոտն կաց՝ և ես
27 ինքն մարդ եմ: Եւ խօսելով ընդ նմա եմուտ 'ի ներքս. և գտանէր անդ ժողովեալ բա-
28 զումս: Եւ ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք՝ որպէս անմարթ է առն Հրէի հպել կամ մերձենալ առ այլազգի. և ինձ Աստուած եցոյց մի զոք խառ-

կանց մօտ որ Կուռնէլիոսիցը նորա մօտ էին ուղարկուած և ասաց. Ահա ես եմ, որ որո-նում էք. Թնչ բան կայ, որի
22 համար եկաք դուք: Նորանք էլ ասացին, Կուռնէլիոս հա-րիւրապետն՝ արդար և աստ-ուածավախ մարդ, որ Հրէաների բոլոր ազգիցը Աստուծի վկայու-թիւն ունի, նա հրաման առաւ սուրբ հրեշտակից, որ քեզ կանչէ իր տունը և քեզանից խօսքեր լսէ: Եւ ներս կան-չեց նորանց՝ և ընդունեց իբրև հիւր.

23 Եւ հետևեալ օրը Պետրոսը նորանց հետ գնաց. և այն եղբայրներիցն՝ որ Յոպպէյումն էին, մի քանիսը նորա հետ եկան:
24 Եւ հետևեալ օրը մտան Կեսա-րիա. և Կուռնէլիոսն իր ազգա-կաններին և ընտանի բարե-կամներին կանչել էր, և սպա-սում էր նորանց:

25 Եւ եղաւ երբոր Պետրոսը ներս էր մտնում, Կուռնէլիոսը դիմաւորեց նորան, և ոտներն
26 ընկած երկրպագեց: Պետրոսն էլ կանգնեցրեց նորան և ասաց. Ա՛ռ կաց, ես ինքս էլ մարդ
27 եմ: Եւ նորա հետ խօսելով ներս մտաւ. և այն պէղ շատ
28 մարդ ժողովուած գտաւ: Եւ նորանց ասաց. Դուք գիտէք, ինչպէս ապօրէն բան է Հրէայ մարդու համար մի այլազգու դպչիլ կամ մօտենալ. բայց Աս-

նակ կամ անսուրբ ասել 'ի
29 մարդկանէ: Ա՛յն այսորիկ և առանց ընդ բանս ինչ ածե-լոյ եկի կոչեցեալ. բայց արդ հարցանեմ, Թնչ պէտս կո-
30 չեցիք զիս: Եւ Կուռնէլիոս ասէ. Յառաջ քան զչորս աւուրս* մինչ ցայս ժամ կայի՝ յաղօթս յինն ժամն 'ի տան իմում, և ահա այր մի եկն եկաց առաջի իմ 'ի հանդերձս սպի-
31 տակս, և ասէ. Կուռնէլիէ՝ լսելի եղեն աղօթք քո. և ողորմութիւնք քո յիշեցան ա-
32 ռաջի Աստուծոյ: Եւ արդ ղրեա 'ի Յոպպէ և կոչեա զՍիմոն՝ որ կոչեցեալն է Պետրոս. սա մնեալ է 'ի տուն Սիմոնի ու-ռումն խաղախորդի մերձ 'ի ծովն, որ եկեսցէ, և խօսեսցի բանս
33 ընդ քեզ: Եւ ես իսկ և իսկ յղեցի առ քեզ. դու բարւոք արարեր զի եկիր. Արդ ամ-ենեքին մեք առաջի Աստուծոյ կամք լսել զամենայն, զոր հրամայեալ է քեզ 'ի Տեառնէ:

34 Եբաց Պետրոս զբերան իւր՝ և ասէ. Ա՛շմարտութեամբ հասեալ եմ, զի ոչ գոյ ակնա-ռութիւն առ 'ի Աստուծոյ.
35 Այլ յամենայն ազգս՝ որ երկն-չին 'ի նմանէ՝ և գործէ զար-դարութիւն, ընդունելի է նմա:
36 Զբանն առաքեաց որդւոցն

տուած ինձ ցոյց տուաւ, ոչ մէկ մարդի էլ պիղծ կամ անմաքուր չասել: Որա համար էլ առանց
29 ընդդէմ խօսելու եկայ, երբոր կանչուեցայ. հիմա հարցնում եմ. Թնչ բանի համար կան-չեցիք ինձ: Եւ Կուռնէլիոսը
30 ասաց. Չորս օրից առաջ մինչև այս ժամը՝ ծոմ էի պահում և իններորդ ժամին իմ տան մէջ աղօթք էի անում, և ահա մի մարդ կանգնեց իմ առջև սպի-տակ հանդերձներով, և ասաց.
31 Կուռնէլիոս, քո աղօթքը լսուե-ցաւ, և քո ողորմութիւնները յիշուեցան Աստուծոյ առջև:
32 Հիմա ուղարկիր Յոպպէ, և կանչիր Սիմոնին՝ որ Պետրոս է կոչվում. սա մի կաշեգործ Սիմոնի տանն հիւր է՝ ծովի մօտ. որ նա գայ, քեզ հետ խօսի:
33 Եւ ես իսկոյն քեզ մօտ ու-ղարկեցի. դու էլ լաւ արիր, որ եկար. հիմա մենք ամենքս Աստուծոյ առջև կանգնած ենք, որ լսենք այն ամենն՝ որ Տէրից քեզ հրամայուած է:

34 Պետրոսը իր բերանը բանա-լով ասաց. Ա՛շմարտութեամբ հասկանում եմ, որ Աստուած
35 երեսպաշտ չէ. Այլ ամեն ազ-գումն, ով որ վախենում է նորանից՝ և արդարութիւն է գործում, ընդունելի է նորան:
36 Այն խօսքը, որ ուղարկեց

* 'Ի Յոյնն, պահէի մինչ ցայս ժամ, և կայի

Իսրայէլի՝ աւետարանել զխա-
զաղութիւն 'ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի. սա է ամենայնի
37 Տէր։ Դուք ինքնին գիտէք
զբանն, որ եղև ընդ ամենայն
Հրէաստան սկսեալ'ի Գալիլեէ,
յետ մկրտութեանն՝ զոր քարո-
38 զեաց Յովհաննէս. զՅիսուս
որ 'ի Նազարեթէ՝ զոր օծն
Աստուած Հոգւով Սրբով և
զօրութեամբ. որ շրջեցաւ բարի
առնել՝ և բժշկել զամենայն
ըմբռնեալսն 'ի Սատանայէ. զի
39 Աստուած էր ընդ նմա։ Եւ
մեք վկայ եմք ամենայնի՝ զոր
արար յերկրին Հրէաստանի և
յԵրուսաղէմ. զոր և սպանին
40 կախեալ զփայտէ։ Զնա Աս-
տուած յարոյց երրորդ աւուր.
41 և ետ նմա յայտնի լինել. Ո՛չ
ամենայն ժողովրդեանն, այլ
մեզ վկայից յառաջագոյն ընտ-
րելոցս Աստուծոյ. որք և
կերաք և արբաք ընդ նմա՝ յետ
յարութեան նորա 'ի մեռելոց։
42 Եւ պատուիրեաց մեզ քարոզել
ժողովրդեանն՝ և վկայութիւն
դնել, թէ նա է սահմանեալն
Աստուծոյ՝ դատաւոր կենդա-
43 նեաց և մեռելոց։ Նմա ամենայն
մարգարէք վկայեն, թողութիւն
մեղաց առնուլ անուամբ նորա՝
ամենայն հաւատացելոց 'ի նա։

44 Եւ մինչդեռ խօսէր Պետրոս

Իսրայէլի որդոցն համար, խա-
զաղութիւն աւետարանել Յի-
սուսի Քրիստոսի ձեռամբն, (սա
է ամենի Տէրը.) Դուք ինքներդ 37
գիտէք այն բանն, որ եղաւ
բոլոր Հրէաստանումը Գա-
լիլեայից սկսած այն մկրտու-
թիւնից յետոյ, որ Յոհան-
նէսը քարոզեց. Այն Յիսուսին 38
որ Նազարէթից է, թէ ինչ-
պէս Նորան Աստուած Սուրբ
Հոգով և զօրութիւնով օծեց.
որ մանեկաւ բարի անելով և
սատանայից բոլոր հարստա-
հարուածները բժշկելով. վասն
զի Աստուած նորա հետ էր։
Եւ մենք վկայ ենք այն ամեն 39
բաներին, որ Հրէից երկրումը
և Երուսաղէմումն արաւ. որին
փայտից կախած սպանեցին։
Նորան Աստուած յարոյց եր- 40
րորդ օրը. և յայտնի արաւ
նորան։ Ոչ թէ բոլոր ժողովը- 41
ղին, այլ մեզ՝ Աստուածանից
յառաջագոյն ընտրուած վկաներ-
իս. որ կերանք և խմեցինք
նորա հետ՝ նորա մեռելներից
յարութիւն առնելուց յետոյ։
Եւ պատուիրեց մեզ ժողովրդին 42
քարոզել՝ և վկայութիւն դնել,
թէ ինքն է Աստուածանից սահ-
մանուած դատաւորը մեռելոց
և կենդանեաց։ Բոլոր մար- 43
գարէները վկայութիւն են տա-
լիս նորան, որ նորա անունովը
մեղաց թողութիւն կ'առնէ ամեն
նորան հաւատացողը։

Եւ Պետրոսը դեռ այս բանը 44

զբանս զայս, հանդեաւ Հոգին
Սուրբ 'ի վերայ ամենեցուն՝ որ
45 լսէին զբանն։ Զարմացան՝ որք
'ի թլփատութենէ անտի հաւա-
տացեալք եկեալ էին ընդ Պետ-
րոսի. զի և 'ի հեթանոսս
պարգևք Հոգւոյն Սրբոյ զե-
46 զուին։ Քանզի լսէին 'ի նո-
ցանէ խօսել լեզուս՝ և մեծա-
47 ցուցանել զԱստուած։ Յայն-
ժամ պատասխանի ետ Պետրոս.
Մի՞թէ զջուր ոք արգելուլ կարէ
առ 'ի չմկրտելոյ զսոսա, որք և
զՀոգին Սուրբ ընկալան՝ որպէս
48 և մեք։ Եւ հրամայեաց նոցա
մկրտիլ յանուն Յիսուսի Քրիս-
տոսի. յայնժամ աղաչեցին զնա
լինել անդ աւուրս ինչ։

ԳԼ. ԺԱ.

1 Լուան առաքեալքն և եղ-
բարքն՝ որ էին 'ի կողմանս
Հրէաստանի, զի և 'ի հե-
թանոսս ընկալան զբանն Աս-
2 տուծոյ։ Բայց յորժամ եկ
Պետրոս յԵրուսաղէմ, խղճէին
'ի նմանէ՝ որ 'ի թլփատութենէ
3 անտի հաւատացեալքն. Եւ ա-
սէին, թէ Եմուտ առ արս
անթլփատս՝ և եկեր ընդ նոսա։
4 Եւ սկսաւ Պետրոս պատմել
5 նոցա կարգաւ՝ և ասէ. Ես էի 'ի
քաղաքին 'ի Յոպպէ յաղօթս՝
և տեսանէի 'ի զարմացման
տեսիլ. իջանել անօթ ինչ իբրև

խոսելիս, Սուրբ Հոգին իջաւ
այն խօսքը լսողների բոլորի
վերայ։ Եւ զարմացան Պետ- 45
րոսի հետ եկող հաւատացեալ-
ները, որ թլփատութիւնից էին.
որ հեթանոսների մէջ էլ Սուրբ
Հոգոյ պարգևը թափվում էր։
Որովհետև լսում էին՝ որ նո- 46
րանք լեզուներով խոսում և
Աստուծոյն փառաւորում էին։
Այն ժամանակ Պետրոսը պա- 47
տասխանեց. Մի՞թէ մէկը կա-
րող է ջուրը արգիլել, որ սո-
րանք չմկրտուին, որ Սուրբ
Հոգին ընդունեցին ինչպէս և
մենք։ Եւ նորանց հրամայեց 48
որ Տիրոջ անունովը մկրտուին.
այն ժամանակ աղաչեցին նո-
րան՝ որ մի քանի օր մնայ
այն տեղը։

ԳԼ. ԺԱ.

Եւ առաքեալներն և այն 1
եղբայրներն՝ որ Հրէաստանի
կողմերումն էին, լսեցին, որ
հեթանոսներն էլ ընդունեցին
Աստուծոյ խօսքը։ Բայց երբ 2
որ Պետրոսը վեր եկաւ Եր-
ուսաղէմ, այն հաւատացեալ-
ներն որ թլփատութիւնից էին՝
վիճում էին նորա դէմ, Եւ 3
ասում էին, թէ Դա անթլփատ
մարդկանց մօտ մտաւ, և նորանց
հետ կերաւ։ Եւ Պետրոսը 4
սկսեց կարգով պատմել նորանց՝
և ասաց. Ես Յոպպէ քաղա- 5
քումն աղօթք էի անում՝ և

կտաւոյ մեծի զչորեցունց տանոց
կախեալ յերկնից՝ և եհաս մինչև
6 առ իս։ Յոր պշուցեալ հայէի.
և տեսի զչորքոտանիս երկրի, և
զգազանս՝ և զսողունս, և զթռ-
7 չունս երկնից։ Եւ լուայ բար-
բառ՝ որ ասէր ցիս. Արի Պետ-
8 րոս՝ զնե՛ և կե՛ր։ Եւ ասեմ.
Ո՛չ՝ Տէր, զի խառնակ
9 ինչ և անսուրբ ոչ երբեք եմուտ
'ի բերան իմ։ Պատասխանի ետ
ինձ երկիցս անգամ՝ բարբառն
յերկնից. Զոր Աստուած սրբ-
բեաց՝ դու մի՛ խառնակ համա-
10 րիր։ Այս եղև երիցս, և վերա-
ցաւ ամենայն դարձեալ յերկինս։
11 Եւ ահա՛ անդրէն երեք արք
եկին կացին առ ապարանիցն՝
ուր եմն էի, առաքեալք 'ի
12 Կեսարիայ առ իս։ Եւ ասէ
ցիս Հոգին երթալ ընդ նոսա՝ և
մի՛ ինչ խղճել. եկին ընդ իս և
սոքա վեցեքին եղբարքս, և
մտաք 'ի տուն առնն այնորիկ։
13 Եւ պատմեաց մեզ՝ որպէս ետես
զհրեշտակն 'ի տան իւրում՝ զի
կայր և ասէր ցնա. Առաքեա՛ 'ի
Յոպպէ, և կոչեա՛ զՍիմոն
14 զկոչեցեալն Պետրոս. Որ խո-
սեսցի բանս ընդ քեզ, որովք
կեցցես դու՝ և ամենայն տուն
15 քո։ Եւ իբրև սկսայ խօսել՝ եկն
Հոգին Սուրբ 'ի վերայ նոցա.
որպէս և 'ի վերայ մեր 'ի
16 սկզբանն։ Յիշեցի զբանն Տեառն
զոր ասէրն. Յովհաննէս մկըր-
տեաց 'ի ջուր։ բայց դուք
մկրտիցիք 'ի Հոգին Սուրբ։
յարիշտակութեան մէջ տեսիլքս
տեսայ. որ մեծ կտաւի պէս մի
անօթ՝ չորս ծայրից կախուած՝
երկնքիցը վայր էր գալիս, և
եկաւ մինչև ինձ մօտ։ Երբոր 6
աչքս նորա մէջ գցած նայում
էի, և տեսայ երկրի չորքոտանի-
ները, և գազանները, և սողուն-
ները, և երկնքի թռչունները.
Եւ ձայն լսեցի, որ ասում էր 7
ինձ. վեր կաց, Պետրոս, մոր-
թիր և կեր։ Եւ ասացի. Ո՛չ՝ 8
Տէր, Տէր. որովհետև երբեք
պիղծ կամ անմաքուր բան իմ
բերանը չէ մտած։ Ձայնը 9
երկնքից ինձ երկրորդ անգամ
պատասխանեց. Նա որ Աստ-
ուած սրբեց, դու պիղծ մի
համարիր։ Եւ այս երեք ան- 10
գամ եղաւ, և բոլորը դարձեալ
վերացաւ երկինքը։ Եւ ահա 11
շուտով երեք մարդիկ եկան
կանգնեցին այն տան առջևն,
ուր ես էի, Կեսարիայից ինձ
մօտ ուղարկուած։ Եւ Հոգին 12
ինձ ասաց, որ նորանց հետ
գնամ՝ առանց խղճմտանք անե-
լու. այս վեց եղբարքն էլ ինձ
հետ եկան, և մտանք այն
մարդու տունը։ Եւ պատմեց 13
մեզ, թէ ինչպէս տեսաւ Հրեշ-
տակն իր տանը, որ կանգնած
էր՝ և ասում էր նորան. Ուղար-
կիր Յոպպէ, և կանչիր Պետրոս
կոչուած Սիմոնին. Նա քեզ 14
հետ բաներ կ'խօսի, որ նո-
րանով կ'փրկուես դու՝ և քո
բոլոր տունը։ Եւ երբոր սկսեցի 15

17 Իսկ արդ եթէ զհաւասարակաց
պարգևն ետ Աստուած և նոցա՝
որպէս և մեզ՝ 'ի հաւատալն 'ի
Տէր Յիսուս Քրիստոս, ես
զի՞նչ կարող էի արգելուլ զԱս-
18 տուած։ Եւ լուեալ զայս լռե-
ցին, և փառաւորեցին
զԱստուած՝ և ասէին. Ուրեմն
և 'ի հեթանոսս ետ Աստուած
զապաշխարութիւն կենաց։

19 Եւ ցրուեալքն 'ի նեղութենէն
որ եղև 'ի վերայ Ստեփանոսի՝
հասին մինչև 'ի Փիւնիկէ և 'ի
Կիպրոս և Անտիոքիա. ոչ
ումեք խօսէին զբանն, բայց
20 միայն Հրէից։ Եւ էին ոմանք
'ի նոցանէ արք Կիպրացիք և
Կիւրենացիք՝ որք մտեալ Անտ-
իոք՝ խօսէին ընդ Յոյնսն՝
աւետարանեալ զՏէր Յիսուս։
21 Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա.
և բազմութիւն հաւատացելոց
22 դարձաւ 'ի Տէր։ Լուաւ եղև բանս
այս յականջս եկեղեցւոյն, որ
էր Երուսաղէմ՝ վասն նոցա.
և առաքեցին զԲառնաբաս մինչև
23 Անտիոք. Որ իբրև եկն՝ և
տեսս զշնորհսն Աստուծոյ՝ ու-
րախ եղև, և մխիթարէր զամ-
ենեսին՝ յօժարութեամբ սրտի

խօսել, Սուրբ Հոգին իջաւ
նորանց վերայ. ինչպէս և մեզ
վերայ սկզբումը։ Եւ յիշեցի 16
Տիրոջ այն խօսքն՝ որ ասում
էր. Յովհաննէս ջրով մկրտեց.
բայց դուք Սուրբ Հոգով
կ'մկրտուիք։ Ուրեմն՝ եթէ Աս- 17
տուած մի և նոյն պարգևը
տուաւ նորանց. ինչպէս և մեզ,
որ Տէր Յիսուս Քրիստոսին
հաւատացինք. ապա ես ո՞վ էի
որ կարողանայի Աստուծոյն ար-
գելել։ Եւ երբոր լսեցին այս, 18
լռեցին և փառաւորում էին
Աստուծոյն՝ և ասում էին.
Ուրեմն հեթանոսներին էլ Աս-
տուած կենաց համար ապաշ-
խարութիւնը տուաւ։

Եւ նորանք որ ցրուած էին 19
այն նեղութիւնից, որ Ստե-
փանոսի վերայ եղաւ, մինչև
Փիւնիկէ և Կիպրոս և Անտիո-
քիա հասան. և ոչ ոքի չէին
խօսում Աստուծոյ խօսքը, բայց
միայն Հրէաներին։ Եւ նո- 20
րանցից ոմանք կային՝ Կիպրացի
և Կիւրենացի մարդիկ, որ Ան-
տիոք մտած խօսում էին Հելլե-
նախօսների հետ՝ աւետարանելով
Տէր Յիսուսը։ Եւ Տիրոջ ձեռը 21
նորանց հետ էր. և բազմաթիւ
մարդիկ հաւատացին՝ և դէպի
Տէրը դարձան։ Այս բանի 22
լուրը հասաւ Երուսաղէմի և-
կեղեցու ականջին, և Բառ-
նաբասին ուղարկեցին որ գնայ
մինչև Անտիոք։ Նա երբոր 23
եկաւ, և Աստուծոյ շնորհքը

24 կալ Նոցա 'ի Տէր։ Օվ էր այր*
զուարթամիտ՝ և լի Հոգւով
Սրբով և հաւատովք. և յաւե-
լաւ ժողովուրդ բաղում Տեառն։
25 Եւ ել 'ի Տարսոն խնդրել
զՍօղոս, և գտեալ զնա ած
26 ՅԱնտիոք։ Եւ եղև Նոցա զամն
ողջոյն ժողովել յեկեղեցին՝ և
ուսուցանել ժողովուրդ բա-
զում՝, և անուանել նախ ՅԱն-
տիոք զաշակերտսն Քրիստոն-
եայս։

27 Ընդ աւուրսն ընդ այնոսիկ
իջին ՅԵրուսաղէմ մարգարէք
28 ՅԱնտիոք։ Յարուցեալ մի ոմն
'ի Նոցանէ անուն Ագաբոս՝
նշանակեաց Հոգւովն սով մեծ
լինել ընդ ամենայն աշխարհ՝ որ
29 եղև առ Կղովդեաւ։ Բայց յա-
շակերտաց անտի, որպէս զիարդ
կարող ոք էր՝ իւրաքանչիւրոք 'ի
Նոցանէ որոշեցին առաքել 'ի
պէտս եղբարցն որ բնակեալ էին
30 'ի Հրէաստանի. Օր որ և արա-
բին իսկ՝ առաքեալ առ երիցունսն
'ի ձեռն Բառնաբայ և Սօղոսի։

ԳԼ. ԺԲ

1 Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ
արկ Հերովդէս արքայ ձեռն՝
տնսաւ՝ ուրախ եղաւ, և խընդ-
բում էր ամենին՝ որ սրտի յօ-
ժարութեամբ Տիրոջ հետ մնան։
Ապա նա բարի և Սուրբ 24
Հոգւով և հաւատքով լցուած
մարդ էր. և շատ ժողովուրդ
աւելացաւ Տիրոջ համար։ Եւ 25
Բառնաբասը դուրս եկաւ գնաց
Տարսոն, որ Սօղոսին որոնէ, և
նորան գտաւ բերաւ ՅԱնտիոք։
Եւ եղաւ որ նորանք մի բոլոր 26
տարի ժողովվում էին եկեղե-
ցու մէջ, և շատ ժողովուրդ էին
սովորեցնում՝, և աշակերտներն
առաջ ՅԱնտիոքումը Քրիստո-
նեայ անուանուեցան։
Եւ այն օրերումն Երուսա- 27
ղէմիցը մարգարէներ իջան ՅԱն-
տիոք։ Եւ նորանցից մէկն՝ ա- 28
նունն Յագաբոս, վերկացաւ՝ Հո-
գովն խնաց տուաւ, թէ բոլոր
աշխարհքի վերայ մեծ սով է
լինելու, որ Կղոդիոս կայսեր
ժամանակին եղաւ էլ։ Բայց 29
այն աշակերտներիցն ամեն մէկն
ինչպէս որ կարող էր, որոշե-
ցին օգնութիւն ուղարկել Հրէ-
աստանումն բնակած եղբայրնե-
ներին. Որ արին էլ, և ու- 30
ղարկեցին երէցների մօտ՝ Բառ-
նաբասի և Սօղոսի ձեռովը։

ԳԼ. ԺԳ

Այն ժամանակին Հերոդէս 1
թագաւորը ձեռք գցեց, որ

* 'Ի Յոյն, բարի

չարչարել զոմանս յեկեղեցւոյն։
2 Եւ սպան զՅակովբոս զեղբայրն
3 Յովհաննու սրով։ Եւ տես եթէ
հաճոյ է Հրէիցն, յաւել ևս
ունել զՊետրոս. և էին աւուրքն
4 բաղարջակերաց։ Որ իբրև
կալաւ՝ եդ 'ի բանտի, և մատ-
նեաց չորից չորրորդաց զինուո-
րաց պահել զնա. և կամէր յետ
զատկին ածել զնա ժողովը-
5 դեանն։ Եւ Պետրոս 'ի պա-
հեստի էր 'ի բանտին. և աղօթք
սատեպ լինէին յեկեղեցւոյն վասն
6 Նորա առ Աստուած։ Իբրև կա-
մեցաւ զնա ածել Հերովդէս, 'ի
գիշերին յայնմիկ էր Պետրոս 'ի
քուն 'ի մէջ երկուց զինուորաց՝
կապեալ կրկին շղթայիւք. և
պահապանքն առաջի դրանն
7 պահէին զբանտն։ Եւ ահա
հրեշտակ Տեառն եկն եկաց 'ի
վերայ՝ և լոյս ծագեաց 'ի
տանն, և խթեաց զկողն Պետ-
րոսի յարոյց զնա և ասէ. Արի
վաղվաղակի. և անկան շղթայքն
8 'ի ձեռաց Նորա։ Եւ ասէ
հրեշտակն ցնա. Զգեցի քո,
և արկ զհողաթափս յոտս քո.
և արար այնպէս. և ասէ ցնա,
Արկ զձորձս քո՝ և գնա զինի իմ։
9 Եւ ելեալ երթայր զհետ, և ոչ
գիտէր թէ ճշմարիտ իցէ որ
ինչ եղեւն 'ի հրեշտակէն. զի
10 համարէր երազ տեսանել։ Եւ
իբրև անցին Նոքա ըստ մի պահ
և ըստ երկուս, եկին մինչև 'ի
դուռն երկաթի՝ որ հանէր 'ի
քաղաքն. որ ինքնին բացաւ
եկեղեցուցն մի քանիսին չար-
չարէ։ Եւ Յակոբին՝ Յոհան- 2
նէսի եղբօրը սրով սպանեց։
Եւ տեսնելով Հրէաներին հա- 3
ճոյ է, նորա վերայ Պետրոսին
էլ բռնեց. (և բաղարջակերաց
օրերն էր։) Որոն՝ երբ որ 4
բռնեց՝ բանտը դրաւ, և մատ-
նեց չորս չորրորդ զինուորների՝
որ պահեն նորան. և կամենում՝
էր զատկից յետոյ նորան բերել
ժողովրդի առջև։ Եւ Պետրոս 5
բանտումը պահուած էր. բայց
նորա համար անդադար աղօթք
էր լինում եկեղեցուցն դէպի
Աստուած։ Եւ երբոր Հերո- 6
դէս կամեցաւ նորան դուրս
բերել, այն գիշերը Պետրոսը
քնած էր երկու զինուորների մէջ
երկու շղթայով կապուած. և
պահապանները դրան առջև
բանտը պահում էին։ Եւ ահա 7
Տիրոջ հրեշտակը Եկա-
նեց, և տան մէջ լոյս ծագեց.
և խթեց Պետրոսի կողին՝ նո-
րան արթնացրեց՝ և ասաց. Ա՛ր
կաց շուտով. շղթաները վայր
ընկան նորա ձեռներից։ Եւ 8
հրեշտակն ասաց նորան. Զօտիդ
կապիր և հողաթափներդ հա-
գիր ոտներիդ և այն պէս արաւ.
և ասաց նորան. Հանդերձներդ
քեզ վերայ գցիր՝ և իմ ետևից
եկ։ Եւ դուրս եկաւ գնում՝ 9
էր նորա ետևից, և չէր գի-
տում, թէ ճշմարիտ է հրեշ-
տակից եղածը. վասնզի կար-
ծում՝ էր թէ երազ է տես-

նոցա. և մտեալ անցին ընդ
փողոց մի. և վաղվաղակի 'ի
բաց եկաց 'ի նմանէ հրեշտակն:
11 Եւ Պետրոս իբրև 'ի միտս եղև,
ասէ. Արդ գիտեմ ճշմարիտ ե-
թէ առաքեաց Տէր զհրեշտակ
իւր, և փրկեաց զիս 'ի ձեռաց
Հերովդի, և յամենայն ակնկա-
լութենէ ժողովրդեանն Հրէից:
12 Եւ լեալ 'ի միտս՝ եկն 'ի տուն
Մարեմու մօր Յովհաննու, որ
կոչեցաւն Մարկոս. ուր էին
բազումք ժողովեալ՝ և աղօթս
13 առնէին: Եւ 'ի բաղխել զդուրս
տանն, մատեաւ աղախին մի՝
ունկն դնէր, որում՝ անուն էր
14 Հռովդէ: Եւ ծանուցեալ ըզ-
ձայնն Պետրոսի՝ 'ի խնդալոյն ոչ
եբաց զդուռն. 'ի ներքս ըն-
թացեալ պատմեաց, թէ Պետրոս
15 առ դրանն կայ: Նոքա ասեն
ցնա Մոլիս. և նա ևս պնդէր
թէ այսպէս է. և նոքա ասէին՝
Հրեշտակ նորա իցէ: Եւ
Պետրոս ստէպ բաղխէր. իբրև
բացին, տեսին զնա և զարմա-
17 ցան: Եւ նա ձեռամբ ցուցանէր
նոցա լռել. և պատմեաց՝ որպէս
Տէր Եհան զնա 'ի բանտէն. և
ասէ՝ Պատմեցէք Յակովբայ և
եղբարց զայս. և ել գնաց յայլ
18 տեղի: Եւ իբրև այգ եղև՝ էր
խռովութիւն մեծ 'ի մէջ զինուո-
րացն, զի՞ արդեօք Պետրոսն
19 եղև: Իսկ Հերովդէս իբրև
խնդրեաց զնա՝ և ոչ եգիտ,
հարցեալ զպահապանսն հրա-
մայեաց սպանանել. և իջեալ 'ի

նում: Եւ երբոր նորանք անցան 10
առաջի պահապաններից և երկ-
րորդից, եկան մինչև երկաթի
դուռն՝ որ դէպի քաղաքն էր
տանում. որ ինքն իրանից բա-
ցուեցաւ նորանց համար, և նո-
քանից դուրս գալով մի փողոց
անցան, և շուտով հրեշտակը
նորանից հեռացաւ: Եւ Պետ- 11
րոսը ինքն իրան գալով ասաց.
Հիմա ճշմարիտ իմացայ, որ
Տէրն իր հրեշտակն ուղարկեց,
և փրկեց ինձ Հերոդէսի ձեռ-
քից, և Հրէաների ժողո-
վուրդի բոլոր սպասած բանե-
րից: Եւ մտածելով եկաւ 12
Մարիոս կոչուած Յոհաննէսի
մայր՝ Մարեմայ տունը, ուր
շատերը ժողովուած՝ աղօթք
էին անում: Եւ դուռը որ 13
թակեց, մի աղախին՝ անունն
Հռոդէ մօտ եկաւ, որ ականջ
դնէ. Եւ Պետրոսի ձայնը ճա- 14
նաչեց, ուրախութիւնից դուռը
բաց չարաւ. ներս վազեց և
պատմեց, թէ Պետրոսը դրանը
կանգնած է: Նորանք էլ ասա- 15
ցին նորան՝ գժուել ես. իսկ
նա հաստատում էր, թէ այս-
պէս է. և նորանք ասում էին,
թէ Նորա հրեշտակն է: Բայց 16
Պետրոսը կանգնած դուռը թա-
կում էր. երբոր բաց արին,
տեսան նորան և զարմացան:
Եւ նա ձեռով նշան արաւ նո- 17
րանց որ լուռ կենան. և պատմեց
նորանց, թէ ինչպէս Տէրը բան-
տից իրան հանեց. և ասաց.

Հրէաստանէ 'ի Կեսարիա՝ և
անդ լինէր:

20 Եւ էր Հերովդէս ցասմամբ
ընդ Տիւրացիս և ընդ Սիդոնա-
ցիս. և նոքա առ հասարակ եկին
առ նա. և 'ի բանի արարեալ
զԲղաստոս սենեկապետն ար-
քայի, խնդրէին զխաղաղութիւն
վասն կերակրելոյ երկրին նոցա
21 յարքունեաց: Յաւուր միում
յերևելեալսն՝ Հերովդէս զգե-
ցեալ էր զհանդերձ թագա-
ւորութեան՝ և նստէր յատենի,
և խօսէր ընդ նոսա հրապարա-
22 կաւ: Եւ ամբոխն աղաղակէր՝
թէ Աստուծոյ բարբառ է, և
23 ոչ մարդոյ: Եւ անդէն եհար
զնա հրեշտակ Տեառն, փոխա-
նակ զի ոչ ետ փառս Աստուծոյ.
և եղեալ որդնալից՝ սատակեցաւ:

24 Եւ բանն Աստուծոյ աճէր և
բազմանայր:
25 Բառնաբաս և Սաղոս դարձան
յԵրուսաղէմ՝ իբրև կատարե-
ցին զպաշտօնն. առեալ էր ընդ
իւրեանս և զՅովհաննէս՝ որ
կոչեցեալն էր Մարկոս:

Այս բանը պատմեցէք Յակոբին
և եղբայրներին. և դուրս եկաւ
գնաց ուրիշ տեղ: Եւ երբոր 18
առաւօտ եղաւ՝ մեծ խռովու-
թիւն կար այն զինուորների
մէջ, թէ Պետրոսը ի՞նչ եղաւ:
Բայց Հերոդէս երբոր նորան 19
ուզեց և չգտաւ, պահապաննե-
րին քննեց և հրամայեց սպա-
նել. և Հրէաստանից իջաւ
Կեսարիա՝ և այն տեղ էր լինում:
Եւ Հերոդէս շատ բարկացած 20
էր Տիւրացոց և Սիդոնացոց
վերայ. և նորանք միաբան եկան
նորա մօտ. և Բղաստոսին՝ թա-
գաւորի ներսի տան վերակա-
ցուին՝ համոզելով՝ խաղաղու-
թիւն էին խնդրում. քանզի
նորանց երկիրը՝ արքունիքից էր
կերակրվում: Մի հանդիսա- 21
ւոր օր, Հերոդէսը թագաւո-
րական զգեստ հագած առեա-
նումը նստած էր, և ամենի
առջև ատենաբանում էր դէպի
նորանց: Եւ ամբոխն աղաղա- 22
կում էր, թէ Դա Աստուծոյ
ձայն է, և ոչ թէ մարդու:
Եւ իսկոյն Տիրոջ հրեշտակը 23
զարկեց նորան, քանզի Աստու-
ծոյն չտուաւ փառքը. և որդնե-
րով լցուեցաւ՝ մեռաւ:
Եւ Աստուծոյ խօսքն աճում՝ 24
էր և շատանում:
Բառնաբաս և Սաղոս պաշ- 25
տամունքը կատարելով Երու-
սաղէմից ետ դարձան. և իրանց
հետ էին առել Յոհաննէսին էլ
որ Մարկոս էր կոչուած:

ԳԼ. ԺԳ

1 Յին ոմանք Յ՚Անտիոք ընդ
եկեղեցւոյն մարգարէք և վար-
դապետք, Բառնաբաս՝ և Շ՚մա-
ւովն կոչեցեալն Նիւգէր, և
Ղուկիոս Կիւրենացի, և Մա-
նայէն դայեակորդի Հերովդի
չորրորդապետի, և Սօղոս:
2 Մինչդեռ ՚ի պաշտաման Տեառն
կային՝ և պահէին, ասէ Հոգին
Սուրբ. Որոշեցէք ինձ զԲառ-
նաբաս և զՍօղոս ՚ի գործ՝ յոր
3 կոչեցեալ է իմ զդոսա: Յայն-
ժամ պահեալ՝ և աղօթս արար-
եալ՝ եդին ձեռն ՚ի վերայ նոցա՝
և արձակեցին:

4 Եւ նոքա առաքեալք ՚ի Հոգ-
ւոյն Սրբոյ՝ իջին ՚ի Սելևկիա.
և անտի նաւեցին ՚ի Կիպրոս:
5 Եւ հասեալ ՚ի Սաղամինա՝
պատմէին զբանն Աստուծոյ ՚ի
ժողովուրդս Հրէից. ունէին
և զՅովհաննէս պաշտօնեայ:
6 Շրջեալ ընդ ամենայն կղզին
մինչև ՚ի Պափոս, գտին անդ
զայր ոմն մոգ սուտ մարգարէ՝
Հրէայ, որուսմ անուն էր Բա-
7 ռեյեսու: Որ էր ընդ փոխանակի
բդեշխին Սերգեայ Պօղոսի՝ առն
իմաստնոյ. Նորա աղաչեալ
զԲառնաբաս և Սօղոս՝ խնդրէր
8 լսել զբանն Աստուծոյ: Ընդդէմ
եկաց նոցա Եղիմաս մոգ.
զանգի այսպէս թարգմանի ա-
նուն նորա. խնդրէր շրջել

ԳԼ. ԺԳ

1 Եւ Անտիոքումն՝ այն տեղի
եկեղեցու մէջ կային մի քանի
մարգարէներ և վարդապետներ.
Բառնաբասը՝ և Նիւգէր ա-
սուած Սիմոնը, և Ղուկիոս
Կիւրենացին, և Հերոդէս չո-
րրորդապետի սնդակից Մանա-
յէնը, և Սօղոսը: Որանք երբ
2 որ Տիրոջը պաշտօն էին մա-
տուցանում և ծոմ էին պահում,
Սուրբ Հոգին ասաց. Ինձ
համար որոշեցէք Բառնաբասին
և Սօղոսին այն գործի համար,
3 որ ես գործանց կանչել եմ: Այն
ժամանակ ծոմ պահեցին և ա-
ղօթք արին, նորանց վերայ
ձեռք դրին՝ արձակեցին:

4 Եւ նորանք էլ Սուրբ Հո-
գուցն ուղարկուած՝ իջան Սելև-
կիա, և այն տեղից նաւով
գնացին Կիպրոս: Եւ Սա-
5 ղամինա հասնելով Աստուծոյ
խօսքը պատմում էին Հրէա-
ների ժողովարանները. Յո-
հաննէսին էլ պաշտօնեայ ու-
6 նէին: Մանելկան կղզին մինչև
ի Պափոս. և մի մոգ գտան՝
սուտ մարգարէ՝ Հրէայ, որի
7 անունը Բարէյեսու էր: Որ
փոխանակ բդեշխ՝ Սերգիոս Պօ-
ղոսի իմաստուն մարդու հետ էր.
սա Բառնաբասին և Սօղոսին
իրան մօտ կանչելով՝ ուզում
8 էր որ Աստուծոյ խօսքը լսէ:
Բայց նորանց հակառակ կացաւ
Եղիմաս մոգը. վասնզի այսպէս

զփոխանակ բդեշխին ՚ի հա-
9 ւատոց: Իսկ Սօղոս, որ և
Պօղոսն՝ լցեալ Հոգւով Սրբով
10 հայեցաւ ՚ի նա, Եւ ասէ. Ո՛վ
լի ամենայն նենգութեամբ և
խորամանկութեամբ՝ որդի Սա-
տանայի՝ թշնամի ամենայն ար-
դարութեան, ո՞չ լուս ՚ի թիւ-
րելոյ զճանապարհս Տեառն
11 ղուղիղս: Եւ արդ՝ ահա ձեռն
Տեառն ՚ի վերայ քո, և եղիցիս
կոյր՝ չտեսանել զարև մինչև ՚ի
ժամանակ մի. և անդէն անկաւ
՚ի վերայ նորա մէգ և խաւար,
և շրջեալ խնդրէր առաջնորդս:
12 Յայնժամ տեսեալ փոխանակի
բդեշխին զերան որ եղեն՝ հաւա-
տաց, զարմացեալ ընդ վարդա-
պետութիւնն Տեառն:

13 Եւ ամբարձեալ ՚ի Պափեայ
Պօղոսեանց՝ եկին ՚ի Պերգէ
Պամփիւլեայ. Յովհաննէս մեկ-
նեալ ՚ի նոցանէ՝ դարձաւ Յե-
14 րուսաղէմ: Եւ նոքա գնացեալ
՚ի Պերգեայ՝ եկին ՅԱնտիոք
Պիսիդեայ. և մտեալ ՚ի ժողո-
վուրդն յաւուր շաբաթու նըս-
15 տան: Եւ յետ ընթեռնլոյ
զօրէնսն և զմարգարէս, առա-
քեցին առ նոսա ժողովրդա-
պետքն և ասեն. Ա՛րք եղբարք՝
եթէ իցեն ՚ի ձեզ բանք մխիթա-
րութեան առ ժողովուրդդ՝
16 խօսեցարուք: Յոտն եկաց Պօ-
է թարգմանվում նորա անունը.
սա ուղում էր փոխանակ բդեշ-
9 խին հաւատքիցը փոխել: Բայց
Սօղոս, որ Պողոս է կոչվում՝
Սուրբը Հոգով լցուած մտիկ
10 տուաւ նորան, Եւ ասաց. Ով
ամեն խաբեբայութիւնով և
ամեն խորամանկութիւնով լը-
ցուած, սատանայի որդի, ամեն
արդարութեան թշնամի. չես
դադարում Տիրոջ ուղիղ ճա-
նապարհները ծռելուց: Եւ 11
հիմա ահա Տիրոջ ձեռն քեզ
վերայ է, և կոյր կ՚լինես՝ որ
չտեսնես արեգակը՝ մինչև մի
ժամանակ. և իսկոյն մութ և
խաւար ընկաւ նորա վերայ, և
մեն գալով ձեռք բռնող մարդիկ
էր որոնում: Այն ժամանակ 12
փոխանակ բդեշխն երբոր տեսաւ
այդ եղածը, հաւատաց, և Տի-
րոջ վարդապետութեան վերայ
զարմացաւ:
Եւ Պողոսն և հետը լինող- 13
ները Պափուից դուրս ելան՝
եկան Պամփիւլիայի Պերգէ քա-
ղաքը. բայց Յոհաննէս նորան-
ցից բաժանուեց, ետ դարձաւ
Երուսաղէմ: Եւ նորանք Պեր- 14
գէից գնացին՝ եկան Պիսիդիայի
Անտիոքը. և շաբաթ օրը ժո-
ղովարանը մտան նստեցին: Եւ 15
օրէնքն ու մարգարէները կար-
դալուց յետոյ, ժողովրդապետ-
ները նորանց մօտ ուղարկեցին
և ասացին. Մարդիկ եղբարք
եթէ դուք այդ ժողովրդին հա-
մար յորդորական խօսքեր ու-

դոս՝ շարժեաց զձեռն և ասէ. Մ՛ըք Իսրայէլացիք և զք
երկնչիք Յ՚ստուծոյ՝ լուարուք:
17 Յ՚ստուած ժողովրդեանս այսորիկ
Իսրայէլի ընտրեաց զՀարսն
մեր. և զժողովուրդն բարձրա-
ցոյց ՝ի պանդխտութեան յեր-
կրին Եգիպտացւոց. և ՝ի բա-
զուկ բարձր եհան զնոսա անտի:
18 Եւ իբրև ՝քառասնամեայ ժա-
մանակ կերակրեաց զնոսա յա-
19 նապատի. Եւ ՝քակեալ ազգս
եօթն յերկրին Քանանու՝
ժառանգեցոյց նոցա զերկիր
20 նոցա. Իբրև ամս չորեք-
հարիւր և յիսուն. և յետ
այսորիկ ետ նոցա դատաւորս
մինչև ՝ի Սամուէլ մարգարէ:
21 Եւ անտի յառաջ խնդրեցին
թագաւոր. և ետ նոցա Յ՚ս-
տուած զՍաւուղ որդի Կիսեայ՝
այր յազգէ Բենիամինի, ամս
22 ՝քառասուն: Եւ իբրև փոխեաց
զնա, յարոյց նոցա զԴաւիթ
թագաւոր, որում և ասաց
վկայութեամբ. Գտի զԴաւիթ
որդի Յեսսեայ այր ըստ սրտի
իմում, որ արասցէ զամենայն
23 զկամս իմ: ՝Ի սորա զաւակէ
Յ՚ստուած ըստ աւետեացն յարոյց
Իսրայէլի զփրկիչն Յիսուս.
24 Ըստ յառաջագոյն ՝քարոզու-
թեանն Յովհաննու առաջի
երեսաց մտի նորա՝ մկրտութիւն
ապաշխարութեան՝ ամենայն ժո-
25 ղովրդեանն Իսրայէլի: Եւ իբրև
ընդոր Յովհաննէս զընթացսն,
ասէր. Օ՞ ոք կարծէք զինէն՝
նիք՝ խօսեցէք: Պօղոսն էլ վեր-
կացաւ՝ ձեռը շարժեց և ասաց. 16
Ով Իսրայէլացի մարդիկ, և
դուք՝ որ Յ՚ստուածանից վախում
էք, լսեցէք: Մ՚յս Իսրայէլացի 17
ժողովրդի Յ՚ստուածը ընտրեց
մեր Հարանցը. և ժողովուրդը
բարձրացրեց պանդխտութիւ-
նում՝ Եգիպտոսի երկրի մէջ.
և բարձր բազուկով նորանց այն
տեղից դուրս հանեց: Եւ ՝քա- 18
ռասուն տարու չափ ժամանակ
նորանց կերակրեց անապատում:
Եւ Քանանու երկրումն եօթն 19
ազգեր խորտակեց և նորանց
երկիրը նորանց ժառանգել
տուաւ: Եւ սորանից իբր չորս 20
հարիւր և յիսում տարի յետոյ
նորանց դատաւորներ տուաւ
մինչև Սամուէլ մարգարէն: Եւ 21
ապա թագաւոր ուզեցին, և
Յ՚ստուած տուաւ նորանց Կիսի
որդի Սաւուղը՝ մի մարդ Բե-
նիամէնի ցեղից, ՝քառասուն
տարի: Եւ նորան փոխելով, 22
Դաւթին նորանց համար թա-
գաւոր կանգնեցրեց, որ նորա
համար էլ վկայութիւն տուաւ
և ասաց. Յեսսէի որդի Դաւ-
թին գտայ իմ սրտի ա՞ղածն՝ պէս
մարդ, որ նա իմ բոլոր կամքը
կ՚անէ: Սորա զաւակիցն Յ՚ս- 23
տուած իր աւետիքի պէս Իսրա-
յէլացոց համար Յիսուս փրը-
կիչը վերկացրեց: Որ Յոհան- 24
նէսը՝նորա մտնելուց առաջ կան-
խաւ ապաշխարութեան մկրը-
տութիւնը ՝քարոզեց Իսրայէլի

թէ իցեմ. չեմ ես այն. այլ
ահա գայ զկնի իմ, որում չեմ
արժանի զկօշիկս ոտիցն լուծա-
26 նել: Մ՛ըք եղբարք՝ որդիք
Մ՚բրահամեան տոհմին, և որ ՝ի
ձեզ երկիւղածք իցեն Յ՚ս-
տուծոյ. ձեզ բանս այս փրկու-
27 թեան առաքեցաւ: Բայց որ
բնակեալ են Յերուսաղէմ, և
իշխանք նոցա՝ անծանօթ եղեն ՝ի
նմանէ. և ըստ բարբառոյ մար-
գարէիցն, որ զամենայն շա-
բաթն ընթեռնուին՝ դատեալ
28 կատարեցին. Եւ ոչ մի ինչ
պատճառս մահու գտեալ՝ խնդ-
րեցին ՝ի Պիղատոսէ սպանանել
29 զնա: Եւ իբրև կատարեցին
զամենայն՝ որ վասն նորա
գրեալ էր, իջուցեալ ՝ի փայ-
30 տէն՝ եդին ՝ի գերեզմանի: Մ՚յլ
Յ՚ստուած յարոյց զնա ՝ի մե-
31 ռելոց. Որ երևեցաւ աւուրքք
բազմօք այնոցիկ, որ ելեալ էին
ընդ նմա ՝ի Գալիլէէ Յերու-
սաղէմ. որք և արդ իսկ վկայք
32 են նորա առ ժողովուրդն: Եւ
մեք ձեզ աւետարանեմք զնոս-
տումն՝ որ առ Հարսն եղեալ էր:
33 Զի զնոյն Յ՚ստուած կատարեաց
առ մեզ որդիս նոցա՝ յարու-
ցեալ զՅիսուս. որպէս և ՝ի
Սաղմոսին գրեալ է յերկրոր-
դում. Որդի իմ ես դու, և ես
34 այսօր ծնայ զքեզ: Եւ զի
յարոյց զնա ՝ի մեռելոց, և ոչ
ևս դառնալոց է յապականու-
թիւն. այսպէս ասէ, եթէ Տաց
ձեզ զսրբութիւնսն Դաւթի
բոլոր ժողովրդին: Եւ երբոր 25
Յոհաննէսն վերջացնում էր իր
ընթացքը՝ ասում էր. Ինձ Հա-
մար ո՞վ էք կարծում որ լինիմ.
ես այն չեմ. բայց ահա իմ
ետևից գալիս է նա, որ ես չեմ
արժանի նորա ոտաց կօշիկն ար-
ձակելու: Մ՚արդիկ եղբարք, 26
Մ՚բրահամի ցեղի որդիքներ, և
ով որ ձեզանում աստուածա-
վախ են. ձեզ ուղարկուեցաւ
այս փրկութեան խօսքը: Քան- 27
զի Երուսաղէմում՝ բնակողները,
և նորանց իշխանները՝ չճանաչե-
ցին նորան, և ոչ մարգարէների
ձայները, որ ամեն շաբաթ օրեր
կարդացվում են՝ դատաստան
անելով կատարեցին: Եւ թէ- 28
պէտ մի մահու պատճառ չգտան,
Պիղատոսից ուզեցին՝ որ նա
սպանուի: Եւ երբոր այն ամենը՝ 29
որ նորա համար գրուած էր,
կատարեցին, փայտից վայր
բերին՝ դրին գերեզման: Բայց 30
Յ՚ստուած նորան մեռելներից
յարոյց, որ շատ օրերով երևե-
ցաւ նորանց, Որ նորա հետ 31
Գալիլեայից եկել էին Երու-
սաղէմ, որոնք նորա համար
վկաներ են ժողովրդի առջև:
Եւ մենք աւետարանում ենք 32
ձեզ այն խոստմունքը, որ հա-
րանցն եղած էր. Որ Յ՚ստուած 33
այն կատարեց մեզանում՝ որ
նորանց որդիքն ենք, Յիսուսին
յարուցանելով. ինչպէս երկ-
րորդ սաղմոսումն գրուած է.
Դու իմ Որդին ես. ես այսօր

35 զՀաւատարիմն: Բանզի և 'ի միւսումն ասէ. Ո՛չ տացես Սրբոյ քում տեսանել զապա-
36 կանութիւն: Բայլ Դաւիթ յաղագի անդ իւրում պաշտեաց. և 'ի կամն Աստուծոյ ննջեաց. և յաւելաւ առ հարս իւր՝
37 և ետես զապականութիւն: Բայց զոր Աստուածն յարոյց՝ ոչ ե-
38 տես զապականութիւն: Յայտնի լիցի ձեզ ա՛րք եղբարք, զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց
39 աւետարանի. Եւ յամենայնէ՝ յորմէ ոչ կարացիք օրինօքն Մովսէսի արդարանալ, սովաւ ամենայն որ հաւատայ՝ արդա-
40 րանայ: Զգո՛յշ կացէք գուցէ եկեսցէ 'ի վերայ ձեր ասացեալն
41 'ի մարգարէս: Տեսէ՛ք արհամարհո՛ք՝ և զարմացարո՛ւք և եղծարո՛ւք. զի գործ մի գործեմ՝ ես յաւուրս ձեր. գործ՝ որում՝ ոչ հաւատայցէք, եթէ ոք պատմեսցէ ձեզ:

42 Եւ իբրև ելին անտի, աղաչէին 'ի միւսում շաբաթու
43 խօսել նոցա զնոյն: Իբրև արձակեցաւ ժողովուրդն զհետ երթային բազումք 'ի Հրէից անտի և 'ի պաշտօնէից եկամտից զՊողոսի և զԲառնաբայ. որք խօսէին ընդ նոսա, և հաւանեցուցանէին զնոսա կալ մնալ 'ի շնորհսն Աստուծոյ:

44 Եւ 'ի գալ միւսոյ շաբաթուն, գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ:
45 Իբրև տեսին Հրէայքն զամբոխն՝ լցան նախանձու. և ընդդէմ դարձեալ ասացելոցն 'ի
46 Պողոսէ՝ հայհոյէին: Համարձակեալ Պողոսի և Բառնաբայ՝ ասէին. Առ ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Աստուծոյ. և քանզի դուք մերժեցէք զնա, և ոչ արժանի համարիք զձեզ կենացն յաւիտենականաց, ա-
47 հաւասիկ դառնամք 'ի հեթանոսս: Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր. Եդի զքեզ 'ի լոյս հեթանոսաց լինել քեզ 'ի փրկութիւն մինչև 'ի ծագս
48 երկրի: Զայս լուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին, և փառաւոր առնէին զբանն Տեառն. և հաւատացին՝ որք էին կարգեալ 'ի կեանսն յաւիտե-
49 նական: Եւ շրջէր բանն Աստուծոյ ընդ ամենայն գաւառն:
50 Բայց Հրէայքն գրգռեցին զպաշտօնեայ կանայս զգաստս՝ և զգլխաւորս քաղաքին, և յարուցեալ հալածանս 'ի վերայ Պողոսի և Բառնաբայ՝ հանին զնոսա 'ի սահմանացն իւրեանց:
51 Եւ նոցա թօթափեալ զփոշին յոտից 'ի վերայ նոցա, եկին գնում էին Պողոսի և Բառնաբասի եռեւից. որոնք նորանց հետ խօսելով՝ նորանց համոզում էին Աստուծոյ շնորհքի մէջ կենալ:

44 Եւ երբոր Ֆ-ա շաբաթն եկաւ, համարեա թէ բոլոր քաղաքը հաւաքուեցաւ՝ Աստուծոյ խօսքը լսելու: Երբոր
45 Հրէաներն ամբոխը տեսան՝ նախանձով լցուեցան և Պողուից ասուած խօսքերին դէմ խօսելով հակառակում և հայհոյում էին:
46 Պողոսն և Բառնաբասն էլ համարձակութեամբ ասում էին. Առաջ պէտք էր որ Աստուծոյ բանը ձեզ խօսուէր. բայց որովհետև դուք մերժում էք նորան և արժան չէք համարում ձեզ յաւիտենական կեանցը, ահա դէպի հեթանոս-
47 ներն ենք դառնում: Այնպէս Տէրն այսպէս պատուիրեց մեզ. Եմ Քեզ հեթանոսների լոյս դրի, որ դու փրկութիւն լինես
48 մինչև երկրի ծայրերը: Հեթանոսներն այս լսելով ուրախանում էին, և Տիրոջ խօսքը փառաւորում էին. և հաւատացին քանիքը որ կարգուած էին դէպի յաւիտենական կեանքը:
49 Եւ Տիրոջ խօսքը փռվում էր
50 այն բոլոր գաւառը: Բայց Հրէաները գրգռեցին աստուածապաշտ և պարկեշտ կանանցը և քաղաքի գլխաւորներին, և հալածանք վերկացնելով Պողոսի և Բառնաբասի վերայ՝ նո-

52 Իկոնիոն։ Եւ աշակերտքն
ընուին խնդութեամբ և Հոգւով
Սրբով։

ԳԼ. ԺԳ

1 Եւ եղև Իկոնիոն 'ի միասին
մտանել նոցա 'ի ժողովուրդ
Հրէիցն և խօսել նոյնպէս.
մինչև հաւատալ Հրէից և
2 Յունաց բազմաց յոյժ. Բայց
անհաւան Հրէայքն յարուցին
և չարացուցին զանձինս հեթա-
3 նոսացն 'ի վերայ եղբարց։ Բա-
զում ժամանակս շրջէին հա-
մարձակեալք Տեառն վկայու-
թեամբ, բանիւ շնորհաց իւրոց.
և տալ նշանս և արուեստս
4 լինելոց 'ի ձեռս նոցա։ Եւ
եղեն հերձուածք 'ի բազմու-
թեան քաղաքին. ոմանք էին 'ի
Հրէայսն, և ոմանք յառա-
5 քեալսն։ Իբրև եղև դիմել
հեթանոսացն և Հրէից իշխա-
նօքն իւրեանց, 'ի թշնամանել
6 և 'ի քարկոծել զնոսա, Գգ
եղեալ նոցա՝ փախեան 'ի քաղաքս
Լիկայոնացւոց 'ի Լիւստրա և
'ի Դերբէ՝ և շուրջ զգաւառաւն,
և անդ աւետարանէին։

7 Եւ այր մի Լիւստրացի տկար
յոտից նստէր՝ կաղ յորովայնէ

51 բանց դուրս արին իրանց սահ-
մաններիցը։ Եւ նորանք իրանց
ոտների փոշին թօթափեցին նո-
րանց վերայ, և եկան Իկոնիոն։
52 Եւ աշակերտները լցվում էին
ուրախութիւնով և Սուրբ Հո-
գիով։

ԳԼ. ԺԳ

1 Եւ եղաւ Իկոնիոնումն որ
նորանք միասին մտնում էին
Հրէաների ժողովարանը, և
այնպէս խօսում՝ որ Հրէից՝ և
Յոյներից մեծ բազմութիւն հա-
2 ւատացին։ Բայց չհաւատա-
ցող Հրէաները հեթանոսների
սիրտերը գրգռեցին և չարացրին
եղբայրների դէմ։ Եւ շատ ժա-
3 մանակ մնն էին գալիս հա-
մարձակ խօսելով Տիրոջ վերայ,
որ վկայում էր իր շնորհաց
խօսքին. և նշաններ և հրաշք-
4 ներ էր լինել տալիս նորանց
ձեռովը։ Եւ տարաձայնութիւն
եղաւ քաղաքի բազմութեան
մէջ. և ոմանք Հրէաների կողմն
5 էին, և ոմանք առաքեալների
կողմը։ Երբոր հեթանոսներն
և Հրէաներն իրանց իշխաններ-
ովը նորանց վերայ յարձակվե-
ցան, որ նորանց նախատ են և
6 քարկոծեն, Նորանք իմացան՝
և փախան Լիկայոնացոց Լիւս-
տրա և Դերբէ քաղաքները և
նորանց շրջակայքը, և այն տեղ
աւետարանում էին։

7 Եւ Լիւստրայումը մի մարդ՝
ոտներով տկար՝ նստած էր, որ

մոր իւրոյ, որոյ երբէք չէր
8 դնացեալ։ Այս լուաւ զխօսսն
Պօղոսի. որոյ հայեցեալ 'ի նա,
և տեսեալ թէ ունի հաւատս
9 փրկութեան, Ասէ մեծաձայն.
Դրէզ ասեմ յանուն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի՝
յոտն կաց 'ի վերայ ոտից քոց
ուղիղ. և վազվազէր՝ և գնայր։
10 Եւ ժողովրդոցն տեսեալ զոր
արարն Պօղոս, բարձին զձայնս
իւրեանց Լիկայոնարէն և ասեն,
Աստուածք նմանեալք մարդկան
11 իջին առ մեզ։ Եւ կոչէին
զԲառնաբաս Դիոս, և զՊօղոս
Հերմէս. քանզի նա էր ա-
12 ռաջնորդ բանին։ Իսկ քուրմն
Դիոսայ՝ որ կայր առաջի քաղաք-
քին, ցուլս և պսակս հասուցեալ
'ի դուռն՝ հանդերձ բազմու-
13 թեամբքն՝ կամէր զոհել։ Եւ
լուեալ առաքելոցն Բառնաբայ
և Պօղոսի, պատառեալ ըզհան-
դերձս իւրեանց՝ արտաքս վա-
զեցին յամբոխէն. աղաղակէին,
14 Եւ ասէին. Էրք՝ զի՞նչ գործէք
զայդ. մեք ձեզ նմանողք կարեօք
մարդիկ եմք. աւետարանել
ձեզ յայդպիսի ունայնութեանց
դառնալ Աստուած կենդանի.
որ արար զերկինս և զերկիր և
զծով՝ և զամենայն որ 'ի նոսա։
15 Որ յանցեալ ազգսն՝ թոյլ ետ
ամենայն հեթանոսաց գնալ 'ի
16 ճանապարհս իւրեանց։ Եւ
սակայն ոչ եթէ առանց վկայու-
թեան զինքն եթող՝ բարերարու-
թեամբն տալ յերկնից ձեզ

իր մոր փորիցը կաղ էր ծնուած,
և երբէք ման եկած չէր։ Այս 8
լսեց Պօղոսի խօսքերը. նա էլ
նորա վերայ նայեց, և երբոր
տեսաւ, որ հաւատք ունի փրը-
կուելու, Մեծ ձայնով ասաց. 9
Ոտներիդ վերայ ուղիղ կանգ-
նիր. և նա վազում էր և ման
էր գալիս։ Եւ ժողովուրդը 10
Պօղոսի արածը տեսնելով, իրանց
ձայնը բարձրացրին Լիկայոնե-
րէն՝ և ասացին. Աստուածները
մարդկանց նման եղած վայր
եկան մեզ մօտ։ Եւ Բառնա- 11
բասին Դիոս էին կոչում, և
Պօղոսին Հերմէս. որովհետև
նա էր խօսքի առաջնորդը։
Բայց Դիոսի քահանան՝ որ քա- 12
ղաքի առջև կար, արջառներ և
պսակներ բերաւ դռների մօտ և
այն բազմութեան հետ՝ կամե-
նում էր զոհ մորթել։ Եւ երբ 13
որ Բառնաբաս և Պօղոս ա-
ռաքեալները լսեցին, իրանց
հանդերձները պատռած՝ ամ-
բոխի մէջ վազեցին. մեծ ձայ-
նով կանչում էին, Եւ ասում. 14
Այրդիկ այդ ի՞նչ էք անում,
մենք էլ ձեզ նման կարօտու-
թիւն ունեցող մարդիկ ենք. որ
աւետարանում ենք ձեզ՝ այդ-
պիսի ունայն բաներից ետ դառ-
նալ դէպի կենդանի Աստուածը.
որ ստեղծեց երկինքն ու երկիրը
և ծովն՝ և ամեն ինչ որ նորանց
մէջ է։ Որ անցած դարե- 15
րումը թոյլ տուաւ ամեն հե-
թանոսներին՝ որ իրանց ճանա-

անձրևս՝ և ժամանակս պտղաբերս, լնուլ կերակրովք և ուրախութեամբ զսիրտս ձեր:
17 Եւ զայս ասացեալ՝ հաղիւ լուեցուցանէին զժողովուրդսն 'ի չզոհելոյ նոցա. այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս:

18 Եւ 'ի շրջելն նոցա և ուսուցանել՝ եկին հասին Յ.Նտիոքէ և յԻկոնիէ Հրէայք. և 'ի վիճելնոցա համարձակութեամբ՝ պատրեցին զժողովուրդսն՝ 'ի բաց կալ 'ի նոցանէ. և ասէին՝ թէ Ոչինչ ճշմարտութիւն ասեն, այլ զամենայն ստեն. և քարկոծեալ զՊողոս՝ քարշեցին արտաքս քան զքաղաքն, և համարէին
19 զնա մեռեալ: Եւ 'ի պատել զնովաւ աշակերտացն՝ յարեաւ եմուտ 'ի քաղաքն. և 'ի վաղիւ անդր ել Բառնաբաւ հանդերձ
20 'ի Դերբէ: Աւետարանեալ 'ի քաղաքին յայնմիկ՝ և աշակերտեալ զբազումս, դարձան 'ի Լիւստրա՝ և յԻկոնիոն՝ և
21 Յ.Նտիոքիա. Հաստատել զանձինս աշակերտելոցն՝ և մխիթարել կալ հաստատուն 'ի հաւատսն. և թէ բազումնեղութեամբք պարտ է մեզ մտանել յարքայութիւնն Աստուծոյ:
22 Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ՝ երիցունս. աղօթս ա-բարեալ հանդերձ պահօք, յանձն արարին զնոսա Տեառն՝
պարհներովք գնան. թէպէտև 16
ինքն իրան առանց վկայութեան չթողից, բարերարութիւն անելով երկնքիցը տուաւ ձեզ անձրևներ և պտղաբեր ժամանակներ, կերակուրներով և ուրախութիւնով ձեր սրտերը լցնելով:
Եւ այս ասելով՝ հաղիւ թէ ժո- 17
ղովուրդները դադարեցրին որ զոհ չմորթեն իրանց համար:

Եւ Յ.Նտիոքից և Իկոնիոնից 18
Հրէաներ եկան՝ ժողովուրդներին համոզեցին և Պօղոսին քարկոծ անելով՝ քաղաքիցը դուրս քաշեցին, և կարծում էին թէ մեռած է: Եւ երբոր աշա- 19
կերտները նորան շրջապատեցին, վերկացաւ մտաւ քաղաքը. և հետևեալ օրը Բառնաբասի հետ դուրս եկաւ գնաց Դերբէ.
Այն քաղաքումն էլ աւետա- 20
բանեցին, և շատերին աշակերտ շինեցին. և ապա ետ դարձան Լիւստրա՝ և Իկոնիոն՝ և Անտիոք. Աշակերտների սրտերը 21
հաստատեցին, և յորդորեցին որ հաստատ կենան հաւատքի մէջ. և թէ շատ նեղութիւններով պէտք է մեզ մտնել Աստուծոյ արքայութիւնը: Նո- 22
րանց ամեն մէկ եկեղեցիների համար երէցներ ձեռնադրեցին. աղօթք արին ծոմ պահելով, և նորանց յանձնեցին այն Տիրոջը որին հաւատացել էին: Եւ 23
Պիսիդիայի մէջ ման գալով՝ եկան Պամփիլիայ: Եւ երբոր 24
Պերգէի մէջ Տիրոջ խօսքը խո-

23 յոր հաւատացեալն էին: Եւ շրջեալ ընդ Պիսիդեայ՝ եկին 'ի
24 Պամփիլիայ: Եւ խօսեցեալ 'ի Պերգէ զբանն Տեառն, իջին
25 յԱ.տալիայ: Եւ անտի նաւարկեալ՝ գնացին յԱ.նտիոք. ուստի էին յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ 'ի գործն զոր կատա-
26 րեցին: Եկեալ և ժողովեալ զեկեղեցին՝ պատմեցին որչափ արար Աստուած ընդ նոսա. և զի երբաց հեթանոսաց դուռն
27 հաւատոց: Շրջէին ժամանակս ոչ սակաւ ընդ աշակերտսն:

ԳԼ. ԺԵ

1 Եւ ոմանք իջեալ 'ի Հրէաստանէ՝ ուսուցանէին զեղբարս. Եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն Մովսէսի՝ ոչ կարէք ապրել:
2 Եւ 'ի լինել ոչ սակաւ հակառակութեան և խնդրոյ՝ Պօղոսի և Բառնաբայ ընդ նոսա, եդին երանել Պօղոսի և Բառնաբայ և ոմանց 'ի նոցանէ՝ առ առաքեալսն և երիցունս յԵրուսաղէմ՝ վասն խնդրոյն այնորիկ:
3 Նոքա յուղարկեալք յեկեղեցւոյն, շրջեցան ընդ Փիւնիկէ և ընդ Սամարիա՝ պատմէին զդարձն հեթանոսաց, և առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարց:
4 Եւ հասեալ յԵրուսաղէմ, ընկալեալք յեկեղեցւոյն և յառաքելոցն և յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ արար ընդ
5 նոսա Աստուած: Յարեան
սեցին, իջան Յ.տալիա: Եւ 25
այն տեղից նաւով գնացին Ն.տիոք, որ այն տեղից Աստուծոյ շնորհքին յանձնուած էին՝ այն գործի համար՝ որ կատարեցին: Եւ երբոր եկան՝ ժողովե- 26
ցին եկեղեցին պատմեցին ինչ որ Աստուած արաւ իրանց հետ. և թէ նա հեթանոսների համար հաւատքի դուռը բացաւ: Եւ 27
շատ ժամանակ այն տեղ մնացին աշակերտների հետ:

ԳԼ. ԺԵ

Եւ Հրէաստանից ոմանք իջել 1
էին, եղբայրներին սովորեցնում էին որ եթէ չթլփատուիք Մովսէսի օրէնքի պէս, չէք կարող փրկուիլ: Եւ Պօղոս և Բառ- 2
նաբաս նորանց հետ բաւական հակառակութիւն և վէճ անելուց յետոյ, վճռեցին որ Պօղոս և Բառնաբաս և նորանցից մի քանին այն խնդրի համար վեր գնան Երուսաղէմ առաքեալների և երէցների մօտ: Նո- 3
րանք էլ եկեղեցուցը ճանապարհ դցուեցան, և Փիւնիկէի և Սամարիայի միջովն անցնելով պատմում էին հեթանոսների դառնալը, և մեծ ուրախութիւն էին անում բոլոր եղբայրներին:
Եւ երբոր հասան Երուսաղէմ, 4
եկեղեցուցն և առաքեալներիցն և երէցներիցն ընդունուեցան, և

ումանք 'ի հերձուածոյն փարի-
սեցւոց հաւատացեալք, և ասեն՝
թէ Պարտ է թլփատել զդոսա,
և պատուիրել պահել զօրէնսն
Մ՝ովսէսի:

6 Եւ ժողովեցան առաքեալքն
և երիցունք տեսանել վասն
7 բանիս այսորիկ: Եւ յետ բա-
զում խնդիր լինելոյ՝ յոտն
եկաց Պետրոս՝ և ասէ ցնոսա.
Մ՝ըբ եղբարք՝ դուք ինքնին
գիտէք, զի յաւուրցն առաջնոց
'ի միջի ձերում ընտրեաց Աս-
տուած բերանով իմով լսել
հեթանոսաց բանին աւետարա-
8 նի, և հաւատալ: Եւ սրտ-
տագէտն Աստուած վկայեաց
նոցա, տալով նոցա զՀոգին
9 Սուրբ որպէս և մեզ. Եւ ոչինչ
ընտրութիւն արար 'ի մէջ նոցա
և մեր, հաւատովք սրբեալ
10 զսիրտս նոցա: Արդ՝ ընդէ՞ր
փորձէք զԱստուած, դնել լուծ
'ի վերայ պարանոցի աշակեր-
տացն, զոր ո՛չ հարքն մեր և ո՛չ
11 մեք կարացաք բառնալ: Այլ
շնորհօքն Տեառն Յիսուսի
Քրիստոսի հաւատամք ապրել,
զորօրինակ և նոքա:

12 Լռեաց ամենայն ժողովուրդն,
և լսէին Բառնաբայ և Պօղոսի
պատմելոյն. որչափ արար Աս-
տուած նշանս և արուեստս 'ի
հեթանոսս 'ի ձեռն նոցա:

պատմեցին ինչ բաներ որ Աս-
տուած իրանց հետ արաւ: Փա- 5
րիսեցւոց հերձուածից մի քանի
հաւատացեալներ վերկացան և
ասում էին, թէ Պէտք է
թլփատել զորանց և պատուիրել
որ Մ՝օսէսի օրէնքը պահեն:

Եւ առաքեալներն և երէց- 6
ներն ժողովուեցան, որ տեսնեն
այս բանի համար: Եւ շատ 7
քննութիւն լինելոյց յետոյ Պե-
տրոսը վերկացաւ և նորանց ա-
սաց. Մ՝արդիկ եղբարք, դուք
գիտէք, որ առաջին օրերից ձեր
միջումն Աստուած ընտրեց որ
իմ բերանովս հեթանոսներն
աւետարանի խօսքը լսեն և հա-
ւատան: Եւ սրտագէտն Աստ- 8
ուած վկայութիւն տուաւ նո-
րանց, Սուրբ Հոգին տալով
նորանց ինչպէս և մեզ: Եւ 9
ոչինչ խտրութիւն չարաւ նո-
րանց և մեր մէջ, հաւատքով
սրբելով նորանց սրտերը: Եւ 10
հիմա ինչո՞ւ էք Աստուծոյն փոր-
ձում, որ մի լուծ դնէք աշա-
կերտների վզի վերայ, որ ոչ
մեր հարքը՝ և ոչ մենք կարո-
ղացանք տանել: Այլ Տէր Յի- 11
սուս Քրիստոսի շնորհքովը
հաւատում ենք ապրել, ինչպէս
նորանք էլ:

Եւ բոլոր բազմութիւնը լռեց, 12
և լսում էին Բառնաբասին և
Պօղոսին որ պատմում էին թէ
Աստուած որչափ նշաններ և
հրաշքներ արաւ նորանց ձեռովը
հեթանոսների մէջ:

13 Եւ յետ լռելոյն նոցա՝ պա-
տասխանի ետ Յակովբոս՝ և
ասէ. Մ՝ըբ եղբարք՝ լուարուք
14 ինձ: Շմաւոն պատմեաց որպէս
յառաջագոյն Աստուած այց
արար առնուլ ժողովուրդ 'ի
հեթանոսաց՝ անուան իւրոյ:
15 Եւ այնմ միաբանին բանք
մարգարէիցն՝ որպէս և գրեալ
16 է: Յետ այսորիկ դարձայց և
շինեցից զյարկն Դաւթի զան-
կեալն. և զկործանեալն նորա
վերստին շինեցից՝ և կանգնեցից
17 զնա. Որպէս զի խնդրեսցեն
մնացորդք մարդկան զՏէր. և
ամենայն հեթանոսք՝ յորոց վե-
րայ կոչեցեալ է անուն իմ, ասէ
18 Տէր, որ առնէ զայս ամենայն՝
Յայտնի է 'ի յաւիտեանցն
19 (Տեառն գործ իւր): Վասն
որոյ և ես իրաւունս համարիմ,
մի՛ նեղել զայնոսիկ՝ զոր 'ի
հեթանոսացն դառնան առ Աս-
20 տուած: Այլ տալ թուղթ առ
նոսա, խորշել 'ի կերակրոց
կռոց, և 'ի պոռնկութենէ և
21 'ի մեռելոտուց՝ և յարենէ: Օ՛ի
Մ՝ովսէս յազգացն առաջնոց
ըստ քաղաքաց զքարոզիչսն իւր
ունի՝ 'ի ժողովսն ըստ ամենայն
շաբաթուց ընթերցեալ:

22 Յայնժամ հաճոյ թուեցաւ
առաքելոցն և երիցանցն ամե-
նայն եկեղեցեաւն, արս ընտ-

Եւ երբոր նորանք լռեցին, 13
Յակոբոս պատասխանեց և ա-
սաց. Մ՝արդիկ եղբարք,
լսեցէք: Սիմոնը պատմեց, թէ 14
ինչպէս Աստուած առաջուց այց
արաւ, որ հեթանոսներից ժո-
ղովուրդ առնէ իր անուան հա-
մար: Եւ սորա հետ միաբան- 15
վում են մարգարէների խոս-
քերը, ինչպէս էլ գրուած է.
Այրանից յետոյ կ՝դառնամ՝ և 16
Դաւթի վայր ընկած բնակարա-
նը կ՝շինեմ, և նորա քանդուած-
ները նոր կ՝շինեմ՝ և կ՝կանգ-
նեցնեմ նորան. Որ մարդկանց 17
մնացածները Տիրոջը խնդրեն.
և այն բոլոր հեթանոսներն՝
որոնց վերայ իմ անունը կո-
չուած է, ասում է Տէրը. նա
որ այս բոլորն անում է,
Յաւիտենից հետէ յայտնի է 18
Տիրոջը իր բոլոր գործքերը:
Նորա համար ես էլ յարմար 19
եմ համարում, նեղութիւն չտալ
նորանց՝ որ հեթանոսներից ետ
են դառնում դէպի Աստուած:
Բայց որ թուղթ գրուի նորանց, 20
որ յետ քաշուին կուռքերի կե-
րակուրներից, և պոռնկութիւ-
նից. և խեղդուածից և արիւ-
նից: Վասնզի Մ՝օսէս առաջին 21
դարերից հետէ ամեն քաղաքնե-
րում իրան քարոզիչներն ունի
և ժողովարանների մէջ ամեն
շաբաթ օր կարդացվում է:

Այն ժամանակ հաճոյ երևե- 22
ցաւ առաքեալներին և երէցնե-
րին բոլոր եկեղեցու հետ, որ

բեալս 'ի նոցանէ առաքել Անտիոք ընդ Պողոսի և ընդ Բառնաբայ, զՅուդա՝ զկոչեցեալն Բարսաբայ, և զՇիղա՝ արս
23 գլխաւորս. Գրեալ առ եղբարս 'ի ձեռն նոցա զայս ինչ:

Առաքեալք և երիցունք և եղբարք, Անտիոք և 'ի Սիւրիա և 'ի Կիլիկիա եղբարցդ՝ որ 'ի հեթանոսացդ էք, ողջոյն:
24 Զանազի լուաք՝ թէ ոմանք իրրև 'ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք, խախտել զանձինս ձեր. ասեն թլփատել և պահել զօրէնսն. որոց ոչ հրամայեցաք:
25 Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս, արս ընտրեալս յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ Բառնաբայ և ընդ
26 Պողոսի, Երբ՝ որք մատնեցին զանձինս իւրեանց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Արդ՝ առաքեցաք զՅուդա և զՇիղա. և նոցա 'ի
27 բանից զնոյն պատմել: Զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն
28 Սրբոյ և մեզ, մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ. բայց միայն 'ի
29 կարևորացս յայսոցիկ. 'Ի բաց կալ, 'ի զոհելոյ կռոց՝ և յարենէ՝ և 'ի հեղձուցելոյ՝ և 'ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս բարւոք գործէք. ողջ լերուք:

իրանցից ընտրուած մարդիկ ուղարկեն Անտիոք՝ Պողոսի և Բառնաբասի հետ, Բարսաբայ
23 կոչուած Յուդային, և Շիղային՝ որ գլխաւոր մարդիկ էին եղբարց մէջ. Եւ նորանց ձեռովը գրեցին այս բանը:

Առաքեալներս և երէցներս և եղբայրներս, Անտիոքի և Սիւրիայի և Կիլիկիայի մէջ լինող եղբայրներիդ՝ որ հեթանոսներից էք, ողջոյն:
24 Որովհետև լսեցինք, թէ ոմանք մեր միջից դուրս գալով խռովեցրին ձեզ խօսքերով և ձեր անձերը խախտեցին, ասելով թէ պէտք է թլփատուիլ՝ և օրէնքը պահել. որոնց մենք չհրամայեցինք.
25 Մեզ միաբան ժողովուածներս հաճոյ երևեցաւ, որ ընտրուած մարդիկ ուղարկենք ձեզ մօտ մեր սիրելիների՝ Բառնաբասի և Պողոսի հետ:
26 Այսպէս մարդիկ, որ իրանց անձերը նուիրած են մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անուան համար:
27 Արդ Յուդային և Շիղային ուղարկեցինք. որ իրանք էլ խօսքով միևնոյն բանը պատմեն:
28 Քանզի Սուրբ Հոգին և մեզ հաճոյ երևեցաւ, աւելի ոչինչ բեռը չդնել ձեզ վերայ այս
29 հարկաւոր բաներից զատ. Որ հեռու կենաք կռի զոհուածից և արիւնից՝ և խեղդուածից՝ և պոռնկութիւնից. որ սորանցից ձեր անձերը պահելով լաւ կանէք. ողջ կացէք:

30 Եւ նոքա արձակեալք՝ իջին Անտիոք, և ժողովեալ զբազմութիւնն՝ ետուն զթուղթն:
31 Եւ ընթերցեալ՝ ուրախ եղեն 'ի
32 վերայ մխիթարութեանն: Յուդա և Շիղա՝ զի և նոքա մարգարէք էին, բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարս՝ և հաստատեցին:
33 Եւ եղեալ անդ ժամանակ՝ արձակեցան խաղաղութեամբ յեղբարց առ ա-
34 ռաքեալսն: Եւ հաճոյ թուեցաւ
35 Շիղայի մնալ անդէն: Բայց Պողոս և Բառնաբաս շրջէին Անտիոք, ուսուցանելով և աւետարանելով՝ և այլովք բազմօք զբանն Տեառն:

36 Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պողոս ցԲառնաբաս. Դարձցուք և շրջեսցուք զեղբարսդ ըստ ամենայն քաղաքաց՝ յորս քարոզեցաք զբանն Տեառն՝ թէ
37 որպէս ունիցին: Բառնաբաս կամէր առնուլ և զՅովհաննէս
38 զկոչեցեալն Մարկոս. Բայց Պողոս աղաչէր թէ զմեկնեալն 'ի նոցանէ 'ի Պամփիւլիայ, և զչեկեալն ընդ նոսա 'ի գործն,
39 մի՛ առնուլ ընդ ինքեանս: Եւ եղև գժտութիւն մինչև մեկնել նոցա 'ի միմեանց, Բառնաբայ առնուլ զՄարկոս՝ նաւել 'ի
40 Կիպրոս: Եւ Պողոսի ընտրեալ զՇիղա և՝ յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ յեղբարց

Եւ նորանք արձակուեցան՝ 30
եկան Անտիոք, և ժողովուրդը հաւաքեցին՝ և թուղթը տուին:
Եւ կարդալով ուրախացան այն 31
մխիթարութեան վերայ: Եւ 32
Յուդան և Շիղան, որովհետև նորանք էլ մարգարէք էին, շատ խօսքերով մխիթարեցին և հաստատեցին եղբայրներին: Եւ մի ժամանակ այն պէս 33
կենալուց յետոյ, եղբայրները խաղաղութիւնով արձակուեցան դէպի առաքեալները.
Եւ Շիղային հաճոյ երևեցաւ՝ 34
այն տեղ մնալ: Բայց Պողոս 35
և Բառնաբաս Անտիոքի մէջ ման էին գալիս, և Տիրոջ խօսքը շատ ուրիշ բաների հետ սովորեցնում էին և աւետարանում:

Բայց մի քանի օրերից յետոյ 36
Պողոս ասաց Բառնաբասին. Դառնանք և այցելութիւն անենք մեր եղբայրներին ամեն քաղաքներում, որոնց մէջ Տիրոջ խօսքը քարոզեցինք, պէտք է թէ ինչպէս են: Եւ Բառ- 37
նաբասը կամենում էր Մարկոս կոչուած Յովհաննէսին էլ վեր առնել: Բայց Պողոսն 38
արժան էր համարում, որ Պամփիւլիայի մէջ իրանցից ջոկուածին, և նորանց հետ գործի մէջ չ'եկածին իրանց հետ չառնեն: Եւ այսպէս գժտութիւն 39
եղաւ. մինչև որ ջոկուեցան իրարից. Բառնաբասը Մարկոսին առաւ որ նաւով գնայ

41 անտի։ Եւ շրջէր ՚ի կողմանս Լ՚ասորւոց և Կիւլիկեցւոց, և հաստատէր զեկեղեցիսն։

ԳԼ՝ ԺԱ.

1 Եկն եհաս ՚ի Դերբէ և ՚ի Լիւստրա. և ահա աշակերտ ոմն էր անդ՝ անուն Տիմոթէոս, որդի կնոջ Հրէի հաւատացելոյ՝
2 և հօր Հելլենոսի։ Որ վկայեալ էր ՚ի Լիւստրացւոց և
3 Իկոնացւոց եղբարց։ Օ՚սա կամեցաւ Պօղոս ընդ իւր տանել. և առեալ թլփատեաց զնա վասն Հրէիցն, որ էին ՚ի տեղիսն յայնոսիկ. քանզի գիտէին ամենեքին զհայր նորա՝
4 թէ Հելլենոս էր։ Իբրև անցանէին ընդ քաղաքսն՝ աւանդէին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն և յերիցանցն՝ որք յԵրուսաղէմ։
5 Եւ եկեղեցիքն հաստատէին ՚ի հաւատս, և յաւելուին ՚ի թիւն հանապազօր։

6 Եւ շրջեցան ընդ Փռիւգիա և ընդ կողմանս Գաղատացւոց, արգելեալք ՚ի Հոգւոյն Սրբոյ
7 խօսել զբանն յԱսիա։ Այլ եկեալ առ Մ՚իւսեաւ՝ թեւա-

Կիպրոս։ Եւ Պօղոսը Շ՚իղայն ընտրեց ճանապարհ ելաւ, եղբայրներիցն Լ՚ստուծոյ շնորհին յանձնուած։ Եւ Սիւրիայի և Կիլիկիայի կողմերը ման էր գալիս, և եկեղեցիները հաստատում էր։

ԳԼ՝ ԺԱ.

Եւ եկաւ հասաւ Դերբէ և Լիւստրա. և ահա մէկ աշակերտ կար այն տեղ՝ անունը Տիմոթէոս. որ մի հաւատացեալ Հրէայ կնկան՝ և Յոյն հօր որդի էր։ Որ բարի վկայութիւն ունէր Լիւստրացի և Իկոնիացի եղբայրներիցը։ Պօղոսը կամեցաւ, որ սա գնայ իր հետ. և առաւ թլփատեց նորան՝ այն տեղերումը լինող Հրէաների պատճառովը, վասն զի ամենքը գիտէին որ նորա հայրն Յոյն էր։ Եւ երբ որ անցնում էին այն քաղաքներովը, աւանդում էին նոցանց պահել այն հրամանները, որ Երուսաղէմումը լինող առաքեալներին և երէցներիցն պատուիրուած էին։ Եւ եկեղեցիները հաւատքով հաստատվում էին, և օրէ ցօր թուով աւելանում էին։

Եւ Փռիւգիան և Գաղատացոց երկիրը ման եկան, Սուրբ Հոգուցն արգելուելով որ Ասիայի մէջ Աստուծոյ խօսքը չխօսին։ Երբ որ եկան Մ՚իւսի-

կոխէին երթալ ՚ի Բիւթանիա, և ոչ համարձակեաց նոցա
8 Հոգին Յիսուսի։ Եւ անցեալ ըստ Մ՚իւսիա՝ իջին ՚ի Տրոադա։
9 Եւ տեսիլ երևեցաւ ՚ի գիշերի Պօղոսի. այր ոմն Մ՚ակեդոնացի կայր, աղաչէր զնա՝ և ասէր. Անցեալ ՚ի Մ՚ակեդոնիա
10 օգնեսցես մեզ։ Եւ իբրև զտեսիլն ետես, վաղվաղակի խնդրեցաք ելանել ՚ի Մ՚ակեդոնիա. տեղեկացեալք՝ թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանելնոցա։

11 Եւ ելեալ ՚ի Տրոադայ՝ դէպ ուղիղ գնացաք ՚ի Սամոթրակէ, և ՚ի վաղիւ անդր ՚ի Նոր քա-
12 ղաքն. Եւ անտի ՚ի Փիլիպպուս, որ է առաջին վիճակ Մ՚ակեդոնացւոց՝ քաղաք Կոլոնիա. և անդ ՚ի քաղաքն դադարեալ
13 մեր աւուրս ինչ, Յաւուրն շաբաթուս ելաք արտաքոյ քաղաքին առ գետափն՝ ուր համարէր աղօթս մատուցանել. և նստեալ խօսէաք ընդ ժողովեալ կա-
14 նայսն։ Եւ կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ՝ ՚ի թիւատիր քաղաքէ՝ երկիւղած Լ՚աստուծոյ՝ լուաւ, զորոյ Տէր իսկ եբաց զսիրտն անսալ խօսիցն
15 Պօղոսի։ Եւ իբրև մկրտեցաւ ինքն և տուն իւր, աղաչէր և ասէր. Եթէ համարիցիք զիս հաւատացեալ Տեառն, մտեալ ՚ի տուն իմ ագերուք. և բռնադատեաց տարաւ զմեզ։

այլ կողմերը, ջանք էին անում որ գնան դէպի Բիւթանիա, և Հոգին թոյլ չտուաւ նորանց։
8 Եւ Մ՚իւսիայովն անցնելով իջան
9 Տրոադա։ Եւ գիշերումը տեսիլք երևեցաւ Պօղոսին. մէկ Մ՚ակեդոնացի մարդ կանգնած էր, աղաչում էր նորան՝ և
10 ասում. Անցիր Մ՚ակեդոնիա՝ և օգնիր մեզ։ Եւ երբոր տեսաւ տեսիլքը, շուտով ուղղցինք դուրս գալ Մ՚ակեդոնիա. հասկանալով որ Տէրն է հրաւիրել մեզ, որ աւետարանենք նորանց։

Եւ Տրոադայից դուրս եկած՝
11 ուղիղ գնացինք Սամոթրակէ. և հետևեալ օրը Նէապոլիս.
12 Եւ այն տեղից Փիլիպպէ, որ Մ՚ակեդոնացոց բաժնի առաջինն է՝ Կոլոնիա քաղաքը. և մենք քաղաքումը մի քանի օր մնացինք,
13 Եւ շաբաթ օրը քաղաքիցը դուրս գնացինք դէպի գետը, ուր սովոր էին աղօթք անելու. և նստած խօսում էինք
14 ժողովուած կանանց հետ։ Եւ մի կին՝ անունը Լիդիա՝ ծիրանավաճառ, թիւատիր քաղաքիցը, աստուածավախ, լսեց. որի սիրտը Տէրը բացաւ, որ Պօղոսի խօսածներին մտիկ անէ։
15 Եւ երբոր նա և իր տունը մկրտուեցաւ, աղաչեց ասելով. Եթէ ինձ Տիրոջը հաւատացած համարէք, մտէք իմ տունը՝ մնացէք. և բռնադատեց տարաւ մեզ։

16 Եւ եղև մինչ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ ա-
զախին ոմն՝ զոր ունէր այս հարցուկ. որ շահս բազումս
տայր տէրանց իւրոց մոլելովն:
17 Այս զհետ եղեալ Պօղոսի և մեր՝ աղաղակէր և ասէր. Երբ-
այս՝ ծառայք Աստուծոյ Բարձ-
ելոյ են, որ պատմեն ձեզ
18 զճանապարհս փրկութեան: Եւ զայս առնէր 'ի բազում աւուրս:
Օգտացեալ Պօղոս՝ դարձաւ և
ասէ ցայսն. Պատուիրեմ քեզ
յանուն Յիսուսի Քրիստոսի.
Ել 'ի դմանէ. և ել 'ի նմին
19 ժամու: Իրրև տեսին տէարքն
Նորա՝ եթէ հատաւ յոյս շահի
նոցա, առեալ զՊօղոս և զՇ-
ղա՝ ձգեցին 'ի հրապարակ առ
20 իշխանսն: Եւ ածեալ զնոսա
առ զօրագլուխսն՝ ասէին. Երբ-
այս խռովեցուցանեն զքաղաքս
մեր. ինքեանք Հրէայք են,
21 Եւ պատմեն մեզ օրէնս՝ զոր չէ
արժան մեզ ընդունել, և ոչ
առնել. զի Հռոմայեցիք եմք:
22 Եւ կուտեցաւ ամբոխն 'ի վերայ
նոցա. և զօրագլուխքն պատա-
ռեցին զհանդերձս իւրեանց.
հրամայեցին գան հարկանել.
23 Եւ բազում վէրս եդեալ 'ի
վերայ նոցա՝ արկին 'ի բանտ,
պատուիրեցին բանտապետին
զգուշութեամբ պահել զնոսա:
24 Որոյ առեալ զայսպիսի պա-
տուէր՝ արկ զնոսա 'ի ներքին
բանտն. և զոտս նոցա պնդեաց
'ի կոճեղս:

Եղաւ որ մենք աղօթքի գնա-
լիս, մի աղախին պատահեց
մեզ՝ որ կախարդութեան ոգի
ունէր. որ կախարդութիւնովն
իր տէրերին շատ շահ էր
բերում: Այս Պօղոսի և մեր
եռեւից ընկած՝ աղաղակում էր
և ասում. Այս մարդիկը Բար-
ձրեալ Աստուծոյ ծառաներն են,
որ ձեզ պատմում են փրկու-
թեան ճանապարհը: Եւ շատ
օրեր այս բանն անում էր. Պօ-
ղոսն էլ զայրացած յետ դարձաւ
և ասաց այն ոգուն. Յիսուսի
Քրիստոսի անունովը պատ-
ուիրում եմ քեզ, Դուրս եկ
դուրսից. և նոյն ժամումը
դուրս եկաւ: Եւ երբոր նոցա
տէրերը տեսան, թէ իրանց
շահի յոյսը կորուեցաւ, Պօ-
ղոսին և Շիղային առին՝ քա-
շեցին հրապարակ իշխանների
մօտ: Եւ նոցանց տարան զօ-
րագլուխների մօտ և ասացին.
Այս մարդիկը խռովեցնում են
մեր քաղաքը՝ իրանք Հրէաներ
լինելով. Եւ այնպիսի սովո-
րութիւններ են քարոզում, որ
մեզ արժան չէ ընդունել, և
ոչ էլ անել, որ Հռոմայեցի
ենք: Եւ ամբոխը կիսուեցաւ
նոցանց վերայ. և զօրագլուխ-
ները նոցանց հանդերձները հա-
նեցին, և հրաման տուին որ
ծեծեն: Եւ նոցանց շատ խոցեր
տալուց յետոյ բանտը գցեցին,
բանտապետին պատուիրելով, որ
նոցանց զգուշութեամբ պահէ:

Այս էլ այն պատուէրն առած,
նոցանց ներսի բանտը գցեց. և
նոցանց ոտները պնդացրեց կոճ-
ղումը:
Եւ կէս գիշերին Պօղոս և
Շիղան աղօթք անելով օրհ-
նում էին Աստուծոյն. և բան-
տարկուածներն էլ նոցանց ա-
կանջ էին դնում: Եւ յան-
կարծակի մեծ շարժ եղաւ՝
մինչև որ բանտի հիմունքներն
էլ շարժվում էին. և իսկոյն
բոլոր դռները բացուեցան, և
ամենքի կապանքներն արձա-
կուեցան: Երբոր բանտապետն
էլ զարթնելով տեսաւ բանտի
դռները բացուած, սուրը քա-
շեց՝ և կամենում էր ինքն իրան
սպանել. վասնզի կարծում էր՝
թէ կապուածները փախել են:
Եւ Պօղոս մեծ ձայնով կանչեց
և ասաց. Ընձիդ չար բան չա-
նես, քանզի ամենքս այս տեղ
ենք: Ելրագ ուզեց և ներս
վազեց. և դողալով Պօղոսի և
Շիղայի առջև ընկաւ: Եւ
նոցանց դուրս հանեց և ասաց.
Տէրեր, ես ինչ պէտք է անեմ
որ փրկուիմ: Եւ նոցանք ա-
սացին. Հաւատա Տէր Յիսուս
Քրիստոսին և կ'փրկուիս դու՝
և քո տունը: Եւ Տիրոջ խօսքը
խօսեցին նոցան՝ և այն ամեն-
քին, որ նոցա տանն էին: Եւ
նոցանց վեր առաւ գիշերի նոյն
ժամումը և խոցերիցը լուացաւ.
և իսկոյն մկրտուեցաւ ինքը՝ և
նոցա բոլոր ընտանիքը. Եւ

25 Եւ 'ի մէջ գիշերոյն Պօղոս և
Շիղա կային յաղօթս՝ և օրհ-
նէին զԱստուած. և ունկն
26 դնէին նոցա կալանաւորքն: Եւ
եղև յանկարծակի շարժումն
մեծ մինչև շարժել հիմանց
բանտին. և բացան անդրէն
դրունքն ամենայն, և ամենե-
27 ցուն կապանք լուծան: Իրրև
զարթեաւ բանտապետն՝ և տեսս
բացեալ զդուրս բանտին, ձգեաց
զսուսեր՝ և կամէր երթալ
զիւրովին. կարծէր փախուս-
28 ցեալ զկապեալսն: Եւ կոչեաց
'ի ձայն մեծ Պօղոս՝ և ասէ. Ա՛յ
ինչ գործեր ընդ անձն քո չար,
քանզի ամենեքին աստ եմք:
29 Խնդրեաց լոյս՝ և դիմեաց 'ի
ներքս. և զահի հարեալ անկաւ
30 առաջի Պօղոսի և Շիղայ. Եւ
ածեալ զնոսա արտաքս՝ ասէ.
Տեարք՝ զի՞նչ պարտ է ինձ առ-
31 նել՝ զի ապրեցայց: Եւ նոքա
ասեն. Հաւատա 'ի Տէր Յիսուս
Քրիստոս, և ապրեսցիս դու՝ և
32 ամենայն տուն քո: Եւ խօսեցան
նմա զբանն Տեառն՝ և ամենե-
ցուն որ էին 'ի տան նորա:
33 Եւ առեալ զնոսա 'ի նմին ժամու
գիշերոյն՝ լուացա 'ի վերոց ան-
տի. և մկրտեցաւ ինքն և իւրքն
ամենեքեան անդէն վաղվաղակի:
34 Եւ ածեալ զնոսա 'ի տուն իւր,
եդ առաջի նոցա սեղան. և

ուրախ եղև ամենայն տարին
35 հաւատացեալ ՅԱստուած։ Եւ
իբրև այգ եղև՝ առաքեցին
զօրագլուխքն զնուիրակսն, և
ասեն. Արձակեա զարսդ զայ-
36 գոսիկ։ Եւ պատմեաց բանտա-
պետն զբանսն Պօղոսի, եթէ
առաքեցին զօրագլուխքն զի
արձակիցիք. արդ ելէք և երթ-
37 թայք խաղաղութեամբ։ Իսկ
Պօղոս ասէ ցնոսա. Դան հար-
եալ զմեզ հրապարակաւ՝ արս
անմեղս Հռովմայեցիս արկին ի
բանտ, և արդ լռելոցն հանեն
զմեզ. ոչ այդպէս, այլ եկեսցեն՝
ինքեանք իսկ հանցեն զմեզ։
38 Եւ պատմեցին զօրագլխացն
նուիրակքն զբանսն. զահի հա-
րան իբրև լուան՝ թէ Հռով-
մայեցիք են. և եկեալ աղաչեցին
39 զնոսա։ Եւ իբրև հանին, ա-
40 ղաչէին գնալ ի քաղաքէն։ Եւ
ելեալ ի բանտէն՝ մտին առ
Լիդիա. և տեսեալ զեղբարս՝
մխիթարեցին զնոսա, և գնացին։

ԳԼ. ԺԷ.

1 Եւ շրջեալ ընդ Ամփիպոլիս
և ընդ Ապողոնիա, եկին ի
Թէսաղոնիկէ, ուր էր ժողո-
2 վուրդ Հրէից։ Եւ ըստ սովո-
րութեանն Պօղոս եմուտ առ
նորանց տարաւ իր տունը, նո-
ցանց առջևնին սեղան դրաւ. և
ուրախ եղաւ բոլոր ընտանիքովն՝
Աստուծոյն հաւատալով։ Եւ 35
երբ որ լուսացաւ, զօրագլուխ-
ներքը նուիրակներին ուղարկե-
ցին և ասացին. Արձակիր այն
մարդկանցը։ Եւ բանտապետն 36
այս խօսքերը պատմեց Պօղոսին,
թէ Զօրագլուխներն ուղարկե-
ցին՝ որ արձակուիք. ուրեմն
հիմա դուրս եկէք, գնացէք խա-
ղաղութեամբ։ Բայց Պօղոս 37
ասաց նորանց. Բռնապարակաւ
ծեծեցին մեզ՝ անմեղներիս որ
Հռովմայեցի մարդիկ ենք, և
բանտը գցեցին. և հիմա մեզ
թաքուն են հանում. ոչ. այլ
թող իրանք գան մեզ հանեն։
Եւ նուիրակներն այն խօսքերը 38
պատմեցին զօրագլուխներին, և
նորանք վախեցան՝ երբոր լսեցին
թէ Հռովմայեցի են. և եկան
աղաչեցին նորանց։ Եւ երբոր 39
հանեցին, խնդրում էին որ քա-
ղաքիցը գնան։ Եւ բանտիցը 40
դուրս եկան՝ մտան Լիդիայի
տունը. և եղբայրներին տեսնե-
լով, նորանց մխիթարեցին և
գնացին։

ԳԼ. ԺԸ.

Եւ Ամփիպոլիսի և Ապողո- 1
նիայի միջովը ման գալով՝ եկան
Թէսաղոնիկէ, ուր էր Հրէից
ժողովարանը։ Եւ Պօղոսը էր 2
սովորութեան պէս մտաւ նո-

նոսա, և ի շաբաթս երիս խօսե-
3 ցաւ ընդ նոսա ի գրոց։ Բա-
նալր՝ և դնէր առաջի. եթէ
պարտ էր Քրիստոսի չարչարիլ
և յառնել ի մեռելոց. և թէ
նա է Քրիստոսն Յիսուս՝ զոր
4 ես պատմեմ ձեզ։ Եւ ոմանք ի
նոցանէ հաւանեցան, և վիճա-
կեցան Պօղոսի և Շիղայի.
բայց պաշտօնէիցն հեթանոսաց
էր բազմութիւն յոյժ. և ի
կանանց գլխաւորաց ոչ սակաւք։
5 Եւ նախանձեցան Հրէայքն. և
առեալ արս ոմանս գռեհիկս
անօրէնս՝ ամբոխս արարեալ խռո-
վեցին զքաղաքն. և կուտեալ առ
յապարանսն Յասոնի, խնդ-
րեցին զնոսա ածել ի հրապա-
6 րակ։ Եւ իբրև ոչ գտին զնոսա՝
քարշէին զՅասոնն և զոմանս
եղբարս առ քաղաքապետսն.
բողոք բարձեալ՝ թէ որք զաշ-
խարհս խռովեցին՝ սոքա և այսր
7 հասին. Զորս ընկալեալ է
Յասոնի. և սոքա ամենեքեան
հակառակ հրամանացն Կայսեր
գործեն. թագաւոր զոմն ասեն
զՅիսուս։ Եւ խռովեցուցին
8 զժողովուրդսն և զքաղաքա-
9 պետսն, որ լսէին զայս։ Եւ
առեալ երաշխաւորութիւն առ
ի Յասոնէայ և յայլոցն՝ արձա-
10 կեցին զնոսա։ Բայց եղբարք
վաղվաղակի գիշերայն յուղար-
կեցին զՊօղոս և զՇիղայ ի
Բերիա. որք իբրև հասին անդր՝
ի ժողովուրդն Հրէից գնացին։
11 Զի սոքա էին ազնուականա-

բանց մօտ, և երեք շաբաթ օրէր
նորանց հետ խօսեց գրքերիցը.
Բաց էր անում՝ և առջևնին 3
դնում, թէ պէտք էր՝ Քրիս-
տոսը չարչարուէր՝ և մեռելնե-
րիցը յարութիւն առնէր. և
թէ Քրիստոսը այս Յիսուսն է
որ ես պատմում եմ՝ ձեզ։ Եւ 4
նորանցից ոմանք հաւատացին,
և Պօղոսի և Շիղայի հետ
միացան. և աստուածապաշտ
Յոյներից էլ շատ բազմութիւն,
և գլխաւոր կանանցիցն էլ ոչ
սակաւ։ Բայց չհաւատացող 5
Հրէաները նախանձելով և փո-
ղոցից մի քանի անպիտան մար-
դիկ առնելով աղմուկ արին և
քաղաքի մէջ շփոթութիւն շինե-
ցին. և Յասոնի տան մօտ հաւաք-
ուած՝ ուզում էին, որ նորանց
տանեն հրապարակը։ Եւ երբ 6
որ չգտան նորանց՝ Յասոնին
և մի քանի եղբայրներին քաշե-
լով տանում էին քաղաքապետ-
ների մօտ, և սաստիկ աղաղա-
կում՝ թէ այս աշխարհքը
շփոթեցնողներն այս տեղ էլ
հասան. Որոնց Յասոնն ընդու- 7
նել է. և սորանք ամենքը
կայսեր հրամաններին հակա-
ռակ են գործում. ասելով թէ
մի ուրիշն է թագաւոր՝ Յի-
սուսը։ Եւ շփոթեցրին ժո- 8
ղովուրդին և քաղաքապետնե-
րին, որ լսում էին այս բառերը։
Եւ Յասոնից ու ուրիշներից 9
երաշխաւորութիւն առին, և
նորանց արձակեցին։ Բայց եղ- 10

գոյնք՝ քան որ ի Թէսաղոնիկն
էին. որք ընկալան զբանն ամե-
նայն յօժարութեամբ. հանա-
պազ քննէին զգիրս, եթէ իցէ
12 այս այսպէս: Եւ բազումք ի
նոցանէ հաւատացին. և ի
Յունաց կանանց զգաստից՝ և
13 յարանց ոչ սակաւք: Բայց
իբրև գիտացին՝ որ ի Թէսա-
ղոնիկէ Հրէայքն էին, եթէ և
ի Բերիայ պատմեցաւ ի Պօղոսէ
բանն Աստուծոյ, եկին և անդր՝
շարժել և խռովեցուցանել զժո-
14 ղովուրդսն: Յայնժամ վաղ-
վաղակի զՊօղոս առաքեցին եղ-
բարք գնալ մինչև ի ծովեզր. և
մնացին Շիղա և Տիմոթէոս
15 անդէն: Եւ որք տանէին զՊօ-
ղոս, ածին զնա մինչև ՅԱթէնս,
և առեալ պատուէր ի նմանէ առ
Շիղա և Տիմոթէոս, զի վաղ-
վաղակի եկեսցեն առ նա. և
գնացին:

16 Եւ ՅԱթէնս ի մնալ նոցա
Պօղոսի, զայրանայր հոգի նորա
ի նմա. զի տեսանէր ի կռա-
17 պաշտութեան զքաղաքն: Եւ
խօսէր ի ժողովրդեանն ընդ
Հրէայս և ընդ պաշտօնեայսն՝
և ի հրապարակն զամենայն օր՝
18 որոց և պատահէին: Ոմանք
Եպիկուրեանցն և Ստոյիկեանց
բայրներքը Պօղոսին և Շիղային
շուտով գիշերանց ճանապարհ
գցեցին դէպի Բերիա. որ երբ
որ այն տեղ հասան, գնացին
Հրէից ժողովարանը: Բայց 11
սորանք աւելի ազնիւ էին քան
նորանք՝ որ Թէսաղոնիկէումն
էին. որ խօսքը բոլոր յօժա-
րութեամբ ընդունեցին. ամեն
օր Գրքերը քննում էին, թէ
այս բանէրն այսպէս է: Եւ 12
նորանցից շատերը հաւատացին.
և Յոյն պարկեշտ կանանցից
և մարդկանցից էլ ոչ սակաւ:
Բայց երբոր Թէսաղոնիկէի 13
Հրէաներքը գիտացին, թէ Բե-
րիայի մէջ էլ Աստուծոյ խօսքը
պատմուեցաւ Պօղոսից, այն
տեղ էլ եկան՝ ժողովուրդները
գրգռելով: Այն ժամանակ եղ- 14
բայրները Պօղոսին շուտով ու-
ղարկեցին՝ որ մինչև ծովը գնայ.
և Շիղան և Տիմոթէոսն այն
տեղ մնացին: Եւ Պօղոսին տա- 15
նողները նորան մինչև Աթէնք
տարան. և պատուէր առնելով
Շիղայի և Տիմոթէոսի համար՝
որ շուտով գան նորա մօտ,
գնացին:
Եւ երբոր Պօղոսն Աթէն- 16
քումը նորանց սպասում էր,
նորա հոգին սաստիկ զայրանում
էր իրանում որ տեսնում էր
քաղաքը կուռքերով լիքը: Եւ 17
խօսում էր ժողովարաններումը
Հրէաների և աստուածապաշ-
ների հետ և փողոցումն ամեն օր
պատահողների հետ: Եպի- 18

փիլիսոփայից հակառակէին ընդ
նմա. և ոմանք ասէին. Օ՞ր
կամիցի սերմանաբաղս այս խօսել.
իսկ այլք, թէ օտարոտի իմն դից
թուի պատմիչ լինելոյ. քանզի
զՅիսուս և զյարութիւնն աւե-
19 տարանէր: Եւ առեալ զնա
ածին ՅԱրիսպագոսն, և ասէին.
Կարասցո՞ւք իմանալ՝ թէ զի՞նչ
է նոր վարդապետութիւնդ՝ որ
20 ի քէն պատմի: Օտարացուցիչս
իմն բերես ի լսելիս մեր. կամիմք
գիտել՝ թէ զի՞նչ կամիցի այս
21 լինել: Օ՛ի Աթենացիք ամե-
նեքին՝ և եկեալք օտարք ո՛չ յայլ
ինչ պարապէին, բայց ասել ինչ
կամ լսել նորագոյնս:

22 Եկաց Պօղոս ի մէջ Արիսպա-
գին՝ և ասէ. Ա՛րք Աթենացիք,
ըստ ամենայնի իբրև պաշտօնա-
23 սէրս տեսանեմ զձեզ: Քանզի
շրջեալ և տեսեալ զպաշտամունս
ձեր, գտի բազին մի՝ յորում
գրեալ էր ԱՆՕՆԱՆՕՅԹ
ԱՍՏՈՒՈՅՈՅ. զոր դուքն
յանծանօթս պաշտէք, ես զնոյն
24 պատմեմ ձեզ: Աստուած՝ որ
արար զաշխարհս և զամենայն՝
որ ի նմա, նա երկնից և երկրի
է Տէր. ո՛չ ի ձեռագործ տա-
25 ճարս բնակէ, Եւ ոչ ի ձեռաց
մարդկան պաշտի իբրև կարօտ
իմիք. նա տայ ամենայնի կեանս
և շունչ՝ և զամենայն ինչ:

կուրեան և Ստոյիկեան փիլի-
սոփաներից ոմանք նորա հետ
հակառակում էին. և ոմանք
ասում էին. Այս սերմանա-
քաղն ի՞նչ է ուզում ասել.
բայց ուրիշներն էլ. Երևում
է, որ օտար աստուածների քա-
րոզիչ է. որովհետև Յիսուս և
յարութիւն էր աւետարանում:
Եւ առին նորան տարան Արիս- 19
պագոսն՝ ասելով. Կարո՞ղ ենք
իմանալ, թէ ի՞նչ է քո այդ
խօսած նոր վարդապետութիւնը.
Այ ասողն մի օտար բան ես բե- 20
րում մեր ականջներին. հիմա
կամենում ենք իմանալ՝ թէ սա
ի՞նչ բան պիտի լինի: Այ ասողն 21
բոլոր Աթենացիք և այն տեղ
կենող օտարները՝ ուրիշ ոչ մի
բանի չէին պարապում, բայց
միայն նոր բան ասել կամ լսել:
Պօղոս էլ կանգնեց Արիսպա- 22
գոսի միջին և ասաց. Ով
Աթենացի մարդիկ, ես ձեզ
ըստ ամենայնի կրօնասէր եմ
տեսնում. Քանզի մանր գալիս 23
և ձեր պաշտամունքներին մտիկ
տալիս, մի սեղան էլ գտայ, որի
վերայ գրած էր, ԱՆՕՆԱ-
ՆՕՅԹ ԱՍՏՈՒՈՅՈՅՆ. այն
որ դուք առանց ճանաչելու
պաշտում էք, ես նորան եմ
պատմում ձեզ: Այն Աստու- 24
ածն, որ աշխարհքս և ամեն
բան՝ որ նորանում կայ՝ արաւ,
նա երկնքի և երկրիս Տէրը
լինելով ձեռագործ տաճարնե-
րում չէ բնակում: Եւ ոչ էլ 25

26 Աբար 'ի միոջէ արարեալ զամենայն
ազգս մարդկան՝ բնակեալ 'ի
վերայ ամենայն երեսաց երկրի.
հաստատեաց կարգեալ ժամա-
նակս և սահմանագրութիւնս
բնակութեան նոցա՝ խնդրել
27 զԱստուած. Օ՞ի թերևս զնիւ-
ցին զնա՝ և գտանիցեն. նաև ո՛չ
հեռի իսկ է յիւրաքանչիւր ու-
28 մեքէ 'ի մէնջ: Օ՞ի նովաւ
կեամք և շարժիմք և եմք. որ-
պէս և ոմանք 'ի ձերոց ճարտա-
րաց ասացին, թէ նորա և ազգ
29 իսկ եմք: Եւ արդ՝ որովհետև
ազգ եմք Աստուծոյ, ո՛չ պար-
տիմք համարել ոսկւոյ կամ ար-
ծաթոյ կամ քարի, որ 'ի ճար-
տարութենէ և 'ի մտաց մարդոյ
քանդակեալ իցէ, զաստուածա-
30 կանն լինել նմանող: Բայց
զժամանակս անգիտութեանն ան-
տես արարեալ Աստուծոյ, արդ
զայս պատուիրէ մարդկան՝ ամե-
31 նայն ուստեք ապաշխարել: Զան-
զի հաստատեաց օր՝ յորում
պարտ է դատել զաշխարհս
արդարութեամբ, 'ի ձեռն առն՝
որով սահմանեաց տալ հաւատս
ամենեցուն՝ յարուցեալ զնա 'ի
մեռելոց:

32 Իբրև լուան յարութիւն
մեռելոց, ոմանք ծաղր առնէին.
կէսքն ասէին՝ Լուիցուք 'ի քէն
33 վասն այդորիկ միւսանգամ: Եւ
մարդկանց ձեռքով է պաշտ-
ւում՝ նէ՛ր ԷՒ մի բանի կարօտ.
նա է ամենի կեանք և շունչ՝ և
26 ամեն բան տուողը: Եւ նա մէկ
արիւնից մարդկանց բոլոր ազ-
գերն արաւ, որ երկրի բոլոր
երեսի վերայ բնակեն. որոշուած
ժամանակներ և նորանց բնա-
կութեան սահմանները հաստա-
տեց որ Աստուծոյն խնդրեն.
27 Որ լինի թէ զնեն նորան և
գտնեն. թէ և ինքն հեռու չէ
28 մեր ամեն մէկիցը: Վասնզի
մենք նորանով ենք ապրում և
շարժվում և կանք. ինչպէս ձեր
բանաստեղծներից ոմանք էլ ա-
սացին. Ինչ նորա ազգիցն էլ
29 ենք: Արդ որովհետև Աստու-
ծոյ ազգից ենք, պէտք չէ
համարենք, թէ Աստուածու-
թիւնը նման լինի ոսկու կամ
արծաթի կամ քարի՝ մարդու
վարպետութեամբ և մտքով
30 քանդակուած: Բայց Աստուած
տգիտութեան ժամանակներն
անտես անելով, հիմա մարդկանց
պատուիրում է, ամենին ամեն
31 տեղ ապաշխարել: Վասնզի մէկ
օր հաստատեց որ նորանում
աշխարհքս արդարութեամբ պի-
տի դատէ այն մարդու ձեռովն,
որ սահմանեց նորանով ամեն-
քին հաւատք տալ որին մեռելնե-
ներից յարոյց:
32 Երբոր լսեցին մեռելների յա-
րութիւնը, ոմանք ծաղր էին
անում. ոմանք էլ ասում՝ Այդ
բանի համար քեզանից դարձեալ
ապա Պօղոս էլ գնաց 'ի միջոյ
34 նոցա: Եւ ոմանք արք անկեալք
'ի նա, հաւատացին. ընդ որս
էր և Դիոնէսիոս Արիսպագացի,
և կին մի անուն Դամարիս՝ և
այլք ընդ նոսա:

ԳԼ. ԺԸ.

1 Յետ այսորիկ մեկնեալ Պօղոսի
ՅԱթենացւոց անտի՝ եկն 'ի
2 Կորնթոս. Եւ եգիտ Հրէայ
զոմն անուն Ակիւղաս՝ յաղգէ
Պոնտացի, այն ինչ եկեալ Յի-
տալիայ. և զՊրիսկիլա կին
նորա, վասն հրամանին Կղ-
ղեայ՝ որոշել զամենայն Հրէայս
'ի Հռովմայ. և յարեցաւ 'ի
3 նոսա: Եւ վասն զի համարուեստ
էր, եղև առ նոսա և գործէր.
քանզի էին խորանակարք ար-
4 ուեստիւ: Եւ խօսէր 'ի ժողովը-
դեանն ըստ ամենայն շաբա-
թուց, և հաւանեցուցանէր
5 զՀրէայս և զՀելլենոսս: Իբրև
իջին 'ի Մակեդոնիայ Հիղա
և Տիմոթէոս, ստիպէր Հոգւովն
Պօղոս դնել վկայութիւն Հրէ-
ից՝ թէ Յիսուս է Քրիստոսն:
6 Եւ յընդդէմ դառնալ նոցա և
'ի հայհոյել, թօթափեաց զձոր-
ձս՝ և ասէ ցնոսա. Արիւն ձեր
'ի գլուխս ձեր, քաւեալ եմ ես.
յայսմ հետէ 'ի Հելլենոսս
7 երթամ: Եւ գնացեալ անտի՝
եմուտ 'ի տուն ուրումն, որում

կ'լինէր: Եւ այսպէս Պօղոս 33
նորանց միջից դուրս եկաւ:
Բայց մի քանի մարդիկ նորա 34
կողմն անցնելով հաւատացին.
որոց հետ էր Դիոնէսիոս Արիս-
պագացին, և մի կին՝ անունը
Դամարիս, և ուրիշներ էլ
նրանց հետ:

ԳԼ. ԺԹ.

Սորանից յետոյ Պօղոս Աթե- 1
նացիներից բաժանուեց եկաւ
Կորնթոս: Եւ մի Հրէայ գտաւ՝ 2
անունը Ակիւղաս, ազգով Պոն-
տացի, և նորա Պրիսկիլա կինն
էլ, Իտալիայից նոր եկած, Կղ-
ղիայի հրամանի համեմատ՝ որ
բոլոր Հրէաները Հռոմից հե-
ռանան. և նորանց մօտ գնաց:
Եւ որովհետև արհեստակից էր, 3
մնաց նորանց մօտ և բան էր
անում. վասնզի արհեստով խո-
րանակար էին: Եւ խօսում էր 4
ժողովարանումն ամեն շաբաթ
օր և Հրէաներին և Յոյներին
համոզում էր: Եւ երբոր Հի- 5
դան և Տիմոթէոսն իջան Մա-
կեդոնիայից, Պօղոսը հոգովը
վառվում էր վկայելով Հրէ-
աներին թէ Յիսուսն է Քրիս-
տոսը: Եւ երբ որ նորանք 6
հակառակում էին և հայհո-
յում, հանդերձները թօթափեց
և ասաց նորանց. Ձեր արիւնը
ձեր գլուխը, ես անպարտ եմ,
այսուհետև հեթանոսներին եմ
գնում: Եւ այն տեղից գնաց 7

անուն էր Տիտոս Յուստոս՝
պաշտոնեայ Աստուծոյ. որոյ
ապարանքն էին մերձ ի ժողո-
8 վատեղին։ Կրիսպոս ժողովրդա-
պետ հաւատաց ի Տէր ամենայն
տամբ իւրով. և բազմաց ի
Կորնթացւոցն լուեալ՝ հաւա-
9 տացին և մկրտեցան։ Եւ ասէ
Տէր ի գիշերին տեսլեամբ
զՊօղոս. Մի երկնչիր՝ այլ
10 խօսեա՛ և մի՛ լռեր. զի Անդր ես
ընդ քեզ եմ, և ոչ՝ ոք ընդդէմ
դարձցի քո՝ ի չարչարել զքեզ.
քանզի ժողովուրդ է իմ բազում
11 ի քաղաքիս յայսմիկ։ Եւ
նստաւ անդ տարի մի և ամիս
վեց՝ ուսուցանել նոցա զբանն
Աստուծոյ։

12 Եւ Գաղղիոնէաւ փոխանակաւ
բղեշխին Աքայեցւոց, յարեան
միաբան Հրէայքն ի վերայ
Պօղոսի, և ածին զնա յատեան.
13 Եւ ասէին, եթէ Արտաքոյ
օրինաց պատրէ սա զմարդիկ՝
14 պաշտել զԱստուած։ Եւ իբրև
մերձ էր Պօղոս բանալ զբերան
իւր, ասէ Գաղղիոն ցՀրէայսն.
Եթէ էր ինչ անիրաւութիւն
կամ խարդախութիւն չարեաց՝
ո՛ր Հրէայք, ի դէպ էր ինձ
15 անսալ ձեզ։ Այլ եթէ խընդ-
դիրք. ինչ են վասն բանի և
անուանց և օրինաց ձերոց՝
տեսէք ձեզէն. քանզի դատաւոր
այդպիսի իրաց չկամիմ լինել։
16 Եւ մերժեաց զնոսա յատենէ
17 անտի։ Եւ առեալ ամենեցուն
մտաւ մէկի տունն՝ որի անունը
Յուստոս էր, մի աստուածա-
պաշտ մարդ, որ նորա տունը
8 ժողովարանի կից էր։ Կրիսպոս
ժողովրդապետը հաւատաց Տի-
րոջն իր բոլոր տունովը. և
Կորնթացիներից շատերը, երբ
որ լսեցին՝ հաւատացին և
9 մկրտուեցան։ Եւ Տէրն ասաց
գիշերուամբ տեսիլքով Պօղոսին.
Մի վախենար՝ այլ խօսիր՝ և
10 լուռ մի կենար։ Վասնզի ես
քեզ հետ եմ. և ոչ ոք քեզ
դէմ չի կենայ՝ քեզ վնասելու.
քանզի ես շատ ժողովուրդ ու-
11 նիմ՝ այս քաղաքումը։ Եւ այն-
պէս մէկ տարի և վեց ամիս
նստեց՝ և նորանց սովորեցնում՝
էր Աստուծոյ խօսքը։
12 Եւ երբոր Գաղղիոնը բղեշխի
փոխանորդ էր Աքայիայում,
Հրէաները միաբան վեր կացան
Պօղոսի վերայ, և նորան տարան
13 ատեանը. Ասելով, թէ Սա
օրինաց հակառակ հրապուրում՝
է մարդկանց Աստուած պաշ-
14 տել։ Եւ երբոր Պօղոսն իր
բերանը ուզում էր բանալ Գաղ-
ղիոն Հրէաներին ասաց. Ով
Հրէաներ, եթէ մի անիրաւու-
թիւն կամ մի չար նենգութիւն
լինէր, ինձ արժան էր որ լսէի։
15 Բայց եթէ խնդիրը խօսքի և
անունների և ձեր օրէնքի հա-
մար է, դուք ինքներդ տեսէք.
16 վասնզի այդ պիսի բաների դա-
տաւոր չեմ ուզում լինել։ Եւ
նորանց հանեց դատաստանիցը։

Յունացն զՍոսթենէս ժողովր-
դապետն՝ Հարկանէին առաջի
ատենին. և ոչինչ զայնմանէ
Գաղղիոնի փոյթ լինէր։

18 Բայց Պօղոսի տակաւին մնա-
ցեալ աւուրս բազումս, յեղբարց
հրաժարեալ՝ նաւէր ելանէր.
և ընդ նմա Պրիսկիղա և Ակիւ-
ղաս, փոքրել զգլուխս ի Կեն-
քրեա. քանզի ուխտադիր էր։
19 Եւ հասեալ ՅԵփեսոս՝ զնոսա
եթող անդ, և ինքն մտեալ ի
ժողովուրդն խօսէր ընդ Հրէ-
20 այսն։ Եւ աղաչեցին զնա բա-
զում ժամանակս լինել անդ. և
21 ոչ առ յանձն. Այլ հրաժա-
րեաց ի նոցանէ, և ասէ.
Դարձեալ շրջեցայց առ ձեզ
Աստուծոյ կամքն. ամբարձաւ
22 ՅԵփեսեայ, Եւ իջեալ ի
Կեսարիա՝ ել և ետ ողջոյն
23 եկեղեցւոյն. էջ ՅԱնտիոք։ Եւ
եղեալ անդ ժամանակ ինչ, ել
շրջել կարգաւ ընդ Գաղատա-
ցւոց աշխարհն և ընդ Փռիւ-
գիա, հաստատել զամենայն ա-
շակերտեալսն։

24 Հրէայ ոմն Ապղէս անուն՝
Աղէքսանդրացի յազգէ, այր
ճարտարաբան, եկն ի Եփես
25 փեսոս. զօրաւոր էր գրովք։ Սա

Յունացն զՍոսթենէս ժողովր-
դապետն՝ Հարկանէին առաջի
ատենին. և ոչինչ զայնմանէ
Գաղղիոնի փոյթ լինէր։

18 Բայց Պօղոսը տակաւին շատ
օրեր մնալուց յետոյ, եղբայրնե-
րից հրաժարուելով, նաւով
գնում էր դէպի Սորիք. և
Պրիսկիլլան և Ակիւղան նորա
հետ, Կենքրայումը գլուխը
խուզեց. վասնզի ուխտ ունէր։
19 Եւ երբոր հասաւ Եփեսոս,
նորանց այնտեղ թողեց, և ինքը
ժողովարանը մտնելով Հրէ-
աների հետ խօսում էր։ Եւ
20 երբոր հասաւ Եփեսոս, նորանք
աղաչում էին նորան՝ որ շատ
ժամանակ այնտեղ մնայ, յանձը
21 չառաւ։ Բայց նորանցից հրա-
ժարուեց և ասաց. Ընպատճառ
պէտք է ես առաջիկայ տօնը
Երուսաղէմումն անեմ. Աստու-
ծոյ կամքովը դարձեալ ձեզ
մօտ կ՚դառնամ. և Եփեսոսիցը
22 վերկացաւ։ Եւ իջաւ Կեսարիա,
վեր ելաւ, և բարև տուաւ
եկեղեցոյն, և վայր եկաւ Ան-
տիոք։ Եւ այնպէս մի առ ժա-
23 մանակ մնալուց յետոյ, դուրս
եկաւ՝ որ կարգով ման գայ
Գաղատացոց աշխարհքումն և
Փռիւգիայումը, բոլոր աշա-
կերտները հաստատելով։
24 Եւ մի Հրէայ՝ անունը Ապո-
ղոս, ազգով Աղէքսանդրացի,
ճարտարախօս մարդ՝ եկաւ հա-
սաւ Եփեսոս, որ զօրաւոր էր

էր տեղեկացեալ ճանապարհին
Տեառն, և եռայր Հոգւով.
խօսէր՝ և ուսուցանէր ճշմար-
տութեամբ վասն Յիսուսի.
գիտէր միայն զմկրտութիւնն
26 Յովհաննու։ Սա սկսաւ հա-
մարձակել ի ժողովարանսն. և
լուեալ ի նմանէ Ակիւղայ և
Պրիսկիլլայ, առին զնա առ
իւրեանս, և ճշմարտագոյնս
պատմեցին նմա զճանապարհն
27 Աստուծոյ։ Իբրև կամեցաւ նա
գնալ յԱքայիա, յօժարեալ
եղբարքն՝ գրեցին առ աշակերտսն
ընդունել զնա. որ իբրև եհաս
անդր՝ բազում նպաստ լինէր
հաւատացելոցն ի ձեռն շնոր-
28 հացն։ Քանզի պնդագոյն
զՀրէայսն յանդիմանէր հրա-
պարակաւ. ցուցանել գրովք՝
եթէ Քրիստոսն է Յիսուս։

ԳԼ. ԺԹ.

1 Եւ եղև մինչդեռ Ապողոն ի
Կորնթոս էր, Պօղոսի շրջեալ
զվերին կողմանսն՝ և իջեալ
յԵփեսոս, և գտեալ զոմանս
2 զաշակերտս, Ասէ ցնոսա. եթէ
Հոգի Սուրբ ընկալարո՞ւք ի
հաւատալն. Նոքա ասեն ցնա.
Այլ և ո՛չ թէ Հոգի Սուրբ
3 գոյցէ՝ լուեալ է մեր։ Եւ ասէ.
իսկ յի՞նչ մկրտեցարուք. Նոքա
ասեն. ի Յովհաննու մկրտու-
4 թիւն։ Եւ ասէ Պօղոս. Յովհ-
Գրքերովը։ Սա Տիրոջ ճա- 25
նապարհին տեղեկացած էր, և
հոգով վառուած՝ Տիրոջ համար
խօսում էր՝ և ստոյգ սովորեց-
նում էր. բայց միայն Յովհան-
նէսի մկրտութիւնն էր գիտում։
Սա սկսեց ժողովարանում հա- 26
մարձակ խօսել. և երբոր Ակիւ-
ղան և Պրիսկիլլան նորանից
լսեցին, նորան իրանց մօտ առին,
և էլ աւելի ստոյգ Աստուծոյ
ճանապարհն բացատրեցին նո-
րան։ Եւ երբոր նա կամեցաւ 27
գնալ Աքայիա, եղբայրները քա-
ջալերելով գրեցին աշակերտներ-
ին, որ նորան ընդունին. երբ
որ նա այնտեղ հասաւ, հաւա-
տացեալներին շատ օգնութիւն
էր տալիս շնորհքի ձեռքին։
Ինքն խիստ սաստիկ յան- 28
դիմանում էր Հրէաներին հրա-
պարակաւ գրքերից ցոյց տա-
լով, թէ Քրիստոսը Յիսուսն է։

ԳԼ. ԺԹ.

Եւ եղաւ որ Ապողոսը Կորն- 1
թոսումն եղած ժամանակ, Պօ-
ղոսը որ վերի կողմերումն մտն
էր եկել՝ եկաւ Եփեսոս. և մի
քանի աշակերտներ գտնելով՝
ասաց նորանց. Արդեօք Սուրբ 2
Հոգին ընդունեցիք՝ երբոր հա-
ւատացիք. նորանք ասացին նո-
րան. Ինքնք չենք էլ լսել, թէ
Սուրբը Հոգի կայ։ Եւ ասաց 3
նորանց. Ապա ինչո՞վ մկրտուե-
ցաք. նորանք էլ ասացին. Յո-

հաննէս մկրտեաց մկրտութիւն
ապաշխարութեան ամենայն ժո-
ղովրդեանն. և ասէր, զի որ
գալոցն է յետ նորա՝ ի նա
հաւատասցեն. այսինքն է՝ ի
5 Յիսուս Քրիստոս։ Եւ իբրև
լուան, մկրտեցան յանուն Տեառն
6 Յիսուսի։ Եւ ի դնել ի վերայ
նոցա Պողոսի զձեռն, եկն Հոգին
Սուրբ ի վերայ նոցա. խօսէին
7 լեզուս և մարգարէանային։ Եւ
էին ամենեքեան արք իբրև երկո-
8 տասան։ Եւ մտեալ ի ժողո-
վուրդն՝ համարձակէր ամիս
երիս. խօսէր՝ և հաւանեցու-
ցանէր վասն արքայութեանն
9 Աստուծոյ։ Իբրև ոմանք խստա-
նային՝ և ընդդէմ դառնային
բամբասել զճանապարհն առաջի
բազմութեանն, մեկնեալ ի նո-
ցանէ՝ որոշեաց զաշակերտսն.
հանապազօր խօսէր ի դիւանին
10 Տիւրանեայ ուրումն։ Եւ այս
եղև զերկուսամ ի, մինչև ամե-
նայն ընակչացն Ասիացւոց լսել
զբանն Տեառն՝ Հրէից և Հե-
11 թանոսաց։ Եւ զօրութիւնս ոչ
սակաւս առնէր Աստուած ի
12 ձեռն Պողոսի. Մինչ զի և ի
հիւանդս տանել ի քրտանէ նո-
րա թաշկինակս կամ վարշա-
մակս, և մերժել ի նոցանէ ախ-
տիցն, և այսոց չարաց ելանել։
13 Յանդգնեցան ոմանք և ի շրջող
Հրէից՝ որ երդմնեցուցիչքն
էին, անուանեալ ի վերայ
այնոցիկ՝ որ ունէին այսս չարս,
զանուն Տեառն Յիսուսի, և
հաննէսի մկրտութիւնովը։ Եւ 4
Պողոսը ասաց. Յոհաննէսը
ժողովրդին ապաշխարութեան
մկրտութիւնովն էր մկրտում և
ասում, թէ Նա՝ որ նորա
ետևից պիտի գայ, նորան հա-
ւատան. այսինքն է՝ Քրիստոս
Յիսուսին։ Եւ երբոր լսեցին, 5
էր Յիսուսի անունովը մկրտ-
ուեցան։ Եւ երբոր Պողոսը 6
ձեռքը դրաւ նորանց վերայ,
Սուրբը Հոգին եկաւ նորանց
վերայ. և լեզուներ էին խօ-
սում և մարգարէանում։ Եւ 7
ամենքը տասներկու մարդու չափ
էին։ Եւ ժողովարանի մէջ 8
մտած երեք ամիս համարձակ
խօսում էր. և Աստուծոյ ար-
քայութեան մասին համոզում
էր։ Եւ երբոր մի քանիսը յա- 9
մառում էին և ընդդիմանում այն
ճանապարհը բամբասելով բազ-
մութեան առջև, նա բաժանուե-
ցաւ նորանցից՝ և աշակերտնե-
րին ջոկեց. և ամեն օր խօսում
էր մի Տիւրանի ժողովարա-
նումը։ Եւ այս եղաւ մի երկու 10
տարի, մինչև որ Ասիայի բոլոր
ընակիչները՝ Հրէաները և Յոյ-
ները Տիրոջ խօսքը լսեցին։ Եւ 11
Աստուած ոչ սակաւ զօրու-
թիւններ էր անում Պողոսի
ձեռքովը։ Մինչև որ նորա 12
մարմնի վերայից թաշկինակներ
և վարշամակներ տանում էին
դնում հիւանդների վերայ և
ցաւերը հեռանում էին նորան-
ցից, և չար ոգիները դուրս

ասէին. Երդմնեցուցանեմ զձեզ
'ի Յիսուս՝ զոր Պօղոսն քարոզէ:
14 Էին ուրումն Սկևեայ Հրէի
քահանայապետի եօթն որդի,
15 որ զայս առնէին: Պատասխանի
ետ այսն չար՝ և ասէ ցնոսա.
զՅիսուս գիտեմ և զՊօղոս ճա-
16 նաչեմ, բայց դուք ո՞վ էք: Եւ
վազեաց այրն՝ յորում էր այսն
չար՝ ըմբռնեալ զերկոսեան յաղ-
թահարեաց զնոսա, մինչև մերկս
և վիրաւորս փախչել 'ի տանէ
17 անտի: Եւ այս յայտնի եղև
ամենայն Հրէից և Հեթանո-
սաց՝ որ բնակեալ էին ՅԵփեսոս.
և անկաւ երկիւղ յամենեսեան 'ի
նոսա. և մեծանայր անուն
18 Տեառն Յիսուսի: Եւ բազումք
'ի հաւատացելոցն գային, և
խոստովան լինէին՝ և պատմէին
19 զգործս իւրեանց: Եւ բազումք
'ի կախարդասիրացն բերէին
զգիրսն, այրէին առաջի ամենե-
ցուն. և համարեցան զգինս
նոցա՝ և գտանէին արծաթոյ
20 բիւրս հինգ: Եւ այսպէս բանն
Աստուծոյ աճէր՝ և զօրանայր:

21 Եւ իբրև կատարեցաւ այս,
եդ Պօղոս 'ի մտի շրջել ընդ
Մակեդոնիայի և ընդ Աքայիայ՝
էին գալիս: Եւ թափառական 13
Հրէաներից ոմանք, որ երդմնե-
ցուցիչ էին, համարձակեցին
Տէր Յիսուսի անունը կանչել
չար ոգիներ ունեցողների վե-
րայ ասելով. Երդում ենք տա-
լիս ձեզ այն Յիսուսովն՝ որ
Պօղոսը քարոզում է: Սկևի 14
Հրէայ քահանայապետի եօթն
որդիքն էին, որ այս անում
էին: Չար ոգին պատասխանեց 15
և ասաց. Յիսուսին գիտում եմ,
և Պօղոսին ճանաչում եմ, բայց
դուք ով էք: Եւ այն մարդն՝ 16
որ նորանում չար ոգի կար՝
յարձակելով նորանց վերայ
բռնեց, նորանց յաղթահարեց,
մինչև որ մերկ և խոցուած այն
տանից փախան: Եւ այս յայտ- 17
նի եղաւ բոլոր Հրէաներին և
Յոյներին, որ Եփեսոսումն բնա-
կած էին. և ահ ընկաւ նորանց
ամենի վերայ. և Տէր Յիսուսի
անունը մեծանում էր: Եւ 18
հաւատացեալներից շատերը գա-
լիս էին՝ խոստովանում էին, և
իրանց գործքերը պատմում էին:
Եւ կախարդութեան հետևող- 19
ներից շատերը էրանց գրքերը
բերում էին, և ամենի առջև
այրում էին. և նորանց գինը
համարեցին՝ և գտան յիսուն
հազար արծաթի: Եւ այսպէս 20
Տիրոջ խօսքը աճում էր և
զօրանում:
Եւ երբոր այս կատարուե- 21
ցաւ, Պօղոսը միտքը դրաւ՝ որ
Մակեդոնիայի և Աքայիայի

և գալ Երուսաղէմ. ասէ, եթէ
Յետ երթալոյն իմ անդր, պարտ
է ինձ և զՀռովմ տեսանել:
22 Առաքեաց 'ի Մակեդոնիա
երկուս 'ի պաշտօնէիցն իւրոց,
զՏիմոթէոս և զԵրաստոս, և
ինքն մնաց ժամանակ ինչ Ասիա:
23 Եւ եղև 'ի ժամանակին յայնմիկ
խռովութիւն ոչ սակաւ վասն
24 ճանապարհին: Իսկ Դեմետրիոս
ոմն անուն՝ արծաթագործ, գոր-
ծէր մեհեանս արծաթիս Արտեմի
դից. և տայր ճարտարացն լինել
25 ոչ սակաւ շահ. Որ ժողովեաց
իսկ զձեռագէտս արուեստին, և
ասէ. Արք՝ դուք ձեզէն իսկ
գիտէք, զի յայսմ գործոյ է շահ
26 մեզ: Եւ տեսանէք և լսէք՝ եթէ
ոչ միայն զԵփեսացւոց, այլ
գրեթէ զամենայն իսկ Ասիացւոց՝
Պօղոսս այս հաւանեցուցեալ
շրջեաց բազում ժողովս՝ ասել
թէ Ո՛չ են աստուածք՝ ձեռա-
27 գործ: Եւ ոչ միայն այս ճգնէ
զմեր կողմնս գալ 'ի յանդիմա-
նութիւն, այլ և զմեծին աս-
տուծոյ Արտեմայ զմեհեանն
յոչինչ համարել. նաև քակելոց
կայ իցէ մեծութիւն նորա, զոր
ամենայն Ասիա՝ և տիեզերք
28 պաշտեն: Եւ զայս իբրև լուան,
լի եղեն բարկութեամբ. ա-
ղաղակէին և ասէին. Մեծ է
29 Արտեմիս Եփեսացւոց: Եւ
լցաւ քաղաքն խռովութեամբ.
դիմեցին առ հասարակ 'ի թատ-
տրոնն. յափշտակէին զԻսայիոս
և զԱրիստարքոս Մակեդոնացի՝
միջոցն անցնելով գնայ Երու-
սաղէմ՝ ասելով թէ Իմ այն-
տեղ գնալուց յետոյ, պէտք է
ինձ Հռովմ էլ տեսանեմ: Եւ իրան 22
պաշտօնեաներից երկուսին Տի-
մոթէոսին և Երաստոսին ու-
ղարկեց Մակեդոնիա, և ինքը
մի առ ժամանակ մնաց Ասիա-
յում: Եւ այն ժամանակ ոչ 23
սակաւ խռովութիւն եղաւ այն
ճանապարհի համար: Այն 24
դի մի արծաթագործ՝ անունը
Դեմետրիոս, Արտեմիս կուռքի
արծաթէ տաճարներ շինելով ոչ
սակաւ շահ էր տալիս վար-
պետներին. Որոնց հետ և այս 25
արհեստի բանուորներին ժողո-
վեց և ասաց Ո՛վ մարդիկ,
դուք ինքներդ գիտէք, որ այս
գործիցն է մեր շահը: Եւ 26
տեսնում էք ու լսում էք՝ որ
այս Պօղոսը չէ թէ միայն
Եփեսացիներից, բայց համարեա
թէ բոլոր Ասիացիներից շատ
ժողովուրդ համոզելով այն կող-
մը դարձրեց. որ ասում է թէ
Ձեռքով շինուածները աստու-
ածներ չեն: Եւ այս բանը ոչ 27
թէ միայն մեր մասն է վտանգի
մէջ գցում որ անարգուի, բայց
մեծ աստուածուհու Արտեմայի
տաճարն էլ ոչինչի տեղ է հա-
մարվում. և նորա մեծութիւնն
էլ կ'քանդուի, որին բոլոր Ա-
սիան՝ և աշխարհքը պաշ-
տում է: Եւ այս լսելով բար- 28
կութեամբ լցուեցան աղաղա-
կում էին և ասում. Մեծ է

զուղկկիցն Պօղոսի. Բայց Պօ-
ղոս իբրև կամեցաւ մտանել
յամբոխն, ոչ թողին զնա ա-
30 շակերտքն: Իսկանք և յԱսիա-
պետացն՝ որ էին նորա բարե-
կամք, յղէին առ նա՝ և աղա-
չէին, մի տալ զանձն ի թէատ-
31 րոն: Այլք այլ ինն աղաղա-
կէին. զի էր ժողովն նոցա խառ-
նեալ. և բազումք ի նոցանէ՝ ոչ
գիտէին, թէ վասն ո՞յր ժողո-
32 վեալ իցեն: Եւ յամբոխին
բազմութենէ յառաջ կարան
զԱղէքսանդրոս. և իբրև ածին
զնա Հրէայքն յառաջ, Աղէք-
սանդրոս շարժեաց զձեռն՝ և
կամէր պատասխանի առնել
34 ամբոխին: Իբրև գիտացին՝ եթէ
այրն Հրէայ է, միաբարբառ
եղեալ յամենեցունց՝ իբրև ժամս
երկուս աղաղակել, եթէ Մեծ է
35 Արտեմիս Եփեսացւոց: Լուս-
ցոյց գրագիսն զամբոխն՝ և
ասէ. Արք Եփեսացիք՝ իսկ ո՞է
ի մարդկանէ՝ որ ոչ գիտէ
զԵփեսացւոց քաղաքս մեհենա-
զարդ՝ մեծին Արտեմայ դիցն,
36 և Դիոսկտեայ: Եւ զի այդ
այդպէս է անչուշտ՝ ձեզ պարտ
է հանդարտել, և մի ինչ
37 յանդգնութեամբ գործել: Արդ-
քան զարդ զայդոսիկ այսր, ոչ
մեհենակապուստս՝ և ոչ հայ-
38 հոյիչս աստուծոյ մերոյ: Զի
եթէ Դեմետրիոս և որք ընդ
նմա ճարտարք՝ ունիցին ինչ ընդ
ումեք բանս, յատեան երթիս-
ցին, և դատաւորք գոն, և
Եփեսացոց Արտեմիսք: Եւ բո-
29 լոր քաղաքքն շփոթութեամբ
լցուեցաւ. ամենքն էլ միասին
վազեցին թատրոնը քաշելով
Գայիոսին և Արիստարքոս Մա-
կեդոնացոյն՝ Պօղոսի ճանապարհ-
30 ակիցներին: Բայց Պօղոսը երբ
որ կամեցաւ ամբոխի մէջ մտա-
նել, աշակերտները չթողին
31 նորան: Ասիայի գլխաւորներից
ոմանք էլ, որ նորա բարե-
կամներն էին, ուղարկեցին նորա
մօտ՝ և աղաչում էին, որ
32 թատրոնի մէջ չգնայ: Եւ ամեն
մէկը մի ուրիշ բան էր աղա-
ղակում. քանզի ժողովը խառ-
նուած էր. և նորանցից շատերը
33 չէին գիտում, թէ ինչո՞ւ համար
են հաւաքուած: Եւ այն բաղ-
մութեան միջից Աղէքսանդրոսին
առաջ բերին. և երբոր
Հրէայք նորան առաջ քաշե-
ցին, Աղէքսանդրոսը ձեռն շար-
34 ժեց՝ և կամենում էր ամբոխին
պատասխանել: Բայց երբոր
գիտացին՝ թէ Հրէայ է, ամենքն
էլ մէկ ձայնով երկու ժամի
չափ աղաղակում էին. թէ Մեծ
35 է Եփեսացոց Արտեմիսը: Բայց
ատենադպիրը ամբոխին հան-
դարտեցնելուց յետոյ ասաց.
Ո՛վ Եփեսացի մարդիկ, ո՞վ է
այն մարդն՝ որ չէ գիտում՝ թէ
Եփեսոս քաղաքը մեծ Արտեմիս
Աստուածուհու և Դիոսկուրի
տաճարների պաշտօնեան է. Եւ
36 որովհետև այդ անվիճելի կեր-
պով այդպէս է, պէտք է ձեզ

ամբաստան լինին զմիմեանց:
39 Այլ եթէ վասն այլ իրիք
խնդիր իցէ՝ յօրինաւոր ժողովն
40 վճարեսցին: Զի անդր և մեզ
վիշտ վտանգի է ընդ կուսոյս
այսր աւուր՝ առանց իրիք յան-
ցանաց լինելոյ, զորմէ ոչ կա-
րասցուք պատասխանի տալ վասն
ժողովոյս այսորիկ: Եւ զայս
ասացեալ՝ արձակեաց զժողովն:

ԳԼ. Ի

1 Եւ յետ դադարելոյ ամբոխին՝
կոչեաց Պօղոս զաշակերտսն, և
մխիթարեաց. ողջոյն ետ՝ և ել
2 գնաց ի Մակեդոնիա: Եւ
շրջեալ ընդ կողմանսն ընդ այնո-
սիկ, և մխիթարեալ զնոսա
բանիւք բազմօք, եկն յԵլլա-
3 դայ: Իբրև արար անդ ամիսս
երիս, եղև նմա դաւ ի Հրէից,
մինչդեռ կամէր ելանել յՍո-
ւրիա. խորհուրդ կալաւ դառնալ
4 ընդ Մակեդոնիա: Եւ երթայր
ընդ նմա մինչև յԱսիա՝ Սոսի-
պատրոս Պիւռա Բերիացի, և ի

հանդարտ կենաք և յանդգնու-
37 թեամբ բան չգործէք: Զան-
զի այդ մարդկանցը բերիք այս-
պէս, որ ոչ կուռքի տուն կողոպ-
տողներ և ոչ ձեր աստուծոյն
38 հայհոյանք տուողներ են: Ու-
րեմն՝ եթէ Դեմետրիոսը և նո-
րա հետ լինող վարպետները
մէկի հետ բան ունին, ատեան
կայ և փոխանակ դրէշխի կայ,
թող միմեանցից գանգատ անեն:
39 Իսկ եթէ մի ուրիշ բանի հա-
մար է ձեր խնդիրը, թող օրի-
նաւոր ժողովքում՝ վճռուի:
40 Զանզի մեզ էլ մեծ վտանգ կայ
այս օրուայ կռուի համար որ
ամբաստանուինք. որովհետև մի
պատճառ չկայ, որ այս ժո-
ղովքի համար կարող լինէինք
պատասխան տալ. և այս ասելով՝
ժողովուրդին արձակեց:

ԳԼ. Ի

1 Եւ աղմուկը դադարելուց յե-
տոյ՝ Պօղոսն աշակերտներին
կանչեց, և հրաժարական ողջոյն
տուաւ՝ և դուրս եկաւ որ գնայ
Մակեդոնիա: Եւ այն կող-
2 մերը մտն գալով և նորանց շատ
խօսքերով մխիթարելով, եկաւ
3 Եղլադա: Եւ երբոր երեք ամիս
կացաւ, Հրէաները նենգու-
թեան խորհուրդ արին նորա հա-
մար, երբոր կամենում էր դուրս
գալ Սիւրիա. ինչն էլ խոր-
հուրդ արաւ՝ որ Մակեդոնիայի
4 միջովը յետ դառնայ: Եւ մինչև

թեսաղոնիկեցւոց՝ Աբիստարբոս և Սեկունդոս՝ և Գայիոս Դերբացի և Տիմոթէոս, և Ասիացիք՝ Տիւքիկոս և Տրոփիմոս։ Սոքա յառաջ երթեալ
6 մնային մեզ ՝ի Տրուադա։ Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց ՝ի Փիլիպպեայ՝ և եկաք առ նոսա ՝ի Տրուադա՝ մինչև յաւուրս հինգ. անդ դադարեցաք աւուրս եօթն։

7 Եւ յաւուրն շաբաթուց՝ մինչդեռ ժողովեալ էաք բեկանել զհացն, Պօղոս խօսէր ընդ նոսա՝ զի գնալոց էր ՝ի վաղիւ անդր. և երկայնեաց զբանն
8 մինչև ՝ի մէջ գիշերոյն։ Լին լապտերք բազումք ՝ի վերնատանն, ուր էաքն ժողովեալ։ Եւ
9 նստէր ոմն երիտասարդ՝ անուն Եւտիքոս՝ ՝ի վերայ պատուհանին, նիրհէր ՝ի քուն թանձրութեան՝ ՝ի խօսելն Պօղոսի յաճախ, ընկղմեալ ՝ի քնոյ անտի անկաւ յերրորդ դստիկոնէն ՝ի
10 վայր, և բարձաւ մեռեալ։ Եւ իջեալ Պօղոսի անկանէր զնովաւ. առնոյր զնա ընդ գիրկս՝ և ասէր. Մի՛ խռովիք, քանզի
11 հոգի սորա ՝ի սմին է։ Եւ ել երեկ զհացն՝ և ճաշակեաց. և բազում՝ ևս խօսեցաւ մինչև
12 յառաւօտ, և ապա ել գնաց։ Եւ ածին զպատանին կենդանի, և
13 մխիթարեցան ո՛չ սակաւ։ Եւ Ասիա նորա հետ գնումք՝ Սոպատրու Բերիացին. և թեսաղոնիկեցիներից Արիստարքոսն և Սեկունդոսը՝ և Գայիոս Դերբացին և Տիմոթէոսը, և Ասիացիք՝ Տիւքիկոսն և Տրոփիմոսը։ Սորանք առաջ գնալով
5 սպասում էին մեզ Տրուադայումը։ Եւ մենք բաղարջակերաց օրերից յետոյ նաւով գնացինք Փիլիպիայից, և մինչև հինգ օրն եկանք Տրուադա նորանց մօտ. ուր եօթն օր դադարեցանք։

7 Եւ միաշաբաթ օրը դեռ որ ժողովուած էինք հաց կարելու համար, Պօղոսը նորանց հետ խօսումէր՝ քանզի հետևեալ օրը գնալու էր. և խօսքն երկարացրեց մինչև կէս գիշեր։ Եւ
8 շատ լապտերներ կային այն վերնատանն, ուր որ մենք ժողովուած էինք։ Եւ Եւտիքոս
9 անունով մի երիտասարդ պատուհանի վերայ նստած էր. Պօղոսի երկար խօսելու ժամանակ խոր քնի մէջ էր մտել. նա խոր քնով բռնուած տան երկրորդ դստիկոնիցը վայր ընկաւ, և վեր առնուեցաւ մեռած։
10 Եւ Պօղոսը իջաւ նորա վերայ ընկաւ. և գիրկն առնելով նորան՝ ասաց. Մի՛ շփոթուիք, վասն զի հոգին իրանումն է։
11 Եւ վեր ելաւ հացը կարեց և կերաւ. և շատ խօսեց մինչև առաւօտը, և յետոյ դուրս եկաւ
12 գնաց։ Եւ այն պատանուն բե-

մեք մտեալ ՝ի նաւն՝ ամբարձաք յԱսովն. անտի ակն ունէաք միւսանգամ առնուլ զՊօղոս. զի այնպէս պատուիրեալ էր՝ մինչ
13 ինքն զցամաքաւն երթալոց էր։ Եւ իբրև դիպեցաւ մեզ ՝ի յԱսովն, առեալ զնա եկաք ՝ի
14 Մատիլենէ։ Եւ անտի նաւեալ՝ ՝ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քիոյ. և ՝ի միւս օրն հասաք ՝ի Սամոս. և ՝ի վաղիւ անդր եկաք
15 ՝ի Մելիտոն։ Օ՛ի ՝ի մտի եղեալ էր Պօղոսի նաւել առ Եփեսեաւ՝ որպէս զի մի լեցի նմա ժամանակ ինչ յամել Ասիա. քանզի փութայր, եթէ հնար ինչ լցէ նմա՝ զօրն Պենտեկոստէից երթալ Երուսաղէմ։

17 Եւ ՝ի Մելիտեայ յղեալ Եփեսոս՝ կոչեաց զերիցուսն
18 եկեղեցւոյն։ Եւ իբրև եկին առ նա, ասէ ցնոսա. Դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ՝ յորմէ եկի յԱսիա, որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակսն եղէ.
19 Ծառայել Տեառն ամենայն խոնարհութեամբ և բազումարտասուօք և փորձութեամբք՝ որ դիպեցան ինձ ՝ի նենգութեանց
20 Հրէից։ Որպէս ոչինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ՝ և ուսուցանել զձեզ
21 հրապարակաւ և առանձին. Տալ վկայութիւն Հրէից և հեթանոսաց մեր զանձամբ՝ զի դարձիցեն առ Աստուած՝ և հաւատասցեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս։
13 Եւ մեք նաւեցաք՝ զի մեր մտանեսցուք զնացինք Ասոն. որ Պօղոսին դարձեալ այն տեղից մեզ հետ առնէինք. վասն զի այնպէս էր պատուիրել՝ որովհետև ինքն ցամաքովն էր գնալու։
14 Եւ երբոր Ասոնումն հանդիպեցաւ մեզ, վեր առինք նորան եկանք
15 Մատիլենէ։ Եւ այն տեղից նաւով գնացինք՝ հետևեալ օրը եկանք Քիոսի դիմացը, և միւս օր հասանք Սամոս. և Տրոգիլիոնումը մնալով և հետևեալ
16 օրն եկանք Մելիտոս։ Քանզի Պօղոսը որոշել էր՝ որ Եփեսոսի մօտովն նաւով անցնէ՝ որ չլինի թէ նա Ասիայի մէջ ժամանակ կորցնէ. վասն զի շտապում էր, որ եթէ կարելի լինի նորան՝ Պենտեկոստէի օրը Երուսաղէմումը լինի։
17 Եւ Մելիտոսից ուղարկեց Եփեսոս՝ եկեղեցու երէցներին
18 կանչեց։ Եւ երբոր եկան նորա մօտ, ասաց նորանց. Դուք գիտումէք որ այն առաջին օրից հետէ որ Ասիա եկայ, ինչպէս եղայ ամեն ժամանակ ձեզ հետ,
19 Ամենայն խոնարհութեամբ Տիրոջը ծառայելով և շատ արտասուքով և փորձութիւններով որ իրեանների նենգութիւններից պատահեցան ինձ.
20 Որ ինչպէս յետ չպահեցի ոչ մի օգտակար բան, որ չպատմեմ և սովորեցնեմ ձեզ՝ թէ հրապարակներում և թէ տան

նոսաց զապաշխարութեանն՝ որ առ Աստուած, և զՀաւատոցն
որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիս-
22 տոս: Եւ արդ՝ ահաւասիկ ես կապեալ Հոգւով երթամ Յե-
ռուսաղէմ. և որ ինչ անդ ընդ-
ի սնացանելոց իցէ՝ չգիտեմ:
23 Բայց զի Հոգին Սուրբ ըստ
քաղաքաց վկայէ ինձ՝ և ասէ,
եթէ կապանք և նեղութիւնք
24 մնան քեզ: Այլ և ոչ իւիք հա-
մարիմ զանձն իմ պատուական՝
որպէս զկատարել զընթացս իմ
ուրախութեամբ, և զպաշտօնն
զոր առի 'ի Տեառնէ Յիսուսէ՝
վկայ լինել աւետարանի շնո-
25 հացն Աստուծոյ: Եւ արդ՝
ահաւասիկ գիտեմ ես, թէ ոչ
ես տեսանելոց էք զերեսս իմ
դուք ամենեքեան, յորս շրջե-
ցայ քարոզել զարքայութիւնն:
26 Վասն որոյ վկայութիւն զնեմ
ձեզ յաւուր յայսմիկ՝ զի սուրբ
27 եմ յարենէ ամենեցուն: Քան-
զի ոչ խորշեցայ 'ի պատմելոյ
ձեզ զամենայն կամն Աստուծոյ:
28 Զգոյշ կացէք անձանց և ամ-
ենայն հօտիդ, յորում եդ զձեզ
Հոգին Սուրբ տեսուչս՝ հո-
վուել զժողովուրդ Տեառն, զոր
ապրեցոյց արեամբ իւրով:
29 Քանզի գիտեմ ես եթէ յետ
մեռոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք
յափշտակողք 'ի ձեզ, որ ոչ
30 խնայեսցեն հօտին. Եւ 'ի ձէնջ
յարիցեն արք՝ որք խօսիցին
թիւրս, ձգել զաշակերտսն զկնի
31 իւրեանց: Վասն այսորիկ արթ-

մէջ: Երէանելին և Յոյնելին
21 վկայութիւն տալով ապաշխա-
րել դէպի Աստուած, և մեր
Տէր Յիսուս Քրիստոսին հա-
22 ւատալ: Եւ հիմա ահա ես
Հոգով կապուած գնում եմ
Երուսաղէմ. և չեմ գիտում՝
թէ այն տեղ ինչ պիտի պա-
23 տահէ ինձ: Այնպէս թէ Սուրբ
Հոգին քաղաքից քաղաք վկա-
24 յում է՝ և ասում, թէ կա-
պանքներ և նեղութիւններ սպա-
սումն են ինձ: Բայց ես մի բանի
տեղ չեմ դնում և իմ անձն
էլ պատուական չեմ համարում՝
որ ուրախութեամբ կատարեմ
իմ ընթացքը, և այն պաշտօնը
որ Տէր Յիսուսից առի, որ
Աստուծոյ շնորհաց աւետարա-
25 նին վկայեմ: Եւ հիմա ահա
ես գիտեմ, որ իմ երեսն այլ ես
չէք տեսնիլ դուք ամենքդ, որ
26 ձեր մէջն մանեկայ Աստուծոյ
արքայութիւնը քարոզելով: Սո-
ւրբ համար այս օրուայ օրը
վկայութիւն եմ դնում ձեզ՝ որ
27 ամենիդ արիւնից անմեղ եմ:
Քանզի յետ չբաշուեցայ Ա-
28 ստուծոյ բոլոր կամքը ձեզ
պատմելուց: Զգոյշ կացէք
ձեր անձներիդ՝ և բոլոր հօտիդ,
29 որի մէջ Սուրբ Հոգին ձեզ
վերակացուներ դրաւ, որ ա-
ծեցնէք Աստուծոյ եկեղեցին,
29 որ իր արիւնովն ստացաւ: Քան-
զի ես գիտեմ, որ իմ հեռանալ-
ից յետոյ յափշտակող գայլեր
կդան ձեր մէջը, որ հօտիդ չեն

թէն կացէք, և յիշեցէք զի
զերկեամ* մի զցայդ և զցերեկ՝
ոչ դադարեցի արտասուօք խրա-
32 տել զմի մի իւրաքանչիւր: Եւ
արդ՝ յանձն առնեմ զձեզ Ա-
ստուծոյ՝ և բանի շնորհաց նորա,
որ կարող է շինել՝ և տալ ձեզ
ժառանգութիւն ընդ սուրբսն
33 ամենայն: Արծաթոյ՝ կամ
ոսկւոյ՝ կամ հանդերձից՝ ոչ
ուրուք 'ի ձէնջ ցանկացայ.
34 Դուք ինքնին գիտէք զի զպէտսն
իմ և որոց ընդ իսն էին՝ պաշ-
35 տէին ձեռքս այս: Եւ զամենայն
ինչ ցուցի ձեզ. զի այսպէս
պարտ է վաստակել, և դար-
մանել զհիւանդս, և յիշել
զբանն Տեառն Յիսուսի, զոր
ինքն իսկ ասաց. Երանելի է
մանաւանդ տալ՝ քան առնուլ:
36 Եւ զայս իբրև ասաց, եղեալ
ծունր ամենեքեանքն եկաց յա-
37 ղօթս: Բազում լալիւն եղև ա-
մենեցուն. և անկեալ զպարանո-
ցաւն Պօղոսի՝ համբուրէին զնա:
38 Այրմանէին մանաւանդ 'ի վե-
րայ բանին՝ զոր ասէր, թէ ոչ
ևս տեսանելոց են զերեսս նորա.
և յուղարկեցին զնա 'ի նաւ
անդր:

* 'Ի Յոյն, զերեամ

խնայել: Եւ հէնց ձեզանից 30
մարդիկ վեր կ'կենան, որ ծուռ
բաներ կ'խօսին, որ աշակերտ-
ներին իրանց ետևից քաշեն:
Սորա համար արթուն կացէք, 31
յիշելով որ երեք տարի գիշեր
և ցերեկ չդադարեցի ամեն մէկիդ
արտասուքով խրատել: Եւ 32
հիմա՝ ձեզ Աստուծոյն եմ յանձ-
նում՝ եղբայրք, և նորա շնորհաց
խօսքին, որ նա կարող է շինել՝
և ամեն սրբուածների հետ ձեզ
ժառանգութիւն տալ: Ձեզա- 33
նից մէկի արծաթին կամ ոսկուն
կամ հանդերձին չցանկացայ:
Դուք ինքներդ գիտէք, որ այս 34
ձեռքերը վաստակեցան իմ պէտ-
քը, և նորանց էլ՝ որ ինձ հետ
էին: Ամեն բան ցոյց տուի 35
ձեզ՝ որ այսպէս պէտք է աշ-
խատել, և տկարներին հոգ
տանել, և Տէր Յիսուսի խօսքը
յիշել, որ ինքն ասաց. Աւելի
երանելի է տալը քան թէ առ-
նելը: Եւ երբոր այս ասաց. 36
ծունկ դրաւ ամենի հետ՝ և աղօթք
արաւ: Եւ ամենքն էլ շատ 37
լաց էին լինում. և Պօղոսի
վզովն ընկած՝ նորան համբու-
րում էին: Յաւում էին մա- 38
նաւանդ այն խօսքի համար՝
որ ասում էր, թէ նորա երեսը
այլ ևս պիտի չտեսնեն. և նո-
րան ճանապարհ գցեցին դէպի
նաւը:

ԳԼ. ԻԸ

1 Եւ իբրև եղև ելանել մեզ և
մեկնել 'ի նոցանէ. Հանդէպ
գնացեալ եկաք 'ի Կոյ. և 'ի
վաղիւ անդր 'ի Հռոդոն, և
2 անտի 'ի Պատարա: Եւ գտեալ
նաւ մի՝ զի երթայր 'ի Փիւնիկէ,
3 և ելեալ 'ի նա գնացաք: Եւ
յայտ եղեալ Կիպրեայ՝ թողաք
զնա 'ի ձախակողմն, նաւեցաք
Յ.ասորիս, և իջաք 'ի Տիւրոս.
քանզի անդ էր նաւն թափելոց
4 զբեռինս: Եւ գտեալ զաշակերտս
սոնն՝ կացաք անդ աւուրս եօթն.
որք ասէին ցՊողոս 'ի ձեռն
Հոգւոյն՝ մի ելանել Յերու-
5 սաղէմ: Եւ իբրև եղև մեզ
կատարել զաւուրսն՝ ելեալ գնա-
ցաք, յուղարկեալ զմեզ ամե-
նեցուն հանդերձ կանամբք և
որդւովք մինչև արտաքոյ քա-
ղաքին. և եդեալ ծունր առ
6 ծովեզերին՝ կացաք յաղօթս: Եւ
հրաժարեցաք 'ի միմեանց՝ և
ելաք 'ի նաւն. և նոքա դարձան
7 յիւրեանց տեղիս. Եւ մեր
զնաւն առխելթեալ 'ի Տիւրոսէ՝
հասաք 'ի Պտղոմայիդա. և ողջոյն
տուեալ եղբարց՝ եղաք օր մի առ
8 նոսա: Եւ 'ի վաղիւ անդր ելեալ
անտի՝ եկաք 'ի Կեսարիա. և
մտեալ յապարանսն Փիլիպպոսի
աւետարանչի, որ էր Յեօթանց
9 անտի, ադաք առ նմա: Նորա
էին դստերք չորք՝ կոյսք մար-
10 գարէք: Եւ 'ի լինելն մեր
անդ աւուրս բազումս, էջ ոմն

ԳԼ. ԻԸ

1 Եւ երբոր եղաւ՝ որ մենք
դուրս եկանք և նորանից բա-
ժանուեցանք, ուղիղ գնալով
եկանք Կոյ, և հետևեալ օրը՝
Հռոդոն, և այն տեղից՝ Պատա-
2 բայ: Եւ մի նաւ գտանք, որ
3 Փիւնիկէ էր գնում, նորա մէջ
մտանք գնացինք: Եւ երբոր
Կիպրոսն երևեցաւ, նորան թո-
ղինք ձախ կողմը, և նաւն
ուղղեցինք դէպի Սիւրիա և
իջանք Տիւրոս. վասնզի նաւը
4 բեռը այն տեղ պիտի թափէր:
Եւ աշակերտներին գտնելով
այնտեղ եօթն օր մնացինք.
նորանք Սո-ւրբ Հոգոյ ձեռովը
5 Պողոսին ասում էին, որ վեր
չելնէ Երուսաղէմ: Եւ երբոր
մենք այն օրերը կատարեցինք,
դուրս եկանք գնացինք. ամենքը՝
կանանցով և որդիներով մեզ
ճանապարհ գցեցին մինչև քա-
ղաքի դուրսի կողմը. և ծովի
6 եզերին մոտ ծունկ դրինք աղօթք
արինք: Եւ իրարից բաժա-
նուելով վեր ելանք նաւը. և
7 նորանք ետ դարձան իրանց
տեղերը: Եւ մենք ծովի ճա-
նապարհորդութիւնը վերջացնե-
լով՝ Տիւրոսիցը Պտ-ղ-ղ Եկանք
հասանք Պտղոմայիդա. և եղ-
բայրներին ողջոյն տուինք՝ և
նորանց մոտ մի օր մնացինք:
8 Եւ հետևեալ օրն այն տեղից
դուրս ելանք մենք՝ Պողոսի ըն-
կերներս՝ եկանք Կեսարիա. և

'ի Հրէաստանէ մարգարէ՝ ա-
11 նուն Ագաբոս: Եւ եկեալ առ
մեզ, առեալ զգօտին Պողոսի՝
կապեաց զոտս և զձեռս իւր, և
ասէ. Այսպէս ասէ Հոգին
Սուրբ. զայրն որոյ գօտիս այս
է՝ այսպէս կապեսցեն Յերու-
սաղէմ Հրէայք, և մատնեսցեն
12 'ի ձեռս հեթանոսաց: Եւ իբրև
լուաք զայն՝ աղաչէաք մեք և
որ 'ի տեղւոջն էին՝ չելանել նմա
13 Յերուսաղէմ: Յայնժամ պա-
տասխանի ետ Պողոս. Զինչ
գործէք, զի լայք և ճմլեցու-
ցանէք զսիրտ իմ. քանզի ես ոչ
միայն կապելոյ՝ այլև մեռանելոյ
Յերուսաղէմ պատրաստ եմ
վասն անուանն Տեառն Յիսուսի
14 Քրիստոսի: Եւ 'ի չանսալն
նորա՝ լռեցաք, ասեմք. Տեառն
կամք լիցին:

15 Եւ յետ աւուրցն այնոցիկ՝
հանդերձեալ ելանէաք Յերու-
16 սաղէմ: Եկին ընդ մեզ և յաշա-
կերտաց անտի Կեսարացւոց, և
տանէին զմեզ առ որում վանս
ունելոց էաք՝ Մնասոնի ումեմն
Կիպրացւոյ՝ առաջին աշակերտի:
17 Եւ 'ի մտանելն մեր Յերու-

Փիլիպպոս աւետարանչի տունը
մտնելով. որ այն եօթնից էր,
նորա մոտ մնացինք: Այս չորս 9
կոյս աղջիկներ ունէր, որ մար-
գարէութիւն էին անում: Եւ 10
երբոր մենք այնտեղ շատ օրեր
մնում էինք, Հրէաստանից մի
մարգարէ իջաւ անունն Ագա-
բոս: Եւ մեզ մոտ եկաւ, Պո- 11
ղոսի գոտին առաւ իր ձեռները
և ոտները կապեց և ասաց,
Սուրբ Հոգին այսպէս է ա-
սում. Այն մարդուն՝ որի գո-
տին է այս, Հրէաները Երու-
սաղէմումը այսպէս կ'կապեն, և
հեթանոսների ձեռքն կ'մատ-
նեն: Եւ երբոր այս լսեցինք, 12
աղաչում էինք մենք, և այն
տեղացիք էլ, որ վեր չելնէ
Երուսաղէմ: Այն ժամանակ 13
Պողոսը պատասխանեց և ասաց.
Ի՞նչ էք անում, ինչո՞ւ համար
էք լաց լինում և սիրտս ճմլում.
քանզի ես ոչ միայն կապուելու
բայց Երուսաղէմումը մեռնելու
էլ պատրաստ եմ Տէր Յիսուսի
Քրիստոսի անուան համար,
Եւ երբոր նա ականջ չդրաւ, 14
լուռ կեցանք՝ և ասացինք. Տի-
րոջ կամքը լինի:
Եւ այն օրերից յետոյ պատ- 15
րաստուած վեր ելանք Երուսա-
ղէմ: Եւ այն Կեսարացի ա- 16
շակերտներից էլ մեզ հետ
եկան, և տանում էին մեզ մի
Մնասոն անուն Կիպրացի մար-
գու՝ առաջին աշակերտի մոտ,
որ նորա մոտ կենանք: Եւ 17

սաղէմ, խնդութեամբ ընկալան
18 զմեզ եղբարք։ Ի վաղիւ անդր
եմուտ Պօղոս ընդ մեզ առ Յա-
կովբոս. և եկին ամենայն երի-
19 ցունքն։ Եւ ողջոյն տուեալ
նոցա՝ պատմէր մի ըստ միոջէ
զոր արար Աստուած ի հեթա-
նոսս ի ձեռն պաշտաման նորա։
20 Եւ նոցա լուեալ՝ փառաւոր
առնէին զԱստուած. և ասեն
ցնա. Տեսանես եղբայր՝ քանի
բիւրք են հաւատացելոցն Հրէ-
ից, և ամենեքեան նախանձաւոր
21 օրինացն են։ Բայց իրազեկ
եղեն վասն քո՝ թէ ապստամբու-
թիւն ուսուցանես ի Մովսէսէ՝
որոց ի հեթանոսս ամենայն
Հրէայք են. ասես՝ մի՛ թլփա-
տել զորդիս նոցա, և մի՛ ըստ
22 կրօնիցն գնալ։ Արդ զի՞նչ
լինիցի՝ ապաքէն լսեն, եթէ
23 եկեալ ես։ Արդ զայս արա՛ զոր
ասեմք քեզ. են ի մեզ արք
չորք ուխտաւորքք յանձինս իւր-
24 եանց. Օ՛նոսա առեալ՝ սրբեսցիս
ընդ նոսա. և ծախեա՛ ինչ ի
նոսա՝ զի գերծցեն զգլուխս. և
գիտասցեն ամենեքին, թէ զորոց
իրազեկն եղեն զքէն՝ ոչինչ է.
այլ միաբանիս և դու պահել
25 զօրէնս։ Բայց վասն հաւատա-
ցելոցն հեթանոսաց, մեք առա-
քեցաք՝ որպէս ընտրեցաք, մի՛
ինչ այնպիսի պահել նոցա, բայց
միայն զգուշանալ ի կռոց զո-
հելոյ, և յարենէ, և ի հեղ-
ձուցելոյ, և ի պոռնկութենէ։
26 Յայնժամ Պօղոսի առեալ
երբեր մենք Երուսաղէմ մտանք,
եղբայրքքն մեզ ուրախութեամբ
ընդունեցին։ Բայց հետևեալ
օրը Պօղոսը մեզ հետ գնաց
Յակոբի մօտ, և բոլոր երէցները
եկան։ Եւ ողջոյն տալով նո-
ցանց՝ մին մին պատմում էր
ինչ որ Աստուած հեթանոսների
մէջ արաւ իր ծառայութիւնովը։
Եւ նորանք լսելով, փառաւո-
րում էին Տիրոջը. և ասում էին
նորան. Եղբայր. տեսնում ես,
քանի բիւրաւոր հաւատացեալ
Հրէաներ կան, և ամենքն
օրէնքի նախանձաւոր են։ Բայց
քեզ համար խմացել են, թէ
հեթանոսների մէջ լինող ամեն
Հրէաներին սովորեցնում ես
Մովսէսից հետ քաշուիլ, ասելով
որ իրանց որդիներին չթլփատեն,
և սովորութեանց պէս չըվա-
րուին։ Հիմա ի՞նչ կ՚լինի. ան-
պատճառ պէտք է բազմութիւնը
մէկ տեղ դայ, քանզի կ՚լսեն որ
եկել ես։ Հիմա սա արա՝ որ
քեզ ասում ենք. Մ՝եզանում
չորս մարդ կան, որ ուխտ են
դրած իրանց անձերի վերայ։
Նորանց առ՝ և նորանց հետ
սրբուիր. և նորանց վերայ ծախք
արա՝ որ իրանց գլխները ա-
ծիլեն. և ամենքն գիտենան,
թէ ինչ որ քեզ համար խմացել
էին՝ ոչ ինչ է. այլ թէ դու
էլ միաբան ես՝ օրէնքը պահե-
լով։ Բայց այն հաւատացեալ
հեթանոսների համար մենք ու-
ղարկեցինք՝ որոշելով, որ նո-

զարան՝ ի վաղիւ անդր ընդ
նոսա սրբեալ եմուտ ի տաճարն.
յայտ առնել զկատարումն ա-
ւուրցն սրբութեան՝ մինչև մա-
տեաւ ի վերայ իւրաքանչիւր
ուրուք ի նոցանէ պատարագ։

27 Եւ իբրև մերձ էին եօթն
աւուրքն ի կատարել, տեսեալ
զնա ի տաճարին Ասիացւոց
Հրէից՝ զեղուին զնովաւ զա-
մենայն զամբոխն. և արկեալ ի
28 նա ձեռս՝ աղաղակէին. Արք
Իսրայէլացիք, օգնեցէք. այս
այր է՝ որ հակառակ ժողովրդեանն և օրինաց և տեղւոյս
այսորիկ՝ ամենեցուն ամենայն
ուրեք ուսուցանէ. մինչև Հեթանոսս ևս եմոյծ ի տաճարն՝ և
29 պղծեաց զսուրբ տեղին։ Զան-
զի էր յառաջագոյն տեսեալ
զՏրոփիմոս զԵփեսացի ի քա-
ղաքին ընդ նմա. զոր կարծէին,
եթէ ի տաճար անդր եմոյծ
30 Պօղոս։ Շարժեցաւ քաղաքն
ամենայն, և կուտեցաւ ժողո-
վուրդն. և առեալ զՊօղոս՝
ձգէին արտաքոյ տաճարին. և
վաղվաղակի փակեցան դրունքն.
31 Եւ խնդրէին զնա սպանանել.
եհաս զլուր ի հազարապետ
գնդին, եթէ խռովեալ է ամե-
32 նայն Երուսաղէմ։ Որոյ անդէն
առեալ զզօրականս և հարիւրա-
բանք այնպիսի բան չպահեն,
բայց միայն զգուշանան կուռքի
զոհից և արիւնից և խեղդուա-
ծից, և պոռնկութիւնից։ Այն
26 ժամանակ Պօղոսը այն մարդ-
կանցն առաւ, հետևեալ օրը
նորանց հետ սրբուեցաւ, և
տաճարը մտաւ իմաց տալով
սրբութեանց օրերի լրանալը. մինչև
որ նորանց ամեն մէկի վերայ
պատարագ մատուցուեցաւ։
27 Եւ երբոր այն եօթն օրը
լրանալու մօտ էին, Ասիացի
Հրէաները նորան տեսան տա-
ճարում, և բոլոր ամբոխին նորա
վերայ թափեցին, և նորան ձեռք
ձգելով աղաղակում էին. Ով
28 Իսրայէլացի մարդիկ, օգնե-
ցէք. սա այն մարդն է՝ որ ժո-
ղովրդի և օրէնքի և այստեղի
հակառակ ամենին ամեն տեղ
սովորեցնում է. մինչև որ Յոյ-
ներ էլ մտցրեց տաճարի մէջ և
29 այս սուրբ տեղը պղծեց։ Զան
զի Տրոփիմոս Եփեսացին առա-
ջուց նորա հետ քաղաքումը
տեսել էին. և կարծում էին,
թէ Պօղոսը նորան մտցրեց տա-
ճարի մէջ։ Եւ բոլոր քաղաքը
30 դղրդեց, և ժողովուրդը կի-
տուեցաւ. և Պօղոսին բռնած
տաճարիցը դուրս քաշեցին, և
շուտով դռները փակուեցան։
31 Եւ երբոր ուզում էին նորան
սպանել, լուր հասաւ գնդի
հազարապետին, թէ բոլոր Ե-
րուսաղէմը տակն ի վեր է
32 եղել։ Նա էլ իսկոյն զին-

պետս՝ դիմեաց 'ի վերայ Նոցա. և Նոցա տեսեալ զՀաղարապետն
և զզօրականսն, դադարեցին 'ի
33 Հարկանելոյ զՊօղոս։ Յայն-
ժամ մատուցեալ Հաղարա-
պետն կալաւ զնա, և հրամայեաց
կապել կրկին շղթայիւք՝ և
Հարցանէր՝ թէ ո՞ իցէ, և զի՞նչ
34 իցէ արարեալ։ Այլք այլ ինչ
աղաղակէին զնմանէ յամբոխին.
իբրև ոչ կարաց գիտել զստոյգն
վասն ամբոխին, հրամայեաց
35 ածել զնա 'ի բանակն։ Եւ իբրև
եհաս յաստիճանսն, դէպ եղև
բառնալ բերել զնա 'ի զօրակա-
նացն՝ վասն բռնութեան ամբո-
36 խին։ Քանզի զհետ երթայր
բազմութիւն ժողովրդեանն, և
37 ասէին՝ Խարձ զդա։ Մինչդեռ
մտանելոց էր Պօղոս 'ի բանակն,
ասէ ցՀաղարապետն՝ եթէ ար-
ժա՞ն իցէ ինձ խօսել ընդ քեզ. և
նա ասէ. Յունարէն գիտես.
38 Մի՞թարդեօք դու իցես Եգիպ-
տացին, որ յառաջ քան զայս
աւուրս ապստամբեցուցեր՝ և
հաներ յանապատ չորս հա-
39 զարս արս սիկարեանս։ Եւ ասէ
Պօղոս, Ես եմ այր Հրէայ 'ի
Տարսոնէ Կիլիկեցւոց, ոչ ան-
նշան քաղաքի քաղաքացի. ա-
ղաչեմ՝ զքեզ հրամայեա՛ ինձ
խօսել առ ժողովուրդդ։

ւորներն և Հարիւրապետներառաւ
Նորանց վերայ վազեց. և Նո-
րանք երբոր Հաղարապետին և
զինուորներին տեսան, Պօղոսին
ծեծելուց դադարեցան։ Այն 33
ժամանակ Հաղարապետը մոտե-
ցաւ բռնեց Նորան և հրամայեց,
որ երկու շղթայով կապեն. և
Հարցնում էր, թէ ո՞վ է, և
ի՞նչ է արել։ Եւ ամեն մէկը 34
ամբոխի մէջ մի ուրիշ բան էին
աղաղակում. երբոր ամբոխի
շփոթութիւնից չկարողացաւ
ստոյգն իմանալ, հրամայեց Նո-
րան տանել բանակը։ Եւ երբ 35
որ հասաւ աստիճաններին,
պէտք եղաւ որ ամբոխի բռնու-
թեան պատճառով զինուորները
Նորան վեր առնեն բերեն։
Որովհետև ժողովուրդի բազ- 36
մութիւնը ետևիցը գնում էր
աղաղակելով. վեր կալ դորան։
Եւ դեռ քանի որ Պօղոսն բա- 37
նակը մտնելու վրայ էր, Հա-
զարապետին ասաց. Կարելի՞ է
ինձ արդեօք, որ քեզ հետ
խօսիմ. Նա էլ ասաց՝ Յունարէն
գիտես։ Արդեօք դու այն Ե- 38
գիպտացին չես, որ այս օրերից
առաջ շփոթութիւն արաւ՝ և
չորս հազար սիկարեան (աւա-
զակ) մարդիկ հանեց անապատը։
Եւ Պօղոսը ասաց. Ես Հրէայ 39
մարդ եմ՝ Կիլիկեցւոց Տարսո-
նեցը, ոչ թէ աննշան քաղաքի
քաղաքացի. աղաչում եմ քեզ՝
հրաման տուր ինձ, որ այդ ժո-
ղովրդի հետ խօսեմ։

40 Եւ 'ի հրամայելն Նորա,
Պօղոս կացեալ 'ի վերայ աստի-
ճանաց շարժեաց զձեռն ժողո-
վրդեանն. իբրև բազում լռու-
թիւն լինէր, սկսաւ բարբառել
Եբրայեցւոց բարբառովն՝ և
ասէ։

ԳԼ. ԻԸ

1 Արք եղբարք և հարք՝ լուա-
ր՛ուք ինձ այժմ առ ձեզ պա-
2 տասխանատուութեանս։ Իբրև
լուան՝ եթէ Եբրայեցւոց լե-
զուաւն բարբառեցաւ Նոցա՝
առաւել ևս դադարեցին 'ի լռու-
3 թիւն։ Եւ ասէ. Ես եմ այր
Հրէայ ծնեալ 'ի Տարսոնի
Կիլիկեցւոց՝ սնեալ 'ի քաղաքիս
յայսմիկ առ ոտս Գամաղիէլի,
խրատեալ ըստ ճշմարտութեան
հայրենի օրինաց, նախանձայոյզ
էի Աստուծոյ՝ որպէս ամենեքին
4 դուք այսօր։ Որ զսոյն ճանապարհ
վարեցի մինչև 'ի մահ, կապել և
մատնել 'ի բանտս արս և կանայս.
5 Որպէս և քահանայապետդ
վկայէ ինձ՝ և ամենայն ծերա-
կոյտդ. յորոց և թուղթս առեալ
առ եղբարս 'ի Դամասկոս
երթայի, ածել և անտի կա-
պեալս յԵրուսաղէմ, զի պատ-
6 ժեսցին։ Եւ եղև ինձ 'ի գնալն
և 'ի մերձենալ 'ի Դամասկոս,
զմիջաւուրքն յանկարծակի լեր-
կնից փայլատակեալ լոյս սաստիկ
7 զինև. Եւ անկայ յերկիր, և
լուայ բարբառ՝ որ ասէր ցիս.

Եր երբոր նա հրամայեց. 40
Պօղոսը աստիճանների վերայ
կանգնեց և դէպի ժողովուրդը
ձեռը շարժեց. և երբոր շատ
լուռ կացան, սկսեց Եբրայեցոց
լեզուով խօսել՝ և ասաց։

ԳԼ. ԻԸ

Մարդիկ եղբայրք և հարք, 1
հիմա իմ ձեզ պատասխան տա-
լոյս լսեցէք։ Եւ երբոր լսեցին՝ 2
թէ Եբրայեցոց լեզուով էր
նորանց հետ խօսում, էլ աւելի
լուռ կացան։ Եւ նա ասաց. 3
Ես Հրէայ մարդ եմ Կիլիկե-
ցոց Տարսօնումը ծնուած՝ այս
քաղաքումը մեծացած Գամա-
զիէլի ոտքի մօտ, հայրենական
օրէնքի ճշմարտութեան պէս
վարժուած. Աստուծոյ մասին
նախանձաւոր էի ինչպէս այսօր
դուք ամենդդ էք։ Որ այս ճա- 4
նապարհը հալածեցի մինչև 'ի
մահ. որ մարդկանց և կանանց
կապում էի և մատնում բանտերի
մէջ։ Ինչպէս քահանայապետն 5
էլ ինձ վկայում է՝ և ծերերի
բոլոր ժողովն էլ. որոնցից
թղթեր էլ առած գնում էի
Դամասկոս եղբայրների մօտ,
որ այնտեղ լինողներին էլ կա-
պած բերեմ Երուսաղէմ, որ
պատժուին։ Եւ եղաւ որ երբ 6
ես գնալիս Դամասկոսին մօտե-
նում էի, կէս օրուայ դէմ
յանկարծակի երկնքիցը մի սաս-

Սաւուղ Սաւուղ՝ զի՞ հալածես
8 զիս։ Եւ ես ետուս պատասխանի՝
թէ Ո՞վ ես Տէր. և ասէ ցիս,
Ես եմ Յիսուս Նազովրացի՝
9 զոր դուն հալածես։ Բայց որ
ընդ իսն էին՝ զլոյսն տեսանէին.
այլ զձայնն ոչ լսէին որ խօսէր
10 ընդ իս։ Եւ ասեմ. Ո՞վ Տէր
արարից Տէր. և ասէ ցիս Տէր.
Յարուցեալ երթիցես ի Դա-
մասկոս, և անդ պատմեսցի քեզ
վասն ամենայնի որ հրաման է
11 քեզ առնել։ Իբրև ոչ տեսանէի
ի փառաց լուսոյն այնորիկ,
զձեռանէ ձգեալ ի նոցանէ՝ որ
ընդ իսն էին, մտի ի Դամաս-
12 կոս։ Անանիա ոմն այր երկիւ-
ղած ըստ օրինաց, վկայեալ յա-
մենայն բնակչաց՝ որ ի Դա-
13 մասկոս Հրէայքն էին. Եկն
եկաց առ իս՝ և ասէ, Սաւուղ
14 եղբայր՝ ի վերս հայեաց։ Եւ ես
նոյնժամայն ի վերս հայեցայ ի
նա. և նա ասէ ցիս. Աստուած
հարցն մերոց յառաջագոյն
ընտրեաց զքեզ ճանաչել զկամն
նորա, և տեսանել զարդարն, և
լսել բարբառ ի բերանոյ նորա.
15 Զի եղիցիս վկայ նորա առ
ամենայն մարդիկ՝ որոց տեսերն
16 և լուար։ Եւ արդ զի՞ հեղգաս,
արի մկրտեա՛ց և լուա՛ զմեղս քո
17 ի կարգալ զանուն նորա։ Եւ
եղև ինձ ի դառնալն Յերու-
սաղէմ՝ և կալ յաղօթս ի տա-
ճարին, լինել ի զարմացման.
18 Եւ տեսանել զնա՝ զի ասէր ցիս.
Փութա՛ և ել Յերուսաղէմ վաղ-
տիկ լոյս փայլեց իմ չորս
կողմանը։ Եւ վայր ընկայ գե- 7
տինը, և մի ձայն լսեցի՝ որ ա-
սում էր ինձ. Սաւուղ, Սա-
ւուղ, ինձ ինչո՞ւ ես հալածում։
Եւ ես պատասխանեցի, Տէր՝ 8
դու ո՞վ ես. և ինձ ասաց. Ես
Յիսուս Նազովրեցին եմ՝ որին
դու հալածում ես։ Բայց ինձ 9
հետ լինողները լոյսը տեսնում
էին և վախով լցվում էին,
բայց ինձ հետ խօսողի ձայնը
չէին լսում։ Եւ ասացի, Ինչ 10
անեմ՝ Տէր, և Տէրն ասաց
ինձ. Ա՛ռ կաց՝ գնա Դամաս-
կոս, և այնտեղ կ՚ասուի քեզ
ամեն բանի համար, որ քեզ
հրաման է անել։ Եւ երբոր 11
այն լուսոյ փառքիցը չէի տես-
նում՝, ինձ հետ լինողները ձե-
ռից բռնեցին՝ և մտայ Դամաս-
կոս։ Եւ մի Անանիա մարդ՝ 12
օրէնքի համեմատ աստուածա-
վախ, որ Դամասկոսում բնա-
կող բոլոր Հրէաներիցը բարի
վկայութիւն ունէր. Նա նկաւ 13
ինձ մոտ կանգնեց և ասաց.
Սաւուղ եղբայր, վեր նայիր։
Եւ ես նոյն ժամումն վեր 14
նայեցի դէպի նա և նա ինձ
ասաց. Ա՛ռ հարանց Աստ-
ուածն առաջուց քեզ ընտրեց,
որ նորա կամքը ճանաչես, և
այն Արդարին տեսնես, և նորա
բերանիցը ձայն լսես։ Որ նորա 15
վկայ լինիս բոլոր մարդկանց
առջև այն բաների համար, որ
տեսար և լսեցիր. Եւ հիմա 16

վաղակի, քանզի չեն ընդունելոց
զքո վկայութիւնդ վասն իմ։
19 Եւ ես ասեմ. Տէր՝ ինքեանք
իսկ գիտեն՝ զի ես էի որ ի
բանտն տայի, և դան հարկանէի
ըստ ժողովրդոց զհաւատացեալս
20 ի քեզ։ Եւ յորժամ հեղոյր
արիւնն Ստեփանոսի վկայի քո,
ես ինքն էի՝ որ ի վերայ կայի.
և կամակից լինէի սպանման
նորա, և պահէի զհանդերձս
21 սպանողացն նորա։ Եւ ասէ
ցիս. Գնա՛, զի ես ի հեթանոսս
հեռաւորս առաքեցից զքեզ։

22 Եւ ունկն դնէին նմա մինչև
ցայս բան. ապա բարձին զձայնս
իւրեանց՝ և ասեն. Բարձ յերկրէ
զայդպիսիդ՝ զի չէ պարտ այդ-
23 պիսւոյդ կեալ։ Եւ յաղաղա-
կելն նոցա՝ և ընկենուլ զհան-
դերձս՝ և զփոշին ցանել յօդսն,
24 Հրամայեաց հազարապետն մու-
ծանել զնա ի բանակն. ասէր՝
դանիւ հարցանել զնա, զի
գիտացից վասն որոյ յանցման
այնպէս աղաղակէին զնմանէ։
25 Եւ իբրև պրկեցին զնա փոկովք,
ասէ Պօղոս ցհարիւրապետն որ

ինչո՞ւ ես ուշանում, վեր կաց
մկրտուիր և քո մեղքերը լուա
Տիրոջ անունը կանչելով։ Եւ 17
եղաւ երբոր ետ դարձայ Երու-
սաղէմ, և տաճարումն աղօթք
էի անում, յափշտակութիւն
ինձ բռնեց. Եւ նորան տեսայ 18
որ ինձ ասում էր. Շտապիր
շուտ դուրս ելի Երուսաղէմից.
քանզի չեն ընդունիլ քո վկա-
յութիւնը, որ ինձ համար տա-
լիս ես։ Եւ ես ասացի. Տէր՝ 19
նորանք գիտեն՝ որ ես բանտն էի
դնում՝ և ժողովարաններումը
ծեծում էի քեզ հաւատացողնե-
րին. Եւ երբ որ քո Ստեփանոս 20
վկայի արիւնը թափվում էր,
ես ինքս նորա մոտ կանգնած
էի, և նորա սպանմանը կամա-
կից էի, և նորա սպանողների
հանդերձները պահում էի։ Եւ 21
ասաց ինձ. Գնա՛, քանզի ես
հեռու հեթանոսների մէջ կ՚ու-
ղարկեմ քեզ։

Եւ մինչև այս խօսքն ասանք 22
էին դնում նորան. և իրանց
ձայները բարձրացրին՝ և ասա-
ցին. Այդպիսի մարդուն երկ-
րից վեր առ. քանզի պէտք չէ
դա ապրի։ Եւ երբոր նորանք 23
աղաղակում էին և հանդերձ-
ները վեր դցում, և փոշին օդի
մէջ ցանում. Հազարապետը 24
հրամայեց, որ նա բանակը տա-
րուի. ասելով թէ պէտք է
ծեծելով հարցնել նորան, որ
գիտենամ, թէ ինչ յանցանքի
համար էին նորա վերայ այն-

'ի վերայ կայր. եթէ Օ՛այր
Հռովմայեցի և անարատ պաշտ-
26 ելոյ ձեզ դան հարկանել։ Իբրև
լուաւ հարիւրապետն, մատու-
ցեալ առ հազարապետն պատ-
մեաց՝ և ասէ. Օ՛ւրինչ կամիս
առնել՝ քանզի այրս այս Հռով-
27 մայեցի է. Եւ մատուցեալ
հազարապետն, ասէ ցնա. Ասա
դու ցիս՝ Հռովմայեցի՞ ես. և նա
28 ասէ, Այո։ Պատասխանի ետ
հազարապետն. Ես բազում
գլխոց զգլխուորութիւնս զայս
ստացայ. ասէ Պօղոս. Ես
29 ծնեալ իսկ 'ի դմին եմ։ Եւ
վաղվաղակի 'ի բաց կացին 'ի
նմանէ՝ որ հարկանելոցն էին
ցնա. և հազարապետն իսկ երկ-
եաւ, իբրև դիտաց եթէ Հռով-
մայեցի է, և զի կապեալն ևս էր
ցնա։

30 Եւ 'ի վաղիւ անդր կամէր
գիտել զճշմարիտն, թէ զի՞նչ
չարախօսութիւն իցէ Հրէից-
ն. արձակեաց զնա՝ և հրամայեաց
կոչել զքահանայապետսն և
զամենայն ատեանն. և իջու-
ցեալ զՊօղոս՝ կացոյց 'ի մէջ
նոցա։

ԳԼ. ԻԳ

1 Եւ հայեցեալ Պօղոսի յա-
պէս աղաղակում։ Եւ երբոր
նորան կաշէ փոկերով պինդ
կապեցին, Պօղոսը ասաց մօտը
կանգնած հարիւրապետին, թէ
Իրաւո՞ւնքն է որ դուք Հռովմայեցի
և չդատապարտուած մարդուն
ծեծէք։ Եւ երբոր լսեց հա-
րիւրապետը, մօտեցաւ հազա-
րապետին պատմեց և ասաց.
Օ՛գուշացիր թէ ինչ ես կամ-
նում անել, քանզի այս մարդը
Հռովմայեցի է։ Եւ հազարա-
պետը մօտ եկաւ և նորան ա-
սաց. Ասա ինձ թէ դու Հռով-
մայեցի՞ ես. և նա ասաց. Այո.
Եւ հազարապետը պատաս-
խանեց. Ես շատ փողով ստա-
ցայ այս զլխուորութիւնը, և
Պօղոսը ասաց. Ես հէնց Դ՚ՈՒՐՈ-
ՆՈՒ ծնուած եմ։ Եւ նորանք՝
որ նորան ԾԵԾԷԼՈՒ հարցաքննե-
լու էին, շուտով հեռացան
նորանից. և հազարապետն էլ
վախեցաւ երբոր իմացաւ թէ
Հռովմայեցի է. վանդի կապել
էր նորան։

Եւ հետևեալ օրը կամենա-
լով ճշմարիտն իմանալ, թէ ի՞նչ
է Հրէաների չարախօսութիւնը,
նորան արձակեց կապերիցը և
հրամայեց որ քահանայապետ-
ները և բոլոր ատեանը կանչեն.
և Պօղոսին էլ բերաւ նորանց
մէջ կանգնեցրեց։

ԳԼ. ԻԴ

1 Եւ Պօղոսը ատեանին մտիկ
տեսանն՝ ասէ. Իրք եղբարք՝ ես
ամենայն ուղիղ մտօք գնացեալ
եմ առաջի Աստուծոյ մինչև
2 ցայսօր։ Եւ քահանայապետն
Անանիա հրամայեաց սպա-
սաւորացն հարկանել զբերան
3 նորա։ Յայնժամ Պօղոս ասէ
ցնա. Հարկանելոց է զքեզ
Աստուած՝ օրմ բռեալ. և դու
նստիս դատել զիս ըստ օրինաց,
և առանց օրինաց հրամայես
4 զիս հարկանել։ Եւ որ շուրջն
կային՝ ասեն. Զքահանայապետ
5 Աստուծոյ հայհոյես։ Եւ ասէ
Պօղոս. Ո՛չ գիտէի եղբարք՝ եթէ
իցէ քահանայապետ. գրեալ իսկ
է՝ Օ՛իշխան ժողովրդեան քո
6 ոչ հայհոյեսցես։ Իբրև գիտաց
Պօղոս եթէ մի կողմն Սադու-
կեցւոց է՝ և միւսն փարիսեցւոց,
աղաղակէր 'ի մէջ ատենին. Այրք
եղբարք՝ ես փարիսեցի եմ, որդի
փարիսեցւոյ. վասն յուսոյ և
յարութեան մեռելոց՝ ես աւա-
7 սիկ դատիմ։ Եւ զայս իբրև
ասաց՝ եղեն հերձուածք փարի-
սեցւոցն և սադուկեցւոց, և
պատառեցաւ բազմութիւնն։
8 Զանգի սադուկեցիքն ասեն,
Չիք յարութիւն, և ոչ հրեշ-
տակ և ոչ հոգի. բայց փարի-
սեցիքն խոստովանին զերկոսեան։
9 Եւ եղև աղաղակ մեծ. յոտն
կացին ոմանք 'ի դպրաց ատենի 'ի
կողմանէ փարիսեցւոց, հակա-
ռակէին և ասէին. Ո՛չինչ
չարութիւն գտանեմք յառնս
յայսմիկ, բայց թէ հոգի խօսեա-
ցաւ՝ և ասաց. Մարդիկ եղ-
բայրք, ես բոլորովին բարի
խղճմտանքով վարուել եմ Աս-
տուծոյ առջև մինչև այսօր։ Եւ
Անանիա քահանայապետը ծա-
ռաներին հրամայեց, որ նորա
բերանին զարկեն։ Այն ժա-
մանակ Պօղոսը ասաց նորան.
Աստուած պիտի քեզ զարկէ՝
բռով ծեփած պատ. և դու
նստի՞ս ես ինձ օրէնքի պէս
դատելու, և օրէնքի հակառակ
հրամայում ես՝ որ ես զար-
կուիմ։ Եւ նորա մօտ կանգ-
նածներն ասացին. Աստուծոյ
քահանայապետին ես հայհո-
յանք տալիս։ Եւ Պօղոսը ա-
սաց. Եղբայրք, ես չէի գիտում՝
որ քահանայապետ է. քանզի
գրուած է՝ Ե՛Ի ԻՐՈ ժողովրդի
իշխանին չհայհոյես։ Երբոր
Պօղոսը իմանալով թէ մէկ մասը
Սադուկեցիներից է՝ և միւս
մասը փարիսեցիներից, ատեանի
մէջ աղաղակում էր. Մարդիկ
եղբայրք, ես փարիսեցի եմ՝ և
փարիսեցու որդի. յուսոյն և
մեռելների յարութեան համար
եմ ես դատվում։ Եւ երբոր
նա այս ասաց, փարիսեցոց և
Սադուկեցոց մէջ երկպառակու-
թիւն ընկաւ. և բազմութիւնը
բաժանուեցաւ։ Որովհետև Սա-
դուկեցիք ասում են, թէ ոչ
յարութիւն կայ, ոչ հրեշ-
տակ, և ոչ հոգի. բայց փարի-
սեցիք երկուսն էլ դաւանում
են։ Եւ մեծ աղաղակ եղաւ. և

10 ցաւ 'ի դմա կամ հրեշտակ։ Եւ
'ի բազմանալ ամբոխին՝ երկու-
ցեալ հաղարապետն թէ գուցէ
ճեղքիցի Պօղոս 'ի նոցանէ,
հրամայեաց զօրականին իջանել
յափշտակել զնա 'ի միջոյ նոցա,
11 և ածել 'ի բանակն։ Եւ 'ի
վաղուեան գիշերին եկաց առ
նմա Տէր, և ասէ. Քաջալերեսցս
Պօղէ, զի որպէս վկայեցեր վասն
իմ յԵրուսաղէմ, նոյնպէս
պարտ է քեզ և 'ի Հռովմ
վկայել։

12 Եւ իբրև այգ եղև՝ արարեալ
ժողով Հրէիցն՝ նզովեցին զան-
ձինս, ոչ ուտել և ոչ ըմպել՝
13 մինչև սպանցեն զՊօղոս։ Եւ
էին աւելի քան զքառասուն՝
որոց զայս ընդ միմեանս երդ-
14 մունս արարեալ էր։ Որք մա-
տեան առ քահանայապետսն և
երիցունս՝ և ասեն. Նզովիւք
նզովեցաք զանձինս՝ ոչինչ ճա-
շակել՝ մինչև սպանցուք զՊօ-
15 ղոս։ Բայց դուք զգայուցէք
հաղարապետին հանդերձ ատե-
նիւ, զի իջուսցէ զնա առ ձեզ,
որպէս թէ կամիցիք ճշմարտա-
գոյնս քննել զնմանէ. և
մեք յառաջ քան զմօտել նորա՝
պատրաստ եմք 'ի սպանանել

Փարիսեցւոց կողմից դպիրները
վերկացան, հակառակում էին
և ասում. Ոչինչ չարութիւն
չենք գտնում այս մարդումը.
բայց եթէ հոգի խօսեց դորա-
նում կամ հրեշտակ. մենք Աս-
տուծոյ հետ չմարտնչենք։ Եւ
երբոր խռովութիւնը շատացաւ,
հաղարապետը վախեցաւ՝ մի
գուցէ Պօղոսը նորանցից պա-
տառուի. զինուորներին հրա-
մայեց, որ իջնեն նորան նո-
րանց միջից յափշտակեն, և
բերին բանակը։ Եւ հետևեալ
գիշերը Տէրը կանգնեց նորա
մօտ և ասաց. Քաջացիր, Պօ-
ղոս, վասնզի ինչպէս ինձ հա-
մար Երուսաղէմումը վկայե-
ցիր, այնպէս էլ պէտք է Հռո-
մումը վկայես։

Եւ երբոր առաւօտ եղաւ,
Հրէաներից ոմանք միաբանեցան
և իրանց անձերը նզովեցին ասե-
լով, որ չուտեն՝ և չխմեն,
մինչև որ Պօղոսին սպանեն։
Եւ քառասունից աւելի էին այս
երդումն իրար հետ անողները։
Նորանք քահանայապետների և
երէցների մօտ եկան և ասացին.
Նզովքով նզովեցինք մեր ան-
ձերը՝ որ ոչինչ չճաշակենք
մինչև որ Պօղոսին սպանենք։
Բայց դուք հիմա ատեանի հետ
իմաց արէք հաղարապետին, որ
էգուց նորան վայր բերէ ձեզ
մօտ, իբր թէ կամենում էք
աւելի ևս ճշմարտութեամբ բան
իմանալ նորա համար. մենք էլ

16 զնա։ Եւ լուեալ քեռորդւոյն
Պօղոսի զդաւաճանութիւնն, եկն
եմուտ 'ի բանակ անդր՝ պատ-
17 մեաց Պօղոսի։ Եւ կոչեցեալ
Պօղոսի առ իւր զմի 'ի հարիւ-
րապետաց ասէ՝ ասէ. Զպա-
տանիս զայս տար առ հաղարա-
պետն, զի ունի ինչ պատմել
18 նմա։ Եւ նորա առեալ զնա
տարաւ առ հաղարապետն՝ և
ասէ. Կապեալն Պօղոս կոչեաց
զիս, և աղաչեաց զպատանիս
զայս ածել առ քեզ, ունի ինչ
19 խօսել ընդ քեզ։ Առեալ ըզձե-
ռանէ նորա հաղարապետին՝ գնաց
մեկուսի, հարցանէր թէ զի՞նչ
20 ունիս խօսել ընդ իս։ Եւ նա
ասէ. Հրէայք միաբանեցին ա-
ղաչել զքեզ, զի 'ի վաղիւ
զՊօղոս իջուսցես յատեան,
իբրև թէ կամիցին ինչ ճշմար-
տագոյնս հարցանել վասն նորա.
21 Արդ՝ դու մի անսայցես նոցա.
քանզի դարան գործեալ է նմա
'ի նոցանէ արանց աւելի քան
զքառասուն, որ նզովեցին զան-
ձինս՝ ոչ ուտել և ոչ ըմպել՝
մինչև սպանցեն զնա. արդ
պատրաստ են՝ և սպասեն քում
22 հրամանի։ Զպա հաղարապետն
արձակեաց զպատանին՝ պա-
տուիրեալ մի ումեք ասել, թէ
զայս զգացուցեր ինձ։

նորա մօտ գալուց առաջ պատ-
րաստ ենք սպանելու նորան։
Եւ Պօղոսի քրոջ որդին երբոր 16
նորանց այս դաւաճանութիւնը
լսեց, եկաւ մտաւ բանակը և
Պօղոսին պատմեց։ Եւ Պօղոսը 17
հարիւրապետներից մէկին կան-
չեց իրան մօտ և ասաց. Այս
պատանին տար հաղարապետի
մօտ. վասնզի բան ունի նորան
պատմելու։ Եւ նա առաւ նո- 18
րան հաղարապետի մօտ տարաւ
և ասաց. Կապուած Պօղոսն ինձ
կանչեց և աղաչեց, այս պա-
տանին քեզ մօտ բերել, որ
բան ունի քեզ խօսելու։ Հա- 19
զարապետը նորա ձեռքից բռնե-
ց, գնաց առանձին տեղ,
հարցնում էր, թէ Ի՞նչ բան
ունիս ինձ ասելու։ Եւ նա ա- 20
սաց. Թէ Հրէաները միաբանե-
ցան քեզ աղաչելու, որ էգուց
Պօղոսին վայր բերես ատեանը,
իբր թէ կամենում էին աւելի
ճշմարիտ քննութիւն անել նո-
րա համար։ Բայց դու մի 21
հաւատար նորանց. որովհետև
նորանցից քառասունից էլ աւելի
մարդիկ դարան են մտել նորա
համար, որ իրանց անձերն էլ
նզովեցին, որ չուտեն և չխմեն
մինչև որ նորան սպանեն. և
հիմա պատրաստ են և քո հրա-
մանին են սպասում։ Զպա հա- 22
զարապետն այն պատանուն ար-
ձակեց և պատուէր տուաւ, թէ
ոչ ոքի չասես, որ այս բանն
իմաց արիր ինձ։

23 Եւ կոչեաց երկուս 'ի հարիւրապետաց՝ և ասէ. Պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի երթիցեն մինչև 'ի Կեսարիա. և հեծեալս եօթանասուն՝ և տիգաւորս երկերիւր,
24 'ի յերից ժամու գիշերոյն. Եւ գրաստս պատրաստական՝ որպէս զի իջուցեալ զՊօղոս ապրեցուսցեն առ Փելիքս դատաւոր.
25 Գրեալ թուղթ որ ունէր օրի-
26 նակ զայս: Կղօդիոս Լիւսիաս առ քաջ դատաւորդ Փելիքս՝
27 ողջոյն: Զայրս զայս կալեալ 'ի Հրէից՝ և մերձ 'ի սպանանել 'ի նոցանէ, հասեալ 'ի վերայ զօրականաւ ապրեցուցի, իմացեալ թէ Հռովմայեցի է: Կամեցայ գիտել զվնասն՝ վասն որոյ ամբաստանէին զդմանէ, իջուցի զդա յատեան նոցա:
29 Զոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. և ոչինչ արժանի մահու կամ
30 կապանաց ունէր վնաս: Իբրև ազդ եղև ինձ նենգութեան յայրդ լինելոյ 'ի նոցանէ՝ յղեցի առ քեզ. հրաման տուեալ և չարախօսացն խօսել զդմանէ առաջի քո. ողջ լեր:

31 Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ զՊօղոս՝ ածին գիշերայն յԱնտիպատրիս:

Եւ հարիւրապետներից երկուսին կանչեց և ասաց. Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք, որ գնան մինչև Կեսարիա. և եօթանասուն ձիաւոր և երկու հարիւր էլ տիգաւոր՝ գիշերուայ ժամը երեքից: Եւ գրաստներ էլ պատրաստեն, որ Պօղոսին հեծցնեն և ապահով հասցնեն փելիքս կուսակալի մօտ: Եւ դ նամակ գրեց, որի օրինակն այս էր: Կղօդիոս Լիւսիաս. պատուական կուսակալ Փելիքսին ողջոյն. Այս մարդուն որ Հրէաներից բռնուած էր և նորանցից սպանուելու մօտ էր, զինուորներով վերայ հասայ պրծացրի, իմանալով որ Հռովմայեցի է: Եւ ուզելով որ նորա յանցանքն իմանամ՝ որի համար գանգատ էին անում դորանից. վայր բերի դորան նորանց ատեանը: Եւ գտայ նորան իրանց օրէնքի մի խնդիրների համար ամբաստանուած, և մեռնելու կամ կապուելու արժանի ոչինչ յանցանք չունէր: Եւ երբոր ա-
30 կանջս հասաւ, որ Հրէաների կողմից այն մարդու համար նենգութիւն կայ, նորան խկոյն քեզ մօտ ուղարկեցի. և չարախօսներին էլ հրաման տուի, որ դորանից քո առջև խօսին. Ողջ կաց:

31 Եւ զինուորները իրանց հրամայուածի պէս՝ Պօղոսին առին և գիշերով տարան Անտիպա-

32 Եւ 'ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալս ընդ նմա երթալ՝
33 դարձան 'ի բանակն: Նոքա մտին 'ի Կեսարիա. և տուեալ ցդատաւորն զթուղթն, առաջի կացուցին նորա և զՊօղոս:
34 Իբրև ընթերցաւ՝ եհարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. և ստուգեալ եթէ 'ի Կիլիկեայ է.
35 Լուայց քեզ ասէ՝ յորժամ և չարախօսքն քո եկեսցեն. և հրամայեաց յապարանս Հերովդէսի պահել զնա:

ԳԼ. ԻԳ

1 Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն Անանիա հանդերձ ծերովք ոմամբք, և ճարտարախօսաւ Տերտիւղոսաւ ոմամբ. որք և զգացուցին դա-
2 տաւորին վասն Պօղոսի: Եւ 'ի կոչելն զնա՝ սկսաւ Տերտիւղոսն
3 ամբաստան լինել և ասել. Բազում խաղաղութիւն գտեալ է 'ի քէն՝ և իրոց ուղղութիւն ազգիս այսորիկ քով խնամով. Ամենայնիւ և ամենայն ուրեք շնորհակալ եմք՝ քաջդ Փելիքս՝
4 ամենայն գոհութեամբ: Բայց զի մի աւելի ևս աշխատ արարից զքեզ. աղաչեմ լսել մեզ կարճ 'ի կարճոյ քոյին հեղութեամբդ:
5 Արանզի գտաք զայրս զայս ապականիչ և խռովիչ ամենայն Հրէից՝ որք են ընդ տիեզերս,

տրիս: Եւ հետևեալ օրն ձիաւորներին թողին, որ նորա հետ գնան, և նորա յետ դարձան բանակը: Եւ նորանք մտան
33 Կեսարիա. և թուղթը կուսակալը կալին տուին, և Պօղոսին էլ նորա առջև ներկայացրին: Եւ
34 երբոր կարդաց՝ կուսակալը հարցրեց թէ որ գաւառից է. և երբոր տեղեկացաւ թէ Կի-
35 լիկիայից է, Ասաց. Կ'լսեմ քեզ՝ երբոր քո չարախօսներն էլ կ'գան. և հրամայեց՝ որ Հերոդէսի պալատումը պահեն նորան:

ԳԼ. ԻԴ

1 Եւ հինգ օրից յետոյ Անանիա քահանայապետը ծերերի և մի ճարտարախօս Տերտիւղոս անուն մարդու հետ իջաւ, և իմաց արին կուսակալին Պօ-
2 ղոսի համար: Եւ երբոր նոր-
3 բան կանչեց, Տերտիւղոսը սկսեց ամբաստանել և ասել. Որովհետև քեզանով շատ խաղաղութիւն ենք գտել՝ և այս ազգի համար շատ բաների կարգադրութիւն է եղել քո խնամքը տանելովը, ամեն կերպով և ամեն տեղ շատ գոհութեամբ շնորհակալ ենք քեզանից, ով
4 պատուական Փելիքս: Բայց որպէսզի աւելի նեղութիւն չտամ քեզ, աղաչում եմ՝ որ համառօտաբար լսես մեզ քո հեղութեամբը: Արանզի մենք
5

և առաջնորդ Նազովրեցւոց
6 հերձուածոյն։ Որ և զտաճարն
իսկ կամեցաւ պղծել. զոր և
կալաք, և ըստ մերոց օրինաց
7 դատել կամեցաք։ Եկեալ Լիւ-
սիաս հազարապետ՝ մեծաւ բըռ-
նութեամբ ՝ի ձեռաց մերոց
8 եհան։ Հրամայեաց և չարա-
խօսացն նորա գալ առ քեզ.
յորմէ զու իսկ բաւական լիցես
վերստին դատեալ, ամե-
նայնի հասու լինել՝ զորոց մեքս
9 ամբաստանեմք զդմանէ. Ասէ-
բանեցին և Հրէայքն, ասեն՝
Այդ այդպէս է։

10 Պատասխանի ետ Պօղոս,
յակնարկել նմա դատաւորին
խօսել։ ՝Ի բազում ամաց լինել
քեզ դատաւոր ազգիս այսորիկ
գիտեմ. յօժարութեամբ վասն
իմոց իրաց պատասխանի առ-
11 նեմ։ Զանգի կարող ես գիտել,
զի ոչինչ աւելի է իմ քան զա-
ւուրս երկոտասան՝ յորմէ հետէ
ելի երկրպագանել յԵրուսա-
12 ղէմ։ Եւ ոչ ՝ի տաճարի անդ
զտին զիս ընդ ումեք խօսեցեալ,
և կամ ժողովս արարեալ բազ-
մաց, ոչ ՝ի ժողովուրդս՝ և ոչ ՝ի
13 քաղաքի. Եւ ոչ յանդիման
առնել կարեն քեզ՝ վասն որոյ
այժմդ չարախօսեն զինէն։
14 Բայց զայս խոստանամ քեզ,
եթէ ըստ ճանապարհին՝ զոր
գտանեք այս մարդուն որ ապա-
կանիչ և խռովարար է այն
ամենայն Հրէաներին, որ բոլոր
աշխարհքումը կան. և Նա-
զովրեցւոց հերձուածի առաջնորդ
6 է. Որ տաճարն էլ ուզեց պղծել.
որին բռնեցինք էլ. և մեր օրէն-
քի պէս ուզեցինք դատաստան
7 էլ անել։ Բայց Լիւսիաս հա-
զարապետն եկաւ՝ և մեծ բըռ-
նութեամբ մեր ձեռներիցը հա-
8 նեց, Հրամայելով որ նորա
դատախազներն էլ գան քեզ
մօտ. որ զու վերաբննելով կա-
9 րող ես տեղեկանալ այն ամեն
բանի համար, որ մենք գան-
գատում ենք զորանից։ Հրէ-
աներն էլ միաբան եղած ա-
սացին. Թէ Այդպէս է։

10 Պօղոսն էլ պատասխանեց՝ երբ-
որ կուսակալը նորան ակնար-
կեց որ խօսէ. Գիտենալով որ
զու շատ տարուց հետէ այս
ազգի դատաւորն ես, աւելի
յօժարութեամբ իմ մասին պա-
տասխան եմ տալիս։ Ա՛ն զի
11 զու կարող ես գիտենալ, որ
տասներկու օրից աւելի չէ՝ որ
ես եկայ երկրպագութիւն անել
Երուսաղէմումը։ Եւ ոչ տա-
12 ճարումն են գտել ինձ մի մար-
դու հետ խօսելիս, կամ շատ
մարդ մէկ տեղ հաւաքելիս, և
13 ոչ ժողովարանումը, Եւ ոչ
էլ քաղաքումը. և ոչ էլ կարող
են քո առջև ցոյց տալ այն,
14 որոնց համար հիմա չարախո-
սում են ինձանից։ Բայց սա

ասեն հերձուած, այնպէս պաշ-
տում եմ զՀայրենի Աստուածն.
Հաւատացեալ ամենայնի՝ որ ինչ
յօրէնս և ՝ի մարգարէս գրեալ
15 է։ Ունիմ յոյս առ Աստուած,
որում և դոքա իսկ ակն ունին՝
թէ յարութիւն լինելոց է
16 արդարոց և մեղաւորաց։ Յո-
րում և ես իսկ ճգնիմ, անխիղճ
միտս ունել առ Աստուած և առ
17 մարդիկ յամենայն ժամ։ ՝Ի
բազում ամաց ողորմութիւնս
եկի առնել յազգդ իմ, և ետու
18 պատարագիս. Որովք գտին զիս
սրբեալ ՝ի տաճարին՝ ոչ բազմաք
19 և ոչ ամբոխիւ, Ոմանք Ասիացւոց
անտի Հրէայք՝ որոց պարտ
էր գալ առաջի քո՝ և ամբաստան
լինել, եթէ ունիցին ինչ զինէն.
20 Եւ կամ ինքեանք սոքա ասասցեն,
զինչ գտին յիս անիրաւութիւն՝ մինչդեռ կայի յատենին։
21 Բայց միայն վասն միոյ բարբա-
ռոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի
մինչ կայի ՝ի մէջ նոցա. եթէ
Ա՛ն յարութեան մեռելոց
դատիմ ես այսօր ՝ի ձէնջ։

22 Եւ յապաղեաց զնոսա Փե-
լիքս, զի ստուգագոյնս գիտէր
վասն ճանապարհին, ասէ.
Յորժամ Լիւսիաս հազարա-

եմ խոստովանումը քեզ, թէ
այն ճանապարհովն՝ որ ասում
են հերձուած, այնպէս պաշ-
տում եմ հայրենական Աստու-
ծոյն, ամեն բաների հաւատա-
լով որ օրէնքումն և մարգարէ-
ներումն գրուած է. Յուսալով 15
այն Աստուածն որին դորանք
էլ սպասում են, թէ արդարնե-
րի և մեղաւորների յարութիւն
պիտի լինի։ Որ հէնց սորա հա- 16
մար ինքս ջանք եմ անում, որ
ամեն ժամ մաքուր խղճմտանք
ունենամ Աստուծոյ առջև և
մարդկանց առջև։ Արդ շատ 17
տարիներից յետոյ եկայ որ իմ
ազգին ողորմութիւն անեմ և
ընծաներ բերեմ։ Որ այդ բանի 18
մէջ մի քանի Ասիացի հրէաներ
ինձ գտան տաճարումը սրբուած,
ոչ շատերի և ոչ էլ ամբոխի
հետ։ Որ նորանց պէտք էր 19
գալ քո առջև և գանգատ անել,
եթէ մի բան ունենային ինձա-
նից։ Կամ հէնց սորանք իրանք 20
թող ասեն, թէ ինձանում ինչ
անիրաւութիւն գտան՝ դեռ քանի
որ ատեանումը կանգնած էի։
Բայց այս մէկ խօսքի համար, 21
որ նորանց միջումն կանգնած
աղաղակեցի, թէ Ա՛ռեռելների
յարութիւն առնելոյն համար
եմ ես այսօր դատվում ձեռ-
ջանից։

Փիլիքսն էլ երբոր լսեց այս 22
բաները, նորանց ուշացրեց,
վասնզի շատ լաւ տեղեկացած
էր այն ճանապարհի համար,

պետ իջցէ այսր՝ տեղեկացայց
23 վասն ձեր։ Հրամայեաց Հարիւ-
րապետին պահել զնա և ունել
յընդարձակի, և մի զոք յիւրոց
անտի արգելուլ ի պաշտելոյ
զնա։

24 Եւ յետ աւուրց ինչ եկն
Փելիքս Հանդերձ Դրուսեղաւ
կնաւ իւրով, որ էր Հրէայ.
կոչեաց զՊօղոս՝ և լուաւ ի
նմանէ վասն որ ի Յիսուս
25 Քրիստոս Հաւատացն։ Եւ ի
խօսելն Նորա վասն արդարու-
թեան և ժուժկալութեան և
Հանդերձեալ դատաստանին,
զահի Հարեալ Փելիքս, ետ պա-
տասխանի. Դու առ այժմ
երթ՝ և յորժամ ժամ լիցի
26 կոչեցից զքեզ։ Այնուամենայն
և ակն ունէր՝ թէ տացի ինչ նմա
ի Պօղոսէ. վասն որոյ ստէպ
կոչեցեալ զնա խօսէր ընդ նմա։
27 Եւ ի կատարել երկուց ամաց՝
եկն փոխանակ Փելիքսի՝ Փես-
տոս Պորկիոս. իբրև կամեցաւ
շնորհս առնել Հրէիցն Փելիքս,
եթող զՊօղոս կապեալ։

ԳԼ. ԻԵ

1 Փեստոս իբրև եհաս յիշխա-
նութիւնն, յետ երից աւուրց
եկն յԵրուսաղէմ՝ ի Կեսարիայ։
2 Եւ զգացուցին նոա քահանայա-
և ասաց. Երբ որ Լիւսիաս
հազարապետը կ'իջնէ, կ'տեղե-
կանամ ձեր գործին։ Եւ Հա-
23 րիւրապետին հրամայեց՝ որ Պօ-
ղոսին պահէ՝ բայց ընդարձա-
կութիւն տայ. և Նորա մարդ-
կանցից ոչ մէկին չարգիլէ՝ նո-
ր ծառայութիւն անելու կամ
Նորա մօտ գնալու։

Եւ մի քանի օրից յետոյ Փե-
24 ղիքս եկաւ իր Դրուսիլա կնկան
հետ, որ Հրէայ էր, Պօղոսին
կանչեց՝ և Նորանից Քրիստոսի
հաւատքի համար բան լսեց։
25 Եւ երբոր նա խօսում էր արդա-
րութեան և ժուժկալութեան և
դալու դատաստանի համար,
Փիլիքս շատ ահով բռնուեցաւ,
և պատասխանեց. Դու հիմա
գնա. երբոր ժամանակ կ'ունե-
26 նամ, կ'կանչեմ քեզ։ Բայց
նա յոյս էլ ունէր, որ Պօղոսից
մի բան կ'տրուի իրան. որ նո-
ր արձակէ և Նորա համար
շատ անգամ կանչում էր Նորան
27 և Նորա հետ խօսում։ Եւ երբ
որ երկու տարին լրացաւ, Փի-
ղիքսի տեղ եկաւ Փեստոս Պոր-
կիոս. և որովհետև Փիղիքսը
կամեցաւ Հրէաներին մի շնորհք
անել, Պօղոսին կապած թողեց։

ԳԼ. ԻԵ

1 Եւ Փեստոսը երբ որ իշխա-
նութեան հասաւ, երեք օրից
յետոյ Կեսարիայից վեր ելաւ
2 Երուսաղէմ։ Եւ քահանայա-

պետքն և գլխաւորքը Հրէիցն
3 զՊօղոսէ, Եւ աղաչէին խնդրել
շնորհս ի նմանէ. զի կոչեսցէ
զնա յԵրուսաղէմ. դարան գործ-
ել սպանանել զնա ի ճանա-
4 պարհի։ Իսկ Փեստոս արար
պատասխանի՝ պահել զնա ի
Կեսարիա. թէ ինքն իսկ ընդ-
5 հուպ անդր երթալոց է։ Եւ որ
ի ձէնջ կարողք էին՝ ասէ, ընդ-
իս իջցեն, և եթէ իցէ ինչ յառնն
վնաս՝ ամբաստան լիցին զնմանէ։
6 Եւ լեալ անդ աւուրս՝ ոչ աւելի
քան զուրթ կամ զտասն, եկն էջ
ի Կեսարիա. և ի վաղիւ անդր
նստեալ յատենի, հրամայեաց
7 ածել զՊօղոս։ Եւ իբրև եկն՝
կացին շուրջ զնովաւ՝ որ յԵրու-
սաղէմէ իջեալ էին Հրէայք.
բազում և ծանր վնասս դնէին՝
զոր ոչ կարէին ցուցանել։
8 Քանզի առնէր պատասխանի
Պօղոս, եթէ Ո՛չ յօրէնս Հրէից՝
և ոչ ի տաճարն՝ և ոչ ի
9 Կայսր ինչ վնասակար եմ։ Բայց
Փեստոս կամեցեալ Հրէիցն
շնորհս առնել՝ պատասխանի ետ
Պօղոսի՝ և ասէ. Կամիս յԵրու-
սաղէմ երանել՝ և անդ վասն
դոցին իրաց դատել առաջի իմ։
10 Եւ ասէ Պօղոս. յատենի Կայսեր
հասեալ կամ, ուր պարտ է ինձ
դատել։ Հրէից ինչ չեմ վնա-
սակար, որպէս և դու իսկ քաջ
11 գիտես։ Եպա թէ վնասակար
իցեմ՝ և արժանի մահու ինչ
գործեցի, ոչ զանգիտեմ ի մե-
ռանելոյ. իսկ եթէ ոչ ինչ իցէ՝

պետն և գլխաւորները
Պօղոսի համար իմացում տուին
3 Նորան, Եւ աղաչում էին՝ այս
շնորհքը խնդրելով Նորանից,
որ Երուսաղէմ կանչէ Նորան
քանզի դարան էին գործել՝ որ
ճանապարհին սպանեն Նորան։
4 Բայց Փեստոսը պատասխանեց,
թէ Պօղոս Կեսարիայումը կ'պա-
հուի. և ինքն էլ շուտով
5 այնտեղ է գնալու։ Եւ ձեզա-
նից որոնք որ կարող են, ասաց,
թող ինչ հետ գան. և եթէ
այն մարդումը մի յանցանք կայ՝
թող Նորանից գանգատ անեն։
6 Եւ այն տեղ տասն օրից աւելի
մնալով իջաւ Կեսարիա. և
հետևեալ օրը ատեան նստեց,
և հրամայեց Պօղոսին բերել։
7 Եւ նա երբոր եկաւ՝ նորա շորս
կողմովը կանգնեցան Երուսա-
ղէմից եկած Հրէայքը. շատ և
ծանր յանցանք բերելով Պօ-
ղոսի դէմ որ չէին կարողանում
8 ապացուցանել։ Քանզի նա պա-
տասխան էր տալիս, թէ՝ Ոչ
Հրէից օրէնքի, և ոչ տա-
ճարի, և ոչ կայսեր դէմ մի
մեղք եմ գործել։ Բայց Փես-
9 տոսը՝ կամենալով Հրէաներին
շնորհք անել, պատասխանեց
Պօղոսին և ասաց. Կամենում
ես Երուսաղէմ գնալ՝ և այն-
տեղ այդ բաների համար դա-
10 տուիլ իմ առջև։ Պօղոսն էլ
ասաց. Կայսեր ատեանումն եմ
կանգնած, որ այնտեղ պէտք է
ես դատուիմ. Հրէաներին ոչինչ

զորոց սոքա ամբաստան լինին
զնոսա, ոչ՝ որ կարէ զիս դոցա
շնորհել. 'Ի Կայսր բողոքեմ։
12 Յայնժամ Փեստոս խօսեցեալ
ընդ խորհրդակցին՝ արար պա-
տասխանի, 'Ի Կայսր բողոքեցեր՝
առ Կայսր երթիջիր։

13 Իբրև անցին աւուրք ինչ՝
Մագրիպպաս արքայ և Բերենիկէ
եկին 'ի Կեսարիա՝ յողջոյն
14 Փեստոսի։ Եւ իբրև աւուրս
բազումս հանէին անդր, Փես-
տոս զեկոյց արքայի զՊողոսէ՝ և
ասէ. Այր մի է ասա մնացեալ
15 կապեալ 'ի Փելիքսէ։ Ո՝ ան
որոյ իբրև էրբայ Երուսաղէմ,
զգացուցին ինձ քահանայա-
պետքն և գլխաւորք Հրէից.
խնդրէին յինէն առնել նմա
16 պատուհաս։ Որոց ետու պա-
տասխանի, Զի՝ օրէն Հռովմա-
յեցւոց շնորհել ումք զոք,
մինչև ամբաստանեալն յանդի-
ման ունիցի զդատաւորսն՝ և
տեղի պատասխանւոյ առնուցու
17 վասն ամբաստանութեանն։ Եւ
իբրև եկին այսր՝ ոչինչ յա-
պաղեցի, այլ 'ի վաղիւն նստեալ
յատեանի՝ հրամայեցի ածել
18 զայրն։ Ո՝ ան որոյ մատուցեալ
ամբաստանքն՝ և ո՛չ մի ինչ վնաս
վնաս չեմ տուել, ինչպէս դու
11 էլ լաւ գիտես։ Բայց թէ
որ անիրաւութիւն ունիմ և
մեռնելու արժանի բան եմ գոր-
ծել՝ մեռնելոց չեմ քաշվում.
բայց եթէ այնպիսի մի բան
չկայ, որ սորանք ինձանից դան-
գատում են, ոչ ով ինձ կարող
չէ դորանց շնորհել. ես դէպի
կայսրն եմ բողոքում։ Այն
12 ժամանակ Փեստոսը խորհրդակ-
ցաց հետ խօսեց՝ և պատասխա-
նեց. 'Դէպի կայսրը բողոքեցիր,
կայսեր մօտ գնա։

Երբոր մի քանի օր անցաւ,
13 Մագրիպպաս թագաւորը և Բե-
րենիկէն եկան Կեսարիա՝ Փես-
տոսին շնորհաւորելու։ Եւ երբ
14 որ այնտեղ շատ օրեր անց-
կացրին, Փեստոսը Պողոսի հա-
մար խմացրեց թագաւորին՝ և
ասաց. Այստեղ մի մարդ է
մնացել Փելիքսից կապուած.
15 Որի համար՝ երբոր Երուսա-
ղէմ էի, քահանայապետներն
ու Հրէից գլխաւորներն խմացրին
ինձ, խնդրելով նորա դատա-
պարտութիւնը։ Որոնց պատաս-
16 խանեցի թէ Հռովմայեցիներին
օրէնք չէ՝ որ մի մարդ կորստեան
շնորհուի մինչև որ ամբաստա-
նեալն իր ամբաստանողներին իր
դիմացը չունենայ՝ և այն չարա-
խօսութեան համար պատասխան
տալու պատեհութիւն չառնէ։
Եւ երբոր նորանք այստեղ եկան՝ 17
բնաւ չուշացրի, այլ հետևեալ
օրը ատեան նստած՝ հրամայեցի

չարութեան 'ի մէջ բերէին՝
19 զորոց ետն կարծէի. Բայց
խնդիրս ինչ՝ վասն իւրեանց
պաշտաման ունէին ընդ նմա. և
վասն Յիսուսի ուրումն մեռելոյ,
զորմէ ասէր Պողոս թէ կենդանի
20 է։ Իբրև յանհնարս մտի վասն
այնպիսի իրաց քննութեան,
ասեմ եթէ կամիցի՞ երթալ
Երուսաղէմ, և անդ դատել
21 վասն նոցին իրաց։ Բայց 'ի
Պողոսի բողոքելն՝ զի պահիցի 'ի
քաջի արանցն յանդիմանու-
թիւն, հրամայեցի պահել զնա՝
մինչև տաց տանել առ Կայսր։
22 Մագրիպպաս ցՓեստոս ասէ.
Կամիմ և ես լսել առն. և նա
ասէ՝ վաղիւ լուիցես։

23 Եւ 'ի վաղիւ անդր իբրև եկն
Մագրիպպաս և Բերենիկէ՝ բա-
զում երևելի սպասուք, և մտին
յատեանն հանդերձ հազարա-
պետօքն և արամբք պատուա-
կանօք քաղաքին. և հրամայեալ
24 Փեստոսի՝ ածին զՊողոս։ Եւ
ասէ Փեստոս. Արքայ Մագրիպ-
պա՝ և ամենայն արք՝ որք ընդ
մեզ էք, տեսանէք զսա. վասն
սորա ամենայն ժողովք Հրէից
ամբաստան եղեն ինձ Երուսա-
ղէմ և ասա. աղաղակէին՝ թէ
25 Զի՝ պարտ դմա կեալ։ Բայց ես
'ի վերայ հասի թէ ոչինչ է
այն մարդուն բերել։ Եւ երբ- 18
որ ամբաստանողներն առաջ
եկան, ոչ մի յանցանք յառաջ
չէին բերում իմ կասկածածնե-
րից։ Այլ թէ իրանց կրօնքի 19
համար մի քանի վէճեր ունէին
նորա հետ. և մի մեռած Յի-
սուսի համար՝ որ նորա համար
Պողոսը ասում էր՝ թէ կեն-
դանի է։ Բայց երբոր ես զբաժ- 20
ուարացայ այսպիսի բաները
քննելու՝ ասացի. Արդեօք կամե-
նում է Երուսաղէմ գնալ՝ և
այնտեղ դատուիլ այդ բաների
համար։ Բայց երբոր Պողոսը 21
բողոքեց, որ Ս Հսփառ Կայ-
սեր քննութեան համար պա-
հուի, հրաման տուի՝ նորան
պահել, մինչև որ ուղարկեմ
կայսեր մօտ։ Մագրիպպասն էլ 22
Փեստոսին ասաց. Ես էլ կը-
կամենայի լսել այդ մարդուն.
և նա ասաց. Յգուց կ'լսես։

Եւ հետևեալ օրն երբոր 23
Մագրիպպասն և Բերենիկէ՝ մեծ
հանդէսով եկան, և հաղա-
բապետների՝ և քաղաքի պա-
տուաւոր մարդկանց հետ ատ-
եանը մտան, Փեստոսը հրաման
յեց՝ և Պողոսին բերին։ Եւ 24
Փեստոսը ասաց. Ով Մագրիպ-
պաս թագաւոր, և բոլոր մար-
դիկ որ մեզ հետ էք, տեսնում
էք սորան, որի համար Հրէից
բոլոր ժողովուրդն իմ առջև
եկան Երուսաղէմումն և այս
տեղ՝ աղաղակելով թէ նա այլ
ևս պիտի չապրի։ Բայց ես 25

զորա արժանի մահու գործեալ. և զորա ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն, խորհեցայ
26 յղել։ Վասն որոյ ստուգութեամբ ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ. վասն այնորիկ ածի զդա առաջի ձեր՝ և մանաւանդ առաջի քո արքայ Ագրիպպա. որպէս վերստին քննեալ մար-
27 թացից ինչ գրել։ Զի անպատեհ իմն թուի ինձ՝ տալ տանել կապեալ մի, և ոչինչ վնաս ընդունել նշանակել։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ Ագրիպպաս ասէ ցՊողոս. Ի՞ր ամայեալ է քեզ վասն քո խօսել. յայնժամ Պողոսի ձգեալ զձեռն՝ առնէր պատաս-
2 խանի։ Վասն ամենայն ամբաստանութեան Իւրեից զինեն՝ արքայ Ագրիպպա՝ համարիմ զանձն երանելի. զի քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի։
3 Մ՚անաւանդ զի գիտակ իսկ ես ամենայն կրօնից և խնդրոց Իւրեից. վասն որոյ աղաչեմ՝ երկայնմտութեամբ լսել ինձ։
4 Զիանդի զկենաց իմոց՝ որ ՚ի մանկութենէ, ՚ի սկզբանէ լեալ յազգի իմում Երուսաղէմ, տեղեակ են ամենայն Իւրեայք։
5 Յառաջագոյն գիտեն ՚ի վաղուց հետէ, եթէ կամիցին վկայել. տեղեկացայ, որ դա ոչինչ մեռանելու արժանի բան չէ գործել. և երբոր դա ինքն դէպի Ս՚ԵՀափառը բողոքեց, խոր-
26 հուրդ արի որ ուղարկեմ։ Որի համար մի հաստատ բան չունիմ՝ որ գրեմ իմ Տիրոջը. նորա համար զորան բերի ձեր առջևը, և մանաւանդ քո առջևը, ով Ագրիպպաս թագաւոր,
27 որ վերաքննելով մի բան ունենամ՝ գրելու։ Զիանդի ինձ անպատշաճ է երևում, որ մի կապած մարդ ուղարկեմ, և նորա դէմ ասուած յանցանքները չիմացնեմ։

ԳԼ. ԻԲ.

1 Եւ Ագրիպպասը Պողոսին ասաց. Զիազ հրաման է որ քո մասին խօսիս. այն ժամանակ Պողոսը ձեռը մեկնեց՝ և պատաս-
2 խան էր տալիս. Այն ամենի համար՝ որի մասին Իւրեանները գանգատում են ինձանից, ով Ագրիպպաս թագաւոր, իմ անձը երանելի եմ համարում, որ այսօր քո առջև պատասխան
3 պիտի տամ։ Մ՚անաւանդ որ դու տեղեակ ես Իւրեից բոլոր սովորութիւններին և վէճերին. նորա համար աղաչում եմ, որ
4 համբերութեամբ լսես ինձ։ Արդ իմ կեանքին, որ տղայութիւնից հետէ ՚ի սկզբանէ իմ ազգի մէջ Երուսաղէմումն եմ եղել, բոլոր Իւրեայք տե-

զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ
6 փարիսեցի։ Եւ արդ վասն յուսոյն՝ առ Հարսն եղելոյ աւետեացն Աստուծոյ՝ դատեալ
7 կամ յատենի. Յոր երկոտասան ազգատոհմիս մերոյ անպակաս զցայգ և զցերեկ պաշտեալ ակն ունին հասանել. վասն որոյ յուսոյ ամբաստանիմ արքայ ՚ի
8 Իւրէիցդ։ Զի՞նչ անհաւատ թուի ձեզ՝ եթէ Աստուած զմեռեալս յարուցանէ։ Ես իսկ ինքնին պատշաճ համարէի՝ զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նազովրեցւոյ գործել։
10 Զոր և արարի իսկ Երուսաղէմ. և զբազումն ՚ի սրբոցն ես բանտարգել առնէի, ՚ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն. և զսպանելոցն նոցա
11 բերէի համար։ Եւ ըստ ամենայն ժողովրդոցն՝ բազում անգամ պատժեալ զնոսա՝ բռնադատէի հայհոյել. առաւել ևս մոլեալ ՚ի վերայ նոցա՝ հալածէի մինչև
12 յարտաքին քաղաքսն։ Որովք գնացեալ ՚ի Դամասկոս՝ իշխանութեամբ և հրամանօք քահա-
13 նայապետիցն, Զ միջաւուրքն ՚ի ճանապարհի տեսի արքայ՝ յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինեւ լոյս, և զնոքաւք որ ընդ իսն
14 երթային։ Եւ յամենեցուն մեր անկանել յերկիր, լուայ ձայն որ ասէր ցիս՝ Իւրբայեցւոց բարբառովն. Սաւուղ, Սաւուղ՝

զիարակ են. Դիանդի վաղուց գիտեն, (եթէ կամենան վկայութիւն տալ.) որ ես մեր կրօնքի ճշմարտագոյն կուսակցութեան համեմատ փարիսեցի եմ՝ ապրել։
6 Եւ հիմա Աստուածանից մեր հարանցն եղած աւետիքի յուսոյ համար ապէքանում կանգնած դատվում եմ. Որին մեր
7 տասներկու ցեղը գիշեր և ցերեկ անդադար պաշտելով սպասում են հասանել. և այդ յուսոյն համար ամբաստանվում եմ Իւրեաներից, ով Ագրիպպաս արքայ։ Ի՞նչ, անհաւատալի բան
8 է երևում ձեզ, որ Աստուած մեռելներին յարուցանում է։
9 Եւ հէնց ես ինքս հարկաւոր էի համարում, որ Յիսուս Նազովրեցոյ անունի հակառակ շատ
10 բաներ գործեմ։ Որ Երուսաղէմումն արի էլ. և սրբերից շատերին ես բանտարկեցի քահանայապետներից իշխանութիւն առած, և նորանք սպանուելիս
11 հաւանութիւն էի տալիս։ Եւ բոլոր ժողովարաններումը շատ անգամ պատիժ տալով նորանց բռնադատում էի որ հայհոյեն. և էլ աւելի նորանց վերայ
12 կատաղած՝ հալածում էի մինչև դրսի քաղաքները։ Որով և
13 երբոր քահանայապետների իշխանութիւնովն և հրամանովն գնում էի Դամասկոս, կէս
14 օրուայ ժամանակին ճանապարհի վերայ տեսայ, ով արքայ, որ երկնքից արեգական լուսից

զի՞ հալածես զիս. խիստ է քեզ
15 ընդդէմ խթանի աքացել։ Եւ
ես ասեմ, Ո՞ ես Տէր. և Տէր
ասէ. Ես եմ Յիսուս զոր դուն
16 հալածես։ Այլ արի և կաց ՚ի
վերայ ոտից քոց. զի վասն
այսորիկ երևեցայ քեզ՝ առնուլ
զքեզ ՚ի ձեռն պաշտօնեայ և
վկայ՝ որոց տեսերդ զիս, և որոց
17 երևեցայց քեզ. փրկել զքեզ ՚ի
ժողովրդ ենէդ՝ և ՚ի հեթա-
նոսաց, յորս ես առաքեցից
18 զքեզ. Բանալ զաչս նոցա,
դարձուցանել ՚ի խաւարէ ՚ի
լոյս, և յիշխանութենէ Սա-
տանայի Աստուած. առնուլ
նոցա զթողութիւն մեղաց, և
վիճակ ընդ սուրբս՝ հաւատովքն
19 որ յիս։ Ուստի արքայ Ագրիպ-
պա՝ ո՛չ եղէ անհաւան երկնաւոր
20 տեսլեանն. Այլ նախ որոց ՚ի
Դամասկոս և Երուսաղէմ
էին, և ընդ ամենայն գաւառս
Երկրաստանի և ՚ի հեթանոսս,
պատմեցի զղջանալ՝ և դառնալ
Աստուած կենդանի. արժանի
ապաշխարութեան գործս գոր-
21 ծել։ Վասն այսորիկ Երկից
կալեալ զիս ՚ի տաճարին, կա-
22 մէին սպանանել։ Օգնութիւն
հասեալ առ Աստուծոյ՝ մինչև
ցայսօր կացի վկայեալ փոքու և
մեծի. ոչինչ արտաքոյ ասել՝
քան զոր մարգարէքն և Մով-
սէս խօսեցան զհանդերձելոցն
23 լինելոյ. Եթէ չարչարելոց է
Քրիստոսն, եթէ առաջին ՚ի
յարութենէ մեռելոց՝ լոյս
աւետի մի լոյս ծագեց իմ՝ ազգս
կողմոյս՝ և նորանցով էլ՝ որ
ինձ հետ գնում էին։ Եւ երբ 14
որ մենք ամենքս գետնի վե-
րայ ընկանք՝ մի ձայն լսեցի, որ
եբրայեցոց բարբառով ինձ ա-
սում էր. Սաւուղ, Սաւուղ,
ինչո՞ւ ես ինձ հալածում. դժուար
է քեզ՝ խթանի դէմ քացի տալ։
Եւ ես ասացի. Դու ո՞վ ես, 15
Տէր. և նա ասաց. Ես Յի-
սուսն եմ, որին դու հալա-
ծում ես։ Բայց վեր կաց՝ և 16
ոտներիդ վերայ կանգնիր, վա-
սընդի նորա համար երևեցայ
քեզ, որ քեզ ձեռքս առնեմ
պաշտօնեայ և վկայ լինելու
այն բաներին՝ որ դու տեսար,
և այն բաներին, որոնցով պիտի
երևամ քեզ. Որ ազատեմ քեզ 17
այդ ժողովրդից և հեթանոս-
ներից, որոնց մէջ ես հիմա
քեզ ուղարկում եմ. Դորանց 18
աչքերը բանալու, և խաւա-
րից դէպի լոյսը դարձնելու,
և սատանայի իշխանութիւնից
դէպի Աստուած. որ նորանք
մեղաց թողութիւն՝ և սրբերի
հետ ժառանգութիւն առնեն՝
ինձ հաւատալով։ Ուստի, ով 19
Ագրիպպաս արքայ, անհնա-
զանդ չեղայ այն երկնային տե-
սիլքին։ Այլ առաջ նորանց՝ որ 20
Դամասկոսումն և Երուսաղէ-
մումն էին և բոլոր Երկրաստանի
երկրումը և հեթանոսներին
պատմեցի, ապաշխարել և դառ-
նալ դէպի Աստուծոյն, ապաշ-
խարութեան արժանի գործքեր
գործելով։ Որոնց համար Երու- 21
սաղեմներն ինձ տաճարումը բռնե-
լով՝ ուզում էին սպանել։ Իսկ 22
որովհետև Աստուածանից ինձ
օգնութիւն հասաւ՝ մինչև այսօր
կանգնած վկայում եմ փոքրին
և մեծին. նորանից դուրս ոչինչ
չասելով՝ որ մարգարէներն, և
Մովսէսը խօսեցին այն լինելու
բաների համար. Թէ Քրիստոսը 23
պիտի չարչարուի, և նա առա-
ջինը մեռելներից յարութիւն
առած՝ լոյս պիտի քարոզէ ժո-
ղովրդին և հեթանոսներին։
Եւ նա այս պատասխանը 24
տալիս, փեստոսը մեծ ձայնով
ասաց. Գժվում ես, Պօղոս,
շատ կարդացողութիւններդ մո-
լորեցնում են քեզ։ Նա էլ 25
ասաց. Չեմ գժվում, ով ազ-
նիւ փեստոս, այլ ճշմարտու-
թեան և հեզութեան խօսքեր
եմ խօսում։ Վասնզի թագա- 26
ւորն էլ այս բաները գիտէ, որի
հետ էլ համարձակ խօսում եմ.
քանզի չեմ կարծում որ սո-
րանցից մէկն էլ նորանից ծած-
կուած լինի. վասնզի այս բանը
անկիւնի մէջ եղած չէ։ Հաւա- 27
տո՞ւմ ես մարգարէներին, ով
Ագրիպպաս արքայ. գիտեմ որ
հաւատում ես։ Ագրիպպասն 28
էլ Պօղոսին ասաց. Քիչ է
մնում որ ինձ համոզես քրիս-
տոնեայ լինել։ Եւ Պօղոսը ա- 29

պատմելոց է ժողովրդեանն և
հեթանոսաց։

24 Եւ նորա զայս պատասխանի
տուեալ, փեստոս ՚ի ձայն մեծ
ասէ. Մոլիս Պօղէ, բազում
դպրութիւնքդ զքեզ ՚ի մոլու-
25 թիւն դարձուցանեն։ Իսկ Պօ-
ղոս ասէ. Ո՛չ մոլիմ քաջդ
փեստոս, այլ զգաստութեան և
զճշմարտութեան բանս բար-
26 բառիմ։ Գիտակ իսկ է այսոցիկ
արքայ, ըստ որում և համար-
ձակեալդ խօսիմ. քանզի *ծած-
կել ՚ի քէն իմիք ՚ի սոցանէ՝
չառնում յանձն. զի ո՛չ եթէ
յանկեան ուրեք գործեալ իցէ
27 այս։ Հաւատաս արքայ Ագ-
րիպպա մարգարէից. գիտեմ զի
28 հաւատաս։ Եւ ասէ Ագրիպ-
պաս ցՊօղոս. փոքու իմն հաւա-
նեցուցանես զիս լինել քրիստո-
29 նեայ։ Եւ Պօղոս ասէ. Խնդրէի
Աստուծոյ՝ և փոքու և մեծաւ՝

* Ի Յոյնն, ծածկեալ գոլ

ոչ միայն զքեզ՝ այլ զամենեսեան
որ լսեն ինձ այսօր՝ լինել այս-
պիսի որպէս և ես եմ, բաց 'ի
կապանաց սոսի։

30 Յետոյ եկաց արքայն և դա-
տաւորն և Բերենիկէ, և որ ընդ
31 նոսայն նստէին։ Եւ իբրև գնա-
ցին, խօսէին ընդ միմեանս և
ասէին. թէ Ոչինչ արժանի
մահու կամ կապանաց գործէ
32 այրս այս։ Իսկ Աղրիպպաս
ցփեստոս ասէ. Արձակել մարթի
էր զայրս զայս՝ եթէ ոչ էր
բողոքեալ 'ի Կայսր։

ԳԼ. ԻԸ.

1 Իբրև հրամայեցաւ մեզ
նաւել Յիտալիա, տային զՊօ-
ղոս՝ և զայլս ոմանս կապեալս
ցՀարիւրապետ մի, որում անուն
էր Յուլիոս՝ Սեբաստեան գնդին։
2 Եւ եկեալ 'ի նաւ մի Ադրա-
միտեացի, որ երթալոց էր 'ի
կողմանս Ասիացւոց՝ գնացաք.
էր ընդ մեզ և Արիստարքոս
3 Մակեդոն Թեսաղոնիկեցի։ Եւ
'ի վաղիւ անդր իջաք 'ի Սիդոն.
և մարդասիրութիւն ցուցեալ
Յուլիայ առ Պօղոս, հրամայեաց
4 առ բարեկամսն երթալ՝ և դար-
ման գտանել։ Եւ անտի եկեալ
խոնարհագոյն նաւեցաք 'ի
Կիպրոս՝ վասն հողմոյն ընդդէմ
5 լինելոյ։ Յայնժամ ընդ մէջ
ծով Կիլիկեայ և Պամփիլեայ
նաւեալ՝ իջաք 'ի Ամիռայ Լի-
6 կիացւոց։ Եւ անդ գտեալ հա-
րիւրապետն նաւ մի Աղէքսան-
դրացի որ երթայր Յիտալիա,
7 եմոյծ զմեզ անդր։ Եւ 'ի բա-
զում աւուրս ծանրանաւեալք
հազիւ հասաք առ Կնիդաս. և
'ի չթողացուցանել մեզ հողմոյն,
նաւեցաք խոնարհագոյն 'ի Կրե-
8 տէ առ Սաղամինեաւ։ Հազիւ
անցեալ առ նովաւ՝ եկաք 'ի
տեղի ինչ որ կոչէր Գեղեցիկ
նաւահանգիստ. յոր հուպ էր
քաղաքն Ղասեայ։

9 Եւ իբրև բազում ժամանակք
անցանէին, և սպառ ևս լինէր
նաւելոյն. և վասն այն ինչ ևս
պահոցն անցանելոյ, տայր խրատ
10 Պօղոս, Եւ ասէ ցնոսա. Ա՛յր՝
տեսանեմ զի թշնամանօք և
բազում վնասու՝ ոչ միայն
բեռինդ և նաւիդ, այլ և ան-
ձանց մերոց լինելոց է նաւարկու-
11 թիւնս։ Իսկ հարիւրապետն
նաւապետին և նաւավարին ա-
ռաւել անսայր՝ քան բանիցն
12 Պօղոսի։ Իբրև գժպատեհ ի-
մն թուէր նաւահանգիստն առ 'ի
ձմերել, բազումք խորհեցան
գնալ անտի. թերևս կարասցեն
հասանել 'ի Փինիկէ՝ ձմերել 'ի
նաւահանգստին Կրետացւոց, որ
հայէր ընդ հարաւակողմն և ընդ
13 աշխարհն։ Եւ 'ի շնչել հա-
րաւոյն, համարեցան ուր դի-
ներկայ լինելու պատճառովք։
Այն ժամանակ Կիւլիկիայի և 5
Պամփիլիայի ծովն միջով գնա-
լով՝ իջանք Լիկիացոց Միռան։
Եւ հարիւրապետն այնտեղ մի 6
Աղէքսանդրացի նաւ գտաւ՝ որ
Իտալիա էր գնում, և մեզ նորա
մէջ մտցրեց։ Եւ շատ օրեր 7
ծանր նաւելով հազիւ հասանք
Կնիդի կողմերը. և երբոր քամին
չթողեց մեզ, նաւով գնացինք
Կրետէի ցած կողմը Սաղմնեայի 8
մօտ։ Եւ երբոր նորանով դժուա-
րաւ անցանք՝ եկանք մի տեղ,
որ կոչվում էր Գեղեցիկ նաւա-
հանգիստ. որին մօտ էր Ղա-
սեայ քաղաքը։
Եւ որովհետև շատ ժամա- 9
նակ էր անցել՝ և նաւով գնա-
լու համար վտանգաւոր էր,
ծոմի ժամանակն էլ արդէն
անցած լինելով, Պօղոսը խրատ
էր տալիս, Նորանց ասելով. 10
Ով մարդիկ, տեսնում եմ՝ որ
այս նաւարկութիւնը նեղութիւ-
նով և շատ վնասով է լինելու,
ոչ թէ միայն բեռնին և նաւին,
այլ մեր անձերին էլ։ Բայց 11
հարիւրապետը նաւապետին և
նաւավարին աւելի էր ականջ
դնում քան թէ Պօղոսի խօսքե-
րին։ Որովհետև այն նաւա- 12
հանգիստն անյարմար էր երե-
ւում ձմեռն անցկացնելու հա-
մար, շատերը խորհեցին որ
այնտեղից գնան. որ ձմեռն մնա-
լու համար գուցէ կարողանան
Փինիկէն հասնել՝ Կրետացոց

մեալն էին հասանել. և արկեալ
14 մօտ անցանէին զԿրետեաւ: Եւ
ոչ յետ բաղում ժամուց՝ անկաւ
զնովաւ հողմ ուռուցիկ, որ
15 կոչի Եւրակիկլոն: Ընդ յա-
փշտակեալ նաւին՝ և 'ի չՀան-
դուրժեալ ընդդէմ հողմոյն,
թողեալ տուեալ երթայաք և գա-
16 յաք: 'Ի կղզի ինչ դիմեալ՝ որ կո-
չէր Կղօդեա, հազիւ կարացաք
17 ըմբռնել զմակոյկն: Օր ա-
ռեալ՝ յօգնականութիւն կապէին
ընդ նաւն. երկուցեալ թէ գուցէ
'ի յորձանուտն անկանիցին,
իջուցեալ զառագաստն՝ այնպէս
18 երթային և գային: Եւ 'ի
սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝
'ի վաղիւ անդր զկարասին
19 ընկեցիկ առնէին: Եւ յերիր
աւուր ընդ իւրեանց ձեռն
20 զգործին նաւին ընկեցին: Իբրև
ոչ արև՝ և ոչ աստեղք երևէին
'ի բաղում՝ աւուրս, և ձմեռն
ոչ սակաւ կայր 'ի վերայ, ապա
բառնայր ամենայն յոյս փրկու-
21 թեան մերոյ: Եւ զի բաղում
աւուրս նօթի էին, յայնժամ
Պօղոս կացեալ 'ի մէջ նոցա՝
ասէ. Պարտ էր ձեզ ով արք՝
անսալ ինձ, և ոչ ելանել 'ի
Կրետեայ՝ և շահել զվիշտս
22 զայս և զվնաս: Եւ արդ՝ խրա-
տեմ զձեզ քաջալերել. զի վնաս
անձին՝ և ոչ միում 'ի ձէնջ
23 լինիցի, բաց 'ի նաւէդ: Հրանգի
երևեցաւ ինձ յայսմ գիշերի
հրեշտակ Աստուծոյ որոյ եմն
եմ և պաշտեմ զնա, Եւ ասէ.
այն նաւահանգիստն որ դէպի
արևմտեան հարաւի կողմն և
դէպի արևմտեան հիւսիսն էր
նայում: Եւ երբոր հարաւի 13
քամին փչեց, կարծում էին թէ
նպատակին կ'հասնեն.
և ճանապարհ ընկած անցնում
էին Կրետէի մօտովն: Եւ շատ 14
ժամանակ չէր անցել՝ որ նորա
վերայ մի մրրկալից հողմ ըն-
կաւ, որ Եւրակիկլոն էր կոչ-
վում: Եւ երբոր նաւը բռնուեաւ 15
՝ և հողմի դէմ չկարողացաւ
դիմանալ, բաց ընկած գնում և
գալիս էինք: Եւ դիմելով մի 16
կղզու՝ որ Կղօդա էր կոչվում,
հազիւ կարողացանք մակոյկը
բռնել: Որն առնելով օգնու- 17
թեան գործածեցին և նաւը
տակիցը կապեցին, և վախելով՝
որ յորձանուտն չընկնեն, առա-
գաստը իջեցրին, և այնպէս
գնում՝ և գալիս էին: Եւ երբ 18
որ մենք շատ նեղութիւն էինք
քաշում, հետևեալ օրը նաւը
ծովի մէջ էին գցում: Եւ եր- 19
րորդ օրը մեր ձեռովը նաւի
գործիքը դուրս թափեցինք: Եւ 20
երբոր շատ օրեր՝ ոչ արև և ոչ
աստղեր էին երևում, և փո-
թորիկն էլ քիչ չէր որ մեզ
վերայ կար, ապա մեր ազա-
տուելու բոլոր յոյսը կտրուե-
ցաւ: Եւ որովհետև շատ օր 21
սոված էին, այն ժամանակ Պօ-
ղոսը նորանց մէջ կանգնած
ասաց. Ով մարդիկ, պէտք էր
ձեզ՝ ինձ լսէիք, և Կրետէիցը

24 Մի՛ երկնչիր Պօղէ, Կայսեր ևս
պարտ է քեզ յանդիման լինել.
և ահա շնորհեալ է քեզ Աս-
տուծոյ զամենեսեան, որ են ընդ
25 քեզ 'ի նաւիդ: Վասն այսորիկ
քաջալերեցարուք արք, զի հա-
ւատամ՝ Աստուած՝ թէ այսպէս
լինի՝ զոր օրինակ խօսեցաւ ընդ
26 իս: Բայց 'ի կղզի ինչ հասանէ
մեզ անկանել:

27 Իբրև չորեքտասաներորդ գի-
շեր լինէր՝ մինչև ծփէաք 'ի
Ադրիայի անդունդներումն տա-
րուբերվում էին, կէս գիշե-
րումը նաւավարները կարծում
էին՝ թէ մի ցամաքի հասած
28 ուրեք: Եւ ընկեցեալ զգունդն՝
գտին գիրկս քսան. և սակաւ
ինչ դադարեալ՝ դարձեալ
ընկեցին՝ և գտին գիրկս հնգե-
29 տասան: Օ՛ահի հարեալ թէ
գուցէ 'ի խիստ ինչ
անկանիցին, յետուստ կողմանէ
ընկեցին խարիսխս չորս, ըղձա-
30 նային այգուն լինելոյ: Բայց
նաւավարքն խնդրէին փախչել
'ի նաւէ անտի. և իջուցեալ
զկուրն 'ի ծով անդր՝ պատճա-
ռանօք որպէս թէ առաջոյ
գուրս չգայիք՝ և այս նեղու-
թիւնիցը և վնասիցը պրծնէիք:
Եւ հիմա էլ խրատում եմ ձեզ՝ 22
որ սրտապինդ կենաք. վասնզի
ձեզանից ոչ մէկի անձին էլ վնաս
չի լինիլ, բացի այդ նաւիցը:
Հրանգի այս գիշերում երևե- 23
ցաւ ինձ Աստուծոյ հրեշտա-
կըն՝ որին ես եմ, և որին էլ
պաշտում եմ. Եւ ասաց. Մի՛ 24
վախենար, Պօղոս. պէտք է քեզ՝
Կայսեր առջև կանգնիս. և ահա
Աստուած շնորհել է քեզ այդ
բոլոր քեզ հետ նաւողները:
Սորա համար սրտապինդ կա- 25
ցէք, ով մարդիկ. վասնզի հա-
ւատում եմ Աստուծոյն, որ
այսպէս կ'լինի ինչպէս ինձ հետ
խօսեց: Բայց պէտք է մի 26
կղզի ընկնինք:
Երբոր տասնուչորսերորդ գի- 27
շերն եղաւ՝ քանի որ դեռ Ադ-
րիայի անդունդներումն տա-
րուբերվում էին, կէս գիշե-
րումը նաւավարները կարծում
էին՝ թէ մի ցամաքի հասած
լինին: Եւ գնդերը գցելով 28
քսան գիրկ խոր գտան. և մի
քիչ էլ առաջ գնալով էլի գցե-
ցին՝ և տասնուհինգ գիրկ գտան:
Եւ որովհետև վախեցան որ մի 29
գուցէ քարոտ տեղերի մէջ ընկ-
նին. յետի կողմիցը չորս խարիսխ
գցեցին և սպասում էին լուսա-
նալուն: Բայց երբոր նաւա- 30
վարներն ուզում էին՝ որ նաւի-
ցը փախչեն և մակոյկը իջեցրին
ծովը. այն պատճառանքով՝ երբ

կողմանէ զնաբիսխս ձգելոց
31 լցին։ Եւ Պօղոս ցհարիւրա-
պետն և ցզօրականսն. Եթէ ոչ
զոքա մնան ՚ի նաւիս՝ զուք ապ-
32 րել ոչ կարէք։ Յայնժամ զօ-
րականքն հատին զլարս կրին՝ և
33 ՚ի բաց ընկեցին։ Եւ մինչդեռ
այգն կամէր լինել, աղաչէր
Պօղոս զամենեսեան առնուլ կե-
րակուր, ասէ. Այս չորեքտա-
սաներորդ օր է՝ որում ակն
ունիք նօթիս կատարել, և չէ
34 լինէ ճաշակեալ։ Վասն որոյ
աղաչեմ զձեզ՝ ճաշակել կերա-
կուր, զի այն իսկ վասն ձերոյ
փրկութեան է. զի ոչ ուրուք ՚ի
ձէնջ մազ մի ՚ի գլխոյ կորիցէ։
35 Եւ իբրև ասաց զայս, առեալ
հաց՝ գոհացաւ զԱստուծոյ ա-
ռաջի ամենեցուն. երեկ և սկսաւ
36 ուտել։ Եւ քաջալերեցան ամե-
նեքին, և նոքա առին կերա-
37 կուր։ Եւ էաք ամենայն հոգիք
՚ի նաւին՝ երկերիւր եօթանա-
38 սուն և վեց։ Իրբև յագեցան կե-
րակրովն, թեթևացուցին զնաւն՝
թափեալ զցորեանն ՚ի ծովն։

39 Եւ իբրև այգ եղև՝ զերկիրն ոչ
ճանաչէին, բայց զգոգ մի նշմա-
րէին՝ թէ ափն ծովուն իցէ. յոր
խորհէին թէ հնար ինչ իցէ՝
40 զերծուցանել զնաւն։ Եւ զնա-
բիսխն հատեալ՝ ընկեցին ՚ի
ծովն, թողացուցին զնաառնելիս
թևոցն, և ՚ի բաց առին զառա-
գաստն. և ետուն հողմոյն յափն
թէ առջևի կողմիցն էլ պիտի
խարիսխս գցեն. Պօղոսը հա-
31 բիւրապետին և զինուորներին
ասաց. Եթէ զորանք նաւումը
չմնան, զուք չէք կարող ապրիլ։
Այն ժամանակ զինուորները
32 մակոյկի չուաններըն կտրեցին՝ և
նորան դէն գցեցին։ Եւ երբոր
33 ուղում էր առաւօտ լինիլ, Պօ-
ղոսը ամենին աղաչում էր՝ որ
կերակուր առնեն, ասելով.
Այսօր տասնուչորսերորդ օրն
է՝ որ զուք սպասելով՝ անօթի էք
մնացեալ, և մի բան չէք կերել։
Վասն որոյ աղաչում եմ
34 ձեզ որ կերակուր ուտէք, քան-
զի սա ձեր ազատութեան հա-
մար է. վասնզի ձեզանից մէկի
գլխոյը մի մազ չի ընկնիլ։
Եւ սա ասելով, հաց առաւ
35 ամենքի առջև Աստուածանից գո-
հացաւ, կտրեց և սկսեց ուտել։
Եւ ամենքը քաջալերուեցան, և
36 իրանք էլ կերակուր առին։ Եւ
37 նաւի մէջ ամենքս երկու հարիւր
եօթանասուն և վեց հոգի էինք։
Երբոր այն կերակրովը կշտա-
38 ցան, նաւը թեթևացրին՝ և
ցորենը ծովը թափեցին։

Եւ երբոր առաւօտ եղաւ՝ 39
երկիրը չէին ճանաչում, բայց
մի գոգ էին տեսնում՝ որ ծովեղը
էր. և մտածում էին որ եթէ
հնար լինի, նաւն այնտեղ պրը-
ծացնեն։ Եւ խարիսխները վեր 40
առնելով ծովը գցեցին. զեկերի
կապերը թուլացրին. և առա-
գաստը վեր առին՝ քամուն

41 կոյս ծովուն։ Անկեալ ՚ի տեղի
մի երկծով՝ թիւրեցին զնաւն. և
առաջին կողմն նաւին խրեալ՝
անշարժ մնայր, և յետին կողմն
42 քակէր ՚ի բռնութենէն*։ Եւ
զօրականացն խորհուրդ արա-
րեալ՝ զի զկապեալսն սպանցեն,
և մի ոք լուղիցի և փախիցէ։
43 Եւ հարիւրապետն քանզի կամե-
ցաւ ապրեցուցանել զՊօղոս՝
արգել զնոսա ՚ի խորհրդոյն.
հրամայեաց զի որ կարողն իցեն
լուղել՝ անկանիցին նախ, և ՚ի
44 ցամաք ելանիցեն. Եւ զայլն՝
զորս ՚ի տախտակս, և զորս
յայլ ինչ կահ ՚ի նաւէ անտի. և
այսպէս եղև ամենեցուն փրծա-
նել յերկիր։

ԳԼ. ԻԸ.

1 Եւ ապրեալք՝ յայնժամ
գիտացաք թէ Մելիտինէ էր
անուն կղզւոյն. բայց բարբա-
րոսքն շնորհեցին ոչ սակաւ
2 մարդասիրութիւն մեզ։ Վասնզի
լուցին խարոյկ՝ և ընկալան
զամենեսին զմեզ վասն անձրևին
որ ստիպէր՝ և վասն ցրտոյն։
3 Եւ ՚ի ժողովել Պօղոսի խուրձ
ինչ բազում՝ և դնել ՚ի վերայ
խարուկին, իժ մի ՚ի ջերմուն-
41 տուին դէպի ծովի եղբի կողմը։
Եւ մի տեղ ընկան՝ որ երկու
կողմիցը ծով ունէր. և նաւը
նստեցրին. և նաւի առջևի կողմը
խրուած անշարժ մնաց, և
յետի կողմն ալիքների սաստկու-
42 թիւնից քանդվում էր։ Եւ
զինուորները խորհուրդ էին
արել՝ որ կապեալներին սպանեն,
մի գուցէ մէկը լողայ փախչի։
43 Բայց հարիւրապետը կամեցաւ
լավ Պօղոսին ապրեցնել, նո-
ցանց այն խորհրդիցը արգիլեց.
և հրամայեց որ՝ լող տալ կարո-
ղացողներն առաջ ընկնին և
44 դուրս գնան ցամաքը։ Եւ
մնացեալներն էլ որը տախտակ-
ներով և որը նաւի ուրիշ
բաներով. և այնպէս եղաւ որ
ամենքը պրծան դուրս եկան
ցամաքը։

ԳԼ. ԻԸ.

1 Եւ երբոր աղատուեցանք,
այն ժամանակ գիտացինք՝ որ
այն կղզու անունը Մելիտէ էր.
բայց բարբարոսները ոչ սակաւ
մարդասիրութիւն ցոյց տուին
2 մեզ։ Վասնզի կրակ վառեցին
և մեզ ամենքիս ընդունեցին
մեր վերայ եկած անձրևի և
3 սաստիկ ցրտի համար։ Եւ Պօ-
ղոսը՝ երբոր շատ խուրձ էր
հաւաքել և կրակի վերայ էր
դնում, տաքութիւնից մի իժ

*Ի Յայնն, ՚ի բռնութենէ ալեացն

4 նորա։ Եւ իբրև տեսին բար-
բարոսքն կախեալ զգազանն
զձեռանէ նորա, ասէին ցմի-
մեանս. Ուրեմն սպանող է
այրս այս՝ որ թէպէտ և ապրե-
ցաւ 'ի ծովէն, իրաւունքն
5 չետուն կեալ։ Եւ նորա թօ-
թափեալ զգազանն 'ի հուրն,
6 եղև նմա չար և ոչինչ։ Եւ
նոքա ակն ունէին նմա այտնլոյ՝
կամ անկանելոյ՝ և յանկարծակի
մեռանելոյ. իբրև շատ ակն
կալեալ՝ և տեսանէին թէ ոչինչ
վնաս եղև նմա՝ դարձեալ դար-
ձուցեալ զբանսն՝ ասէին թէ
7 աստուած ոմն է։ Եւ շուրջ
զտեղեաւն զայնուիկ էին գիւղք
գլխաւորի կղզւոյն՝ որում՝ անուն
էր Պոպղիոս. որ առ զմեզ յե-
բաշխի զերիս աւուրս՝ և սիրով
8 ընկալաւ։ Եւ եղև հօրն Պոպ-
ղեայ 'ի ջերմն և յախտ թանչից
հիւանդանալ դնել. առ որ
մտեալ Պօղոս և կացեալ յա-
զօթս՝ եդ զձեռն և բժշկեաց
9 զնա։ Եւ իբրև այս եղև, այլ
հիւանդք՝ որ էին 'ի կղզւոջն՝
10 գային և բժշկէին. Որք և բա-
զում՝ պատուովք պատուեցին
զմեզ. և իբրև գնացաք, ետուն
որ ինչ պէտք էին։

11 Եւ յետ երից ամսոց ելաք 'ի
նաւ մի Աղէքսանդրացի՝ որ
ձմերեալ էր 'ի կղզւոջն նշա-
դուրս եկաւ և նորա ձեռիցը
բռնեց։ Եւ երբոր բարբա- 4
րոսնելքը տեսան գազանը նորա
ձեռիցը կախուած, իրար ասում
էին. այս մարդն անպատճառ
մարդասպան է, որ ծովիցը
ազատուելուց յետոյ արդար
իրաւունք չթողեց որ ապրի։
Եւ նա այն գազանը կրակին 5
մէջ թափուաւ. և նորան
ոչինչ վնաս չեղաւ։ Իսկ նո- 6
ռանք սպասում էին, թէ կամ
կ'ուռենայ կամ յանկարծակի մե-
ռած վայր կընկնի. և երբոր
շատ սպասեցին, և տեսան որ
վնաս չեղաւ նորան, իրանց
խօսքը դարձրին, և ասում էին,
թէ Այս մի աստուած է։ Եւ 7
այնտեղի չորս կողմանը կային
այն կղզու գլխաւորի գիւղերը,
որի անունը Պոպղիոս էր. որ
մեզ երեք օր իրան մօտ առաւ
և սիրով ընդունեց։ Եւ եղաւ 8
որ Պոպղիոսի հայրը ջերմով և
թանչքով հիւանդացած պառ-
կած էր. Պօղոսը նորա մօտ
մտաւ՝ և աղօթք արաւ, և ձեռը
նորա վերայ դրաւ, և նորան
բժշկեց։ Եւ երբոր այս եղաւ, 9
ուրիշ հիւանդներն էլ որ այն
կղզումը կային, գալիս էին և
բժշկվում։ Որոնք շատ պա- 10
տուով էլ պատուեցին մեզ. և
երբոր գնացինք. ինչ որ պէտք
էր տուին։

Եւ երեք ամսից յետոյ վերը 11
ելանք մի Աղէքսանդրացի նաւ,
որ ձմեռը այն կղզումն էր անց-

12 նաւորաւ Դիոսկուրացւոց։ Եւ
իջեալ 'ի Սիրակուսա՝ եղաք ա-
13 ւուրս երիս։ Ուստի գնացեալ
հասաք 'ի Ռեգիոն. և յետ
աւուր միոյ 'ի շնչել հարաւոյն,
երկօրեայք եկաք 'ի Պատիողոս։
14 Ուր և գտաք եղբարս աղաչե-
ցեալք 'ի նոցանէ լինել աւուրս
եօթն. և ապա ելաք 'ի Հռովմ։
15 Եւ անտի լուեալ եղբարց զմեզ՝
ելին ընդ առաջ մեր մինչև յոր-
գոստայն Աппիեայ՝ և Երիցն
կրպակաց. զոր տեսեալ Պօղոսի՝
գոհացաւ զԱստուծոյ և քաջա-
լերեցաւ։

16 Եւ իբրև մտաք 'ի Հռովմ,
հրամայեցաւ Պօղոսի լինել ա-
ռանձին հանդերձ զինուորաւն՝
17 պահպանաւ իւրով։ Եւ եղև
յետ երից աւուրց՝ կոչել նմա
զԻրէից գլխաւորս. և իբրև
եկին, ասէ ցնոսա. Ես արք
եղբարք ոչինչ հակառակ գոր-
ծեալ ժողովրդեանն՝ կամ կրօ-
նից հայրենեաց, կապեալ Ե-
րուսաղէմ մատնեցայ 'ի ձեռս
18 Հռովմայեցւոց։ Որք իբրև
դատեցան զիս՝ կամեցան արձա-
կել, վասն և ոչ մի ինչ վնաս
19 մահու գտանելոյ յիս։ 'Ի հա-
կառակել Իրէից՝ հարկ եղև
բողոքել 'ի Կայսր. իբր ոչ ելմէ
զազգէն իմմէ ունէի ինչ չարա-
20 խօսել։ Վասն այսր պատճա-
ռանաց աղաչեցի զձեզ՝ տեսանել
կացրել և Դիոսկուրացոց նշանն
ունէր։ Եւ իջանք Սիրակուսա, 12
և երեք օր այնտեղ մնացինք։
Այնտեղից գնացինք հասանք 13
Ռեգիոն. և մէկ օրից յետոյ
երբոր հարաւի քամին փչեց,
երկրորդ օրը եկանք Պոտիո-
լոս։ Ուր եղբայրներ էլ գը- 14
տանք, որոնք աղաչեցին որ
եօթն օր այնտեղ մնանք. և
այսպէս եկանք Հռովմ։ Եւ երբ 15
որ այնտեղից եղբայրները մեր
մասին լսեցին, մեր առաջը գուրս
եկան մինչև Աппիոսի վաճա-
ռանոցը և Երեք խանութները.
Պօղոսն որ նորանց տեսաւ, Ա-
ստուածանից գոհացաւ և քա-
ջութիւն առաւ։

Եւ երբոր մտանք Հռովմ 16
հարիւրապետը կապեալները զօ-
րապետին յանձնեց. և Պօղոսին
հրաման եղաւ որ իր պահապան
զինուորի հետ առանձին կենայ։
Եւ երեք օրից յետոյ եղաւ 17
որ Պօղոսը Իրէից գլխաւորնե-
րին կանչեց. և երբոր եկան,
նորանց ասաց. Ա՛ռարդիկ եղ-
բարք, ես ժողովրդի կամ հայ-
րենական կրօնքի հակառակ մի
բան չգործած, Երուսաղէմիցը
կապուած մատնուեցայ Հռո-
մայեցոց ձեռքը։ Որոնք ինձ 18
դատելով կամեցան թող տալ,
վասնզի ինձանում մեռնելու
ոչինչ յանցանք չկար։ Բայց 19
երբոր Իրէաները հակառակում
էին, ստիպուեցայ դէպի կայսրը
բողոքել. ոչ թէ իբր իմ աղ-

և խօսել. քանզի վասն յուսոյն
Իսրայէլի կամ 'ի շղթայս
21 յայսոսիկ: Եւ նոքա ասեն
ցնա. Մ'էք ոչ թուղթս ինչ
վասն քո ընկալաք 'ի Հրէաս-
տանէ, և ոչ եկեալ ոք յեղբարց
պատմեաց՝ կամ՝ խօսեցաւ ինչ
22 վասն քո չարութիւն: Բայց
աղաչեմք 'ի քէն լսել՝ թէ զինչ
խորհիցիս. զի վասն հերձուա-
ծոյդ այդորիկ յայտ իսկ է մեզ,
զի ամենայն ուրեք հակառա-
23 կութիւն կրէ: Յամ՝ եղեալ
նմա օր մի, եկին 'ի վանսն առ
նա բազումք. որոց պատմէր
վկայութեամբ զարքայութիւն
Աստուծոյ. և հաւանեցուցանէր
զնոսա վասն Յիսուսի, յօրինացն
Մովսէսի և 'ի մարգարէից՝
24 յայգուէ մինչև ցերեկոյ: Եւ
ոմանք հաւանէին բանիցն, և
25 կէսքն չհաւատային: Եւ ան-
միաբանք լեալ միմեանց՝ ար-
ձակէին, յասելն Պօղոսի բան
մի. թէ Բարւոք խօսեցաւ Հո-
գին Սուրբ 'ի ձեռն Եսայեայ
մարգարէի առ հարսն մեր, Եւ
26 ասէ. Երթ առ ժողովուրդն,
և ասասցես. լսելով լուիջիք՝ և
մի իմասջիք. և տեսանելով
27 տեսջիք՝ և մի տեսջիք: Զի
թանձրացաւ սիրտ ժողովրդեանն
այնորիկ, և ականջօք իւրեանց
ծանր լուան, և զաչս իւրեանց
կափուցին, զի մի երբէք տեսցեն
աչօք, և ականջօք լուիցեն, և
սրտիւք իմասցին՝ և դարձցին,
28 և բժշկեցից զնոսա: Եւ արդ՝
գիցը մի չարախօսելու բան
ունէի: Եւ այս պատճառի հա- 20
մար աղաչեցի ձեզ հիմա որ
տեսնեմ և խօսեմ. վասնզի Իս-
րայէլի յուսոյն համար եմ ես
այս շղթայովս կապուած: Նո- 21
ցանք էլ ասացին նորան. Մենք
քեզ համար Հրէաստանիցը ոչ
թուղթ ենք ստացել և ոչ էլ
եղբայրներից մէկը եկաւ պատմեց
կամ՝ քեզ համար մի չար բան
խօսեց: Բայց կ'բաղձայինք քե- 22
զանից լսել թէ ինչ ես խոր-
հում. որովհետև այդ հեր-
ձուածքի համար մեզ յայտնի է,
որ ամեն տեղ դորա դէմ են
խօսում: Երբոր նորա հետ մէկ 23
օր որոշել էին, շատ մարդիկ
եկան նորա մօտ այն հիւրանոցը,
որոնց Աստուծոյ արքայութիւնը
վկայութիւնով պատմում էր,
և Յիսուսին համար նորանց հա-
մոզում էր Մովսէսի օրէնքիցն և
և մարգարէներիցն առաւօտանց
մինչև իրիկունը: Եւ ոմանք 24
խօսքերին համոզվում էին, իսկ
ոմանք չէին հաւատում: Եւ 25
իրար հետ չմիաբանուած արձա-
կուեցան, երբոր Պօղոսը այս
մէկ խօսքն ասաց. թէ Սուրբը
Հոգին Եսայի մարգարէի ձե-
ռովը մեր հարանց հետ լաւ
խօսեց, Եւ ասաց. Գնա ժո- 26
ղովրդի մօտ և ասա. Դուք
լսելով կ'լսէք և չէք իմանալ.
և տեսնելով կ'տեսնէք և չէք
տեսնել: Վասնզի այս ժողո- 27
վրդի սիրտը թանձրացաւ, և

յայտնի լիցի ձեզ, զի հեթա-
նոսաց առաքեցաւ փրկութիւն
Աստուծոյ. նոքին և լուիցեն:
29 Եւ իբրև զայս ասաց՝ արտաքս
գնացին 'ի նմանէ Հրէայքն.
ոչք ունէին 'ի մէջ ինքեանց
զբաղում խնդիրս:

30 Եւ եղև զերկեամ մի՝ լո-
31 վանդակ իւրով վարձու. Եւ
ընդունէր զամենեսեան որ մտա-
32 նէին առ նա: Քարոզէր զար-
քայութիւնն Աստուծոյ, և ու-
սուցանէր վասն Տեառն Յի-
սուսի Քրիստոսի, անխափան
ամենայն համարձակութեամբ:

նրանց ականջներովը ծանր լսե-
ցին, և նրանց աչքերը խփեցին.
որ մի գուցէ աչքով տեսնեն և
ականջներովը լսեն, և սրտով
իմանան և ետ դառնան, և ես
բժշկեմ նորանց: Եւ հիմա 28
յայտնի լինի ձեզ, որ Աստուծոյ
փրկութիւնն ուղարկուեցաւ հե-
թանոսներին, և նորանք կ'լսեն:
Եւ երբոր նա այս ասաց, 29
Հրէաները դուրս գնացին նո-
րանից. և իրանց մէջ շատ վիճա-
բանութիւն ունէին:

Եւ Պօղոսը ամբողջ երկու 30
տարի, իր վարձքովն այնտեղ
մնաց: Եւ ամեն իրան մօտ 31
եկողներին ընդունում էր. Աս- 32
տուծոյ արքայութիւնը քարո-
զելով, և Տէր Յիսուս Քրիս-
տոսի համար սովորեցնելով,
անխափան ամեն համարձակու-
թեամբ:

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԸՆԴ ՀՌՈՄԱՑՍ

ԳԼՈՒԽ Ա՝

1 ՊՕՂՈՍ ծառայ Յիսուսի
Քրիստոսի, կոչեցեալ
առաքեալ, որոշեալ յաւետա-
2 բանն Աստուծոյ. Որ յառաջ
խոստացաւ ի ձեռն մարգարէից
3 իւրոց գրովք սրբովք, Վասն
Որդւոյ իւրոյ եղելոյ ի զաւակէ
4 Դաւթի ըստ մարմնոյ. Սահ-
մանելոյ Որդւոյն Աստուծոյ
զօրութեամբ ըստ Հոգւոյն սրբ-
րութեան. ի յարութենէ մե-
ռելոց Յիսուսի Քրիստոսի
5 Տեառն մերոյ. Որով ընկալաք
շնորհս և առաքելութիւն՝ ի
հնազանդութիւն հաւատոց յա-
մենայն հեթանոսս վասն ա-
6 նուանն նորա. Յորս և դուք էք
կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի:
7 Ամենեցուն որոց էք ի Հռովմ,
սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց
սրբոց, շնորհք ընդ ձեզ և խա-
ղաղութիւն Աստուծոյ Հօրէ
մերմէ՝ և ի Տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ:

ՊՕՂՈՍ ծառայ Յիսուս 1
Քրիստոսի կանչուած ա-
ռաքեալ՝ Աստուծոյ աւետարանի
Համար որոշուած: Այն որ ա- 2
ռաջուց խոստացաւ իր մար-
գարէների ձեռովը սուրբ գրքե-
րումը, Իր Որդոյ համար, ու 3
մարմնոյ կողմանէ Դաւթի զա-
ւակիցն եղաւ. Եւ Աստուծոյ 4
Որդի սահմանուեցաւ զօրու-
թիւնով՝ սրբութեան Հոգւոյն
կողմանէ՝ մեռելներից յարու-
թիւն առնելուցը, մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի համար: 5
Որով ընդունեցինք շնորհք և
առաքելութիւն՝ հաւատքի հնա-
զանդութեան համար ամէն ազ-
գերի մէջ նորա անուան համար.
Որոնց միջումը դուք էլ Յի- 6
սուսի Քրիստոսի կանչուածներն
էք. Ձեզ ամենիդ՝ որ Հռո- 7
մումն էք՝ Աստուծոյ սիրելիներ-
իդ՝ կանչուած սրբերիդ, շնորհք
լինի ձեզ և խաղաղութիւն
Աստուածանից՝ մեր Հօրից և
Տէր Յիսուս Քրիստոսից:

8 Նախ գոհանամ զԱստուծոյ
իմոյ ի ձեռն Յիսուսի Քրիս-
տոսի վասն ձեր ամենեցուն.
զի հաւատք ձեր պատմեալ են
9 ընդ ամենայն աշխարհ: Վկայ
է ինձ Աստուած, զոր պաշտեմն
հոգւով իմով յաւետարանի
Որդւոյ նորա, թէ որպէս ըստի-
10 շատակ ձեր առնեմ. Յամենայն
ժամ յաղօթս իմ, աղաչելով՝ զի
թերևս երբէք յաջողեսցի ինձ
կամօքն Աստուծոյ գալ առ ձեզ:
11 Քանզի անձկացեալ եմ տե-
սանել զձեզ, զի փոխեցից ի ձեզ
շնորհս ինչ հոգևորս՝ առ ի
12 հաստատել զձեզ. Այսինքն է
միսիթարակից լինել ձեզ վասն
ընդ միմեանց իմոյ և ձերդ
13 հաւատոց: Ո՛չ կամիմ եղբայր-
տգէտք իցէք եղբարք, զի բա-
զում անգամ յօժարեցի գալ
առ ձեզ, և արգելայ մինչև
ցայժմ. զի և ի ձեզ գտից
պտուղ ինչ որպէս և յայլ հե-
14 թանոսս: Քանզի Յունաց և
բարբարոսաց՝ իմաստնոց և ան-
15 մտից պարտապան եմ. Այնպէս՝
որչափ իմով սանն յօժարու-
թեամբ, և ձեզ որ ի Հռովմդ
էք՝ աւետարանել:

16 Օ՛ի ոչ եթէ ամօթ ինչ հա-
մարիմ զաւետարանն. քանզի
զօրութիւն Աստուծոյ է ի
փրկութիւն ամենայն հաւատա-
ցելոց. նախ Հրէի՝ և ապա Հե-

Առաջ՝ գոհանում եմ Աս- 8
տուածանից Յիսուսի Քրիստոսի
ձեռովը ձեր ամենքի համար.
որ ձեր հաւատքը բոլոր աշ-
խարհքի մէջ պատմվում է:
Քանզի Աստուած ինձ վկայ 9
է, որին ես պաշտում եմ իմ
հոգովը նորա Որդոյ աւետա-
րանումը, թէ ինչպէս անդադար
ձեզ յիշում եմ: Ամեն ժա- 10
մանակ իմ աղօթքներումն ա-
ղաչելով՝ որ լինի թէ մի անգամ
յաջողուի ինձ՝ Աստուծոյ կամ-
քովը ձեզ մօտ գալ: Քանզի 11
շատ ցանկանում եմ ձեզ տես-
նել, որ մի հոգևոր շնորհք
հաղորդեմ ձեզ ձեր հաստա-
տուելու համար. Այսինքն՝ որ 12
ձեզ հետ միսիթարուիմ մեր փո-
խադարձ, այսինքն իմ և ձեր
հաւատքի միջոցաւ: Եղբարք: 13
չեմ կամենում որ դուք չգիտե-
նաք, թէ շատ անգամ միտք
դրի որ ձեզ մօտ գամ, (Ընդ մ-
մինչև հիմա արգիլուեցայ.) որ
ձեր միջումն էլ պտուղ ունե-
նամ ինչպէս և ուրիշ հեթա-
նոսների մէջ: Քանզի ես Յու- 14
նաց և Բարբարոսաց, իմաս-
տուններին և անմիտներին պար-
տական եմ: Այնպէս՝ իմովսանն 15
յօժար եմ՝ ձեզ էլ, որ Հռոմումն
էք՝ աւետարանը քարոզել:
Քանզի ես Քրիստոսի աւե- 16
տարանը ամօթ չեմ համա-
րում. որովհետև Աստուծոյ
զօրութիւն է փրկելու համար
ամեն հաւատացողին, առաջ

17 Թանոսի։ Զի արդարութիւնն
Աստուծոյ նովաւ յայտնի ՝ի
հաւատոց ՝ի հաւատս. որպէս
և գրեալ է, թէ Արդարն ՝ի
հաւատոց կեցցէ։

18 Հանգն յայտնելոց է բար-
կութիւնն Աստուծոյ յերկնից
՝ի վերայ ամենայն ամբարշտու-
թեան և անիրաւութեան մարդ-
կան, որք զճշմարտութիւնն
19 անիրաւութեամբ ունին. Վասն
զի գիտութիւնն Աստուծոյ յայ-
տնի է ՝ի նոսա. քանզի Աստու-
20 ած իսկ յայտնեաց նոցա։ Զի
անտեսանելիք նորա ՝ի սկզբանէ
աշխարհի՝ արարածովքս իմա-
ցեալ տեսանին. այսինքն է՝
մշտնջենաւորութիւն և զօրու-
թիւն և աստուածութիւն նորա.
զի ոչ գտանիցեն ամենևին տալ
21 պատասխանի։ Զի ծանեան
զԱստուած, և ոչ իբրև զԱս-
տուած փառաւորեցին՝ կամ գո-
հացան. այլ նանրացան ՝ի խոր-
հուրդս իւրեանց, և խաւարե-
ցան անմտութեամբ սիրտք նո-
22 ցա։ Զանձինս առ իմաստունս
23 ունէին՝ յիմարեցան։ Եւ փո-
խեցին զփառս անեղծին Աստու-
ծոյ՝ ՝ի նմանութիւն պատկերի
եղծանելի մարդոյ և թռչնոց
և չորքոտանեաց և սողնոց։
24 Վասն որոյ մատնեաց զնոսա
Աստուած ՝ի ցանկութիւն սրտից
նոցա ՝ի պղծութիւն. անարգել
զմարմինս իւրեանց յանձինս.
25 Որք փոխանակեցին զճշմարտու-

Երէսյին՝ և յետոյ Յոյնին։
Հանգն Աստուծոյ արդարու- 17
թիւնը նորանով յայտնվում
է՝ հաւատքից հաւատքի մէջ.
ինչպէս գրուած է, թէ Արդարը
հաւատքից կ'ապրի։

Հանգն Աստուծոյ բարկու- 18
թիւնն երկնքիցը յայտնվում է
մարդկանց ամեն ամբարշտու-
թեան և անիրաւութեան վե-
րայ, որ ճշմարտութիւնն անի-
րաւութիւնով բռնում են։
Վասնզի Աստուծոյ գիտելիքը 19
յայտնի է նորանցում. որով-
հետև Աստուած յայտնեց նո-
րանց։ Հանգն նորա անտեսանելիք 20
Բանէրը աշխարհի սկզբից
ստեղծուածներովն իմացուելով
տեսնվում են, որ է նորա
մշտնջենաւոր զօրութիւնն և Ա-
ստուածութիւնն, այնպէս որ ան-
պատասխան մնան։ Հանգն Ա- 21
ստուծոյն ճանաչելով, նորան
Աստուծոյ պէս չփառաւորեցին՝
կամ շնորհակալ չեղան. այլ
իրանց մտածմունքներումն ու-
նայնացան և նորանց անմիտ
սրտերը խաւարուեցան։ Ասե- 22
լով թէ իմաստուն են՝ յիմարե-
ցան. Եւ անեղծ Աստուծոյ 23
փառքը փոխեցին եղծանելի մար-
դու և թռչունների և չորսոտա-
նիների և սողունների պատկերի
նմանութեան հետ։ Այդպէս հա- 24
մար Աստուած էլ նորանց մատ-
նեց իրանց սրտերի ցանկութեան
մէջ՝ պղծութեան համար, որ
խայտառակեն իրանց մարմին-

թիւն Աստուծոյ ընդ ստու-
թեան. հնազանդեցան և պաշ-
տեցին զարարածս, և ոչ զԱրա-
րիչն. որ է օրհնեալ յաւի-
26 տեանս. ամէն։ Վասն այնորիկ
մատնեաց զնոսա Աստուած ՝ի
կարիս անարգութեան. զի էգք
նոցա փոխանակեցին զպէտս
բնականս ՝ի պէտս անբնականս։
27 Այսպէս և արուացն թողեալ
զբնական պէտս իգութեանն,
բորբոքեցան ցանկութեամբք
իւրեանց ՝ի միմեանս. արուք
ընդ արուս զխայտառակութիւն
գործէին, և զդարձ փոխարինին
որ պարտ էր մոլորութեան նո-
ցա՝ յանձինս իւրեանց ընդու-
28 նէին։ Եւ որպէս զի ոչ ընտ-
րեցին զԱստուած ունել ՝ի
գիտութեան, մատնեաց զնոսա
Աստուած ՝ի միտս անարգու-
թեան՝ գործել զանարժանս.
29 Զլցեալսն ամենայն անիրաւու-
թեամբ, պոռնկութեամբ, ան-
զգամութեամբ, ագահութեամբ,
չարութեամբ, լի նախանձու,
սպանութեամբ, հերիւ, նեն-
գութեամբ, չարաբարութեամբ,
30 շոգմոգք. Ղարախօսք, աստու-
ածատեացք, թշնամանողք, ամ-
բարտաւանք, ամբարհաւաճք,
գտիչք չարեաց, զծնօղս ա-
31 նարգուք. Անմիտք, ուխտա-
դրուժք, անագորոյնք, ան-
32 նուէրք, անողորմք։ Այք հա-
սեալ էին զԱստուծոյ իրաւանցն
վերայ, եթէ որք զայսպիսիսն
գործեն՝ արժանի են մահու. և

ներն իրանց անձերումը։ Ո- 25
րոնք Աստուծոյ ճշմարտութիւնը
ստութեան հետ փոխեցին.
և երկրպագեցին և պաշտեցին
ստեղծուածներին քան թէ ըն-
տեղծողին. որ օրհնեալ է ՝ի
յաւիտեանս. ամէն։ Այդպա հա- 26
մար Աստուած մատնեց նորանց
խայտառակ ցանկութիւնների.
և նորանց էգերը բնական գոր-
ծածութիւնը փոխեցին անբնա-
կան գործածութեանն հետ։ Այն- 27
պէս էլ արուները կնոջ բնա-
կան գործածութիւնը թողելով,
իրանց ցանկութիւններովն իրար
հետ բորբոքուեցան. արուներն
արուների հետ խայտառակու-
թիւն էին գործում, և այն փո-
խարէնը՝ որ արժան էր իրանց
մոլորութեանն՝ իրանց անձնե-
րումը ընդունում էին։ Եւ 28
ինչպէս որ չընտրեցին՝ Աստու-
ծոյն ունենալ իրանց գիտու-
թեան մէջ, Աստուած մատնեց
նորանց անարգ մտքի որ անար-
ժան բաներ գործեն. Որոնք 29
լցուած են ամեն անիրաւու-
թիւնով, պոռնկութիւնով, ան-
զգամութիւնով, ագահութիւ-
նով, չարութիւնով, լիքն նա-
խանձով, մարդասպանութիւ-
նով, կռուով, նենգութիւնով,
չարաբարութիւնով. Խուսներ, 30
բամբասողներ, Աստուածատող-
ներ, թշնամանողներ, ամբար-
տաւաններ, գոռոզներ, չար
բաներ հնարողներ, ծնողների
անհնազանդներ. Անմիտներ, 31

ո՛չ* միայն որ զայն առնեն, այլ և որ կամակիցն՝ լինին գործելեացն։

ԳԼ. Բ

1 Վա՜ն որոյ առանց պատասխանի տալոյ ես ո՛վ մարդ՝ որ դատիդ. զի որով դատիս զընկերն, զանձն քո դատապարտես, զի դու զնոյն գործես՝ որով դատիսն։

2 Քանզի գիտեմք, եթէ Աստուծոյ դատաստանն ճշմարտութեամբ է ի վերայ այնոցիկ՝ որ
3 զայնպիսիսն գործեն։ Իսկ արդ՝ խորհիցիս զայս, ո՛վ մարդ, որ դատիս զայնոսիկ՝ որ զայնպիսիսն գործեն՝ և դու զնոյնն գործես, եթէ դու ապրելոց իցես ի դատաստանաց անտի Աստուծոյ։
4 Եթէ զմեծութեամբ քաղցրութեան նորա, և զներելովն և զերկայնմտութեամբն արհամարհիցես. չգիտիցիս զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ
5 յապաշխարութիւն ածէ։ Այլ ըստ խստութեան քում, և ըստ անզեղջ սրտի՝ դանձես անձին ուխտադրուժներ, անդութներ, անհաշտներ, անողորմներ. Որ 32
Աստուծոյ իրաւունքներդ հասկանալով՝ թէ այսպիսի բաներ գործողներդ մահի արժանի են, ոչ թէ միայն այս բաներն առնում են, այլ գործողներին էլ կամակից են լինում։

ԳԼ. Բ

Նորա համար առանց պա- 1
տասխան տալու ես՝ ո՛վ մարդ՝ ով որ էլ լինիս, որ դատում ես. քանզի ինչով որ ուրիշին դատում ես, քեզ ես դատապարտում. քանզի դու նոյնն ես գործում որ ինքդ դատում ես։
Այց գիտենք որ Աստուծոյ 2
դատաստանը ճշմարտութեամբ է նորանց վերայ, որ այսպիսի
բաներ են գործում. Իսկ, ով 3
մարդ, որ դատում ես այսպիսի բաներ գործողներին, և որ դու նոյնն ես գործում, միթէ կարծում ես՝ թէ դու կ'պրծնիս
Աստուծոյ դատաստանից։ Կամ 4
թէ նորա քաղցրութեան առատութիւնը և համբերութիւնը և երկայնմտութիւնը արհամարհում ես. չգիտենալով որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ ապաշխարութեան է տանում։
Այց դու քո խստութիւնովն և 5
անզեղջ սրտովը բարկութիւն ես

* Ի Յունն. միայն զայն առնեն՝ այլ և կամակից

քում բարկութիւն՝ յաւուր բարկութեան և յայտնութեան արդար դատաւորութեանն Աս-
6 տուծոյ. Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց։
7 Որ համբերութեամբ են ի գործս բարութեան՝ զփառս և զպատիւ և զանեղծութիւն խնդրեն, զկեանսն յաւիտենից։
8 Իսկ որ ի հակառակութենէ անտի են և ապստամբք ի ճրշմարտութենէն՝ և զկետ երթեալ զանիրաւութեան, բարկութիւն և սրտմտութիւն։
9 Նեղութիւն և անձկութիւն ի վերայ ամենայն մարդոյ՝ որ գործէ զչար. նախ Հրէի՝ և
10 ապա Հելլենոսի։ Փառք պատիւ և խաղաղութիւն ամենայնի՝ որ գործէ զբարի. նախ Հրէի՝
11 և ապա Հելլենոսի։ Զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ։
12 Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան, արտաքոյ օրինացն կորնչին. և որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն և դատեսցին։
13 Զի ո՛չ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ առնելիք օրի-
14 նացն արդարասցին։ Այլ յորժամ հեթանոսք՝ որ զօրէնս ո՛չ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօրէնս ո՛չ ունին՝ անձանց իւրեանց իսկ են
15 օրէնք. Որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց՝ վկայութեամբ մտաց իւրեանց կիսում քո անձի համար՝ բարկութեան և այն Աստուծոյ արդար դատաստանի յայտնութեան
6 օրումը, Որ ամեն մէկին իր գործքերի պէս հատուցումը
7 կ'տայ. Նորանց, որ բարի գործերի մէջ են յարատևում, և փառք ու պատիւ և անապականութիւն են որոնում, յաւիտենական կեանք։
8 Բայց նորանց՝ որ հակառակութիւնից են՝ և ճշմարտութեանն անհնազանդ և անիրաւութեան ետևից գնացած, բարկութիւն և սրտմտու-
9 թիւն։ Նեղութիւն և տառապանք այն ամեն մարդու վերայ՝ որ չարութիւն է գործում. առաջ Հրէայի՝ և յետոյ Յունի։
10 Իսկ փառք և պատիւ և խաղաղութիւն ամեն բարի գործողին. առաջ Հրէային՝ և յետոյ Յունին։
11 Քանզի Աստուծոյ մօտ երեսպաշտութիւն չկայ։
12 Քանզի նորանք որ առանց օրէնքի մեղք գործեցին, առանց օրէնքի էլ կ'կորչին. և նորանք՝ որ օրէնքի տակ մեղք գործեցին,
13 օրէնքով կ'դատուին։ (Քանզի ոչ թէ օրէնքը լսողներն են Աստուծոյ առջև արդար, այլ
14 օրէնքի կատարողները կ'արդարանան։ Ուրեմն երբոր հեթանոսներն՝ որ օրէնք չունին՝ բնութեամբ օրէնքի գործքերն անեն,
15 սորանք թէև օրէնք չունին իրանք են իրանց համար օրէնք։ Որոնք ցոյց են տալիս թէ օրէնքի գործքը նորանց սրտե-

եանց, *և յանդիմանել զմիմեանս
'ի խորհրդոց՝՝ իւրեանց, կամ
թէ պատասխանի իսկ տալ.
16 Յաւուրն՝ յորում դատիցի Աս-
տուած զգաղտնիս մարդկան՝ ըստ
աւետարանիս իմոյ, 'ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի:

17 Այլ եթէ դու Հրէայ ա-
նուանեալ ես, և յենեալ ես
յօրէնսն՝ և պարծիս Աստուած,
18 Եւ գիտես զկամս նորա, և
ընտրես զլաւն, և խրատեալ ես
19 յօրինացն. Վստահ ես յանձն
քո առաջնորդ լինել կուրաց՝
20 լոյս խաւարելոց՝ Խրատիչ
անզգամաց՝ վարդապետ տղայոց.
ունել զկերպարանս գիտութեան
և ճշմարտութեան օրինացն:
21 Իսկ արդ որ ուսուցանես զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես.
որ քարոզես չգողանալ՝ գողա-
22 նաս. Որ ասես չշնալ՝ շնաս. որ
գարշես 'ի մեհենաց՝ զսեղանս
23 կողոպտես. Որ օրինօքն պարծիս՝
յանցանել ընդ օրէնսն զԱստու-
24 ած անարգես: Զի անուն Աս-
տուծոյ վասն ձեր հայհոյի 'ի
մէջ հեթանոսաց՝ որպէս և
գրեալ է:

* 'Ի Յոյն, յանդիմանել զմիմեանս խորհրդոց

բուն գրուած է՝ նորանց
խղճմտանքի վկայութիւնովը, և
իրանց խորհուրդների իրար
յանդիմանելովը, կամ թէ պա-
տասխան տալովը.) Այն օրն՝ 16
որ Աստուած մարդկանց ծածուկ
բաները կ'դատէ՝ իմ աւետա-
րանի համեմատ Յիսուսի Քրիս-
տոսի ձեռովը:

Ահա դու Հրէայ ես ա- 17
նուանվում, և կութենում ես
օրէնքի վերայ, և պարծենում
ես Աստուծով: Եւ նորա կամքը 18
գիտես, և զանազանում ես
տարբեր բաները օրէնքիցը խրա-
տուած լինելով, Եւ քո անձի 19
վերայ վստահութիւն ունիս՝ որ
կոյրերի առաջնորդ ես. և խա-
ւարեալների լոյս. Անմիտների 20
խրատիչ, տղաների վարդապետ.
որ օրէնքի գիտութեան և ճըշ-
մարտութեան կերպարանքն ու-
նիս օրէնքումը: Ուրեմն դու՝ 21
որ ուրիշին սովորեցնում ես
քո անձին չես սովորեցնում.
դու որ քարոզում ես՝ չգողա-
նալ, գողանում ես: Որ ա- 22
սում ես՝ շնութիւն չգործել՝
շնութիւն ես գործում. դու՝ որ
կռքերիցը գարշում ես՝ սրբապղ-
ծութիւն ես անում: Դու՝ որ 23
օրէնքովը պարծենում ես, օրէն-
քին դէմ գործելով Աստուծոյն
անարգում ես: Քանզի Աս- 24
տուծոյ անունը ձեր պատճա-
ռովը հայհոյվում է հեթա-

25 Թլփատութիւն օգնէ եթէ
զօրէնսն պահիցես. ապա եթէ
յանցաւոր օրինացն իցես,
թլփատութիւն քո անթլփա-
26 տութիւն եղև: Իսկ եթէ ան-
թլփատութիւնն զկրաւունս օրի-
նացն պահիցէ. ոչ ապաքէն
անթլփատութիւն նորա 'ի թլ-
27 փատութիւն համարեսցի. Եւ
դատիցի որ 'ի բնէ անթլփատու-
թիւն է՝ զօրէնսն կատարելով,
զքեզ որ գրովն և թլփատու-
թեամբն յանցաւոր օրինացն
28 իցես: Զի ոչ եթէ որ յայտնի
Հրէայն է, և ոչ որ յայտնի
29 մարմնով թլփատութիւն. Այլ
որ 'ի ծածուկ Հրէայն է, և
թլփատութիւն սրտի, հոգւով՝
և ոչ գրով. որոյ գովութիւնն
ոչ 'ի մարդկանէ է, այլ յԱս-
տուծոյ:

ԳԼ. Գ

1 Իսկ արդ՝ զի՞նչ աւելի է
Հրէին, կամ զի՞նչ օգուտ 'ի
2 թլփատութենէ անտի: Ա-
զում ինչ ամենայն իրօք. նախ
այն իսկ՝ զի հաւատարիմ եղեն
3 պատգամքն Աստուծոյ: Իսկ
արդ՝ եթէ չէր հաւատացեալ
ոմանց՝ միթէ անհաւատութիւն
նոցա զԱստուծոյ հաւատն խա-
4 փանէր. քա՛ւ լիցի: Արդ եղիցի
Աստուած ճշմարիտ, և ամենայն

նոսների մէջ, ինչպէս և գրը-
ուած է:

Արդ թլփատութիւնը շահա- 25
ւոր է՝ թէ որ օրէնքը պահող
ես. ապա եթէ օրէնքի դէմ
յանցաւոր ես, քո թլփատու-
թիւնն անթլփատութիւն եղաւ:
Այլ թէ որ անթլփատութիւնն 26
օրէնքի իրաւունքները պահէ,
չէ՞ որ նորա անթլփատութիւնը՝
թլփատութիւն կ'համարուի:
Եւ 'ի բնէ անթլփատութիւնը՝ 27
օրէնքը կատարելով կ'դատէ քեզ,
որ գրով և թլփատութիւնով
օրէնքի դէմ յանցաւոր ես:
Քանզի նա չէ Հրէայ՝ որ դրսի 28
երևոյթով է, և այն չէ թլփա-
տութիւնն՝ որ մարմնով դրսի
երևոյթով է. Այլ նա՝ որ 29
ծածուկ Հրէայ է, և սրտի թլ-
փատութիւնը հոգով՝ և ոչ թէ
գրով. որի գովասանքը ոչ թէ
մարդկանցից է, այլ Աստուա-
ծանից:

ԳԼ. Գ

Արդ ի՞նչ է Հրէի առաւե- 1
լութիւնը, կամ ի՞նչ է թլփա-
տութեան օգուտը: Հաս, ա- 2
մեն կերպով. առաջ հէնց նա որ
Աստուծոյ պատգամները նորանց
հաւատացուեցան: Այլ ի՞նչ. 3
եթէ ոմանք չհաւատացին, մի-
թէ նորանց անհաւատութիւնն
Աստուծոյ հաւատքը կ'խափանէ.
քաւ լիցի: Արդ թող Աստուած 4
ճշմարիտ լինի, իսկ ամեն մարդ

մարդ սուտ՝ որպէս և գրեալ է. Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և յաղթեսցես 'ի դատել
5 քեզ. Իսկ արդ՝ եթէ անիրաւութիւն մեր զԱստուծոյ արդարութիւն յանդիման կացուցանէ՝ զի՞նչ ասեմք. միթէ անի՞րաւ ինչ է Աստուած՝ որ ածէ
6 զբարկութիւն. Ա՛ստ մարդկութեան ասեմ, քա՜ւ լիցի. ապա թէ ոչ՝ զիա՞րդ դատի Աստուած
7 զաշխարհս: Այլ եթէ ճշմարտութիւն Աստուծոյ յիմում ստութեանն առաւելաւ 'ի փառս նորա, զի՞ ևս ես իբրև զմեղաւոր
8 դատիմ: Եւ կամ թէ՝ որպէս հայհոյիմքն, և որպէս ասեն զմէնջ ոմանք ասել, թէ Արասցուք զչար՝ զի եկեսցէ բարի. որոց դատաստանքն յիրաւի են:

9 Եւ արդ՝ ի՞նչ իւիք առաւել իցեմք. ապաքէն և ո՛չ իւիք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր եղեաք Հրէից և հեթանոսաց՝ ամենեցուն ընդ մեղաք
10 լինելոյ: Որպէս և գրեալ է. թէ Ոչ՞ք է արդար՝ և ո՛չ մի.
11 Եւ ո՛չ գոյ որ իմանայ, և ո՛չ՞ք
12 է որ խնդրէ զԱստուած: Ամենեքեան խոտորեցան 'ի միասին և անպիտանացան. ո՛չ՞ք է որ առնէ զքաղցրութիւն, և ո՛չ՞ք է
13 մինչև 'ի մի: Գերեզման բաց է կոկորդ նոցա, լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն. թոյնք իժից
14 'ի ներքոյ շրթանց նոցա: Որոց սուտ. ինչպէս գրուած է, Որ արդար լինիս քո խօսքերումը, և յաղթես քո դատուելումը, Այլ եթէ մեր անիրաւութիւնն Աստուծոյ արդարութիւնը յայտնի երևացնում է, ի՞նչ ասենք. միթէ անի՞րաւ է Աստուած, որ բարկութիւնը բերում է: Ա՛ստ մարդու կերպով եմ ասում, քա՜ւ լիցի. ապա Աստուած ի՞նչպէս կ'դատէ աշխարհքը: Զանգի եթէ Աստուծոյ ճշմարտութիւնն իմ սըտութիւնովն աւելացաւ նորա փառքի համար, էլ ինչո՞ւ եմ ես մեղաւորի պէս դատվում: Եւ ինչո՞ւ համար այնպէս չանենք՝ ինչպէս հայհոյվում ենք, և ինչպէս ոմանք ասում են մեզ համար, թէ ասում լինինք, թէ Չար գործենք՝ որ բարին գայ. որոնց դատաստանը արդար է:

Եւ հիմա ի՞նչ. աւելի՞ ենք. ամենևին ոչ. քանզի առաջ մեղադրեցինք Հրէաներին և հեթանոսներին, թէ ամենքը մեղքի տակ են. Ինչպէս որ գրուած է, թէ Արդար չկայ՝ մէկն էլ չկայ: Չկայ իմացող, չկայ Աստուծոյն խնդրող, Ամենքը խոտորեցան, միասին անպիտան եղան. չկայ քաղցրութիւն առնող, մինչև մէկն էլ չկայ: Նորանց կոկորդը բաց գերեզման է, և իրանց լեզուներովը նենգութիւն են անում. իժերի թոյն կայ նորանց շրթանց տակ: Որոնց բերանը անէծքով և դառնութեամբ լի են: Երագ են ոտք նոցա հեղուլ դարիւն: Ռեկումն և թշուառութիւն 'ի ճանապարհս նոցա. Եւ զճանապարհն խաղաղութեան ո՛չ ծանեան: Ո՛չ է երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա:

Այլ գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն ասեն՝ այնոցիկ որ ընդ օրինաւքն են՝ ասեն. զի ամենայն բերան խցցի, և գատապարտ լիցի ամենայն աշխարհ Աստուծոյ: Զանգի 'ի գործոց օրինաց ո՛չ արդարասցի ամենայն մարմին առաջի նորա. քանզի օրինաւքն է գիտութիւն մեղաց:

Այլ արդ՝ առանց օրինացն իսկ արդարութիւն Աստուծոյ յայտնեալ է՝ վկայեալ յօրինաց անտի և 'ի մարգարէից: Զանգի արդարութիւն Աստուծոյ 'ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի յամենայն հաւատացեալս. և ոչինչ է խտիր: Զանգի ամենեքեան մեղան. և նուազեալ են 'ի փառաց անտի Աստուծոյ: Եւ արդարանան ձրի նորին շնորհօք 'ի ձեռն փրկութեան որ 'ի Քրիստոս Յիսուս. Զոր յառաջեդ Աստուած 'ի քաւութիւն 'ի ձեռն հաւատոց արեամբն նորա, 'ի հանդէս արդարութեան նորա՝ վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց, 'Ի ներելն Աստուծոյ, 'ի հանդէս արդարութեան նորա 'ի ժամանակի դառնութիւնով լիքն է: Որոնց ոտները շուտագնաց են արիւն թափելու համար: Կործանում և թշուառութիւն է նորանց ճանապարհներումը: Եւ խաղաղութեան ճանապարհը չըճանաչեցին: Աստուծոյ երկիւղը նորանց աչքերի առջև չէ:

Այլ գիտենք, թէ ամեն ինչ որ օրէնքն ասում է, նորանց է ասում, որ օրէնքի տակ են. որ ամեն բերան խփուի, և բոլոր աշխարհքը Աստուծոյ առջև դատապարտ լինի: Որովհետև օրէնքի գործքերիցը ոչ մի մարմին չի արդարանալ նորա առջև. որովհետև օրէնքովը լինում է մեղքի գիտութիւն:

Այլ հիմա առանց օրէնքի Աստուծոյ արդարութիւնը յայտնուած է, օրէնքից և մարգարէներից վկայուած լինելով. Եւ Աստուծոյ արդարութիւնը Յիսուսի Քրիստոսի հաւատքիցն է այն ամենի համար և ամենի վերայ, որ հաւատում են. քանզի խտրութիւն չկայ: Զանգի ամենքը մեղանչեցին, և Աստուծոյ փառքիցը պակասուած են. Զրի են արդարանում նորա շնորհքովը՝ այն փրկութեան ձեռովը՝ որ Յիսուս Քրիստոսումն է: Որին Աստուած առաջուց սահմանեց քաւութիւն լինելու համար հաւատալով նորա արիւնովը, որ իր արդարութիւնը ցոյց տայ՝ այն առաջուց գործուած մեղքե-

յայսմիկ. զի եղիցի նա արդար,
և արդարացուսցէ զայն՝ որ 'ի
27 հաւատոցն Յիսուսի։ Իսկ արդ՝
ո՞ւր են պարծանքն. արգելան.
յորո՞ց օրինաց, 'ի գործոց անտի,
ո՞չ. այլ 'ի հաւատոցն օրինաց։
28 Զանգի համարիմք հաւատովք
արդարանալ մարդոյ՝ առանց
29 գործոց օրինացն։ Եթէ Հրէից
միայն իցէ Աստուա՞ծ և հեթա-
նոսաց ո՞չ. այո՛ և հեթանոսաց։
30 Զի եթէ մի է Աստուա՞ծ՝ որ
արդարացուցանէ զթլփատու-
թիւնն 'ի հաւատոց, ապա և
զանթլփատութիւնն նովին հա-
31 ւատովքն։ Արդ՝ զօրէնսն ինչ
խափանեմք հաւատովքս. քա-
ւլեցի. այլ զօրէնսն հաստատեմք։

ԳԼ. Դ

1 Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք
զգտանելն Աբրահամու նահա-
պետին մերոյ ըստ մարմնոյ։
2 Զի եթէ Աբրահամու գործովք
էր արդարացեալ՝ ունէլ ունէր
պարծանս՝ այլ ո՛չ առ Աստուա՞ծ։
3 Իսկ զի՞նչ ասիցէ գիրս. Հաւա-
տաց Աբրահամ զԱստուա՞ծ՝ և
համարեցաւ նմա յարդարու-
4 թիւն։ Բայց այնմ՝ որ գործի-
ցէն, ո՛չ համարին վարձքն ըստ
բի թոյլտուութեան համար՝ Աս-
տուծոյ ներելու ժամանակին։
Որ իր արդարութիւնը երևացնէ 26
այս ժամանակումը. որ ինքն
լինի արդար և արդարացնող
նորան՝ որ Յիսուսի հաւատ-
քէն է. Հիմա ո՞ւր է պար- 27
ծանքը. խափանուեցաւ. ո՞ր օ-
րէնքով, գործքերի՞ օրէնքով.
ոչ, այլ հաւատքի օրէնքովը։
Ուրեմն համարում ենք, որ 28
մարդն հաւատքով է արդարա-
նում առանց օրէնքի գործքերի։
Մի՞թէ Աստուա՞ծ միայն Հրէ- 29
աներինն է, և հեթանոսներին
էլ չէ. այո, հեթանոսներին
էլ է։ Որովհետև մէկ Աս- 30
տուա՞ծ է՝ որ արդարացնում է
թլփատութիւնն հաւատքից, և
անթլփատութիւնն նոյն հա-
ւատքովը։ Արդ մի՞թէ օրէնքը 31
խափանում ենք հաւատքովը.
քաւլեցի. այլ օրէնքը հաստա-
տում ենք։

ԳԼ. Դ

Արդ ի՞նչ ասենք, թէ մեր 1
հայրը Աբրահամ գտաւ մարմնոյ
կողմանէ։ Զանգի եթէ Աբրա- 2
համը գործքերով արդարացած
լինէր՝ պարծանք կ'ունենար.
բայց ոչ թէ Աստուծոյ առջև։
Զանգի գիրքն ի՞նչ է ասում. 3
Աբրահամն հաւատաց Աստու-
ծոյն, և արդարութիւն համա-
րուեցաւ նորան։ Բայց նորան՝ 4
որ գործք է անում, վարձքը

շնորհաց՝ այլ ըստ պարտեաց։
5 Իսկ այնմ՝ որ ոչն գործիցէ՝ բայց
հաւատայցէ յայն, որ արդա-
րացուցանէ զամբարիշտսն, հա-
մարին հաւատք նորա յարդա-
6 րութիւն։ Որպէս և Դաւիթ
ասէ զերանութիւն մարդոյ՝
որում Աստուա՞ծ համարի ար-
դարութիւն առանց գործոց։
7 Երանի՛ որոց թողան անօրէնու-
թիւնք, և որոց ծածկեցան մեղք
8 իւրեանց։ Երանեալ է այր՝
որում ո՛չ համարեսցի Տէր
9 զմեղս նորա։ Արդ՝ երանու-
թիւնս այս 'ի վերայ թլփատու-
թեա՞ն է, եթէ 'ի վերայ
անթլփատութեան. քանզի ա-
սեմք՝ եթէ համարեցան Աբրա-
համու հաւատքն յարդարու-
10 թիւն։ Արդ զի՞արդ համարե-
ցան. մինչդեռ 'ի թլփատու-
թեա՞ն էր՝ եթէ յանթլփատու-
թեան. ո՛չ 'ի թլփատութեանն,
11 այլ յանթլփատութեան։ Եւ
նշանակ առ զթլփատութիւնն
կնիք արդարութեան հաւատոցն՝
որ յանթլփատութենէ անտի.
զի եղիցի նա հայր ամենայն՝
հաւատացելոց որ յանթլփա-
տութենէ անտի իցեն, առ 'ի
համարելոյ և նոցա արդարու-
12 թիւն. Եւ հայր թլփատու-
թեան՝ որոց ո՛չ 'ի թլփա-
թենէ անտի և եթէ, այլ և որոց
երթայցեն ընդ հետս անթլփա-
տութեան հաւատոց հօր մերոյ
Աբրահամու։

չէ համարվում շնորհքի պէս,
այլ պարտքի պէս։ Բայց նո- 5
րան՝ որ գործք չէ անում, այլ
հաւատում է նորան, որ ամբա-
րիշտին արդարացնում է, նորա
հաւատքը համարվում է ար- 6
դարութիւն։ Ինչպէս որ Դա-
ւիթն էլ այն մարդու երանու-
թիւնն է ասում, որին Աստուած
արդարութիւն է համարում ա-
ռանց գործքերի։ Երանի նո- 7
րանց՝ որոնց անօրէնութիւնները
թողուան, և որոնց մեղքերը
ծածկուեցան։ Երանի է այն 8
մարդուն, որին Տէրը մեղք չի
համարիլ։ Արդ այս երանու- 9
թիւնը՝ թլփատութեան վերայ
է՝ կամ թէ անթլփատութեան
վերայ էլ է. քանզի ասում
ենք՝ թէ Աբրահամին հաւատքն
արդարութիւն համարուեցաւ։
Արդ ի՞նչպէս համարուեցաւ. 10
երբոր թլփատութիւնո՞ւմ էր՝
թէ անթլփատութիւնում, այլ
անթլփատութիւնում։ Եւ թլ- 11
փատութեան նշանն առաւ նէրքո՝
արդարութեան կնիք այն հա-
ւատքի որ անթլփատութիւնումն
էր, որ նա հայր լինի այն ամեն
հաւատացեալների՝ որ անթլփա-
տութիւնից են՝ որ նորանց էլ
համարուի արդարութիւնը։ Եւ 12
թլփատութեան հայր համարո՝
ոչ միայն նորանց՝ որ թլփա-
տութիւնից են, այլ նորանց
էլ՝ որ այն հաւատքի հետքովն են
գնում, որ մեր հայր Աբրահամն
անթլփատութիւնումն ունէր։

13 Օվ ոչ եթէ օրինօքն են աւետիքն Աբրահամու՝ և զաւակի նորա՝ ժառանգ լինել աշխարհի, այլ ի հաւատոցն արդարութենէ: Օվ եթէ որք յօրինացն են, ժառանգ իցեն. ապա ընդունայն են հաւատքն՝ և
14 զատարկ աւետիքն: Քանզի օրէնքն զբարկութիւն գործեն. բայց ուր ոչ են օրէնք՝ և ոչ
15 յանցանք ինչ: Այսպէս ի հաւատոց անտի, զի ըստ շնորհացն իցէ. առ ի լինելոյ հաստատուն աւետեացն ամենայն զաւակին. ոչ այնմ միայն որ յօրինաց անտի. այլ և այնմ որ ի հաւատոցն Աբրահամու, որ
17 է հայր մեր ամենեցուն. Որպէս և գրեալ է թէ Հայր ազգաց բազմաց արարից զքեզ առաջի Աստուծոյ. որում՝ հաւատաց՝ եթէ կենդանի առնէ զմեռեալս,
18 և կոչէ զչգոյն իբրև զգոյ: Որ յանկոյսն յուսով հաւատաց, լինել նմա հայր ազգաց բազմաց. որպէս և ասացաւն, թէ
19 Այնպէս եղիցի զաւակ քո: Եւ նա ոչ երկմտեաց ի հաւատոցն. թէպէտ և հայեցաւ ի մարմին իւր՝ այնուհետև իբրև ի մեռեալ, քանզի զհարիւրամենիւք ուրեմն էր. և ի մեռելութիւն
20 յարգանդին Սառայի: Բայց յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ. այլ զօրացաւ հաւատովք, ետ փառս
21 Աստուծոյ. Եւ հաստատեցաւ ի միտս իւր, եթէ որ խոստա-

Քանզի ոչ թէ օրէնքովք 13
Եղեալ Աբրահամին կամ՝ նորա զաւակին այն աւետիքն թէ նա աշխարհքի ժառանգն է, այլ հաւատքի արդարութիւնքը: Քանզի եթէ օրէնքից լինողներն են ժառանգ, ապա հաւատքն ունայն էր՝ և աւետիքը կ'խափանուէր: Քանզի օրէնքը 14 15
բարկութիւն է գործում. վասնզի ուր օրէնք չկայ՝ օրինազանցութիւն էլ չկայ: Որոյ համար հաւատքիցն է, որ շնորհքով լինի. որ աւետիքը հաստատ 16
լինի ամեն զաւակի համար, ոչ միայն օրէնքիցը լինողի համար, այլ նորա համար էլ որ Աբրահամի հաւատքիցն է, որ մեր 17
ամենքի հայրն է: Ինչպէս որ էլ գրուած է, թէ Հաստ ազգերի հայր արի քեզ Աստուծոյ առջև, որին հաւատաց, որ մեռելներին կենդանի է անում՝ և չլինող բաները լինողի պէս է 18
կանչում: Որ առանց յոյսի՝ յուսով հաւատաց՝ թէ շատ ազգերի հայր կ'լինի. ինչպէս ասուեցաւ՝ թէ Այնպէս պիտի լինի քո զաւակը: Եւ չտկարա- 19
ցաւ հաւատքով, այսինքն մտիկ չարաւ իր մարմնոյն որ արդէն մեռած էր, ինքը իբրև հարիւրամեայ լինելով, և ոչ էլ Սառայի արգանդի մեռած լինելուն: 20
Եւ Աստուծոյ աւետիքի համար չերկմտեցաւ անհաւատութիւնով, այլ զօրացաւ հաւատքով, և Աստուծոյն փառք

22 ցաւն՝ կարող է առնել: Վասն որոյ համարեցաւ նմա յարդարութիւն:

23 Բդ զի գրեցաւն, ոչ եթէ վասն նորա միայն՝ եթէ հա-
24 մարեցաւ նմա. Այլ և վասն մեր որոց համարելոց է. որք հաւատամք յայն՝ որ յարոյցն զՅիսուս զՏէր մեր ի մեռելոց.
25 Որ մատնեցաւ վասն յանցանաց մերոց. և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ:

ԳԼ. Ե

1 Այսուհետև արդարացեալք ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
2 Քրիստոսի. Որով և զընծայութիւն ընկալաք հաւատովք ի շնորհս յայսոսիկ՝ յորում կամք, և պարծիմք յուսով փառացն
3 Աստուծոյ: Եւ ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք ևս ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամ-
4 բերութիւն գործեն, համբերութիւն զհանդէս, հանդէս
5 զյոյս. Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է ի սիրտս մեր, ի ձեռն Հոգւոյն Սրբոյ՝ որ տուաւ
6 մեզ: Օվ մինչդեռ տկարքն

տուաւ: Եւ իր մտքումը հա- 21
մոզուած էր, թէ նորան՝ որ նա խոստացաւ, կարող է և անել: Նորա համար էլ արդարութիւն 22
համարուեցաւ նորան:

Բայց ոչ միայն նորա հա- 23
մար գրուեցաւ թէ նորան հա-
մարուեցաւ արդարութիւն. Այլ 24
մեզ համար էլ, որ մեզ պիտի համարուի. որ հաւատում ենք նորան՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին յարոյց մեռելներից, Որ մատնուեցաւ մեր յան- 25
ցանաց համար. և յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար:

ԳԼ. Ե

Արդ մենք՝ հաւատքով ար- 1
դարացած լինելով Աստուծոյ հետ խաղաղութիւն ունինք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը: Որով ընդունեցինք 2
հաւատքով այս շնորհքի մէջ մտնելն էլ, որում կանգնած ենք, և պարծենում ենք Աստուծոյ փառաց յուսովը: Եւ 3
ոչ միայն այսչափ, այլ նեղութիւնների մէջ էլ պարծենում ենք, գիտենալով որ նեղութիւնը համբերութիւն է գործում. Համբերութիւնը՝ փորձառու- 4
թիւն, փորձառութիւնը յոյս. Յոյսն էլ չամաչեցնում. քան- 5
զի Աստուծոյ սէրը փռուած է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգոյ ձեռովը՝ որ տրուեցաւ մեզ:

էաք՝ Քրիստոս վասն մեր ՝ի
ժամանակի ՝ի վերայ ամբարշ-
7 տաց մեռաւ։ Օ՛ի վասն արդա-
րոյ հազիւ ոք մեռանիցի. այլ
վասն բարւոյ թերևս համարձա-
8 կիցի ոք մեռանել։ * Յայտնեաց
Աստուած զսէրն իւր ՝ի մեզ,
զի մինչդեռ մեղաւորքն էաք,
9 Քրիստոս վասն մեր մեռաւ.
որչափ ևս առաւել յարդարա-
նալս մերում այժմիկ արեամբն
նորա՝ ապրեսցուք նովաւ ՝ի
10 բարկութենէ անտի։ Օ՛ի եթէ
մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք
ընդ Աստուծոյ մահուամբ Որդ-
ւոյ նորա. որչափ ևս առաւել
՝ի հաշտելս մերում՝ ապրես-
11 ցուք կենօքն նորա։ Եւ ոչ
այսչափ միայն, այլ և պարծիմք
ևս Աստուած ՝ի ձեռն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի.
որով և զհաշտութիւնն իսկ
ընկալաք։

12 Օ՛ի որպէս ՝ի միոջէ մարդոյ
մեղք յաշխարհ մտին և ՝ի
մեղաց անտի մահ. և այնպէս
յամենայն մարդիկ տարածեցաւ
մահ՝ որով ամենեքին մեղան։
13 Քանզի մինչև յօրէնսն մեղք
էին յաշխարհի. բայց մեղք ոչ
համարին, ուր օրէնք ոչ իցեն։
14 Այլ թագաւորեաց մահ Ադա-
մայ մինչև ցՄովսէս՝ և ՝ի վերայ
չյանցուցելոցն ըստ նմանու-

Քանզի երբոր մենք դեռ տկար 6
էինք՝ Քրիստոս մեզ համար իր
ժամանակուն ամբարիշտներուն
տեղ մեռաւ, Ասանկի հազիւ 7
թէ մի արդարի համար մէկը
մեռնի. (բայց մի բարի մարդու
համար իցէ թէ մէկը համար-
ձակի մեռնիլ.) Բայց Աստուած 8
յայտնեց իր սէրը դէպի մեզ,
որ՝ երբոր մենք դեռ մեղաւոր
էինք, Քրիստոս մեզ համար
մեռաւ. Ապա որքան աւելի 9
հիմա, որ արդարացանք նորա
արիւնովը՝ կ՚փրկուինք նորանով
բարկութիւնից. Քանզի թէ 10
որ դեռ թշնամի էինք, Աս-
տուծոյ հետ հաշտուեցանք նո-
րա Որդոյ մահովը, որքան
աւելի որ հաշտուած ենք, կ՚ապ-
րինք նորա կեանքովը։ Եւ ոչ 11
միայն այսչափ. այլ Աստուծով
էլ պարծենում ենք՝ մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի ձեռովը,
որով հիմա հաշտութիւնն ըն-
դունեցինք։

Սորա համար՝ ինչպէս մէկ 12
մարդու ձեռովը մեղքը մտաւ
աշխարհը, և այն մեղքովն էլ
մահը. և այսպէս մահն ամեն
մարդկանց վերայ տարածուե-
ցաւ, ըստ որում՝ ամենքը մեղան-
չեցին։ Քանզի մինչև օրէնքը՝ 13
մեղք կար աշխարհքումը, բայց
մեղքը չէ համարվում քանի որ
օրէնք չկայ։ Բայց մահը թա- 14
գաւորեց Ադամից մինչև Մո-

* Ի Յոյն, Բայց յայտնեաց

թեան յանցուածոյն Ադամայ,
որ է օրինակ հանդերձելոցն։
15 Այլ ոչ որպէս յանցանքն՝ նոյն-
պէս և շնորհքն. զի եթէ միոյն
յանցանօք բազումք մեռան,
որչափ ևս առաւել շնորհքն
Աստուծոյ և պարգևքն՝ շնորհօք
միոյն մարդոյ Յիսուսի Քրիս-
տոսի ՝ի բազումս առաւելաւ։
16 Եւ ոչ որպէս ՝ի միոջէ յանցու-
ցելոյն պարգևքս. զի դատաս-
տանն ՝ի միոջէ յանցուածոյ
անտի ՝ի դատապարտութիւն.
այլ շնորհքն ՝ի բազմաց յան-
17 ցուածոցն յարդարութիւն։ Օ՛ի
եթէ ՝ի միոյն յանցանաց մահ
թագաւորեաց միովն, որչափ
ևս առաւել՝ որք զառաւելու-
թիւն շնորհաց և զպարգևաց
արդարութեանն առնուցուն, կե-
նօք թագաւորեսցին ՝ի ձեռն
18 միոյն Յիսուսի Քրիստոսի։ Ա-
պա ուրեմն որպէս միոյն յան-
ցանօք յամենայն մարդիկ դա-
տապարտութիւն, նոյնպէս և
միոյն արդարութեամբն՝ յամե-
նայն մարդիկ արդարութիւն կե-
19 նաց։ Օ՛ի որպէս անհնազան-
դութեամբ միոյն մարդոյ մե-
ղաւորք բազումք եղեն, նոյնպէս
և հնազանդութեամբ միոյն,
20 արդարք բազումք եղիցին։ Բայց
օրէնք ՝ի ներքս անկան, զի
յանցանքն բազմասցին. զի * ուր
առաւել եղեն մեղքն, առաւել
21 ևս յաւելան շնորհքն։ Օ՛ի

սէս Ադամի մեղքի նման չըմե-
ղանչողներուն վերայ էլ. որ
օրինակ է նորան որ գալու էր։
Բայց շնորհքն այնպէս չէ՝ 15
ինչպէս յանցանքը. քանզի եթէ
մէկի յանցանքովը շատերը մե-
ռան, էլ որքան աւելի Աստու-
ծոյ շնորհքն ու պարգևը մէկ
մարդու՝ Յիսուս Քրիստոսի
շնորհքովն աւելացաւ շատերի
վերայ։ Եւ պարգևն այնպէս 16
չէ՝ ինչպէս այն մէկ մեղանչողից
եղածը, քանզի դատաստանն այն
մին մեղքից դէպի դատապար-
տութիւն տարաւ. բայց շնորհքը
շատ մեղքերից արդարութեան
մէջ է դուռն։ Քանզի եթէ 17
մէկի մեղքովը մահը թագա-
ւորեց այն մէկի ձեռովն, էլ
որքան աւելի նորանք, որ ըն-
դունում են շնորհաց լիութիւն-
ու արդարութեան պարգևները,
կեանքով կ՚թագաւորեն՝ այն
մէկ Յիսուս Քրիստոսի ձեռովը։
Բրդ ուրեմն՝ ինչպէս որ մէկի 18
յանցանքովն ամեն մարդկանց
վերայ դատապարտութիւն եկաւ,
նոյնպէս էլ մէկի արդարու-
թիւնովն ամեն մարդկանց վերայ
կենաց արդարութիւն է գալիս։
Քանզի ինչպէս որ մէկ մար- 19
դու անհնազանդութիւնովը շա-
տերը մեղաւորներ եղան, այն-
պէս էլ մէկի հնազանդութի-
նովը շատերը արդարներ կ՚լինին։
Բայց օրէնքը մէջ ընկաւ՝ որ 20

* Ի Յոյն, բայց

որպէս թագաւորեցին մեղքն 'ի մահու անդ, նոյնպէս և շնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ 'ի կեանսն յաւիտենից 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:

ԳԼ. Օ.

1 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք, յաճախեսցո՞ւք 'ի մեղն՝ զի
2 շնորհքն բազմասցին: Քա՛ւ լիցի. որք մեռաք մեղացն, զիա՞րդ
3 տակաւին 'ի նմին կեցցեմք: Եթէ ո՞չ գիտէք՝ զի որ միանգամ մկրտեցաք 'ի Քրիստոս Յիսուս՝ 'ի մահ անդր նորա մկրտեցաք:
4 Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն 'ի մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց փառաւոքն Հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգութիւն կենաց շրջեսցուք:
5 Զի եթէ անկակից եղեաք նմանութեան մահու նորա. այլ և յարութեան նորա լինիցիմք:
6 Զայս գիտասջի՛ք՝ զի հին մարդն մեր խաչակից եղև նորա, զի խափանեսցի մարմին մեղացն, մի՛
7 ևս ծառայել մեզ մեղացն: Զի որ մեռանին՝ արդարացեալ է 'ի
8 մեղաց անտի: Իսկ եթէ մեռաք ընդ Քրիստոսի, հաւատամք՝
9 թէ և կեցցուք ընդ նմա: Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է 'ի մեռելոց. այսուհետև յանցանքը շատանայ. քանզի ուր որ աւելի եղաւ մեղքը, այնտեղ աւելի ևս շատացաւ շնորհքը: Որպէս զի ինչպէս
21 մեղքը թագաւորեց մահի ձեռովը, այնպէս էլ շնորհքը թագաւորէ արդարութիւնով յաւիտենական կեանքի մէջ՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը:

ԳԼ. Օ.

1 Արդ ի՞նչ ասենք. մնա՞նք մեղքի մէջ, որ շնորհքը շատանայ:
2 Քաւ լիցի. մենք որ մեռանք մեղքին, էլ ի՞նչպէս
3 դեռ կ'ապրինք նորանում: Կամ չէ՞ք գիտում՝ թէ որքանս որ Յիսուս Քրիստոսումն մկրտուեցանք՝ նորա մահի մէջ մկրտուեցանք:
4 Մկրտութիւնովը նորա հետ թաղուեցանք մահի մէջ. որ ինչպէս Քրիստոս Հօր փառքովը մեռելների միջից յարութիւն առաւ, այնպէս մենք էլ կենաց նորոգութեան մէջ
5 մտանք: Քանզի եթէ նորա մահի նմանութիւնովը նորա հետ տնկուեցանք, ապա նորա յարութեանն էլ նման կ'լինինք:
6 Այս գիտենալով, որ մեր հին մարդը նորա հետ խաչուեցաւ, որ մեղաց մարմինը խափանուի,
7 որ այլ ևս չծառայենք մեղքին: Քանզի նա որ մեռնում է՝
8 արդարացած է մեղքիցը: Եւ եթէ Քրիստոսի հետ մեռանք, հաւատում ենք՝ որ նորա հետ

ո՛չ մեռանի, մահ նմա ո՛չ ևս
10 տիրէ: Զի որ մեռաւն՝ մեղացն մեռաւ միանգամ, և որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ:
11 Նոյնպէս և դուք համարեսջի՛ք զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս Աստուծոյ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր:

12 Մի՛ այսուհետև թագաւորեսցեն մեղք 'ի մահկանացու մարմնիս ձեր՝ հնազանդել ցան-
13 կութեանց նորա. Եւ մի՛ պատրաստէք զանդամս ձեր զէն անիրաւութեան մեղացն. այլ պատրաստեցէ՛ք զանձինս ձեր Աստուծոյ՝ որպէս 'ի մեռելոց 'ի կենդանիս. և զանդամս ձեր զէն արդարութեանն Աստուծոյ:
14 Զի մեղք ձեզ ո՛չ տիրեսցեն. քանզի ո՛չ էք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք:

15 Իսկ արդ զի՞արդ. մեղեսցո՛ւք՝ զի չեմք ընդ այլ ընդ շնորհօք.
16 քաւ լիցի: Ո՞չ գիտէք՝ թէ որում պատրաստէք զանձինս ձեր ծառայս 'ի հնազանդութիւն, ծառայ էք՝ որում՝ հնազանդիքն, եթէ մեղաց՝ 'ի մահ, և եթէ 'ի հնազանդութիւն ար-
17 դարութեան՝ 'ի կեանս: Այլ շնորհք Աստուծոյ. զի էիք ծառայք մեղաց՝ հնազանդեցայք 'ի
9 էլ կ'ապրինք: Գիտենալով որ՝ Քրիստոս մեռելների միջից յարութիւն առած լինելով, այլ ևս չէ մեռնում, և մահն նորա վերայ այլ ևս չէ տիրում:
10 Քանզի այն որ մեռաւ՝ մեղքին մեռաւ մէկ անգամ, և այն որ կենդանի է՝ Աստուծոյն է կեն-
11 դանի: Նոյնպէս էլ դուք ձեր անձերը մեղքին մեռած համարեցէք, և Աստուծոյն կենդանի՝ մեր Տէր Քրիստոս Յիսուսի ձեռովը:
12 Սորա համար թող մեղքը չթագաւորէ ձեր մահկանացու մարմնի մէջ, որ նորան հնա-
13 զանդիք նորա ցանկութիւններ-ումը: Եւ ձեր անդամները անիրաւութեան զէնք մի ներկայացնէք մեղքին. այլ ձեր անձները ներկայացրէք Աստուծոյն՝ ինչպէս մեռելներից կենդանացածներ, և ձեր անդամներն արդարութեան զէնք՝ Աստուծոյն:
14 Քանզի մեղքը չի տիրիլ ձեզ վերայ. որովհետև օրէնքի տակ չէք, այլ շնորհաց տակ:
15 Արդ ի՞նչ. մեղքի գործենք. որովհետև օրէնքի տակ չենք՝ այլ շնորհաց տակ. քաւ լիցի:
16 Չէ՞ք գիտում, թէ ում որ ձեր անձները ծառայ էք պատրաստում՝ նորան հնազանդելու, ծառայք էք նորան որին հնազանդում էք. թէ մեղքին՝ դէպի մահ, և թէ հնազանդութեան՝
17 դէպի արդարութիւն: Բայց շնորհակալութիւն Աստուծոյ.

սրտէ որում աւանդեցայք յա-
18 ռակ վարդապետութեան։ Բրդ՝
ազատեցեալք ՝ի մեղաց՝ ծառա-
19 յեցէք արդարութեան։ Մարդ-
կօրէ ասեմ՝ վասն տկարութեան
մարմնոյ ձերոյ. զի որպէս
պատրաստեցիք զանդամս ձեր
ծառայս պղծութեան և անօ-
րէնութեան յանօրէնութիւն.
նոյնպէս և այժմ՝ պատրաստե-
ցէք զանդամս ձեր ծառայս ար-
դարութեան ՝ի սրբութիւն։
20 Զի մինչ ծառայքն էիք մեղաց՝
ազատացեալք էին յարդարու-
21 թենէն։ Իսկ արդ՝ զի՞նչ պտուղ
ունէիք յայնժամ, որովք այժմ
զամօթի հարեալ էք. զի վախ-
22 ճան նոցա մահ է։ Բայց արդ
ազատացեալք ՝ի մեղացն՝ և ծա-
ռայեալք Աստուծոյ՝ ունիք
զպտուղ ձեր ՝ի սրբութիւն, և
վախճան նորա կեանք յաւի-
23 տենից։ Զի թոշակն մեղաց մահ
է. այլ շնորհքն Աստուծոյ
կեանք յաւիտենից ՝ի Յրիստոս
Յիսուս ՝ի Տէր մեր։

ԳԼ. Ի։

1 Եթէ ո՞չ գիտէք եղբարք, զի
ընդ գիտունս օրինաց խօսիմ. զի
օրէնք տիրեն մարդոյ՝ որչափ
2 ժամանակս կենդանի իցէ։ Յան-
զի կին առնակին ՝ի կենդանի
որ մեղբի ծառայ էիք, բայց
սրտով հնազանդեցիք այն վար-
դապետութեան օրինակին՝ որին
յանձնուեցաք։ Ուրեմն դուք 18
մեղբիցն ազատուած՝ ծառայեցիք
արդարութեանը։ Մարդկօրէն 19
եմ ասում ձեր մարմնոյ տկա-
րութեան համար. որ ինչպէս
ձեր անդամները ծառայ ներկա-
յացրիք պղծութեանն ու ա-
նօրէնութեանը՝ անօրէնութեան
համար, նոյնպէս էլ հիմա ձեր
անդամները ծառայ ներկայաց-
րէք արդարութեանը սրբանա-
լու համար։ Յանզի երբոր 20
մեղբի ծառայ էիք՝ ազատ էիք
արդարութիւնից։ Բրդ ի՞նչ 21
պտուղ ունէիք այն ժամանակ,
որոնց համար հիմա ամօթ էք
քաշում. քանզի նորանց վերջը
մահ է։ Բայց հիմա որ մեղ-
քիցն ազատուած և Աստուծոյ
ծառայ եղած էք՝ ձեր պտուղն
ունիք սրբանալու համար, և
նորա վերջը յաւիտենական
կեանքն է։ Յանզի մեղքի պա- 23
շարը մահն է. բայց Աստու-
ծոյ շնորհքը՝ յաւիտենական
կեանք՝ մեր Տէր Յիսուսի Յը-
րիստոսի ձեռովը։

ԳԼ. Ի։

Կամ չէք գիտում, եղբայրք, 1
(քանզի օրէնք գիտեցողների
հետ եմ խօսում). որ օրէնքը
մարդու վերայ տիրում է՝ քանի
որ նա կենդանի է։ Յանզի մարդ 2

այր իւր կապեալ կայ օրինօք.
իսկ եթէ մեռցի այրն, արձա-
3 կեալ է յօրինաց առն։ Այսպա
ուրեմն մինչ կենդանի է այրն,
շուն կոչի՝ եթէ լինիցի առն
այլում. և եթէ մեռցի այրն՝
ազատ է յօրինացն, չհամա-
րեալ շուն՝ եթէ լինիցի առն
4 այլում։ Այսուհետև և դուք
եղբարք՝ մեռայք օրինացն մար-
մնոյն Յրիստոսի, լինել այլում
որ ՝ի մեռելոցն յարուցեալ է,
զի պտղաբեր լիցուք Աստուծոյ։
5 Յանզի մինչ էաքն մարմնով,
կարիք մեղաց՝ որ օրինօքն էին՝
զօրանային յանդամս մեր, առ
՝ի պտղաբեր առնելոյ զմեղ
6 մահու։ Բայց այժմ դատար-
կացաք յօրինաց անտի. քանզի
մեռաք այնմիկ՝ որով ըմբռնեալն
էաք, առ ՝ի ծառայել մեղ
նորոգութեամբ Հոգւոյն՝ և ոչ
հնութեամբ գրոյն։

7 Իսկ արդ զի՞նչ ասեմք.
օրէնքն մեղք իցեն. քա՛ւ լիցի.
այլ զմեղս ո՛չ գիտէի, եթէ ոչ
օրինաւ. և զցանկութիւն ո՛չ
ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր
ասացեալ՝ Մի՛ ցանկանայցես։
8 *Պատճառս առին մեղքն պա-
տուիրանաւն, և գործեցին յիս
զամենայն ցանկութիւն. զի ա-
ռանց օրինացն մեղքն մեռեալ
ունեցող կնիկը՝ իր կենդանի
մարդու հետ կապուած է օրէն-
քով. բայց եթէ մարդը մեռնի՝
մարդիցն արձակուած է։ Ու- 3
րեմն՝ քանի որ մարդը կեն-
դանի է՝ նա շնացող է կոչվում,
եթէ ուրիշ մարդու գնայ.
բայց եթէ մարդը մեռնի, օրէն-
քիցն ազատ է՝ որ շնացող
չլինի եթէ ուրիշ մարդու գնայ։
Այսպէս էլ, եղբայրք, դուք 4
Յրիստոսի մարմնովը մեռաք
օրէնքին՝ որ ուրիշի լինիք՝ նո-
րան որ մեռելների միջից յա-
րութիւն է առել, որ պտուղ
բերենք Աստուծոյն։ Յանզի 5
քանի որ մարմնով էինք, մեղ-
քերի ցանկութիւններն՝ որ օրէն-
քովն էին՝ զօրանում էին մեր
անդամներումը, որ մենք պտուղ
բերենք մահին։ Բայց հիմա 6
արձակուեցանք օրէնքիցը մեռ-
նելով նորան՝ որով որ բռնուած էինք, որպէսզի հոգու
նորոգութիւնովը ծառայենք՝ և
ոչ թէ գրի հնութիւնովը։
Բրդ ի՞նչ ասենք. օրէնքը 7
մեղք է. քաւ լիցի. բայց մեղքը
չէի գիտենալ՝ եթէ ոչ օրէն-
քով. և ցանկութիւնը չէի ճա-
նաչել՝ եթէ օրէնքը չէր ասել՝
Մի՛ ցանկանար։ Մեղքը առիթ 8
առնելով պատուիրանքովը, ին-
ձանում ամեն ցանկութիւն գոր-
ծեց. քանզի առանց օրէնքի
մեղքը մեռած է։ Եւ ես ա- 9

* ՝Ի Յոյն. Բայց պատճառս

9 էին։ Եւ ես առանց օրինացն երբեմն էի կենդանի. այլ իբրև եհաս յիս պատուիրանն, մեղքն
10 կենդանացան. Եւ ես մեռայ. և գտաւ ինձ պատուիրանն՝ որ 'ի կեանսն էր, նոյն 'ի մահ։ Զի մեղացն պատճառս առեալ պատուիրանաւն խաբեցին զիս և նովին սպանին։
12 Այսուհետև օրէնք սուրբ են՝ և պատուիրանն սուրբ և արդար և բարեբար։
13 Իսկ արդ՝ ինձ բարին մա՞հ եղև. քա՛ւ լիցի. այլ մեղքն. զի երևեսցին մեղքն բարեաւն գործել ինձ զմահ. զի եղիցին ըստ առաւելութեան մեղքն մեղաւոր
14 'ի ձեռն պատուիրանին։ Գիտեմք՝ զի օրէնքն հոգևոր են. այլ ես մարմնաւոր եմ, ընդ մեղաբ վա-
15 ճառեալ։ Զի զոր գործեմն ո՛չ գիտեմ, ո՛չ եթէ զոր կամիմն զայն առնեմ, այլ զոր ատեամն՝
16 զայն գործեմ։ Այլ թէ զոր ո՛չն կամիմ՝ զայն առնեմ, վկայեմ օրինացն՝ եթէ բարւոք
17 են։ Այլ արդ՝ ո՛չ եթէ ես գործեմ զայն, այլ բնակեալ
18 յիս մեղքն։ Գիտեմ զի ո՛չ բնակեալ է յիս, այսինքն է 'ի մարմնի իմում, բարի ինչ. զի կամքն առաջի կան ինձ. և առնել
19 զբարին ո՛չ։ Զի ո՛չ եթէ զոր կամիմ զբարին առնեմ, այլ զոր ո՛չն կամիմ զչարն, զայն գոր-
20 ծեմ։ Այլ եթէ զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, ո՛չ ես ես առնեմ զայն՝ այլ բնակեալ յիս մեղքն։

ռանց օրէնքի մի ժամանակ կեն-
դանի էի. բայց երբոր պա-
տուիրանքը եկաւ, մեղքը կեն-
դանացաւ։ Իսկ ես մեռայ, և
այն պատուիրանքն՝ որ կենաց
համար էր, ինձ մահի պատճառ
եղաւ։ Մեղքը առիթ առած պատուիրանքովը՝ խաբեց
ինձ և նորանով սպանեց։
Ուրեմն՝ օրէնքը սուրբ է՝ և պատուիրանքն էլ սուրբ և արդար և բարի։
Այդ բարի՞ն եղաւ ինձ մահ. քաւ լիցի. այլ մեղքը. որ մեղքն երևի որ բարիովն ինձ մահ գործեց. որ մեղքն աւելի ևս մեղաւոր լինի պատուիրանքի ձեռովը։ Մեղքը գիտենք՝ որ օրէնքը հոգևոր է. բայց ես եմ մարմնաւոր մեղքի տակ ծախուած։ Մեղքն ինչ որ գործում եմ՝ չեմ գիտում. քանզի ոչ թէ ինչ որ կամենում եմ՝ այն եմ գործում. այլ ինչ որ ատում եմ, այն եմ գործում։ Եւ եթէ ինչ որ չեմ կամենում՝ այն եմ գործում, օրինաց համար վկայում եմ՝ թէ բարի է։ Արդ ուրեմն ոչ թէ ես եմ գործում այն, այլ ինձանում բնակած մեղքը։ Մեղքն գիտեմ որ ինձանում (այսինքն իմ մարմնումը) մի բարի բան չէ բնակում. քանզի կամենալն առաջ կայ. բայց բարին անելը չեմ գտնում։ Մեղքն ոչ թէ բարին՝ որ կամենում՝ եմ, անում եմ. այլ չարն՝ որ

21 *Եւ արդ՝ գտանեմ զօրէնս այնորիկ՝ որ կամիցին առնել յիս զբարին. և ինձ՝ չարն ա-
22 ռաջի կայ։ Հաճեալ եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին
23 մարդոյն. Բայց տեսանեմ այլ օրէնս յանդամն իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց, և գերեալ զիս օրինաւքն մեղաց՝ որ
24 են յանդամն իմ։ Այր մի տառապեալ եմ ես՝ ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ աստի
25 մահու։ Այլ շնորհքն Աստուծոյ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

Այսպա ուրեմն՝ ես ինքնին մտօք իմովք ծառայ եմ օրինացն Աստուծոյ. և մարմնով մեղացս։

ԳԼ. Ը.

1 Թէ այդպէս իցէ՝ ոչինչ դատապարտութիւն է այնոցիկ որ
2 'ի Քրիստոս Յիսուս։ Զի օրէնք հոգւոյն կենաց 'ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս
3 յօրինաց մեղացն և մահու։ Զի որ անհնարին էր օրինացն՝ որով

* 'Ի Յոյն. Եւ արդ գտանեմ զօրէնս ինչ՝ զի ժորժամ կամիմ առնել զբարին, ինձ

չեմ կամենում, այն եմ գոր-
ծում։ Ուրեմն եթէ այն որ 20
չեմ կամենում ես, այն եմ
անում. էլ ես չեմ անում այն,
բայց ինձանում բնակած մեղքը։
Ուրեմն գտնում եմ այդ օրէնքը՝ 21
որ երբ ես կամենում եմ բարին
անել, չարն իմ առջև կայ։
Մեղքն հաճանում եմ Աս- 22
տուծոյ օրէնքին՝ ներսի մար-
դովը։ Բայց տեսնում եմ ու- 23
րիշ օրէնք իմ անդամներումը՝
որ իմ մտքի օրէնքի դէմ պատե-
րազմում է, և ինձ գերի է
բռնում այն մեղքի օրէնքովը՝
որ իմ անդամներումն է։ Ես 24
խղճալի մարդս. ո՞վ կ'ապրեցնէ
ինձ այս մահի մարմնիցը։ Շնոր- 25
հակալ եմ Աստուածանից մեր
Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը.
Արդ ուրեմն ես ինքս մտքով
ծառայում եմ Աստուծոյ օրէն-
քին, իսկ մարմնով մեղքի օրէն-
քին։

ԳԼ. Ը.

Ուրեմն հիմա դատապարտու- 1
թիւն չկայ Յիսուս Քրիստո-
սումն լինողների համար, որ
մարմնոյ պէս չեն վարվում,
այլ հոգոյ պէս։ Քանզի կե- 2
նաց հոգոյ օրէնքը Յիսուս
Քրիստոսումն ազատեց ինձ մեղ-

տկարանայր մարմնով. Աստուած զՈրդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց, և վասն մեղաց, և դատապարտեաց
4 զմեղս ի մարմնի անդ. Զի արդարութիւն օրէնացն կատարեսցի ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք՝ այլ ըստ
5 Հոգւոյն: Զի որք ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն խորհին, և որք ըստ Հոգւոյն՝ զՀոգւոյն:
6 Զի խորհուրդ մարմնոյ մահ է. և խորհուրդ Հոգւոյն՝ կեանք և
7 խաղաղութիւն: Վասնզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է Աստուած՝ զի օրէնացն Աստուծոյ ոչ հնազանդի. նաև
8 կարէ իսկ ոչ: Զի որ մարմնովն են, Աստուծոյ հաճոյ լինել ոչ
9 կարեն: Բայց դուք ոչ էք մարմնով՝ այլ Հոգւով, եթէ իցէ Հոգին Աստուծոյ ի ձեզ բնակեալ. ապա եթէ ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ
10 նորա: Իսկ եթէ Քրիստոս ի ձեզ է՝ ապա մարմին մեռեալ է վասն մեղաց. և Հոգին կենդանի
11 է վասն արդարութեան: Եթէ Հոգի այնորիկ՝ որ յարոյց զՅիսուս ի մեռելոց, բնակեալ է ի ձեզ. ապա և որ յարոյց զՅիսուս Քրիստոս ի մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ Հոգւով իւրով ի ձեզ:

.քի և մահի օրէնքիցը: Վասնզի 3
այն որ անկարելի էր օրէնքին, որովհետև տկար էր մարմնոյ պատճառովը, Աստուած իր Որդին ուղարկելով մեղաց մարմնոյ նմանութիւնովը և մեղքի համար՝ մեղքին դատապարտեց այն
մարմնումը: Որ օրէնքի ար- 4
դարութիւնը կատարուի մեզանում, որ մարմնոյ պէս չենք վարվում՝ այլ Հոգոյ պէս:
Վասնզի մարմնոյ պէս լինողները 5
մարմնոյ բաներն են մտածում. իսկ Հոգոյ պէս լինողները՝ Հոգոյ բաները: Վասնզի մարմնոյ 6
խորհուրդը մահ է. և Հոգոյ խորհուրդը կեանք և խաղաղութիւն: Վասնզի մարմնոյ խոր- 7
հուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. քանզի Աստուծոյ օրէնքին չէ հնազանդում, և կարող էլ չէ: Եւ նորանք՝ որ 8
մարմնով են, չեն կարող Աստուծոյն հաճոյ լինիլ: Բայց 9
դուք մարմնով չէք՝ այլ Հոգով, եթէ Աստուծոյ Հոգին ձեզանում բնակած է. և եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի՝ նա
նորանը չէ: Եւ եթէ Քրիս- 10
տոս է ձեզանում՝ ապա մարմինը մեռած է մեղքի համար, և Հոգին կենդանի է արդարութեան համար: Եւ եթէ Յի- 11
սուսին մեռելներից յարուցանողի Հոգին ձեզանում բնակած է, ապա Քրիստոսին մեռելներից յարուցանողը, ձեր մահկանացու մարմիններն էլ կըկեն-

12 Այսուհետև եղբարք՝ պարտապան ենք ոչ մարմնոյ ըստ
13 մարմնոյ կեալ: Զի թէ ըստ մարմնոյ կեցէք՝ մեռանելոց էք. իսկ եթէ Հոգւով զգործս մարմ-
14 նոյ սպանանիցէք՝ կեցջիք: Զի որ Հոգւովն Աստուծոյ վարին,
15 նորա են որդիք Աստուծոյ: Զի ոչ առիք զՀոգին ծառայութեան միւսանգամ յերկիւղ, այլ առիք զՀոգին որդեգրութեան. որով աղաղակեմք Աբրայ Հայր:
16 Նոյն ինքն Հոգին վկայէ Հոգւոյս մերում, եթէ եմք որդիք
17 Աստուծոյ: Եւ եթէ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ՝ և ժառանգակիցք Քրիստոսի. եթէ չարչարանացն կցորդ լինիմք, և փառացն հաղորդ լինելոց եմք:

18 Իսկ այսպէս թուի՝ եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝
19 որ յայտնելոց են ի մեզ: Զի ակնկալութիւն արարածոյ յայտնութեան Որդւոյն* Աստուծոյ
20 սպասէ: Զի ընդունայնութեան արարածք հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ՝ այլ վասն այնորիկ որ հնազանդեցոյցն յուսով.
21 Զի և ինքեանք իսկ արարածքն

* Ի Ցոյնն, որդւոցն

զանացնէ իր Հոգովն, որ ձեզանում բնակած է:
Պա ուրեմն, եղբայրք, պարտական ենք ոչ թէ մարմնոյն՝ 12
մարմնոյ պէս ապրելու: Վասն- 13
զի եթէ մարմնոյ պէս ապրիք՝ մեռնելու էք. բայց եթէ Հոգով մարմնոյ գործքերն սպանէք՝ կ՝ապրիք: Վասնզի որոնք 14
որ Աստուծոյ Հոգովն են վարվում, նորանք Աստուծոյ որդիք են: Վասնզի ծառայու- 15
թեան Հոգին չառիք որ դարձեալ վախենաք. այլ որդեգրութեան Հոգին առիք, որով աղաղակում ենք՝ Աբրա, Հայր:
Նոյն ինքն Հոգին վկայութիւն 16
է տալիս մեր Հոգոյն հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք: Եւ 17
եթէ որդիք՝ ապա ժառանգներ էլ: Աստուծոյ ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ. որ եթէ նորա չարչարանքներին կցորդ ենք՝ որ փառքին էլ մասնակից լինինք:
Վասնզի ես այնպէս եմ դա- 18
տում, թէ այս ժամանակի չարչարանքները չեն արժանի այն գալու փառքին, որ մեզանում
պիտի յայտնուի: Վասնզի ստեղ- 19
ծուածների ակնկալութիւնը Աստուծոյ որդոց յայտնութեանն է
սպասում: Վասնզի ստեղծուած- 20
ները հնազանդեցան ունայնութեան, ոչ թէ կամաւ, այլ նորա համար՝ որ հնազանդեց-

աղատեսցին 'ի ծառայութենէ
ապականութեան՝ յազատութիւն
փառաց Որդւոյն * Աստուծոյ:
22 Գանգի գիտեմք, եթէ ամենայն
արարածք հեծին և երկենն
23 մինչև ցայժմ: Եւ ոչ այսչափ
միայն. այլ և մեք իսկ՝ որ
զպտուղ Հոգւոյն ունիմք, ան-
ձամբ յանձինս մեր հեծեմք՝
որդեգրութեան ակն կալեալ՝
փրկութեան մարմնոյ մերոյ:
24 Օվ յուսով ապրեցաք. այլ
յոյս տեսանելի՝ չէ՛ յոյս. զի զոր
տեսանէ ոք՝ զի՞նչ ևս յուսայ:
25 Աստ թէ զոր ոչն տեսանեմք
յուսամք, համբերութեամբ ակն
26 ունիմք: Նոյնպէս և Հոգին 'ի
թիկունս հասանէ տկարութեան
մերում. զի զոր կամքն յաղօթս՝
որպէս արժան իցէ ոչ գիտեմք.
այլ ինքնին Հոգին բարեխօս
լինի 'ի հեծութիւնս անմուունչս:
27 Բայց որ քննէն զսիրտս՝ գիտէ
զինչ խորհուրդ է Հոգւոյն. զի
ըստ Աստուծոյ բարեխօսէ վասն
սրբոց:

28 Բայց գիտեմք՝ եթէ որոց
սիրենն զԱստուած՝ յամենայնի
գործակից լինի 'ի բարիս՝ որք
ըստ այն յուսով, Որ՝ ըստեղ-
ծուածներն իրանք էլ ապա-
կանութեան ծառայութիւնից
կ'ազատուին՝ Աստուծոյ որդւոց
փառաւոր ազատութեան մէջ
մտնելով: Գանգի գիտենք՝ որ
բոլոր ստեղծուածները մինչև
հիմա միասին հառաչում են՝ և
ցաւի մէջ են: Եւ ոչ միայն
նոքանո՛ւ, այլ ինքներս էլ՝ որ
Հոգւոյ առաջին պտուղն ունինք,
մենք էլ մեր անձներումը հա-
ռաչում ենք՝ որդեգրութեանն
սպասելով, այսինքն մեր մարմնոյ
ազատութեանը: Գանգի յու-
սով փրկուեցանք. բայց յոյսն՝
որ տեսնվում է, յոյս չէ.
քանզի այն բանն, որ մէկը տես-
նում է՝ էլ ի՞նչպէս կ'յուսայ:
Բայց եթէ այն որ չենք տես-
նում, նոքան յոյս ունինք, ապա
համբերութեամբ սպասում ենք:
Այսպէս էլ Հոգին օգնում
է մեր տկարութեանցը. քանզի
թէ ինչ բանի համար աղօթք
անենք՝ ինչպէս արժան է,
չգիտենք. բայց ինքն Հոգին
անբարբառ հառաչանքով բա-
րեխօս է լինում: Եւ սրտերը
քննողը գիտէ թէ ինչ է Հո-
գւոյն խորհուրդը. քանզի Ա-
ստուծոյն ըստ կերպով սրբոց
համար բարեխօսում է:

Բայց գիտենք, որ Աստու-
ծոյն սիրողներին ամեն բաները
գործակից են լինում դէպի բա-

21
22
23
24
25
26
27
28

* 'Ի Յոյնն, որդւոցն

29 հրաւիրանաւն կոչեցան: Օվ
զորս յառաջն ճանաչէր, յա-
ռաջագոյն և հրաւիրեաց կեր-
պարանակից լինել պատկերի
Որդւոյն իւրոյ. զի եղիցի նա
անդրանիկ 'ի մէջ եղբարց բազ-
30 մաց: Եւ զորս յառաջագոյնն
հրաւիրեաց՝ զնոսին և կոչեաց.
և զորս կոչեացն՝ զնոսին և
արդարացոյց. և զորս արդա-
րացոյցն՝ զնոսին և փառաւորս
31 արար: Իսկ արդ զի՞նչ ասեմք
առ այս. եթէ Աստուած 'ի մեր
կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ:
32 Որ յիւր Որդին ոչ խնայեաց՝
այլ վասն մեր ամենեցուն մատ-
նեաց զնա. զիա՞րդ ոչ նուաւ
հանդերձ զամենայն շնորհիցէ
33 մեզ: Ո՞վ իցէ որ մեղադիր
լինիցի ընտրելոց Աստուծոյ.
Աստուած է որ արդարացու-
34 ցանէ: Իսկ արդ ո՞վ է որ դա-
տապարտ առնիցէ: Գրիստոս
Յիսուս որ մեռաւն մանաւանդ
թէ յարուցեալ իսկ է. և է ընդ
աջմէ Աստուծոյ, որ և բարե-
35 խօս իսկ է վասն մեր: Արդ ո՞վ
մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Գրիս-
տոսի, նեղութիւն թէ անձկու-
թիւն, թէ հալածանք, թէ
սո՞վ, թէ մերկութիւն, թէ
36 վի՞շտք. թէ սո՞ւր. Որպէս և
գրեալ է. Վասն քո մեռանիմք
զօրհանապազ, համարեցաք իբրև
37 զոչխար 'ի սպանդ: Այլ յայսմ
ամենայնի, առաւել յաղթեմք
նուաւ՝ որ սիրեացն զմեզ:
38 Գանգի հաստատեալ եմ, եթէ

29
30
31
32
33
34
35
36
37
38

բին նորանց՝ որ նախասահ-
մանելովը կանչուած են: Գան-
զի նորանց՝ որ առաջուց ճա-
նաչեց, առաջուց էլ սահմանեց՝
իր Որդոյ պատկերի կերպա-
բանակից լինելու. որ նա ան-
դրանիկ լինի շատ եղբայրների
մէջ: Եւ որոնց առաջուց սահ-
մանեց, նորանց կանչեց էլ. և
որոնց կանչեց, նորանց արդա-
րացրեց էլ. և որոնց արդա-
րացրեց, նորանց փառաւոր էլ
արաւ: Այս զի՞նչ ասենք սորա
համար. եթէ Աստուած մեր
կողմն է՝ ո՞վ է մեզ հակառակ.
Որ իր Որդոյն էլ չխնայեց,
այլ մեր ամենքի համար մատ-
նեց նորան. էլ ի՞նչպէս նորան
հետ ամեն բան չի շնորհիլ մեզ:
Ո՞վ է որ Աստուծոյ ընտրուած-
ների դէմ մեղադիր լինի. Աս-
տուած է՝ որ արդարացնում է:
Ո՞վ է որ դատապարտէ. Գրիս-
տոս, որ մեռաւ՝ և աւելի որ
յարութիւն էլ առաւ և Աս-
տուծոյ աջ կողմն է, որ մեզ
համար բարեխօս էլ է: Այս
ո՞վ կ'բաժանէ մեզ Գրիստոսի
սէրիցը. տառապա՞նք, թէ նեղու-
թիւն, թէ հալածա՞նք, թէ
սո՞վ, թէ մերկութիւն, թէ
վտա՞նգ, թէ սո՞ւր: Ինչպէս
գրուած է, թէ Գրեզ համար
մեռցնվում ենք բոլոր օրը և
մարթուելու ոչխարի պէս հա-
մարուեցանք: Բայց այս ամեն
բաներումն առաւել ևս յաղ-
թում ենք նորա ձեռովն՝ որ մեզ

29
30
31
32
33
34
35
36
37
38

ոչ մահ և ոչ կեանք և ոչ հրեշ-
տակ և ոչ իշխանութիւնք, և
ոչ որ կանս և ոչ հանդերձեալքն
39 և ոչ զօրութիւնք, Եւ ոչ բարձ-
րութիւն և ոչ խորութիւն, և
ոչ այլ ինչ արարած՝ կարէ
մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի
Աստուծոյ, որ 'ի Քրիստոս
Յիսուս 'ի Տէր մեր։

ԳԼ. Թ

1 Յաւուրութեամբ ասեմ 'ի
Քրիստոս՝ և ոչ ստեմ, վկայեն
ինձ միտք իմ 'ի Հոգի Սուրբ.
2 Զի տրտմութիւն է ինձ յոյժ՝
և անպակաս ցաւք սրտի իմոյ։
3 Զի ուխտիւք խնդրէի ես իսկ
ինքնին նզովք լինել 'ի Քրիստոսէ,
վասն եղբարց իմոց և ազգակա-
4 նաց ըստ մարմնոյ, Որ են Իս-
րայէլացիք. որոց որդեգրու-
թիւնն և փառքն և կտակա-
րանքն և օրէնադրութիւնն և
5 պաշտօնն և աւետիքն, Որոց
հարքն, յորոց և Քրիստոս
ըստ մարմնոյն, որ է 'ի վերայ
ամենեցուն Աստուած օրհնեալ
6 յաւիտեանս. ամէն։ Ոչինչ է
մարթ՝ եթէ անկած լինիցի բանն
Աստուծոյ. զի ոչ ամենեքեան՝
որ Իսրայէլէն են, նոքա
7 Իսրայէլեանք իցեն. Եւ ոչ որ
զաւակն Աբրահամու են՝ ամե-
նեքեան որդիք իցեն. այլ
Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ։

սիրեց, Քանզի հաստատ գի-
տեմ, որ ոչ մահ, ոչ կեանք, 38
ոչ հրեշտակներ, ոչ իշխա-
նութիւններ, ոչ զօրութիւններ,
ոչ ներկայ բաներ, ոչ գալու
բաներ։ Եւ ոչ բարձրութիւն, 39
ոչ խորութիւն, և ոչ մեկ
ուրիշ ստեղծուած բան կարող
է մեզ բաժանել Աստուծոյ սէ-
րից՝ որ մեր Տէր Յիսուս
Քրիստոսումն է։

ԳԼ. Թ

Ճշմարիտն ասում եմ Քրիս- 1
տոսումը՝ ես սուտ չեմ ասում,
իմ խղճմտանքն էլ վկայում է
ինձ Սուրբ Հոգով։ Որ մեծ 2
տրտմութիւն է ինձ և անպակաս
ցաւ իմ սրտին։ Քանզի կըխնդ- 3
ըէի՝ ես ինքս նզովուած լինել
Քրիստոսից իմ եղբայրների և
մարմնաւոր ազգականների հա-
մար. Որոնք Իսրայէլացի են. 4
որոնցն է որդեգրութիւնը, և
փառքը և կտակարանները, և
օրինադրութիւնը և պաշտօնը և
խոստումները. Որոնց են հարքը՝ 5
և որոնցից Քրիստոսն է մարմ-
նոյ կողմանէ, որ է ամենի վե-
րայ Աստուած, օրհնեալ յա-
ւիտեանս. ամէն։ Բայց ոչ իբր 6
թէ Աստուծոյ խօսքը դեռինն է
ընկել. քանզի ոչ թէ ամենքն
որ Իսրայելից են՝ նորանք են
Իսրայէլը։ Եւ ոչ թէ նորանք 7
որ Աբրահամի զաւակ են,
ամենքն որդիք են. այլ Իսա-

8 Այսինքն՝ ոչ եթէ որ որդիք
մարմնոյն են, են որդիք Աստու-
ծոյ, այլ որդիք աւետեացն հա-
9 մարին 'ի զաւակ։ Քանզի աւե-
տեաց խօսք է բանս այս, եթէ 'ի
ժամանակի յայսմիկ եկից՝ և
10 եղիցի որդի Սառայի։ Եւ ոչ
այնչափ միայն՝ այլ և 'ի Հռե-
բեկայ 'ի միոջէ անկողնոյ Սա-
11 հակայ հօր մերոյ։ Զի մինչչև
ծնեալ էին, և մինչչև բարի ինչ
կամ չար գործեալ էին. զի
ըստ ընտրութեանն առաջադրու-
թիւնն Աստուծոյ հաստատեսցի.
12 Ո՛չ 'ի գործոց՝ այլ յայնմանէ որ
13 կոչեացն՝ ասացաւ նմա. թէ
երէցն կրտսերոյն ծառայեսցէ,
որպէս և գրեալ է. թէ զՅա-
կովբ սիրեցի, և զԵսաւ ատեցի։

14 Իսկ արդ՝ զի՞նչ ասեմք.
միթէ անիրաւութիւն իցէ Աս-
15 տուծոյ. քա՛ւ լիցի։ Զի Մովսէսի
ասէ. Ողորմեցայց՝ որում
ողորմեցայցն, և գթացայց՝ յորս
16 գթացայցն։ Այսպա՛ ոչ ըստ այնմ
ինչ է՝ որ կամիցին, և ոչ ըստ
այնմ՝ որ ընթանայցէ. այլ ըստ
Աստուծոյ որ ողորմին։
17 Քանզի ասէ գիր ցՓարաւոն.
թէ վասն այնորիկ գրգռեցի
զքեզ, զի 'ի քեզ ցուցից զզօրու-
թիւն իմ, և պատմեսցի անուն
18 իմ՝ ընդ ամենայն երկիր։ Այսպա
ուրեմն՝ ում կամի ողորմի, և
19 ում կամի խոտանայ։ Իսկ արդ
ասիցես, թէ մեզ ևս զի՞նչ դնէ՝ զի

հակովքեզ համար զաւակ պիտի
կանչուի։ Այսինքն՝ ոչ թէ 8
մարմնոյ որդիքն են Աստուծոյ
որդիք. այլ խոստման որդիքն
են զաւակ համարվում։ Քան- 9
զի խոստման խօսքը սա է. թէ
Այս ժամանակումը կ'գամ՝ և
Սառային որդի կ'լինի։ Եւ 10
ոչ միայն այսչափ. բայց Հռե-
բեկան էլ մէկից յղանալով՝ մեր
հայր Իսահակից. Քանզի նո- 11
բանք տակաւին չծնուած, և
մի բարի կամ չար բան էլ
չգործած. որպէս զի ընտրու-
թեան պէս Աստուծոյ նախասահ-
մանութիւնը հաստատ մնայ. Ոչ 12
թէ գործքերից՝ այլ կանչո-
ղից, ասուեցաւ նորան. թէ 13
մեծը պիտի ծառայէ փոքրին.
ինչպէս գրուած է. Յակոբին
սիրեցի, և Եսաւին ատեցի։

Հիմա ի՞նչ ասենք. մի՞թէ 14
Աստուծոյ մօտ անիրաւութիւն
կայ. քաւ լիցի։ Քանզի Մո- 15
սէսին ասում է. Կողորմիմ՝
ում որ կողորմիմ, և կգթամ՝
ում որ կգթամ։ Այսպա ուրեմն 16
ոչ կամեցողինն է, և ոչ էլ
վազողինը, այլ Աստուածանից
որ ողորմում է։
Քանզի գիրքն ասում է 17
փարաւօնին, թէ հէնց նորա հա-
մար գրգռեցի քեզ՝ որ քեզա-
նում ցոյց տամ իմ զօրութիւնը,
և իմ անունն ամեն երկրի մէջ
պատմուի։ Այսպա ուրեմն՝ ում 18
որ կամենում է ողորմում է. և
ում կամենում է՝ խստացնում

կամաց նորա ոչՔ կայ հակա-
20 ռակ։ Իսկ արդ դու ո՞վ ես մարդ՝ որ պատասխանի տաս Աստուծոյ. միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցՍտեղծիչն՝ թէ Ինչո՞ր
21 այդպէս արարեր զիս։ Եթէ ոչ ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն, ՚ի նմին զանգուածոյ առնել անօթ՝ զոմն ՚ի պատիւ և
22 զոմն յանարգանս։ Պա եթէ կամէր Աստուած ցուցանել զբարկութիւն, և յայտնի առնել զզօրութիւն իւր, որ համբերն բազումերկայնմտութեամբ անօթոցն բարկութեան՝ պատրաստելոցն ՚ի կորուստ. Օ՚ի յայտնի
23 արասցէ զմեծութիւն փառաց իւրոց ՚ի վերայ անօթոցն ողորմութեան, զոր պատրաստեաց ՚ի
24 փառս։ Զորս և կոչեաց զմեզ, ոչ միայն ՚ի Հրէից՝ այլ և ՚ի
25 հեթանոսաց։ Որպէս և Յովսեէ ասէ. Կոչեցից՝ զոր ոչ ժողովուրդ իմ՝, ժողովուրդ ինձ. և զչսիրեցեալն՝ սիրեցեալ, և ըզչո-
26 զորմեալն՝ ողորմեալ։ Եւ եղիցի ՚ի տեղւոջ յորում ասացաւ նոցա՝ թէ ոչ ժողովուրդ իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք
27 Աստուծոյ կենդանւոյ։ Եսայի աղաղակէ վասն Իսրայէլի. Եթէ իցէ թիւ որդւոցն Իսրայէլի իբրև ցաւաղ ծովու՝ սակաւ ինչ
28 մնացորդք մնասցեն։ Զի բան մի հակիրճ և համառօտ արդարութեամբ. զբանն հակիրճ արասցէ Տէր ՚ի վերայ երկրի։
29 Եւ որպէս ասէ Եսայի. Թէ ոչ է։ Զպա ինձ կ՚ասես, Ոչ՚ 19
ինչո՞ւ է մեղադրեալ. Նորա կամքին ո՞վ հակառակ կ՚կենայ։
Դայց դու ո՞վ ես, մարդ, որ 20
Աստուծոյն դէմ պատասխան ես տալիս. Մի՞թէ ստեղծուածը կ՚ասէ իր Ստեղծողին՝ թէ Ինչո՞ւ
այդպէս արիր ինձ։ Մի՞թէ 21
բրուտը իշխանութիւն չունի հողի վերայ, որ միևնոյն զանգուածիցը շինէ մէկը պատուոյ անօթ, և միւսը անարգութեան։
Եւ եթէ Աստուած՝ կամենալով 22
ցոյց տալ բարկութիւնը և յայտնել իր զօրութիւնը՝ շատ երկայնմտութեամբ համբերեց բարկութեան անօթներին՝ որ կորուստի համար պատրաստուած
էին. Եւ որ յայտնի ցոյց տայ 23
իր փառաց մեծութիւնը՝ ողորմութեան անօթների վերայ, որոնց առաջուց պատրաստեց
փառաց համար։ Որ մեզ էլ 24
կանչեց, ոչ թէ միայն Հրէաներից, այլ հեթանոսներից էլ.
Ինչպէս որ Յովսէի գրքումն էլ 25
ասում է. Այն որ իմ ժողովուրդը չէ, ինձ ժողովուրդ կ՚կանչեմ. և չսիրուածը՝ սիրուած։ Եւ կ՚լինի որ այնտեղ 26
որ ասուեցաւ նորանց՝ թէ դուք իմ ժողովուրդ չէք, այնտեղ նորանք կենդանի Աստուծոյ որդիք կ՚կոչուին։ Եսային աղա- 27
ղակում է Իսրայէլի համար. թէ և Իսրայէլի որդոց համարը ծովի աւազին պէս շատ լինի, Դայն մնացորդը կ՚փրկուի։

Տեառն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, Իբրև զՍոդոմ լինէաք՝ և Գոմորայ նմանէաք։

30 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդարութեան, այնմ արդա-
31 րութեան՝ որ ՚ի հաւատոց ան-
տի։ Այլ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդարութեան՝ և յօրէնս արդարութեան ոչ
32 ժամանեաց։ Ընդէ՞ր. զի ոչ ՚ի հաւատոց՝ այլ իբրև ՚ի գործոց օրինաց. քանզի գթեցին նոքա առ վիմին գայթակղութեան.
33 Որպէս և գրեալ է. ահաւասիկ դնեմ ՚ի Սիօն քար գայթակղութեան և վէմ գլորման. և ամենայն որ հաւատասցէ ՚ի նա՝ մի՛ ամաչեսցէ։

ԳԼ. Ժ

1 Ե՛ղբարք՝ իմ կամք սրտի և աղօթք առ Աստուած վասն
2 նոցա են ՚ի փրկութիւն։ Վասնզի վկայեմ նոցա՝ թէ զնախանձն Աստուծոյ ունին, այլ ոչ գիտու-
3 թեամբ։ Զի տգէտ են Աստուծոյ արդարութեան, և զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի

Վասնզի մի կարճ և համառօտ 28
բան կ՚անէ Տէրը արդարութեամբ. Տէրը կարճ կ՚անէ բանը երկրի վերայ։ Եւ ինչ- 29
պէս որ Եսային առաջուց ասաց. Եթէ Սաբաւօթ Տէրը մեզ համար զաւակ չէր թողել, մենք Սոդոմի պէս կ՚լինէինք և և Գոմորին կ՚նմանէինք։
Արդ ի՞նչ ասենք. այն՝ որ 30
հեթանոսներն, որ արդարութեան ետևից չէին գնում, արդարութեան հասան՝ այն արդարութեանն՝ որ հաւատքիցն է։
Դայց Իսրայէլն՝ որ գնում էր 31
արդարութեան օրէնքի ետևից, արդարութեան օրէնքին չըհասաւ։ Ինչո՞ւ համար. որով- 32
հետև ոչ թէ հաւատքիցը, այլ իբր օրէնքի գործքերիցը ՈՐՊԷՍ ԳՐՊԱՐԱՆՈՒԼ. քանզի գայթակղութեան քարի վերայ գլորուեցան։ Ինչպէս գրուած
է. Ահա ես Սիօնի մէջ գայթակ- 33
ղութեան քար և գլորուելու վէմ եմ դնում. և ամէն նորան հաւատացողը չի ամաչիլ։

ԳԼ. Ժ

Եղբայրք, իմ սրտի փափագը 1
և դէպի Աստուած աղօթքը Իսրայէլի համար փրկութեան
մասին է։ Վասնզի վկայում եմ 2
նորանց՝ որ Աստուծոյ նախանձն ունին, բայց գիտութեամբ չէ։
Վասնզի Աստուծոյ արդարու- 3
թիւնը չգիտենալով, և իրանց

արդարութեանն Աստուծոյ ոչ
4 հնազանդեցան։ Վասնզի կա-
տարած օրէնացն Քրիստոս է՝
յարդարութիւն ամենայն հա-
ւատացելոց։

5 Մովսէս գրէ զարդարու-
թիւնն, որ յօրէնաց անտի է.
թէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ
6 նովին։ Իսկ զհաւատոցն արդա-
րութենէ այսպէս ասէ. Մի
ասիցես ի սրտի քում, ո՞վ
եկանիցէ յերկինս, այսինքն է՝
զՔրիստոս իջուցանել. Կամ՝
ո՞վ իջանիցէ յանդունդս. այ-
սինքն է զՔրիստոս հանել ի
8 մեռելոց։ Այլ զի՞նչ ասէ գիր.
Մերձ է բանն ի բերան քո՝ և
ի սրտի քում է. այսինքն է
բանն հաւատոց զոր քարոզեմք։
9 Զի եթէ խոստովանեսցես բե-
րանով քով Տէր զՅիսուս, և
հաւատասցես ի սրտի քում, թէ
Աստուած յարոյց զնա ի մեռե-
10 լոց, կեցցես։ Զի սրտիւ հաւա-
տայք յարդարութիւն, և բե-
րանով խոստովանիք ի փրկու-
11 թիւն։ Վասնզի ասէ գիր.
Ամենայն որ հաւատասցէ ի նա,
12 մի ամաչեսցէ։ Զի ոչ գոյ
խտիր Հրէի և Հեթանոսի.
քանզի նոյն Տէր է ամենեցուն,
բաւական յամենեսին զոյք կար-
13 դան առ նա. Զի ամենայն որ
կարդասցէ զանուն Տեառն՝
կեցցէ։

արդարութիւնը կանգնեցնել
կամենալով՝ Աստուծոյ արդա-
4 րութեանը չհնազանդեցին։
Վասնզի օրէնքի վախճանը
Քրիստոսն է՝ ամեն հաւատացողի
համար դէպի արդարութիւն։
Վասնզի Մովսէսը գրում է 5
այն արդարութեան համար՝ որ
օրէնքից է, թէ այս բաներն
անող մարդը կ'ապրի նոր անցով։
Բայց հաւատքից ելնող արդա- 6
րութիւնը այս պէս է ասում.
Ասասես քո սրտումը, Ո՞վ վեր
կ'ելնէ երկինքը, այսինքն՝ Քրիս-
տոսին վայր բերելու համար։
Կամ՝ ո՞վ կ'իջնէ անդունդն այս- 7
ինքն՝ Քրիստոսին մեռելների
միջից հանելու համար։ Բայց 8
ինչ՞ է ասում. Մօտիկ
է քեզ խօսքը, քո բերանումն
ու քո սրտումն է, այսինքն
հաւատքի խօսքն՝ որ մենք քա-
9 րոզում ենք։ Վասնզի եթէ բե-
րանովդ Յիսուսին Տէր դա-
ւանես, և սրտումդ հաւատաս՝
թէ Աստուած յարոյց նորան
մեռելներից, կ'ապրես։ Վասնզի 10
սրտով հաւատում ենք արդա-
րանալու համար, և բերանով
դաւանում ենք՝ փրկուելու հա-
մար։ Վասնզի գիրքն ասում 11
է. Ամեն ով որ հաւատայ նո-
րան՝ չի ամաչիլ։ Վասնզի 12
խտրութիւն չկայ Հրէայի
և Յոյնի մէջ. որովհետև
նոյնն է ամենի Տէրը, առատ
ամենի համար՝ որ կանչում
են նորան։ Վասնզի ամեն ով 13

14 Իսկ զիա՞րդ կարդասցեն՝ յոր
ոչն հաւատացին. կամ զիա՞րդ
հաւատասցեն որում ոչ լուան.
կամ զիա՞րդ լուիցեն առանց
15 ուրուք քարոզելոյ. Կամ զի-
ա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ ա-
ռաքեսցին. որպէս և գրեալ է.
Որքա՞ն գեղեցիկ են ոտք
աւետարանչացն խաղաղութեան
և աւետարանչացն բարութեան։
16 Այլ ոչ ամենեքեան հնազանդ
եղեն աւետարանին. Եսայի
աղաղակէ. Տէր ո՞ հաւատաց
17 լրոյ մերում։ Այսպա ուրեմն
հաւատք ի լսելոյ են, և լուր ի
բանէն Քրիստոսի։
18 Այլ ասեմ, միթէ ո՞չ լուան.
մանաւանդ զի ընդ ամենայն
երկիր ել բարբառ նոցա, և ընդ
ծագս տիեզերաց խօսք նոցա։
19 Այլ ասեմ, միթէ Իսրայէլ ոչ
լուաւ. նախ Մովսէս ասէ. Ես
նախանձեցուցից զձեզ ոչինչ
ժողովրդեամբ, և աղգաւ ան-
20 մտաւ զկծեցուցից զձեզ։ Բայց
Եսայի համարձակի իսկ՝ և ասէ.
Գտայ այնոցիկ՝ որ զիսն ոչ
խնդրէին. յայտնի եղէ այնո-
ցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին։
21 Այլ առ Իսրայէլ ասէ. Զօր
ամենայն ձգեցի զձեռս իմ առ
ժողովուրդ անհաւան և հակա-
ռակող։

որ Տիրոջ անունը կանչէ՝
կ'ապրի։
Բայց ինչպէս կանչեն, որին 14
չհաւատացին. և ինչպէս հա-
ւատան, որին չլսեցին. և ինչ-
պէս լսեն, առանց քարոզողի.
Եւ ինչպէս քարոզեն, եթէ 15
չուղարկուին. ինչպէս գրուած
է. Որպէս գեղեցիկ են նորանց
ոտներն՝ որ խաղաղութիւն են
քարոզում և բարի բաներ են
աւետիք տալիս։ Բայց ոչ թէ 16
ամենքը հնազանդ եղան աւե-
տարանին։ Վասնզի Եսային ա-
սում է. Տէր, ո՞վ հաւատաց
մեր լուրին։ Ուրեմն հաւատքը 17
լսելուցն է, և լսելը՝ Աստու-
ծոյ խօսքիցը։
Բայց ասում եմ. Մի՞թէ 18
չլսեցի՞ն. մանաւանդ որ նո-
րանց ձայնը դուրս գնաց բոլոր
երկիրը, և նորանց խօսքը մինչև
աշխարհքի ծայրերը։ Բայց ա- 19
սում եմ. Մի՞թէ Իսրայէլը
չգիտաց. առաջ Մովսէսն է ա-
սում. Ես ձեզ նախանձաւոր
կ'շինեմ մի ոչինչ ժողովրդով,
և մի անմիտ աղգով կըկսկծաց-
նեմ ձեզ։ Բայց Եսային աւելի 20
համարձակում է՝ և ասում. Ես
գտանուեցայ նորանցից՝ որ ինձ
չէին որոնում. յայտնի եղայ
նորանց՝ որ ինձ համար չէին
հարցնում։ Բայց Իսրայէլին 21
ասում է. Ողոր օրն իմ ձեռքե-
րը մեկնեցի դէպի մի անհնա-
զանդ և հակառակող ժողո-
վուրդ։

ԳԼ. ԺԸ.

1 Իսկ արդ ասեմ, միթէ մերժեաց
Աստուած զժողովուրդ իւր.
քաւ լիցի. քանզի և ես Իսրայէ-
լացի եմ, ի զաւակէ Աբրա-
2 համու յազգէ Յենիամենի: Ոչ
մերժեաց Աստուած զժողովուրդ
իւր զոր յառաջն ծանեաւ. թէ
ոչ գիտէք Յեղիա զինչ ասէ
գիր. որպէս ամբաստան լինի
3 Աստուծոյ զԻսրայէլէ: Տէր՝
զմարգարէս քո կոտորեցին, և
զսեղանս քո կործանեցին. ես
մնացի միայն, և խնդրեն զանձն
4 իմ: Այլ զինչ ասէ նմա պա-
տասխանին. Թողի ինձ ասէ՝
եօթն հազար այր, որ ոչ կրկնե-
5 ցին ծունր Բահաղու: Այսպէս
և յայսմ ժամանակի միացորդք՝
ըստ ընտրութեան շնորհացն
6 եղին. Իսկ եթէ շնորհօք, ոչ
ևս ի գործոց. ապա թէ ոչ՝
շնորհքն ոչ ևս շնորհք լինին:
7 Իսկ արդ զոր խնդրէրն Ի-
սրայէլ, այնմ ոչ եհաս. բայց
ընտրութեանն* եհաս, և այլքն
8 կուրացան. Որպէս գրեալ է.
Եա նոցա Աստուած հոգի յի-
մարութեան աչս որովք ոչ
տեսանիցեն, և ականջս՝ որովք
ոչ լսիցեն, մինչև ցայսօր ժամա-
9 նակի: Եւ Դաւիթ ասէ.
Եղիցին սեղանք նոցա յորոգայթ
և ի յորս և ի գայթակղու-
թիւն և ի հատուցումն նոցին:

* Ի Յոյնն, ընտրութիւնն

ԳԼ. ԺԸ.

Արդ ասում եմ, Մի՞թէ 1
Աստուած դէն զցեց իր ժողո-
վուրդը. քաւ լիցի. քանզի ես
էլ Իսրայէլացի եմ՝ Աբրահամի
զաւակից, Յենիամինի ցեղից:
Աստուած դէն չզցեց իր ժո- 2
ղովուրդը՝ որին առաջուց ճա-
նաչեց. կամ թէ չէք գիտում
թէ գիրքն ի՞նչ է ասում Ե-
ղիայի համար գրո-ած-ու-մը.
ի՞նչպէս նա Իսրայէլի դէմ
գանգատում է Աստուծոյ առջև.
Տէր, քո մարգարէներին կո- 3
տորեցին և քո սեղանները կոր-
ծանեցին. և միայն ես մնացի,
և իմ անձն են որոնում: Բայց 4
աստուածային պատգամն ի՞նչ
է ասում նորան. Եօթն հազար
մարդ թողի ինձ համար, որ
Բահաղին ծունր չդրին: Հենց 5
այսպէս էլ այս ժամանակումս
շնորհքի ընտրութեան պէս մի
մնացորդ եղաւ: Բայց եթէ որ 6
շնորհքով է՝ էլ գործքերից չէ.
ապա թէ ոչ՝ շնորհքն էլ
շնորհք չի լինիլ. բայց եթէ
գործքերից է, էլ շնորհք չէ.
ապա թէ ոչ՝ գործքն էլ գործք
չէ: Ուրեմն ի՞նչ. այն որ Ի- 7
սրայէլը որոնում էր նորան
չհասաւ, բայց ընտրուածները
հասան, և միւսները կուրացան:
Ինչպէս գրուած է. Աստուած 8
տուաւ նորանց թմրութեան

10 Խաւարեսցին աչք նոցա զի մի
տեսցեն. և զթիկունս նոցա հա-
11 նապազ կորացո: Իսկ արդ ասեմ,
միթէ վասն անյուսութեան՝
զի կործանեսցին. քաւ լիցի.
այլ նոցա յանցանօքն փրկու-
թիւն հեթանոսաց. զի նախանձ
12 արկցէ նոցա: Իսկ եթէ յան-
ցանքն նոցա մեծութիւն աշ-
խարհի, և պարտութիւնն նոցա
մեծութիւն հեթանոսաց, որչափ
ևս առաւելագոյնութիւն նոցա:

13 Այլ ձեզ ասեմ հեթանոսաց՝
ցորչափ ժամանակս իցեմ հե-
թանոսաց առաքեալ, զպաշտօնն
14 իմ փառաւոր առնեմ, Օ՛ի
թերևս նախանձ* արկից նոցա
մարմնով իմով՝ և ապրեցուցից
15 զոմանս ի նոցանէ: Օ՛ի եթէ
մերժումն նոցա հաշտութիւն
աշխարհի է. իսկ ընդունելու-
16 թիւնն զինչ իցէ, եթէ ոչ
կենդանութիւն ի մեռելոց: Իսկ
եթէ սկիզբն սուրբ է՝ և զան-
գուածն. և եթէ արմատն՝ ապա
17 և ոստքն: Եթէ յոստոց անտի
ումանք փշրեցան, և դու որ
ձիթենիդ վայրենի էիր՝ պա-

* Ի Յոյնն, արկից մարմնոյ իմում

հոգի. աչքեր՝ որ չտեսնեն, և
ականջներ որ չլսեն, մինչև այս
օրուայ օրը: Եւ Դաւիթ ա- 9
սում է. Նորանց սեղանը թող
որոգայթ լինի նորանց՝ և որս
և գայթակղութիւն՝ և հատու-
ցումն նորանց համար: Թող 10
նորանց աչքերը խաւարուին՝ որ
չտեսնեն. և նորանց թիկունք-
ները միշտ ծռեցրու: Ուրեմն 11
ասում եմ. Մի՞թէ գլորուեցան՝
որ կործանուին. քաւ լիցի. բայց
նորանց գլորուելովը հեթանոս-
ների փրկութիւնն եղաւ՝ որ
նախանձի գրգռէ նորանց: Բայց 12
եթէ նորանց յանցանքը աշ-
խարհքին մեծութիւն է, և նո-
րանց նուաստութիւնը հեթա-
նոսների մեծութիւն, էլ որքան
աւելի նորանց լիութիւնը:
Բայց ձեզ հեթանոսներիդ ա- 13
սում եմ. Քանի որ ես հե-
թանոսների առաքեալ եմ՝ իմ՝
պաշտօնը փառաւոր կ՝անեմ. Որ 14
գուցէ իմ՝ մարմինը ընդունելու
նախանձի գրգռեմ, և նորանցից
մի քանիսն ապրեցնեմ: Քան- 15
զի եթէ նորանց մերժումը աշ-
խարհքի հաշտութիւն է. ապա
նորանց ընդունելութիւնն ինչ
է, եթէ ոչ՝ կենդանութիւն մե-
ռելներից: Եւ եթէ սկիզբը 16
սուրբ է՝ ապա զանգուածն էլ.
և եթէ արմատը սուրբ է՝ ապա
ճիւղերն էլ: Բայց եթէ ճիւ- 17
ղերից ումանք կոտրուեցան, և

տուաստեցար 'ի նոսա, և բա-
ժանորդ եղեր յարմատոյն և
պարարտութեան ձիթենւոյն,
18 Մի՛ պարծիր առ ոստովքն. ապա
եթէ պարծիցես՝ ո՛չ եթէ դու
զարմատն 'ի վեր ունիս, այլ
19 արմատն զքեզ: Իսկ արդ ասիցես, ոստքն փշրեցան, զի ես
20 պատուաստեցայց: Լաւ է՝ անհաւատութեամբն փշրեցան,
և դու հաւատովք հաստատեցար. մի հպարտանար՝ այլ
21 երկիր: Զի թէ Աստուած 'ի բուն ոստսն ո՛չ խնայեաց, գուցէ
երբէք և 'ի քեզ ո՛չ խնայիցէ:
22 Արդ տես զքաղցրութիւն և զսաստկութիւնն Աստուծոյ. 'ի
վերայ կործանելոցն սաստկութիւն, և 'ի վերայ քո քաղցրութիւնն Աստուծոյ, եթէ կացցես
'ի նմին քաղցրութեան. ապա
23 թէ ոչ՝ և դու կոճոպեսցիս: Եւ
նոքա եթէ ո՛չ 'ի նմին անհաւատութեան կայցեն, պատուաստեսցին. զի կարող է Աստուած միւսանգամ պատուաստել
24 զնոսա: Զի եթէ դու 'ի բուն
'ի վայրենի ձիթենւոյ անտի
հատար՝ և յանբուն 'ի բարի
ձիթենւոջն պատուաստեցար,
ո՞րչափ ևս առաւել նոքա՝ որ
բունքն իսկ են՝ պատուաստեսցին
յիւրեանց ձիթենւոջն:

25 Ո՛չ կամիմ եղբարք եթէ
տգէտք իցէք խորհրդոյս այսմիկ,
զի մի՛ յանձինս ձեր իցէք իմաստունք. զի կուրութիւն փոքր 'ի
դու որ վայրի ձիթենի էիր՝ նոր-
անցուս պատուաստուեցար, և
հաղորդ եղար արմատին և ձի-
թենու պարարտութեանը. Մի՛ 18
պարծենար այն ճիւղերի դէմ.
բայց եթէ պարծենաս, դու չես
արմատը վեր բռնում, այլ ար-
մատը քեզ: Արդ կ'ասես. Ճիւ- 19
ղերը կոտրուեցան՝ որ ես պա-
տուաստուիմ: Լաւ. նորանք 20
անհաւատութիւնով կոտրուեցան, և դու հաւատքով հաստատուեցար. մի ամբարտաւանար, այլ վախեցիր: Զի եթէ 21
Աստուած բնական ճիւղերին չխնայեց, մի գուցէ քեզ
էլ չխնայէ: Արդ տես Աստու- 22
ծոյ քաղցրութիւնը և սաստկութիւնը. կործանուածներին վերայ
սաստկութիւնը, և քեզ վերայ
քաղցրութիւնը, եթէ այն քաղցրութիւնումը կենաս. ապա թէ
ոչ՝ դու էլ կ'կտրուիս: Եւ նո- 23
րանք էլ՝ եթէ անհաւատութիւնումը չկենան՝ կ'պատուաստուին. քանզի Աստուած կարող
է դարձեալ պատուաստել նո-
րանց: Զի եթէ դու 'ի 24
բնէ վայրի ձիթենուցը կտրուեցար՝ և բնութեան դէմ՝ բարի
ձիթենու վերայ պատուաստուեցար, էլ ի՞նչքան աւելի նորանք՝
որ բնական են՝ կ'պատուաստուին
իրանց ձիթենու վերայ:
Զի զի չեմ կամենում, եղ- 25
բայրք, որ չգիտենաք այս խոր-
հուրդը, որ ձեր անձներումը
իմաստուն չլինիք, որ ըստ մասին

շատէ եղև Իսրայէլի. մինչև
26 լցումն հեթանոսաց մտցէ, Եւ
ապա ամենայն Իսրայէլ կեցցէ.
որպէս և գրեալ է. Եկեսցէ 'ի
Սիովնէ փրկիչ՝ և դարձուսցէ
զամբարշտութիւնսն 'ի Յակով-
27 բայ: Եւ այս նոցա որ յինէն
ուխտ, յորժամ բարձից զմեղս
28 նոցա: Ըստ աւետարանիս թշնա-
միք են վասն ձեր, ըստ ընտրու-
թեանն՝ սիրելիք վասն հարցն:
29 Զի անզղջ են շնորհք և
30 կոչումն Աստուծոյ: Զի որպէս
և դուք երբեմն ապստամբք էիք
յԱստուծոյ՝ և արդ ողորմու-
թիւն գտեք առ նոցա ապստամ-
31 բութեամբն. Զոյնպէս և նոքա
այժմ ապստամբ *եղեն առ
ձերով ողորմութեամբդ. զի և՝
նոքա ողորմութիւն գտցեն:
32 Զի անզղջ արգել Աստուած զամ-
նեսին յանհաւատութիւն, զի
ամենեցուն ողորմեսցի:

33 Ո՞վ խորք մեծութեան և
իմաստութեան և գիտութեան
Աստուծոյ. որպէս զի առանց
քննելոյ են դատաստանք նորա,
և առանց զննելոյ են ճանա-
34 պարհք նորա: Զի ո՞վ գիտաց
զմիտս Տեառն, կամ ո՞վ խորհր-
35 դակից եղև նմա. Կամ ո՞վ եւ
նմա փոխ, և առնուցու զզիտ-

Իսրայէլին կուրութիւն եղաւ,
մինչև հեթանոսների լրութիւնը
մտնէ: Եւ այսպէս բոլոր Ի- 26
սրայէլը կ'ապրի. ինչպէս գրուած
է, թէ Սիօնիցը Փրկիչը կ'գայ՝
և ամբարշտութիւնները դէն
կ'գցէ Յակոբիցը: Եւ այս է 27
իմ՝ ուխտը նորանց հետ, երբոր
նորանց մեղքերը վեր կ'առնեմ:
Աւետարանի նկատմամբ նորանք 28
թշնամի են ձեր պատճառովը,
ընտրութեան նկատմամբ՝ սիրելի
են հարանց համար: Որովհետև 29
Աստուծոյ շնորհքը և
կոչումը զղջանալ չունի: Զան- 30
զի ինչպէս դուք էլ մի ժամա-
նակ չէիք հաւատում Աստու-
ծոյն, և հիմա ողորմութիւն
գտաք նորանց անհնազանդու-
թիւնովը. Այնպէս էլ նորանք 31
հիմա չհաւատացին ձեր ողոր-
մութիւնովը. որ նորանք էլ
ողորմութիւն գտնեն: Զանզի 32
Աստուած ամենքին անհաւատու-
թեան մէջ արգիլեց՝ որ ամեն-
քին ողորմի:
Ո՞վ Աստուծոյ մեծութեան 33
և իմաստութեան և գիտութեան
խորութիւնը. ինչպէս անքնն-
նելի են նորա դատաստանները,
և անհասկանալի են նորա ճա-
նապարհները: Զանզի ով գի- 34
տաց Տիրոջ միտքը, կամ ո՞վ
եղաւ նորա խորհրդակից: Կամ 35
ո՞վ նորան առաջուց ի՞նչ

* 'Ի Յոյն, եղեն, զի առ ձերով ողորմութեամբդ և

36 խարէն 'ի նմանէ: Օ՛ի 'ի նմանէ՝ և նովաւ՝ և 'ի նոյն ամենայն. նմա փառք յաւիտեանս. ամէն:

ԳԼ. ԺԱ

1 Աղաչեմ զձեզ եղբարք՝ գթութեամբքն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի՝ սուրբ՝ հաճոյ Աստուծոյ, զհաւատն պաշտօնդ ձեր.
2 Եւ մի կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք 'ի նորոգութիւն միտաց ձերոց, առ 'ի քննել ձեզ զլաւն, և եթէ զինչ են կամք Աստուծոյ՝ բարին և հաճոյն և
3 կատարեալն: Օ՛այս ասեմ շնորհօքն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ, ամենայնի որ է 'ի ձեզ, մի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ խորհել 'ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս և բաժանեաց Աստուած
4 չափ հաւատոց: Որպէս 'ի միում մարմնի անդամս բազումս ունիմք. և անդամքն ամենայն
5 ոչ զնոյն գործ ունին. Այսպէս և բազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս. այլ իւրաքանչիւր
6 միմեանց անդամք եմք: Ունայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ ազգս ազգս. եթէ մարգարէութիւն՝
7 ըստ չափուն հաւատոց, Եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ տուաւ, որ նորա հատուցումն առնէ նորանից: Քանզի նո- 36
րանից և նորանով և դէպի նա է ամէն բան. նորան փառք յաւիտեան. ամէն:

ԳԼ. ԺԲ

Աղաչեմ զձեզ, եղբայրք, Աստուծոյ ողորմութիւնովն, որ ձեր մարմինքը պատրաստէք կենդանի, սուրբ և Աստուծոյ ընդունելի պատարագ, որ է ձեր բանաւոր պաշտօնը: Եւ մի կերպարանուիք այս աշխարհքին կերպարանօքը. այլ նորոգուեցէք ձեր միտքի նորոգութեամբը, որ գուք քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին և կատարեալը: Քանզի Աստուծոյ շնորհքովն՝ որ ինձ տրուած է ասում եմ ձեր մէջ ամենին, բան չմտածել նորանից աւելի, քան թէ արժան է մտածել. այլ մտածել պարկեշտ կենալ այնպէս՝ ինչպէս որ Աստուած ամէն մէկին հաւատքի չափը բաժանեց: Որովհետև ինչպէս մէկ մարմնոյ մէջ շատ անդամներ ունինք, և այն ամէն անդամները մի և նոյն գործը չունին: Այնպէս էլ շատերս մէկ մարմին ենք Քրիստոսումն, բայց ամէն մէկն միմեանց անդամ ենք: Այնպէս թէ զանազան պարգևներ ունինք այն շնորհաց պէս՝ որ մեզ տրուած է. թէ մար-

որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութեանն. Եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն. որ առատն է՝ զուարթութեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ
9 ողորմին՝ լրմտութեամբ: Սէր առանց կեղծաւորութեան, ատել զչար, զհետ երթալ բարեաց.
10 Յեղբայրսիրութեան առ միմեանս գթածք. 'ի պատիւ ըզմիմեանս գթածք. 'ի պատիւ ըզմիմեամբք եղանել. 'ի փոյթ՝ մի
11 վհերոտք. հոգւով եռացէք,
12 Տեառն ծառայեցէք. Յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից ստէպ կացէք,
13 'ի պէտս սրբոց հաղորդեցարուք. զհիւրասիրութեան զհետ եր-
14 թայք: Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք և մի անիծանէք:
15 Խնդալ ընդ խնդացողս, լալ ընդ
16 լացողս. Զնոյն միմեանց խորհիջիք. մի ամբարտաւանէք՝ այլ ընդ խոնարհս զիջանիցիք. մի լինիք իմաստունք յանձինս
17 ձեր. Մի՝ ումեք չարի չար հատուցանէք. խորհեցարուք զբարիս առաջի ամենայն մարդ-
18 կան: Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք: Մի՝ զանձանց վրէժ խնդրէք սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան. քանզի գրեալ է. Իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից՝
20 ասէ Տէր: Այլ եթէ քաղցեալ իցէ թշնամի քո՝ հաց տուր նմա, և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա. զայս արարեալ՝ կայծակունս

գարէութիւն՝ հաւատքի չափովը մարգարէանան: Թէ պաշտօն՝ 7
պաշտօնում լինիս. թէ սովորեցնող է՝ մարդապետութեան մէջ լինի: Թէ մխիթարող է՝ 8
մխիթարութեան մէջ. բաշխողը՝ զուարթութիւնով: Սէրն ա- 9
ռանց կեղծաւորութեան. չարն ատեցէք, բարին հետևեցէք:
Եղբայրսիրութեամբ իրար վե- 10
րայ գթած եղէք. պատիւ տալով իրար առաջ անցէք: Ջանք 11
անելով՝ թոյլ չլինիք. հոգովն ջերմեռանդ եղէք, Տիրոջը ծառայեցէք: Յուսով ուրախացէք, 12
նեղութեան համբերեցէք, աղօթքին ստէպ հետևեցէք: Սրբերի պիտոյիցը հաղորդ եղէք. 13
հիւրասիրութեան հետևեցէք:
Ձեզ հալածողներին օրհնեցէք 14
և մի անիծէք: Ուրախացողների 15
հետ ուրախացէք, և լացողների հետ լացէք: Իրար վերայ մի 16
և նոյն խորհուրդը ունեցէք. բարձր բաները մի խորհիք. այլ խոնարհների հետ խոնարհուեցէք. ձեր անձներումը իմաստուն մի լինիք: Մէկին 17
չարի տեղ չար մի հատուցանէք. ամէն մարդկանց առջև բարի խորհուրդ ունեցէք: Եթէ կա- 18
րելի է՝ որքան ձեզանից է կախուած՝ ամէն մարդկանց հետ խաղաղութիւն ունեցէք: Ձեր 19
անձների համար վրէժխնդրութիւն մի անէք, սիրելիներ. այլ բարկութեան տեղ տուէք. քանզի գրուած է՝ Վրէժխնդրու-

հրոյ կուտեսցես 'ի գլուխ նո-
21 րա։ Մ'ի յաղթիր 'ի չարէն. այլ
յաղթեա բարեաւն չարին։

ԳԼ. ԺԳ

1 Մէնայն անձն որ ընդ իշխա-
նութեամբ իցէ՝ 'ի հնազանդու-
թեան կայցէ. քանզի ոչ ուստեք
է իշխանութիւն, եթէ ոչ ՅՍ-
տուծոյ. և որ են, յԱստուծոյ
2 կարգեալ են։ Այսուհետև որ
հակառակ կայ իշխանութեանն,
Աստուծոյ հրամանին հակառակ
կայ, և որք հակառակն կան,
անձանց դատաստանս ընդունին.
3 Օվ իշխանքն ոչ են յերկիւղ
բարեաց գործոց՝ այլ չարաց։
Կամիս չերկնչել յիշխանու-
թենէ անտի. զբարիս գործեա,
և ընկալցիս զգովութիւն 'ի
4 նմանէ. Օվ Աստուծոյ պաշ-
տօնեայ է քեզ 'ի բարիս. Այս-
եթէ չար գործիցես, երկիր. զի
ոչ եթէ վայրապար ածեալ է
սուսեր ընդ մէջ. Աստուծոյ
սպասաւոր է վրէժխնդիր 'ի
բարկութիւն այնմ՝՝ որ զչարն
5 գործիցէ։ Վասն որոյ հարկ է
հնազանդ լինել՝ ոչ միայն վասն
բարկութեանն, այլ և վասն
6 մտացն խղճի։ Վասն այնորիկ և

թիւնն իմն է. ես հատուցումը
կ'տամ, ասում է Տէրը։ Արդ 20
եթէ քո թշնամին սոված է,
հաց տուր նորան. և եթէ ծա-
րաւ է, ջուր տուր նորան. քան-
զի այս անելով կրակի կայծակ-
ներ կ'ժողովես նորա գլխի վե-
րայ։ Մ'ի յաղթուիր չարիցն, 21
այլ բարիովը յաղթիր չարին։

ԳԼ. ԺԳ

Ամէն անձն թող հնազանդէ 1
բարձր իշխանութեանց. քանզի
չկայ իշխանութիւն որ ոչ է
Աստուածանից. և ներկայ իշ-
խանութիւններն Աստուածանից
են կարգուած։ Ուրեմն իշխա- 2
նութեանը հակառակողը Ա-
տուծոյ հրամանին է հակառա-
կում. և հակառակողներն իրանց
անձերին դատաստան կ'ընդու-
նին։ Քանզի իշխանները բարի 3
գործքերի համար վախի պարտ-
ական չեն, այլ չար գործքերի.
կամենում ես որ իշխանութիւ-
նիցը չվախենաս, բարին գոր-
ծիր, և նորանից գովասանք
կ'ընդունիս։ Քանզի սպասաւոր 4
է նա Աստուծոյ քեզ համար
դէպի բարին. ապա եթէ չարը
գործես՝ վախեցիր. քանզի զուր
տեղը սուրը չէ կրում. քանզի
նա սպասաւոր է Աստուծոյ՝
վրէժխնդիր բարկութիւն ըն-
դունողաց չարը գործողի համար։
Վասնորոյ պէտք է հնազանդ 5
լինել՝ ոչ միայն բարկութեան

հարկս հարկանէք, զի Աստու-
ծոյ սպասաւորք են՝ 'ի նոյն
7 կանխեալք։ Արդ հատուցէք
իւրաքանչիւր զպարտս. որում՝
զՀարկ՝ զՀարկն, որում՝ զմաքս՝
զմաքսն, որում՝ զերկիւղ՝ զեր-
կիւղն, որում՝ զպատիւ՝ զպա-
տիւն։

8 Եւ մի ումեք պարտական
դատանիցիք, բայց զմիմեանս սի-
րելոյ. զի որ սիրէ զընկերն,
9 զօրէնսն կատարէ. Զի՝ մի՛ շընայ-
ցեսն, և մի՛ սպանանիցես, և մի՛
գողանայցես, և մի՛ սուտ վկայի-
ցես, և մի՛ ցանկանայցես. և եթէ
այլ ինչ պատուիրան է՝ յայն
բան բովանդակի, եթէ սիրեսցես
10 զընկեր քո իբրև զանձն քո։ Սէր
ընկերի իւրում չար ոչ առնէ.
լրումն օրինացն սէր է։

11 Եւ զայս գիտասջիք վասն
ժամանակիս. զի արդ ժամ իսկ
է մեզ 'ի քնոյ զարթնուլ. զի
այժմ մերձ է մեզ փրկութիւն՝
քան յորժամ հաւատացաքն.
12 Դիշերն մերժեցաւ՝ և տիւն
մերձեցաւ. 'ի բաց արասցուք
այսուհետև զգործսն խաւարի,
13 և զգեցցուք զզէնսն լուսոյ։ Իբրև
'ի տուընջեան զգաստացեալք
շրջեսցուք. մի՛ անառակութեամբք
և արբեցութեամբք, և մի՛ խառն
անկողնովք և պղծութեամբք, և
մի՛ նախանձու և հակառակու-
14 թեամբ. Այլ զգեցարուք զՏէր

համար, այլ խղճմտանքի հա-
մար էլ։ Որա համար հարկ 6
էլ էք վճարում. քանզի նո-
րանք սպասաւորներ են Աստու-
ծոյ որ իսկ այս բանին հոգ են
տանում։ Ուրեմն ամենին վճա- 7
րեցէք Եղած պարտքը. ում որ
հարկ պարտ է՝ հարկը. ում որ
մաքս՝ մաքսը. ում որ վախ՝
վախը, ում որ պատիւ՝ պատիւը։
Ոչ ովի ոչինչ պարտական 8
չմնաք՝ բացի իրար սիրելուց.
քանզի ընկերին սիրողը՝ օրէնքը
կատարել է։ Վասնզի այն Մ'ի 9
շնարը, Մ'ի սպանաններ, Մ'ի
գողանարը, Մ'ի սուտ վկայերը,
և Մ'ի ցանկանարը, և ուրիշ
ինչ պատուիրանք էլ որ կայ,
այս խօսքումն է բովանդակում՝
Որ ընկերն սիրիր քո անձի
պէս։ Սէրն իր ընկերին չար 10
չի անիլ. արդ օրէնքի լրումը
սէրն է։
Եւ այս արէ՛ խմանալով ժա- 11
մանակը, որ ժամ է արդէն
քնից զարթնել. քանզի հիմա
մեզ աւելի մօտ է փրկութիւնը՝
քան թէ այն ժամանակ՝ որ
հաւատացինք։ Դիշերն անցաւ 12
գնաց, և ցերեկը մօտեցել է.
ուրեմն դէն գցենք խաւարի
գործքերը, և հագնենք լուսոյ
զէնքերը։ Ինչպէս ցերեկումը 13
պարկեշտութեամբ մանք գանք.
ոչ թէ անառակութիւններով և
արբեցութիւններով և խառն
անկողիններով և պղծութիւն-
ներով, ոչ հակառակութիւնով

Յիսուս Քրիստոս. և մարմնոյ խնամ մի տանիք ի ցանկութիւնս։

ԳԼ. ԺԴ

1 Այլ զտկարացեալն ի հաւատս ընկալարուք՝ մի խղճիւ
2 երկմտութեանց։ Ոմն հաւատայ ուտել զամենայն. և որ հիւանդն
3 է, բանջար կերիցէ։ Որ ուտէն, զայն՝ որ ոչն ուտէ՝ մի անդոս-նեսցէ, և որ ոչն ուտէ, զայն՝ որ ուտէն, մի դատեսցի. քանզի
4 Աստուած զնա ընկալաւ։ Դու ո՞վ ես որ դատես զայլոյ ծառայ. իւրում Տեառն կայ՝ կամ անկանի. բայց կացցէ՝ զի կարող
5 Տէր հաստատել զնա։ Ոմն պահէ օր ըստ օրէ՝ և ոմն պահէ զօրհանապազ. իւրաքանչիւրոք
6 զիւր միտս հաճեսցէ։ Որ խորհի զօրն՝ Տեառն խորհի. և որ ոչն խորհի զօրն, Տեառն չխորհի. և որ ուտէ, Տեառն ուտէ, և գոհանայ զԱստուծոյ. և որ ոչն ուտէ, Տեառն չուտէ, և գոհա-
7 նայ զԱստուծոյ։ Զի ոչ ոք ի մէնջ անձամբ կեայ, և ոչ անձամբ
8 մեռանի։ Եթէ կեամք՝ Տեառն կեամք. և եթէ մեռանիմք՝ Տեառն մեռանիմք. և արդ եթէ կեամք և եթէ մեռանիմք՝ Տեառն
9 եմք։ Քանզի ի նոյն իսկ և Քրիստոս մեռաւ և եկեաց, զի մեռելոց և կենդանեաց առ-
10 հասարակ տիրեսցէ։ Դու զի՞

և ոչ նախանձով։ Բայց Տէր 14
Յիսուս Քրիստոսին հագցրէք. և մարմնոյ համար խնամք մի տանիք դէպի ցանկութիւն։

ԳԼ. ԺԴ

Բայց հաւատքի մէջ տկար 1
լինողին ընդունեցէք առանց կարծիքների վերայ վիճելու։ Մէ-
2 կը հաւատում է թէ ամէն բան կարող է ուտել. բայց տկարը բանջար է ուտում։ Ուտողը չա- 3
նարգէ չուտողին. և չուտողը չդատէ ուտողին. քանզի Աստուած ընդունեց նորան։ Դու 4
ո՞վ ես՝ որ ուրիշի ծառային դատում ես. իր Տիրոջ է կանգնում կամ ընկնում. բայց կ'կանգնի, քանզի Աստուած կարող է կանգնեցնել նորան։
5 Մէկը օրն օրից աւելի է համարում, իսկ միւսն ամէն օր մէկ է համարում. ամէն մէկը
6 թող իր միտքը հաճեցնէ։ Օրին մտիկ անողը, Տիրոջ համար է մտիկ անում. և օրին մտիկ չանողը, Տիրոջ համար չէ մտիկ անում. և ուտողը Տիրոջ համար է ուտում, քանզի Աստուածանից գոհանում է. և չու-
7 տողը Տիրոջ համար չէ ուտում, և Աստուածանից գոհանում է։ Քանզի մեզանից ոչ 7
ով ինքն իրան համար չէ ապրում, և ոչ ով ինքն իրան համար չէ մեռնում։ Քանզի 8
եթէ ապրինք՝ Տիրոջ ենք ապ-

դատես զեղբայր քո. կամ ընդէ՞ր անդոսնես զեղբայր քո։ Քանզի ամենքին կալոց եմք առաջի
11 ատեանին Քրիստոսի։ Զի գրեալ է. Կենդանի եմ ես՝ ասէ Տէր, զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր՝ և ամենայն լեզու խոստովան
12 լիցի Աստուծոյ։ Այսպէս ուրեմն՝ իւրաքանչիւրոք ի մէջ ընդ անձին համարս տացէ Աստու-
13 ծոյ։ Այսուհետև՝ մի զմիմեանս դատեսցուք. այլ առաւել զայս ղիք ի մտի՝ չդնել գայթակղու-
14 թիւն եղբօրն։ Զայս գիտեմ և հաստատեալ եմ ի Քրիստոս Յիսուս, զի ոչինչ է պիղծ նովաւ. բայց այնմ, որ համարիցէ ոք ինչ պիղծ՝ նմա է պիղծ։
15 Զի եթէ վասն կերակրոյ եղբայրն քո տրտմի, ոչ ես սիրով գնացեր. մի կերակրովն քով զնա կորուսաներ, վասն որոյ Քրիս-
16 տոսն մեռաւ։ Մի հայհոյեսցի
17 բարին ձեր։ Զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն և խնդութիւն և խաղաղութիւն ի
18 Հոգին Սուրբ։ Զի որ յայսմ ծառայէ Քրիստոսի, հաճոյ է Աստուծոյ՝ և ընտիր մարդկան։
19 Այսպէս այսուհետև զկնա երթիցուք զխաղաղութեան, և զշի-
20 նութեան՝ որ առ միմեանս։ Մի վասն կերակրոյ քակեր զգործ Աստուծոյ. ամենայն ինչ սուրբ է. այլ չար այնմ մարդոյ է՝ որ
21 խղճիւն ուտիցէ։ Լաւ է ոչ ուտել միս և ոչ ըմպել գինի, և

րում, և եթէ մեռնինք Տիրոջն ենք մեռնում. ուրեմն թէ ապրինք և թէ մեռնինք՝ Տիրոջն ենք։ Քանզի նոյն իսկ նորա 9
համար էլ Քրիստոս մեռաւ և կենդանացաւ՝ որ մեռելների և կենդանիների վերայ տիրէ։
Բայց դու ինչո՞ւ համար ես 10
դատում եղբօրդ, կամ ինչո՞ւ ես քո եղբօրն անարգում. քանզի ամենքս Քրիստոսի ատեանի առջև պիտի կանգնինք։ Որով- 11
հետև գրուած է՝ Ես կենդանի եմ, ասում է Տէրը. որ ամէն ծունկ ինձ պիտի կրկնուի և ամէն լեզու խոստովան լինի Աստուծոյն։ Ուրեմն մեզանից 12
ամէն մէկն իր անձի համար պիտի հաշիւ տայ Աստուծոյն։ Այս- 13
ուհետև այլ ես իրար չդատենք. այլ աւելի այս դրէք ձեր մտքումը, որ եղբօր գլորում կամ գայթակղութիւն չընէք։
Գիտեմ և հաստատ համոզում եմ 14
Տէր Յիսուսումն, որ ոչ մի բան պիղծ չէ ինքն իրանով. բացի ով որ մի բան պիղծ է համարում, նորա համար պիղծ է։ Բայց եթէ կերակուրի 15
պատճառով քո եղբայրը տըրտմում է, դու այլ ես նորա հետ սիրով չես վարվում, քո կերակուրովը մի կորցնիր նորան, որի համար Քրիստոս մեռաւ։
Բարի ձեր բարի բանը չհայ- 16
հոյուի։ Քանզի Աստուծոյ արքայութիւնն ուտելիք և խմելիք չէ. այլ արդարութիւն և խա- 17

ոչ որով եղբայրն քո գայթակղի,
կամ դթէ, կամ տկարանայ։
22 Դու ապաքէն հաւատս ունիս,
կա՛լ առանձինն առաջի Աստու-
ծոյ. երանի՛ որ *ոչ դատիցի
զանձն, որով զընկերն փորձիցէ՞։
23 Այլ որ խղճէն, թէպէտ և
ուտիցէ՝ դատապարտեալ է՝ զի
ոչ ըստ հաւատոց. զի ամենայն
ինչ որ ո՛չ ՚ի հաւատոց է՝ մեղք
են։
24 †Այլ այնմ, որ կարողն է
հաստատել զձեզ ըստ աւետա-
րանիս իմում և ըստ քարոզու-
թեանն Յիսուսի Քրիստոսի,
ըստ յայտնութեան խորհրդոյն՝
ժամանակօքն յաւիտենից լռու-
25 ցելոյ, Եւ յայտնելոյ այժմիկ ՚ի
ձեռն գրոց մարգարէականաց՝
ըստ հրամանի մշտնջենաւորին
Աստուծոյ, ՚ի հնազանդութիւն
հաւատոց, յամենայն հեթանոսս
26 ծանուցելոյ՝ Միայնոյ իմաստ-
նոյն Աստուծոյ. ՚ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի. որում փառք
յաւիտեանս. ամէն։"

ԳԼ. ԺԵ

1 Պարտ է մեզ որ կարօղս եմք՝
զտկարութիւն տկարացն բառ-

զաղութիւն և ուրախութիւն
Սուրբ Հոգւոյն։ Զանգի նա 18
որ սորանցում Քրիստոսին ծա-
ռայում է, Աստուծոյն հաճոյ
է, և մարդկանց գովելի։ Այս 19
ուրեմն խաղաղութեան և մի-
մեանց շինութեան բաներին ետևից
գնանք։ Կերակուրի պատճա- 20
ռով մի քանդիր Աստուծոյ գոր-
ծը. ամէն բան մաքուր է. բայց
չար՝ այն մարդու համար՝ որ
գայթակղութիւն տալով է ու-
տում։ Լաւ է միս չուտել և 21
գինի չխմել, և այն բանը չանել՝
որ նորանով քո եղբայրը գլոր-
վում է կամ գայթակղում է
կամ տկարանում է։ Դու հա- 22
ւատք ունիս. քեզ համար ու-
նեցիր Աստուծոյ առջև. երանի
նորան՝ որ իր անձը չդատա-
պարտէ նորանով, որ ընդու-
նում է։ Իսկ նա որ խղճմտանք 23
է անում, եթէ ուտէ դատա-
պարտուած է, քանզի հաւատ-
քից չէ. և ամէն ինչ որ հաւատ-
քից չէ, մեղք է։

ԳԼ. ԺԵ

Մենք որ կարող ենք՝ պէտք 1
է տկարների տկարութիւնը վեր

* ՚Ի Յոյնն, ոչ դատի զանձն յայնմ զոր ինքն փորձէ

† Բազում օրինակք Յունաց հինգեմ Լեն ընդունուն զայսոսիկ երկու գոնա, այսինքն իմ ասա՝ և իմ ի մեջտեղն ընկնոյս, երկու օրինակք չերկոսին պեղէս և գնեն ըստ Հայ նեբգմանութեանն։

նալ. և մի անձանց և եթ
2 հաճոյ լինել։ Այլ իւրաքան-
չիւրոք ՚ի մէջ ընկերին հաճոյ
լիցի ՚ի բարիս՝ վասն շինութեան։
3 Զանգի և Քրիստոս ոչ եթէ
անձին հաճոյ եղև, այլ որպէս և
գրեալ է. Նախատինք նախատ-
չաց քոց անկան ՚ի վերայ իմ։
4 Բայց որ ինչ գրեցաւն՝ ՚ի մեր
վարդապետութիւն գրեցաւ. զի
համբերութեամբ և մխիթարու-
թեամբ գրոց զյոյսն ընկալցուք։
5 Այլ Աստուած համբերութեան
և ամենայն մխիթարութեան՝
տացէ ձեզ զնոյն խորհել ընդ
միմեանս ըստ Յիսուսի Քրիս-
6 տոսի. Օ՛ի միաբանութեամբ,
՚ի մի բերան փառաւոր առնիցէք
զԱստուած և զՀայր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի։
7 Վասն որոյ ընկալարո՛ւք զըմի-
մեանս, որպէս և Քրիստոս
ընկալաւ զձեզ ՚ի փառս Աստու-
8 ծոյ։ Ասեմ, թէ Քրիստոսի
սպասաւոր թլփատութեանն լի-
նել՝ վասն ճշմարտութեանն Ա-
տուծոյ էր, առ ՚ի հաստատուն
9 առնելոյ զաւետիս հարցն։ Այլ
հեթանոսք վասն ողորմութեան
փառաւոր առնեն զԱստուած.
որպէս և գրեալ է. Վասն
այսորիկ դոհացայց զքէն ՚ի հե-
թանոսս, և անուան քում
10 սաղմոս ասացից։ Եւ դարձեալ
ասէ. Ուրա՛խ լերուք հեթա-
նոսք ընդ ժողովրդեան նորա։
11 Եւ դարձեալ՝ թէ Օրհնեցէք
ամենայն հեթանոսք զՏէր, և
առնենք, և միայն մեր անձնե-
րին հաճոյ չլինինք։ Այս մե- 2
զանից ամեն մէկը թող հաճոյ
լինի ընկերին դէպի բարին՝ շի-
նութեան համար։ Որով հետև 3
Քրիստոս էլ ոչ թէ իր անձին
հաճոյ եղաւ, այլ ինչպէս
գրուած է, Ընկալ նախատող-
ների նախատինքները ինձ վերայ
ընկան։ Վասնզի ինչ որ գրուե- 4
ցաւ՝ մեր սովորելուն համար
գրուեցաւ, որ համբերութեամբ
և գրքերի մխիթարութեամբը
յոյսն ունենանք։ Եւ համբե- 5
րութեան և մխիթարութեան
Աստուածը տայ ձեզ միևնոյն
բանը խորհիլ իրար հետ Քրիս-
տոս Յիսուսի պէս։ Որ միա- 6
բան մէկ բերանով փառաւորէք
Աստուծոյն, և մեր Տէր Յի-
սուսի Քրիստոսի Հօրը։ Վաս- 7
նորոյ իրար ընդունեցէք, ինչ-
պէս Քրիստոս էլ մեզ ընդունեց
Աստուծոյ փառաց համար։ Բայց 8
ասում եմ. թէ Յիսուս Քրիս-
տոս թլփատութեան սպասաւոր
եղաւ Աստուծոյ ճշմարտութեան
համար, որ հարանց խոստում-
ները հաստատէ։ Բայց հե- 9
թանոսները ողորմութեան հա-
մար փառաւորում են Աստու-
ծոյն, ինչպէս գրուած է. Ընդ
սորա համար կ՚գոհանամ քեզ
զանից հեթանոսների մէջ. և
քո անուանը սաղմոս կ՚ասեմ։
Եւ դարձեալ ասում է. Ուրա- 10
խացէք, ով հեթանոսներ, նորա
ժողովրդի հետ։ Եւ դարձեալ 11

գովեցէք զնա ամենայն ժողո-
12 վուրդք։ Եւ դարձեալ Եսայի
ասէ. Եղիցի արմատն Յեսսեայ,
և որ կանգնելոցն է իշխան հե-
թանոսաց, ի նա հեթանոսք
13 յուսասցին։ Այլ Աստուած
յուսոյ՝ լի արասցէ զձեզ ամենայն
խնդութեամբ և խաղաղու-
թեամբ, առաւելուլ ձեզ յուսով՝
զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ։

14 Հաստատեալ եմ և ես
ինքնին եղբարք իմ՝ վասն ձեր,
զի և դուք լի էք բարութեամբ,
լի էք ամենայն գիտութեամբ,
կարող էք և զմիմեանս խրատել։
15 Այլ համարձակագոյնս գրեցի
առ ձեզ եղբարք իմ՝ փոքր ի
շատէ, իբրև յիշեցուցանելով
ձեզ վասն շնորհացն՝ որ տուեալ
16 են ինձ Աստուծոյ. Լինել ինձ
սպասաւոր Յիսուսի Քրիստոսի
ի հեթանոսս. զձակերտս առնել
զաւետարանն Աստուծոյ, զի
եղիցի պատարագն հեթանոսաց
ընդունելի՝ սրբեալ Հոգւովն
17 Սրբով։ Ունիմ այսուհետև
պարծանս ի Քրիստոս Յիսուս
18 առ Աստուած։ Քանզի ոչ
իշխեմ խօսել ինչ՝ զոր ոչ գործե-
ցաց Քրիստոս ինձ ի հնա-
զանդութիւն հեթանոսաց բա-
19 նիւք և արդեամբք, Օրհնու-
թեամբ նշանաց և արուեստից,
զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ,
որպէս ինձ Յերուսաղէմէ և

Օրհնեցէք Տիրոջ, ամեն հե-
թանոսներ, և գովեցէք նորան,
ամեն ժողովուրդներ։ Եւ դար- 12
ձեալ Եսային ասում է. Յես-
սէի արմատը կ'լինի, և նա որ
հեթանոսների համար իշխան
կ'կանգնի, նորան յոյս կ'դնեն
հեթանոսները։ Եւ յուսոյ Աս- 13
տուածը կը լցնէ ձեզ ամեն ու-
րախութիւնով և խաղաղութիւ-
նով, հաւատալու մէջ, որ յու-
սով աւելանաք Սուրբ Հոգոյ
զօրութիւնովը։

Եւ ես ինքս էլ, եղբայրքս, 14
ձեզ համար հաստատ եմ, որ
դուք լիքն էք բարութիւնով,
լցուած ամեն գիտութիւնով,
որ կարող էք իրար էլ խրա-
տել։ Բայց համարձակեցի, եղ- 15
բայրք, փոքր ի շատէ գրել ձեզ.
իբր թէ ձեզ յիշեցնեմ Աս-
տուածանից ինձ տրուած այն
շնորհքի պատճառովը. Որ ես 16
Յիսուսի Քրիստոսի սպասաւո-
րը եմ հեթանոսների մէջ.
Աստուծոյ աւետարանը մատա-
կարարող, որ հեթանոսների պա-
տարագն ընդունելի լինի՝ Սուրբ
Հոգովը սրբուած։ Արդ պար- 17
ծանք ունիմ Քրիստոս Յի-
սուսը Աստուծոյ առջև։ Քան- 18
զի չեմ համարձակիլ մի բան
խօսել՝ որը Քրիստոս չգործեց
ինձանով՝ հեթանոսները հնա-
զանդեցնելու համար՝ խօսքով
և գործքով, Նշանների և 19
հրաշքների զօրութիւնով, Աս-
տուծոյ Հոգոյ զօրութիւնով.

շուրջ՝ մինչև ի կողմանս Լիւրի-
կացւոց՝ լնուլ զաւետարանն
20 Քրիստոսի։ Այնպէս առատա-
ցեալ յաւետարանել, ոչ ուր
անուանեցաւ Քրիստոս, զի մի
իբրև յայլոյ հիման վերայ
շինիցեմ, այլ որպէս և գրեալ է,
21 Թէ որոց ոչ պատմեցաւ վասն
նորա՝ տեսցեն, և որոց ոչ իցէ
22 լուեալ՝ ի միտ առցեն։ Վասն
որոյ շատ խափանեցայ գալ առ
23 ձեզ։ Բայց արդ ոչ ևս գոյ ինձ
տեղի ի կողմանս յայսոսիկ, և
անձուկ յոյժ ունիմ ի բազում
24 ամաց գալ առ ձեզ։ Յորժամ
անցանիցեմ ի Սպանիա, ակն
ունիմ յանցանելն առ նոսա՝
տեսանել զձեզ. և ի ձէնջ յու-
զարկիլ անդր, եթէ նախ իսկ
փոքր ի շատէ ձեօք լցայց։
25 Բայց այժմ երթամ Յերու-
սաղէմ սպասաւել զսուրբսն։
26 Քանզի հաճոյ թուեցաւ Մա-
կեդոնացւոցն և Աքայեցւոցն
հաղորդութիւն ինչ առնել ընդ
աղքատս սրբոցն՝ որ են Յերու-
27 սաղէմ։ Հաճոյ թուեցաւ,
քանզի և պարտապան իսկ էին
նոցա. զի եթէ հոգևորացն նոցա
հաղորդ եղեն հեթանոսք, պար-
տին և մարմնաւորացն կցորդ
28 լինել նոցա։ Արդ՝ զայս կատա-
րեալ՝ և կնքեալ զպտուղ նորա,
անցից առ ձեօք ի Սպանիա։
29 Օրայս գիտեմ, զի ի գալն առ
ձեզ, լցութեամբ օրհնութեան
աւետարանին Քրիստոսի եկից։

այն պէս որ ես Երուսաղէմից
սկսած պտոյտ տալով մինչև
Լիւրիկացոց կողմերը Քրիստոսի
աւետարանովը լցրել եմ։ Այն- 20
պէս ջանք արի աւետարանը քա-
րոզել, ոչ թէ որտեղ որ Քրիս-
տոսի անունն անուանուած էր,
որ մի գուցէ ուրիշի հիման վե-
րայ շինեմ. այլ ինչպէս որ
գրուած է. Թէ որոնց չէ պատ- 21
մուած նորա համար՝ կ'տեսնեն,
և որոնք որ չեն լսել՝ միտք կ'ա-
նեն։ Որա համար էլ շատ 22
անգամ արգիլուեցայ ձեզ մօտ
գալուց։ Բայց հիմա որ այս 23
կողմերումն այլ ևս տեղ չու-
նիմ. և շատ տարուց հետէ խիստ
փափագ ունիմ՝ ձեզ մօտ գա-
լու. Երբոր անցկենամ Սպա- 24
նիա, կ'գամ ձեզ մօտ. յոյս
ունիմ որ անցկենալու ժամա-
նակս տեսնեմ ձեզ. և ձեզանից
ճանապարհ գցուիմ այն տեղ,
եթէ առաջ մի քիչ ձեզանով
լիանամ։ Բայց հիմա Երու- 25
սաղէմ եմ գնում սրբերին ծա-
ռայութիւն տանելով։ Քանզի 26
Մակեդոնացիք և Աքայեցիք
հաճեցան մի՝ հաղորդութիւն
անել աղքատ սրբերին որ Երու-
սաղէմումն են. Հաճեցան, նոյն 27
իսկ պարտական էլ են նորանց.
քանզի եթէ հեթանոսներն նո-
րանց հոգևոր բարիքներին մաս-
նակից եղան, պէտք է՝ որ
մարմնական բաներում էլ ծա-
ռայեն նորանց։ Արդ այս որ 28
կատարեմ և նորանց պտուղն

30 Աղաչեմ զձեզ Եղբարք ի
ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի և սիրով Հոգւոյն,
պատերազմակից լինել ինձ յա-
ղօթս վասն իմ առ Աստուած.
31 Օ՛ի ապրեցայց յապստամբացն
որ ի Հրէաստանի են. և պաշ-
տօնն իմ որ Յերուսաղէմ,
32 ընդունելի լիցի սրբոցն. Օ՛ի
խնդութեամբ եկեալ առ ձեզ ի
կամն Աստուծոյ, հանգեայց
33 ընդ ձեզ: Եւ Աստուած խաղա-
ղութեան եղիցի ընդ ձեզ ամե-
նեսին. ամէն:

ԳԼ. ԺԵ.

1 Յանձն առնեմ ձեզ զքիրէ
զքոյր մեր, որ է սպասաւոր
2 եկեղեցւոյն Կենքրեացւոց. Օ՛ի
զնա ընկալջիք ի Տէր՝ արժանի
սրբոց, և վերակացու լինջիք
նմա՝ յոր պէտս իրաց և կոչեսցէ
զձեզ. քանզի և նա վերակացու
եղև բազմաց, և ինձ իսկ գրլխո-
3 վին: Ողջոյն տացիք Պրիսկէայ
և Ակիւղայ՝ գործակցաց իմոց ի
4 Քրիստոս Յիսուս. Որք ընդ
անձին իմոյ զկիւրեանց պարանոցս
մատուցին. զորոց ոչ ես միայն
գոհանամ, այլ և ամենայն
5 եկեղեցիք հեթանոսաց: Եւ

իր տեղն հասցնեմ, կ'անցնեմ
Սպանիա ձեր միջովը: Եւ գի- 29
տեմ որ երբոր ձեզ մօտ գամ,
Քրիստոսի աւետարանի առատ
օրհնութիւնովը կ'գամ:
Եւ աղաչում եմ ձեզ, եղ- 30
բայրք, մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի ձեռովը և Հոգոյ սիրովը,
որ ինձ պատերազմակից լինիք՝
ինձ համար աղօթքներ անելով
դէպի Աստուած. Որ ազատ- 31
ուիմ այն անհնազանդներից որ
Հրէաստանումն են. և իմ ծա-
ռայութիւնն որ Երուսաղէմ եմ
գնում՝ սուրբերին ընդունելի
լինի. Որ ուրախութիւնով ձեզ 32
մօտ գամ Աստուծոյ կամքովը,
և ձեզ հետ հանգիստ առնեմ:
Եւ խաղաղութեան Աստուածը 33
ձեր ամենիդ հետ լինի. ամէն:

ԳԼ. ԺԵ.

Յանձնում եմ ձեզ մեր քիրէ 1
քոյրը, որ սպասաւոր է Կենք-
բրայի եկեղեցու: Որ նորան 2
ընդունիք Տէրով, ինչպէս սրբե-
րին արժան է. և հոգ տանիք
նորան ինչ բան որ ձեզանից
պէտք ունենայ, քանզի ինքն էլ
շատերին խնամք է տարել, և
իսկ ինձ էլ: Բարև տուէք 3
Պրիսկիլլային և Ակիւլային՝ իմ
գործընկերներին Քրիստոս Յի-
սուսումը. Որ իմ անձի տեղ 4
իրանց վիզը առաջարկեցին,
որոնցից ոչ միայն ես եմ շնոր-
հակալ՝ այլ և հեթանոսների

առնին եկեղեցւոյն նոցա: 5
Ողջոյց տացիք Եպենետայ սիրելւոյ
իմոյ՝ որ է պտուղ Ասիա-
6 ցւոց ի Քրիստոս: Ողջոյն տա-
ջիք Մարիայ՝ որ բազում վաս-
7 տակս վաստակեաց ի ձեզ: Ող-
ջոյն տացիք Անդրոնիկայ և
Յունեայ ազգականաց իմոց՝ և
գերեկցաց, որք երևելիքն իսկ
են յառաքեալս. որք և յառաջ
իսկ քան զիս եղեն ի Քրիստոս:
8 Ողջոյն տացիք Ամպղեայ սիրելւոյ
9 իմոյ ի Տէր: Ողջոյն տացիք
Ուրբանեայ գործակցի իմոյ ի
Տէր, և Ստաքեայ սիրելւոյ
10 իմոյ: Ողջոյն տացիք Ապելեայ՝
11 որ ընտիրն է ի Տէր: Ողջոյն
տացիք նոցա, որ Արիստաբու-
լեայ տանէ անտի են. ողջոյն
տացիք Հերոդիոնեայ ազգա-
կանի իմոյ. ողջոյն տացիք այնո-
ցիկ՝ որք ի Նարկիսեայ տանէն
12 իցեն ի Տէր: Ողջոյն տացիք
Տրիփոնեայ և Տրիփոսեայ վաս-
տակաւորաց ի Տէր. ողջոյն
տացիք Պերսիդեայ սիրելւոյ, որ
բազում վաստակս վաստակեաց
13 ի Տէր: Ողջոյն տացիք Ռուփեայ
ընտրելոյ ի Տէր, և մօր նորա
14 և իմոյ: Ողջոյն տացիք Ասինկրի-
տեայ՝ Փլեգոնտեայ՝ Երմեայ՝
Պատրոբայ՝ Երմայ, և որ ընդ
15 նոսա եղբարք իցեն: Ողջոյն
տացիք Փիլողոգեայ՝ Յուլեայ՝
Ներեայ՝ և քեռ նորա. և Ու-
ղիմպեայ, և որ ընդ նոսա սուրբք
16 ամենեքին իցեն: Ողջոյն տացիք
միմեանց ի համբոյր սրբու-

բոլոր եկեղեցիները. Եւ նո- 5
րանց տանը լինող եկեղեցուն.
բարև տուէք Եպենետին՝ իմ
սիրելուն որ Ասիայի անդ-
րանիկն է ի Քրիստոս: Բարև 6
տուէք Մարիամին՝ որ շատ
աշխատեց մեր վերայ: Բարև 7
տուէք Անդրոնիկոսին և Յու-
նեսային՝ իմ ազգականներին, և
գերութեանս ընկերներին. որ
առաքելոց մէջ երևելի են՝ որ
ինձանից առաջ են եղել Քրիս-
տոսումը: Բարև տուէք Ամպ- 8
լիասին իմ սիրելոյն ի Տէր:
Բարև տուէք Ուրբանոսին՝ մեր 9
գործակցին ի Քրիստոս, և
Ստաքէսին իմ սիրելուն: Բարև 10
տուէք Ապելէսին՝ որ ազնիւ է
է ի Քրիստոս: Բարև տուէք 11
նորանց՝ որ Արիստոբուլի տա-
նէից են. բարև տուէք Հերո-
դիոնին՝ իմ ազգականին. բարև
տուէք նորանց, որ Նարկիսէի
տանիցն են ի Տէր: Բարև 12
տուէք Տրիփանոսին և Տրի-
փոսին՝ որ աշխատաւորներ են ի
Տէր. բարև տուէք Պերսիդէ
սիրելուն՝ որ շատ աշխատեց ի
Տէր: Բարև տուէք Ռուփո- 13
սին՝ որ ընտիր է ի Տէր. և
նորա և իմ մօրը: Բարև տուէք 14
Ասինկրիտոսին, Փլեգոնտին,
Երմասին, Պատրոբային, Երմէ-
սին, և եղբայրներին՝ որ նո-
րանց հետ են: Բարև տուէք 15
Փիլոլոգին և Յուլիային և Նե-
ռիային և նորա քրոջը և Ուլիմ-
պիային և բոլոր սրբերին՝ որ

թեան. ողջոյն տան ձեզ ամենայն
եկեղեցիք Քրիստոսի:

17 Աղաչեմ զձեզ եղբարք՝ զի-
տել զայնպիսիսն, որ հերձուածս
և գայթակղութիւնս առնիցեն
արտաքոյ վարդապետութեանն՝
զոր դուքն ուսայք. և խորշեցա-
18 ցուք ի նոցանէ: Զի այնպիսիքն
Տեառն մերում Քրիստոսի ոչ
ծառայեն, այլ իւրեանց որովայ-
նի. և քաղցրաբանութեամբ և
օրհնութեամբ պատրեն զսիրտս
19 անմեղաց: Զի ձեր հնազանդու-
թիւնն առ ամենեսեան հասեալ
է. և արդ ի ձեզ ուրախ եմ.
բայց կամիմ զձեզ իմաստունս
լինել ի բարիս՝ և անմեղս ի
չարիս:

20 Եւ Աստուած խաղաղութեան
խորտակեսցէ զՍատանայ ընդ
տակն ձերովք մերձ ընդ մերձ.
շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ձեզ:

21 Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս
եղբայր և գործակից իմ, և
Ղուկիոս, և Յասոնն, և Սոսի-
22 պատրոս ազգականք իմ: Ողջոյն
տամ ձեզ՝ և ես Տերտիոս, որ
23 զթուղթս գրեցի ի Տէր: Ող-
ջոյն տայ ձեզ Գայիոս ասպն-
ական իմ, և ամենայն եկեղե-
ցւոյն: Ողջոյն տայ ձեզ Երաս-
տոս շահապքաղաքիս, և Կու-
24 արտոս եղբայր: Շնորհք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-

նորանց հետ են: Բարև տուէք 16
իրար սուրբ համբուրով. բարև
են տալիս ձեզ Քրիստոսի բոլոր
եկեղեցիները:

Աղաչում եմ ձեզ, եղբարք, 17
որ մտիկ տաք նորանց՝ որ հեր-
ձուածներ և գայթակղութիւն-
ներ են շինում՝ այն վարդապե-
տութիւնից դուրս՝ որ դուք
սովորեցիք՝ և հեռու քաշուեցէք
նորանցից: Քանզի այդպիսի- 18
ները մեր Տէր Քրիստոսին չեն
ծառայում, այլ իրանց փորին.
և քաղցր խօսքերով և գովու-
թիւնով խաբում են անմեղների
սրտերը: Քանզի ձեր հնազան- 19
դութիւնն ամենի ականջ հասաւ.
և սորա համար ուրախ եմ ձեզ
համար. միայն ուզում եմ՝ որ
դուք իմաստուն լինիք դէպի
բարին՝ և անմեղ դէպի չարը:

Եւ խաղաղութեան Աստուածը 20
խորտակէ սատանային ձեր ոտաց
տակ շուտով. մեր Տէր Յի-
սուսի Քրիստոսի շնորհքը լինի
ձեզ հետ. ամէն:

Բարև են տալիս ձեզ Տի- 21
մոթէոս՝ իմ գործընկերը, և
Ղուկիոս և Յասոն և Սոսի-
պատրոս՝ իմ ազգականները:
Բարև եմ տալիս ձեզ ես՝ Տեր- 22
տիոս, որ այս թուղթը գրեցի՝
ի Տէր: Բարև է տալիս ձեզ 23
Գայիոս՝ իմ և բոլոր եկեղեցու
հիւրընկալը. բարև է տալիս
ձեզ Երաստոս՝ քաղաքիս հոգա-
տարը, և Կուարտոս եղբայրը:
Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի 24

տոսի ընդ ձեզ ընդ ամենեսին.
ամէն:

25 Այլ պիտի, որ կարող է
հաստատել զձեզ ըստ աւետա-
րանիս իմում, և ըստ քարոզու-
թեանն Յիսուսի Քրիստոսի,
ըստ յայտնութեան խորհրդոյս
այսորիկ՝ ժամանակօք յաւիտե-
26 նից լռեցելոյս. Եւ յայտնելոյ
այժմիկ ի ձեռն գրոց մարգա-
րէականաց ըստ հրամանի մշանչ-
ենաւորին Աստուծոյ, ի հնա-
զանդութիւն հաւատոց. յամե-
նայն հեթանոսս ծանուցելոյ,
27 Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ
ի ձեռն Յիսուսի Քրիստոսի.
նմա պատիւ և փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Առ Հռովմայեցիս գրեցաւ՝ ի
Կորնթոսէ՝ ի յետ փնջեայ ասու-
թեան:

շնորհքը լինի ձեր ամենիդ հետ.
ամէն:

Բայց նորան, որ կարող է 25
ձեզ հաստատ պահել իմ աւե-
տարանի և Յիսուսի Քրիստոսի
քարոզութեան համեմատ, այն
խորհրդոյ յայտնութեանն հա-
մեմատ որ յաւիտենական ժա-
մանակներից լուռ պահուած էր,
Բայց հիմա մարգարէական 26
գրքերով յայտնուեցաւ՝ յաւի-
տենական Աստուծոյ հրամանին
պէս, և հաւատքին հնազանդե-
լու համար բոլոր հեթանոսների
մէջ ճանաչուեցաւ. Այն միայն 27
իմաստուն Աստուծոյն, Քրիս-
տոսի ձեռովը, նորան փառք
յաւիտեանս. Ամէն:

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐԻՆԹԱՑԻՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 ՊՕՂՈՍ կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի
կամօքն Աստուծոյ, և Սոսթենէս
2 եղբայր. Եկեղեցւոյդ Աստուծոյ
որ է ի Կորինթոս՝ նուիրեալոց ի
Քրիստոս Յիսուս, կոչեցելոց՝
սրբոց՝ ամենեքեանցն հանդերձ
որք կարդան զանուն Տեառն մե-
ր Յիսուսի Քրիստոսի՝ յամե-
նայն տեղիս նոցա՝ և մեր:
3 Շնորհք ընդ ձեզ և խաղաղու-
թիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝
և ի Տեառնէ Յիսուսէ Քրիս-
տոսէ:
4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ
յամենայն ժամ վասն ձեր՝
ի վերայ շնորհացն Աստուծոյ՝
որ տուեալ են ձեզ ի Քրիստոս
5 Յիսուս. Զի յամենայնի մե-
ծացարուք դուք նովաւ՝ ամենայն
բանիւ և ամենայն գիտութեամբ.
6 Որպէս վկայութիւնն իսկ Ա-
ստուծոյ հաստատեցաւ ի ձեզ.
7 Զի դուք մի՛ նուազիցիք՝ և մի՛
իւիք շնորհօք, ակնկալեալ յայտ-

ՊՕՂՈՍ՝ Յիսուսի Քրիս-
տոսի կանչուած առաքեալ 1
Աստուծոյ կամքովը, և Սոսթե-
նէս եղբայր. Աստուծոյ եկեղե-
ցոյդ, որ Կորինթոսումն է, Յի-
սուս Քրիստոսումը սրբուած-
ներիդ՝ կանչուած որքերիդ՝ այն
ամենքի հետ, որ մեր Տէր Յի-
սուսի Քրիստոսի անունը կան-
չում են ամեն տեղ՝ իրանց և
մեր: Շնորհք լինի ձեզ հետ 3
և խաղաղութիւն Աստուած մեր
Հօրից՝ և Տէր Յիսուս Քրիս-
տոսից:
Ամեն ժամանակ գոհանում 4
եմ իմ Աստուածանից ձեր մա-
սին, Աստուծոյ այն շնորհքի
համար՝ որ տրուած է ձեզ
Քրիստոս Յիսուսումը. Որ ա- 5
մեն բանի մէջ հարստացաք նո-
րանով՝ ամեն խօսքով և ամեն
գիտութիւնով: Ինչպէս Քրիս- 6
տոսի վկայութիւնը հաստա-
տուեցաւ ձեր մէջ: Որ դուք 7
չպակասուիք ոչ մի շնորհքով

նուիրեան Տեառն մերոյ Յիսուսի
8 Քրիստոսի. Որ և հաստատեսցէ
զձեզ մինչև ի կատարած՝ անա-
րատս՝ յօրն Տեառն մերոյ Յի-
9 սուսի Քրիստոսի: Հաւատարիմ
է Աստուած, որով կոչեցարուք
ի հաղորդութիւն Որդւոյ նորա
Յիսուսի Քրիստոսի Տեառն
մերոյ:
10 Աղաչեմ զձեզ եղբարք՝ անու-
ամբն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի. զի զնոյն բան
ունիցիք ամենեքեան, և մի իցեն
ի ձեզ հերձուածք. *քանզի
էիք՝ հաստատեալք ի նոյն միտս
11 և ի նոյն հանճար: Զի եղև
ինձ վասն ձեր եղբարք՝ ի
Քլոուացւոց անտի, թէ հակա-
12 ռակութիւնք են ի ձեզ: Եւ
արդ ասեմ իսկ, եթէ իւրա-
քանչիւրոք ի ձէնջ ասէ. Ես
Պօղոսեան եմ, և միւսն՝ եթէ
Ես Ապողոսեան, և միւսն՝ եթէ
Ես Կեփասեան. և միւսն՝ եթէ
13 Ես Քրիստոսեան: Իսկ արդ՝
բաժանեա՞լ ինչ իցէ Քրիստոս.
միթէ Պօղոս ի խաչ ելեալ իցէ
վասն ձեր, կամ յանուն Պօղոսի՞
14 մկրտեցարուք: Գոհանամ զԱ-
ստուծոյ իմոյ՝ զի ո՛չ զոք ի ձէնջ
մկրտեցի՝ բայց միայն զԿրիսպոս
և զԳայիոս. զի մի՝ ոք ասիցէ,
15 թէ յիմ անուն մկրտեցարուք:
16 Տալ ետու կնիք և տանն Ստե-
փանեայ. և զայլ ոք ո՛չ գիտեմ
ամենևին թէ մկրտեցի:

մեր Տէր Յիսուս Քրիստոսի
յայտնութեան սպասելով. Որ 8
և կ'հաստատէ ձեզ մինչև վերջը՝
անմեղադրելի մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի օրումը: Հաւա- 9
տարիմ է Աստուած՝ որի ձեռով
կանչուեցաք դէպի նորա Որդի՝
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
հաղորդութիւնը:
Աղաչում եմ ձեզ, եղբայրք, 10
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
անունովը, որ ամենքիդ միևնոյն
խօսքն ունենաք, և երկպառա-
կութիւններ չլինին ձեր մէջ.
այլ՝ մի և նոյն մտքի և մի և
նոյն կարծիքի մէջ հաստատուած
լինիք: Քանզի ձեր մասին ինձ 11
լուր հասաւ, եղբայրք, Քլոուէի
ընտանիքից, թէ հակառակու-
թիւններ կան ձեզանում: Եւ 12
այս եմ ասում՝ որ ձեզանից
ամեն մէկն ասում է. Ես Պօ-
ղոսեան եմ, և մի՝-ոք՝ Ես Ապո-
ղոսեան, և մի՝-ոք՝ Ես Կեփա-
սեան, և մի՝-ոք՝ Ես Քրիստո-
սեան: Բաժանուա՞ծ է Քրիս- 13
տոս. միթէ Պօղոս խաչուեցաւ
ձեզ համար՝ կամ Պօղոսի ա-
նունով մկրտուեցաք: Գոհա- 14
նում եմ Աստուածանից որ
ձեզանից ոչ մէկին չմկրտեցի.
բայց միայն Կրիսպոսին և Գա-
յիոսին. Որ մէկը չասէ, թէ 15
իմ անունովը մկրտեցի: Եւ Ստե- 16
փանի տունն էլ մկրտեցի. էլ չգի-
տեմ, թէ մի ուրիշն էլ մկրտեցի:

* Ի Յոյն, այլ զի էիք

17 Օվ ոչ առաքեաց զիս Քրիս-
տոս մկրտել՝ այլ աւետարանել.
ոչ ճարտարութեամբ բանից, զի
մի՛ ընդունայն լիցի խաչն Քրիս-
18 տոսի։ Օվ ճառ խաչին՝ կորուս-
եալոցն յիմարութիւն է. այլ
փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աս-
19 տուծոյ։ Օվ գրեալ է. Կորուս-
ից զիմաստութիւն իմաստնոց.
և զխորհուրդս խորհրդականաց
20 արհամարհեցից։ Որ՞ իմաս-
տուն, ո՞ւր գրիչ. ո՞ւր քննիչ
աշխարհիս այսորիկ. ոչ ապաքէն
յիմարեցոյց Աստուած զիմաս-
տութիւն աշխարհիս այսորիկ։
21 Քանզի իմաստութեամբն Աս-
տուծոյ՝ ոչ ծանեաւ աշխարհ
իմաստութեամբն զԱստուած.
հաճեցաւ Աստուած յիմարու-
թեամբ քարոզութեանն՝ ապրե-
ցուցանել զհաւատացեալս։

22 Իսկ որովհետև Հրէայք նշան
հայցեն, և Հելլենոսք զիմաս-
23 տութիւն խնդրեն. Մե՛ք քա-
րոզեսցուք զխաչեալն Քրիս-
տոս, Հրէից գայթագղութիւն,
և Հելլենոսաց յիմարութիւն.
24 Բայց նոցին իսկ կոչեցելոցն
Հրէից և Հելլենոսաց, զՔրիս-
տոս՝ Աստուծոյ զօրութիւն՝ և
25 Աստուծոյ իմաստութիւն։ Օվ
յիմարն Աստուծոյ իմաստնա-
գոյն է քան զմարդիկ. և տկարն
Աստուծոյ զօրագոյն է քան
26 զմարդիկ։ Թէպէտ և զձեր իսկ
կոչումնդ տեսէք եղբարք, զի ոչ

Քանզի Քրիստոս չուղարկեց 17
ինձ մկրտելու, այլ աւետարանը
քարոզելու. ոչ թէ խօսքի
իմաստութեամբ, որպէսզի ու-
նայն չլինի Քրիստոսի խաչը։
Քանզի խաչի խօսքը կորածնե- 18
րի համար յիմարութիւն է,
բայց մեզ փրկուածներիս համար
Աստուծոյ զօրութիւն է։ Քան- 19
զի գրուած է. Իմաստունների
իմաստութիւնը կ՚կորցնեմ, և
խելացիների խորհուրդները կ՚ա-
նարգեմ։ Որ՞ է իմաստուն, 20
ո՞ւր է գրիչ, ո՞ւր է այս
աշխարհի քննող. չէ՞ որ Աս-
տուած այս աշխարհի իմաս-
տութիւնը յիմարացրեց։ Քան- 21
զի՝ Աստուծոյ իմաստութեան մէջ
աշխարհը իմաստութիւնով
չճանաչեց Աստուծոյն. Աս-
տուած հաճեցաւ որ քարոզու-
թեան յիմարութիւնովը ապրեց-
նէ հաւատացեալներին։

Եւ որովհետև Հրէաները 22
նշան են ուզում, և Յոյներն
իմաստութիւն են խնդրում.
Մե՛նք էլ քարոզում ենք խաչ- 23
եալ Քրիստոսը, Հրէաներին
գայթակղութիւն և Յոյներին
յիմարութիւն։ Բայց այն կան- 24
չուած Հրէաներին և Յոյներին,
Քրիստոսը ՀԱՐՈՒԹԻՆ Աստու-
ծոյ զօրութիւն և Աստուծոյ
իմաստութիւն։ Վասնզի Աս- 25
տուծոյ յիմարն աւելի իմաստուն
է քան թէ մարդիկ և Աստուծոյ
տկարն աւելի զօրաւոր է քան
թէ մարդիկ։ Հէնց ձեր կո- 26

բաղում իմաստունք ըստ մար-
մնոյ, և ոչ բազում հզօրք, և
27 ոչ բազում ազնուականք. Այլ
զյիմարս աշխարհիս ընտրեաց
Աստուած՝ զի յամօթ արասցէ
զիմաստունս. և զտկարս աշ-
խարհիս ընտրեաց Աստուած՝ զի
28 յամօթ արասցէ զհզօրս. Եւ
զանտոհմս աշխարհի և զարհա-
մարհեալս ընտրեաց Աստուած՝
և զոչինչսն, զի զէսն իմն խափա-
29 նեսցէ. Որպէս զի մի՛ պարծեսցի
ամենայն մարմին առաջի Աս-
30 տուծոյ։ Օվ՝ ի նմանէ դուք
էք ի Քրիստոս Յիսուս, որ
եղև մեզ իմաստութիւն յԱս-
տուծոյ, արդարութիւն և սրբու-
31 թիւն և փրկութիւն. Օվ որ-
պէս և գրեալ է. Որ պարծին՝
ի Տէրս պարծեսցի։

ԳԼ. Բ

1 Եւ ես թէպէտ և եկի առ
ձեզ եղբարք՝ ոչ ըստ առաւելու-
թեան ինչ բանից իմաստութեան
պատմել ձեզ զվկայութիւնն
2 Աստուծոյ։ Օվ ոչ եթէ ի մտի
եդի գիտել ինչ ի ձեզ՝ բայց
միայն զՅիսուս Քրիստոս՝ և
3 զնոյն ի խաչ ելեալ։ Եւ ես
տկարութեամբ՝ և երկիւղիւ և
դողութեամբ բազմաւ եղէ առ
4 ձեզ. Եւ բանն իմ՝ և քարոզու-
թիւն, ոչ պատիր բանիւք իմաս-

չումին մտիկ արէք, եղբայրք,
որ ոչ թէ շատ իմաստուններ
մարմնոյ կոչմանէ, և ոչ թէ
շատ զօրաւորներ, և ոչ թէ
շատ ազնուականներ. Այլ այս 27
աշխարհի յիմարներին Աս-
տուած ընտրեց՝ որ ամաչեցնէ
իմաստուններին. և աշխարհիս
տկարներին Աստուած ընտրեց՝
որ ամաչեցնէ զօրաւորներին։
Եւ աշխարհիս անտոհմներին 28
և անարգուածներին Աստուած
ընտրեց և ոչինչներին, որ մի բան
լինողներին ոչնչացնէ։ Ոչ մի 29
մարմին չպարծենայ նորա առջև։
Եւ դուք նորանից էք Յիսուս 30
Քրիստոսումն՝ որ Աստուածա-
նից մեզ համար եղաւ իմաստու-
թիւն, և արդարութիւն և
սրբութիւն և փրկութիւն։ Որ 31
ինչպէս գրուած է. Նա որ
պարծենում է՝ թող Տէրով
պարծենայ։

ԳԼ. Բ

Եւ ես էլ, եղբայրք, որ ձեզ I
մօտ եկայ, ոչ թէ խօսքի
կամ իմաստութեան գերազան-
ցութիւնովն եկայ Աստուծոյ
վկայութիւնը ձեզ պատմելու։
Քանզի միտքս չէի դրած՝ մի 2
ուրիշ բան գիտենալ ձեր մէջ
բայց միայն Յիսուս Քրիստո-
սին՝ և այն էլ խաչուածին։
Եւ ես տկարութիւնով և վա- 3
խով և շատ դողով եղայ ձեզ
մօտ։ Եւ իմ խօսքը և քարո- 4

տութեան՝ այլ արդեամբք Հոգ-
5 ւոյն և զօրութեամբ. Օվ
հաւատք ձեր մի լցեն իմաստու-
թեամբ մարդկան, այլ զօրու-
թեամբք Աստուծոյ:

6 Օ իմաստութիւն խօսիմք ընդ
կատարեալս. զիմաստութիւն, ոչ
զաշխարհիս այսորիկ, և ոչ
զիշխանաց աշխարհիս այսորիկ
7 զնախանելեալս. Այլ խօսիմք
զԱստուծոյ իմաստութիւնն ծա-
ծուկ խորհրդով, զոր յառաջ
քան զյաւիտեանս սահմանեաց
8 Աստուած ՚ի փառս մեր. Օ որ
ոչ ոք յիշխանաց աշխարհիս
այսորիկ ծանեաւ. զի եթէ էր
ծանուցեալ՝ ոչ արդեօք զՏէրն
9 փառաց ՚ի խաչ հանէին: Այլ
որպէս և գրեալ է. Օ որ ակն
ոչ տեսս, և ունկն ոչ լուաւ, և
՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ,
պատրաստեաց Աստուած սիրե-
լեաց իւրոց:

10 Այլ մեզ յայտնեաց Աստուած
Հոգւովն իւրով. զի Հոգին
զամենայն քննէ՝ և զխորս Ա-
11 ստուծոյ: Օվ ի՞նչ ՚ի մարդկանէ
գիտէ բնչ զմարդոյն, եթէ ոչ
Հոգի մարդոյն՝ որ ՚ի նմա. նոյն-
պէս և ոչ զԱստուծոյն ոք գիտէ՝
12 եթէ ոչ Հոգին Աստուծոյ: Այլ
մեք ոչ եթէ զՀոգի աշխարհիս
առաք՝ այլ զՀոգին որ ՚ի Աստու-
ծոյ. զի ծանիցուք զայն՝ որ
ՀԱստուծոյն շնորհեցաւ մեզ:

զութիւնք ոչ թէ մարդկային
իմաստութեան պատիր խօսքե-
րովն եղաւ, այլ Հոգոյ և զօ-
րութեան ապացուցութեամբքը.
Որ ձեր հաւատքը մարդկանց 5
իմաստութիւնով չլինի՝ այլ Ա-
ստուծոյ զօրութիւնովը:

Բայց իմաստութիւն ենք խո- 6
սում կատարեալների հետ, և
ոչ թէ այս աշխարհի իմաս-
տութիւնը, և ոչ էլ այս աշ-
խարհի իշխաններինը՝ որ պիտի
խափանուին: Այլ Աստուծոյ 7
ծածուկ իմաստութիւնն ենք
խօսում՝ խորհրդով, որ Ա-
ստուած յաւիտենից առաջ սահ-
մանեց նորան մեր փառաց հա-
մար: Որն այս աշխարհի 8
իշխաններիցն ոչ ով չճանաչեց.
քանզի եթէ ճանաչած լինէին՝
փառաց Տիրոջը չէին խաչ հա-
նիլ. Այլ ինչպէս գրուած է. 9
Ինչ որ աչք չտեսաւ և ականջ
չլսեց և մարդու սիրտ չընկաւ,
այն պատրաստեց Աստուած իրան
սիրողների համար:

Բայց մեզ յայտնեց Աստուած 10
իր Հոգովը. քանզի Հոգին
ամեն բաները քննում է, և
Աստուծոյ խորքն էլ: Զանգի 11
մարդկանցից ով գիտէ մարդու
բաները եթէ ոչ մարդու հո-
գին, որ նորանում է. այնպէս
էլ Աստուծոյ բաներն ոչ ով
չգիտէ, եթէ ոչ Աստուծոյ
Հոգին: Եւ մենք ոչ թէ այս 12
աշխարհի հոգին առինք, այլ
այն Հոգին՝ որ Աստուածանից

13 Եւ զոր խօսիմք՝ ոչ եթէ
մարդկեղէն ուսմամբ ճարտա-
րութեամբ բանից, այլ վար-
դապետութեամբ Հոգւոյն, ընդ
Հոգևորս զՀոգևորսն համե-
14 մատեմք: Զանգի շնչաւոր մարդ
ոչ ընդունի զՀոգւոյն Աստու-
ծոյ՝ զի յիմարութիւն է նմա. և
ոչ կարէ գիտել՝ *եթէ Հոգեպէս
15 քննիցի՝: Իսկ Հոգևորն քննէ
զամենայն. և ինքն յումեքէ ոչ
16 քննի: Իսկ արդ՝ ո՞վ գիտաց
զմիտս Տեառն, որ և խրատտու-
ցանիցի նմա. այլ մեք զմիտս
Քրիստոսի ունիմք:

ԳԼ. Գ

1 Եւ ես եղբարք՝ ոչ կարացի
խօսել ընդ ձեզ իբրև ընդ
Հոգևորս՝ այլ իբրև ընդ մարմ-
2 նաւորս: Իբրև տղայոց ՚ի
Քրիստոս, կաթն ջամբեցի ձեզ՝
և ոչ կերակուր, զի ոչ ևս կա-
րէիք. նաև արդ իսկ ոչ կարէք.
3 քանզի դեռ մարմնաւոր էք: Ուր
և արդ են իսկ ՚ի ձեզ հեռ և
նախանձ, ոչ ապաքէն մար-
մնաւոր էք՝ և ըստ մարդկան
4 դնայք: Զորժամ ասէ որ ՚ի
ձէնջ՝ Ես Պօղոսեան եմ, և

էք. որ ճանաչենք այն աշխարհ-
քըն՝ որ Աստուածանից տուեալ
ցաւ մեզ: Որն էլ խօսում ենք՝ 13
ոչ թէ մարդկային իմաստու-
թեան սովորած խօսքերով, այլ
Սուրբ Հոգոյ սովորեցրածնե-
րովը՝ Հոգևորներն Հոգևորների
հետ համեմատելով: Բայց շըն- 14
չաւոր մարդն Աստուծոյ Հոգոյ
բաները չէ ընդունում. քանզի
նորանք յիմարութիւն են նորա
համար. և չէ կարող էլ գիտե-
նալ՝ որովհետև Հոգևոր կերպով
են քննվում: Բայց Հոգևոր 15
մարդը ամեն բան քննում է, և
ինքն ոչ ոքից չէ քննվում:
Զանգի ո՞վ գիտաց Տիրոջ միտ- 16
քը, որ բան սովորեցնէ նորան.
բայց մենք Քրիստոսի միտքն
ունինք:

ԳԼ. Գ

Եւ ես, եղբայրք, չկարողացայ 1
ձեզ հետ խօսել ինչպէս Հոգե-
ւորների հետ, այլ ինչպէս
մարմնաւորների հետ, ինչպէս
տղաների հետ Քրիստոսում.
Կաթի խմեցրի ձեզ, և ոչ թէ 2
կերակուր. քանզի տակաւին
չէիք կարող, այլ հիմա էլ դեռ
չէք կարող: Որովհետև տա- 3
կաւին մարմնաւոր էք. քանզի
տակաւին նախանձ և կռիւ և
բաժանումներ կան ձեզանում.
չէ՞ որ մարմնաւոր էք և մարդ-

* Ի Յոյն, քանզի Հոգեպէս քննի

միւսն՝ թէ Ես Պօղոսեան, ո՞չ մարդիկ էք. իսկ արդ՝ ո՞վ է Պօղոս, կամ ո՞վ է Պօղոսն.
5 Պաշտօնեայք՝ որովք հաւատացէքն, և իւրաքանչիւր որպէս
6 և Տէր ետ: Ես տնկեցի, Պօղոս ջուր ետ, այլ Աստուած
7 աճեցոյց: Այսուհետև ո՛չ այն ոք ինչ է՝ որ տնկեացն, և ո՛չ այն՝ որ ջուրն ետ. այլ որ
8 աճեցոյցն Աստուած: Որ տընկեացն և որ ջուրն ետ՝ մի են. բայց իւրաքանչիւրոք զկիր վարձս առնուցու ըստ իւրում
9 վաստակոց: Օ՛ի Աստուծոյ գործակից եմք, Աստուծոյ արդիւնք էք, Աստուծոյ շինած
10 էք: Ըստ շնորհացն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ, իբրև իմաստուն ճարտարապետ հիմն եդի. բայց այլ է որ շինէն. այլ իւրաքանչիւրոք զգոյշ լիցի՝ թէ
11 որպէս շինիցէ: Օ՛ի հիմն այլ ոք ո՛չ կարէ դնել քան զեղեալն՝ որ է Յիսուս Քրիստոս:

12 Եթէ ոք շինէ ՚ի վերայ հիմանս այսորիկ՝ ոսկի՝ արծաթ՝ ականս պատուականս՝ փայտ, խոտ, եղէգն, Իւրաքանչիւր
13 գործն յայտնելոց է. զի օրն ընտրեսցէ, զի հրով յայտնելոց
14 է. Եւ զիւրաքանչիւր գործն զիարդ և ի՞նչ՝ հուրն փորձեսցէ:
15 Եթէ ուրուք գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ. և

կորէն էք վարվում: Քանզի 4
երբեմն մէկն ասէ, Ես Պօղոսեան եմ, և միւսը Ես Պօղոսեան. չէ՞ որ մարմնաւոր էք: Արդ 5
ո՞վ է Պօղոսը կամ ո՞վ է Պօղոսը. միայն պաշտօնեաներ, որոնց ձեռովը հաւատացիք. և ամեն մէկին՝ ինչպէս Տէրը տուաւ:
Ես տնկեցի, Պօղոսը ջուր 6
տուաւ, բայց Աստուածը մեծացրեց: Ուրեմն ոչ տնկողն է մի 7
բան, ոչ էլ ջուր տուողը. բայց աճեցնող Աստուածը: Տնկողը 8
և ջուր տուողը մէկ են. բայց ամեն մէկն իր վարձքը կ'առնէ իր աշխատանքի չափովը: Քան- 9
զի մենք Աստուծոյ գործակիցներ ենք. դուք Աստուծոյ մշակութիւնը՝ Աստուծոյ շինուածն էք:
Աստուծոյ շնորհքի չափովը՝ որ 10
ինձ տրուած է, իմաստուն ճարտարապետի պէս հիմը դրի. բայց ուրիշը շինում է. միայն թէ ամեն մէկն մտիկ տայ թէ ինչպէս է շինում: Քանզի ոչ 11
ով ուրիշ հիմն չէ կարող դնել քան թէ որ դրուած է, որ է Յիսուս Քրիստոսը:
Եթէ մէկն այս հիման վերայ 12
շինէ ոսկի, արծաթ, ազնիւ քարեր, փայտ, խոտ, եղէգն,
Ամեն մէկի գործքը պիտի յայտ- 13
նուի. քանզի օրը կ'երևեցնէ. որովհետև կրակով պիտի յայտնուի: Եւ ամեն մէկի գործքը 14
թէ ինչպէս է, կրակը կ'փորձէ:
Եթէ մէկի գործքը՝ որ շինեց՝ 15
հաստատ կենայ, վարձք կառնէ.

եթէ ուրուք գործն այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն կեցցէ. այլ այնպէս՝ որպէս թէ ՚ի հուր:
16 Ո՞չ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ՝ և Հոգի Աստուծոյ
17 բնակեալ է ՚ի ձեզ: Եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ. ապականեսցէ զնա Աստուած. զի տաճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք:

18 Մի՛ ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք կամեսցի ՚ի ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս յայսմիկ, յիմա՛ր լիցի՝ զի եղիցի
19 իմաստուն: Օ՛ի իմաստութիւն աշխարհիս այսորիկ՝ յիմարութիւն է առաջի Աստուծոյ. քանզի գրեալ է՝ թէ Որ ըմբռնէ զիմաստունս ՚ի խորագիտու-
20 թեան իւրեանց: Եւ դարձեալ՝ թէ Տէր ճանաչէ զխորհուրդս իմաստնոց՝ զի են ընդունայն:
21 Այսուհետև մի՛ ոք պարծեսցի
22 ՚ի մարդկանէ: Օ՛ի ամենայն ինչ ձեր է. եթէ Պօղոս, եթէ Պօղոս, եթէ Կեփաս, եթէ աշխարհ, եթէ կեանք, եթէ մահ, եթէ որ կանս, եթէ հանդերձեալքն. ամենայն ինչ
23 ձեր է. Դուք Քրիստոսի, Քրիստոս Աստուծոյ:

ԳԼ. Դ

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս

Եթէ մէկի գործքն այրուի՝ ինչպէս կ'քաշէ, բայց ինքը կ'ապրի. այլ այնպէս՝ ինչպէս թէ կրակով: Չէ՞ք գիտում՝ որ դուք 16
Աստուծոյ տաճար էք և Աստուծոյ Հոգին բնակած է ձեզանում: Եթէ մէկն Աստու- 17
ծոյ տաճարն ապականէ, նորան էլ Աստուած կ'ապականէ. քանզի՝ Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք էք:
Ոչ ով իր անձը չխաբէ. 18
եթէ ձեզանից մէկը կարծում է իմաստուն լինել այս աշխարհքումը, թող նա յիմար լինի՝ որ իմաստուն լինի: Քանզի 19
այս աշխարհքի իմաստութիւնը յիմարութիւն է Աստուծոյ առջև. վասնզի գրուած է՝ Ընդ իմաստուններին բռնում է իրանց խորագիտութեան մէջ: Եւ դար- 20
ձեալ Ընդ Տէրը ճանաչում է իմաստունների մտածմունքները, որ ունայն են: Ուրեմն ոչ 21
ով չպարծենայ մարդկանցով:
Քանզի ամեն բան ձերն է. 22
թէ Պօղոսը, թէ Պօղոսը, թէ Կեփասը, թէ աշխարհքը, թէ կեանքը, թէ մահը, թէ ներկայ բաները, թէ գալու բաները, ամեն բան ձերն է:
Դուք Քրիստոսինը և Քրիս- 23
տոսը Աստուծոյնը:

ԳԼ. Դ

Թող ամեն մարդ այսպէս հա- 1
մարէ մեզ՝ ինչպէս Քրիստոսի

Քրիստոսի՝ և հաղարապետս
2 խորհրդոցն Աստուծոյ։ Արդ՝
ինդիր է 'ի մէջ հաղարապետաց՝
եթէ ոք հաւատարիմ գտցի։
3 Այլ ինձ և այս անարգանք են,
եթէ 'ի ձէնջ դատեցայց՝ կամ
ընաւ իսկ 'ի մարդկանէ. նաև
4 զանձն իմ ոչ քննեմ։ Զի
ոչինչ գիտեմ զանձին իմոյ. այլ
ոչ եթէ այսու արդարանամ, զի
5 որ քննէն զիս՝ Տէր է։ Այ-
սուհետև մի յառաջ քան ըժա-
մանակն դատիք, մինչև եկեսցէ
Տէր, որ լուսաւոր առնիցէ
զգաղտնիս խաւարի, և յայտնիցէ
զխորհուրդս սրտից. և ապա
իւրաքանչիւր գովութիւն եղիցի
Աստուծոյ։

6 Զայս եղբարք՝ առակեցի
յանձն իմ և Apպողոս վասն
ձեր. զի 'ի մէնջ ուսջիք՝ մի ինչ
առաւել քան զգրեալսն իմանալ.
զի մի այր քան զընկեր հպար-
տանայցէք 'ի վերայ ընկերին։
7 Իսկ արդ ո՞վ է՝ որ քննիցէ զքեզ.
զի՞նչ ունիս՝ զոր ոչ իցէ առեալ.
և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև
զչառեալ։

8 Արդէն իսկ յագեալ իցէք՝ և
արդէն մեծացարուք, առանց
մեր թագաւորեցիք. և երանի՛
թէ թագաւորէիք՝ զի և մեք ընդ
9 ձեզ թագաւորէաք։ Զինձ այսպէս
թուի՝ եթէ զմեզ զառաքեալս
պաշտօնեաներս և Աստուծոյ խոր-
հուրդներուն տնտեսներս։ Արդ
տնտեսներուն մէջ այն է պա-
հանջվում՝ որ մէկը հաւատարիմ
գտնուի։ Բայց ինձ համար
ոչինչ բան է՝ որ ձեզանից դա-
տուիմ, կամ մարդկային դա-
տաստանից*. այլ ես իմ անձն
էլ չեմ քննում։ Զանգի իմ
անձի համար բան չեմ գիտում.
բայց սորանով չեմ արդարա-
նում. քանզի ինձ քննողը Տէրն
է։ Ուրեմն ժամանակից առաջ
մի դատէք. մինչև Տէրը գայ՝
որ խաւարի ծածուկ բաները
կ'բերէ էլ լուսոյ մէջ, և սրտերի
խորհուրդները կ'յայտնէ, և այն
ժամանակ ամեն մէկին գովա-
սանք կ'լինի Աստուածանից։

Այս բաներ, եղբայրք, իմ՝ անձի
և Apպողոսի վերայ օրինակ
ըերի ձեզ համար. որ մեզանից
սովորէք գրուածից աւելի բան
չհարկել. որ չլինի թէ մէկը
մէկի վերայ հպարտանայ ըն-
կերի պատճառովը։ Զանգի
ո՞վ է քեզ որոշում. ի՞նչ ունիս
դու՝ որ չես առել. և եթէ
առել ես, ինչ՞ու ես պարծենում
չառածի պէս։

Արդէն կշտացած էք, արդէն
հարստացաք, առանց մեզ թա-
գաւորեցիք և երանի թէ թա-
գաւորէիք, որ մենք էլ ձեզ
հետ թագաւորէինք։ Զանգի
ինձ այսպէս է երևում՝ թէ

* Յունարէն՝ օրից։

յետնորդս արար Աստուած իբրև
զմահապարտս. զի տեսիլ եղեաք
աշխարհի, և հրեշտակաց և
10 մարդկան։ Մ՝եք յիմարք վասն
Քրիստոսի, և դուք իմաստունք
'ի Քրիստոս. մեք տկարք՝ և
դուք հզօրք. դուք փառաւո-
11 րեալք՝ և մեք անարգք։ Մ՝ինչև
ցայսօր ժամանակի՝ և քաղցեաք
և ծարաւեցաք և մերկ գնացաք
և կուփահարեցաք և անհանգիստ
12 եղեաք, Եւ աշխատեցաք ձեռօք
մերովք. բամբասէին զմեզ՝
օրհնէաք. հալածէին՝ յանձն
13 առնուաք. Հայհոյէին՝ աղա-
չէաք. իբրև առակ նշաւակի
եղեաք ամենայն աշխարհի,
ամենեցուն փարելի լինել մինչև
14 ցայժմ։ Ո՛չ եթէ յամօթ ինչ
առնելով զձեզ՝ գրեմ զայս,
այլ իբրև զորդիս սիրելիս խրա-
15 տեմ։ Թէպէտ և բիւր դաս-
տիարակս ունիցիք 'ի Քրիստոս՝
այլ ոչ եթէ բազում հարս. զի
'ի Քրիստոս Յիսուս աւետա-
16 բանաւն ես ծնայ զձեզ։ Արդ
աղաչեմ զձեզ՝ նմանողք ինձ
եղիջիք՝ որպէս և ես Քրիստոսի։
17 Վասն այնորիկ առաքեցի առ
ձեզ զՏիմոթէոս, որ է իմ որդի
սիրելի՝ և հաւատարիմ 'ի Տէր.
որ յիշեցուսցէ ձեզ զճանա-
պարհս իմ, որ 'ի Քրիստոս
Յիսուս, որպէս և ամենայն
ուրեք՝ յամենայն եկեղեցիս
18 ուսուցանեմ։ Որպէս թէ ես
չիցեմ գալոց առ ձեզ՝ ոմանք
19 հպարտացան։ Այլ եկից հուպ

Աստուած մեզ առաքեալներիս
շատ յետին արաւ՝ մահապարտ-
ների պէս. որովհետև աշխարհ-
քի տեսարան եղանք, հրեշտա-
կաց էլ՝ մարդկանց էլ։ Մ՝ենք 10
յիմար ենք Քրիստոսի համար,
իսկ դուք՝ իմաստուն Քրիստո-
սումը. մենք տկար՝ իսկ դուք
զօրաւոր. դուք փառաւորուած,
իսկ մենք անարգուած։ Մ՝ինչև 11
այս օրուայ ժամը սովում էլ
ենք՝ ծարաւում էլ, մերկ էլ
գնայինք և գլխներս զարկվում
էլ է և հանգստութիւն չենք
գտնում։ Եւ աշխատում ենք 12
մեր ձեռներովը գործելով. բամ-
բասում են մեզ, իսկ մենք օրհ-
նում ենք. հալածում են և
մենք համբերում ենք։ Հայ- 13
հոյում են, մենք աղաչանք ենք
անում. ինչպէս աւելուք եղանք
աշխարհքին՝ ամենի ջնջոց լինե-
լով մինչև հիմա։ Ոչ թէ ձեզ 14
ամաչեցնելով եմ այս գրում,
այլ ինչպէս իմ սիրելի որդիք-
ներին խրատում եմ։ Քանզի 15
թէ և հաղարաւոր վարդապետ-
ներ ունենաք Քրիստոսումը,
բայց ոչ թէ շատ հարք. քանզի
Քրիստոս Յիսուսում ես աւե-
տարանովը ծնայ ձեզ։ Ուրեմն 16
աղաչում եմ ձեզ՝ որ ինձ
նմանող լինիք։ Դորա համար 17
Տիմոթէոսին ուղարկեցի ձեզ
մօտ, որ իմ սիրելի և հաւա-
տարիմ որդին է Տէրով. որ
ձեզ յիշեցնէ իմ ճանապարհ-
ները՝ որ Քրիստոսումն են,

ընդ հուպ՝ եթէ Տէր կամեսցի. և
'ի միտ առից ո՛չ զբանս հպարտա-
20 ցելոցն, այլ զզօրութիւն։ Զի
ո՛չ եթէ բանիւք է արքայու-
թիւնն Աստուծոյ, այլ զօրու-
21 թեամբ։ Արդ՝ որպէս կամիք՝
գաւազանա՞ւ եկից առ ձեզ,
եթէ* սիրով հոգւոյն՝ հեզու-
թեան և արդարութեան և
խոնարհութեան՝։

ԳԼ. Ե

1 Ընաւ և անուանի իսկ 'ի ձեզ
ընդէ՞ր պոռնկութիւն, և այն-
պիսի պոռնկութիւն՝ որ ո՛չ և 'ի
հեթանոսս, որպէս թէ զկին
2 հօր իւրոյ ունել։ Եւ դուք
հպարտացեալ էք. և ո՛չ առաւել
զգացարուք, զի բարձցի 'ի միջոյ
ձերմէ՝ որ զգործն զայն գոր-
3 ծեաց։ Զի ես թէպէտ մար-
մնով մեկուսի եմ, սակայն հոգ-
ւով մերձ եմ. բայց արդէն իսկ
իբրև 'ի մօտոյ ընտրեցի զայն՝ որ
այնպէսն գործեաց. Յանուն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
4 տոսի, ժողովել ձեզ 'ի միասին՝
և իմով հոգւոյս՝ զօրութեամբն
հանդերձ Տեառն մերոյ Յիսուսի
5 Քրիստոսի, Մատնել զայսպի-

* 'Ի Յոյն., եթէ սիրով և հոգ-
ւով հեզութեան

ինչպէս ամէն տեղ ամէն եկե-
ղեցիներումը սովորեցնում եմ։
Մի՞ քանիսը հպարտացել են 18
իբր թէ ես չպիտի դամ ձեզ
մօտ։ Բայց կ'գամ ձեզ մօտ 19
շուտով, եթէ Տէրը կամենայ.
և կ'հասկանամ ոչ թէ հպար-
տացածների խօսքերը. այլ զօ-
րութիւնը։ Քանզի Աստուծոյ 20
արքայութիւնն ոչ թէ խօսքով
է՝ այլ զօրութիւնով։ Ի՞նչպէս 21
էք կամենում, գաւազանո՞վ դամ
ձեզ մօտ, թէ սիրով և հեզու-
թեան հոգով։

ԳԼ. Ե

Ա. Հասարակ լսվում է՝ ձեր 1
մէջ պոռնկութիւն կայ և այն-
պիսի պոռնկութիւն՝ որ հեթա-
նոսների մէջ էլ չկայ անունը,
այնպէս որ մէկն իր հօր կինն
ունենայ։ Եւ դուք հպարտա- 2
ցած էք՝ և աւելի սուգ չէք
մտնում՝ որ ձեր միջից վեր
առնուի նա, որ այն բանը գոր-
ծեց։ Քանզի ես՝ թէև մարմ- 3
նով բացակայ եմ, բայց հոգով
ներկայ՝ արդէն վճռել եմ
ներկայ լինողի պէս՝ նորան, որ
այնպիսի բան գործեց, Մեր 4
Տէր Յիսուս Քրիստոսի անու-
նովը՝ ձեր և իմ հոգոյ մէկտեղ
ժողովուելու ժամանակ մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի զօրու-

սին Սատանայի 'ի սատակումն
մարմնոյ. զի ոգին ապրեսցի
յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի
6 Քրիստոսի։ Ոչ բարւոք են
պարծանքդ ձեր. ո՞չ գիտէք՝
եթէ փոքր մի խմոր զամենայն
7 զանգուածն խմորէ։ Սրբեցէք 'ի
բաց զհին զխմորն՝ զի եղիջիք
նոր զանգուած, որպէս էքդ
անխմորք. քանզի զատիկ մեր
8 զենաւ Քրիստոս։ Այսուհետև
արասցո՛ւք տօնս. մի՛ 'ի խմորն
հին, և մի՛ 'ի խմորն չարութեան
և անզգամութեան. այլ յանխիղ-
մորս ստուգութեան և ճշմար-
տութեան։

9 Գրեցի ձեզ 'ի թղթի այդր
10 չխառնակել ընդ պոռնիկս։ Եւ
ո՛չ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս
այսորիկ՝ կամ ընդ ագահս կամ
ընդ յափշտակողս՝ կամ ընդ
կռապարիշտս. ապա թէ ո՛չ՝
պարտ էիք և յաշխարհէ իսկ
11 ելանել։ Բայց արդ գրեցի ձեզ
չխառնակել. եթէ ոք եղբայր
անուանեալ, կամ պոռնիկ լցէ,
կամ կռապարիշտ՝ կամ ագահ՝
կամ բամբասող՝ կամ արբեցող՝
կամ յափշտակող, ընդ այնպի-
12 սումն և հաց մի՛ ուտել։ Զի՞
կայ իմ և զարտաքինսն դա-
տելոյ. ո՞չ ապաքէն դուք ներ-
13 քինդ դատիցիք. Եւ զարտա-
քինսն Աստուած դատեսցի.
բարձէ՛ք զչարն 'ի միջոյ ձերմէ։

թեան հետ, Այնպիսին մատնել 5
սատանային մարմինը կորչելու
համար. որ հոգին ապրի մեր
Տէր Յիսուսի օրումը։ Ձեր 6
պարծանքը լաւ չէ. չէք գի-
տում որ մի փոքր խմորը բոլոր
զանգուածը խմորացնում է։
Վէն դցեցէք հին խմորը, որ 7
նոր զանգուած լինիք, ինչպէս
որ անխմոր էք. քանզի մեր
զատիկ Քրիստոս մորթուեցաւ մեզ
համար՝ Քրիստոսը։ Ուստի տօն 8
կատարենք ոչ թէ հին խմորով,
և ոչ էլ չարութեան և անզգա-
մութեան խմորովը, այլ մաք-
րութեան և ճշմարտութեան
չխմորուածովը։

Գրեցի ձեզ թղթումը՝ չխառ- 9
նուիլ պոռնիկների հետ։ Եւ 10
ոչ թէ ամենևին այս աշխարհի
պոռնիկների հետ, կամ ագահ-
ների հետ, կամ յափշտակող-
ների հետ, կամ կռապաշտների
հետ. ապա թէ ոչ՝ պէտք էր
ձեզ որ հէնց աշխարհիցը
դուրս գնայիք։ Բայց հիմա 11
գրեցի ձեզ՝ չխառնուիլ, որ եթէ
մէկը, որ եղբայր է անուա-
նուած, լինի պոռնիկ, կամ ա-
գահ, կամ կռապաշտ, կամ
նախատող կամ արբեցող կամ
յափշտակող, այնպիսիի հետ
հաց էլ չուտել։ Քանզի ինձ 12
ի՞նչ պէտք է՝ որ դրսիններին էլ
դատեմ. չէ՞ որ դուք ներսիններին
պիտի դատէք։ Իսկ դրսիններին 13
Աստուած կ'դատէ. բայց դո՛ւք
չարը ձեր միջից վեր առէք։

ԳԼ. Զ.

1 Իշխե՞ք ոք 'ի ձէնջ՝ եթէ իւրք
ինչ իցեն ընդ ընկերի իւրում,
գատել առաջի անիրաւաց՝ և ո՛չ
2 առաջի սրբոց։ Եթէ ո՞չ գիտէք՝
զի սուրբք զաշխարհ դատին. և
եթէ ձեզ դատի աշխարհ՝ ապա
ո՞չ էք արժանի անարդ ատենից։
3 Մի՞ գիտէք եթէ զհրեշտակս
դատիմք, թո՞ղ թէ զերկրաւորս։
4 Զերկրաւոր ատեանս եթէ
յանձն առնուցուք, զանարգսն
եկեղեցւոյ դատաւորս նստու-
5 ցէք։ Առ ամօթոյ ձերոյ ասեմ.
այնչափ ո՞չ գոյ ոք իմաստուն
'ի ձեզ, որ կարիցէ իրաւունս
ընտրել 'ի մէջ եղբօր իւրոյ։
6 Այլ եղբայր ընդ եղբօր դատի,
և զայն՝ 'ի մէջ անհաւատից։
7 Եւ արդ՝ ամենևին իսկ վատթա-
րութիւն է 'ի ձեզ, զի դատաս-
տանք իսկ զոն 'ի միջի ձերում.
ընդէ՞ր ոչ դուք զրկիք, և ո՛չ
8 դուք առաւել նեղիք։ Այլ,
դուք զրկէք և նեղէք. և այդ՝
9 զեղբարս ևս։ Եթէ ո՞չ գիտէք՝ զի
անիրաւք զարքայութիւնն Աս-
տուծոյ ո՛չ ժառանգեն. մի՛
խաբիք՝ ո՛չ պոռնիկք, ո՛չ կռա-
10 պարիշտք, ո՛չ շունք, Մ՛է-
իգացեալք, ո՛չ արուագէտք, ո՛չ
գողք, ո՛չ ագահք, ո՛չ արբե-
ցողք, ո՛չ բամբասողք և ո՛չ յա-
փշտակողք զարքայութիւն Աս-
11 տուծոյ ո՛չ ժառանգեն։ Եւ
դուք այնպիսիք ոմանք էիք.
այլ լուացարուք՝ այլ սրբեցա-

ԳԼ. Զ.

Զեղանից մէկն՝ եթէ բան 1
ունենայ իր ընկերի հետ, հա-
մարձակվո՞ւմ է անիրաւների
առջև դատուիլ և ոչ թէ սրբերի
առջև։ Կամ թէ չէ՞ք գիտում, 2
որ սրբերն աշխարհքս կըդա-
տեն. և եթէ ձեզանով աշ-
խարհքը դատվում է, ապա
չէք արժան անարդ բաների 3
դատաստան անելու։ Չէ՞ք գի-
տում որ մենք հրեշտակներին
կ'դատենք. էլ ո՞րքան աւելի
երկրաւոր բաները։ Եթէ երկ- 4
րաւոր բաների համար դա-
տաստան ունիք, եկեղեցու ցած
մարդկանցը ձեզ համար դա-
տաւոր նստեցրէք։ Զեր ամօթի 5
համար եմ ասում. այնքան մի
իմաստուն մարդ էլ չկա՞ ձեր
միջումը, որ կարող լինի իրա-
ւունք որոշել իր եղբայրների
մէջ։ Այլ եղբայր եղբօր հետ 6
դատաստան է գնում, և այն էլ
անհաւատների առաջ։ Եւ հէնց 7
արդէն բոլորովին պակասու-
թիւն է ձեր միջումը որ դա-
տաստաններ ունիք իրար հետ.
ինչո՞ւ չէք աւելի դուք զրկվում.
և ինչո՞ւ չէք աւելի դուք անի-
րաւութիւն քաշում։ Բայց 8
դուք էք զրկում և անիրաւու-
թիւն անում և այն էլ ձեր
եղբայրներին։ Կամ թէ չէ՞ք 9
գիտում որ անիրաւներն Աս-
տուծոյ արքայութիւնը չեն ժա-
ռանգիլ։ Մ'ի խաբուիք. ոչ

բուք՝ այլ արդարացարուք յա-
նուն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, և 'ի Հոգին Աս-
տուծոյ մերոյ։

12 Ամենայն ինչ ինձ մարթ է՝
այլ ո՛չ ամենայն ինչ օգուտ
է. ամենայն ինչ ինձ մարթ է,
այլ ո՛չ եթէ ես ընդ իշխանու-
13 թեամբ ուրուք լինիցիմ։ Կե-
րակուր որովայնի, և որովայն
կերակրոյ. այլ Աստուած զսա
և զնոսա խափանեսցէ. բայց
մարմին ո՛չ պոռնկութեան՝ այլ
14 Տեառն, և Տէր մարմնոյ։ Այլ
Աստուած՝ որ և զՏէրն յարոյց,
և զձեզ յարուսցէ զօրութեամբ
15 իւրով։ Ո՞չ գիտէք՝ եթէ մար-
մինք ձեր անդամք են Քրիս-
տոսի. արդ՝ առեալ զանդամս
Քրիստոսի, առնիցեմք ան-
16 դամս պոռնկի՞. քաւ լիցի։ Եթէ
ո՞չ գիտէք, զի որ մերձենայ
'ի պոռնիկ՝ մի մարմին է. Եղե-
ցին, ասէ, երկոքին 'ի մար-
17 մին մի։ Եւ որ մերձենայ 'ի
18 Տէր՝ մի հոգի է։ Փախարուք
'ի պոռնկութենէ։ Զամենայն
մեղս զոր և գործէ մարդ՝ ար-
տաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ

պոռնիկները, ոչ կռապաշտնե-
րը, ոչ շնացողները, Ոչ իգա- 10
ցողները, ոչ արուագէտները,
ոչ գողերը, ոչ ագահները,
ոչ արբեցողները, ոչ նախա-
տողները, և ոչ յափշտակողները
Աստուծոյ արքայութիւնը չեն
ժառանգիլ։ Եւ մի քանիներդ 11
այսպէսներ էիք. բայց լուա-
ցուեցաք՝ բայց սրբուեցաք՝ բայց
արդարացաք Տէր Յիսուսի ա-
նունովը և մեր Աստուծոյ Հո-
գովը։

Ամեն բան կարելի է ինձ, 12
բայց ամենն օգուտ չէ. ամեն
բան կարելի է ինձ, բայց ես
չպիտի մի բանի իշխանութեան
տակ լինիմ։ Կերակուրները փորի 13
համար, և փորը կերակուրների
համար. բայց Աստուած սրան
էլ նորանց էլ կ'խափանէ. միայն
թէ մարմինը պոռնկութեան հա-
մար չէ, այլ Տիրոջ համար.
և Տէրը մարմնոյն համար։
Բայց Աստուած, որ մեր Տի- 14
րոջն էլ յարոյց, ձեզ էլ կըյա-
րուցանէ իր զօրութեամբը։ Չէ՞ք 15
գիտում՝ որ ձեր մարմինները
Քրիստոսի անդամներ են. ապա
Քրիստոսի անդամներն առնեմ
պոռնիկի անդամ շինեմ. քաւ
լիցի։ Կամ թէ չէ՞ք գիտում, 16
որ նա՝ որ պոռնիկին կպչում է,
մէկ մարմին է նորա հետ. քանզի՝
Երկուսն, ասում է, մէկ մար-
մին կ'լինին։ Եւ նա՝ որ Տի- 17
րոջն է կպչում՝ մէկ հոգի նորա
հետ։ Փախէք պոռնկութիւ- 18

որ պոռնկին՝ յիւր մարմինն
19 մեղանչէ։ Եթէ ո՞չ գիտէք՝ զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն Սրբոյ՝որ է ի ձեզ՝ զոր ունիք յԱստուծոյ, և չէք անձանց տէր։
20 Վասն զի գնոց գնեցայք. փառաւորարարէք զԱստուած ի մարմինս ձեր և յոգիս, որ է յԱստուծոյ։

ԳԼ. Ի.

1 Այլ վասն որոյ գրեցիքն առ իս, Բարւոք է մարդոյ ի կին
2 մարդ չմերձենալ։ Բայց վասն պոռնկութեան՝ իւրաքանչիւրոք զկիր կին կալցի՝. և իւրաքանչիւրոք կին զկիր այր կալցի։
3 Կնոջ՝ այր իւր զպարտսն հատուսցէ. նոյնպէս և կինն՝ առն
4 իւրում։ Օ՛չ կին մարմնոյ իւրում՝ ո՛չ իշխէ՝ այլ այրն. նոյնպէս և այրն իւրում՝ մարմ-
5 նոյ ո՛չ իշխէ՝ այլ կինն։ Մի զրկէք զմիմեանս. բայց եթէ ինչ ի միաբանութենէ առ ժամանակ մի, զի ուխտիցն պարապիցէք. և դարձեալ ի նոյն դարձջիք, զի մի փորձեսցէ զձեզ Սատանայ վասն անխատ-
6 նութեան ձերոյ։ Օ՛այս ասեմ ներելով՝ և ո՛չ հրաման տա-
7 լով։ Փանզի կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրև զիս. այլ իւրաքանչիւրոք զկիր շնորհս

նիցը. ամեն մեղք որ մարդ գործէ, իր մարմնից դուրս է. բայց պոռնկութիւն անողն, իր մարմնոյ մէջ է մեղանչում։ Կամ 19
թէ չէք գիտում, որ ձեր մարմինները Սուրբ Հոգոյ տաճար են՝ որ ձեզանում է, որ Նորան Աստուածանից ունիք. և ձերինը չէք։ Փանզի մեծ գնով գնուեցաք. ուստի փառաւորեցէք Աստուածն ձեր մարմնումը և ձեր հոգումն՝ որ են Աստուծոյն։ 20

ԳԼ. Ի.

Բայց այն բաների համար՝ որ 1
ինձ գրեցիք, ասա՛ՀԷ՝ Լաւ է մարդուս որ կնկան չմօտենայ։
Սակայն պոռնկութեան պատ- 2
ճառով՝ թող ամեն մարդ իր կինն ունենայ. և ամեն մէկ կին թող իր մարդն ունենայ։
Կնկանն իր մարդը թող պարտքը 3
վճարէ. և այնպէս էլ կինն իր մարդուն։ Կինն իր մարմնոյ 4
վերայ իշխանութիւն չունի, այլ մարդը. այնպէս էլ մարդն իր մարմնոյն վերայ իշխանութիւն
չունի, այլ կինը։ Իրար մի 5
զրկէք. բայց միայն իրար հետ միաբանուելով մի քիչ ժամանակի համար, որ ծոմապահութեան և աղօթքի պարապուիք. և դարձեալ մէկտեղ դարձէք, որ սատանան չփորձէ ձեզ՝ ձեր անժուժկալութեան պատճառովը։ Բայց ես այս ներելով 6
եմ ասում, և ո՛չ թէ հրամանով։

ունի Աստուծոյ՝ ոմն այսպէս
8 և ոմն այնպէս։ Բայց ամուրեացն և այրեացն ասեմ, Լաւ է նոցա եթէ կայցեն իբրև
9 զիս։ Այլ թէ ո՛չ ունիցին ժոյժ՝ ամուսնասցին. զի լաւ է ամուսնանալ՝ քան զվառնուլ։
10 Այլ կանամբեացն պատուիրեմ,
11 ո՛չ ես՝ այլ Տէր. Կնոջ յառնէ մի մեկնել։ Այլ եթէ մեկնեսցի, անայր մնասցէ՝ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի, և առն՝ զկին իւր մի թողուլ։

12 Բայց այլոց ես պատուիրեմ, ո՛չ եթէ Տէր. Եթէ ոք եղբայր կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա՝
13 մի թողցէ զնա։ Եւ կին, որ ունիցի զայր անհաւատ՝ և նմա կամ իցէ բնակել ընդ նմա՝ մի
14 թողցէ զայրն։ Օ՛չի սուրբ է այրն անհաւատ կնաւն, և սուրբ է կինն անհաւատ առրամբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ են. բայց այժմ
15 սուրբ են։ Այլ եթէ անհաւատն մեկնեսցի, մեկնեսցի. զի ոչինչ հարկ ի վերայ կայ եղբօրն կամ քեռն՝ յայնպիսի իրս. քանզի ի խաղաղութիւն
16 կոչեաց զմեզ Աստուած։ Օ՛չի

Փանզի կամենում եմ՝ որ ամեն 7
մարդ լինէր իբրև զիս. բայց ամեն մարդ իր յատուկ շնորհքն ունի Աստուածանից. մէկն այսպէս և միւսն այնպէս։ Բայց 8
ամուրիներին և որբևայրիներին ասում եմ՝ Լաւ է նոցանից համար՝ որ ինձ պէս մնան։
Այլ եթէ ժուժկալութիւն 9
չունին, թող ամուսնանան. քանզի աւելի լաւ է ամուսնանալ, քան թէ վառուիլ։ Բայց 10
ամուսնացածներին պատուիրում եմ, ոչ թէ ես՝ այլ Տէրը, որ կինը չբաժանուի իր մարդուցը։
Այլ եթէ բաժանուի էլ, թող 11
առանց ամուսնանալու մնայ՝ կամ իր մարդու հետ հաշտուի. և որ մարդն էլ կինը չթողէ։
Բայց ուրիշներին ես եմ 12
ասում, ոչ թէ Տէրը. Եթէ մի եղբայր անհաւատ կին ունի, և նա հաճի նորա հետ բնակել՝ թող նորան չթողէ։ Եւ մի 13
կին՝ որ անհաւատ մարդ ունի, և նա հաճի նորա հետ բնակել՝ թող նորան չթողէ։ Փանզի 14
անհաւատ մարդը սրբուած է կնկանովը, և անհաւատ կինը սրբուած է մարդովը. ապա թէ ոչ՝ ձեր որդիքը պիղծ կըլինէին. բայց հիմա սուրբ են։
Բայց եթէ անհաւատը բա- 15
ժանվում է, թող բաժանուի. այսպիսի բաների մէջ մի եղբայր կամ քոյր գերի եղած չէ. Աստուած մեզ կանչեց խաղաղ-

գիտես կին զու՝ եթէ զայրն քո
ապրեցուսցես. կամ զի՞ գիտես
այր զու՝ եթէ զկին քո ապրե-
17 ցուսցես. Եթէ ոչ՝ իւրաքան-
չիւր ումեք որպէս և բաժանեաց
Տէր, զիւրաքանչիւրոք որպէս
և կոչեաց Աստուած՝ այնպէս
գնասցէ. և այսպէս ընդ ա-
մենայն եկեղեցիս պատուէր
տամ:

18 Թլփատեալ ոք կոչեցաւ՝ մի
ցանկասցի անթլփատութեան.
յանթլփատութենէ ոք կոչե-
19 ցաւ՝ մի թլփատեսցի. Ոչ
թլփատութիւն ոչինչ է՝ և
անթլփատութիւն ոչինչ. այլ
պահպանութիւն Աստուծոյ պա-
տուիրանացն: Որպէս իւրաքան-
20 չիւրոք յոր կոչումն կոչեցաւ՝
21 ՝ի նմին կացցէ: Ծառա՞յ կոչե-
ցար՝ մի փոյթ լիցի քեզ. այլ
թէ և կարիցես ազատ լինել՝
22 քեզ այնպէս լաւ իցէ: Ոչ որ
՝ի Տէր կոչեցեալ է ծառայն՝
ազատ Տեառն է. նոյնպէս և
որ ազատն կոչեցեալ է՝ ծառայ
23 Քրիստոսի է: Գնոց գնեցայք՝
մի լինիք ծառայք մարդկան:
24 Իւրաքանչիւրոք՝ յոր կոչումն
կոչեցաւ, եղբա՛յրք, ՝ի նմին
կացցէ առաջի Աստուծոյ:

25 Այլ վասն կուսանաց՝ հրա-
ման ինչ ՝ի Տեառնէ ո՛չ ունիմ.
բայց խրատ տամ՝ որպէս ողոր-
մելոյ ուրուք ՝ի Տեառնէ, հա-
զուելեան մէջ: Քանզի ինչ 16
գիտես, կին, գուցէ զքո մարդը
կապրեցնես. կամ ինչ գիտես,
մարդ, գուցէ զքո կինը կապ-
րեցնես. Այլ եթէ 17
մէկին ինչպէս Տէրը բաժին է
տուել, ամեն մէկին ինչպէս Աստ-
ուած կանչեց նորան, այն-
պէս գնայ. և այնպէս ամեն
եկեղեցիներումը պատուէր եմ
տալիս:

Մէկը թլփատուած կան- 18
չուեցաւ, թող անթլփատ չը-
ձեւանայ. մէկը անթլփատութիւ-
նում կանչուեցաւ՝ թող չթլփա-
տուի: Թլփատութիւնն ոչինչ 19
է, և անթլփատութիւնն ոչինչ.
այլ Աստուծոյ պատուիրանքնե-
րի պահելը: Ամեն մէկն՝ որ 20
կոչումի մէջ որ կանչուեցաւ,
նորանում կենայ: Ծառայ 21
կանչուեցար՝ հոգս մի անիր.
բայց եթէ կարենաս ազատ էլ
լինել՝ աւելի նա գործածէ:
Քանզի Տէրով կանչուած ծա- 22
ռան՝ Տիրոջ ազատն է. այնպէս
էլ ազատ կանչուածը Քրիս-
տոսի ծառայ է: Մեծ գնով 23
գնուեցաք՝ մարդկանց ծառայ
մի լինիք: Ամեն մէկն ինչ 24
կոչումի մէջ որ կանչուեցաւ,
եղբայրք, թող նորանում մնայ
Աստուծոյ առջև:

Բայց կոյսերի համար հրա- 25
ման չունիմ Տէրից. միայն
խրատ եմ տալիս ինչպէս Տէ-
րից ողորմութիւն գտած՝ հա-

26 ւատարիմ լինել: *Համարիմ՝
թէ այնպէս լաւ իցէ. բայց
վասն վտանգին որ ՝ի վերայ
կայ՝ բարւոք է մարդոյ թէ
27 այնպէս իցէ՝: Կապեալ ես ՝ի
կին, մի՛ խնդրեր արձակել. ար-
ձակեալ ես ՝ի կնոջէ, մի՛ խնդրեր
28 կին: Ա՛յլ եթէ ամուսնա-
նայցես՝ ո՛չ մեղար. և եթէ
ամուսնանայցէ կոյս՝ ո՛չ մեղաւ,
բայց նեղութիւն մարմնոյ ու-
նիցին այնպիսիքն. այլ ես
29 խնայեցի ՝ի ձեզ: Բայց զայս
ասեմ՝ եղբարք՝ եթէ ժամանակս
կարճեալ է այսուհետև. զի
որ ունիցին կանայս՝ որպէս թէ
30 չունիցին. Եւ որ լայցենն՝ որ-
պէս թէ ո՛չ լայցեն. և որ
խնդանն՝ որպէս թէ չխնդայցեն.
և որ գնեն՝ որպէս թէ չունի-
31 ցին. Եւ որ վարեն զաշխարհս՝
որպէս թէ չվայելիցին. զի
անցեալ է վայելչութիւն աշ-
32 խարհիս այսորիկ: Այլ կա-
միմ՝ զձեզ անհոգս լինել. զի որ
անկիւնն է՝ հոգայ զՏեառն, թէ
33 որպէս հաճոյ լիցի Տեառն. Եւ
որ կանամբին է, հոգայ զաշ-
խարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի
31 կնոջ իւրում: Եւ ահա մեկնե-
ցան ՝ի միմեանց առնակինն և
կոյսն. զի կոյսն հոգայ զՏեառն՝
զի իցէ սուրբ հոգւով և մարմ-
նով, և առնակինն հոգայ զաշ-

ւատարիմ լինելու համար: Արդ 26
ես համարում եմ թէ այսպէս
լաւ է ներկայ նեղութեան պատ-
ճառով, որ լաւ է մարդուն՝
այնպէս լինել: Կնկան հետ 27
կապուած ես՝ մի աշխատիր
արձակուելու. կնկանից արձակ-
ուած ես՝ կին մի որոնիր: Բայց 28
եթէ ամուսնանաս, չմեղանչե-
ցիր. և եթէ մի կոյս ամուսնա-
նայ, չմեղանչեց. միայն թէ այն-
պիսիները մարմնոյ նեղութիւն
կունենան. իսկ ես խնայում
եմ ձեզ: Բայց սա եմ ա- 29
սում, եղբայրք, թէ ժամանակս
կարճ է այսուհետև, որ կին
ունեցողներն էլ չունեցողների
պէս լինէին: Եւ լաց լինողնե- 30
րը չլացողների պէս. և ուրա-
խացողները չուրախացողների և
ծախու առնողները չունեցող-
ների պէս. Եւ այս աշխարհի- 31
գործածողները չար կերպով
չգործածողների պէս. քանզի
այս աշխարհի կերպարանքն
անցնում է: Բայց կամենում 32
եմ, որ դուք առանց հոգսի
լինիք. չամուսնացողը Տիրոջ
բաների համար է հոգս անում,
թէ ինչպէս հաճոյ լինի Տիրոջը:
Բայց ամուսնացածը աշխարհի- 33
բաների համար է հոգս անում,
թէ ինչպէս հաճոյ լինի կնկանը:
Եւ իրարից տարբեր են կինը 34

* ՝Ի Յունն. Վասն որոյ համարիմ՝ թէ այնպէս լաւ իցէ վասն վտանգին որ ՝ի վերայ կայ. զի բարւոք է մարդոյ թէ այնպէս իցէ

խարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի
35 առն իւրում։ Այլ զայս վասն
ձերոյ օգտի ասեմ. ոչ եթէ
խնդիր ինչ արկանեմ ձեզ, այլ
վասն պարկեշտութեան և հր-
պատակութեան Տեառն առանց
զբաղանաց։

36 Այլ թէ ոք ամօթ հա-
մարեսցի վասն կուսին իւրոյ՝
եթէ իցէ ելեալ ըստ չափ, և
այնպէս ինչ պարտ իցէ լինել.
զոր կամեսցի արասցէ, ոչ մե-
37 ղանչէ՝ ամուսնասցի։ Իսկ որ
հաստատեալ է 'ի սրտի իւրում,
և վտանգ ինչ ոչ իցէ նմա,
իշխանութիւն ունի 'ի վերայ
կամաց իւրոց. և զայն ընտրեաց
'ի սրտի իւրում՝ պահել զկոյսն
38 իւր բարւոք առնէ։ Եւ որ
ամուսնացուցանէ զկոյսն իւր՝
բարւոք առնէ. և որ ոչ ամուս-
39 նացուցանէ՝ լաւ ևս առնէ։ Կին
կապեալ է՝ ցորքան ժամանակս
կենդանի է այր նորա. ապա
եթէ ննջիցէ այր նորա, ազատ
է՝ ում՝ կամիցի ամուսնանալ.
40 այլ միայն Տէրամբ։ Բայց
երանելի ևս է՝ թէ այնպէս
կացցէ ըստ իմում խրատու. ես
այսպէս համարիմ, եթէ և յիս
իցէ Հոգի Աստուծոյ։

և կոյսը. համուսնացած կոյսը
Տիրոջ բաների համար է հոգս
անում՝ որ սուրբ լինի մարմնով
և հոգով, իսկ ամուսնացած
կինը աշխարհի բաների հա-
մար է հոգս անում, թէ ինչպէս
հաճոյ լինի մարդուն։ Այլ 35
թէ՝ սա ես ձեր շահի համար
եմ ասում. և ոչ թէ որ ձեր
վերայ խնդիր չուան գցեմ.
այլ պարկեշտութեան համար՝
և առանց արգելքի Տիրոջը ծա-
ռայելու համար։

Բայց եթէ մէկն ամօթ հա- 36
մարէ իր կոյսի համար՝ թէ
չափահասութիւնից անցել է,
և այնպէս պէտք է լինել, ինչ
որ կամենում է, թող անէ. չէ
մեղանչում՝ թող ամուսնանան։
Բայց նա՝ որ իր սրտի մէջ 37
հաստատ է՝ և պէտք էլ չունի,
նա իր կամքի վերայ իշխանու-
թիւն ունի, և նա վճռեց իր
սրտումն՝ որ իր կոյսը պահէ,
նա լաւ է անում։ Այնպէս և 38
նա՝ որ իր կոյսը մարդու է
տալիս, լաւ է անում, և նա՝
որ մարդու չէ տալիս, աւելի
լաւ է անում։ Կինը կապուած 39
է օրէնքով քանի ժամանակ որ
նորա մարդը կենդանի է. բայց
եթէ նորա մարդը ննջէ, ազատ
է ում հետ որ կամենայ ամուս-
նանալու, միայն թէ Տէրով։
Բայց էլ աւելի երանելի է. 40
թէ որ այնպէս կենայ՝ իմ խրա-
տի պէս. այսպէս եմ հասա-

բում, թէ ես էլ ունիմ Աս-
տուծոյ Հոգին։

ԳԼ. Ը

1 Այլ վասն զոհից կռոցն, գի-
տեմք եթէ ամենքին գիտութիւն
ունիմք. գիտութիւն հպարտա-
2 ցուցանէ, այլ սէր շինէ։ Եթէ
որ կամիցի գիտել ինչ, չևս
գիտաց՝ որպէս արժանն էր
3 գիտել։ Բայց որ սիրէ զԱս-
տուած, նա է տեղեկացեալ 'ի
4 նմանէ։ Այլ վասն կերակրոցն
զոհելոց՝ գիտեմք եթէ ոչինչ
իսկ կուռքդ են յաշխարհի. զի
չկ ոք Աստուած բաց 'ի միոյն։
5 Զի թէպէտ և իցեն անուա-
նեալ աստուածք՝ եթէ յերկինս,
և եթէ յերկրի. որպէս և են
աստուածք բազումք՝ և տէրք
6 բազումք. Այլ մեզ մի է Աս-
տուած Հայր՝ յորմէ ամենայն,
և մեք 'ի նա. և մի Տէր Յիսուս
Քրիստոս՝ որով ամենայն, և
մեք նովաւ։

7 Այլ ոչ յամենեսին գիտու-
թիւն է. ոմանք առ խղճի մտաց
մինչև ցայժմ զկռոցն իբրև զզո-
հեալ ուտեն. և խիղճ մտացն
նոցա՝ քանզի տկար է, պղծի։
8 Այլ կերակուր զմեզ առաջի
Աստուծոյ ոչ կացուցանէ. ոչ
եթէ չուտեմք՝ պակասիմք ինչ,

ԳԼ. Ը

Բայց կռքերի զոհերի հա- 1
մար գիտենք, քանզի ամենքս
գիտութիւն ունինք. գիտու-
թիւնը հպարտացնում է, բայց
սէրը շինում է։ Եթէ մէկը 2
կարծում է թէ բան գիտէ, նա
դեռ բան չգիտաց՝ ինչպէս պէտք
է գիտել։ Բայց եթէ մէկը 3
Աստուծոյն սիրէ, նա ճանա-
չուած է նորանից։ Արդ կռոց 4
զոհուած կերակուրների համար
գիտենք, որ կուռքը ոչինչ է
աշխարհքում. և որ ուրիշ ոչ
մի Աստուած չկայ բացի այն
մէկը։ Թանզի թէպէտև կան 5
որ աստուածներ են անուան-
վում՝ թէ երկնքումը թէ երկ-
րիս վերայ. ինչպէս որ շատ
աստուածներ կան և շատ տէ-
րեր։ Բայց մեզ համար մէկ 6
Աստուած կայ՝ Հայրն, որից
են ամեն բաները, և մենք
նորա համար. և մէկ Տէր
Յիսուս Քրիստոս որով են ա-
մեն բաները, և մենք նորանով։
Սակայն ամենքը այս գիտու- 7
թիւնը չունին. քանզի ոմանք
կռքի մասին խղճմտանքով են
ուտում մինչև հիմա իբրև
կուռքերին զոհուած, և նո-
րանց խղճմտանքը տկար լինե-
լով՝ պղծվում է։ Բայց կերա- 8
կուրը մեզ չի կանգնեցնիլ

և ոչ եթէ ուտեմք՝ առաւելումք ինչ։ Բայց զգոյշ լերուք՝
9 գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթագղութիւն լինիցի տկարացն։ Եթէ որ տեսանիցէ զքեզ՝ որ զգիտութիւնդ ունիս՝ բազմաել ՚ի մեհենի՝ ոչ ապա խիղճ մտաց նորա, որ տկարութեամբ զգածեալ է՝ անդրէն շինիցի
11 ուտել զզոհեալն։ Եւ կորնչիցի տկար եղբայրն ՚ի քում գիտութեանն, վասն որոյ Քրիստոսն
12 մեռաւ։ Եւ այնպէս յանցուցեալ յեղբարս, և զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ, ՚ի
13 Քրիստոս մեղանչէ։ Ա՝ ասն որոյ՝ եթէ կերակուր գայթագղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան, զի մի՛ զեղբայրն իմ գայթագղեցուցից։

ԳԼ. Թ

1 Ոչ ապաքէն ազատ եմ, ոչ ապաքէն առաքեալ եմ, ոչ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս աչօք իմովք տեսի, ոչ ապաքէն գործ իմ դուք էք
2 ՚ի Տէր։ Թէպէտ և այլոց չիցեմ առաքեալ՝ այլ դէպ ձեզ եմ. զի կնիք իսկ առաքելութեան իմոյ դուք էք ՚ի Տէր։
3 Իմ պատասխանի՝ ուր զիս հարցանիցեն՝ այս է։ Մի՞թէ ոչ
4 Աստուծոյ առջև. քանզի եթէ ուտենք՝ մի բանով չենք աւելանալ, և եթէ չուտենք՝ մի բանով չենք պակասիլ։ Մի՛այն
9 թէ զգոյշ կացէք՝ որ այդ ձեր իշխանութիւնը գայթակղութիւն չլինի տկարներին։ Քանզի եթէ մէկը տեսնէ քեզ՝ որ գիտութիւն ունիս՝ կռքի տան մէջ «Էջան» նստած, չէ՞ որ նորա խղճմտանքը, որ տկար է, շինութիւն կ՚ստանայ զոհուած բանն ուտելու։ Եւ այն տկար եղբայրը կ՚կորչի քո գիտութեան պատճառովը, որի համար Քրիստոս մեռաւ։ Եւ այսպէս եղբայրների դէմ մեղանչելով, և այն տկարների խղճմտանքը զարկելով՝ Քրիստոսի դէմ մեղք էք գործում։ Ա՝ ասն որոյ՝ եթէ կերակուրն իմ՝ եղբօրը գայթակղեցնում է, ես յաւիտեան միս չեմ ուտիլ, որ իմ՝ եղբօրը չգայթակղեցնեմ։

ԳԼ. Թ

Չէ՞ որ առաքեալ եմ, չէ՞ որ ազատ եմ, չէ՞ որ մեր Տէր Յիսուսին Քրիստոսին տեսայ, չէ՞ որ դուք իմ գործն էք Տէրով։ Թէ և ուրիշներին առաքեալ չլինիմ, բայց հէնց ձեզ առաքեալ եմ, քանզի իմ առաքելութեան կնիքը դուք էք Տէրով։ Իմ պատասխանը ինձ քննողներին դէմ սա է։ Մի՞թէ մենք իշխանութիւն

ունիցիմք իշխանութիւն ուտել
5 և ըմպել։ Մի՞թէ ոչ ունիցիմք իշխանութիւն զքոյս կանայս շրջեցուցանել ընդ մեզ. որպէս և այլ առաքեալքն, և եղբարքն
6 Տեառն, և Կեփաս։ Եթէ միայն ես և Բառնաբաս ոչ ունիցիմք իշխանութիւն չգործել ինչ։
7 Ո՞ՀԱ երբէք զինուորիցի իւրովք թոշակօք. ո՞ՀԱ տնկիցէ այգի՝ և ՚ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. ո՞ՀԱ արածիցէ խաշն՝ և ՚ի կաթանէ
8 խաշնին ոչ ուտիցէ։ Մի՞թէ ըստ մարդկութեան խօսիցիմ զայս. կամ թէ և օրէնքն զսոյն ոչ
9 ասիցեն։ ՚Ի Մովսէսի իսկ յօրէնսն գրեալ է. Ոչ կապեսցես զցռուկ եզին կալոտուց. միթէ զեզա՞նց ինչ փոյթ էր
10 Աստուծոյ։ Ոչ ապաքէն վասն մեր ասէ. քանզի վասն մեր գրեցաւ. զի յուսով պարտի որ սերմանէն՝ սերմանել. և որ կասուն՝ յուսով վայելել։ Եթէ
11 մեք ՚ի ձեզ զհոգեւորսն սերմանեցաք՝ մեծ ի՞նչ է, եթէ ՚ի ձէնջ
12 զմարմնաւորսդ հնձիցեմք։ Եթէ այլք ձերով իշխանութեամբդ վայելեն, ոչ առաւել ես մեք. այլ ոչ ՚ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս. բայց ամենայնի համբերեմք. զի մի՛ խափան ինչ լինիցիմք աւետարանին Քրիստոսի։
13 Ոչ գիտէք եթէ որ ՚ի տաճարին գործեն, ՚ի տաճարէ անտի ուտեն. և որ սեղանոյն պաշտօնեայք են, ՚ի
14 սեղանոյ անտի վայելեն։ Նոյն-

չունինք ուտելու և խմելու։
5 Մի՞թէ իշխանութիւն չունինք քոյր կին մեզ ածելու մեզ հետ, ինչպէս ուրիշ առաքեալները և Տիրոջ եղբայրքը, և Կեփասը։
6 Կամ մի՞թէ միայն ես և Բառնաբասը իշխանութիւն չունինք չգործելու։
7 Ո՞Վ է որ երբէք իր պաշարովն զինուորութիւն անէ. ո՞Վ է որ այգի տնկէ՝ և նորա պտղից չուտէ. ո՞Վ է որ հօտ արածեցնէ՝ և հօտի կաթնից չուտէ։
8 Մի՞թէ ես այս բաները մարդու կերպով եմ ասում, կամ չէ՞ որ օրէնքն էլ է ասում այս բաները։
9 Քանզի Մովսէսի օրէնքումն գրուած է՝ Կալի մէջ աշխատող եզան դունչը մի կապիր. մի՞թէ Աստուած եզների համար էր հոգս անում։
10 Կամ չէ՞ որ մանաւանդ մեզ համար է ասում. քանզի մեզ համար գրուեցաւ, որ ցանողը պէտք է յուսով ցանէ. և կասողն իր յոյսը վայելելու յուսովը է։
11 Եթէ մենք ձեզանում հոգեւորները սերմեցինք, մեծ բան է որ ձեզանից մարմնաւորները հնձենք։
12 Եթէ ուրիշները ձեզ վերայ այդ իշխանութիւնը վայելում են, ոչ առաւել ես մենք. բայց մենք այս իշխանութիւնը չբանեցրինք. այլ ամեն բանի համբերում ենք, որ արգելք չդնենք Քրիստոսի աւետարանին։
13 Չէ՞ք գիտում թէ նորանք՝ որ տաճարումը գործում են, տաճա-

պէս և Տէր հրաման ետ, որոց
զաւետարանն աւետարանեն,
15 յաւետարանէ անտի կեալ: Բայց
ես և ոչ զմի ինչ յայսցանէ
արկի ՚ի գործ, և ոչ գրեցի
զայդ՝ զի ինձ այնպէս ինչ
լինիցի. լաւ է ինձ մանաւանդ
մեռանել, և ոչ զի զպարծանս
իմ ոք ընդունայն համարիցի:
16 Զի եթէ աւետարանեմ, ոչինչ
են ինձ պարծանք. քանզի հարկ
՚ի վերայ կայ. բայց վայ է ինձ,
17 եթէ ոչ աւետարանեմ: Եթէ
կամաւ զայն առնեմ, վարձք են
ինձ. և եթէ ակամայ՝ անտեսու-
18 թիւն յանձն է ինձ: Եւ արդ՝
զինչ վարձք իցեն ինձ, եթէ
յաւետարանելն ձրի տաց զաւե-
տարանն՝ զի մի՛ զլեղծիցիմ ինչ
իշխանութեամբս իմով յաւե-
19 տարանի անդ: Որանզի ազատ
էի յամենայնէ՝ և ամենեցուն
զանձն ՚ի ծառայութեան կա-
ցուցի, զի զբազումն շահեցայց:
20 Եղէ ընդ Հրէայսն իբրև
զՀրէայ, զի զՀրէայսն շահե-
21 ցայց: Եղէ ընդ օրինօք իբրև
զայնոսիկ՝ որ ընդ օրինօքն էին.
իբր ոչ եթէ ընդ օրինօքն էի,
այլ զի որ ընդ օրինօքն իցեն՝ և
զնոսա շահեցայց. ընդ անօրէնս
եղէ իբրև զանօրէն. իբր ոչ եթէ
անօրէն ինչ էի Աստուծոյ, այլ
ընդ օրինօքն Քրիստոսի. զի
22 շահեցայց զանօրէնսն: Եղէ ընդ
տկարս իբրև զտկար՝ զի զտկարսն
շահեցայց. ընդ ամենայնի ամե-
նայն եղէ, զի թերևս ապրե-

բիցն են ուտում. Նորանք՝ որ
սեղանի պաշտօնեաներ են, սե-
ղանիցն են բաժին առնում:
Այնպէս էլ Տէրը հրաման 14
տուաւ աւետարանը քարոզող-
ներին աւետարանիցն ապրել:
Բայց ես սորանցից ոչ մէկն էլ 15
չբանեցրի. և այս բաները չբրը-
նեցի որ՝ ինձ այդպէս լինի.
քանզի աւելի լաւ է ինձ մեռնիլ,
քան թէ մէկն իմ պարծանքը
ունայնացնէ: Որանզի եթէ 16
աւետարանը քարոզեմ, դա ինձ
պարծանք չէ. որովհետև պա-
հարկ է գրուած ինձ վերայ.
բայց վայ է ինձ, եթէ չաւե-
տարանեմ: Որանզի եթէ յօժար 17
կամքով անեմ այս, վարձք
ունիմ. իսկ եթէ ակամայ՝ տրն-
տեսութիւնը յանձնուած է ինձ:
Ապա ի՞նչ է իմ վարձքը, այն 18
որ աւետարանելիս ձրի տամ
Քրիստոսի աւետարանը, որ
աւետարանի մէջ իմ իշխանու-
թիւնը գէշ կերպով չբանեց-
նեմ: Որանզի ամենից ազատ 19
լինելով, իմ անձը ամենքին ծա-
ռայ արի, որ շատերին շահեմ:
Հրէաներին Հրէայի պէս եղայ, 20
որ Հրէաներին շահեմ: Օրէն- 21
քի տակ լինողներին օրէնքի տակ
լինողի պէս եղայ, որ օրէնքի
տակ լինողներին շահեմ. անօ-
րէններին անօրէնի պէս եղայ.
(իբր չէ թէ ես Աստուծոյ առջև
անօրէն էի, այլ Քրիստոսի
օրէնքի տակ,) որ անօրէններին
շահեմ: Տկարներին տկարի պէս 22

23 ցուցից զոմանս: Այս ամե-
նայն առնեմ վասն աւետարա-
նին, զի կցորդ եղէց նմա:

24 Ո՞չ գիտէք՝ եթէ որ յասպա-
րիսին ընթանան, ընթանալ
ամենեքին ընթանան. բայց մի
ոք առնու զյաղթութիւնն. այն-
պէս ընթացարուք զի հասա-
25 նիցէք: Ամենայն որ պատերազմի՝
ամենայնի ժուժկալ լինի. նոքա
զի զկղծանելի պսակն առնու-
ցուն՝ և մեք զանեղծութեան:
26 Արդ ես իսկ այնպէս ընթանամ,
ոչ որպէս յանեւրևոյթս. այնպէս
մրցիմ, որպէս ոչ թէ զհողմն
27 ինչ կոծելով. Այլ ճնշեմ զմար-
մինս իմ, և հնազանդեցու-
ցանեմ, զի գուցէ որ այլոցն
քարոզեցի՝ ես ինքնին անպիտան
գտանիցիմ:

ԳԼ. Ժ

1 Ո՛չ կամիմ եթէ ոգէտք իցէք
եղբարք, զի հարքն մեր ամենե-
րին ընդ ամպովն էին. և ամենե-
2 րին ընդ ծովն անցին. Եւ
ամենեքին ՚ի Մովսէս մկրտեցան
3 յամպն և ՚ի ծովն. Եւ ամենե-
րին զնոյն հոգևոր կերակուրն
4 կերան. Եւ ամենեքին զնոյն
հոգևոր ըմպելին արբին, զի
ըմպէին ՚ի հոգևոր վէմն՝ որ
երթայր զհետ նոցա. և վէմն

եղայ, որ տկարներին շահեմ.
ամենին ամեն բան եղայ, որ
ինչ և իցէ մի քանիսին ապրեց-
նեմ: Այս անում եմ աւետա- 23
բանի համար, որ նորան կցորդ
լինիմ:
Չէք գիտում, թէ ասպա- 24
բէզի մէջ վազողներն՝ ամենքն
են վազում. բայց մէկն է յաղ-
թանակն առնում. դուք այնպէս
վազեցէք որ հասնէք: Եւ 25
ամեն ով որ պատերազմ է ա-
նում, ամեն բանից ժուժկալ է
լինում. հիմա նորանք պարգևը
ստանալու համար մի ապականելի
պսակ առնեն, իսկ մենք՝ անա-
պականելի: Ուրեմն ես այն- 26
պէս եմ վազում, ոչ թէ
ինչպէս անստոյգ. այնպէս եմ
մրցում ոչ թէ ինչպէս օդին
զարկելով: Այլ իմ մարմինը 27
ճնշում եմ և նուաճում, որ մի
գուցէ ուրիշներին քարոզելով,
ինքս անպիտան գտնուիմ:

ԳԼ. Ժ

Չեմ կամենում, եղբայրք, որ 1
չգիտենաք՝ թէ մեր հարքն
ամենքն էլ ամպի տակն էին. և
ամենքը ծովի միջովն անցան:
Եւ ամենքը Մովսէսով մկրտուե- 2
ցան ամպումը և ծովումը: Եւ 3
ամենքն էլ նոյն հոգևոր կերա-
կուրը կերան: Եւ ամենքն էլ 4
նոյն հոգևոր խմելիքը խմեցին.
քանզի այն հոգևոր վէմից էին
խմում՝ որ գնում էր նորանց

5 էր ինքն Քրիստոս. Այլ ոչ
եթէ ընդ բաղումն ի նոցանէ
հաճեցաւ Աստուած, քանզի
տապաստ անկան յանապատի
6 անդ։ Եւ այն օրինակաւ լինեալ
վասն մեր. զի մի լիցուք ցան-
կացօղք չարեաց, որպէս և
7 նոքայն ցանկացան։ Եւ մի՛
կռապարիշաք լինիք, որպէս
ոմանք ի նոցանէ, որպէս և
գրեալ է. Նստաւ ժողովուրդն
ուտել և ըմպել՝ և յարեան ի
8 խաղալ։ Եւ մի՛ պոռնկեսցուք,
որպէս ոմանք ի նոցանէ պոռն-
կեցան, և անկան ի միում
աւուր քսան և չորք հազարք։
9 Եւ մի՛ փորձեսցուք զՏէր. որ-
պէս ոմանք ի նոցանէ փորձե-
ցին, և յօձից անտի սատակեցան։
10 Եւ մի՛ տրտնջեսցուք. որպէս
ոմանք ի նոցանէ տրտնջեցին, և
կորեան ի սատակչէ անտի։
11 Այլ այն ամենայն օրինակաւ
անցանէր ընդ նոսա. բայց
գրեցաւ վասն մերոյ խրատու,
յորս վախճան յաւիտեանցն
եհաս։

12 Այսուհետև որ համարիցի
հաստատուն կալ՝ զգոյշ լիցի,
13 գուցէ անկանիցի։ Փորձութիւն
ի ձեր վերայ ոչ է եկեալ՝ բաց
ի մարդկանէ. այլ հաւատարիմ
է Աստուած՝ որ ոչ արկցէ զձեզ
ի փորձութիւն առաւել քան
զկար ձեր, այլ արասցէ ընդ
փորձութեանն և զելս՝ զի
համբերել կարասջիք։

հետ. և այն վէմն էր Քրիս-
տոս։ Բայց Աստուած նորան-
ցից շատերին չհաւանեցաւ. 5
քանզի անապատումն փուռած
ընկան։ Եւ սորանք մեզ օրի- 6
նակի համար եղան. որ մենք չար
բաներուն ցանկացող չլինինք,
ինչպէս նորանք ցանկացան։ Եւ 7
կռապաշտ մի լինիք ինչպէս
նորանցից ոմանք. ինչպէս գը-
րուած է, Ժողովուրդը նըս-
տեց ուտելու և խմելու, և վեր-
կացան որ խաղան։ Եւ պոռն- 8
կութիւն էլ չանենք, ինչպէս
նորանցից ոմանք պոռնկութիւն
արին, և մէկ օրուն քսան և
երկու հազար հոգի վայր ընկան։
Եւ Քրիստոսին էլ չփորձենք, 9
ինչպէս նորանցից էլ ոմանք
փորձեցին, և օձերովը սատակե-
ցան։ Եւ չտրտնջանք էլ, ինչ- 10
պէս նորանցից էլ ոմանք տրտն-
ջացին, և սատակչի ձեռովը կո-
րան։ Եւ այն ամենն օրինակի 11
համար էր նորանց հանդիպուած,
բայց մեզ խրատի համար
գրուեցաւ, որոնց դարերի վերջը
հասաւ։

Ուրեմն ով որ հաստա- 12
ցուած է թէ հաստատ կանգ-
նած է, թող զգոյշ լինի, որ
վայր չընկնի։ Ձեզ ուրիշ փոր- 13
ձութիւն չէ պատահել բացի
մարդկային ՅՈՒՅՈՒՆՆԵՑ. բայց
Աստուած հաւատարիմ է, որ
չի թողիլ ձեզ ձեր կարողու-
թիւնից վեր փորձուելու, այլ
փորձութեան հետ ելքն էլ

14 Վասն որոյ սիրելիք իմ,
փախերուք ի կռապաշտութենէ։
15 Իբրև ընդ իմաստունս խօսիմ.
ընտրեցէք ձեզէն զոր ասեմս։
16 Բաժակն օրհնութեան զոր
օրհնեմք՝ ոչ ապաքէն հաղոր-
դութիւն է արեանն Քրիս-
տոսի. հացն զոր բեկանեմք՝ ոչ
ապաքէն հաղորդութիւն է
17 մարմնոյն Քրիստոսի։ Զի մի
հաց՝ մի մարմին եմք բաղումքս.
զի ամենեքին ի միոջէ հացէ
18 անտի վայելեմք։ Տեսէք զԻս-
րայէլն ըստ մարմնոյ. ոչ ա-
պաքէն՝ որ ուտեն ի զոհիցն՝
19 հաղորդք են սեղանոյն։ Իսկ
արդ զի՞նչ ասեմ, թէ զոհեալն
իցէ՞ ինչ. և կամ թէ կուռքն իսկ
20 իցէ՞ն ինչ։ Այլ զոր զոհեն
հեթանոսք, դիւաց՝ և ոչ Աս-
տուծոյ զոհեն. ոչ կամիմ զձեզ
հաղորդս դիւաց լինել. քանզի
ոչ կարէք զբաժակն Տեառն
21 ըմպել՝ և զբաժակն դիւաց. Եւ
ոչ կարէք ի սեղանոյ Տեառն
վայելել՝ և ի սեղանոյ դիւաց։
22 Եթէ նախանձ ինչ արկանիցեմք
Տեառն, միթէ զօրագոյնք իցեմք
քան զնա։

23 Ամենայն ինչ ինձ մարթ է,
այլ ոչ ամենայն ինչ օգուտ
է. ամենայն ինչ ինձ մարթ է,

կ'պատրաստէ, որ կարողանաք
համբերել։

Նորա համար, իմ սիրելիք, 14
փախէք կռապաշտութենէն։
Ինչպէս իմաստուններուն հետ եմ 15
խօսում, դուք ինքներդ դատե-
ցէք այն որ ասում եմ։ Օրհ- 16
նութեան բաժակը, որ օրհնում
ենք, չէ՞ որ հաղորդութիւն է
Քրիստոսի արեանը. հացը, որ
կտրում ենք, չէ՞ որ հաղորդու-
թիւն է Քրիստոսի մարմնոյն։
Որովհետև մէկ հաց, մէկ մար- 17
մին ենք մենք շատերս. քանզի
ամենքս այն մէկ հացիցն ենք
վայելում։ Տեսէք Իսրայէլին 18
մարմնոյ կողմանէ. չէ՞ որ զոհ-
ուածներն ուտողները մասնա-
կից են սեղանին։ Արդ ի՞նչ 19
ասեմ. միթէ կուռքը մի բան է,
և կամ թէ կռքերի զոհուած-
ները մի բա՞ն են։ Բայց այն 20
որ հեթանոսները զոհում են,
դևերին են զոհում, և ոչ թէ
Աստուծոյն. բայց չեմ կամե-
նում, որ դուք դևերին մասնա-
կից լինիք. չէք կարող Տիրոջ
բաժակը խմել և դևերի բա-
ժակը. Չէք կարող Տիրոջ 21
սեղանիցը վայելել՝ և դևերի
սեղանիցը։ Կամ թէ Տիրոջը 22
նախանձի դրդուենք. միթէ նո-
րանից աւելի զօրաւոր ենք.
ամեն բան կարելի է ինձ, բայց
ամեն բան օգուտ չէ։

Ամեն բան կարելի է ինձ, 23
բայց ամեն բան շինութիւն չէ
տալիս։ Ոչ ով միայն իր անձի 24

24 այլ ոչ ամենայն ինչ շինէ։ Մի՛
ոք զանձին և եթէ խնդրիցէ՝ այլ
25 և զընկերին։ Ամենայն ինչ որ
՝ի սպանդանոցի վաճառի, կե-
րա՛յք՝ և մի՛ խորհէք վասն խղճի
26 մտաց. Օ՛ի Տեառն է երկիր
27 լրիւ իւրով։ Եթէ ոք կոչէ
զձեզ յանհաւատից՝ և կամիցիք
երթալ. զամենայն ինչ որ առաջի
դնիցի, կերա՛յք՝ և մի՛ խորհէք
28 վասն խղճի մտաց։ Այլ եթէ
ոք ասասցէ ձեզ՝ թէ Այդ զոհ-
եալ է, մի՛ ուտիցէք վասն նորա՝
որ գուշակն եղև, և վասն խղճի
29 մտացն։ Այլ զնիզմ մտացն
ասեմ՝, ոչ զիւրն, այլ զընկերին.
իսկ ընդէ՞ր բնաւ ազատութիւնս
իմ դատիցի յայլոյ խղճէն
30 մտաց։ Եթէ ես շնորհօք վայե-
լեմ, ընդէ՞ր հայհոյիցիմ, վասն
31 որոյ ես գոհանամ։ Արդ՝ եթէ
ուտիցէք՝ եթէ ըմպիցէք՝ եթէ
զինչ և առնիցէք, զամենայն ինչ
՝ի փառս Աստուծոյ արասջի՛ք։
32 Առանց դայթագղութիւն դնե-
ցէք Հրէից և հեթանոսաց՝
լինիջի՛ք, և եկեղեցւոյն Աստու-
33 ծոյ։ Որպէս և ես ամենեսին
ամենեցուն հաճոյ լինիմ. ոչ
խնդրեմ՝ զանձին օգուտ այլ
զբազմաց՝ զի ապրեսցին։

օգուտը չորոնէ, այլ ամեն մէկն
ընկերին էլ։ Ամեն ինչ որ 25
սպանդանոցումը ծախվում է՝
կերէք առանց մի բան քննելու
խղճմտանքի պատճառով։ Դան- 26
զի Տիրոջն է երկիրը և նորա
բոլոր լիութիւնը։ Եթէ ան- 27
հաւատներից մէկը կանչէ ձեզ,
և դուք կամենաք գնալ, ամեն
բան որ ձեր առջև դրուի, կե-
րէք, առանց մի բան քննելու
խղճմտանքի պատճառով։ Բայց 28
եթէ մէկն ասէ ձեզ, թէ Դա
կռքի զոհուած բան է, մի ու-
տէք՝ նորա պատճառովն որ
խմացրեց, և խղճմտանքի պատ-
ճառովը, քանզի Տիրոջն է եր-
կիրը և նորա բոլոր լիութիւնը։
Բայց խղճմտանք եմ ասում՝՝ 29
ոչ թէ իր, այլ ընկերինը.
քանզի ինչո՞ւ իմ ազատութիւնը
պիտի դատուի ուրիշի խղճմտան-
քից. Թէ որ ես շնորհակալու- 30
թիւնով վայելում եմ, ինչո՞ւ
հայհոյուիմ՝ այն բանի համար՝
որի համար ես գոհանում եմ։
Ուրեմն՝ թէ ուտէք թէ խմէք, 31
թէ ինչ գործ էլ որ անէք,
ամեն բան Աստուծոյ փառաց
համար արէք։ Առանց դայ- 32
թակղութիւն տալու եղէք Հրէաներին և Յոյներին և Աստուծոյ եկեղեցոյն։ Ինչպէս ես 33
էլ ամեն բանով ամենին հաճոյ
եմ լինում. իմ անձի օգուտը
չորոնելով, բայց շատերինը՝ որ
փրկուին։

ԳԼ. ԺԱ.

1 Նմանողք ինձ եղերուք, որ-
2 պէս և ես Քրիստոսի։ Գովեմ
զձեզ՝ զի զամենայն ինչ զիմ
յիշէք. և որպէս աւանդեցի
ձեզ՝ զաւանդութիւնսն ունիցիք։
3 Կամիմ զի գիտիցէք դուք. եթէ
առն ամենայնի գլուխ Քրիստոս
է, և գլուխ կնոջ այր, և գլուխ
4 Քրիստոսի Աստուած։ Ամե-
նայն այր՝ յորժամ յաղօթս
կայցէ՝ կամ մարգարէանայցէ՝ և
զգլուխն ծածկեալ ունիցի, յա-
5 մօթ առնէ զգլուխն իւր։ Եւ
ամենայն կին յորժամ յաղօթս
կայցէ՝ կամ մարգարէանայցէ
բացաւ գլխով՝ յամօթ առնէ
զգլուխն իւր, զի այնպէս հա-
6 մարի՝ թէ գերծեալ իցէ։ Օ՛ի
եթէ ոչ սբողեսցի կին, փոբ-
րեսցէ զվերս իւր. ապա եթէ
անպատեհ է կնոջ փոբրել կամ
7 գերծուլ, սբողեսցի։ Առն մար-
դոյ չէ պարտ ծածկել զգլուխս
իւր. զի պատկեր և փառք Ա-
տուծոյ է. իսկ կին փառք առն
8 իւրոյ է։ Օ՛ի ոչ եթէ այր ՝ի
կնոջէ է, այլ կին յառնէ։
9 Դ՝անզի ոչ իսկ հաստատեցաւ
այր վասն կնոջ, այլ կին վասն
10 առն։ Վասն այնորիկ պարտի
կինն շուք դնել գլխոյն վասն
11 հրեշտակաց։ Բայց ոչ կին
առանց առն, և ոչ այր առանց
12 կնոջ ՝ի Տէր։ Օ՛ի որպէս կին

ԳԼ. ԺԱ.

Ինձ նմանող եղէք, ինչպէս 1
ես էլ Քրիստոսի։ Արդ գո- 2
վում եմ ձեզ, եղբայրք, որ իմ
ամեն բաները յիշում էք, և
ինչպէս պատուիրեցի ձեզ, այն
պատուէրները պահում էք։
Բայց կամենում եմ որ դուք 3
գիտենաք, թէ ամեն մարդու
գլուխը Քրիստոս է, և կնկան
գլուխը մարդը, և Քրիստոսի
գլուխն՝ Աստուած։ Ամեն մարդ՝ 4
երբոր աղօթք է անում կամ՝
մարգարէանում՝՝ և գլուխը ծած-
կած ունենայ, ամօթ է անում
իր գլուխը։ Եւ ամեն կին՝ երբ 5
որ աղօթք է անում կամ՝ մար-
գարէանում բաց գլխով, ամօթ
է անում իր գլուխը. քանզի մի
և նոյն է թէ ածիլուած է։
Դ՝անզի եթէ կինը չծածկուի, 6
թող ուրեմն իր մազերն էլ
կտրէ. բայց եթէ կնկան ամօթ
է մազերը կտրելը կամ ածի-
լելը, թող ծածկուի։ Սակայն 7
մարդուն պէտք չէ որ իր գլուխը
ծածկէ, քանզի Աստուծոյ պատ-
կերն և փառքն է. բայց կինը
մարդու փառքն է։ Դ՝անզի ոչ 8
թէ մարդն է կնկանից, այլ
կինն է մարդուցը։ Եւ որով- 9
հետև ոչ թէ մարդը կնկան
համար ստեղծուեցաւ, այլ կինը
մարդու համար։ Դ՝որա համար 10
պէտք է, որ կինը շուք* դնէ

* Իշխանութիւն

յառնէ՝ նոյնպէս և այր 'ի
կնոջէ. բայց ամենայն Աստու-
13 ծոյ։ Այլ դուք ձեզէն տուք
զկիրաւդ. արժանի է կնոջ մարդոյ
հոլանի յաղօթս կալ առաջի
14 Աստուծոյ։ Եւ ոչ բնութիւնն
իսկ ուսուցանէ զձեզ, զի այր
եթէ գիսաւոր է՝ անարգանք են
15 նմա. Բայց կին եթէ գիսաւոր
է՝ փառք են նմա. զի գէսք
փոխանակ զգեստու տուեալ են
16 նմա։ Այսպէս թէ ոք կամի հակա-
ռակող լինել, մեք չունիմք այն-
պիսի սովորութիւն, և ոչ եկե-
ղեցիքն Աստուծոյ։

17 Այլ զայս պատուիրեմ, ոչ
որպէս թէ գովիցեմ, զի ոչ 'ի
լաւ անդր՝ այլ* 'ի վատթարն
18 նկրտիք՝։ Նախ՝ յորժամ 'ի մի
վայր ժողովիցիք յեկեղեցին,
լսեմ եթէ հերձուածք գոն 'ի
ձեզ. և սակաւ ինչ հաւատացի։
19 Բայց և հերձուածք լինելոց են
'ի ձեզ. զի որ ընտիրքն իցեն 'ի
20 ձեզ՝ երևեսցին։ Եւ արդ՝ 'ի
ժողովելն ձեզ 'ի միասին՝† ոչ է
տունն Տեառն ձեզ տեղի հաց

զլեսի վերայ հրեշտակների հա-
մար։ Բայց դարձեալ ոչ կինն 11
առանց մարդու, և ոչ մարդն
առանց կնկան Տէրումբ։ Զան- 12
զի ինչպէս որ կինը մարդուցը
եղա՝, այնպէս էլ մարդը կնկան
միջոցովն է. բայց ամենն Աստ-
ուածանից։ Դուք ինքներդ դա- 13
տեցէք. մի կնկան վայելըմ է
որ չծածկուած աղօթք անէ
Աստուծոյն։ Կամ հէնց բնու- 14
թիւնն ինքն չէ՞ սովորեցնում
ձեզ, որ եթէ մարդը երկար
մազեր ունենայ, այն անարգանք
է նորան։ Բայց եթէ կինն 15
երկար մազեր ունի, այն փառք
է նորան. քանզի երկար մազերը
հագուստի տեղ է տրուած նո-
րան։ Բայց եթէ մէկը կամ- 16
նում է հակառակել, մենք այն-
պիսի սովորութիւն չունինք, և
ոչ էլ Աստուծոյ եկեղեցիները։

Բայց այս էլ պատուիրելով 17
չեմ գովում, որ դուք ոչ թէ
գէպի լաւագոյնն, այլ գէ-
պի վատթարն էք ժողովվում։
Զանզի նախ և առաջ երբոր 18
մէկ տեղ էք ժողովվում եկեղե-
ցու մէջ, լսում եմ որ հեր-
ձուածներ կան ձեր մէջ, և
մասամբ էլ հաւատում եմ։
Զանզի հերձուածներ էլ պէտք 19
է լինին ձեր մէջ, որ ընտիր
լինողները յայտնի լինին ձեզա-

* 'Ի Յոյն. 'ի վատթարն ժողովիք
† 'Ի Յոյն. ոչ է զՏէրունական
ընթրիսն ուտել

21 ուտելոյ՝։ Զի իւրաքանչիւրոք
զիւր ընթրիս յառաջանայ ուտել.
և ոմն քաղցեալ՝ և ոմն արբեալ։
22 Մի՞թէ տունս ո՞չ ունիցիք
ուտելոյ կամ ըմպելոյ. եթէ
զեկեղեցեաւն Աստուծոյ արհա-
մարհիցէք, և յամօթ առնէք
զչքաւորսն զինչ ասացից.
գովեցի՞ց զձեզ. յայդմ ոչ
23 գովեմ։ Զի ես ընկալայ 'ի
Տեառնէ՝ զոր և ձեզն աւան-
դեցի, եթէ Տէր Յիսուս 'ի
գիշերին յորում մատնէր, առ
հաց, Գոհացաւ՝ երեկ և ասէ.
24 Առէք՝ և կերայք. այս է մար-
մին իմ, որ վասն ձեր բաշխի.
զայս արարէք առ իմոյ յիշա-
25 տակի։ Նոյնպէս և զբաժակն
յետ ընթրեացն առ և ասէ.
Այս բաժակ՝ նոր ուխտ է իմով
արեամբս. զայս արարէք քանիցս
անգամ թէ ըմպիցէք՝ առ իմոյ
26 յիշատակի։ Զանիցս անգամ
թէ ուտիցէք զհացս զայս, և
զբաժակս ըմպիցէք, զմահն
Տեառն պատմեցէք. մինչև ե-
27 կեսցէ նա։ Այսուհետև որ
ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ
զբաժակս Տեառն անարժանու-
թեամբ, պարտական եղիցի
մարմնոյ և արեանն Տեառն։
28 Փորձեսցէ մարդ զանձն իւր, և
ապա 'ի հացէ անտի կերիցէ,
29 և 'ի բաժակէն արբցէ։ Զի որ
ուտէ և ըմպէ անարժանու-
թեամբ՝ դատաստանս անձին
իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ
30 խորհէ զմարմինն Տեառն։ Վասն

20 նում։ Արդ երբոր մէկտեղ էք
ժողովվում, սա Տէրունական
ընթրիքն ուտել չէ։ Զանզի 21
ամեն մէկն առաջ իր ընթրիքն է
անում ուտելու ժամանակ, և
մէկը սոված է, և միւսը արբած։
Մի՞թէ տուն չունիք ուտելու 22
և խմելու. կամ թէ Աստուծոյ
եկեղեցին արհամարհո՞ւմ էք, և
չքաւորներին ամաչեցնում. ձեզ
ի՞նչ ասեմ. գովեմ ձեզ. այդ
բանումը չեմ գովում։ Զանզի 23
ես Տէրից ընդունեցի այն որ
ձեզ էլ առանդեցի. որ Տէր
Յիսուսը այն գիշերը որ մատն-
վում էր, հաց առաւ, Եւ գո- 24
հանալուց յետոյ կտրեց և ա-
սաց. Առէք, կերէք. այս է իմ
մարմինը՝ որ ձեզ համար կըտր-
վում է, այս արէք իմ յիշատա-
կի համար։ Այնպէս էլ՝ ընթ- 25
րիքն ուտելուց յետոյ բաժակն
առաւ և ասաց. Այս բաժակը
նոր ուխտն է իմ արիւնովը. այս
արէք՝ քանի անգամ որ խմէք,
իմ յիշատակի համար։ Վասն- 26
զի քանի անգամ որ այս հացն
ուտէք, և այս բաժակը խմէք,
Տիրոջ մահը պատմեցէք՝ մինչև
որ նա կ'գայ։ Ուրեմն ով որ 27
այս հացն ուտէ՝ կամ Տիրոջ
բաժակը խմէ անարժանու-
թեամբ, նա պարտական կ'լինի
Տիրոջ մարմնոյն և արեանը։
Ուրեմն թող մարդ փորձէ իր 28
անձը, և ապա այն հացից
ուտէ՝ և այն բաժակից խմէ։
Զանզի անարժանութեամբ ու- 29

այնորիկ իսկ են 'ի ձեզ բաղում հիւանդք և անտաժէտք. և շատ ևս այն են, որ և ննջեցեալք
31 իսկ իցեն: Այլ եթէ զանձինս քննեաք՝ ապա ո՛չ դատապար-
32 տիք: Եւ եթէ դատիմք՝ 'ի Տեառնէ խրատիմք. զի մի ընդ աշխարհի դատապարտեսցուք:
33 Այսուհետև եղբարք՝ յորժամ 'ի մի վայր ժողովիցիք ուտել՝
34 միմեանց մնասջիք: Ապա թէ ոք քաղցեալ իցէ՝ 'ի տան իւրում կերիցէ. զի մի 'ի դատապարտութիւն ժողովիցիք: Այլոց զայլ ինչ յորժամ եկիցէ՝ յայնժամ պատուիրեցից:

ԳԼ. ԺԲ

1 Այլ վասն հոգևորացն ՝եղբարք՝ ո՛չ կամիմ՝ եթէ տգիտք
2 իցէք: Գիտէք իսկ՝ զի մինչ հեթանոսքն էիք, առ կուռսն անմուռունչս՝ ո՛րպէս երթայիք և
3 գայիք: Վասն որոյ ցուցանեմ ձեզ. զի ոչ՝ոք Աստուծոյ խօսի՝ և ասիցէ թէ նզովեալ Յիսուս. և ո՛չ ոք կարէ ասել՝ Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն Սրբով: Թէպէտ և
4 բաժինք շնորհաց են՝ այլ
5 Հոգի նոյն է: Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն

տողը և խմողը իր անձի համար դատաստան է ուտում՝ և խմում. քանզի չէ որոշում Տիրոջ մարմինը: Նորա համար էլ ձեր 30
միջումը շատ հիւանդներ և ցաւագարներ կան. և շատեր էլ ննջած են: Բանզի եթէ մեր 31
անձերը քննէինք, չէինք դատապարտուիլ: Բայց դատուելով Տէրիցը խրատվում ենք, 32
որ աշխարհի հետ չդատապարտուինք: Ուրեմն, եղբարքս, 33
երբոր ժողովուիք ուտելու համար, իրար սպասեցէք: Ապա 34
եթէ մէկը սոված է՝ թող էր տանն ուտէ, որ դատապարտութեան համար չժողովուիք. բայց ուրիշ բաներն՝ երբոր կ'գամ՝ այն ժամանակ կըպատուիրեմ:

ԳԼ. ԺԳ

Բայց հոգևոր շնորհներէն հա- 1
մար, եղբայրք, չեմ՝ կամենում
որ չգիտենաք: Գուք գիտէք, 2
որ հեթանոս էիք, և անձայն
կռքերի մօտ էիք տարվում ինչպէս որ առաջնորդվում էիք:
Նորա համար յայտնում եմ 3
ձեզ, որ ոչ ով չէայ Աստուծոյ
Հոգովը խօսող, որ Յիսուսին
նզովեալ ասէ. և ոչ ով չէ
կարող Յիսուսին Տէր ասել՝
եթէ ոչ Հոգովն Սուրբով:
Պարգևները զանազան են, բայց 4
Հոգին նոյնն է: Եւ պաշտօն- 5

6 է: Եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն
է, որ յաջողէ զամենայն յամե-
7 նայնի: Բայց իւրաքանչիւր
ումեք տուեալ է յայտնութիւն
Հոգւոյն՝* առ իւրաքանչիւր
8 օգուտ: Ումեմն 'ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան. այլում՝ բան գիտութեան ըստ
9 նմին Հոգւոյ. Մ'իւսումն հաւատք նովին Հոգւով. այլում՝ շնորհք բժշկութեանց նովին
10 Հոգւով. Այլում յաջողութիւնք զօրութեանց. այլում մարգարէութիւն. այլում ընտրութիւն հոգւոց. այլում
ազգք լեզուաց. այլում թարգ-
11 մանութիւն լեզուաց: Այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն Հոգի, և բաժանէ իւրաքանչիւր՝ որպէս և կամի:

12 Որպէս մարմին մի է, և անդամս բազումս ունի. և ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին է. նոյնպէս և
13 Քրիստոս: Բանզի միով Հոգւով մեք ամենեքին 'ի մի մարմին մկրտեցաք. եթէ Հրէայք, եթէ հեթանոսք, եթէ ծառայք, եթէ ազատք, ամենեքին զմի
14 Հոգի արբաք: Բանզի մարմին ո՛չ մի անդամ է, այլ բազում:
15 Եթէ ասիցէ ոտն, Զի չեմ

* 'Ի Յոյնն, առ 'ի օգուտ

ները զանազան են, բայց Տէրը նոյնն է: Եւ ներգործութիւն- 6
ները զանազան են, բայց Աստուած նոյնն է, որ ամենն ա- 7
մենքի մէջ ներգործում է: Բայց
ամեն մէկին տրուած է Հոգոյ
յայտնութիւնը օգտի համար:
Բանզի մէկին Հոգուցը տրուած 8
է իմաստութեան խօսք. և ու-
րիշին գիտութեան խօսք՝ նոյն
Հոգոյ ջափովը: Մ'իւսին հա- 9
ւատք նոյն Հոգովը. ուրիշին
բժշկութեան պարգևներ նոյն
Հոգովը: Ուրիշին զօրութիւն- 10
ների ներգործութիւններ. և
ուրիշին մարգարէութիւն. ու-
րիշին հոգիների ընտրութիւն.
ուրիշին այլ և այլ լեզուներ.
ուրիշին լեզուների թարգմա-
նութիւններ: Բայց այս ա- 11
մենը հէնց մի և նոյն Հոգին
է ներգործում, ամեն մէկին
բաժանելով ինչպէս կամե-
նում է:

Ինչպէս էլ մարմինը մէկ է 12
և անդամներ շատ ունի. և մէկ
մարմնոյ բոլոր անդամները շատ
լինելով՝ մարմինը մէկ է. այս-
պէս էլ Քրիստոս: Բանզի 13
մենք էլ ամենքս մէկ Հոգով
մկրտուեցանք մէկ մարմին լինե-
լու. թէ Հրէաներ, թէ Յոյ-
ներ. թէ ծառաներ, թէ ազատ-
ներ, և ամենքս մէկ Հոգին
խմեցինք: Բանզի մարմինն էլ 14
մէկ անդամ չէ, այլ շատ:

ձեռն՝ չեմ 'ի մարմնոյ անտի,
ոչ այնու չիցէ 'ի մարմնոյ անտի։
16 Եւ եթէ ասիցէ ականջն, Զի ան-
ձն չեմ՝ ակն՝ չեմ 'ի մարմնոյ
անտի, ոչ այնու չիցէ 'ի մարմնոյ
17 անտի։ Եթէ ամենայն մարմին
ակն էր՝ ո՞ւր էր ունկն. և եթէ
ամենայն լսելիք էր՝ ո՞ւր էին
18 հոտոտելիք։ Բայց արդ՝ Աստ-
ուած եդ զանդամսն՝ զմի մի
իւրաքանչիւր 'ի նոցանէ 'ի
մարմին՝ որպէս և կամեցաւ։
19 Այլ թէ էր ամենայն մի անդամ,
20 ո՞ւր էր մարմին։ Բայց արդ՝
անդամք բազում են, և մարմին
21 մի։ Զի՞ կարէ ակն ասել ցձեռն,
թէ Ձեզ ինձ պիտոյ, և կամ
դարձեալ գլուխ ցոտս՝ թէ Ձեզ
22 ինձ պիտոյ։ Այլ առաւել որ
թուին անդամք մարմնոյն՝ թէ
տկարագոյնք իցեն, կարևորք
23 են. Եւ որ թուիցին թէ անար-
գագոյնք իցեն մարմնոյն, այնց
առաւելագոյն պատիւ առնեմք.
և ամօթոյքն մեր առաւել ևս
24 պարկեշտութիւն ունին։ Եւ
պարկեշտիցն մերոց չէ ինչ
պիտոյ. քանզի Աստուած խառ-
նեաց զմարմինն, և նուազին
25 առաւել ևս պատիւ ետ. Զի մի
իցեն հերձուածք 'ի մարմնի
անդ, այլ զի նոյնք զմիմեանց
26 հոգայցեն անդամքն։ Եւ եթէ
վշտանայ ինչ մի անդամն,
վշտանան ամենայն անդամքն
ընդ նմա. և եթէ փառաւո-
րի մի անդամն, խնդան ամե-
նայն անդամքն ընդ նմա։

Եթէ ոտն ասէ. Որովհետև 15
ձեռն չեմ՝ մարմնիցը չեմ.
մի՞թէ նորանով մարմնիցը չի
լինիլ։ Եւ եթէ ականջն ասէ, 16
Որովհետև աչք չեմ՝ մարմնիցը
չեմ. մի՞թէ նորանով մարմնիցը
չի լինիլ։ Եթէ բոլոր մարմինն 17
աչք լինէր, ո՞ր տեղ էր լսելիքը.
և եթէ բոլոր մարմինը լսելիք
լինէր, ո՞ր տեղ էր հոտոտելիքը։
Բայց հիմա Աստուած անդամ- 18
ները նորանց ամեն մէկը դրաւ
մարմնոյ մէջ ինչպէս կամեցաւ։
Եւ եթէ ամենը մէկ անդամ 19
լինէր, ո՞ր տեղ էր մարմինը։
Բայց հիմա անդամները շատ 20
են, իսկ մարմինը մէկ։ Աչքը 21
չէ կարող ձեռին ասել. Ինձ
պէտք չես. կամ դարձեալ
գլուխը ոտներին՝ Ինձ պէտք
չէք։ Այլ մանաւանդ մարմնոյ 22
այն անդամները՝ որ երևում են
թէ տկարագոյն են, նորանք
հարկաւոր են։ Եւ նորանք՝ որ 23
կարծում ենք թէ մարմնոյ շատ
անարգուածներն են, նորանց
առաւել ևս պատիւ ենք անում.
և մեր ամօթալիքներն աւելի
պարկեշտութիւն ունին։ Եւ 24
մեր պարկեշտ անպատեղը մի
բանի պէտք չունին. բայց
Աստուած մարմինը բարեխառ-
նեց, ցածին աւելի պատիւ տա-
լով։ Որ մարմնոյ մէջ տա- 25
բաձայնութիւն չլինի, այլ որ
անդամները իրար համար նոյն
հոգսն ունենան։ Եւ եթէ մէկ 26
անդամը ցաւում է, բոլոր ան-

27 Այլ դուք մարմին Քրիստոսի
էք՝ * և անդամք յանդամոց
նորա։

28 Եւ զորս եդ Աստուած յեկե-
ղեցւոջ՝ այս են. նախ զառա-
քեալսն, երկրորդ զմարգարէս,
երրորդ զվարդապետս, ապա
զօրութիւնս, ապա շնորհս բժշ-
կութեանց, օգնութիւնս, վա-
րիչս, ազգս լեզուաց, † թարգ-
29 մանութիւնս լեզուաց։ Մի՞թէ
ամենեքին առաքեալք իցեն.
միթէ ամենեքին մարգարէք
իցեն. միթէ ամենեքին վար-
30 դապետք իցեն։ Մի՞թէ ամենե-
քի՞ն զօրութիւնք իցեն. միթէ
ամենեքին շնորհս բժշկութեան
ունիցին. միթէ ամենեքին 'ի
լեզուս խօսիցին. միթէ ամենե-
քի՞ն թարգմանիցեն։
31 Բայց նախանձաւո՛ր լերուք
շնորհացն, որ լաւն են։ Այլ
ես առաւել ևս ճանապարհ ցու-
ցանեմ ձեզ։

ԳԼ. ԺԳ

1 Եթէ զլեզուս մարդկան խօսի-
ցիմ և զհրեշտակաց՝ և սէր ո՛չ
ունիցիմ, եղէ ես իբրև զպղինձ
որ հնչէ, կամ իբրև զծնծղայս՝

դամներն էլ նորա հետ ցա-
ւում են. և եթէ մէկ անդամը
փառաւորվում է. բոլոր ան-
դամներն էլ նորա հետ ու-
րախանում են։ Արդ դուք 27
Քրիստոսի մարմինն էք, և մէկ
մէկ նորա անդամներ։
Եւ ոմանց դրաւ Աստուած 28
եկեղեցումը. առաջ՝ առա-
քեալներին. երկրորդ՝ մար-
գարէներին. երրորդ՝ վարդա-
պետներին. յետոյ զօրութիւն-
ներ. յետոյ բժշկութեանց
պարգևներ, օգնութիւններ,
կառավարութիւններ, այլ և
այլ լեզուներ։ Մի՞թէ ամենքն 29
առաքեալք են. մի՞թէ ամենքը
մարգարէք են. մի՞թէ ամենքը
վարդապետներ են. մի՞թէ ա-
մենքը զօրութիւններ անող են։
Մի՞թէ ամենքը բժշկութեանց 30
պարգևներ ունին. մի՞թէ ամենքը
լեզուներ են խօսում. մի՞թէ
ամենքը թարգմանում են։
Բայց դուք նախանձաւոր ե- 31
ղէք լաւագոյն շնորհքներին. և
ես էլ աւելի գերազանց ճանա-
պարհ ցոյց տամ ձեզ։

ԳԼ. ԺԳ

Եթէ մարդկանց և հրեշտակ- 1
ների լեզուներով խօսիմ, բայց
սէր չունենամ, ես եղայ ձայն
հանող պղինձ, կամ հնչեցող

* 'Ի Յոյնն, և անդամք 'ի մասնէ
† 'Ի Յոյնն չէր։

2 որ զօղանջեն։ Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւն, և գիտիցեմ զլսորհուրդս ամենայն՝ և զամենայն գիտութիւն. և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ
3 ունիցիմ, ոչինչ եմ։ Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զըմարմինս իմ՝ յայրումն, և սէր ոչ
4 ունիցիմ, ոչինչ օգտիմ։ Սէր երկայնամիտ է՝ քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբար-
5 հաւաճէ, ոչ հպարտանայ. Ո՛չ յանդգնի, ոչ խնդրէ զկիւր, ոչ
6 գրգռի, ոչ խորհի զչար. Ո՛չ խնդայ ընդ անիրաւութիւն՝ այլ
7 խնդայ ընդ ստուգութիւն. Ամենայնի տեւէ. ամենայնի հաւատայ. ամենեցուն յուսայ. ամե-
8 նայնի համբերէ։ Սէր ոչ երբէք անկանի. եթէ մարգարէութիւնք են՝ խափանեսցին. եթէ լեզուք՝ լռեսցեն. եթէ գիտու-
9 թիւն՝ խափանեսցի։ Զանազի փոքր ի շատէ գիտեմք. և փոքր
10 ի շատէ մարգարէանամք։ Այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի։

11 Մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի, իբրև զտղայ խորհէի, իբրև զտղայ համարէի. այլ յորժամ եղէ այր՝ զտղայութեանն ի բաց խափանեցի։

ծնծղայ։ Եւ եթէ մարգարէութիւն ունենամ, և գիտենամ ամենն խորհուրդսն և ամենն գիտութիւնն. և եթէ ամենն հաւատքն ունենամ, մինչև որ լեառնսն էլ փոխեմ, բայց սէր չունիմ, ոչինչ եմ։ Եւ եթէ իմ ամենն ապրանքսն ապչաւանէցին ուտեցնեմ և իմ մարմինս մատնեմ որ այրուի, բայց սէր չունիմ, ես ոչինչ օգուտ չեմ ունենալ։ Սէրս երկայնամիտ է՝ քաղցր է. սէրս չէ նախանձաւոր, չէ գոռոզանում, չէ հպարտանում. Ի լրանում, իրս չէ որոնում. չէ գրգռվում, չարս չէ մտածում։ Անիրաւութեան վերայ չէ ուրախանում, բայց ուրախանում է ճշմարտութեան հետ։ Ամենն բանի դիմանում է. ամենն բանի հաւատում է, ամենն բանի համար յոյս ունի, ամենն բանի համբերում է։ Սէրս երբէք չի վերջանալ. եթէ մարգարէութիւններ կան՝ կ'խափանուին. եթէ լեզուներ՝ կ'լռեն. եթէ գիտութիւն՝ կ'խափանուի։ Զանազի փոքր ի շատէ գիտում ենք. և փոքր ի շատէ մարգարէանում ենք։ Բայց երբ որ կատարեալը գայ, այս փոքր ի շատէն կ'խափանուի։

Երբոր տղայ էի՝ տղայի պէս էի խօսում, տղայի պէս էի մտածում, տղայի պէս էի համարում. բայց երբոր մարդ եղայ, այն տղայութեան բաները

12 Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խնդամուտ եմ փոքր ի շատէ, այլ յայնժամ գիտացից՝ որպէս
13 և նայն ծանեաւ զիս։ Բայց արդ՝ մնան հաւատք՝ յոյս՝ սէր, սոքա երեքեան. և մեծ քան զսոսա սէրն է։

ԳԼ. ԺԴ

1 Օ՛ՀԵՏ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք հոգևոր բացն՝ առաւել զի և դուք մար-
2 գարէանայցէք։ Զի որ խօսի ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօսի, այլ ընդ Աստուծոյ. զի ոչոք է՝ որ լսէ, բայց Հոգւով
3 խօսի խորհուրդս։ Իսկ որ մարգարէանայն, մարդկան խօսի շինութիւն և մխիթարութիւն
4 և սփոփութիւն։ Որ խօսի ի լեզուս՝ զանձն իւր շինէ. և որ մարգարէանայն՝ զեկեղեցին շինէ։
5 Կամիմ՝ զի ամենեքին դուք ի լեզուս խօսիցիք՝ առաւել զի մարգարէանայցէք. զի լաւ է որ մարգարէանայն՝ քան զայն որ ի լեզուս խօսիցի. բայց եթէ թարգմանիցէ՝ զի եկեղեցին շինութիւն առնուցու։

6 Բայց այժմ եղբարք՝ եթէ եկից առ ձեզ ի լեզուս խօսելով՝ զինչ օգուտ լինիցիմ ձեզ՝ եթէ ոչ խօսիցիմ, կամ յայտնու-

խափանեցի։ Զանազի հիմա հայելու մէջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանում, դէմդէմ։ Հիմա փոքր ի շատ եմ տեղեակ, բայց այն ժամանակն այնպէս կ'գիտենամ՝ ինչպէս գիտացուած են։ Այսպուրեմն մնում է հաւատք, յոյս, սէր. այս երեքը, և սորանցից մեծը սէրն է։

ԳԼ. ԺԴ

Սիրոյն հետևեցէք, և հոգևոր շնորհներն նախանձաւոր եղէք, և մանաւանդ որ մարգարէանաք։ Զանազի լեզուներով խօսողը, մարդկանց հետ չէ խօսում, այլ Աստուծոյ հետ. քանզի ոչ ով չէ լսում, բայց Հոգով խորհուրդներ է խօսում։ Իսկ մարգարէանողը, մարդկանց հետ շինութիւն և մխիթարութիւն և սփոփութիւն է խօսում։ Լեզուով խօսողը իր անձն է շինում, իսկ մարգարէանողը եկեղեցին է շինում։ Ես կամենում եմ որ դուք ամենքդ լեզուներով խօսիք, բայց մանաւանդ որ մարգարէանաք. քանզի աւելի մեծ է մարգարէանողը, քան թէ լեզուներով խօսողը, միայն եթէ թարգմանէ, որ եկեղեցին շինութիւն առնէ։

Բայց հիմա, եղբայրք, եթէ ձեզ մօտ գամ և լեզուներով խօսիմ, ի՞նչ օգուտ կ'տամ ձեզ՝ եթէ չխօսիմ ձեզ հետ կամ

թեամբ, կամ գիտութեամբ,
կամ մարգարէութեամբ, կամ
7 վարդապետութեամբ։ Այնպէս՝
որպէս անշունչքն ձայն տայցեն,
եթէ փող և եթէ քնար. զի եթէ
ընտրութիւն ինչ բարբառոյն
չառնիցեն, զիարդ ճանաչիցի
փողոյն հարկանել՝ կամ քնարին
8 հնչել։ Զանգի եթէ խառնա-
ձայն արձակիցի փողն, ով պատ-
9 րաստեսցի ՚ի պատերազմ։ Այն-
պէս և դուք՝ եթէ լեզուօք ոչ
նշանակիցէք զբանն՝ զիարդ ճա-
նաչիցին խօսքն. զի լինիցիք
այնուհետև իբրև ընդ օդս
10 խօսեցեալք։ Օ՛ի այնչափ ազգք
ձայնից են յաշխարհի, և ոչինչ
11 անձայն է։ Իսկ արդ՝ եթէ ոչ
գիտիցեմ զզօրութիւն ձայնին,
լինիցիմ այնմ՝ որ խօսիցին ընդ
իս՝ խուժ, և նա որ խօսիցին ընդ
12 իս՝ դուժ։ Այնպէս և դուք՝
քանզի նախանձողքդ էք հոգևո-
րայն, վասն շինուածոյ եկեղե-
ցւոյն՝ խնդրէք զի առաւել ևս
13 իցէք։ Վասն որոյ որ խօսին ՚ի
լեզուս, աղօթս արասցէ՝ զի և
14 թարգմանիցէ։ Եթէ կամ յա-
ղօթս լեզուաւ՝ հոգին իմ կայ
յաղօթս, այլ միտք իմ՝ անպտուղ
15 են։ Իսկ արդ՝ զի՞նչ իցէ. կացից
յաղօթս հոգւով, կացից յա-
ղօթս և մտօք. սաղմոս ասացից
հոգւով, սաղմոս ասացից և
16 մտօք։ Զպա թէ ոչ՝ եթէ
օրհնեսցես հոգւով, որ կայցէ
՚ի տեղւոջ տգիտին, զիարդ ա-
սիցէ ՚ի քում՝ գոլութեանն՝

յայտնութիւնով, կամ գիտու-
թիւնով, կամ մարգարէութիւ-
նով, կամ վարդապետութիւ-
նով։ Այնպէս էլ անշունչ 7
բաները որ ձայն են տալիս,
թէ փող թէ քնար. եթէ ձայ-
ներով զանազանութիւն չանեն,
ի՞նչպէս կ՚ճանաչուի փողի փչե-
լը, կամ քնարի հնչելը։ Զան- 8
զի եթէ փողն էլ անորոշ ձայն
տայ, ո՞վ կ՚պատրաստուի պատե-
րազմի համար։ Այսպէս էլ 9
դուք, եթէ լեզուներով բանը
յայտնի չասէք, այն խօսածն
ի՞նչպէս կ՚իմացուի. քանզի ԷՒ
ԷՒ օդի մէջ խօսողներ կ՚լինիք։
Զանգի այնքան այլ և այլ 10
ձայներ կան աշխարհքումը, և
նորանց ոչ մէկին էլ առանց
ձայնի չէ։ Զրդ եթէ ես ձայնի 11
զօրութիւնը չգիտենամ, ես խո-
սողին խուժ կ՚լինիմ, և խօսողն
ինձ համար դուժ։ Այսպէս 12
էլ դուք, որովհետև հոգևոր
շնորհքներին նախանձաւոր էք,
եկեղեցու շինութեան համար
ջանք արէք, որ էլ առաւելա-
նաք։ Վասն որոյ լեզուով խօ- 13
սողը, թող աղօթք անէ, որ
թարգմանէ։ Զանգի եթէ 14
ես աղօթք անեմ օտար լեզուով,
իմ հոգին է աղօթք անում.
բայց միտքս անպտուղ է։ Ու- 15
րեմն ի՞նչ է, աղօթք անեմ
հոգով, աղօթք անեմ մտքով
էլ՝ սաղմոս ասեմ հոգով, սաղ-
մոս ասեմ մտքով էլ։ Զպա եթէ 16
դուք օրհնես հոգով, նա որ

զԱմէն. քանզի զոր ասեսն՝ նա
17 ոչ գիտէ։ Օ՛ի դու բարւոք
գոհանաս, այլ ընկերն ոչ շինի։

18 Գոհանամ զԱստուծոյ* վասն
ամենեցուն ձեր՝ առաւել լեզուաւ
19 խօսիմ։ Այլ ՚ի մէջ եկեղեց-
ւոյ կամիմ բանս հինգ մտօք
խօսել, զի և զայլս խրատիցեմ,
քան զբազում բանս լեզուաւ։

20 Եղբարք մի՛ լինիք տղայք
մտօք, այլ ՚ի չարեաց տղայա-
ցարուք, և մտօք կատարեալ
21 լինիջիք։ Զանգի և յօրէնսն
գրեալ է, եթէ Յօտար լեզուս՝
և ՚ի շրթունս օտարոտիս խօսե-
ցայց ընդ ժողովրդեանդ ընդ
այդմիկ, սակայն և ոչ այնպէս
22 լուիցեն ինձ՝ ասէ Տէր. Զպա
ուրեմն լեզուք նշանակի վասն
են՝ ոչ հաւատացելոց՝ այլ ան-
հաւատից. իսկ մարգարէու-
թիւն՝ ոչ անհաւատից՝ այլ
23 հաւատացելոց։ Զպա եթէ
գայցէ եկեղեցին ամենայն ՚ի մի
վայր, և ամենեքին ՚ի լեզուս
խօսիցին, և մտանիցեն անդր
տգէտք կամ անհաւատք. ո՞չ
24 ասիցեն՝ եթէ զի՛ մոլիքդ։ Իսկ
եթէ ամենեքին մարգարէա-
նայցեն. և մտանիցէ ոք անդր

տգէտի տեղն է բռնում՝ ի՞նչպէս
ամէն ասէ քո օրհնութեանը,
քանի որ չէ գիտում ինչ ես
ասում։ Գոհ իրաւ որ լաւ ես 17
գոհանում. բայց միւսը չէ շինւում։

Գոհանում եմ իմ Աստուա- 18
ծանից, որ ձեր ամենիցն աւելի
լեզուներով խօսում եմ։ Բայց 19
եկեղեցու մէջ աւելի կամե-
նում եմ որ հինգ խօսք իմ
մտքովը խօսիմ, որ ուրիշներին
էլ բան սովորեցնեմ քան թէ
բիւրաւոր խօսքեր լեզուներով։

Եղբայրք, մտքով տղայ մի 20
լինիք. բայց չարութեան կողմանէ
տղայ եղէք, իսկ մտքով
կատարեալ եղէք։ Օրէնքումը 21
գրուած է, թէ Օտար լե-
զուներով և օտար շրթունքնե-
րով կ՚խօսիմ այս ժողովրդի
հետ. բայց և այնպէս ինձ ա-
կանջ չեն դնիլ, ասում է Տէրը։
Ուրեմն լեզուները նշանի հա- 22
մար են՝ ոչ թէ հաւատացեալ-
ներին, այլ անհաւատներին.
բայց մարգարէութիւնը ոչ թէ
անհաւատների համար է, այլ
հաւատացեալների։ Զրդ եթէ 23
բոլորը եկեղեցին մէկ տեղ գայ,
և ամենքը լեզուներով խօսին,
և տգէտներ կամ անհաւատներ
մտնեն այն տեղը, մի՞թէ չեն
ասիլ թէ դուք գժուած էք։
Բայց եթէ ամենքը մարգարէա- 24

* ՚Ի Յունն, քան զամենեսին զձեզ առաւել լեզուօք խօսիմ

անհաւատ՝ կամ տգէտ, յանդի-
մանի յամենեցունց, և քննի
25 յամենեցունց. Եւ գաղտնիք
սրտի նորա յայտնի լինին, և
ապա անկեալ 'ի վերայ երեսաց՝
երկիրպագանիցէ Աստուծոյ, և
խոստովան լինիցի՝ թէ Արդարև
Աստուած է 'ի ձեզ:

26 Եւ արդ զի՞նչ լցէ եղբարք.
յորժամ 'ի մի վայր ժողովիցիք,
իւրաքանչիւրոք 'ի ձէնջ, եթէ
սաղմոս ունիցի, եթէ վարդա-
պետութիւն ունիցի, եթէ յայտ-
նութիւն ունիցի, եթէ լեզուս
ունիցի, եթէ թարգմանութիւն
ունիցի, ամենայն 'ի շինած լի-
27 նիցի: Եթէ 'ի լեզուս ոք խո-
սեսցի՝ երկուք, և եթէ ևս
աւելի՝ երեք, և ապա մի ըստ
միոջէ. և մինն թարգմանիցէ:
28 Ապա եթէ չլցէ ոք՝ որ թարգ-
մանիցէ, լուռ լիցի յեկեղեց-
ւոջն. ընդ միտս իւր՝ և ընդ
29 Աստուծոյ խօսեսցի: Բայց մար-
գարէք երկու կամ երեք խօսես-
30 ցին, և այլքն քննեսցեն: Ապա
եթէ այլ ումեք որ նստիցին՝
յայտնեսցի, առաջինն լռեսցէ:
31 Զանգի կարող էք ամենեքին մի
ըստ միոջէ մարգարէանալ. զի
ամենեքեան ուսանիցին, և ամ-
32 ենեքեան մխիթարեսցին: Զանգի
և հոգիք իսկ մարգարէից՝ մար-
33 գարէից հնազանդին: Զի ո՛չ
եթէ խռովութեան է Աստուած՝
այլ խաղաղութեան, որպէս յա-
մենայն եկեղեցիս սրբոց:

նան, և մի անհաւատ կամ տգէտ
գայ մտնէ, նա ամենիցը կ'յան-
դիմանուի. ամենիցը կ'քննուի:
Եւ այսպէս նորա սրտի գաղտ- 25
նիքը յայտնի կ'լինի. և ապա
երեսի վերայ ընկած Աստու-
ծոյն երկրպագութիւն կ'անէ,
խոստովանելով թէ արդարև
Աստուած ձեր միջումն է:

Ուրեմն զի՞նչ է, եղբայրք. 26
երբ որ մէկտեղ ժողովուիք,
ձեզանից ամեն մէկը սաղմոս
ունենայ, վարդապետութիւն
ունենայ, յայտնութիւն ունե-
նայ, թարգմանութիւն ունե-
նայ. ամենը շինութեան հա-
մար լինի: Եթէ մէկը լեզուով 27
խօսի, թող երկու, և եթէ էլ
աւելի շատ՝ երեք լինին. մէկը
միւսից յետոյ. և մէկը թող
թարգմանէ: Բայց եթէ թարգ- 28
մանող չկայ, թող լռէ եկեղե-
ցումը. թող իրան համար և
Աստուծոյ հետ խօսի: Բայց 29
մարգարէները թող երկու կամ
երեք խօսին, և ուրիշները քըն-
նեն: Բայց եթէ մի ուրիշին, 30
որ այնտեղ նստած է՝ յայտ-
նութիւն լինի, առաջինը թող
լռէ: Զանգի կարող էք մէկ 31
մէկից յետոյ ամենքդ մարգա-
րէանալ. որ ամենքը սովորին
և ամենքը մխիթարուին: Եւ 32
մարգարէից հոգիներն էլ մար-
գարէներին հնազանդում են:
Զանգի Աստուած խառնակու- 33
թեան Աստուած չէ, այլ
խաղաղութեան, ինչպէս սրբո-

34 Կանայք յամենայն եկեղեցիս
լուռ լիցին. զի ո՛չ հրամայի նոցա
խօսել՝ այլ հնազանդ լինել.
որպէս և օրէնքն իսկ ասեն:
35 Ապա եթէ ուսանել ինչ կա-
միցին, 'ի տան զարս իւրեանց
հարցանիցեն. քանզի անպատեհ
է կնոջ մարդոյ յեկեղեցւոջ
36 խօսել: Եթէ 'ի ձէ՞նջ բանն
Աստուծոյ ել, և կամ առ ձե՞զ
37 միայն եհաս: Իսկ եթէ ոք հա-
մարիցի մարգարէ լինել՝ կամ
հոգևոր, գիտասցէ զոր գրեցիդ
առ ձեզ, թէ Տեառն պատուի-
38 րանք են: Ապա թէ ոք տգիտա-
39 նայցէ, տգիտասցի: Այսուհետև
եղբարք, նախանձեցարուք մար-
գարէանալ՝ և զխօսելն լեզուօք
40 մի արգելուք: Եւ ամենայն ինչ
ձեր պարկեշտութեամբ և ըստ
կարգի լինիցի.

բերի բոլոր եկեղեցիներու-
մը:

Ձեր կանայքը եկեղեցինե- 34
րումը լուռ կենան. քանզի նո-
րանց հրաման չկայ խօսելու,
այլ որ հնազանդ լինին, ինչ-
պէս օրէնքն էլ ասում է: Բայց 35
եթէ մի բան կամենան սովորիլ,
թող տան մէջ իրանց մարդկան-
ցից հարցնեն. քանզի կնկանն
անվայել է եկեղեցում խօսել:
Կամ թէ Աստուծոյ խօսքը ձե- 36
զանի՞ց դուրս եկաւ, կամ միայն
ձի՞ զ հասաւ: Բայց եթէ մէկը 37
կարծէ՝ թէ նա մարգարէ է կամ
հոգևոր, թող գիտենայ ինչ որ
գրեցի ձեզ, որ Տիրոջ պատուի-
րաններն են: Բայց եթէ մէկը 38
տգէտ է, թող տգէտ լինի:
Ուրեմն, եղբայրք, ջանք արէք 39
որ մարգարէանաք, և լեզունե-
րով խօսելը մի արգելէք: Ամեն 40
բան թող պարկեշտութեամբ և
կարգով լինի:

ԳԼ. ԺԵ

1 Յուցանեմ ձեզ եղբարք՝
զաւետարանն իմ, զոր աւետա-
րանեցի ձեզ. զոր և ընկալարուք,
2 յոր և հաստատեալք էք. Որով
ապրեցէքն, որով բանիւ աւե-
տարանեցի ձեզ՝ թէ ունիցիք.
բայց եթէ 'ի զուր ինձ հաւա-
3 տայցէք: Զի ես ձեզ զայն
նախ աւանդեցի՝ զոր և ես
ընկալայ. թէ և Քրիստոս
մեռաւ վասն մեղաց մերոց ըստ

ԳԼ. ԺԵ

Իմացնում եմ ձեզ, եղբայրք, 1
այն աւետարանը՝ որ աւետա-
րանեցի ձեզ, որն էլ ընդունե-
ցիք, որի մէջ էլ կանգնած էք.
Որով փրկվում էլ էք. այն 2
բանով՝ որ ձեզ աւետա-
րանեցի, եթէ ամուր բռնէք
նորան. եթէ զուր տեղը չէք
հաւատացել: Զանգի ես ա- 3
ռաջուց այն տուի ձեզ, որ ես
էլ ընդունեցի, թէ Քրիստոս

4 գրոց. Եւ զի թաղեցաւ, թէ և
յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ
5 գրոց. Եւ թէ երևեցաւ Կե-
փայի, և ապա երկոտասանից.
6 Ապա երևեցաւ աւելի ևս քան
զՀինգ հարիւր եղբարց միան-
գամայն. յորոց բազումք կան
մինչև ցայժմ, և ոմանք ննջեցին:
7 Եւ ապա երևեցաւ Յակոբայ,
ապա առաքելոցն ամենեցուն:
8 Հուսկ յետոյ քան զամենեսին՝
իբրև անարգի միոջ՝ երևեցաւ և
9 ինձ: Զի ես իսկ եմ արուսն
առաքելոց, որ չեմ իսկ արժանի
թէ կոչեցայց առաքեալ. զի
հալածեցի զեկեղեցին Աստու-
10 ծոյ: Այլ շնորհօքն Աստուծոյ
եմ զինչ և իցեմ. և շնորհք
նորա որ յիս՝ ընդունայն ինչ
ոչ եղեն. այլ առաւել քան
զնոսա ամենեսին վաստակեցի. և
ոչ եթէ ես՝ այլ շնորհքն Աս-
11 տուծոյ որ ընդ իս: Արդ եթէ
ես, և եթէ նոքա՝ այսպէս քա-
րոզեցաք, և դուք այսպէս
հաւատացիք:

12 Ապա եթէ Քրիստոս քարոզի
թէ 'ի մեռելոց յարուցեալ է,
զիա՞րդ ասեն ոմանք 'ի ձէնջ՝ եթէ
13 Յարութիւն մեռելոց չկայ: Եթէ
յարութիւն մեռելոց չկայ, ապա
և Քրիստոս չէ՞ յարուցեալ:
14 Եւ եթէ Քրիստոս չիցէ յարու-
ցեալ, ընդունայն է քարոզու-
թիւնն մեր. ընդունայն են և
15 հաւատքն ձեր. Եւ գտանիցիմք
մեր մեղաց համար մեռաւ՝ գրքե-
րի ասածի պէս: Եւ թէ թա-
4 ղուեցաւ, և թէ երրորդ օրը
յարութիւն առաւ՝ գրքերի ա-
սածի պէս: Եւ թէ երևեցաւ 5
Կեփասին, յետոյ այն տասներ-
կուսին: Յետոյ երևեցաւ հինգ 6
հարիւրից աւելի եղբայրներին
միկ անգամ, որոնցից շատերը
մինչև հիմա մնում են, բայց
մի քանիսն էլ ննջեցին: Եւ 7
յետոյ երևեցաւ Յակոբին, յե-
տոյ բոլոր առաքեալներին: Ա- 8
մենից յետոյ՝ իբր թէ մի վի-
ժածի՝ ինձ էլ երևեցաւ: Քան- 9
զի ես առաքեալների յետինն
եմ, որ արժանի չեմ՝ առաքեալ
կոչուելու. որովհետև Աստու-
ծոյ եկեղեցին հալածեցի: Բայց 10
Աստուծոյ շնորհքովն եմ՝ ինչ-
որ եմ. և նորա շնորհքն որ
ինձանում է ունայն չեղաւ. այլ
նորանց ամենից աւելի աշխա-
տեցի. սակայն ոչ թէ ես, այլ
Աստուծոյ շնորհքը որ ինձ
հետ է: Արդ թէ ես՝ թէ նո- 11
ցանք, այսպէս ենք քարոզում՝
և դուք այսպէս հաւատացիք:

Բայց եթէ Քրիստոսը քա- 12
րոզվում է՝ թէ մեռելներից
յարութիւն է առել, ի՞նչպէս
են ձեզանից ոմանք ասում՝ թէ
Մեռելներին յարութիւն չկայ:
Եթէ մեռելներին յարութիւն 13
չկայ, ապա Քրիստոսն էլ չէ
յարութիւն առել: Եւ եթէ 14
Քրիստոսը յարութիւն չէ ա-
ռել, ուրեմն ունայն է մեր

սուտ վկայք Աստուծոյ, զի
վկայեցաք զԱստուծոյ՝ թէ Յա-
րոյց զՔրիստոս. զոր ոչն ար-
դեօք յարոյց՝ եթէ մեռեալք ոչ
16 յառնիցեն: *Իսկ եթէ մե-
ռեալք՝ ոչ յառնեն՝ ապա և
17 Քրիստոս չէ՞ յարուցեալ: Եւ
եթէ Քրիստոս չիցէ յարու-
ցեալ, ընդունայն են հաւատքն
ձեր. և† տակաւին 'ի նմին մեղս
18 կայցէք՝: ‡Իսկ արդ որ ննջե-
ցինն 'ի Քրիստոս, կորեա՞ն
19 արդեօք՝: Եթէ այսու կենաքս
միայն յուսացեալ եմք 'ի Քրիս-
տոս, ողորմելի եմք քան զամե-
նայն մարդիկ:

20 Այլ արդ՝ Քրիստոս յարու-
ցեալ է 'ի մեռելոց՝ առաջին
21 պտուղ ննջեցելոց. Քանզի
մարդով եկեալ մահ, և մարդով
22 յարութիւն մեռելոց: Որպէս
Ադամաւն ամենեքին մեռանին,
նոյնպէս և Քրիստոսիւ ամե-
23 նեքեան կենդանասցին: Իւրա-
քանչիւր յիւրում կարգի. նախ
Քրիստոս, և ապա Քրիս-
տոսեանք 'ի գալստեան նորա:
24 Եւ ապա կատարած. յորժամ
տացէ 'ի ձեռս զԹագաւորու-

* 'Ի Յ«ոյն», Զի եթէ մեռեալք
† 'Ի Յ«ոյն», տակաւին 'ի մեղս ձեր կայք
‡ 'Ի Յ«ոյն», Վասն որոյ և որ ննջեցինն 'ի Քրիստոս կորեան

քարոզութիւնը, և ունայն է
ձեր հաւատքն էլ: Եւ մենք 15
էլ Աստուծոյ սուտ վկաներ ենք
գտնվում, որ Աստուծոյ հա-
մար վկայեցինք, թէ Քրիստո-
սին յարոյց, որին չյարոյց,
եթէ արդարև մեռելները յա-
րութիւն չեն առնում: Քանզի 16
եթէ մեռելներն յարութիւն
չեն առնում, ապա Քրիստոս
էլ յարութիւն չէ առել. Եւ 17
եթէ Քրիստոս յարութիւն չէ
առել՝ ունայն է ձեր հաւատքը.
դեռ ձեր մեղաց մէջ էք:
Ուրեմն նորանք էլ, որ Քրիս- 18
տոսումը ննջեցին, կորան: Եթէ 19
միայն այս կեանքումն ունինք
յոյս Քրիստոսի վերայ, ամեն
մարդկանցից աւելի ողորմելի
ենք:

Բայց հիմա Քրիստոս յա- 20
րութիւն է առել մեռելներից,
ինքն ննջածների առաջինն եկն
եղաւ: Քանզի մարդով 21
եղաւ մահը, և մարդով
էլ մեռելների յարութիւնը:
Քանզի ինչպէս Ադամով ա- 22
մենքը մեռնում են, այնպէս էլ
Քրիստոսով ամենքը կենդանա-
նում են: Եւ ամեն մէկն իր 23
կարգումը. առաջի պտուղը Քրի-
ստոս և յետոյ Քրիստոսները
նորա գալու ժամանակումը: Եւ 24

թիւնն Աստուծոյ և Հօր, յոր-
ժամ խափանեսցէ զամենայն
իշխանութիւնս և զամենայն
պետութիւն և զզօրութիւն:
25 Զի պարտ է նմա թագաւորել՝
մինչև դիցէ զամենայն թշնամիս
26 ի ներքոյ ոտից իւրոց: Յետին
թշնամին խափանի մահ. * Եւ
զամենայն ինչ՞ հնազանդ արար
27 ի ներքոյ ոտից նորա: Այլ
յորժամ՝ ասիցէ, թէ Հնազան-
դեալ է նմա ամենայն, յայտ է՝
թէ բաց յայնմանէ՝ որ հնազան-
28 դեցոյց նմա զամենայն: Այլ
յորժամ հնազանդեսցի նմա
ամենայն՝ յայնժամ և ինքն
Որդի հնազանդեսցի սմին, որ
հնազանդեցոյց նմա զամենայն.
զի եղիցի Աստուած ամենայն
29 յամենայնի: Այլապէ թէ ոչ՝
զի՞նչ գործիցեն, որ մկրտիցին
վասն մեռելոց, եթէ արդարև
մեռեալք ոչ յառնիցեն. ընդէ՞ր
իսկ ընաւ մկրտին վասն նոցա.
30 Ընդէ՞ր և մեք ճգնիմք յամենայն
ժամ, Եւ հանապազ մեռանիմք.
31 ի պարծանս ձեր երդնում
ե՛ղբարք՝ զոր ունիմ ի Քրիս-
32 տոս Յիսուս ի Տէր մեր: Եթէ
վասն մարդոյ ի գազանամարտի
լեալ էի Եփեսոս, զի՞նչ օգուտ
էր ինձ, եթէ մեռեալք ոչ
յառնեն. կերիցո՛ւք արբցո՛ւք
33 քանզի վաղիւ մեռանիմք: Մի՛
խաբիք. ապականեն զբարս
քաղցունս բանք չարք:

յետոյ վերջը, երբոր թագա-
ւորութիւնը Աստուծոյն և Հօրը
կ'տայ, երբոր կ'խափանէ ամեն
իշխանութիւնը և ամեն պետու-
թիւնը և զօրութիւնը: Քանզի 25
պէտք է որ նա թագաւորէ,
մինչև որ բոլոր թշնամիներն իր
ոտաց տակ դնէ: Յետին թշնա- 26
մին՝ որ կ'խափանուի՝ մահն
է. քանզի. Ամեն բան հնա-
զանդեցրեց նորա ոտաց տակ:
Բայց երբոր ասէ՝ թէ Ամեն 27
բան հնազանդ է նորան, յայտ-
նի է որ բացի նորանից որ
ամեն բան հնազանդեցրեց նո-
րան: Բայց երբոր ամենը կը հնա- 28
զանդի նորան, այն ժամանակ
ինքն Որդին էլ կ'հնազանդի
նորան՝ որ ամենը հնազանդե-
ցրեց նորան. որ Աստուած լինի
ամենայն յամենայնի: Այլապէ թէ 29
ոչ, ի՞նչ կ'անեն մեռելների
վերայ մկրտուողները, եթէ ար-
դարև մեռելները յարութիւն
չառնեն. էլ ինչո՞ւ են մեռել-
ների վերայ մկրտվում: Եւ 30
մենք ինչո՞ւ ամեն ժամանակ
վտանգի մէջ ենք: Ամեն օր 31
մեռնում եմ. երդնում եմ ձեր
վերայ ունեցած պարծանքովս,
որ մեր Տէր Յիսուս Քրիստո-
սումն ունիս: Եթէ մարդկօրէն 32
Եփեսոսումը գազանների կռուի
մէջ մտայ, ի՞նչ օգուտ էր ինձ
համար, եթէ մեռելները յա-
րութիւն չեն առնում. ուտենք

* Ի Յոյն. Զի զամենայն ինչ

34 Սթափեցարուք արդարու-
թեամբ՝ և մի մեղանչէք. զի
զգիտութիւն Աստուծոյ ոչ ունին
ոմանք. առ ամօթոյ ձերոյ
ասեմ:
35 Այլ ասիցէ ոք. Զիարդ
յառնեն մեռեալք՝ կամ որովի
36 մարմնով գայցեն: Անմիտ դու՝
զոր սերմանես, ոչ կենդա-
37 նանայ՝ եթէ ոչ մեռանիցի: Եւ
զոր սերմանես, ոչ զնոյն մար-
մին որ ծնանելոցն իցէ՝ սեր-
մանես, այլ հատ մերկ. եթէ
ցորենոյ իցէ՝ և եթէ այլոց սեր-
38 մանեաց: Եւ Աստուած տայ
նմա մարմին՝ որպէս և կամի. և
իւրաքանչիւր սերմանեացն զիւր
39 մարմին: Ո՛չ ամենայն մարմին
նոյն մարմին է, այլ՝ այլ մար-
մին է մարդկան, և այլ մարմին
անասնոց, այլ մարմին թռչնոց՝
40 և այլ մարմին ձկանց: Եւ մար-
մինք երկնաւորք՝ և մարմինք
երկրաւորք. այլ՝ այլ փառք
երկնաւորաց՝ և այլ փառք
41 երկրաւորաց: Այլ փառք արե-
գական, և այլ փառք լուսնի, և
այլ փառք աստեղաց. և աստղ
քան զաստղ առաւել է փառօք:
42 Այնպէս և յարութիւն մեռե-
լոց. սերմանի ապականութեամբ՝
և յառնէ առանց ապականու-
43 թեան. Սերմանի անարգու-
թեամբ՝ և յառնէ փառօք.

և խմենք, քանզի էգուց կըմեռ-
նենք: Մի խաբուիք. չար 33
ընկերակցութիւնքն ապակա-
նում են քաղցր վարքերը:
Արթուն կացէք արդարու- 34
թեամբ և մեղք մի գործէք.
քանզի մի քանիսն Աստուծոյ
մասին տգէտ են. այս ձեր ա-
մօթի համար եմ ասում:
Բայց մէկը կ'ասէ. Այնուել- 35
ներն ի՞նչպէս յարութիւն կ'առ-
նեն, և թէ ի՞նչ մարմնով կ'գան:
Անմիտ, այն որ դու սերմում 36
ես, չի կենդանանալ՝ եթէ չը-
մեռնի: Եւ այն որ սերմում 37
ես, ոչ թէ այն մարմինն ես
սերմում՝ որ պիտի բուսնի, այլ
մերկ հատը, թէ ցորենի լինի,
թէ ուրիշ սերմունքների: Եւ 38
Աստուած մարմին է տալիս նո-
րան ինչպէս կամենում է, և
սերմունքների ամեն մէկին իրանց
մարմինը: Ամեն մարմին մի և 39
նոյն մարմինը չէ. ուրիշ է
մարդկանց մարմինը, ուրիշ է
անասունների մարմինը. ուրիշ
է ձկների մարմինը, ուրիշ է
թռչունների մարմինը: Կան 40
երկնաւոր մարմիններ էլ, երկ-
րաւոր մարմիններ էլ. բայց
ուրիշ է երկնաւորների փառքը,
և ուրիշ է երկրաւորների
փառքը: Ուրիշ է արեգակի 41
փառքը, և ուրիշ է լուսնի
փառքը, և ուրիշ է աստղերի
փառքը. քանզի մի աստղ միւ-
սից զանազանվում է փառքով:
Այնպէս էլ մեռելների յարու- 42

սերմանի տկարութեամբ՝ և
44 յառնէ զօրութեամբ. Սերմանի
մարմին շնչաւոր՝ և յառնէ
մարմին հոգեւոր. եթէ գոյ
մարմին շնչաւոր՝ գոյ և հոգեւոր:
45 Որպէս և գրեալ է. Եղև մարդն
առաջին Ադամ 'ի շունչ կենդա-
նի. երկրորդ Ադամ 'ի հոգի
46 կենդանարար: Բայց ոչ նախ
հոգեւորն. այլ շնչաւորն, և
47 ապա հոգեւորն: Առաջին մարդն
յերկրէ հողեղէն. իսկ երկրորդ
48 մարդն՝ Տէր յերկնից: Որպէս
հողեղէնն, նոյնպէս և հողե-
ղէնքս, և որպէս երկնաւորն՝
49 նոյնպէս և երկնաւորքն: Եւ
որպէս զգեցաք զպատկեր հողե-
ղինին, զգեցցո՛ւք և զպատկեր
երկնաւորին:

50 Բայց զայս ասեմ եղբարք՝
եթէ մարմին և արիւն զարքա-
յութիւնն Աստուծոյ ժառանգել
ո՛չ կարեն, և ո՛չ ապականու-
թիւն զանապականութիւն ժա-
ռանգէ:
51 Արդ խորհուրդ մի ասեմ ձեզ.
* Ամենեքեան ննջեսցուք, այլ
ո՛չ ամենեքեան նորոգեսցուք՝.

թիւնը. սերմվում է ապա-
կանութիւնով, և յարութիւն
է առնում անապականութիւ-
նով: Սերմվում է անարգու- 43
թիւնով, և յարութիւն է առ-
նում զօրութիւնով: Սերմվում 44
է շնչաւոր մարմին, և յարու-
թիւն է առնում հոգեւոր մար-
մին. կայ շնչաւոր մարմին, կայ
և հոգեւոր մարմին: Այնպէս 45
էլ գրուած է, թէ Առաջին
մարդն Ադամ կենդանի շունչ
եղաւ, երկրորդ Ադամ կենդա-
նարար հոգի: Այլ թէ հո- 46
գեւորն առաջ չէ, այլ շնչա-
ւորը, և յետոյ հոգեւորը:
Առաջին մարդը երկրիցն է՝ հո- 47
ղեղէն. Բայց երկրորդ մարդն է
Տէրը երկնքից: Ինչպէս հո- 48
ղեղէնը, այնպէս էլ հողեղէն-
ները. և ինչպէս երկնաւորը,
այնպէս էլ երկնաւորները: Եւ 49
ինչպէս հողեղէնի պատկերը
հագանք, երկնաւորի պատկերն
էլ պիտի հագնենք:

Այլ թէ սա եմ ասում, 50
եղբայրք, որ մարմին և արիւն
չեն կարող Աստուծոյ արքայու-
թիւնը ժառանգել. և ոչ էլ
ապականութիւնը ժառանգում
է անապականութիւնը:

Ահա, մի խորհուրդ եմ ա- 51
սում ձեզ. Ոչ թէ ամենքս
կ'ննջենք, այլ ամենքս կրնորո-

* Ընթերցուածն օրինակի Յունաց ընդունելոցն, Ոչ ամենեքեան ննջեսցուք. այլ ամենեքեան նորոգեսցուք

52 Յանկարծակի յական թօթափել
'ի փող յետին. քանզի փող
հարկանի, և մեռեալք յարիցեն
առանց ապականութեան, և մեք
53 նորոգեսցուք: Զի պարտ է
ապականութեանս այսմիկ ըզգե-
նուլ զանապականութիւն, և
մահկանացուս այսմիկ զգենուլ
54 զանմահութիւն: Այլ յորժամ
մահկանացուս այս զգեցցի զան-
մահութիւն, և ապականութիւնս
զանապականութիւն, յայնժամ
եղիցի բանն՝ որ գրեցաւ. եթէ
Ընկլաւ մահ 'ի յաղթութիւն:
55 *Ո՞ւր է մահ յաղթութիւն քո.
ո՞ւր է դժոխք խայթոց քո՞":
56 Խայթոց մահու մեղք են, և
57 զօրութիւն մեղաց օրէնքն: Այլ
շնորհք Աստուծոյ՝ որ ետ մեզ
զյաղթութիւն 'ի ձեռն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի:

58 Այսուհետև եղբարք իմ
սիրելիք, հաստատուն եղերուք,
անշարժ կացէք, առաւել լերուք
'ի գործս Տեառն յամենայն
ժամ. գիտասջիք՝ զի վաստակքն
ձեր ո՛չ են ընդունայն առաջի
Տեառն:

ԳԼ. ԺԸ.

1 Այլ վասն հաշուին որ 'ի

գունքս: Յանկարծ՝ մի ակն- 52
թարթումն յետին փողի ժամա-
նակին. քանզի փողը կ'փչուի,
և մեռելները յարութիւն կ'առ-
նեն անապականելի, և մենք
կ'նորոգուինք: Քանզի պէտք 53
է որ այս ապականացուն հագնէ
անապականութիւնը, և այս
մահկանացուն հագնէ անմա-
հութիւնը: Եւ երբոր այս ապա- 54
կանացուն կ'հագնէ անապակա-
նութիւնը, և այս մահկանացուն
կ'հագնէ անմահութիւնը, այն
ժամանակ կ'լինի այն խօսքը որ
գրուած է. թէ Մահն ըն-
կղմուեցաւ յաղթութեան մէջ:
Ով մահ, ո՞ւր է քո խայթոցը. 55
դժոխք, ո՞ւր է քո յաղթու-
թիւնը: Մահի խայթոցը մեղքն 56
է, և մեղքի զօրութիւնը՝ օրէն-
քը: Բայց շնորհակալութիւն 57
լինի Աստուծոյն, որ տուաւ մեզ
յաղթութիւնը մեր Տէր Յի-
սուսի Քրիստոսի ձեռովը:

Ուրեմն, սիրելի եղբայրքս, 58
հաստատ եղէք, անշարժ կացէք,
ամեն ժամանակ աւելի առա-
ջացէք Տիրոջ գործումը, գի-
տացէք, որ ձեր աշխատանքը
ղուր չէ Տէրումը:

ԳԼ. ԺԹ.

Բայց այն տուրք ժողովելու 1

* 'Ի Յոյն. Ո՞ւր է մահ խայթոց քո, ո՞ւր դժոխք յաղթութիւն քո

սուրբան է, որպէս պատուէր
Եռու եկեղեցեացն Գաղատաց-
ւոց, նոյնպէս և դուք առնիջիք:
2 Ըստ իւրաքանչիւր միաշաբա-
թուցն իւրաքանչիւրոք 'ի ձէնջ
անձին իւրում դանձեսցէ՝ որ
3 ինչ և յաջողեսցի: Զի մի
յորժամ գայցեմ, յայնժամ
հաշիւք լինիցին. այլ յորժամ
եկից՝ զոր միանգամ ընտրեցէք
թղթովք, զնոսա առաքեցից
տանել զշնորհսն ձեր Յերու-
4 սաղէմ: Եպա թէ արժան լցէ
և ինձ երթալ՝ ընդ իս երթիցեն:
5 Այլ եկից առ ձեզ՝ յորժամ
'ի Մակեդոնիա անցանիցեմ.
* բայց իբրև շրջեցայց 'ի Մա-
6 կեդոնիա՝, թէ զեպ լցի, առ
ձեզ մնացից՝ և կամ ձմերեցից.
զի և դուք յուղարկիցէք զիս՝
7 ուր և երթալոցն եմ: Զի ոչ
կամիմ զձեզ այժմ 'ի հարևանցի
տեսանել. ակն ունիմ ժամա-
նակ ինչ առնել առ ձեզ, եթէ
8 Տէր հրամայեսցէ: Բայց այժմ
լինիմ Յեփեսոս մինչև ցՊենտէ-
9 կոստէ. Զի դուռն բացեալ է
ինձ մեծ և կարևոր, և հակառա-
կորդք բազում են:

10 Եւ՝ եթէ եկեսցէ Տիմոթէոս՝
տեսջիք զի արդ աներկիւղ լինիցի
առ ձեզ. զի զգործ Տեառն
11 գործէ՝ որպէս և ես. Մի ոք
կողմանէ՝ որ սրբերի համար է,
ինչպէս Գաղատացոց եկեղե-
ցիներին պատուիրեցի, այնպէս
2 էլ դուք արէք: Ամեն մէկ
միաշաբաթի օրերը ձեզանից ա-
մեն մէկը թող իրան մօտ հա-
3 ւաքէ՝ ինչ որ կ'յաջողուի: Որ
չլինի թէ երբոր գամ, այն ժա-
մանակ ժողովելը լինի. բայց
երբոր գամ՝ որոնց որ թղթերով
ընտրեցիք, նորանց կ'ուղարկեմ՝
որ ձեր ընծան տանեն Երու-
4 սաղէմ: Եւ եթէ ինձ էլ ար-
ժան լինի գալ, թող ինձ հետ
5 գնան: Բայց ձեզ մօտ կ'գամ՝
երբոր Մակեդոնիայի միջովն
կ'անցնիմ. քանզի Մակեդո-
6 նիայի միջովը մտն կ'գամ, Եւ
կարելի է որ ձեզ մօտ կ'մնամ՝
կամ թէ ձմեռը կ'անցնեմ. որ
7 դուք ինձ ճանապարհ գնէք՝ որ
տեղ որ գնալու լինիմ: Քանզի
չեմ կամենում որ ձեզ հիմա
անցնողի պէս տեսնեմ. յոյս
ունիմ օր մի ժամանակ ձեզ մօտ
8 կենամ, եթէ Տէրը հրամայէ:
Բայց հիմա Եփեսոսումն եմ
9 կենում՝ մինչև Պենտէկոստէն:
Քանզի մեծ և արդիւնաւոր
դուռն է բացուած ինձ, և հա-
կառակողները շատ են:
10 Հիմա եթէ Տիմոթէոսը գայ,
նայեցէք որ անվախ լինի ձեզ
մօտ. քանզի Տիրոջ գործն է
գործում, ինչպէս որ ես էլ:

* 'Ի Յոյնն, քանզի ընդ Մակե-
դոնիա շրջեցայց

զնա անգոսնեսցէ. և յուղար-
կեսջիք զնա խաղաղութեամբ՝
զի եկեսցէ առ իս. քանզի ակն
ունիմ նմա եղբարքն հանդերձ:

12 Այլ վասն Պողոսի եղբօր՝
յոյժ աղաչեցի զնա՝ զի եկեսցէ
առ ձեզ եղբարքն հանդերձ. և
արդեօք ոչ էին կամք՝ զի այժմ
եկեսցէ. այլ եկեսցէ յորժամ
և պարապեսցէ:

13 Հոկեցէք՝ հաստատուն կա-
ցէք 'ի հաւատս, ժրացարուք,
14 զօրացարուք: Ամենայն ինչ ձեր
սիրով լինիցի:
15 Աղաչեմ զձեզ Եղբարք՝
գիտէք զտունն * Ստեփանեայ և
Փորտունատեայ՝ որ են պտուղ
Աքայեցւոց՝. և 'ի պաշտօն
16 սրբոցն կարգեցին զանձինս. Զի
և դուք հնազանդ լինիցիք այն-
պիսեացն. և ամենայնի՝ որ
գործակից իցէ և վաստակակից:
17 Ուրախ եղէ 'ի գալ Ստեփանեայ
և Փորտունատեայ և Աքայի-
կոսի, զի զձեր պակասութիւնդ
18 նոքա լցին. Քանզի հանգուցին
զոգի իմ և զձեր. արդ ծանիջիք
զայնպիսիսն:

19 Ողջոյն տան ձեզ եկեղեցիքն
Ասիացւոց. ողջոյն շատ տան
ձեզ 'ի Տէր՝ Ակուիղաս և
Պրիսկիղա՝ հանդերձ առանին
Արդ մէկը չանարգէ նորան. և 11
խաղաղութիւնով ճանապարհ
դրէք նորան՝ որ ինձ մօտ գայ.
քանզի սպասում եմ նորան եղ-
բայրների հետ:
Իսկ Պողոս եղբօր համար 12
Գնոցէ, որ շատ աղաչեցի նո-
րան որ ձեզ մօտ գայ եղբայր-
ների հետ. բայց ամենևին կամք
չունէր որ հիմա գայ. բայց
կ'գայ երբոր յարմար ժամա-
նակ կ'ունենայ:
Արթուն եղէք, հաստատ 13
կացէք հաւատքումը. արիացէք
և ուժովացէք: Ձեր բոլոր 14
բաները թող սիրով լինին:
Աղաչում եմ ձեզ, եղբայրք, 15
գիտէք Ստեփանի տունը, որ
Աքայեցոց առաջի պտուղն է,
և իրանց անձերը սրբերի ծա-
ռայութեան նուիրեցին. Որ 16
դուք էլ հնազանդ լինիք այն-
պիսիներին, և այն ամենին, որ
գործքի և աշխատանքի ընկեր
են: Ուրախ եղայ Ստեփանի և 17
Փորտունատի և Աքայիկոսի գա-
լու համար, քանզի նորանք ձեր
պակասութիւնը լցրին: Քան- 18
զի իմ և ձեր հոգին հանգիստ
տուին. ուրեմն ճանաչեցէք այն-
պիսիներին:
Բարև են տալիս ձեզ Ասիա- 19
ցոց եկեղեցիները. շատ բարև
են տալիս ձեզ Տէրոմ Ակիւլասը
և Պրիսկիղան այն եկեղեցու-

* 'Ի Յոյնն, Ստեփանեայ որ է ա-
ռաջին պտուղ Աքայիոյ

20 եկեղեցեաւն իւրեանց։ Ողջոյն
տան ձեզ եղբարք ամենեքեան։
Ողջոյն տուք միմեանց ՝ի համ-
բոյր սրբութեան։
21 Ողջոյնդ այդ՝ իմոյ ձեռին
22 Պօղոսի է։ Եթէ ոք ոչ սիրէ
զՏէր Յիսուս, եղիցի նզովեալ՝
23 մարանաթայ։ Շնորհք Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ
24 ձեզ։ Եւ սէրն իմ ընդ ամենե-
սին ձեզ ՝ի Քրիստոս Յիսուս.
ամէն։

Առ Կորնթացիս առաջին թուղթն՝
գրեցաւ ՝ի Փիլիպէից, ՝ի յԵռն
Միթիլենէից և Փոքրոնեպէից
և Աթենայեցոյ։

հետ՝ որ նորանց տանն է։ Բարև 20
են տալիս ձեզ բոլոր եղբայրքը.
բարև տուէք իրար սուրբ համ-
բուրով։
Իմ Պօղոսի ձեռքի բարևն է։ 21
Եթէ մէկը Տէր Յիսուսին 22
չսիրէ, անիծուած լինի. մարա-
նաթա։ Տէր Տէր Յիսուսի 23
Քրիստոսի շնորհքը ձեզ հետ
լինի։ Եւ իմ սէրը ձեր ամենի 24
հետ Քրիստոս Յիսուսումն.
Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ Յի-
սուսի Քրիստոսի կամաւքն
Աստուծոյ, և Տիմոթէոս եղ-
բայր. եկեղեցւոյդ Աստուծոյ՝
որ է ՝ի Կորնթոս՝ սրբովքդ
ամենեքդումքք՝ որ են յամենայն
2 կողմանս Աքայեցւոց։ Շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ մերմէ և ՝ի
Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած և
Հայր Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի. Հայր գթու-
թեանց, և Աստուած ամենայն
4 մխիթարութեան. Որ մխիթարէն
զմեզ յամենայն նեղութիւնս
մեր. առ ՝ի կարօղ լինելոյ մեզ
մխիթարել զայնոսիկ՝ որ յամե-
նայն նեղութիւնս իցեն, մխի-
թարութեամբն՝ որով մեք մխի-
5 թարիմք յԱստուծոյ։ Զի
որպէս առատանան չարչարանքն
Քրիստոսի ՝ի մեզ, նոյնպէս և
՝ի ձեռն Քրիստոսի առատանալ
լիցի և մխիթարութիւնն մեր։

Պօղոս՝ Յիսուսի Քրիս- 1
տոսի առաքեալ՝ Աստու-
ծոյ կամքովը, և Տիմոթէոս
եղբայրը. Աստուծոյ եկեղեցւոյդ
որ Կորնթոսումն է՝ ամեն սրբերի
հետ որ բոլոր Աքայիայումն
են. Շնորհք լինի ձեզ և խա- 2
ղաղութիւն՝ Աստուած մեր Հօ-
րիցը, և Տէր Յիսուս Քրիս-
տոսիցը։
Օրհնեալ լինի Աստուած և 3
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
Հայրը, գթութեանց Հայրը
և ամեն մխիթարութեան Աս-
տուածը, Որ մխիթարում է 4
մեզ մեր ամեն նեղութիւնումը,
որ մենք կարող լինինք մխիթա-
րել նորանց որ ամեն պէսակ
նեղութիւնում են՝ այն մխի-
թարութիւնովն որով մենք Աս-
տուածանից մխիթարվում ենք։
Քանզի ինչպէս Քրիստոսի 5
չարչարանքներն աւելանում են
մեզանում, այնպէս էլ Քրիս-
տոսի ձեռովը շատանում է մեր

6 Չի եթէ նեղիմք, վասն ձերոյ
մխիթարութեան և փրկութեան,
և եթէ մխիթարիմք, վասն ձե-
րոյ մխիթարութեան և փրկու-
թեան, որ յաջողեալն է համ-
բերութեամբ նոցին չարչարա-
նաց, զոր և մեքն չարչարիմք.
7 Եւ յոյսն մեր հաստատուն է
վասն ձեր. քանզի գիտեմք՝
եթէ որպէս կցորդ եմք չարչա-
բանացն՝ նոյնպէս և մխիթա-
8 բութեանն: Դիտեմ ոչ կամիմ
տգէտ լինել ձեզ եղբարք՝ վասն
նեղութեանն մերոյ եղելոյ Ասիա.
զի առաւել քան զկար
մեր ծանրացաք. մինչև անյոյս
9 լինելոյ մեզ և 'ի կենաց: Այլ
անձամբ յանձինս զվճիռ մա-
հու ընկալաք. զի մի յանձինս
ապաստանիցիմք՝ այլ Աստուած՝
10 որ յարուցանէ զմեռեալս. Որ
յայնպիսի մահուանէ փրկեաց
11 զմեզ՝ և փրկուցէ. * Դիտեմ
յուսացեալ եմք, եթէ տա-
կաւին փրկեսցէ օգնականու-
թեամբ աղօթից ձերոց վասն
մեր: Չի 'ի բազմադէմ շը-
նորհացն՝ որ 'ի մեզ, բազմաք
յաճախեսցին գոհութիւնքն
վասն մեր:

* 'Ի Յոյն, Յոր

մխիթարութիւնք: * Եւ եթէ 6
նեղութիւն ենք քաշում, այն
ձեր մխիթարութեան և փրկու-
թեան համար է. որ յաջող-
ւում է այն չարչարանքների
համբերութիւնովը, որ մենք էլ
չարչարվում ենք. և եթէ մխի-
թարվում ենք, այն ձեր մխի-
թարութեան և փրկութեան
համար է, և մեր յոյսը ձեզ 7
համար հաստատ է: Դիտենք
գիտենք թէ ինչպէս չարչա-
բանքներին մասնակից էք, այն-
պէս էլ մխիթարութեանը:
Դիտենք չենք կամենում, եղ- 8
բայրք, որ դուք չգիտենաք այն
նեղութիւնն որ Ասիայում մեզ
եղաւ. քանզի մեր կարողութի-
նից աւելի ծանրաբեռնուե-
ցանք. մինչև որ մեր կենաց
յոյսն էլ կտրել էինք: Դայց 9
մենք ինքներս մեզ վերայ մա-
հուան վճիռն ունէինք. որպէս
զի մեր անձների վերայ յոյս
չդնենք, այլ Աստուծոյ վերայ
որ մեռելներին յարուցանում է:
Որ այնպիսի մահից մեզ փրկեց 10
և փրկում էլ է. Որին յոյս 11
ունինք՝ թէ տակաւին կփրկէ
էլ ձեր մեզ համար արած ա-

* Այլ: Եւ եթէ նեղութիւն ենք քաշում, այն ձեր մխիթարութեան և փրկութեան համար է. և եթէ մխիթարվում ենք, այն ձեր մխիթարութեան և փրկութեան համար է, որ յաջողվում է այն չարչարանքների համբերութիւնովը որ մենք էլ չարչարվում ենք. և մեր յոյսը ձեզ վերայ հաստատ է:

12 Դանդի պարծանք մեր այս
են. վկայութիւն մտաց մերոց.
զի սրբութեամբ և ստուգու-
թեամբ Աստուծոյ, և ոչ մարմ-
նեղէն իմաստութեամբ, այլ
շնորհօքն Աստուծոյ շրջեցաք
յաշխարհի. բայց առաւել ևս
13 առ ձեզ: Դանդի ոչ եթէ
այլ աղդ ինչ գրեմք առ ձեզ,
այլ զոր ընթեռնուքն՝ և
գիտակ լինիցիք. քանզի յուսամ
եթէ մինչև 'ի վախճան գիտիցէք.
14 Որպէս և խնդամուտ եղէք մեզ
փոքր 'ի շատէ. զի պարծանք
ձեր եմք, որպէս և դուք մեր,
յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի
Դրիստոսի:
15 Եւ այս ապաստան՝ կամէի
նախ առ ձեզ գալ, զի դուք
16 կրկին շնորհս ընդունիջիք. Եւ
'ի ձէնջ երթալ 'ի Մակեդոնիա.
և դարձեալ 'ի Մակեդոնիայ
գալ առ ձեզ. և 'ի ձէնջ յու-
17 ղարկել 'ի Իրէաստան: Իսկ
եթէ զայս խորհեցայ՝ միթէ
թեթևութեամբ ինչ գնացի. և
կամ զոր խորհիմ՝ ըստ մարմնոյ
ինչ խորհիցիմ, այլ՝ զի եղիցի
յինէն կողմանէ, այո՝ այո, և
18 ոչն՝ ոչ: Հաւատարիմ է Աս-
տուած՝ զի բանն մեր որ առ ձեզ
19 Եհաս՝ ոչ է այո, և ոչ: Դան-
զի Որդին Աստուծոյ Յիսուս

զթիքի օգնականութեամբը. որ
շատ մարդկանցից մեզ եղած
շնորհքի համար շատերի ձե-
ռովը գոհութիւն մատուցանուի
մեզ համար:
Դանդի մեր պարծանքը սա 12
է՝ մեր խղճմտանքի վկայութիւ-
նը, որ սրբութիւնով և Աս-
տուծոյ պարզութիւնովը՝ ոչ
թէ մարմնական իմաստութիւ-
նով, այլ Աստուծոյ շնորհքովը
վարուեցանք աշխարհքի մէջ,
և էլ աւելի դէպի ձեզ: Դան- 13
զի ուրիշ բաներ չենք գրում
ձեզ, այլ միայն նա որ կար-
դում էք կամ հէնց ճանաչում
էք. և յոյս ունիմ թէ մինչև
վերջն էլ կ'ճանաչէք: Ինչպէս 14
էլ փոքր 'ի շատէ ճանաչեցիք
մեզ. քանզի ձեր պարծանքն ենք.
ինչպէս դուք էլ մերը՝ Տէր
Յիսուսի օրումը:
Եւ այս վստահութիւնովը 15
կամենում էի առաջ ձեզ մօտ
գալ, որ դուք երկրորդ շնորհք
ընդունիք. Եւ ձեզանից գնալ 16
Մակեդոնիա. և դարձեալ Մա-
կեդոնիայից ձեզ մօտ գալ, և
ձեզանից ճանապարհ դցուիլ
դէպի Իրէաստան: Երբ եթէ 17
այս միտքն արի՝ միթէ թե-
թևամտութիւն գործածեցի. և
կամ թէ այն որ խորհում եմ
մարմնոյ կերպով եմ խորհում.
որ իմ կողմանէ այոն այո լինի,
և ոչը՝ ոչ: Եւ Աստուած հա- 18
ւատարիմ է, որ մեր խօսքը
դէպի ձեզ այո և ոչ չեղաւ:

Քրիստոս, որ ի ձեզ մեօք քա-
րոզեցաւ, ինչ և Սիղուանոսիւ
և Տիմոթէիւ՝ ոչ եղև այո և ոչ.
20 այլ այոն ի նմին եղև։ Զի
որչափ աւետիքն Աստուծոյ են
ի նմա այոն. վասն որոյ և
նովին ամէնն մեօք ի փառս
21 Աստուծոյ։ Այլ որ հաստա-
տեացն զմեզ ձեօք հանդերձ ի
Քրիստոս, և որ օծ զմեզ, Աս-
22 տուած է. Որ և կնքեաց զմեզ,
և ետ զաւհաւատչեայ Հոգւոյն
ի սիրտս մեր։

23 Այլ ես վկայ զԱստուած
կոչեմ անձին իմոյ. զի վասն
խնայելոյ ի ձեզ՝ ոչ ևս եկի ի
Կորնթոս. զի ոչ եթէ տիրեմք
ձեզ հաւատոյքս՝ այլ գործակից
եմք շնորհացդ ձերոյց. քանզի
հաւատոյք հաստատեալ կայք։

ԳԼ. Բ

1 Բայց զայս և եթ ընտրեցի,
զի մի միւսանգամ տրտմու-
2 թեամբ եկից առ ձեզ. Զի եթէ
ես տրտմեցուցանեմ զձեզ, և
ո՞վ է որ ուրախ առնիցէ զիս եթէ
3 ոչ որ տրտմիցին յինէն։ Եւ
զայս զի գրեցի՝ զի մի յորժամ
գայցեմ, տրտմութիւն ինչ կրցի-
ցեմ՝, ուստի արժանդ իցէ ինձ
ուրախ լինել. յուսացեալ եմ
ի ձեզ ամենեսին, զի իմ ուրա-

Քանզի Աստուծոյ Որդին Յի-
սուս Քրիստոսը, որ մեզանով 19
ձեր մէջ քարոզուեցաւ, ինձա-
նով և Սիղուանոսով և Տիմո-
թէոսով, այո և ոչ չեղաւ.
այլ այո եղաւ նորանում։
Քանզի որքան Աստուծոյ աւե- 20
տիքներ որ կան նորանում է
այոն, և նորանում է ամէնը
Աստուծոյ փառքի համար մեզա-
նով։ Բայց մեզ ձեզ հետ 21
Քրիստոսումը հաստատողը և
մեզ օծողը Աստուած է. Որ 22
մեզ կնքեց էլ, և Հոգու գրաւը
մեր սրտերի մէջ տուաւ։
Բայց ես Աստուծոյն վկայ 23
եմ կանչում իմ անձի վերայ.
որ ձեզ խնայելու համար այլ 24
ևս չեկայ Կորնթոս. ոչ թէ
ձեր հաւատքի վերայ տիրապե-
տում ենք՝ այլ ձեր ուրախու-
թեանը գործընկեր ենք, քանզի
հաւատքով հաստատ կանգնած
էք։

ԳԼ. Բ

Բայց ես այս որոշեցի ինձա- 1
նում որ դարձեալ տրտմութիւ-
նով չգամ ձեզ մօտ։ Քանզի 2
եթէ ես ձեզ տրտմեցնեմ, էլ
ո՞վ է ինձ ուրախացնողը, եթէ
ոչ ինձանից տրտմողը։ Եւ հենց 3
այս գրեցի՝ ձեզ, որ մի գուցէ
ես եկած ժամանակս տրտմու-
թիւն քաշեմ նորանցից, որոնցից
պէտք էր ինձ ուրախ լինել.
յոյս ունիմ ձեր ամենի վերայ,

խութիւնս ձեր ամենեցուն է,
4 Զի ի բազում վշտաց՝ և ի
նեղութենէ սրտի գրեցի առ
ձեզ բազում արտասուօք. ոչ
զի տրտմիջիք, այլ զի զսէրն իմ
գիտասջիք, զոր ունիմ առաւե-
լապէս առ ձեզ։

5 Եւպա եթէ ոք տրտմեցոյց, ոչ
եթէ զիս տրտմեցոյց՝ այլ փոքր
ի շատէ, զի մի ծանրացայց
6 ամենեցուն ձեզ։ Շատ է այն-
պիսւոյն պատուհասն այն՝ որ ի
7 բազմաց անտի է։ Այսուհետև
նմին հակառակ՝ մանաւանդ
շնորհել ձեզ նմա՝ և մխիթարել.
զի մի յաւաւել տրտմութենէն
8 ընկղմեսցի այնպիսին։ Վասն
որոյ աղաչեմ զձեզ՝ հաստատել
9 ի նա զսէրն։ Վասն այնորիկ
իսկ և գրեցի. զի զչափ առից
զձեր՝ եթէ յամենայնի հպատակ
10 իցէք։ Զի եթէ ումիք շնոր-
հիցէք՝ և ես. քանզի և ես եթէ
շնորհիցեմ, զոր ինչ շնորհիցեմն՝
վասն ձեր ի դէմս Քրիստոսի.
11 Զի մի զբկիցիմք ի Սատանայէ.
քանզի չեմք ինչ անտեղեակ
խորհրդոցն նորա։

12 Այլ երբև հասի ես ի Տրո-
վադա յաւետարանն Քրիս-
տոսի, և դուռն բաց էր ինձ ի
13 Տէր, Ո՛չ ետու հանգիստ
հոգւոյ իմում. քանզի ոչ գտի ես
անդ զՏիտոս զեղբայր իմ. այլ

որ իմ ուրախութիւնն ձեր ա-
մենինն է։ Քանզի շատ նե- 4
ղութիւնից սրտիս տագնապից
գրեցի ձեզ շատ արտասուն-
քով. ոչ թէ՝ որ տրտմիք, այլ
որ իմ սէրը գիտենաք, որն
ես առատօրէն ունիմ ձեզ
վերայ։
Եւպա եթէ մէկը տրտմեցրել 5
է, ոչ թէ ինձ է տրտմեցրել,
այլ փոքր ի շատէ, որ չը ծան-
րացնեմ՝ ձեզ ամենիդ։ Բաւա- 6
կան է այնպիսի մարդուն հա-
մար այն խրատը, որ շատերիցը
եղաւ։ Այսուհետև ընդհա- 7
կառակը՝ աւելի ներեցէք, և
մխիթարեցէք. մի գուցէ շատ
սաստիկ տրտմութիւնից այնպի-
սին խեղդուի։ Սորա համար 8
աղաչում եմ ձեզ, որ սէրը
հաստատէք նորա վերայ։ Քան- 9
զի նորա համար գրեցի էլ ձեզ,
որ ձեզ փորձով գիտենամ, թէ
արդեօք ամեն բանի մէջ հնա-
զանդ էք։ Բայց եթէ դուք 10
մէկին մի բան ներէք, ես էլ.
որովհետև ես էլ եթէ մի բան
ներեմ, որին որ ներում եմ՝
ձեզ համար է Քրիստոսի առջև։
Որ չզրկուինք սատանայիցը. 11
քանզի նորա խորհուրդներին
անտեղեակ չենք։
Բայց երբոր ես հասայ Տրո- 12
ադա Քրիստոսի աւետարանի
համար, և դուռն ինձ համար
բաց էր Տէրով, Իմ հոգու մէջ 13
հանգստութիւն չունէի. քանզի
իմ Տիտոս եղբօրն այն տեղ

հրաժարեալ ՝ի նոցանէ՝ գնացի
՝ի Մակեդոնիա։

14 Եւ Աստուծոյ շնորհքն որ
յամենայնի հոչակ հարկանէ
զմէնջ ՝ի Քրիստոս Յիսուս, և
զհոտ գիտութեանն իւրոյ յայտ-
նի առնէ մեզ՝ յամենայն տեղիս.
15 Զի հոտ անոյշ եմք Քրիստոսի
առ Աստուած՝ ՝ի մէջ փրկելոցն՝
16 և ՝ի մէջ կորուսելոցն. Ոմանց
հոտ մահուանէ ՝ի մահ, և
ոմանց հոտ՝ կենդանութենէ ՝ի
կեանս. և առ այս ո՞ բաւական
17 իցէ։ Քանզի ոչ եմք իբրև
զայլսն, որ վաճառական լինին
բանին Աստուծոյ. այլ իբրև ՝ի
հաստատութենէ, այլ իբրև
Աստուծոյ՝ առաջի Աստուծոյ,
՝ի Քրիստոս խօսիմք։

ԳԼ. Գ

1 Սկսանիմք այսուհետև վերս-
տին զանձինս ընծայեցուցանել.
թէպէտ և ոչ պիտոյ իցեն մեզ,
որպէս ոմանց՝ թուղթք ընծայ-
ութեան առ ձեզ, կամ՝ ՝ի ձէնջ։
2 Եւ թուղթք մեր դուք էք՝
գրեալ ՝ի սիրտս մեր, ծանու-
ցեալ և ընթերցեալ յամենայն
3 մարդկանէ. Յայտնեալք՝ զի էք
թուղթք Քրիստոսի, պաշտե-
ցեալ ՝ի մէնջ. և գրեալ՝ ոչ
մրով, այլ Հոգւովն Աստուծոյ
կենդանւոյ. ոչ ՝ի տախտակս
չգտայ. այլ նորանցից հրա-
ժարեալով գնացի Մակեդո-
նիա։

14 Բայց շնորհակալութիւն Աս-
տուծոյն՝ որ ամեն ժամանակ
մեզ յաղթող է անում Քրիս-
տոսում և իր գիտութեան հոտը
մեզանով յայտնվում է ամենայն
տեղ։ Որովհետև մենք Քրիս-
տոսի անուշ հոտն ենք Աստու-
ծոյ առջև, փրկուածների և
կորածների մէջ։ Ոմանց հա-
մար մահուան հոտ դէպի մահ.
և ոմանց համար կենաց հոտ
դէպի կեանք. և այս բաների
համար ո՞վ բաւական կ՚լինի։
Քանզի շատերի պէս չենք,
որ Աստուծոյ խօսքը խարդա-
խում են. այլ ինչպէս պարզ-
ութիւնից, ինչպէս Աստուա-
ծանից՝ Աստուծոյ առջև խօսում
ենք Քրիստոսում։

ԳԼ. Գ

1 Դարձեալ սկսում ե՞նք մեր
անձները յանձն առնել. կամ
թէ ոմանց պէս պէտք են մեզ
յանձնարարական թղթեր ձեզ
վերայ՝ կամ՝ ձեզանից յանձնա-
բարականներ։ Ա՛ներ թուղթը
դուք էք՝ մեր սրտի մէջ գրուած՝
ամեն մարդկանցից խնայուած և
կարդացուած։ Դուք յայտնի
էք թէ Քրիստոսի թուղթն էք՝
մեր ծառայութիւնովը եղած. և
գրուած՝ ոչ թէ թանաքով, այլ
կենդանի Աստուծոյ Հոգովը.

քարեղէնս, այլ ՝ի տախտակս
սրտի մարմնեղէնս։

4 Յոյս մի այսպիսի ունիմք ՝ի
ձեռն Քրիստոսի առ Աստուած.
5 Իբր ոչ եթէ անձամբ բաւական
եմք խորհել ինձ իբրև ՝ի մէնջ.
այլ բաւականութիւնն մեր
6 Աստուծոյ է. Որ և բաւականս
արար զմեզ՝ պաշտօնեայս Նորոց
Կտակարանացս՝ ոչ գրովն, այլ
Հոգւով. զի գիրն սպանանէ,
7 այլ Հոգին կենդուցանէ։ Զի
եթէ պաշտօնն մահու գրով
դրոշմեալ ՝ի տախտակսն քարու-
ղէնս եղև փառաւք, զի մի կա-
րասցեն Հայել որդիքն Իսրայէլի
երեսսն Մովսէսի՝ վասն փա-
ռաց երեսաց նորա, որ խափա-
8 նելոցն էր, Որչափ ևս առաւել
պաշտօն Հոգւոյն եղիցի փա-
9 ռաւք։ Զի եթէ պաշտօն դա-
տապարտութեանն փառաւք էր,
որչափ ևս առաւել պաշտօն
10 արդարութեանն փառաւք։ Քան-
զի ոչ եթէ փառաւորի փառա-
ւորեալն յայսմ մասին՝ վասն
11 առաւելութեան փառացն։ Զի
եթէ որ խափանելոցն էր՝ այն
փառաւք էր, որչափ ևս առաւել
12 որ գալոցն է՝ փառաւք իցէ։ Եւ
արդ՝ զի ունիմք այսպիսի յոյս,
բազում համարձակութեամբ
13 վարեսցուք. Եւ ոչ որպէս
Մովսէս արկանէր քող ՝ի վերայ
երեսաց իւրոց, վասն չհայելոյ
որդւոցն Իսրայէլի ՝ի վախճան
14 խափանելոցն։ Եւ կուրացան

ոչ թէ քարի տախտակների վե-
րայ, այլ սրտի մարմնեղէն
տախտակների վերայ։
4 Եւ այսպիսի յոյս ունինք առ
Աստուած Քրիստոսի ձեռքով։
5 Ոչ թէ մենք մեզանից բաւական
ենք մի բան միտք անելու ինչ-
պէս մեզանից, այլ մեր բաւական
6 լինելն Աստուածանից է. Որ
մեզ բաւական էլ արաւ Նոր
Կտակարանի պաշտօնեայք լինե-
լու՝ ոչ թէ գրի, այլ Հոգու.
քանզի գիրն սպանում է, այլ
7 Հոգին կենդանացնում է։ Բայց
եթէ մահի պաշտօնը գրով քա-
րերի վերայ փորուած՝ փառքով
եղաւ, մինչև որ Իսրայէլի որ-
դիքը չէին կարող Մովսէսի
երեսին մտիկ անել նորա երեսի
փառքի համար, որ խափանուող
8 էր. Որքան աւելի հոգու
9 պաշտօնը փառքով կլինի։ Քան-
զի եթէ դատապարտութեան
պաշտօնը փառքով էր, ապա
10 որքան աւելի արդարութեան
պաշտօնը փառքով է։ Քանզի
այն փառաւորն էլ փառաւոր չէ
այս մասին այն գերազանցող
11 փառքի համար։ Քանզի եթէ
այն խափանուողը փառքով էր,
12 որքան աւելի փառքով է հաս-
տատ մնացողը։ Երդ այսպիսի
յոյս ունենալով՝ շատ համար-
ձակութեամբ ենք վարվում։
13 Եւ ոչ թէ ինչպէս Մովսէսն իր
երեսի վերայ քող էր դցում՝
որ Իսրայէլի որդիքը չնային
14 խափանուողի վերջին։ Բայց նո-

միտք նոցա. քանզի մինչև
ցայսօր ժամանակի՝ նոյն քող
ձգեալ կայ 'ի վերայ ընթերցու-
ածոց Հին Կտակարանացն. և
ոչ վերանայ, զի Քրիստոսիս
15 խափանելոց է: Այլ մինչև
ցայսօր՝ յորժամ ընթեռնուն
զՄովսէս՝ նոյն առագաստ կայ
16 'ի վերայ սրտից նոցա: Այլ
յորժամ դարձցին առ Տէր,
ապա վերասցի առագաստն:
17 Զի Տէր Հոգին է. ուր Հոգի
Տեառն է, անդ ազատութիւն
18 է: Բայց մեր ամենեցուն բացաւ
երեսօք զփառսն Տեառն իբրև
ընդ հայելի տեսեալ՝ 'ի նոյն
պատկեր նորոգիմք փառաց 'ի
փառս. որպէս և 'ի Տեառն
Հոգւոյ:

ԳԼ. Դ

1 Վասն այսորիկ ունիմք զպաշ-
տօնս զայս՝ որպէս և գտաք
զողորմութիւն, և ոչ ձանձրա-
2 նամք. Այլ հրաժարեցաք 'ի
գաղտնեաց ամօթոյն, զի մի
գնասցուք խորամանկութեամբ,
և մի նենգեսցուք զբանն Ա-
տուծոյ. այլ յայտնութեամբ
ճշմարտութեանն ընծայեցուս-
ցուք զանձինս մեր առ ամենայն
միտս մարդկան առաջի Ա-
3 տուծոյ: Եպա թէ իցէ ևս
ծածկեալ աւետարանն մեր՝ 'ի
մէջ կորուսելոցն է ծածկեալ.
4 Որոց աստուած աշխարհիս

բանց միտքը կուրացաւ. քանզի
մինչև այս օրուայ օրը այն
քողը մնում է Հին Կտակարանի
կարդացմունքի վերայ վեր չա-
ռուած, որովհետև Քրիստո-
սով է խափանվում: Այլ մինչև 15
այսօր երբոր Մովսէսին կար-
դում են, մի քող ընկած է
նորանց սրտերի վերայ: Բայց 16
երբոր դէպի Տէրը կդառնան,
այն քողը վեր կառնուի: Բան- 17
զի Տէրն է Հոգին. որտեղ որ
Տիրոջ Հոգին է՝ այնտեղ է ա-
զատութիւն: Բայց մենք ա- 18
մենքս՝ բաց երեսով Տիրոջ
փառքն ինչպէս հայելու մէջ
տեսնելով՝ նոյն պատկերի նը-
ման կերպարանափոխվում ենք
փառքից դէպի փառք, ինչպէս
թէ Տիրոջ Հոգուցը:

ԳԼ. Դ

Որա համար այս պաշտօնն 1
ունենալով, ինչպէս որ ողոր-
մութիւն գտանք, չենք ձանձ-
րանում: Այլ ամօթալի ծա- 2
ծուկ բաները մերժել ենք. և
խորամանկութեամբ չենք վար-
վում: Եւ Աստուծոյ խօսքն էլ
չենք ծռում. այլ ճշմարտու-
թեան յայտնութիւնովը մեր
անձներն ընդունելի ենք անում
ամեն մարդկանց խղճմտանքին՝
Աստուծոյ առջև: Իսկ եթէ 3
մեր աւետարանը ծածկուած էլ
լինի, նա կորածների մէջ է
ծածկուած: Որոնցում այս աշ- 4

այսորիկ կուրացոյց զսիրտս
անհաւատիցն, զի մի ծագեսցէ
'ի նոսա լուսաւորութիւն աւե-
տարանի փառացն Քրիստոսի.
որ է պատկեր անեղեւութիւն
5 Աստուծոյ: Զի ոչ եթէ զան-
ձինս քարոզեմք, այլ զՅիսուս
Քրիստոս զՏէր. և զմեզ ծառայս
6 ձեզ վասն Քրիստոսի: Զի
Աստուած որ ասաց 'ի խաւարէ
լոյս ծագել. որ և ծագեաց իսկ
'ի սիրտս մեր 'ի լուսաւորու-
թիւն գիտութեան փառացն
Աստուծոյ 'ի դէմս Յիսուսի
7 Քրիստոսի: Այսուհետև ու-
նիմք զգանձս զայս յամանս
խեցեղէնս. զի առաւելութիւն
զօրութեանն իցէ յԱստուծոյ,
8 և ոչ 'ի մէնջ: Յամենայնի
նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք.
կարօտեալք՝ այլ ոչ տարակու-
սեալք. Հալածեալք՝ այլ ոչ
9 լքեալք. չարչարեալք՝ այլ ոչ
10 սատակեալք. Յամենայն ժամ
զմահն Յիսուսի 'ի մարմինս մեր
կրեսցուք՝ զի և կեանքն Յիսուսի
'ի մարմինս մեր յայտնեսցին.
11 Քանզի միշտ մեք՝ որ կենդա-
նիքս եմք, 'ի մահ մատնիմք
վասն Յիսուսի. զի և կեանքն
Յիսուսի յայտնի լցին 'ի
մահկանացու մարմինս մեր:
12 Այսուհետև մահ 'ի մեզ զօրա-
13 նայ, և կեանք 'ի ձեզ: Բրդ՝
ունիմք զնոյն հոգի հաւատոց,
որպէս և գրեալ է. Հաւա-
տացի՝ վասն որոյ և խօսեցայ. և
մեք հաւատամք՝ վասն որոյ և

խարհ.քի Աստուածը այն ան-
հաւատների սրտերը կուրացրեց,
որ Քրիստոսի փառաւոր աւե-
տարանի լուսաւորութիւնը չը-
ծագէ նորանց վերայ. որ անե-
ղեռոյթ Աստուծոյ պատկերն է:
Քանզի մենք ոչ թէ մեր 5
անձներն ենք քարոզում, այլ
Տէր Յիսուս Քրիստոսին. և
մեզ ձեր ծառաներ Յիսուսի
համար: Քանզի Աստուած որ 6
ասաց թէ խաւարիցը լոյս ծագէ,
ինքն մեր սրտերի մէջ ծագեց՝
Աստուծոյ փառաց գիտութեան
լուսաւորութիւնը տալու համար
Յիսուսի Քրիստոսի դէմքումը:
Բայց այս գանձն ունինք հողի 7
անօթներում. որ զօրութեան
գերազանցութիւնը Աստուծոյն
լինի, և ոչ թէ մեզանից: Ամեն 8
բանի մէջ նեղուած էնք, բայց
չենք ճնշուած. կարօտ ենք,
բայց չենք տարակուսել: Հա- 9
լածուած, բայց երեսից չընկած.
վայր ընկած, բայց չկորսուած:
Ամեն ժամանակ Յիսուսի մեռ- 10
նելը մեր մարմնումը կրում
ենք՝ որ Յիսուսի կեանքն էլ
մեր մարմնումը յայտնուի:
Քանզի մենք կենդանիքս միշտ 11
Յիսուսի համար ի մահ ենք
մատնվում. որ Յիսուսի կեանքն
էլ յայտնուի մեր մահկանացու
մարմնումը: Այնպէս որ մահը 12
մեզանում է զօրանում, և կեան-
քը ձեզանում: Բայց միևնոյն 13
հաւատքի հոգին ունենալով,
ինչպէս գրուած է. Հաւատացի

14 խօսիմք իսկ։ Օ՚այս գիտեմք՝ եթէ որ յարոյցն զՅիսուս, և զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ՝ և
15 յանդիման կայուսցէ ձեօք հանդերձ. Զ՚Ռանզի ամենայն ինչ վասն ձեր է. զի շնորհքն յաճախեալք ՝ի բազմաց ՝ի գոհութենէ անտի՝ առաւելեսցին ՝ի փառս Աստուծոյ։
16 Վասն որոյ և ոչ ձանձրանամք. այլ թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդն մեր նորոգի
17 օրըստօրէ։ Օ՚ի առժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեանս մերում՝ ՝ի յաւիտենական՝ն առաւելութիւն, զմեծութիւն փառացն գործէ ՝ի մեզ։
18 Զ՚Ռանզի ոչ գիտեմք զերեւելիսս՝ այլ զաներ ևոյթսն. զի երեւելիքս առ ժամանակ մի են, և աներևոյթքն յաւիտենականք։

ԳԼ. Ե

1 Զ՚Ռանզի գիտեմք՝ եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած Յ՚Աստուծոյ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի, յաւիտենա-
2 կան երկինս։ Եւ ընդ այս տաղտկամք, քանզի զբնակութիւնն երկնից փափագեմք զգեն-
3 նուլ. Ա՚իայն թէ յորժամ զգենումքն՝ ոչ մերկ գտանի-
4 ցիմք։ Զ՚Ռանզի որ եմք ընդ և նորա համար խօսեցի. մենք էլ հաւատում ենք՝ և սորա համար էլ խօսում ենք։ Գ՚իտե-
14 նալով որ Տէր Յիսուսին յարուցանողը մեզ էլ Յիսուսի հետ կ՚յարուցանէ, և ձեզ հետ իր առջև կ՚կանգնեցնէ։ Զ՚Ռան-
15 զի ամեն բան ձեզ համար է. որ շատացած շնորհքը շատերի գոհութիւնից՝ աւելանայ Աստուծոյ փառաց համար։
16 Զ՚որա համար չենք թուլանում. այլ թէև մեր դրսի մարդն փչանում է, բայց մեր ներսի մարդն օրէ օր նորոգվում է։ Զ՚Ռանզի մեր այժմեան
17 թեթեւ նեղութիւնը ամենագերազանց յաւիտենական փառքի մեծութիւն է գործում մեզ համար, Որ այս երևող բաներին
18 չենք մտիկ անում, այլ անեւևոյթներին. քանզի երևողները ժամանակաւոր են, իսկ չերևողները յաւիտենական։

ԳԼ. Ե

1 Զ՚Ռանզի գիտենք որ՝ եթէ մեր վրանի պէս երկրաւոր շինուածքը քանդուի, Աստուածանից մի շինուածք ունինք՝ անձեռագործ մի տուն, որ յաւիտենական է
2 երկնքումը։ Եւ հէնց սորանում՝ հառաչում ենք ցանկանալով հագնիլ մեր այն բնակու-
3 թիւնը որ երկնքիցն է։ Ա՚իայն թէ՝ երբ որ այն հագնինք,
4 մերկ չգտնուինք։ Զ՚Ռանզի մենք այս վրանի տակ լինողներս հառաչում ենք ծանրութիւն կրելով. որովհետև չենք կամենում հանուիլ, այլ այն աւելի վերայ հագնիլ. որ մահկանացուն
5 կեանքի մէջ ընկղմուի։ Բ՚այց այս բանը մեզ յաջողել տուողը Աստուած է. որ Հոգու գրաւն էլ տուաւ մեզ։
6 Զ՚որա համար ամեն ժամանակ համարձակութիւն ունինք, և գիտենք թէ՝ այս մարմնումը կենալով՝ Տէրից օտարանում
7 ենք։ (Զ՚Ռանզի հաւատքով ենք գնում, և ոչ թէ երևոյթով։)
8 Բ՚այց վստահ ենք և աւելի ընտրում ենք այս մարմնիցը դուրս գնալ՝ և Տիրոջ մօտ
9 մնալ։ Զ՚որա համար էլ ջանք ենք անում, որ թէ կենանք՝ և թէ դուրս գնանք՝ հաճոյ լինինք
10 նորան։ Զ՚Ռանզի մենք ամենքս պէտք է յայտնի լինինք Զ՚Քրիստոսի աստեանի առջև. որ ամենմէկն ընդունի իր մարմնումն՝ ինչ որ գործեց՝ թէ բարի, և թէ չար։
11 Ը՚րդ Տիրոջ ահաւորութիւնը գիտենալով, մարդկանց համոզում ենք. բայց Աստուծոյ առջև յայտնի ենք. և ես յոյս ունիմ՝ որ ձեր խղճմտանքումն էլ
12 յայտնի ենք։ Ո՚չ թէ դարձեալ

յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամք՝ ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ զայն ՝ի վերայ այսր զգենուլ. զի ընկղմեսցի մահկանացուս ՝ի կեանս։
5 Բ՚այլ որ յաջողէն մեզ ՝ի սոյն՝ Աստուած է. որ ետ մեզ զառհաւատչեայ Հոգւոյն։
6 Ը՚րդ՝ համարձակիմք յամենայն ժամ, և գիտեմք՝ եթէ որչափ յամեմք ՝ի մարմնի ասա՝
7 օտարանամք ՝ի Տեառնէ։ Օ՚ի հաւատովք գնամք՝ և ոչ կարծ-
8 եօք։ Բ՚այլ համարձակիմք՝ և առաւել ևս հաճեալ եմք երանել ՝ի մարմնոյ աստի՝ և մնանել
9 առ Աստուած։ Վասն որոյ և առատանամք. զի եթէ յամիցեմք՝ և եթէ ելանիցեմք՝ հա-
10 ճոյ ևեթ իցեմք նմա։ Զ՚Ռանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի աստենին Զ՚Քրիստոսի. զի ընկալցի *իւրաքանչիւր իւրով մարմնով՝՝ զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի, և եթէ չար։
11 Իսկ արդ՝ զահն Տեառն գիտելով՝ չափ, †զմարդկան ինչ միտս հաճեմք. սակայն առաջի Աստուծոյ յայտնելոց եմք՝՝. բայց ես յուսամ՝ և ՝ի ձեր միտս
12 յայտնի լինել։ Իբր ոչ եթէ

* Ի Յոյն, իւրաքանչիւր զայնս ՝ի մարմնի

† Ի Յոյն, զմարդիկ հաւանեցուցանեմք. սակայն Աստուծոյ յայտնի եմք

միւսանգամ զանձինս ինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ պատճառս տամք ձեզ պարծանաց վասն մեր. զի ունիցիք առ այնոսիկ՝ որ առ աչսն պարծիցին, և ոչ սրտիւք: Օ՛ի եթէ 13
առանցաք ինչ՝ այն Աստուծոյ է. և եթէ զգաստանամք՝ այն
ձեր է: Օ՛ի սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ. քննել զայս. զի եթէ մին փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան 14
մեռեալ էին. Եւ՝ ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն՝ մի՛ անձանց իցեն կենդանիք, այլ այնմ՝ որ՝ ի վերայ նոցայն մեռաւ և յարեաւ: 15
Այսուհետև մեք ոչ զոք գիտեմք մարմնով. զի թէպէտ և գիտէաք մարմնով զՔրիստոս՝ այլ արդ 16
ոչ ևս նոյնպէս գիտեմք: Բայց եթէ ինչ՝ ի Քրիստոս նոր արարած իցէ. զի հինն անց, և 17
արդ նոր եղև ամենայն: Այլ ամենայն ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր՝ ի ձեռն Քրիստոսի. և ետ մեզ զպաշտօնն հաշտութեան:

19 Եւ քանզի Աստուած էր՝ Քրիստոսիւ զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր. և չըհամարել նոցա զմեղս իւրեանց, և եդ՝ ի մեզ զբանն հաշտութեան:
20 Արդ՝ վասն Քրիստոսի պատմեր անձնեարը ձեզ յանձնում ենք. այլ պատճառ ենք տալիս ձեզ՝ մեզ համար պարծենալու, որ մի բան ունենաք նորանց դէմ, որ պարծենում են աչքի առջև և ոչ թէ սրտով: Քանզի եթէ գժուած ենք՝ Աստուծոյ համար է. և եթէ զգաստ ենք՝ ձեզ համար է: Քանզի Քրիս- 14
տոսի սէրը ստիպում է մեզ՝ որ սա ենք միտք անում, թէ եթէ մէկն ամենքի տեղ մեռաւ, ուրեմն ամենքը մեռած են. Եւ 15
ամենքի համար մեռաւ, որ կենդանի լինողները այլ ևս ոչ թէ իրանց անձնեարի համար կենդանի լինին, այլ նորա համար՝ որ իրանց համար մեռաւ, և յարութիւն առաւ: Ուրեմն 16
այսուհետև մենք ոչ ոքին ենք գիտում մարմնոյ կողմանէ. և թէև Քրիստոսին էլ գիտում էինք մարմնոյ կողմանէ, այլ հիմա այլ ևս չենք գիտում: Ուրեմն եթէ մէկը Քրիստոսումն 17
է՝ նոր ստեղծուած է. հինները անցան, ահա ամեն բան նոր եղաւ: Բայց այն ամենն Աստուածանից է. որ մեզ իրան հետ հաշտեցրեց Յիսուս Քրիստոսի ձեռովը. և մեզ հաշտութեան պաշտօնը տուաւ: 18
Քանզի Աստուած էր Քրիս- 19
տոսումը որ աշխարհքը հաշտեցրեց իրան հետ, և նորանց յանցանքները չհամարեց նորանց և հաշտութեան խօսքը մեր միջումը դրաւ: Արդ Քրիս- 20

գամաւորիմք՝ որպէս և Աստուծոյ բարեխօսութեամբ մեք. աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ:
21 Օ՛ի զայն՝ որ ոչն գիտէր զմեղս, վասն մեր մեղս արար. զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ:

ԳԼ. Զ.

1 Գործակից եմք ձեր և աղաչեմք, մի՛ ընդունայն զշնորհսն
2 Աստուծոյ ընդունել ձեզ: Օ՛ի՝ ի ժամանակի ընդունելութեան՝ ասէ, լուայ քեզ, և յաւուր փրկութեան օգնեցի քեզ: Զհաւասիկ ժամանակ ընդունելի.
3 ահա օր փրկութեան. Մի՛ և մի՛ իւիք* տայցէք պատճառս", զի մի՛ արատեսցի պաշտօնն.
4 Այլ †յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրև" զպաշտօնեայս Աստուծոյ՝ համբերութեամբ բազմաւ՝ ՝ի նեղութիւնս, ՝ի վիշտս, ՝ի չարչարանս,
5 ՝Ի գանս, ՝ի բանտս, ՝ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ՝ի հսկմունս, ՝ի պահս,
6 ՝Ի սրբութեան, ՝ի գիտութեան, յերկայնմտութեան, ՝ի քաղցրութեան, ՝ի Հոգի Սուրբ,

* ՝Ի Յոյն, տալով պատճառս

† ՝Ի Յոյն, յամենայնի ընծայեցուցանեմք զանձինս իբրև

բիստոսի կողմանէ պատգամաւորութիւն ենք անում, իբրև թէ Աստուած է յորդորում մեզանով. աղաչում ենք Քրիստոսի տեղ հաշտուեցէք Աստուծոյ հետ: Քանզի Աստուած նո- 21
բան, որ մեղք չէր գիտում, մեղ համար մեղք արաւ. որ մենք Աստուծոյ արդարութիւնը լինինք նորանում:

ԳԼ. Զ.

Եւ մենք գործակից լինելով 1
նաև աղաչում ենք, որ դուք Աստուծոյ շնորհքը զուր տեղը չընդունիք: Քանզի ասում է. 2
Ընդունելի ժամանակում լսեցի քեզ, և փրկութեան օրումն օգնեցի քեզ. ահա հիմա է ընդունելի ժամանակը. ահա հիմա է փրկութեան օրը: Ոչ մի բա- 3
նով ոչ մի գայթակղութիւն չենք տալիս, որ պաշտօնը չնախատուի. Այլ ամեն բանի 4
մէջ մեր անձնեարը ընծայում ենք ինչպէս Աստուծոյ պաշտօնեաներ՝ շատ համբերութիւնով նեղութիւններում, վշտերում, չարչարանքներում, Ծեծերում, բանտերում, խռովութիւններում, աշխատանքներում, հսկմունքներում, ծոմերում, Սրբութիւնով, գիտու- 6

'ի սէր՝ առանց կեղծաւորու-
7 թեան, 'ի բանս ճշմարտու-
թեան, 'ի զօրութեան Աստու-
ծոյ. *վասն զինուն արդարու-
թեան՝՝ որ ընդ աջմէն և ընդ
8 ահեկէն է. փառաւք և անար-
գութեամբ, գովութեամբ և
պարսաւանօք, իբրև մոլորք՝ և
9 ճշմարիտք, Իբրև անծանօթք՝ և
ծանուցեալք. իբրև մահկանա-
ցուք՝ և ահաւասիկ կենդանի
եմք. իբրև խրատեալք՝ և ոչ
10 մահապարտեալք. Իբրև տրըտ-
մեալք, և Հանապազ ուրախ
եմք. իբրև տնանկք՝ և զբաղումն
մեծացուցանեմք. իբրև ոչինչ
ունիցիմք, և զամենայն ինչ
11 ունիմք: Ներանք մեր բացեալ
են առ ձեզ՝ Կորնթացիք, և
սիրտք մեր ընդարձակեալք:
12 Ոչինչ նեղիք 'ի մէնջ՝ բայց եթէ
13 'ի գութս ձեր նեղիցիք. † Արդ
զնոյն հատուցումն իբրև ընդ
որդեակս ունիմ՝՝. ընդարձա-
կեցարուք և դուք:

14 Եւ մի լինիք լծակիցք անհաւա-
տից. քանզի զի՞նչ հաղորդու-
թիւն է արդարութեան ընդ
անօրէնութեան. և կամ զի՞նչ
հաւասարութիւն է լուսոյ ընդ

թիւնով, երկայնմտութիւնով,
քաղցրութիւնով, Սուրբ Հո-
գով, անկեղծ սիրով. Ճշմար-
տութեան խօսքով, Աստուծոյ
զօրութիւնով, արդարութեան
զէնքերովք աջ կողմանէ և ձախ
կողմանէ: Փառքով և անար-
գանքով, պարսաւանքով և գո-
վասանքով, ինչպէս մոլորեց-
նողներ՝ բայց ճշմարիտներ.
Ինչպէս չճանաչուածներ, բայց
լաւ ճանաչուածներ. ինչպէս
մեռածներ, բայց ահա կենդա-
նի ենք. ինչպէս պատժուած-
ներ, բայց չսպանուածներ,
Ինչպէս տրտմածներ, բայց
միշտ ուրախներ. ինչպէս աղ-
քատներ, բայց շատերին հարս-
տացնողներ. ինչպէս թէ ոչինչ
չունեցողներ, բայց ամէն բան
ունեցողներ: Մեր բերանը բա-
ցուած է դէպի ձեզ, ով Կորն-
թացիք, մեր սիրտը լայնացած
է: Դուք մեզանից նեղուութիւն
չունիք, միայն թէ ձեր սրբ-
տերումն էք նեղվում: Եւ մի
և նոյն հատուցումը անխլիչ
(ինչպէս թէ որդիների հետ եմ
խօսում,) դուք էլ լայնացէք:

Անհաւատների հետ այլա-
խառն լծակից մի լինիք. քանզի
ի՞նչ մասնակցութիւն ունի ար-
դարութիւնը անօրէնութեան
հետ. և ի՞նչ հաղորդութիւն

* 'Ի Յոյնն, 'ի ձեռն զինուցն ար-
դարութեան

† 'Ի Յոյնն, Արդ զնոյն հատու-
ցումն՝ իբրև ընդ որդեակս ասեմ.

15 խաւարի. Եւ կամ զի՞նչ միա-
բանութիւն է Քրիստոսի ընդ
16 Բելիարայ. Կամ զի՞նչ բաժին
կայ հաւատացելոյն ընդ ան-
հաւատին. կամ զի՞նչ նմանու-
թիւն է տաճարի Աստուծոյ
մեհենաց: Զպաքէն դուք տա-
ճար Աստուծոյ կենդանւոյ էք.
որպէս և ասաց Աստուած, թէ
Բնակեցայց 'ի նոսա, և գնացից
'ի նոսա. և եղէց նոցա Աստու-
ած, և նոքա եղիցին իմ ժողո-
17 վուրդ: Վասն որոյ ելէք 'ի
միջոյ նոցա և մեկնեցարուք, ասէ
Տէր, և 'ի պիղծս մի մերձենայք.
18 Եւ ես ընկալայց զձեզ. և ես
եղէց ձեզ 'ի Հայր, և դուք
եղիջիք ինձ յուստերս և 'ի
դստերս, ասէ Տէր ամենակալ:

ԳԼ. Ի

1 Իսկ որովհետև զայս աւետիս
ունիմք սիրելիք՝ սրբեսցուք զան-
ձինս մեր յամենայն պղծութենէ
մարմնոյ և հոգւոյ, կատարես-
ցուք զսրբութիւն ահիւն Աս-
տուծոյ:
2 Տարայք մեզ, զի ոչ ումեք
մեղաք, և ոչ զոք եղծաք, և ոչ
3 զոք զրկեցաք: Ո՛չ եթէ 'ի դա-
տապարտութիւն ինչ ասեմ.
քանզի յառաջ իսկ ասացի, եթէ
'ի սրտի մերում կայք՝ 'ի կեալ
և 'ի մեռանել ընդ ձեզ:
4 Խազում համարձակութիւն է
ինձ առ ձեզ. բազում պարծանք

ունի ըստ խաւարի հետ: Եւ 15
զի՞նչ միաբանութիւն ունի Քրի-
ստոս՝ Բելիարի հետ. կամ
զի՞նչ բաժին ունի հաւատա-
ցեալն անհաւատի հետ: Կամ 16
զի՞նչ միաբանութիւն ունի Աս-
տուծոյ տաճարը կռքերի հետ.
քանզի դուք կենդանի Աստու-
ծոյ տաճարն էք. ինչպէս Աս-
տուած ասաց. Ես Նորանցում
կ'բնակիմ, և Նորանցում մանն
կ'գամ. և Նորանց Աստուած
կ'լինիմ, և Նորանք իմ ժողո-
վուրդ: Նորա համար՝ Նորանց 17
միջիցը դուրս գնացէք և բաժա-
նուեցէք, ասում է Տէրը, և
պիղծ բաներին մի դպչիք: Եւ 18
ես կ'ընդունիմ ձեզ, և դուք
ինձ որդիներ և աղջիկներ կ'լինիք,
ասում է Ամենակարող Տէրը:

ԳԼ. Ի

Արդ այսպիսի խոստումներ 1
ունենալով, սիրելիներ, մեր անձ-
ները սրբենք հոգւոյ և մարմնոյ ա-
մէն պղծութիւնից, սրբութիւնը
կատարենք Աստուծոյ ահովը:
Տեղ արէք մեզ. ոչ ոքի վնաս 2
չենք տուել, ոչ ոքին չենք
փչացրել, ոչ ոքին չենք զրկել:
Ոչ թէ դատապարտելու համար 3
եմ ասում. քանզի առաջուց
ասացի, որ դուք մեր սրտերումն
էք՝ յԵս հետ միասին կենդանի
լինելու և մեռնելու էլ:
Իմ համարձակութիւնը շատ 4
է դէպի ձեզ. շատ է իմ պար-

են ինձ վասն ձեր. լի եմ մխի-
թարութեամբ. առաւելեալ եմ
ուրախութեամբ յամենայն նե-
5 ղութիւնս մեր: Քանզի յոր-
ժամ հասաք մեք ի Մակե-
դոնիա, և ոչ միով իւիք հան-
դիստ դտաւ մարմնոյ մերում,
այլ յամենայնի նեղեալք. քանզի
արտաքոյ մարտք՝ և ի ներքոյ
6 արհաւիրք: Այլ որ մխիթարէն
զխոնարհս, մխիթարեաց զմեզ
Աստուած ի գալստեանն Տի-
7 տոսի: Ոչ միայն ի գալստեան
նորա, այլև ի մխիթարութեանն՝
զոր մխիթարեցաւ նա ի ձեզ,
ի պատմել մեզ զանձուկն ձեր՝
զողբումն ձեր՝ զնախանձն ձեր
վասն իմ, մինչ առաւել ուրախ
8 լինել ինձ: Զի թէ և տրըտմե-
ցուցի զձեզ թղթովն՝ ոչ զղջա-
նամ, թէպէտ և զղջացեալ էի.
քանզի տեսանեմ՝ զի թուղթն
այն թէ և առ ժամանակ մի
9 տրտմեցոյց զձեզ. Արդ ուրախ
եմ, ոչ զի տրտմիցիք՝ այլ զի
յապաշխարութիւն տրտմեցա-
րուք. քանզի տրտմեցայք դուք
ըստ Աստուծոյ. զի մի իւիք
10 զրկիցիք ի մէնջ: Զի որ ըստ
Աստուծոյն տրտմութիւն է, ա-
պաշխարութիւն ի փրկութիւն
առանց զղջանալոյ գործէ. իսկ
աշխարհի տրտմութիւն՝ մահ
11 գործէ: Արդ՝ նոյն իսկ որ ըստ
Աստուծոյն տրտմեցարուք. որ-
չափ ինչ փոյթ գործեաց ի ձեզ,
կամ աղերս, կամ սաստ, կամ
երկիւղ, կամ անձուկ, կամ
ծանրքը ձեր վերայ. մխիթարու-
թիւնով լիքն եմ. ուրախու-
թիւնով աւելացած եմ մեր ա-
մեն նեղութիւնովն: Քանզի 5
երբ որ հասանք Մակեդոնիա,
մեր մարմինը ոչինչ հանդիստ
չունեցաւ, այլ ամեն բանի մէջ
նեղվում էինք. դրսիցը կռիւ-
ներ՝ ներսիցն ահ ու վախ: Բայց 6
խոնարհներին մխիթարողն Ա-
ստուած մխիթարեց մեզ Տիտոսի
գալովը. Ոչ միայն նորա գա- 7
լովը, այլ և այն մխիթարու-
թիւնովն՝ որով նա ձեր միջումն
մխիթարուել էր, երբոր նա
պատմեց մեզ ձեր սրտի փա-
փագը՝ ձեր ողբալը՝ և ձեր
ջերմեռանդութիւնը ինձ համար,
մինչև որ աւելի ևս ուրախա-
ցայ. Որ թէ և տրտմեցրի ձեզ 8
այն թղթովը՝ չեմ զղջում, թէ
և զղջացած էլ էի, որովհետև
տեսնում եմ որ այն թուղթը,
թէ և մի փոքր ժամանակ, ձեզ
տրտմեցրեց: Հիմա ուրախ եմ, 9
ոչ թէ նորա համար որ տրըտ-
մեցիք՝ այլ որ տրտմեցիք ապաշ-
խարութեան համար. քանզի
դուք Աստուծոյ կերպով տրըտ-
մեցիք, որ մեզանից ոչ մի բա-
նով չվնասուիք: Քանզի Աս- 10
տուծոյ կերպով տրտմութիւնը,
ապաշխարութիւն է գործում
փրկութեան համար առանց
զղջալու. բայց աշխարհի տրըտ-
մութիւնը մահ է գործում:
Քանզի ահա հէնց նա որ դուք 11
Աստուծոյ կերպով տրտմեցիք,

նախանձ, կամ վրէժխնդրու-
թիւն. քանզի յամենայնի ըն-
ծայեցուցիք զանձինս ձեր՝ սուրբս
12 լինել յիրիդ յայդմիկ: Այս-
ուրեմն թէև գրեցի ես առ ձեզ,
ոչ վասն այնորիկ որ զրկեացն,
և ոչ վասն այնորիկ՝ որ զրկե-
ցաւն. այլ վասն յայտնի լինելոյ
փութոյն ձերոյ՝ որ վասն մեր՝
առ ձեզ առաջի Աստուծոյ:
13 Վասն այնորիկ մխիթարեալ
եմք ի վերայ * մխիթարու-
թեանն մերոյ՝. առաւել ևս
խնդացաք ի վերայ խնդու-
թեանն Տիտոսի. քանզի հան-
գուցեալ էր հոգի նորա ի ձէնջ
14 ամենեցուն: Զի զինչ և
պարծեցայ առ նմա վասն ձեր՝
ոչ ամաչեցի. այլ որպէս զամե-
նայն ճշմարտութեամբ խօսեցաք
ընդ ձեզ, նոյնպէս և պարծանքն
մեր առ Տիտոս ճշմարիտ եղեն:
15 Եւև գութք նորա առաւել ևս
են ի ձեզ. քանզի յիշեցու-
ցանէր մեզ զամենեցուն զձեր
հնազանդութիւն. թէ որպէս
ահիւ և դողութեամբ ընկա-
16 լարուք զնա: Եւ արդ ուրախ
եմ, զի յամենայնի համարձակ
եմ առ ձեզ:

ԳԼ. Ը

1 Ցուցանեմ ձեզ եղբարք
զշնորհսն Աստուծոյ՝ որ տուեալ

որքան ջանք գործեց ձեզանում,
նաև արդարացումն, նաև զայ-
րոյթ, նաև վախ, նաև փափագ,
նաև նախանձ, նաև վրէժխնդ-
րութիւն. ամեն բանով ցոյց
տուիք ձեր անձնները, որ անմեղ
էք այն բանումը: Ուրեմն թէև 12
գրեցի ձեզ՝ ոչ թէ զրկողի հա-
մար էր, և ոչ էլ զրկեալի
համար այլ որ ձեր ջանքը՝ որ
մեզ վերայ ունիք, յայտնի
լինի ձեզ մեզ՝ Աստուծոյ առջև:
Նորա համար մխիթարուած 13
ենք ձեր մխիթարութիւնը հա-
մար. և մանաւանդ աւելի ու-
րախացանք Տիտոսի ուրախու-
թեան համար. որ նորա հոգին
ձեր ամենիցը հանգիստ էր ա-
ռած: Քանզի ինչ որ էլ ձեզ 14
համար պարծեցայ նորա առջև,
չամաչեցի. այլ ինչպէս ամեն
բան ճշմարտութիւնով խօսե-
ցինք ձեզ հետ, այնպէս էլ մեր
պարծանքը ճշմարիտ եղաւ Տի-
տոսի առջև: Եւ նորա սէրն 15
էլ աւելի է ձեզ վերայ. երբոր
յիշում է ձեր ամենքի հնազան-
դութիւնը, թէ ինչպէս ահով
և դողով ընդունեցիք նորան:
Արդ ուրախ եմ, որ ամեն բանի 16
մէջ վստահութիւն ունիմ ձեզ
վերայ:

ԳԼ. Ը

Բայց եղբայրք, իմացնում 1
ենք ձեզ Աստուծոյ այն շնորհ-

* Ի Յոյնն, մխիթարութեանն ձերոյ

են եկեղեցեացն Մակեդոնիա-
2 ցւոց. Զի մեծաւ հանդիսիւ
նեղութեան՝ առաւելութիւն
խնդութեանն նոցա, և ծանր
աղքատութիւնն նոցա առաւել
եղև ՝ի մեծութիւն առատու-
3 թեան նոցա. Զի ըստ կարի
նոցա վկայեմ, և աւելի քան
4 զկար. Ինքնակամ բաղում
աղաչանօք աղաչէին զշնորհսն,
և զհաղորդութիւն պաշտամանն
5 որ ՝ի սուրբսն՝ տալ ցմեզ: Ո՛չ
որչափ ակն ունէաք, այլ և
զանձինս ևս ետուն, նախ Տեառն՝
և ապա մեզ կամօքն Աստուծոյ,
6 *Աղաչեալ զՏիտոս՝ զի որպէս
սկսաւն յառաջագոյն. նոյնպէս
և կատարեսցէ ՝ի ձեզ և զայդ
7 ևս շնորհ: Այլ որպէս յամե-
նայնի առաւել էք հաւատովք՝ և
բանիւ՝ և գիտութեամբ՝ և ամե-
նայն փութով, և որ ՝ի մէնջ ՝ի
ձեզ սէրն է, զի և յայդմ ևս
8 շնորհի առաւել լինիցիք: Ո՛չ
որպէս հրաման տալով ասեմ.
այլ վասն այլոց փութոյ, և
վասն ձերոյ սիրոյ՝ զմտերմու-
9 թիւնդ փորձեմ: Դանդի գիտէք
զշնորհսն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի. զի վասն ձեր
աղքատացաւ՝ որ մեծատունն էր,
զի դուք նորա աղքատութեամբն
10 մեծասջիք: Եւ խրատ մի յայս-
միկ տամ՝, զի այն իսկ օգտի ձեզ
է. որք ո՛չ միայն զառնելն՝ այլ
և զկամելն յառաջագոյն սկսայք

* Ի Յոյն. Յաղաչէլն մեր զՏիտոս

քքն, որ Մակեդոնացոց եկե-
ղեցիներին տրուած է: Դանդի
նեղութեան մեծ փորձի մէջ
նորանց ուրախութեան առաւել-
լութիւնը և նորանց ծանր աղ-
քատութիւնն շատ առատաձեռն
եղաւ նորանց պարգևութիւնովը:
Դանդի իրանց կարողութեան 3
չափ, վկայում եմ, և կարողու-
թիւնից էլ աւելի յօժար կամ-
քով, Շատ աղաչանքով աղա- 4
չում էին մեզ, որ այն պաշտօնի
ընծան և պաշտօնի հաղորդու-
թիւնը՝ սրբերի համար, ընդու-
նենք մենք: Եւ ոչ թէ որքան 5
որ յոյս ունէինք, այլ իրանց
անձներն էլ տուին առաջ Տի-
տոսը և ապա մեզ՝ Աստուծոյ
կամքովը. Որ մենք էլ Տիտոսին 6
աղաչեցինք, որ ինչպէս առա-
ջուց սկսեց՝ այնպէս կատարէ
այդ ընծան էլ ձեր միջումը:
Դայց ինչպէս ամեն բանի մէջ 7
աւելանում էք հաւատքով, և
խօսքով, և գիտութիւնով, և
ամեն ջանքով, և ձեր սիրովը
դէպի մեզ, որպէս զի այդ
շնորհքումն էլ աւելանաք: Ոչ 8
թէ հրաման տալով եմ ասում,
բայց ուրիշների ջանք անելու
համար, և ձեր սիրոյ հա-
ւատարմութիւնը փորձելով:
Դանդի գիտէք մեր Տէր Յիսու- 9
սի Քրիստոսի շնորհքը, որ ձեզ
համար աղքատացաւ նա՝ որ
հարուստ էր, որ դուք նորա

11 ՝ի հերուն հետէ: Դայց արդ և
զառնելն իսկ կատարեցէք. զի
որպէս յօժարութիւնն ՝ի կա-
մաց է, նոյնպէս և առնելն ըստ
12 դոյին: Զի եթէ յօժարու-
թիւնն առաջի կայ, ըստ դոյին
ընդունելի է՝ և ոչ եթէ ըստ
13 չդոյին: Զի ոչ եթէ այլոց
հանդիստ կամիցիմ, և ձեզ
14 նեղութիւն: Այլ հաւասարու-
թեամբ՝ յայժմու ժամանակիս,
ձեր առաւելութիւնդ ՝ի նոցա
պակասութեանն. զի և նոցա
առաւելութիւնն եղիցի ՝ի ձե-
րում պակասութեանդ, զի եղիցի
հաւասարութիւն՝ որպէս և
15 գրեալ է. Թէ որ բազումն առ՝
ոչ առաւելաւ, և որ սակաւն՝
ոչ նուազեցաւ:

16 Դայց շնորհք Աստուծոյ՝ որ
արկ զնոյն փոյթ վասն ձեր ՝ի
17 սիրտ Տիտոսի. Զի զաղաչանն
ընկալաւ՝ և փութացաւ յօժա-
րագոյնս դիմաց գալ առ ձեզ:
18 Եւ առաքեցաք ընդ նմա զնեղ-
բայրն՝ որոյ գովութիւնն յաւե-
տարանի անդ է ընդ ամենայն
19 եկեղեցիս: Եւ ոչ այսչափ
միայն, այլ և ձեռնադրեալ յե-
կեղեցեաց անտի, նշդեհակից
մեր եղև ՝ի շնորհս յայսոսիկ՝ որ
պաշտին ՝ի մէնջ ՝ի փառս

աղքատութիւնովը հարստանաք:
Եւ այս բանի մէջ մի խրատ եմ 10
տալիս. քանզի սա օգուտ է
ձեզ. որ ոչ թէ միայն անելը
այլ և կամենալն առաջուց սկսե-
ցիք հերուանից: Դայց հիմա 11
անելն էլ կատարեցէք. որ ինչ-
պէս յօժարութիւն կայ կամե-
նալու, այնպէս էլ կատարելը
լինի ունեցածից: Դանդի եթէ 12
յօժարութիւն կայ, ունեցածի
չափովն է ընդունելի և ոչ թէ
չունեցածի չափովը: Դանդի 13
ոչ թէ ուրիշներին հանգստու-
թիւնն է կամենում, իսկ ձեզ
նեղութիւն: Դայց հաւասա- 14
րութիւնով՝ այժմեան ժամանա-
կում ձեր աւելութիւնը ԺՈՒՅԷ
նորանց պակասութեանը, որ
նորանց աւելութիւնն էլ ԺՈ-
ՒՅԷ ձեր պակասութեանը, որ
հաւասարութիւն լինի. ինչպէս 15
գրուած է. Թէ նա որ շատ՝
չաւելացաւ. և նա որ քիչ՝
չպակասեց:
Դայց շնորհակալութիւն Ա- 16
ստուծոյ, որ նոյն ջանքը ձեզ
համար տուաւ Տիտոսի սրտի
մէջ. Որովհետև նա աղաչանքն 17
ընդունեց, և շտապելով յօժար
կամքով ձեզ մօտ եկաւ: Եւ 18
նորա հետ ուղարկեցինք այն
եղբօրն, որ գովասանք ունի
աւետարանումն ամեն եկեղե- 19
ցիների մէջ: Եւ ոչ թէ միայն
այսքան, այլ եկեղեցիներից էլ
ընտրուած՝ մեր պանդխտութեան
ընկեր այս շնորհքումը, որին

Տեառն՝ և 'ի մեր յօժարու-
20 թիւն։ Բայց զայս խղճէաք իսկ՝
թէ գուցէ արատ ոք ինչ գտցէ
'ի հաստատութեանս յայսմիկ՝
21 որ պաշտեցաւս 'ի մէջ։ Բանդի
խորհիմք զբարիս՝ ոչ միայն
առաջի Տեառն, այլ և առաջի
22 մարդկան։ Եւ առաքեցաք ընդ
նոսա զեղբայրն մեր՝ զոր ընտրե-
ցաք 'ի բազում՝ իրս բազում
անգամ պիտի գտեալ. և առաւել
ևս այժմ պնդագոյն՝ յուսով
23 մեծաւ 'ի ձեզ։ Բայց եթէ վասն
Տիտոսի ինչ բանք են, իմ հա-
ւասար է՝ և ձեր գործակից. և
եթէ եղբարք մեր, առաքեալքն
եկեղեցւոյ՝ և փառք Քրիստոսի։
Եւ արդ՝ զհանդէս սիրոյ ձերոյ՝
և զմերոյ պարծանացն վասն
ձեր, 'ի դոսա ցուցջիք յանդիման
ամենայն եկեղեցեաց։

մենք ծառայում ենք Տիրոջ
փառաց համար և ձեր յօժար
սրտովը. Բայց բանիցն զգուշա-
նալով, որ չլինի թէ մեկը ա-
բատաւորէ մեզ այս առատու-
թիւնում, որին մենք ծառայում
ենք։ Բանդի բարի բաներ ենք
մտածում՝ ոչ միայն Տիրոջ
առջև, այլ և մարդկանց առջև։
Եւ նորանց հետ ուղարկեցինք
մեր եղբօրը՝ որին փորձել ենք
շատ բաներով մէջ շատ անգամ
որ ժիր է. և հիմա էլ աւելի
ջանք անող այն մեծ վստահու-
թեամբն որ ունի դէպի ձեզ։
Իսկ եթէ Տիտոսի համար խօսք
չունի, նա իմ ընկերն է՝ և ձեզ
համար գործակիցս. և եթէ
մեր եղբայրների համար, նորանց
եկեղեցիների առաքեալներ են՝
և Քրիստոսի փառքը։ Ուրեմն
ձեր սիրոյ և մեր ձեր համար
պարծենալու ապացոյցը ցոյց
տուէք դորանց ամեն եկեղեցի-
ների առջև։

ԳԼ. Թ

1 Այլ վասն պաշտամանն՝ որ 'ի
սուրբսն է, աւելի է ինձ և գրել
2 առ ձեզ։ Զի գիտեմ զյօժա-
րութիւն ձեր, զոր վասն ձեր,
պարծեցեալ եմ 'ի մէջ Մակե-
դոնացւոց. թէ Աքայեցիքն 'ի
հերուն հետէ պատրաստ են. և
ձեր նախանձն զբազումս յոր-
3 դորեաց։ Եւ առաքեցաք զեղ-
բարսն՝ զի մի պարծանքն մեր

ԳԼ. Թ

Բանդի սրբերի համար լինե-
լու պաշտօնի մասին, աւելորդ
է ինձ ձեզ գրելը։ Բանդի
գիտեմ ձեր յօժարութիւնը,
որով Մակեդոնացոց մէջ ձեզ
համար պարծենում եմ. թէ
Աքայեցիքը հերուանից պատ-
րաստ են, և ձեր նախանձը շա-
տերին գրգռեց։ Եւ եղբայր-
ներին ուղարկեցի, որ մեր ձեզ

որ վասն ձեր՝ ընդունայն լինիցին
'ի մասինդ յայդմիկ. այլ որպէս
ասէի իսկ, պատրաստագոյնք
4 գտանիջիք. Գուցէ յորժամ
գայցեն ընդ մեզ Մակեդոնա-
ցիքն՝ և գտանիցեն զձեզ ան-
պատրաստս, և ամաչեսցուք
մեք. զի մի ասասցուք թէ դուք,
'ի մասինդ յայդմիկ պարծանաց։
5 Արդ կարևոր համարեցայ ա-
ղաչել զեղբարս, զի յառաջա-
գոյն իսկ եկեսցեն առ ձեզ, և
յառաջագոյն պատրաստեսցեն
զյառաջագոյն խոստացեալ օրհ-
նութիւնն ձեր 'ի պատրաստի
ունել. այնպէս իբրև զօրհնու-
թիւն, և մի իբրև զագահու-
6 թիւն։ Բանդի որ սերմանէ
ճշդելով՝ ճշդելով և հնձեսցէ,
և որ սերմանէ առատութեամբ՝
առատութեամբ և հնձեսցէ։
7 Իւրաքանչիւր որպէս և յօժա-
րեսցի ոք սրտիւ, մի առ հարկի
և տրտմութեան. քանդի զտուրս
զուարթառատս սիրէ Աստուած։
8 Այլ կարող է Աստուած զամ-
նայն շնորհս առաւելուլ 'ի ձեզ.
զի յամենայնի յամենայն ժամ
զամենայն բաւականութիւն ըն-
կալեալ՝ առաւելուցուք յամե-
նայն գործս բարութեան, Որ-
9 պէս և գրեալ է. Սփռեաց և ետ
տնանկաց, արդարութիւն նորա
մնայ յաւիտեան։
10 Այլ այն որ պարգևէ սերմն
սերմանահանաց՝ և հաց 'ի

վերայ պարծենալն զուր չլինի
այս մասին. այլ ինչպէս ասել
եմ, պատրաստուած լինիք։ Որ 4
չլինի թէ՝ երբոր Մակեդոնա-
ցիք ինձ հետ գան՝ և ձեզ ան-
պատրաստ գտնեն, ամօթ լինինք
մենք. (որ չասենք թէ՝ դուք,)
այս պարծանքի* վստահու-
թեամբը։ Արդ հարկաւոր հա- 5
մարեցի եղբայրներին աղաչել,
որ առաջ ձեզ մօտ գան, և
առաջուց պատրաստեն ձեր ա-
ռաջուց խոստացած օրհնութիւ-
նը, որ պատրաստ լինի, այնպէս
ինչպէս օրհնութիւն, և ոչ թէ
ինչպէս ագահութիւն։ Բանդի 6
սա է՝ սերմ, թէ խնայելով
սերմողը, խնայելով էլ կ'հնձէ.
և առատութեամբ սերմողը, ա-
ռատութեամբ էլ կ'հնձէ։ Ամեն 7
մէկն ինչպէս որ սրտի յօժարու-
թիւն կայ, ոչ թէ տրտմութիւ-
նով կամ հարկադրութիւնով.
քանզի Աստուած ուրախ տվողին
է սիրում։ Բայց Աստուած 8
կարող է ամեն շնորհքներն
աւելացնել ձեզանում. որ ամեն
բանի մէջ ամեն ժամանակ ամեն
բաւականութիւն ունենալով ա-
մեն բարի գործքի համար աւե-
լանաք։ Ինչպէս գրուած է. 9
Փռեց՝ աղքատներին տուաւ.
նորա արդարութիւնը մնում է
յաւիտեան։
Բայց նա՝ որ սերմ ցանողին 10
սերմ է պարգևում, և հաց՝

* Կողմանէ

կերակուր, պարգևեսցէ և բազ-
մացուսցէ զսերմանիս ձեր, և
աճեցուսցէ զարդիւնս արդարու-
11 թեան ձերոյ. Յամենայնի մե-
ծացեալք ամենայն առատու-
թեամբ՝ որ յօրինէն մեօք գո-
12 հութիւն Աստուծոյ: Զի պաշ-
տօն հարկիս այսորիկ՝ ոչ միայն
առ 'ի լնուլ զպակասութիւն
սրբոցն է, այլ և առաւելուլ
բազմօք գոհութիւնս Աստուծոյ.
13 Հանդիսիս պաշտամանս այսորիկ
փառաւորել զԱստուած 'ի վե-
րայ հնազանդութեան խոստո-
վանութեան ձերոյ յաւետա-
րանն Քրիստոսի. և առատու-
թեամբ հաղորդութեանն 'ի
14 նոսա՝ և յամենեսին. Եւ նոցա
աղօթք վասն ձեր, քանզի անձ-
կացեալ են առ ձեզ վասն ա-
ռաւել շնորհացն Աստուծոյ՝ որ
'ի ձեզ: Այլ շնորհ.ք Աստուծոյ
'ի վերայ անպատում պարգևացն
նորա:

ԳԼ. Ժ

1 Այլ ես իսկ Պօղոս աղաչեմ
զձեզ հեղութեամբն և հան-
դարտութեամբն Քրիստոսի, որ
յանդիման ձեզ իբրև տառա-
պեալ մի եմ 'ի միջև ձերում.
բայց 'ի հեռուստ համարձակիմ՝
2 առ ձեզ: Աղաչեմ զի մի 'ի
մօտոյ ևեթ համարձակիցիմ
վստահութեամբ. *կամ հա-

* 'Ի Յունն, որով համարիցիմ

կերակուրի համար, նա կ'պար-
գևէ և կ'շատացնէ ձեր սեր-
մունքը, և կ'աճեցնէ ձեր ար-
դարութեան պտուղը: Մեն 11
բանի մէջ հարստացած ամեն
լիութիւնով՝ որ մեզանով գո-
հութիւն է ըստուծ Աստու-
ծոյն: Քանզի այս տուրքի պաշ- 12
տօնը ոչ թէ միայն սրբերի
պակասութիւնն է լցացնում,
այլ և շատերի գոհութիւնը շա-
տացնում Աստուծոյ համար:
Որ այս պաշտօնի փորձովն 13
Աստուծոյն փառաւորեն ձեր
Քրիստոսի աւետարանին հնա-
զանդ դաւանութեանը համար.
և այն առատ հաղորդութեան
համար որ նորանց և ամենին
լինում է. Եւ նորանց աղօթ- 14
քովը ձեզ համար, որ փափագեն
ձեզ Աստուծոյ այն առատ
շնորհքի համար՝ որ ձեզանում
է: Եւ շնորհակալութիւն Աս- 15
տուծոյն նորա անպատմելի պար-
գևի համար:

ԳԼ. Ժ

Բայց ես ինքս՝ Պօղոս աղա- 1
չում եմ ձեզ Քրիստոսի հե-
զութիւնովն ու հանդարտու-
թիւնովը, որ երևոյթին նայե-
լով ցած եմ ձեր միջումը. իսկ
հեռուից համարձակ եմ՝ դէպի
ձեզ: Աղաչում եմ որ չլինի՝ 2
թէ մօտից էլ այն վստահու-
թիւնով համարձակ լինիմ որ

մարիցիմ" յանդգնել 'ի վերայ
ոմանց՝ որ կարծեն զմեզ եթէ
3 ըստ մարմնոյ գնայցեմք: Զի
թէպէտ և մարմնով գնամք՝ այլ
ոչ եթէ ըստ մարմնոյ զինուո-
4 րիմք: Զի զէն զինուորութեան
մերոյ ոչ է մարմնաւոր, այլ
զօրաւոր յԱստուծոյ, առ 'ի
քակելոյ զամուրս. զխորհուրդս
5 քակեմք, Եւ զամենայն բարձ-
րութիւն հպարտացեալ 'ի վե-
րայ գիտութեանն Աստուծոյ.
և գերեմք զամենայն միտս 'ի
հնազանդութիւնն Քրիստոսի.
6 Եւ 'ի պատրաստի ունիմք
խնդրել զվրէժ ամենայն անհնա-
զանդութեան՝ յորժամ ձեր ևս
հնազանդութիւնդ կատարեսցի:

7 *Ըստ իւրաքանչիւր երևսաց
դիտեսջիք". եթէ ոք վստահ
յանձն լցէ Քրիստոսի լինել,
զայս խորհեսցի՛ դարձեալ 'ի միտս
իւր. թէ որպէս նայն Քրիս-
տոսի է՝ նոյնպէս և մեք: Զի
թէ առաւել ևս պարծեցայց
վասն իշխանութեանս մերոյ՝
զոր ետ մեզ Տէր 'ի շինել՝ և ոչ
'ի քակել զձեզ, ոչինչ ամա-
9 չեցից: Զի մի թուեսցայց իբրև
ահ ինչ արկանել ձեզ թղթովքս:
10 Զի ասիցէ՞ք, թուղթքս ծանունք են
և սաստիկք. բայց տեսիլ մարմնոյ
տկար՝ և բանն արհամարհեալ.

* 'Ի Յունն, Ըստ երեսաց դիտէք

համարում եմ յանդգնիլ մի
քանիսի դէմ, որ մեզ համար
կարծում են՝ թէ մարմնոյ պէս
ենք վարվում: Քանզի թէ և 3
մարմնով ենք վարվում, բայց
մարմնոյ պէս չենք զինուորու-
թիւն անում: Քանզի մեր զի- 4
նուորութեան զէնքերը մարմ-
նաւոր չեն, այլ Աստուծով զօ-
րաւոր, բերդեր քանդելու.
խորհուրդներ ենք քանդում,
Եւ ամեն բարձրութիւն՝ որ գո- 5
ռոզանում է Աստուծոյ գիտու-
թեան դէմ. և գերի ենք բըռ-
նում ամեն միտք Քրիստո-
սին հնազանդեցնելու համար:
Եւ պատրաստ ենք վրէժ 6
առնելու ամեն անհնազանդու-
թեան համար՝ երբ որ ձեր
հնազանդութիւնը կատարեալ
լինի:
Երեսի՞ էք նայում. եթէ մէկն 7
իր անձի վերայ վստահ է թէ
Քրիստոսինն է, թող իր մըտ-
քումն այս էլ մտածէ, թէ ինչ-
պէս որ նա Քրիստոսինն է,
այնպէս էլ մենք ենք Քրիստո- 8
սինը: Քանզի եթէ մի աւելի
բան պարծենալու լինիմ մեր
իշխանութեան համար որ Տէրը
տուաւ մեզ՝ ձեր շինութեան և
ոչ թէ կործանման համար,
չեմ ամաչիլ: Որ չերևիմ իբր 9
թէ վախեցնում եմ ձեզ այս
թղթերովը: Քանզի թղթերը՝ 10
ասում են՝ ծանր են և սաստիկ.

11 Օ՛այս խորհեսցի այնպիսին, զի
որպիսիք եմք բանիւք թղթոցդ
'ի հեռուստ, նոյնպիսիք և 'ի
12 մօտոյ արդեամբք: Քանզի ոչ
իշխեմք կշռել և հաւասարել
զանձինս մեր ոմանց, որ զանձինս
իւրեանց ձեզ ընծայեցուցանեն.
այլ անձամբ յանձինս՝ զանձինս
չափեն, և 'ի կշռել անձամբ
յանձինս՝ ոչ առնուն 'ի միտ:
13 Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ
պարծեսցուք. այլ ըստ չափոյ
կանոնին, զոր բաժանեաց մեզ
Աստուած չափով հասանել
14 մինչև առ ձեզ: Իբր ոչ եթէ
հասու ինչ չիցեմք 'ի ձեզ, և
ձկտեցուցանիցեմք զանձինս.
քանզի մինչև առ ձեզ հասաք
15 աւետարանաւն Քրիստոսի: Եւ
ոչ յանչափս ինչ պարծիմք
օտար վաստակօք: Այլ յոյս
մի ունիմք զաճման հաւատոց
ձերոց՝ այդրէն 'ի ձեզ մեծանալ
ըստ կանոնիս մերոյ յա-
16 ռաւելութիւն. 'Ի վերս ևս քան
զձեզ աւետարանել՝ ոչ օտար
կանոնաւ 'ի պատրաստականս ինչ
17 պարծել: Օ՛ի որ պարծին 'ի
Տէր պարծեսցի:

18 Օ՛ի ոչ եթէ որ զանձն իւր
ընծայեցուցանէ՝ նա է ընտրեալ.
այլ զոր Տէրն ընծայեցու-
ցանէ:

բայց մարմնոյ կերպարանքը տե-
կար՝ և խօսքն էլ անարդ: Այն-
պիսին թող սա միտք անէ, թէ
ինչպէս որ ենք հեռուանց խօս-
քով ՝ի թղթերովը, այնպէս
էլ մօտանց գործքով: Քանզի
չենք համարձակում մեր անձը
կշռել և բաղդատել ոմանց հետ՝
որ իրանց անձները գովելով
յանձնում են. այլ նորանք
իրանցմով իրանց անձները չա-
փելով, և իրանց անձները
իրանց հետ բաղդատելով, չեն
հասկանում: Բայց մենք չա-
փից դուրս չենք պարծենում.
այլ այն կանոնի չափովն, որն
Աստուած բաժանեց մեզ՝ հաս-
նել մինչև ձեզ մօտ էլ, Քանզի
ոչ թէ իբր թէ ձեզ մօտ չհա-
սած մեր անձները երկայնաց-
նում ենք. քանզի մինչև ձեզ
մօտ էլ հասանք Քրիստոսի
աւետարանովը: Եւ չափից
դուրս չենք պարծենում՝ օտար
աշխատանքով, յուսալով որ ձեր
հաւատքի մեծանալու ժամանա-
կին մեծանանք ձեզանում մեր
կանոնի պէս առաւելութեամբ:
Որ ձեզանից այն կողմն էլ աւե-
տարանը քարոզենք՝ և օտար
կանոնով պատրաստուածների
վերայ չպարծենանք: Եւ ով
որ պարծենում է՝ թող Տէրովը
պարծենայ:

Քանզի ոչ թէ իր անձն
յանձնողն է ընտիր. այլ նա՝
որին Տէրն է յանձնում:

ԳԼ. ԺԸ.

1 Լաւ էր եթէ ներէիք փոքր
մի և իմում անզգամութեանս.
2 այլ և անսացէք իսկ: Նախան-
ձեցուցանեմ զձեզ 'ի նախանձն
Աստուծոյ. զի խօսեցայ զձեզ
առն միում, իբրև զկոյս մի
սուրբ յանդիման կացուցանել
3 Քրիստոսի: Բայց երկնչիմ՝
գուցէ որպէս օձն խաբեաց
զԵւայ խորամանկութեամբ իւ-
րով՝ ապականեսցին միտք ձեր
'ի միամտութենէն որ 'ի Քրիս-
4 տոս: Օ՛ի եթէ որ գալցն ինչ՝
այլ Քրիստոս քարոզիցէ զոր
մեքն ոչ քարոզեցաք, կամ ոգի
օտար առնուցուք՝ զոր ոչ առէք,
կամ աւետարան օտար՝ զոր ոչ
ընկալարուք, բարւոք անսայիք
5 նոցա: Բայց ես այսպէս հա-
մարիմ, թէ ոչինչ իւիք պակաս
իցեմ քան զլաւ առաքեալսն:
6 Թէպէտ և տգէտ ևս իցեմ
բանիւ, այլ ոչ եթէ գիտու-
թեամբ. ծակայն յամենայնի
յայտնեցաք զանձինս ամենեսին
7 առ ձեզ: Եւ եթէ վնաս ինչ
գործեցի՝ զի զանձն խոնարհե-
ցուցի. և այն՝ զի դուք բարձ-
բասջիք. զի ձրի զաւետարանն
Աստուծոյ աւետարանեցի ձեզ:
8 Օ՛այլ եկեղեցիս կողոպտեցի,
առեալ թոշակ 'ի ձեր սպասաւո-
9 րութիւն: Եւ յորժամ եկի
առ ձեզ. թէպէտ և պակասեաց
ինչ ոչ զոք 'ի ձէնջ ձանձրա-
ցուցի, զի զպակասութիւնն իմ

ԳԼ. ԺԸ.

Երանի թէ մի քիչ իմ 1
անմտութեանը ներէիք. բայց
ներում էլ էք ինձ: Վասն- 2
զի ձեզ համար նախանձաւոր
եմ Աստուծոյ նախանձովը.
որովհետև ձեզ մի մարգու
նշանեցի՝ որ մի սուրբ կոյս
կ'անգնեցնեմ Քրիստոսի առջև:
Բայց վախենում եմ՝ մի 3
գուցէ ինչպէս օձն իր խորա-
մանկութեամբը խաբեց Եւա-
յին, այնպէս էլ ձեր միտքն
ապականուի այն միամտու-
թիւնից՝ որ Քրիստոսումն է:
Քանզի եթէ մէկը գայ և 4
ուրիշ Յիսուս քարոզէ՝ որ
մենք չքարոզեցինք, կամ ու-
րիշ հոգի առնէք՝ որ չառիք,
կամ ուրիշ աւետարան որ չըն-
դունեցիք, լաւ կ'համբերէիք:
Քանզի կարծեմ թէ ոչ մի 5
բանով պակաս չեմ քան թէ
մեծամեծ առաքեալները: Թէ 6
և տգէտ լինիմ խօսքով, բայց
ոչ թէ գիտութիւնով. այլ ամեն
բանի մէջ բոլորովին յայտնուե-
ցանք ձեզ: Կամ թէ մեղք 7
գործեցի՝ որ իմ անձը խոնար-
հացրի. որ դուք բարձրանաք.
որովհետև Աստուծոյ աւետա-
րանը ձրի աւետարանեցի ձեզ:
Ուրիշ եկեղեցիները կողոպտե- 8
ցի, և վարձք առի ձեզ ծա-
ռայելու համար: Եւ երբոր 9
ձեզ մօտ էի՝ մի բանի պակասու-
թիւն քաշած ժամանակս էլ,

լցին եղբարքն եկեալք ի Մակեդոնիացւոց. և յամենայնի առանց
ծանրանալոյ ձեզ զանձն իմ պահեցի՝ և պահեցից։ Զանգի գոյ
յիս ճշմարտութիւնն Քրիստոսի։

10 Զի պարծանքս այս ոչ արգելցին զիս ի կողմանս
11 Աքայեցւոց։ Զի՞նդէ՞ր. իբրու թէ ոչ սիրիցեմ՝ զձեզ. զայն
12 Աստուած գիտէ. Զոր առնեմ՝ և արարից. զի հատից ըզպատճառս այնոցիկ՝ որ զպատճառսն կամիցին, զի որով պարծիցին,
և նոքա իբրև զմեզ գտանիցին։
13 Զի այնպիսիքն սուտ առաքեալք, մշակք նենգաւորք,
կերպարանին ի կերպարանս
14 առաքելոց Քրիստոսի։ Եւ չէն
զարմանք. քանզի և ինքն
Սատանայ կերպարանի ի հրեշ-
15 տակ լուսոյ։ Եւ ոչինչ է մեծ՝
թէ և պաշտօնեայք նորա կերպարանին իբրև զպաշտօնեայսն
արդարութեան. որոց կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց։
16 Դարձեալ ասեմ. Մի՞ ոք
համարեսցի զիս անզգամ. ապա
թէ ոչ՝ գոնէ իբրև զանզգամ
ընկալարուք զիս, զի և ես փոքր
17 մի ինչ պարծեսցայց։ Եւ զոր
խօսիմն՝ ոչ եթէ ըստ Տեառն
խօսիմ, այլ իբրև անզգամութեամբ՝ ըստ կարգի այդց պար-
18 ծանաց։ Եւ քանզի բազումք
պարծին ըստ մարմնոյ՝ և ես
19 պարծեցայց։ Մտադիւր լիս

ձեզանից մէկին, ծանրութիւն
չտուի. քանզի իմ պակասութիւնը Մակեդոնիայից եկած
եղբարքը լրացրին. և ամէն բանի
մէջ իմ անձն առանց ձեզ ծանրութիւն տալու պահեցի, և
կ'պահեմ էլ։

Քրիստոսի ճշմարտութիւնն 10
է ինձանում. որ այս պարծանքն
Աքայիայի կողմերումը չի խափանուիլ ինձանից։ Ինչո՞ւ հա- 11
մար. որովհետև ձեզ չե՞մ սիրում. Աստուած գիտէ։ Բայց 12
որ անում եմ՝ կ'անեմ էլ, որ
պատճառ որոնողների պատճառը
կտրեմ. որ ինչով որ պարծենում են՝ նորանք էլ մեզ նման
գտնուին։ Դարձեալ այնպիսիները 13
սուտ առաքեալներ, նենգաւոր մշակներ, Քրիստոսի
առաքեալների պէս կերպարանուողներ են։ Եւ զարմանալի 14
էլ չէ. քանզի սատանան ինքն
էլ լուսոյ հրեշտակի կերպարանքն իրան վերայ է առնում։
Ուրեմն մեծ բան չէ որ նորա 15
պաշտօնեաներն էլ կերպարանուին արդարութեան պաշտօնեաների նման. որոնց վերջը
իրանց գործքերին պէս կ'լինի։
Դարձեալ ասում եմ. չլինի որ 16
մէկն ինձ յիմար համարէ. ապա
թէ ոչ գոնեա յիմարի պէս
ընդունեցէք ինձ որ ես էլ մի
քիչ պարծենամ։ Ինչ որ խո- 17
սում եմ, ոչ թէ Տիրոջ մտիկ
տալով եմ խօսում, այլ ինչպէս անմտութեամբ այս պար-

անսայիք անմտացն ձերովդ
20 իմաստութեամբ։ Զանգի ան-
սայք եթէ ոք խաբէ զձեզ, եթէ
ոք ծառայեցուցանէ, եթէ ոք
ուտէ զձեր, եթէ ոք առնու ինչ,
եթէ ոք հպարտանայ, եթէ ոք
զձեզ յանդիման հարկանէ.
21 Ըստ անարգանացդ ասեմ, իբրև
թէ մեք տկարացաք արդեօք.
յորս ինչ ոք համարձակիցի,
անզգամութեամբ ասեմ, հա-
22 մարձակիմ և ես։ Եբրայեցիք
իցեն, և ես. Իսրայէլացիք
իցեն, և ես. զաւակ Աբրահա-
23 մի՞ իցեն, և ես. Պաշտօնեայք
Քրիստոսի իցեն, յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել ևս
ես. եթէ վաստակաւք՝ առաւել,
եթէ գանիւք՝ ևս առաւել. եթէ
բանտիս՝ աւելի քան զնոսա, եթէ
մահուամբք՝ բազում անգամ.
24 Ի Հրէից՝ հնգիցս քառասուն
25 միով պակաս արբի. Երիցս
ձաղկեցայ. միանգամ քարկոծ
եղէ. երիցս նաւակոծ եղէ.
զտիւ և զգիշեր յանդունդս տա-
26 ռապեցայ. Ի ճանապարհս
բազում անգամ, վիշտս ի գե-
տոց, վիշտս յաւազակաց, վիշտս
յազգէ, վիշտս ի Հեթանոսաց,
վիշտս ի քաղաքի. վիշտս յա-
նապատի, վիշտս ի ծովու,
27 վիշտս ի սուտ եղբարց. Ի
ջանս՝ և ի վաստակս. ի տքնութիւնս բազում անգամ, ի
քաղց և ի ծարաւ. ի պահս
բազում անգամ, ի ցուրտ և ի
28 մերկութեան։ Թո՛ղ զայլ նե-

ծանքի նիւթի նկատմամբ։ Եւ 18
որովհետև շատերը մարմնոյ կողմանէ պարծենում են, ես էլ
կ'պարծենամ։ Զանգի յօժա- 19
րութեամբ համբերում էք անմիտներին՝ իմաստուն գոլով։
Դարձեալ համբերում էք, եթէ 20
մէկը ծառայեցնէ ձեզ, եթէ
մէկը ձեր բանն ուտէ, եթէ
մէկը բան առնէ, եթէ մէկը
գոռոզանայ, եթէ մէկը ձեր
երեսին զարկէ։ Անարգանքի 21
համար եմ ասում, իբր թէ
մենք տկարացա՞նք. ինչ բանով
որ մէկը համարձակէ, անմտութիւնով եմ ասում, ես էլ եմ
համարձակում։ Եբրայեցի՞ են, 22
ես էլ. Իսրայէլացի՞ են, ես էլ.
Աբրահամի զաւա՞կ են, ես էլ։
Քրիստոսի պաշտօնեանե՞ր են, 23
յիմարութիւնով եմ ասում՝ թէ
էլ աւելի ես, մանաւանդ աշխատանքներով, ծեծերով էլ աւելի, բանտերի մէջ մանաւանդ,
մահերով շատ անգամ։ Հրէա- 24
ներից հինգ անգամ՝ քառասունից մէկ պակաս ծեծ ընդունեցի։ Երեք անգամ ձաղկով 25
ծեծուեցայ, մէկ անգամ քարկոծուեցայ. երեք անգամ նաւակոծ եղայ. մի ցերեկ ու գիշեր
անդունդումը մնացի։ Շատ ան- 26
գամ ճանապարհներում. գետերից վտանգներ, աւազակներից վտանգներ, ազգից վտանգներ, հեթանոսներից վտանգներ, քաղաքի մէջ վտանգներ,
անապատի մէջ վտանգներ, ծովի

զուԹիւնն. և զի Հանապաղ
խուժանն 'ի վերայ իմ կուտէր՝
և Հոգք ամենայն եկեղեցեացն:
29 Ո՞Հիւանդանայ՝ և ո՛չ ես Հի-
ւանդանամ. ո՞ գայԹագղի, և ո՛չ
ես տապանամ:

30 Եթէ պարծել ինչ պարտ իցէ,
զտկարութեանն պարծեցայց:
31 Աստուած և Հայր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտէ՝
որ է օրՀնեալ յաւիտեանս, զի
32 ո՛չ ստեմ: 'Ի Դամասկոս ազգա-
պետն Արետայ արքայի պահէր
զքաղաքն Դամասկացւոց ունել
33 զիս. Եւ ընդ պատուհանն վան-
դակաւ կախեցայ ընդ պարիսպն,
և փախեայ 'ի ձեռաց նորա:

ԳԼ. ԺԸ

1 Արդ պարծել ինչ պարտ իցէ.
այլ օգնէ ինչ ո՛չ: Բայց եկից
'ի տեսիլս և 'ի յայտնութիւնս
2 Տեառն: Գիտեմ այր մի 'ի
Քրիստոս յառաջ քան զչորեքտասան ամ, եթէ մարմնով ո՛չ
գիտեմ, և եթէ առանց մարմնոյ՝ ո՛չ գիտեմ, Աստուած
գիտէ. յափշտակեալ զայնմէջ վտանգներ, սուտ եղբայրներից վտանգներ: 27
Ջանքի մէջ
և աշխատանքի մէջ. շատ անգամ արթնութիւնների մէջ.
սովի և ծարաւի մէջ. շատ անգամ ծոմի մէջ. ցրտի և մերկութեան մէջ: Բացի ուրիշ 28
ՆԷՍ-ԷԿ-ՆԵՐԸ ինձ վերայ
կիտուելն՝ ամէն օր ամէն եկեղեցիների հոգսը: Ո՞Վ կըտկարանայ՝ և ես չեմ տկարանալ. ո՞Վ
կ'գայԹակղէ՝ և ես չեմ բորբոքուիր: 29

Եթէ պարծենալ պէտք լինի, 30
իմ տկարութիւնովը կ'պարծենամ: Աստուած և մեր Տէր 31
Յիսուս Քրիստոսի Հայրն՝ որ
յաւիտեան օրՀնեալ է՝ գիտէ
որ սուտ չեմ ասում. Դամաս- 32
կոսումն Արետա Թագաւորի ազգապետն Դամասկացոց քաղաքումը պահապաններ էր դրել
որ ինձ բռնէ. Եւ պատուհա- 33
նիցը զԹոցով կախուեցայ պարիսպիցը, և փախայ նորա ձեռքիցը:

ԳԼ. ԺԹ

1 Ապա՝ պարծենալն յիրաւի օգուտ չէ բերում ինձ. բայց
կ'գամ Տիրոջ տեսիլքներին և
յայտնութիւններին: Մէկ մարդ 2
գիտեմ Քրիստոսումը տասն
չորս տարուց առաջ, Թէ մարմնով էր՝ չեմ գիտում, և Թէ
առանց մարմնոյ էր՝ չեմ գիտում, Աստուած գիտէ. նա

պիսին մինչև յերրորդ երկինս:
3 Եւ գիտեմ զայնպիսի այր. եթէ
մարմնով և եթէ առանց մար-
4 մնոյ՝ ո՛չ գիտեմ. Աստուած
գիտէ, Զի յափշտակեցաւ 'ի
դրախտն, և լուաւ բանս անձա-
ւելս. զոր ո՛չ է պարտ մարդոյ
5 խօսել: Վասն այնպիսւոյն
պարծեցայց. այլ վասն անձին
ինչ ո՛չ պարծեցայց, բայց եթէ
6 'ի տկարութիւնս: Զի եթէ և
կամիցիմ պարծել՝ ո՛չ եղէց
անզգամ. քանզի զարդարն ասեմ:
այլ խնայեմ, գուցէ ոք Հա-
մարիցի ինչ յիս աւելի՝ քան զոր
տեսանիցէ յիս՝ կամ լսիցէ
7 յինէն: Եւ զի մի առաւելութեամբ յայտնութեանցն Հպարտացայց, տուաւ ինձ խայթ
մարմնոյ, Հրեշտակ Սատանայ՝
կոփել զիս. զի մի Հպարտա-
8 ցայց: Եւ վասն այնորիկ երիցս
անգամ աղաչեցի զՏէր՝ զի 'ի
9 բաց արասցէ յինէն. Եւ ասէ
ցիս. Շա՛տ են քեզ շնորՀք իմ,
զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի. և արդ՝ լաւ ևս
լիցի ինձ պարծել 'ի տկարութիւնս. զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի:

10 Վասն որոյ Հաճեալ եմ ընդ
տկարութիւնս, ընդ թշնամանս,
ընդ վիշտս, ընդ Հալածանս, և

յափշտակուեցաւ մինչև երրորդ երկինքը: Եւ գիտեմ այնպիսի 3
մարդու թէ մարմնով և թէ
առանց մարմնոյ էր՝ չեմ գի-
տում. Աստուած գիտէ. Որ նա 4
յափշտակուեցաւ դրախտի մէջ.
և անասելի բաներ լսեց՝ որ
մարդու պէտք չէ նորանց խօսել:
Այնպիսոյն համար կ'պարծե- 5
նամ. բայց իմ անձի համար
չեմ պարծենայ, բայց միայն իմ
տկարութիւններովը: Դանդի 6
եթէ կամենամ էլ պարծենալ՝
անմիտ չեմ լինիլ. քանզի ճշմարիտն եմ ասում. բայց խնայում եմ, որ մի գուցէ մէկն
ինձ համար աւելի բան համարէ,
քանեմէ այն՝ որ ինձանում տեսնում է կամ ինձանից լսում:
Եւ որ յայտնութիւնների ա- 7
ռաւելութեամբը չՀպարտանամ,
մարմնոյս համար խայթ տուրեցաւ ինձ՝ Սատանի Հրեշտակ, որ
ինձ բռունցքով ծեծէ, որ չըգոռոզանամ. Որա համար երեք 8
անգամ աղաչեցի Տիրոջը, որ
նորան Հեռացնէ ինձանից: Եւ 9
ինձ ասաց. Բաւական է քեզ իմ
շնորՀքը, քանզի իմ զօրութիւնը տկարութեան մէջ է
կատարվում. արդ աւելի յօժարութեամբ իմ տկարութիւններովը կ'պարծենամ, որ Քրիստոսի զօրութիւնը բնակէ
ինձանում:
Վասնորոյ Հաւանել եմ տը- 10
կարութիւնների, թշնամանքների, վշտերի, Հալածանքների,

ընդ նեղութիւնս վասն Քրիս-
տոսի. զի յորժամ տկարանամ,
11 յայնժամ զօրանամ։ Եղէ ան-
զգամ, քանզի դուք ստիպեցիք
զիս. զի ինձ պարտ էր ի ձէնջ
վկայութիւն առնուլ՝ թէ ոչինչ
պակաս գոայ քան զլաւ առա-
քեալսն. զի թէպէտ և ես ոչինչ
12 եմ։ Սակայն նշանք առաքելոյ
գործեցան ի ձեզ՝ ամենայն
համբերութեամբ, նշանօք և
արուեստիւք և զօրութեամբք։
13 Եւ արդ զի՞նչ իցէ, որովհետև պա-
կաս գոայք քան զայլ եկեղեցիս.
բայց եթէ այնու՝ զի ես զձեզ ոչ
ձանձրացուցի. շնորհեցէք ինձ
զվնասդ զայդ։

14 Ահաւասիկ այս երիցս անգամ
պատրաստեալ եմ գալ առ ձեզ.
և ձեզ բեռն ինչ ոչ եղէց. զի ոչ
խնդրեմ ինչ զձեր՝ այլ զձեզ.
քանզի ոչ պարտին որդիք հարց
գանձել՝ այլ հարք որդւոց։
15 Բայց ես մտաղիւրութեամբ
ծախեցից, և ծախեցայց վասն
անձանց ձերոց. զի թէպէտ և
յառաւել սիրոյն զձեզ սակաւ
սիրիցեմ։

16 Այլ գրեթէ ես ոչինչ ծան-
բացայ ձեզ. այլ քանզի խորա-
գէտ էի, խելօք կալայ զձեզ։
17 Մի՞թէ որովք առաքեցին առ
ձեզ՝ նոքօք ինչ ագահեցի՞ ի
18 ձէնջ։ Աղաչեցի զՏիտոս՝ և
ի նեղութիւնների Քրիստոսի
համար. քանզի երբոր տկարա-
նում եմ, այն ժամանակ զօրա-
նում եմ։ Ընդհատ եղայ պար- 11
ծենալովս. դուք ինձ բռնադա-
տեցիք. քանզի պէտք էր ինձ
վկայութիւն առնել ձեզանից.
քանզի ոչ մի բանով պակաս
չեղայ քան թէ այն մեծամեծ
առաքեալները, թէ և ես ոչինչ
եմ։ Բայց առաքելոյ նշանները 12
ձեր մէջ գործուեցան՝ ամեն
համբերութիւնով, նշաններով
և հրաշքներով և զօրութիւններ-
ով։ Քանզի ի՞նչ է որ նո- 13
րանով պակաս գտնուեցաք քան
թէ ուրիշ եկեղեցիները. եթէ
ոչ նորանով՝ որ ես ծանրութիւն
չտուի ձեզ. շնորհեցէք ինձ
այդ վնասը։

Ահա երրորդ անգամն է որ 14
պատրաստ եմ ձեզ մօտ գալու,
և ձեզ ծանրութիւն չեմ տալ.
քանզի ձեր բանը չեմ որոնում՝
այլ ձեզ. քանզի ոչ թէ որդիքը
հարանց համար պէտք է գանձ
հաւաքեն, այլ հարքը որդոց
համար։ Բայց ես յօժարու- 15
թեամբ ձեր անձների համար
ծախք կ'անեմ, և ծախք կ'լինիմ.
թէ և աւելի սիրելով ձեզ՝ ես
քիչ սիրուիմ։

Բայց թող լինի. ես ծան- 16
րութիւն չեղայ ձեզ. սակայն
խորագէտ լինելով՝ վարպետու-
թեամբ բռնեցի ձեզ։ Մի՞թէ 17
նորանց ձեռքով՝ որ ձեզ մօտ
ուղարկեցի՝ մի բան քաշեցի ձե-

առաքեցի ընդ նմա զեղբայրն,
միթէ ագահեցաւ ինչ զձեր
Տիտոս. ոչ նովին ոգւով գնա-
ցաք. ոչ նովին շաւղօք շրջե-
ցաք։

19 Դարձեալ համարիցիք՝ եթէ
յողոր անկեալ ինչ ձեզ ազեր-
սիցնիմք. առաջի Աստուծոյ ի
Քրիստոս խօսիմք, զի ամենայն
ինչ սիրելիք վասն ձերոյ շի-
20 նութեան է։ Այլ երկնչիմ,
գուցէ եկեալ՝ ոչ որպէս ես
կամիմն գտանիցեմ զձեզ. և ես
գտանիցիմ ձեզ՝ որպէս և դուք
ոչ կամիցիք. գուցէ դարձեալ
հեւ, նախանձ, սրտմտութիւնք,
գրգռութիւնք, չարախօսու-
թիւնք, քսութիւնք, հպարտ-
ութիւնք, ամբարտաւանու-
21 թիւնք, խռովութիւնք։ Գուցէ
դարձեալ յորժամ գայցեմ՝
նկուն ինչ առնիցէ զիս Աստուած
իմ առ ձեզ. և սուգ առնու-
ցում վասն բազմաց յառա-
ջագոյն մեղուցելոց և ոչ ապաշ-
խարելոց՝ ի վերայ պղծու-
թեան և պոռնկութեան և
գիջութեան զոր գործեցին։

ԳԼ. ԺԳ

1 Այս երիցս անգամ գամ առ
ձեզ. զի ի բերանոյ երկուց և
երից վկայից հաստատեսցի ամե-
2 նայն բան։ Յառաջ ասացի, և
դարձեալ կանխաւ ասեմ՝՝ յան-
զանից։ Աղաչեցի Տիտոսին՝ և 18
նորա հետ այն եղբօրն էլ ու-
ղարկեցի, միթէ Տիտոս ձեզա-
նից մի բան քաշեց. չէ՞ որ մենք
նոյն հոգով վարուեցանք. չէ՞
որ նոյն ճանապարհով գնացինք։

Դարձեալ կարծիմ էք թէ 19
մենք խաբով մեզ պաշտպա-
նում ենք. Աստուծոյ առջև
Քրիստոսումն խօսում ենք. և
ամեն բան, սիրելիներ, ձեր
շինութեան համար է։ Քանզի 20
վախում եմ, որ մի գուցէ իմ
գալու ժամանակը ձեզ այնպէս
չգտնեմ՝՝ ինչպէս կամենում եմ.
և ես գտնուիմ ձեզ համար ինչ-
պէս էլ դուք չէք կամենում.
որ չլինին կռիւներ, նախանձ-
ներ, բարկութիւններ, գրգռու-
թիւններ, չարախօսութիւններ,
քսութիւններ, ամբարտաւա-
նութիւններ, խռովութիւններ։
Որ մի գուցէ դարձեալ իմ 21
գալու ժամանակ՝ իմ Աստուածն
ինձ ցածացնէ ձեզ մօտ. և սուգ
մտնեմ շատերի համար որ առա-
ջուց մեղք գործեցին, և ապաշ-
խարած չլինին այն պղծութեան
և պոռնկութեան և գիջութեան
համար՝ որ գործեցին։

ԳԼ. ԺԴ

1 Այս երրորդ անգամն է որ
ձեզ մօտ եմ գալիս, երկու և
երեք վկաների բերանից ամեն
2 բան կհաստատուի։ Առաջուց ա-
սացի և առաջ էլ ասում եմ՝ իբր

դիման երկիցս անգամ. և այժմ
'ի բացուստ գրեմ յառաջագոյն
յանցուցելոցն և այլոցն ամենե-
ցուն. զի եթէ եկիցս դարձեալ՝
3 ոչ խնայեցից։ Եթէ զփորձ ինչ
խնդրէք զՔրիստոսի, որ ինեւս
ընդ ձեզ խօսի. որ հզօրացեալն
է 'ի ձեզ, և ոչ տկարացեալ։
4 Զի թէպէտ և խաչեցաւ 'ի
մերմէ տկարութենէ, այլ կեն-
դանի է զօրութեամբն Աստու-
ծոյ. և մեք թէպէտ և տրկա-
ռանայցեմք վասն նորա, այլ
կենդանի լիցուք ընդ նմա զօրու-
թեամբն Աստուծոյ։

5 Փորձեցէք զանձինս ձեր, եթէ
կայք 'ի նոյն հաւատս. քննեցէք
զանձինս, եթէ ոչ գիտէք զան-
ձինքս՝ զի Քրիստոս Յիսուս 'ի
ձեզ է. բայց եթէ անպիտանք
6 ինչ իցէք։ Այլ ակն ունիմ թէ
գիտիցէք. զի մեք ոչ եմք անպի-
7 տանք։ Այլ խնդրեմք զԱս-
տուծոյ՝ զի* մի՛ ինչ արասցէ
ձեզ չար՝՝. ոչ զի մեք ընտիրք
երևեսցուք, այլ զի դուք զբարիս
գործիցէք՝ և մեք † անպիտանք
8 իցեմք։ Զի ոչ կարեմք ինչ
հակառակ կալ ճշմարտութեանն.
այլ վերակացու եմք ճշմարտու-
9 թեանն։ Իսրախ եմք՝ յորժամ
մեք տկարանայցեմք, և դուք
զօրաւոր իցէք. զդոյն իսկ և
մօտ լինող երկրորդ անգամ. և
հիմա հեռուանց գրեմ այն
առաջուց մեղք գործածներին և
ամեն ուրիշներին. որ եթէ
դարձեալ գամ, չեմ խնայիլ։
Որովհետև ուզում էք փորձել 3
այն Քրիստոսին, որ ինձանով
խօսում է. որ ձեր միջումը տկար
չէ, այլ զօրաւոր է ձեզանում։
Քանզի թէ և խաչուեցաւ տկա- 4
րութիւնից, բայց կենդանի է
Աստուծոյ զօրութիւնովը. քան-
զի մենք էլ թէ և տկարանում
ենք նորա համար՝ բայց կեն-
դանի կ'լինինք նորա հետ Աս-
տուծոյ զօրութիւնովը. ձեզ հա-
մար։
Փորձեցէք ձեր անձնները, թէ 5
արդեօք հաւատքումն էք. քննե-
ցէք ձեր անձնները. կամ թէ
չէք գիտում ձեր անձնները՝ որ
Յիսուս Քրիստոս ձեզանում է.
բայց եթէ միայն անպիտան
լինիք։ Բայց յոյս ունիմ որ 6
գիտենաք, թէ մենք անպիտան
չենք։ Եւ աղօթում եմ դէպի 7
Աստուած որ չար բան չանէք.
ոչ թէ որ մենք ընտիր երևինք,
բայց որ դուք բարին գործէք,
և մենք անպիտանի պէս լինենք։
Քանզի մի բան չենք կա- 8
րող ճշմարտութեան դէմ. բայց
ճշմարտութեան համար։ Ու- 9
բախանում ենք, երբոր մենք
տկարանում ենք և դուք զօրա-

* 'Ի Յոյնն, մի՛ չար ինչ առնիցէք դուք
* 'Ի Յոյնն յՕ-ԵԼՍ-, իբրև

աղօթս առնեմք զձեր հաստա-
10 տութիւնդ։ Վասն այնորիկ
զայս 'ի հեռուստ գրեմ. զի մի՛
յորժամ եկիցս՝ սաստկութեամբ
վարեցայց ըստ իշխանութեանս,
զոր ետ ինձ Տէր 'ի շինել՝ և ոչ
'ի քակել։

11 Այսուհետև ե՛ղբարք, ուրա-
խ լերուք, հաստատո՛ւն կացէք՝
միսիթարեցարո՛ւք՝ միաբան լե-
ցուք՝ խաղաղութիւն արարէք.
և Աստուած խաղաղութեան
12 և սիրոյ եղիցի ընդ ձեզ։ Ող-
ջո՛յն տուք միմեանց 'ի համբոյր
սրբութեան. ողջոյն տան ձեզ
13 սուրբք ամենայն։ Շնորհք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, և սէրն Աստուծոյ, և
հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ
ընդ ձեզ ամենեսին. ամէն։

Աստ Կորնթացիս Երկրորդ գրեցաւ 'ի Փիլիպէից, 'ի յեռն Տեր-
պոսի ի Ղ-ոյ։

նում էք. որ հէնց դա էլ
աղօթքով խնդրում ենք, այ-
սինքն ձեր կատարելութիւնը։
Որա համար այս հեռուանց 10
գրում եմ. որ չլինի թէ իմ
գալու ժամանակ սաստկու-
թեամբ վարուիմ իմ իշխանու-
թեան չափովն, որ Տէրը տուաւ
ինձ շինելու և ոչ թէ քանդելու
համար։
Վերջապէս, եղբայրք, ու- 11
րախ եղէք, կատարեալ եղէք,
միսիթարուեցէք, միաբան եղէք,
և խաղաղութիւն արէք. և սիրոյ
և խաղաղութեան Աստուածը
ձեզ հետ լինի։ Իրար բարև 12
տուէք սուրբ համբուրով. բարև
են տալիս ձեզ բոլոր սրբերը։
Տէր Յիսուսի Քրիստոսի շը- 13
նորհքը, և Աստուծոյ սէրը, և
Սուրբ Հոգւոյ հաղորդութիւնը
ձեր ամենի հետ. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԳԱԼԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ ո՛չ ՚ի մարդկանէ և ո՛չ ՚ի ձեռն մարդոյ, այլ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի և Աստուծոյ Հօր՝
2 որ յարոյց զնա ՚ի մեռելոց. Եւ որ ընդ իս են եղբարք ամենեքին, եկեղեցեացդ Գաղատացւոց:
3 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ ՚ի Հօրէ և ՚ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ.
4 Որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ՝ ըստ կամացն Աստուծոյ և Հօրմերոյ. Որում
5 փառք յաւիտեանս յաւիտենից՝ ամէն:
6 Զարմանամ՝ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ որ կոչեացն զձեզ ՚ի շնորհսն Քրիստոսի՝ յայլ աւետարան.
7 Որ ո՛չ գոյ այլ. բայց եթէ իցեն ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ, և կամիցին

Պօղոս առաքեալ ոչ թէ մարդկանցից և ոչ թէ մարդու ձեռով, այլ Յիսուսի Քրիստոսի և Հայր Աստուծոյ ձեռովը, որ մեռելներից յարոյց նորան: Եւ ամեն եղբայրքն՝ որ ինձ հետ են. Գաղատիայի եկեղեցիներիդ: Շնորհք լինի ձեզ և խաղաղութիւն Հայր Աստուածանից և մեր Տէր Յիսուս Քրիստոսից, Որ իր անձը մեր մեղաց համար տուաւ, որ մեզ այս չար աշխարհքիցը փրկէ՝ Աստուծոյ և մեր Հօր կամքի պէս: Որին լինի փառք յաւիտեանս, յաւիտենից ամէն:

Զարմանում եմ որ այսպէս շուտով փոփոխվում էք ձեզ Քրիստոսի շնորհքի մէջ կանչողից դէպի ուրիշ աւետարան: Որ ուրիշը չկայ. միայն թէ կան ոմանք որ ձեզ խռովեցնում են, և կամենում են

շրջել զաւետարանն Քրիստոսի:
8 Այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի:
9 Որպէս յառաջագոյնն ասացաք՝ և արդ դարձեալ ասեմ, Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առիքն, նզովեալ լիցի:
10 Արդ՝ մարդկա՞ն հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ. կամ խնդրիցեմ մարդկա՞ն հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ո՛չ էի:

11 Յուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն, որ աւետարանեցաւ յինէն. զի ո՛չ է ըստ մարդոյ.
12 Քանզի և ո՛չ ես ՚ի մարդոյ առի, և ո՛չ ուսայ յումեքն. այլ ՚ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի:
13 Քանզի լուաւ իսկ է ձեր զիմ գնացն որ երբեմն ՚ի Հրէութեան անդ. զի անչափ հալածէի զեկեղեցին Աստուծոյ,
14 և աւար հարկանէի զնա: Եւ յառաջագէմ էի ՚ի Հրէութեան՝ քան զբազում հասակակիցս իմ, որ յազգին իմում էին. աւաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն:
15 Թեանցն: Այլ յորժամ կամեցաւ Աստուած՝ որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ, և կոչեաց ՚ի ձեռն շնորհացիւրոյ,
16 Յայտնել զՈրդին իւր ինձ. զի աւետարանեցից զնա ՚ի հեթանոսս.

Քրիստոսի Աւետարանը փոխել:
8 Բայց եթէ մենք էլ, կամ երկնքիցը մի հրեշտակ աւետարանէ ձեզ նորանից ուրիշ քան թէ որ մենք աւետարանեցինք ձեզ, նզովուած լինի: Ինչպէս առաջ ասացինք՝ և հիմա դարձեալ ասում եմ, եթէ մէկն աւետարանէ ձեզ նորանից ուրիշ քան որ դուք առիք, նզովուած
9
10 լինի: Քանզի հիմա մարդկանց եմ հաճեցնում, թէ Աստուծոյն, կամ ուզում եմ մարդկանց հաճոյ լինիլ. եթէ տակաւին մարդկանց հաճոյ լինէի, Քրիստոսի ծառայ չէի:

11 Իմացնում եմ ձեզ, եղբայրք, այն աւետարանն, որ ինձանից աւետարանուեցաւ, որ նա
12 մարդկօրէն չէ: Քանզի ես էլ ոչ մարդուց առի նորան, և ոչ էլ սովորեցի. այլ Յիսուսի Քրիստոսի յայտնութիւնովը:
13 Քանզի դուք իմ վարքը լսել էք, որ մի ժամանակ Հրէութեան մէջ էի. որ չափիցը դուրս հալածում էի Աստուծոյ եկեղեցին, և կործանում էի
14 նորան: Եւ Հրէութեան մէջ իմ հասակակիցների շատերից առաջադէմ էի իմ ազգի մէջ, աւելի նախանձաւոր լինելով իմ հայրենական աւանդութիւնների համար:
15 Բայց երբոր բարեհաճեց Աստուած, որ իմ մօր փորիցն ինձ որոշել և իր
16 շնորհքովն կանչել է, Որ իր Որդին ինձանով յայտնէ. որ

անողէն վաղվաղակի ոչինչ զգա-
17 ցուցի մարմնոյ և արեան, Եւ
ոչ ելի Յերուսաղէմ առ որ
յառաջագոյն քան զիս առա-
քեալքն էին. այլ չոգայ Ա՛ռա-
բիա, և դարձեալ դարձայ 'ի
18 Դամասկոս: Ապա յետ երից
ամաց ելի Յերուսաղէմ տեսա-
նել զՊետրոս, և եղէ առ նմա
19 աւուրս հնգետասան: Այլ
զոր յառաքելոց անտի ոչ տե-
սի, բայց միայն զՅակովբոս
20 զեղբայրն Տեառն: Այլ զոր
գրեմս առ ձեզ, ահաւասիկ
առաջի Աստուծոյ՝ զի ոչ ստեմ:
21 Ապա եկի 'ի կողմանս Ասորւոց
22 և Կիլիկեցւոց: Եւ յանծանօթս
էի երեսօք * եկեղեցեացն՝ որ 'ի
Թլփատութենէ անտի էին 'ի
23 Քրիստոս: Բայց զի լսելով
լուեալ էր, թէ Որ հալածէին
զմեզ յայնժամ, արդ աւետա-
րանէ զհաւատն զոր երբեմն
24 խախտէր. Եւ փառաւոր առ-
նէին ինձ զԱստուած:

ԳԼ. Բ

1 Ապա յետ ամաց չորեքտա-
սանից՝ միւսանգամ ելի Յերու-
սաղէմ ընդ Բառնաբայ. առ-
2 եալ ընդ իս և զՏիտոս: Եւ ելի
նորան հեթանոսների միջումն
աւետարանեմ. այն ժամանակ
իսկոյն մարմնոյ և արիւնի հետ
խորհուրդ չարի. և ոչ էլ 17
գնացի Երուսաղէմ նորանց մօտ,
որ ինձանից առաջ առաքեալներ
էին. այլ գնացի Ա՛ռաբիա, և
կրկին դարձայ Դամասկոս:
Այնուհետև երեք տարուց յե- 18
տոյ գնացի Երուսաղէմ, Պետ-
րոսին տեսնելու. և տասնու-
հինգ օր նորա մօտ եղայ: Եւ 19
առաքեալներից մի ուրիշին չըտե-
սայ. բայց միայն Տիրոջ եղբայր՝
Յակոբին: Բայց ինչ որ ձեզ 20
գրում եմ, Ահա Աստուծոյ
առջև որ սուտ չեմ ասում:
Յետոյ եկայ Միւրիայի և Կիլի- 21
կիայի կողմերը: Եւ երեսով 22
անծանօթ էի Հրէաստանի եկե-
ղեցիներին՝ որ Քրիստոսումն
էին: Բայց միայն լսել էին, 23
թէ Այս որ մի ժամանակ մեզ
հալածում էր, հիմա այն հա-
ւատքն է աւետարանում որ ա-
ռաջ կործանում էր: Եւ ինձա- 24
նով փառաւորում էին Աս-
տուծոյն:

ԳԼ. Բ

1 Ապա տասն ու չորս տարուց
յետոյ դարձեալ գնացի Երու-
սաղէմ, Բառնաբասի հետ, և
Տիտոսին էլ ինձ հետ առի:

* 'Ի Յոյն, եկեղեցեացն Հրէաստանի

ըստ յայտնութեանն. և զգա-
ցուցի նոցա զաւետարանն՝ զոր
քարոզէի 'ի հեթանոսս, ա-
ռանձինն այնոցիկ՝ որ կար-
ծեալքն էին, գուցէ ընդունայն
ինչ ընթացեալ լիցեմ, կամ
3 ընթանայցեմ: Այլ և ոչ Տիտոս
որ ընդ իս 'ի Հեթանոսաց էր,
4 բռնադատեցաւ թլփատիլ: Այլ
վասն սպրդողաց սուտ եղբարցն,
որք սպրդեցին մտանել գիտել
ազատութիւնն մեր՝ զոր ունիմք
'ի Քրիստոս Յիսուս. զի զմեզ
5 ծառայեցուսցեն: Որոց և ոչ
առժամանակ մի անսացաք հնա-
զանդութեանն. զի ճշմարտու-
թիւն աւետարանին հաստա-
6 տեսցի առ ձեզ: Բայց ըստկար-
ծելոցն եթէ իցեն ինչ, որպիսի
որք երբեմն էին, չէ ինչ ինձ
փոյթ. քանզի Աստուած ակն
մարդկան ոչ առնու. զի ինձ
կարծեալքն այնպիսի ինչ ոչ
7 զգացուցին. Այլ զնորին հա-
կառակն. իբրև տեսին թէ հա-
ւատացեալ է ինձ աւետարանն
անթլփատութեան, որպէս Պետ-
8 րոսի թլփատութեան. Զի որ
յաջողեացն Պետրոսի յառաքե-
լութիւն թլփատութեանն, յա-
ջողեաց և ինձ 'ի հեթանոսս.
9 Իբրև գիտացին զշնորհսն որ
տուեալ էին ինձ, Յակովբոս
և Կեփաս և Յովհաննէս, որ
կարծեալ սիւնքն էին, ձեռն
ետուն հաւանութեան ինձ և
Բառնաբայ. զի մեք 'ի հեթա-
նոսս, և նոքա 'ի թլփատու-
Եւ գնացի յայտնութիւնով. և 2
նորանց իմացրի այն աւետարանն՝
որ քարոզում եմ հեթանոսների
մէջ, Ա՛մանաւորապէս նորանց՝
որ ՀԵԴ կարծուած էին. որ
չլինի թէ զուր տեղը վազում
կամ վազած լինիմ: Բայց Տի- 3
տոս էլ որ ինձ հետ էր՝
Հելլենացի լինելով, չըբռնա-
դատուեցաւ թլփատուելու: Եւ 4
այն ներս պրծած սուտ եղբայր-
ների պատճառով, որ ներս
պրծան մեր ազատութիւնը լըր-
տեսելու համար, որ Քրիստոս
Յիսուսումն ունինք, որ մեզ
ծառայեցնեն: Որոնց մի ժամ 5
էլ ականջ չդրինք՝ հնազանդ
լինելու համար, որ աւետա-
րանի. ճշմարտութիւնն ձեզա-
նում հաստատ մնայ: Բայց այն 6
ՀԵԴ կարծուածների համար, թէ
մի բան լինին, (թէ ինչ էլ մի
ժամանակ, նա ես հոգս չեմ
անում, Աստուած մարդկանց
երես չէ տեսնում.) քանզի այն
ՀԵԴ կարծուածներն այնպիսի
բան չիմացրին ինձ: Բայց ընդ- 7
հակառակն, երբոր տեսան թէ
անթլփատութեան աւետարանն
ինձ հաւատացուած է, ինչպէս
Պետրոսին թլփատութեան ա-
ռաքելութիւնը: (Զանգի նա որ Պետ- 8
րոսին յաջողեց թլփատութեան
առաքելութիւնում, ինձ էլ յա-
ջողեց հեթանոսների մէջ:) Եւ 9
երբոր իմացան այն շնորհքը որ
ինձ տրուած էր, Յակոբոսը և
Կեփասը և Յոհաննէսը, որ

10 թեանն. Բայց միայն զի զաղ-
քատն յիշեսցուք. զոր և ես
փութացայ զնոյն առնել:

11 Այլ յորժամ եկն Կեփաս
Անտիոք, ընդդէմ դարձայ
նորա. քանզի գոդ իբրև ըստգ-
12 տեալ լիմն էր: Քանզի մինչև
եկեալ էին ոմանք առ ի Յա-
կովբայ, ընդ հեթանոսս ուտէր
անխտիր. իսկ իբրև եկին, զա-
տանէր և որոշէր զանձն, եր-
կուցեալ յայնցանէ որ ի թըլ-
13 փատութենէ անտի էին: Եւ
կեղծաւորեցան ընդ նմա և այլ
իւրայքն, մինչև Բառնաբաս
անգամ խոնարհեցաւ ի նոցա
14 կեղծաւորութիւնն: Այլ իբրև
տեսի թէ ոչ ուղիղ գնան ի
ճշմարտութիւն աւետարանին,
ասեմ ցԿեփաս առաջի ամենե-
ցուն. Եթէ դու որ իւրայդ
ես՝ հեթանոսաբար և ոչ
իւրաբար կեաս, զիարդ ստի-
պես հեթանոսաց լինել իւրա-
15 ին: Օ՛յ մեք բուն իւրայք
եմք, և ոչ ի հեթանոսաց
16 մեղաւորք: Օ՛այս գիտեմք՝ ե-
թէ ոչ արդարանայ մարդ ի
գործոց օրինաց, եթէ ոչ ի
հաւատոցն Յիսուսի Քրիստոսի.
և մեք ի Քրիստոս Յիսուս
հաւատացաք, զի արդարասցուք
ի հաւատոցն Քրիստոսի, և ոչ
սիւներ էին կարծուած, ինձ և
Բառնաբասին աջ ձեռքը տուին
հաղորդակցութեան համար. որ
մենք հեթանոսների մէջ լինինք,
և նորան թլփատութեան մէջ:
Բայց միայն որ աղքատները 10
յիշենք. որ ես էլ ջանք արի
նոյնն անելու:

Բայց երբ որ Պետրոսը եկաւ 11
Անտիոք, ես նորան հակառակ
կացայ, որովհետև մեղադրելի
էր: Վասնզի մի քանի մարդիկ 12
գեռ չեկած Յակոբիցը, անխը-
տիր ուտում էր հեթանոսների
հետ. բայց երբոր եկան, ետ էր
քաշվում և իր անձը ջոկում,
վախենալով նորանցից որ թըլ-
փատութիւնից էին: Եւ նորա 13
հետ ուրիշ իւրէաներն էլ
կեղծաւորութիւն արին. մինչև
որ Բառնաբասն էլ ծուռեցաւ
նորանց կեղծաւորութիւնովը:
Բայց երբոր տեսայ, որ աւե- 14
տարանի ճշմարտութեան համե-
մատ ուղիղ չեն գնում, ամենքի
առջև ասացի Պետրոսին. եթէ
դու, իւրայ լինելովդ, հե-
թանոսի պէս ես վարվում և
ոչ թէ իւրայի պէս, էլ
ինչու՞ ես բռնադատում հեթա-
նոսներին որ իւրայի պէս վար-
ուին: Մենք որ բուն իւրա- 15
ներ ենք, և ոչ թէ հեթանոս-
ների միջից մեղաւորներ. Գի- 16
տենք որ մարդ օրէնքի գործքե-
րիցը՝ չէ արդարանում, բայց
միայն Յիսուսի Քրիստոսի հա-
ւատքիցը. և մենք Յիսուսի

Քրիստոսին հաւատացինք, որ
Քրիստոսի հաւատքիցն արդա-
րանանք, և ոչ թէ օրէնքի
գործերիցը. որովհետև օրէնքի
գործքերիցն ոչ մի մարմին չի
արդարանալ: Իսկ եթէ մենք՝ 17
որ ուզում ենք Քրիստոսով
արդարանալ, ինքներս էլ մեղա-
ւոր գտնուինք. ուրեմն Քրիս-
տոս մեղքի պաշտօնեայ է. քաւ
լիցի: Քանզի՝ եթէ այն որ 18
քանդեցի, նորան կրկին շինեմ,
ապա ես ինքս իմ անձը մեղաւոր
եմ երևեցնում: Քանզի ես 19
օրէնքովն օրէնքին մեռայ, որ
ապրիմ Աստուծոյն. ես Քրիս-
տոսի հետ խաչուած եմ: Եւ 20
կենդանի եմ, ոչ թէ այլ ես
ես, այլ Քրիստոս է կենդանի
ինձանում. և ինչ որ հիմա
կենդանի եմ մարմնով Աստու-
ծոյ Որդոյ հաւատքովն եմ
կենդանի. որ ինձ սիրեց և իր
անձը ինձ համար մատնեց:
Եւ Աստուծոյ շնորհքը չեմ 21
անարգում, քանզի եթէ արդա-
րութիւնն օրէնքիցն էր, ուրեմն
Քրիստոսը զուր տեղը մեռաւ:

ԳԼ. Գ.

Ով անմիտ Գաղատացիք, ո՞վ 1
խակարդեց ձեզ որ ճշմարտու-

ի գործոց օրինաց. զի ի գոր-
ծոց օրինաց ոչ արդարասցի ա-
17 մենայն մարմին: Իսկ եթէ մինչ
խնդրելովք արդարանալ ի Քրի-
ստոս, և գտանիցիմք մեղա-
ւորք. ապա ուրեմն՝ Քրիստոս
մեղաց պաշտօնեայ եղև. քաւ
18 լիցի: Օ՛ի եթէ զոր քակեցի՝
զնոյն միւսանգամ շինիցեմ. ապա
յանցաւոր զանձն իմ ես ինձէն
19 երևեցուցանեմ: Օ՛ի ես օրի-
նօք՝ օրինացն մեռայ, զի Աս-
տուծոյ կեցից, և ընդ Քրիս-
20 տոսի ի խաչ ելլից: Եւ կեն-
դանի եմ այսուհետև, ոչ ես՝
այլ կենդանի է յիս Քրիստոս:

21 Այլ որ այժմս կեամ մարմ-
նով, հաւատովք Որդւոյն Աս-
տուծոյ կեամ. որ սիրեացն
զիս, և մատնեաց զանձն վասն
իմ. Եւ ես ոչ անարգեմ զշը-
նորհսն Աստուծոյ. զի եթէ
յօրինաց անտի էր արդարու-
թիւն, ապա Քրիստոս զուր
մեռաւ:

ԳԼ. Գ.

Ո՛վ անմիտ Գաղատացիք, ո՞վ
խակարդեց ձեզ որ ճշմարտու-

զանդել ճշմարտութեան)։ որոց
գրեթէ առաջի աչաց Քրիստոս
Յիսուս գրեցաւ ի խաչ ելեալ։
2 Այս միայն կամիմ ուսանել
ի ձէնջ. ի գործոց օրինաց
զՀոգին ընկալարուք՝ եթէ ի
3 լսոյ հաւատոց։ Այդչափ ան-
միտ էք. սկսեալ Հոգւով՝ և
4 արդ մարմնով վախճանիք։ Եւ
այնչափ անցք անցին ընդ ձեզ
5 զուր՝ եթէ իցէ զուր։ Իսկ արդ
որ բաշխեաց ի ձեզ զՀոգին՝
և յաջողեաց ի ձեզ զզօրու-
թիւնս. ի գործոց օրինաց է՝
6 եթէ ի լսոյ հաւատոց։ Որպէս
Աբրահամ հաւատաց Աստ-
ուած՝ և համարեցաւ նմա յար-
7 դարութիւն։ Գիտիցէք ար-
դեօք. զի որք ի հաւատոց ան-
տի են, նոքա են որդիք Աբրա-
8 համու։ Յառաջագոյն գիտէր
գիր, եթէ ի հաւատոց անտի
արդարացուցանէ Աստուած զհե-
թանոսս, յառաջագոյն խոստա-
ցաւ Աբրահամու. թէ Ի քեզ
օրհնեսցին ամենայն ազգք։
9 Այսուհետև որք ի հաւատոց
անտի են՝ օրհնին ընդ հաւա-
10 տացեալն Աբրահամու։ Զի
որ միանգամ ի գործոց օրինացն
են, ընդ անիծիւք են. քանզի
գրեալ է. թէ Անիծեալ ամե-
նայն մարդ՝ որ ոչ կացցէ յամե-
11 նայն գրեալսն ի գիրս օրինաց՝
առնել զամենայն։ Զի օրինաւքն ոչ
ոք արդարանայ առաջի Աստու-
ծոյ, այն յայտ իսկ է. զի Արդարն,
ասէ, ի հաւատոց կեցցէ։

թեանը չհնազանդիք. որոնց
համար աչքերի առջև նկարա-
գրուեցաւ Յիսուս Քրիստոսը
խաչուած ձեր մէջ։ Այս միայն 2
կամենում եմ սովորել ձեզանից.
օրէնքի գործքերովն ընդունեցիք
Հոգին՝ թէ հաւատքի լսելիքը։
Այդքան անմիտ էք. Հոգով 3
սկսեցիք, և հիմա մարմնով էք
վերջանում։ Այնքան նեղու- 4
թիւնները զուր տեղը կրեցիք.
թէ որ զուր էլ լինի։ Արդ ձեզ 5
Հոգին բաժանողը և ձեր միջումը
զօրութիւններ գործողը, օրէնքի
գործքերովն է թէ հաւատքի լսե-
լիքը։ Ինչպէս Աբրահամ հա- 6
ւատաց Աստուծոյն, և այն նորա
համար արդարութիւն համար-
ուեցաւ։ Ուրեմն գիտացէք. 7
թէ նորանք որ հաւատքիցն են,
նորանք են Աբրահամի որդիք։
Գիրքն էլ առաջուց գիտենա- 8
լով, որ Աստուած հաւատքիցն
է արդարացնում հեթանոսնե-
րին՝ առաջուց Աբրահամին խոս-
տացաւ, թէ Քեզանում պիտի
օրհնուին բոլոր ազգերը։ Ու- 9
րեմն նորանք որ հաւատքից են,
օրհնվում են հաւատացեալ
Աբրահամի հետ։ Քանզի ո- 10
րոնք որ օրէնքի գործքերովն են,
անէծքի տակ են. քանզի գրուած
է. Անիծեալ լինի ամեն
մարդ, որ չէ կենում օրէնքի
գրքի մէջի բոլոր գրվածնե-
րումը, որ ամենն անէ։ Եւ 11
թէ օրէնքովն ոչ ով չէ արդա-
րանում Աստուծոյ առջև, պա-

12 Բայց օրէնքն չեն ի հաւա-
տոց, այլ որ արասցէ զայն՝
13 կեցցէ ի նոսին։ Քրիստոս գըն-
եաց զմեզ յանիծից օրինացն,
եղեալ վասն մեր անէծք. զի
գրեալ է, թէ Անիծեալ ամե-
նայն, որ կախեալ կայցէ զփայ-
14 տէ. Զի ի հեթանոսս օրհնու-
թիւն Աբրահամու եղիցի ի
Քրիստոս Յիսուս. զի մեք
զաւետիս Հոգւոյն Սրբոյ առ-
15 ցուք հաւատովք։ Ըստ մարդ-
կութեան ասեմ, եղբարք. Ա-
պաքէն զմարդկան հաստատեալ
կտակ ոչոք կարէ անարգել, և
ոչ այլ հրաման ի վերայ այնր
16 տալ։ Իսկ Աբրահամու խոս-
տացան աւետիքն և զաւակի
նորա. և ոչ ասէ. Զաւակաց՝
իբրև զբազմաց, այլ իբրև զմիոյ,
թէ՝ Եւ զաւակի քում, որ է
17 Քրիստոս։ Բայց զայս ասեմ,
զկտակն յառաջագոյն հաստատ-
եալ Աստուծոյ ի Քրիստոս,
օրէնքն որ յետ չորեքհարիւր և
երեսուն ամի եդան, ոչ կարեն
խափանել առ ի խափանելոյ
18 զաւետիսն։ Եթէ յօրինաց ան-
տի է ժառանգութիւնն, ապա
ոչ ևս յաւետեացն. բայց Աբ-
րահամու աւետեաւք շնորհեաց
19 Աստուած։ Իսկ զի՞նչ իցեն
օրէնքն. յանցուածոց վասն յա-
ւելան, մինչև եկեսցէ զաւակն,
որում խոստացեալն էր կարգ-
եալ հրեշտակօք ի ձեռն միջ-

յայտնի է. որովհետև Աբրդարը
հաւատքիցը կ'ապրի։
Բայց օրէնքը հաւատքիցը 12
չէ, այլ Նորանց կատարող
մարդը կ'ապրի նորանով։ Քրիստոս 13
գնեց մեզ օրէնքի անէծ-
քիցը մեզ համար անէծք լինե-
լով. (քանզի գրուած է. Ընդ
Անիծեալ լինի ամեն փայտից
կախուածը։) Որ Աբրահամի 14
օրհնութիւնը հեթանոսների
մէջ լինի Քրիստոս Յիսուսով,
որ մենք Սուրբ Հոգոյ աւե-
տիքն ընդունինք հաւատքով։
Ասարգկօրէն եմ ասում, եղ- 15
բայրք. ապաքէն մի մարդու
հաստատուած կտակը ոչ ով չէ
անարգում. և ոչ էլ նորա վե-
րայ ուրիշ հրաման աւելաց-
նում։ Եւ Աբրահամին խոս- 16
տացուեցան այն աւետիքները,
և նորա զաւակին. չէ ասում,
Եւ զաւակներին՝ ինչպէս շատե-
րին, այլ ինչպէս մէկին. Եւ քո
զաւակին, որ է Քրիստոսը։
Բայց սա եմ ասում. Այն 17
կտակին, որ առաջուց Աստուա-
ծանից հաստատուած էր Քը-
րիստոսի վերայ, չորս հարիւր
և երեսուն տարուց յետոյ եղած
օրէնքը չի քանդիլ որ աւե-
տիքը խափանուի։ Քանզի և- 18
թէ ժառանգութիւնն օրէնքից
լինէր, ապա աւետիքից չէր.
բայց Աստուած աւետիքով չը-
նորհեց Աբրահամին։ Արդ 19
օրէնքն ի՞նչ է. նա յանցանք-
ների պատճառով աւելացաւ.

20 նորդի։ Իսկ միջնորդ միոյ ու-
րուք ոչ է՝ բայց Աստուած մի-
21 է։ Իսկ արդ՝ օրէնքն հակա-
ռակ ինչ իցեն աւետեացն Ա-
ստուծոյ. քաւ լիցի. զի եթէ
տուեալ էին օրէնքն՝ որ կարող
էին կենդանի առնել, ապա հաս-
տատ յօրինաց անտի էր ար-
22 դարութիւն։ Այլ փակեցին
գիրք զամենեսին ընդ մեղաւ, զի
աւետիքն 'ի հաւատոց անտի
Յիսուսի Քրիստոսի տացին հա-
23 ւատացելոց։ Մինչև հաւատքն
եկեալ էին՝ ընդ օրինաւքն փա-
կեալ պահէաք 'ի հանդերձեալ
հաւատսն, որ յայտնելոց էին
24 'ի մեզ։ Ապա օրէնքն դաստիա-
րակ եղեն մեզ 'ի Քրիստոս Յի-
սուս, զի 'ի հաւատոյն արդա-
25 րասցուք։ Այլ իբրև եկին
հաւատքն, ոչ ևս ընդ դաստիա-
26 րակաւ եմք։ Քանզի ամենե-
քեան որդիք Աստուծոյ էք՝ հաւա-
տովք 'ի Յիսուս Քրիստոս։
27 Որք միանգամ 'ի Քրիստոս
մկրտեցարուք, զՔրիստոս զգե-
28 ցեալ էք. չկայ խիր, Ո՛չ
Հրէի և ոչ Հեթանոսի, ոչ
ծառայի և ոչ ազատի, ոչ ա-
րուի և ոչ իգի. զի ամենեքեան
դուք մի էք 'ի Քրիստոս Յի-
29 սուս։ Ապա եթէ դուք Քրի-
ստոսի էք, ուրեմն Աբրահա-
մու զաւակ էք՝ ըստ աւետեացն՝
ժառանգք։

մինչև որ գայ այն զաւակը,
որին եղաւ խոստմունքը հրեշ-
տակներով կարգուած միջնորդի
ձեռամբ։ Բայց միջնորդը մէկի 20
չէ, բայց Աստուած մէկ է։
Ուրեմն օրէնքն Աստուծոյ աւե- 21
տիքներին հակառակ է. քաւ
լիցի. քանզի եթէ օրէնք տրը-
ուած լինէր որ կարող լինէր
կենդանի անել, ապա իրաւի
օրէնքից կ'լինէր արդարութիւ-
նը։ Բայց գիրքը փակեց ա- 22
մենքը մեղքի ներքև, որ աւե-
տիքը Յիսուսի Քրիստոսի հա-
ւատքիցը տրուի հաւատացողնե-
ր։ Դեռ որ հաւատքը չէր 23
եկած օրէնքի ներքև փակուած
պահվում էինք այն հաւատքի
համար, որ պիտք էր յայտ-
նուէր։ Ուրեմն օրէնքը մեզ 24
համար դաստիարակ եղաւ դէպի
Յիսուս Քրիստոս, որ հաւատ-
քից արդարանանք։ Բայց երբ 25
որ հաւատքն եկաւ, այլ ևս
դաստիարակի տակ չենք։ Քան- 26
զի ամենքդ Աստուծոյ որդիք էք
Քրիստոս Յիսուսի հաւատքովը։
Քանզի ամենքդ՝ որ Քրիստո- 27
սումը մկրտուեցաք, Քրիստո- 28
սին հագած էք. Այլ ևս ոչ
Հրէայ կայ և ոչ Յոյն, ոչ
ծառայ կայ և ոչ ազատ, ոչ
արու կայ և ոչ էգ. քանզի
դուք ամենքդ մէկ էք Քրիստոս
Յիսուսումը։ Ապա եթէ դուք 29
Քրիստոսինն էք, ուրեմն Աբ-
րահամի զաւակ էք՝ և աւետիքի
պէս ժառանգներ։

ԳԼ. Դ

1 Այս ասեմ. Յորքան ժա-
մանակս ժառանգն տղայ է՝ չէ
ինչ առաւել քան զծառայն,
թէպէտ և տէր իցէ ամենեցուն.
2 Այլ ընդ հաղարապետօք է և
ընդ գաւառապետօք, մինչև 'ի
3 ժամանակակէտ հօրն։ Նոյն-
պէս և մեք մինչ տղայքն էաք
ընդ տարերքք աշխարհիս 'ի ծա-
4 ռայութեան կայաք։ Այլ իբրև
եկն լրումն ժամանակին, առա-
քեաց Աստուած զՈրդին իւր,
որ եղև 'ի կնոջէ, և եմուտ ընդ
5 օրինօք. Զի զնոսա որ ընդ
օրինօքն իցեն, գնեսցէ. զի մեք
6 զորդեգրութիւն ընկալցուք։ Եւ
զի էք դուք որդիք, առաքեաց
Աստուած զՀոգի Որդւոյն իւրոյ
'ի սիրտս* մեր՝ որ աղաղակէ
7 Աբբա՝ Հայր։ Այսուհետև
չես ծառայ, այլ որդի. եթէ
որդի՝ և ժառանգ Աստուծոյ։
8 Այլ յայնժամ մինչ ոչն գի-
տէիք զԱստուած՝ ծառայէիք
այնոցիկ որ ոչն էին 'ի բնէ Ա-
9 տուածք։ Այլ այժմիկ ծանե-
րուք զԱստուած, մանաւանդ
թէ ծանուցայք իսկ յԱստու-
ծոյ, զիա՞րդ դառնայք միւսան-
գամ անդրէն 'ի տարերսն՝ 'ի
տկարս և յաղքատս, որոց միւս-
անգամ զանձինս ծառայեցու-
10 ցանել կամիք։ Օրաւուրս խըտ-
րէք՝ և զամիսս և զժամանակս և

* 'Ի Յոյն, ձեր

ԳԼ. Դ

Բայց ասում եմ. քանի ժա- 1
մանակ որ ժառանգը տղայ է՝
ծառայից ոչինչ տարբերութիւն
չունի, թէ և ամեն բանի տէր
է։ Բայց վերակացուների և 2
տնտեսների ներքև է մինչև
հօրը որոշած ժամանակը։ Այն- 3
պէս էլ մենք, քանի որ տղայ
էինք՝ աշխարհքի սկզբունքների
ներքև ծառայութեան մէջ էինք։
Բայց երբոր ժամանակի լրումն 4
եկաւ, Աստուած ուղարկեց իր
Որդին՝ կնկանից ծնուած՝ և
օրէնքի ներքև եղած, Որ օրէն- 5
քի տակ լինողներին փրկէ, որ
որդեգրութիւնն ընդունինք։ Եւ 6
որովհետև դուք որդիք էք,
Աստուած իր Որդոյ Հոգին
ուղարկեց ձեր սրտերի մէջ, որ
աղաղակում է Աբբա Հայր։
Ուրեմն այլ ևս ծառայ չես՝ 7
այլ որդի. և եթէ որդի՝ Ա-
ստուծոյ ժառանգ էլ Քրիստո-
սով։ Բայց այն ժամանակ որ 8
Աստուծոյն չէիք գիտում, ծա-
ռայում էիք նորանց որ 'ի բնէ
աստուածներ չեն։ Բայց հիմա 9
որ ճանաչեցիք Աստուծոյն, մա-
նաւանդ թէ Աստուածանից ճա-
նաչուեցաք, ի՞նչպէս էք կրկին
յետ դառնում դէպի այն տկար
և աղքատ սկզբունքներն, որոնց
կամենում էք դարձեալ ծառա-
յել։ Օրեր էք զանազանում 10

11 զտարիս։ Երկնչիմ 'ի ձէնջ, դուցէ թէ 'ի զուր ինչ վաստակեցի 'ի ձեզ։

12 Եղերա՛ւք իրրև զիս, քանզի և ես իրրև զձեզդ էի։ Ե՛ղբարք աղաչեմ զձեզ, չէք ինչ ձեր
13 մեղուցեալ առ իս։ Գիտէք դուք՝ զի տկարութեամբ մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն. և զփորձանսն որ 'ի մարմնի իմում էին, Ո՛չ անարգեցէք՝ և ո՛չ անդոսնեցէք։ Այլ
14 իրրև զՀրեշտակ Աստուծոյ ընկալարուք զիս՝ իրրև զՔրիստոս Յիսուս։ Իսկ արդ՝ ո՞ւր է երանութիւնն ձեր. վկայեմ
15 ձեզ՝ եթէ հնար ինչ էր՝ զաչս ձեր հանէիք և տայիք ինձ։
16 Արդ՝ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ,
17 զի զստոյգն խօսեցայ։ Այլ նախանձեցուցանեն զձեզ ո՛չ 'ի բարի. և արդելուլ կամին զձեզ՝ զի նոցա նախանձաւորք լինիցիք։
18 Բայց լաւ է նախանձաւոր լինել 'ի բարիս յամենայն ժամ, և ո՛չ միայն յորժամ 'ի ձերում միջի իցեմ։

19 Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչև նկա-
20 րեսցի Քրիստոս 'ի ձեզ։ Կամէի այժմ՝ գալ առ ձեզ՝ և փոխել զբարբառս իմ. զի տարակուսեալ եմ ես վասն ձեր։

21 Ասէք ինչ ինձ՝ որ ընդ օրինօքն կամիք լինել, չիցէ՞ և ամիսներ և ժամանակներ և տարիներ։ Ասեմ եմ ձեզ՝ որ մի դուցէ զուր տեղն աշխատեցի ձեր միջումը։

Ինձ նման եղէք, որովհետև ես էլ ձեզ նման եմ. եղբայրք, աղաչում եմ ձեզ, դուք ինձ ոչ մի վնաս չէք տուել։ Եւ գիտէք որ մարմնոյ տկարութիւնով աւետարանեցի ձեզ առաջի անգամն. Եւ իմ փորձանքն՝ որ իմ մարմնումը էր, չ'անարգեցիք և չարհամարհեցիք, այլ ինչպէս Աստուծոյ հրեշտակ ընդունեցիք ինձ՝ ինչպէս Քրիստոս Յիսուսին։ Արդ ի՞նչ էր այն ձեր երանութիւնը. քանզի վկայում եմ ձեզ համար, որ եթէ կարելի էր՝ ձեր աչքերն էլ կըհանէիք և ինձ կ'տայիք։ Ուրեմն թշնամի՞ եղայ ձեզ՝ ձեզ հետ ճշմարիտը խօսելով։ Կրքանձով են ձեզ համար, ոչ թէ 'ի բարին. այլ կամենում են արգելել մեզ որ նորանց համար նախանձաւոր լինիք։ Սակայն լաւ է բարի բանում ամեն ժամանակ նախանձաւոր լինիլ, և ոչ թէ միայն երբ որ ձեզ մօտ լինիմ։

Իմ որդեակներ՝, որ ձեզ կրկին ծնում եմ՝ ցաւով, մինչև որ Քրիստոս կերպարանուի ձեզանում։ Կամենում էի որ հիմա ձեզ մօտ գամ և ձայնս փոխեմ. որովհետև տարակուսած եմ ձեզ համար։

Ասացէք ինձ դո՛ւք, որ կամենում էք օրէնքի տակ լինիլ

22 ընթերցեալ ձեր զօրէնս։ Օ՞չ գրեալ է՝ թէ Աբրահամու երկու որդիք էին, մի յաղախնոյ
23 անտի, և մի յազատէն։ Այլ որ յաղախնոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, և որ յազատէն՝ ըստ
24 աւետեաց։ Որ է առակ օրինակի։ Օ՞չ այս ինքն են երկու կտակարանք, մի՝ 'ի լեռնէ Սինայ 'ի ծառայութիւն ծնեալ՝ որ է
25 Հագար։ Քանզի Հագարն՝ լեառն Սինայ է Արաբիա, հաւասար է այսմ Երուսաղէմի. զի ծառայէ որդւովք իւրովք
26 հանդերձ։ Այլ վերին Երուսաղէմ ազատ է՝ որ է մայր մեր
27 ամենեցուն։ Օ՞չ գրեալ է. Ուրա՛խ լեր ամուլ՝ որ ոչ ծնանէիր, գոչեա՛ և աղաղակեա՛ որ ոչդ երկնէիր. զի բազում են որդիք սկնդկիդ առաւել քան
28 զարամբւոյն։ Այլ մեք եղբարք՝ ըստ Սահակայ աւետեացն որ-
29 դիք եմք։ Այլ որպէս յայնժամ, որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հոգւոյն, նոյնպէս և այժմ։
30 Այլ զի՞նչ ասէ գիր. Ի բա՛ց հան զաղախնդ և զորդի դորա, զի մի՞ ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն ազատի։
31 Վասն որոյ եղբարք՝ չեմք որդիք աղախնոյն, այլ ազատին. ազատութեամբն, որով Քրիստոս զմեզ ազատեցոյց։

22 Քանզի գրուած է, թէ Աբրահամու երկու որդի ունէր, մին աղախնիցը, և միւսն ազատիցը։ Բայց նա որ աղախնիցն էր՝ մարմնոյ կողմանէ էր ծնուած, և նա որ ազատիցն՝ աւետիքի պէս։ Այս
24 բաները այլաբանօրէն են. քանզի նորանք երկու Կտակարաններն են, մէկը Սինայ լեռնիցը ծառայութեան մէջ ծնուած՝ որ
25 է Հագար։ Քանզի Հագարը Սինա լեռն է՝ Արաբիայումն, որ հաւասար է այժմեան Երուսաղէմին, որ իր զաւակներովը
26 հանդերձ ծառայ է։ Բայց վերին Երուսաղէմն ազատ է, որ
27 մեր ամենքիս մայրն է։ Քանզի գրուած է ԸՆ, Ցնծա, ով ամուլ՝ որ չէիր ծնում, գոչիր և աղաղակիր դու՝ որ ծնելու ցաւ չէիր քաշում. քանզի աւելի շատ են թողուածի որդիքը քան թէ մարդ ունեցողի։
28 Իսկ մենք, եղբայրք, Իսահակի պէս աւետիքի որդիք ենք։
29 Բայց ինչպէս որ այն ժամանակ մարմնոյ կողմանէ ծնուածը հալածում էր նորան՝ որ հոգու կողմանէ էր, այնպէս էլ հիմա։
30 Բայց գիրքն ի՞նչ է ասում. Դուրս հանիր աղախնին և նորա որդուն. քանզի աղախնի որդին ժառանգութիւն չպիտի ստանայ ազատի որդու հետ։
31 Սորա համար, եղբայրք, աղախնի որդիք չենք, այլ ազատի։

ԳԼ. Ե

1 Պինդ կացէք այսուհետև, և մի միւսանգամ ընդ լծով ծառայութեան մտանէք:

2 Ահաւասիկ ես Պօղոս ասեմ ձեզ. Օ՛ի եթէ թլփատիք, Քրիստոս ինչ ձեզ ո՛չ օգնէ:
3 Վկայեմ ամենայն մարդոյ՝ որ թլփատիցի, թէ պարտական է զամենայն օրէնսն կատարել:
4 Խափանեալ էք ՚ի Քրիստոսէ՝ որ օրինօքն արդարանայք. և անկեալ էք ՚ի շնորհաց անտի:
5 Օ՛ի մեք Հոգւոյն՝ ՚ի հաւատոց յուսոյն արդարութեան ակն
6 ունիմք: Օ՛ի ՚ի Քրիստոս Յիսուս ո՛չ թլփատութիւն ինչ կարող է՝ և ո՛չ անթլփատութիւն. այլ հաւատք սիրով
7 յաջողեալք: Բարւոք ընթանայիք, ո՞ կասեցոյց զձեզ ճըշ-
8 մարտութեանն չհաւանել: Օ՛ի այն հրապոյրք՝ ո՛չ յայնմանէ
9 են որ կոչեացն զձեզ: Փոքր մի խմոր զամենայն զանգուածն
10 խմորէ: Եւ այլ ես յուսացեալ եմ ՚ի ձեզ Տէրամբ՝ թէ ո՛չ այլազգ ինչ խորհիցիք. և որ խռովեցուցանէ զձեզ՝ կրեսցէ
11 դատաստան՝ ո՛ր որ և իցէ: Եւ այլ ես եղբարք՝ եթէ թլփատութիւն քարոզէի՝ ընդէ՞ր տակաւին հալածիմ. ապա ուրեմն խափանեալ իցէ գայթագղութիւն խաչին:
12 Երանի՛ թէ մնտակտուր իսկ լինէին՝ որ զձեզն խռովեցուցանեն:

ԳԼ. Ե

1 Արդ այն ազատութիւնովն որ Քրիստոս մեզ ազատեց, հաստատ կացէք և դարձեալ ծառայութեան լծի տակ մի մտնէք:
2 Ահա ես Պօղոս ասում եմ ձեզ. որ եթէ թլփատուիք, Քրիստոս ձեզ օգուտ չի անիլ:
3 Եւ դարձեալ վկայում եմ ամենայն մարդու համար որ թլփատվում է, թէ նա պարտական է բոլոր օրէնքը կատարելու:
4 Խափանուած էք Քրիստոսից դուք, որ օրէնքով էք կամենում արդարանալ. շնորհքից ընկած էք: Քանզի մենք Հոգով հաւատքից ենք սպասում արդարութեան յուսոյն:
6 Քանզի Քրիստոս Յիսուսում՝ ոչ թլփատութիւնն է մի բան կարող, և ոչ անթլփատութիւնը. այլ հաւատքը որ սիրով գործում
7 է: Լաւ էիք վազում, ձեզ ո՞վ ետ կանգնեցրեց՝ որ չը հնազանդիք ճշմարտութեանը:
8 Այդ համոզումը նորանցից չէ որ
9 կանչեց ձեզ: Մի քիչ խմորը
10 բոլոր զանգուածը խմորեցնում է: Ես ձեզ վերայ յոյս ունիմ Տէրումն՝ որ ուրիշ բան չէք մտածել. և ձեզ խռովեցնողը դատապարտութիւն կ՚քաշէ ով
11 որ էլ լինի: Բայց ես, եղբայրք, եթէ տակաւին թլփատութիւն եմ քարոզում, էլ ինչո՞ւ համար եմ հալածվում. ուրեմն խաչի գայթակղութիւնը

խափանուած է: Երանի թէ
12 բոլորովին կտրուէին նորանք որ ձեզ խռովեցնում են:
13 Քանզի դուք ազատութեան մէջ էք կանչուել, եղբայրք. միայն թէ ձեր ազատութիւնը պատճառ չլայ մարմնոյն. այլ սիրով ծառայեցէք միմեանց:
14 Քանզի ամենայն օրէնքը ՚ի մի բան կատարին. Ի սիրեսցես զընկերս
15 քո իբրև զանձն քո: Եթէ զմիմեանս խածատիցէք և ուտիցէք, զգո՛յշ լերուք՝ դուցէ ՚ի միմեանց սատակիցիք:
16 Բայց զայս ասեմ. Հոգւով գնացէք, և ցանկութիւն մար-
17 մնոյ մի կատարէք: Օ՛ի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ. և զի սոքա միմեանց հակառակ են, մի՛ զոր կամիցիք՝ զայն առնի-
18 ցէք: Իսկ եթէ Հոգւով վարիք.
19 ապա չէք ընդ օրինօք: Օ՛ի յայտնի են գործք մարմնոյ. այսինքն են շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջու-
20 թիւն, Կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, հեռ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւնք, երկպառա-
21 կութիւնք, հերձուածք, Ճարակնութիւնք, սպանութիւնք, արբեցութիւնք, անառակութիւնք, և որ ինչ սոցին նման են. զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս կանխաւն ասէի, թէ որ զայսպիսի ինչ գործեն՝ զարքայութիւն Աս-

13 Քանզի դուք ազատութեան մէջ էք կանչուել, եղբայրք. միայն թէ ձեր ազատութիւնը պատճառ չլայ մարմնոյն. այլ սիրով ծառայեցէք միմեանց:
14 Քանզի ամենայն օրէնքը ՚ի մի բան կատարվում է. Քո ընկերին քո անձի պէս սիրիր:
15 Բայց եթէ իրար կծէք և ուտէք, զգուշացէք որ իրարից չըփչանաք:
16 Բայց ասում եմ. Հոգով գնացէք, և մարմնոյ ցանկութիւնը չէք կատարիլ:
17 Քանզի մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին մարմնոյն հակառակ. և սորանք իրար հակառակ են, որ մի դուցէ այն որ դուք կամենում էք՝ այն անէք: Բայց եթէ
18 Հոգով վարուիք, օրէնքի տակ չէք: Եւ յայտնի են մարմնոյ
19 գործքերը, որ են՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, Կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւններ, կը-
20 ռիներ, նախանձներ, բարկութիւններ, հակառակութիւններ, երկպառակութիւններ, բաժանմունքներ. Ճար նայուածներ,
21 սպանութիւններ, արբեցութիւններ, անառակութիւններ, և ինչ որ սորանց նման են. որ առաջուց ասում եմ ձեզ, ինչպէս էլ առաջուց ասում էի, թէ

22 տուծոյ ո՛չ ժառանգեն։ Իսկ պտուղ Հոգւոյն այս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն,
23 երկայնմտութիւն, Քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. զայսպիսեաց ոստի օրէնքն չէ՛ն
24 հակառակ։ Իսկ որ Քրիստոսեանքն են, զմարմինս իւրեանց ՝ի խաչ հանին կարեօքն և ցան-
25 կութեամբք հանդերձ։ Եթէ կեամք Հոգւով՝ ընդ Հոգւոյն
26 և միաբանեսցո՛ւք։ Եւ մի՛ լիցուք մնապարծք՝ միմեանց ձայն տալոյ, և ընդ միմեանս նախանձելոյ։

ԳԼ. Զ.

1 Ե՛ղբարք՝ եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ՝ի ձէնջ յի՛նչ և իցէ յանցանս, դուք որ հոգեւորքդ էք՝ հաստատեցէ՛ք զայնպիսին հոգւով հեզութեան. զգո՛յշ լինիցիք անձանց՝ զի մի՛ և
2 դուք փորձիցիք։ Զմիմեանց բեռն բարձէ՛ք, և այնպէս կատարեցէ՛ք զօրէնսն Քրիստոսի։
3 Եթէ համարիցի ոք լինել ինչ՝ և չիցէ, զանձն իւր խաբէ։
4 Զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւրոք, և ապա անձին իւրում՝ միայն պարծանս տացէ,
5 և մի՛ առ ընկերաւն։ Զի իւրաքանչիւրոք զիւր բեռն բառնալոց է։

այսպիսի բաներ գործողներն Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ։ Բայց Հոգու պը- 22
տուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, Քաղցրութիւն, բարու- 23
թիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. այնպիսիներուն դէմ օրէնք չկայ։ Բայց նո- 24
րանք որ Քրիստոսինն են, իրանց մարմինը խաչ հանեցին կիրքերովն և ցանկութիւններովն միասին։ Եթէ Հոգով 25
ենք ապրում, Հոգով վարուինք։ Անպարծ չլինինք իրար 26
գրգռելով, և իրար վերայ նախանձելով։

ԳԼ. Զ.

Եղբայրք, եթէ մէկը յան- 1
կարծ բռնուի մի յանցանքով, դուք հոգևորներդ այնպիսին հաստատեցէք հեզութեան հոգով. զգուշացիր քո անձին, որ դու էլ չփորձուիս։ Իրար բեռը 2
վեր առէք, և այսպէս Քրիստոսի օրէնքը կատարեցէք։ Քանզի եթէ մէկը համարում 3
է թէ մի բան է և չէ, նա իր անձը խաբում է։ Բայց 4
ամեն մէկը թող իր գործը կշռէ, և ապա միայն իր անձին վերայ պարծանք կ՚ունենայ, և 5
ոչ թէ ուրիշի վերայ. Քանզի ամեն մէկն իր բեռը պիտի վեր առնէ։

6 Հաղորդութիւն արասցէ *աշակերտն վարդապետին յա-
7 մենայն՝՝ բարութիւնս։ Մի՛ խաբիք, Աստուած ո՛չ արհա-
8 մարհի։ Զի զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն և հնձեսցէ. որ սերմանէ ՝ի մարմին իւր, ՝ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն. և որ սերմանէ ՝ի Հոգին՝ ՝ի Հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտենից։
9 Եւ զբարիս գործել մի՛ ձանձրասցուք, զի ՝ի ժամանակի իւրում հնձեսցուք† առանց
10 լքանելոյ՝՝։ Այսուհետև մինչդեռ ժամանակս ՝ի ձեռս է՝ գործեսցո՛ւք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոց։
11 Տեսէ՛ք որպիսի գրով գրեցի
12 առ ձեզ իմով ձեռամբ։ Զի որ միանգամ կամին բարեմարդիկ լինել մարմնով, նոքա ստիպեն զձեզ թլփատել, միայն զի մի՛ զխաչին Քրիստոսի զհետ երթայցեն։
13 Քանզի որ թլփատեալքն իսկ են, նոքա զօրէնսն ո՛չ պահեն. այլ կամին զի դուք թլփատեսջիք, զի ձերով մարմնովդ պարծեսցին։
14 Այլ ինձ քաւ լիցի պարծել՝ բայց միայն ՝ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ՝ի խաչ ելեալ

* Ի Յոյն, աշակերտն ՝ի բանի՝ վարդապետին յամենայն

† Ի Յոյն, եթէ ոչ լքանիցիմք

խօսքին աշակերտողը թող 6
հաղորդութիւն անէ վարդապետին ամեն բարի բաներով։ Մի՛ 7
խաբուիք. Աստուած չի արհամարհուիլ։ Քանզի ինչ որ 8
մարդ սերմէ, այն էլ կ՚հնձէ. իր մարմնի մէջ սերմողը մարմնէն ապականութիւն կ՚հնձէ. և Հոգու մէջ սերմողը Հոգուցն յաւիտենական կեանք կ՚հնձէ։
Եւ չձանձրանանք բարին գոր- 9
ծելուցը, քանզի իր ժամանակին կ՚հնձենք՝ եթէ չթուլանանք։
Ուրեմն քանի որ ժամանակ ու- 10
նինք, բարի գործենք ամենքին, մանաւանդ հաւատքի ընտանիներին։

Տեսէք թէ ինչպիսի գրերով 11
գրեցի ձեզ իմ ձեռովը։ Որոնք 12
որ կամենում են հաճոյ երևել մարմնոյ կողմանէ, նորանք ստիպում են ձեզ՝ որ թլփատուիք. միայն որ Քրիստոսի խաչի համար չհալածուին։ Քանզի այն 13
թլփատուածներն իրանք էլ օրէնքը չեն պահում. այլ կամենում են որ դուք թլփատուիք, որ ձեր մարմնովը պարծենան։
Սակայն ինձ քաւ լիցի պար- 14
ծենալ, բայց միայն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի խաչովն. որ նորանով աշխարհքն ինձ

15 է՝ և ես աշխարհի։ Օ՛ի (՝ի Քրիստոս Յիսուս), ո՛չ թլփատութիւն ինչ է՝ և ո՛չ անթլփատութիւն, այլ նոր արարածս։
16 Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն՝ ի վերայ նոցա և ողորմութիւն, և՝ ի վերայ Իսրայէլիս Աստուծոյ։
17 Այսուհետև աշխատ ոք զիս մի՛ արասցէ. զի ես զչարչարանսն Քրիստոսի՝ ի մարմնի իմում
18 կրեմ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում՝ եղբարք. ամէն։

Առ Գաղատացիս՝ գրեցաւ՝ ՚է Հռովմէ։

համար խաչուած է, և ես էլ աշխարհքին։ Քանզի Քրիս- 15
տոս Յիսուսում ոչ թլփատութիւնը մի բան է, և ոչ անթլփատութիւնը, բայց նոր արարածը։ Եւ այն ամենքն որ 16
այս կանոնի համեմատ են վարվում, խաղաղութիւն լինի նորանց և ողորմութիւն և Աստուծոյ Իսրայէլին։ Յետոյ 17
այլևս թող մէկը չաշխատեցնէ ինձ. քանզի ես կրում եմ Տէր Յիսուսի վէրքերի նշանները իմ մարմնոյ մէջ։ Ներ Տէր Յի- 18
սուսի Քրիստոսի շնորհքը, եղբայրք, ձեր հոգու հետ լինի. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաքն Աստուծոյ՝ սրբոց որ են յԵփեսոս, և հաւատացելոց՝ ի
2 Քրիստոս Յիսուս։ Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ և՝ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ օրհնեաց զմեզ ամենայն հոգևոր օրհնութեամբ
4 յերկնաւորս՝ ի Քրիստոս. Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս և անարատս
5 առաջի նորա սիրով։ Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն՝ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի՝ ՚ի նոյն՝ ըստ հա-
6 ճութեան կամաց իւրոց, ՚Ի գովեստ փառաց շնորհաց իւրոց՝ որով զուարճացոյց զմեզ սիրե-
7 լեաւն։ Որով ունիմք զփրկութիւն՝ ՚ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց՝ ըստ մեծու-

Պօղոս Յիսուսի Քրիս- 1
տոսի առաքեալ Աստուծոյ կամքովը. այն սրբերին որ Եփեսոսումն են, և Քրիստոս Յիսուսում հաւատացեալներին։
Շնորհք լինի ձեզ և խաղաղու- 2
թիւն Աստուած՝ մեր Հօրիցը, և Տէր Յիսուս Քրիստոսիցը։
Օրհնեալ է Աստուած և 3
մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը. որ մեզ օրհնեց ամեն հոգևոր օրհնութիւնով երկնաւոր բաներումը Քրիստոսով։ Ինչպէս ընտրեց մեզ 4
նորանով աշխարհքի ստեղծելուցն առաջ, որ մենք սուրբ և անարատ լինինք նորա առջև սիրով։ Ներ առաջուց սահ- 5
մանելով, որ իրան որդեգիր լինինք Յիսուսի Քրիստոսի ձեռովն՝ իր կամքի հաճութեան պէս, Իր փառաւոր շնորհաց 6
գովասանքի համար. որ նորանով շնորհք ցոյց տուաւ մեզ՝ այն սիրելիովը։ Որով ունինք 7
փրկութիւն նորա արիւնովը՝

8 թեան շնորհաց իւրոց. Որ առաւելաւ 'ի մեզ ամենայն
իմաստութեամբ և գիտու-
9 թեամբ: Եցոյց մեզ զնորհուրդս
կամաց իւրոց՝ ըստ հաճու-
թեան իւրում. զոր յառաջա-
10 գոյն եդ նովաւ, 'Ի տնտեսու-
թիւն լրման ժամանակաց, բո-
վանդակել զամենայն Քրիս-
տոսիս, որ ինչ յերկինս և որ
11 ինչ յերկրի 'ի նոյն: Որով և
վիճակեցաք յառաջագոյն հրա-
միրեալք՝ ըստ յառաջադրու-
թեանն Ստուծոյ. որ զամե-
նայն յաջողէ ըստ խորհրդոց
12 կամաց իւրոց. Լինել մեզ 'ի
գովեստ փառաց նորա՝ յառա-
ջագոյն յուսացելոցս 'ի Քրիս-
13 տոս: Որով և դուք իբրև
լուարուք զբանն ճշմարտու-
թեան, զաւետարանն փրկու-
թեան ձերոյ, որով և հաւա-
տացեալ կնքեցայք Հոգւոյն
14 Սրբոյ աւետեաց. Որ է առ-
հաւատչեայ ժառանգութեան
մերոյ, 'ի փրկութիւն նուա-
ճութեան, 'ի գովեստ փառաց
նորա:

15 Վասն այնորիկ և ես իբրև
լուայ զհաւատսն զձեր՝ որ 'ի
Տէր Յիսուս, և զսէրն որ ընդ
16 ամենայն սուրբս, Ո՛չ դադա-
րեմ 'ի գոհանալոյ վասն ձեր՝
17 յիշել զձեզ յաղօթս. Օ՛ի
Աստուած Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, Հայրն փառաց՝
մեղաց թողութիւնն իր շնորհաց
մեծութեան չափովը. Որ աւե- 8
լացաւ մեզանում՝ ամեն իմաս-
տութիւնով և գիտութիւնով.
Յոյց տալով մեզ իր կամքի 9
խորհուրդն իր հաճութեան
պէս. որ առաջուց դրաւ իրա-
նում. Ժամանակների լրութեան 10
տնտեսութեան համար, որ ամեն
բան բովանդակուի Քրիստո-
սում, ինչ որ երկնքումն է՝ և
ինչ որ երկրումը, նորանում.
Որով որ էլ ստացանք ժառան- 11
գութիւնը մենք՝ առաջուց որոշ-
ուած լինելով, նորա առաջա-
դրութեան պէս, որ ամեն բան
յաջողում է իր կամքի խոր-
հուրդների պէս. Որ մենք 12
գովասանք լինինք նորա փա-
ռացը, որ առաջուց մեր յոյսը
Քրիստոսի վերայ ենք դրել:
Որում՝ և դուք յուսացիք, երբոր 13
ճշմարտութեան խօսքը լսեցիք՝
ձեր փրկութեան աւետարանը,
որին էլ երբոր հաւատացիք՝
աւետիքի Սուրբ Հոգովը կընք-
ուեցաք. Որ մեր ժառանգու- 14
թեան գրաւն է, մինչև ստացո-
ւածքի փրկութիւնը, նորա
փառացը գովասանքի համար:
Նորա համար ես էլ լսելով 15
ձեր հաւատքը, որ ունիք Տէր
Յիսուսի վերայ, և յԷր սէրը
դէպի ամեն սրբերը, Ոչ դա- 16
դարում՝ ձեզ համար գոհութիւն
տալուց՝ ձեզ իմ աղօթքներումը
յիշելով. Որ մեր Տէր Յիսուսի 17
Քրիստոսի Աստուածը՝ փառաց

տացէ ձեզ զՀոգին իմաստու-
թեան և յայտնութեան՝ գի-
18 տութեամբն իւրով. Լուսաւոր
առնել զաչս* սրտից՝ առ 'ի
գիտելոյ մեզ՝" զինչ է յոյս
կոչման նորա, և զինչ մեծու-
թիւն փառաց ժառանգութեան
19 նորա 'ի սուրբս. Եւ զինչ է
առաւելութիւն մեծութեան զո-
րութեան նորա 'ի մեզ հաւա-
տացեալս. ըստ յաջողութեան
կարողութեան զօրութեան իւ-
20 րոյ, Զոր յաջողեաց 'ի Քրիս-
տոս. զի յարոյց զնա 'ի մեռե-
լոց, և նստոյց ընդ աջմէ իւրմէ
21 յերկնաւորս, 'Ի վերայ ամե-
նայն իշխանութեան և պետու-
թեան և զօրութեան և տէրու-
թեան և ամենայն անուան
անուանելոյ, ոչ միայն յաշ-
խարհիս յայսմիկ՝ այլ և 'ի
22 հանդերձելումն: Եւ զամենայն
ինչ հնազանդ արար 'ի ներքոյ
ոտից նորա. և զնա եւ գլուխ 'ի
վերայ ամենայն իրիք եկեղե-
23 ցւոյ, Որ է մարմին նորա,
լրումն՝ որ զամենայն յամենայնի
ընու:

ԳԼ. Բ

1 Եւ դուք՝ որ մեռեալն էիք 'ի
2 մեղս ձեր և յանցանս, Յորս
երբեմն գնայիք ըստ յաւիտենի
աշխարհիս այսորիկ՝ ըստ իշխա-
Հայրը տայ ձեզ իմաստութեան
և յայտնութեան Հոգի՝ իր գի-
տութիւնովը. Որ ձեր սրտերի 18
աչքերը լուսաւորուելով՝ գիտե-
նաք, թէ ի՞նչ է նորա կոչումի
յոյսը, և ի՞նչ է իր ժառան-
գութեան փառաւոր մեծութիւ-
նը սրբերումը. Եւ ի՞նչ է 19
նորա զօրութեան գերազանց
մեծութիւնը մեզանում, որ հա-
ւատացինք, իր կարող զօրու-
թեան յաջողութեան պէս, Որ 20
Քրիստոսումն գործադրեց՝ նո-
րան մեռելների միջից յարու-
ցանելով, և իր աջ կողմը նստեց-
րեց երկնաւորներումը, Ամեն 21
իշխանութեան և պետութեան
և զօրութեան և տէրութեան
վերայ և ամեն անուան վերայ՝
որ անուանվում է, ոչ միայն այս
աշխարհքումը, այլ և այն
հանդերձելումը: Եւ ամեն 22
բան հնազանդեցրեց նորա ոտաց
տակ, և նորան գլուխ դրաւ
եկեղեցուն՝ բոլոր բաների վե-
րայ, Որ է նորա մարմինը, այն 23
լումը որ ամենն ամենի մէջ
լցացնում է:

ԳԼ. Բ

Եւ դուք, որ մեռած էիք 1
յանցանքներումը և մեղքե-
րումը. Որոնցում մի ժամանակ 2
գնում էիք այս աշխարհքի սո-

* 'Ի Յոյն. սրտի ձերոյ՝ առ 'ի գիտելոյ ձեզ

նին իշխանութեան օդոյս այսոյ,
որ այժմս ընդմտեալ է յորդիսն
3 ապստամբութեան. Յորս և
մեք ամենեքեան շրջէաք երբեմն
'ի ցանկութիւնս մարմնոյ մերոյ,
և առնէաք զկամս մարմնոյ և
զմտաց, և էաք *արդարև որդիք
բարկութեան իբրև այլքն։

4 Այլ Աստուած որ մեծն է
ողորմութեամբ, վասն բազում
սիրոյն իւրոյ՝ զոր սիրեացն
5 զմեզ, Մ'ինչդեռ մեռեալն էաք
'ի մեղս մեր, կենդանիս արար
զմեզ 'ի Քրիստոս. քանզի
6 շնորհօք ապրեցաք. Եւ նը-
մին յարոյց, և ընդ նմին նստոյց
յերկնաւորս 'ի Քրիստոս Յիսու-
7 սուս։ Զի ցուցցէ 'ի յաւի-
տեանսն որ գալոցն են՝ զա-
ռաւել մեծութիւն շնորհացն
իւրոց՝ քաղցրութեամբ 'ի մեզ
8 'ի Քրիստոս Յիսուս։ Զի
շնորհօք նորա էք փրկեալք 'ի
ձեռն հաւատոյն. և այս ոչ 'ի
ձէնջ, այլ Աստուծոյ պարգև է.
9 Ո՛չ 'ի գործոց, զի մի՞ ոք պար-
10 ծեսցի։ Զի նորա արարածք
եմք՝ հաստատեալք Քրիստոսիս
Յիսուսիս 'ի գործս բարու-
թեան, յորս յառաջագոյն պատ-
րաստեաց Աստուած, զի 'ի
նոյնս գնասցուք։

վորութեան պէս՝ օդիս իշխա-
նութեան իշխանի պէս, այն
հոգու պէս՝ որ հիմա ներգործ-
ուում է ապստամբութեան որ-
դիքներին մէջ։ Որոնց մէջ մենք 3
ամենքս էլ մի ժամանակ մեր
էինք գալիս մեր մարմնոյ ցան-
կութիւններումն՝ մարմնոյ և
մտքի կամքն կատարելով, և
բնութեամբ բարկութեան որ-
դիք էինք ինչպէս ուրիշ-
ներն էլ։
Բայց Աստուած, որ մեծ է 4
ողորմութեամբ, իր շատ սիրոյ
համար որ սիրեց մեզ, Երբոր 5
մեռած էինք յանցանքներումն,
մեզ կենդանի արաւ Քրիստոսի
հետ. շնորհքով էք փրկուած։
Նորա հետ հեղ յարոյց, և 6
նորա հետ երկնաւորներումը
նստեցրեց՝ Քրիստոս Յիսու-
սումը։ Որ նոր եկող դարե- 7
րում յաւիտեան ցոյց տայ իր
շնորհաց գերազանց մեծութիւ-
նը, Քրիստոս Յիսուսի մեզ
վերայ ցոյց տուած քաղցրու-
թիւնովը։ Այսպէս շնորհքով 8
էք փրկուած հաւատքի ձեռովը.
և սա ոչ թէ ձեզանից է, այլ
Աստուծոյ պարգևն է։ Ոչ թէ 9
գործքերից, որ մէկը չպարծե-
նայ։ Այսպէս նորա ստեղ- 10
ծուածն ենք՝ Քրիստոսով Յի-
սուսով հաստատուած լաւի
գործքերի համար. որոնց հա-
մար Աստուած առաջուց պատ-

* 'Ի Ցոյն, 'ի բնէ

11 Վասն որոյ և դուք յիշեցէք՝
զի երբեմն հեթանոսք էիք մար-
մնով. որ կոչեցեալն են անթլ-
փատութիւն՝ յանուանեալ թլ-
փատութենէ անտի մարմնաւոր
12 ձեռագործին. Զի էին 'ի ժա-
մանակին յայնմիկ առանց Քրիս-
տոսի, (և օտարացեալք յառա-
քինութենէն Իսրայէլի,) և տա-
րագիրք յուխտից աւետեացն,
և յոյս ինչ ոչ ունէիք՝ և
անաստուածք էիք յաշխարհի։
13 Իսկ այժմիկ 'ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի, դուք որ երբեմն
հեռաւորքն էիք՝ մերձաւորք
եղերուք արեամբն Քրիստոսի։
14 Զի նա է խաղաղութիւն մեր՝
որ արար զերկուսեան մի. և
զմիջնորմն ցանկոյն քակեաց՝
զթշնամութիւն 'ի մարմնի իւ-
15 րում. Եւ զօրէնս պատուիրա-
նացն հրամանաքն խափանեաց,
զի զերկուսին հաստատեսցէ
ինքեամբ 'ի մի նոր մարդ. և
16 արասցէ խաղաղութիւն. Եւ
հաշտեցուսցէ զերկուսին միով
մարմնով ընդ Աստուծոյ՝ խա-
չիւն իւրով. քանզի սպան
զթշնամութիւն յանձին իւրում։
17 Եւ եկն աւետարանեաց խաղա-
ղութիւն ձեզ հեռաւորաց, և
խաղաղութիւն մերձաւորաց.
18 Զի նովաւ ունիմք զնուա-
ճութիւն երկոքին՝ միով Հոգ-
19 ւով առ Հայր։ Արդ այսու-
հետև ոչ էք օտարք և պան-

բաստեց մեզ, որ Նորանցում վա-
բուինք։
Այսն որոյ յիշեցէք որ 11
դուք՝ մի ժամանակ հեթանոս-
ներ մարմնով, որ անթլփատու-
թիւն են կոչուած՝ մարմնոյ մէջ
ձեռքով արած թլփատութեան
կողմանէ։ Որ այն ժամանակ 12
առանց Քրիստոսի էիք, և հե-
ռացած Իսրայէլի քաղաքակցու-
թիւնից, և օտարացած խոստ-
մունքի ուխտերից, յոյս չու-
նէիք, և անաստուած էիք աշ-
խարհքումն։ Բայց հիմա Յի- 13
սուսի Քրիստոսի ձեռովը դուք՝
որ ժամանակով հեռաւոր էիք,
մտաւոր եղաք Քրիստոսի ա-
րիւնովը։ Այսպէս նա է մեր 14
խաղաղութիւնը որ երկուսին
մէկ արաւ և մէջ տեղի բա-
ժանող պատը՝ թշնամութիւնը
քանդեց իր մարմնովը. Հրա- 15
մաններում գրած պատուիրանք-
ների օրէնքը խափանելով, որ
իրանով երկուսին մէկ նոր մարդ
ստեղծէ, խաղաղութիւն անե-
լով։ Եւ երկուսին մէկ մարմ- 16
նով հաշտեցնէ Աստուծոյ հետ՝
էլ խաչովը, սպանելով թշնա-
մութիւնն նորանով։ Եւ եկաւ 17
աւետարանեց խաղաղութիւն
ձեզ հեռաւորներիդ՝ և մոտա-
ւորներին։ Այսպէս նորանով 18
երկուքս մէկ Հոգով ունինք
մոտենալը Հօր մոտ։ Արդեն 19
այսուհետև այլ ևս օտար և
պանդուխտ չէք, այլ սրբերի
հետ քաղաքացիներ և Աստուծոյ

գուխտք, այլ քաղաքակիցք սրբոց և ընտանիք Աստուծոյ.
20 Շինեալք ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս. Յորում ամենայն շինուածն յօդեալ և պատշաճեալ՝ աճէ ի տաճար սուրբ Տէրամբ:
22 Յորում և դուք ընդ նմին շինիք ի բնակութիւն Աստուծոյ Հոգւով:

ԳԼ. Գ

1 Վասն այսորիկ ես Պօղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի
2 վասն ձեր հեթանոսաց: Թերևս լուեալ իցէ ձեր զտնտեսութիւն շնորհացն Աստուծոյ, որ տուեալ են ինձ ի ձեզ:
3 Զի ըստ յայտնութեանն ցուցաւ ինձ խորհուրդն. որպէս յառաջագոյն գրեցի առ ձեզ սակաւուք.
4 Առ ի կարօղ լինելոյ ընթեռնուլ՝ և ի միտ առնուլ զիմաստութիւնն զիմ ի խորհրդեանն
5 Քրիստոսի: Զի այլոց ազգաց ոչ ցուցաւ որդւոց մարդկան. որպէս այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց՝ առաքելոց և մարգարէից՝
6 Հոգւովն: Լինել հեթանոսաց ժառանգակիցս՝ և մարմնակիցս, և հաղորդս աւետեացն ի Քրիստոս Յիսուս՝ աւետա-
7 բանաւն, Որոյ եղէ ես սպասաւոր, ըստ պարգևաց շնորհացն Աստուծոյ՝ որ տուան ինձ ըստ յաջողութեան զօրութեան նո-

ընտանիքներ, Առաքելոց և մարգարէից հիման վերայ շինուած, որի անկիւնի գլուխը Յիսուս Քրիստոս է. Որում 21 բոլոր շինուածքը միասին յարմարուած աճում է, որ լինի սուրբ տաճար Տէրով. Որում 22 դուք էլ նորա հետ շինվում էք Աստուծոյ բնակարան Հոգով:

ԳԼ. Գ

Սորա համար ես Պօղոս՝ Յի- 1 սուսի Քրիստոսի կապուածս ձեզ հեթանոսներիդ համար:
Անշուշտ դուք լսած էք Աս- 2 տուծոյ շնորհաց այն տնտեսութիւնն, որ ինձ տրուած է ձեզ համար: Որ յայտնութիւնով 3 ցոյց տրուաւ ինձ այն խորհուրդը. (ինչպէս առաջուց կարճաւոտ գրեցի ձեզ. Որ կարող 4 լինիք կարդալ և իմանալ իմ տեղեկութիւնը, որ Քրիստոսի խորհրդի համար է.) Որ ուրիշ 5 դարերում մարդկանց զաւակներին ցոյց չտրուեցաւ. ինչպէս հիմա իր սուրբ առաքեալներին և մարգարէներին յայտնուեցաւ՝ Հոգով. Որ հեթանոսները ժա- 6 ռանգակիցներ և մարմնակիցներ են, և Քրիստոսումն աւետիքի մասնակից՝ աւետարանովը. Որի 7 ես սպասաւորը եղայ՝ Աստուծոյ շնորհաց պարգևի պէս՝ որ տրուեցաւ ինձ, նորա զօրու-

8 բա: Ինձ, որ տրուպս եմ ամենայն սրբոց՝ տուան շնորհքս այս, ի հեթանոսս աւետարանել զանքննին մեծութիւնն
9 Քրիստոսի. Եւ լուսաւորառնել զամենեսին, թէ զինչ է տնտեսութիւն խորհրդոյն, որ ծածկեալ էր յամենայն յաւիտեանց՝ առ Աստուծոյ՝ որ
10 զամենայն ինչ արար. Զի յայտնեսցի արդ իշխանութեանց և պետութեանց՝ որ յերկինս են, ի ձեռն եկեղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւն Աս-
11 տուծոյ. Ըստ յառաջադրութեան յաւիտեանցն՝ զոր արար ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
12 Քրիստոսի: Որով ունիմք զհամարձակութիւն և զնուաճութիւն յուսով ի ձեռն հաւատոց նորա:
13 Վասն որոյ աղաչեմ մի՛ ձանձրանալ ի նեղութեանս մերում, որ վասն ձեր է. որ
14 է փառք ձեր: Վասն այսորիկ դնեմ ծունր առ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.
15 Ուստի ամենայն նահապետութիւն յերկինս և յերկրի ա-
16 նուանի. Զի տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց իւրոց, հաստատել զօրութեամբ ի ձեռն Հոգւոյն իւրոյ ի ներքին
17 մարդն. Բնակել Քրիստոսի հաւատովք ի սիրտս ձեր. սիրով արմատացեալք և հաստատեալք.
18 Զի կարօղ լինիցիք հասանել ընդ ամենայն սուրբս, զինչ է

թեան ներգործելու պէս. Ինձ՝ 8 ամեն սրբերի յետինիս, տրուեցաւ այս շնորհքը, որ հեթանոսների մէջ աւետարանեմ Քրիստոսի անքննելի հարստութիւնը. Եւ ամենքին լուսա- 9 ւորեմ, թէ ի՞նչ է այն խորհրդի տնտեսութիւնը, որ յաւիտեաններից հետէ ծածկուած էր Աստուծոյ մօտ՝ որ ամեն բան ստեղծեց(Յիսուս Քրիստոսով): Որ հիմա իշխանութիւններին և 10 պետութիւններին երկնաւորներում եկեղեցու ձեռովն յայտնուի Աստուծոյ բազմապատիկ իմաստութիւնը, Այն յաւիտե- 11 նական առաջադրութեան պէս, որ մեր Տէր Քրիստոս Յիսուսի ձեռովն արաւ. Որով ունինք 12 համարձակութիւնը և յուսով մօտենալը նորան հաւատալով:
Վասն որոյ աղաչում եմ, 13 որ չձանձրանաք իմ նեղութիւններումը, ձեզ համար որ ձեր փառքն է: Սորա համար կրկ- 14 նում եմ իմ ծնկերը մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հօր առջև, Որից ամեն նահապետութիւն 15 երկնքումն և երկրումն անուն է առնում, Որ իր փառքի հար- 16 ստութեան պէս տայ ձեզ, որ զօրութեամբ հաստատուիք իր Հոգու ձեռովը ներսի մարդումը: Որ Քրիստոս հաւատքով 17 բնակուի ձեր սրտերումը. և սիրով արմատացած և հաստատուած լինիք: Որ ամեն սրբերի 18 հետ իմանաք, թէ ի՞նչ է լայ-

լայնութիւն և երկայնութիւն
և բարձրութիւն և խորութիւն.
19 *Ճանաչել զառաւելութիւն
գիտութեան սիրոյն Քրիս-
տոսի՝, զի լցջիք ամենայն լրու-
20 թեամբն Աստուծոյ: Այլ այնմ
որ կարօղն է առաւելքան զամե-
նայն ինչ առնել յաճախու-
թեամբ՝ քան զոր խնդրեմքն և
իմանամք, ըստ զօրութեանն
21 որ յաղօղեալն է ի մեզ: Նմա
փառք յեկեղեցւոջ, և ի Քրիս-
տոս Յիսուս, յամենայն ազգս
յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԳԼ. Գ

1 Արդ աղաչեմ զձեզ ես որ
կապեալս եմ ի Տէր, արժանի
գնալ կոչմանն՝ յոր կոչեցարուք:
2 Ամենայն խոնարհութեամբ և
հեզութեամբ և երկայնմտու-
թեամբ՝ անսալ միմեանց սիրով.
3 փութալ պահել զմիաբանու-
թիւն Հոգւոյն յօղիւ խա-
4 ղաղութեան: Մի մարմին և մի
Հոգի, որպէս և կոչեցարուք ի
5 մի յոյս կոչման ձերոյ: Մի է
Տէր, մի հաւատք՝ մի մկրտու-
6 թիւն: Մի Աստուած, և Հայր
ամենեցուն՝ որ ի վերայ ամե-
նայնի, և ընդ ամենեսին՝ և
7 յամենեսին ի մեզ: Այլ իւրա-

նութիւնը և երկայնութիւնը և
բարձրութիւնը և խորութիւնը.
19 Որ Քրիստոսի ամեն գիտու-
թիւնից գերազանց սէրը ճանա-
չէք. որ Աստուծոյ ամեն լիու-
թիւնովը լցուիք: Բայց նորան՝
20 որ կարող է առատութեամբ
անել ամեն բաներից աւելի քան
որ խնդրում ենք և իմանում,
այն զօրութեան չափովն՝ որ
21 մեզանում ներգործում է. Նո-
րան փառք եկեղեցումն, որ
Քրիստոս Յիսուսումն է, ամեն
դարերում յաւիտեանս յաւիտե-
նից. Ամէն:

ԳԼ. Գ

1 Արդ աղաչում եմ ձեզ ես՝
Տիրոջ համար կապուածս, որ
այնպէս գնաք ինչպէս որ կը-
վայելէ այն կոչումին որի մէջ
2 կանչուեցաք: Ամեն խոնար-
հութիւնով և հեզութիւնով
և երկայնմտութիւնով, սիրով
3 իրար համբերելով: Ջանա-
լով Հոգու միաբանութիւնը
պահել խաղաղութեան կապովը:
4 Մէկ մարմին և մէկ Հոգի.
Մէկ մարմին և մէկ Հոգի.
5 ինչպէս կոչուեցաք էլ ձեր
կոչումի մէկ յուսոյ մէջ: Մէկ
Տէր, մէկ հաւատք, մէկ մկրտու-
6 թիւն. Մէկ Աստուած և ա-
մենքի Հայր, որ ամենքի վերայ

* Ի Յոյն. Ճանաչել զսէրն Քրիստոսի՝ զառաւելն քան զգիտութիւն

.բանչիւր ումեք ի մէջ տուեալ
8 են շնորհք ըստ չափոյ պարգևաց
ացն Քրիստոսի: Վասն որոյ և
ասէ. Եկ ի բարձունս՝ գերեաց
զգերութիւն, և ետ պարգևս
9 մարդկան: Որ եկն, զի՞նչ է,
եթէ ոչ՝ զի էջ նախ ի ստորին
10 կողմն երկրի: Որ էջն, նոյն է՝
և որ եկն ի վերայ քան զամե-
նայն երկինս, զի լցցէ զամե-
նայն:

11 Եւ նա ետ զոմանս առա-
քեալս, զոմանս մարգարէս,
զոմանս աւետարանիչս, զոմանս
հովիւս և վարդապետս. ի
հաստատութիւն սրբոց, ի գործ
12 պաշտաման, ի շինուած մար-
13 մնոյն Քրիստոսի. Մինչև
հասցուք ամենեքեան ի մի
միաբանութիւն հաւատոց՝ և
գիտութեան Որդւոյն Աստու-
ծոյ. յայր կատարեալ ի չափ
հասակի կատարմանն Քրիս-
14 տոսի: Օ՛ի մի՛ յայսմ՝ հետէ
իցեմք տղայք խռովեալք և տա-
տանեալք յամենայն հողմոց
վարդապետութեան, խաբէու-
թեամբ մարդկան, խորամանկութեամբ ի խաբէութիւն
15 մոլորութեան: Այլ ճշմար-
տեալք սիրով՝ աճեցուսցուք ի
նա զամենայն, որ է գլուխ
16 Քրիստոս. Ուստի ամենայն
մարմինն յօդեալ և պատշա-
ճեալ ամենայն խաղալեօք տար-

և ամենքի հետ՝ և ձեր ամենքի
մէջ է: Բայց մեր ամեն մէկիս 7
տրուած է շնորհքը՝ Քրիստոսի
պարգևի չափ՝ այս: Որոնց 8
համար ասում է. Ելա՝ վերը ե-
լաւ բարձրը, գերի առաւ գե-
րութիւնը. և մարդկանց պար-
գևներ տուաւ: Այն վերը ե- 9
լաւը ի՞նչ է, եթէ ոչ՝ որ
առաջ վայր իջաւ երկրի ցած
կողմերը: Այն վայր իջնողը 10
նոյն ինքն է, որ ամեն երկինք-
ներից աւելի բարձր վերը ելաւ,
որ ամենը լցցնէ:
Եւ նա մի քանիսին տուաւ 11
առաքեալներ լինելու, մի քանի-
սին մարգարէներ, մի քանիսին
աւետարանիչներ, մի քանիսին
հովիւներ և վարդապետներ
Սրբերի կատարելութեանը հա- 12
մար, պաշտօնի գործի համար,
Քրիստոսի մարմնոյ շինութեան
համար. Մինչև որ ամենքս 13
հասնինք հաւատքի և Աստու-
ծոյ Որդոյ գիտութեան միու-
թեանը. և կատարեալ մարդ
լինինք՝ Քրիստոսի կատարեալ
հասակի չափովը. Որ այլ ևս 14
տղայ չլինինք երերուած ու
տատանուած վարդապետու-
թեան ամեն քամուցը մարդ-
կանց խաբերայութիւնովը. մո-
լորեցնելու խաբերայութեան
խորամանկութիւնովը: Բայց 15
ճշմարիտ լինելով սիրոյ մէջ,
աճինք նորանում՝ ամեն բանով,
որ է գլուխն՝ Քրիստոս. Որից 16
բոլոր մարմինը միասին կաղ-

բերութեան՝ ըստ աղգեցութեան
չափով ըստ իւրաքանչիւր մասին՝
զաճուն մարմնոյ գործէ՝ ի
շինած անձին իւրոյ սիրով։

17 Բրդ՝ զայս ասեմ և ուխտեմ
ի Տէր. մի ևս ձեզ զնոյն
օրինակ գնալ՝ որպէս և այլ
հեթանոսք գնան՝ ունայնու-
18 թեամբ մտաց իւրեանց. Որոց
խաւարեալ են սիրտք իւրեանց,
և օտարացեալ են ի կենաց անտի
Աստուծոյ՝ վասն տգիտութեանն՝
որ է ի նոսա, վասն կուրու-
19 թեան սրտից իւրեանց։ Որք
զանձանց իւրեանց զյոյսն հա-
տին, և մատնեցին զանձինս
գիջութեան, ի գործս ամենայն
պղծութեան ագահութեամբ։
20 Այլ դուք ոչ այսպէս ուսարուք
21 զՔրիստոս. Թէպէտ և լուա-
րուք զնմանէ, և նովաւ ուսայք՝
որպէս է ճշմարտութիւն Յի-
22 սուսի. Ի բաց մերկանալ ի
ձէնջ ըստ առաջին գնացիցն
զմարդն հին՝ զապականեալն
ցանկութեամբք խաբէութեանն։
23 Եւ նորոգել հոգւովն մտաց
24 ձերոց, Եւ զգենուլ զնոր
մարդն՝ որ ըստ Աստուծոյն
հաստատեալ է՝ արդարութեամբ
և սրբութեամբ ճշմարտու-
25 թեանն։ Վասն որոյ ի բաց
ընկեցէք զստութիւն. խօսե-
ցարուք զճշմարտութիւն իւրա-
քանչիւր ընդ ընկերի իւրում.
զի եմք միմեանց անդամք։

մուելով և միասին յարմարուե-
լով ամեն յօդուածի ձեռնտուու-
թեամբը ամեն մէկ անդամի ներ-
գործութեան չափովը մարմնոյ
աճիլը գործվում է՝ իր անձը սի-
րով շինելու համար։

Բրդ սա եմ ասում և վկա- 17
յում Տէրով՝ որ դուք այլ ևս
չգնաք ինչպէս ուրիշ հեթա-
նոսներն են գնում իրանց մտքի
ունայնութիւնովը, Որ խաւա- 18
բուած են մտքով, և օտար՝ Աս-
տուծոյ կեանքիցը, այն տգի-
տութեան պատճառովն որ նո-
րանցում է. իրանց սրտերի
կուրութեան համար։ Որ ան- 19
զգայացած՝ իրանց անձները
մատնեցին անառակութեան ա-
մեն պղծութեան գործքերի մէջ
ագահութիւնով։ Բայց դուք 20
Քրիստոսին այսպէս չսովորե-
ցիք. Եթէ նորանցից լսեցիք, և 21
նորանով սովորեցիք՝ ինչպէս որ
ճշմարտութիւն է Յիսուսումը։
Զեզանից դուրս հանեցէք առա- 22
ջի գնացքի պէս եղող հին
մարդուն որ խաբեբայութեան
ցանկութիւնովն ապականուած
է. Եւ ձեր մտքի հոգովը նորո- 23
գուեցէք. Եւ նոր մարդուն 24
հագնիք՝ որ Աստուծոյն պէս
ստեղծուած է՝ ճշմարտութեան
արդարութիւնովը և սրբութիւ-
նովը։ Նորա համար դէն գցե- 25
լով ստութիւնը՝ խօսեցէք ճըշ-
մարտութիւնն ամեն մարդ իր
ընկերի հետ. վասնզի իրար
անդամ ենք։ Բարկանաք՝ մի 26

26 Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք.
արեգակն ի վերայ բարկու-
27 թեան ձերոյ մի՛ մտցէ։ Եւ մի՛
28 տայք տեղի Սատանայի։ Որ
գողանայրն՝ մի՛ ևս գողասցի,
այլ մանաւանդ վաստակեսցէ
գործել ձեռօք իւրովք զբարիս.
զի բաւական իցէ տալ՝ ում
29 պիտոյ իցէ։ Ամենայն բան
տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛
ելցէ. այլ որ ինչ բարին է ի
շինած պիտոյից, զի տացէ
30 շնորհս այնոցիկ, որ լսեն։ Եւ մի՛
տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ
Աստուծոյ, որով կնքեցարուք
31 յաւուրն փրկութեան։ Ամե-
նայն դառնութիւն և բարկու-
թիւն՝ և սրտմտութիւն և ա-
ղաղակ՝ և հայհոյութիւն բարձցի՛
ի ձէնջ՝ ամենայն չարութեամբն
32 հանդերձ։ Լերուք ընդ միմեանս
քաղցունք՝ գթածք. շնորհել
միմեանց, որպէս և Աստուած
Քրիստոսիւ շնորհեաց մեզ։

ԳԼ. Ե

1 Եղերուք նմանողք Աստուծոյ,
2 իբրև որդիք սիրելիք. Եւ
գնացէք սիրով՝ որպէս և Քրիս-
տոս սիրեաց զմեզ, և մատնեաց
զանձն իւր վասն մեր՝ պատարագ
և զեղումն Աստուծոյ ի հոտ
3 անուշից։ Այլ պոռնկութիւն
և ամենայն պղծութիւն, կամ
ագահութիւն՝ և անուանեսցի

մեղանչէք. թող արեգակը ձեր 27
բարկութեան վերայ չմտնէ։ Եւ
տեղի չտաք սատանային։ Նա 28
որ գողանում էր, թող էլ չգող-
գանայ, այլ մանաւանդ աշխատէ
իր ձեռքերովը բարին գործե-
լով. որ ունենայ տալու պէտք
ունեցողին։ Ոչ մի գէշ խօսք 29
չդուրս գայ ձեր բերանից.
բայց այն՝ որ բարի է՝ շինու-
թեան համար հարկաւոր, որ
շնորհք տայ լսողներին։ Եւ մի 30
տրտմեցնէք Աստուծոյ սուրբ
Հոգին, որով կնքուեցաք փրկ-
ութեան օրուայ համար։ Ամեն 31
դառնութիւն և բարկութիւն և
սրտմտութիւն և աղաղակ և հայ-
հոյութիւն թող չէր առնուի
ձեզանից՝ ամեն չարութեան
հետ։ Եւ իրար հետ քաղցր 32
եղէք, գթած՝ իրար ներելով,
ինչպէս Աստուած էլ Քրիս-
տոսով ձեզ ներեց։

ԳԼ. Ե

Բրդ նմանող եղէք Աստու- 1
ծոյն ինչպէս սիրելի որդիքներ։
Եւ սիրով գնացէք, ինչպէս որ 2
Քրիստոս էլ մեզ սիրեց, և իր
անձը մեզ համար մատնեց,
պատարագ և զոհ Աստուծոյ
անոյշ հոտ լինելու. Բայց 3
պոռնկութիւն և ամեն պղծու-
թիւն, կամ ագահութիւն թող

մի՛ 'ի միջի ձերում, որպէս և
4 վայել է սրբոց. Եւ զաղբու-
թիւն, կամ խօսք յիմարու-
թեան, կամ խեղկատակութիւն
որ ո՛չ վայել է. այլ մանաւանդ
5 գոհութիւն: Օ՛այս տեղեկա-
ցեալ գիտասջի՛ք. թէ ամենայն
պոռնիկ, կամ պիղծ, կամ
ագահ, որ է կռապարիշտ՝ ո՛չ
ունի ժառանգութիւն յարքայ-
ութեանն Քրիստոսի և Աս-
տուծոյ: Մի՛ ոք զձեզ խաբեսցէ
6 բանիւք սնոտւովք. զի վասն
այսորիկ իսկ գայ բարկութիւն
Աստուծոյ 'ի վերայ որդւոցն
7 անհաւանութեան: Մի՛ այսու-
հետև լինիք բաժանորդք նոցա:
8 Օ՛ի թէպէտ և երբեմն էիք
խաւար, արդ լոյս էք 'ի Տէր.
իբրև զորդիս լուսոյ գնացէք.
9 Օ՛ի պտուղ լուսոյ ամենայն
բարութեամբ է՝ և արդարու-
թեամբ և ճշմարտութեամբ:
10 Փորձեցէք զինչ է հաճոյ Տե-
11 առն. Եւ մի՛ կցորդ լինիք
անպտղութեան գործոցն խա-
ւարի. այլ մանաւանդ յանդի-
12 մանեցէք: Օ՛ի որ 'ի ծածուկ
ինչ գործի 'ի նոսա՝ զայն և
13 խօսել աղտեղի է: Բայց ամե-
նայն ինչ յանդիմանեալ 'ի
լուսոյ՝ յայտնի լինի. զի ամենայն
14 ինչ որ յայտնի է՝ լոյս է: Վասն
որոյ և ասէ. Արի՛ որ ննջեսդ,
և կանգնեա՛ց 'ի մեռելոց, և
լուսատու լցցի քեզ Քրիստոս:

15 Տեսջի՛ք՝ որպէս ճշմարտիւ
չանուանուի ձեզանում ինչպէս
սրբերին կ'վայելէ: Եւ գար-
շութիւն, կամ յիմար խօսքեր,
կամ խեղկատակութիւն, որ չեն
վայելում. այլ մանաւանդ գո-
հութիւն: Քանզի սա գիտէք,
որ ոչ մի պոռնիկ, կամ պիղծ,
կամ ագահ, որ կռապաշտ է՝
ժառանգութիւն չունի Քրիս-
տոսի և Աստուծոյ արքայու-
թիւնումը: Ոչ ոք թող չխաբէ
6 ձեզ դարդակ խօսքերով. քանզի
այս պատճառով էլ՝ Աստուծոյ
բարկութիւնը գալիս է անհնա-
զանդութեան որդիների վերայ:
7 Ուրեմն մասնակից մի լինիք նո-
8 բանց: Վասն զի մի ժամանակ
խաւար էիք, իսկ հիմա լոյս էք
Տէրումը. լուսոյ որդիների պէս
9 գնացէք: Վասն զի Հոգու
պտուղը ամեն բարութիւնով է,
և արդարութիւնով, և ճշմար-
10 տութիւնով: Փորձեցէք թէ
11 ինչ է հաճոյ Տիրոջը: Եւ
մասնակից մի լինիք խաւարի
անպտուղ գործքերին. այլ մա-
12 նաւանդ յանդիմանեցէք: Քան-
զի նորանց միջումն ծածուկ
գործուածները խօսքով ասելն
13 էլ ամօթ է: Բայց ամեն բան՝
լուսոյն յանդիմանուած՝ յայտ-
նի է լինում. վասն զի ամեն
բան՝ որ յայտնի է լինում, լոյս
14 է: Որա համար էլ ասում՝
է. Վեր կաց, ով քնած, և
վեր կանգնիր մեռելներից, և
Քրիստոս կ'լուսաւորէ քեզ:
15 Արդ նայեցէք թէ ինչպէս

գնայցէք. մի՛ իբրև անիմաստք,
16 Այլ իբրև իմաստունք. գնեցէք
զժամանակս, զի աւուրքս չա-
17 րութեան են: Վասն այնորիկ
մի՛ լինիք անմիտք՝ այլ իմացարո՛ւք
18 զինչ կամք են Տեառն: Եւ մի՛
արբենայք գինւով, յորում
զեղխութիւն է. այլ մանաւանդ
19 լցարո՛ւք Հոգւով, խօսել* 'ի
սիրտս ձեր՝՝ սաղմոսիւք, և
օրհնութեամբք և երգովք
հոգեւորաւք. երգել և սաղմոս
ասել 'ի սիրտս ձեր Տեառն.
20 Գոհացարո՛ւք յամենայն ժամ
'ի վերայ ամենայնի, յանուն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի՝ Հօրն և Աստուծոյ:

21 Հնազանդ լերուք միմեանց
22 երկիւղիւն Քրիստոսի: Կանայք
իւրեանց արանց հնազանդ լիցին
23 իբրև Տեառն. Օ՛ի այր է
գլուխ կնոջ՝ որպէս և Քրիստոս
գլուխ է եկեղեցւոյ. և ինքն է
24 փրկիչ մարմնոյ: Այլ որպէս
եկեղեցին հնազանդ լինի Քրիս-
տոսի, նոյնպէս և կանայք
իւրեանց արանց յամենայնի:
25 Արք՝ սիրեցէք զկանայս ձեր.
որպէս և Քրիստոս սիրեաց
զեկեղեցի, և զանձն իւր մատ-
26 նեաց վասն նորա. Օ՛ի զնա
սրբեսցէ սրբութեամբ աւաղա-
27 նին բանիւ. Օ՛ի կացուսցէ
ինքն իւր յանդիման փառաւոր
զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ

զգուշութեամբ վարուիք. ոչ
16 թէ ինչպէս անխելքներ, Այլ
ինչպէս իմաստուններ. գնեցէք
ժամանակը, քանզի օրերը չար
17 են, Որա համար մի լինիք
անմիտ, այլ իմացէք թէ ինչ է
18 Տիրոջ կամքը: Եւ մի արբե-
նաք գինով, որ նորանում ա-
նառակութիւն կայ, այլ լցուե-
19 ցէք Հոգով, խօսելով ձեր մէջ
սաղմոսներով և օրհնութիւն-
ներով և հոգեւոր երգերով,
երգեցէք և սաղմոսեցէք ձեր
20 սրտերումը Տիրոջը: Ամեն ժա-
մանակ ամեն բանի համար գո-
հացէք Աստուածանից և Հօ-
րից՝ մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի անունովը:
21 Իրար հնազանդ եղէք Ա-
22 տուծոյ վախովը: Կանայք,
հնազանդեցէք ձեր մարդկանցը
23 ինչպէս Տիրոջը: Արդն է
կնոջ գլուխն ինչպէս Քրիստոս
էլ եկեղեցու գլուխը, և ինքն է
24 մարմնոյն փրկիչը: Բայց ինչ-
պէս եկեղեցին հնազանդ է
լինում Քրիստոսին, այնպէս
էլ կանայք՝ իրանց մարդկանցն
25 ամեն բանի մէջ: Արդիկ,
սիրեցէք ձեր կանանցը, ինչպէս
Քրիստոս էլ սիրեց եկեղեցուն
և իր անձը մատնեց նորա հա-
մար. Որ նորան սրբէ մաքրե-
26 լով ջրի սրբութիւնովը խօսքով.
27 Որ իր առջև փառաւոր կանգ-
նեցնէ եկեղեցին, որ չունենայ

* 'Ի Յոյն. ընդ միմեանս

արատ՝ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայնպիսեաց. այլ զի իցէ սուրբ և անարատ:
28 Այնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ իբրև զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին
29 իւր, զանձն իւր սիրէ: Զի ոչ ոք երբէք ատեայ զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա, որպէս և Քրիստոս զեկեղեցի.
30 Զի անդամք եմք մարմնոյ նորա, 'ի մարմնոյ նորա և
31 յոսկերաց նորա: Վասն այսորիկ թողցէ այր զՀայր և զմայր իւր, և երթիցէ զՀետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին 'ի
32 մարմին մի: Խորհուրդս այս մեծ է՝ բայց ես ասեմ 'ի
33 Քրիստոս և յեկեղեցի: Այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրաքանչիւրոք զիւր կին այնպէս սիրեսցէ՝ իբրև զիւր անձն. և կին երկնչիցի յառնէ իւրմէ:

ԳԼ. Զ

1 Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց 'ի Տէր. զի այն
2 է արժանն: Պատուեա՛ զՀայր քո և զմայր. որ է առաջին
3 պատուիրան յաւետիան. Զի քեզ բարի եղիցի, և երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի:
4 Հայրք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնուցանիջիք մի արատ կամ խորշոմութիւն կամ ուրիշ բաներ, որ սուրբ և անարատ լինի: Այսպէս
28 պէտք է մարդիկ սիրեն իրանց կանանցը, ինչպէս իրանց մարմինները. ով որ իր կնկանը սիրում է, իրան է սիրում:
29 Վասնզի ոչ ով իր անձը չէ ատել, այլ կերակրում է և պահպանում է նորան. ինչպէս Տէրն էլ եկեղեցին: Որովհետև
30 նորա մարմնոյ անդամներն ենք, նորա մարմնիցը և նորա ոսկորներիցը: Սորա համար մարդը
31 կ'թողէ իր հօրը և մօրը, և իր կնկան կ'յարէ և երկուքը մէկ մարմին կ'լինին: Այս խոր-
32 հուրդը մեծ է, բայց ես Քրիստոսի և եկեղեցու վրայ եմ ասում: Սակայն դուք էլ մի
33 ըստ միոջէ ամեն մէկն իր կնկանը թող այնպէս սիրէ ինչպէս իր անձը. և կինը վախենայ իր մարդուցը:

ԳԼ. Զ

1 Որդիք, հնազանդ եղէք ձեր ծնողներին Տէրով. վասն զի
2 այն է արժանը: Պատուիր քո հօրը և մօրը, սա է առաջին
3 պատուիրանքը խոստմունքով, Որ քեզ լաւ լինի, և երկար
4 ապրիս երկրի վերայ: Եւ հայրեր, մի բարկացնէք ձեր որդկանցը. այլ մեծացրէք նորանց

զնոսա խրատու և ուսմամբ
5 Տեառն: Ծառայք՝ հնազանդ լերուք տէրանց ձերոց մարմնաւորաց, ահիւ և դողութեամբ և միամտութեամբ սրտից ձերոց՝
6 որպէս և Քրիստոսի: Մի՝ առ ականէ ծառայել իբրև մարդահաճոյք. այլ իբրև ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ. Սրտի մտօք ծառայել՝
7 իբրև Տեառն, և մի իբրև
8 մարդկան: Գիտասջիք՝ թէ իւրաքանչիւրոք որ զինչ առնէ զբարին, զնոյն ընդունի և 'ի Տեառնէ՝ եթէ ծառայ և եթէ
9 ազատ: Եւ դուք տեարք՝ զնոյն առնիջիք առ նոսա. ներ ելով առնել զպատուհասն. գիտասջիք թէ և նոցա և ձեր Տէր գոյ յերկինս. և ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա:

10 Այսուհետև զօրացարուք Տէրամբ, և կարողութեամբ զօրու-
11 թեան նորա: Եւ զգեցարուք զսպառազինութիւն Աստուծոյ. զի կարող լինիջիք կալ ընդդէմ՝
12 հնարից Սատանայի: Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան. այլ ընդ իշխանութիւնս, և ընդ պետութիւնս, և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութեան՝ որ 'ի ներքոյ երկնից:

13 Վասն այսորիկ առէք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարող լինիջիք 'ի դիմի հարխրատով և Տիրոջ ուսմունքովք:
5 Ծառայք, հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին, վախով և դողալով ձեր սրտի միամտութեամբն ինչպէս Քրիստոսին. Ոչ թէ աչքի առջև
6 ծառայելով մարդոց հաճոյ լինողների պէս, այլ ինչպէս Քրիստոսի ծառաներ, որ Աստուծոյ կամքն են անում սրբտանց, Ցօժարութեամբ ծա-
7 ռայելով Տիրոջը և ոչ թէ մարդկանց. Գիտենալով որ
8 ամեն մէկն ինչ բարի որ անէ, նոյնը կընդունի Տէրից. թէ ծառայ լինի և թէ ազատ: Եւ
9 դուք տէրեր, նոյնն արէք նորանց՝ թողելով սպառնալիքը. գիտացէք որ հէնց ձեզ ինքներիդ էլ Տէր կայ երկնքումը, և նորա առջև երեսպաշտութիւն չկայ:
10 Այսուհետև, եղբայրներս, զօրացէք Տէրով և նորա զօրու-
11 թեան կարողութիւնովը: Եւ Աստուծոյ զէնքերը հագէք. որ կարող լինիք սատանայի հնարքներին հակառակ կենալ: Որով-
12 հետև մեր պատերազմը արիւնի և մարմնոյ հետ չէ, այլ իշխանութիւնների և պետութիւնների հետ, այս աշխարհի խաւարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ որ երկնաւորների մէջ են:
13 Սորա համար Աստուծոյ զէնքերն առէք, որ կարող լինիք հակառաք կենալ չարութեան

կանել չարին յաւուրն չարու-
14 թեան։ Եւ իբրև զամենայն ինչ
կատարիցէք, հաստատուն կա-
ցէք, զտեղի կալջիք, պնդեալ
զմէջս ձեր ճշմարտութեամբ, և
զգեցեալ զզրահն արդարու-
15 թեան, Եւ ոտացեալ զոտս
պատրաստութեամբ աւետարա-
16 նին խաղաղութեան։ Եւ ՚ի
վերայ ամենայնի առէք զվահանն
հաւատոց. որով կարող լինիջիք
զամենայն նետս մուխս չարին
17 շիջուցանել։ Եւ առէք ըզսա-
ղաւարտն փրկութեան, և ըզսու-
սեր Հոգւոյն, որ է բանն Ա-
18 ստուծոյ. Ամենայն աղօթիւք և
խնդրուածովք՝ աղօթս առնել
յամենայն ժամանակի Հոգւով.
Եւ ՚ի նոյն տքնիջիք ամենայն
ժուժկալութեամբ և խնդրուա-
19 ծովք՝ վասն ամենայն սրբոց, Եւ
վասն իմ. զի ինձ տացի բան ՚ի
բանալ բերանոյ իմոյ, համար-
ձակութեամբ ցուցանել ըզխոր-
20 հուրդ աւետարանին. Վասն
որոյ պատգամաւորիմ կապա-
նօքս, զի նովին համարձա-
կեցայց, որպէս և պարտ իցէ
ինձ խօսել։

21 Բայց զի գիտիցէք և դուք
զինէն՝ զինչ գործիցեմ, զամե-
նայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս
սիրելի եղբայր՝ և հաւատարիմ
22 պաշտօնեայ ՚ի Տէր. Զոր
առաքեցի առ ձեզ դմին իրի, զի
գիտասջիք դուք զմէնջ, և
մխիթարեսցէ զսիրտս ձեր։

օրումբ, և ամենը կատարելով
հաստատ կանգնիլ. Արդ հաս- 14
տատ կանգնեցէք ձեր մէջքերը
ճշմարտութեամբ գօտեւորուած,
և արդարութեան զրահը հա-
գած, Եւ յէր ոտները կօշիկ 15
հագած խաղաղութեան աւե-
տարանի պատրաստութիւնով։
Եւ ամենի վերայ հաւատքի վա- 16
հանն առէք. որով կարող լի-
նիք չարի ամէն կրակոտ նետերը
հանգցնել։ Եւ փրկութեան 17
սաղաւարտն առէք, և Հոգու
սուրը որ Աստուծոյ խօսքն է։
Ամէն աղօթքով և աղաչանքով 18
աղօթք արէք ամէն ժամանակ
Հոգով. և սորանում հսկեցէք
բոլոր յարատևութեամբ և ա-
ղաչանքով ամէն սրբերի հա-
մար, Եւ ինձ համար էլ. որ 19
ինձ խօսք տրուի իմ բերանը
բանալու ժամանակ, որ համար-
ձակութիւնով հասկացնեմ աւե-
տարանի խորհուրդը։ Որի հա- 20
մար ես պատգամաւոր եմ կա-
պանքներում, որ նորանով հա-
մարձակ լինում, ինչպէս որ
պէտք է ինձ խօսիլ։

Բայց որպէս զի դուք էլ 21
գիտենաք ինձ համար, թէ ինչ
եմ գործում. ամէն բան կ՚իմաց-
նէ ձեզ Տիւքիկոս եղբայրը և
Տէրում պաշտօնեայն. Որին 22
հէնց դորա համար ուղարկեցի
ձեզ մօտ, որ մեր մասին տեղե-
կանաք, և նա ձեր սրտերը
մխիթարէ։

23 Խաղաղութիւն ընդ եղբարս,
և սէր հաւատովքն հանդերձ
Աստուծոյ ՚ի Հօրէ՝ և ՚ի
Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
24 Շնորհք ընդ ամենեսին որք
սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիս-
տոս անեղծութեամբ. ամէն։

Առ Եփեսացիս՝ գրեցաւ ՚ի
Հռովմէ ՚ի յեռն Տէրէոսէ։

Խաղաղութիւն լինի եղբայր- 23
ների հետ, և սէր հաւատքով
Աստուած Հօրից և Տէր Յի-
սուս Քրիստոսից։ Շնորհ- 24
քը լինի այն ամենի հետ, որ
մեր Տէր Յիսուսին Քրիստոսին
սիրում են անկեղծութեամբ.
Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Տիմոթէոս, ծառայք Յիսուսի Քրիս-
տոսի՝ ամենայն սրբոց ի Քրիս-
տոս Յիսուս, որ են ի կողմանս
Փիլիպեցւոց, եպիսկոպոսակցօք
2 և սարկաւագօք։ Շնորհք ընդ
ձեզ և խաղաղութիւն Աստու-
ծոյ Հօրէ մերմէ՝ և ի Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։
3 Գոհանամ զԱստուծոյ իմոյ
ի վերայ ամենայն յիշատակաց
4 ձերոց, Յամենայն ժամ յամե-
նայն խնդրուածս իմ՝ վասն ձեր
ամենեցուն առնել աղօթս խրն-
5 դութեամբ. Վասն հաղորդու-
թեան ձերոյ ընդ աւետարանին,
յօրէ յառաջնմէ մինչև ցայժմ։
6 Վստահ եմ յայդ, թէ որ
սկսաւն ի ձեզ զգործս բարեաց՝
կատարեսցէ մինչև յօրն Յի-
7 սուսի Քրիստոսի. Որպէս իրաւ-
իսկ թուի ինձ խորհել զայս
վասն ձեր ամենեցուն. վասն
ունելոյ ինձ զձեզ ի սրտի ի
կապանս իմում, և ի պատաս-
խանատուութեան իմում՝ և ի

Պօղոս և Տիմոթէոս՝ Յի- 1
սուսի Քրիստոսի ծառա-
ները. ամեն սրբերին Քրիստոս
Յիսուսում, որ Փիլիպէումն
են, եպիսկոպոսների և սարկա-
ւագների հետ։ Շնորհք լինի 2
ձեզ հետ և խաղաղութիւն Աս-
տուած մեր Հօրից, և Տէր
Յիսուս Քրիստոսից։
Գոհանում եմ իմ Աստու- 3
ծուց ամեն ժամանակ որ ձեզ
յիշում եմ, Որ ամեն ժամանակ 4
իմ ամեն աղաչանքներումը ձեր
ամենի համար աղօթք եմ ա-
նում ուրախութիւնով. Ձեր 5
աւետարանին հաղորդ լինելու
համար այն առաջի օրից մինչև
հիմա։ Եւ հաստատ համո- 6
զուած եմ սորան, թէ նա որ
ձեզանում սկսեց այս բարի
գործը, կ'կատարէ էլ մինչև
Յիսուսի Քրիստոսի օրը։ Ինչ- 7
պէս որ պէտք է ինձ մտածել
այս բանը ձեր ամենի հա-
մար. որովհետև ձեզ ի՛մ սրտի
մէջ ունիմ՝ իմ կապանքներումը,

հաստատութեան աւետարանին,
կցորդս ինձ շնորհաց զձեզ ամե-
8 նեսին լինել։ Վկայ է ինձ
Աստուած, որպէս անձկացեալ
եմ առ ձեզ ամենեսին գթովքն
9 Քրիստոսի Յիսուսի։ Եւ զայն
աղօթս առնեմ, զի սէրն ձեր ևս
քան զևս առաւել լիցի՝ ի գիտու-
թեան և յամենայն իմաստու-
10 թեան, Ընտրել ձեզ զլաւն՝
զի իցէք հաստատունք և ա-
ռանց գայթագղութեան յա-
11 ւուրն Քրիստոսի. Լցեալ պըտ-
ղովք արդարութեան ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի ի փառս և
ի գովեստ Աստուծոյ։

12 Կամիմ թէ գիտիցէք Եղբարք,
զի որ ինչ վասն իմ էր, ևս քան
զևս ի յառաջադիմութիւն աւե-
13 տարանին եկն. Մինչև կա-
պանաց իմոց յայտնի լինել ի
Քրիստոս յամենայն հրապա-
րակիս, և առ այլս ամենեսին.
14 Եւ առ բազում եղբարս ի
Տէր, որ վստահ են կապանօքս
իմովք՝ առաւել ևս համարձա-
կել՝ առանց երկիւղի զբանն
15 Աստուծոյ խօսել։ Ոմանք առ
նախանձու և հակառակութեան,
և ոմանք մտադիւրութեամբ
16 իսկ զՔրիստոս քարոզեն. Եւ
ոմանք ի սիրոյ. քանզի գիտեն՝

և աւետարանի ջատագովու-
թեան և հաստատութեան ժա-
մանակ. որ դուք ամենքդ ինձ
հետ շնորհացը հաղորդ եղաք։
Վասն զի Աստուած ինձ վկայ 8
է, թէ ինչպէս ձեր ամենիդ փա-
փագում եմ Յիսուսի Քրիստոսի
գութովը. Եւ սա աղօթք եմ 9
անում, որ ձեր սէրն էլ աւելի
և աւելի հարստանայ գիտու-
թիւնով և ամեն հասկացողու-
թիւնով. Որ դուք լաւագոյնն 10
ընտրէք, որ մաքուր լինիք և
առանց գայթակղութեան Քրի-
ստոսի օրումը, Արդարու- 11
թեան պտուղներով լցուած՝ Յի-
սուսի Քրիստոսի ձեռովը, Աս-
տուծոյ փառաց և գովասանաց
համար։
Կամենում եմ, եղբարք, որ 12
գիտենաք, թէ ինչ բան որ իմ
մասին եղաւ, աւելի աւետա-
րանի յառաջադիմութեան հա-
մար յաջողուեցաւ։ Մինչև 13
որ իմ կապանքները Քրիստո-
սում յայտնի եղան բոլոր պա-
լատին և ուրիշ ամենքին էլ. Եւ 14
Տէրումը եղբայրներից շատերը
իմ կապանքներովը քաջալե-
րուած աւելի համարձակ եղան
Աստուծոյ խօսքը առանց վախի
խօսելու։ Ոմանք նախանձով և 15
հակառակութեան պատճառով,
և ոմանք էլ բարեյօժար մտքով
քարոզում են Քրիստոսին։ *Եւ 16

* Ոմանք 16դ տունը 17դէն յետոյ են դնում։

եթէ ՝ի պատասխանատուու-
17 թիւն աւետարանին կամ. Եւ
ոմանք առ հեստութեան զՔրիս-
տոս պատմեն. այլ ոչ սրբու-
թեամբ. քանզի համարին նե-
ղութիւնս յարուցանել ՝ի վե-
18 րայ կապանաց իմոց: Բայց
այս զինչ է. որով օրինակաւ և
իցէ, եթէ պատճառանօք՝ և
եթէ ճշմարտութեամբ՝ Քրիս-
տոս պատմի. և ընդ այս խնդամ՝
19 այլ և ուրախ ևս եղէց: Զի
գիտեմ, եթէ այս պահի ինձ ՝ի
փրկութիւն ՝ի ձերոց խնդրուա-
ծոց՝ և ՝ի պարգևաց Հոգւոյն
20 Յիսուսի Քրիստոսի, Ըստ
ակնկալութեան և յուսոյն իմոյ.
զի մի իւիք յամօթ եղէց, այլ
ամենայն համարձակութեամբ՝
որպէս և յամենայն ժամ, և
այժմ մեծասցի Քրիստոս ՝ի
մարմնի իմում, եթէ կենօք՝ և
21 եթէ մահու: Զի ինձ կեանք
Քրիստոս է, և մեռանել շահ:
22 Ապա եթէ կեանքս մարմնոյ՝
այս ինձ պտուղ գործոյ է. և
զինչ ընտրեցից՝ զայն ոչ գիտեմ:
23 Նեղեալ եմ յերկոցունց. զցան-
կալն ելանել և ընդ Քրիստոսի
լինել՝ առաւել լաւ համարիմ.
24 Եւ կալ մնալ աստէն ՝ի մարմնի,
25 կարևոր ևս վասն ձեր: Եւ
զայս յուսացեալ գիտեմ, եթէ
կացից՝ և մնացից ամենեցուն
ձեզ, ՝ի ձեր զարգանալ և խրախ
26 լինել ՝ի հաւատս. Զի պար-
ծանք ձեր առաւել լիցին ՝ի
Քրիստոս Յիսուս ինև ՝ի
ոմանք հակառակութենից են
քարոզում Քրիստոսին, և ոչ
թէ անկեղծ. կարծելով թէ իմ
կապանքների վերայ նեղութիւն
բերեն: Իսկ ոմանք սէրից. 17
գիտենալով որ Աւետարանի
ջատագովութեան համար կանգ-
նած եմ: Բայց ի՞նչ. ինչ կեր- 18
պով էլ որ լինի, թէ պատճա-
ռանքով՝ և թէ ճշմարտութիւ-
նով՝ Քրիստոսն է քարոզվում.
և սորա համար ուրախ եմ՝ և
ուրախ էլ կ՝լինիմ: Վասն զի 19
գիտեմ, թէ այս բանը վերջա-
պէս ինձ փրկութեան պատճառ
կ՝լինի ձեր աղօթքովը՝ և Յի-
սուսի Քրիստոսի Հոգու ձեռնը-
տուութիւնովը: Իմ ակնկա- 20
լութեան և յուսոյ համեմատ
ոչ մի բանով ամօթ չեմ լինիլ,
այլ բոլոր համարձակութիւնով
ինչպէս ամեն ժամանակ, հիմա
էլ Քրիստոս փառաւորուի իմ
մարմնումը, թէ կեանքով և թէ
մահով: Վասն զի ինձ համար 21
կեանքը Քրիստոս է, և մեռնիլը՝
շահ: Բայց եթէ մարմնոյ մէջ 22
ապրիլը իմ գործոյս պտուղ է
ԸՆԷՐՈՒՄ. էլ չգիտեմ՝ թէ որն
ընտրեմ: Երկու կողմանէ էլ 23
նեղ տեղ եմ. փափագելով
դուրս գալ և Քրիստոսի հետ
լինելը. վասն զի շատ աւելի լաւ
է: Բայց մարմնումը կենալը 24
աւելի հարկաւոր է ձեզ համար:
Եւ հաստատ համոզուած սա 25
գիտեմ. որ կ՝կենամ և կ՝մնամ
ձեր ամենի հետ, որ դուք զար-

միասնագամ գալստեան իմում
առ ձեզ:

27 Միայն թէ արժանի աւետա-
բանին Քրիստոսի գնայցէք.
զի եթէ գայցեմ, և տեսանիցեմ
զձեզ. և եթէ հեռի իցեմ, և
լսիցեմ զձէնդ. զի հաստատուն
կայցէք ՝ի մի հոգի, և միով
շնչովնահատակիցիք ՝ի հաւատս
28 աւետարանին: Եւ մի՛ զանգի-
տիցէք՝ և մի՛ իւիք ՝ի հակառա-
կորդաց անտի. որ է նոցա
հանդէս կորստեան, և ձերոյ
29 փրկութեան: Եւ այդ Աստ-
ուծոյ է՝ որ ձեզ շնորհեցաւ
վասն Քրիստոսի. ոչ միայն ՝ի
նա հաւատալ՝ այլ և վասն նորա
30 չարչարիլ. Զնոյն պատերազմ
ունել՝ զոր յիսն տեսիք և այժմ
լսէք յինէն:

գանաք և ուրախ լինիք հա-
ւատքով: Որ ձեր պարծանքը 26
աւելի լինի Քրիստոս Յիսուսով
ինձանով՝ իմ դարձեալ ձեզ մօտ
գալու համար:

Միայն թէ Քրիստոսի աւե- 27
տարանին վայել կերպով գնա-
ցէք. որ՝ թէ գամ և տեսնեմ
ձեզ, և թէ հեռու լինիմ և
լսեմ ձեր մասին, որ հաստատ
էք մէկ հոգով և մէկ շունչով
պատերազմիք աւետարանի հա-
ւատքի համար: Եւ ոչ մի 28
բանով մի զարհուրիք հակա-
ռակորդիցը, որ դա նորանց
համար նշան է կորստի, և ձեզ
համար՝ փրկութեան: Եւ ձեզ 29
Աստուածանից դա շնորհք եղաւ
Քրիստոսի համար, ոչ միայն
հաւատալ նորան, այլ նորա
համար չարչարուիլ էլ: Նոյն 30
պատերազմն ունենալով՝ որ
ինձանում տեսաք, և հիմա ին-
ձանից լսում էք:

ԳԼ. Բ

1 Արդ՝ եթէ մխիթարութիւն
ինչ իցէ ՝ի Քրիստոս, եթէ
սփոփութիւն սիրոյ՝ եթէ հա-
ղորդութիւն Հոգւոյ, եթէ
գթութիւն և ողորմութիւն.
2 Լցէք զանգութիւնս իմ. զնոյն
խորհիջիք, զնոյն սէր յանձին
ունիջիք, համաշունչք միախոր-
3 հուրդք. Մի՛ ինչ ըստ գրգռու-

ԳԼ. Բ

Արդ եթէ մխիթարութիւն 1
կայ Քրիստոսով, եթէ սիրոյ
սփոփութիւն, եթէ Հոգու հա-
ղորդութիւն, եթէ գթածու-
թիւն և ողորմութիւն. Լցրէք 2
իմ ուրախութիւնը, որ
նոյն միտքն ունենաք, նոյն սէրն
ունենալով, միաշունչ մի և
նոյնը խորհէք: Ոչ մի բան 3

թեան, և մի ինչ ըստ սնապարծութեան. այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել
4 առաւել քան զանձինս. Մի զանձանց ևեթ գիտել՝ այլ իւրաքանչիւրոք զընկերին: Օ՛այն
5 խորհեսցի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ, որ և 'ի Քրիստոս Յիսուս. Որ 'ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զ լինելն
7 հաւասար Աստուծոյ. Այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, 'ի նմանութիւն մարդկան եղեալ՝ և կերպարանօք գտեալ իբրև
8 զմարդ: Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ՝ և
9 մահու խաչի: Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն որ 'ի վեր է քան զամենայն անուն:
10 Օ՛ի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. Եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ Հօր:
12 Այսուհետև սիրելիք իմ, որպէս յամենայնի հնազանդեցարուք, մի միայն 'ի գալստեան իմում, այլ առաւել ևս այժմ յորժամ հեռիս եմ 'ի ձէնջ, ահիւ և դողութեամբ զանձանց
13 փրկութիւն գործեցէք: Օ՛ի Աստուած է՝ որ յաջողէ 'ի ձեզ չլինի դրդռումով, և ոչ էլ սնապարծութիւնով. այլ խոնարհութիւնով թող մէկը միւսին իր անձնից աւելի լաւ
4 համարէ: Մինակ ձեր անձնների բանին մտիկ չտաք, այլ ամեն
5 մէկն իր ընկերի բանին էլ: Ձեր ամեն մէկն թող այն մտածէ, որ էլ Քրիստոս Յիսուսումն էր.
6 Որ Աստուծոյ կերպարանքումը լինելով, յափշտակութիւն չհամարեց Աստուծոյն հաւասար
7 լինիլ: Այլ իր անձն ունայնացրեց, և ծառայի կերպարանք առնելով՝ մարդկանց նման լինելով և կերպարանքով մարդուպէս գտնուելով.
8 Իրան խոնարհեցրեց, և հնազանդ եղաւ մինչև 'ի մահ՝ և այն էլ խաչի
9 մահ: Նորա համար էլ Աստուած շատ բարձրացրեց նորան, և նորան մի անուն շնորհեց, որ
10 ամեն անունից աւելի բարձր է. Որ Յիսուսի անունովն կրկնուի ամեն ծունկ երկնաւորների և երկրաւորների և երկրի տակ
11 լինողների, Եւ ամեն լեզու դաւանէ, թէ Յիսուս Քրիստոս Տէր է Հօր Աստուծոյ փառքի համար:
12 Ուրեմն, իմ սիրելիներ, ինչպէս ամեն ժամանակ հնազանդեցաք՝ ոչ միայն իմ ներկայութիւնումը, այլ հիմա էլ աւելի իմ բացակայութիւնումը, ահով և դողալով գործեցէք ձեր
13 անձների փրկութիւնը: Վասն զի Աստուած է՝ որ ներգործում

զկամելն և զառնելն վասն հա-
14 ճութեան: Օ՛ամենայն ինչ գործեցէք առանց տրտնջելոյ և
15 քրթմնջելոյ. Օ՛ի եղիջիք ամբիծք և անարատք՝ որդիք Աստուծոյ, անմեղք 'ի մէջ կամակոր և խեղաթիւր ազգին. յորոց միջի երևիցիք իբրև
16 լուսաւորք յաշխարհի. Օ՛բանս կենաց ունել յանձինս՝ 'ի պարծանս ինձ յաւուրն Քրիստոսի. զի ոչ ընդունայն ինչ ընթացայ՝ և ոչ ընդունայն վաստակեցի:
17 Այլ թէպէտև նուիրիմ 'ի վերայ պատարագի և պաշտաման հաւատոց ձերոց, խնդամ և ուրախակից եմ ամենեցուն ձեր:
18 Նոյնպէս և դուք խնդացէք՝ և ուրախակից եղերուք ինձ:

19 Բայց յուսամ 'ի Տէր Յիսուս զՏիմոթէոս վաղվաղակի արձակել առ ձեզ. զի և ինձ սրտի դիւր լինիցի, յորժամ
20 գիտիցեմ զինչ զձէնջ: Օ՛ի ոչ զոք ունիմ համաշունչ՝ եթէ ընտանեաբար հոգայցէ վասն ձեր:
21 Օ՛ի ամենեքին զանձանց խնդրեն, և ոչ զՅիսուսի Քրիստոսի:
22 Բայց զփորձ նորա գիտէք և դուք, զի իբրև որդի հօր ծառայեաց ընդ իս յաւետարանին:
23 Արդ՝ զսա ակն ունիմ արձակել՝ որպէս նոյնհետայն զանձնէ
24 ստուգեցից: Այլ յուսացեալ եմ 'ի Տէր՝ թէ և ես իսկ ընդ
25 հուպ եկից: Բայց լաւ համարեցայ զԵպափրոդիտոս զեղբ-

է ձեզանում կամենալն էլ՝ առնելն էլ էր հաճութեան պէս:
Մեն բան գործեցէք առանց 14
տրտնջանքի և վիճաբանութիւնների: Որ լինիք անբիծ և ա- 15
նարատ՝ որդիք Աստուծոյ առանց մեղադրանքի այն կամակոր և ծռած ազգի մէջ, որոնց միջումը երևիք ինչպէս լոյս տուողներ աշխարհքի մէջ. Կենաց խօսքը 16
պահելով ինձ պարծանք լինելու համար Քրիստոսի օրում. որ զուր տեղն չվազեցի, և զուր չաշխատեցի: Բայց թէև ըն- 17
ծայուիմ ձեր հաւատքի պատարագի և պաշտամունքի վերայ՝ ուրախ եմ, և ձեր ամենի հետ ուրախանում եմ: Այն- 18
պէս էլ դուք ուրախ եղէք, և ինձ հետ ուրախացէք:

Բայց յոյս ունիմ Տէր Յի- 19
սուսում, որ Տիմոթէոսին շուտով ուղարկեմ ձեզ մօտ, որ սիրտս էլ հանգստանայ, երբոր ձեր վիճակն իմանամ: Վասն 20
զի մէկը չունիմ միասիրտ, որ մտերմաբար հոգս տանէ ձեզ համար: Վասն զի ամենքն իրենց 21
բաներն են որոնում և ոչ թէ Յիսուսի Քրիստոսինը: Բայց 22
դուք գիտէք նորա ընտիր լինելը, որ ինչպէս մի որդի էր հօրը՝ այնպէս ինձ հետ ծառայեց աւետարանին: Ուրեմն յոյս 23
ունիմ որ սորան ուղարկեմ իսկոյն, երբոր իմ անձի մասին կ'տեղեկանամ: Բայց վստահ 24
եմ Տէրումը, որ ինքս էլ շու-

բայր՝ և զգործակից և զլնուորակից իմ, զձեր առաքեալ, և զպաշտօնեայ իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ։ Քանզի և ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել զամենեսին զձեզ. և հոգայր՝ զի ձեր լուեալ էր թէ խոթացաւ։ Եւ արդարև խոթացաւ մերձ ՝ի մահ. այլ Աստուած ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն, այլ և ինձ՝ զի մի տրտմութիւն ՝ի վերայ տրտմութեան կրիցեմ։ Արդ՝ փութապէս յղեցի զնա, զի տեսեալ զնա միւսանգամ՝ ուրախ լինիցիք, և ես առանց տրտմութեան եղէց։ Ընկալջիք զնա ՝ի Տէր ամենայն խնդութեամբ, և զայնպիսիսն առ պատուականս ունիջիք. Զի վասն գործոյ Տեառն մինչև ՝ի մահ մերձեցաւ, գուն գործեալ ոգւովք չափ, զի լցցէ զձեր պակասութիւն իմոյ սպասաւորութեան։

ԳԼ. Գ

1 Այսուհետև եղբարք իմ, ուրախ լերուք ՝ի Տէր. զնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչինչ դանդաղելի է, և ձեզ կարի զգուշալի։ Զգոյշ եղերուք ՝ի շանց անտի. զգոյշ եղերուք ՝ի չար տուով գամ։ Զ՝իսն հարկաւոր համարեցի՝ որ Եպափրոդիտոս եղբօրը՝ գործիս և զլնուորուութեանս ընկերին, այն ձեր առաքեալին, և իմ պէտք լինող բաներուն պաշտօնեային ուղարկեմ ձեզ մօտ։ Զ՝ասն զի ինքն էլ խիստ փափագ ունէր ձեզ ամենիդ պէսնէլու և հոգս էր քաշում՝ որ լսել էիք թէ նա հիւանդացաւ։ Եւ իրաւի որ հիւանդացաւ մերձ ՝ի մահ, բայց Աստուած ողորմեց նորան. ոչ միայն նորան, այլ ինձ էլ, որ տրտմութիւն տրտմութեան վերայ չունենամ։ Ուրեմն աւելի շտապով ուղարկեցի նորան, որ տեսնելով նորան դարձեալ ուրախ լինիք, և ես էլ առանց տրտմութեան լինիմ։ Արդ ընդունեցէք նորան Տէրումն ամեն ուրախութիւնով, և այնպիսիներին պատուական համարեցէք։ Զ՝ասն զի Քրիստոսի գործի համար մինչև մահուան մօտեցաւ. իր անձը վտանգի մէջ դցելով, որ ձեր ինձ ծառայելու պակասութիւնը լցացնէ։

ԳԼ. Գ

1 Այսուհետև, իմ եղբարք, ուրախ եղէք Տէրումը, մի և նոյն բաները ձեզ գրելը ինձ համար ձանձրութիւն չէ, բայց ձեզ ապահովութիւն է։ Զգոյշ կացէք շներից. զգոյշ կացէք

մշակաց անտի. զգոյշ եղերուք 3 ՝ի կրճատութենէ անտի։ Զի մեք թլփատութիւն մեք եմք, որ հոգւովն Աստուծոյ պաշտեմք, և պարծիմք ՝ի Քրիստոս Յիսուս, և ոչ ՝ի մարմին պանծացեալ եմք։ Թէպէտ և ես իսկ 4 զնոյն վստահութիւն ունիմ ՝ի մարմնի, եթէ ոք համարիցի այլազգ վստահ լինել ՝ի մարմին, 5 առաւել ևս ես. թլփատութեամբ ութօրեայ, յազգէ Իսրայէլի, ՝ի ցեղէ Բենիամինի. Եբրայեցի յԵբրայեցւոց, ըստ 6 օրինացն փարիսեցի. Ըստ նախանձայոյզն լինելոյ՝ հալածէի զեկեղեցին. ըստ արդարութեան 7 օրինացն լեալ անարատ։ Այլ որ ինչ ինձ շահն էր՝ զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի։ 8 Այլ և համարիմ իսկ զամենայն վնաս՝ վասն առաւել գիտութեանն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ. վասն որոյ զամենայնսին զրկեցայ՝ և համարիմ կղկղանս, զի զՔրիստոս շահեցայց, 9 Եւ գտայց ՝ի նմա. իբրև ոչ եթէ զիմ ինչ արդարութիւն՝ որ յօրինաց անտի է ունիցիմ, այլ զՀաւատոցն Քրիստոսի, որ յԱստուծոյ արդարութիւնն է. Հաւատովք ճանաչել զնա՝ և զզօրութիւն յարութեան նորա՝ և զՀաղորդութիւն չարչարանաց նորա, կերպարանակից լինել մահուան նորա. Թէ որպէս հասից ՝ի 11 մեռելոցն յարութիւն։ Իբր 12

չար մշակներից. զգոյշ կացէք կրճատութիւնից։ Զ՝ասն զի 3 մեք ենք թլփատութիւնն, որ հոգով պաշտում ենք Աստուծոյն, և Քրիստոս Յիսուսովը պարծենում ենք, և մարմնով չենք պարծենում։ Թէ և ես 4 վստահութիւն ունիմ մարմնոյ կողմանէ էլ. եթէ մի ուրիշը կարծէ որ մարմնոյ վստահ լինի, աւելի ևս ես։ Ութ օրեայ 5 թլփատուած, Իսրայէլի ազգից, Բենիամինի ցեղից, Եբրայեցի Եբրայեցիներից, օրինաց կողմանէ փարիսեցի. Ջերմեռանդութեան կողմանէ հալածող էի եկեղեցուն. օրէնքի արդարութեան մոտիկ տալով անարատ էի։ Բայց ինչ բան որ 7 ինձ շահ էր, այն վնաս համարեցի Քրիստոսի համար։ Եւ 8 հէնց ամեն բաներ էլ վնաս եմ համարում մեր Տէր Յիսուս Քրիստոսի գերազանց գիտութեան համար, որի պատճառով ամեն բանից զրկուեցայ, և նոքանց աղբ եմ համարում, որ Քրիստոսին շահեմ, Եւ նո 9 բանում գտնուիմ. և ոչ թէ իմ արդարութիւնն ունենամ՝ որ օրէնքից է, այլ այն որ Քրիստոսի հաւատքից է. այն արդարութիւնը որ Աստուծուց է հաւատքով։ Որ ճանաչեմ 10 նորան՝ և նորա Յարութեան զօրութիւնը՝ և նորա չարչարանքի մասնակից լինելը, նորա մահուան կերպարանակից լինե-

ոչ եթէ արդէն առեալ իցեմ,
կամ արդէն կատարեալ իցեմ.
զհետ մտեալ եմ թէ հասցից,
* մանաւանդ թէ ըմբռնեալ
իսկ իցեմ՝՝՝ ՝ի Քրիստոսէ Յի-
13 սուսէ: Եղբարք՝ ես ոչ համարիմ
զանձն իմ թէ հասեալ իցեմ.
բայց մի ինչ է՝ զի զառ ՝ի
յետոյն մոռացեալ եմ, և ՝ի
յառաջագէմսն նկրտեալ եմ.
14 Ուշ եղեալ՝ ընթանամ ՝ի կէտ
կոչմանն Աստուծոյ ՝ի Քրիս-
15 տոս Յիսուս: Այսուհետև՝ որ
միանգամ՝ կատարեալքդ էք՝
զայս խորհեցարուք. և եթէ
այլազգ ինչ խորհիցիք՝ սակայն
և զայն Աստուած ձեզ յայտ-
16 նեսցէ: Բայց յորժամանեա-
ցաքս՝ զսոյն խորհել՝ և սմին
17 կանոնի միաբան լինել: Մտա-
նողք ինձ եղիջիք եղբարք՝ և
դիտասջիք զայնպիսիսն, որ այն-
պէսն գնայցեն, որպէս ունիքդ
18 զմեզ ձեզ օրինակ: Զի բա-
զումք գնան՝ զորոց բազում
անգամ ասէի ձեզ. բայց արդ և
լալով իսկ ասեմ, զթշնամեաց
19 խաչին Քրիստոսի. Որոց կա-
տարածն կորուստ է. որոց
Աստուած որովայնն իւրեանց
է, և փառք ամօթն իւրեանց,
որք զերկրաւորս և եթէ խորհին:
20 Այլ մեր առաքինութիւն յեր-
կինս է, ուստի և Փրկչին ակն
ունիմք՝ Տէառն Յիսուսի Քրիս-
11 լով. Որպէս զի մեռելոցն
յարութեանը հասանիմ: Ոչ իբր
12 արդէն բռնած լինիմ, կամ թէ
արդէն կատարեալ եղած լինիմ,
բայց հետևում եմ որ իցէ թէ
հասանիմ նորան, ինչպէս որ էլ
հենց Քրիստոս Յիսուսիցը
բռնուած եմ: Եղբարք, ես իմ 13
անձը չեմ համարում որ հասած
լինիմ, բայց մէկ բան ՝ից,
յետևի բաներըը մոռանալով,
դէպի առջևի լինողներն են
նկրտում: Դէպի նպատակը 14
հետևում եմ Աստուծոյ վերին
կոչումի մրցանակին Քրիստոս
Յիսուսումը: Երդ որոնքս կա- 15
տարեալ ենք, այս մտածենք, և
եթէ մի բան ուրիշ կերպով
մտածէք, այն էլ Աստուած
կ՝յայտնէ ձեզ: Մ՝ինչն թէ 16
ինչն որ հասանք, նոյն կանոնով
վարուինք, նոյնը մտածենք:
Ինձ նմանող եղէք, եղբարք, և 17
նայեցէք այն կերպով գնացողնե-
րին ինչպէս մեզ օրինակ ու-
նիք: Վասն զի շատերն են 18
գնում, որոնց համար շատ ան-
դամ ասում էի ձեզ. և հիմա
էլ լալով ասում եմ, որ Քրիս-
տոսի խաչի թշնամիներ են.
Որոնց վերջը կորուստ է, որոնց 19
Աստուածն ՝ներանց որովայնն է.
և փառքը՝ իրանց ամօթն է.
որոնք երկրաւոր բաներն են
մտածում: Բայց մեր քաղաքա- 20

* ՝Ի Յոյնն, որոյ վասն ըմբռնեալ եմ

21 տոսի. Որ նորոգեսցէ զմարմին
խոնարհութեան մերոյ՝ կերպա-
բանակից լինել մարմնոյ փառաց
իւրոց, ըստ զօրութեանն՝ առ ՝ի
կարող լինելոյ հնազանդեցու-
ցանել ընդ իւրև զամենայն:

ԳԼ. Դ

1 Այսուհետև եղբարք իմ
սիրելիք և անձկալիք, ուրախու-
թիւն իմ և պսակ. այսպէս
հաստատուն կացէք ՝ի Տէր՝
սիրելիք.
2 Զեւոդիա աղաչեմ և ըզ-
Սիւնտիք աղաչեմ, զնոյն խոր-
3 հել ՝ի Տէր: Այո՛ աղաչեմ և
զքեզ՝ մտերիմ իմ և լծակից.
և դու օգնական * լինիջիր նոցա՝
որք յաւետարանին նահատա-
կեցան ընդ իս Կղեմաւ հանդերձ՝
և այլովք գործակցօք իմովք.
որոց անունքն են ՝ի գրքու-
4 թեան կենաց: Ուրախ լերուք
՝ի Տէր յամենայն ժամ. դար-
ձեալ ասեմ՝ ուրախ լերուք:
5 Հեզութիւն ձեր յայտնի լիցի
ամենայն մարդկան. Տէր մերձ
6 է: Մ՝ի ինչ հոգայք. այլ † ամե-
նայն աղօթիւք և խնդրուածովք.
գոհութեամբ խնդրուածք ձեր
յայտնի լիցին առ Աստուած:

կանութիւնն երկնքումն է, որ
այնտեղից սպասում ենք Փրկչին՝
Տէր Յիսուս Քրիստոսին. Որ 21
կ՝նորոգէ մեր խոնարհ մարմինը
որ իր փառաւոր մարմնոյն կեր-
պարանակից լինի այն զօրու-
թիւնովը, որ կարող է ամեն
բան հնազանդեցնել իրան:

ԳԼ. Դ

Ուրեմն, իմ սիրելի և բաղ- 1
ձալի եղբարք, իմ ուրախու-
թիւնը և իմ պսակը. այսպէս
հաստատուն կացէք Տէրումը, սիրե-
լիներ:
Եւոդիային աղաչում եմ, 2
և Սինդիքին աղաչում եմ, որ
մի և նոյնը խորհին Տէրումը:
Այո՛, քեզ էլ եմ աղաչում, իմ 3
հարազատ լծակից, դու էլ օգնիր
նորանց, որ պատերազմեցին
Աւետարանումն ինձ հետ միասին
և Կղեմէսի հետ և իմ ուրիշ
գործակիցների հետ էլ, որ
նորանց անունները կենաց գրքը-
քումն են: Ուրախ եղէք Տէ- 4
րումն ամեն ժամանակ. գարձեալ
ասում եմ՝ ուրախ եղէք: Ձեր 5
հեզութիւնը թող յայտնի լինի
ամեն մարդկանց. Տէրը մօտ է:
Ոչինչ հոգս մի անէք. այլ ամեն 6
բանում աղօթքով և աղաչանքով
և գոհութիւնով ձեր խնդրու-

* ՝Ի Յոյնն, լինիջիր կանանցն այնոցիկ
* ՝Ի Յոյնն, յամենայնի

7 Եւ խաղաղութիւնն Աստուծոյ
որ 'ի վեր է քան զամենայն
միտս, պահեսցէ զսիրտս ձեր և
զմիտս 'ի Քրիստոս Յիսուս:

8 Այսուհետև եղբարք՝ որ ինչ
ճշմարտութեամբ է, որ ինչ
պարկեշտութեամբ, որ ինչ
արդարութեամբ՝ որ ինչ սրբու-
թեամբ, որ ինչ սիրով, որ ինչ
համբաւ բարեաց, որ ինչ
քաջութեամբ, որ ինչ: գովու-
9 թեամբ, զայն խորհիջիք: Զոր
ուսարուբն և ընկալարուք և
լուայք և տեսէք յիս, զայն
արարէք. և Աստուած խաղա-
զութեան եղիցի ընդ ձեզ:
10 Ուրախ եղէ ես 'ի Տէր յոյժ.
զի և դուք զմտաւ ածիք հոգալ
ինչ վասն իմ, որպէս և հո-
գայիքն. բայց բարբարեիք
11 ինեմ: Իբր ոչ առ կարօտու-
թեան ինչ ասեմ. զի ես ուսայ՝
որովք կարեմ բաւական լինել:
12 Գիտեմ նուազել, գիտեմ ա-
ռաւելուլ. յամենայնի ամենևին
խնամուտ եմ, և յագել և
քաղցենալ. և առաւելուլ և
13 նուազել: Յամենայնի կարող
եմ այնու՝ որ զօրացոյցն զիս:
14 Բայց բարւոք արարէք՝ զի
կցորդ եղերուք ինձ 'ի նեղու-
15 թեանս: Գիտէք և դուք Փիլի-
պեցիք, զի 'ի սկզբան աւետա-
բանին իբրև ելի ես 'ի Մակե-
դոնիա և ոչ մի եկեղեցի
հաղորդեան ինձ յաղագս տալոյ
ածքներոը թող յայտնի լինին
Աստուծոյն: Եւ Աստուծոյ 7
խաղաղութիւնը, որ ամեն մտքից
վեր է, պահպանէ ձեր սրտերն
ու մտքները Քրիստոս Յիսու-
սում:

Այսուհետև, եղբարք, ինչ 8
որ ճշմարիտ է, ինչ որ պար-
կեշտ, ինչ որ արդար, ինչ որ
սուրբ, ինչ որ սիրուն, ինչ որ
բարի անուն, թէ առաքինու-
թիւն է, և թէ գովութիւն է,
այն մտածեցէք: Հէնց այն որ 9
սովորեցիք, և ընդունեցիք, և
լսեցիք, և ինձանում տեսաք,
այն արէք, և խաղաղութեան
Աստուածը ձեզ հետ կ'լինի:

Ես մեծապէս ուրախացայ 10
Տէրումը. որ դուք արդէն
դարձեալ մտքներդ բերիք հոգալ
ինձ համար, ինչպէս էլ հոգում
էիք, բայց պատշաճ ժամանակ
չէիք գտնում: Ոչ թէ կարո- 11
տութեան պատճառով եմ ա-
սում. վասն զի ես սովորեցի
ինչի մէջ որ կամ, նորանով
բաւական լինել: Գիտեմ պա- 12
կասութիւն քաշել, և աւելու-
թիւնով լինելն էլ. ամեն բանի
մէջ ամենին լաւ տեղեկացած եմ՝
կշտանալն էլ սովելն էլ. աւե-
լութիւնով ունենալն էլ, պա-
կասութիւն քաշելն էլ: Ամեն 13
բան կարող եմ ինձ զօրացնող
Քրիստոսով: Սակայն լաւ 14
արիք որ հաղորդ եղաք ինձ իմ
նեղութիւնում: Դուք ինքներդ 15

և առնլոյ, բայց միայն դուք.
16 Զի և 'ի Թեսաղոնիկ միանգամ
և երկիցս զպէտս իմ եռուք
17 բերել: Իբր ոչ եթէ խնդրեմ
զտուրսն, այլ խնդրեմ զպտուղն,
18 որ յաճախէ 'ի բան ձեր: Այլ
իմ առեալ զամենայն, և առաւե-
լեալ եմ. ընկալայ՝ և լի եմ 'ի
ձեռն Եպափրոդիտեայ, որ 'ի
ձէնջ հոտ անուշից՝ պատարագ
ընդունելի՝ հաճոյ Աստուծոյ:
19 Եւ Աստուած իմ՝ լի արասցէ
զամենայն պէտս ձեր ըստ իւրում
մեծութեանն՝ փառաւք 'ի Քրիս-
20 տոս Յիսուս: Այլ Աստուծոյ
և Հօր մերում փառք յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

21 Ողջոյն տարջիք ամենայն սրբոց
22 'ի Քրիստոս Յիսուս: Ողջոյն
տան ձեզ՝ որ ընդ իս են եղբարք:
23 Ողջոյն տան ձեզ ամենայն
սուրբք. մանաւանդ որ 'ի տանէ
24 Կայսեր են: Շնորհք Տեառն
Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ
ձերում. ամէն:

Առ Փիլիպեցիս՝ գրեցաւ 'ի
Հռովմէ 'ի յեռն Եպափրոդի-
տեայ:

և էլ, Փիլիպպեցիք, գիտէք, որ
աւետարանի սկզբումը՝ երբոր
Մակեդոնիայից դուրս եկայ ոչ
մի եկեղեցի հաղորդութիւն
չարաւ ինձ տալու կամ առնե-
լու հաշուով, բայց միայն դուք:
Այն զի Թեսաղոնիկէի մէջ էլ 16
մի՝ երկու անգամ ինձ պէտք
եղած բաները ուղարկեցիք:
Իբր ոչ թէ տուրքն եմ ուզում, 17
այլ պտուղն եմ ուզում, որ
աւելանայ ձեր հաշուին: Բայց 18
ես ամեն բան առել եմ, և առա-
տութիւն ունիմ, լիքն եմ, որ
Եպափրոդիտոսի ձեռովն ընդու-
նեցի այն որ ձեզանից է՝ անուշ
հոտ ընդունելի պատարագ՝ Աս-
տուծոյ հաճոյ: Եւ իմ Աս- 19
տուածը լցնէ ձեր ամեն կա-
րօտութիւնն իր հարստութեան
չափովը՝ փառքով Քրիստոս
Յիսուսումը. Բայց Աստու- 20
ծոյն՝ մեր Հօրը փառք լինի
յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Բարև տուէք ամեն սրբերին 21
Քրիստոս Յիսուսումը: Բարև 22
են տալիս ձեզ ինձ հետ լինող
եղբայրները: Բարև են տալիս 23
ձեզ ամեն սրբերն, մանաւանդ
կայսրի տանից լինողները:
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհ- 24
քը ձեր ամենքիդ հետ լինի.
Ամէն:

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր.
2 Առ Կողոսացիս սուրբս և հաւատացեալս եղբարս ի Քրիստոս:

3 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ (և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ): Գոհանամ զԱստուծոյ և զՀօրէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն ժամ վասն ձեր աղօթս առնեմ:
4 Լսելև լուաք զհաւատսն ձեր՝ որ ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, և զսէրն որ ընդ ամենայն
5 սուրբս ունիք. Վասն յուսոյն՝ որ պահի ձեզ յերկինս. զորմէ լուարուք բանիւն ճշմարտութեան աւետարանին, Որ եհաս
6 առ ձեզ. որպէս ընդ ամենայն

Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, և Տիմոթէոս եղբայրը. Կողոսայում լինող սրբերին և հաւատացեալ եղբայրներին Քրիստոսում: Շնորհք լիներ ձեզ հետ՝ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրից՝ և Տէր Յիսուս Քրիստոսից:
Գոհանում ենք Աստուածնից և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հօրից. ամեն ժամանակ ձեզ համար աղօթք անելով. Երբոր լսեցինք ձեր հաւատքը, որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի վերայ, և սէրը՝ որ դէպի ամեն սրբերն ունիք. Այն յուսոյ համար՝ որ պահվում է ձեզ համար երկնքում, որի համար առաջուց լսեցիք աւետարանի ճշմարիտ խօսքովը. Որ հասաւ ձեզ, ինչպէս ամեն աշխարհի մէջ, և պտուղ է բերում, ինչպէս ձեր միջումն

աշխարհ ածէ՝ և պտղաբերէ. որպէս և ի ձերում միջի. յօրէ յորմէ լուարուք և ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտու-
7 թեամբ. Որպէս և ուսարուք յԵպափրեայ սիրելւոյ ծառայակցէ մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր՝ պաշտօնեայ Յիսուսի.
8 Որ և պատմեաց մեզ զձեր սէրն հոգւով:
9 Վասն այնորիկ և մեք յօրէ յորմէ լուաք՝ ոչ դադարեմք վասն ձեր աղօթս առնել՝ և խնդրուածս մատուցանել. զի լնուցուք զգիտութիւն կամացն Նորա, ամենայն իմաստութեամբ
10 և հոգևոր հանճարով. Գնալ ձեզ արժանի Տեառն յամենայն հաճութեան, յամենայն գործս բարութեան պտղաբերք, և աճեցուցանք գիտութեամբն Աս-
11 տուծոյ. Ամենայն զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան փառաց Նորա. յամենայն համբերութիւն և երկայնմտութիւն:

12 Ուրախութեամբ գոհանալ զԱստուծոյ Հօրէ՝ որ կոչեացն զձեզ ի մասն վիճակի սրբոցն ի
13 լոյս. Որ փրկեացն զմեզ յիշխանութենէ խաւարի, և փոխեաց զմեզ յարքայութիւն Որդւոյն
14 իւրոյ սիրելւոյ. Որով ունիմք զփրկութիւն արեամբն Նորա, և զթողութիւն մեղաց՝ մարմնովն
15 Նորա. Որ է պատկեր անտեսանելի Աստուծոյ, անդրանիկ

էլ, այն օրից հետէ՝ որ լսեցիք և Աստուծոյ շնորհքը ճանաչեցիք ճշմարտութիւնով: Ինչ- 7
պէս էլ սովորեցիք Եպափրասից՝ մեր սիրելի ծառայակցից, որ ձեզ համար Քրիստոսի հա- 8
ւատարիմ պաշտօնեայ է, Որ պատմեց մեզ էլ ձեր սէրը հոգով:

Դորա համար մենք էլ այն 9
օրից հետէ որ լսեցինք, չենք դադարում ձեզ համար աղօթք անել, և խնդրուածք մատուցանել որ լցուիք նորա կամաց գիտութիւնովը, ամեն իմաստութիւնով և հոգևոր հանճարով. Որ գուք գնաք ինչպէս 10
արժանի է Տիրոջը, ամեն բանի մէջ հաճոյ լինելով նորան, ամեն բարի գործքով պտղաբեր լինիք և աճիք Աստուծոյ գիտութեան մէջ. Ամեն զօրու- 11
թիւնով զօրացած իր փառքի զօրութեան համեմատ, ամեն համբերութեան և երկայնմտութեան մէջ ուրախութիւնով.
Եւ գոհութիւն տաք Հօրը որ 12
մեզ արժանացրեց մասնակից լինելու սրբերի վիճակին լուսումը. Որ փրկեց մեզ խաւարի 13
իշխանութիւնից, և փոխադրեց մեզ իր սիրելի Որդոյ արքայութեան մէջ, Որի ձեռքովն ունինք 14
փրկութիւն նորա արիւնովը՝ մեղաց թողութիւնը: Որ ա- 15
ներևոյթ Աստուծոյ պատկերն է՝ ամեն ստեղծուածներից առաջ

16 ամենայն՝ արարածոց։ Զի
նովաւ հաստատեցաւ ամենայն,
որ ինչ յերկինս՝ և որ ինչ
յերկրի, որ երևին՝ և որ ոչն
երևին. եթէ աթոռք, եթէ
տէրութիւնք, եթէ պետու-
թիւնք, եթէ իշխանութիւնք.
ամենայն ինչ նովաւ՝ և ի նոյն
17 հաստատեցաւ։ Եւ նա է
յառաջ քան զամենայն, և ամե-
նայն ինչ նովաւ եկաց բու

2 Օ՛ի մխիթարեսցին սիրտք նոցա
տեղեկացեալք սիրով. և յամե-
նայն մեծութիւն լուութեան
խնամութեան՝ ի գիտութիւն
խորհրդոցն Աստուծոյ Հօր՝ ի
3 Քրիստոս Յիսուս. Յորում՝
ամենայն գանձք խնամութեան
և գիտութեան ծածկեալ կան:
4 Այլ զայս ասեմ, զի մի ոք
զձեզ զառանցեցուսցէ պատիր
5 բանիւք: Օ՛ի թէպէտ և մար-
մնով հեռի եմ, այլ հոգւով ընդ
ձեզ եմ. խնդամ՝ իբրև տեսա-
նեմ զկարգն ձեր՝ և զհաստա-
տութիւն հաւատոցն ձերոց որ
6 ի Քրիստոս Յիսուս: Արդ՝
որպէս ընկալարուք զՔրիստոս
Յիսուս զՏէր, նովին գնասջիք.
7 Արմատացեալք և շինեալք ի
նա, և հաստատեալք ի հաւատս,
որպէս ուսարուքն՝ առաւելեալք
ի նմին գոհութեամբ:

8 Օ՛գոյշ լերուք մի՛ ոք իցէ՝ որ
զձեզ կողոպտիցէ ճարտարմտու-
թեամբ՝ և սնոտի խաբէու-
թեամբ, որք ըստ մարդկան
աւանդութեան՝ և ըստ տարերց
աշխարհիս՝ և ո՛չ ըստ Յիսուսի
9 Քրիստոսի. Օ՛ի ի նմա բնակէ
ամենայն լրումն Աստուածու-
10 թեանն մարմնապէս: Եւ էք
դուք նովաւ լցեալք, որ է գլուխ
ամենայն իշխանութեան և պե-
11 տութեան. Որով թլփատե-
ցարուք, հաւատովք զանձե-
ռագործ թլփատութիւնն՝ ի

տեսել. Որ նորանց սրտերը
մխիթարուին սիրով միացած.
և կատարեալ խնամութեան ա-
մեն ճոխութեանը հասանին, այս-
ինքն Աստուծոյ և Հօր և
Քրիստոսի խորհուրդը խնա-
նալուն. Որի մէջ ծածկուած
կան խնամութեան և գիտու-
թեան ամեն գանձերը: Բայց
սա եմ ասում, որ մի դուցէ
մէկը մոլորեցնէ ձեզ հրապու-
րական խօսքերով: Այսն զի
թէև մարմնով բացակայ եմ,
բայց հոգով ձեզ հետ եմ. ու-
րախանալով ձեր կարգը տեսնե-
լով, ձեր հաւատքի հաստատու-
թիւնը՝ որ Քրիստոսի վերայ է:
Ուրեմն ինչպէս Քրիստոս Յի-
սուս Տէրն ընդունեցիք՝ նորա-
նում գնացէք: Արմատացած
և նորանում՝ շինուած, և հա-
ւատքումը հաստատուած՝ ինչ-
պէս որ սովորեցիք՝ ածելով նո-
րանում գոհութիւնով:

Օ՛գոյշ կացէք՝ մի դուցէ
մէկը յափշտակէ ձեզ փիլիսո-
փայութիւնով և դարտարկ խա-
բերայութիւնով, մարդկանց ա-
ւանդութեան պէս, աշխարհքիս
սկզբունքների պէս և ոչ թէ
Քրիստոսի պէս: Որովհետև
նորանում՝ բնակուած է Աստ-
ուածութեան ամեն լիու-
թիւնը մարմնապէս: Եւ դուք
նորանով լցուած էք, որ
նա է ամեն իշխանութեան և
պետութեան գլուխը: Որով
դուք թլփատուեցաք անձեռա-

մերկանալ զանդամ մարմնոյ
թլփատութեամբն Քրիստոսի:
12 Թաղեալք ընդ նմին՝ ի մկրտու-
թեանն, որով և ընդ նմին
յարեալք հաւատովք Աստու-
ծոյ ազդեցութեանն, որ յարոյց
13 զնա՝ ի մեռելոց: Եւ զձեզ՝ որ
երբեմն մեռեալն էիք՝ ի մեղս և
յանթլփատութեան մարմնոյ
ձերոյ, կենդանացոյց յանձին
իւրում. շնորհեաց մեզ զամե-
14 նայն յանցանս մեր՝ Եւ ջնջեաց
զձեռագիր մերոյ հակառակու-
թեանն հրամանօքն իւրովք. որ
կայր մեզ հակառակ՝ երարձ
զայն՝ ի միջոյ՝ և բևեռեաց ընդ
15 խաչափայտին: Մերկեաց զնշ-
խանութիւնս և զպետութիւնս.
յայտ յանդիման խայտառա-
կեաց նշաւակեալ զնոսա յանձին
իւրում՝ ի յարութեան իւ-
րում:

16 Մի՛ ոք այսուհետև զձեզ
դատեսցի՝ ուտելով կամ ըմպե-
լով, կամ մասամբք տօնից,
կամ ամսամտիւք, կամ շա-
17 բաթուք. Որ են ստուերք հան-
դերձելոցն. այլ մարմին Քրիս-
18 տոս է: Մի՛ ոք զձեզ խաբեսցէ,
որ կամիցի խոնարհութեամբ և
կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ
տեսեալ զրահետ վարել՝ տա-
ռապարտ հպարտացեալ՝ ի մտաց
19 մարմնոյ իւրոյ. Եւ ո՛չ ունիցի
զգլուխն Քրիստոս, ուստի ամե-
նայն մարմինն յօդիւք և խա-

գործ թլփատութիւնով, մարմ-
նոյ մեղքերի անդամները մեր-
կանալով Քրիստոսի թլփա-
տութիւնովը. թաղուելով նորա 12
հետ մկրտութիւնումը, որով
յարութիւն էլ առիք նորա
հետ Աստուծոյ ազդեցութեան
հաւատքովը, որ յարոյց նորան
մեռելների միջից: Եւ ձեզ 13
որ մի ժամանակ մեռած էիք
մեղքերումը և ձեր մարմնոյ
անթլփատութիւնումը, իրան
հետ կենդանացրեց բոլոր մեղ-
քերը ձեզ շնորհելով: Եւ ջնջ- 14
ջեց այն մեզ հակառակ ձեռա-
գիրը էր հրամաններովը որ
մեզ հակառակ էր, և նո-
րան վեր առաւ մէջ տեղից
և խաչափայտի վերայ բևե-
ռեց. Իշխանութիւններին և 15
պետութիւններին մերկացնելով,
յայտնապէս խայտառակեց և
նորան յաղթանակեց նորա-
նում:

Արդ թող մէկը չդատէ ձեզ 16
ուտելու կամ խմելու համար,
կամ՝ տօնի կամ ամսաղլխի կամ
շաբաթների մասին, Որոնք նոր 17
գալու բաների ստուերներն են,
բայց մարմինը Քրիստոսինն է:
Ոչ ով չզրկէ ձեզ մրցանակիցը՝ 18
ինքնակամ խոնարհութիւնով և
հրեշտակների կրօնքով՝ միջա-
մուխ լինելով այն բաներին որ
չէ տեսած և զուր տեղը գոռո-
զացած է իր մարմնաւոր մըտ-
քումը. Եւ չբռնելով գլուխը, 19
որից բոլոր մարմինը յօդուածնե-

զալեօք տարաբերեալ և խառ-
նեալ՝ ամէն զաճուն Աստուծոյ:
20 Եթէ մեռաբուք ընդ Քրիստոսի
'ի տարերց աշխարհիս՝ զի՞ ևս
իբրև զկենդանիս աստէն յաշ-
21 խարհի կրօնաւորիք: Մի՛ մեր-
ձանար, մի՛ ճաշակեր, մի՛ հուպ
22 լինիր. Որ է ամենայն ինչ 'ի
պէտս ապականութեան, ըստ
պատուիրանաց և վարդապե-
23 տութեան մարդկան. Որ յի-
մաստութիւն իմն համարէ,
ինքնակամ կրօնիւք և խոնար-
հութեամբ՝ և անխայութեամբ
մարմնոյ. և ո՛չ 'ի պատիւ ինչ
լրութեան մարմնոյ:

ԳԼ. Գ

1 Եթէ յարերուք ընդ Քրիս-
տոսի, ապա զվերինն խնդրե-
ցէք, ուր Քրիստոսն նստի ընդ
2 աջմէ Աստուծոյ. Զվերինն
խորհեցարուք, մի՛ զայս՝ որ
3 յերկրի աստ է: Քանզի մեռա-
բուք՝ և կեանքն ձեր ծածկեալ
են ընդ Քրիստոսի յԱստուած:
4 Իսկ յորժամ Քրիստոս յայտ-
նեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ
և դուք ընդ նմա յայտնեսջիք
փառօք:

5 Սպանէք այսուհետև զան-
րով և խաղերով հաղորդուած
և խառնուած՝ մեծանում է Ա-
տուծոյ աճմունքովը: Արդ ե-
թէ Քրիստոսի հետ մեռաք
այս աշխարհքի սկզբունքնե-
րիցը՝ էլ ինչո՞ւ էք այս աշ-
խարհքի մէջ կենդանիների պէս
այսպիսի օրէնքներով կապում,
Ընդ Մի՛ մօտենար, մի՛ ճաշակիր,
մի՛ դպչիր. Որ ամենքն ապա-
կանութեան համար են գործա-
ծութեամբ, մարդկանց պա-
տուիրանքների և վարդապե-
տութեանց պէս: Որոնք իմաս-
տութեան կերպարանք ունին
ինքնահնար կրօնքով և խոնար-
հութիւնով և մարմնոյն չբնա-
յելով, մի տեսակ չպատուելով
մարմինը յագեցնելը:

ԳԼ. Գ

1 Արդ եթէ Քրիստոսի հետ
յարութիւն առիք, ապա խնդրե-
ցէք վերիններըը, որ տեղ Քրի-
ստոսն է նստում Աստուծոյ
2 աջ կողմը: Վերիններըը մտա-
ծեցէք, ոչ թէ երկրի վերային-
ները. Վասն զի դուք մեռաք՝
3 և ձեր կեանքը ծածկուած է
Քրիստոսի հետ Աստուծոյ մէջ:
4 Բայց երբոր Քրիստոս՝ մեր
կեանքը կայայտնուի, այն ժա-
մանակ դուք էլ նորա հետ
կայայտնուիք փառքով:
5 Ուրեմն սպանեցէք ձեր ան-

դամն ձեր զերկրաւորս. 'ի բաց
ընկեցէք զպոռնկութիւն, զպրշ-
ծութիւն, զբիծ, զցանկութիւն
չարեաց, և զագահութիւն՝ որ
6 է կռապաշտութիւն. Վասն
որոյ գայ բարկութիւն Ա-
տուծոյ 'ի վերայ որդւոցն ան-
7 հաւանութեան, Որովք և դուք
երբեմն գնայիք՝ մինչ կենդանիք
8 էիք 'ի նոսա: Արդ՝ 'ի բաց
թօթափեցէք և դուք զայն ամե-
նայն, զբարկութիւն, զբրտմտու-
թիւն, զչարութիւն, զհայհոյ-
ութիւն, զանեղկատակութիւն 'ի
9 բերանոց ձերոց: Մի՛ ստէք
միմեանց. մերկացարուք զհին
10 մարդն գործովքն իւրովք. Եւ
զգեցարուք զնորն նորոգեալ 'ի
գիտութիւն ըստ պատկերի Ա-
11 րարչին իւրոյ. Ուր ո՛չ է Հրէայ
և ո՛չ Հեթանոս, թլփատութիւն
և անթլփատութիւն, խուժ՝
դուժ՝ Սկիւթացի՝ ծառայ՝ ա-
զատ. այլ ամենայն և յամե-
12 նայնի Քրիստոս: Զգեցարուք
այսուհետև իբրև ընտրեալք
Աստուծոյ՝ սուրբք և սիրեցեալք՝
զգութ, զողորմութիւն, ըղձաղ-
ցրութիւն, զխոնարհութիւն,
զհեզութիւն, զերկայնմտու-
13 թիւն, Կրելով միմեանց, շնորհ-
հել իրերաց. եթէ ուրուք
զումեքէ տրտունջ ինչ իցէ. որ-
պէս Աստուած Քրիստոսիւ
շնորհեաց ձեզ՝ նոյնպէս և դուք:
14 Եւ 'ի վերայ այսր ամենայնի
զսէրն, որ է զօդ կատարմանն.
15 Եւ խաղաղութիւն Քրիստոսի
դամենքն՝ որ երկրի վերայ են,
պոռնկութիւնը, պղծութիւնը,
կիրքը, չար ցանկութիւնը, և
ագահութիւնը որ կռապաշ-
տութիւն է: Որոնց համար 6
Աստուծոյ բարկութիւնը գա-
լիս է անհաւատութեան որդի-
ների վերայ, Որոնց մէջ դուք 7
էլ մի ժամանակ գնացել էք,
երբոր կենդանի էիք նորան-
ցում: Բայց հիմա դուք էլ 8
դէն դրէք այն ամենը, բարկու-
թիւնը, սրտմտութիւնը, չա-
րութիւնը, հայհոյութիւնը,
ամօթալի խօսքերը ձեր բերա-
նից: Սուտ մի խօսիք իրար 9
հետ. հանեցէք հին մարդն իր
գործերովը, Եւ հագէք նոր 10
մարդուն՝ որ նորոգուած է գի-
տութիւնով՝ իր ստեղծողի
պատկերի պէս: Ուր ոչ Յոյն 11
կայ և ոչ Հրէայ, ոչ թլփա-
տութիւն՝ և ոչ անթլփատու-
թիւն, խուժ դուժ, Սկիւթացի,
ծառայ, ազատ. բայց ամենքը
և ամենքի մէջ Քրիստոս. Ու- 12
րեմն հագէք՝ ինչպէս Աստուծոյ
ընտրուածներ՝ սուրբեր և սի-
րելիներ՝ ողորմասիրտ գթա-
ծութիւն, քաղցրութիւն, խո-
նարհութիւն, հեզութիւն, եր-
կայնմտութիւն. Իրար ներե- 13
լով. և իրար թողելով, եթէ
մէկը միւսի դէմ տրտունջ ու-
նենայ, ինչպէս Քրիստոս էլ
ձեզ ներեց, այնպէս էլ դուք.
Եւ այս ամենի վերայ հա- 14
գէք սէրը, որ կատարելութեան

հաստատեսցի 'ի սիրտս ձեր, յոր և կոչեցարուքն միով մարմնով:

16 Եւ գոհացողք լինիջիք. Օ՛ի բանն Քրիստոսի բնակեսցէ 'ի ձեզ առատապէս. ամենայն իմաստութեամբ ուսուցանել և խրատել զմիմեանս. սաղմոսիւք և օրհնութեամբք և երգովք հոգեւորաւք՝ և շնորհօք օրհնել 'ի
17 սիրտս ձեր զԱստուած: Եւ զամենայն զոր և առնիցէք բանիւք և արդեամբք, զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք. գոհացողք լինիջիք զԱստուծոյ և զՀօրէ նովաւ:

18 Կանայք՝ հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս և վայել
19 է 'ի Տէր: Արք՝ սիրեցէք զկանայս ձեր. և մի դառնացուցանէք զնոսա: Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց
20 յամենայնի՝ զի այն է հաճոյ
21 առաջի Տեառն: Հայրք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր,
22 զի մի տրտմեսցին: Ծառայք՝ հնազանդ լերուք տէրանց ձերոց յամենայնի. մի առ ականէ ծառայութեամբ՝ իբրև մարդահաճոյք. այլ միամտութեամբ սրտի երկնչել 'ի Տեառնէ:
23 Օ՛որ ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբրև Տեառն, և ո՛չ
24 իբրև մարդկան: Գիտասջիք՝ զի 'ի Տեառնէ առնուցուք զհատուցումն ժառանգութեան ձերոյ. քանզի Տեառն Քրիստոսի ծառայէք:
25 Իսկ ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատութեանն. զի չէ ակնառութիւն առաջի Աստուծոյ:

ԳԼ. Դ

1 Տեարք՝ զիրաւունս և զըհաւասարութիւն ծառայից ձերոց շնորհեցէք. գիտասջիք՝ զի և ձեր Տէր գոյ երկինս:
2 Աղօթից ստէպ կացէք. տքնել
3 'ի նմին գոհութեամբ: Աղօթս արարէք միանգամայն և վասն մեր. զի Աստուած բացցէ մեզ դուռն բանին, խօսել ըզխորհուրդն Քրիստոսի, վասն որոյ
4 և կապեալս կամ. Օ՛ի յայտնի արարից զնա որպէս արժան իցէ ինձ խօսել:

5 Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինսն, գնոյ առեալ ըզժամանակս:
6 Եւ բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք Տեառն՝ իբրև աղիւ համեմեալ լիցի, գիտել որպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր ումք տալ պատասխանի:
7 Այլոր ինչ զլինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զամենայն Տիւքիկոս սիրելի եղբայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ՝ և ծառայակից 'ի Տէր.
8 Օ՛որ առաքեցի առ ձեզ զմին

Տէրիցը կ'առնէք ժառանգութեան հատուցումը, վասն զի Տէր Քրիստոսին էք ծառայում: Որոյ անիրաւն հատուցում կ'ստանայ իր արած անիրաւութեան համար. աչառութիւն չկայ:

ԳԼ. Դ

Տէրեր, իրաւունքը և հաւասարը տուէք ծառաներին. գիտենալով որ դուք էլ Տէր ունիք երկնքումը:
Աղօթքին միշտ հետևեցէք. 2
և արթուն կացէք նորանում գոհութիւնով: Եւ մեզ համար էլ աղօթք արէք, որ Աստուած բանայ մեզ համար խօսքի դուռն խօսել Քրիստոսի խորհուրդը, որի համար էլ կապուած եմ: Որ յայտնեմ 4
նորան՝ ինչպէս ինձ արժան է խօսել:
Իմաստութիւնով վարուեցէք 5
դրսիններին հետ, և ժամանակը գնեցէք: Ձեր խօսքը ամեն ժա- 6
մանակ շնորհքով՝ աղով համեմած լինի, որ գիտենաք թէ ինչպէս արժան է ձեզ ամեն մէկին պատասխան տալ:

Իմ մասին ամենը կ'իմացնէ 7
ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ պաշտօնեան, և ծառայակիցը Տէրումը, Որին 8
հէնց դորա համար ուղարկեցի

իրի, զի գիտասջիք վասն մեր.
9 և մխիթարեսցէ զսիրտս ձեր, Ընեսիմաւ հանդերձ եղբարբ հաւատարմաւ և սիրելեաւ՝ որ է ի ձէնջ. զամենայն ինչ ցուցցեն
10 ձեզ՝ որ ինչ աստ է: Ողջոյն տայ ձեզ Աբիստարքոս գերեկից իմ, և Մարկոս եղբօրորդի Բառնաբայ. վասն որոյ առէք պատուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ՝
11 ընկալջիք զնա. Եւ Յիսուս՝ որ անուանեալն է Յուստոս, որք են ի թլփատութենէ անտի. զի զոքա միայն գործակից եղեն ինձ յարքայութեանն Աստուծոյ, որք և եղեն իսկ ինձ մխի-
12 թարութիւն: Ողջոյն տայ ձեզ Եպափրաս, որ ի ձէնջ ծառայ Քրիստոսի Յիսուսի է. յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք կատարեալք և լցեալք յամենայն
13 կամս Աստուծոյ: Վկայեմ նմա, զի բազում աշխատութիւն ունի վասն ձեր, և վասն Լաւոդիկեցւոցն, և վասն այնոցիկ՝
14 որ Յերապոլիսն են: Ողջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ և
15 սիրելի, և Դեմաս: Ողջոյն տայջիք եղբարց՝ որ են ի Լաւոդիկիա և Նիմփայ, և որ
16 առանին եկեղեցին է նորա: Եւ յորժամ ընթեռնուցու առ ձեզ թուղթդ՝ արասջիք զի և ի Լաւոդիկեցւոց եկեղեցւոյն ընթերցցի. և զառ ի Լաւոդիկեցւոցն՝ զի և դուք ընթեռնու-
17 ցուք: Եւ ասասջիք ցԱրքիպ-

ձեզ մօտ, որ իմանայ ձեր մասին
9 և մխիթարէ ձեր սրտերը. Ոնեսիմոս հաւատարիմ և սիրելի եղբօր հետ, որ ձեզանից է. նոքանք ամենը կ՚իմացնեն ձեզ ինչ
10 որ այստեղ լինում է: Բարև է տալիս ձեզ Արիստարքոսն՝ իմ գերութեան ընկերը, և Բառնաբասի եղբօր որդի Մարկոսը. որի համար պատուէր առէք, որ եթէ ձեզ մօտ գայ, ընդունիք նորան: Եւ Յիսուսն որ
11 Յուստոս է անուանվում, որոնք թլփատութիւնից են. միայն գորանք են իմ գործակիցները Աստուծոյ արքայութիւնում, որ ինձ համար էլ մխիթարութիւն
12 եղան: Բարև է տալիս ձեզ Եպաքրաս Քրիստոսի ծառան, որ ձեզանից է. ամեն ժամանակ ձեզ համար պատերազմում է աղօթքներում, որ կատարեալ և լցուած լինիք Աստուծոյ բոլոր կամքումը: Վասն զի
13 վկայում եմ նորա համար որ շատ նեղութիւն ունի ձեզ համար, և նորանց համար որ Լաւոդիկէում և Յերապոլիսում են:
14 Բարև է տալիս ձեզ բժիշկ Ղուկաս սիրելին և Դէմասը:
15 Բարև տուէք Լաւոդիկէումն լինող եղբայրներին և Նիմփային և նորա տան եկեղեցուն:
16 Եւ երբոր ձեզ մօտ կարդացուի այս թուղթը Լաւոդիկեցոց եկեղեցումն էլ կարդալ տուէք. և որ Լաւոդիկեցոցն էլ դուք
17 կարդաք: Եւ Արքիպոսին ա-

պոս. Զգոյշ լեր սպասաւորութեանդ՝ զոր ընկալար ի Տէր,
18 զի զայդ կատարեսցես: Ողջոյնդ ձեռին իմոյ Պօղոսի է. յիշեցէք զեղ կապանքս իմ: Շնորհք ընդ ձեզ. ամէն:

Առ Կորնթացիս գրեցաւ ի Հռովմէ ի յեռն Տիտոսի և Մեսնայ:

սացէք. Զգոյշ եղիք այն սպասաւորութեանը որ ընդունեցիք Տէրումն, որ նորան կատարես:
18 Այս բարևը իմ Պօղոսիս ձեռքովն է, յիշեցէք իմ կապանքը. շնորհքը լինի ձեզ հետ. Ամէն:

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱԼՈՆԻԿԵՑԻՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա՝

1 ՊՕՂՈՍ և Սիղուանոս և Տիմոթէոս՝ եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ ՅԱստուած Հօրմէ մերմէ և ի Տէր Յիսուս Քրիստոս։

2 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն։ Գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ՝ վասն ձեր ամենեցուն՝ յիշատակ առնել
3 յաղօթս մեր անդադար։ Յիշել զձեր գործն հաւատոց՝ և զվաստակ սիրոյ՝ և զհամբերութիւն յուսոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ առաջի Աստուծոյ
4 և Հօր մերոյ։ *Գիտէք եղբարք սիրեցեալք ՅԱստուծոյ զընտրութիւն ձեր։
5 Զի աւետարանն մեր ոչ եղև առ ձեզ միայն բանիւ, այլ և զօրութեամբ՝ և Հոգւով Սրբով՝ և լրութեամբ բազմաւ։ որպէս և գիտէք իսկ՝

1 ՊՕՂՈՍ և Սիղուանոս և Տիմոթէոս, Թեսաղոնիկեցւոց եկեղեցւոյդ Աստուած Հօրումն և Տէր Յիսուս Քրիստոսումն։ Շնորհք ընդ ձեզ
2 և խաղաղութիւն մեր Հայրէ՝ Աստուածանից և Տէր Յիսուս Քրիստոսից։

Գոհանումք ենք Աստուածանից՝ ամեն ժամանակ ձեր ամենքի
2 համար ձեզ յիշելով մեր աղօթքներումն։ Եւ անդադար
3 յիշումք ենք ձեր հաւատքի գործոյ և սիրոյ աշխատանքի, և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի յոյսի համբերութիւնը Աստուծոյ և մեր Հօր առջև։ Գիտե-
4 նալով, Աստուածանից սիրուած եղբայրք, ձեր ընտրութիւնը։
5 Որ մեր աւետարանը ձեզ մօտ չեղաւ միայն խօսքով, այլ և զօրութիւնով և Հոգով Սրբով և շատ լիութիւնով։ ինչպէս լաւ գիտէք, թէ որպիսիք

* Ի Յոյն, Գիտելով

թէ որպիսիք եղեաք ի միջի
6 ձերումն վասն ձեր։ Եւ դուք նմանողք եղաք մեզ և Տեառն, ընկալայք զբանն ի բազում նեղութեան՝ խնդութեամբ Հոգւոյն Սրբոյ։
7 Լինել ձեզ օրինակ ամենայն հաւատացելոց, որ են ի Մակեդոնիա և ՅԱքայիա։
8 Զի ի ձէնջ հնչեաց բանն Աստուծոյ։ ոչ միայն ի Մակեդոնիա և ՅԱքայիա, այլ յամենայն տեղիս հաւատքն ձեր՝ որ առ Աստուած են, սփռեցան։ զի այսուհետև ոչինչ
9 է պիտոյ մեզ և խօսել ինչ։ Զի նոքին իսկ պատմեն վասն մեր, թէ որպէս եղև մեզ մուտ առ ձեզ։ և որպէս դարձայք առ Աստուած ի կռոց անտի, ծառայել Աստուծոյ կենդանւոյ և
10 ճշմարտի։ Եւ ակն ունել Որդւոյ նորա յերկնից՝ զոր յարոյցն ի մեռելոց, զՅիսուս՝ որ փրկելոցն է զմեզ ի բարկութենէ անտի որ գալոցն է։

ԳԼ՝ Բ

1 Դուք ինքնին գիտէք Եղբարք զմուտն մեր առ ձեզ։ զի ոչ ընդ-
2 դունայն ինչ եղև։ Այլ յառաջագոյն չարչարեալք՝ և թշնամանեալք, որպէս և դուք իսկ գիտէք, ի մէջ Փիլիպեցւոց համարձակեցաք Աստուծով մերով պատմել ձեզ զաւետարանն
3 Աստուծոյ մեծաւ պատերազմաւ։ Զի մխիթարութիւնն

եղանք ձեր միջումը ձեզ համար։
6 Եւ դուք նմանող եղաք մեզ և Տիրոջը՝ խօսքն ընդունելով շատ նեղութեան մէջ Սուրբ Հոգու ուրախութիւնովը։
7 Որ դուք օրինակ եղաք ամեն հաւատացեալներին Մակեդոնիայի և Աքայիայի մէջ։
8 Վասն զի ձեզանից հռչակուեցաւ Տիրոջ խօսքը։ ոչ միայն Մակեդոնիայի և Աքայիայի մէջ, այլ և ամեն տեղ դուրս եկաւ ձեր հաւատքը առ Աստուած. այնպէս որ պէտք չէ մեզ մի բան
9 խօսել։ Վասն զի հէնց իրանք պատմում են մեր մասին թէ ինչպիսի մուտք ունեցանք ձեզ մօտ և ինչպէս դարձաք կռոցից դէպի Աստուած, որ ծառայէք կենդանի և ճշմարիտ
10 Աստուծոյն, Եւ սպասէք նորա Որդոյն երկնքից, որին յարոյց մեռելների միջից՝ Յիսուսին, որ փրկում է մեզ գալու բարկութիւնից։

ԳԼ՝ Բ

1 Վասն զի ինքներդ գիտէք, եղբայրք, այն մեր ձեզ մօտ մտնելը, որ ունայն չեղաւ։
2 Այլ առաջ չարչարուելով և անարգուելով, ինչպէս գիտէք, Փիլիպպէումը համարձակեցանք մեր Աստուծովը խօսել ձեզ Աստուծոյ աւետարանը մեծ պա-
3 տերազմով։ Վասն զի մեր յորդորանքը ոչ մոլութիւնից է, և

մեր ոչ 'ի մոլորութենէ է՝ և ոչ
'ի պղծութենէ՝ և ոչ ենենգու-
4 թեամբ. Այլ որպէս ընտրեցաք
Աստուծոյ հաւատարիմ լինել
աւետարանին, նոյնպէս և խօ-
սիմք. ոչ իբրև մարդկան հաճոյ
լինել՝ այլ Աստուծոյ որ քննէն
5 զսիրտս մեր։ Զի ոչ երբեք
բանիւք ողբանաց եղեաք առ
ձեզ, որպէս և գուք իսկ գիտէք.
և ոչ 'ի պատճառս ագահու-
թեան, որպէս և Աստուած
6 վկայէ. Եւ ոչ խնդրեաք փառս
'ի մարդկանէ, ոչ 'ի ձէնջ՝ և ոչ
7 յայլոց։ Կարող էաք իբրև
Քրիստոսի առաքեալք ծանրա-
նալ, այլ եղեաք հեզք 'ի միջի
ձերում. որպէս դայեակ մի՝ որ
8 սնուցանիցէ մանկունս. Նոյն-
պէս և մեք գթայաք 'ի ձեզ.
հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ
միայն զաւետարանն Աստուծոյ,
այլ և զանձինս մեր. քանզի
9 սիրելիք մեր եղերուք։ Յիշէք
եղբարք՝ զվաստակն մեր և
զջան. զի զցայդ և զցերեկ
գործէաք վասն չծանրանալոյ
ումեք 'ի ձէնջ, և քարոզէաք
ձեզ զաւետարանն Աստուծոյ։
10 Դուք ինքնին վկայէք՝ և Աս-
տուած, որպէս սրբութեամբ և
արդարութեամբ և ամբծու-
թեամբ՝ ձեզ հաւատացելոցդ
11 եղեաք. Որպէս և գիտէք իսկ.
զի զհիւրաքանչիւրոք 'ի ձէնջ՝
12 իբրև հայր զորդիս՝ Մխիթա-
րէաք և սփոփէաք և դնէաք
վկայութիւն գնալ ձեզ արժա-

ոչ պղծութիւնից, և ոչ խաբե-
բայութիւնով։ Այլ ինչպէս 4
մենք Աստուածանից ընտրուե-
ցանք որ աւետարանը մեզ հա-
ւատացուի, այնպէս էլ խօսում
ենք. ոչ թէ իբր մարդկանց
հաճոյ լինողներ, այլ Աստու-
ծոյն՝ որ մեր սրտերը քննում է։
Վասն զի երբէք շողոքորդու- 5
թեան խօսքերով չեղանք, ինչ-
պէս գիտէք. և ոչ էլ ագահու-
թեան պատճառանքով. Աս-
տուած վկայ է։ Եւ ոչ մարդ- 6
կանցից փառք խնդրեցինք, ոչ
ձեզանից, և ոչ ուրիշներից,
թէ և կարող էինք ինչպէս 7
Քրիստոսի առաքեալները ծան-
րութիւն լինել, բայց հեղահոգի
եղանք ձեր մէջ ինչպէս մի ծըծ-
մայր սնուցանում է իւր երա-
խաներին։ Այնպէս էլ մենք 8
գթալով ձեզ, հաճեցանք ոչ
թէ միայն Աստուծոյ աւետա-
րանը տալ ձեզ, այլ մեր անձ-
ները էլ, որովհետև մեր սիրե- 9
լիքն եղաք։ Այն զի յիշում
էք, եղբայրք, մեր աշխատանքը
և ջանքը, որ գիշեր և ցերեկ
գործում էինք, որ ձեզանից ոչ
մէկին ծանրութիւն չտանք. և
Աստուծոյ աւետարանը քարո-
զում էինք ձեզ։ Դուք ինքներդ 10
վկայ էք և Աստուած էլ, թէ
ինչպէս սրբութեամբ և արդա-
րութեամբ և անարատութեամբ
եղանք ձեզ հաւատացեալներիդ
մէջ։ Ինչպէս գիտէք, որ ձե- 11
զանից ամեն մէկին՝ ինչպէս մի

նապէս Աստուծոյ, որ կոչեացն
զձեզ յիւր արքայութիւնն և 'ի
փառս։

13 Վասն այնորիկ և մեք գոհա-
նամք զԱստուծոյ անպակաս՝ զի
առեալ զլուր բանին Աստուծոյ
առ 'ի մէնջ՝ ընկալարուք, ոչ
իբրև զբան մարդկան, այլ որ-
պէս ճշմարիտ՝ զբան Աստու-
ծոյ. որ և յաջողեալ իսկ է 'ի
14 ձեզ հաւատացեալսդ։ Զի դուք
նմանողք եղերուք եղբարք՝
եկեղեցեացն Աստուծոյ՝ որ են
'ի Հրէաստանի 'ի Քրիստոս
Յիսուս. զի զնոյն չարչարանս
չարչարեցայք և դուք 'ի ձերոց
ազգականաց. որպէս և նոքայն
15 'ի Հրէից. Որք և զՏէրն
Յիսուս սպանին՝ և զմարգարէսն,
և զմեզ հալածեցին, և Աստու-
ծոյ յաչաց ելին. և ամենայն
16 մարդկան հակառակ եղեն. Եւ
արգելուին զմեզ խօսել հե-
թանոսաց՝ զի ապրեսցին. զի
կատարեսցեն զմեղս իւրեանց
յամենայն ժամ. քանզի հասեալ
է 'ի վերայ նոցա բարկութիւն
մինչև խսպառ։

17 Այլ մեք եղբարք՝ թէպէտ և
որբ մնացաք 'ի ձէնջ առ ժամա-
նակ մի, երեսօք՝ և ոչ սրտիւք.
առաւել ևս փութացաք տեսանել
զերեսս ձեր մեծաւ ցանկու-

հայր իր որդիներին՝ Յորդորում 12
և մխիթարում էինք, և վկայու-
թիւն էինք տալիս, որ դուք
գնաք, ինչպէս այն Աստուծոյն
կ'վայելէ, որ ձեզ իր արքա-
յութեան և փառաց մէջ կան-
չեց։

Այորա համար էլ մենք ան- 13
պակաս գոհանում ենք Աստ-
ուածանից, որ դուք Աստուծոյ
քարոզութեան խօսքը մեզանից
առած ընդունեցիք, ոչ թէ իբր
մարդկանց խօսք, այլ ինչպէս
որ ճշմարիտ է՝ Աստուծոյ խօսք.
որ և ներգործում է ձեզ հաւա-
տացեալներումդ։ Վասն զի 14
եղբայրք, դուք նման եղաք Աս-
տուծոյ այն եկեղեցիներին, որ
Հրէաստանումն են Քրիստոս
Յիսուսումը. որովհետև դուք էլ
նոյնը կրեցիք ձեր ազգականնե-
րից, ինչպէս նոքանք էլ Հրէ-
աներից։ Որոնք Տէր Յի- 15
սուսին էլ սպանեցին և իրանց
մարգարէներին, և մեզ հա-
լածեցին և Աստուծոյ անհա-
ճոյ եղան. և բոլոր մարդկանց
հակառակ են. Որ մեզ արգելում 16
են խօսել հեթանոսներին որ
փրկուին, որ իրանց մեղքերը
կատարեալ անեն ամեն ժամա-
նակ, և հասել է նոքանց վերայ
բարկութիւնը մինչև վերջը։

Բայց մենք, եղբայրք, թէև 17
առ ժամանակ ձեզանից որբ
մնացինք երեսով և ոչ սրտով.
բայց աւելի ևս շտապեցինք ձեր
երեսը տեսնելու մեծ փափա-

18 թեամբ։ Վասն այսորիկ կա-
մեցայ գալ առ ձեզ ես Պօղոս՝
միանգամ և երկիցս, և խափա-
19 նեաց զմեզ Սատանայ։ Զանազի
ոչ է մեր յոյս՝ կամ խնդու-
թիւն կամ՝ պսակ պարծանաց
մերոց, եթէ ոչ դուք ի Տէր՝
առաջի Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ի նորա գալստեանն։
20 Զի դուք էք փառք մեր և
խնդութիւն։

ԳԼ. Գ

1 Վասն որոյ ոչ ևս ունիմք
ժոյժ՝, զի բարւոք թուեցաւ մեզ
2 միայն մնալ Աթէնս։ Եւ ա-
ռաքեցաք զՏիմոթէոս զեղբայր*
մեր և զգործակից աւետարանին
Աստուծոյ և ՀՕրն Քրիստոսի՝,
հաստատել զձեզ՝ և մխիթարել
վասն հաւատոցն ձերոց։

3 Զի մի՛ տաղտկայցէք ի նե-
ղութիւնս յայսոսիկ. քանզի
դուք ինքնին իսկ գիտէք, զի ի
4 սոյն կամք։ Զանազի մինչ առ
ձեզն իսկ էաք՝ յառաջագոյն ա-
սէաք ձեզ, թէ նեղութիւնք
հասանելոց են ի վերայ մեր.
որպէս և եղև իսկ և գիտացիք։
5 Վասն այնորիկ և ես զի ոչ ևս
ունէի ժոյժ՝ առաքեցի գիտել
զհաւատսն ձեր. գուցէ արդեօք

քով։ Նորա համար ես Պօ- 18
ղոսս մի երկու անգամ կամեցայ
ձեզ մօտ գալ, և սատանան խա-
փանեց մեզ։ Որովհետև ոչ 19
է մեր յոյսը կամ ուրախու-
թիւնը կամ պարծանքի պսակը,
եթէ ոչ դուք Տէրուն մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի առջև
նորա գալու ժամանակուն։
Վասն զի դուք էք մեր փառքը՝ 20
և ուրախութիւնը։

ԳԼ. Գ

Վասն որոյ այլ ևս չհամբե- 1
րելով բարւոք երևեցաւ մեզ,
որ մենք մենակ մնամք Աթէն-
քումն, Եւ ուղարկեցինք մեր 2
Տիմոթէոս եղբայրը և Աստու-
ծոյ ծառայն և Քրիստոսի աւե-
տարանին մէջ մեր գործակիցն,
որ ձեզ հաստատէ և մխիթարէ
ձեր հաւատքի համար.
Որ չսասանիք այս նեղու- 3
թիւններումն, վասն զի դուք
ինքներդ գիտէք, որ հէնց սորա
համար կանգնած ենք, Որով- 4
հետև երբոր էլ ձեզ մօտ էինք,
կանխաւ ասում էինք ձեզ, թէ
նեղութիւններ ենք կրելու.
ինչպէս որ եղաւ էլ, և իմացաք
էլ։ Սորա համար ես էլ այլ 5
ևս չհամբերելով, ուղարկեցի
որ ձեր հաւատքը գիտենամ, որ

* Յունաց ոսկեբաշան օրինակին, մեր, և զպաշտօնեայ Աստուծոյ, և զգործակից մեր յաւետարանին Քրիստոսի

փորձեաց և զձեզ փորձիչն, և
ընդունայն լինիցի ջանն մեր։
6 Բայց արդ՝ իբրև եկն Տիմոթէոս
ի ձէնջ առ մեզ, և եւ մեզ
զաւետիս հաւատոցն ձերոց և
զսիրոյ, զի ունիք ի մտի
զյիշատակս մեր բարեաց յամե-
նայն ժամ. ցանկացեալ էք
տեսանել զմեզ՝ որպէս և մեք
7 զձեզ. Վասն այնորիկ մխիթա-
րեցաք ի ձեզ եղբարք՝ ի վերայ
ամենայն վշտաց և նեղութեանց
*ձերոց՝ ի ձեռն հաւատոցն
8 ձերոց. Զի այժմ կենդանի
եմք՝ եթէ դուք հաստատուն
9 կայցէք ի Տէր։ Զի՞նչ կարեմք
գոհութիւն մատուցանել Աս-
տուծոյ վասն ձեր, ի վերայ
ամենայն խնդութեանն, զոր
խնդամբ վասն ձեր առաջի Աս-
10 տուծոյ մերոյ. Զայգ և
զգիշերեկ առաւել ևս աղաչեմք՝
տեսանել զերեսս ձեր, և հաս-
տատել զպակասութիւն հաւա-
11 տոցն ձերոց։ Այլ ինքն Աս-
տուած և Հայր մեր՝ և Տէր մեր
Յիսուս Քրիստոս՝ ուղղեսցէ
զճանապարհս մեր առ ձեզ։
12 Եւ զձեզ ինքն Տէր բազմա-
պատիկս և առաւելս արասցէ
սիրով ընդ միմեանս և առ ամե-
նեսին՝ որպէս և մեք ի ձեզ.
13 Հաստատել զսիրտս ձեր անա-
րատս ի սրբութիւն առաջի Աս-
տուծոյ և Հօր մերոյ՝ և գալս-
տեանն Տեառն մերոյ Յիսուսի

մի գուցէ փորձիչը ձեզ փորձեց
և մեր աշխատանքը զուր լինի։
Բայց հիմա երբոր Տիմոթէոսը 6
ձեզանից եկաւ մեզ մօտ, և ձեր
հաւատքի և սիրոյ աւետիքը
տուաւ մեզ, որ ամեն ժամանակ
մեր բարի յիշատակը յիշ[illegible]
ունիք, փափագելով մեզ տես-
նել՝ ինչպէս մենք էլ ձեզ.
Նորա համար, եղբայրք, մխի- 7
թարուեցանք ձեզ վերայ այն
մեր ամեն վշտումը և նեղու-
թիւնումը ձեր հաւատքի հա-
մար։ Զանազի հիմա մենք կեն- 8
դանի ենք, եթէ դուք հաստատ
կենաք Տէրումը։ Վասն զի 9
ի՞նչ գոհութիւն կարող ենք
հատուցանել Աստուծոյն ձեզ
համար այն ամեն ուրախութեան
համար, որով ուրախանում ենք
ձեզ համար մեր Աստուծոյ առ-
ջև, Գիշեր և ցերեկ առաւել 10
ևս աղաչում ենք, որ ձեր
երեսը տեսնենք, և ձեր հա-
ւատքի պակասութիւնը լրաց-
նենք։ Բայց ինքն Աստուած և 11
մեր Հայրն և մեր Տէրը Յիսուս
Քրիստոս ուղղէ մեր ճանա-
պարհը դէպի ձեզ։ Իսկ ձեզ 12
աճեցնէ և առելացնէ Տէրը
սիրով դէպի իրար և դէպի
ամենն, ինչպէս մենք էլ դէպի 13
ձեզ։ Որ ձեր սրտերը հաստա-
տուին անարատ սրբութիւնով
Աստուծոյ և մեր Հօր առջև մեր
Տէր Յիսուս Քրիստոսն իր ա-

* Ի Յոյն, մերոց

Քրիստոսի՝ հանդերձ ամենայն
սրբովք իւրովք։

ԳԼ. Դ

1 Այսուհետև եղբարք՝ աղա-
չեմք զձեզ և մխիթարեմք ի
Քրիստոս Յիսուս. զի որպէս
ընկալարուք ի մէնջ, թէ որպէս
պարտ իցէ ձեզ գնալ՝ և հաճոյ
լինել Աստուծոյ. որպէս և
գնայիք իսկ, զի ևս քան զևս
2 յաւելուցուք ի նոյն։ Եւ
գիտէք թէ որովհետև պատուիրանս
տուաք ձեզ ի Տէր Յիսուս։
3 Զի այս են կամք Աստուծոյ,
սրբութիւն ձեր. ի բաց լինել
4 ձեզ ի պոռնկութենէ. Գիտել
իւրաքանչիւր ումեք ի ձէնջ
զիւր ման ստանալ սրբութեամբ
5 և պատուով. Ոչ ի ցաւս ցան-
կութեան՝ *որպէս և այլ հե-
թանոսք՝՝՝ որ ոչ գիտեն զԱս-
6 տուած։ Մի՛ զանցանել և
զչկել զեղբայր
իւր. քանզի վրէժխնդիր է Տէր
ի վերայ ամենայնի այդորիկ.
որպէս յառաջագոյն ասացաք
ձեզ, և եղաք վկայութիւն։
7 Քանզի ոչ կոչեաց զմեզ Աստ-
ուած ի պղծութիւն՝ այլ ի
8 սրբութիւն։ Այսուհետև որ
անարգէ, ոչ զմարդ անարգէ,
այլ զԱստուած՝ որ և ետ զՀոգին
Սուրբ ի ձեզ։

մեն սրբերովք գալու ժամանա-
կումն։

ԳԼ. Դ

Այսուհետև, եղբարք, ա-
ղաչում ենք ձեզ և յորդորում
ենք Տէր Յիսուսումն, ինչպէս
ընդունեցիք մեզանից, թէ ինչ-
պէս պէտք է ձեզ գնալ և հա-
ճոյ լինիլ Աստուծոյ, որ էլ
աւելի առաջանաք նոքանում,
Վասն զի գիտէք թէ ինչպիսի
պատուիրանքներ տուինք ձեզ
Տէր Յիսուսումն։ Վասն զի
սա է Աստուծոյ կամքն, ձեր
սրբութիւնն. որ դուք ետ կե-
նաք պոռնկութիւնից, Եւ ձե-
զանից ամեն մէկը գիտենայ իր
անօթն պահել սրբութեամբ և
պատուով, Ոչ թէ ցանկութեան
կիրքով, ինչպէս հեթանոսներն
էլ որ Աստուծոյն չեն գիտում։
Ազնիւ որ մէկը մի բանում
չափիցն անցնէ և իր եղբօրը
զրկէ. որովհետև Տէրն այդ բո-
լոր բաների համար վրէժխնդիր
է. ինչպէս առաջուց էլ ասա-
ցինք ձեզ և վկայութիւն տու-
ինք։ Վասն զի Աստուած մեզ
չկանչեց պղծութեան մէջ, այլ
սրբութեան մէջ։ Ուրեմն նա
որ անարգում է, ոչ թէ մար-
դուն է անարգում, այլ Աս-
տուծոյն որ և տուաւ մեզ
Սուրբ Հոգին։

* Ի Յոյն, որպէս և հեթանոսք

9 Այլ վասն եղբայրսիրու-
թեան՝ չէ ինչ պիտոյ գրել առ
ձեզ. զի դուք ինքնին իսկ աս-
տուածուսոյցք էք՝ առ ի զմի-
10 մեանս սիրելոյ։ Քանզի և
առնէք իսկ զդոյն յամենայն
եղբարս որ են յամենայն կող-
մանս Մակեդոնիացւոց։ Աղա-
չեմք զձեզ եղբարք՝ առաւել ևս
11 առաւելուլ և առատանալ. Հան-
դարտել, Եւ գործել զիւրա-
քանչիւր. և գործել ձեռօք
ձերովք, որպէս և պատուիրե-
ցաք ձեզ, զի գնայցէք պարկեշ-
տութեամբ առ արտաքինսն՝ և
մի՛ իւիք կարօտեալք իցէք։

12 Ո՛չ կամիմ եղբարք՝ եթէ
տգէտք իցէք վասն ննջեցելոցն.
զի մի՛ տրտմիցիք որպէս և այլքն՝
13 որոց ոչ գոյ յոյս։ Եթէ հաւա-
տամք՝ եթէ Յիսուս մեռաւ և
յարեաւ. նոյնպէս և Աստուած
ննջեցեալսն ի ձեռն Յիսուսի
ածցէ ընդ նմա։

14 Բայց զայս ասեմք Տեառն
բանիւ, եթէ մեք՝ որ կենդանիքս
եմք մնացեալք՝ ի գալստեանն
Տեառն ոչ ժամանեմք ննջեցե-
15 լոցն։ Զի ինքնին Տէր հրա-
մանաւ, ի ձայն հրեշտակա-
պետի և ի փող Աստուծոյ իջանէ
յերկնից. և մեռեալքն ի Քրիս-
տոս յարիցեն յառաջագոյն։
16 Այսպէս և մեք որ կենդանւոյն
մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ
յափշտակեսցուք ամպովք ընդ

Բայց եղբայրսիրութեան հա- 9
մար պէտք չունիք մի բան
գրել ձեզ. վասն զի դուք ինք-
ներդ Աստուածանից սովորած
էք իրար սիրել. Որ հէնց այդ 10
էլ անում էք այն բոլոր եղ-
բայրներին որ ամբողջ Մակե-
դոնիայումն են. և աղաչում
ենք ձեզ, եղբայրք, որ էլ
աւելանաք, և ջանք անէք որ
հանդարտ լինիք։ Եւ ամեն 11
մէկն իր գործը գործէ. և ձեր
ձեռովն աշխատէք, ինչպէս պա-
տուիրեցինք ձեզ, որ պարկեշ-
տութիւնով վարուիք դրսիններ-
ի հետ և ոչ մի բանով կարօտ
չլինիք։

Ձեմ կամենում, եղբայրք, 12
որ տգէտ լինիք ննջեցելոց կող-
մանէ. որ չտրտմիք ինչպէս ու-
րիշները որ յոյս չունին։ Վասն 13
զի եթէ հաւատում ենք որ
Յիսուսը մեռաւ և յարութիւն
առաւ, այնպէս էլ Աստուած
ննջեցեալներին Յիսուսի ձեռով
կ'բերէ նորա հետ։

Վասն զի սա ենք ասում 14
ձեզ Տիրոջ խօսքովը, թէ մենք
որ կենդանի մնացած ենք մինչև
Տիրոջ գալը, ննջեցեալներիցը
չենք առաջանալ։ Որովհետև 15
ինքը Տէրը հրամանով, հրեշ-
տակապետի ձայնով և Աստու-
ծոյ փողով վայր կ'գայ երկնի-
քիցը. և Քրիստոսով մեռելներն
առաջ յարութիւն կ'առնեն, Եւ 16
յետոյ մենք, որ կենդանի ենք
մնացած նորանց հետ մէկտեղ

առաջ Տեառն յօգս. և այնպէս
յամենայն ժամ ընդ Տեառն
17 լինիցիմք։ Այսուհետև մխի-
թարեցէք զմիմեանս բանիւքս
այսոքիւք։

ԳԼ. Ե

1 Այլ վասն ժամուց և ժամա-
նակաց եղբարք՝ չէ՛ լինչ պիտոյ
2 գրել առ ձեզ։ Զի դուք ինքնին
իսկ ստոյգ գիտէք, թէ օրն
Տեառն իբրև զգող գիշերի՝
3 այնպէս հասանէ։ Զորժամ
ասիցեն թէ խաղաղութիւն և
շինութիւն է, յայնժամ յան-
կարծակի հասցէ նոցա սատա-
կումն՝ որպէս և երկին յղեղ. և
4 մի ապրեսցին։ Այլ դուք
եղբարք՝ ոչ էք ՚ի խաւարի՝ թէ
օրն ձեր իբրև զգող ՚ի վերայ
5 հասանիցէ, Զի ամենեքին
դուք որդիք լուսոյ էք՝ և որ-
դիք տունջեան. չեմք գիշերոյ՝
6 չեմք խաւարի։ Այլա մի զքնով
անկանիցիմք՝ որպէս և այլքն.
այլ արթունք և զուարթունք
7 եղիցուք։ Զի որ ննջեն՝
գիշերի ննջեն, և որ արբենան՝
8 գիշերի արբենան։ Այլ մեք զի
տունջեան եմք, արթունք ե-
ղիցուք, և զգեցցուք զզրահսն
հաւատոց և զսիրոյ, և դիցուք
զսաղաւարան յուսոյն փրկու-
9 թեան։ Զի ոչ ետ զմեզ Աս-
տուած ՚ի բարկութիւն, այլ ՚ի
փրկութիւն կենդանութեան ՚ի
ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
ամպերով օդի մէջ կ՚յարիշտա-
կուինք Տիրոջը դիմաւորելու և
այնպէս ամեն ժամանակ Տիրոջ
հետ կ՚լինինք։ Ուրեմն իրար 17
մխիթարեցէք այս խօսքերովը։

ԳԼ. Ե

Բայց այն ժամերի և ժամա- 1
նակների համար եղբայրք, պէտք
չունիք գրել ձեզ։ Որովհետև 2
դուք ինքներդ հաստատ գիտէք,
թէ Տիրոջ օրը ինչպէս գիշե-
րուայ գող այնպէս կ՚հասնէ։
Վասն զի երբոր կ՚ասեն թէ 3
խաղաղութիւն և ապահովու-
թիւն է, այն ժամանակ յան-
կարծակի կ՚հասնէ նորանց վերայ
կորուստը ինչպէս ցաւը յղեմի
վերայ, և չեն պրծնիլ։ Իսկ 4
դուք, եղբայրք, խաւարումն
չէք, որ այն օրն գողի պէս ձեզ
վերայ հասնէ։ Դուք ամենքդ 5
լուսոյ որդիք էք և ցերեկի որ-
դիք, գիշերինը չենք և ոչ
խաւարինը։ Այսպէս ուրեմն չը- 6
քնենք ուրիշների պէս, բայց
արթուն և զարթուն լինինք։
Վասն զի նորանք որ քնում են 7
գիշերն են քնում, և նորանք որ
արբենում են՝ գիշերն են արբե-
նում։ Իսկ մենք ցերեկինը լի- 8
նելով արթուն լինինք՝ հագած
հաւատքի և սիրոյ զրահը, և
փրկութեան յուսոյ սաղաւար-
տը։ Վասն զի Աստուած մեզ 9
չդրաւ բարկութեան համար,
այլ փրկութիւնն ստանալու հա-

10 Քրիստոսի, Որ մեռաւն վասն
մեր. զի եթէ արթունք իցեմք՝
և եթէ ննջիցեմք, նովաւ հան-
11 դերձ կեցցուք։ Վասն որոյ
մխիթարեցէք զմիմեանս, և շինե-
ցէք զկրեսարս՝ որպէս և առնէքդ
իսկ։

12 Աղաչեմք զձեզ եղբարք՝ ճա-
նաչել զվաստակաւորս և ըզվե-
րակացուս ձեր ՚ի Տէր, և զնոսրա-
13 տիչս ձեր։ Եւ համարեցարուք
զնոսա արժանիս առաւել սիրոյ՝
վասն գործոյ նոցա. խաղաղու-
թիւն արարէք ընդ միմեանս։
14 Աղաչեմք զձեզ եղբարք՝ խրա-
տեցէք զստահակս, մխիթարեցէք
զկարճամիտս, պատսպարան լե-
րուք տկարաց, երկայնամիտ
15 լերուք առ ամենեսեան։ Զգոյշ
լերուք՝ գուցէ ոք չարի չար
հատուցանիցէ. այլ յամենայն
ժամ զբարեաց զՏետ երթայք՝
առ միմեանս և առ ամենեսեան։
16 Յամենայն ժամ ուրախ լերուք։
17 Անդադար աղօթս արարէք։
18 Յամենայնի գոհացարուք. զի
այս են կամք Աստուծոյ Քրիս-
տոսիս Յիսուսիս ՚ի ձեզ։
19 Զհոգին մի՛ շիջուցանէք։
20 Զմարգարէութիւնս մի՛ ար-
21 համարհէք։ Զամենայն ինչ
փորձեցէք, զբարին ընկալարուք։
22 Յամենայն իրաց չարաց ՚ի բաց
23 կացէք։ Եւ ինքն Աստուած
խաղաղութեան սուրբս արասցէ
զձեզ համօրէնս. և բովանդակ
ձեր ոգի և շունչ և մարմին՝

մար մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի ձեռովը։ Որ մեզ համար 10
մեռաւ, որ՝ թէ արթուն լինինք և
թէ քնենք, նորա հետ միասին
ապրինք։ Նորա համար իրար 11
մխիթարեցէք, և իրար շինու-
թիւն տուէք՝ ինչպէս անում
էլ էք։

Եւ աղաչում ենք ձեզ, եղ- 12
բայրք, որ ճանաչէք ձեր մի-
ջումը աշխատողներին և ձեր
վերակացուներին Տէրումը, և
ձեր խրատողներին էլ։ Եւ նո- 13
րանց առաւելագոյն սիրոյ ար-
ժանի համարեցէք իրանց գործ-
քի պատճառով. իրար հետ
խաղաղութիւնով վարուեցէք։
Աղաչում ենք ձեզ, եղբայրք, 14
խրատեցէք անկարգներին, մխի-
թարեցէք փոքրաոսրտերին, օգ-
նական եղէք տկարներին, եր-
կայնամիտ եղէք ամենքի հետ։
Զգոյշ կացէք մի գուցէ մէկը 15
չարի տեղ չար հատուցանէ,
այլ ամեն ժամանակ բարոյն
հետևեցէք իրար հետ և ամենքի
հետ։ Ամեն ժամանակ ուրախ 16
եղէք։ Անդադար աղօթք ա- 17
րէք։ Ամեն բանի մէջ գոհա- 18
ցէք. վասն զի սա է Աստուծոյ
կամքը ձեզ վերայ Քրիստոս
Յիսուսումը։ Հոգին մի հանգցը- 19
նէք։ Մարգարէութիւնները 20
մի անարգէք։ Ամեն բան փոր- 21
ձեցէք, բարին ընդունեցէք։
Ամեն չար երևույթից հեռու 22
կացէք։ Եւ ինքն խաղաղու- 23
թեան Աստուածը ձեզ սուրբ

անարատ 'ի դալուստն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պա-
24 հեսցի։ Հաւատարիմ է՝ որ կոչեացն զձեզ, որ և արասցէ զնոյն։

25 Եղբարք աղօթս արարէք և
26 'ի մեր վերայ։ Ողջոյն տայջիք եղբարց ամենեցուն 'ի համբոյր
27 սրբութեան։ Երդմնեցուցանեմ զձեզ 'ի Տէր՝ ընթեռնուլ զթուղթդ առաջի ամենայն եղ-
28 բարց սրբոց։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ. ամէն։

Առ Թէսաղոնիկեցիս առաջին ԼՈՒՂԹ՝ գրեցաւ յԱթենայ։

անէ բոլորովին. և ձեր բոլոր հոգին և շունչը և մարմինը ա-
նարատ պահուի մինչև մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գալը։
Հաւատարիմ է նա որ կանչեց 24
ձեզ, որ կ'անէ էլ։
Եղբայրք, աղօթք արէք մեզ 25
համար էլ։ Բարև տուէք բո- 26
լոր եղբայրներին սուրբ համբուրով։ Երդում եմ տալիս 27
ձեզ Տէրովը, որ այս թուղթը բոլոր սուրբ եղբայրներին կար-
դացուի։ Մեր Տէր Յիսուսի 28
Քրիստոսի շնորհքը ձեզ հետ լինի։ Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱԼՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս՝ եկեղեցւոյդ Թէսաղոնիկեցւոց՝ յԱստուծոյ Հայր մեր և 'ի Տէր Յիսուս
2 Քրիստոս։ Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ, և 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր Եղբարք՝ որպէս և արժան իսկ է. զի ևս քան զևս աճեն հաւատքն ձեր, և յաճախէ սէր իւրաքանչիւր ամենեցուն ձեր
4 առ միմեանս։ Որպէս և մեզ ձեօք պարծել յեկեղեցիսն Աստուծոյ՝ վասն համբերութեան ձերոյ և հաւատոց՝ յամենայն հալածանս ձեր և 'ի նեղութիւնս, որում
5 դուքն համբերէք. Յօրինակ արդար դատաստանին Աստուծոյ. արժանի լինել ձեզ արքայութեանն Աստուծոյ, վասն որոյ և զՀգնութիւնդ կրէք.
6 Եթէ պարտ է առաջի Աստուծոյ՝ հատուցանել նեղչացն ձե-

Պօղոս և Սիղուանոս և 1
Տիմոթէոս։ Թեսաղոնիկեցոց եկեղեցւոյդ Աստուծմեր Հօրումը և Տէր Յիսուս
Քրիստոսումը։ Շնորհք լինի 2
ձեզ հետ և խաղաղութիւն Աստուծմեր Հօրիցը և Տէր Յիսուս Քրիստոսիցը։
Պարտինք ամեն ժամանակ 3
Աստուածանից գոհանալ ձեզ համար, եղբայրք, ինչպէս արժան է, որ ձեր հաւատքը խիստ մեծանում է, և ձեր ամեն մէկի սէրն աւելանում է իրար վերայ։ Այնպէս որ մենք ինք- 4
ներս ձեզանով պարծենում ենք Աստուծոյ եկեղեցիներումը ձեր համբերութեան և հաւատքի համար՝ ձեր բոլոր հալածանքներումը և նեղութիւններումը, որոնց դուք համբերում էք։
Որ դա Աստուծոյ արդար դա- 5
տաստանի նշան է. որ դուք արժանի լինիք Աստուծոյ արքայութեան, որի համար էլ նեղութիւն էք քաշում, Որ 6

7 բոց նեղութիւն. Եւ ձեզ նե-
ղելոցդ հանգիստ ընդ մեզ՝ ի
յայտնութեանն Տեառն մերոյ
Յիսուսի, յերկնից հրեշտակօք
8 զօրութեան իւրոյ. Ի բոց
հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝
զոյք ո՛չ ճանաչեն զԱստուած, և
որ ո՛չ հնազանդին աւետարանին
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
9 տոսի. Որք տայցեն վրէժս
ի սատակումն յաւիտենից՝ յե-
րեսաց Տեառն և ի փառաց
զօրութեան նորա. Յորժամ
10 գայցէ փառաւոր լինել ի
մէջ սրբոց իւրոց, և սքանչելի
ի մէջ ամենայն հաւատա-
ցելոց. զի հաւատարիմ եղև
վկայութիւնն մեր ի վերայ ձեր
11 յաւուր յայնմիկ: Յոր և
աղօթս առնեմք վասն ձեր յամե-
նայն ժամ, զի զձեզ արժանիս
արասցէ կոչմանն ձերում Աս-
տուած մեր՝ մինչև լցցէ զամե-
նայն հաճութիւն բարութեան,
և զգործս հաւատոցն զօրու-
12 թեամբ: Օ՛ի փառաւոր լցցի
անուն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ի ձեզ՝ և դուք ի
նմա, ըստ շնորհացն Աստուծոյ
մերոյ և Տեառն Յիսուսի
Քրիստոսի:

ԳԼ. Բ

1 Աղաչեմ զձեզ եղբարք՝ վասն
գալստեանն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, և մերոյ
2 ժողովելոյն առ նա. Մի՛ վաղ-
եթէ իրաւունք է Աստուծոյ
առջև ձեզ նեղացնողներին նե-
ղութիւն հատուցանել. Եւ 7
ձեզ նեղուածներիդ՝ հանգիստ
մեզ հետ Տէր Յիսուսի երկնից
յայտնութիւնովն իր զօրութեան
հրեշտակներովն, Կրակի բոցով 8
վրէժ առնելու նորանցից, որ
Աստուծոյն չեն ճանաչում, և
չեն հնազանդում մեր Տէր Յի-
սուսի աւետարանին. Որոնք 9
պատիժ կ'կրեն յաւիտենական
կորուստը Տիրոջ երեսից և
նորա փառաւոր զօրութիւնից,
Երբոր կ'գայ, որ փառաւոր 10
լինի իր սրբերումը, և զար-
մանալի բոլոր հաւատացեալնե-
րումը. (քանզի մեր վկայու-
թիւնը ձեզ վերայ հաւատա-
ցուցեալ այն օրումն): Այս 11
պատճառով էլ ամեն ժամանակ
աղօթք ենք անում ձեզ համար
որ մեր Աստուածը ձեզ արժանի
անէ յէր կոչումին և կատարէ
բոլոր բարի հաճութիւնը, և
հաւատքի գործը զօրութիւնով.
Որ մեր Տէր Յիսուսի Քրիս- 12
տոսի անունը փառաւորուի ձե-
զանում՝ և դուք նորանում՝, մեր
Աստուծոյ և Տէր Յիսուսի Քրիս-
տոսի շնորհքի պէս:

ԳԼ. Բ

Աղաչում ենք ձեզ, եղբայրք, 1
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
գալստեան և մեր նորա մօտ
ժողովուելու համար. Որ դուք 2

վազակի խռովել ձեզ ի մտաց՝
և մի զարհուրել, մի հոգւով և
մի բանիւ և մի թղթովք՝ իբրև
թէ ի մէնք. որպէս թէ եկեալ
3 հասեալ իցէ օրն Տեառն: Մի՝
ոք զձեզ խաբեսցէ՝ և մի ի՛ւիք
իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ
ապստամբութիւնն, և յայտ-
նեսցի մարդն անօրէնութեան՝
4 որդին կորստեան, Հակառա-
կորդն հպարտացեալ ի վերայ
ամենայնի, որ անուանեալ իցէ
Աստուած, կամ պաշտօն. մինչև
նստել նմա ի տաճարին Աստու-
ծոյ, և ցուցանել զանձն՝ թէ
5 Աստուած իցէ: Ո՞չ յիշէք զի
մինչ առ ձեզն իսկ էի ասէի
6 զայս: Եւ արդ դուք ինքնին
գիտէք զայն՝ որ ունին յայտնել
7 նմա յիւրում ժամանակի: Օ՛ի
խորհուրդն անօրէնութեան ար-
դէն իսկ զօրանայ. բայց յայն-
ժամ մինչ ի միջոց բարձցի՝ որ
8 այժմդ ունի: Եւ ապա յայտ-
նեսցի անօրէնն. զոր Տէր Յիսուս
սատակեսցէ հոգւով բերանոյ
իւրոյ, և խափանեսցէ յայտնու-
9 թեամբ գալստեանն իւրոյ: Որոյ
գալուստն ըստ ազդեցութեան
Սատանայի է, ամենայն զօրու-
թեամբ և նշանօք և արուեստիւք
10 ստովք, Եւ ամենայն պատրանօք
անիրաւութեան ի վերայ կո-
րուսելոցն. փոխանակ զի զսէրն
ճշմարտութեան ո՛չ ընկալան՝ զի
ապրեսցին, և վասն այնորիկ
առաքեսցէ նոցա Աստուած
ազդեցութիւն մոլորութեան՝
շուտով չշարժուիք ձեր մտքիցը
և չզարհուրիք ոչ հոգով, և ոչ
խօսքով, և ոչ թղթով իբր թէ
մեզանից գրուած, որպէս թէ
Քրիստոսի օրն եկած հասած
3 լինի: Մէկը չխաբէ ձեզ ոչ
մի կերպով. վասն զի նա չի գալ
եթէ առաջ չգայ ապստամբու-
թիւնը, և յայտնուի անօրէնու-
թեան մարդը՝ կորուստի որդին,
4 Այն հակառակորդը որ գոռո-
զացած է այն ամենի վերայ, որ
Աստուած կամ Աստուծոյ պաշ-
տօնեայ է անուանուած. մինչև
որ նա Աստուծոյ տաճարի մէջ
(իբրև Աստուած) նստի, և իր
անձը ցոյց տայ թէ Աստուած
5 է: Չէ՞ք յիշում, որ քանի որ
ձեզ մօտ էի, այս բաներն ա-
սում էի ձեզ: Եւ հիմա գիտէք 6
այն որ խափանում է, որ նա իր
ժամանակին յայտնուի: Վասն 7
զի անօրէնութեան խորհուրդը
արդէն զօրանում է. միայն թէ
մինչև որ մէջ տեղիցը վեր
առնուի այժմ խափանողը: Եւ 8
այն ժամանակ կ'յայտնուի այն
անօրէնը, որին Տէրը կըսա-
տակեցնէ իր բերանի հոգովը,
և կ'խափանէ իր գալստեան
9 յայտնութիւնովը: Որի գալը
սատանայի ներգործութիւնիցն
է, ամեն զօրութիւնով և սուտ
10 նշաններով և հրաշքներով. Եւ
անիրաւութեան ամեն խաբե-
բայութիւններով կորուսեալնե-
րի մէջ. փոխանակ նորա որ
ճշմարտութեան սէրը չընդունե-

հաւատալ նոցա ստուգեանն։
11 Օ՛յ դատապարտեսցին ամենե-
քեան՝ որ ո՛չ հաւատացին ճըշ-
մարտութեանն, այլ հաճեցան
12 ընդ անօրէնութիւնն։ Այլ մեք
պարտիմք գոհանալ զԱստուծոյ
յամենայն ժամ վասն ձեր
եղբա՛րք սիրեցեալք՝ ի Տեառնէ.
զի ընտրեաց *զմեզ Աստուած՝ ի
սկզբանէ՝ ի փրկութիւն՝ սրբու-
թեամբ Հոգւոյն և հաւատովքն
13 ճշմարտութեան. Յոր և կո-
չեաց զձեզ աւետարանաւն
մերով՝ ի փրկութիւն փառացն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի։

14 Այսուհետև ե՛ղբարք հաս-
տատուն կացէք՝ և պինդ կա-
լարուք զաւանդութիւնսն՝ զոր
ուսարուք, եթէ բանիւ և եթէ
15 թղթով մերով։ Այլ ինքն Տէր
մեր Յիսուս Քրիստոս և Աս-
տուած և Հայր մեր, որ սիրեացն
զմեզ և ետ մեզ մխիթարութիւն
յաւիտենից՝ և յոյս բարեաց
16 շնորհօք. Մխիթարեսցե զսիրտս
ձեր՝ և հաստատեսցե յամենայն
բանս և՝ ի գործս բարութեան։

ԳԼ. Գ

1 Այսուհետև ե՛ղբարք՝ աղօթս
արարէք՝ ի վերայ մեր, զի բանն
ցին որ ապրին, և նորա համար
Աստուած մոլորութեան ներ-
գործութիւն կ՚ուղարկէ նորանց,
որ հաւատան ստութեան. Որ 11
դատապարտուին ամենքը որ
չհաւատացին ճշմարտութեանը,
այլ հաւանեցան անօրէնու-
թեանը։ Իսկ մենք պարտ ենք 12
ամեն ժամանակ Աստուածանից
շնորհակալ լինել ձեզ համար
Տէրոջը սիրուած եղբայրք, որ
Աստուած սկզբից ընտրեց ձեզ
փրկութեան համար՝ Հոգու
սրբութեան և ճշմարտա հա-
ւատքի մէջ. Որի մէջ կանչեց 13
ձեզ մեր աւետարանովը մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի փառքն
ստանալու համար։

Ուրեմն, եղբայրք, հաստատ 14
կացէք, և պինդ բռնեցէք այն
աւանդութիւնները, որ սովորե-
ցիք՝ թէ խօսքով և թէ մեր
թղթով։ Այլ ինքը մեր Տէր 15
Յիսուս Քրիստոսը և մեր Աս-
տուածը և Հայրը, որ սիրեց
մեզ և յաւիտենական մխիթա-
րութիւն տուաւ մեզ և բարի
յոյս շնորհքով, Նա մխիթարե 16
ձեր սրտերը և հաստատե ձեզ
ամեն բարի խօսքի և գործքերի
մէջ։

ԳԼ. Գ

1 Այսուհետև, եղբայրք, ա-
ղօթք արէք մեզ համար, որ

* Ի Յոյն, զձեզ

Տեառն ընթանայցէ. և փառաւոր
լինիցի յամենայն տեղիս՝ որպէս
2 և առ ձեզդ. Օ՛ի ապրեսցուք
յանօրինաց և յանզգամաց մար-
դոց. զի ո՛չ ամենեցուն են
3 հաւատք։ Այլ հաւատարիմ է
Տէր, որ և հաստատեսցէ զձեզ՝
և պահեսցէ՝ ի չարէ անտի։
4 Վստահ եմք՝ ի ձեզ Տէրամբ,
թէ զոր պատուիրեցաքն ձեզ, և
5 առնէք՝ և առնիցէք։ Այլ Տէր
ուղղեսցէ զսիրտս ձեր՝ ի սէրն
Աստուծոյ՝ և՝ ի համբերու-
թիւնն Քրիստոսի։

6 Պատուիրեմ ձեզ եղբարք՝
յանուն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, խորշել ձեզ յամե-
նայն եղբօրէ՝ որ ստահակն
գնայցեն. և ո՛չ ըստ աւանդու-
թեանն՝ զոր ընկալարուք՝ ի
7 մէնջ։ Օ՛ի դուք ինքնին գիտէք՝
թէ ո՛րպէս պարտ է ձեզ նմանել
մեզ. և ո՛չ երբէք ստահակեցաք
8 առ ձեզ. Եւ ո՛չ ձրի զուրուք
հաց կերաք, այլ ջանիւ և
վաստակով զցայգ և զցերեկ
գործէաք՝ վասն չծանրանալոյ
9 ումեք՝ ի ձէնջ։ Ո՛չ եթէ չու-
նէաք իշխանութիւն. այլ զի
զանձինս օրինակ արասցուք ձեզ՝
10 նմանօրդս լինել մեզ։ Քանզի
մինչդեռ առ ձեզն իսկ էաք՝
զայս պատուիրէաք ձեզ, թէ որ
ո՛չն կամիցի գործել՝ և կերիցէ
11 մի։ Զդ՝ լսեմք զոմանց՝ ի
ձէնջ՝ թէ ստահակութեամբ
գնան. գործ ինչ ո՛չ գործեն,
Տիրոջ խօսքն առաջանայ, և 1
ամեն տեղ փառաւորուի ինչպէս
որ էլ ձեզ մօտ։ Եւ որ փրը- 2
կուինք անօրէն և անզգամ
մարդկանցից. վասն զի հաւատքն
ամենի բան չէ։ Բայց Տէրը 3
հաւատարիմ է, որ կ՚հաստատէ
ձեզ և կ՚պահէ այն չարիցը։
Վստահութիւն ունինք ձեզ 4
վերայ Տէրով, որ այն բաներն
որ պատուիրեցինք ձեզ, և ա-
նում էք և կ՚անէք էլ։ Իսկ 5
Տէրը ուղղէ ձեր սրտերը դէպի
Աստուծոյ սէրը և դէպի Քրիս-
տոսի համբերութիւնը։

Եւ պատուիրում ենք ձեզ, 6
եղբայրք, մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի անունովն, որ ետ
քաշուիք ամեն եղբայրից, որ
անկարգ է վարվում. և ոչ թէ
այն պատուիրանքի պէս որ ընդ-
դունեց մեզանից։ Վասն զի 7
դուք ինքներդդ գիտէք, թէ
ինչպէս պէտք է ձեզ մեզ նմա-
նիլ. որովհետև ձեր մէջ ան-
կարգութիւնով չվարուեցանք։
Եւ ոչ էլ ձրի հաց կերանք մէկի 8
մօտ, այլ ջանքով և աշխատան-
քով գիշեր և ցերեկ գործելով,
որ ձեզանից մէկին ծանրութիւն
չտանք։ Ոչ իբր թէ իշխա- 9
նութիւն չունինք, այլ որ մեր
անձներն օրինակ տանք ձեզ որ
մեզ նմանիք։ Վասն զի երբոր 10
ձեզ մօտ էինք, սա էինք պա-
տուիրում ձեզ, որ եթէ մէկը
չէ կամենում գործել՝ թող
չուտէ էլ։ Որովհետև ձեզա- 11

այլ յուլացեալ հետաքրքիր
12 շրջին։ Այնպիսեացն պատուէր
տամք՝ և աղաչեմք ՚ի Տէր
Յիսուս Քրիստոս, զի հանդար-
տութեամբ գործեսցեն՝ և զիւ-
13 րեանց հաց կերիցեն։ Այլ
դուք եղբարք՝ մի՛ ձանձրանայք
14 զբարիս գործել։ Այս եթէ ոչ
ոք հնազանդեսցի բանիս մերում
թղթովդ այդուիկ, դուք նշա-
նակեսջիք զնա. և մի՛ խառնա-
կեսջիք ընդ նմա՝ զի պատկա-
15 ռեսցէ։ Բայց մի՛ իբրև զթշնամի
համարիջիք՝ այլ խրատեսջիք
16 իբրև զեղբայր։ Եւ ինքն Տէր
խաղաղութեան՝ տացէ ձեզ խա-
ղաղութիւն յամենայն ժամ
յամենայն իրս։

17 Տէր ընդ ամենեսին ընդ ձեզ։
Ողջոյնս իմոյ ձեռին Պօղոսի է,
որ է նշանակ յամենայն թուղ-
18 թիս, այսպէս գրեմ։ Շնորհք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի ընդ ամենեսին ձեզ. ամէն։

Առ թէսաղոնիկեցիս երկրորդ՝
գրեցաւ յԱթենայ։

նից ոմանց համար լսում ենք
որ անկարգութիւնով են վար-
վում, բան չեն գործում, այլ
հետաքրքիր ման են գալիս։
Այնպիսիներին պատուիրում 12
ենք և աղաչում ենք մեր Տէր
Յիսուս Քրիստոսովը, որ հան-
գարտութիւնով աշխատին և
իրանց հացն ուտեն։ Բայց 13
դուք, եղբայրք, մի՛ ձանձրանաք
բարիք գործելուց։ Եւ եթէ 14
մէկը չհնազանդէ մեր խօսքին
այս թղթովը, դուք նշան արէք
նորան. և մի՛ խառնուիք նորա
հետ որ ամաչէ։ Բայց թշնա- 15
մու պէս մի՛ համարէք, այլ
խրատեցէք նորան ինչպէս եղ-
բայր։ Իսկ ինքն խաղաղու- 16
թեան Տէրը տայ ձեզ խաղա-
ղութիւն ամեն ժամանակ, և
ամեն կերպով, Տէրը ձեր ամենի
հետ լինի։
Այս բարևը իմ Պօղոսիս 17
ձեռինն է, որ նշան է ամեն
թղթերումը. Այսպէս եմ գը-
րում։ Մեր Տէր Յիսուսի Քրիս- 18
տոսի շնորհքը ձեր ամենի
հետ լինի. Ամէն։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ Յիսուսի
Քրիստոսի՝ ըստ հրա-
մանի Փրկչին մերոյ Աստուծոյ
2 և Քրիստոսի Յիսուսի յուսոյն
մերոյ. Տիմոթեայ որդւոյ սիրելւ-
ւոյ հաւատովք. շնորհք,
ողորմութիւն, խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ և ՚ի Տեառնէ
մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Որպէս աղաչեցի զքեզ կալ
Եփեսոս՝ մինչ երթայիր ՚ի
Մակեդոնիա. զի պատուէր
տացես ոմանց չլինել օտարուս-
4 մունս, Եւ չհայել յառասպելս
և ՚ի տոհմաթիւս անչափս. որ
մանաւանդ խնդիրս յուղեն, և
ոչ զտնտեսութիւն Աստուծոյ
5 հաւատովք։ Քանզի գլուխ
պատուիրանին սէր է, ՚ի սուրբ
սրտէ՝ և ՚ի մտաց բարեաց՝ և
6 յանկեղծաւոր հաւատոց։ Յո-
րոց ոմանք վրիպեցան՝ խոտո-
ռեալք յունայնութիւն բանից։
7 Կամին լինել վարդապետք օրի-
նաց. ինքեանք ոչ իմանան զինչ
խօսին՝ և ոչ վասն որոց պնդեալն
8 են։ Գիտեմք՝ եթէ բարւոք են

Պօղոս Յիսուսի Քրիս- 1
տոսի առաքեալ մեր փրը-
կիչ Աստուծոյ և Յիսուս Քրը-
իստոսի մեր յուսոյն հրաման-
ովը. Տիմոթէոս՝ սիրելի որ- 2
դոյս՝ հաւատքով, շնորհք, ո-
ղորմութիւն և խաղաղութիւն
լինի Աստուած մեր Հօրիցը և
մեր Տէր Յիսուս Քրիստոսիցը։
Ինչպէս որ աղաչեցի քեզ, 3
որ Եփեսոսումը մնաս Մակե-
դոնիայ գնալիս. որ պատուիրես
ոմանց որ օտար ուսմունք չքսո-
վորեցնեն։ Եւ մտիկ չտան ա- 4
ռասպելների և աղգահամարնե-
րի, որ վերջ չունին, որ աւելի
վիճաբանութիւններն են գըր-
գռում, քան թէ Աստուծոյ շի-
նութիւնը հաւատքով։ Իսկ 5
պատուիրանքի վախճանը սէրն
է սուրբ սրտից, և բարի խղճմը-
տանքով, և անկեղծ հաւատքից.
Որոնցից ոմանք խոտորելով ու- 6
նայն խօսքերի ետևից գնացին։
Կամենում են օրէնքի վարդա- 7
պետ լինել, և իրանք չեն իմա-
նում ոչ այն որ խօսում են, և

օրէնք՝ եթէ ոք զնոսա օրինօքն
9 կրեսցէ։ Բայց զայս գիտասցէ՝
զի ՚ի վերայ արդարոց օրէնք ո՛չ
կան, այլ ՚ի վերայ անօրինաց և
անհնազանդից՝ ամբարշտաց և
մեղաւորաց՝ անսրբոց և պղծոց,
զհայր և զմայր անարգողաց,
10 մարդասպանաց, պոռնկաց, ա-
րուագիտաց, մարդեղուզաց, սը-
տոց, ստերդմանց. և եթէ այլ
ինչ ինչ հակառակ ողջամիտ
11 վարդապետութեանս, Որ ըստ
աւետարանի փառաց երանելւոյն
Աստուծոյ է, զրում եղէ ես
հաւատարիմ։

12 Շնորհ ունիմ՝ այնմիկ, որ
զօրացուցին զիս ՚ի Քրիստոս
Յիսուս ՚ի Տէր մեր. զի հաւա-
տարիմ համարեցաւ կարգել ՚ի
13 սպասաւորութիւն, Որ յառա-
ջագոյն հայհոյիչն էի՝ և հա-
լածիչ և թշնամանիչ. այլ գտի
ողորմութիւն, զի զայն յանգի-
տութեան և յանհաւանութեան
14 գործէի։ Եւ առաւել եղեն
շնորհք Տեառն մերոյ հաւա-
տովքն և սիրով՝ որ ՚ի Քրիս-
15 տոս Յիսուս։ Հաւատարիմ է
բանս՝ և ամենայն ընդունելու-
թեան արժանի է. զի Քրիս-
տոս Յիսուս եկն յաշխարհ
փրկել զմեղաւորս, որոց գլուխն
16 ես եմ։ Այլ վասն այնորիկ գտի
ոչ էլ այն բաները որ պնդում
են։ Եւ գիտենք որ օրէնքը 8
բարի է, եթէ մէկն օրինաւորա-
պէս գործածէ նորան, Այս 9
իմանալով, որ արդարին օրէնք
չկայ, այլ անօրէններին և
անհնազանդներին, ամբարիշտ-
ներին, և մեղաւորներին, ան-
սուրբներին, և պիղծերին, հայ-
բասպաններին, և մայրաս-
պաններին, մարդասպաններին,
պոռնիկներին, արուագէտներ- 10
ին, մարդաղողներին, սուտ
ասողներին, սուտ երդում անող-
ներին. և եթէ ուրիշ ինչ հա-
կառակ է ողջամիտ վարդապե-
տութեանը, Երանելի Աստու- 11
ծոյ փառաւոր աւետարանի հա-
մեմատ, որն ինձ հաւատացուե-
ցաւ։

Եւ շնորհակալ եմ ինձ 12
մեր Տէր Յիսուս Քրիստոսումը
զօրացնողիցը, որ ինձ հաւա-
տարիմ համարեց և սպասաւո-
րութեան մէջ դրաւ, Որ առա- 13
ջուց հայհոյիչ և հալածող և
թշնամանող էի, բայց ողոր-
մութիւն գտայ, վասն զի չըգի-
տենալով էի գործում անհաւա-
տութիւնով։ Բայց էլ աւելի 14
շատ եղաւ մեր Տիրոջ շնորհքը
հաւատքով և սիրով որ Քրիս-
տոս Յիսուսումն է։ Հաւատարիմ 15
է այս խօսքը և ամեն ընդունելու-
թեան արժանի, որ Քրիստոս
Յիսուս աշխարհք եկաւ մեղա-
ւորները փրկելու, որոնց առա-
ջինն ես եմ։ Սակայն նորա համար 16

ողորմութիւն, զի նախ յիս
ցոյց Յիսուս Քրիստոս զամ-
նայն երկայնմտութիւն՝ յօրինակ
այնոցիկ՝ որ հաւատալոցն իցեն
՚ի նա, ՚ի կեանսն յաւիտենից։
17 Այլ թագաւորին յաւիտենից՝
անեղծի և աներևութի, միոյն
Աստուծոյ՝ փառք և պատիւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

18 Զայս պատուիրան աւանդեմ
քեզ՝ որդեակ իմ Տիմոթէոս,
ըստ կանխելոց ՚ի քեզ մարգա-
րէութեանցն. զի դու զնուռ-
իցիս նոքօք զգեղեցիկ զնո-
19 ւորութիւնն. Ունիցիս հաւատս
սրբովք մտօք, զոր ոմանց մերժ-
եալ յանձանց իւրեանց՝ նաւա-
20 կոծեցան ՚ի հաւատս, Որոց սակի
են Հիմենոս՝ և Աղէքսանդրոս,
զորս մատնեցի Սատանայի, զի
խրատեսցին չհայհոյել։

ԳԼ. Բ

1 Եւ արդ աղաչեմ, նախ քան
զամենայն առնել աղօթս՝ խընդ-
րուածս՝ պաղատանս՝ գոհու-
թիւնս վասն ամենայն մարդկան.
2 Ա՛նաւանդ վասն թագաւորաց
և ամենայն իշխանաց. զի խա-
ղաղութեամբ և հանդարտու-
թեամբ վարեսցուք զկեանս
մեր, ամենայն աստուածպաշ-
տութեամբ և սրբութեամբ։
3 Զի այն է բարի և ընդունելի

ողորմութիւն գտայ, որ առաջ
ինձանում ցոյց տայ Յիսուս
Քրիստոս բոլոր երկայնմտու-
թիւնը օրինակ լինելու նորանց
որ պիտի հաւատան նորան
յաւիտենական կենաց համար։
Բայց յաւիտենից թագաւորին՝ 17
այն անեղծին և աներևոյթին,
այն մէկ Աստուծոյն լինի պատիւ
և փառք յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն։

Այս պատուիրանքն աւան- 18
դում եմ քեզ, Տիմոթէոս որ-
դեակ, առաջուց քեզ վերայ
եղած մարգարէութիւնների պէս,
որ նորանցով պատերազմիս բա-
րի պատերազմը. Ունենալով 19
հաւատք և բարի խղճմտանք,
որ մի քանիսը դէն գցելով
հաւատքումը նաւակոծութիւն
քաշեցին. Որոնցից են Հիմե- 20
նոսն և Աղէքսանդրոսն, որոնց
մատնեցի սատանային, որ խրա-
տուին չհայհոյել։

ԳԼ. Բ

Արդ աղաչում եմ, ամենից 1
առաջ աղօթք անել, խընդ-
րուածք, աղաչանք, գոհութիւն
ամեն մարդկանց համար, թա- 2
գաւորների և ամեն իշխանա-
ւորների համար. որ խաղաղ և
հանդարտ կեանք վարենք, բո-
լոր աստուածպաշտութիւնով և
սրբութիւնով։ Այն զի սա 3
բարի և ընդունելի է մեր փրկիչ
Աստուծոյ առջև, Որ կամենում 4

առաջի փրկչին մերոյ Աստու-
4 ծոյ. Որ զամենայն մարդիկ
կամի զի կեցցեն՝ և ի գիտու-
թիւն ճշմարտութեան եկեսցեն:
5 Զի մի է Աստուած, և մի
միջնորդ Աստուծոյ և մարդկան՝
6 մարդն Յիսուս Քրիստոս. Որ
ետ զանձն փրկանս ընդ ամենե-
ցուն՝ վկայութիւն ժամանակաց
7 իւրոց: Յորս եդայ ես քարոզ և
առաքեալ. ճշմարիտ ասեմ ի
Քրիստոս և ոչ ստեմ, եղէ վար-
դապետ Հեթանոսաց հաւա-
տովք և ճշմարտութեամբ:
8 Կամիմ՝ զի արք կայցեն
յաղօթս յամենայն տեղիս.
բառնայցեն զսուրբ ձեռս ի վեր
առանց բարկութեան և երկ-
9 մտութեան: Նոյնպէս և կանայք
ի զարդ խոնարհութեան՝ ակ-
նածութեամբ և զգաստու-
թեամբ զարդարել զանձինս. մի
ի հիւսս ոսկեմանս ընդելու-
զեալս մարգարտով, կամ ի
10 հանդերձս պաճուճեալս. Այլ
որպէս վայելէ կանանց՝ զաս-
տուածպաշտութիւն յանձն ա-
ռելոց գործովք բարութեան:
11 Կին մարդ ցածութեամբ ուսցի,
ամենայն հնազանդութեամբ:
12 Այլ ուսուցանել կնոջ մարդոյ
ոչ հրամայեմ, և ոչ ճոխաբան
լինել քան զայր մարդ. այլ ի
13 լռութեան կալ: Զի Ադամ
նախ ստեղծաւ՝ և ապա Եւա:
14 Եւ Ադամ ոչ պատրեցաւ՝ այլ
կինն պատրեցաւ և յանցեաւ.
15 Բայց կեցցէ վասն որդեծնու-
է որ ամեն մարդիկ փրկուին, և
ճշմարտութեան գիտութեանը
գան: Որովհետև մէկ Աստ-
ուած կայ, և մէկ միջնորդ Աս-
տուծոյ և մարդկանց մէջ՝ Քրիս-
տոս Յիսուս մարդը, Որ իր
անձը ամենքի համար փրկանք
տուաւ, որ վկայութիւն լինի իր
ժամանակներումը: Որին ես
քարոզիչ և առաքեալ կար-
գուեցայ, (ճշմարիտն եմ ասում,
սուտ չեմ խօսում), հեթա-
նոսների վարդապետ հաւատքի
և ճշմարտութեան մէջ:
Արդ կամենում եմ, որ մար-
դիկ ամեն տեղ աղօթք անեն,
սուրբ ձեռքեր վեր բարձրացնեն
առանց բարկութեան և երկ-
մտութեան: Այնպէս էլ կա-
նայք վայելուչ հագուստով
ամօթխածութիւնով և պար-
կեշտութիւնով իրանց անձները
զարդարեն, ոչ թէ հիւսուած-
ներով, կամ ոսկիով կամ
մարգարիտներով կամ թանգա-
գին հանդերձներով. Այլ ինչ-
պէս կը վայելէ աստուածպաշ-
տութիւնը յանձնառած կանանց՝
բարի գործքերով: Կինը թող
հանդարտութեամբ սովորէ ա-
մեն հնազանդութիւնով: Կըն-
կան հրաման չեմ տալիս, որ
սովորեցնէ, և ոչ էլ մարդուն
վերայ իշխէ, այլ որ լուռ կե-
նայ: Վասն զի Ադամ առաջ
ստեղծուեցաւ և յետոյ Եւան:
Եւ Ադամ չխաբուեցաւ այլ
կինը խաբուելով մեղք գործեց:

թեանն՝ եթէ կացցեն ի հաւատս
և ի սէր և ի սրբութիւն պար-
կեշտութեամբ:

ԳԼ. Գ

1 Հաւատարիմ է բանս. եթէ
ոք episկոպոսութեան ցանկայ
2 բարւոյ գործոյ ցանկայ: Պարտ
է episկոպոսին անարատ լինել,
միոյ կնոջ այր, *հեղ՝ ցած՝
պարկեշտ, հիւրասէր, ուսու-
3 ցիչ. Ոչ† թշնամանող, մի
հարկանող, այլ հանդարտ. մի
4 կռուող, մի արծաթասէր. Զի
իւրում տանն իսկ բարւոք
վերակացու լեալ իցէ. որդեակս
ունիցի, որ ի հնազանդութեան
կայցեն ամենայն պարկեշտու-
5 թեամբ: Զպա եթէ ոք իւրում
տանն վերակացու չգիտիցէ լի-
նել, զիա՞րդ եկեղեցւոյ Աստու-
6 ծոյ խնամակալ լինիցի: Ոչ
մատաղատունկ, զի մի հպար-
տացեալ ի դատաստան Սա-
7 տանայի անկանիցի: Այլ պարտ
է նմա վկայութիւն բարի և
յարտաքնոցն ունել. զի մի ի
նախատինս անկանիցի՝ և յորո-
գայթս Սատանայի:

8 Նոյնպէս զսարկաւագունս
պարկեշտս. մի երկբանս, մի
9 գինեսէրս, մի զօշաքաղս. Այլ

Սակայն կ'ապրի որդեծնութեան 15
համար, եթէ կենայ հաւատքի
և սիրոյ և սրբութեան մէջ պար-
կեշտութեան հետ:

ԳԼ. Գ

Ճշմարիտ է այս խօսքը, եթէ 1
մէկը եպիսկոպոսութեան է ցան-
կանում՝ բարի գործի է ցան-
կանում: Բայց եպիսկոպոսին 2
պէտք է անարատ լինել, մէկ
կնկայ մարդ, զգաստ, խոհեմ,
պարկեշտ, հիւրասէր, սովորեց-
նելու յարմար. Ոչ գինեմոլ, 3
ոչ զարկող, (և ոչ ամօթալից
շահ սիրող) այլ հանդարտ,
կռիւ չանող, ոչ արծաթասէր.
Իր տանը բարի վերակացու 4
լինող, որ որդիքներ ունենայ
հնազանդութեան մէջ ամեն
պարկեշտութիւնով: (Բայց ե- 5
թէ մէկն իր տանը վերակացու
լինիլ չգիտենայ, ի՞նչպէս նա
Աստուծոյ եկեղեցոյն խնամք
կ'տանի:) Ոչ մատաղատունկ, 6
որ չգոռոզանայ և սատանայի
դատաստանն ընկնի: Բայց պէտք 7
է նորան, ղրսիններից բարի
վկայութիւն էլ ունենալ, որ
չընկնի նախատինքի և սատա-
նայի որոգայթի մէջ:
Այնպէս էլ սարկաւագները 8
պէտք է ծանրաբարոյ լինին. ոչ
երկու լեզուանի, ոչ գինու

* Ի Յոյն, զգաստ՝ ժուժկալ՝
† Ի Յոյն, արբեցող

ունէցին զխորհուրդ հաւատոցն
10 սուրբ մոռք։ Խնբեանք նախ
փորձեսցին, և ապա 'ի պաշտօնն
մատիցեն, *զի անարատք իցեն"։
11 Այսպէս և կանայք նոցա պար-
կեշտք. մի՛ չարախօսք, † հեզք՝
12 հաւատարիմք յամենայնի. Սար-
կաւագք լինիցին միոյ կնոջ արք.
որք որդւոց իւրեանց բարւոք
վերակացու լեալ իցեն, և տանց
13 իւրեանց. Զի որ բարւոքն
պաշտիցեն. աստիճան բարի
անձանց իւրեանց շահին, և
բազում համարձակութիւն 'ի
հաւատն որ 'ի Քրիստոս Յի-
սուս։

14 Զայս գրեմ առ քեզ՝ զի
15 ակն ունիմ՝ 'ի մօտոյ գալ, Ապա
թէ յամեցից՝ զի գիտասցես,
թէ որպէս պարտ իցէ քեզ 'ի
տան Աստուծոյ շրջել. որ է
եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ.
սիւն և հաստատութիւն ճըշ-
16 մարտութեան։ Եւ յայտնի
իսկ մեծ է խորհուրդն աս-
տուածպաշտութեան. որ ‡Ել-
բևեցաւ մարմնով՝" արդարա-
ցաւ Հոգւով՝ յայտնեցաւ
հրեշտակաց՝ քարոզեցաւ 'ի հե-
թանոսս՝ հաւատարիմ եղև

մոլի. ոչ ամօթալից շահ սիրող.
Այլ հաւատքի խորհուրդը սուրբ 9
խղճմտանքի մէջ ունեցող։ Եւ 10
սորանք առաջ թող փորձուին,
և յետոյ այն պաշտօնը մտնեն,
եթէ անարատ լինին։ Այնպէս 11
էլ նորանց կանայքը պէտք է
ծանրաբարոյ չլինին. ոչ թէ չա-
րախօս, այլ զգաստ, ամէն բանի
մէջ հաւատարիմ։ Սարկա- 12
ւագները մէկ կնկայ մարդ լի-
նին, իրանց որդոցը և իրանց
տներին բարի վերակացու։
Այսն զի պաշտօնը լաւ կա- 13
տարողներն իրանց անձերի հա-
մար բարի աստիճան են շահում,
և շատ համարձակութիւն այն
հաւատքումը որ Քրիստոս Յի-
սուսումն է։
Այս գրում եմ քեզ յուսա- 14
լով որ շուտով քեզ մօտ գամ։
Իսկ եթէ ուշանամ, որ գիտե- 15
նաս թէ ինչպէս պէտք է Ա-
ստուծոյ տան մէջ վարուիլ. որ
է եկեղեցի կենդանի Աստու-
ծոյ, սիւն և հաստատութիւն
ճշմարտութեան։ Եւ յայտնա- 16
պէս մեծ է Աստուածպաշտու-
թեան խորհուրդը. Աստուած
յայտնուեցաւ մարմնում, արդ-
արացաւ Հոգով, երևեցաւ
հրեշտակներին, քարոզուեցաւ
հեթանոսներին, հաւատացուե-

* 'Ի Յոյն, անարատք զոլով
† 'Ի Յոյն, զգաստք
‡ Ընդրբելգոյն օրինակ Յունաց, Աստուած երևեցաւ մարմնո

յաշխարհի՝ և վերացաւ փա-
ռօք։

ԳԼ. Դ

1 Այլ Հոգին Սուրբը յայտնա-
պէս ասէ. թէ 'ի ժամանակս
յետին քակեսցին ոմանք 'ի
հաւատոցն. և հայեսցին յայս-
մոլորութեան, և 'ի վարդապե-
2 տութիւնս դիւաց, Կեղծաւորու-
թեամբ ստապանք, խարեալք
3 իւրեանց խղճիւն մտաց. Որ
արգելուցուն յամուսնանալոյ,
և մեկնիցին 'ի կերակրոց՝ զոր
Աստուած հաստատեաց 'ի վայ-
ելել հաւատացելոց, և զոյք
հասեալ իցեն 'ի ճշմարտութեան
4 վերայ։ Զի ամենայն արարածք
Աստուծոյ՝ բարի են, և չիք ինչ
խոտան. մանաւանդ որ գոհու-
5 թեամբ ընդունիցին. Զի սրբի
բանիւն Աստուծոյ՝ և աղօթիւք։
6 Զայս խրատ տուեալ եղբարց՝
բարւոք պաշտօնեայ լինիցիս
Քրիստոսի Յիսուսի, սնանիցիս
բանիւք հաւատոց, և բարւոք
վարդապետութեամբն՝ զորոյ
7 զկնան իսկ եղեր։ Այլ 'ի պիղծ
բանից և յառասպելից պառա-
ւանց հրաժարեսջիր։ Բայց
կրթեա զանձն քո յաստուած-
8 պաշտութիւն. Զի մարմնոյ
կրթութիւն առ սակաւ ինչ
օգտակար է. իսկ աստուած-
պաշտութիւն առ ամենայն ինչ
օգտակար է, և զաւետիս կենաց
ունի՝ զարդիս և զանդերձելոյն։

ցաւ աշխարհքումը և վերացաւ
փառքով։

ԳԼ. Դ

Եւ Հոգին յայտնի ասում է 1
թէ յետին ժամանակներումը ո-
մանք հաւատքիցը կ'հեռանան,
և մտիկ կ'տան մոլար ոգիների
և դևերի վարդապետութիւննե-
2 րի, Սատանայների կեղծաւորու-
թեամբը, որոնց խղճմտանքը
3 դաղուած է. Որ ամուսնանա- 3
լու կ'արգիլուին, կ'հրաժարին
կերակուրներից որ Աստուած
ստեղծեց հաւատացեալների և
ճշմարտութիւնը ճանաչողների
համար որ գոհութեամբ վա-
4 յելին։ Այսն զի Աստուծոյ 4
բոլոր ստեղծուածները բարի
են, և ոչ մի բան խոտան չէ.
երբոր գոհութիւնով ընդուն-
5 ուի։ Որովհետև սրբվում է 5
Աստուծոյ խօսքովը և աղօթ-
քով։ Եթէ այս բաները եղ- 6
բայրներին խրատ տաս, Յիսուս
Քրիստոսի բարի պաշտօնեայ
կ'լինիս, սնուած հաւատքի խօս-
քերովը, և այն բարի վարդա-
պետութիւնովն որին հետևե-
7 ցիր։ Եւ պիղծ ու պառաւական 7
առասպելներիցը ետ կաց. բայց
վարժեցրու քո անձը աստուած-
8 պաշտութեան։ Այսն զի մարմ- 8
նոյ վարժութիւնը քիչ բանի
համար է օգտակար. բայց աս-
տուածպաշտութիւնն ամէն բանի
համար օգտակար է, ունենալով

9 Հաւատարիմ է բանս՝ և ամե-
նայն ընդունելութեան արժանի
10 է։ Զի ի սոյն իսկ վաստա-
կեմք՝ և նախատինս յանձն
առնումք. զի յուսացեալ եմք
յԱստուած կենդանի, որ է
փրկիչ ամենայն մարդկան, մա-
11 նաւանդ հաւատացելոց։ Պա-
տուէր տայջիր զայդ՝ և ուսուցա-
12 նիջիր. Զի մի՛ ոք զքո մանկու-
թիւնդ արհամարհիցէ։

Այլ օրինակ լինիջիր հաւա-
տացելոց՝ բանիւք՝ գնացիւք՝
սիրով, հաւատովք, սրբու-
13 թեամբ։ Մինչև գամ ես, մի՛ա
դիր ընթերցուածոց մխիթարու-
14 թեան՝ վարդապետութեան։ Մի՛
անփոյթ առներ զշնորհացդ՝ որ
ի քեզ են, որ տուաւ քեզ մար-
գարէութեամբ ի ձեռնադրու-
15 թենէ երիցութեան։ Յսյդ
խորհեաց՝ և ի դոյն կանխես-
ջիր, զի քո յառաջադիմութիւնդ
16 ամենեցուն յայտնի լիցի։ Զգո-
ղաջ լինիջիր անձին և վարդա-
պետութեանդ՝ և ի դմին յամես-
ջիր. զայդ եթէ առնիցես՝ և
զանձն ապրեցուսցես, և զայ-
նոսիկ՝ որ քեզն լսիցեն։

ԳԼ. Ե

1 Զծերն մի՛ պատուհասեսցես,
այլ մխիթարեսջիր իբրև զհայր

այժմեան և գալու կենաց աւե-
տիքն։ Հշմարիտ է այս խօսքը 9
և ամեն ընդունելութեան ար-
ժանի։ Վասն զի հենց սորա 10
համար էլ աշխատում ենք և
նախատվում, որ յոյս ենք դրել
կենդանի Աստուծոյ վերայ, որ
փրկիչ է ամեն մարդկանց, և
մանաւանդ հաւատացեալներին։
Այս բաները պատուիրիր և 11
սովորեցրու։ Ոչ ոք քո ման- 12
կութիւնը չանարգէ. այլ օրի-
նակ եղիր հաւատացեալներին
խօսքով, վարքով, սիրով, հա-
ւատքով, սրբութիւնով։

Մինչև որ գամ՝ միտք դիր 13
կարդալուն, յորդորմունքին և
վարդապետութեանը։ Ընհոգ 14
մի լինիր այն քեզանում եղած
շնորհքի համար. որ քեզ
արուեցաւ մարգարէութիւնով
երիցութեան ձեռնադրութեամ-
բը. Սորանք մտածիր, սորան-
ցում կաց, որ քո յառաջադի- 15
մութիւնը ամենին յայտնի լինի։
Զգոյշ կաց անձիդ և վարդա- 16
պետութեանդ, և դորանում
յարատևիր. վասն զի այդ անե-
լով քո անձն էլ կապրեցնես, և
քեզ լսողներին էլ։

ԳԼ. Ե

Ծերին սաստիկ մի յանդի- 1
մանիր, այլ յորդորիր ինչպէս

զերիտասարդս իբրև զեղբարս,
2 Զպառաւունս իբրև զմարս,
զմանկամարդս իբրև զքոյրս՝
3 ամենայն սրբութեամբ։ Զայրիս
պատուեա՛, որ ստոյգ այրիքն
4 իցեն։ Եթէ ոք այրի՝ որդիս
և թոռունս ունիցի, ուսանիցին
նախ իւրեանց տանց բարի
առնել՝ և զփոխարէնս հատու-
ցանել ծնողացն. զի այն է բարի՝
և ընդունելի առաջի Աստուծոյ։
5 Իսկ որ ճշմարտիւ այրին իցէ. և
մենացեալ յուսացեալ յԱստու-
ած, և կանխեալ յաղօթս և ի
խնդրուածս զցայդ և զցերեկ։
6 Իսկ գիրդ այրին՝ կենդանւոյն
7 մեռեալ է։ Զայս պատուիրեա՝
8 զի անարատք իցեն։ Իսկ եթէ
ոք իւրոց՝ և մանաւանդ ընտա-
նեացն խնամ ոչ տանիցի, ի
հաւատոցն ուրացեալ է՝ և չար
9 ևս քան զանհաւատն է։ Այրի
ընդ այրիս անուանեսցի, որ
չիցէ պակաս ի վաթսնամենից,
10 միոյ առն կին լեալ. Եւ ի գործս
բարիս վկայեալ, եթէ մանկունս
սնուցեալ իցէ, եթէ զհիւրս
ընկալեալ իցէ, եթէ զսրբոց
զոտս լուացեալ իցէ, եթէ նե-
ղելոց բաւական լեալ իցէ, ե-
թէ զամենայն գործոց բարեաց
11 զհետ երթեալ իցէ։ Այլ ի
մանկամարդաց այրեացն հրա-
ժարեա՛, զի յորժամ խոյտան
զՔրիստոսիւ՝ ամուսնանալ կա-
12 մին. Իսկ զդատաստանս ըն-
դունին, զի զառաջին հաւատն
13 արհամարհեցին։ Մինդամայն

զերիտասարդս իբրև զեղբարս,
Զօր, երիտասարդներին եղ- 2
բայրների պէս։ Պառաւներին
մայրերի պէս, մատղաշ կանանց
քոյրերի պէս քոյրք սրբութիւ-
նով։ Որբևայրիներին պատ- 3
ուիր՝ որ ճշմարիտ որբևայրի են։
Բայց եթէ մեկ որբևայրի որդիք 4
և թոռներ ունենայ, թող առաջ
սովորեն իրանց տանը բարի
անել և փոխարէն հատուցանել
ծնողներին. վասն զի սա լարի է
և Աստուծոյ առջև ընդունելի։
Իսկ նա որ ճշմարիտ որբևայրի 5
է և մենակ մնացած, նա յոյսը
Աստուծոյ վերայ է դնում, և
գիշեր և ցերեկ աղօթքին և ա-
ղաչանքին հետևում։ Բայց 6
փափկասէր ողջ-այրին կենդա-
նոյն մեռած է։ Եւ այս բա- 7
ները պատուիրիր, որ անարատ
լինին։ Բայց եթէ մեկը իրան- 8
ների և մանաւանդ ընտանիքնե-
րի համար խնամք չտանի, նա
հաւատքից ուրացած է և ան-
հաւատից էլ չար է։ Որբևայրի 9
նա ընտրուի, որ վաթսուն տա-
րուց պակաս չէ և մեկ մարդու
կին եղած է. Լարի գործերով 10
վկայուած, եթէ երեխաներ է
մեծացրել, հիւրեր ընդունել,
որբերի ոտները լուացել, նեղա-
ցածներին ձեռնտու եղել, ամեն
բարի գործքերին հետևել։
Բայց մատղաշ որբևայրիներ- 11
ը իցը ետ կաց. վասն զի երբոր
ցանկութիւնով լցվում են՝
Քրիստոսի հակառակ՝ կամե-
նում են ամուսնանալ։ Եւ դա- 12

և դատարկանձունք ուսանին՝
շրջողք տանէ 'ի տուն. և ո՛չ
միայն դատարկք, այլ և փաս-
քուսք և հետաքրքիրք. և խօսին՝
14 որ ինչ ո՛չ է պիտոյ: Կամիմ
զմանկամարդացդ ամուսնանալ,
որդիս ծնանել, տնարարս լինել,
և մի՛ ինչ պատճառս տալ հա-
կառակողին 'ի հայհոյութեան
15 աղագս: Զի արդէն իսկ ոմանք
խոտորեցան զկնի Սատանայի.
16 Եթէ ոք հաւատացեալ՝ այրիս
ունիցի՝ բաւական լիցի նոցա, և
մի ծանրասցի եկեղեցւոյն. զի
ճշմարիտ այրեանցն բաւական
լինիցի:

17 Որ բարւոք վերակացու լինին
երիցունք՝ կրկին պատուոյ ար-
ժանի եղիցին. մանաւանդ որ
աշխատիցին բանիւ և վարդա-
18 պետութեամբ: Զ'Բանեղն ասէ
գիրք. Մի՛ կապեսցես զցուկ
եղին կալատոյ, և Բ.ժանի է
19 մշակն վարձու իւրոյ: Զերի-
ցուէ չարախօսութիւն մի՛ ըն-
դունիցիս. բայց եթէ երկուք՝
20 և երիւք վկայիւք: Իսկ որ
մեղանչեն՝ առաջի ամենեցուն
յանդիմանեա՛, զի և այլքն եր-
21 կիցեն: Ես կայութիւն դնեմ
առաջի Ա.ստուծոյ և Յիսուսի
Զ'Բրիստոսի՝ և ընտրելոց հրեշ-
տակաց, զի զայդ պահեսցես
տապարտութիւն են ընդունում,
որ առաջին հաւատքը դէն դցե-
ցին: Մ'իանգամայն էլ ծոյլ 13
են սովորում տուները ման գա-
լով. և ոչ թէ միայն ծոյլ՝ այլ
և շատախօս, և հետաքրքիր, և
խօսում են ինչ որ պէտք չէ:
Կամենում եմ՝ որ մատղաշ 14
ՈՐԲԷ-այրենէրն ամուսնանան, որ-
դիք ծնեն, տնաշէն լինեն. Ն-
հակառակողին ոչ մի պատճառ
չտան հայհոյանք անելու:
Ա.սն զի արդէն մի քանիքը 15
խոտորուեցան սատանայի ե-
տևիցը: Եթէ մի հաւատաց- 16
եալ մարդ կամ հաւատացեալ
կին որբևայրիներ ունենայ, նա
թող նորանց խնամք տանէ. և
եկեղեցուն ծանրութիւն չլինի,
որ ճշմարիտ որբևայրիներին
խնամք տանէ:

Լաւ վերակացութիւն անող 17
երէցները թող երկուապատիկ
պատուոյ արժանի լինին. մանա-
ւանդ նորանք որ խօսքով և
վարդապետութիւնով են աշ-
խատում: Ես ասն զի գիրքն ա- 18
սում է Ը.Ն Կա՛լի մէջ աշխատող
եղի գունչը չկապես. Ը.Ն մշակը
արժանի է իր վարձքին. Երէցի 19
վերայ գանգատ մի ընդունիր.
բայց միայն երկու կամ երեք
վկաներով: Մ'եղանչողներին 20
ամենի առջև յանդիմանիր, որ
ուրիշներն էլ վախենան: Ես կա- 21
յութիւն եմ դնում Ա.ստուծոյ
և Յիսուսի Զ'Բրիստոսի և ընտ-
րուած հրեշտակների առջև, որ

առանց մոռահամութեան. մի՛
22 ինչ առնել աչառանօք: Ձեռս
վաղվաղակի յուրուք վերայ մի՛
դնիցես, և մի՛ կցորդ լինիցիս
մեղաց օտարաց. զանձն քո
սուրբ պահեսջիր:

23 Ա.յսուհետև մի՛ ջուր և եթ
ըմպիցես՝ այլ սակաւիկ մի և
գինի խառնեսջիր՝ վասն ստա-
մոքսի և ստէպ հիւանդութեանց:
24 Են մարդք՝ որոց մեղքն յայտնի
են՝ և յառաջագոյն հասեալ 'ի
դատաստան, և են որոց զկնի
25 երթան: Նոյնպէս և բարի
գործքն յայտնի են. և որ այլ-
ազգ ևս ինչ լցեն՝ թաքչել ո՛չ
կարեն:

ԳԼ. Զ.

1 Որ միանգամ ընդ լծով ծա-
ռայութեան իցեն, զնուրաքան-
չիւր տեարս պատուի արժանի
համարեսցին. զի մի՛ անունն
Ա.ստուծոյ և վարդապետու-
2 թիւնն հայհոյեսցի: Իսկ որ
հաւատացեալ տեարս ունիցին՝
մի՛ արհամարհեսցեն, զի եղբարք
են. այլ առաւել ծառայեսցեն՝
զի հաւատացեալքն են և սի-
րունք. որք զբարերարութիւն
յանձինս ունիցին. զայս ուսու-
3 ցանիջիր՝ և մխիթարեսջիր: Իսկ
եթէ ոք այլազգ ինչ ուսու-
ցանիցէ, և ո՛չ անսայցէ ողջ-
մտութեան բանից Տեառն մերոյ
այս բաները պահես առանց
նախապաշարման. ոչինչ չանե-
լով երեսպաշտութեամբ: Ձե- 22
ռը շուտով մի դնիր մէկի վե-
րայ, և ուրիշների մեղացը մաս-
նակից մի լինիր. քո անձը սուրբ
պահիր:

Ա.յսուհետև միայն ջուր չը- 23
խմես, այլ մի քիչ գինի գործա-
ծիր քո ստամոքսի և քո շուտ
շուտ տկարանալու համար:

Կան մարդիկ, որոնց մեղքե- 24
րը յայտնի են, և առաջուց
դատաստանի հասած. իսկ ո-
մանցն էլ ետևիցն են գալիս
յայտնի-ում: Ա.յնպէս էլ բարի 25
գործքերը յայտնի են. և ուրիշ
կերպ լինողներն էլ չեն կարող
ծածկուիլ:

ԳԼ. Զ.

Նորանք որ ծառայութեան 1
լծի տակ են, թող իրանց տէրե-
րին ամեն պատուոյ արժանի
համարեն. որ Ա.ստուծոյ անունը
և վարդապետութիւնը չըհայ-
հոյուի: Իսկ հաւատացեալ 2
տէրեր ունեցողները թող չա-
նարգեն նորա համար որ եղ-
բայրը են. այլ առաւել ևս
ծառայեն. նորա համար որ հա-
ւատացեալ են և սիրելի, որ
բարերարութեանը մասնակից
են. այս բաները սովորեցրու և
յորդորիր: Իսկ եթէ մէկն ու- 3
րիշ կերպ բան սովորեցնէ և
մտիկ չանէ մեր Տէր Յիսուսի

Յիսուսի Քրիստոսի, և ըստ
աստուածպաշտութեան վար-
4 դապետութեանն. Այնպիսին
հպարտացեալ է, և ոչինչ ոչ
գիտէ. այլ տապի ի խնդիրս և
ի բանս հակառակութեան.
ուստի լինին նախանձ, հեռ,
հայհոյութիւն՝ կարծիք չար-
5 ևաց, խարդախութիւնք ապա-
կանելոց մտաց մարդկան՝ և
օտարացելոց ի ճշմարտութենէ
անտի, որ շահավաճառ համարին
զաստուածպաշտութիւն. բայց
դու մերժեսջիր յայնպիսեացն:

6 Այլ շահավաճառ մեծ աս-
տուածպաշտութիւն է՝ բաւա-
7 կանութեամբ հանդերձ: Զի
ոչ բերաք ինչ յաշխարհս՝ և ոչ
8 տանել ինչ կարասցուք: Այլ
ունիմք կերակուր և հանդերձս,
9 և այնու շատասցուք: Իսկ որք
կամին մեծանալ՝ անկանին ի
փորձութիւն և յորոգայթ, և
ի բազում ցանկութիւնս անմիտս
և վնասակարս. որք ընկղմեն
զմարդիկ ի սատակումն և ի
10 կորուստ: Զի արմատ ամենայն
չարեաց արծաթասիրութիւն է.
որում ոմանք ցանկացեալ՝ վրիպ-
եցան ի հաւատոցն, և զան-
ձինս արկին ընդ բազում ցաւ-
ովք:

11 Այլ դու ո՛վ մարդ Աստուծոյ՝
Քրիստոսի ողջամիտ խօսքերին,
և աստուածպաշտութեան հա-
մեմատ վարդապետութեանը:
Այս դառոյացած է, ոչինչ չի- 4
մանալով. այլ ախտացած է
վիճաբանութիւնների՝ և խօսքե-
րով հակառակելու համար, որ
նորանից լինում է նախանձ,
կռիւ, հայհոյութիւն, չար կար-
ծիքներ, Պատարկ վէճեր այն- 5
պիսի մարդկանց որ մտքով ա-
պականուած և ճշմարտութիւ-
նից հեռացած են. որ աս-
տուածպաշտութիւնը շահավա-
ճառութիւն են համարում.
այնպիսիներից հետ քաշուիր:
Բայց մեծ շահավաճառու- 6
թիւն է իրաւ աստուածպաշտու-
թիւնը բաւականութեան հետ
միասին. Վասն զի ոչինչ չենք
բերել աշխարհքս և յայտնի է
որ ոչինչ էլ չենք կարենալ 8
դուրս տանիլ: Բայց եթէ կե-
րակուր և հագուստ ունինք,
նորանցով բաւականանանք: Իսկ 9
նորանք որ կամենում են հարս-
տանալ փորձութեան և որո-
գայթի և շատ անմիտ վնասա-
կար ցանկութիւնների մէջ են
ընկնում. որ ընկղմում են մարդ-
կանց սատակումի և կորուստի
մէջ: Վասն զի արծաթասիրու- 10
թիւնը ամեն չարեաց արմատն
է. որին մի քանիսը ցանկանա-
լով հաւատքիցը մոլորուեցան,
և իրանց անձնները շատ ցաւերի
մէջ գցեցին:
Բայց դու, ով Աստուծոյ 11

փախիր յայնցանէ, և երթ
զհետ արդարութեան, զաստու-
ածպաշտութեան, զհաւատոց,
զսիրոյ, զհամբերութեան, ըզհե-
12 զութեան. Եւ մարտիր զբարւոք
մարտն հաւատոց, և բռնեա՛ն հար
զկենացն յաւիտենականաց՝ յոր
կոչեցարն, և դաւանեցեր ըզբար-
ւոք դաւանութիւնն առաջի
13 բազում վկայից: Պատուիրեմ
քեզ առաջի Աստուծոյ՝ որ կեն-
դանի առնէ զամենայն, և Յի-
սուսի Քրիստոսի՝ որ վկայեաց
առաջի Պոնտացւոյ Պիղատոսի
14 զբարւոք դաւանութիւնն. Պա-
հել քեզ զպատուիրանն անբիծ՝
անարատ, մինչև ի յայտնու-
թիւն Տեառն մերոյ Յիսուսի
15 Քրիստոսի. Զոր յիւր ժա-
մանակս ցուցցէ Երանելին՝ և
միայն Հզօր, Թագաւոր թա-
16 գաւորաց և Տէր տէրանց. Որ
միայն ունի զանմահութիւն՝
բնակեալ ի լոյս անմատոյց. զոր
ոչ ոք ետես ի մարդկանէ՝ և ոչ
տեսանել կարող է. որում պա-
տիւ և զօրութիւն յաւիտեանս.
ամէն:
17 Ուեղատանց որ են յայսմ
աշխարհի՝ պատուէր տայցէ՛ մի՛
հպարտանալ և մի՛ յուսալ ի՛
մեծութիւն ինոտի, այլ Աստ-
ուած՝ որ տայ մեզ զամենայն
18 առատապէս ի՛ վայելել. Զբարիս
գործել, մեծանալ գործովք բա-
րութեան, առատս, սիրունս,
19 հաղորդս լինել. Դանձել ան-
ձանց հիմն բարի ի հանդեր-
մարդ, փախիր սորանցից, և
հետևիր արդարութեան, աս-
տուածպաշտութեան, հաւատքի,
սիրոյ, համբերութեան, հե-
զութեան: Պատերազմիր հա- 12
ւատքի բարի պատերազմը, և
բռնիր յաւիտենական կեանքը
որի մէջ կանչուեցար. և դա-
ւանեցիր բարի դաւանութիւնը
շատ վկաների առջև: Պատուի- 13
րում եմ քեզ Աստուծոյ առջև
որ ամեն բան կենդանի է անում,
և Քրիստոս Յիսուսի առջև որ
բարի դաւանութիւնը վկայեց
Պոնտացի Պիղատոսի առջև. Որ 14
դու պատուիրանքը անբիծ և
անարատ պահես, մինչև մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի յայտ-
նութիւնը: Որ իր ժամանա- 15
կին ցոյց կ'տայ Երանելին և
միայն Հզօրի, թագաւորների
թագաւորը և տէրանց Տէրը,
Որ նա միայն անմահութիւն 16
ունի անմատոյց լուսոյ մէջ
բնակուած. որ մարդկանցից ոչ
ոք չտեսաւ և ոչ էլ կարող է
տեսնել. նորան լինի պատիւ և
զօրութիւն յաւիտեանս. Ամէն:
Ներկայ աշխարհիս հա- 17
րուստներին պատուիրին որ չը-
գոռոզանան, և ոչ էլ ունայն
մեծութեան վերայ յոյս դնեն,
այլ կենդանի Աստուծոյ վերայ
որ ամեն բան տալիս է մեզ
առատապէս վայելելու համար:
Բարի գործեն, բարի գործքե- 18
րով հարստանան, առատաձեռն
և կարօտներին հաղորդող լի-

ձեալսն, զի բուռն հարկանիցեն զՃշմարիտ կենացն:

20 Ո՛վ Տիմոթէէ՝ պահեա զաւանդն՝ խոտորեալ՝ի պղծոց և՝ի նորաձայն բանից և՝ի հակառակութենէ և՝ի մոլարանուն
21 գիտութենէ. Զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան՝ ի հաւատոց անտի: Շնորհ.ք ընդ քեզ. ամէն:

Առ Տիմոթէոս առաջին Լուղէ գրեցաւ՝ ի Լաոդիկէայ, որ է մայր Փոքրագոյն Պոկոսիոյն:

նին: Իրանց անձների համար 19
բարի հիմն գանձեն հանդերձեալի համար, որ յաւիտենական կեանքը ձեռք բերեն:

Ով Տիմոթէոս, պահիր ինչ 20
պրոծ աւանդը, և ետ կաց պիղծ և նորաձայն խօսքերիցը և սուտանուն գիտութեան հակառակութիւններիցը. Որ մի 21
քանիսը ընդունելով հաւատքիցը մոլորուեցան. Շնորհ.քը քեզ հետ լինի. Ամէն:

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաքն Աստուծոյ, ըստ աւետեաց կենացն՝ որ՝ի Քրիստոս Յի-
2 սուս. Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ՝ շնորհ.ք, ողորմութիւն և խաղաղութիւն Աստուծոյ Հօրէ և՝ի Քրիստոսէ Յիսուսի Տեառնէ մերմէ:
3 Շնորհ ունիմ Աստուծոյ՝ զոր պաշտեմն՝ի նախնեաց մտօք սրբովք, իբրև զի անպակաս ունիմ զքէն յիշատակ յաղօթս
4 իմ. զցայգ և զցերեկ. Յանկացեալ եմ տեսանել զքեզ, յիշատակեալ զարտասուսն քո՝ զի լցայց ուրախութեամբ.
5 Զմտաւ ածեալ զանխղճ հաւատն որ են՝ի քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ՝ի հանոյ քում Լաւոդեայ, և՝ի մօր քում Եւնիկեայ. հաստատեալ
6 եմ՝ թէ և՝ի քեզ է: Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ են՝ի քեզ՝ի ձեռնադրութենէ
7 իմմէ: Զի ոչ ետ մեզ Աստուած

Պօղոս Յիսուսի Քրիս- 1
տոսի առաքեալ Աստուծոյ կամքովը, կեանքի աւետիքի պէս, Քրիստոս Յիսուսումն է, Տիմոթէոս՝ սիրելի որ- 2
դոյս, շնորհ.ք, ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աստուած Հօրիցը և մեր Տէր Յիսուս Քրիստոսիցը:
Շնորհակալ եմ Աստուա- 3
ծանից, որին պաշտում եմ նախնիքներից. սուրբ մտքով, որ անպակաս յիշում եմ քեզ իմ աղօթքներումը գիշեր և
ցերեկ, Յանկանալով քեզ տես- 4
նել երբ յիշում եմ քո արտասուքը, որ ուրախութիւնով լը-
ցուիմ. Միտքս բերելով այն 5
անկեղծ հաւատքն որ քեզանում է. որ առաջ քո Լօիդատատումը և քո Եւնիկէ մօրումը բնակուեցաւ, համոզուած եմ
որ քեզանում էլ: Այդ պատ- 6
ճառով միտքդ եմ բերում որ արծարծես Աստուծոյ այն շնորհքն, որ քեզանում է իմ ձեռքերը դնելովը:

հոգի վհատութեան, այլ զօրու-
թեան՝ և սիրոյ՝ և զգաստու-
8 թեան։ Այլ այսուհետև ամօթ
համարիցես զվկայութիւն Տե-
ա՛ռն մերոյ՝ և մի՛ զիս զկապեալ
նորա. այլ կցորդ լեր չարչա-
բանաց աւետարանին՝ ըստ զօ-
9 րութեանն Աստուծոյ. Որ
փրկեաց զմեզ, և կոչեաց ՝ի
կոչումն սուրբ, ո՛չ ըստ գործոց
մերոց՝ այլ ըստ իւրում յառա-
ջադրութեանն և շնորհաց, որ
տուաւ մեզ ՝ի Քրիստոս Յիսուս
յառաջ քան զժամանակսն
յաւիտենից։

10 Բայց յայտնեցաւ այժմիկ
յերևելի Փրկչին մերոյ Յիսուսի
Քրիստոսի. որ խափանեաց
զմահ՝ և լուսաւոր արար զկեանս
և զանեղծութիւն ՝ի ձեռն աւե-
11 տարանին. Որոյ եդայ ես քա-
րոզ և առաքեալ՝ և վարդապետ
12 հեթանոսաց։ Վասն որոյ և
զայս չարչարանս կրեմ, այլ
ոչինչ ամօթ համարիմ. քանզի
գիտեմ՝ յո՛ հաւատացեալն եմ,
և հաստատեալ եմ, թէ կարող
է զաւանդն իմ պահել յօրն
13 յայն։ Ունիցիս օրինակ ողջ-
մտութեան բանիցն, զորս յինէն
լուար՝ հաւատովք և սիրով որ
՝ի Քրիստոս Յիսուս։

14 Օ՛ք բարւոք աւանդն պահես-
ջիր՝ ՝ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ՝ի
15 մեզ բնակելոյ։ Օ՛այս գիտաս-
Վասն զի Աստուած չտուաւ 7
մեզ երկչոտութեան հոգի, այլ
զօրութեան և սիրոյ և զգաս-
տութեան։ Ուրեմն ամօթ մի 8
համարիր մեր Տիրոջ վկայու-
թիւնը, և ոչ էլ ինձ որ նորա
կապուածն եմ. այլ միասին
չարչարուիր աւետարանի հա-
մար Աստուծոյ զօրութեան
համեմատ, Որ փրկեց մեզ, և 9
սուրբ կոչումով կանչեց. ոչ թէ
մեր գործքերի համար, այլ իր
առաջադրութեան և շնորհ.քի
համար, որ տրուեցաւ մեզ
Քրիստոս Յիսուսումը յաւի-
տենական դարերից առաջ։

Եւ հիմա յայտնուեցաւ մեր 10
Փրկիչ Յիսուս Քրիստոսի ե-
րևելումը. որ խափանեց մահին
և լուսոյ մէջ բերաւ կեանքն ու
անմահութիւնը աւետարանի մի-
ջոցով, Որին ես քարոզիչ և 11
առաքեալ կարգուեցայ, և հե-
թանոսների վարդապետ։ Որ 12
այդ պատճառով էլ չարչա-
րանքները կրում եմ. բայց ա-
մօթ չեմ համարում. վասն զի
գիտեմ թէ ո՞մ եմ հաւատա-
ցել. և համոզուած եմ թէ կա-
րող է իմ աւանդը պահել
մինչև այն օրը։ Ունեցիր աղ- 13
ջամիտ խօսքերի օրինակն, որ
ինձանից լսեցիր հաւատով և
սիրով որ Քրիստոս Յիսու-
սումն է։

Այլ բարի աւանդը պահիր 14
Սուրբ Հոգովը որ բնակուած է
մեզանում։ Սա գիտես, որ 15

ջիր՝ զի մեկնեցան ՝ի մէնջ ամե-
նեքեան որ էին Ասիա, որոց
սակի են Փիգեղոս և Հերմո-
16 գենէս։ Տացէ Աստուած ողոր-
մութիւն տանն Ընեսիփորայ. զի
բազում անգամ հանգոյց զիս,
և զկապանս իմ ո՛չ ամօթ հա-
17 մարեցաւ. Այլ երբև եկն ՝ի
Հռովմ, պնդագոյնս խնդրեաց
18 զիս՝ և եգիտ։ Տացէ նմա Տէր՝
ողորմութիւն գտանել ՝ի Տեառնէ
յաւուրն յայնմիկ. և որչափ
ինչ միանգամ Եփեսոս սպաս
կալաւ ինձ, զայն դու ինքնին
քաջ գիտես։

ԳԼ. Բ

1 Այլ դու որդեակ իմ, զօրաց-
ցիր շնորհօքն՝ որ ՝ի Քրիստոս
2 Յիսուս։ Եւ զոր լուար յինէն
բազում վկայիւք՝ զայն աւան-
դեսցես հաւատարիմ մարդոց,
որք բաւական իցեն և զայլս
ուսուցանել։
3 Վշտակից լեր իբրև զբարւոք
զինուոր Քրիստոսի Յիսուսի։
4 Ոչ ո՛ք զինուորեալ աստէն ընդ
կեանս աշխարհիս պատաղն,
եթէ զօրավարին հաճոյ լինիցի։
5 Եւ եթէ մարտիկ ոք իցէ՝ ո՛չ
պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին
6 մարտիցէ։ Եւ հողագործին աշ-
խատելոյ պարտ է նախ ՝ի
7 պտղոյն վայելել։ Իմա՛ զինչ
ասեմն. տացէ քեզ Տէր իմաս-
8 տութիւն յամենայնի։ Յիշեա՛
զՔրիստոս Յիսուս յարուցեալ
ինձանից ետ քաջուեցան այն
ամենքն որ Ասիայումն էին.
որոնցից են Փեգելոս և Հեր-
մոգենէս։ Տէրը ողորմութիւն 16
տայ Ընեսիփորոսի տանը, վասն
զի շատ անգամ հանգստացրեց
ինձ, և իմ կապանքն ամօթ չը-
համարեց. Այլ երբոր Հռո- 17
մումն էր, շատ ջանքով որոնեց
ինձ և գտաւ։ Տէրը տայ նո- 18
րան որ ողորմութիւն գտնէ
Տէրից այն օրումն. և թէ որ-
քան ծառայութիւն արաւ ինձ
Եփեսոսումը որ դու ինքդ լաւ
գիտես։

ԳԼ. Բ

Երդ դու, իմ որդեակ, զօ- 1
բացիր այն շնորհ.քովն որ Քը-
րիստոս Յիսուսումն է։ Եւ 2
այն բաներն որ ինձանից լսեցիր
շատ վկաներով, յանձնիր հա-
ւատարիմ մարդկանց որ կարող
լինին ուրիշներին սովորեցնել։
Իսկ դու նեղութիւնները կրիր 3
ինչպէս Քրիստոսի Յիսուսի
բարի զինուոր, Ոչ մի զինուո- 4
րութիւն անող այս աշխարհ-
քի գործերովը չէ զբաղուում,
որպէս զի զօրապետին հաճոյ
լինի։ Եւ եթէ մէկը մրցէ էլ՝ 5
պսակ չի ստանալ եթէ ըստ
օրինի չմրցէ։ Աշխատող հողա- 6
գործն առաջ պէտք է պտղնցը
վայելէ։ Իմացիր ինչ որ ա- 7
սում եմ. Տէրը քեզ իմաստու-
թիւն տայ ամեն բանի մէջ։

'ի մեռելոց՝ 'ի զաւակէ Դաւթի,
9 ըստ աւետարանիս իմում. Յո-
րում չարչարիմ կապանօք չափ՝
իբրև զչարագործ, այլ բանն
Աստուծոյ ոչ եթէ կապեալ լիցէ.
10 Վասն այնորիկ ամենայնի համ-
բերեմ վասն ընտրելոցն, զի և
նոքա փրկութեանն հասանիցեն՝
որ 'ի Քրիստոս Յիսուս երկ-
11 նաւոր փառօքն հանդերձ: Հա-
ւատարիմ է բանս. զի եթէ
ընդ նմա մեռաք՝ ընդ նմին և
12 կեցցուք. Եւ եթէ համբերեմք,
ընդ նմին և թագաւորեսցուք. և
եթէ ուրանամք՝ և նա ուրանայ
13 զմեզ. Եւ եթէ չհաւատամք,
նա հաւատարիմ մնայ, ուրա-
նալ զանձն իւր ոչ կարէ:
14 Զայս յուշ արասջիր՝ վկայու-
թիւն եղեալ առաջի Աստուծոյ.
մի բանակռիւ լինել յոչինչ
պէտս 'ի կործանումն լսողաց:

15 Փութասջիր զանձն քո ընտիր
կացուցանել առաջի Աստուծոյ,
մշակ առանց ամօթոյ. ուղիղ
համառօտել զբանն ճշմարտու-
16 թեան: Այլ 'ի պղծոց և 'ի
սնոտի խօսից մերժեսջիր. զի
առաւել յառաջ գայցեն յամ-
17 բարշտութիւնս. Եւ բանք նոցա
իբրև զբաղցկեղ ճարակ գտա-
նեն. որոց սակի են Հիմենոս՝ և
18 Փիլետոս. Որք վրիպեցան 'ի
Յիշեր Յիսուս Քրիստոսին մե-
ռելոցն միջից յարութիւն ա-
ռածին, որ Դաւթի սերունդիցն
է, իմ աւետարանի համեմատ,
Որի համար չարչարվում եմ
մինչև կապանքի մէջ էնել
չարագործի պէս. բայց Աստու-
ծոյ խօսքը կապուած չէ: Այսն
որոյ ամեն բանի համբերում՝ եմ
ընտրուածների համար. որ նո-
քանք էլ հասնեն այն փրկու-
թեան, որ Քրիստոս Յիսու-
սումն է յաւիտենական փառաց
հետ: Ճշմարիտ է այս խօսքը,
որ եթէ հետը մեռանք՝ հետն
էլ կ'ապրինք: Եթէ համբե-
րենք, հետն էլ կ'թագաւորենք,
և եթէ ուրանանք, նա էլ
կ'ուրանայ մեզ: Եւ եթէ
չհաւատանք, նա հաւատարիմ
կ'մնայ, իր անձն չէ կարող
ուրանալ: Այս բանը յիշեց-
ու Տիրոջ առջև վկայութիւն
դնելով, որ խօսքերով կռիւ
չանեն, որ ոչինչի պիտանի չէ՝
լսողներին է միայն կործա-
նում:
Ջանք արա, որ քո անձն ըն-
տիր կանգնեցնես Աստուծոյ առ-
ջև էբ մի մշակ առանց ամօ-
թոյ, որ ճշմարտութեան խօս-
քը ուղիղ մատակարարես: Բայց
պղծ ունայնախօսութիւնից հետ
քաշուիր. վասն զի աւելի ա-
ռաջ կ'գնան ամբարշտութեան
մէջ: Եւ նորանց խօսքերը քաղց-
կեղի պէս ճարակում է.
որոնցից են Հիմենոս և Փիլե-
տոս, Որոնք ճշմարտութիւնից
մոլորել են, ասելով թէ Դ-
ուէնէրի յարութիւնն արդէն
եղած է. և կործանում են
ոմանց հաւատքը: Բայց Աս-
տուծոյ հաստատ հիմը կանգ-
նած է և այս կնիքն ունի, Ով
Տէրը ճանաչում է նորան որ
իրն են. և Ով յետ կենայ անի-
րաւութիւնից այն ամենն որ
Քրիստոսի անունն կոչում է:
Բայց մի մեծ տան մէջ ոչ միայն
ոսկեղէն և արծաթեղէն անօթ-
ներ կան. այլ փայտեղէն և հողէ
էլ. կան որ պատուոյ համար
են, և կան որ անարգութեան
համար են: Եթէ մէկը իր
անձը մաքրէ այդպիսիներից,
նա պատուական անօթ կ'լինի՝
սրբուած և իր Տիրոջն օգտա-
կար՝ ամեն բարի գործքերի հա-
մար պատրաստուած: Երիտա-
սարդական ցանկութիւններիցը
փախիր. այլ հետևիր արդարու-
թեան, հաւատքի, սիրոյ, խա-
ղաղութեան, Տիրոջ անունը
սուրբ սրտանց ելոնց վերայ
կանչողների հետ: Բայց մի-
մար և անկիրթ վիճաբանու-
թիւններից հետ քաշուիր. իմա-
նալով որ կռիւներ են ծնում:
Բայց Տիրոջ ծառային պէտք
չէ կռիւ անել, այլ ամենի հետ
հեզահոգի լինել, սովորեցնող,
ոչ չարահոգ, Հակառակողներին
հանդարտութիւնով խրատել.
թերևս Աստուած նորանց ա-
պաշխարութիւն տայ ճշմար-

8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26

սացեալք 'ի Նմանէ 'ի Նորա կամս:

ԳԼ. Գ.

1 Այս գիտասջիր՝ եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք. Այլ եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց,
3 անշնորհք, անսուրբք, Աննուէրք. անգութք, բանսարկուք, անժուժք, վէսք, անբարեսէրք,
4 Մատնիչք, յանդգնք, ամբարհաւաճք, ցանկասէրք մանաւանդ՝ քան Աստուածասէրք.
5 Որ ունիցին զկերպարանս աստուածպաշտութեան, և 'ի զօրութենէ անտի Նորա ուրացեալ իցեն. և խորշեսջիր 'ի
6 Նոցանէ: Քանզի 'ի Նոցանէ են՝ որ մտանեն տանէ 'ի տուն, և գերեն * զկանայս շեղջակուտեալս մեղօք՝ վարեալք 'ի պէս-
7 պէս ցանկութիւնս. Որ յամենայն ժամ՝ ուսանին, և երբէք 'ի գիտութիւն ճշմարտութեան
8 ոչ հասանեն: Այլ որպէս Յանէսն և Յամբրէս հակառակ կացին Մովսէսի. նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեանն. մարդք ապականեալք

* 'Ի Յոյն, զսկարամիտ կանայս

տութիւնն իմանալու համար,
26 Եւ սատանայի որոգայթիցն զգաստանալու, որից Նորանք որսացուել են Նորա կամքին Ծառայելու համար:

ԳԼ. Գ.

1 Այս գիտացիր, որ յետի օրերումը չար ժամանակներ կ'գան:
2 Այսն զի մարդիկ կ'լինին ինքնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողաց անհնազանդ, ապերախտ, անսուրբ,
3 Անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժան, անբարեսէր.
4 Մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի ցանկասէր քան թէ աստուածասէր:
5 Որ աստուածպաշտութեան կերպարանքն ունին, բայց Նորա զօրութիւնն ուրացած են, Նորանցից էլ եթ քաշուիր:
6 Այսն զի սորանցից են որ տունէ տուն են մտնում, և գերի անում մեղքերով բեռնաւորուած կնիկներին, որ կերպ
7 կերպ ցանկութիւններով վարուած են. Որ ամէն ժամանակ սովորում են, և երբէք դէպի ճշմարտութեան գիտութիւնն չեն
8 կարողանում գալ, Այլ ինչպէս որ Յանէս և Յամբրէս Մովսէսին հակառակ կեցան, այնպէս էլ սորանք են հակառակ կենում ճշմարտութեանը, մար-

մտօք՝ անպիտանք 'ի հաւատս:
9 Այլ ոչ երբէք գայցեն յառաջ 'ի լաւ անդր. քանզի անմտութիւն սոցա յայտնի լինիցի ամենեցուն, որպէս և Նոցայն իսկ եղև:
10 Այլ դու զկնի եկիր վարդապետութեան իմոյ՝ առաջնորդութեան՝ յօժարութեան՝ հաւատոց՝ երկայնմտութեան՝ սի-
11 րոյ՝ համբերութեան, Հալածանաց, չարչարանաց. որպիսիք եղեն ինձ Անտիոք և Իկոնիոն և 'ի Լիւստրոս, որպիսի հալածանաց համբերի. և յամենայնէ
12 փրկեաց զիս Տէր: Եւ ամենեքին՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ 'ի Քրիստոս Յիսուս, 'ի հալածանս
13 կացցեն: Այլ մարդք չարք և կախարդք յառաջ եկեսցեն 'ի մոլորեալք՝ և մոլորեցուցանիցեն:
14 Այլ դու հաստատուն կաց յոր ուսարդ, և հաւատարիմ եղեր. գիտես
15 ուստի ուսար. Զի 'ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն՝ 'ի ձեռն հաւատոցն որ 'ի Քրիստոս Յիսուս:
16 Ամենայն Գիրք Աստուածաշունչք և օգտակարք, 'ի վարդապետութիւն են և 'ի յանդիմանութիւն և յուղղութիւն
17 և 'ի խրատ արդարութեան. Զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ՝ զամենայն գործս բարիս՝ մտքով ապականուած, անպիտան հաւատքի համար:
9 Բայց աւելի չեն առաջանալ. վասն զի սորանց անմտութիւնն ամենին յայտնի կ'լինի. ինչպէս նորանցն էլ եղաւ:
10 Բայց դու հետևեցիր իմ վարդապետութեանը, վարմունքին, դիտաւորութեանը, հաւատքին, երկայնմտութեանը, սիրոյն, համբերութեանը,
11 Հալածմունքներին, չարչարանքներին. ինչպէս որ եղան ինձ Անտիոքում և Իկոնիոնում և Լիւստրայում. ինչպիսի հալածանքների համբերեցի. և ամենից ազատեց Տէրը:
12 Եւ ամենին ինձ աղատեց Տէրը: Եւ ամենքն որ կամենում են աստուածպաշտութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսումն, հալածանք պիտի կրեն. Բայց չար և
13 կախարդ մարդիկն առաջ կ'գնան չարութեան մէջ, մոլորեցնելով և մոլորելով:
14 Բայց դու հաստատ կաց Նորանցում, որ սովորեցիր և հաւատացիր. և գիտենալով
15 Ըէ ումից սովորեցիր. Եւ որ մանկութիւնից սուրբ գրքերը գիտես, որ կարող են քեզ իմաստուն անել փրկութեան համար այն հաւատքի ձեռովն
16 որ Քրիստոս Յիսուսումն է: Ամեն գիրք աստուածաշունչ են և օգտակար վարդապետութեան, և յանդիմանութեան,
17 և ուղղելու, և արդարութեան խրատելու համար. Որ Աստուծոյ մարդը կատարեալ լինի

տուծոյ՝ յամենայն գործս բա-
րութեան հաստատեալ։

ԳԼ. Դ

1 Այս վկայութիւն դնեմ
առաջի Աստուծոյ և Յիսուսի
Քրիստոսի, որ դատելոց է
զկենդանիս և զմեռեալս՝ ՝ի
յայտնութեան իւրում և յար-
2 քայութեան. Եւ դու քարոզեա՛
զբանն, հա՛ս ՝ի վերայ ժամու
և տարաժամու, յանդիմանեա՛
ուստեա՛ մխիթարեա՛ ամենայն
երկայնմտութեամբ և վարդա-
3 պետութեամբ։ Քանզի եկեսցէ
ժամանակ՝ զի ողջմտութեան
վարդապետութեանն ո՛չ անսայ-
ցեն. այլ ըստ իւրաքանչիւր
ցանկութեանց կուտեսցեն իւր-
եանց վարդապետս՝ ըստ մար-
4 մնջելոյ լսելեաց իւրեանց. Եւ
՝ի ճշմարտութենէ անտի դար-
ձուցանիցեն զլսելիս՝ և յառաս-
5 պելս կործանեսցին. Այլ դու
զուարթ կաց յամենայնի, ճըգ-
նեա՛ց, զգործս աւետարանչի
գործեա՛. զպաշտօնդ քո կատա-
6 րեալ կա՛լ։ Զի ես այսուհետև
նուիրեալ եմ, և ժամանակ
զարձի իմոյ հասեալ կայ։
7 Զբարւոք պատերազմ՝ պատե-
րազմեցայ, զընթացսն կատա-
րեցի, զհաւատսն պահեցի։
8 Այսուհետև կայ մեայ ինձ
արդարութեան պսակն, զոր
հատուսցէ ինձ Տէր յաւուր
յայնմիկ արդարն դատաւոր.
ամեն բարի գործքերի համար
պատրաստուած։

ԳԼ. Դ

Երդ այս վկայութիւնը դը-
նում եմ Աստուծոյ և Տէր Յի-
սուսի Քրիստոսի առջև որ դա-
տելու է կենդանիներին և մե-
ռելներին իր յայտնութիւնում
ու թագաւորութիւնումը։ Խօս- 2
քը քարոզիր. վերայ հասիր, թէ
պատշաճ ժամանակ լինի թէ
անպատշաճ, յանդիմանիր, սաս-
տիր, մխիթարիր ամեն եր-
կայնմտութիւնով և վարդապե-
տութիւնով։ Այն զի ժա- 3
մանակ կ'գայ որ ողջամիտ վար-
դապետութեանը չեն համբե-
րիլ. այլ իրանց յատուկ ցան-
կութիւնների համեմատ վար-
դապետներ կ'գտնեն իրանց
վերայ, իրանց լսելեաց մար-
մնջելու պէս։ Եւ իրանց լսե- 4
լիքը ճշմարտութիւնից ետ
կ'դարձնեն և առասպելների
ետևից կ'մոլորին. Բայց դու 5
արթուն կաց ամեն բանի մէջ
նեղութիւններ կրելով. աւե-
տարանչի գործքը գործիր. քո
պաշտօնը կատարիր։ Այն զի 6
ես արդէն նուիրվում եմ, և իմ
բաժնուելու ժամանակը հասած
է։ Բարի պատերազմը պատե- 7
րազմեցի, ընթացքը կատարեցի,
հաւատքը պահեցի. Այսու- 8
հետև մնում է ինձ արդարու-
թեան պսակը, որ Տէրը կ'տայ
ինձ այն օրումը՝ արդար դա-
տաւորը. և ոչ միայն ինձ, այլ
և ամենեցուն՝ որ սիրեցին զյայտնութիւն
նորա։

9 Փութասջիր գալ առ իս
վաղվաղակի. զի Դեմաս եթող
զիս՝ և սիրեաց զաշխարհ, և
10 գնաց ՝ի Թեսաղոնիկէ. Կրեսկէս
՝ի Գալատիա, Տիտոս ՝ի Դաղ-
մատիա. Զուկաս միայն է ընդ
11 իս։ ԶՄարկոս առեալ՝ ընդ
քեզ ածիցես՝ զի է ինձ պիտանի
12 ՝ի սպասաւորութիւն։ Զտիւ-
բիկոս առաքեցի Եփեսոս։
13 *Զփիլոնն թողի ՝ի Տրուադա
առ Կարպոսի. յորժամ գայ-
ցես՝ բերջիր և զգիրսն՝ մանա-
14 ւանդ զմատեանսն։ Զղէքսան-
դրոս (դարբին) բազում չար-
չարանս եցոյց ինձ. հատուսցէ
նմա Տէր ըստ գործս նորա։
15 Յորմէ և դու անձնապահ լինի-
ջիր. զի շատ հակառակ եկաց
16 բանից մերոց։ Յառաջնումս
ատենին ոչինչ ինձ ՝ի թիկունս
եկաց, այլ ամենեքին թողին
զիս. մի՛ համարեսցի նոցա այն։
17 Այլ Տէր օգնեաց ինձ, և
զօրացոյց զիս, զի ինձ քարոզու-
թիւնն հաստատեսցի, և լուիցեն
ամենայն հեթանոսք. և ապրեցայ
ես ՝ի բերանոյ առիւծուն։
18 Փրկեսցէ զիս Տէր յամենայն
գործոց չարաց, և զերծուսցէ
զիս յարքայութիւն իւր՝ որ
զոր թողի՝ ՝ի Յոյնս, Զփիլոնն՝ զոր թողի՝ ՝ի Տրուադա առ Կարպոսի, յորժամ գայցես բերջի՛ր. և զգիրսն,

ոչ միայն ինձ, այլ և ամենե-
ցուն՝ որ սիրեցին զյայտնութիւն
նորա։

Շտապիր որ շուտով ինձ 9
մօտ գաս. վասն զի Դեմասը
թողեց ինձ և այս աշխարհքը
սիրեց, և գնաց Թեսաղոնիկէ։
Կրեսկեսը Գալատիա. Տիտոսը 10
Դաղմատիա. Զուկասն է միայն
ինձ հետ. Մարկոսին առնես 11
հետ բերես. Այն զի ինձ ծա-
ռայութեան համար պէտք է։
Տիւքիկոսին ուղարկեցի Եփե- 12
սոս։ Այ երարկուն, որ Դրոա- 13
դայումն Կարպոսի մօտ թողի,
գալիս՝ բեր, գրքերն էլ, մանա-
ւանդ մագաղաթները, Զէք- 14
սանդրոս դարբինն ինձ շատ
հատուցում տայ իր գործքերի
պէս։ Դու էլ նորանից ըզգու- 15
շացիր. վասն զի նա շատ հա-
կառակ կեցաւ մեր խօսքերին։
Առաջնումն առաջին անգամ պա- 16
տասխանելիս՝ ոչ ով չկանգնեց
իմ կողմը, այլ ամենքը ինձ
թողին. թող չհամարուի նո-
րանց։ Իսկ Տէրն ինձ մօտ 17
կանգնեց, և զօրացրեց ինձ որ
ինձանով քարոզութիւնն հաս-
տատուի, և բոլոր հեթանոսնե-
րը լսեն. և ես ազատուեցայ
առիւծի բերանից։ Եւ կ'փրկէ 18
ինձ Տէրն ամեն չար բանից և

յերկինս է, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

19 Ողջոյն տաջիր Պրիսկէայ և Ակիւղայ՝ և Ոնեսիփորայ
20 տանն: Երաստոս մնաց 'ի Կորնթոս. զՏրոփիմոս թողի 'ի
21 Մելիտոս հիւանդագին: Փութ թասջիր յառաջ քան զձմեռն գալ: Ողջոյն տան քեզ Եւբուղոս և Պուդէս և Լինոս և Կղօդիա և եղբարք ամենեքեան:
Տէր Յիսուս Քրիստոս ընդ
22 ոգւոյդ քում: Շնորհք ընդ քեզ. ամէն:

Աւ Տիմոթէոս երկրորդ էր-կէ, որ էր Եփեսոս-ոյ եկեղեց-ոյն եպիսկոպոս առաջին յետոյ երեց-ի Հռոմ՝ յորժամ երկրորդ անգամ եկաց յոգեն Պօղոս առաջ Ներոնի կայսեր Հռոմոյ:

կ'ազատէ կ'հասցնէ իր երկնային արքայութեանը. որին լինի փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Բարև տուր Պրիսկէին և 19
Ակիւղային, և Ոնիսիփորի տանը: Երաստոսը մնաց Կորնթոսումը. և Տրոփիմոսին թողի հիւանդ Մելիտոսում: Շտապիր որ 20
ձմեռից առաջ դաս: Բարև է 21
տալիս քեզ Եւբուղոսն, և Պուդէսն և Լինոսն, և Կլաւդիա և բոլոր եղբարքը: Տէր 22
Յիսուս Քրիստոսը քո հոգու հետ լինի. շնորհք ձեզ հետ. Ամէն:

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս ծառայ Աստուծոյ և առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ըստ հաւատոց ընտրելոցն Աստուծոյ, և 'ի գիտութիւն ճշմարտութեան որ ընդ աստուածպաշտութեանն է.
2 Յուսով կենացն յաւիտենից, զոր խոստացաւ անսուտն Աստուած յառաջ քան զժամանակս
3 յաւիտենից. Բայց յայտնեաց իւրովք ժամանակօք զբանն իւր քարոզութեամբ, որոյ եղէ ես հաւատարիմ ըստ հրամանի
4 փրկչին մերոյ Աստուծոյ: Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ հասարակաց հաւատոց, շնորհք և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ՝ և 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ փրկչէ մերմէ:
5 Վասն այնորիկ իսկ թողի զքեզ 'ի Կրետէ, զի որ ինչ միանգամ պակաս իցէ՝ ուղղեսցես, և կացուսցես ըստ քաղաքաց երիցունս՝ որպէս և ես քեզ

Պօղոս Աստուծոյ ծառայ 1
և Յիսուսի Քրիստոսի առաքեալ. Աստուծոյ ընտրուածներուն հաւատքի և աստուածապաշտական ճշմարտութեան գիտութեան համեմատ, Յաւի- 2
տենական կենաց յուսովն, որ յաւիտենական դարերից առաջ խոստացաւ անսուտն Աստուած. Բայց իր ժամանակին յայտնեց 3
իր խօսքը քարոզութիւնով, որ ինձ հաւատացուեցաւ փրկիչ Աստուծոյ հրամանի համեմատ. Տիտոս՝ սիրելի որդւոյս, մեր հա- 4
սարակաց հաւատքի համեմատ, շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աստուած Հօրից և Տէր Յիսուս Քրիստոսից մեր փրկչիցը:
Նորա համար թողի քեզ 5
Կրէտէի մէջ որ պակասորդները ուղղես, և ամեն մէկ քաղաքում երէցներ կարգես, ինչպէս ես
քեզ պատուիրեցի: Եթէ մէկն 6

6 պատուիրեցի։ Եթէ ոք անարատ
լցէ, միոյ կնոջ այր, որդեակս
ունիցի հաւատացեալս՝ և ոչ
յամբաստանութիւն անառա-
կութեան, կամ՝ անհնազանդս։
7 Զի պարտ է եպիսկոպոսին
անարատ լինել՝ որպէս և Ա-
ստուծոյ տնտեսի. մի յանդուգն,
մի բարկացող, մի թշնամանող,
մի հարկանող, մի զօշաբաղ.
8 Այլ հիւրասէր, բարեսէր, ցած,
արդար, սուրբ, ժուժկալ.
9 Վերակացու լինել հաւատա-
րիմ բանին վարդապետութեան,
զի կարող լցէ և մեկնիարել
ողջմտութեամբ վարդապետու-
թեանն, և զհակառակորդսն
10 կշտամբել։ Քանզի բազումք
են անհնազանդք՝ զրախօսք և
մտախաբք. մանաւանդ որ 'ի
11 թլփատութենէ անտի են. Զորս
պարտ է ըմբերանել. որք զամե-
նայն տունս կործանեն, և ուսու-
ցանեն զոր չէ արժան՝ վասն
զշաքաղութեան։
12 Ասաց ոմն 'ի նոցանէ՝ իւրեանց
իսկ մարգարէ, Կրետացիք հա-
նապազաստուք՝ չարաձիք՝ գա-
13 տարկապորտք։ Եւ ստոյգ է
վկայութիւնս այս. վասն որոյ
կշտամբեսցես զնոսա խստա-
գոյնս, զի առողջասցին 'ի
14 հաւատս. Եւ մի հայեսցին 'ի
Հրէական առասպելս, և 'ի
պատուէրս մարդկան զառածե-
15 լոցն 'ի ճշմարտութենէ։ Ամե-
նայն ինչ սուրբ է սրբոց, բայց
պղծոցն և անհաւատից, ոչինչ է
անարատ է, մէկ կնկան մարդ,
հաւատացեալ որդիք ունենայ,
որոնց վերայ անառակութեան
գանգատ չկայ կամ անհնազանդ
չէն. Այսպէս զի եպիսկոպոսը 7
պէտք է անարատ լինի ինչպէս
Աստուծոյ տնտես, ոչ յան-
դուգն, ոչ բարկացող, ոչ գի-
նեմոլ, ոչ զարկող, ոչ պիղծ
շահ սիրող։ Այլ հիւրասէր, 8
բարեսէր, խոհեմ, արդար,
սուրբ, ժուժկալ. Հաստատ 9
բռնելով վարդապետութեան
հաւատարիմ խօսքը, որ կարող
լինի ողջամիտ վարդապետու-
թիւնով յորդորել էլ, Ի հա-
կառակողներին յանդիմանել էլ։
Այսպէս զի շատ անհնազանդներ, 10
զրախօսներ, խաբեբաներ կան.
մանաւանդ նորանք որ թլփա-
տութիւնից են։ Որոնց պէտք 11
է պապանձեցնել, որ ամբողջ
տները կործանում են, սովո-
րեցնելով այն որ արժան չէ՝
պիղծ շահի պատճառով։
Նորանցից մէկը՝ հէնց իրանց 12
յատուկ մարգարէ՝ ասաց. Կրէ-
տացիք միշտ ստախօս են,
չար գազաններ, դատարկափոր։
Այս վկայութիւնը ճշմարիտ 13
է. Նորա համար սաստիկ յան-
դիմանիր նորանց, որ առողջ
լինին հաւատքումն. Եւ մտիկ 14
չտան Հրէական առասպելներին
և այն մարդկանց պատուիրանք-
ներին որ ճշմարտութիւնից
թեքուած են։ Ամեն բան սուրբ 15
է սրբերին. բայց պղծերին և
սուրբ. այլ պղծեալ են միտք և
16 խորհուրդք նոցա։ Խոստանան
գիտել զԱստուած, և գործովք
իւրեանց ուրանան. պիղծք և
անհաւանք՝ և յամենայն գործս
բարեաց անպիտանք։

ԳԼ. Բ

1 Այլ դու խօսեաց որ ինչ
վայելէ ողջամիտ վարդապետու-
2 թեանդ։ Ծերոց զգաստս լինել
պարկեշտս՝ ցածունս, ողջամիտս
'ի հաւատս, 'ի սէր, 'ի համբե-
րութեան, 'ի ժուժկալութեան։
3 Պառաւանց նոյնպէս 'ի զգաս-
տութեան՝ 'ի սուրբ վայելչու-
թեան, մի՛ բանսարկուս՝ մի՛
գինեմոլս, այլ բարեխրատս.
4 Զի զգաստացուցանիցին ըստման-
կամարդսն՝ այրասէրս լինել՝
5 որդեսէրս. Ցածունս, սուրբս,
տնարարս, բարեգործս, հնա-
զանդս իւրեանց արանց. զի
մի՛ բանն Աստուծոյ և վարդա-
6 պետութիւնն հայհոյեսցի։ Զե-
ղիտասարդս նոյնպէս ապաշնս-
7 ջիր՝ ցածունս լինել, Ամենեցուն
զանձն օրինակ կացուցանել՝
գործոց բարութեան, վարդա-
պետութեամբ զանեղծութիւն
ունել, զսրբութիւն, զպարկեշ-
8 տութիւն, Զբանն ողջմտու-
թեան, անպարսաւ լինել. զի որ
հակառակորդն լցէ՝ յամօթ
լեցի, և մի՛ ինչ ունիցի ասել
անհաւատներին ոչ մի բան
սուրբ չէ, այլ պղծուած է նո-
րանց միտքը և խորհուրդները։
Խոստովանում են թէ Աստու- 16
ծուն գիտեն, բայց իրանց գործ-
ներովն ուրանում են նորան.
պիղծ են և անհնազանդ և ամեն
բարի գործքի համար անպիտան։

ԳԼ. Բ

Բայց դու խօսիր ինչ որ 1
կ'վայելէ ողջամիտ վարդապե-
տութեանը։ Ծերերը զգաստ 2
լինին, ծանրաբարոյ, խոհեմ,
ողջամիտ հաւատքով, սիրով,
համբերութեամբ։ Նոյնպէս էլ 3
պառաւները սրբավայել վար-
մունքով լինին, ոչ բանսարկու,
ոչ գինեմոլ, այլ բարի խրատ-
տուող. Որ զգաստացնեն մատ- 4
զաշ կանանց՝ լինել այրասէր և
որդեսէր, խոհեմ, մաքուր, 5
տնարար, բարեգործ, իրանց
մարդկանց հնազանդ, որ Ա-
ստուծոյ խօսքը չհայհոյուի։
Նոյնպէս էլ յորդորիր երիտա- 6
սարդներին որ խոհեմ լինին.
Ամեն կողմանէ քո անձը բարի 7
գործքերի օրինակ դնելով՝ վար-
դապետութեան մէջ անեղծու-
թիւն, ծանրաբարոյութիւն, Ող- 8
ջամիտ խօսք անմեղադրելի. որ
հակառակորդը ամաչէ, ձեզ
վերայ չար ասելու բան չունե-
նալով։ Ծառաներն իրանց 9
տէրանց հնազանդ լինին, ամեն
բաների մէջ հաճոյ լինին, ոչ

9 զմէնջ չարութիւն։ Ծառայից՝ իւրեանց տէրանց հնազանդ
լինել և հաճոյս յամենայնի. մի՛
10 հակառակօղս, Մի՛ հատուս.
այլ զամենայն հաւատս ցու-
ցանել բարութեամբ, զի ըզվար-
դապետութիւն Փրկչին մերոյ
Աստուծոյ զարդարեսցեն յամե-
նայնի։
11 Քանզի երևեցաւ շնորհն
Աստուծոյ փրկիչ ամենայն
12 մարդկան. Որ խրատէ զմեզ՝ զի
ուրասցուք զամբարշտութիւն և
զաշխարհական ցանկութիւնս.
զգաստութեամբ և արդարու-
թեամբ և աստուածպաշտու-
թեամբ կեցցուք յաշխարհի,
13 Եւ ակն կալցուք երանելի
յուսոյն՝ և յայտնութեան
փառաց մեծին Աստուծոյ՝ և
Փրկչին մերոյ Յիսուսի Քրիս-
14 տոսի. Որ ետ զանձն վասն մեր,
զի փրկեսցէ զմեզ յամենայն
անօրէնութենէ, և սրբեսցէ իւր
ժողովուրդ սեպհական՝ նախան-
ձաւոր գործոց բարութեան։
15 Այդ խօսեաց՝ և մխիթարեա՛
և յանդիմանեա՛ ամենայն սաս-
տիւք. զի մի՛ ոք ինչ որ զքեզ
արհամարհիցէ։

ԳԼ. Գ

1 Եւ յուշ արասջիր նոցա,
իշխանութեանց և պետութեանց
հնազանդ լինել՝ և հպատակ
կալ. և ամենայն գործոց բարու-
թէ հակառակ խօսողներ. Եւ ան 10
չէթաքցնեն, այլ կատարեալ
բարի հաւատարմութիւն ցոյց
տան. որ մեր Փրկիչ Աստուծոյ
վարդապետութիւնը զարդարեն
ամեն բաների մէջ։

Վասն զի Աստուծոյ շնորհ- 11
քըն երևեցաւ, որ փրկարար
է, ամեն մարդկանց համար.
Որ խրատում է մեզ, որ 12
ուրանանք ամբարշտութիւնը
և աշխարհական ցանկութիւն-
ները. Եւ խոհեմութեամբ և
արդարութեամբ և աստուած-
պաշտութեամբ ապրինք այս
աշխարհումը. Սպասելով այն 13
երանելի յուսոյն և մեծ Աս-
տուծոյ և մեր Փրկիչ Յիսուսի
Քրիստոսի փառաւոր յայտնու-
թեանը, Որ իր անձն մեզ հա- 14
մար տուաւ, որ մեզ ամեն ա-
նօրէնութիւնից փրկէ, և սրբէ,
իրան համար յատուկ ժողո-
վուրդ շինէ բարի գործքերի նա-
խանձաւոր։ Այդ բաները խո- 15
սիր և յորդորիր և յանդի-
մանիր բոլոր սաստկութիւնով.
ոչ ով քեզ չանարգէ։

ԳԼ. Գ

1 Նորանց միտքը բեր, որ իշ-
խանութիւններին և պետու-
թիւններին հնազանդեն, հըպա-
տակեն, և ամեն բարի գործքերի

2 թեան պատրաստ գտանել. Մի՛
զոք հայհոյել՝ անկռիւս լինել՝
հեզս, զամենայն ցածութիւն
առ ամենայն մարդիկ ցուցանել։
3 Զի էաք երբեմն և մեք անմիտք,
անհաւանք, մոլորեալք. ծա-
ռայէաք ցանկութեանց և պէս-
պէս անառակութեանց. չարու-
թեամբ՝ և նախանձու շրջէաք,
ատելեալք՝ և զմիմեանս ատէաք։
4 Իսկ յորժամ քաղցրութիւն և
մարդասիրութիւն Փրկչին մե-
5 ր Աստուծոյ յայտնեցաւ, Ո՛չ
՝ի գործոց արդարութեան՝ զոր
արարաք մեք, այլ ըստ իւրում
ողորմութեանն՝ ապրեցոյց զմեզ
՝ի ձեռն աւազանին միւսանգամ
ծննդեանն, և նորոգութեամբ
6 Հոգւոյն Սրբոյ. Զոր եհեղ՝ ի
մեզ առատութեամբ, ՝ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի Փրկչին
7 մերոյ. Զի արդարացեալք
շնորհօքն՝ եղիցուք ժառան-
գաւորք յուսով կենացն յաւի-
8 տենականաց։ Հաւատարիմ է
բանս. և ՝ի սոյն կամիմ զքեզ
հաստատուն լինել, զի փոյթ
արասցին գործոց բարեաց վե-
րակացու լինել հաւատացեալքն
Աստուած, զի այն է բարի և
9 օգտակար մարդկան։ Այլ ըղձի-
մարութեան խնդիրս՝ և զտոհմա-
թիւս, և զՀեռ՝ և զօրինական
կռիւսն ՝ի բաց մերժեսջիր, զի
10 անօգուտք են՝ և սնոտիք։ Յառնէ
հերձուածողէ՝ յետ միանգամ և
երկիցս խրատելոյ՝ հրաժարես-
11 ջիր։ Գիտասջիր՝ զի թիւրեալ է

համար հնազանդ լինին. Ոչ 2
մէկին չհայհոյեն, կռիւ չա-
նեն, հեզ լինին, ամեն մարդ-
կանց ամեն քաղցրութիւն ցոյց
տան։ Այսն զի մենք էլ էինք 3
մի ժամանակ անմիտ, անհնա-
զանդ, մոլորած, ցանկութիւն-
ների և կերպ կերպ անառակու-
թիւնների ծառայողներ, վար-
վում էինք չարութիւնով և
նախանձով, ատելի էինք, և
իրար ատող։ Բայց երբ որ մեր 4
Փրկիչ Աստուծոյ քաղցրու-
թիւնը և մարդասիրութիւնը
յայտնուեցաւ, Ոչ թէ արդա- 5
րութեան գործքերիցը, որ մենք
արինք, այլ իր ողորմութեան
համեմատ փրկեց մեզ միւսան-
գամ ծնուելու աւազանովը, և
Սուրբ Հոգու նորոգութիւնովը,
Որ առատութիւնով թափեց 6
մեզ վերայ մեր Փրկիչ Յիսուսի
Քրիստոսի ձեռովը, Որ նորա 7
շնորհքովն արդարացած ժա-
ռանգ լինինք յաւիտենական
կեանքի յուսովը։ Հաւատարիմ է 8
այս խօսքը և կամենում եմ, որ
դու այս բաները հաստատես,
որ Աստուծուն հաւատացողները
ջանք անեն բարի գործքերի մէջ
կենալու, սորանք են բարի և
մարդկանց օգտակար։ Բայց 9
յիմար վիճաբանութիւններից,
ազգահամարներից և հակառա-
կութիւններից, և օրէնքի կը-
ռիւներից ետ քաշուիր. վասն
զի անօգուտ և ունայն են։
Հերձուածող մարդուց, երբոր 10

այնպիսին, և մեղանչէ՝ անձամբ զանձն դատապարտեալ:

12 Այլ յորժամ յղեցից առ քեզ զԱրտեմայ, կամ զՏիւբիկոս, փութասջիր գալ առ իս 'ի Նիկոպօլիս. զի անդ եղի 'ի
13 մտի ձմերել: Եւ զՕենան զօրինական գրիր՝ և զԱպողոս՝ փութով արձակեսջիր, զի մի
14 ինչ պակասիցէ նոցա: Ուսցին և մերքն ևս բարեաց գործոց վերակացու լինել 'ի պէտս կարեւորս, զի մի անպտուղք
15 լինիցին: Ողջոյն տան քեզ՝ որ ընդ իս են ամենեքին: Ողջոյն տուր սիրելեաց մերոց հաւատովք, Շնորհք ընդ ձեզ ամենեսին. ամէն:

Առ Տիտոս Կրէտացւոյ եկեղեցւոյն առաջին յեպիսկոպոսութեան Էպիկոպոս, գրեցաւ 'ի Նիկոպոլսէ Մակեդոնացւոյ:

առաջին և երկրորդ անգամ խրատեալ ես, ետ կաց: Գիտենալով որ այնպիսին ծռուած
11 է և մեղք է գործում ինքն իւր անձն դատապարտելով:

12 Երբոր Արտեմասին կամ Տիւբիկոսին ուղարկեմ քեզ մօտ՝ շտապիր որ գաս Նիկոպոլիս ինձ մօտ. վասն զի որոշել եմ ձմեռն
13 այն տեղ մնալ: Եւ օրինական Օենասին և Ապողոսին շուտով ճանապարհ դիր. Նայէր որ
14 ոչ մի բան չպակասի նորանց: Թայց մերիններն էլ թող սովորեն բարի գործքերի մէջ կենալ հարկաւոր պիտոյքներին համար, որ անպտուղ չլինին:
15 Բարև են տալիս քեզ այն ամենքն որ ինձ հետ են. բարև տուր նորանց որ սիրում են մեզ հաւատքով. Շնորհքը ձեր ամենի հետ լինի. Ամէն:

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

1 ՊՕՂՈՍ կապեալ Յիսուսի Քրիստոսի, և Տիմոթէոս եղբայր. Փիլիմոնի սիրելւոյ և
2 գործակցի մերոյ, Եւ Ապփեայ քեռ, և Արքիպպեայ զինուորակցի մերոյ՝ և առանին եկեղեցւոյդ: Շնորհք ընդ ձեզ և
3 խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ և 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:

4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ՝ յամենայն ժամ յիշատակեալ
5 յաղօթս իմ՝ վասն քո, Իբրև լսեմ զքո հաւատսն և զսէրդ զոր ունիս առ Տէր Յիսուս՝ և
6 առ ամենայն սուրբս: Օ՛ի հաղորդութիւն հաւատոցն քոց արդոյ լինիցի՝ գիտութեամբ ամենայն բարութեան, որ 'ի
7 ձեզ է 'ի Քրիստոս Յիսուս: Խնդութիւն յոյժ ընկալայ՝ և մխիթարութիւն 'ի վերայ սիրոյն քո. զի գութք սրբոց քեւ հանգուցեալ են եղբայր:

8 Վասն որոյ բաղում հա-

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի կապուածը և Տիմոթէոս եղբայրը, Փիլիմոն սիրելոյն և մեր գործակցին, Եւ
2 Ապփիա սիրելուհուն և Արքիպոսին՝ մեր զինուորակցին և քոտան եկեղեցուն. Շնորհք լինի
3 ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրից և Տէր Յիսուս Քրիստոսից:

4 Գոհանում եմ Աստուածանից՝ ամեն ժամանակ յիշելով քեզ իմ աղօթքներումը. Լսելով քո սէրը և հաւատքն, որ
5 ունիս դէպի Տէր Յիսուս, և
6 դէպի ամեն սրբերը, Որ քո հաւատքի հաղորդակցութիւնն պտղաբեր լինի այն ամեն բարի բանների գիտութիւնովն որ ձեզանում է Քրիստոս Յիսուսում:
7 Վասն զի շատ ուրախութիւն և մխիթարութիւն ընդունեցինք քո սիրոյ վերայ, որ սրբերի սրտերը քեզանով հանգիստ են գտել, եղբայր:

8 Վասն որոյ՝ թէպէտ շատ հա-

մարձակութիւն ունիմ 'ի Քրիս-
տոս՝ հրաման տալ քեզ զարժանն.
9 Վասն* սիրոյ, մանաւանդ թէ
աղաչեմ իսկ այնպիսի լինել՝
որպէս և Պօղոս՝ ծերացեալ
արդ և կապեալ ևս Յի-
10 սուսի Քրիստոսի: Աղաչեմ
զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր
ծնայ 'ի կապանս իմ, զՈՆԵ-
11 սիմոս. Որ երբեմն անպիտան
էր քեզ. բայց արդ քեզ և ինձ
պիտանի. զոր յղեցի առ քեզ:
12 Եւ դու զդա ընկալջիր՝ այսինքն
13 է զիմ աղիս: Զոր կամէի առ
իս արգելուլ, զի ընդ քո ունիցի
ինձ սպաս 'ի կապանս աւետա-
14 բանին: Բայց առանց քո կամաց
ոչինչ կամեցայ առնել, զի մի
բարիքդ քո 'ի հարկէ լինիցին՝
15 այլ կամաւ: Եւ թերևս վասն
այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ
մի, զի յաւիտեան ունիցիս զդա.
16 Այլ ևս իբրև զծառայ՝ այլ 'ի
վերջ քան զծառայ, իբրև զեղ-
բայր սիրելի. եթէ ինձ այս-
պէս, որչափ ևս առաւել քեզ
17 մարմնով և Տէրամբ: Եթէ զիս
քեզ հաղորդ համարիցիս, ընկալ
18 զդա իբրև զիս: Եւ եթէ յան-
ցուցեալ ինչ իցէ՝ կամ պարտիցի,
19 զայն ինձ համարեաց: Ես
Պօղոս գրեցի իմով ձեռամբ. ես
հատուցից, զի մի ասիցեմ քեզ
թէ և դու զանձն քո ինձ պարտ-

* 'Ի Յոյն. սիրոյ, մանաւանդ աղաչեմ, այնպիսի գոլով որպէս Պօղոս

մարձակութիւն ունիմ 'Քրիս-
տոսն՝ հրամայել քեզ այն որ
արժան է. Սակայն սիրոյ հա- 9
մար աւելի աղաչում եմ մի
այնպիսին լինել, ինչպէս ծե-
ռունի Պօղոսս, և հիմա էլ Յի-
սուսի Քրիստոսի կապուածս:
Աղաչում եմ քեզ իմ որդւոյ 10
համար, որին ծնայ իմ կա-
պանքներումը, այսինքն Ոնեսի-
մոսի համար, Որ մի ժամանակ 11
անպիտան էր քեզ. բայց հիմա
քեզ և ինձ պիտանի, նորան ու-
ղարկեցի 'ի քեզ ինքն: Դու էլ 12
դորան, որ իմ սրտի կտորն է,
ընդունիր: Ես կամենում էի 13
նորան ինձ մօտ պահել, որ քո
փոխանակ ծառայութիւն անէ
ինձ աւետարանի կապանքնե-
րումը: Բայց առանց քո կա- 14
մացը չկամեցայ ոչինչ անել,
որ քո բարիքը իբրև ստիպմամբ
չլինի, այլ կամաւ: Եւ թերևս 15
հէնց սորա համար մի ժամանակ
բաժնուեցաւ 'ի քեզանից, որ յա-
ւիտեանս ունենաս դորան: Այլ 16
ոչ ևս ինչպէս ծառայ, այլ ծա-
ռայից բարձր, ինչպէս սիրելի
եղբայր. մանաւանդ ինձ, բայց
որքան աւելի քեզ թէ մարմնոյ
և թէ Տիրոջ կողմանէ: Եթէ 17
ինձ 'ի ընկեր ես համարում,
ընդունիր դորան ինչպէս ինձ:
Եւ եթէ քեզ մի վնաս է արած 18

20 տիս: *Այո՛ եղբայր՝ ես քո փո-
խանակ եղէց" 'ի Տէր. Հանգո՛
21 զաղիսդ իմ 'ի Քրիստոս: Յու-
սացեալ 'ի հնազանդութիւնդ
քո՝ գրեցի առ քեզ. քանզի
գիտեմ թէ առաւել ևս քան
զոր ասեմ՝ առնիցես:

22 Միանգամայն և պատրաս-
տեսջիր ինձ վանս. քանզի
յուսամ եթէ աղօթիւք ձերովք
23 շնորհեցայց ձեզ: Ողջոյն տայ
ձեզ Եպափրաս գերեկից իմ 'ի
24 Քրիստոս Յիսուս, Եւ Մար-
կոս և Արիստարքոս և Դեմաս
և Ղուկաս՝ գործակիցք իմ:
25 Շնորհք Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ
ձերում. ամէն:

Առ Փիլիմոնն Ի սա Արպիա
դեարս Ոնէսիմայ. Ի սա Աբիոլ-
պոս սարկաւագ Կողոսայոցն Ե-
կեղեցւոյն, գրեցաւ 'ի Հռովմ
'ի յԵրեն Ոնէսիմայ ծառայի:

կամ պարտական է, նա ինձ
հաշուիր: Ես Պօղոս իմ ձե- 19
ռովը գրեցի, ես կ'վճարեմ. որ
չասեմ քեզ թէ դու քո անձն
էլ ինձ պարտական ես: Այո՛, 20
եղբայր, թող շահուիմ քեզա-
նից Տէրումը. հանգստացուր իմ
սիրտը Տէրումը: Քո հընա- 21
զանդութեան վերայ համոզ-
ուած գրեցի քեզ. գիտենալով
որ ասածիցս աւելի կանես:
Միանգամայն ինձ համար 22
կենալու տեղ էլ պատրաստիր.
վասն զի յոյս ունիմ որ ձեր
աղօթքներովը շնորհուիմ ձեզ:
Բարև է տալիս քեզ Եպա- 23
փրասն իմ գերութեան ընկերը
Քրիստոս Յիսուսումը. Մար-
կոսը, Արիստարքոսը, Դէմա- 24
սը, Ղուկասը՝ իմ գործակցնե-
ր: Մեր Տէր Յիսուսի Քրը- 25
իստոսի շնորհքը ձեր հոգու
հետ լինի. Ամէն:

* 'Ի Յոյն. Այո՛ եղբայր, ես քեզ վայելեցից

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵՐՐԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԱԶՄԱՊԱՏ մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ
2 Հարսն մեր մարգարէիւք. Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի. որով և
3 զյաւիտեանսն արար. Որ է լոյս փառաց՝ և նկարագիր էութեան նորա. որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ սրբութիւն մեղաց մերոց արարեալ՝ նստաւ ընդ աջմէ մեծութեանն
4 Ի բարձունս: Աւելի առաւել եղեալ քան զհրեշտակս, որչափ լաւ ևս քան զնոսա անուն ժա-
5 ռանգեաց: Զիա՞նգի ցո՞ երբէք ասաց Ի հրեշտակաց. Որդի իմ ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ. և դարձեալ՝ թէ Ես եղէց նմա Ի Հայր, և նա եղիցի ինձ
6 Որդի: Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ. Երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ:
7 Այլ առ հրեշտակսն

Հայր մասերով և շատ կերպերով Աստուածը առաջուց խօսելով մեր Հարանց
2 հետ մարգարէների ձեռով, Այս վերջի օրերումը խօսեց մեզ հետ Որդովը, որին ամեն բանի ժառանգ դրաւ, որով յաւիտեաններն էլ արաւ. Որ նորա
3 փառաց լոյսը լինելով և նորա էութեան նկարագիրը, որ իր զօրութեան խօսքովն ամեն բան կրում է՝ մեր մեղքերի սրբութիւնն իրանով անելուց յետոյ նստեց Աստուծոյ մեծութեան
4 աջ կողմը ի բարձունս, Եւ հրեշտակներից այնքան աւելի լաւ եղաւ, որքան նորանցից աւելի գերազանց անուն ժա-
5 ռանգեց, Այսպէս զի հրեշտակներից որի՞ն ասաց երբէք. Իմ որդին ես դու, ես այսօր ծնայ քեզ. և դարձեալ Ես նորան Հայր կ՚լինիմ, և նա ինձ Որդի
6 կ՚լինի: Եւ երբոր անդրանիկին միւսանգամ աշխարհ կը-մտցնէ՝ ասում է. Եւ կ՚երկրպա-

ասէ. Ո՛ արար զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր
8 բոց հրոյ: Իսկ յՈրդին ասէ. Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան՝ գաւազան արքայութեան
9 քո: Սիրեցեր զարդարութիւն և ատեցեր զանօրէնութիւն. վասն այսորիկ օծ զքեզ Աստուած՝ Աստուած քո՝ իւղով ուրախութեան՝ առաւելքան զընկերս
10 քո: Եւ դու Տէր, Ի սկզբանէ զերկիրս հաստատեցեր. և գործք
11 ձեռաց քոց երկինք են: Նոքա կորնչին՝ և դու կաս և մնաս. ամենեքեան իբրև զձորձս մա-
12 շեսցին, Եւ իբրև զվերարկուս. գալարեսցես զնոսա իբրև զհանդերձ, և գալարեսցին. բայց դու նոյն իսկ ես՝ և ամք քո ոչ
13 պակասին: Զո՞ երբէք ասաց Ի հրեշտակաց. Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո
14 պատուանդան ոտից քոց: Ոչ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք՝ որ առաքին Ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգելոյն են զփրկութիւն:

ԳԼ. Բ

1 Վասն այնորիկ պարտ է

գեն նորան Աստուծոյ բոլոր հրեշտակները: Բայց հրեշ- 7
տակների համար ասում է. Նա որ իր հրեշտակները հոգիներ արաւ, և իր պաշտօնեայներն կրակի բոց: Բայց Որդոյն ասում է, 8
Աթոռ քո, ով Աստուած, մինչև յաւիտեանի յաւիտեանն է. քո թագաւորութեան գաւազանը շիտակ գաւազան է: Սիրեցիր արդարութիւնը և 9
ատեցիր անօրէնութիւնը. սորա համար օծեց քեզ, ով Աստուած, քո Աստուածը ուրախութեան իւղով աւելի քան թէ քո ընկերներին: Եւ դու, 10
ով Տէր, Ի սկզբանէ երկիրը հիմնեցիր. և երկինքները քո ձեռքի գործն են: Նորանք 11
կ՚կորչեն, բայց դու կ՚կենաս կ՚մնաս. և ամենքը ձորձի պէս կ՚մաշուին. Եւ վերարկուի պէս 12
կ՚գալարես նորանց և կ՚փոխուին, բայց դու նոյնն ես և քո տարիները չեն պակասիլ: Եւ 13
հրեշտակներից որի՞ն ասաց երբէք. Իմ աջ կողմը նստիր, մինչև որ քո թշնամիները քո ոտաց պատուանդան դնեմ: Չէ՞ 14
որ ամենքը սպասաւոր հոգիներ են ուղարկուած սպասաւորութիւն անելու նորանց համար, որ փրկութիւնը պիտի ժառանգեն:

ԳԼ. Բ

Նորա համար պէտք է մեզ 1

մեզ առաւել ևս ունկնդիր լինել բանիցն ասացելոց՝ զի մի՛ երբէք
2 նուազեսցուք: Զի եթէ որ 'ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղև, և ամենայն յանցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ
3 զպատիժ պատուհասի. Ա՝նք զի՞նդ ապրեսցուք հեղգացեալք յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն առ խօսելոյ 'ի Տեառնէ. և 'ի ձեռն այնոցիկ որ լուանն՝
4 'ի մեզ հաստատեցաւ. Ա՛յլեալ Յստուծոյ նշանօք և արուեստիւք և պէսպէս զօրութեամբք, և մասամբք Հոգւոյն Սրբոյ՝ ըստ իւրոց կամաց:

5 Զի ո՛չ եթէ հրեշտակաց հնազանդեցոյց զհանդերձեալ աշխարհն, վասն որոյ մեք
6 խօսիմք: Ա՛յլ կայեաց ոք ուրեք՝ և ասէ. Զի՞նչ է մարդ՝ եթէ յիշեսցես զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց արասցես նմա:
7 Փոքր մի խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս. փառաւք և պատուով պսակեցեր զնա՝ և կացուցեր զնա 'ի վերայ ձեռա-
8 կերտացդ քոց: Զամենայն ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ ոտից նորա: Բրդ 'ի հնազանդեցուցանելն զամենայն, ոչինչ եթող անհնազանդ 'ի նմանէ. բայց այժմ ո՛չ ևս տեսանեմք
9 Այլ զփոքր մի խոնարհեալ քան զհրեշտակս տեսանեմք զԵի-

առաւել ևս ականջ դնենք այն ծէր լսած բաներին, որ մի գուցէ պակասուինք: Ա՝սն զի եթէ 2
հրեշտակների ձեռով խօսած բանը հաստատ եղաւ, և ամեն յանցանք և անհնազանդութիւն ընդունեց իր արդար պատիժը, Այս մենք ի՞նչպէս 3
կ'պրծնենք, եթէ անհոգ լինինք այսպիսի փրկութեան համար, որ սկիզբն առաւ խօսուելու Տէրիցը, Նա լսողների ձեռովը մեր միջումը հաստատուեցաւ. Այս- 4
տուած էլ միասին վկայեց նշաններով և հրաշքներով, և կերպ կերպ զօրութիւններով, և Սուրբ Հոգու պարգևներովն ինչպէս ինքն կամեցաւ:

Ա՝սն զի ոչ թէ հրեշտակներին հնազանդ արաւ այն 5
հանդերձեալ աշխարհը, որի մասին խօսում ենք: Ա՝կար 6
վկայեց մի կտեղ ասելով. Ա՝արդեն ի՞նչ է մարդ՝ եթէ մտածես նրան, կամ որդի մարդոյ՝ թէ այցելես նմա: Մի՝ քիչ ցած 7
արիր նորան հրեշտակներից փառքով և պատուով պսակեցիր նորան, և քո ձեռքի գործքերի վերայ կանգնեցիր նորան: Ամեն բան հնազանդ արիր նորա 8
ոտաց տակ. վասն զի ամենն որ հնազանդեցրեց նորան, ոչինչ չթողեց որ հնազանդ չլինի նորան. բայց հիմա տակաւին չենք տեսնում թէ ամեն բան հնազանդուած է նորան: Բայց 9
հրեշտակներից մի քիչ ցածա-

սուս՝ վասն չարչարանաց մահուն, փառաւք և պատուով պսակեալ. զի շնորհօքն Աստուծոյ վասն ամենեցուն զմահ
10 ճաշակեսցէ: Զի վայելէր իսկ նմա, վասն որոյ ամենայն՝ և որով ամենայն, * բազում որդիս 'ի փառս ածել՝" և զառաջնորդ փրկութեան նոցա չարչարանօք կատարել:

11 Զի որ սրբէն և որ սրբին՝ 'ի միոջէ էին ամենեքին, վասն որոյ ո՛չ ամօթ համարի եղբարս անուանել զնոսա, և ասել:
12 Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. 'ի մէջ եկեղեցւոյ օրհնե-
13 ցից զքեզ: Եւ դարձեալ՝ թէ Ես եղէց յուսացեալ 'ի նա. և դարձեալ՝ Հաւասիկ ես և մանկունք իմ՝, զոր ետ ինձ
14 Աստուած: Բրդ՝ որովհետև մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է՝ ըզՍա-
15 տանայ. Եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանեալք
16 'ի ծառայութիւն: Արանզի ո՛չ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ. այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ.

ցած՝ տեսնում ենք Յիսուսին մահի չարչարանքի համար. փառքով և պատուով պսակուած, որ Աստուծոյ շնորհքովն ամենի համար մահը ճաշակէ: Որովհետև վայելում 10
էր նորան, որի համար է ամեն բան և որով ամեն բան, որ շատ որդիք փառքի մէջ տանողին՝ նորանց փրկութեան Առաջնորդին չարչարանքով կատարէ:

Ա՝սն զի թէ սրբողը, և թէ 11
սրբուողները, ամենքը մէկից են. և այդ պատճառով ամօթ չէ համարում նորանց եղբայր
12 կոչել և ասել. Կ'պատմեմ քո անունը իմ եղբայրներին, եկե-
13 ղեցու մէջ կ'օրհնեմ քեզ. Եւ դարձեալ՝ Ես յոյս կ'դնեմ նորա վերայ. և դարձեալ՝ Հա
14 ես և իմ մանուկները որ նորանց Աստուած տուաւ ինձ: Բրդ որովհետև մանկունքն արիւնի և մարմնի մասնակից եղան, ինքն էլ շատ նման կերպով մասնակից եղաւ նորանց. որ նէ մահովը խափանէ մահի իշխանութիւնն
15 ունեցողին այսինքն սատանային, Եւ ազատէ նորանց որ մահի
16 վախովն իրանց բոլոր կենաց մէջ ծառայութեան մէջ բռնուած էին, Ա՝սն զի քնաւ
17 հրեշտակների ձեռք չէ տալիս: Ուստի պէտք էր նորան որ բոլորովին եղբայրներին նմա-

* 'Ի Յոյն. յածելն 'ի փառս զբազում որդիս

17 Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քահանայապետ աստուածակոյս կողմանէ որ ժողովրդի մեղքերը քաւէ: Վասն 18
զի ինքն որ չարչարուեցաւ և փորձուեցաւ, կարող է օգնութիւն տալ փորձուողներին:

ԳԼ. Գ

1 Ուստի եղբա՛ւրք սուրբք՝ երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարո՛ւք ընդ Առաքեալն և ընդ Քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս
2 Քրիստոս. Որ հաւատարիմ է արարչին իւրոյ՝ որպէս և Մովսէս յամենայն ի տան նորա:
3 Զի առաւել ևս փառաց քան զՄովսէս արժանի եղև. որչափ առաւել պատիւ ունիցի քան
4 զտունն՝ տանն առնելի: Զի ամենայն տուն կազմի, յումէ կազմի. իսկ որ զամենայնն
5 արար, Աստուած է: Մովսէս հաւատարիմ է յամենայն տան նորա իբրև ծառայ՝ առ ի վկայութենէ բանիցն ասացելոց:
6 Այլ Քրիստոս իբրև որդի ի վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք իսկ եմք. միայն թէ ըզհամարձակութիւն և զպարծանս յուսոյն մինչև ի վախճան հաստատուն ունիցիմք:
7 Վասն որոյ այսպէս ասէ Հոգին Սուրբ. այսօր եթէ ձայնի

նուի. որ ողորմած լինի, և հաւատարիմ քահանայապետ աստուածակոյս կողմանէ որ ժողովրդի մեղքերը քաւէ: Վասն զի ինքն որ չարչարուեցաւ և փորձուեցաւ, կարող է օգնութիւն տալ փորձուողներին:

ԳԼ. Գ

Ուստի, սուրբ եղբայրք՝ երկնաւոր կոչումին մասնակիցք, մտիկ տուէք մեր դաւանութեան Առաքելոյն և Քահանայապետին՝ Քրիստոս Յիսուսին, Որ
2 հաւատարիմ է իրան հաստատողին, ինչպէս Մովսէս էլ նորա բոլոր տան մէջ: Վասն զի նա
3 աւելի փառքի արժան եղաւ քան Մովսէս, որքան որ անիցն աւելի պատիւ ունի նորա շինողը. Վասն զի ամեն տուն
4 մէկից է շինվում. բայց նա որ ամենն արաւ՝ Աստուած է: Եւ
5 Մովսէս հաւատարիմ է բոլոր տան մէջ ինչպէս ծառայ՝ այն ասուելու բաներին վկայ լինելո համար: Բայց Քրիստոս
6 ինչպէս որդի իր տան վերայ. որի տունը մենք ենք, եթէ յուսոյ համարձակութիւնը և պարծանքը մինչև վերջը հաստատ բռնենք:

Նորա համար, ինչպէս Սուրբ
7 Հոգին ասում. Այսօր՝ եթէ

8 նորա լուիցէք, Մի խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ի դառնութեանն՝ յաւուրն փոր-
9 ձութեան անապատի. Ուր փորձեցին զիս հարքն ձեր. քննեցին զիս՝ և տեսին զգործս
10 իմ զքառասուն ամ. Վասն որոյ տաղտկացայ ազգաւն այնուիկ, և ասացի. Միշտ մոլորեալ են սրտիւք. և նոքա ո՛չ
11 ծանեան զճանապարհս իմ. Որպէս երդուայ ի բարկութեան իմում՝ թէ Մտցեն ի հանգիստ իմ:
12 Տեսէք եղբարք՝ գուցէ երբէք լինիցի յումեք ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝ ապստամբ լինել յԱստուծոյ կենդանւոյ:
13 Այլ մխիթարեցէք զմիմեանս զօրհանապազ՝ մինչդեռ այսօրդ առաջի կայ. զի մի՛ ոք խստասցի ի ձէնջ խաբէութեամբ մեղաց:
14 Քանզի բաժանորդք եղեաք Քրիստոսի. միայն թէ զսկիզբն հաստատութեանն մինչև ցվախճան մինչև վերջը պինդ բռնենք,
15 ճան պինդ կալցուք. Ցասելն, Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ի դառնութեանն:
16 Քանզի ումանք լուան և դառնացուցին, այլ ո՛չ ամենեքեան՝ որ ելեալ էին յԵգիպտոսէ ի ձեռն
17 Մովսէսի: Յումո՞ տաղտկացաւ զքառասուն ամն. ո՞չ ապաքէն ի յանցուցելոյն. որոց ոսկերքն անկան յանապատի
18 անդ: Ումի՞ երդուաւ չմտանել ի հանգիստն իւր, եթէ ո՞չ

նորա ձայնը լսէք, Մի՛ խըստացնէք ձեր սրտերը ինչպէս բարկանալու ժամանակը՝ փորձութեան օրը անապատի մէջ. Ուր
9 որ ձեր հարքը փորձեցին ինձ. քննեցին ինձ և տեսան իմ
10 գործքերը քառասուն տարի: Նորա համար զզուեցայ այն ազգիցը և ասացի. Միշտ մոլորում են սրտով. և նորանք չճանաչեցին իմ ճանապարհները: Այնպէս որ երդում արի
11 իմ բարկութիւնումը, թէ պիտի չմտնեն իմ հանգստի մէջ:
12 Այլեցէք, եղբայրք, մի գուցէ ձեզանից մէկումը անհաւատութեան չար սիրտ լինի որ ապստամբուի կենդանի Աստուածանից, Այլ իրար յոր-
13 դորեցէք ամեն մէկ օր, քանի որ այսօր է ասվում, որ ձեզանից մէկը չխստանայ մեղքի խաբէ-
14 ութիւնովը: Վասն զի մասնակից եղանք Քրիստոսին, եթէ այն հաստատութեան սկիզբը մինչև վերջը պինդ բռնենք,
15 Քանի որ ասվում է. Այսօր եթէ նորա ձայնը լսէք, մի խստացնէք ձեր սրտերն, ինչպէս որ բարկացնելու ժամանակը:
16 Վասն զի ումանք որ լսել էին, բարկացրին. բայց ո՞չ թէ Եգիպտոսից Մովսէսի միջոցովը բոլոր դուրս եկածները:
17 Ումի՞ց զզուեցաւ այն քառասուն տարին. չէ՞ որ մեղք գործողներից. որոնց ոսկորներն ընկան
18 անապատի մէջը: Եւ որո՞նց

19 անհաւատից։ Եւ տեսանեմք՝ զի ոչ կարացին մտանել վասն անհաւատութեանն։

ԳԼ. Գ

1 Երկիցուք այսուհետև, գուցէ ի թողուլ զաւետիսն՝ ի մտանելոյ ի հանգիստն նորա՝ գտանիցի
2 ոք ի ձէնջ նուազեալ։ Քանզի եմք աւետարանեալք որպէս և նոքայն. այլ նոցա ոչ ինչ օգնեաց լուր *բանին, չամբիւլեցն ի հնազանդութիւն հաւատոց։"
3 Մայլ մեք մտանեմք ի հանգիստն, որք հաւատացաքս. որպէս և ասացն՝ թէ Որպէս երդուայ ի բարկութեան իմում, թէ մտցեն ի հանգիստ իմ. թէպէտ և արդիւնքն ի սկզբանէ
4 աշխարհի լեալ էին։ Քանզի ասէ ուրեք վասն աւուրն եօթնեւորդի այսպէս. Եւ հանգեաւ Աստուած յաւուրն եօթնեւորդի
5 յամենայն գործոց իւրոց։ Եւ աստ դարձեալ ասէ՝ թէ մտցեն
6 ի հանգիստ իմ։ Եւ արդ՝ †քանզի արգելան ոմանք մտանել՝" ի նա, և որք յառաջագոյն աւետարանեալն էին՝ չմտին վասն
7 անհաւատութեանն. Դարձեալ այլ օր սահմանէ՝ զայսօրն ի երդում արաւ որ իբր հանգստի մէջ չպիտի մտնեն, եթէ ոչ անհաւատներին։ Եւ տեսնում
19 ենք որ չկարողացան մտնել անհաւատութեան պատճառով։

ԳԼ. Գ

Ուրեմն վախենանք, մի գուցէ
1 երբէք նորա հանգստի մէջ մտնելու աւետիքը մնալիս, ձեզանից մէկը պակասած գտնուի։
2 Վասն զի մենք էլ ենք աւետիքն առել ինչպէս և նորանք. բայց նորանց օգուտ չբերաւ ա-Էպ-ի բարողութեան խօսքը, որովհետև չխառնուեցաւ հաւատքի հետ լսողների մէջ։
3 Բայց մենք հաւատացեալքս մտնում ենք այն հանգստի մէջ, ինչպէս ասաց. Ինչպէս երդում արի իմ բարկութիւնումը, թէ պիտի չմտնեն իմ հանգստի մէջ. թէև գործքերն աշխարհքի սկզբից կատարուած էին։
4 Վասն զի մէկտեղ եօթնեւորդ օրուայ համար այսպէս է ասում. Եւ Աստուած եօթնեւորդ օրումը հանգիստ առաւ իր բոլոր գործքերից։
5 Եւ այստեղ դարձեալ ասում է թէ պիտի չմտնեն
6 իմ հանգստի մէջ։ Արդ որովհետև մնում է որ մի քանիսը նորա մէջ մտնեն, և նորանք որ

* Ի Յոյն. բանին՝ ոչ խառնեալ հաւատով լսողացն

† Ի Յոյն. քանզի կայ մեայ ոմանց մտանել

Դաւթի, և ասէ՝ յետ այնչափ ժամանակաց, որպէս յառաջագոյնն ասաց, Այսօր եթէ
8 ձայնի նորա լուիցէք՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր։ Զի եթէ զնոսա Յեսովայ հանգուցեալ էր, ապա վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնորիկ։
9 *Արդ ուրեմն նուազեալ է շաբաթումն ժողովրդեանն Աստուծոյ։"
10 Զի որ եմուտ ի հանգիստն նորա, և նա հանգեաւ յիւրոց գործոց անտի. որպէս և Աստուած յիւրայնոցն։

11 Փութացուք այսուհետև մտանել յայն հանգիստ. զի մի ոք ընդ նոյին օրինակաւ անհաւատութեանն անկանիցի։
12 Քանզի կենդանի է բանն Աստուծոյ՝ և ազդօղ՝ և հատու քան զամենայն սուր երկայրի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ և ոգւոյ՝ և յօղից և ուղղոց. և քննիչ է մտաց՝ և խորհրդոց
13 սրտից. Եւ չէ արարած աներևոյթ յերեսաց նորա. այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա՝ զորմէ մեր բանքս են։
14 Ունիմք այսուհետև Քահանայապետ մեծ անցեալ ընդ առաջուց աւետիքն առան, չըմտան անհաւատութեան պատճառով. Կրկին ուրիշ օր է
7 հաստատում. Այսօր Դաւթով ասելով այնքան ժամանակներից յետոյ. ինչպէս որ ասուեցաւ, Այսօր որ նորա ձայնը լսէք, մի խստացնէք ձեր սրտերը։
8 Վասն զի եթէ Յեսուն նորանց հանգստի մէջ էր տարել, նորանից յետոյ ուրիշ օրի համար էլ չէր խօսել։
9 Ուրեմն մնում է մի շաբաթաւոր Աստուծոյ ժողովրդի համար։
10 Վասն զի նորա հանգիստը մտնողը, ինքն էլ հանգստացաւ իր գործքերից. ինչպէս Աստուած էլ իրաններից։
11 Ուրեմն ջանանք այն հանգստի մէջ մտնելու. որ մի գուցէ մէկը նոյն անհաւատութեան օրինակի պէս ընկնի։
12 Որովհետև Աստուծոյ խօսքը կենդանի է և զօրաւոր և ամեն երկայրի սուրից աւելի կտրուկ է, և թափանցում է մինչև շունչի և ոգու և յօդուածների և ծուծի բաժանումը. և քննող է սրտի մտքերը և խորհուրդները։
13 Եւ չկայ մի արարած աներևոյթ նորա երեսից. բայց ամենն էլ մերկ և բաց է նորա աչաց առջև որի հետ է մեր բանը։
14 Արդ որովհետև մեծ Քահանայապետ ունինք երկինքնե-

* Ի Յոյն. Ուրեմն կայ մնայ ժողովրդեանն Աստուծոյ շաբաթումն

երկինս, զՅիսուս զՈրդին Աստուծոյ. պինդ կալցուք ըզխոստովանութիւնն։ Քանզի ոչ
15 եթէ ունիմք քահանայապետ՝ որ չիցէ կարող չարչարակից լինել տկարութեան մերոյ. այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան, առանց մեղաց։

16 Մատիցուք այսուհետև համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն Նորա. զի ընկալցուք զողորմութիւն և գըտցուք շնորհս ի դէպ ժամանակի օգնականութեան։

ԳԼ. Ե

1 Օրի ամենայն քահանայապետ ի մարդկանէ առեալ՝ վասն մարդկան կոչի յաստուածակոյս կողմն անդր. զի մատուցցէ պատարագս և զոհս վասն մե-
2 ղաց։ Զափով չարչարակից կարող է լինել տգիտաց և մոլորելոց. քանզի և ինքն իսկ տկարութեամբ զգածեալ է։
3 Վասն այնորիկ հարկ է՝ որպէս վասն ժողովրդեանն, նոյնպէս և ընդ անձին մատուցանել պա-
4 տարագս վասն մեղաց։ Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ. այլ կոչեցեալն յԱստուծոյ՝ որ-
5 պէս և Յհարոնն։ Նոյնպէս և Քրիստոս ոչ եթէ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ. այլ որ խօսեցաւն առ նա՝ թէ Որդի իմ ես դու՝ ես այսօր
ծնայ զքեզ։ Որպէս և ի մի-
սումն ասէ. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի։
7 Որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղօթս և պաղատանս առ այն, որ կարօղն էր ապրեցուցանել զնա ի մահուանէ, ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր. և լսելի լինէր առ
8 լաւութեանն։ Թէպէտ և Որդի է՝ ուսաւ ի չարչարանաց անտի
9 զՀնազանդութիւն։ Եւ իբրև կատարեցաւ՝ եղև ամենայն հնազանդելոց իւրոց պատճառք
10 փրկութեանն յաւիտենից. Եւ անուանեցաւ յԱստուծոյ քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի։

11 Վասն որոյ բազումք են մեզ բանք, և դժուարապատում՝ ի մեկնել. քանզի խնդամիտք
12 եղերուք լսելեաք։ Փոխանակ զի պարտ էր ձեզ լինել վարդապետս վասն ժամանակին. դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել՝ թէ զի՛նչ են նշանագիրք սկզբան բանից Աստուծոյ. և եղերուք կարօտք կաթին՝ և ոչ հաստա-
13 տուն կերակրոյ։ Օրի ամենայն որ կաթնակեր է՝ տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ
14 է։ Այլ կատարելոցն է հաստատուն կերակուր. որոց վասն ի չափսն հասանելոյ, ճաշակելիքն

ռաւորեց, որ Քահանայապետ լինի. այլ նա որ ասաց Նորան Ես Իմ Որդին ես դու, ես այսօր
6 ծնայ քեզ։ Ինչպէս էլ մի ուրիշ տեղ ասում է. Դու քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգի պէս։ Նա որ իր
7 մարմնոյ օրերումն աղօթք և աղաչանք սաստիկ աղաղակով և արտասունքով մատուցանում էր Նորան, որ կարող էր ազատել Նորան մահից. և լսուեցաւ իր
8 բարեպաշտութեան համար։ Թէ և Որդի էր, այն չարչարանքներիցը հնազանդութիւնը սովորեց։ Եւ երբոր կատարուեցաւ բոլոր իրան հնազանդողների համար յաւիտենական
9 փրկութեան պատճառ եղաւ.
10 Աստուածանից անուանուելով Քահանայապետ Մելքիսեդեկի կարգի պէս։

11 Որի համար շատ խօսք ունինք, և դժուար է մեկնել ասելով, որովհետև ծոյլ եղաք
12 ականջներով։ Վասն զի ժամանակին նայելով պիտի վարդապետ լինէիք. կրկին կարօտ էք սովորելու թէ ինչ են Աստուծոյ խօսքերի առաջին նշանագիրները. և կարօտողներ եղաք կաթի և ոչ թէ հաստատ
13 կերակուրի։ Վասն զի ամենորակուրի։ Վասն զի ամենորակուրի։ Վասն զի ամենոր

կիրթ են ընտրութեան բարւոյ
և չարի։

ԳԼ. Զ.

1 Վասն որոյ թողեալ զբանն
սկզբանն Քրիստոսի, ՝Ի կա-
տարումն եկեսցո՛ւք. մի՛ միւսան-
գամ արկանել հիմն ապաշխա-
րութեան՝ ՝Ի մեռելոտի գործոց
անտի, և հաւատոցն որ յԱՍ-
2 տուած, Եւ մկրտութեանցն
վարդապետութեան, և ձեռնա-
դրութեան ձեռաց, և յարու-
թեան մեռելոց, և դատաստանին
3 յաւիտենից։ Եւ արդ՝ արաս-
ցո՛ւք զայն, եթէ Աստուած
4 հրամայեսցէ։ Քանզի անհնար
է միանգամ* մկրտելոցն, որ
ճաշակեցին յերկնաւոր պարգե-
ւացն, և հաղորդք եղեն Հոգ-
5 ւոյն Սրբոյ, Եւ զգեղեցիկ
բանին Աստուծոյ ճաշակս ճա-
շակեցին, և զզօրութիւնս հան-
6 դերձելոյ աշխարհին, Եւ կոր-
ծանեսցին, միւսանգամ նորոգել
յապաշխարութիւն. և վերստին
† ՝Ի խաչ հանել անձանց զՈրդին
Աստուծոյ, և դարձեալ խայտա-
7 ռակել։" Քանզի երկիր՝ որ
ըմպիցէ զանձրև բազում անգամ
եկեալ ՝Ի վերայ նորա, և ծնա-
նիցի արդիւնս շայեկանս նոցա՝

ները վարժողութեամբ կրթուած են բարին և չարը զանազանելու։

ԳԼ. Զ.

1 Ուստի Քրիստոսի մասն ըսկզբնական խօսքը թողելով դէպի
կատարեալը գանք. առանց կրկին հիմը դնելու մեռած գործերից ապաշխարութեան և Աստուծոյ հաւատալու համար.
2 Եւ մկրտութիւնների ուսմունքի, և ձեռք դնելու, և մեռելների յարութեան և յաւիտենական դատաստանի համար։
3 Եւ սա անենք, եթէ
4 Աստուած հրաման տայ։ Վասն զի անկարելի է նորանց՝ որ մէկ անգամ լուսաւորուած, այն երկնաւոր պարգևի համն առած, և Սուրբ Հոգոյն մասնակից եղած,
5 Եւ Աստուծոյ գեղեցիկ խօսքի, և հանդերձեալ աշխարհի զօրութիւնները ճաշակած են, եթէ
6 կործանում են, որ նորանց դարձեալ նորոգուին ապաշխարութեան համար. որովհետև Աստուծոյ Որդին իրանց համար կրկին խաչեցին և խայտառակ արին։
7 Վասն զի այն երկիրը, որ իր վերայ շատ անգամ եկած անձրևը խմէ, և շահաւոր արդիւնք բուսեցնէ նորանց համար,

* ՝Ի Յոյն, լուսաւորելոցն
† ՝Ի Յոյն, ՝Ի խաչ հանեալ անձանց զՈրդին Աստուծոյ, և դարձեալ խայտառակեալ

վասն որոյ գործեցին, ընդունի
8 զօրհնութիւն յԱստուծոյ։ Իսկ
որ բերէ զփուշ և զտատասկ,
անպիտան է և մերձ յանէծս, և
վախճան նորա յայրումն։

9 Բայց հաստատեալ եմ վասն
ձեր սիրելիք՝ ՝Ի լաւ անդր, և որ
լին է փրկութեամբ. զի թէպէտ
10 և այսպէս խօսիմք, Ո՛չ եթէ
անիրաւ ինչ է Աստուած՝ մոռա-
նալ զգործս ձեր և զսէրն՝ զոր
ցուցէք յանուն նորա. զի
պաշտէիք զսուրբսն՝ և պաշտէք։

11 Եւ մեք ըղձանամք՝ զի իւրա-
քանչիւրոք ՝Ի ձէնջ զնոյն փոյթ
ցուցանիցէ ՝Ի հաստատութիւն
12 յուսոյն՝ մինչև ցվախճան. Զի
մի՛ հիւանդամիտք լինիցիք։
Նմանողք եղերուք այնոցիկ որ
հաւատովքն և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն։ Զի Աբրահամու խոստացեալ զաւետիսն Աստուծոյ,
քանզի յայլ ոք ՝Ի մեծ ո՛չ գոյր
երդնուլ՝ Յանձն իւր երդուաւ,
14 և ասէ. Այո՛, օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով
15 բազմացուցից զքեզ։ Եւ այն-
պէս երկայնամիտ եղեալ՝ եհաս
16 աւետեացն։ Զպարքէն մարդիկ՝
որ ինչ ՝Ի վեր է քան զինքեանս՝
յայն երդնուն. և ամենայն հակառակութեան նոցա վճիռ առ
՝Ի հաստատութիւն, երդումն

զիւնք բուսեցնէ նորանց համար,
որոնց ձեռքովն էլ մշակվում
է, նա Աստուածանից օրհնու-
թիւն կ՝ընդունի։ Բայց այն 8
որ փուշ և տատասկ է բերում,
անպիտան է և անէծքի մօտ. և
նորա վերջն այրուիլ է։

Իսկ ձեզ համար, սիրելիներս, 9
հաստատ յոյս ունինք լաւագոյն
և փրկութեան վերաբերեալ
բաների մասին։ Վասն զի Աս- 10
տուած անիրաւ չէ որ մոռանայ
ձեր գործքը և այն սիրոյ աշ-
խատանքը, որ նորա անունի
համար ցոյց տուիք, որ ծա-
ռայում էիք սրբերին և ծա-
ռայում էք։

Եւ փափագում ենք որ ձե- 11
զանից ամեն մէկը նոյն ջանքը
ցոյց տայ, որ յոյսը հաստատ
մնայ մինչև վերջը։ Որ հիւան- 12
դամիտ չլինիք. այլ նմանող
լինիք հաւատքով և երկայն-
մտութիւնով աւետիքները ժա-
ռանգողներին։ Վասն զի երբ 13
որ Աստուած տուաւ Աբրա-
համին աւետիքի խոստմունները,
որովհետև ուրիշ աւելի մեծք
չունէր, որ նորանով երդում
անէր, Իր անձնովն երդում
արաւ և ասաց. Այո՛, օրհնե- 14
լով կ՝օրհնեմ քեզ, և շատաց-
նելով կ՝շատացնեմ քեզ։ Եւ 15
այսպէս երկայնամիտ լինելով,
հասաւ աւետիքին։ Իրաւի մար- 16
դիկ աւելի մեծովն են երդում
անում, և նորանց բոլոր հա-
կառակութեան վճիռը՝ բանը

17 է։ Որով առաւել ևս կամեցեալ Աստուծոյ՝ ցուցանել ժառանգաւորաց աւետեացն զհաստատութիւն խորհրդոյն իւրոյ,
18 միջնորդեաց երդմամբ։ Զի երկու անփոփոխելի իրօքն՝ որովք անհնարին ի՛նչ ստել Աստուծոյ, հաստատուն մխիթարութիւն ունիցիմք. որք ապաստան եղեալք բուռն հարկանել
19 զհանդերձեալ յուսոյն. Զոր իբրև զնաւարխսի հաստատուն և անշարժ ունիցիմք անձանց մերոց, որ և մտանիցէ ի ներքին
20 կողմն վարագուրին. Ուր կարապետն մեր Յիսուս եմուտ վասն մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի՝ եղև քահանայապետ յաւիտենից։

ԳԼ. Ի.

1 Քանզի այս Մելքիսեդեկ՝ թագաւոր էր Սաղեմայ. քահանայ Աստուծոյ բարձրելոյ. որ ել ընդ առաջ Աբրահամու, յորժամ դարձեալ գայր ի կոտորածէ թագաւորացն՝ և օրհնեաց
2 զնա. Որում և տասանորդս յամենայնէ ետ Աբրահամ. նախ թարգմանի թագաւոր արդարութեան, ապա թագաւոր Սաղեմայ՝ որ է թագաւոր
3 խաղաղութեան. Անհայր՝ անմայր՝ չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց և ոչ կատարած կենաց, նմանեալ Որդւոյն

հաստատելու համար՝ երդումն է։ Որով Աստուած առաւել 17
ևս կամենալով աւետիքի ժառանգողներին ցոյց տալ իր
խորհրդի անփոփոխ լինելը,
երդումը մէջ բերաւ. Որ եր- 18
կու անփոփոխելի բանով, որոնցով անկարելի է որ Աստուած
սուտ խօսի, հաստատուն մխիթարութիւն ունենանք, մենք որ
ապաւինեցանք առջևնիս դրած
յոյսը բռնելու. Որ հաստատ 19
և անշարժ խարիսխի պէս ունինք մեր անձի համար. որ և
մտնում է վարագուրի ներսի
կողմն էլ, Ուր որ մեզ 20
համար Առաջնորդ մտաւ Յիսուսը, Մելքիսեդեկի կարգի
պէս յաւիտենական Քահանայապետ եղած։

ԳԼ. Ի.

Այսն զի այս Մելքիսեդեկը Սաղեմի թագաւոր էր. 1
բարձրեալ Աստուծոյ քահանայ.
որ դիմաւորեց Աբրահամին, երբ
որ նա թագաւորների կոտորելուցն ետ էր դառնում և
օրհնեց նորան, Որին Աբրահամ 2
ամէն բաներից տասանորդ էլ
տուաւ. նա առաջ թարգմանվում է արդարութեան թագաւոր, և յետոյ Սաղեմի թագաւոր, որ է խաղաղութեան
թագաւոր։ Անհայր, անմայր, 3
առանց ազգահամարի. որ ոչ
օրերի սկիզբն ունի, և ոչ կե-

Աստուծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր։

4 Աբրդ տեսէք որպիսի ոք էր սա, որում և Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անտի՝
5 նահապետն։ Եւ որք յորդւոցն Լևեայ զքահանայութիւնն առնուն, պատուէր ունին տասանորդել զժողովուրդն ըստ օրինացն. այսինքն է՝ զեղբարս իւրեանց. թէպէտ և ելեալ իցեն
6 յերանացն Աբրահամու։ Իսկ չհամարեալն յազգս ի նոցանէ՝ տասանորդեաց զԱբրահամ՝ և զնա որոյ զաւետիսն ընկալեալ
7 էր, օրհնեաց։ Զի առանց ամենայն հակառակութեան, նուազն ի լաւէ անտի օրհնեսցի։

8 Եւ աստ մարդք մահկանացուք տասանորդս առնուն. բայց անդ վկայեցաւ՝ թէ կենդանի է. և որպէս բանից կարդ է ասել.
9 թէ Աբրահամաւ և Լևի իսկ՝ որ զտասանորդսն առնոյր, տա-
10 սանորդեցաւ։ Զի դեռ ևս յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ ընդ առաջ եղև նմա Մելքիսեդեկ։

11 Իսկ արդ՝ եթէ կատարումն ի ձեռն Լևատացւոց քահանայութեանն էր, քանզի ժողովուրդն յայն օրէնս գրեցաւ. զի՞նչ պիտոյ է- ըստ կարգին Մելքիսեդեկի այլում քահանայի

նաց վերջ. այլ Աստուծոյ Որդոյ նման եղած կենում մնում է քահանայ մշտնջենաւոր։

Հիմա տեսէք թէ քանի մեծ 4
էր սա, որին Աբրահամ նահապետն էլ տասանորդ տուաւ
այն աւարիցը։ Եւ Լևիի որ- 5
դիքներիցը նորանք, որ ընդունում են քահանայութիւնն,
հրաման ունին ժողովրդիցը տասանորդ առնելու ըստ օրինի,
այսինքն իրանց եղբայրներիցը.
թէպէտ և նորանք էլ Աբրա- 6
համի երանքիցն են ելած։ Բայց
նա, որի ազգահամարը նորանցից չէր, տասանորդ առաւ
Աբրահամից. և օրհնեց նորան
որ աւետիքներն ունէր։ Հիմա 7
առանց որ և է հակառակութեան՝ ցածը լաւագոյնիցն է
օրհնվում։
Եւ այստեղ մահկանացու 8
մարդիկ են առնում տասանորդ.
բայց այնտեղ նա, որ վկայուեցաւ թէ կենդանի է։ Եւ կա- 9
րելի է ասել, թէ Աբրահամի
պատճառով Լևին էլ որ տա-
սանորդ է առնում, տասանորդ
տուաւ։ Այն զի նա տակաւին 10
իր հօր երանքումն էր, երբոր
Մելքիսեդեկ նորան դիմաւորեց։
Այս ուրեմն եթէ կատարե- 11
լութիւնը Լևատացոց քահանայութիւնովն՝ էր. (որովհետև
ժողովուրդը նորա վերայ հիմնուելով օրէնքն ընդունեց). էլ
ի՞նչ պէտք կայ, որ Մելքիսե-

յառնել, և ոչ ասել՝ թէ ըստ
12 կարգին Ահարովնի։ Այլ ի
փոփոխել քահանայութեանն,
հարկ էր և օրինացն փոփոխումն
13 լինել։ Զի զորմէ այսպէսն ա-
սի՝ յայլմէ ազգէ կալաւ հա-
զորդութիւն, յորմէ ոչ ոք
եւրեթէ եղև հաղորդ սեղանոյն։
14 Արդ՝ յայտ իսկ է, թէ յազգէ
Յուդայ ծագեաց Տէր մեր.
յորմէ ազգէ վասն քահանայից
15 Մովսէս ինչ ոչ ճառեաց։ Եւ
ևս առաւել յայտ է՝ թէ ըստ
նմանութեան Մելքիսեդեկի
յառնելոց է այլ քահանայ,
16 Որ ոչ ըստ մարմնաւոր պատ-
ուիրանին եղև, այլ ըստ զօրու-
թեան կենացն անվախճանից։
17 Զի վկայեցաւ, թէ Դու
ես քահանայ յաւիտեան ըստ
18 կարգին Մելքիսեդեկի։ Ար-
համարհութիւն լինէր առաջին
պատուիրանին՝ վասն նորին
տկարութեան և անշահութեան.
19 Զի ոչինչ կատարումն
գործեցին օրէնքն, * և մուտ
աղնուական յուսոյն՝ որով մեր-
ձենամք առ Աստուած։

20 Եւ այնչափ, զի ոչ առանց
երդման, զի են ոմանք՝ որ
առանց երդման են կացեալ
21 քահանայք։ Բայց սա երդմամբ
դեկի կարգի պէս մի ուրիշ
քահանայ վեր կենայ և ոչ թէ
Ահարոնի կարգի պէս ասուի։
Բայց երբոր քահանայութիւնը 12
փոխվում է, հարկ է որ օրէնքին
էլ փոփոխութիւն լինի։ Ա՛ սան 13
զի նա, որի համար այս բաներն
ասվում է, ուրիշ ցեղի էր
մասնակից, որից ոչ ոք սեղանին
չմոտեցաւ։ Ա՛ սան զի յայտնի 14
է, որ մեր Տէրը Յուդայի
ցեղիցը ծագեց, որ այն ցեղի
վերայ Մովսէս ոչ մի բան
չխոսեց քահանայութեան հա-
մար։ Եւ սա առաւել ևս 15
յայտնի է, երբ Մելքիսեդեկի
նմանութեան պէս ուրիշ քա-
հանայ է վեր կենում, Որ ոչ 16
թէ մարմնաւոր պատուէրի օ-
րէնքի պէս եղաւ, այլ անվախ-
ճան կեանքի զօրութեան պէս։
Ա՛ սան զի վկայում է, թէ 17
դու քահանայ ես յաւիտեան
Մելքիսեդեկի կարգի պէս։ 18
Ա՛ սան զի խափանումն է լի-
նում առաջի պատուիրանքին իր
տկարութեան և անօգուտ լի-
նելու համար։ (Ա՛ սան զի 19
օրէնքն ոչինչ չարաւ) և ներա-
է մտնում մի աղնուագոյն յոյս,
որով մօտենում ենք Աստու-
ծոյն։

Եւ որքան որ առանց երդումի 20
չէ. (վասն զի նորանք առանց
երդումի են քահանայ եղած.
Բայց սա երդումով նորա 21

* Ի Յոյն, այլ

'ի ձեռն այնորիկ՝ որ ասացն 'ի
նա. Երդուաւ Տէր՝ և ոչ ևս
զղջասցի, դու ես քահանայ
22 յաւիտեան։ Եւ այնչափ լա-
ւագոյն ուխտի եղև երաշխաւոր
Յիսուս։

23 Եւ բազում են կացեալ քա-
հանայք՝ վասն մահու արգել
24 լինելոյ 'ի մշտնջենաւորել։ Իսկ
սա վասն յաւիտեան կալոյ՝ ա-
ռանց անցանելոյ ունի զքահա-
25 նայութիւնն։ Ուստի և կեն-
դանի առնել համարէն կարող է
զմատուցեալս նովաւ առ Աս-
տուած. քանզի միշտ կենդանի
է՝ լինել բարեխօս վասն նոցա։

26 Զի այսպիսի իսկ և վայել էր
մեզ քահանայապետ, սուրբ՝
անմեղ՝ անարատ՝ զատեալ 'ի
մեղաւորաց, և բարձրացեալ
27 քան զերկինս. Որում ոչ
հանապազ հարկ է որպէս այլոց
քահանայապետիցն, նախ վասն
իւրեանց մեղացն պատարագս
մատուցանել՝ և ապա վասն
ժողովրդեանն. իսկ սա զայն
միանգամայն կատարեաց, զի
զանձն իւր մատոյց պատա-
28 րագ։ Օրէնքն զմարդիկ կացու-
ցանեն քահանայապետս զգա-
ծեալս տկարութեամբ. իսկ
բանն երդման յետ օրինացն՝
զՈրդի, որ յաւիտեան կատա-
րեալ է։

ձեռամբ որ ասաց նորան.
Տէրը երդուաւ և չի զղջա-
նալ, դու քահանայ ես յաւի-
տեան Մելքիսեդեկի կարգի
պէս.) Այնքան աւելի ազնիւ 22
ուխտի երաշխաւոր եղաւ Յի-
սուս։

Եւ նորանք շատ քահանաներ 23
են եղել. նորանց միշտ մնալը
մահով արգիլուելու պատճա-
ռով. Բայց սա, որովհետև 24
յաւիտեան է կենում, քահա-
նայութիւնն ունի անանցա-
նելի. Ուստի և բոլորովին կա- 25
րող է փրկել նորանց որ նո-
րանով մօտենում են Աստու-
ծոյն, որովհետև միշտ կենդանի
է որ նորանց համար բարեխո-
սութիւն անէ։

Ա՛ սան զի այսպիսի քահա- 26
նայապետ էր վայելում մեզ,
սուրբ, անմեղ, անարատ, մե-
զաւորներից ջոկուած և երկն-
քիցը վեր բարձրացած. Որին 27
ամեն օր պէտք չէ ինչպէս ուրիշ
քահանայապետներին, որ ա-
ռաջ իրանց մեղքերի համար
պատարագներ մատուցանեն և
յետոյ ժողովրդի մեղքերի հա-
մար. վասն զի սա մէկ անգամ
կատարեց այդ իր անձը պա-
տարագ մատուցանելով։ Որով- 28
հետև օրէնքը մարդիկ է կանգ-
նեցնում քահանայապետներ,
որ տկարութիւն ունին. բայց
երդումի խօսքը որ օրէնքիցը
յետոյ է Որդին՝ որ յաւի-
տեան կատարեալ է։

ԳԼ. Բ.

1 Եւ բանից գլուխ խօսիցս՝ այն-
պիսի ունիմք քահանայապետ,
որ նստաւ ընդ աջմէ մեծութեան
2 աթոռոյն յերկինս, Սրբու-
թեանցն պաշտօնեայ՝ և խորանին
ճշմարտութեան, զոր Տէրն
3 կանգնեաց՝ և ոչ մարդ։ Զի
ամենայն քահանայապետ վասն
մատուցանելոյ զողս և ըղպա-
տարագս կայ. ուստի հարկ է և
նմա ունել ինչ՝ զոր մատու-
4 ցանիցէ։ Զի եթէ էր *յերկրի.
թերևս չէր իսկ քահանայ. զի
գոյին՝ որ մատուցանէին ըստ
5 օրինացն պատարագ. Որք ա-
ռակաւ և օրինակաւ պաշտէին
երկնաւորացն. որպէս և Հրա-
մայեցաւ Մովսէսի՝ յորժամ
գործելոց էր † զվրան ժամուն՝՝
Տեսջիր՝ ասէ, արասցես զամ-
նայն ըստ օրինակին՝ որ ցուցաւ
6 քեզ ի լերինն։ Բայց արդ՝
առատագոյն ևս պաշտաման
եհաս Յիսուս, որչափ լաւա-
գոյն ևս ուխտի է միջնորդ՝ որ
յաւուրել աւետեան օրինագրեա-
ցաւ։

7 Զի եթէ առաջինն անարատ
էր, ապա երկրորդին տեղի ոչ

* Ի Յոյն, յերկրի
† Ի Յոյն, զվրանն

ԳԼ. Բ.

Եւ ասածներիս բովանդակու-
թիւնը սա է. մենք այնպիսի
քահանայապետ ունինք, որ մե-
ծափառութեան աթոռի աջ
կողմը նստեց երկնքում. Պաշ-
տօնեայ սրբութեանց և ճշմա-
րիտ խորանին, որն որ Տէրը
կանգնեցրեց և ոչ թէ մարդ։
Այն զի ամէն քահանայապետ
ընծաներ և պատարագներ մա-
տուցանելու համար է կարգ-
վում. ուստի սորան էլ պէտք է
որ մի բան ունենայ մատուցա-
նելու։ Որովհետև եթէ երկրի
վերայ լինէր, քահանայ չէր
լինիլ, քանի որ կենում էին դեռ
նորանք, որ օրէնքի պէս պատա-
րագ էին մատուցանում. Որոնք
երկնաւոր բաների օրինակովը և
շուքովն էին ծառայում, ինչպէս
Հրաման եղաւ Մովսէսին, որ
խորանը շինելու էր. Մտիկ
տուր, ասում է, որ ամէն բան
անես այն օրինակի պէս, որ ցոյց
տրուեցաւ քեզ լեռանումը։
Բայց հիմա Յիսուսս աւելի աղ-
նիւ պաշտամունքի հասաւ, որ-
քան որ ինքն աւելի լաւ ուխտի
միջնորդ է, որ աւելի ազնիւ
աւետիքների վերայ օրինա-
դրուեցաւ։

Այն զի եթէ այն առա-
ջինն առանց պակասութեան

8 խնդրէր։ Նա աւասիկ բամբասէ
զնոսա և ասէ. Ահաւասիկ
աւուրք եկեսցեն՝ ասէ Տէր, և
կատարեցից ի վերայ տանն
Իսրայէլի և ի վերայ տանն
9 Յուդայ՝ ուխտ նոր. Ոչ ըստ
ուխտին՝ զոր եդի ընդ հարս
նոցա յաւուրն յորում առի ի
ձեռն՝ հանել զնոսա յերկրէն
Եգիպտացւոց. և զի նոքա ոչ
կացին յուխտին իմում՝, և ես
անփոյթ արարի զնոցանէ, ասէ
10 Տէր ամենակալ։ Այլ այս է
ուխտն՝ զոր եդից տանն Իսրայէլի
յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ
Տէր. տաց զօրէնս իմ՝ ի միտս
նոցա՝ և ի սիրտս նոցա գրեցից
զնոսա. և եղէց նոցա Աստուած,
և նոքա եղիցին ինձ ի ժողո-
11 վուրդ։ Եւ ոչ ևս ուսուցանի-
ցեն իւրաքանչիւր զքաղաքակից
իւր, և իւրաքանչիւր զեղբայր
իւր, և ասիցեն թէ՝ Օ՛ան՛իր
զՏէր. զի ամենեքին ծանիցեն
զիս ի փոքրկանց մինչև ի
մեծամեծս նոցա։

12 Զի քաւիչ եղէց անիրաւու-
թեանց նոցա՝ և զմեղս նոցա և
զանօրէնութիւնս այլ ոչ ևս
յիշեցից։

13 Արդ՝ ասելովն նոր, հնացոյց
զառաջինն. և որ հնանայն և
ծերանայ՝ մերձ է յապականու-
թիւն։

լինէր, էլ երկրորդին համար
տեղ չէր որոնուիլ։ Այն զի
նորանց յանդիմանելով՝ ասում
է. Ահա օրեր կ'գան, ասում է
Տէրը, և նոր ուխտ կ'կատարեմ
Իսրայէլի տան և Յուդայի տան
հետ, Ոչ թէ այն ուխտի պէս
որ նորանց հարանց հետ արի
այն օրումն, որ նորանց ձեռքից
բռնեցի Եգիպտացոց երկրիցը
հանելու համար. վասն զի նո-
րանք չմնացին իմ՝ ուխտի մէջ,
և ես էլ անփոյթ եղայ նորանց
համար, ասում է Տէրն։ Այն
զի սա է այն ուխտն որ կ'դնեմ
Իսրայէլի տան հետ այս օրերից
յետոյ, ասում է Տէրը. կ'տամ
իմ օրէնքները նորանց մտքի
մէջ և նորանց սրտերի վերայ
կ'գրեմ նորանք. և նորանց
կ'լինիմ Աստուած, և նորանք
կ'լինին ինձ ժողովուրդ։ Եւ
նորանց ամէն մէկը չի սովորեց-
նիլ իր ընկերին, և ոչ էլ ամէն
մէկն իր եղբօրը և ասիլ. Ճա-
նաչիր Տիրոջը. որովհետև ա-
մենքն էլ կ'ճանաչեն ինձ նո-
րանց փոքրներից մինչև մեծը։
Այն զի նորանց անօրէնու-
թիւնները ներող կ'լինիմ, և
նորանց մեղքերը և նորանց ա-
նօրէնութիւններն ալ ևս չեմ
յիշիլ։
Նոր ասելով այն առաջինը
հնացրեց. և այն որ հնանում է
և ծերանում, մօտ է ապակա-
նութեան։

ԳԼ. Թ

1 Ունել ունէր և առաջինն
իրաւունս պաշտաման յայնժամ
զաշխարհական սրբութիւնն։
2 Զի խորանն առաջին հանդեր-
ձեցաւ այսպէս. յորում աշ-
տանակն և սեղանն և հացն
նուիրաց՝ որ Սրբութիւնն կո-
3 չէր։ Եւ յետ երկրորդ վարա-
գուրին խորանն՝ որ կոչէր Սրբ-
4 բութիւն սրբութեանց. Յո-
րում կայր բուրվառն ոսկի, և
արկղն կտակարանաց պատեալ
ներքոյ և արտաքոյ ոսկւով.
յորում սափորն ոսկի լի մանա-
նայիւ, և գաւազանն Ահարով-
նի՝ որ ծաղկեցաւ. և տախտակք
5 կտակարանացն. Եւ ի վերայ
նորա քերովբէքն փառաց՝ որ
հովանի ունէին ի վերայ
քաւութեանն. վասն որոյ ոչ է
այժմ ասել մի ըստ միոջէ։

6 Եւ այն ամենայն իբրև այն-
պէս հանդերձեալ կայր, յառա-
ջին խորանն յամենայն ժամ
մտանէին քահանայք զպաշտա-
7 մունսն կատարել. Բայց յեր-
կրորդն միանգամ ի տարւոջն
քահանայապետն. և զայն ոչ
առանց արեան, զոր մատուցանէր
վասն իւր՝ և վասն ժողովրդեանն
8 անգիտութեան։ Զայս ցուցեալ
Հոգւոյն Սրբոյ՝ մինչև յայ-
տնեալ էր ճանապարհի սրբու-
թեանցն. քանզի դեռ առաջին
խորանն ունէր զհաստատու-

ԳԼ. Թ

Իրաւ որ առաջի ուխտն էլ 1
ունէր պաշտամունքի իրաւուն-
քը՝ աշխարհական սրբարանը.
Այսն զի առաջի խորանն այս- 2
պէս պատրաստուեցաւ, որում
էր աշտանակը և սեղանը և
հացերի նուէրը, սա կոչվում էր
սրբութիւն։ Իսկ երկրորդ վա- 3
րագուրի ետեւը մի խորան կար
որ Սրբութիւն սրբութեանց էր
կոչվում։ Որ ունէր ոսկէ բուր- 4
վառը, և կտակարանների տա-
պանակը ամեն կողմից ոսկով
պատած. որում կար ոսկէ սա-
փորը մանանայովը, և Ահարոնի
գաւազանը որ ծաղկեց, և կտա-
կարանների տախտակները։ Եւ 5
նորանից բարձր փառաց քե-
րովբէները որ հովանի էին ա-
նում քաւութիւնի վերայ, որոնց
համար պէտք չէ հիմա մանրա-
մասն ասել։
Եւ այս բաներն այսպէս 6
պատրաստուած լինելով, քա-
հանայքն ամեն ժամանակ մըտ-
նում էին առաջին խորանը
պաշտամունքները կատարելու։
Բայց երկրորդի մէջ միայն՝ էր 7
քահանայապետը տարին մէկ
անգամ, և ոչ առանց արիւնի,
որ մատուցանում էր իրան հա-
մար և ժողովրդի տգիտութիւն-
ների համար։ Սուրբ Հոգին 8
նորանով ցոյց էր տալիս, որ
դեռ սրբութիւնների ճանա-
պարհը յայտնուած չէր, քանի

9 թիւն. Որ է առակ ժամանա-
կին, որ առաջի կայր. յորում
պատարագքն և զոհքն մատչէին,
որք ոչ կարէին ըստ միտս կա-
տարել զպաշտամունսն. բայց
միայն կերակրովք և ըմպելեօք.
10 Եւ պէսպէս մկրտութեամբք՝
մարմնոյ արդարութիւնքն. որ
մինչև ի ժամանակս ուղղու-
11 թեանն ի վերայ կային։ Այլ
Քրիստոս եկեալ Քահանայա-
պետ հանդերձելոցն բարեաց՝
մեծաւն և կատարելումն՝ և
անձեռագործ խորանաւ, այսինքն
է՝ որ ոչ յայսց արարածոց,
12 Եւ ոչ արեամբ նոխազաց և
զուարակաց. այլ իւրով արեամբն
եմուտ միանգամ ի սրբու-
թիւնսն՝ յաւիտենական գտեալ
13 զփրկութիւն։ Զի եթէ արիւն
ցլուցն և նոխազաց՝ և մոխիր
երինջոյն ցանեալ՝ զպղծեալսն
սրբէր առ ի մարմնոյ սրբու-
14 թենէ, Որչափ ևս առաւել
արիւնն Քրիստոսի, որ՝ ի ձեռն
Հոգւոյն յաւիտենականի մա-
տոյց զանձն անարատ պատարագ
Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ
մտաց ձերոց ի մեռելոտի գործոց
անտի՝ պաշտել զԱստուած կեն-
դանի։

15 Եւ վասն այնորիկ նորոյ
ուխտիս է միջնորդ. զի յորժամ
մահ լինիցի՝ ի փրկութիւն
վասն առաջին ուխտին յանցա-

9 որ առաջի խորանը դեռ հաս-
տատ կանգնած էր, Որ օրինակ
էր այն յառաջիկայ ժամանակի
համար, որում ընծաներ և
զոհեր էին մատուցանվում, որ
ըստ խղճմտանաց չէին կարող
կատարեալ անել պաշտօն մա-
տուցանողին, Միայն կերա- 10
կուրներով և խմելիքներով և
կերպ կերպ լուացմունքներով,
և մարմնոյ արդարութիւններով,
մինչև ուղղութեան ժամանակը
թողուած։ Բայց Քրիստոս, 11
որ հանդերձեալ բարիքների
քահանայապետ եղաւ, աւելի
մեծ և կատարեալ՝ անձեռա-
գործ խորանով, այսինքն այն
որ այս արարածներից չէ, Եւ 12
ոչ թէ նոխազների և զուա-
րակների արիւնով, այլ բուն իր
արիւնովը մէկ անգամ մտաւ այն
սրբատեղին և յաւիտենական
փրկութիւն գտաւ։ Այսն զի 13
եթէ ցուլերի և նոխազների ա-
րիւնը և երինջների մոխիրը
սրսկելով սրբում էր պղծուած-
ներին մարմնաւոր սրբութիւնն
ստանալու համար. Այլ որքան 14
աւելի Քրիստոսի արիւնն, որ
յաւիտենական հոգով իր անձն
անարատ պատարագ մատոյց Ա-
ստուծոյն, ձեր խղճմտանքը կ'սրբէ
այն մեռած գործերից որ կեն-
դանի Աստուծոյն պաշտելու։
Եւ սորա համար նա նոր 15
ուխտի միջնորդ է, որ երբոր
մահն եղաւ այն առաջի ուխտի
ժամանակումն գործած յան-

նաց, զաւետիս առցեն Հրա-
ւիրեալքն ՝ի ժառանգութիւն
16 յաւիտենից։ Զանգի ուր կտակ
է, Հարկ է զմահ ՝ի մէջ բերել
17 զկտակագրին։ Զի կտակ յետ
մահու Հաստատուն է. ապա թէ
ոչ՝ զկարգ ի՞նչ Հաստատուն,
մինչ կտակագիրն կենդանի է։
18 Ուստի և ոչ առաջինն առանց
19 արեան նորոգէր։ Զանգի իբրև
պատմեցաւ ամենայն պատու-
իրանք օրինացն ՝ի Մովսիսէ
ժողովրդեանն, առեալ զարիւն
ցլուցն և նոխազացն, ջրով և
բրդով՝ կարմրով և զոպպիւ,
զկտակարանաւքն իսկ և զամենայն
20 ժողովրդեամբն սրսկեաց, Եւ
ասէ. Այս է արիւն կտակին՝
զոր պատուիրեաց ձեզ Աս-
21 տուած։ Եւ զխորանաւն և
զամենայն կահիւ սպասուն նոյն-
22 պէս սրսկեաց զարիւնն։ Եւ
գրեթէ ամենայն ինչ արեամբն
սրբէր ըստ օրինացն. և առանց
Հեղման արեան չլինէր թողու-
թիւն։

23 Այսպէս Հարկ էր * օրինաւորացն
այնպիսեաւքն սրբել. և բուն իսկ
երկնաւորացն՝ առաւել ևս պա-
24 տարագաւք քան զնոյնս։ Զի ոչ
եթէ ՝ի ձեռագործ սրբութիւնսն
եմուտ Քրիստոս յօրինակս
ճշմարտութեանն. այլ ՝ի բուն

ցանքներին բաւութեան համար,
աւետիքն առնեն յաւիտենական
ժառանգութեան կանչուածներ-
ը։ Այսն զի որ տեղ որ կտակ 16
կայ, Հարկաւոր է որ կտակա-
բարի մահը մէջ մտնէ. Որով- 17
հետև կտակը մեռնելուց յետոյ
է Հաստատ. վասն զի երբէք
զօրութիւն չիւնենալ քանի որ
կտակարարը կենդանի է։ Ուստի 18
և առաջինն էլ առանց արիւնի
չՀաստատուեցաւ։ Այսն զի 19
Մովսէս երբոր օրէնքի ամեն
պատուիրանքները պատմեց ժո-
ղովրդին, ցուլերի և նոխաղների
արիւնն առաւ ջրի և կարմիր
բրդի և զոպպի Հետ, և բուն
այն գրքի և բոլոր ժողովրդի
վերայ սրսկեց, Եւ ասաց. Այս 20
այն կտակի արիւնն է, որ Աս-
տուած նորան պատուիրեց ձեզ։
Եւ խորանի և պաշտամունքի 21
բոլոր անօթների վերայ էլ ա-
րիւնը նոյնպէս սրսկեց։ Եւ 22
Համարեա թէ ամեն բան արիւ-
նով է սրբվում ըստ օրինաց, և
առանց արիւն թափելու թողու-
թիւն չէ լինում։

Արդ Հարկաւոր էր որ երկն- 23
քում եղած բաների օրինակներն
այսպիսի բաներով սրբուին.
բայց բուն երկնաւորները նո-
բանից աւելի աղնիւ պատա-
րագներով։ Այսն զի ոչ թէ 24
ձեռագործ սրբատեղերը մտաւ

* Ի Յոյն, օրինակաց երկնաւո-
բացն

իսկ յերկինս, *յանդիման լինել
երեսացն Աստուծոյ վասն մեր։
25 Ո՛չ զի բազում անգամ մատու-
ցանիցէ զանձն պատարագ՝ որ-
պէս քահանայապետն որ մտանէր
՝ի սրբութիւն սրբութեանցն
ամի ամի արեամբն օտարաւ.
26 Այպա թէ ոչ՝ պարտ էր նմա
բազում անգամ չարչարել ՝ի
սկզբանէ աշխարհի. բայց արդ՝
աւասիկ միանգամ ՝ի կատարած
յաւիտեանց՝ յանարգութիւն
մեղաց իւրով պատարագաւն
27 յայտնեալ է։ Եւ զոր օրինակ
կայ մեայ մարդկան միանգամ
մեռանել՝ և յետ այնորիկ դա-
28 տաստան. Նոյնպէս և Քրիս-
տոս միանգամ մատուցեալ պա-
տարագ առ ՝ի բառնալոյ զմեղս
բազմաց. իսկ յերկրորդումն ա-
ռանց մեղաց յայտնեսցի այնո-
ցիկ, որ ակն ունիցին նմա
հաւատովք ՝ի փրկութիւն։

ԳԼ. Ժ

1 Քանզի զստուեր հանդերձեալ
ցբարեացն ունէին օրէնքն,
և ոչ զնոյն կերպարանս իրացն.
ամի ամի զնոյն պատարագս
մատուցանեն ցանգ, որք ոչ են
կարող զմատուցեալսն կատարել.
2 Այպա թէ ոչ՝ դադարէին ՝ի
մատուցանելոյ, վասն և ոչ մի

Քրիստոս որ ճշմարտի օրինակ-
ներն էին, այլ բուն իսկ երկնքի
մէջ որ հիմա Աստուծոյ երեսի
առջև երևի մեզ համար։ Ոչ 25
թէ որպէս զի շատ անգամ իր
անձը պատարագ մատուցանէ
ինչպէս քահանայապետն, որ
ամեն տարի մտնում էր սրբու-
թեանց սրբութիւնն օտար արիւ-
նով։ Այպա թէ ոչ պէտք էր 26
որ աշխարհի սկզբից յետոյ
շատ անգամ չարչարուէր, բայց
հիմա ժամանակների վերջումը
մէկ անգամ յայտնուեցաւ, որ
մեղքը դէն գցէ իր պատա-
րագովը։ Եւ ինչպէս մարդ- 27
կանց համար սահմանուած է
մէկ անգամ մեռնել և նորանից
յետոյ դատաստան։ Նոյնպէս 28
էլ Քրիստոսը մէկ անգամ պա-
տարագուեցաւ շատերի մեղքերը
վեր առնելու համար։ Եր-
կրորդ անգամն առանց մեղքի
կ՝յայտնուի իրան սպասողներին
փրկութեան համար։

ԳԼ. Ժ

Այսն զի օրէնքը գալու բա- 1
րիքների շուքն ունենալով, Ե-
ոչ թէ այն բաների յատուկ
կերպարանքը, ամեն տարի մա-
տուցուած մի և նոյն պատա-
րագներովը չէր կարող կատա-
րեալ անել մատուցանողներին։
Այպա թէ ոչ՝ կ՝դադարէին մա- 2

* Ի Յոյն, այժմ

ինչ այնուհետև խղճմտաց
ունելոյ պաշտօնէիցն միանգամ
3 սրբեցելոցն. Այլ անդէն ի
նմին ի յիշատակս մեղացն կային
4 ամի ամի։ Քանզի ոչ կարէր
արիւն նոխազացն և ցլուց բառ-
5 նալ զմեղս։ Այսոր որոյ ի
մտանել իւրում յաշխարհ՝ ասէ.
Զոհս և զպատարագս ոչ
կամեցար, բայց մարմին հաստա-
6 տեցեր ինձ. Ընդ ողջակէզս և
ընդ վասն մեղացն ոչ հաճեցար։
7 Յայնժամ ասացի թէ Այսաւասիկ
եկի. ի ճառս գրոց գրեալ է
վասն իմ, առնել զկամս քո Աս-
8 տուած։ Այ երագոյնն ասէ, թէ
Ընդ զոհս և ընդ պատարագս և
ընդ ողջակէզս՝ և ընդ վասն
մեղացն ոչ հաճեցար, և ոչ
կամեցար՝ որք ըստ օրինացն
9 մատչէին։ Այսպէս ասէ՝ Այսաւ-
ասիկ գամ առնել զկամս քո
Աստուած. մերժէ զառաջինն՝
զի զերկրորդն հաստատեսցէ։
10 Որով կամաւք և մեք սրբեցաք՝ ի
ձեռն պատարագի մարմնոյն
Յիսուսի Քրիստոսի միանգամ։

11 Եւ ամենայն քահանայապետ
կայ հանապազորդ ի պաշտա-
ման. և զնոյն պատարագս
մատուցանէ բազում անգամ,
որք ոչ երբեքէ կարօղ են բառնալ
12 զմեղս։ Իսկ սա զմին վասն
տուցանելոյց, որովհետև պաշ-
տօն մատուցանողներն էլ մեղքի
խղճմտանք չէին ունենալ՝ մէկ
անգամ սրբուած լինելով։ Այլ 3
նորանցով ամեն տարի մեղքերի
յիշատակ էր լինում։ Այսն 4
զի անկարելի է որ նոխազների
և ցուլերի արիւնը մեղքեր վեր
առնէ։ Որա համար աշխարհք
մտնելիս ասում է. Զոհ և 5
պատարագ չկամեցար, բայց
մարմինը պատրաստեցիր ինձհա-
մար. Ողջակէզների և մեղաց 6
համար պոպոքոփոխութիւն չհաճե-
ցար։ Այն ժամանակ ասացի 7
թէ Այսհա գալիս եմ, գրքի
գլխումն գրուած է ինձ համար
քո կամքն անելու, ով Աս-
տուած։ Այ երևումն ասելով 8
թէ զոհի և պատարագի և ող-
ջակէզների և մեղաց համար
պոպոքոփոխութիւն չկամեցար և չը-
հաճեցար նորանց, որոնք ըստ
օրինաց մատուցանվում են. Այն 9
ժամանակ ասում է. Այսհա գալիս
եմ քո կամքն անելու, ով
Աստուած, առաջինը դէն է
գցում որ երկրորդը հաստատէ։
Որ այն կամքովը մենք սրբուե- 10
ցանք մէկ անգամ Յիսուսի
Քրիստոսի մարմնոյ պատարա-
գովը։

Եւ ամեն քահանայապետ ա- 11
մեն օր կանգնած պաշտօն է
կատարում. և նոյն պատարագ-
ներն է մատուցանում շատ ան-
գամ, որ երբէք չեն կարող
մեղքեր վեր առնել։ Բայց սա 12

մեղաց մատոյց պատարագ. և
մշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ
13 Աստուծոյ։ Եւ այսուհետև
ակն ունի՝ մինչև դիցին թշնամիք
իւր ի ներքոյ ոտից իւրոց։
14 Քանզի միով պատարագաւ
կատարեաց զսրբեալսն ի մշտ-
նջենաւորս։

15 Այլ վկայէ մեզ և Հոգին
Սուրբ յետ ասելոյն յառա-
16 ջագոյն. Եթէ Այս է ուխտն՝
զոր եդից *ընդ հարս նոցա՝
յետ աւուրցն այնոցիկ, ասէ
Տէր. տաց զօրէնս իմ ի
սիրտս նոցա, և ի խորհուրդս
17 նոցա գրեցից զնոսա։ Այսպէս ասէ՝
թէ Զմեղս նոցա և զանօրէնու-
թիւնս նոցա այլ ոչ ևս յիշեցից։
18 Իսկ ուր թողութիւն է, ոչ ևս
պիտոյ է վասն մեղաց պատարագ։

19 Ունիմք այսուհետև եղբարք՝
համարձակութիւն ի մուտս
սրբութեանցն արեամբն Յի-
20 սուսի. Զոր նորոգեաց մեզ
ճանապարհ նորոգ և կենդանի ի
ձեռն վարագուրին, այսինքն է՝
21 մարմնոյ իւրոյ. Եւ քահանայ
մեծ ի վերայ տանն Աստուծոյ.
22 Մատիցուք ճշմարիտ սրտիւք՝
լրութեամբ հաւատոց, լու-
ացեալ զսիրտս ի խղճէ չարեաց՝
և մկրտեալ զմարմին ի ջուրն

մեղաց համար մէկ պատարագ
մատուցանելով մշտնջենաւո-
րապէս նստեց Աստուծոյ աջ
կողմը։ Եւ այսուհետև սպա- 13
սում է մինչև որ իր բոլոր
թշնամիներն իր ոտաց պատ-
ւանդանը դրուին։ Այսն զի 14
մէկ պատարագով յաւիտեան
կատարեց սրբուողներին։

Բայց Սուրբ Հոգին էլ վկա- 15
յում է մեզ այն առաջուց
ասելովը. Թէ Այս է այն ուխտն 16
որ կ'դնեմ նորանց հետ այն
օրերից յետոյ, ասում է Տէրը,
կ'տամ իմ օրէնքները նորանց
սրտերի մէջ, և նորանց խոր-
հուրդների վերայ կը գրեմ
նորանց։ Եւ ապա կ'ասէ. Նո- 17
րանց մեղքերը և նորանց անօ-
րէնութիւններն էլ չեմ յիշիլ։
Բայց որ տեղ որ սորանց թող- 18
ութիւնը կայ, այն տեղ էլ
մեղքի համար պատարագ պէտք
չէ։

Արդ, եղբայրք, որովհետև 19
համարձակութիւն ունինք սրբ-
բարանը մտնելու Յիսուսի ա-
րիւնովը, Որն որ նորոգեց մեզ 20
համար նոր և կենդանի ճանա-
պարհ վարագուրի միջովն, այս-
ինքն իր մարմնովը, Եւ մի մեծ 21
քահանայ Աստուծոյ տան վե-
րայ. Այս թող մտնենանք նո- 22
րան ճշմարիտ սրտով, հաւատքի
լրութեամբ, Տէր սրտերը մաք-
րուած չար խղճմտանքից, և

* Ի Յոյն չէ։

23 սրբութեան։ Պինդ կալցուք ըզ-
խոստովանութիւն անշարժ յու-
սոյն, զի հաւատարիմ է որ
24 խոստացաւն։ Եւ զգուշացուք
միմեանց յորդորմամբք սիրոյ և
25 գործոց բարեաց. Եւ մի
թողցուք զժողովս միմեանց,
որպէս և սովոր են ունանք. այլ
մխիթարեսցուք, և այնչափ ևս
առաւել՝ որչափ տեսանիցէք
զօրն մերձեալ։

26 Այլ կամակար մտօք եթէ
յանցանիցեմք յետ ընդունելու-
թեան գիտութեան ճշմարտու-
թեանն՝ այնուհետև ոչ ևս
պիտոյ է վասն մեղաց պատարագ.
27 Այլ ահեղ ակնկալութիւն դա-
տաստանին, և նախանձ հրոյն՝
որ ուտիցէ զհակառակորդսն։
28 Երհամարհեալ ուրուք զօրէնսն
Այ՝ոմսիսի, առանց ողորմու-
թեանց՝ առ երկուք կամ երիւք
29 վկայիւք մեռանէր. Իսկ որչափ
սաստիկ պատժոց արժանի հա-
մարիցիք զայն, որ զՈրդին Աս-
տուծոյ առ ոտն եհար. և
զարիւն նորոյ ուխտին խառնակ
համարեցաւ որով և սրբեցաւն.
և զՀոգին շնորհաց թշնա-
30 մանեաց։ Այլ գիտեմք զայն՝ որ
ասայն. Իմ են վրէժխնդրու-
թիւնք, և ես հատուցից՝ ասէ
Տէր. և դարձեալ՝ թէ Դատի
31 Տէր զժողովուրդ իւր։ Այհ մեծ
է անկանել ՝ի ձեռս Աստուծոյ
կենդանւոյ։

մեր մարմինը մկրտուած սուրբ
ջրով. Պինդ բռնենք յուսոյ 23
դաւանութիւնն՝ անսայթաք.
վասն զի հաւատարիմ է խոս-
տացողը։ Եւ զգուշանանք 24
իրար համար՝ դէպի սէր և բարի
գործքեր գրգռելով. Եւ չթո- 25
ղնենք մեր իրար հետ ժողովուիլը,
ինչպէս ոմանց սովորութիւն է.
բայց ՝էրաբ յորդորենք, և այն-
քան աւելի՝ որքան տեսնում էք
որ օրը մօտեցած է։

Այսն զի եթէ մենք ճշմար- 26
տութեան գիտութիւնն ընդու-
նելուց յետոյ յօժար կամքով
մեղք գործենք, այլ ևս նորանից
յետոյ մեղաց համար զոհ չէ
մնում, Այլ դատաստանի ա- 27
հաւոր սպասելը, և կրակի զայ-
րոյթը որ հակառակողներին
կ՝լափէ։ Այ՝էկն, որ Այ՝օսէսի 28
օրէնքն անարգում էր, առանց
ողորմութեան երկու կամ երեք
վկայի խօսքով մեռնում էր։ Այլ 29
որքան աւելի, կարծում էք,
սաստիկ պատժոյ կարժանանայ,
նա որ Աստուծոյ Որդոյն ոտքի
տակ կոխեց, և նոր ուխտի ա-
րիւնը պիղծ համարեց որով նա
սրբուեցաւ, և շնորհաց Հո-
գուն նախատեց։ Այսն զի 30
գիտենք նորան որ ասաց. Իմն
է վրէժխնդրութիւնն, ես հա-
տուցումը կ՝տամ, ասում է
Տէրը. և դարձեալ, Ինքն Տէրը
կ՝դատէ իր ժողովրդին։ Սար- 31
սափելի բան է կենդանի Աս-
տուծոյ ձեռքն ընկնիլը։

32 Արդ՝ յիշեցէք զաւուրսն
զառաջինս. յորս լուսաւորեալք
բազում ճգանց և չարչարանաց
33 համբերէք. Այ՝երթ՝ ի նախա-
տինս և ՝ի նեղութիւնս խայ-
տառակեալք, մերթ կցորդք
այնպիսեաց վաստակաւորացն
34 լինել։ Այանզի և ընդ կապեալս
չարչարեցարուք, և զյափշտա-
կութիւն ընչից ձերոց խնդու-
թեամբ ընկալարուք. քանզի
գիտէիք թէ լաւագոյն ևս ստա-
ցուածս ունիք անձանց յերկինս՝
35 ուր կանն և մնան։ Արդ մի
մերժէք ՝ի ձէնջ զհամարձակու-
թիւնն ձեր, յորում կայ մեծաց
36 վարձուց հատուցումն։ Պիտոյ
է ձեզ համբերութիւն. զի
զկամն Աստուծոյ արարեալ՝
37 հասջիք աւետեացն։ Այ՝ի փոքր
միւս ևս քան որչափ՝ որ գալոցն
իցէ՝ եկեսցէ, և ոչ յամեսցէ։
38 Այ՝ի արդարն *իմ՝ ՝ի հաւատոց
կեցցէ. և եթէ յերկմիտս որ
իցէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն
39 իմ։ Այայ մեք ոչ եթէ երկմտու-
թեամբ եմք ՝ի կորուստ, այլ
հաւատովք ՝ի փրկութիւն հոգ-
ւոց։

ԳԼ. ԺԱ.

1 Այ՝ինչ են հաւատք, եթէ
ոչ՝ յուսացեալոց իրաց հաստա-

Արդ յիշեցէք առաջին օրերը, 32
որ դուք լուսաւորուելուց յե-
տոյ և շատ չարչարանքների
պատերազմին համբերեցիք։ Եր- 33
բեմն նախատինքների և նեղու-
թիւնների մէջ խայտառակուե-
ցաք, և երբեմն էլ այն-
պիսի վիճակում լինողների հետ
մտնակից եղաք։ Այ՝ասն զի 34
իմ կապանքների հետ էլ
չարչարուեցաք, և ձեր ապ-
րանքների յափշտակութիւնն էլ
ուրախութիւնով ընդունեցիք.
գիտենալով որ ձեր անձների
համար աւելի լաւ և մնայուն
ստացուածք ունիք երկնքումն։
Ուրեմն զէն մի գցէք ձեր 35
վստահութիւնը, որ մեծ վարձքի
հատուցումն ունի։ Այ՝ասն զի 36
համբերութիւն է պէտք ձեզ,
որ Աստուծոյ կամքն անելով
աւետիքն ստանաք։ Որովհետև 37
միայն մի քիչ ժամանակ էլ, և
նա որ գալու է՝ կ՝գայ և չի
ուշանալ։ Այայ արդարը հա- 38
ւատքից կ՝ապրի. և եթէ մէկը
ետ քաշուի, իմ անձը նորան չի
հաւանիլ։ Այայ մենք ետ քաշ- 39
ուողներիցը չենք որ կորչինք.
այլ հաւատքիցն ենք որ մեր
հոգիները փրկուին։

ԳԼ. ԺԱ.

1 Հաւատքն էլ յուսացած բա-
ների հաստատութիւնը՝ և չե-

* ՝Ի Յ«ԻՆ ԷՒ։

տութիւն, և յանդիմանութիւն՝
2 որոց ոչն երևին։ Զի նովաւ
վկայեցան առաջինքն։

3 Հաւատովք իմանամք հաս-
տատեալ զյաւիտեանն բանիւ
Աստուծոյ, յանհերևութից զե-
րևելիսս եղեալ։

4 Հաւատովք լաւ պատարագս
Հաբէլ քան զԿայէն մատու-
ցանէր Աստուծոյ, որով վկայե-
ցաւ իսկ արդար լինել. զի ՝ի
վերայ պատարագացն եղև նմա
վկայութիւն յԱստուծոյ. զի
թէպէտ և մեռաւ ՝ի նմին,
սակայն տակաւին խօսի։

5 Հաւատովք Ենովք փոխեցաւ՝
զի մի զմահ ճաշակեսցէ. և ոչ
ուրեք գտանէր, քանզի փոխեաց
զնա Աստուած. և յառաջ քան
զփոխելն նորա՝ վկայեցաւ հաճոյ
6 լինել Աստուծոյ։ Բայց առանց
հաւատոց անհնար է հաճոյ
լինել. այլ հաւատալ արժան է
այնմ որ մերձենայ առ Ա-
ստուած՝ թէ է Աստուած. և որ
խնդրեն զնա՝ լինի պարգևատու։

7 Հաւատովք առեալ Հրաման
Նոյի՝ վասն չև ևս երևելեացն
զահի հարեալ կազմէր զտապանն
՝ի փրկութիւն տան իւրոյ, որով
դատեցաւն զաշխարհ. և հաւա-
տոցն արդարութեան եղև ժա-
ռանգաւոր։

8 Հաւատովք՝ որ Աբրահամն
կոչեցաւ՝ ունկնդիր եղև ելա-
ելեցող բանների ապացոյցն է։
Ա՝ասն զի նորանով առաջինն-
երը վկայութիւն ընդունեցին։

2

Հաւատքով ենք իմանում, 3
որ աշխարհներն Աստուծոյ
խօսքովը հաստատուեցան, որ
չերևողներից այս տեսնուող-
ներս եղած են։

Հաւատքով Հաբէլ Կայէնից 4
աւելի լաւ պատարագ մատոյց
Աստուծոյն, որով վկայութիւն
ընդունեց թէ արդար է, երբոր
Աստուած նորա պատարագների
վերայ վկայութիւն տուաւ. որ
նորանով տակաւին հիմա էլ
խօսում է թէպէտ և մեռել է։

Հաւատքով Ենոք փոխուե- 5
ցաւ որ մահ չտեսնէ. և չէր
գտնվում. վասն զի Աստուած
փոխեց նորան. վասն զի իրանց
փոխուելուցն առաջ վկայուե-
ցաւ որ հաճելի էր Աստուծոյն։
Բայց առանց հաւատքի անկա- 6
րելի է հաճոյ լինիլ. վասն զի
Աստուծոյն մօտեցողը պէտք է
հաւատայ, թէ նա կայ, և թէ
իրան խնդրողներին վարձահա-
տոյց կ՝լինի։

Հաւատքով Նոյ պատգամ 7
առնելով գևս չերևած բաների
համար և երկիւղած լինելով
շինեց տապանը իր տան փրկու-
թեան համար, որով աշխարհ-
քիս դատապարտեց. և հաւատ-
քով լինող արդարութեանը ժա-
ռանգ եղաւ։

Հաւատքով Աբրահամ երբոր 8
կանչուեցաւ հնազանդ եղաւ

նել ՝ի տեղին, զոր առնլոց էր
՝ի ժառանգութիւն. ելգնաց՝ և
9 ոչ գիտէր յով երթիցէ։ Հաւա-
տովք պանդխտեցաւ յերկրին
աւետեաց իբրև յօտարութեան.
խորանօք բնակեաց Իսահակաւ և
Յակոբաւ հանդերձ՝ ժառան-
10 գակցօք նոցին աւետեաց։ Որան-
զի ակն ունէր հիմամբք հաստա-
տելոյ քաղաքին, որոյ ճար-
տարապետ և արարիչ Ա-
ստուած է։

11 Հաւատովք և ինքն Սառա՝ որ
ամուլն էր, զօրութիւն առնլոյ
զսերմն որդեծնութեան՝ ընդու-
նէր, և ՝ի տարաժամ հասակի
ծնանէր. քանզի հաւատարիմ
համարեցաւ զայն՝ որ խոստա-
12 ցաւն։ Ա՝ասն որոյ և ՝ի միոջէ
ծնանէին, և այն՝ ՝ի յանցեալ
ժամանակի, իբրև զաստեղս
երկնից բազմութեամբ, և իբ-
րև զաւազ առ ափն ծովու
առանց թուոյ։

13 Ըստ հաւատոց մեռան ամե-
նեքին սոքա, և չև ևս ընկալեալ
զաւետիսն. այլ ՝ի հեռուստ
տեսին զնոսա՝ և ցնծացան, և
խոստովան եղեն՝ եթէ օտարք և
14 պանդուխտք են յերկրի։ Զի
որք զայնպիսին խօսին, յայտ
առնեն՝ եթէ գաւառ իմն խնդ-
15 ռին։ Զի եթէ զայն յիշէին
ուստի ելինն, գոյր ժամանակ
16 դառնալոյ անդրէն։ Նա աւանիկ
աղնուականի իմն ցանկացեալ

դուրս գնալու այն տեղ, որ
ժառանգութեան համար ստա-
նալու էր. և դուրս եկաւ գնաց
առանց գիտենալու թէ ուր է
գնում։ Հաւատքով պանդուխտ 9
եղաւ աւետիքի երկրումն իբր
օտարութիւնում. խորաններում
բնակելով Իսահակի և Յակոբի
հետ, որ նոյն աւետիքի ժառան-
գակիցներն էին։ Ա՝ասն զի 10
սպասում էր այն հիմունքով
հաստատուած քաղաքին, որի
ճարտարապետն և արարիչն
Աստուած է։

Հաւատքով Սառան ինքն էլ 11
սերմն առնելու զօրութիւն ըն-
դունեց. և տարաժամ հասակի
մէջ որդի ծնեց. վասն զի հա-
ւատարիմ համարեց խոստա-
ցողին։ Որա համար և այն 12
մեկիցն, այն էլ այն մեռած
պրծածիցը՝ շատութեամբ ծըն-
վում էին, ինչպէս երկնքի
աստղերն և ինչպէս անհամար
աւազը ծովի ափի մօտ։

Սորանք ամենքը մեռան հա- 13
ւատքի մէջ. առանց աւետիքներն
ստանալու, այլ հեռուանց
տեսնում էին նորանց և ուրա-
խանում. և բարևում էին և
գաւանում, թէ օտարներ և
պանդուխտներ են երկրումը։
Ա՝ասն զի այնպիսի բաներ խօ- 14
սողները յայտնի ցոյց են տալիս,
որ մի հայրենիք են որոնում։
Եւ եթէ այն էին յիշում որից 15
դուրս եկան, ապաքէն ժա-

են, այսինքն է՝ երկնաւորին. վասն որոյ ոչ ամօթ համարի Աստուած՝ կոչել նոցա Աստուած. քանզի պատրաստեաց նոցա քաղաք:

17 Հաւատովք մատոյց Աբրահամ՝ ի փորձութեան իւրում զԻսահակ պատարագ. և զմիամօրն մատուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր. Որում
18 ասացաւն, թէ ՅԻսահակաւ կոչեսցի քեզ զաւակ. Եդ ի մտի
19 իւրում, թէ և ի մեռելոց կարող է յարուցանել Աստուած. ուստի և յառակս ընկալաւ զնա:
20 Հաւատովք՝ վասն հանդերձելոց իրաց օրհնեաց Իսահակ
21 զՅակովբ և զԵսաւ: Հաւատովք Յակովբ՝ ի մեռանել իւրում՝ զիւրաքանչիւրոք յորդւոցն Յովսեփու օրհնեաց, և երկիր եպագ՝ ի ծագ գաւազանի
22 իւրոյ: Հաւատովք Յովսէփ՝ ի վախճանել իւրում՝ յիշեաց զելս որդւոցն Իսրայէլի, և վասն ոսկերաց իւրոց պատուիրեաց:

23 Հաւատովք՝ Մովսէս իբրև ծնաւ, թաքուցաւ ամիս երիս՝ ի հարց իւրոց, քանզի տեսին կայտառ զմանուկն, և ոչ զանգիտեցին՝ ի հրամանէ թագաւորին:
24 Հաւատովք Մովսէս իբրև աճեաց՝ ուրացաւ կոչել որդի
25 դստերն Փարաւոնի. Լաւ համանակ ունէին ետ դառնալու:
Քայց հիմա աւելի աղուին են 16
ցանկանում, այսինքն երկնաւորին. և նորա համար Աստուած ամօթ չէ համարում՝ նորանց Աստուած կոչուիլ. վասն զի մի քաղաք է պատրաստել նորանց համար:

17 Հաւատքով Աբրահամ Իսահակին պոռոգեալ մատոյց երբոր փորձուեցաւ. և միածնին մատուցանում էր նա որ աւետիքն ընդունել էր, Որ ասուեցաւ թէ Իսահակով քեզ զաւակ
18 կ'կոչուի: Մտածելով թէ Աստուած կարող է մեռելներից էլ յարուցանել. ուստի օրինակի համար էլ ընդունեց նորան:

20 Հաւատքով Իսահակ Յակոբին և Եսաւին օրհնեց հանդերձեալ բաների մասին: Հաւատքով Յակոբը մեռնելիս Յոսէփի որդկանց ամէն մէկին օրհնեց, և իր գաւազանի ծայրի վերայ երկրպագութիւն արաւ:
22 Հաւատքով Յոսէփ վախճանելիս յիշեց Իսրայէլի որդոց դուրս գնալու մասին, և իր ոսկրների համար հրաման տուաւ:

23 Հաւատքով Մօսէս երբոր ծնուաւ՝ երեք ամիս թաքուն պահուեցաւ իր ծնողիցը. վասն զի տեսան թէ մանուկը գեղեցիկ էր, և չվախեցան թագաւորի հրամանից:
24 Հաւատքով Մօսէս երբոր մեծացաւ՝ չկամեցաւ փարաւոնի աղջկան որդի

մարեցաւ հարձարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի վայելել՝ ի մեղս:
26 Կարեւոր համարեցաւ զնախատինսն Քրիստոսի, քան զմեծութիւն գանձուցն Եգիպտացւոց. զի հայեցեալ ակն ունէր
27 վարձուցն հատուցման: Հաւատովք թողցեր զերկիրն Եգիպտացւոց, և ոչ երկնչէր՝ ի ցասմանէ թագաւորին. զի զաներևոյթսն իբրև զտեսեալ համբերութեամբ համարեցաւ:
28 Հաւատովք արար զզատիկն և զհեղումն արեանն. զի մի սատակիչ անդրանկացն մերձենայցէ՝ ի նոսա:

29 Հաւատովք անցին ընդ ծովն Կարմիր՝ իբրև ընդ ցամաք երկիր. զորոյ զփորձ առեալ Եգիպտացւոցն՝ ընկղմեցան:
30 Հաւատովք պարիսպքն Երիքովի անկան, շուրջ եկեալ զնոքօք զեօթն օր:

31 Հաւատովք Բախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն, որոյ ընկալեալ էր զլրտեսսն խաղաղութեամբ:
32 Եւ արդ՝ զի՞նչ ևս ասացից. զի չէ բաւական ժամանակս պատմելոյ, վասն Գեդեոնի, Բարակայ, Սամիսոնի, Յեփթայայ՝ Դաւթի և Սամուէլի և
33 այլոց մարգարէից. Որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս. գործեցին զարդարու-

կոչուիլ: Աւելի լաւ համարեց Աստուծոյ ժողովրդի հետ չարչարուիլ, քան թէ մի առ ժամանակ մեղքի զուարճութիւնն ունենալ, Աւելի մեծ հարստու- 26
թիւն համարելով Քրիստոսի նախատինքը Եգիպտացոց հարուստ գանձերից. վասն զի աչք դրած մտիկ էր տալիս վարձքի հատուցմանը: Հաւատքով թող- 27
ցեց նա Եգիպտոսը չվախենալով թագաւորի բարկութիւնից. վասն զի Անտեսանելուն տեսնողի պէս պինդ բռնել էր: Հա- 28
ւատքով արաւ զատիկը և արիւնի հեղումը. որ առաջինների սատակիչը չմտնեայ նորանց:

Հաւատքով անցան Կարմիր 29
ծովովն ինչպէս ցամաքով. որի փորձն Եգիպտացիներն անելիս խեղդուեցան:

Հաւատքով Երիքովի պա- 30
րիսպները վայր ընկան, երբոր եօթն օր նորա շուրջը պըտտեցին:

Հաւատքով Բախաբ պոռնիկը 31
չկորաւ անհաւատների հետ, որ լրտեսներին ընդունել էր խաղաղութիւնով:

Եւ էլ ի՞նչ ասեմ. վասն զի 32
ժամանակս բաւական չէ որ պատմեմ Գեդէոնի, Բարակի, Սամիսոնի, Յեփթայի, Դաւթի և Սամուէլի և ուրիշ մարգարէների համար, Որոնք հա- 33
ւատքով թագաւորութիւններ յաղթեցին, արդարութիւն

թիւն. Հասին առեստաց. խցին
34 զբերանս առիւծուց. Հ՚իջուցին
զզօրութիւն հրոյ. ապրեցան 'ի
բերանոյ սրոյ. զօրացան 'ի
տկարութենէ. եղեն զօրաւորք
'ի պատերազմի. առին զբանակս
35 օտարաց: Ի՚նկալան կանայք 'ի
յարութենէ զմեռեալս իւրեանց.
կէսք կոշկոճեցան՝ և չև ևս
ընկալեալ զփրկութիւն, զի լա-
ւագոյն յարութեան հասանի-
36 ցեն: Եւ կէսք զտանջանաց և
զգանից զփորձ առին, զկապա-
37 նաց և զբանտից: Ի՚արկոծե-
ցան, սղոցեցան, փորձեցան,
սպանմամբ սրոյ մեռան. շրջեցան
(լեռաշկամաշկօք) և մորթովք
այծենեօք. կարօտեալք, նե-
38 ղեալք, չարչարեալք. Զ՚որս
ոչ արժէ աշխարհս. յանապատի
մոլորեալք՝ և 'ի լերինս՝ և
յայրս՝ և 'ի փապարս երկրի:

39 Եւ սորա ամենեքին վկայեալք
'ի հաւատոցն, չև ևս ընկալան
40 զաւետիսն: Ա՚ստուծոյ վասն
մեր լաւագոյն համարեալ, զի
մի առանց մեր կատարեսցին:

ԳԼ. ԺԲ

1 Ա՚յսուհետև և մեք՝ որ այս-
չափ շուրջ զմեօք մածեալ ունիմք
գործեցին. աւետիքներ ստացան,
առիւծներուն բերաններ խցկեցին.
Կրակի զօրութիւն անցրին. սրի 34
բերանից պրծան. տկարութիւ-
նից զօրացան. պատերազմի մէջ
զօրաւոր եղան. օտարների բա-
նակներն առին: Կանայք իրանց 35
մեռելներն ընդունեցին յարու-
թիւնից. ուրիշներն էլ խիստ
չարչարուեցան աղատութիւնը
չընդունելով, որ լաւագոյն յա-
րութեան հասնեն: Մ՚իւսներն 36
էլ նախատինքների և ծեծերի,
կապանքների և բանտի դիմա-
ցան. Ի՚արկոծուեցան. սղոց- 37
ուեցան, փորձանքի մէջ ընկան,
սրով սպանուած մեռան. ոչխա-
րի մորթերով և այծի կաշինե-
րով ման եկան. կարօտութիւն
քաշելով, նեղացած, չարչա-
ռուած. Որ աշխարհը նորանց 38
արժանի չէր. անապատներում
մոլորուեցան և լեռներում և
այրերում և երկրի խառուշներում:
Եւ սորանք ամենը հաւատ- 39
քով վկայութիւն առին, բայց
աւետիքը չընդունեցին. Որով- 40
հետև Ա՚ստուած մեզ համար
աւելի լաւ բան նախապատրաստեց, որ նոքանց առանց մեզ
չկատարուին:

ԳԼ. ԺԴ

1 Ուստի մենք էլ որ վկաների 1
այսքան * բազմութիւն ունինք

* ամպ

զբազմութիւն վկայից, *զհպար-
տութիւն զամենայն 'ի բաց
ընկեսցուք՝ և զմեզ կարևորս.
համբերութեամբ ընթացցուք
'ի պատերազմ՝ որ առաջի կայ
2 մեզ. Հայեսցուք 'ի զօրագլուխն
հաւատոց՝ և 'ի կատարիչն Յի-
սուս. որ փոխանակ ուրախու-
թեանն՝ որ նմա առաջի կայր,
յանձն առ զխաչն, արհամար-
հեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ
աթոռոյն Ա՚ստուծոյ:

3 Ա՚ղէ՝ ածէք զմտաւ, որ զայս-
պիսի համբերութիւն 'ի մեղա-
ւորաց հակառակութենէ անտի
կրեաց. զի մի աշխատ լինի-
ցիք անձամբք ձերովք՝ և լքանի-
4 ցիք: Զ՚ի չև ևս արեամբ չափ
պատերազմեալք՝ հակառակ կա-
5 ցէք մեղացն. Եւ մոռացարուք
զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ
իբրև ընդ որդեակս խօսի:

Որդեակ իմ՝ մի լքանիր 'ի
խրատու Տեառն, և մի վհատի-
ցիս՝ յանդիմանեալ 'ի նմանէ:
6 Զ՚ի զոր սիրէ Տէր՝ խրատէ,
տանջէ զամենայն որդի՝ զոր
7 ընդունի: 'Ի խրատու համբե-
րութեան կայք, իբրև յորդիս
մատուցեալ է 'ի ձեզ Ա՚ստուած.
ո՞ր որդի է՝ զոր ոչ խրատիցէ
մեզ շրջապատած, դէն գցենք
ամեն ծանրութիւն, և մեղ-
դիւրաւ պաշարող մեղքը. և
համբերութեամբ վազենք մեր
առջև դրած պատերազմի ըն-
թացքը. Ա՚տիկ տանք հա- 2
ւատքի զօրագլուխին և կատա-
րող Յիսուսին, որ իր առջև
դրուած ուրախութեան փոխա-
նակ խաչը յանձն առաւ, և
ամօթն արհամարհելով՝ Ա՚ս-
տուծոյ աթոռի աջ կողմը
նստեց.
Ուրեմն մտածեցէք նորա վե- 3
րայ, որ իրան դէմ Էղած այս-
պիսի հակառակութիւն քաշեց
մեղաւորներից, որ դուք ձեր
անձներովը չյոգնիք թուլացած:
Տակաւին մինչև արիւն ԷռՓէ- 4
ը՝ չափ պատերազմելով հա-
կառակ չէք կացած մեղքին. Եւ 5
մոռացաք այն մխիթարութիւնն
որ ձեզ հետ ինչպէս որդիների
հետ խօսում է. Իմ որդեակ,
մի անարգիր Տիրոջ խրատը. և
ոչ էլ սիրտդ կոտրուի նորա-
նից յանդիմանուած ժամանակդ:
Վասն զի Տէրը իրան սի- 6
րածին խրատում է. նա ծեծում
է ամեն որդի որ ընդունում է:
Եթէ խրատին համբերէք, 7
Ա՚ստուած ձեզ հետ ինչպէս
որդոց հետ կ՚վարուի. վասն զի
ո՞ր որդին է որ հայրը նորան
չէ խրատում: Բայց եթէ ա- 8
ռանց խրատի էք, որին ամենքը

* 'Ի Յոյն., զծանրութիւն

8 Հայր: Օ՛յ եթէ առանց խրատու
լինիցիք, որով ամենեքին բա-
ժանորդք եղեն, ապա խորթք
9 իցէք և ոչ որդիք: Օ՛յ եթէ 'ի
մարմնաւոր Հարցն մերոց՝ զոր
ունիմք խրատիչս՝ պատկառեմք,
ո՞րչափ ևս առաւել Հնազան-
դեսցուք Հօրն Հոգւոց՝ և
10 կեցցուք: Օ՛յ սոքա առ սակաւ
ժամանակս ըստ կամաց իւրեանց
խրատեն. իսկ նա վասն օգտի,
առ 'ի բնդունելոյ զսրբութիւն
11 նորա: Մ՛ենայն խրատ առ ժա-
մանակն ոչ ուրախութեան թուի՝
այլ տրտմութեան. բայց յետոյ
պտուղ խաղաղութեան նոփաւ
կրթելոցն հատուցանէ յարդա-
րութիւն:
12 Վասն որոյ զձեռս լքեալս՝ և
ծնունկս կիսոտս հաստատեցէք.
13 Եւ զշաւիղս ուղիղս արարէք
ոտից ձերոց, զի մի՞ որ կաղն ի՛ցէ՝
գլորիցի, այլ մանաւանդ բժշշ-
14 կեսցի: Օ՛խաղաղութեան զհետ
երթայ՛ք ընդ ամենեսին՝ և զսրբ-
բութեան. առանց որոյ ոչո՛ք
15 տեսանիցէ զՏէր: Օ՛գոյշ լե-
րուք՝ գուցէ ոք յետնեալ
գտանիցի 'ի շնորհացն Աստու-
ծոյ: Մ՛ի՞ ոք արմատ դառնու-
թեան 'ի վեր երևեալ նեղիցէ,
և նոփաւ բազումք պղծիցին:
16 Մ՛ի՞ ոք պոռնիկ և պիղծ իբրև
զԵսաւ. որ ընդ միոյ կերակրոյ
զանդրանկութիւնն վաճառ-
17 եաց: Գիտէք՝ զի թէպէտ և
յետոյ կամեցաւ ժառանգել
զօրհնութիւնն, խոտան գտաւ.
մատնակից եղան, ուրեմն խորթ
էք և ոչ որդիք. Եւ մենք 9
մեր մարմնաւոր հայրերը խրա-
տող ունենալով նոքանցից ա-
մաչում էինք. չէ՞ որ առաւել
ևս պիտի հնազանդինք հոգի-
ների Հօրն, և ապրինք: Վասն 10
սրն զի սորանք մի քիչ ժամա-
նակ իրանց հաճոյ երևացածի
պէս խրատում էին, բայց նա՝
օգտի համար, որ նորա սրբ-
բութիւնն ընդունինք: Եւ ա- 11
մեն խրատ հէնց նոյն ժամանակին
ուրախութիւն չէ երևում, այլ
տրտմութիւն. բայց յետոյ նո-
րանով վարժուածներին արդար
խաղաղութեան պտուղ է վը-
ճարում:
Որոնց համար հաստատե- 12
ցէք թուլացած ձեռները, և
ակարացած ծնկները. և ձեր 13
ոտների համար ուղիղ ճանա-
պարհներ շինեցէք, որ կաղը
չգլորուի, այլ մանաւանդ բը-
ժշկուի: Հետևեցէք խաղա- 14
ղութեան ամենքի հետ և սրբ-
բութեան, որ առանց նորան ոչ
ոք Տիրոջը չի տեսնիլ. Օգոյշ 15
կացէք, որ մէկը յետ մնացող
չլինի Աստուծոյ շնորհքից.
Որ մի դառն արմատ վեր չբ-
բուսնէ և նեղութիւն տայ, և
նորանով շատերը պղծուին: Որ 16
չլինի մէկը պոռնիկ և պիղծ
ինչպէս Եսաւը, որ մի կերա-
կուրի համար իր անդրանկու-
թիւնը ծախեց: Վասն զի 17
գիտէք որ թէև յետոյ կամեցաւ
զի ապաշխարութեան տեղի ոչ
եգիտ, թէպէտ և արտասուօք
խնդրեաց զնա:

18 Օ՛յ ոչ էր մատուցեալ առ
լեառն շօշափելի՝ որ հրովն
վառեալ էր՝ և միգով և մառա-
խլովով և խաւարաւ և մթով.
19 Ուր փողն հնչէր և բարբառ
պատգամացն. ուստի որք լուանն՝
հրաժարեցին, զի մի՛ կրկնեսցի
20 առ նոսա բանն: Դ՛անզի ոչ
հանդարտէին հրամանին. թէ-
պէտ և գազան մերձենայր 'ի
21 լեառն՝ քարկոծ լինէր: Եւ
այնպէս ահագին էր տեսիլն, զի
և Մ՛ովսէս ասէր, եթէ Օ՛ահի
22 հարեալ եմ և դողամ: Այլ
մատուցեալ էք 'ի Սիոն լեառն՝
և 'ի քաղաքն Աստուծոյ կենդան-
ւոյ՝ Յերուսաղէմ յերկինս, և
'ի բիւրաւոր բանակս հրեշտա-
23 կաց, Եւ յեկեղեցիս անդրան-
կաց գրելոց յերկինս, և առ
դատաւորն ամենեցուն Աստու-
ած, և յոգիս արդարոց կա-
24 տարելոց. Եւ 'ի նորոց կտա-
կարանաց միջնորդն Յիսուս, և
'ի հեղումն արեան նորա՝ որ
առաւել խօսի քան զ՝աբելն:

25 Օ՛գոյշ լերուք՝ գուցէ հրա-
ժարիցէք յայնմանէ՝ որ խօսե-
ցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին
զերծանել, հրաժարեալք յայն-
մանէ՝ որ յերկրին հրաման
օրհնութիւնը ժառանգել, Բայց
մերժուեցաւ. որովհետև ա-
պաշխարութեան տեղի չգտաւ,
թէև արտասուքով խնդրեց
նորան:
Վասն զի դուք չէք մատե- 18
ցել շօշափելի լեռան, որ կրա-
կով վառուած էր և այն մէգին
և խաւարին և մրրկին. Եւ 19
փողի հնչումին և խօսքերի
ձայնին, որից հրաժարուեցան
լսողները, որ խօսքը չշարու-
նակուի նորանց: Վասն զի 20
չէին դիմանում այն հրաման-
նին. և եթէ մի անասուն էլ
մօտենայ լեռան քարկոծուի կամ
նետով սպանուի. Եւ այնպէս 21
ահաւոր էր տեսիլքն, որ Մ՛օսէս
ասում էր, Ես զարհուրում
եմ և դողում: Այլ մօտեցել 22
էք Սիոն լեռան, և կենդանի
Աստուծոյ քաղաքին, երկնաւոր
Երուսաղէմին, և բիւրաւոր
հրեշտակներին, Եւ երկնքումն 23
գրուած անդրանիկների հանդէ-
սին և եկեղեցուն, և ամենքի
դատաւոր Աստուծոյն, և կա-
տարեալ արդարների հոգիներ-
ին. Եւ նոր կտակարանի միջ- 24
նորդ՝ Յիսուսին. և այն արեան
հեղմանը որ աւելի լաւ է խօ-
սում՝ քան թէ՝աբելի ա-
բիւնը:
Օ՛գոյշ կացէք որ չմերժէք 25
նորան որ խօսեց. վասն զի եթէ
չկարողացան պրծնել երկրիս
վերայ պատգամ տուողին մեր-
ժողները, որքան աւելի ապա

տայր, որչափ ևս առաւել մեք,
եթէ յերկնաւորէն թիկունս
26 դարձուցանիցեմք։ Որոյ ձայնն
զերկիր շարժեաց յայնժամ, և
այժմ խոստացեալ է՝ և ասէ.
Մի՛ւսանգամ շարժեցից ոչ
միայն զերկիր՝ այլ և զերկինս։
27 Բայլ միւսանգամն յայտ առնէ
զշարժելոցն՝ իբրև զեղելոց փո-
փոխումն, զի հաստատուն կաց-
28 ցեն անշարժքն։ Վասն որոյ
թագաւորութիւն անշարժ ընդ-
կալեալ, պինդ կալցուք ըզ-
շնորհսն որով պաշտեմք զԱս-
տուած հաճութեամբ՝ ահիւ և
29 դողութեամբ. Քանզի Աստու-
ած մեր հուր ծախիչ է։

ԳԼ. ԺԳ.

1 Եղբայրսիրութիւն հաստա-
2 տեսցի՛ առ ձեզ։ Օտարսիրու-
թիւն մի՛ մոռանայք. զի այնու
ոմանք յանգէտս ընկալան ըզ-
3 հրեշտակս։ Յի՛շ լեցին ձեզ
կապեալքն՝ որպէս թէ դուք
ընդ նոսա կապեալ լցէք. և
չարչարեալքն, որպէս և դուք
4 իսկ մարմնաւոր էք. Պատուա-
կան է ամուսնութիւն ամենեքին՝
և սուրբ անկողինք. բայց զշունս
և զպոռնիկս դատի Աստուած։
5 Բարք անարծաթասէրք լինի-
ցին, բաւական համարել որչափ
ինչ՝ ի ձեռս իցէ. քանզի ինքն
իսկ ասաց. Ո՛չ թողից զքեզ՝ և
6 ո՛չ ընդ վայր հարից. Որպէս

մենք, եթէ երկնքից խօսողին
մերժենք։ Որի ձայնն այն ժա- 26
մանակ երկիրը շարժեց. և հի-
մա խոստացել է և ասում է.
Թէ Մի՛ւսանգամ ևս կ՚շարժեմ,
ոչ միայն երկիրը, բայց երկինքն
էլ։ Բայց այն Մի՛ւսանգամը 27
ցոյց է տալիս որ շարժուող
բաներն իբրև եղածներ պիտի
փոխուին, որ հաստատ մնան
չշարժուողները։ Ուստի ան- 28
շարժ թագաւորութիւն ընդու-
նած լինելով, պինդ բռնենք
այն շնորհքն որով պաշտում
ենք հաճութեամբ Աստուծոյն,
ահով և երկիւղածութեամբ։
Վասն զի մեր Աստուածն փը-
ջացնող կրակ է։

ԳԼ. ԺԳ.

Եղբայրսիրութիւնը հաստատ 1
մնայ. Հիւրասիրութիւնը մի 2
մոռնաք. վասն զի նորանով
ոմանք առանց գիտենալու հրեշ-
տակներ ընդունեցին։ Յիշե- 3
ցէք կապեալներին իբր մասին
կապուածներ. Չարչարանք-
ներին ինչպէս դուք էլ մարմ-
նում լինողներ էք։ Ամուսնու- 4
թիւնը ամեն կողմանէ պատուա-
կան է և անկողինը սուրբ. բայց
շնացողներին և պոռնիկներին
Աստուած կ՚դատէ։ Վարքն 5
առանց արծաթասիրութեան լի-
նի. բաւական համարեցէք այն
որ ձեռներումդ ունիք. վասն զի
ինքն ասաց, թէ չեմ թողել

համարձակ լիցուք ասել Տէր է
իմ՝ օգնական, և ես ոչ երկեայց,
7 զի՞ արասցէ ինձ մարդ։ Յիշե-
ցէք զառաջնորդս ձեր որ խօ-
սեցան ձեզ զբանն Աստուծոյ.
հայեցեալք յելս գնացից նոցա՝
նմանօրք եղերուք հաւատոցն։
8 Յիսուս Քրիստոս երէկ և
այսօր, նոյն և յաւիտեանս։

9 Յուսմունս պէսպէսս և յօտա-
բաձայնս մի՛ դանդաչէք. զի լաւ
է շնորհօք հաստատել զսիրտս՝
և ոչ կերակրովք. որովք ոչինչ
օգտեցան՝ որ այնպէսն գնացին։

10 Ունիմք մեք սեղան, ուստի
ոչ ունին իշխանութիւն ճաշակել
որք պաշտեն զպաշտօն խորա-
11 նին։ Զի որոց անասնոց մատչէր
արիւնն՝ ի սրբութիւնսն վասն
մեղաց՝ ի ձեռն քահանայա-
պետին, նոցուն մարմինքն այրէին
12 արտաքոյ բանակին։ Վասն
որոյ և Յիսուս՝ զի սրբեսցէ
իւրով արեամբն զժողովուրդն,
արտաքոյ դրանն չարչարեցաւ։
13 Արդ՝ եկայք ելցուք առ նա
արտաքոյ բանակին, առեալ
յանձն զնախատինս նորա։
14 Քանզի ոչ եթէ ունիմք քաղաք՝
որ աստէն մնալոց իցէ, այլ
15 զհանդերձեալսն խնդրեմք։ Արդ՝
՝ի ձեռն նորա մատուցցուք պա-
տարագ օրհնութեան յամենայն
ժամ Աստուծոյ. այսինքն է՝

քեզ և երեսից չեմ գցել։
Այնպէս որ համարձակ ենք 6
ասելու. Տէրն է իմ՝ օգնականը,
և չեմ վախենալ, ի՞նչ կանէ
ինձ մարդը։ Յիշեցէք ձեր ա- 7
ռաջնորդներին որ Աստուծոյ
բանը խօսեցին ձեզ. նայեցէք
նորանց վարմունքի վախճանին
և նման եղէք նորանց հաւատ-
քին։ Յիսուս Քրիստոս նոյն 8
է երէկ և այսօր և յաւիտեան։

Կերպ կերպ և օտար ուս- 9
մունքներով մի տատանուիք.
վասն զի լաւ է որ սիրտը շնորհ-
քով հաստատուի, ոչ թէ կե-
րակուրներով, որոնցով ոչինչ
օգուտ չունեցան նորանք որ
այնպէս գնացին։

Ունենք սեղան, ո- 10
րից ուտելու իշխանութիւն
չունին խորանի պաշտամուն-
քին ծառայողները. Վասն 11
զի այն անասունների արիւնն,
որ քահանայապետի ձեռովն
սրբարանի մէջ է տարվում մե-
ղաց համար, նորանց մարմին-
ներն այրվում են բանակից
դուրս։ Որա համար Յիսուս 12
էլ որպէս զի բուն իր արիւնովը
ժողովրդին սրբէ, դրան դրսի
կողմումը չարչարուեցաւ։ Ու- 13
րեմն ելնե՛ք բանակի դուրսը գը-
նանք նորա մօտ, և նորա
նախատինքը մեզ վերայ առ-
նենք։ Վասն զի այստեղ 14
հաստատ մնացող քաղաք չու-
նինք. այլ հանդերձեալն ենք
որոնում, Ուստի նորա ձեռովն 15

զպտուղ շրթանց խոստովանելոց
16 յանուն նորա։ Օ՛բարերարու-
թիւն և զհաղորդութիւն մի՛
մոռանայք, զի ընդ այնպիսի
պատարագս հաճի Աստուած։
17 Ունկնդի՛ր լերուք առաջնորդաց
ձերոց, և հպատակ կացէք
նոցա. զի նոքա տքնին վասն
ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս
տալոց լցեն ընդ ձեր. զի խընդ-
ութեամբ արասցեն զայն՝ և մի՛
յոգւոց հանելով. զի այն ո՛չ
օգուտ ձեր է։

18 Աղո՛թս արարէք վասն մեր.
զի հաստատեալ գիտեմք եթէ
բարւոք միտս ունիմք. յամե-
նայնի կամիմք բարւոք գնացս
19 ցուցանել։ Եւ առաւել աղա-
չեմ՝ զի զայն առնիցէք, զի
վաղագոյն պատսպարեցայց ձեզ։
20 Եւ Աստուած խաղաղութեան՝
որ եհան ի՛ մեռելոց զՀովիւն
հօտից զմեծն արեամբ յաւիտե-
նական ուխտին զՏէր մեր Յի-
21 սուս, Հաստատեսցէ՛ զձեզ ի՛
գործս բարութեան՝ առնել
զկամն նորա. և արասցէ * ի՛
մեզ զհաճոյսն առաջի իւր՝ ի՛
ձեռն Յիսուսի Քրիստոսի.
որում փառք յաւիտեանս.
ամէն։
22 Աղաչեմ զձեզ եղբարք՝
անսալ բանիս մխիթարութեան.

* Ի Յոյն., ի՛ ձեզ

ամէն ժամանակ Աստուծոյն օրհ-
նութեան պատարագ մատու-
ցանենք. այսինքն նորա անունը
դաւանող շրթունքներուն պտուղ։
Իսկ բարերարութիւնը և խրա-
16 պարեալ հաղորդակցիլը մի՛ մոռա-
նաք. վասն զի այնպիսի պա-
տարագներուն հաւանում է
Աստուած։ Կանչ դրէք ձեր 17
առաջնորդներուն, և հնազան-
դեցէք. վասն զի նորանք հրս-
կում են ձեր հոգիներուն համար
որպէս թէ հաշիւ պիտի տան որ
ուրախութիւնով անեն այն, և
ոչ թէ հառաչելով. որ դա ձեզ
օգուտ չէ։
Աղօթք արէք մեզ համար, 18
վասն զի համոզուած ենք որ
բարի խղճմտանք ունիմ՝ կամե-
նալով ամեն բանի մէջ բարւոք
վարուիլ։ Եւ առաւել ևս ա- 19
ղաչում՝ եմ որ այս անէք, որ
շուտով դառնամ ձեզ մօտ։
Եւ խաղաղութեան Աստուա- 20
ծը որ մեռելներից վեր հանեց
ոչխարներուն մեծ հովիւն յաւի-
տենական ուխտին արիւնովը
մեր Տէր Յիսուսին, Հաստատէ 21
ձեզ ամեն բարի գործքի մէջ
նորա կամքն անելու. և գործէ
ձեզանում ինչ որ հաճոյ է
նորա առջև Յիսուսի Քրիս-
տոսի ձեռովը. որին լինի փառք
յաւիտեանս յաւիտենից. Ամէն։
Աղաչում՝ եմ ձեզ, եղբարք, 22
համբերութեամբ տարէք այս

քանզի տակաւուրս գրեցի ձեզ։
23 Եւ ճանաչէ՛ք * զեղբայրն մեր
զՏիմոթէոս զարձակեալն առ
ձեզ՝. ընդ որում՝, եթէ վաղա-
գոյն գայցէ՝ տեսից զձեզ։
24 Ողջոյն տայք ամենայն առաջ-
նորդաց ձերոց, և ամենայն
սրբոց. Ողջոյն տան ձեզ՝ որ ի՛
կողմանս Իտալիացւոց են։
25 Շնորհք ընդ ամենեսին ձեզ.
ամէն։

Առ Եբրայեցիս՝ գրեցաւ
յԻտալիայ ի՛ յԵռն Տիմոթէոս։

* Ի Յոյն., զեղբայրն Տիմոթէոս՝
զարձակեալն

մխիթարութեան խօսքը. և քիչ
էլ գրեցի ձեզ։ Ճանաչում 23
էք Տիմոթէոս եղբօրը որ ձեզ
մօտ ուղարկուած է. եթէ նա
շուտով գայ՝ նորա հետ կըտես-
նեմ ձեզ։ Իսկ տուէք ձեր 24
բոլոր առաջնորդներին, և բոլոր
սրբերին, բարև են տալիս ձեզ
նորանք որ Իտալիայի կողմերից
են։ Շնորհքը ձեր ամենի 25
հետ լինի. Ամէն։

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՅԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԳԼՈՒԽ Ա

1 Յակովբոս Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ. երկոտասան աղգացդ որ ի սփիւռս էք՝ ողջոյն:
2 Ամենայն ուրախութեան արժանի համարիջիք եղբարք, յորժամ ի պէսպէս փորձութեանց
3 ի մէջ անկանիջիք: Գիտասջիք զի հանդէս ձերոց հաւատոյն յօրինեալ գործէ զհամբերու-
4 թիւն: Իսկ համբերութիւնն գործ կատարեալ ունիցի, զի իցէք ողջանդամք և կատարեալք, և ոչ իւիք նուազեալք:

5 Եպա թէ ոք ի ձէնջ իցէ նուազեալ իմաստութենէ, խնդրեսցէ Յաստուծոյ, որ տայն ամենայնի առատապէս՝ և ոչ
6 նախատէ. և տացի նմա: Բայց խնդրեսցէ հաւատովք՝ և մի երկմտեսցէ. զի որ երկմիտն է՝ նման է հողմակոծեալ և տա-
7 տանեալ ալեաց ծովու: Մի սակնկալցի մարդն այն առնուլ
8 ինչ Յաստուծոյ. Օ՛ի այր

Յակովբոս Աստուծոյ և Տէր Յիսուսի Քրիստոսի ծառայ. տասներկու ցեղերիդ որ ցրուած էք, ողջոյն:
2 Խոլորովենուրախութիւն համարեցէք, եղբարքս, երբոր կերպ կերպ փորձանքների մէջ ընկնիք. գիտենալով որ ձեր
3 հաւատքի փորձառութիւնը համբերութիւն է գործում:
4 Իսկ համբերութիւնը թող կատարեալ գործ ունենայ, որ կատարեալ և ամբողջ լինիք, և ոչ մի բանի պակասութիւն չունենաք:
5 Բայց եթէ մէկը ձեզանից պակասութիւն ունի իմաստութեան, թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ և չէ նախատում, և կ'տրուի նորան:
6 Միայն թէ թող հաւատքով խնդրէ առանց երկմտելու, վասն զի երկմտողը նման է ծովի հողմակոծուած և տատանուած
7 ալեքին: Այն մարդը թող

երկմիտ՝ առանց հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր:

9 Պարծեսցի եղբայր խոնարհ ի
10 բարձրութիւն իւր, Եւ որ մեծատունն իցէ՝ ի խոնարհութիւն իւր. քանզի իբրև զծաղիկ խոտոյ
11 անցցէ. Օ՛ի ծագեաց արև հանդերձ խորշակաւ՝ և ցամաքեցոյց զխոտն, և թօթափեցաւ ծաղիկն նորա, և կորեաւ վայելչութիւն երեսաց նորա. նոյնպէս և մեծատունն հանդերձ շահիւքն իւրովք թարշամեսցի:

12 Երանեալ է այր որ համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւն սիրելեաց իւրոց:

13 Մի՛ ոք որ ի փորձութեան իցէ, ասիցէ՝ թէ Յաստուծոյ փորձիմ. զի Աստուած անփորձ է չարեաց. փորձէ նա և ոչ զոք.
14 Իւրաքանչիւրոք փորձի՝ առ յիւրոցն ցանկութեանց ձգեալ
15 և պատրեալ: Եպա այնուհետև ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի. և մեղքն կատարեալ՝
16 զմահ ծնանին: Մի՛ խաբիք
17 եղբարք իմ սիրելիք. Օ՛ի ամենայն տուրք բարիք՝ և ամենայն պարգևք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հօրէն լուսոյ. յորում չիք փոփոխումն՝
18 և կամ շրջելոյ ստուեր: Կամեցեալ՝ առանց հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր:

չկարծէ որ Տէրից մի բան կ'առնէ: Երկմիտ մարդը ան-
8 հաստատ է իր բոլոր ճանապարհներումը:
9 Թող խոնարհ եղբայրը պարծենայ իր բարձրութիւնովը:
10 Եւ հարուստն իր խոնարհութիւնովը. վասն զի խոտի ծաղկի նման կ'անցնի:
11 Վասն զի արեգակը ծագեց իր սաստիկ տաքութիւնովը և խոտը չորացրեց, և նորա ծաղիկը թափուեցաւ, և նորա երեսի գեղեցկութիւնը կորաւ. այնպէս էլ հարուստն իր ճանապարհներումը կ'թառռամի:
12 Երանելի է այն մարդն որ համբերում է փորձութեան. վասն զի ընտիր գտնուելով՝ կենաց պսակը կ'առնէ, այն որ Տէրը խոստացաւ իրան սիրողներին:
13 Ոչ ով, որ փորձութեան մէջ է, չասէ թէ Աստուածանից եմ փորձվում. վասն զի Աստուած անփորձ է չար բաներից. ինքն էլ ոչ մէկին չէ փորձում.
14 Բայց ամեն մէկը փորձվում է բուն իր ցանկութիւնից հրապուրուած և խաբուած: Եւ
15 այնուհետև որ ցանկութիւնը յղացած է՝ ծնվում է մեղք. և մեղքն էլ երբոր կատարվում է՝ մահ կ'ծնի:
16 Մի՛ խաբուիք,
17 իմ սիրելի եղբարք. Ամեն բարի տուրք, և ամեն կատարեալ պարգև վերևից է իջնում լուսոյ Հօրից. որի մէջ բնաւ

նալ ծնաւ զմեզ բանիւ ճշմար-
տութեանն, լինել մեզ պտուղ
19 ինչ ստացուածոց նորա։ Դի-
տասջիք եղբարք իմ սիրելիք.
եղիցի ամենայն մարդ արագ առ
'ի լսել, և ծանր առ 'ի խօսել,
20 և ծանր առ 'ի բարկանալ։ Զի
բարկութիւն մարդոյ զարդա-
րութիւն Աստուծոյ ոչ գործէ։

21 Որով 'ի բաց թօթափեալ
զամենայն աղտեղութիւնս և
զյաւելուածս չարեաց, հեզու-
թեամբ ընդունիջիք զբանն ըն-
դարձոյս. որ կարօղն է կեցու-
ցանել զոգիս ձեր։

22 Լինիջիք առնելիք բանին, և
մի լսելիք միայն համարեսջիք
23 զանձինս։ Զի թէ ոք լսող
միայն իցէ բանին՝ և ոչ առնելի,
նման է նա մարդոյ, որ պշու-
ցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ
24 ծնանիցին 'ի հայելւոջ. Զի
հայեցեալ ետես զինքն, և զանց
արար, և անդէն մոռացաւ թէ
25 որպիսի ոք էր։ Իսկ որ յաւելալ
'ի կատարեալ օրէնս ազատու-
թեանն հայիցի, և 'ի նմին
կացցէ, ոչ եղև նա լսող մոռա-
ցութեան՝ այլ առնելի գործոյն.
նա՝ յառնելն իւրում լցցի
26 երանելի։ Եթէ որ կամիցի
կրօնաւոր լինել՝ և ոչ սանձա-
հարիցէ զլեզու իւր՝ այլ զբաղե-
ցուցանիցէ զսիրտն իւր, այն-
պիսւոյն վայրապար է կրօնաւո-
փոփոխում կամ դարձուածքի
շուք չկայ։ Այս կամենալով 18
ծնաւ մեզ ճշմարտութեան խօս-
քով, որ մենք նորա արարած-
ների երախայրի լինինք։ Ուստի, 19
իմ սիրելի եղբայրներ, թող
ամեն մարդ շուտ լինի լսելու
համար, և ծանր խօսելու հա-
մար, և ծանր բարկանալու հա-
մար։ Վասն զի մարդու բար- 20
կութիւնն Աստուծոյ արդարու-
թիւնը չէ գործում։

Սորա համար ամեն աղտե- 21
ղութիւն և չարութեան ա-
ռաւելութիւնը դէն գցեցէք, և
խոնարհութիւնով ընդունեցէք
յձեր մէջ սերմուած խօսքը, որ կա-
րող է ձեր հոգիները ապրեցնել։

Բայց խօսքը անող եղէք, և 22
ոչ միայն լսողներ՝ ձեր անձները
խաբելով։ Վասն զի եթէ մէ- 23
կը միայն խօսքի լսող է և ոչ
անող, նա նման է այն մարդուն
որ պշուցած մտիկ է տալիս իր
իսկական երեսին հայելու մէջ.
Վասն զի նայելով տեսաւ իրան 24
և անցաւ, և շուտով մոռացաւ
թէ ինչպէս էր։ Բայց նա որ 25
ազատութեան կատարեալ օրէն-
քի մէջ աչքը գցած մտիկ տուաւ
և նորանում կացաւ, նա մոռա-
ցուկ լսող չեղաւ այլ գործ
կատարող. նա իր անելովը
երանելի է։ Եթէ ձեղանից մէ- 26
կը կարծում է թէ կրօնասէր
է և իր լեզուն չսանձահարէ,
այլ իր սիրտը խաբէ, այնպիսի
մարդու կրօնասիրութիւնը զուր

27 բութիւնն։ Կրօնաւորութիւն
սուրբ և անարատ՝ առ 'ի Աստ-
ուծոյ և 'ի Հօրէ՝ այս է,
այցելու լինել որբոց և այրեաց
'ի նեղութեան իւրեանց, ա-
նարատ պահել զանձն յաշ-
խարհէ։

ԳԼ. Բ

1 Եղբարք իմ, մի աչառու-
թեամբ ունիցիք զՀաւատն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, որ Տէրն է փառաց։
2 Եթէ մտանիցէ 'ի ժողովուրդ
ձեր այր՝ որ ունիցի մատանի
ոսկի և հանդերձս պայծառս,
մտանիցէ անդր և աղքատ ոք 'ի
3 հանդերձս աղտեղիս, Հայիցիք
ընդ այն՝ որ ունիցի զհանդերձն
պայծառս. և ասիցէք եթէ Դու
նիստ աստ պատուով. և ցաղ-
քատն ասիցէք՝ եթէ Յոտն կաց
դու այտի. կամ թէ՝ Ե՛կ նիստ
4 առ պատուանդանիս իմում։ Ո՞չ
խղճիցէք յանձինս՝ և լինիցիք
դատաւորք չարեացն խորհրդոց։
5 Լուարո՛ւք ինձ եղբարք իմ
սիրելիք, ո՞չ ապաքէն Աստուած
ընտրեաց զաղքատս աշխարհիս,
որ են մեծատունք հաւատովք,
և ժառանգաւորք արքայու-
թեանն՝ զոր խոստացաւ սիրել-
6 եաց իւրոց։ Եւ դուք անարգէք
զաղքատս։ Ո՞չ մեծատունքն
յաղթահարեն զձեզ՝ և նոքա
քաշեն զձեզ 'ի դատաստան։
7 Ո՞չ նոքա հայհոյեն զքաւրուք

է։ Սուրբ և անարատ կրօնա- 27
սիրութիւնն Աստուծոյ և Հօր
առջև սա է, որբերին և այրիներ-
ին այցելել իրանց նեղութեան
մէջ. և իր անձն աշխարհքից
անարատ պահել։

ԳԼ. Բ

Եղբարքս, մի գուցէ աչա- 1
ռութեամբ ունենաք մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի հաւատքը,
որ փառաց Տէրն է։ Եթէ մի 2
մարդ մտնէ ձեր ժողովարանը,
որ ոսկի մատանի և պայծառ
հագուստ ունենայ, և մի աղքատ
էլ մտնէ այնտեղ կեղտոտ հա-
գուստով. Եւ մտիկ տաք նորան 3
որ պայծառ հագուստ ունի, և
ասէք նորան. Դու այս տեղ
նստիր պատուով, և աղքատին
ասէք թէ Դու այստեղ կանգ-
նիր. կամ թէ Եկ նստիր այս-
տեղ պատուանդանիս մօտ։ Եւ 4
խղճմտանք չէ՞ք անում ձեզա-
նում, և չեղա՞ք չար խորհուրդ-
ների դատաւորներ։ Լսեցէք, 5
սիրելի եղբարքս, չէ՞ որ Աս-
տուած ընտրեց այս աշխարհքի
աղքատներին, որ հարուստ են,
և ժառանգներ այն արքայու-
թեան որ Աստուած խոստացաւ
իրան սիրողներին։ Բայց դուք 6
անպատուեցիք աղքատին. չէ՞ որ
հարուստներն են ձեզ հարստա-
հարում և նորանք են ձեզ դա-
տաստան քաշում։ Չէ՞ որ նո- 7

անունն՝ որ կոչեցեալ է ի վերայ
8 ձեր։ Այլ թէ զօրէնն կա-
տարիցէք զարքունականս ըստ
գրոց, Եթէ սիրեցես զընկեր
քո իբրև զանձն քո, բարւոք
9 առնէք։ Իսկ եթէ աչառիցէք,
մեղս գործէք՝ յանդիմանեալք
յօրինացն իբրև օրինազանց։
10 Որ ոք զամենայն օրէնսն պա-
հիցէ, և միով իւիք ինչ գթիցէ,
եղև ամենայն օրինացն պարտա-
11 պան։ Զի որ ասացն՝ թէ Մի՛
սպանանիցես, ասաց թէ Եւ մի՛
շնայցես. զի եթէ սպանանիցես
ո՛չ՝ բայց շնայցես, եղեր յան-
12 ցաւոր օրինացն։ Այնպէս խօսե-
ցարո՛ւք և այնպէս արարէ՛ք,
որպէս զի ազատութեան օրինօքն
13 իցէք դատելոց։ Զի անողորմ
դատաստան լինելոց է այնմ, որ
ո՛չ առնիցէ զողորմութիւն.
քանզի բարձրագլուխ պարծի
ողորմութիւն առ դատաստա-
նաւն։
14 Զի՞նչ օգուտ իցէ եղբա՛ր-
քիմ, եթէ ասիցէ ոք հաւատս
ունել՝ և գործս ո՛չ ունիցի. միթէ
կարիցէ՞ն հաւատքն ապրեցու-
15 ցանել զնա։ Եթէ եղբայր ոք
կամ քոյր՝ իցեն մերկ կամ
կարօտեալ աւուրն կերակրոյ.
16 Ասիցէ ոք ի ձէնջ ցնոսա. Եր-
թա՛յք խաղաղութեամբ, ջեռա-
ռո՛ւք և յագեցարո՛ւք. և տայցէք
ո՛չ նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ
17 օգուտ իցէ։ Այնպէս և հաւատք՝
եթէ գործս ո՛չ ունիցին, մեռեալ
18 են առանձինն։ Այլ թերևս

բանք են հայհոյում այն բարի
անունն որ ձեզ վերայ կան-
չուած է։ Արդ եթէ թագա- 8
ւորական օրէնքը կատարէք ըստ
գրոց՝ Ե՛ւ Սիրիր քո ընկերին քո
անձի պէս, լաւ էք անում։ Բայց 9
եթէ աչառութիւն էք անում,
մեղք էք անում՝ յանդիմանուած
օրէնքիցն ինչպէս օրինազանց-
ներ։ Զ՝ասն զի ով որ բոլոր 10
օրէնքը պահէ և մէկ բանի մե-
զանչէ, ամեն օրէնքին եղաւ
պարտական։ Որովհետև այն 11
Շնութիւն մի՛ անիր ասողը
ասաց էլ Մի՛ սպանիր, իսկ
եթէ շնութիւն չանես բայց
սպանես, եղար օրինազանց։
Այնպէս խօսեցէք և այնպէս 12
արէք, որպէս թէ ազատու-
թեան օրէնքով էք դատուելու։
Զ՝ասն զի անողորմ դատաստան 13
պիտի լինի ողորմութիւն չա-
նողի վերայ. և ողորմութիւնը
պարծենում է դատաստանի դէմ։
Ի՞նչ է օգուտը, եղբարքս, 14
եթէ մէկն ասէ թէ հաւատք
ունի և գործք չունենայ. միթէ
հաւատքը կարողէ ապրեցնել
նորան։ Եթէ մի եղբայր կամ 15
քոյր մերկ լինին կամ օրուայ
կերակրին կարօտ. Եւ ձեզանից 16
մէկն ասէ նորանց. Գնացէք
խաղաղութեամբ, տաքացէք և
կշտացէք. և մարմնոյ պէտք
եղածը չտաք նորանց, օգուտն
ի՞նչ կ՝լինի։ Այսպէս էլ հա- 17
ւատքը, եթէ գործ չունենայ,
ըստ ինքեան մեռած է։ Բայց 18

ասիցէ ոք. Եթէ դու հաւատս
ունիս՝ և ես գործս ունիմ. ցոյց
լինձ զհաւատսն քո առանց
գործոց, և ես ցուցից քեզ ի
19 գործոց իմոց զհաւատս։ Դու
հաւատաս՝ զի մի է Աստուած.
բարւոք առնես, և դևք հաւա-
20 տան՝ և սարսեն։ Կամիս գիտել՝
ով մարդ սնոտի, զի հաւատք
առանց գործոց դատարկ են։
21 Աբրահամ հայր մեր ո՞չ ապաքէն
ի գործոց արդարացաւ՝ հանեալ
ի սեղան զորդին իւր զԻսահակ
22 պատարագ։ Տեսանե՞ս զի հա-
ւատքն եղեն գործակից գործոց
նորա, և ի գործոց անտի հա-
23 ւատքն կատարեցան։ Եւ կա-
տարեցաւ գիրն՝ որ ասէ. Հաւա-
տաց Աբրահամ յԱստուած, և
համարեցաւ նմա յարդարու-
թիւն, և կոչեցաւ բարեկամ
24 Աստուծոյ։ Տեսանէք՝ զի ի
գործոց արդարանայ մարդ՝ և
25 ո՛չ ի հաւատոց միայն։ Այնպէս
և Բաղաբ պոռնիկ՝ ո՞չ ապաքէն
ի գործոց արդարացաւ, ըն-
կալեալ զլրտեսսն՝ և ընդ այլ
26 ճանապարհ արձակեաց։ Զ՝որ
օրինակ մարմին առանց հոգւոյ
մեռեալ է, սոյնպէս և հաւատք
առանց գործոց մեռեալ են։

մէկը կ՝ասէ. թէ Դու հաւատք
ունիս, և ես գործք ունիմ.
ցոյց տուր ինձ քո հաւատքն
*գործքերից, և ես էլ ցոյց կը-
տամ քեզ իմ հաւատքն իմ
գործքերիցը։ Դու հաւատում 19
ես թէ մէկ է Աստուած, լաւ ես
անում. դևերն էլ են հաւա-
տում և սարսում են։ Բայց 20
կամենո՞ւմ ես գիտենալ, ով
դարտակ մարդ, որ հաւատքն
առանց գործքերի մեռած է։
Մեր հայրն Աբրահամ՝ չէ՞ որ 21
գործքերով արդարացաւ իր
որդի Իսահակին պատարագ հա-
նելով սեղանի վերայ։ Տես- 22
նում ես որ հաւատքը նորա
գործքերի հետ միասին գործեց.
և այն գործքերովը հաւատքը
կատարեալ եղաւ. Եւ կատա- 23
րուեցաւ գրքի խօսքը որ ասում
է. Եւ Աբրահամ հաւատաց
Աստուծոյն և արդարութիւն
համարուեցաւ նորա համար. և
Աստուծոյ բարեկամ կոչուե-
ցաւ։ Արդ տեսնում էք որ 24
մարդ գործքերով է արդարա-
նում, և ոչ միայն հաւատքով։
Այնպէս էլ Բաղաբ պոռնիկը 25
չէ՞ որ գործքերով արդարացաւ,
երբոր լրտեսներին իրան մնա
առաւ և ուրիշ ճանապարհով
արձակեց։ Զ՝ասն զի ինչպէս 26
որ մարմինն առանց հոգու մե-
ռած է, այնպէս և հաւատքն
առանց գործքերի մեռած է։

* Ամանք առանց գործքերի։

ԳԼ. Գ

1 Այ՛ի բաղում վարդապետք լինել եղբարք իմ, գիտասջիք՝ զի մեծ դատաստան ընդունելոց եմք. Արանցի բաղում ինչ
2 յանցանեմք ամենեքեան։ Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ կատարեալ, որ կարօղն է սանձահարել զամենայն մարմին
3 իւր։ Տե՛ս զի ձիոց սանձս ՚ի բերան դնեմք՝ առ անուալոյ նոցա մեզ, և զամենայն մարմինս
4 նոցա նուաճեմք։ Այհաւասիկ և նաւք՝ որպիսի ինչ են, և ՚ի սաստիկ հողմոց վարին. և փոքր թիւովն շրջին՝ յոր կոյս և միտք
5 ուղղէին կամիցին։ Այնպէս և լեզու փոքր ինչ անդամ է՝ և մեծամեծս բարբառի. ահա և սակաւ ինչ հուր զի՞րպիսի
6 անտառս հրդեհէ։ Եւ լեզու հուր՝ զարդ անիրաւութեան, լեզու հաստատեալ է յանդամս մեր, որ զամենայն մարմինն ապականէ, և վառէ հրով զանիւ ծննդեան, և բորբոքեալ տոչորի
7 ՚ի գեհենի։ Այ մենայն բնութիւն գազանաց՝ և թռչնոց և սողնոց և որ ՚ի ծովու են, հնազանդեալ է՝ և հնազանդի մարդկեղէն
8 բնութեան։ Բայց զլեզու մարդկան ոչ ո՛ք կարէ հնազանդել՝ զչարն և զանկարգ՝ և զլի
9 նութեամբ մահաբերին։ Զովաւ օրհնեմք զՏէրն և զՀայր. և նովաւ անիծանեմք զմարդիկ՝ որ ըստ նմանութեան Աստուծոյ

ԳԼ. Գ

Շատ վարդապետներ մի լինիք, եղբարքս. գիտենալով որ մեծ դատաստան պիտի ընդունիք։ Ամենն զի շատ բաներով մեղանչում ենք ամենքս։ Եթէ մէկը խօսքով չէ մեղանչում նա կատարեալ մարդ է, որ կարող է իր բոլոր մարմինը սանձահարել։ Տես, ձիերի բերանը սանձ ենք դնում, որ նորանք հնազանդեն մեզ, և նորանց բոլոր մարմինը հնազանդեցնում ենք։ Ահա նաւերն էլ, որ այսչափ մեծ են և սաստիկ քամիներից քշվում են, մի փոքր ղեկով կառավարվում են, որ կողմն որ ղեկավարի միտքը կամենայ։ Այնպէս էլ լեզուն՝ մի փոքր անդամ է, բայց մեծ մեծ բաներ է խօսում. տես, մի փոքր կրակը ո՞րքան բան է վառում։ Լեզուն էլ կրակ է՝ այդ անիրաւութեան աշխարհը. այսպէս է լեզուն գրուած մեր անդամների մէջ, որ նա բոլոր մարմինն ապականում է և կրակով վառում է մեր գոյութեան անիւը, և ինքն բորբոքուած է գեհենիցը։ Ամեն զի գազանների, և թռչունների, և սողունների, և ծովում լինողների բոլոր բնութիւնը նուաճուած է և նուաճվում է մարդկային բնութիւնից։ Բայց մարդկանց լեզուն ոչ ոք կարող չէ նուաճել, մի անդուսպ չար

10 արարան։ Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք և անէծք. ո՛չ է պարտ եղբարք իմ այսն
11 այսպէս լինել։ Այ՛թէ աղբիւր անդստին ՚ի միոյ ականէն բղխիցէ՞
12 քաղցր և դառն։ Այ՛թէ մարթ ինչ իցէ եղբարք իմ՝ թզենւոյ ձէթ բերել, կամ որթոյ թուզ, և ո՛չ աղտաղտին տեղւոյ ջուր քաղցր առնել։

13 Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեղ ՚ի ձեզ, ցուցցէ ՚ի բարւոք գնացից զգործս իւր հեզութեամբ իմաստութեանն։
14 Այլ եթէ նախանձ՝ և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք ՚ի սիրտս ձեր, մի պարծիք սուտ առնել զճշմարտութիւնն։
15 Ո՛չ է իմաստութիւնս այս իջեալ ՚ի վերուստ. այլ երկրաւոր՝ շնչաւոր՝ և դիւական։
16 Զի ուր հեռ և նախանձ, անդ է անկարգութիւն և ամենայն
17 իրք չարք։ Իսկ վերին իմաստութիւնն, նախ զի սուրբ է՝ ապա խաղաղարար, հեզ՝ դիւրահաւան՝ լի ողորմութեամբ և պտղովք բարեաց, անխիղճ, առանց
18 կեղծաւորութեան։ Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն։

է՝ լցուած մահաբեր թոյնով։ Նորանով օրհնում ենք Աստուած և Հայրն, և նորանով անիծում ենք մարդկանց, որ Աստուծոյ նմանութիւնովը ստեղծուած են. Այ՛ինոյն բերանից դուրս են գալիս օրհնութիւն և անէծք. պէտք չէ, եղբարքս, որ սա այսպէս լինի։ Այ՛թէ մի աղբիւրնոյն ակնից քաղցր և դառն ջո՞ւր կ'բղխէ։ Այ՛թէ կարելի է, եղբարքս, որ թզենին ձիթապտուղ բերէ, կամ որթը թուզ. այնպէս էլ աղի աղբիւրն չէ կարող քաղցր ջուր հանել։

Ով է ձեզանում իմաստուն և խելացի, թող իր բարի վարքովը ցոյց տայ իր գործքերը իմաստութեան հեզութիւնովը։ Բայց եթէ դառն նախանձ և հակառակութիւն ունիք ձեր սրտերումը, մի պարծենաք և սուտ մի ասէք ճշմարտութեան դէմ։ Այս իմաստութիւնը վերևից իջած չէ, այլ երկրաւոր, շնչաւոր և դիւական։ Ամեն զի ուր որ նախանձ և կռիւ է, այնտեղ անկարգութիւն և ամեն չար բաներ կան։ Բայց վերին իմաստութիւնը նախ և առաջ սուրբ է, և յետոյ խաղաղարար, հեզ, հլու, ողորմութիւնով և բարի պտուղներով լիքն, անկողմնասէր, անկեղծ։ Եւ արդարութեան պտուղը խաղաղութիւնով է սերմվում նորանց համար, որ խաղաղութիւն են անում։

ԳԼ. Դ

1 Ուստի՞ պատերազմունք՝ և ուստի՞ կռիւք ՝ի ձեզ. ո՞չ յայսպիսի ցանկութենանց ձերոց՝ որ զօրայեալ են յանդամս ձեր:
2 Յանկանայք, և ո՛չ ունիք. սպանանէք և նախանձիք՝ և ո՛չ կարէք հասանել. պատերազմիք կռուիք՝ և ո՛չ ունիք, վասն զի
3 ո՛չ խնդրէք. Խնդրէք՝ և ո՛չ առնուք, վասն զի չարաչար խնդրէք. զի անդէն ՝ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք: Շ. Նացողք՝ ո՞չ գիտէք՝ զի սէր աշխարհիս այսորիկ թշնամութիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ՝ թշնամի առնէ
5 զանձն իւր Աստուծոյ: Կամ թէ վայրապա՞ր համարիցիք՝ զոր ասէ Դիրն. Առ նախանձ ինչ՝ որում փափագէ հոգին՝ որ
6 բնակեաց ՝ի մեզ, Տալ զառաւել շնորհսն. վասն որոյ ասէ. Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց:

7 Հնազանդեցարո՛ւք այսուհետև Աստուծոյ, և կացէ՛ք հակառակ չարախօսին, և լիցի փախստական առ ՝ի ձէնջ:
8 Մերձեցարո՛ւք առ Աստուած, և մերձեսցի առ ձեզ: Սրբեցէ՛ք զձեռս մեղաւորք, և ուղի՛ղ

ԳԼ. Դ

Ո՞ր տեղից են պատերազմունքներ և կռիւներ ձեր մի- 1
ջումը. չէ՞ որ այստեղից է, այսինքն ցանկութիւններիցն որ պատերազմումեն ձեր անդամներումը: Յանկանում էք և չու- 2
նիք. սպանում էք և նախանձում էք և չէք կարողանում հասնել. պատերազմում էք, կռւում էք, բայց չունիք, որովհետև չէք խնդրում: Խնդրում էք և չէք առնում, վասն 3
զի չար կերպով էք խնդրում, որ ձեր ցանկութիւններումը վատնէք: Շ. Նացողներ, չէք գի- 4
տում որ աշխարհիս սէրը թշնամութիւն է Աստուծոյ դէմ. արդ՝ ով որ կարենայ աշխարհի բարեկամ լինել, իր անձն Աստուծոյ թշնամի կ'անէ: Կամ 5
թէ կարծում էք Սուրբ Գիրքը պարապ տեղն է ասում, Նախանձով փափագում է հոգին որ բնակուած է մեզանում. Բայց աւելի շնորհք է տալիս. 6
Նորա համար ասում է. Տէրն ամբարտաւաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս:

Արդ հնազանդեցէք Աստու- 7
ծոյն, հակառակ կացէք սատանային, և կ'փախչի ձեզանից: Մօտեցէք Աստուծոյն, և նա 8
կ'մօտենայ ձեզ: Սրբեցէք ձեր ձեռները, ով մեղաւորներ, և ձեր սրտերը մաքրեցէք, ով երկ-

արարէք զսիրտս՝ երկմիտք:
9 Տառապեցարո՛ւք՝ սգացարո՛ւք և լացէ՛ք. ծաղը ձեր ՝ի սուգ դարձցի, և ուրախութիւն ձեր ՝ի
10 տրտմութիւն: Խոնարհեցարո՛ւք առաջի Տեառն՝ և բարձրացուսցէ զձեզ:
11 Մի՛ բամբասէք զմիմեանս եղբարք. որ բամբասէ զեղբայր՝ կամ դատի զեղբայր իւր, զօրէնսն բամբասէ՝ և զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն դատիցիս՝ ո՛չ առնելի օրինացն ես՝
12 այլ դատաւոր: Մի է օրէնսդիր և դատաւոր՝ որ կարօղն է փրկել և կորուսանել. Դու ո՞ ես՝ որ դատիս զընկերն:
13 Հաւասիկ են, որ ասեն. Այսօր և վաղիւ երթիցուք այս անուն քաղաք, եղիցուք անդ տարի մի, վաճառեսցուք և
14 շահեսցուք. Որք ո՛չ գիտէք զվաղիւն, Ո՞րպիսի ինչ են
15 կեանք ձեր. զի իբրև զմրրիկ է, որ առ սակաւ մի երևեալ՝ և ապա ապականեալ. փոխանակ զի ասէիք՝ Եթէ Տէր կամեսցի՝ և կեցցուք արասցուք զայս ինչ՝
16 կամ զայն: Եւ արդ՝ պարծիք յամբարտաւանութեան ձերում. ամենայն ինչ այսպիսի
17 պարծանք չարութեան են: Որ որ գիտիցէ զբարին՝ և ո՛չ առնիցէ, մեղք են նմա:

միտներ: Տառապեցէք և սուգ 9
արէք և լացէք. ձեր ծիծաղը թող սուգ դառնայ, և ձեր ուրախութիւնը տրտմութիւն: Խոնարհեցէք Տիրոջ առջև և 10
նա կ'բարձրացնէ ձեզ:

Իրար մի բանբասէք, եղբարք, 11
իր եղբօրը բամբասողը կամ իր եղբօրը դատողը օրէնքն է բամբասում և օրէնքն է դատում. արդ՝ եթէ օրէնքը դատում ես, էլ օրէնքի կատարող չես, այլ դատաւոր: Մէկն է օրէնսդիրը [և դատաւորը] որ կարող է փրկել և կորցնել. դու ո՞վ ես որ ուրիշին դատում ես:
Հա, դուք, որ ասում 13
էք, թէ Այսօր և էգուց գնանք այս ինչ քաղաքը, և այն տեղ մի տարի լինինք և վաճառենք
և շահենք. Դուք որ չէք 14
գիտում էգուցվայ օրը, Ի՞նչ- 15
պիսի բան է ձեր կեանքը. Այն զի մի շոգի է, որ մի քիչ ժամանակ երևում է և յետոյ աներևութանում. փոխանակ որ պէտք էր ասէիք, եթէ Տէրը կամենայ և ապրինք, և այս բանը կամ այն բանը անենք: Բայց հիմա պար- 16
ծենում էք ձեր ամբարտաւանութիւնումը. ամեն այդպիսի պարծանքը չարութիւն է: Արդ 17
ով որ բարին գիտենայ և չանէ, նորա համար մեղք է:

ԳԼ. Ե

1 Արդ՝ այսուհետև մեծատունք՝
լացէք և ողբայէք 'ի վերայ
թշուառութեանցն, որ գալոց
2 են 'ի վերայ ձեր։ Օ՛ի մեծու-
թիւնդ ձեր յոչնչէ է, և
հանդերձք ձեր կերակուր ցեցոյ։
3 Արծաթ ձեր և ոսկի ժանգահար,
և ժանգ նոցա լսցի ձեզ 'ի վկա-
յութիւն, և կերիցէ զմարմինս
ձեր. իբրև զհուր գանձեցէք
4 աւուրցն յետնոց։ Արհաւասիկ
վարձք մշակաց՝ որ գործեն
զանդս ձեր՝ առ ձեզ են. զրկեալն
'ի ձէնջ աղաղակէ, և բողոք
հնձողացն եհաս յականջս Տե-
5 առն զօրութեանց։ Փափկա-
ցայք 'ի վերայ երկրի՝ և զբօ-
սայք. սնուցէք զսիրտս ձեր իբրև
6 աւուր սպանման։ Օ՛րկեցիք
սպանիք զարդարն, որ ո՛չ կայր
ձեզ հակառակ։

7 Երկայնամիտ լերուք եղբարք
իմ՝ մինչև 'ի գալուստն Տեառն.
ահա մշակ երկայնամտեալ
սպասէ պատուական պտղոյն
երկրի, մինչև առցէ * զկանուխս
8 և զանապան։ Երկայնամտե-
ցէք և դուք, և հաստատեցէք
զսիրտս ձեր. զի գալուստն
9 Տեառն մերձեալ է։ Մի՛ տրըտ-
մեցուցանէք զմիմեանս եղբարք,
զի մի՛ դատիցիք. ահաւասիկ
դատաւորն առ դուրս կայ։

* 'Ի Յոյն. զանձրև զկանուխ

ԳԼ. Ե

Արդ՝ հիմա, ով հարուստներ, 1
լացէք և ողբ արէք յէր թշուա-
ռութիւնների վերայ, որ պիտի
գան ձեզ վերայ։ Ձեր հարս- 2
տութիւնը փտել է, և ձեր
հանդերձները ցեցի կերակուր
եղան. Ձեր ոսկին և արծաթը 3
ժանգոտած, նորանց ժանգը
վկայ կ'լինի ձեզ դէմ, և ձեր
միսերը կ'ուտէ կրակի նման.
դուք գանձեր դիզեցիք յետին
օրերում։ Ահա այն մշակների 4
վարձքն որ ձեր արտերը հնձել
են, և որ դուք զրկել էք, ա-
ղաղակում է, և հնձողների
աղաղակները հասան զօրու-
թեանց Տիրոջ ականջը։ Երկրի 5
վերայ փափուկ ապրեցիք և
զբօսացիք. ձեր սրտերը դիրաց-
րիք ինչպէս մորթելու համար։
Օ՛րկեցիք, սպանեցիք արդարին, 6
նա հակառակ չէ կենում։
Արդ, եղբարքս, երկայնա- 7
միտ եղէք մինչև Տիրոջ գա-
լուստը. ահա մշակը երկայ-
նամիտ եղած՝ սպասում է
երկրի պատուական պտղին, մին-
չև որ առաջի և վերջի անձրևն
առնէ։ Երկայնամիտ եղէք 8
դուք էլ, հաստատեցէք ձեր
սրտերը. վասն զի Տիրոջ գա-
լուստը մօտեցել է։ Մի՛ հա- 9
ռաչէք իրար դէմ, եղբարք,
որ չդատուիք. ահա դատաւորը

10 Օրինակ առէք եղբարք՝ չար-
չարանաց և երկայնմտութեան
զմարգարէսն, որ խօսեցան յա-
11 նուն Տեառն։ Արհաւասիկ երա-
նեմք համբերողաց. զհամբե-
րութիւն Յովբայ լուարուք՝ և
զկատարումն Տեառն տեսէք. զի
բազմագութ է Տէր՝ և ողորմած։

12 Յառաջ քան զամենայն ինչ
եղբարք իմ, մի երդնուցուք, մի
յերկինս՝ մի յերկիր՝ մի յայլ
ինչ երդումն, այլ եղիցի ձեր
այո՝ այո, և ոչն՝ ոչ. զի մի՛ 'ի
կեղծաւորութիւն ինչ անկանի-
ցիք։
13 Վշտանայցէ ոք 'ի ձէնջ,
յաղօթս կացցէ. բերկրեսցի
14 ոք, սաղմոս ասասցէ։ Հիւան-
դանայցէ ոք 'ի ձէնջ՝ կոչեսցէ
զերիցունս եկեղեցւոյն՝ և ա-
րասցեն 'ի վերայ նորա աղօթս,
օծցեն իւղով յանուն Տեառն.
15 Եւ աղօթքն հաւատովք փրկես-
ցեն զաշխատեալն, և յարուցցէ
զնա Տէր. և եթէ մեղս ինչ
իցէ գործեալ՝ թողցի նմա։
16 Խոստովան եղերուք միմեանց
զմեղս, և աղօթս արարէք 'ի
վերայ միմեանց՝ որպէս զի
բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր
են աղօթք արդարոց յօգնա-
17 կանութիւն։ Եղիա մարդ էր
իբրև զմեզ հարարեալ. և յա-
ղօթս եկաց՝ և ո՛չ տեղաց յերկիր
18 զերիս ամն և զվեց ամիս։ Եւ
դարձեալ եկաց յաղօթս՝ և

դրան առջև կանգնած է։ Եղ- 10
բարք, չարչարանքի և երկայն-
մտութեան օրինակ առէք մար-
գարէներին, որ Տիրոջ անու-
նովը խօսեցին։ Ահա համբե- 11
րողներին երանի ենք տալիս.
Յովբայ համբերութիւնը լսել
էք, և Տիրոջ կատարումը տե-
սաք. որ Տէրը բազմագութ է
և ողորմած։

Եւ ամեն բանից առաջ, եղ- 12
բարք, երդում մի անէք ոչ
երկնքովը, ոչ երկրովը և ոչ
էլ մի ուրիշ երդումով, բայց
թող լինի ձեր այոն այո և ոչն
ոչ. որ դատաստանի տակ չըն-
կընիք։

Եթէ ձեզանից մէկը նեղու- 13
թիւն է քաշում, թող աղօթք
անէ. եթէ մէկն ուրախանում
է, թող սաղմոս ասէ։ Եթէ 14
ձեզանից մէկը հիւանդ է, թող
եկեղեցու երէցներին կանչէ, որ
նորա վերայ աղօթք անեն,
նորան իւղով օծեն Տիրոջ ա-
նունովը. Եւ հաւատքով ա- 15
ղօթքը կ'փրկէ այն հիւանդին,
և Տէրը վեր կ'կացնէ նորան. և
եթէ մեղք գործած լինի, կ'թող-
նուի նորան։ Իրար խոստովա- 16
նեցէք յէր յանցանքները, և
իրար վերայ աղօթք արէք, որ
բժշկուիք, շատ զօրաւոր է ար-
դարի աղօթքը ներգործելով։
Եղիան մարդ էր մեզ պէս՝ կրից 17
ենթակայ. և ջերմեռանդ ա-
ղօթք արաւ որ անձրև չգայ, և
անձրև չեկաւ երկրի վերայ

ետուն երկինք զանձրև՝ և բուսոյց երկիր զպտուղ իւր։

19 *Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորիցի ի ճշմարտութեան ճանապարհէն՝ և դարձուսցէ ոք*
20 *զնա. Գիտասցէ զի որ դարձուսցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր ի մահուանէ՝ և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց։*

երեք տարի և վեց ամիս։ Եւ 18
դարձեալ աղօթք արաւ, և երկինքն անձրև տուաւ, և երկիրն իր պտուղը բուսցրեց։

Եղբարք, եթէ ձեզանից մէկը 19
մոլորուի ճշմարտութեան ճանապարհից, և մէկը դարձնէ
նորան. թող գիտենայ, թէ 20
մեղաւորին իր մոլորութեան ճանապարհից դառնողը, մի հոգի կ՚փրկէ մահից և մեղաց շատութիւնը կը ծածկէ։

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 **Պ**ԵՏՐՈՍ առաքեալ Յիսուսի, Քրիստոսի, ընտրելոցդ նժդեհից, որ ի սփիւռս Պոնտացւոց, Գաղատացւոց և Կապադովկեցւոց և Ասիացւոց և Բիւթանացւոց,
2 Ըստ կանուխ գիտութեանն Աստուծոյ Հօր, սրբութեամբ Հոգւոյն, ի հնազանդութիւն և ի հեղումն արեանն Յիսուսի Քրիստոսի. շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն բազմասցի։

3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց,
4 Յանեղծ և յանարատ և յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է յերկինս ի ձեզ.
5 Որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ էիք հաւատովք ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնեալ ի յետին ժամանակս։

ՊԵՏՐՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ, ընտրուած օտարականներիդ որ ցրուած էք Պոնտոսի, Գաղատիայի և Կապադովկիայի և 1
Ասիայի և Բիւթանիայի երկրները՝ 2
Հօր Աստուծոյ կանխագիտութեան պէս, Հոգու սրբութիւնովը, հնազանդութեան և Յիսուսի Քրիստոսի արեան սրսկելու համար. շնորհք և խաղաղութիւնը շատանայ ձեզ վերայ։

Օրհնեալ է Աստուած և 3
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հայրն, որ իր առատ ողորմութեան համեմատ մեզ վերստին ծնաւ դէպի կենդանի յոյսն, Յիսուսի Քրիստոսի մեռելներից յարութիւն առնելովը, Դէպի 4
այն անեղծ և անարատ և անթառամ ժառանգութիւնը, որ երկնքումը պահուած է ձեզ համար. Որ Աստուծոյ զօրու- 5
թեամբ պահպանվում էք հաւատքով դէպի պատրաստուած փրկութիւնն, որ յայտնուելու

6 Որով ուրախ լինիջիք՝ որք այժմ
սակաւիկ ինչ ըստ պատշաճի
իրացդ տրտմեալ էք ՝ի պէսպէս
7 փորձութիւնս։ Զի հանդէս
ձերոց հաւատոցն առաւել քան
զոսկի կորստական պատուական
է. որ հրով փորձեալ՝ գտաւ ՝ի
գովութիւն և ՝ի փառս, և ՝ի
պատիւ ՝ի յայտնութեանն Յի-
8 սուսի Քրիստոսի։ Զոր ո՛չն
տեսիք՝ և սիրեցիք. ընդ որ
այժմ ո՛չ հայեցեալք՝ բայց
հաւատացիք, և ուրախ էք
անճառ և փառաւորեալ խնդու-
9 թեամբն. Ընկալեալ զկատա-
րումն հաւատոցն ձերոց զոգւոցն
10 փրկութիւն։ Վասն որոյ փրկու-
թեան խնդրեցին և քննեցին
մարգարէքն. որք վասն որոյ ՝ի
ձեզ լինելոց էին շնորհքն՝
11 մարգարէանային. Քննէին յո-
րում և յորպիսի ժամանակի
գուշակէր ՝ի նոսա Հոգին
Քրիստոսի. որ նախ զչարչա-
րանացն Քրիստոսի վկայէր՝ և
12 յետ այնորիկ՝ զփառացն։ Որոց
և յայտնեցաւ իսկ. զի ո՛չ եթէ
անձանց, այլ մեզ մատակարարք
լինէին նոցին, որք այժմ պատ-
մեցան այնոքիւք, որ աւետա-
բանեցին ձեզ Հոգւովն Սրբով,
որ առաքէրն յերկնից. զոր
ցանկային տեսանել գոնեայ ընդ
աղօտ հրեշտակք։

էր յետին ժամանակումս։ Որ
նորանով կ՚ուրախանաք, թէև
հիմա՝ ինչպէս որ հարկը պա-
հանջում է՝ մի քիչ տրտմած էք
կերպ կերպ փորձանքների մէջ,
Որ ձեր հաւատքի փորձառու-
թիւնն աւելի պատուական գըտ-
նուի քան կորստեան ոսկին, որ
կրակով է փորձվում, գովու-
թեան պատուոյ և փառաց հա-
մար Յիսուսի Քրիստոսի յայտ-
նութիւնումը։ Որին չտեսած
սիրում էք. որ նորան հաւա-
տացիք թէև հիմա չէք տես-
նում, և ուրախ էք անպատմելի
և փառաւոր խնդութիւնով,
Ձեր հաւատքի վախճանն ըն-
դունելով, այսինքն հոգիների
փրկութիւնը։ Որ այն փրկու-
թեան համար որոնեցին և
քննեցին մարգարէները, որ մար-
գարէանում էին այն շնորհքի
համար որ լինելու էր ձեզա-
նում, Քննելով թէ որ և ինչ-
պիսի ժամանակի համար էր
գուշակում Քրիստոսի Հոգին
որ նորանցում էր, առաջուց
վկայելով Քրիստոսի չարչա-
րանքները և նորանից յետոյ ե-
նող փառքը։ Որոնց յայտնուե-
ցաւ, որ ոչ թէ իրանց անձներին,
այլ մեզ էին սպասաւորում այն
բաներն, որ հիմա պատմուեցան
ձեզ նորանց ձեռովն, որ աւետա-
բանեցին ձեզ Սուրբ Հոգին որ
երկնքիցն ուղարկուեցաւ. որի
մէջ հրեշտակները ցանկանում
են տեսնելով թափանցել։

13 Որով պնդեալ զմէջս մտաց
ձերոց՝ զուարթացուցէք բովան-
դակ սպասեցէք հասելոցն ձեզ
շնորհաց ՝ի յայտնութեանն
14 Յիսուսի Քրիստոսի, Իբրև
զորդիս հնազանդութեան. մի
կերպարանեալք առաջին ձե-
րովք անգիտութեանն ցանկու-
15 թեամբք։ Այլ ըստ Սրբոյն որ
կոչեաց զձեզ՝ և դուք սուրբք
յամենայն գնացս ձեր լինիջիք։
16 Վասն որոյ գրեալ է, եթէ
Եղերուք սուրբք՝ զի ես սուրբ
17 եմ։ Եւ եթէ Հայր կոչեցէք
զայն, որ առանց ակնառութեան
դատի ըստ իւրաքանչիւր գործոց,
ապա երկիւղիւ զձերոցն պան-
դխտութեան ժամանակս գնաս-
18 ջիք։ Գիտասջիք, զի ո՛չ ապա-
կանացու արծաթեղինօք և
ոսկեղինօքն փրկեցարուք ՝ի
ձերոց ունայնութեան հայրե-
19 նատուր գնացիցն. Այլ պա-
տուական արեամբն Քրիստոսի,
իբրև անբիծ և անարատ գառին։
20 Որ յառաջծանօթ էր՝ նախ քան
զիսկզբանէ աշխարհի, և երևե-
ցաւ ՝ի վախճան ժամանակաց
21 վասն ձեր. Որք նովաւ հաւա-
տացիք Աստուած՝ որ յարոյց
զնա ՝ի մեռելոց, և ետ նմա
փառս. զի հաւատքն ձեր և
22 յոյս իցեն Աստուած։ Զան-
ձինս ձեր սրբել հնազանդու-
թեամբ ճշմարտութեանն, յեղ-
բայրսիրութեան առանց կեղ-
ծաւորութեան, ՝ի սուրբ սրտէ
23 սիրել սերտիւ զմիմեանս։ Զոր-

Զորա համար ձեր մտքի
մէջը գօտեպնդած, և զարթ-
նացած, կատարելապէս յուսա-
ցէք այն շնորհքին որ հասնում
է ձեզ Յիսուսի Քրիստոսի
յայտնութիւնումը, Հնազանդ
որդոց պէս, չնմանելով այն ձեր
տգիտութեան ժամանակի առաջի
ցանկութիւններին։ Այլ ձեզ
կանչող Սրբոյն պէս, դուք էլ
սուրբ եղէք յէր բոլոր վարքե-
րումը. Որովհետև գրուած է,
Սուրբ եղէք, վասն զի ես սուրբ
եմ։ Եւ եթէ Հայր էք կան-
չում Նորան, որ առանց ակ-
նառութեան դատաստան է ա-
նում ամեն մէկի գործքի պէս,
ապա ձեր պանդխտութեան ժա-
մանակը վախով վարուեցէք։
Գիտենալով որ ոչ թէ ապա-
կանացու արծաթով կամ ոսկով
փրկուեցաք ձեր հայրենաւանդ
ունայն վարմունքիցը։ Այլ
Քրիստոսի պատուական արիւ-
նովն, ինչպէս ոչ անբիծ և ա-
նարատ գառի. Որ առաջուց
ճանաչուած էր աշխարհքիս
սկզբից առաջ, բայց ժամանակ-
ների վերջումն երևեցաւ ձեզ
համար, Ձեզ՝ Նորանով այն
Աստուծոյն հաւատացողներիդ,
որ Նորան մեռելներից յարոյց,
և փառքը Նորան տուաւ, որ
ձեր հաւատքն և յոյսն Աս-
տուծոյ վերայ լինի։ Որ՝ ձեր
անձները սրբելով ճշմարտու-
թեան հնազանդութեան մէջ
սերտ Հոգովն անկեղծ եղբայր-

նեալք վերստին ոչ յապականու-
թեան սերմանէն, այլ յանա-
պականացուէն, կենդանի և
մշանջենական բանիւն Աստու-
24 ծոյ։ Զի ամենայն մարմին
իբրև զխոտ է. և ամենայն
փառք մարդոյ իբրև զծաղիկ
խոտոյ. խոտն ցամաքեցաւ՝ և
25 ծաղիկն թօթափեցաւ։ Եւ բան
Տեառն մնայ յաւիտեան. այս-
ինքն է բանն, որ ՚ի ձեզ աւետա-
բանեցաւ։

ԳԼ. Բ

1 Ի բաց թօթափեալ այսուհետև
զամենայն չարութիւն՝ և զամե-
նայն նենգութիւն և ըզկեղ-
ծաւորութիւնս և զնախանձ,
և զամենայն չարախօսութիւն.
2 Իբրև զարգի ծնեալ մանկունս
խօսուն, և անխարդախ կաթինն
փափաքիցէք. զի նովաւ աճիցէք
3 ՚ի փրկութիւն։ Եթէ ճաշա-
4 կիցէք՝ զի քաղցր է Տէր։ Առ
որ մատուցեալ՚ի վէմն կենդանի,
որ թէպէտ ՚ի մարդկանէ ա-
նարգեալ՝ այլ առ ՚ի Աստուծոյ
ընտրեալ և պատուական է.
5 Եւ դուք իբրև զվէմս կենդանիս
շինիք տաճար հոգևոր, յա-
նարատ քահանայութիւն, մա-
տուցանել զհոգևոր պատարագս
հաճոյս Աստուծոյ, ՚ի ձեռն
6 Յիսուսի Քրիստոսի։ Զի
կայ իսկ ՚ի գրի. Եթէ Էհա-
սիրութեան համար, մաքուր
սրտով իրար սերտ սիրէք.
Վ երստին ծնուած լինելով ոչ 23
թէ ապականութեան սերմից
այլ անապական անէրմից Աս-
տուծոյ կենդանի և յաւիտենա-
կան խօսքովը։ Վասն զի ամեն 24
մարմին խոտի պէս է, և մարդու
ամեն փառքը խոտի ծաղկի պէս.
խոտը չորացաւ և նորա ծաղի-
կը թափուեցաւ։ Իսկ Տիրոջ 25
խօսքը մնում է յաւիտեան. և
սա այն խօսքն է, որ ձեզ աւե-
տարանուեցաւ։

ԳԼ. Բ

Արդ՝ դէն գցելով ամեն չա- 1
րութիւնը և ամեն խաբէու-
թիւնը, և կեղծաւորութիւնեն-
րը, և նախանձը. և ամեն
չարախօսութիւնը, Նորածին 2
երեխաների պէս ցանկացէք այն
բանաւոր անխարդախ կաթին որ
նորանով աճէք [դէպի փրկու-
թիւնը]. Եթէ ճաշակել էք որ 3
Տէրը քաղցր է։ Որին մօտե- 4
ցել էք այն կենդանի Քարին,
որ թէև մարդկանցից անարգ-
ուած, բայց Աստուծոյ մօտ
ընտրուած՝ պատուական է։
Դուք էլ կենդանի քարերի պէս 5
շինուեցէք հոգևոր տաճար,
սուրբ քահանայութիւն, որ
հոգևոր պատարագներ մատու-
ցանէք Աստուծոյ ընդունելի
Յիսուսի Քրիստոսի ձեռովն։
Որովհետև գրքումն էլ կայ, 6

ուսիկ դնեմ ՚ի Սիոնի վէմ
ընտիր՝ գլուխ անկեան պա-
տուական, և որ ՚ի նա հաւա-
7 տացէ՝ մի ամաչեսցէ։ Զեզ
այսուհետև հաւատացելոց է
վէմ պատուական. իսկ անհա-
ւատից, վէմ՝ զոր անարգեցին
շինողքն, նա եղև գլուխ անկե-
8 ան. Եւ վէմ գլորման և վէմ
գայթագղութեան, որ գայթագ-
ղին ապստամբեալք ՚ի բանէն՝
9 յոր և եդանն։ Այլ դուք ազգ
էք ընտիր, թագաւորութիւն,
քահանայութիւն, ազգ սուրբ,
ժողովուրդ սեպհական. որպէս
*զի զձեր առաքինութիւնս նուի-
րիցէք այնմ՝," որ զձեզ ՚ի խա-
ւարէն կոչեաց յիւր սքանչելի
10 լոյսն։ Որք երբեմն չժողովուրդ՝
բայց արդ ժողովուրդ Աստու-
ծոյ. որք չողորմեալք՝ այժմ
ողորմութիւն գտիք։

11 Սիրելիք՝ աղաչեմ, իբրև
զպանդուխտս և զնժդեհս ՚ի
բաց մերժել՚ի մարմնաւոր ցան-
կութեանցն, որ զինուորին
12 ընդդէմ ոգւոց. Օվարս ձեր
՚ի մէջ հեթանոսաց պարկեշտս
ցուցանել. զի որով բամբասիցեն
զձեզ իբրև զչարագործս, ՚ի
բարւոք գործոցն ձերոց դիտեալ՝
փառաւոր առնիցեն զԱստուած
յաւուրն այցելութեան։

* ՚Ի Յունս, զի զնորին առա-
քինութիւնս ցուցանիցէք

ԵՒ Էհա Սիոնումն անկիւնի
գլուխ ընտիր պատուական քար
եմ դնում, և նորան հաւատա-
ցողը չի ամաչիլ։ Արդ՝ ձեզ 7
հաւատացեալներիդ պատուա-
կանութիւնն է. բայց անհա-
ւատներին այն քարն որ շինող-
ներն անարգեցին, նա անկիւնի
գլուխ եղաւ. Եւ գլորման քար, 8
և գայթակղելու վէմ որ գայ-
թակղում են խօսքին չհաւա-
տալով. որ նորա համար էլ
դրուած են։ Բայց դուք ընտիր 9
ազգ էք, թագաւորական քա-
հանայութիւն, սուրբ ազգ,
սեպհական ժողովուրդ, որ
քարոզէք նորա առաքինու-
թիւնները, որ ձեզ խաւարից
կանչեց իր զարմանալի լոյսի
մէջ. Որ դուք ժամանակով ժո- 10
ղովուրդ չէիք, բայց հիմա
Աստուծոյ ժողովուրդ էք. որ
ողորմուած չէիք, բայց հիմա
ողորմուածներ։

Սիրելիներ, աղաչում եմ յԵՂ 11
ինչպէս պանդուխտների և օ-
տարականների, հեռու կացէք
մարմնաւոր ցանկութիւններից,
որ կռւում են հոգու դէմ։
Ձեր վարքը հեթանոսների մէջն 12
բարի պահեցէք, որ ինչ բա-
նով որ ձեզ չարագործների
պէս բանբասում են, ձեր բարի
գործերը տեսնելով փառաւո-
րեն Աստուծոյն այցելութեան
օրումը։

13 Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն. եթէ թագաւորի՝ իբրև
14 առաւելումէ, Եթէ դատաւորաց՝ իբրև ի նմանէ առաքելոց ի վրէժխնդրութիւն չարագործաց՝ և ի գովութիւն բարե-
15 գործաց: Զի այսպէս են կամք Աստուծոյ. բարեգործացն պապանձեցուցանել զանզգամ մար-
16 դոց զանգիտութիւն: Իբրև զազատս լինել՝ և մի՛ իբրև պատրուակ չարութեան ունել զազատութիւնն. այլ իբրև Ա-
17 ստուծոյ ծառայք: Զամենեսեան պատուեցէք. զեղբայրսիրութիւն սիրեցէք. զԱստուծոյ երկերուք. զթագաւորս պատուեցէք:
18 Ծառայք հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տէրանց, ոչ միայն բարերարացն և հեզոց՝
19 այլ և կամակորացն: Զի այս շնորհք Աստուծոյ են, եթէ բարւոք ինչ մտօք տանիցի ոք
20 վշտաց յանիրաւի: Զանգի զի՞նչ երախտիք իցեն, եթէ յորժամ մեղանչիցէք՝ տանջիցիք, և համբերիցէք. այլ թէ բարիս գործիցէք՝ չարչարիցիք, և համբերիցէք, այն շնորհք
21 Աստուծոյ են: Զանգի ի դոյն իսկ կոչեցարուք. զի և Քրիստոս վասն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ՝ զի զհետ
22 երթայցէք հետոց նորա. Որ ոչն արար մեղս, և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա.

Արդ հնազանդեցէք ամեն 13
մարդկային կարգի՝ Տիրոջ համար. թէ թագաւորի ինչպէս թէ մի վերնագոյնի. թէ կու- 14
սակալների ինչպէս նորանից ուղարկուածների՝ չարագործները պատժելու և բարեգործները գովելու համար: Զի սան զի 15
Աստուծոյ կամքն այսպէս է, որ բարի գործքերով պապանձեցնէք անխելք մարդկանց տգիտութիւնը: Ինչպէս ազատներ, 16
և ոչ թէ ազատութիւնն ինչպէս չարութեան ծածկոց ունեցողներ. այլ ինչպէս Աստուծոյ ծառաներ: Զամենին 17
պատուեցէք. եղբայրութիւնն սիրեցէք. Աստուածանից վախեցէք. թագաւորին պատուեցէք:

Ծառաներն հնազանդ լինին 18
տէրերին ամեն վախով, ոչ միայն բարիներին և հեզահոգիներին, բայց ծուռերին էլ: Զի սան զի սա շնորհք է եթէ 19
մէկն առ Աստուած ունեցած մտքովն նեղութիւնների համբերէ անիրաւ տեղը: Զի սան զի 20
ի՞նչ գովասանք է, եթէ մեղանչէք՝ տանջուիք ու համբերէք. այլ եթէ բարիք գործէք և չարչարուիք ու համբերէք, դա է շնորհք Աստուածանից: Զի սան զի դուք հենց այդ բանի 21
մէջ կանչուեցաք. որովհետև Քրիստոս էլ չարչարուեցաւ և ձեզ էլ օրինակ թողեց որ նորա հետքերին հետևիք: Որ 22
մեղք չգործեց, և խաբէութիւն

23 Որ բամբասեալ՝ և ոչ փոխարէն բամբասէր. չարչարեալ՝ և ոչ պահէր սպառնալս. բայց իրաւամբք մատնէր դատաւորին.
24 Որ զմեր մեղս իւրով մարմնովն վերացոյց ի խաչափայտն. զի լիցուք զկրծեալքն ի մեղաց անտի. և իցեմք արդարութեանն կենակիցք. որոյ վիրօքն բժշկեցայք:
25 Զանգի էիք իբրև զոչխարս մոլորեալս. այլ այժմ դարձարուք առ Հովիւն և Տեսուչ հոգւոց ձերոց:

ԳԼ. Գ

1 Այոյնպէս և կանայք հնազանդ լինել արանց իւրեանց. զի եթէ իցեն նոքա ապստամբք ի բանէ անտի, յաղագս կանանց գնացից, և առանց բանին իսկ
2 շահեսցին, Գիտել երկիւղիւ
3 զձեր պարկեշտ գնացս: Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիւք և ոսկեհուռ ծամակալքք՝ կամ պաճուճեալ զգեստուք զարդ.
4 Այլ ծածուկ սրտին մարդն. անեղծութեամբ հեզութեան՝ և հանդարտութեան հոգւոյն, որ է առաջի Աստուծոյ բազմա-
5 պատիկ: Զանգի այսպէս երբեմն և *կանայք՝ որ յուսացեալ էին Աստուած՝ զարդարէին զանձինս հնազանդել իւրեանց

* Ի Յոյն, սուրբ կանայք

չգտնուեցաւ նորա բերանումը. Որ բամբասուելիս՝ փոխարէնը 23
չէր բամբասում. չարչարուելիս՝ չէր սպառնում, բայց պարարտանը յանձնում էր արդար դատաւորին. Որ ինքն մեր մեղքերն իր մարմնումը խաչափայտի վերայ բարձրացրեց. որ մեղքերիցը հեռանալով՝ արդարութեան համար ապրինք, որ նորա խոցերովը բժշկուեցաք: 24
Զան սի մոլորուած ոչխարների պէս էիք. բայց հիմա դարձաք դէպի ձեր հոգիների Հովիւն և Տեսուչը: 25

ԳԼ. Գ

Այնպէս էլ կանայք, հնազանդ եղէք ձեր մարդկանցը, որ 1
եթէ նոքանցից ումանք էլ անհնազանդ լինին խօսքին, կանանց վարքովն առանց խօսքի շահուին, Տեսնելով ձեր երկիւ- 2
ղածութեամբ պարկեշտ վարքը: Որ ձեր զարդարանքը չլինի 3
դրսևանց մազերի հիւսելը, և ոսկեղէնների շարելը կամ շքեղ հանդերձների հագնելը. Այլ 4
սրտի ծածուկ մարդը հեզ և հանդարտ հոգու անեղծութեամբ որ դա Աստուծոյ առջև շատ թանգագին է: Զան սի 5
այսպէս էլ մի ժամանակով այն սուրբը կանայքն, որ իրանց յոյսն Աստուծոյ վերայ էին դրել,

6 արանց։ Որպէս և Սառայ՝ զի հնազանդ էր Աբրահամու. և տէր իւր կոչէր զնա. որոյ եղերուք դուք որդիք. բարեգործք էիք, և ոչ կասկածէիք՝ և
7 ոչ ի միոջէ ինչ երկիւղէ։ Այնպէս և արք խմաստութեամբ բնակեսցեն ընդ նոսա. իբրև տկար անօթոյ առնիցեն պատիւ կանանց՝ իբրև ժառանգակցաց շնորհացն կենաց. զի մի խափան լինիցին աղօթիցն ձերոց։

8 Եւ գլուխ ամենայնի, զի համամիտք լիցէք՝ համակարիք՝ եղբայրասէրք՝ ազնուագութք՝
9 խոնարհք։ Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել, կամ՝ բամբասանս ընդ բամբասանաց. այլ զսորին հակառակն՝ օրհնել, զի յայս իսկ կոչեցարուք՝ զի զօրհնութիւն ժառանգիցէք։

10 Զի որ կամիցի զկեանս սիրել՝ և տեսանել զաւուրս բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր ի չարութենէ, և զշրթունս իւր ի չխօսելոյ զնենգութիւն։
11 Խոտորեսցի՛ ի չարէ, և արասցէ՛ զբարի. խնդրեսցէ՛ զխաղաղութիւն, և երթիցէ՛ զհետ նորա։
12 Զի աչք Տեառն ի վերայ արդարոց, և ականջք նորա յաղօթս նոցա. երեսք Տեառն
13 ի վերայ չարագործաց։ Եւ ո՞ ի՛նչ է որ չարչարիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն նախանձաւորք զարդարուք էիք իրանց անձներն իրանց մարդկանցը հնազանդելով։ Ինչպէս Սառան հնա-
6 զանդ էր Աբրահամի, նորան տէր կոչելով. որի որդիքներ էք եղել դուք, որ բարեգործ լինէք և ոչ մի երկիւղից չվախենաք։
7 Նմանապէս, մարդիկ, իմաստութիւնով բնակեցէք նորանց հետ, ինչպէս տկար անօթի հետ՝ կանանց պատիւ տալով և ինչպէս կենաց շնորհի ժառանգակիցների հետ. որ ձեր աղօթքը չխափանուի։

8 Եւ վերջապէս ամենքդ համամիտ, կարեկից, եղբայրասէր, բարեսիրտ, քաղցրաբարոյ է-
9 ղէք։ Չարի փոխարէն չար չհատուցանէք, կամ բամբասանքի փոխարէն բամբասանք. այլ ընդ հակառակն օրհնեցէք, գիտենալով որ իսկ սորա մէջ կանչուեցաք, որ օրհնութիւնը ժառանգէք։

10 Այսն զի ով որ կամենում է կեանք սիրել և լաւ օրեր տեսնել, թող իր լեզուն չարութիւնից լուռ պահէ, և իր շրթունքները, որ նենգութիւն
11 չխօսին. Չարիցը ետ քաշուի և բարի անէ, խաղաղութիւն
12 որոնէ և նորան հետևէ։ Այսն զի Տիրոջ աչքերն արդարների վերայ են, և նորա ականջները դէպի նորանց աղօթքը, Տիրոջ երեսը չարագործների վերայ
13 է։ Եւ ով է նա որ չարչարէ զձեզ, եթէ դուք բարոյն հե-

14 լինիցիք։ Այլ թէ և չարչարիցիք ևս յաղագս արդարութեան, երանելի էք. բայց յերկիւղէ նոցա մի երկնչիցիք և մի խռո-
15 վեսջիք։ Այլ զՏէր զնոյն զՔրիստոս՝ սուրբ առնիջիք ի սիրտս ձեր։ Պատրաստ իցէք տալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զքանն, որ է վասն
16 յուսոյն ձերոյ։ Այլ հեզութեամբ և երկիւղիւ ունիցիք բարս բաղցունս. զի որով չարախօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին՝ որք բամբասեն զձեր բարւոքս
17 գնացս ի Քրիստոս։ Զի լաւ է բարեգործաց, եթէ կամիցին *ըստ Աստուծոյ կամացն՝՝ չար-
18 չարիլ՝ քան չարագործացն. Զի և Քրիստոս միանգամ վասն մեղաց ի վերայ ձեր մեռաւ, արդարն ի վերայ անարդարոց. զի զձեզ մերձեցուսցէ առ Աստուած. թէպէտ և մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով։
19 Որով † և ոգւոցն՝ որ էին ի բանտին՝՝, երթեալ քարոզեաց՝
20 Երբեմն ապստամբելոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն յաւուրս Նոյի՝ յորս տապանն կազմէր. յոր նուազունք՝ այսինքն ոգիք իբրև ութ ապրեցան ի ջրոցն։
21 Որ և ‡զձեզ ըստ նմին օրինակի կեցուսցէ մկրտութիւնն. ոչ

14 տևող լինիք։ Բայց թէև չարչարուիք էլ արդարութեան համար, երանելի է. բայց նորանց երկիւղիցը մի վախենաք
15 և մի շփոթուիք։ Այլ Տէր Աստուծոյն ձեր սրտի մէջ սուրբը պահեցէք. և միշտ պատրաստ եղէք հեզութեամբ և երկիւղածութեամբ պատասխան տալու ամենին, որ ձեր մէջ եղած
16 յուսոյ համար պատճառ հարցնէ։ Եւ բարի խղճմտանք ունենանք, որ նորանով որ չարախօսում են ձեզանից ինչպէս չարագործներից, ամօթով մնան ձեր բարի վարքը Քրիստոսումը
17 տեսնելով։ Այսն զի աւելի լաւ է, եթէ Աստուծոյ կամքը որ կամենում է, բարի գործելով չարչարուիլ, քան թէ չար գործելով։ Այսն զի Քրիս-
18 տոս էլ մէկ անգամ մեղաց համար չարչարուեցաւ, այն Արդարն անարդարների վերայ, որ մեզ մօտեցնէ Աստուծոյն. որ թէև մեռաւ մարմնով, բայց կենդանի եղաւ հոգով։ Որով
19 գնաց բանտումը եղող հոգիներին էլ քարոզեց։ Որոնք մի
20 ժամանակ ապստամբ էին, երբոր Աստուծոյ երկայնմտութիւնը համբերում էր նորանց Նոյի օրերում տապանը պատրաստուելիս, որի մէջ քիչ այս-

* Ի Յոյն, կամքն Աստուծոյ
† Ի Յոյն, և ոգւոցն որ ի բանտին
‡ Ի Յոյն, զմեզ

զմարմնոյ աղտն 'ի բաց ընկենլով՝
այլ զբարւոք մտացն հանդէս
առ Աստուած, 'ի ձեռն յարու-
թեանն Յիսուսի Քրիստոսի.
22 Որ է ընդ աջմէ Աստուծոյ՝
երթեալ յերկինս, 'ի հնա-
զանդել նմա հրեշտակաց և
իշխանութեանց և զօրութեանց:

ԳԼ. Դ

1 Քրիստոսի չարչարիւն մար-
մնով վասն մեր, և դուք 'ի նոյն
միտս վառեցարուք. զի որ չար-
չարի մարմնով՝ դադարէ 'ի
2 մեղաց. Օ՛ի մի՛ ևս ըստ մարդ-
կան ցանկութեանց՝ այլ ըստ
կամացն Աստուծոյ կեցցէ զայլ
3 ևս ժամանակն: Քանզի բաւա-
կան է անցեալ ժամանակն
լինելոյ կամացն հեթանոսաց,
որք գնային գիշերութեամբք՝
ցանկութեամբք՝ գինեհարու-
թեամբք՝ անառակութեամբք՝
արբեցութեամբ՝ անօրէն կռա-
4 պաշտութեամբք: Որով օտա-
րացեալք՝ *ոչ ընդ ձեզ վարին,
'ի նոյն անկարգութեան զեղ-
5 խութիւն, և հայհոյեն": Որ
տայցեն պատասխանի այնմ, որ

* 'Ի Յոյնն, ոչ վարելո

13 Այլ իբրև հաղորդեալք Քրիս-
տոսի շարչարանացն՝ ուրախ
լինիջիք, զի և 'ի յայտնութեան
փառաց նորա ցնծացեալք բերկ-
14 րեսջիք։ Իսկ եթէ նախատիցիք
ևս վասն անուանն Քրիստոսի,
երանելի էք. զի փառացն՝ և
զօրութեան անուն է, և Ա-
ստուծոյ Հոգին 'ի վերայ ձեր
15 հանգուցեալ է։ Մի՛ ոք 'ի
ձէնջ շարչարեսցի իբրև զսպա-
նող, կամ՝ իբրև զգող, կամ
իբրև զչարագործ, կամ իբրև
16 զօտարատեսուչ։ Այլ եթէ
իբրև զքրիստոնեայ՝ մի՛ ինչ
ամաչեսցէ. այլ փառաւոր առ-
նիցէ զԱստուած անուամբս
17 այսուիկ։ Զի ժամանակ է
սկիզբն լինելոյ դատաստանին 'ի
տանէն Աստուծոյ. զի եթէ
նախ 'ի մէնջ, իսկ զի՞նչ կատա-
րած այնոցիկ իցէ՝ որ ո՛չ հաւա-
նեցան Աստուծոյ աւետարանին։
18 Եւ եթէ արդարն հազիւ կեցցէ,
իսկ ամբարիշտն և մեղաւորն
19 ո՞ւր գտանիցի։ Որպէս զի որ
չարչարին ըստ Աստուծոյ կա-
մացն, հաւատարիմ Հոստէլին
աւանդեսցեն զհուրանց ոգիս
բարերարութեամբք։

ԳԼ. Ե

1 Զերիցունս այսուհետև ա-
ղաչեմ՝ իբրև զերիցակից՝ և
օտար բան է պատահում ձեզ։
Այլ ուրախ եղէք իբրև թէ 13
Քրիստոսի շարչարանացը մաս-
նակից եղածներ, որ նորա
փառքի յայտնութեան ժամա-
նակումն էլ ցնծալով ուրախա-
նաք։ Եթէ նախատուիք Քրի- 14
ստոսի անունի համար, երա-
նելի էք. վասն զի փառաց և
Աստուծոյ Հոգին հանգչում է
ձեզ վերայ, նորանցից նա հայ-
հոյվում է, բայց ձեզանից փա-
ռաւորվում։ Ձեզանից մէկը 15
չշարչարուի ինչպէս մարդաս-
պան, կամ գող, կամ չարա-
գործ, կամ ինչպէս օտարա-
տեսուչ։ Բայց եթէ ինչպէս 16
Քրիստոնեայ չարչարո՛ւ, թող
չամաչէ, այլ փառք տայ Ա-
ստուծոյն այս մասին։ Որով- 17
հետև ժամանակն է որ դատաս-
տանն սկսէ Աստուծոյ տանիցն.
բայց եթէ առաջ մեզանից, ապա
ի՞նչ լինի նորանց վերջն որ
Աստուծոյ աւետարանին ան-
հնազանդ են։ Եւ եթէ ար- 18
դարն հազիւ է ապրում, ապա
ամբարիշտն և մեղաւորն ո՞ւրտեղ
կ'երևեալ։ Սորա համար Ա- 19
ստուծոյ կամաց պէս չարչար-
ուողներն էլ, թող ինչպէս հա-
ւատարիմ Ստեղծողին յանձնեն
իրանց հոգիները բարեգործու-
թիւնով։

ԳԼ. Ե

1 Ձեր մէջի երէցներին աղա-
չում եմ երէցընկերս և Քրիս-
տոսի չարչարանացն Քրիստոսի,
որ և հանդերձեալ փառացն
2 յայտնելոց հաղորդ. Բրածե-
ցէք որ 'ի ձեզ հօտդ է Աստու-
ծոյ. վերակացու լինել՝ մի՛
իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ
Աստուծոյ. մի՛ զօշաբաղու-
թեամբ, այլ յօժարութեամբ.
3 Մի՛ իբրև տիրելով վիճակացն,
4 այլ լինել օրինակ հօտին։ Զի
յերևեալ Հովուապետին՝ ընդու-
նիջիք զանթառամ փառացն
պսակ։
5 Այնպէս և երիտասարդք՝
հնազանդ լերուք ծերոց։ Մե-
նեքեան ընդ միմեանս զխոնար-
հութիւն ունիցի՛ք. զի Աստուած
ամբարտաւանից հակառակ կայ,
6 տայ շնորհս խոնարհաց։ Խո-
նարհեցարուք ընդ հզօր ձե-
ռամբն Աստուծոյ. զի զձեզ
բարձրացուսցէ 'ի ժամանակի։
7 Զամենայն հոգս ձեր ընկեցէք
'ի նա, զի նա է՛ որ հոգայ վասն
ձեր։

8 Արթուն լերուք՝ հսկեցէք,
զի ոսոխն ձեր Սատանայ իբրև
զառիւծ գոչէ, շրջի և խնդրէ՝
9 թէ զո՞ կլանիցէ։ Որում՝ 'ի դիմի
հարկանիցիք հաստատեալք հա-
ւատովք. գիտասջիք զնոյն անցս
չարչարանաց եղբայրութեան
ձերոյ յաշխարհի յանձինս կա-
տարել։

10 Եւ Աստուած ամենայն շնոր-

տոսի չարչարանքների վկայս, և
այն յայտնուելու էլ փառքի
մասնակիցս, Արածեցրէք Ա- 2
ստուծոյ հօտն որ ձեզ մօտ է,
վերակացու լինելով ոչ թէ
ստիպուած, այլ յօժար կամքով,
ոչ թէ պիղծ շահասիրութիւ- 3
նով այլ յօժարութիւնով։ Ոչ
թէ ինչպէս վիճակների վերայ
տիրապետելով, այլ հօտին օրի- 4
նակներ լինելով։ Եւ երբոր
Հովուապետն կ'երևի, փառաց
անթառամ պսակն կ'ընդունիք։
Այսպէս էլ դուք, երիտա- 5
սարդներ, հնազանդեցէք ծերե-
րին, ամենքդ իրար հնազանդե-
լով խոնարհութիւնը հագէք.
վասն զի Աստուած ամբարտա-
ւաններին հակառակ է կենում,
բայց խոնարհներին շնորհք է
տալիս։ Խոնարհեցէք Աստու- 6
ծոյ հզօր ձեռի տակ, որ ձեզ
բարձրացնէ ժամանակով։ Ձեր 7
բոլոր հոգսը նորա վերայ գցե-
ցէք, վասն զի նա հոգս է ա-
նում ձեզ համար։
Արթուն եղէք, հսկում ա- 8
րէք. որովհետև ձեր ոսոխ
թշնամին՝ սատանան գոռով ա-
ռիւծի պէս ման է գալիս և
որոնում է թէ որին կուլ տայ։
Որին հակառակ կացէք հաս- 9
տատուած հաւատքով, գիտե-
նալով՝ որ ձեր եղբայրներն
էլ նոյն չարչարանքները քա-
շում են իրանց անձներումը
աշխարհքիս մէջ։
Եւ ամեն շնորհքի Ա- 10

Հաց՝ որ կոչեաց զձեզ յիւր 'ի յաւիտենական փառսն Քրիստոսիս Յիսուսիս, * որում փոքր մի եղերուք չարչարակիցք", նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ, հաստատիցէ զձեզ։ Նմա իշխանութիւն և
11 փառք յաւիտեանս ամէն։ 'Ի
12 ձեռն Սիղուանոսի հաւատարիմ եղբօր, որպէս կարծեմ՝ փոքր 'ի շատէ գրեցի առ ձեզ՝ մխիթարել, և 'ի վերայ սորին վկայել. զի և այս ճշմարիտ շնորհք Աստուծոյ են՝ յորում
13 հաստատեալ կայցէք։ Ողջոյն տայ ձեզ որ 'ի Բաբելոն ընտրելակից եկեղեցին է, և Մարկոս որդի իմ։
14 Ողջոյն տայք միմեանց 'ի համբոյր սրբութեան։ Խաղաղութիւն ընդ ձեզ ամենեսին, որ էք 'ի Քրիստոս Յիսուս. ամէն։

* 'Ի Յոյն. յետ փոքր մի չարչարեալ գոլոյ

ուածն, որ մեզ կանչեց իր յաւիտենական փառքի մէջ Քրիստոս Յիսուսով, ձեզ որ մի քիչ չարչարվում էք, կատարեալ անէ, հաստատէ, զօրացնէ, հիմնէ. Նորան լինի 11
փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն։ Սիղուանոս հաւատարիմ եղբօր ձեռվն, ինչպէս կարծում եմ, կարճառօտ գրեցի, որ յորդորեմ և այս բանի համար վկայեմ, թէ սա է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որի մէջ գուք կանգնած էք։ Բարև է 12 13
տալիս ձեզ՝ ձեզ հետ ընտրուած եկեղեցին որ Բաբիլոնումն է. և իմ որդի Մարկոսը։ Իրար 14
բարև տուէք սիրոյ համբոյրով. խաղաղութիւն լինի ձեզ ամենիդ, որ Քրիստոս Յիսուսումն էք. Ամէն։

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

1 ՇՄԵՒՈՎՆ, Պետրոս ծառայ և առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հանգիտապատիւ մեզ հասէբդ հաւատոց յարդարութիւն Աստուծոյ մերոյ և փրկչին Յիսուսի
2 Քրիստոսի։ Շնորհք ընդ ձեզ՝ և խաղաղութիւն բազմացի գիտութեամբն Աստուծոյ՝ և Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։
3 Որպէս ամենայն ինչ մեզ իւրոյ աստուածեղէն զօրութեանն առ 'ի կեանս և յաստուածպաշտութիւն շնորհեալ. 'ի ձեռն գիտութեան այնորիկ, որ կոչեացն զմեզ յիւր 'ի փառսն և 'ի վայելչութիւն։
4 Որով մեծամեծքն և պատուական աւետիք պարգևեալ են մեզ. զի նոքիմբք աստուածեղէն բնութեան լինիցիմք հաղորդակիցք, փախուցեալք 'ի ցանկութեանց աշխարհիս և յապականութեանց։ Եւ ամենայն այսմիկ զամենայն փոյթ 'ի մէջ առեալ՝

ՍԻՄՕՆ, Պետրոս Յիսուսի Քրիստոսի ծառայ և առաքեալ, յԵՒ՝ որ մեզ հետ նոյն պատուական հաւատքին հասաք մեր Աստուծոյ և Փրկիչ Յիսուսի Քրիստոսի արդարութիւնովը. Շնորհք և խաղա- 1 2
ղութիւն շատանայ ձեզ վերայ Աստուծոյ և մեր Տէր Յիսուսի գիտութիւնովը։

Ինչպէս որ Նորա աստուա- 3
ծային զօրութիւնը շնորհեց մեզ այն ամենը, որ կեանքի և աստուածապաշտութեան համար պէտք է Նորա գիտութիւնովը, որ մեզ կանչեց փառքով առաքինութիւնով. Որոնցով 4
ամենամեծ և պատուական աւետիքներ են տրուած մեզ. որ Նորանցով հաղորդակից լինինք աստուածային բնութեանը աշխարհի մէջ ցանկութիւնից եղած ապականութիւնից հեռու փախչելով. Եւ սոյն այս բանի 5
համար ամեն ջանք անելով ձեր

ձերովք Հաւատովքն մատակա-
բարեսջիք զառաքինութիւն, և
առաքինութեամբն զգիտութիւն,
6 Եւ զիտութեամբն զժուժ-
կալութիւն, և ժուժկալու-
թեամբն զհամբերութիւն, և
համբերութեամբն զաստուած-
7 պաշտութիւն, Եւ աստուած-
պաշտութեամբն զեղբայրսիրու-
թիւն, և եղբայրսիրութեամբն
8 զսէր: Զայսոսիկ ձեր յանձին
կալեալ՝ և ի սոյն յաճախեալ,
ոչ դատարկս և անպտուղս զձեզ
հաստատիցեն ի Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի գիտու-
9 թիւնն: Իսկ յորոյ ոչն իցեն սոքա
մերձ, կոյր է և զաչացու. ի
մոռացօնս դարձուցեալ զսրբու-
թիւն առաջնոյ իւրոցն յանցա-
10 նաց: Վասն որոյ ՆԵՂԲԱՐՔ՝
առաւել փութասջիք՝ զի բա-
րեւացն գործովք Հաստատուն
զձեր կոչումն և զընտրութիւն
պահիցէք: Զայս արարեալ՝
11 ոչ երբէք յանցանիցէք. Զի
այսպէս առատապէս շնորհեսցի
ձեզ մուտ ի յաւիտենական
արքայութիւն Տեառն մերոյ
և Փրկչին Յիսուսի Քրիստոսի:
12 Որոյ պատրաստիցեմ միշտ
ձեզ յիշեցուցանել վասն սոցին,
առաւել ևս գիտակացն և հաս-
տատելոցն՝ եկեալ հասեալ
13 ճշմարտութեանն: Արանզի ի-
րաւունս համարիմ մինչդեռ
եմ ի մարմնի աստ՝ զարթու-
14 ցանել զձեզ յիշատակօք: Գի-
տեմ թէ վաղվաղակի է լինելոց
հաւատքովն ներկայացրէք ա-
ռաքինութիւնը, և առաքինու-
թիւնովը գիտութիւնը: Եւ 6
գիտութիւնովը ժուժկալութիւ-
ն, և ժուժկալութիւնովը համ-
բերութիւն, և համբերութիւ-
նովն աստուածպաշտութիւն, Եւ 7
աստուածպաշտութիւնովն եղ-
բայրսիրութիւն, և եղբայրսի-
րութիւնովը սէր: Վասն զի 8
այս բաները ձեզանում մնալով
և աճելով զատարկ և անպտուղ
չեն անիլ ձեզ մեր Տէր Յի-
սուսի Քրիստոսի գիտութիւ-
նովը: Որոյց նա, որ այս բա- 9
ներն իրան մօտ չունի, կոյր է
և կարճատես, մոռացած լինե-
լով իր առաջին մեղքերից սրբ-
բութիւնը: Որոնց համար, եղ- 10
բարք, աւելի ջանք արէք որ
ձեր կոչումն և ընտրութիւնն
հաստատ անէք. վասն զի սո-
բանք անելով՝ երբէք յանցանքի
մէջ չէք ընկնիլ: Վասն զի 11
այսպէս առատութիւնով կը-
տրուի ձեզ մտնել մեր Տէր և
Փրկիչ Յիսուսի Քրիստոսի
յաւիտենական արքայութիւնը:

Ուստի ես զանցառու չեմ 12
լինիլ ձեզ յիշեցնելու սորանց
համար, թէ և գիտէք և հաս-
տատուած էք այս ներկայ ճըշ-
մարտութիւնումը: Եւ իրա- 13
ւունք եմ համարում, որ քանի
որ այս վրանի մէջ եմ զարթ-
նացնում ձեզ յիշեցնելով: Գի- 14
տեմ որ շուտով պիտի ինձանից

մերկանալ յինէն մարմնոյս.
որպէս և Տէր մեր Յիսուս
15 Քրիստոս ցոյց ինձ. Եւ
փութամ ճեպիմ միշտ զձեզ
յորդորել. զի և յետ իմոյ
ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք
16 զյիշատակս այսոցիկ: Արանզի
ոչ եթէ պաճուճեալ ինչ ա-
ռասպելաց զՀետ երթեալ ցու-
ցաք ձեզ զՏեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի զզօրութիւնն
և զգալուստն. այլ մեղէն եղեալ
ականատեսք նորա մեծութեանն:
17 Արանզի առեալ Աստուծոյ և
ի Հօրէ զփառս և զպատիւ.
յեկեալ յայնպիսի բարբառոյ՝
ի մեծ վայելչութեան փառաց
անտի. եթէ Դա է որդի իմ
սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ:
18 Եւ զայս բարբառ մեք իսկ
լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ
նմա իսկ էաք ի սուրբ լերինն:
19 Եւ ունիմք հաստատագոյն
զբանն մարգարէական. որում՝
եթէ անսայցէք՝ բարւոք առնէք.
իբրև ճրագի՝ որ տայցէ լոյս ի
խաւարչտին տեղւոջ, մինչև
տիւն լուսաւորեսցէ, և արուս-
եակն ծագեսցէ ի սիրտս ձեր:
20 Որոյց նախ այսմ գիտակ
լինիջիք՝ զի ամենայն մար-
գարէութիւն իւրոց գրոց լու-
21 ծումն ոչ ունի: Արանզի ոչ
եթէ ըստ կամաց մարդկան
տուաւ մարգարէութիւն երբէք.
այլ ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝
խօսեցան մարդիկ Աստուծոյ:

Հանեմ իմ այս վրանը, ինչպէս
մեր Տէր Յիսուս Քրիստոսը
յայտնեց ինձ: Որոյց ջանք էլ 15
կանեմ որ միշտ կարողանաք իմ
աշխարհքից դուրս գալուց յե-
տոյ այս բաները յիշել: Վա- 16
սըն զի մենք ոչ թէ վարպե-
տութեամբ հնարուած առաս-
պելների հետևելով ցոյց տուինք
ձեզ մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի զօրությունը և գալուստը.
այլ ականատես լինելով նորա
մեծափառութեանը: Վասն զի 17
Հայր Աստուածանից պատիւ և
փառք առաւ, երբոր այն մեծ
վայելչութեան փառքիցն այն-
պիսի ձայն եկաւ նորան. Դէ
Դա է իմ սիրելի Որդին որին
ես հաւանել եմ: Եւ այս ձայնը 18
մենք լսեցինք երկնքիցն եկած,
երբոր նորա հետ այն սուրբ
լեառնումն էինք: Եւ մար- 19
գարէական աւելի հաստատ
խօսքն ունինք, որ եթէ նորան
մտիկ անէք, լաւ կ'անէք, ինչ-
պէս մի ճրագի որ լոյս է տալիս
մութ տեղը, մինչև որ ցերեկը
լուսանայ և լուսաբերը ծագի
ձեր սրտերումը:
Որոյց առաջ այս գիտացէք, 20
որ ամեն մարգարէութիւն իր
գրուածքի մեկնութիւնովը չի
լինիլ: Վասն զի երբէք մի 21
մարգարէութիւն չտրուեցաւ
մարդկանց կամքի պէս, բայց
Սուրբ Հոգուցն շարժուած
խօսեցան Աստուծոյ մարդիկը:

ԳԼ. Բ

1 Լինէին և սուտ մարգարէք
'ի ժողովրդեանն՝ որպէս և
այժմ 'ի ձեզ լինիցին սուտ
վարդապետք. որք սպրդեալ
մուծանեն հերձուածս կորս-
տեան, և զոր Տէր գնեաց զնոսա
ուրացեալ՝ ածեն 'ի վերայ
անձանց զարագահան կորուստ:
2 Եւ բազումք անկեալ երթիցեն
զհետ նոցա անառակութեանցն.
վասն որոյ ճշմարտութեանն
3 ճանապարհ հայհոյիցի: Եւ
ագահութեամբ մոլորածին*բա-
նիւք առնիցեն զձեզ վաճառանդի՝.
որոց դատաստանն 'ի բնէ ոչ
դատարկանայ, և կորուստն նոցա
ոչ ներհնացէ:

4 Զի եթէ 'ի հրեշտակսն
յանցուցեալս Աստուած ոչ
խնայեաց, այլ խաւարին կա-
պանօք արկեալ 'ի տարտարոսն
5 ետ պահել 'ի դատաստան: Այս
և ոչ 'ի սկզբանն աշխարհի
խնայեաց. բայց զութերորդն
զԼոտ՝ զարդարութեանն քարոզ՝
պահեաց 'ի ջրհեղեղէ աշխարհի
6 ամբարշտելոցն ածեալ: Եւ
զքաղաքս Սոդոմայեցոցն և
Գոմորացւոց դարձուցեալ յա-
ճիւն՝ դատեցաւ, օրինակ առ
յապայ ամբարշտելոցն կացու-
7 ցանէր: Եւ զարդարն զԼոտ

* 'Ի Յոյնն, բանիւք 'ի վաճառ
արկցեն զձեզ

ԳԼ. Բ

1 Եւ սուտ մարգարէք էլ կային
այն ժողովրդի մէջ, ինչպէս
ձեր մէջ էլ պիտի սուտ վարդա-
պետներ լինին. որ ներս կըմտցը-
նեն կորստական հերձուածողու-
թիւններ. և ուրանալով այն
Տիրոջը որ իրանց գնեց, իրանց
վերայ շուտահաս կորուստ կը
բերեն: Եւ շատ մարդիկ կը
2 հետևին նորանց կորստեանը.
որոնց պատճառով ճշմարտու-
թեան ճանապարհը կ'հայհոյ-
3 ուի. Եւ ագահութիւնով նրանց
մտից հնարած խօսքերով ձեզ
վաճառաշահութեան կ'գործա-
ծեն, որոնց դատաստանը վա-
ղուց պապրաստուած պարապ չէ,
և նորանց կորուստը չէ ննջում:
4 Վասն զի եթէ Աստուած
այն հրեշտակներին, որ մեղան-
չեցին, չխնայեց, այլ խաւարի
կապանքովը տարտարոսը դցած՝
դատաստանի համար պահել
5 տուաւ. Եւ առաջին աշխարհ-
քին էլ չխնայեց, այլ Նոյին,
որ ութերորդն էր. այն արդա-
րութեան քարոզչին՝ պահեց
երբոր ամբարիշտների աշ-
խարհքի վերայ ջրհեղեղը ա-
6 ծեց: Եւ Սոդոմացոց և Գոմ-
որացոց քաղաքները մոխիր
դարձնելով կործանմամբ դա-
տապարտեց, յետոյ եկող ամ-

* 'Ի Յոյնն, կարողութեամբ մե-
ծամեծք՝ չածեն զնոցանէ զՀայհոյ-
ութեան դատաստան առաջի Աստուծոյ

ճանձրացեալ յանկարգ գիջու-
8 թեան գնացից՝ փրկեաց. Արան-
զի ականատես և ականջալուր
արդարն բնակեալ 'ի մէջ նոցա,
օր ըստ օրէ զիւր սուրբ ոգին՝
նոցա անօրէն գնացիւքն տան-
ջէր:

9 Գիտէ Տէր զաստուածա-
պաշտս փրկել 'ի փորձութենէ,
և զանիրաւս պահել 'ի տանջանս
աւուրն դատաստանի:

10 Մ՝անաւանդ՝ որ զհետ մար-
մնոյ պղծալից ցանկութեանց
իցեն երթեալ. արհամարհօղք
տէրութեանն՝ ժպիրհք՝ յանդ-
գուն՝ չզանգիտեն զփառսն
11 հայհոյել: Իւր հրեշտակք
զօրութեամբ և *կարողութեամբ
քան զնոսա մեծամեծք՝ չածեն
զնոքսք 'ի Տեառնէ զհայհոյու-
12 թեանն դատաստան՝: Այլ սոքա
իբրև զանխօս անասունս ըստ
բնածին բարուցն յեղծումն և
յապականութիւն՝ որոց չենն
գիտակ, հայհոյեն յապականու-
թեան իւրեանց, և ապակա-
նեսցին՝ Տանջեալք 'ի վարձուց
13 անիրաւութեան. որ ցանկու-
թիւն զաւուրն փափկութիւն
համարին. բծկանք՝ արատաւորք՝
փափկացեալք 'ի պատիրս իւր-

* 'Ի Յոյնն, կարողութեամբ մե-
ծամեծք՝ չածեն զնոցանէ զՀայհոյ-
ութեան դատաստան առաջի Աստուծոյ

բարիշտներին օրինակ դնելով.
7 Եւ փրկեց արդար Լոտին
որ անօրէնների անառակ վար-
մունքներովն ձանձրացել էր:
8 Վասն զի այն արդարը՝ նո-
րանց մէջ բնակելով՝ տեսնելովը
և լսելովը, օրէցօր իր արդար
հոգին տանջվում էր նորանց
անօրէն գործքերովը:
9 Տէրը գիտէ աստուածա-
պաշտներին փրկել փորձանքից,
և անիրաւներին պահել դա-
տաստանի օրուայ համար որ
տանջուին:
10 Մ՝անաւանդ նորանց որ պրղ-
ծալից ցանկութիւնով մարմնոյ
ետևից են գնում. և տէրու-
թիւնը անարգում, յանդուգ-
ներ, ինքնահաւաններ, որ չեն
վախում փառաւորներին հայ-
հոյել: Մ՝ինչդեռ հրեշտակներն,
11 որ զօրութիւնով և կարողութիւ-
նով աւելի մեծ են, հայհոյանքի
դատաստանը չեն բերում նո-
րանց վերայ Տիրոջ առջև: Իսկ
12 սորանք ինչպէս անբան անա-
սուններ, որ ի բնէ ծնուած են
որսի և ապականութեան հա-
մար, հայհոյում են այն բանե-
րը որ չեն գիտում, իրանց ա-
պականութիւնովը կ'ապակա-
նուին: Անիրաւութեան վարձքն
13 ստանալով, որ այս օրուայ
փափկութիւնը զուարճութիւն

եանց. լեալ ձեզ խրախճանա-
14 կիցք: Աչս ունին հանգոյնս
պոռնկաց՝ անդադարս ՝ի մեղաց,
պատրեն զանձինս յողջոյզդաց.
որ ունին սիրտ հարեալ զագա-
հութեան, մանկունք անիծից:
15 Թողեալ զուղղութիւն ճանապարհն՝
մոլորեցան. զհետ երթեալ
ճանապարհին Բաղաամայ Որ-
ովրեան՝ զվարձս անիրաւութեան
16 սիրեցին. Որ կշտամբանս իւրոյ
անօրէնութեանն ստացաւ զէշն
անխօսուն. մարդկեղէն բար-
բառովն բարբարեալ արգել
զմարգարէին զանօրէնութիւն:
17 Աւսպիսիքն են աղբիւրք անջր-
դիք՝ և մէգք վարեալք ՝ի մրրկէ.
որոց աղջամուղջք խաւարին
18 յաւիտեան պահեալկան: Որան-
զի մեծաբանս սնոտեաց բարբա-
ռեալ պատրեն գիջութեամբք
ցանկութեամբք մարմնոյ զայ-
նոսիկ՝ որ ստոյգն փախչեցին
յայնցանէ՝ որ ՝ի մոլորութենանն
19 շրջեցին. Նոցա ազատութիւն
խոստանան, և ինքեանք ապա-
կանութեանն ծառայք են. զի
որով իւիք յաղթիցի ոք, նորին
20 և ծառայ է: Զի եթէ փախու-
ցեալք ՝ի պղծութեանցաշխարհի
գիտութեամբ Տեառն մերոյ և
Փրկչին Յիսուսի Քրիստոսի, և
դարձեալ ընդ նոյնս շաղեալք
պատիցին՝ եղև նոցա վախճանն
21 չար քան զառաջինն: Զի լաւ
էր նոցա եթէ ընաւ իսկ չէր
ծանուցեալ զարդարութեանն
ճանապարհ. քան՝ զի ծանեան և

են համարում, աղտ են և կեղտ,
և իրանց խաբեբայութիւններու-
մը զուարճանում են, ձեզ հետ
միասին ուտել խմելիս: Աչքեր 14
ունին պոռնկութիւնով լիքն, և
մեղքիցը չեն դադարում. խա-
բում են անհաստատ անձներին,
որ ագահութիւնով բռնուած
սրտեր ունին, անէծքի որդիք:
Որ շիտակ ճանապարհը թողած 15
մոլորուեցան, Բէօրեան Բաղ-
աամի ճանապարհին հետևելով,
որ անիրաւութեան վարձքը
սիրեց: Որ իր անօրէնութեան 16
յանդիմանութիւնն ստացաւ,
անխօս էշը մարդու ձայնով
խօսելով՝ արգիլեց մարգարէի
յիմարութիւնը: Որովանք ան- 17
ջուր աղբիւրներ են, մրրկից
քշուած ամպեր, որոնց համար
խաւարի մթութիւնը պահուած
է յաւիտեան: Որ զի ու- 18
նայնութեան հպարտ բաներ
խօսելով՝ գիճութիւններով խա-
բում են մարմնոյ ցանկութիւն-
ներով նորանց, որ ճշմարտա-
պէս փախել են մոլորութեան
մէջ վարուողներից: Նորանց 19
ազատութիւն են խոստանում,
և իրանք ապականութեան ծա-
ռաներ են. վասն զի ինչ բանով
որ մէկը յաղթուի, նորա էլ
ծառան է: Որ զի եթէ աշ- 20
խարհի պղծութիւններից մեր
Տէր և Փրկիչ Յիսուսի Քրիս-
տոսի գիտութիւնովը փախչող-
ները կրկին նորանում շաղաղ-
ուած յաղթուին, նորանց վերջը

յետս կացին ՝ի սուրբ պատուի-
րանէն որ նոցա աւանդեցաւ:
22 Եկեալ ՝ի դէպ նոցա ճշմարիտ
առակին զգօնութեան, եթէ
Հ՝ուն դառնայ անդրէն ՝ի
փսխած իւր, և խոզ լուացեալ՝
ընդ տիղմ թաւալեալ:

ԳԼ. Գ

1 Այս ձեզ սիրելիք՝ երկրորդ
թուղթ գրեմ. որով զարթուցից
՝ի յիշատակ զհաստատուն միտս
2 ձեր. Յիշել զյառաջագոյն ա-
սացեալ պատգամս ՝ի սրբոց
մարգարէից և յառաքելոցն
ձերոց, զպատուէրս Տեառն և
3 Փրկչին: Որայց զայս նախ
գիտասջիք, զի յաւուրս յետինս
եկեսցեն արհամարհօղք՝ այպա-
նօղք, որ ըստ իւրեանց ցանկու-
4 թեանց գնայցեն. Եւ ասիցեն՝
Որը են աւետիք գալստեան նո-
րա. զի յորմէ հետէ հարքն
ննջեցին՝ ամենայն ինչ նոյնպէս
կայ մնայ ՝ի սկզբանէ արարածոց:
5 Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝
որ զայսն կամին. եթէ երկինք
եղեն ՝ի սկզբանէ՝ և երկիր ՝ի
ջրոց, և ջրովք հաստատեալ
6 բանիւն Աստուծոյ. Որ ո-
րոյ երբեմն աշխարհ ջրհեղեղաւ
7 ապականեալ կորեաւ: Եւ այժմ

չար եղաւ քան թէ առաջինը:
Որ զի լաւ էր նորանց որ 21
չճանաչէին արդարութեան ճա-
նապարհը, քան թէ ճանաչեցին
և յետ քաշուեցան այն սուրբ
պատուիրանքիցն, որ աւանդուե-
ցաւ նորանց: Եւ նորանց պա- 22
տահեց այն ճշմարիտ առակի
խօսքը. Որ Հ՝ունն վերադառ-
նում է դէպի իր փսխածը, և
լուացուած խոզը՝ թաւալուելու
ցեխի մէջ:

ԳԼ. Գ

Սիրելիներ, սա արդէն եր- 1
կրորդ թուղթն եմ գրում
ձեզ, որոնցով ձեր մաքուր
միտքը յիշեցնելով զարթնաց-
նեմ, Որ յիշէք սուրբ մար- 2
գարէներից առաջուց ասուած
խօսքերը և մեր՝ այսինքն Տիրոջ
և Փրկչի առաքեալներիս պա-
տուիրանքները: Որայց առաջ 3
այս գիտացէք, որ յետին օրե-
րումը ծաղր անողներ կ՝գան, որ
իրանց ցանկութեանց պէս կը-
վարուին: Եւ կասեն. Որը է 4
նորա գալստեան խոստումը,
վասն զի այնուհետև որ հարքը
վախճանեցան, ամեն բան նոյն-
պէս կենում մնում է աշխարհքի
ստեղծագործութիւնից հետէ:
Որ զի նորանք ուզում են 5
այս բանը մոռանալ, թէ եր-
կինքները վաղուց էին և երկիրս
ջրից և ջրով հաստատուած է
Աստուծոյ խօսքովը. Նորա հա- 6

երկինք և երկիր նովին բանիւ
գանձեալ են, հրոյ պահեալք
յօրն դատաստանի և կորստեան
8 ամբարիշտ մարդկան: Եւ այս
ևս մի՛ լիցի ի ձէնջ ծածկեալ
սիրելիք, զի մի օր Տեառն իբրև
զհազար ամ է, և հազար ամ
9 իբրև զմի օր: Ո՛չ յամեցուսցէ
Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք
յամր համարին, այլ երկայնա-
միտ լինի առ ձեզ. քանզի ո՛չ
կամի՛ եթէ ոք կորիցէ, այլ
զամենեսցուն հասանել յապաշ-
խարութիւն:

10 Այլ եկեսցէ օր Տեառն իբրև
զգող. յորում երկինք տագնա-
պաւ անցցեն, և բնութիւնք
հրով կիզեալ լուծցին, և երկիր՝
և որ ի նմա գործք գտանիցին:
11 Եւ ի լուծանել այսպէս այսր
ամենայնի, որպիսի՞ ինչ պարտ
լիցէ ձեզ գտանել. այլ սուրբ և
աստուածապաշտ կարգաւ ակն
12 ունել, Եւ փութալ հասանել
գալստեան աւուրն Տեառն. յո-
րում երկինք հրայրեալք լու-
ծանիցին, և բնութիւնք հրդե-
13 հեալ հալեցին: Նորոց երկնից՝
և նորոյ երկրի ըստ աւետեացն
հայեցեալ սպասիցեմք, յորս
արդարութիւնն բնակէ:

մար այն հին աշխարհքը ջըր-
հեղեղով ապականուած կորաւ:
Եւ այժմեան երկինքն ու երկիրս 7
նոյն խօսքովը պահպանուած
պահվում են կրակի համար,
դատաստանի և ամբարիշտ
մարդկանց կորստեան օրուամբ:
Բայց այս մէկն էլ ձեզանից 8
ծածուկ չլինի, սիրելիներ, որ
Տիրոջ մօտ մէկ օրը հազար տա-
րուայ պէս է, և հազար տա-
րին ինչպէս մէկ օր: Տէրը չի 9
ուշացնիլ խոստումը, ինչպէս
ոմանք ուշացնել են կարծում,
բայց երկայնամիտ է լինում մեզ
վերայ, որովհետև չէ կամե-
նում որ կորչողներ լինին, բայց
որ ամենքն ապաշխարութեան
հասնեն:

Բայց Տիրոջ օրը (գիշերուայ) 10
գողի պէս կ'գայ. որ նորանում
երկինքը շառաչիւնով կանցնէ
և տարերքը կրակով վառուած
կ'հալուին, և երկիրն և նորա-
նում եղած բաներն էլ կ'այ-
րուին: Հիմա որ սորանք ա- 11
մենքը հալուելու բաներ են.
ի՞նչպէս պէտք է դուք գտնուիք
սուրբ և աստուածապաշտ վար-
քում: Սպասելով և ջանք 12
անելով Տիրոջ գալստեան օրին
հասնել, որ նորանում երկինք-
ները կրակով այրուած կըլու-
ծուին. և տարերքը կրակ ըն-
կած կ'հալուին: Բայց նորա 13
խոստմունքի պէս՝ նոր երկնքի և
նոր երկրի ենք սպասում, որոն-
ցում արդարութիւն է բնակում:

14 Վասն որոյ սիրելիք՝ այսոցիկ
սպասեալ, փութ յանձին ունի-
ջիք՝ անարիծք և անարատք
գտանել նմա ի խաղաղութիւն.
15 Եւ զՏեառն երկայնմտութիւնն՝
փրկութիւն համարիջիք: Զոր
օրինակ և սիրելի եղբայրն մեր
Պօղոս՝ ըստ շնորհելոյ իմաս-
տութեանն նմա Աստուծոյ՝
16 գրեաց ձեզ. Որպէս և յամե-
նայն իսկ թուղթսն խօսի վասն
այսոցիկ. յորս գտանի ինչ ինչ
դժուարիմաց, զոր անուսմունքն
և յողդողդն կամակորքն. որ-
պէս և զամենայն իսկ գիրս առ
իւրեանց անձանցն կորուստ:
17 Դուք այսուհետև սիրելիք՝ իր-
բև զկանխագէտս զգուշացջիք,
զի մի՛ անառակ մոլորութեամբն
զգածեալք՝ անկանիջիք յաստեաց
18 հաստատութեանն: Աճեցէք շը-
նորհօք և գիտութեամբն Տեառն
մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիս-
տոսի: Նմա փառք՝ և այժմ,
և յօրն յաւիտենից. Ամէն:

Որոնց համար, սիրելիներ, 14
սորանց սպասելով ջանք արէք
որ անբիծ և անարատ գտնուիք
նորա առջև խաղաղութեան մէջ:
Եւ մեր Տիրոջ երկայնմտու- 15
թիւնը փրկութիւն համարե-
ցէք. ինչպէս մեր սիրելի եղբայր
Պօղոսն էլ Աստուածանից իրան
տրուած իմաստութեան պէս
գրեց ձեզ: Ինչպէս ամեն թղթ- 16
թերումն էլ խօսում է այս
բաների համար. որոնցում մի
քանի դժուարիմաց բաներ կան.
որ անուսումները և անհաս-
տատները նորանց ծռում են,
ինչպէս միւս գրքերն էլ՝ իրանց
անձների կորստեան համար:
Ուրեմն դուք, սիրելիներ, ա- 17
ռաջուց իմանալով զգոյշ կացէք,
որ մի գուցէ անօրէնների մոլ-
որութիւնովը յափշտակուելով
ընկնիք ձեր հաստատութիւնից:
Եւ աճեցէք մեր Տէր և Փրկիչ 18
Յիսուսի Քրիստոսի շնորհքովն
և գիտութիւնովը. նորան լինի
փառք և հիմա և մինչև յաւի-
տենական օրն. Ամէն:

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 ՈՐ էրն 'ի սկզբանէ, զորմէ
լուաքն՝ որում ականա-
տեսն իսկ եղեաք. ընդ որ
հայեցաքն, և ձեռք մեր շօշա-
փեցին 'ի վերայ բանին կենաց:
2 Եւ կեանքն յայտնեցան, և
տեսաք՝ և վկայեմք և պատմեմք
ձեզ զյաւիտենական կենացն.
որ էր առ Հօր՝ և երևեցաւ
3 մեզ: Զոր տեսաքն և լուաք
պատմեմք և ձեզ, զի և դուք
հաղորդութիւն ունիցիք ընդ
մեզ. և մեր հաղորդութիւնն իցէ
ընդ Հօր՝ և ընդ Որդւոյ իւրում
4 Յիսուսի Քրիստոսի: Եւ զայս
գրեմք ձեզ, զի ձեր ուրախու-
թիւնն կատարեալ լիցի:
5 Եւ այս են աւետիքն՝ զոր
լուաք առ 'ի նմանէ՝ և պատմեմք
ձեզ. զի Աստուած լոյս է, և
խաւար 'ի նմա չկիք և ոչ մի:
6 Եթէ ասիցեմք՝ եթէ հաղորդու-
թիւն ունիմք ընդ նմա՝ և 'ի
խաւարի շրջիցիմք, ստեմք՝ և ոչ
7 առնեմք զճշմարտութիւնն: Իսկ
եթէ ընդ լոյս գնայցեմք՝ որպէս

Զոր որ սկզբանէն էր, որ 1
լսեցինք, որ մեր աչքե-
րովք տեսանք, որին նայեցինք,
և մեր ձեռունքը շօշափեցին՝ կե-
նաց բանի համար. (Եւ կեանքը 2
յայտնուեցաւ, և տեսանք, և
վկայում ենք, և պատմում ենք
ձեզ յաւիտենական կեանքը, որ
Հօր մօտ էր և երևեցաւ մեզ:)
Այն որ տեսանք և լսեցինք, 3
պատմում ենք ձեզ, որ դուք
էլ հաղորդութիւն ունենաք մեզ
հետ. և մեր հաղորդութիւնը
Հօր հետ և նորա Որդի Յի- 4
սուսի Քրիստոսի հետ: Եւ
սա գրում ենք ձեզ, որ ձեր ու-
րախութիւնն կատարեալ լինի:
Եւ սա է այն աւետիքն, որ 5
նորանից լսեցինք և պատմում
ենք ձեզ, թէ Աստուած լոյս է,
և ոչ մի խաւար չկայ նորա-
նում: Եթէ ասենք թէ հա- 6
ղորդութիւն ունինք նորա հետ,
և խաւարի մէջ մանք գանք, սուտ
ենք ասում՝ և ճշմարտութիւնը
չենք անում: Այլ եթէ լուսոյ 7

և նա 'ի լոյս է, հաղորդութիւն
ունիմք ընդ միմեանս. և արիւնն
Յիսուսի Որդւոյ նորա սրբէ
8 զմեզ յամենայն մեղաց: Եթէ
ասիցեմք՝ եթէ Մեղս ինչ մեք
ոչ ունիմք, զանձինս խաբեմք. և
ճշմարտութիւն 'ի մեզ ոչ գոյ:
9 Այլ եթէ խոստովան լինիցիմք
զմեղս մեր, հաւատարիմ է նա
և արդար առ 'ի թողուլ զմեղս
մեր, և սրբել զմեզ յամենայն
10 անիրաւութենէ: Եւ եթէ ասի-
ցեմք՝ եթէ Ոչինչ մեղաք, սուտ
առնեմք զնա, և բան նորա ոչ է
'ի մեզ:

ԳԼ. Բ

1 Ո՛րդեակք իմ, զայս գրեմ
ձեզ՝ զի մի՛ մեղիցէք, և եթէ
մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ
Աստուած զՅիսուս Քրիստոս՝
2 զարդարն՝ և զանարատ: Եւ նա
է քաւութիւն մեղաց մերոց. և
ոչ եթէ մերոցն միայն այլ և
ամենայն աշխարհի:
3 Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ
ծանեաք զնա, եթէ զպատուի-
4 բանս նորա պահիցեմք: Որ
ասիցէ՝ եթէ Ծանեայ զնա, և
զպատուիրանս նորա ոչ պահիցէ,
սուտ է՝ և ճշմարտութիւն 'ի
5 նմա ոչ գոյ: Իսկ որ պահիցէ
զբան նորա, արդարև 'ի նմա
կատարեալ է սէրն Աստուծոյ.
այսուիկ ճանաչեմք՝ եթէ 'ի նմա
6 եմք: Որ ասիցէ 'ի նմա բնակել

մէջ մանք գանք ինչպէս նա է
լուսոյ մէջ, հաղորդութիւն ու-
նինք իրար հետ, և նորա Որդի
Յիսուսի Քրիստոսի արիւնը
մեզ սրբում է ամեն մեղքից:
Եթէ ասենք թէ մեղք չունինք, 8
մեր անձնները խաբում ենք և
ճշմարտութիւնը չկայ մեզա-
նում: Այլ թէ մեր մեղքերը 9
խոստովանինք, հաւատարիմ է
և արդար որ մեր մեղքերը թողէ
մեզ, և սրբէ մեզ ամեն անիրա-
ւութիւնից: Եթէ ասենք թէ 10
մեղք չգործեցինք, ստախօս ենք
անում նորան, և նորա խօսքը
մեզանում չէ:

ԳԼ. Բ

Իմ որդեակներս, սա գրում 1
եմ ձեզ որ չմեղանչէք, և եթէ
մէկը մեղանչէ, բարեխօս ու-
նինք Հօր մօտ Յիսուս Քրիս-
տոս արդարին: Եւ նա քաւու- 2
թիւն է մեր մեղաց համար. և
ոչ միայն մերիններին բայց բոլոր
աշխարհքի էլ:
Եւ սորանով գիտում ենք որ 3
ճանաչեցինք նորան, եթէ նորա
պատուիրանքները պահենք, Ով 4
որ ասում է, Ես ճանաչեցի
նորան և նորա պատուիրանք-
ները չէ պահում, ստախօս է, և
ճշմարտութիւն չկայ նորա-
նում: Բայց ով որ նորա խօսքը 5
պահէ, իրաւի Աստուծոյ սէրը
նորանում կատարեալ է. սորա-
նով ճանաչում ենք որ նորա-

այնպէս պարտի գնալ՝ որպէս և
Նայն գնաց :

7 Սիրելիք՝ ոչ եթէ նոր ինչ
պատուիրան գրեմ ձեզ, այլ
զհին պատուիրանն՝ զոր 'ի
սկզբանէ ունէիք, և հին պա-
տուիրան՝ բանն է զոր լուարուք:
8 Դարձեալ նոր պատուիրան
գրեմ ձեզ՝ որ է ճշմարտիւ 'ի
Նմա և 'ի ձեզ. զի խաւարն
անցանէ, և լոյսն ճշմարիտ
9 արդէն իսկ երևի : Որ ասէ եթէ
'ի լոյսն լեալ է՝ և զեղբայր իւր
ատիցէ, սուտ է՝ և 'ի խաւարի է
10 տակաւին : Որ սիրէ զեղբայր
իւր, 'ի լոյս բնակէ՝ և գայ-
11 թագղութիւն 'ի Նմա չկայ : Իսկ
որ ատեայ զեղբայր իւր՝ 'ի
խաւարի է, և ընդ խաւար
շրջի. և ոչ գիտէ յո՞ երթայ,
զի խաւարն կուրացոյց զաչս
Նորա :

12 Գրեմ ձեզ, որդեակք՝ զի
թողեալ են ձեզ մեղքն ձեր
13 վասն անուան Նորա : Գրեմ՝
ձեզ հարք՝ զի ծանեայք դուք
զայն՝ որ 'ի սկզբանէն է : Գրեմ
ձեզ երիտասարդք՝ զի յաղթեցիք
դուք չարին : Գրեցի ձեզ ման-
կունք՝ զի ծանեայք դուք
14 զՀայրն : Գրեցի ձեզ հարք՝ զի
ծանեայք դուք զայն որ 'ի
սկզբանէն է : Գրեցի ձեզ
երիտասարդք՝ զի էք դուք
Նում ենք : Որ ասում է 6
թէ Նորանում եմ բնակում,
պէտք է, ինչպէս որ Նա գնաց,
ինքն էլ այնպէս գնայ :

Եղբայրներ, ոչ թէ մի նոր 7
պատուիրանք եմ գրում ձեզ,
այլ հին պատուիրանքը, որ
սկզբից ունէիք և հին պա-
տուիրանքն այն խօսքն է, որ
լսեցիք սկզբից : Դարձեալ 8
նոր պատուիրանք եմ գրում
ձեզ, որ ճշմարիտ է Նորանում
և ձեզանում. վասն զի խաւարն
անցնում է, և ճշմարիտ լոյսն
արդէն երևում է : Որ ա- 9
սում է, թէ լուսոյ մէջ է և իր
եղբօրն ատում է, մինչև հիմա
խաւարի մէջ է : Դա՝ որ իր 10
եղբօրը սիրում է, լուսոյ մէջ է
մնում, և գայթակղութիւն չկայ
Նորանում : Բայց նա՝ որ իր 11
եղբօրն ատում է, խաւարումն
է, և խաւարի մէջ է մնն գալիս,
և չէ գիտում թէ ուր է գնում,
վասն զի խաւարը կուրացրեց
Նորա աչքերը :

Գրում եմ ձեզ, որդեակներ, 12
վասն զի ձեր մեղքերը թողուած
են ձեզ Նորա անունի հա-
մար : Գրում եմ ձեզ, հարք, 13
վասն զի ճանաչեցիք Նորան որ
սկզբից է. գրում եմ ձեզ,
երիտասարդներ, վասն զի դուք
յաղթեցիք չարին : Գրում 14
եմ ձեզ, մանկունք, վասն զի
ճանաչեցիք Հօրը. գրեցի ձեզ,
հարք, վասն զի ճանաչեցիք Նո-
րան որ սկզբից է. գրեցի ձեզ,

երիտասարդներ, վասն զի դուք
զօրաւոր էք. և Աստուծոյ խօսքը
բնակում է ձեզանում, և դուք
յաղթել էք չարին : Մի սի- 15
րէք աշխարհքը. և ոչ էլ այն
որ աշխարհքի մէջ է : Եթէ 16
մէկն աշխարհքին սիրէ, Հօր
սէրը Նորանում չէ. վասն զի
ամեն ինչ որ աշխարհքումն է՝
մարմնոյ ցանկութիւնը, և այս
կեանքի ամբարտաւանութիւնը
Հօրից չէ. այլ աշխարհքից
է : Եւ աշխարհքը անցնում 17
է և Նորա ցանկութիւնն էլ,
այլ Աստուծոյ կամքն անողը
մնում է յաւիտեան :

Որդեակներ, վերջի ժամա- 18
նակն է, և ինչպէս լսեցիք թէ
Դեռը գալիս է, և այժմ շատ
Դեռներ են եղել, որ սորանից
իմանում ենք թէ վերջի ժա-
մանակն է : Մեզանից դուրս 19
գնացին, բայց մեզանից չէին.
վասն զի եթէ մեզանից լինէին,
ապա մեզ հետ մնացած կ'լինէին.
բայց որ յայտնի լինին թէ
Նորանք ամենքն մեզանից չեն :
Եւ դուք օծութիւն ունիք այն 20
Սուրբից, և ամեն բան գիտէք :
Ձգրեցի ձեզ իբր թէ ճշմար- 21
տութիւնը չէք գիտում, այլ
թէ գիտէք Նորան, և՝ թէ ամեն
ստութիւն այն ճշմարտութիւ-
նից չէ : Ո՞վ է սուտը, եթէ 22
ոչ Նա՝ որ ուրանում է թէ
Յիսուսը չէ Քրիստոսը. Նա
Դեռն է, որ ուրանում Հօրը և
Որդուն : Ամեն ով որ Որդուն 23

Հզօրացեալք և բանն Աստուծոյ
'ի ձեզ բնակէ, և յաղթեցիք
15 դուք չարին : Մի՛ սիրէք զաշ-
խարհ՝ և մի՛ որ ինչ յաշխարհի
16 է : Եթէ ոք սիրէ զաշխարհ,
ոչ է 'ի Նմա սէր Հօր. զի
ամենայն որ ինչ յաշխարհի է՝
ցանկութիւն է մարմնոյ, և
ցանկութիւն է աչաց, և ամբար-
տաւանութիւն աստի կենացս.
որ ոչ է առ 'ի Հօրէ, այլ
17 յաշխարհէ աստի է : Եւ աշ-
խարհս անցանէ՝ և ցանկութիւնն
Նորա. իսկ որ առնէ զկամս Ա-
ստուծոյ՝ մնայ յաւիտեան :

18 Մ՛որդեակք յետին ժամանակ
է, և որպէս լուարուք՝ եթէ
Դեռն գալոց է, և արդէն իսկ
Դեռինք բազումք եկեալ են,
որով մարթեմք իմանալ՝ եթէ
19 յետին ժամանակ է : Ելա 'ի
մէնջ ելին, այլ ոչ էին 'ի մէնջ.
զի եթէ 'ի մէնջ էին՝ ապա առ
մեզ մնային. այլ զի յայտնի
լինիցին՝ եթէ ոչ էին ամենեքին
20 Նոքա 'ի մէնջ : Եւ դուք օծու-
թիւն ունիք առ 'ի Սրբոյն, և
21 գիտէք ամենեքին : Մ՛ոչ գրեցի
ձեզ՝ եթէ ոչ գիտէք զճշմարտու-
թիւնն, այլ թէ գիտէք զնա. և
թէ՝ զի ամենայն ստութիւն ոչ
է 'ի ճշմարտութենէ անտի :
22 Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ
ուրանայ եթէ Յիսուս չէ Քրի-
ստոսն. Նա իսկ է Դեռն, որ
ուրանայ զՀայր և զՈրդի :
23 Ամենայն որ ուրանայ զՈրդի, և

ոչ զ՝այր ընդունի. իսկ որ
խոստովանի զՈրդի, նա և
24 զ՝այր ընդունի։ Դուք զոր
լուարուքն ՚ի սկզբանէ՝ ՚ի ձեզ
բնակեսցէ. զի եթէ ՚ի ձեզ
բնակեսցէ՝ զոր ՚ի սկզբանէն
լուարուք, և դուք յՈրդի և ՚ի
25 ՀՀայր բնակեսջիք։ Եւ այս են
աւետիքն՝ զոր աւետարանեաց
նա մեզ՝ զկեանսն յաւիտենականս։
26 Այս գրեցի ձեզ, զի մի ոք
27 զձեզ մոլորեցուցանիցէ։ Եւ
դուք օծութիւնն՝ զոր ընկալա-
բուք ՚ի նմանէ՝ բնակեսցէ ՚ի
ձեզ. և չէ՛ ինչ պիտոյ՝ թէ ոք
զձեզ ուսուսցէ, այլ որպէս զի
նորա օծութիւնն ուսուցանիցէ
զձեզ վասն ամենայնի. և ճըշ-
մարիտ է՝ և չէ՛ սուտ. և որպէս
ուսոյցն զձեզ, կայք ՚ի նմա։

28 Եւ այժմ որդեակք՝ կացէ՛ք
՚ի նմին. զի եթէ յայտնեսցի,
ունիցիմք համարձակութիւն,
և մի՛ ամաչեսցուք ՚ի նմանէ ՚ի
29 գալստեանն նորա։ Զի եթէ
գիտիցէք՝ եթէ արդար է նա,
իմասջի՛ք՝ եթէ ամենայն որ առնէ
զարդարութիւն՝ առ ՚ի նմանէ է
ծնեալ։

ԳԼ. Գ

1 Տեսէ՛ք որպիսի սէր շնորհեաց
մեզ Հայր. զի որդիք Աստուծոյ
կոչեսցուք և մե՛ք. վասն այսորիկ
աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝
քանզի ոչ ծանեաւ զնա։

ուրանում է, Հօրն էլ չունի.
[նա որ Որդուն դաւանում է,
Հօրն էլ ունի։] Արդ դուք այն 24
որ լսեցիք սկզբից, թող բնակէ
ձեզանում. եթէ բնակէ ձե-
զանում այն որ սկզբից լսեցիք,
դուք էլ կ՚բնակէք Որդու և 25
Հօր մէջ։ Եւ սա է այն աւե-
տիքն որ նա աւետարանեց մեզ,
այսինքն յաւիտենական կեանքը։
Այս բաները գրեցի ձեզ՝ 26
ձեզ մոլորեցնողների մասին։
Եւ դուք այն օծութիւնն, որ 27
նորանից ընդունեցիք բնակում
է ձեզանում. և դուք պէտք
չունիք որ մէկը սովորեցնէ ձեզ.
այլ ինչպէս այն օծութիւնը սո-
վորեցնում է ձեզ ամեն բանի
համար, ճշմարիտ էլ է և սուտ
չէ. և ինչպէս նա սովորեցրեց
ձեզ, կացէք նորանում։
Եւ հիմա, որդեակներ, կացէք 28
նորանում. որ երբոր նա կը յայտ-
նուի, համարձակութիւն ունե-
նանք, և չամաչենք նորանից
նորա գալստեան ժամանա-
կումը։ Եթէ գիտէք որ նա 29
արդար է, կիմանաք թէ ամեն
ով որ արդարութիւն է անում,
նորանից է ծնուած։

ԳԼ. Գ

Տեսէք թէ Հայրն ինչպիսի 1
սէր շնորհեց մեզ, որ Աստուծոյ
որդիք կոչուինք, սորա համար
աշխարհը չէ ճանաչում մեզ,
վասն զի նորան չճանաչեց։

2 Սի՛րելիք՝ այժմ որդիք Աս-
տուծոյ եմք, և չևևս է յայտ՝
եթէ զինչ լինելոց իցեմք. գի-
տեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝
նման նմա լինելոց եմք, զի
տեսանելոց եմք զնա՝ որպէս և
էն։
3 Եւ ամենայն որ ունի զայս
յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր՝
4 որպէս և նայն սուրբ է։ Ամե-
նայն որ զմեղս գործէ, նա և
զանօրէնութիւն առնէ, և ինքն
իսկ մեղքն անօրէնութիւն է։
5 Եւ գիտեմք՝ զի նա յայն սակս
յայտնեցաւ՝ զի զմեղս բարձցէ,
6 և ՚ի նմա մեղք ոչ են։ Ամենայն
որ ՚ի նմա է հաստատեալ՝ ոչ
մեղանչէ. և ամենայն որ մե-
ղանչէ, ոչ ետես զնա՝ և ոչ
7 ծանեաւ զնա։ Մանկունք՝ մի՛
ոք զձեզ խաբեսցէ. որ առնէ
զարդարութիւն, արդար է՝ որ-
8 պէս և նայն արդար է։ Եւ որ
առնէ զմեղս՝ ՚ի Սատանայէ է,
զի ՚ի սկզբանէ Սատանայ մե-
ղանչէ. վասն այսորիկ յայտնե-
ցաւ Որդին Աստուծոյ՝ զի
լուծցէ զգործս Սատանայի։
9 Ամենայն որ յԱստուծոյ է
ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի
սերմն նորա ՚ի սմա մնայ. և ոչ
կարէ մեղանչել, զի յԱստուծոյ
10 է ծնեալ։ Այսուիկ յայտնի են
՚ի միմեանց որդիք Աստուծոյ՝ և
որդիք Սատանայի։

Սիրելիներ, հիմա Աստուծոյ 2
որդիք ենք, և տակաւին յայտ-
նուած չէ թէ ինչ պիտի լինինք.
բայց գիտենք թէ, երբոր նա
յայտնուեցաւ, նորա նման
կ՚լինինք, վասն զի կ՚տեսնենք
նորան՝ ինչպէս որ է։
Եւ ամեն ով որ այս յոյսն 3
ունի իրանում, սրբում է իր
անձն ինչպէս որ նա սուրբ է։
Ամեն ով որ մեղք է գործում, 4
նա անօրէնութիւն էլ է ա-
նում, և մեղքն է անօրէնու-
թիւնը։ Եւ գիտէք թէ նա 5
յայտնուեցաւ որ մեր մեղքերը
վեր առնէ. և նորանում մեղք
չկայ։ Ամեն ով որ նորանում 6
մնում է՝ չէ մեղանչում. Ամեն ով որ մեղանչում է, չէ
տեսել նորան և ոչ էլ ճա-
նաչել նորան։ Մանկունք, ոչ 7
ոք ձեզ չը խաբէ. նա որ ար-
դարութիւն է անում, արդար
է, ինչպէս նա էլ արդար է։
Եւ նա որ մեղք է անում, սա 8
Սատանայից է. վասն զի սատա-
նան հէնց սկզբից մեղանչում
է, նորա համար յայտնուեցաւ
Աստուծոյ Որդին, որ սատա-
նայի գործքերը քանդէ։ Ամեն 9
ով որ Աստուածանից է ծնուած,
մեղք չէ անում. վասն զի նորա
սերմը նորանում մնում է, և
չէ կարող մեղանչել, վասն զի
Աստուածանից է ծնուած. Սո- 10
բանով են յայտնի Աստուծոյ
Որդիքը և սատանայի որ-
դիքը։

Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ նա յԱստուծոյ, և որ ոչ սիրէ զեղբայր իւր։
11 Զի այս է պատուիրանն՝ զոր լուարուք ի սկզբանէ՝ զի սի-
12 րեսցուք զմիմեանս։ Ո՛չ որպէս Կայէնն ի չարէ անտի էր՝ և սպան զեղբայրն իւր։ և յո՞ր սակս սպան զնա։ զի իւր գործքն չար էին, և եղբօրն բարիք։
13 Եւ մի՛ ինչ զարմանայք եղբարք, եթէ աշխարհ զձեզ ատեայ։
14 Ա՛նք գիտեմք՝ զի փոխեցաք ի մահուանէ ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս։ իսկ որ ոչն սիրէ, անդէն ի մահուն մնայ։
15 Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է։ և գիտէք՝ զի ամենայն մարդասպան ոչ ունի կեանս յաւիտենականս
16 յանձին հաստատեալ։ Այսուիկ գիտացաք զսէրն (Աստուծոյ)։ զի նա զանձն իւր եդ վասն մեր։ և մեք վասն եղբարց մերոց պար-
17 տիմք դնել զանձինս։ Որ ունիցի զկեանս ինչ զաշխարհիս՝ և տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիր՝ և փակիցէ զգութս իւր առ ի նմանէ, զիա՞րդ սէրն Աստուծոյ ի նմա իցէ բնակեալ։

18 Ո՛րդեակք՝ մի՛ բանիւք և լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ։
19 Եւ այսուիկ լիցուք ծանուցեալք՝ եթէ ի ճշմարտութենէ

Ամեն ով որ արդարութիւն չէ անում, նա Աստուածանից չէ, և ոչ էլ նա՝ որ իր եղբօրը չէ սիրում։ Վասն զի սա է 11
պատուիրանքն, որ սկզբից լսեցիք, որ իրար սիրենք։ Ոչ 12
թէ այնպէս ինչպէս որ Կայէնն էր չարից և իր եղբօրն սպանեց։ և ինչո՞ւ համար սպանեց նորան, որովհետև իր գործերը չար էին և իր եղբօրը արդար։
Մի զարմանաք, եղբարքս, եթէ 13
աշխարհքս ատէ ձեզ։ Ա՛նք 14
գիտենք որ մահից ի կեանք փոխուեցանք։ վասն զի եղբայրներին սիրում ենք։ բայց ով որ չէ սիրում եղբօրը, մնում է մահուան մէջ։ Ամեն ով որ 15
իր եղբօրը ատում է, մարդասպան է։ և գիտէք որ ամեն մարդասպան յաւիտենական կեանք չունի հաստատուած իրանում։
Սորանով գիտացինք [Քրիս- 16
տոսի] սէրը, որ նա իր անձը դրեց մեզ համար։ և մենք պարտենք մեր եղբարց համար դնել մեր անձները։ Ով որ 17
այս աշխարհքի ապրանքն ունենայ, և տեսնէ իր եղբայրը կարօտ ֆ բանի, և իր գութը փակէ նորանից, ի՞նչպէս Աստուծոյ սէրը բնակած կ՚լինի նորանում։
Որդեակներ, չսիրենք խօս- 18
քով և ոչ էլ լեզուով, այլ գործով և ճշմարտութիւնով։
Եւ սորանով ենք ճանա- 19
չում՝ թէ ճշմարտութիւնից

անտի իցեմք, և առաջի նորա արասցուք հանդէս սրտից մե-
20 րոց։ Եթէ ստգտանիցեն զմեզ սիրտք մեր՝ այլ Աստուած մեծ է քան զսիրտս մեր՝ և գիտէ զամե-
21 նայն։ Սիրելիք՝ եթէ սիրտք մեր զմեզ ոչ ստգտանիցեն, համարձակութիւն ունիմք առ
22 Աստուած։ Եւ զոր ինչ հայցեմք, առնումք ի նմանէ, զի զպատուիրանս նորա պահեմք, և զհաճոյս առաջի նորա առ-
23 նեմք։ Եւ այս է պատուիրան նորա, զի հաւատասցուք յանուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և սիրեսցուք զմիմեանս, որպէս ևետ մեզ պատուէր։
24 Եւ որ պահէ զպատուիրանս նորա, ի նմա է հաստատեալ՝ և նա ի սմա։ և յայսմանէ գիտեմք եթէ բնակէ ի մեզ ի Հոգւոյ անտի զոր ետ մեզ։

ԳԼ։ Դ

1 Սիրելիք՝ մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք։ այլ ընտրեցէք զՀոգիսն՝ եթէ յԱստուծոյ իցեն։ զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ։
2 Եւ մեք այսուիկ ճանաչեմք զՀոգին Աստուծոյ։ Ամենայն հոգի՝ որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ,
3 յԱստուծոյ է նա։ Եւ ամենայն հոգի որ ոչ խոստովանի զՅիսուս մարմնով եկեալ, չէ նա

ենք, և նորա առջև ի հանդէս բերենք մեր սրտերը։ Որ եթէ 20
մեր սիրտը մեղադրէ մեզ, այլ Աստուած մեր սրտից աւելի մեծ է և ամեն բան գիտէ։
Սիրելիներ, եթէ մեր սրտերը 21
չմեղադրեն մեզ, համարձակութիւն ունինք առ Աստուած։
Եւ ինչ որ խնդրենք կ՚առնենք 22
նորանից։ վասն զի նորա պատուիրանքները պահում ենք, և նորա առջև հաճոյ եղածները անում ենք։
Եւ սա է նորա 23
պատուիրանքը, որ հաւատանք նորա Որդի Յիսուսի Քրիստոսի անունին, և իրար սիրենք, ինչպէս նա պատուիրանք տուաւ մեզ։
Եւ նա որ նորա պատուի- 24
րանքները պահում է, մնում է նորանում և նա սորանում։ և սորանից գիտենք թէ բնակում է մեզանում՝ այն Հոգուցն որ տուաւ մեզ։

ԳԼ։ Դ

Սիրելիներ, ամեն հոգու մի 1
հաւատաք։ այլ փորձեցէք հոգիները թէ արդեօք Աստուածանից են։ վասն զի շատ սուտ մարգարէներ են դուրս ելել աշխարհք։
Սորանով ճանա- 2
չեցէք Աստուծոյ Հոգին։ ամեն հոգի որ խոստովանում է Յիսուս Քրիստոսին մարմնով ելած, Աստուածանից է։
Եւ 3
ամեն հոգի որ չէ խոստովանում Յիսուս Քրիստոսին մարմ-

Աստուծոյ. և այս Լեռինն է,
զորմէ լուարուք՝ եթէ գալոց է,
և արդէն իսկ յաշխարհի է։
4 Լուք Աստուծոյ էք որդեակք,
և յաղթեցիք նոցա. զի մեծ է
որ ի ձեզդ է՝ քան զայն որ յաշ-
5 խարհին է։ Նոքա յաշխարհէ
են, վասն այնորիկ յաշխարհէ
խօսին, և աշխարհ լսէ նոցա.
6 Մինք Աստուծոյ եմք. որ
զԱստուած ճանաչէ՝ լսէ մեզ, և
որ չէ Աստուծոյ՝ ոչ լսէ մեզ.
այսուիկ ճանաչեմք զՀոգին
ճշմարտութեան և զհոգին խա-
բէութեան։

7 Սիրելիք՝ սիրեսցո՛ւք ըզմի-
մեանս, զի սէր Աստուծոյ է.
և ամենայն որ սիրէ՝ Աստուծոյ
է ծնեալ՝ և ճանաչէ զԱստուած։
8 Եւ որ ո՛չն սիրէ՝ ոչ ճանաչէ
զԱստուած, զի Աստուած սէր
9 է։ Եւ զի յայսմ երևեցաւ
սէրն Աստուծոյ ի մեզ, զի
զՈրդին իւր միածին առաքեաց
յաշխարհ, զի եղիցուք նովաւ
10 կենդանիք։ Յայսմ է սէրն.
ոչ զի մեք սիրեցաք զԱստուած՝
այլ զի նա սիրեաց զմեզ, և
առաքեաց զՈրդին իւր ի
11 քաւութիւն մեղաց մերոց։ Սի-
րելիք՝ եթէ Աստուած այնպէս
սիրեաց զմեզ, ապա և մեք
պարտիմք զմիմեանս սիրել։

նով եկած, Աստուածանից չէ.
և նա Լեռի հոգին է, որ լսեցիք
թէ գալիս է, և հիմա արդէն
աշխարհքումն է։ Լուք Աստ- 4
ուածանից էք. որդեակներ, և
յաղթեցիք նորանց. վասն զի
աւելի մեծ է նա որ ձեզանում
է, քան թէ նա որ աշխարհքիս
մէջ է։ Նորանք աշխարհքիցն 5
են, նորա համար աշխարհքիցն
են խօսում, և աշխարհքը լսում
է նորանց։ Մենք Աստուածա- 6
նից ենք. ով որ Աստուծոյն
ճանաչում է՝ լսում է մեզ, ով
որ Աստուածանից չէ, չէ լսում
մեզ. սորանից ենք ճանաչում
ճշմարտութեան Հոգին և խա-
բէութեան հոգին։

Սիրելիներ, իրար սիրենք, 7
վասն զի սէրն Աստուածանից է.
և ամեն ով որ սիրում է Աստ-
ուածանից է ծնուած, և ճա-
նաչում է Աստուծոյն։ Նա 8
որ չէ սիրում, Աստուծոյն չէ
ճանաչել. վասն զի Աստուած
սէր է։ Սորանով Աստուծոյ 9
սէրն երևեցաւ մեզանում, որ
Աստուած իր միածին Որդուն
ուղարկեց աշխարհը, որ նո-
րանով կեանք ունենանք։ Սո- 10
րանում է սէրն, որ ոչ թէ
մենք սիրեցինք Աստուծոյն, այլ
որ նա սիրեց մեզ, և ուղարկեց
իր Որդուն քաւութիւն մեր
մեղքերի համար։ Սիրելիներ, 11
եթէ Աստուած այսպէս սիրեց
մեզ, ապա մենք էլ պէտք է իրար
սիրենք։

12 Զաստուած ուրուք երբէք
չէք տեսեալ. եթէ սիրեսցուք
զմիմեանս՝ Աստուած ի մեզ
բնակէ, և սէր նորա ի մեզ
13 կատարեալ է։ Այսուիկ գի-
տեմք, եթէ մեք ի նմա բնա-
կեալ եմք՝ և նա ի մեզ, զի ի
14 Հոգւոյն իւրմէ եւ մեզ։ Եւ
մեք տեսաք՝ և վկայեմք, զի
Հայր առաքեաց զՈրդին իւր
15 փրկիչ աշխարհի։ Որ ոք
խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է
Որդի Աստուծոյ, Աստուած ի
նմա բնակէ՝ և նա յԱստուած։
16 Եւ մեք հաւատացաք՝ և ծանեաք
զսէրն Աստուծոյ՝ զոր ունի առ
մեզ։ Աստուած սէր է, և որ
կայ ի սէրն՝ բնակեալ է յԱս-
տուած, և Աստուած ի նմա
17 բնակէ։ Յայսմիկ կատարեալ է
սէրն նորա ի մեզ. զի համար-
ձակութիւն ունիցիմք յաւուրն
դատաստանի. զի որպէս և նայն
է՝ նոյնպէս և մեք եմք յաշ-
18 խարհիս յայսմիկ։ Երկիւղ ո՛չ
գոյ ի սէր, այլ սէրն կատարեալ
ի բաց մերժէ զերկիւղն. զի
երկիւղ ընդ տանջանաց է. իսկ
19 որ երկնչին, չէ՛ կատարեալ ի
սէրն։ Մինք սիրեսցո՛ւք զԱս-
տուած, վասն զի նա նախ սիրեաց
20 զմեզ։ Եթէ ոք ասիցէ՝ եթէ
Սիրեմ զԱստուած, և զեղբայր
իւր ատիցէ, սուտ է. որ ոչ
սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ,
զԱստուած զոր ո՛չն ետես՝ զիա՞րդ
21 կարիցէ սիրել։ Եւ զայս պա-
տուէր ունիմք առ ի նմանէ, զի

12 Աստուածն երբէք մէկը չէ
տեսել. եթէ իրար սիրենք՝ Աստուած մեզանում է բնա-
կում, և նորա սէրը կատարեալ
13 է մեզանում։ Սորանով գի-
տենք, որ մենք նորանում ենք
բնակած և նա մեզանում, որ իր
14 Հոգուցն տուաւ մեզ։ Եւ մենք
տեսանք և վկայում ենք, որ
Հայրն իր Որդուն ուղարկեց
15 աշխարհքի փրկիչ։ Ով
որ դաւանէ թէ Յիսուս է
Աստուծոյ Որդին, Աստուած
նորանում է բնակում և նա
16 Աստուածանում։ Եւ մենք ճա-
նաչեցինք և հաւատացինք այն
սէրն, որ Աստուած ունի մեզ
վերայ. Աստուած սէր է, և ով
որ մնում է սիրոյ մէջ, Աստու-
ծոյ մէջ է բնակում, և Աս-
տուած նորանում։ Սորանում 17
է սէրը կատարեալ մեզ հետ,
որ համարձակութիւն ունենանք
դատաստանի օրումը. վասն զի
ինչպէս նա է, այնպէս էլ մենք
18 ենք այս աշխարհքումը։ Վախ
չկայ սիրոյ մէջ, այլ կատարեալ
սէրը հեռացնում է վախը.
վասն զի վախը տանջանք ունի.
բայց նա որ վախում է, կատա-
19 րեալ չէ սիրոյ մէջ։ Մենք
սիրենք նորան, որովհետև ա-
ռաջ նա սիրեց մեզ։ Եթէ 20
մէկն ասէ, թէ Սիրում եմ Աս-
տուծոյն և իր եղբօրն ատէ, նա
ստախօս է. վասն զի նա՝ որ իր
տեսած եղբօրը չէ սիրում,
Աստուծոյն որ չէ տեսել՝ ինչպէս

որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր։

ԳԼ. Ե

1 Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յիսուս է Քրիստոսն, յԱստուծոյ ծնեալ է. և ամենայն որ սիրէ զծնօղն, սիրէ և զծնեալն ի
2 նմանէ։ Այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զՈրդին Աստուծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք՝ և զպատուիրանս նորա արաս-
3 ցուք։ Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. և պատուիրանք նորա չեն ինչ ծանրունք։
4 Զի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է, յաղթէ աշխարհի. և այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ
5 աշխարհի, հաւատքն մեր։ Եւ ո՞ ի՞նչ է՝ որ յաղթիցէ աշխարհի. եթէ ոչ՝ որ հաւատայցէ՝ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ։

6 Սա՛ է՝ որ եկն ջրով և հոգւով և արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այլ և արեամբ և ջրով. և Հոգին է՝ որ վկայէ, զի Հոգին իսկ է ճշմարտու-
7 թիւն։ (Զի երեք են որ վկայեն երկինս. Հայր, Բանն, և Հոգին Սուրբ. և երեքին մի
8 են։ Եւ երեք են որ վկայեն կարող է սիրել։ Եւ այս պա- 21
տուիրանքն ունիմք նորանից, թէ նա որ Աստուծոյն սիրում է, իր եղբօրն էլ է սիրում։

ԳԼ. Ե

1 Ամեն ով որ հաւատում է թէ Յիսուսն է Քրիստոսը, Աստուածանից է ծնուած. և ամեն ով որ ծնողին սիրում է, նորանից ծնուածին էլ սիրում
2 է։ Որանով ենք ճանաչում թէ Աստուծոյ որդիներին սի-
3 րում ենք, երբոր սիրում ենք Աստուծոյն, և նորա պատուիրանքները պահում։ Վասն զի սա է Աստուծոյ սէրը, որ նորա պատուիրանքները պա-
4 հենք. և նորա պատուիրանքներն ծանր չեն։ Վասն զի ամեն ով որ Աստուածանից է ծնուած յաղթում է աշխարհքին. և սա
5 է յաղթութիւնն, որ աշխարհքին յաղթեց, այսինքն մեր հաւատքը։ Եւ ո՞վ է որ յաղթում է աշխարհքին, եթէ ոչ նա, որ հաւատում է, թէ Յիսուսն
6 Աստուծոյ Որդին է։ Սա է որ եկաւ ջրով և արիւնով՝ Յիսուս Քրիստոսն. ոչ թէ միայն ջրով, բայց ջրով և արիւնով. և Հոգին է վկայողը. վասն զի Հոգին է ճշմարտու-
7 թիւնը։ Վասն զի երեք են որ երկնքումն են, [Հայրը և Բանը և Սուրբ Հոգին. և այս երեքը
8 մի են։ Եւ երեք են որ երկ-

յերկրի. Հոգի, ջուր, և արիւն.
9 և երեքին *մի են՝։) Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք, ապաքէն Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ։ Այս է վկայութիւնն Աստուծոյ, զի
10 վկայեաց ի վերայ Որդւոյն իւրոյ։ Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ, ունի յանձին զվկայութիւնս զայս. որ ո՛չ հաւատայ Որդւոյ Աստուծոյ, սուտ առնէ զնա. քանզի ո՛չ հաւատայ վկայութեանն՝ զոր վկայեաց Աստուած ի վերայ Որդւոյն
11 իւրոյ։ Եւ այս իսկ է վկայութիւնն, զի կեանս յաւիտենական ետ մեզ Աստուած. և այս են կեանքն՝ որ յՈրդին նորա
12 են։ Որ ընդունի զՈրդին, ընդունի և զկեանս. և որ ո՛չ ընդունի զՈրդին Աստուծոյ, և ո՛չ զկեանս ընդունի։

13 Զայս գրեցի ձեզ՝ զի գիտասջիք եթէ կեանս յաւիտենականս ունիք. և զի հաւատայցէք յանուն Որդւոյն Աստուծոյ։
14 Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց
15 նորա, լսէ մեզ։ Զի եթէ գիտիցեմք՝ եթէ լսէ հայցուածոյն մերոց, ապա գիտեմք՝ եթէ առնումք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ ի նմանէ։

* Ի Յոյնն, ՝ի միում են

րումը վկայում են։] Հոգին,
9 և ջուրը, և արիւնը. և այս երեքը միաբան են։ Եթէ մարդկանց վկայութիւնն ընդունում ենք, Աստուծոյ վկայու-
10 թիւնն աւելի մեծ է. վասն զի սա է Աստուծոյ վկայութիւնն, որ վկայեց իր Որդու մասին։ Ով որ հաւատում է Աստուծոյ Որդուն, վկայութիւնն ունի իր անձնումը. ով որ չէ հաւատում Աստուծոյն, ստախօս է արել նորան. վասն զի չըհաւատաց այն վկայութեանն, որ Աստուած վկայեց իր Որդու
11 մասին։ Եւ սա է վկայութիւնն, որ Աստուած յաւիտենական կեանք տուաւ մեզ. և այս կեանքը նորա Որդու մէջ է։
12 Ով որ Որդին ունի, նա կեանքն ունի. և ով որ Աստուծոյ Որդին չունի, կեանքը չունի։

13 Այս բաները գրեցի ձեզ՝ Աստուծոյ Որդու անունին հաւատացեալներիդ, որ գիտենաք թէ յաւիտենական կեանք ունիք։ Եւ սա է այն համար-
14 ձակութիւնն որ ունինք դէպի նորան, թէ ինչ որ նորա կամաց պէս խնդրում ենք, լսում է
15 մեզ։ Եւ եթէ գիտենք թէ լսում է մեզ, ինչ որ խնդրում ենք, գիտենք որ առնում ենք մեր խնդրուածքներն, որ խնդրեցինք նորանից։

16 Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս՝ որ ոչ առ ՚ի մահ, խնդրեսցէ՝ և տացէ նմա կեանս՝ մեղուցելոյն ոչ առ ՚ի մահ. են մեղք՝ որ մահու չափ են, ոչ վասն այնորիկ ասեմ
17 եթէ խնդրեսցես։ Ամենայն անիրաւութիւն՝ մեղք են. և են մեղք՝ որ մահու չափ * են։

18 Գիտեմք եթէ ամենայն որ Աստուծոյ է ծնեալ՝ ոչ մեղանչէ. այլ որ Աստուծոյն է ծնեալ՝ պահէ զանձն, և չարն
19 առ նա ոչ մերձենայ։ Գիտեմք եթէ Աստուծոյ եմք, և աշխարհ ամենայն ՚ի չարի կայ։
20 Եւ գիտեմք՝ եթէ Որդին Աստուծոյ եկն, ևետ մեզ միտս. զի ծանիցուք զճշմարիտն. և եմք ՚ի ճշմարտին Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. զի նա է ճշմարիտ Աստուած՝ և կեանք
21 յաւիտենական։ Որդեակք՝ պահեցէք զանձինս ՚ի կռապաշտութենէ։

Եթէ մեկը տեսնէ իր եղբօրը որ մեղանչել է այսպէսով մեղքով, որ դէպի մահ չէ, թող խնդրէ, և Աստուած կեանք կ՚տայ նորան, այսինքն նորան որ մեղանչել է ոչ թէ դէպի մահ. կայ մեղք որ մահու չափ է, նորա համար ես չեմ ասում որ խնդրես։ Ամէն անիրաւութիւն մեղք է. և կայ մեղք որ մահու չափ չէ։

Գիտենք որ ամէն ով որ Աստուածանից է ծնուած, մեղք չէ գործում, բայց նա որ Աստուածանից է ծնուած, իր անձը պահում է, և չարը չէ մօտենում նորան։ Գիտենք որ Աստուածանից ենք, և բոլոր աշխարհը չարութեան մէջ է կենում։ Եւ գիտենք որ Աստուծոյ Որդին եկաւ և մեզ միտք տուաւ, որ ճշմարիտը ճանաչենք. և ճշմարտումն ենք, այսինքն նորա Որդի Յիսուս Քրիստոսումն, նա է ճշմարիտ Աստուածը և յաւիտենական կեանքը։ Որդեակներ, պահեցէք ձեր անձնները կուռքերից։ Ամէն։

* Ի Յոյն, չեն

16 17 18 19 20 21

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

1 Յերիցուս՝ առ ընտրեալ Կիւրիա, և առ որդեակս իւր, զոր ես սիրեմ ճշմարտութեամբ, և ոչ ես միայն, այլ և ամենեքեան, որք գիտակ
2 են ճշմարտութեանն։ Վասն որոյ * ճշմարտութեանն՝ որ ՚ի մեզ հաստատեալ է, զի և ընդ ձեզ իցէ. և դուք յաւիտենից
3 ընդ մեզ իցէք։ Շնորհք՝ ողորմութիւն՝ խաղաղութիւն Աստուծոյ ՚ի Հօրէ, և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտութեամբ և սիրով եղիցին ընդ ձեզ։

4 Ուրախ եղէ յոյժ, զի գտի յորդեկացդ քոց՝ որ գնան ճշմարտութեամբ, ըստ պատուիրանին զոր առաք ՚ի Հօրէ։
5 Եւ այժմ աղաչեմ զքեզ Կիւրիա. իբրև ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ քեզ, այլ զոր

Երիցը, ընտրեալ Կիւրիայիդ, և քո որդիներին, որոնց ես սիրում եմ ճշմարտութիւնով, (և ոչ միայն ես, այլ այն ամենքն էլ որ ճշմարտութիւնը ճանաչել են։)
2 Այն ճշմարտութեան պատճառովն որ մեզանում մնում է, և մեզ հետ կ՚լինի յաւիտեան։
3 Զեզ հետ լինի շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն Աստուած Հօրից, և Տէր Յիսուս Քրիստոսից՝ Հօր Որդուցն, ճշմարտութիւնով և սիրով։

4 Շատ ուրախացայ որ քո որդիներից գտայ որ ճշմարտութիւնով են գնում, ինչպէս որ հրաման առինք Հօրից։
5 Եւ հիմա աղաչում եմ քեզ, Կիւրիայ, ոչ իբր թէ մի նոր պատուիրանք եմ գրում քեզ,

* Ի Յոյն, ճշմարտութեանն որ ՚ի մեզ հաստատեալ է. և ընդ մեզ եղիցի յաւիտեան

'ի սկզբանէն ունէաք, զի սիրես-
6 ցուք զմիմեանս: Եւ այս է
սէրն, զի գնասցուք ըստ պատու-
իրանաց նորա. և այս է պատու-
իրանն, զի որպէս լուարուքն 'ի
սկզբանէ՝ ըստ նմին գնասջիք:
7 Զի բազում մոլորեցուցիչք
ելին յաշխարհ. որ ոք ոչ
խոստովանի զՅիսուս Քրիստոս
եկեալ մարմնով, նա մոլորե-
ցուցիչ է և նեռն:
8 Զգոյշ լինիջիք անձանց՝ զի
մի կորուսանիցէք զոր վաստա-
կեցէքն, այլ զի առնուցուք
9 բովանդակ զվարձս: Ամենայն
որ յանցանէ՝ և ոչ կայ 'ի վար-
դապետութեանն Քրիստոսի,
զԱստուած ոչ ճանաչէ, որ կայ
'ի վարդապետութեանն, նա՝ և
զՈրդի և զՀայր ընդունի:
10 Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ և
զվարդապետութիւնս զայս ոչ
ունիցի, մի ընդունիջիք զնա 'ի
տուն, և մի ողջոյն տայցէք նմա:
11 Որ ասացէ նմա Ողջոյն՝ կցորդ
լիցի չարաց գործոց նորա:

12 Բազում ինչ ունէի գրել առ
ձեզ՝ այլ ոչ կամեցայ քարտիսիւ
և զեղով գրել. զի ակն ունիմ
ինձէն իսկ գալ առ ձեզ, և
բերան 'ի բերան խօսել. զի
ուրախութիւնն մեր լցէ կատար-
13 եալ: Ողջոյն տան քեզ որդիք
քեռւ քո ընտրելոյ: Շնորհք
ընդ ձեզ:

այլ այն որ սկզբիցն ունէինք,
որ իրար սիրենք: Եւ սա է 6
սէրն, որ նորա պատուիրանքնե-
րի համեմատ գնանք, և սա է
պատուիրանքն, որ ինչպէս լսե-
ցիք սկզբիցն՝ այնպէս գնաք:
Վասն զի շատ մոլորեցուցիչներ 7
դուրս եկան աշխարհք որ չեն
դաւանում Յիսուս Քրիստոսին
մարմնով եկած. նա է մոլորե-
ցուցիչը և Նեռը:
Զգոյշ կացէք ձեր անձներին 8
որ չկորցնենք այն, որ վաս-
տակեցինք. այլ որ բոլոր վարձք
առնենք: Ամեն ով որ յան- 9
ցանք է գործում, և չէ կենում
Քրիստոսի վարդապետութեան
մէջ, Աստուած չունի. ով որ կե-
նում է Քրիստոսի վարդապե-
տութեան մէջ, նա ունի Որդուն
էլ, Հօրն էլ: Եթէ մէկը ձեզ 10
մօտ գայ և այս վարդապետու-
թիւնը չբերէ, մի ընդունէք
նորան ձեր տունը, և բարև մի
տաք նորան: Վասն զի ով որ 11
բարև ասէ նորան, մասնակից
կ'լինի նորա չար գործքերին:
Շատ բան ունէի ձեզ գրե- 12
լու, թայց չկամեցայ թղթով և
թանաքով գրել. այլ յոյս ու-
նիմ գալ ձեզ մօտ. և բերանէ
բերան խօսել, որ մեր ուրախու-
թիւնը կատարեալ լինի: Բարև 13
են տալիս քեզ քո ընտրեալ
քրոջ որդիքը: Ամէն:

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՑ

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐՐՈՐԴ

1 Յերիցուս առ Գայիոս
սիրելի, զոր ես սիրեմ
2 ճշմարտութեամբ: Սիրելի՝ վասն
ամենայն իրաց քոց յաջողու-
թեան և առողջութեան՝ աղօթս
առնեմ. որպէս է իսկ յաջողու-
3 թիւն անձինդ քո: Յոյժ ուրախ
եղէ 'ի գալ եղբարց՝ և լինել
վկայ քոյոյ ճշմարտութեանդ,
որպէս գնաս դու ճշմարտու-
4 թեամբ: Ունեմ ես ինչ ուրա-
խութիւն քան զայս ոչ ունիմ,
զի լսեմ եթէ իմ որդեակքն
5 ճշմարտութեամբ գնան: Սի-
րելի՝ հաւատարիմ գործես զայդ,
զոր եթէ առնիցես առ եղբարս՝
6 զդէպն և առ օտարս. Որք
վկայեցին զքո սիրոյդ առաջի
եկեղեցւոյ. որոց բարիս ա-
րարեալ յուղարկես արժանիս
7 Աստուծոյ: Զի վասն անուանն
ելին, և ոչինչ յումեքէ առնուն
8 զՀեթանոսականացն: Ունեցայ-
սուհետև պարտիմք ընդունել
զայնպիսիսն, զի գործակիցք
լիցուք ճշմարտութեանն:

Երիցը սիրելի Գայիոս- 1
սիդ, որին ես սիրում
եմ ճշմարտութիւնով: Սիրե- 2
լի, աղօթք եմ անում որ ամեն
բանի մէջ յաջող և առողջ լինիս,
ինչպէս քո անձը յաջող է:
Վասն զի շատ ուրախացայ եր- 3
բոր եղբարքն եկան, և քո ճըշ-
մարտութիւնը վկայեցին, ինչ-
պէս որ դու ճշմարտութեան
մէջ գնում ես: Սորանից աւելի 4
մեծ ուրախութիւն չունիմ, որ
լսում եմ թէ իմ որդիները
ճշմարտութեան մէջ են գնում:
Սիրելի, հաւատարիմ ես գոր- 5
ծում այդ՝ ինչ որ անում ես եղ-
բայրներին և օտարականներին.
Որոնք վկայեցին քո սիրոյ հա- 6
մար եկեղեցու առջև, որ լաւ
կ'անես եթէ նորանց Աստուծոյ
արժանաւոր կերպով ճանա-
պարհ գցես: Վասն զի նորա 7
անունի համար դուրս եկան ա-
ռանց մի բան առնելու հեթա-
նոսներից: Ըրդ պէտք է մենք 8
ընդունինք այսպիսիներին, որ
գործակից լինինք ճշմարտու-
թեանը:

9 Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ
որ յառաջագէմն ի նոցանէ՝
Դիոտրեփէս, ոչ ընդունի զմեզ։
10 Վասն այսորիկ եթէ եկից՝
յիշեցուցից զգործս նորա՝ զոր
առնէ, բանիւք չարեօք շատ-
խօսութեան առնէ զմեզ աշխատ.
և ոչ այսքիւք շատացեալ, ոչ
ինքն ընդունի զեղբարս, և
զայնոսիկ որ ընդունին, ար-
գելու. նաև յեկեղեցւոյ ևս
11 հանէ։ Սիրելի՝ մի՛ լինիցիս
նմանող չարի՝ այլ բարւոյ. զի
որ զբարիս առնէ՝ ՅԱստուծոյ
է. և որ զչարիս գործէ՝ նա ոչ
12 ետես երբէք զԱստուած։ Օգե-
մետրեայ վկայեալ է յամենե-
ցունց, և յեկեղեցւոյն՝ և ի
ճշմարտութենէ. և մեք վը-
կայեմք. և դու գիտես՝ զի
ճշմարիտ է մեր վկայութիւնն։

13 Բազում ինչ ունէի գրել
քեզ. այլ ոչ կամիմ քարտիսիւ
14 և գեղով գրել. Օրի ակն ունիմ
ի մտաց իսկ տեսանել զքեզ, և
15 բերան ի բերան խօսել։ Խա-
ղաղութիւն ընդ քեզ։ Ողջոյն
տան քեզ սիրելիք։ Ողջոյն
տաջիր սիրելեաց մերոց իւրա-
քանչիւր յանուանէ։

9 Ես գրեցի եկեղեցուն. բայց
Դիոտրեփէսը որ ուզում է նո-
րանց միջումը առաջինը լինել,
մեզ չէ ընդունում։ Որա հա-
մար եթէ գամ՝ նորա գործքերը
կ'յիշեմ, որ չար խօսքերով
շատախօսութիւն է անում մեզ
վերայ, և սորանով էլ չբաւա-
կանացած՝ ոչ ինքն է ընդու-
նում եղբայրներին, և նորանց
էլ որ ուզում են ընդունել,
արգելում է, և եկեղեցուց հա-
նում։ Սիրելի, չարին նմանող
մի լինիր, այլ բարոյն. ով որ
բարի է գործում՝ Աստուածա-
նից է, և ով որ չարիք է գոր-
ծում՝ Աստուծոյն չէ տեսել։
Դեմետրիոսը վկայութիւն ունի
ամենից և նոյն իսկ ճշմարտու-
թիւնից էլ, և մենք էլ վը-
կայում ենք. և գիտէք որ մեր
վկայութիւնը ճշմարիտ է։
Շատ բան ունէի քեզ գրե-
լու, բայց չեմ կամենում թա-
նաքով և գրիչով գրել քեզ։
Բայց յոյս ունիմ շուտով քեզ
տեսնել, և բերանէ բերան կը-
խօսինք։ Խաղաղութիւն լինի
քեզ հետ. բարև են տալիս քեզ
սիրելիքը. բարև տուր մեր սիրե-
լիներին յանուանէ։

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՅՈՒԴԱՅԻ ԸՆԴԱՐՁԱԿ

1 Յուդա Յիսուսի Քրիս-
տոսի ծառայ, և եղբայր
Յակոբայ. *հեթանոսաց՝ որ
ՅԱստուծոյ Հօրէ էք սիրե-
ցեալք՝. և Յիսուսի Քրիստոսի
2 պահեալք և ընտրեալք։ Ողոր-
մութիւն ձեզ՝ և խաղաղութիւն
և սէր բազմասցի։
3 Սիրելիք՝ զամենայն փոյթ
յանձին կալեալ գրել ձեզ վասն
մերոյ հասարակաց փրկութեան,
հարկ յանձին կալայ գրել ձեզ,
և աղաչել՝ զի ճգնիցիք ի վերայ
հաւատոցն, որ միանգամ աւան-
4 դեցաւն սրբոց։ Քանզի սպրդե-
ցին մտին ոմանք, որ յառա-
ջագոյն իսկ կատարեալ էին ի
սոյն դատաստան. ամբաւիչք,
որ զԱստուծոյ մերոյ շնորհն
դարձուցին յանկարգութիւն. և
զմի միայն Իշխանն՝ և զՏէր մեր
Յիսուս Քրիստոս ուրացեալք։
5 Յիշեցուցանել՝ ելս զայսուհետև
կամ է ինձ՝ որ գիտէքդ զամե-
նայն. զի Աստուած միանգամ
զժողովուրդն փրկեաց յԵգիպ-

* Ի Յունն, որոց յԱստուծոյ Հօրէ էք սրբեցեալք

1 Յուդա Յիսուսի Քրիս-
տոսի ծառայ, և Յակո-
բայ եղբայր. Աստուած Հօրից
սրբուած, և Յիսուս Քրիստո-
սումն պահուած կանչուածնե-
րիդ. Ողորմութիւն և խաղա-
2 ղութիւն և սէր շատանայ ձեր
վերայ։
3 Սիրելիներ, որովհետև ամեն
ջանք արի, որ գրեմ ձեզ մեր
հասարակաց փրկութեան հա-
մար, հարկ եղաւ ինձ որ գրեմ
ձեզ և յորդորեմ, որ մրցէք
սրբերին միանգամ աւանդուած
4 հաւատքը։ Վասն զի մի
քանի մարդիկ ներս պրծան, ո-
րոնք առաջուց հաստատուած
էին սոյն դատաստանի հա-
մար, ամբարիշտներ, որ մեր
Աստուծոյ շնորհքն անառակու-
թիւն դարձրին. և ուրանում
են այն միայն Իշխանին, (Աս-
տուծոյն) և մեր Տէր Յիսուս
5 Քրիստոսին։ Իսկ ես կամե-
նում եմ յիշեցնել ձեզ, որ
արդէն այս բանը գիտէք, թէ

տոսէ. երկրորդ անգամ զան-
6 հաւատսն կորոյս: Եւ ըզհրեշ-
տակս՝ որ ոչ պահեցին զիւրեանց
իշխանութիւնն, այլ թողին
զիւրեանց բնակութիւնն, ՝ի
դատաստանս մեծի աւուրն՝
մշտնջենաւոր կապանօք պա-
7 հեաց ՝ի խաւարի: Որպէս
Սոդոմ և Գոմոր, և որ շուրջ
զնոքօք քաղաքքն, որ ըստ նմին
օրինակի պոռնկեցան զհետ
ընկերացն մարմնոց, կան առաջի
օրինակ՝ զյաւիտենական հրոյն
8 ընկալեալ զդատաստան: Ըստ
նմին օրինակի և սոքա իբրև
քնով դանդաչեալք՝ զմարմին
պղծեն, զտէրութիւնս քամահեն՝
9 զփառս հայհոյեն: Որ Մի-
քայէլ հրեշտակապետ՝ յորժամ
բանսարկու Սատանայի վիճեալ
տայր պատասխանի վասն Մովսիսեան
մարմնոյն, ոչ ժպրհեցաւ հայհոյութեան դատաստանին հանդուգնել. այլ ասէ.
10 Սատեսցէ՝ ՝ի քեզ Տէր: Իսկ
սոքա զոր ինչ ոչն իմանան՝
հայհոյեն. և զայլն ևս՝ զոր
բնութեամբ իբրև զանխօս
անասունս գիտեն, ՝ի նոսին
11 ապականեսցին: Վա՛յ է նոցա,
զի ըստ ճանապարհին Կայէնի
գնացին, և ըստ մոլորութեանն
Բաղաամայ զեղխեցան զհետ
վարձուց, և ըստ հակառակութեանն Կորխայ կորեան:

12 Սոքա են ատեցեալք շոգմոգք՝

Տէրը ժողովրդին փրկեց Եգիպտոսի երկրից. և յետոյ չըհաւատացողներին կորցրեց: Եւ 6
այն հրեշտակներին որ իրանց
իշխանութիւնը չպահեցին, այլ
իրանց բնակութիւնը թողին,
յաւիտենական կապանքներով
խաւարի մէջ պահեց մեծ օրուայ
դատաստանի համար: Ինչպէս 7
Սոդոմը և Գոմորը և նորանց
շուրջն քաղաքները, հէնց սո-
րանց կերպով պոռնկելով և
ուրիշ մարմնոյ ետևից գնալով
օրինակի համար մեր առջևը
դրուած են, յաւիտենական
կրակի դատաստանն ընդունելով:
Եւ նմանապէս էլ սորանք, որ 8
ցնորուած լինելով մարմինը
պղծում են, տէրութիւններին
անարգում են, և փառքը հայ-
հոյում են: Եւ Միքայէլ 9
հրեշտակապետն, երբոր սատա-
նայի հետ վիճելով պատասխան
էր տալիս Մովսէսի մարմնոյն
համար, չհամարձակեց հայ-
հոյանքի դատաստան անել, բայց
ասաց՝ Տէրը քեզ պատժէ: Իսկ 10
սորանք այն բաներն որ չեն
իմանում, հայհոյում են. և ինչ
որ էլ անխօս անասունի պէս
բնականաբար գիտեն, նորան-
ցում՝ ապականվում են: Վա՛յ 11
նորանց, որ Կայէնի ճանապար-
հովը գնացին, և Բաղաամի
մոլորութիւնովը վարձին նուի-
րուեցան, և Կորխայ հակառա-
կութեան պէս կորան:

Սորանք գայլեանման ժայռ- 12

երթեալ զհետ ցանկութեանց
իւրեանց. ՝ի սէրս իւրեանց
խարդախութեամբ, լինին ընդ
ձեզ ուրախակիցք. աներկիւղ
զանձինս ճարակեն. ամպք ան-
ջրդիք հողմակոծեալք, ծառք
պտղակորոյսք անպտուղք կրկ-
նամեռք՝ խլեալք արմատաբի.
13 Ընտաստ ալիք ծովու, որ միշտ
փրփրեն զիւրեանց զանձանց զա-
մօթ. աստեղք մոլորք, որոց վիհ
խաւարին յաւիտենից պահեալ է:
14 Մարգարէացաւ վասն նոցա
և եօթներորդն յԱդամայ Ենովք՝ և ասէ. Ահաւասիկ եկն
Տէր բիւրովք սրբովք հրեշ-
15 տակօք, Առնել դատաստան ըստ
ամենայնի, և յանդիմանել
զամենայն ամբարիշտս վասն
գործոց իւրեանց՝ զոր ամբարշտ-
տեցին. և վասն ամենայն խիստ
բանից՝ զոր խօսեցան զնմանէ
16 մեղաւորք և ամբարիշտք: Սոքա
են տրտնջողք և շոգմոգք, եր-
թեալք ըստ իւրեանց անձանց
ցանկութեանց. և բերանք նոցա
զամբարտաւանս բարբառին.
առնուն ակն երեսաց վասն օգտի:

17 Բայց դուք սիրելիք՝ յիշեցէք
զկանխասաց բանս զառաքելոցն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
18 տոսի. Զի ասէին ձեզ, եթէ ՝Ի
յետին ժամանակս եղիցին մարդք
արհամարհօղք, երթեալք ըստ
իւրեանց ամբարշտութեանցն
ցանկութեանց:

ռեր են ձեր սիրոյ խնջոյքնե-
րումը, որ աներկիւղ միասին
ուտել խմելիս, իրանց անձներն
են արածեցնում: Անջուր ամ-
պեր են քամիներից տատանուած,
պտղակորոյս անպտուղ ծառեր,
երկու անգամ մեռած արմա-
տախիլ եղած. Ծովու կատղած 13
ալիքներ, որ իրանց անձների
ամօթն են փրփրեցնում. մոլար
աստղեր, որոնց պահվում է
յաւիտեան խաւարի մութը:
Ենոքն էլ, որ եօթներորդն 14
է Ադամից, սորանց համար
մարգարէացաւ և ասաց. Ահա
Տէրը եկաւ իր բիւրաւոր սուրբ-
երովը, Որ դատաստան անէ 15
ամենին, և նորանց ամբարիշտ-
ներին յանդիմանէ իրանց արած
բոլոր ամբարիշտ գործքերի հա-
մար. և բոլոր այն խիստ խօսքերի
համար, որ ամբարիշտ մեղա-
ւորները նորա դէմ խօսեցան:
Սորանք տրտնջողներ և փսփսողներ 16
են, որ իրանց անձների
ցանկութիւնների պէս են գը-
նում. և նորանց բերանը ամ-
բարտաւան բաներ է խօսում.
երես են տեսնում շահի համար:
Բայց դուք, սիրելիներ, յի- 17
շեցէք մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի առաքեալներից առա-
ջուց ասած խօսքերը: Վասն 18
զի ասում էին ձեզ, թէ վերջի
ժամանակներումն ծաղր անող
մարդիկ կ'լինին, որ իրանց ամ-
բարիշտ ցանկութեանց ետևից
կ'գնան:

19 Սոքա են նշաւակեալք շընչաւորք, որ զոգին ոչ ունիցին:
20 *Այլ մեք սիրելիք՝ եղիցուք շինել զանձինս սրբութեամբն հաւատոց 'ի Հոգին Սուրբ.
21 կացցուք յաղօթս՝, Պահել զանձինս սիրոյն Աստուծոյ. ակն ունել ողորմութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի
22 կեանսն յաւիտենականս: †Եւ ոմանց դատապարտելոց լինիջիք
23 կշտամբիչք, Եւ զոմանս ապրեցուցանիջիք՝ յափշտակեալ 'ի հրոյ. և ոմանց ողորմեսջիք երկիւղիւ դատել, և զպատմուճանն որ 'ի մարմնոյն իցէ աղտեղեալ՝:
24 Եւ այնմ, որ կարօղն է պահել զձեզ անարատս և անբիծս, հաստատել առաջի իւրոց փառացն անսերկեան ցն-
25 ծութեամբ. Ա՛հոյն Աստուծոյ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ փառք՝ մեծութիւն՝ զօրութիւն և իշխանութիւն յառաջ քան զամենայն յաւիտեանս, և այժմ և յամենայն յաւիտեանս. Ամէն:

Սորանք են որ ջոկում հե- 19
ռացնում են իրանց, շնչաւորներ
որ Հոգի չունին: Բայց դուք, 20
սիրելիներ, ձեր անձները ձեր
սուրբ հաւատքի վերայ շինեցէք
Սուրբ Հոգովը, աղօթք անե-
լով: Որ ձեր անձները Աս- 21
տուծոյ սիրոյ մէջ պահէք,
սպասելով մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի ողորմութեանը յա-
ւիտենական կենաց համար: Եւ 22
մի քանիսին ողորմեցէք խոտ-
րութիւն անելով: Եւ մի քա- 23
նիսին վախով ապրեցրէք կրա-
կից յափշտակելով. ատելով
այն պատմուճանն էլ որ մարմ-
նից աղտոտուած է:
Եւ նորան որ կարող է անա- 24
րատ պահել ձեզ և անկեղծ
կանգնեցնել իր փառաց առջև
անբիծ ցնծութիւնով. Այն մէկ 25
իմաստուն Աստուծոյն՝ մեր
Փրկչին (Յիսուս Քրիստոսով)
փառք և մեծութիւն, զօրու-
թիւն և իշխանութիւն, (յոլոր
դարերից առաջ) և հիմա և
ամեն յաւիտեաններում. Ամէն:

* 'Ի Յոյն, Այլ դուք սի՛րելիք՝ լինիջիք շինել զանձինս սրբութեամբ հաւատոցն, 'ի Հոգին Սուրբ կալով յաղօթս

† Եբէոթէն համարս ոյոպէս յԵՒՆՆԱ 'Ի Յոյն, (22) Եւ ոմանց ողորմեսջի՛ք ընարութիւնս առնելով. (23) Եւ զոմանս ապրեցուցանիջիք երկիւղիւ՝ յափշտակեալ 'ի հրոյ. ատելով և զպատմուճանն որ 'ի մարմնոյն իցէ աղտեղեալ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի, 'ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց՝ որ ինչ լինելոց է վաղվաղակի. և նշանակեաց առաքելով 'ի ձեռն հրեշտակի իւրոյ, առ ծառայ
2 իւր Յովհաննէս: Որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ, և զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի՝* զոր ետես. և որ էր՝ և որ լինելոցն էր յետ այնո-
3 րիկ՝: Երանի՝ որ կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգարէութեանս, և պահեսցէ զոր 'ի սմա գրեալ է. զի ժամանակս մերձեալ է:
4 'Ի Յովհաննէ առ եօթն եկեղեցիս՝ որ են Ասիայ, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն Աստուծոյ՝ Այէն՝ և որ էն՝ և որ գալոցն է, և յեօթն զօրութեանց Հոգւոյն՝ որ է

Յիսուսի Քրիստոսի 1
յայտնութիւնը, որ Աս-
տուած տուաւ իր ծառաներին
ցոյց տալու, ինչ որ շուտով
պիտի լինի, և իմացրեց իր
հրեշտակի ձեռովն ուղարկելով
իր Յովհաննէս ծառային. Որ 2
վկայեց Աստուծոյ խօսքին և
Յիսուսի Քրիստոսի վկայու-
թիւնը, որ տեսաւ: Երանելի 3
են այս մարգարէութեան խօս-
քերը կարդացողը և լսողները,
և սորանում գրուածները պա-
հողները. վասն զի ժամանակը
մօտեցել է:

Յովհաննէս, եօթէ եկեղե- 4
ցիներիդ, որ Ասիայում էք,
շնորհք լինի ձեզ հետ և խաղա-
ղութիւն նորանից որ է. և որ
էր, և որ գալու է, և այն եօթը
Հոգիներից, որ նորա աթոռի

* 'Ի Յոյն, և զոր ինչ ետես. Եւ պոլոռէ, և որ էր՝ և որ լինելոցն էր յետ պէնորիկ

5 առաջի ամիսոն իւրոյ. Եւ
'ի Յիսուսէ Քրիստոսէ հաւա-
տարիմ վկայէն, որ է անդրանիկ
'ի մեռեալս, և իշխան թագա-
ւորութեանց երկրի. որ սիրեաց
զմեզ, և ելոյծ զկապանս մեղաց
6 մերոց արեամբն իւրով. Եւ
արար զմեզ թագաւորս և քա-
հանայս Աստուծոյ և Հօր
իւրոյ. որում փառք և զօրու-
թիւն՝ այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:
7 Ահաւասիկ գալոց է ընդ
ամպս. և տեսցեն զնա ամենայն
աչք, և տեսցեն զնա ծագք
երկրի, և որք խոցեցին զնա՝
ամենեքեան յերկրի, և կոծես-
ցին 'ի վերայ նորա. այո՝ ամէն:
8 Ես եմ Այբ, և ես եմ Էյ,
ասէ Տէր Աստուած, որ է՝ և
որ է՝ և որ գալոցն է՝ Ամենակալ:
9 Ես Յովհաննէս եղբայր ձեր
և հաւասարակից նեղութեան և
արքայութեան և համբերու-
թեան որ 'ի Քրիստոս Յի-
սուս. եղէ ես 'ի կղզւոջն որ
անուանեալ կոչի Պատմոս՝ վասն
բանին և վասն վկայութեանն
10 Յիսուսի Քրիստոսի: Եւ եղև
յիս Հոգի 'ի կիւրակէի աւուր,
և լուայ զձայն ետկեցի իմ զմեծ
իբրև զձայն փողոյ, որ ասէր
ցիս. Ես եմ Ալֆա և Ով.
11 առաջին և վերջին. Օ՝որ տեսա-
նես՝ գրեա 'ի գիրս, և տուք
տանել յեօթն եկեղեցիս՝ որ
յԵփեսոս և 'ի Զմիւռնիա՝ 'ի
Պերգամոնն և 'ի Թիւատիր, և
առջև են. Եւ Յիսուս Քրիստոս 5
հաւատարիմ վկայիցն, որ մե-
ռելոցն անդրանիկ՝ և երկրի
թագաւորացն իշխանն է. նո-
րան որ մեզ սիրեց և մեր մեղ-
քերիցն արձակեց մեզ իր արիւ-
նովն, Եւ մեզ թագաւորներ և 6
քահանաներ արար Աստուծոյ և
իր Հօր համար. նորան փառք
և զօրութիւն յաւիտեանս յա-
ւիտենից. Ամէն:

7 Ահա գալիս է ամպերով. և
ամեն աչք կ'տեսնէ նորան, և
նորանք որ խոցեցին նորան. և
նորա վերայ կոծ կ'անեն երկրի
ամեն ազգերը. Այո, Ամէն:
8 Ես եմ Ալֆան և Օմեգան
(սկիզբը և վերջը), ասում է
Տէրը, նա որ է և որ էր և որ
գալու է, Ամենակալը:
9 Ես՝ Յովհաննէս ձեր եղբայր
և հաւասար ընկեր նեղութեան
և արքայութեան և Յիսուսի
Քրիստոսի համբերութեան.
Պատմոս ասուած կղզումն էի
Աստուծոյ խօսքի համար, և
Յիսուս Քրիստոսի վկայու-
թեան համար: Եւ կիրակի օրը 10
եղայ Հոգում. և իմ ետևից մի
մեծ ձայն լսեցի ինչպէս փողի
ձայն, որ ասում էր. Ես եմ
Ալֆան և Օմեգան, առաջինը
և վերջինը: Եւ ինչ որ տես- 11
նում ես գրիր մի գրքի մէջ, և
ուղարկիր այն եօթն եկեղ-
ցիներին որ Ասիայումն են՝
Եփեսոս, Զմիւռնիայ, և Պեր-

'ի Պարգամոն, 'ի Փիլադելփիա,
12 և 'ի Լաւոդիկիա: Եւ դարձայ
տեսանել զձայնն՝ որ խօսէր ցիս.
և 'ի դառնալն իմում տեսի
13 եօթն ճրագարան ոսկի: Եւ 'ի
մէջ եօթն ճրագարանացն նման
Որդւոյ մարդոյ. զգեցեալ
պատմուճան պճղնաւոր. և գօ-
տեւորեալ առ ստեամբքն գօտի
14 ոսկեղէն. Եւ գլուխ նորա և
հերքն իբրև զասր սպիտակ՝ և
որպէս զձիւն. և աչք նորա
15 որպէս բոց հրոյ. Եւ ոտք նորա
նմանեալ պղնձոյ ձիւելոյ 'ի մէջ
հնոցի հրաշէկ. և ձայն նորա
16 իբրև զձայն ջուրց բազմաց: Եւ
ունէր յաջոյ ձեռին իւրում
աստեղս եօթն, և 'ի բերանոյ
նորա ելանէր սուր երկբերա-
նեան. և երեսք նորա իբրև
զարեգակն ճառագայթեալ ե-
17 լեալին: Եւ իբրև տեսի զնա՝
անկայ առ ոտս նորա իբրև
զմեռեալ. և եդ 'ի վերայ իմ
զաջ իւր՝ և ասէ ցիս. Մի՛
երկնչիր, ես եմ առաջին, և ես
18 եմ յետին. Եւ ես եմ կեանք՝
և ես նոյն որ մեռայ, և եմ
կենդանի, այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն.
և ունիմ զբանալս մահու և
19 դժոխոց: Գրեա զոր տեսանես՝
որ էն, և որ հանդերձեալ է
20 լինել յետ այնորիկ. Զ՝որ-
հուրդ եօթն աստեղացդ՝ զոր
տեսերդ յաջս իմ, և զեօթն
ճրագարանս ոսկիս. եօթն աս-
տեղքն՝ հրեշտակք եօթն եկե-

գամէն, և Թիւատիրա, և Պար-
դէս, և Փիլադելփիայ և Լա-
ւոդիկեայ: Եւ դարձայ այն 12
ձայնը տեսնելու որ ինձ հետ
խօսում էր, և երբոր դարձայ
եօթը ոսկի ճրագակալ տեսայ.
Եւ այն եօթը ճրագակալների 13
միջում Դէլը Որդոյ մարդոյ
նման, պճղնաւոր պատմուճան
հագած, և ստինքների մօտ
ոսկի գօտի կապած: Եւ նորա 14
գլուխը և մազերը ճերմակ
բուրդի և ձիւնի պէս սպիտակ
էին, և նորա աչքերը կրակի
բոցի պէս: Եւ նորա ոտները 15
կարմրած պղնձի պէս իբրև
հնոցի մէջ կրակ եղած, և նորա
ձայնը շատ ջրերի ձայնի պէս:
Եւ իր աջ ձեռքումը եօթն 16
աստղեր ունէր, և նորա բերա-
նիցը սրած երկբերան սուր էր
դուրս գալիս, և նորա երեսն
ինչպէս արեգակը որ ճառա-
գայթում է իր զօրութեամբը:
Եւ երբոր տեսայ նորան, մե- 17
ռածի պէս ընկայ նորա ոտների
առջև. և իր աջ ձեռն ինձ վերայ
դրաւ և ասաց ինձ. Մի՛ վա-
խենար, ես եմ Առաջինը և
Վերջինը, Եւ կենդանին. և 18
ես մեռած էի, և ահա կենդանի
եմ յաւիտեանս յաւիտենից,
ամէն. և ունիմ դժոխքի և մահի
բանալիքները: Գրիր ինչ որ 19
տեսնում ես, ինչ որ է, և ինչ
որ նորանից յետոյ լինելու է:
Այս եօթն աստղերի խորհուր- 20
դն որ իմ աջ ձեռի մէջ տեսար,

զնցեսցն են, և ճրագարանքն
եօթն՝ եօթն եկեղեցիքն են։

և այն եօթը ոսկի ճրագակալնե-
րը. այն եօթն աստղերը եօթը
եկեղեցիների հրեշտակներն են,
և այն եօթը ճրագակալները
եօթը եկեղեցիներն են։

ԳԼ. Բ

1 Առ հրեշտակ Եփեսացւոց
եկեղեցւոյն գրեա. Այսպէս
ասէ կարօղն՝ որ ունի զաստեղս
եօթն յաջու ձեռին իւրում, և
շրջի ի մէջ եօթն աշտանակի
2 ոսկւոյ։ Գիտեմ զգործս քո և
զվաստակս քո և զհամբերու-
թիւն քո. և զի ոչ բառնաս
զչարս, և փորձեցեր՝ որ ասեն
զինքեանս առաքեալք՝ և ոչ են,
3 և գտեր զայնոսիկս՝ և ստեն։ Եւ
համբերեցեր և վշտացար վասն
անուան իմոյ՝ և աշխատեցար։
4 Այլ * ասեմ առ քեզ, զի զսէրն
5 քո զառաջին թողեր. Յիշեա՛
այժմ ուստի անկար՝ և ապա-
շաւեա՛, և զառաջին գործսն քո
արա՛. ապա թէ ոչ՝ գամ ես
վաղվաղակի, և շարժեցից զաշ-
տարակս քո ի տեղւոջէ իւրմէ՝
6 եթէ ոչ ապաշխարեսցես։ Այլ
զայս † արա՝ զի ատիցես՝
զգործսն Նիկոլայոսի, զոր ես
7 ատեամ։ Որ ունի ականջս
լսելոյ, լուիցէ զինչ ասէ Հոգին
առ եկեղեցիս. Որ յաղթէն,
տացս նմա ուտել ի փայտէն

ԳԼ. Բ

Եփեսացոց եկեղեցւոյն գրիր. 1
Այս է ասում այն եօթն աստ-
ղերն իր աջ ձեռքում ունեցողը,
որ եօթն ոսկի ճրագակալների
մէջ մտն է գալիս. Գիտեմ քո 2
գործքերը և քո աշխատու-
թիւնը և քո համբերութիւնը.
և որ չարերին չես կարողանում
համբերել, և փորձեցիր նո-
րանց որ առաքեալ են ձևանում,
և չեն, և գտար որ սուտ են։
Եւ դեղուքնդեր կրեցիր և 3
համբերութիւն ունիս, և իմ
անունի համար աշխատեցիր, և
չթուլացար։ Բայց քեզ դէմ 4
այս ունիմ, որ քո առաջին սէրը
թողիր։ Երդ յիշիր, թէ որ- 5
տեղից վայր ընկար, և զղջացիր,
և առաջի գործքերն արա. ապա
թէ ոչ՝ կ'գամ շուտով քեզ մօտ,
և քո ճրագակալը կ'շարժեմ իր
տեղից եթէ չապաշխարես։
Բայց այս բանն ունիս, որ 6
Նիկոլայեցիների գործքերն ա-
տում ես, որոնք ես էլ ատում
եմ։ Ով որ ականջ ունի, թող 7
լսէ ինչ որ Հոգին ասում է

* Ի Յոյն, ունիմ
† Ի Յոյն, ունիս զի ատես

կենաց՝ որ է ի մէջ դրախտին
Աստուծոյ։

8 Եւ առ հրեշտակ Օմիւռ-
նացւոց եկեղեցւոյն գրեա. Այս-
պէս ասէ Անսկիզբնն և անվախ-
ճանն, որ եղև մեռեալ՝ և կեն-
9 դանացաւ։ Գիտեմ զգործս քո՝ և
զնեղութիւն և զաղքատութիւն,
այլ աղքատութիւն քո մեծու-
թիւն եղիցի. և զհայհոյու-
թիւնն՝ որ ասէին զինքեանս
Հրէայս դոլ՝ և չէին ինչ, այլ
10 ժողով Սատանայի։ Մի երկն-
չիր՝ վասն որոյ կամիս չար-
չարիլ. ահա հանդերձէ Սան-
սարկուն արկանել ի ձէնջ ի
բանտ, զի փորձիցիք, և ունիք
նեղութիւն աւուրս տասն. լիր
հաւատարիմ մինչև ի մահ, և
11 տաց քեզ զպսակն կենաց։ Որ
ունի ականջս լսելոյ՝ լուիցէ
զինչ Հոգին Սուրբն ասէ առ
եկեղեցիս. Որ յաղթէ, ոչ
անիրաւի յերկրորդ մահուանէն։
12 Եւ առ հրեշտակն՝ որ ի
Պերգամոյ եկեղեցին, գրեա.
Այսպէս ասէ՝ որ ունի զսուրն
13 երկսայրի սրեալ։ Գիտեմ զգործս
քո՝ և զի բնակեալ ես ուր աթոռն
է Սատանայի, և ունիս զանուն
իմ, և ոչ ուրացար զհաւատս իմ
յաւուրս յորում Անթիպաս վկայն
իմ հաւատարիմ եղև. զի վկայ
է իմ *հաւատարիմ ամենայն

* Ի Յոյն, հաւատարիմ՝ որ սպանաւ առ ձեզ, ուր

եկեղեցիներին. Ով որ յաղթում
է նորան կենաց փայտից ուտել
կ'տամ, որ Աստուծոյ դրախտի
մէջ է։

Եւ Օմիւռնացոց եկեղեցու 8
հրեշտակին գրիր. Այս է ասում
Առաջինը և Վերջինը որ մե-
ռեալ էր, և կենդանացաւ։ Գի- 9
տեմ քո գործքերը և նեղու-
թիւնը և աղքատութիւնը. բայց
դու հարուստ ես. և գիտեմ նո-
րանց հայհոյանքը որ ասում են
թէ իրանք Հրէայ են և չեն, այլ
սատանայի ժողովք են։ Մնաս 10
մի վախենար այն բաներից որ
կրելու ես. ահա բանտարկուն
ձեզանից բանտի մէջ է գցելու,
որ փորձուիք, և նեղութիւն
կ'ունենաք տասն օր. հաւատա-
րիմ եղիր մինչև ի մահ, և
կենաց պսակը կ'տամ քեզ։ Ով 11
որ ականջ ունի թող լսէ ինչ որ
Հոգին ասում է եկեղեցիներին.
ով որ յաղթում է, երկրորդ
մահիցը չի վնասուիլ։

Եւ Պերգամայի եկեղեցու 12
հրեշտակին գրիր. Այս է ասում
սրած երկսայրի սուրն ունե-
ցողը։ Գիտեմ քո գործքերը, 13
և թէ որ տեղ ես բնակում, ուր
որ սատանայի աթոռն է. և իմ
անունը պահում ես, և իմ
հաւատքը չուրացար այն օրե-
րումն, որ իմ Անտիպաս հաւա-
տարիմ վկան սպանուեցաւ ձեր

հաւատացեալ՝ որ սպանաւ 'ի
ձէնջ, որ կայք ուր՝՝ Սատանայ
14 է բնակեալ։ Բայց ունիմ առ
քիչ սակաւ. զի կայ առ քեզ
վարդապետութիւնն Բաղաա-
մու՝ որ ուսոյց զԲաղակ դնել
գայթագղութիւն առաջի որդ-
ւոցն Իսրայէլի, ուտել նոցա
15 զոհեալ՝ և պոռնկել։ Այսպէս
և դու ունիս զվարդապետու-
թիւնն Նիկողայեցեաց՝ զոր ես
16 ատեամ։ Արդ ապաշխարեա,
ապա թէ ոչ՝ գամ վաղվաղակի.
և պատերազմեցայց ընդ նոսա
17 սրովք բերանոյ իմոյ։ Որ ու-
նիցի ականջս լսելոյ՝ լուիցէ
զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս.
Որ յաղթէ՝ տաց նմա ուտել 'ի
մանանայէն թաքուցելոյ, և
տաց նմա զգիրն սրբութեան. և
գրեալ անուն նոր 'ի գիրն, զոր
ոչ ոք գիտէ՝ բայց միայն որ
առնուն։

18 Եւ առ հրեշտակն որ 'ի
Թիւատիրայ եկեղեցին՝ գրեա.
Այսպէս ասէ Որդին Աստու-
ծոյ, որոյ աչք իւր են իբրև
զբոց հրոյ, և ոտք նորա նման
19 պղնձի ծխելոյ։ Տեսի զգործս
քո՝ և զսէր և զհաւատ՝ և զպաշ-
տօն քո հավերժութեամբ. զի
բազում է վաստակ քո վերջինն
20 քան զառաջինն։ Այլ * ասեմ
առ քեզ բազում. զի թողեր
զկինն զՅեզաբէլ. որ ասէր

մէջ. ուր որ սատանան է բնա-
կում։ Բայց քեզ դէմ քիչ 14
բաներ ունիմ. որ այդ տեղ
Բաղաամի վարդապետութիւնը
պահողներ ունիս որ Բաղակին
սովորեցրեց, գայթակղութիւն
դնել Իսրայէլի որդոց առջև, որ
նորանք կռքի մատաղ ուտեն և
պոռնկութիւն անեն։ Այսպէս 15
դու էլ Նիկողայեցիների վար-
դապետութիւնը պահողներ ու-
նիս, որ ես ատում եմ։ Պաշ- 16
խարիր, ապա թէ ոչ՝ կ'գամ
քեզ մօտ շուտով, և կ'պատե-
րազմիմ նորանց հետ իմ բերանի
սրովը։ Ով որ ականջ ունի 17
թող լսէ ինչ որ Հոգին ասում
է եկեղեցիներին. Ով որ յաղ-
թում է այն թաքցրած մանա-
նայից ուտել կ'տամ նորան. և
սպիտակ խիճ կ'տամ նորան. և
այն խիճի վերայ մի նոր անուն
գրուած, որ ոչ ոք չէ գիտում,
բայց նա որ առնում է։

Եւ Թիւատիրայի եկեղեցու 18
հրեշտակին գրիր. Սա է ասում
Աստուծոյ Որդին, որի աչքերը
կրակի բոցի պէս են, և նորա
ոտները կարմրած պղնձի նման։
Գիտեմ քո գործքերը, և սէրը 19
և քո ծառայութիւնը, և հա-
ւատքը, և քո համբերութիւնը,
և քո գործերը, և որ վերջին-
ներն աւելի են քան թէ առա-
ջինն։ Բայց քեզ դէմ քիչ 20
բաներ ունիմ. որ Յեզաբէլ

* 'Ի Յոյնն, ունիմ

զինքն մարդարէ, և ուսուցանէր
մոլորութիւն զծառայս իմ՝՝
21 պոռնկել և ուտել զզոհեալ։ Եւ
ետու նոցա ժամանակ ապաշ-
խարել զպոռնկութիւնն իւր-
եանց՝ և ոչ ապաշխարեցին։
22 Այսաւասիկ ես արկանեմ զնա 'ի
հնոց, և զգործակիցս իւր ընդ
որս շնացաւ՝ 'ի նեղութիւնս
մեծամեծս. եթէ ոչ ապաշ-
խարեսցին 'ի գործոց իւրեանց։
23 Եւ զորդիս նոցա սպանից մա-
հուամբ. և ծանիցեն ամենայն
եկեղեցիք՝ թէ ես եմ որ յան-
դիմանեմ զերիկամունս և զը-
սիրտս. և տամ ձեզ իւրաքան-
չիւր ըստ գործոց իւրեանց։
24 Այլ ձեզ ասեմ՝ որք 'ի Թիւա-
տիր էք, և ոչ ունիք զվարդա-
պետութիւնս զայս. որ ոչ
ծանեայք զխորս Սատանայի՝
զոր խօսին. Ոչ արկից զձեզք
25 ծանրութիւն։ Այլ զոր ունիք,
26 պահեցէք՝ մինչև ես գամ։ Եւ
որ յաղթէ և պահէ զգործս իմ
մինչև ցվախճան, տաց նմա
իշխանութիւն 'ի վերայ ազգաց։
27 Եւ հովուեսցէ զնոսա գաւա-
զանաւ երկաթեաւ. և իբրև
զանօթ բրտի փշրեսցէ զնոսա։
28 Որպէս և ես ընկալայ 'ի Հօրէ
իմմէ, և տաց նոցա զաստղն ա-
ռաւօտուն։ Որ ունի ականջս
29 լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին ասէ
առ եկեղեցիս։

կնկանը թոյլ ես տալիս որ իրան
մարգարէուհի է ասում, և իմ
ծառաներին սովորեցնում և մո-
լորեցնում է, որ պոռնկութիւն
անեն և կռքի մատաղ ուտեն։
Եւ նորան ժամանակ տուի որ 21
ապաշխարէ իր պոռնկութիւ-
նից, և չապաշխարեց։ Այս 22
ես նորան անկողնի մէջ կ'գցեմ,
և նորա հետ շնացողներին էլ
մեծ մեծ նեղութիւնների մէջ.
եթէ չապաշխարեն իրանց գործ-
քերից։ Եւ նորանց որդիքը 23
մահով կ'սպանեմ. և բոլոր
եկեղեցիները կ'ճանաչեն որ ես
եմ երիկամունքները և սրտերը
քննողը. և կ'տամ ձեզ ամեն
մէկիդ իր գործերի համեմատ։
Իսկ ասում եմ ձեզ և միւսներին 24
որ Թիւատիրումն էք, որ այս
վարդապետութիւնը չունիք, և
որ սատանայի խորութիւնները
չճանաչեցիք, ինչպէս ասում
են. Ձեզ վերայ ուրիշ ծան-
րութիւն չեմ գցիլ։ Բայց այն 25
որ ունիք պահեցէք մինչև որ ես
կ'գամ։ Եւ ով որ յաղթում 26
է և իմ գործքերը պահում
մինչև վերջը, նորան իշխանու-
թիւն կ'տամ ազգերի վերայ.
Եւ կ'հովուէ նորանց երկաթէ 27
գաւազանով, և բրուտի ամանի
պէս կ'փշրէ։ Ինչպէս ես էլ իմ 28
Հօրից ընդունեցի. և կ'տամ
նորան առաւօտեան աստղը։ Ով 29
որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ
Հոգին ասում է եկեղեցիներ-
ին։

ԳԼ. Գ

1 Եւ առ Հրեշտակ Սարդիացւոց եկեղեցւոյն գրեա՝ Այսպէս ասէ՝ որ ունի զեօթն Հոգին Աստուծոյ՝ և զեօթն աստեղս. Տեսի զգործս քո զի անուն կենդանւոյ ունիս և մեռեալ ես:
2 Լեր արթուն՝ և հաստատեա այսուհետև՝ զի հանդերձեալ ես մեռանել. քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի
3 Աստուծոյ. Արդեօք յիշեա թէ որպէս լուարն, և պահեա և ապաշխարեա. ապա թէ ոչ զուարթանաս՝ գամ որպէս գող. և ոչ ոք իմանայ զգալուստ իմ
4 առ քեզ: Ունիս սակաւ մի զանուն Սարդիացւոցն, որք ոչ աղտեղացուցին զհանդերձս իւրեանց. և շրջին ՝ի սպիտակս՝
5 որում արժանի եղեն: Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի ըսպիտակս. և ոչ ջնջեցի անուն նորա ՝ի գրքէ կենաց. և խոստովանեցայց զանուն նորա առաջի Հօր իմոյ և առաջի
6 Հրեշտակաց: Որ ունի ականջս ընդլոյ՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս:

7 Եւ առ Հրեշտակն Փիլադելփիացւոց եկեղեցւոյն գրեա. Այսպէս ասէ Սուրբն Ճշմարիտն, որ ունի զբանալիս Դաւթի. բանայ՝ և ոչ ոք է որ փակէ,

ԳԼ. Գ

Եւ Սարդէսի եկեղեցւոյ Հրեշտակին գրիր. Այս է ասում Աստուծոյ եօթը Հոգիներդ, և եօթն աստղերն ունեցողը. Գիտեմ քո գործերը, որ անուն ունիս թէ կենդանի ես, բայց մեռած ես: Արթուն եղիր, և հաստատիր ուրիշներին որ մեռնելու մօտ են. վասն զի քո գործերը կատարեալ չգտայ Աստուծոյ առջև: Արդ յիշիր թէ ինչպէս ընդունեցիր և լսեցիր. և պահիր և ապաշխարիր. ապա թէ չարթնանաս՝ կ'գամ քեզ վերայ գողի պէս. և չես իմանալ թէ որ ժամում քեզ մօտ կ'գամ: Բայց մի քիչ անուններ ունիս Սարդէսի մէջն էլ, որ իրանց հանդերձները չկեղտոտեցրին. և նորանք սպիտակներով ման կ'գան ինձ հետ, վասն զի արժանի են: Ով որ յաղթում է, նա սպիտակ հանդերձներ կ'հագնէ. և նորա անունը կենաց գրքիցը չեմ ջնջիլ. և կ'դաւանեմ նորա անունն իմ Հօր առջև և նորա հրեշտակների առջև: Ով որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին:

Եւ Փիլադելփիայն եկեղեցու Հրեշտակին գրիր. Այս է ասում Սուրբը Ճշմարիտը, որ Դաւթի բանալիքներն ունի. որ բանում է և ոչ ով չէ փակում, և

և փակէ՝ և ոչ ոք է որ բանայ:
8 Տեսի զգործս քո. ահա ետու առաջի քո դուռն բացեալ, զոր ոչ ոք կարէ փակել. զի սակաւիկ ունիս զօրութիւն, և պահեցեր զբանս իմ, և ոչ ուրացար
9 զանուն իմ: Ահաւասիկ ես* տամ քեզ զժողովն Սատանայի, որք ասեն զինքեանս Հրէայս գոյ՝ և ոչ են, այլ ստեն. արարից՝ զնոսա՝ զի եկեսցեն՝ և երկիր պագցեն առաջի ոտից քոց, և ծանիցեն զի ես սիրեցի
10 զքեզ: Օի պահեցեր զբան համբերութեան իմոյ, և ես պահեցից զքեզ ՝ի ժամ փորձութեան քո. որ հանդերձեալ է գալ յամենայն տիեզերս փորձել զամենայն բնակեալս յերեսս
11 երկրի: Ահա գամ վաղվաղակի, կա՛լ զոր ունիսդ՝ զի մի՛ ոք առցէ
12 զպսակ քո: Որ յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի Աստուծոյ իմոյ, և արտաքս այլ մի՛ ևս ելցէ. և գրեցից ՝ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղէմի, որ իջանէլոց է յերկնից Աստուծոյ իմոյ.
13 և անուն նորա նոր: Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս:

փակում է և ոչ ով չէ բանում:
8 Գիտեմ քո գործերը. ահա քո առջև Ջ բացուած դուռը դրի, և նորան ոչ ով կարող չէ փակել, վասն զի քիչ զօրութիւն ունիս, և իմ խօսքը պահեցիր, և անունս չուրացար:
9 Ահա ես տալիս եմ սատանայի ժողովրիցը, որ իրանց համար ասում են թէ Հրէայ են և չեն, այլ սուտ են ասում, ահա կ'անեմ նորանց, որ կ'գան քո ոտների առջև և երկրպագութիւն կ'անեն, և կ'ճանաչեն թէ ես սիրեցի քեզ:
10 Որովհետև իմ համբերութեան խօսքը պահեցիր, ես էլ քեզ կ'պահեմ այն փորձութեան ժամից, որ գալու է այս աշխարհքի վերայ, որ փորձէ երկրի երեսի վերայ բնակողներին:
11 Ահա գալիս եմ շուտով. բռնիր այն որ ունիս, որ ոչ ով չառնէ քո պսակը:
12 Ով որ յաղթում է սիւն կ'անեմ նորան իմ Աստուծոյ տաճարումը, այլ ևս դուրս չի գնալ. և նորա վերայ կ'գրեմ իմ Աստուծոյ անունը, և իմ Աստուծոյ քաղաքի անունը, այն նոր Երուսաղէմի անունը, որ երկնքից է իջնում իմ Աստուածածնից, և իմ նոր անունը:
13 Ով որ ականջ ունի, թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին:

* Ի Յոյն, տամ զժողովն Սատանայի, որք ... ահաւասիկ արարից

14 Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեա՝. Այսպէս ասէ Ամէնն՝ Վկայն հաւատարիմ և ճշմարիտ, Սկիզբն սկզբան արարածոց Աստուծոյ:
15 Գիտեմ զգործս քո՝ զի ոչ ցուրտ ես՝ և ոչ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել՝ և կամ ջերմ:
16 Այլ զու գաղջ ես՝ և ոչ ջերմ և ոչ ցուրտ, Հանդերձեալ ես
17 փոխել զի բերանոյ իմմէ: Զի ասես. Մեծատուն էի՝ և մեծացայ, և ոչ իւիք կարօտ եմ՝. և ոչ գիտես՝ եթէ զու es ողորմելի և հեղգ և աղքատ՝ մերկ և կոյր:
18 Արդ՝ ես խորհրդակից եղէց քեզ, առ գնեա՛ յինէն ոսկի փորձեալ զի Հրոյ՝ զի մեծացիս, և Հանդերձս սպիտակս՝ զի զգեցցիս, զի մի՛ երևեսցի անվայելչութիւն մերկութեան քո. և զիր զեղ յաչս քո՝ զի տեսցես:
19 Ես զոր սիրեմ, յանդիմանեմ՝ և խրատեմ՝. Նախանձեա՛ այժմ, և
20 ապաշխարեա՛: Այհաւասիկ կամ ես առ զուրս և բախեմ՝. եթէ ոք լուիցէ ձայնի իմում՝՝ և բանայցէ զդրուանն, մտից առ նա՝ և ընթրիս արարից առ նա,
21 և նա ընդ իս: Որ յաղթէ՝ տայ նմա նստել ընդ իս յաթոռս իմ, որպէս և ես յաղթեցի՝ և նստայ
22 յաթոռս Հօր իմոյ: Որ ունիցի ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս:

Եւ Լաւոդիկեացոց եկեղեցւոյ հրեշտակին գրիր. Սա է ասում Ամէնը, հաւատարիմ և ճշմարիտ Վկան, Աստուծոյ արարածների Սկիզբը: Գիտեմ գործքերը որ ոչ ցուրտ ես և ոչ տաք. ո՛հ թէ ցուրտ լինէիր կամ տաք: Ուրեմն որովհետև գաղջ ես և ոչ տաք և ոչ ցուրտ, քեզ պիտի փոխեմ իմ բերանիցը. Վասն զի ասում ես, թէ Ես հարուստ եմ և մեծացայ, և ոչ մի բանի կարօտ չեմ. և չես գիտում թէ դու թշուառ, և ողորմելի, և աղքատ, և կոյր, և մերկ ես: Ես խրատ եմ տալիս քեզ, ինձանից կրակում փորձուած ոսկի առ, որ հարստանաս, և սպիտակ հանդերձներ՝ որ հագնիս, որ քո մերկութեան ամօթը չերևի. և զեղ զիր աչքերիդ որ տեսնես: Ես որոնց որ սիրում եմ յանդիմանում եմ, և խրատում եմ. ուրեմն ջանք արա և ապաշխարիր: Ահա ես դրան առջև կանգնած եմ և թակում եմ. եթէ մէկը լսէ իմ ձայնը և դուռը բանայ, կ'մտնեմ նորա մօտ և ընթրիք կ'անեմ նորա հետ, և նա ինձ հետ: Ով որ յաղթում է կ'տամ նորան, որ ինձ հետ նստի իմ աթոռի վերայ, ինչպէս ես էլ յաղթեցի և նստեցի իմ Հօր հետ նորա աթոռի վերայ: Ով որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին:

ԳԼ. Դ

1 Եւ յետ այսր ամենայնի տեսի՝ և ահա դրունք երկնից բացեալ էին, և ձայն փողոյն առաջնոյն զոր լուայ՝ խօսէր ընդ իս և ասէր. Եկ այսր՝ և ցուցից քեզ՝ զինչ լինելոց է
2 յապա ժամանակս: Եւ ժամանեալ յիս Հոգի, և տեսի աթոռ մի զի կայր յերկինս:
3 Եւ 'ի վերայ աթոռոյն նստէր նման տեսլեան ականց յասպիսոյ
4 և սարդիոնի: * Եւ քահանայք շուրջ զաթոռովն նմանք տեսլեան զմրխտի՝՝. և շուրջ զաթոռովն աթոռք քսան և չորք, և 'ի վերայ աթոռոցն նստէին քսան և չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպիտակս, և 'ի գլուխս
5 իւրեանց պսակս ոսկիս: Եւ յաթոռոյ անտի ելանէին փայլատակմունք և ձայնք և որոտմունք. և եօթն ջամբարք հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն, որ են եօթն Հոգիքն Աստուծոյ. Եւ էր առաջի աթոռոյն
6 ծով ապակեղէն՝ նման սպիտակութեան սառին, և 'ի մէջ † աթոռոյն չորք՝՝ կենդանիք՝ և լի էին աչօք առաջոյ և յետոյ:
7 Եւ էր կենդանին առաջին նման առիւծու, և երկրորդ կենդանին նման զուարակի, և երրորդ

* 'Ի Յունն էր:
† 'Ի Յունն, աթոռոյն՝ և շուրջ զաթոռովն չորք.

ԳԼ. Դ

Եւ սորանից յետոյ տեսայ, 1
և ահա մի բացուած դուռն երկնքումը, և այն առաջի ձայնը, որ լսեցի փողի պէս որ խօսում էր ինձ հետ, ասաց. Գա՛ր եկիր այս տեղ, և ցոյց տամ քեզ ինչ որ լինելու է սորանից յետոյ: Եւ շուտով եղայ 2
Հոգում. և ահա մի աթոռ կար երկնքումը. և աթոռի վերայ մէկը նստած: Եւ նստողը յաս- 3
պիս և սարդիոն քարի երևոյթի նման էր. Եւ աթոռի չորս կող- 4
մովը ծիածան կար զմրուխտի երևոյթի նման. և աթոռի չորս կողմովը քսան և չորս աթոռներ, և այն աթոռների վերայ քսան և չորս երէցներ նստած՝ սպիտակ հանդերձներ հագած, և իրանց գլխներին ոսկի պսակներ: Եւ աթոռից փայլա- 5
տակներ և որոտմունք և ձայներ էին դուրս գալիս. և եօթը ջամբարներ՝ կրակով բորբոքուած աթոռի առջև, որոնք Աստուծոյ հոգիներն են: Եւ 6
աթոռի առջև ապակեայ ծով կար ակնվանու նման, և աթոռի մէջ և աթոռի չորս կողմովը չորս կենդանիք՝ առաջից և ետից լիքն աչքերով: Եւ ա- 7
ռաջի կենդանին առիւծի նման

կենդանին ունէր երեսս մարդոյ,
և չորրորդ կենդանին նման
8 արծուոյ թռուցելոյ։ Եւ չորից
կենդանեացն էին միոյ միոյ ի
նոցանէ վեց թեւք, շուրջանակի
և ի ներքոյ լի էին աչօք, ոչ
հանգչէին՝ ոչ զտիւ և ոչ
զգիշեր՝ ասելով. Սուրբ՝ Սուրբ՝
Սուրբ՝ Տէր Աստուած Ամե-
նակալ՝ որ էր, և ես, և որ
9 գալոց ես։ Եւ յորժամ տային
կենդանիքն փառս և պատիւ և
գոհութիւն նստելոյն ի վերայ
աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտ-
10 եանս յաւիտենից, (Անկանէին
քսան և չորք երիցունքն առաջի
նստելոյն յաթոռն, և երկիր
պագանէին կենդանւոյն յաւիտ-
եանս յաւիտենից.) և դնէին
զպսակս իւրեանց առաջի աթո-
11 ռոյն ասելով, Արժանի ես Տէր
Աստուած մեր սուրբ՝ առնուլ
փառս և պատիւ և զօրութիւն,
զի դու ստեղծեր զամենայն. և
ի կամէն քո ստեղծան՝ և կան
հաստատուն։

ԳԼ. Ե

1 Եւ տեսի ի ձեռս աջոյ՝ որ
նստէր ի վերայ աթոռոյն՝ գիրք
գրեալ ներքոյ և արտաքոյ, և
2 կնքեալ եօթն կնքով։ Եւ տեսի
հրեշտակ մի զօրաւոր՝ զի
քարոզէր ի ձայն մեծ. Ո՞ է
արժանի բանալ զգիրքս՝ և լու-
էր, և երկրորդ կենդանին՝ եղի
նման, և երրորդ կենդանին
մարդու նման երես ունէր, և
չորրորդ կենդանին թռչող ար-
8 ծուի նման։ Եւ չորս կենդա-
նիների իւրաքանչիւրն վեց թեւ
ունէին, իրանց չորս կողմովը և
ներսևանց լիքն էին աչերովք.
և հանգստութիւն չունէին ցե-
րեկ և գիշեր ասելով. Սուրբ,
Սուրբ, Սուրբ Տէր Աստուած
ամենակալող, որ էր, և որ է,
9 և որ գալոց է։ Եւ երբոր այն
կենդանիներն փառք, և պատիւ,
և գոհութիւն են տալիս աթոռի
վերայ նստողին որ կենդանի է
յաւիտեանս յաւիտենից, Ի սան
10 և չորս երէցները ընկնում են
աթոռի վերայ նստողի առջև, և
երկրպագում նորան, որ կեն-
դանի է յաւիտեանս յաւիտենից.
և իրանց պսակները դցում են
11 աթոռի առջև և ասում. Ար-
ժանի ես, Տէր, որ առնես
փառքը, և պատիւը, և զօրու-
թիւնը. վասն զի ստեղծեցիր ա-
մէն բաները և քո կամենալովը
կան և ստեղծուեցան։

ԳԼ. Ե

1 Եւ աթոռի վերայ նստողի աջ
ձեռումը մի գիրք տեսայ, որ
ներսևանց և դրսևանց գրուած
էր, եօթն կնքով կնքուած։
2 Եւ մի զօրաւոր հրեշտակ տեսայ
որ մեծ ձայնով քարոզում էր.
Ո՞վ է արժանի բանալ այս

3 ծանել զկնիք նորա։ Եւ ոչ ոք
կարէր՝ ոչ ի յերկինս և ոչ
յերկիր և ոչ ի ներքոյ երկրի
բանալ զգիրքն, *զի ոչ տեսին
4 զնա՝։ Եւ ես լայի ուժգին՝ զի
ոչ ոք գտաւ արժանի բանալ
5 զգիրքն և հայել ի նա։ Եւ մի
յերիցանցն ասէ ցիս. Մի լար,
ահաւասիկ յաղթեաց Առիւծն
յազգէն Յուդայ յարմատոյն
Դաւթի՝ բանալ զգիրքն և
լուծանել զեօթն կնիքսն նորա։
6 Եւ տեսի ի մէջ աթոռոյն և ի
մէջ չորից կենդանեացն՝ և ի
մէջ երիցանցն Դառն կայր
զեղեալ որ ունէր եօթն եղջիւրս՝
և աչս եօթն, որ են եօթն
Հոգիք Աստուծոյ, որ են
առաքեալ ընդ ամենայն երկիր։
7 Եւ եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ
նորա՝ որ նստէր ի վերայ
8 աթոռոյն։ Եւ յորժամ առ
զգիրն, չորք կենդանիքն և քսան
և չորք երիցունքն անկանէին
առաջի Դառին. և ունէին
իւրաքանչիւր քնար՝ և բուրվառ
ոսկի լի խնկով, որ է աղօթք
9 սրբոցն։ Եւ օրհնէին երգս
նորս և ասէին. Արժանի ես
առնուլ զգիրքն և բանալ զկնիք
դորա, զի զեղեալ՝ և գնեցեր
զմեզ. Աստուծոյ արեամբդ քով՝
յամենայն ազգաց և ի լեզուաց
և ի ժողովոց հեթանոսաց։
10 Եւ արարեր զսոսա Աստուծոյ
մերոյ թագաւորս և քահանայս՝

գիրքը և սորա կնիքները լու-
ծել։ Եւ ոչ ով՝ ոչ երկնքումը 3
և ոչ երկրի վերայ և ոչ երկրի
ներքևումն, չէր կարողանում
այն գիրքը բանալ, և ոչ էլ
նայել նորա մէջ։ Եւ ես շատ 4
լաց էի լինում, որ ոչ ով
չգտնուեցաւ արժանի այն գիր-
քըն բանալու և կարդալու և
ոչ նորա մէջ նայելու։ Եւ 5
երէցներից մէկն ասաց ինձ. Լաց
մի լինիր, ահա յաղթեց առիւծը
որ Յուդայի ցեղից է՝ Դաւթի
Արմատը, որ գիրքը բանայ և
նորա եօթը կնիքները լուծէ։
Եւ տեսայ, և ահա այն աթոռի 6
մէջ և չորս կենդանիների մէջ
և երէցների մէջ մի Դառն
կանգնած մորթուածի նման, որ
եօթն եղջիւր ունէր և եօթն
աչք, որ Աստուծոյ եօթը Հո-
գիքն են, որ ուղարկվում են
բոլոր երկիրը։ Եւ նա եկաւ 7
և գիրքն առաւ աթոռի վերայ
նստողի աջ ձեռից։ Եւ երբոր 8
գիրքն առաւ, չորս կենդանի-
ները և քսան և չորս երէցները
ընկնում էին Դառի առջև.
ամեն մէկը ունէին քնարներ և
ոսկի բուրվառներ խնկով լիքը,
որ սրբոց աղօթքն է։ Եւ նոր 9
երգ են երգում և ասում. Ար-
ժանի ես առնելու այդ գիրքը և
դորա կնիքները բանալու, վասն
զի մորթուեցար, և քո արիւ-
նովը մեզ գնեցիր Աստուծոյ

* Ի Յոյն, և ոչ հայել ի նա

թագաւորել 'ի վերայ երկրի:
11 Եւ տեսի, և լուայ զձայն հրեշ-
տակաց բազմաց՝ որք կային
շուրջ զաթոռովն և զչորիւք
կենդանեօքն և զքահանայիւքն.
և էր թիւն նոցա բիւրք բիւրուց՝
12 և հազարք հազարաց: Եւ էին
ձայնիւ մեծաւ. Արժան է
Գառնդ զնեալ առնուլ զմեծու-
թիւն և զիմաստութիւն և
զզօրութիւն և զպատիւ և զփառս
13 և զօրհնութիւն: Եւ ամենայն
արարածք՝ որ են յերկինս և
յերկրի և 'ի ծովու և որ 'ի
նոսա՝ լուայ զի ասէին. Որ նստի
յաթոռն՝ և Գառնն օրհնեալ
բարձրացեալ և փառաւորեալ
14 յաւիտեանս յաւիտենից: Եւ
չորք կենդանիքն ասէին, Ամէն.
և երիցունքն անկանէին առաջի
նորա և երկիր պագանէին:

ԳԼ. Զ.

1 Եւ տեսի զի եբաց զմին 'ի
կնիքացն, և լուայ 'ի միոյ 'ի
չորից կենդանեացն իբրև զձայն
որոտման՝ զի ասէր՝ թէ Գամ:
2 Եւ տեսի՝ և ահա ձի սպիտակ,
համար ամեն ցեղից և լեզուից և
ժողովրդից և ազգից. Եւ մեր 10
Աստուծոյ համար մեզ թագա-
ւորներ և քահանաներ արիր, և
երկրի վերայ թագաւորութիւն
կ'անենք: Եւ տեսայ, և շատ 11
հրեշտակներուն ձայն լսեցի ա-
թոռի և չորս կենդանիներուն և
երէցներուն չորս կողմովը. և նո-
րանց համարն էր բիւրք բիւրուց
և հազարք հազարաց. Որ մեծ 12
ձայնով ասում էին. Արժանի
է մորթուած Գառը առնելու և
զօրութիւնը, և հարստութիւ-
նը, և իմաստութիւն, և կարո-
ղութիւն, և պատիւ, և փառք,
և օրհնութիւն: Եւ ամեն 13
ստեղծուած, որ երկնքումն է,
և երկրի վերայ, և երկրի տակ,
և ծովումը, և նորանք ամենքն
որ նորա մէջ են, լսեցի որ
ասում էին. Աթոռի վերայ
նստողին և Գառին լինի օրհնու-
թիւնը, և փառքը, և կարողու-
թիւնը յաւիտեանս յաւիտենից:
Եւ չորս կենդանիներն ասում 14
էին, Ամէն. և քսան և չորս
երէցները ընկան և երկրպագու-
թիւն արին նորան որ կենդանի
է յաւիտեանս յաւիտենից:

ԳԼ. Զ.

Եւ տեսայ որ Գառը այն 1
կնիքներից մէկը բացաւ, և այն
չորս կենդանիների մէկիցը լսեցի
որ որոտմունքի ձայնի պէս ա-
սում էր. Եկ և տես: Եւ 2

և որ հեծեալն էր 'ի նմա՝ ունէր
աղեղն. և տուաւ նմա պսակ, և
ելն յաղթօղն՝ զի յաղթեսցէ:

3 Եւ յորժամ եբաց զկնիքն
երկրորդ. լուայ յերկրորդ կեն-
4 դանւոյն՝ զի ասէր, Գամ: Եւ
ել այլ ձի կարմիր. և որ հե-
ծեալն էր 'ի վերայ նորա՝ տուաւ
նմա առնուլ զխաղաղութիւն
յերկրէ, զի զմիմեանս զնեցեն.
և տուաւ նմա սուր մի մեծ:

5 Եւ յորժամ եբաց զկնիքն
երրորդ՝ լուայ յերրորդ կեն-
դանւոյն՝ զի ասէր՝ թէ Գամ. և
տեսի՝ և ահա ձի սեաւ, և որ
նստեալն էր 'ի վերայ նորա՝
ունէր կշիռք 'ի ձեռին իւրում:
6 Եւ լուայ ձայն 'ի միջոյ չորից
կենդանեացն. Կապիճ մի ցորե-
ան՝ դենարի միոջ, և երեք
կապիճ գարի՝ դենարի միոջ. և
ձէթ և գինի մի՛ վնասեսցես:
7 Եւ յորժամ՝ եբաց զկնիքն
չորրորդ, լուայ ձայն 'ի չորրորդ
կենդանւոյն՝ զի ասէր՝ թէ Գամ:
8 Եւ տեսի՝ և ահա ձի շլոռոս, և
որ նստէրն 'ի վերայ նորա՝
ունէր զմահ, և Դժոխք եր-
թային զկետ նորա. և տուաւ
նմա իշխանութիւն չորրորդ
մասին աշխարհի՝ սատակել սրով
և սովով և մահուամբ՝ և
գազանօք երկրի:

տեսայ, և ահա մի սպիտակ
ձի, և նորա վերայ նստողը
մի աղեղ ունէր. և մի պսակ
տրուեցաւ նորան, և դուրս
եկաւ յաղթելով և յաղթելու
համար:

Եւ երբոր երկրորդ կնիքը 3
բացաւ, երկրորդ կենդանիցը
լսեցի որ ասում էր. Եկ և տես:
Եւ մի ուրիշ ձի դուրս եկաւ 4
կարմիր. և նորա վերայ նստո-
ղին տրուեցաւ որ խաղաղու-
թիւնը վեր առնէ երկրիցը, և
որ իրար մորթեն. և մի մեծ
սուր տրուեցաւ նորան:

Եւ երբ որ երրորդ կնիքը բա- 5
ցաւ երրորդ կենդանիցը լսեցի որ
ասում էր. Եկ և տես. և տե-
սայ և ահա մի սև ձի, և նորա
վերայ նստողը մի կշիռք ունէր
իր ձեռումը: Եւ չորս կենդա- 6
նիների միջիցը մի ձայն լսեցի որ
ասում էր. Մի կապիճ ցորենը
մի դենարի, և երեք կապիճ
գարին մի դենարի, և ձէթի և
գինուն վնաս չտաս:

Եւ երբոր չորրորդ կնիքը 7
բացաւ, չորրորդ կենդանու
ձայնը լսեցի որ ասում էր. Եկ
և տես: Եւ տեսայ, և ահա 8
մի դեղնականաչ ձի, և նորա
վերայ մի նստող՝ անունը Մահ,
և Դժոխքը գնում էր նորա
ետևից. և իշխանութիւն տրուե-
ցաւ նորանց՝ աշխարհի չոր-
րորդ բաժնի վերայ սրով և
սովով և մահով և երկրի գա-
զաններովն սպանել:

9 Եւ յորժամ երաց զկնիքն
հինգերորդ՝ տեսի ՝ի ներքոյ
սեղանոյն զհոգիս ամենայն
մարդկան զնեալ վասն բանին
Աստուծոյ՝ և վասն վկայութեան
10 նորա զոր ունէին։ Որք ասէին
՝ի ձայն մեծ. Մինչև յե՞րբ
Տէր սուրբ և ճշմարիտ՝ ո՞չ
դատես, և խնդրես զվրէժ
արեան մերոյ ՝ի բնակչաց երկրի։
11 Եւ տուաւ նոցա արկանելիս
սպիտակս, և ասացաւ նոցա զի
հանգիցեն փոքր մի ժամանակ,
մինչև լցին ծառայակիցք նոցա
և եղբարք նոցա՝ որք հանդերձ-
եալ են կատարիլ իբրև զնոսա։

12 Եւ տեսի յորժամ երաց
զկնիքն վեցերորդ՝ եղև շար-
ժումն մեծ, և արեգակն եղև
սեաւ իբրև զկապերտ այծեայ,
և լուսին ամենայն իբրև զարիւն։
13 Եւ աստեղք երկնից թափա-
փեցան ՝ի յերկիր, որպէս տերև
թզենւոյ զի ուժգին շարժիցի ՝ի
14 հողմոյ։ Եւ երկին իբրև ըղձա-
գաղութեայ գիրս գալարէր. և
ամենայն լերինք և կղզիք ՝ի
տեղւոյ իւրեանց շարժեցան։
15 Եւ թագաւորք երկրի և իշ-
խանք՝ հաղարապետք և մե-
ծամեծք և զօրաւորք՝ և ամենայն
ծառայք և ամենայն աղատք
թագուցին զինքեանս յայրս և
16 ՝ի ծերպս վէմաց։ Եւ ասէին

Եւ երբոր հինգերորդ կնիքը 9
բացաւ, տեսայ սեղանի ներքև
նորանց հոգիները որ մորթ-
ուած էին Աստուծոյ խօսքի հա-
մար և այն վկայութեան հա-
մար որ ունէին, Որ մեծ ձայնով 10
աղաղակում էին և ասում.
Մինչև երբ, ով սուրբ Տէր և
ճշմարիտ, չես դատում, և
մեր արիւնի վրէժը չես առ-
նում՝ երկրի վերայ բնակողնե-
րից։ Եւ նորանց իւրաքան- 11
չիւրին սպիտակ հանդերձներ
տրուեցան, և ասացուեցաւ նո-
րանց, որ տակաւին մի քիչ ժա-
մանակ հանգիստ առնեն, մինչև
որ նորանց ծառայակիցները և
նորանց եղբայրները էլ կատա-
րուին որ նորանց պէս սպա-
նուելու են։

Եւ տեսայ, երբոր վեցերորդ 12
կնիքը բացաւ, և ահա մեծ շարժ
եղաւ, և արեգակը սեւացաւ
մազեղէն քուրձի պէս, և լու-
սինն արիւնի պէս եղաւ։ Եւ 13
երկնքի աստղերը թափուեցան
երկրի վերայ ինչպէս թզենին
իր խակ պտուղը թափում է՝
սաստիկ քամուց շարժուած։
Եւ երկինքը տեղիցը քաշվում 14
էր գալարուող գրքի պէս. և
բոլոր լեռներն ու կղզիներն
իրանց տեղիցը շարժուեցան։
Եւ երկրի թագաւորները և 15
մեծամեծները և հարուստները և
հաղարապետները և զօրաւոր-
ները և ամեն ծառայ և ամեն
աղատ թաքցրին իրանց անձները

*լերանց՝ թէ Անկերուք ՝ի
վերայ մեր, և ցրուրս թէ ծած-
17 կեցէք զմեզ"։ Զի եկն օր մեծ
բարկութեան նորա. և ո՞վ կարէ
կալ առաջի նորա։

ԳԼ. Ի.

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս
հրեշտակս՝ զի կային ՝ի չորս
անկիւնս երկրի. և ունէին զչորս
հողմս երկրի՝ զի մի շնչեսցէ
հողմ ՝ի վերայ երկրի, և մի ՝ի
2 ծովու՝ և մի ՝ի ծառս։ Եւ տեսի
այլ հրեշտակ՝ զի ելլ յարևելից,
և ունէր զկնիքն Աստուծոյ կեն-
դանւոյ, և աղաղակեաց ձայնիւ
մեծաւ առ չորս հրեշտակսն՝
որոց առեալ էր իշխանութիւն
3 ապականել զերկիր և զծով։ Եւ
ասէր. Մի՛ վնասէք երկրի՝ մի՛
ծովու՝ մի՛ ծառոց, դադարեցէք
մինչև կնքեսցիս զծառայս Ա-
ստուծոյ իմոյ ՝ի ճակատս նոցա։
4 Եւ լուայ զթիւ կնքելոցն՝
հարիւր քառասուն և չորք
հազար կնքեալք յազգէ որդւոցն
5 Իսրայէլի։ Յազգէն Յուդայ՝
երկոտասան հազար կնքեալ։
Յազգէն Ռուբենի՝ երկոտասան

* ՝Ի Յոյն, լերանց և բլրոց, թէ Անկերուք ՝ի վերայ մեր և ծածկեցէք զմեզ. յերեսաց այնորիկ՝ որ նստի ՝ի վերայ աթոռոյն, և ՝ի բարկութենէ Գառին։

այրերի և լեռանց ժայռերի մէջ։
Եւ ասում էին լեռանց և ժայ- 16
ռերին. Ա՛յր ընկէք մեզ վե-
րայ, և ծածկեցէք մեզ աթոռի
վերայ նստողի երեսիցը, և
Գառի բարկութիւնից. Ա՛ն- 17
զի նորա բարկութեան մեծ օրը
եկել է, և ո՞վ կարող է կենալ։

ԳԼ. Ի.

Եւ սորանից յետոյ տեսայ 1
չորս հրեշտակ՝ կանգնած երկրի
չորս անկիւնումը, և երկրի չորս
քամին բռնած, որ քամի չփչէ
երկրի վերայ, ոչ էլ ծովի վե-
րայ, և ոչ մի ծառի վերայ։
Եւ մի ուրիշ հրեշտակ տեսայ, 2
որ դուրս էր գալիս արևելքիցը,
և կենդանի Աստուծոյ կնիքը
ունէր, և մեծ ձայնով աղաղա-
կեց այն չորս հրեշտակներին
որոնց իշխանութիւն տրուեցաւ
երկրին և ծովին վնասելու, Եւ
ասում էր. Ա՛նաս մի տաք ոչ 3
երկրին, ոչ ծովին. և ոչ էլ
ծառերին, մինչև որ մեր Ա-
ստուծոյ ծառաների վերայ կնիք
դնենք նորանց ճակատներումը։
Եւ կնքուածների համարը լսեցի 4
հարիւր քառասուն և չորս հա-
զար կնքուած Իսրայէլի որդոց
ամէն ցեղերիցը։ Յուդայի ցե- 5

6 հաղար կնքեալ։ Յազգէն Դա-
դայ՝ երկոտասան հաղար կն-
քեալ։ Յազգէն Ասերայ՝ երկո-
տասան հաղար կնքեալ։ Յազ-
գէն Նեփթաղիմայ՝ երկոտասան
7 հաղար կնքեալ։ Յազգէն Մա-
նասէի՝ երկոտասան հաղար
կնքեալ։ Յազգէն Շմաւոնի՝
երկոտասան հաղար կնքեալ։
Յազգէն Ղեւայ՝ երկոտասան
8 հաղար կնքեալ։ Յազգէն Իսա-
քարայ՝ երկոտասան հաղար
կնքեալ։ Յազգէն Զաբուղոնի՝
երկոտասան հաղար կնքեալ։
Յազգէն Յովսեփայ՝ երկոտա-
սան հաղար կնքեալ։ Յազգէն
Բենիամինի՝ երկոտասան հաղար
կնքեալ։

9 Եւ յետ այսորիկ տեսի՝ և
ահա ժողովուրդ բազում՝ որոց
ոչ գոյր թիւ, յամենայն հե-
թանոսաց և յամենայն ազգաց
և յամենայն լեզուաց և յամե-
նայն ժողովրդոց, որք կային
առաջի աթոռոյն և առաջի
Գառնն՝ արկեալ զիւրեւամբք
հանդերձս սպիտակս՝ և ար-
մաւենիս ի ձեռս իւրեանց։
10 Աղաղակէին ի ձայն մեծ՝ և
ասէին. Փրկութիւն Աստուծոյ
մերոյ՝ որ նստի ի վերայ աթո-
11 ռոյն, և Գառնն։ Եւ ամենայն
հրեշտակք կային շուրջ զա-
թոռովն և զերիցսն և
զչորիսին կենդանեսքն, և ան-
կանէին յերեսս առաջի աթո-
ռոյն՝ և երկիր պագանէին Ա-
ստուծոյ։ Ասելով. Ամէն. օրհ-
նութիւն և փառք և իմաստու-
թիւն և գոհութիւն և պատիւ և
զօրութիւն և շնորհք Տեառն
Աստուծոյ մերոյ յաւիտեանս
13 յաւիտենից. ամէն։ Եւ ասէ
ցիս մի յերիցանց անտի. Սոքա
որ զգեցեալ են զհանդերձս
սպիտակս՝ ո՞յք են՝ և կամ ուստի՞
14 գան։ Եւ ասացի ցնա. Տէր՝ դու
գիտես. և ասէ ցիս. Սոքա են՝
որ գան ի վշտաց մեծաց, և
լուացին զարկանելիս իւրեանց՝
և սպիտակացուցին արեամբ
15 Գառին։ Վասն այնորիկ են
առաջի աթոռոյն Աստուծոյ՝ և
պաշտեն զնա զտիւ և զգիշեր ի
տաճարի նորա. և որ նստի ի
վերայ աթոռոյն՝ բնակեալ է ի
16 նոսա։ Ո՛չ քաղցիցեն և ո՛չ
ծարաւիցեն, և ո՛չ ոք մեղիցէ
նոցա՝ ո՛չ արեգակն և ո՛չ տօթ։
17 Եւ Գառնն՝ ի միջոյ աթոռոյն
իւրոյ հովուեսցէ զնոսա, և
առաջնորդեսցէ նոցա ի կենաց
աղբիւր ջրոյ կենդանւոյ. քանզի
եհատ Աստուած զամենայն ար-
տասուք յերեսաց նոցա։

ԳԼ. Ը.

1 Եւ յորժամ եբաց զկնիքն
եօթներորդ՝ եղև լռութիւն
յերկինս՝ որպէս կէս ժամու։

մէն. օրհնութիւնը և փառքը և
իմաստութիւնը և գոհութիւնը
և պատիւը և կարողութիւնը և
զօրութիւնը լինի մեր Տէր Ա-
ստուծոյն յաւիտեանս յաւիտե-
նից. Ամէն։ Եւ երէցներից 13
մէկը պատասխանելով ասաց
ինձ. Սորանք որ սպիտակ հան-
դերձներ են հագել՝ ո՞վ են և
կամ ո՞ր տեղից են եկել։ Եւ 14
ասացի նորան. Տէր, դու գի-
տես. և ասաց ինձ. Սորանք են
որ գալիս են այն մեծ նեղու-
թիւնից, և իրանց հանդերձ-
ները լուացին և սպիտակացրին
Գառի արիւնովը։ Նորա հա- 15
մար Աստուծոյ աթոռի առջև
են, և պաշտում են նորան
ցերեկ և գիշեր նորա տաճարի
մէջ. և աթոռի վերայ նստողը
կ'բնակէ նորանց մէջ։ Այլ ևս 16
ոչ կ'սովին և ոչ կ'ծարաւին, և
չի ընկնիլ նորանց վերայ ոչ
արևը և ոչ մի տաքութիւն։
Վասն զի Գառը՝ որ աթոռի 17
մէջ է, կ'հովուէ նորանց և
կ'առաջնորդէ նորանց դէպի
ջրերի կենդանի աղբիւրներ. և
Աստուած կ'սրբէ ամեն արտա-
սուք նորանց աչքերից։

ԳԼ. Ը.

Եւ երբ որ եօթներորդ 1
կնիքը բացաւ, լռութիւն եղաւ
երկնքումը իբրև կէս ժամի
չափ։

2 Եւ տեսի հրեշտակս եօթն, որ առաջի Աստուծոյ կային. և տուաւ նոցա եօթն փող:
3 Եւ այլ հրեշտակ եկն եկաց առ սեղանն, և ունէր խնկանոց ոսկի. և տուաւ նմա խունկ բազում, զի մատուսցէ *զաղօթս ամենայն սրբոց 'ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն:
4 Եւ եկ ծուխ խնկոցն՝ *աղօթն սրբոցն 'ի ձեռաց հրեշտակացն
5 առաջի Աստուծոյ: Եւ եկեալ հրեշտակն զխնկանոցն 'ի հրոյ սեղանոյն՝ և արկ զնա յերկիր. և եղեւ որոտումն և ձայնք և փայլատակումն և շարժումն մեծ:
6 Եւ եօթն հրեշտակքն որ ունէին եօթն փող՝ պատրաստեցին զինքեանս առ 'ի հարկանել:

7 Եւ առաջին հրեշտակն եհար զփողն, և եղեւ կարկուտ և հուր և արիւն խառնեալ՝ և անկաւ յերկիր, և զերրորդ մասն երկրի այրեաց, և զերրորդ մասն ծառոց այրեաց, և զամենայն դալար խոտոյ այրեաց:

8 Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, և իբրև զլեառն մի մեծ հրոյ եհնեալ անկաւ 'ի ծով, և եղեւ երրորդ մասն ծովու արիւն.
9 Եւ սատակեցաւ երրորդ մասն լուզակաց, և որ ունէր շունչ

* 'Ի Յ«ոյն», ընդ աղօթս

Եւ տեսայ այն եօթը հրեշտակները որ Աստուծոյ առջև կանգնած էին. և եօթը փող տրուեցաւ նորանց: Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ կանգնեց սեղանի առջև, և ոսկի խնկանոց ունէր. և շատ խունկ տրուեցաւ նորան, որ բոլոր սրբերի աղօթքների հետ մատուցանէ այն ոսկի սեղանի վերայ որ աթոռի առջևն էր: Եւ վեր եկաւ խնկերի ծուխը սրբոց աղօթքների հետ հրեշտակի ձեռքից Աստուծոյ առջևը: Եւ հրեշտակն այն խնկանոցն առաւ և լցրեց սեղանի կրակից, և դցեց երկրի վերայ. և ձայներ և որոտմունքներ և փայլատակներ և շարժ եղան: Եւ այն եօթը հրեշտակներն, որ եօթը փողերն ունէին, իրանց պատրաստեցին որ փչեն:

Եւ առաջի հրեշտակը փողը փչեց, և եղաւ կարկուտ և կրակ արիւնով խառնուած և ընկաւ երկրի վերայ. և երկրի երրորդ բաժինը այրուեցաւ, և ծառերի երրորդ բաժինը այրուեցաւ, և բոլոր կանաչ խոտերը այրուեցան:

Եւ երկրորդ հրեշտակը փողը փչեց, և իբրև մի մեծ լեառն կրակով բորբոքուած ընկաւ ծովի մէջ, և ծովի երրորդ բաժինն արիւն դարձաւ: Եւ ծովի մէջի շունչ ունեցող ա-

կենդանի՝ ապականեցաւ. (և երրորդ մասն նաւուց ընկղմեցաւ:)
10 Եւ երրորդ հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրև ղղամբար, և անկաւ յերրորդ մասն
11 գետոց և աղբերաց. Եւ էր անուն աստեղն Դառնութիւն. և բազումք մեռան 'ի դառնութենէ ջուրցն:

12 Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, և վիրաւորէր երրորդ մասն արեգական՝ և երրորդ մասն լուսնի՝ և երրորդ մասն աստեղաց. և խաւարէր երրորդ մասն նոցա, և երրորդ մասն* գիշերոյ նոյնպէս":

13 Եւ տեսի՝ և լուայ ձայն հրեշտակի թռուցելոյ 'ի մէջ երկնից՝ զի ասէր 'ի ձայն մեծ, Վա՜յ վա՜յ վա՜յ՝ որ բնակեալ են յերկրի. յորժամ լինիցի ձայն երիցն ևս փողոց զոր կամիցին հրեշտակքն հարկանել:

ԳԼ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակն փողէր. և տեսի զի աստղ մի անկաւ յերկնից, և տուաւ նմա

* 'Ի Յ«ոյն», աւուր ոչ ծագէր, և գիշերոյն նոյնպէս

բարձների երրորդ բաժինը մեռաւ, և նաւերի երրորդ բաժինը փչացաւ:

Եւ երրորդ հրեշտակը փողը 10
փչեց, մի մեծ աստղ ընկաւ երկնքից ղամբարի պէս բորբոքուած, և ընկաւ գետերի երրորդ բաժնի և ջրերի աղբիւրների վերայ: Եւ աստղի անունը Օշինդր էր. և ջրերի 11
երրորդ բաժինը օշինդր դարձաւ և շատ մարդիկ մեռան ջրերից, վասն զի դառնացել էին:

Եւ չորրորդ հրեշտակը փողը 12
փչեց, և վիրաւորուեցաւ արեգակի երրորդ բաժինը, և լուսնի երրորդ բաժինը, և աստղերի երրորդ բաժինը. որ նորանց երրորդ բաժինը խաւարուի. և ցերեկը երրորդ բաժինը լոյս չտայ, և գիշերն էլ նմանապէս:

Եւ տեսայ, և լսեցի մի հրեշ- 13
տակ որ երկնքի միջովը թռչում էր և մեծ ձայնով ասում. Վա՜յ. վա՜յ, վա՜յ նորանց որ բնակել են երկրի վերայ, այն երեք հրեշտակների փողի միւս ձայներիցը, որոնք փչելու են:

ԳԼ. Թ

Եւ հինգերորդ հրեշտակը 1
փողը փչեց. և տեսայ մէկ աստղ էր երկնքիցը ընկել երկրի վե-

2 բանալի գբոյն անդնդոց. Եւ
* ելանէր ծուխ 'ի գբոյն որպէս
զծուխս հնոցի մեծի. և խաւարե-
ցաւ արեգակն և † օդք։

3 Եւ 'ի գբոյն ելանէր մարախ
'ի յերկրի. և տուաւ նոցա
իշխանութիւն իբրև զնայթոցս
4 կարձի. Եւ ասացաւ նոցա՝ զի
մի մեղիցեն խոտոյ երկրի և մի
ամենայն ծառոց, բայց միայն
մարդոյ երկրայնոյ, որ ո՛չ
ունիցին զնիւք 'ի վերայ ճա-
5 կատու իւրեանց։ Եւ տուաւ
նոցա հրաման՝ զի մի սպանանի-
ցեն զնոսա, այլ չարչարեսցեն
զնոսա ամիս հինգ. և չարչա-
րանք նոցա իբրև զնայթոցս
կարձի որ հարկանիցէ զմարդ։
6 Եւ յաւուրսն յայնոսիկ խնդ-
րեսցեն մարդիկ զմահ՝ և մի
գտցեն. և ցանկան մեռանել՝ և
7 փախիցէ 'ի նոցանէ մահ։ Եւ
նմանութիւն մարախոյն՝ նմա-
նութիւն ձիոյ պատրաստելոյ 'ի
պատերազմ. և 'ի վերայ գլխոց
նոցա իբրև զպսակ՝ նմանեալ
ոսկւոյ. և երեսք նոցա իբրև
8 զերեսս մարդոյ։ Եւ հերք
նոցա իբրև զհերս կնոջ. և
ատամունք նոցա իբրև զառիւ-
9 ծու։ Եւ ունէին զրահս իբրև

* 'Ի Յոյնն յ-ելս-, երաց զդուրն անդնդոց և

† 'Ի Յոյնն, օդ 'ի ծխոյն անդնդոց

բայ. և անդունդի գրի բանա-
լիսը տրուեցաւ նորան, Եւ 2
անդունդի դուրը բացաւ, և
գրիցը ծուխը դուրս էր գալիս
մեծ հնոցի ծխի պէս. և արե-
գակը և օդը խաւարուեցան գրի
ծխիցը։
Եւ ծխիցը մարախներ էին 3
դուրս գալիս երկրի վերայ. և
նորանց իշխանութիւն տրուեցաւ
ինչպէս որ երկրի կարիճներն
իշխանութիւն ունին։ Եւ նո- 4
րանց ասուեցաւ, որ երկրի
խոտին վնաս չտան, և ոչ մի
խոտի, և ոչ մի ծառի, բայց
միայն այն մարդկանց, որ Աս-
տուծոյ կնիքը չունին իրանց
ճակատների վերայ։ Եւ տը- 5
րուեցաւ նորանց, որ չսպանեն
նորանց, այլ հինգ ամիս չար-
չարեն նորանց. և նորանց չար-
չարանքը կարիճի խայթոցի պէս
էր երբոր մի մարդու կծում է։
Եւ այն օրերումը մարդիկ մահը 6
կը խնդրեն և չեն գտնիլ նո-
րան. և կ'ցանկանան մեռնել և
մահը կը փախչի նորանցից։
Եւ մարախների նմանութիւնը 7
նման էր ձիերի որ պատրաս-
տուած են պատերազմի համար,
և նորանց գլխների վերայ իբրև
պսակներ կային ոսկու նման. և
նորանց երեսները մարդկանց
երեսների նման. Եւ մազեր 8

զզրահս երկաթի. և ձայն թևոց
նոցա իբրև զձայն կառավար
ձիոց բազմաց՝ որ արշաւեն 'ի
10 պատերազմ։ Եւ ունին ազիս
ըստ նմանութեան կարձի. և
խայթոց յազիս նոցա. և ունէ-
ին իշխանութիւն չարչարել
11 զմարդիկ ամիս հինգ։ Եւ
ունին թագաւոր 'ի վերայ
իւրեանց զհրեշտակն զժոխոց.
և անուն նորա Եբրայեցերէն
Ա՛զբաղոն, որ կոչի * 'ի Հայ
12 բարբառ Կորուստ"։ Ա՛հաւասիկ
վայ մի էանց, և վայք երկու
գալոց են։

13 Եւ վեցերորդ հրեշտակն
հարկանէր զփողն. և լուայ
ձայն 'ի չորից կենդանեացն՝ որ
էին առաջի սեղանոյն Աստու-
14 ծոյ. Ասէր ցհրեշտակն
վեցերորդ՝ որ ունէր զփողն.
Լո՛յծ զչորս հրեշտակսն ըզկա-
պեալս 'ի վերայ գետոյն Եփրա-
15 տայ։ Եւ լուծան չորք հրեշ-
տակքն՝ պատրաստեալք 'ի ժամ
և յօր և յամիս և 'ի տարի, զի
սպանցեն զերրորդ մասն մարդ-
16 կան։ Եւ համարք հեծելոց
զօրաց նոցա՝ բիւրք բիւրուց՝ և
հազարք հազարաց՝ լուայ զթիւ

* 'Ի Յոյնն, 'ի Յոյն բարբառ Ապոլլոն

ունէին կանանց մազերի պէս.
և նորանց ատամներն առիւծի
ատամներու նման էին։ Եւ զրահ- 9
ներ ունէին ինչպէս երկաթէ
զրահներ. և նորանց թևերի
ձայնը նման էր շատ ձիանց
կառքերի ձայնի որ վազում են
պատերազմ։ Եւ ազիներ ու- 10
նէին կարիճների նման, և
խայթոցներ կային նորանց ա-
զիներումը. և նորանց իշխա-
նութիւնն էր հինգ ամիս մարդ-
կանց չարչարել։ Եւ իրանց 11
վերայ թագաւոր ունէին ան-
գունդի հրեշտակը. և նորա
անունը Եբրայեցերէն *Ա՛բադ-
դոն և Յունարէն նորա անունն էր
*Ա՛պոլլիոն։ Ա՛հէկ վայն անցաւ, 12
ահա տակաւին երկու վայք գա-
լիս են սորանցից յետոյ։
Եւ վեցերորդ հրեշտակը փողը 13
փչեց. և մէկ ձայն լսեցի այն
ոսկի սեղանի չորս եղջիւրներից
որ Աստուծոյ առջև էին, Որ 14
ասում էր վեցերորդ հրեշտա-
կին որ փողն ունէր. Բձակիր
այն չորս հրեշտակներն որ
Եփրատ մեծ գետի վերայ կա- 15
պուած են։ Եւ այն չորս
հրեշտակներն արձակուեցան,
որ պատրաստուած էին այն ժամի
և օրուայ և ամսուայ և տա-
րուայ համար, որ մարդկանց
երրորդ բաժինը սպանեն։ Եւ 16
նորանց ձիաւոր զօրքի համարը

* Կորուստ

17 նոցա։ Եւ տեսի ձիս 'ի տես-
լեանն, և հեծեալս 'ի նոսա՝ որք
ունէին զրահս հրեղէնս, և
յակինթս հրդեհեալս ծծմբով.
և գլուխք ձիոցն իբրև զգլուխս
առիւծուց. և 'ի բերանոյ նոցա
հուր ելանէր և ծուխ և ծծումբ։
18 Եւ 'ի հարուածոցս յայսցանէ
մեռաւ երրորդ մասն մարդկան՝
'ի հրոյն և 'ի ծխոյն և 'ի ծծմբոյն
որ ելանէր 'ի բերանոյ նոցա։
19 Զի իշխանութիւն 'ի բերանս է
նոցա՝ և յապիս նոցա, և ապիք
նոցա նմանութիւն օձի. և
ունէին գլուխս՝ որով սատակէին
20 զանիրաւս։ Եւ այլք 'ի մարդ-
կանէ որ ոչ մեռան 'ի հարուա-
ծոցս յայսցանէ, ոչ ապաշխա-
րեցին և ոչ դարձան 'ի գործոց
ձեռաց իւրեանց, յերկրպագու-
թենէ դիւաց և կուռց յոսկեղի-
նաց և յարծաթեղենաց՝ և 'ի
պղնձոյ և 'ի քարէ և 'ի փայտէ,
որք ոչ տեսանել կարեն՝ և ոչ
21 լսել և ոչ գնալ։ Եւ ոչ ապաշ-
խարեցին 'ի մարդասպանու-
թենէ՝ և 'ի գեղատուութենէ,
և 'ի պոռնկութենէ և 'ի գողու-
թենէ իւրեանց։

ԳԼ. Ժ

1 Եւ տեսի այլ հրեշտակ
զօրաւոր՝ զի իջանէր յերկնից,
և զգեցեալ էր ամպ՝ և ծիածան
երկու բիւրք բիւրոց էր, և
լսեցի նորանց համարը։ Եւ 17
այսպէս տեսայ ձիանքը տեսիլքի
մէջ, և նորանց վերայ նստող-
ներն ունէին հրեղէն և յա-
կինթեղէն և ծծմրեղէն զրահ-
ներ, և ձիանց գլուխներն ա-
ռիւծի գլուխների նման. և
նորանց բերանից կրակ և ծուխ
և ծծումբ է դուրս գալիս։ Եւ 18
այս երեքիցը մարդկանց երրորդ
բաժինը մեռաւ, այսինքն կրա-
կից և ծխից և ծծմրից, որ
նորանց բերանից դուրս էր
գալիս։ Վասն զի նորանց զօ- 19
րութիւնն իրանց բերանումն է,
վասն զի նորանց ապիներն օձի
նման են որ գլուխներ ունէին և
նորանցով վնասում էին։ Եւ 20
մնացեալ մարդիկը որ չմեռան
այս վէրքերիցը, չապաշխարե-
ցին իրանց ձեռաց գործքերիցը,
որ չերկրպագեն դեւերին և ոսկի
և արծաթի, և պղնձի և քարի
և փայտի կռքերին, որ ոչ
տեսնել կարող են, և ոչ լսել,
և ոչ գնալ։ Եւ չապաշխարե- 21
ցին իրանց մարդասպանու-
թիւններից, և ոչ էլ իրանց
կախարդութիւններից, և ոչ
էլ իրանց պոռնկութիւնից, և
ոչ իրանց գողութիւններից։

ԳԼ. Ժ

Եւ մի ուրիշ զօրաւոր հրեշ- 1
տակ տեսայ երկնքիցը վայր
գալիս, և ամպ հագած և գլխին

'ի գլուխ նորա. և երեսք նորա
իբրև զարեգակն, և ոտք նորա
2 որպէս սիւն հրոյ։ Եւ ունէր 'ի
ձեռին իւրում գրքոյկ մի
բացեալ. և եդ զոտն իւր զաջ 'ի
վերայ ծովու. և զձախն 'ի
3 վերայ երկրի։ Եւ աղաղակեաց
'ի ձայն մեծ՝ գոչեաց իբրև
զառիւծ. և յորժամ աղաղա-
կեաց՝ խօսեցան եօթն որոտ-
4 մունք յիւրեանց ձայնս։ Եւ
յորժամ՝ խօսեցան եօթն որոտ-
մունքն՝ կամէի գրել. և լուայ
ձայն յերկնից՝ զի ասէր. Կնքեա
զոր խօսեցան եօթն որոտմունքն՝
5 և մի՛ գրեր։ Եւ հրեշտակն զոր
տեսի, որ եդ զոտն իւր 'ի վերայ
ծովու և զմիւսն 'ի ցամաքի.
համբարձ զձեռն իւր զաջ յեր-
6 կինս. Եւ երդուաւ 'ի Կեն-
դանին յաւիտենից՝ որ հաստա-
տեաց զերկինս և որ 'ի նմա. զի
7 ոչ ևս կայ այլ ժամանակ. Այլ
յաւուրս ձայնի եօթներորդ
հրեշտակին՝ յորժամ՝ հարցէ
զփողն, կատարեսցի խորհուրդն
Աստուծոյ՝ որ աւետարանեցաւ
'ի ձեռն ծառայից իւրոց մար-
գարէից։

8 Եւ ձայնն՝ զոր լուայ յերկ-
նից՝ դարձեալ խօսեցաւ ընդ իս՝
և ասէ. Երթ առ զգրքոյկն՝
զոր ունի հրեշտակն բացեալ 'ի
ձեռին իւրում՝, և կայ 'ի վերայ
9 ծովու և ցամաքի։ Եւ ես
ծիածան. և նորա երեսք նորա
կրակի նման. և նորա ոտներքը
կրակի սիւնի պէս։ Եւ իր ձե- 2
ռումը մի փոքր գիրք ունէր
բացած, և իր աջ ոտը դրաւ
ծովի վերայ, և ձախը հողի
վերայ. Եւ մեծ ձայնով աղա- 3
ղակեց ինչպէս առիւծն գո-
ռում է. և երբոր աղաղակեց,
այն եօթն որոտմունքն իրանց
ձայնովը խօսեցին։ Եւ երբոր 4
եօթն որոտմունքն իրանց ձայ-
նովը խօսեցին, պիտի գրել էի.
և ձայն լսեցի երկնքիցն որ ա-
սում էր. Կնքիր այն եօթն
որոտմունքը որ խօսեցին, և
սորանք մի գրիր։ Եւ այն 5
հրեշտակն որ տեսայ ծովի վերայ
և ցամաքի վերայ կանգնած, իր
աջ ձեռը դէպի երկինքը բարձ-
րացրեց, Եւ երդուաւ յաւի- 6
տեանս յաւիտենից Կենդանիովը,
որ ստեղծեց երկինքը և ինչ որ
նորանումն է, և երկիրը և ինչ
որ նորանում կայ, և ծովը և
ինչ որ նորանում է. թէ այլ
ժամանակ չկայ։ Բայց եօթնե- 7
րորդ հրեշտակի ձայնի օրե-
րումն երբոր փողը կ'փչէ, Աս-
տուծոյ խորհուրդն էլ կրկա-
տարուի, ինչպէս աւետարանեց
իր ծառայ մարգարէներին։

Եւ այն ձայնն որ երկնքիցը 8
լսեցի, դարձեալ խօսեց ինձ հետ
և ասաց. Գնա առ այն բաց
գրքոյկը, որ ծովի և ցամաքի
վերայ կանգնած հրեշտակի ձե-
ռին է։ Եւ ես գնացի հրեշ- 9

երթեալ առ Հրեշտակն՝ խընդրեցի 'ի նմանէ. և ասէ ցիս. Ա՛ռ զսա՝ և կ�զգոյն, և դառնասցի յորովայն քո. այլ 'ի բերան քո է քաղցր իբրև զմեղր:
10 Եւ առի զգրքոյկն բացեալ 'ի Հրեշտակէն և կլայ զնա. և էր 'ի բերան իմ որպէս մեղր. և յորժամ կերայ, դառնացաւ
11 որովայն իմ: Եւ ասէ ցիս. Հասանէ քեզ դարձեալ մարգարէանալ 'ի ժողովուրդս՝ և 'ի հեթանոսս և 'ի լեզուս և 'ի թագաւորս երկրի:

ԳԼ. ԺԱ.

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. և կայր Հրեշտակն և ասէր ցիս. Արի՛ և չափեա զտաճարն Աստուծոյ և զսեղանն՝ և զերկրպագուսն որ 'ի նմա:
2 Եւ զգաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թո՛ղ զնա՝ և մի՛ չափեր. զի տուեալ է զնա հեթանոսաց. և զքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս քառասուն և երկուս:
3 Եւ տաց երկուց վկայից իմոց՝ և մարգարէասցին աւուրս հազար երկերիւր և վաթսուն զգեցեալ
4 քուրձ: Սոքա են երկու ձիթենիքն՝ և երկու ճրագք, որ կան առաջի Աստուծոյ յերկրի:
5 Եւ որք կամիցին վնասել նոցա, հուր ելցէ 'ի բերանոյ նոցա՝ և կերիցէ զթշնամիս նոցա. և որք կամիցին մեղանչել նոցա՝ այսպէս
6 սատակեսցին: Սոքա ունին իշխանութիւն փակել զերկինս՝ զի մի տեղասցէ զաւուրս մարգարէութեան նոցա. և ունին իշխանութիւն 'ի վերայ ջուրց՝ դարձուցանել զնոսա յարիւն, և հարկանել զերկիր յամենայն հարուածս՝ քանիցս անգամ և
7 կամիցին: Եւ յորժամ կատարեսցեն զամենայն աւուրս վկայութեան իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ, և յաղթեսցէ նոցա և սպանցէ
8 զնոսա: Եւ դի նոցա անկեալ կայցէ 'ի մէջ հրապարակաց քաղաքին նոցա մեծի, որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն Սոդոմ և Եգիպտոս. ուր և Տէրն նոցա
9 խաչեցաւ: Եւ տեսցեն զնոսա ամենայն ցեղք և ժողովուրդք՝ և ամենայն լեզուք և հեթանոսք, զի դի նոցա անկեալ կայցէ զերիս աւուրս և կէս. և ո՛չ տայցեն թաղել 'ի գերեզմանս
10 զոսկերս նոցա: Եւ որ բնակեալ են յերկրի՝ ուրախ լինին և խնդան 'ի վերայ նոցա, մինչև ընծայս և պատարագս տանել միմեանց. վասն զի սոքա երկոքին մարգարէքս չարչարեսցեն զբնակիչս երկրի:

11 Եւ յետ երից աւուրց և կիսոյ՝ հոգի կենդանի Աստուծոյ մտցէ 'ի նոսա. և յարիցեն կացցեն 'ի վերայ ոտից իւրեանց, և ահ և երկիւղ մեծ

և լափում է նորանց թշնամիներին. և եթէ մէկը կամենայ վնասել նորանց՝ այսպէս պիտի սատկէ: Սորանք իշխանութիւն
6 ունին երկինքը փակելու որ անձրև չգայ նորանց մարգարէութեան օրերումը. և իշխանութիւն ունին ջրերի վերայ նորանց արիւն դարձնելու, և երկիրն ամեն կերպ պատուհասներով հարուածելու քանի անգամ որ կամենան: Եւ երբ
7 որ իրանց վկայութիւնը կկատարեն, այն ֆամանակ անդունդից դուրս եկող գազանը կռիւ կ'տայ նորանց հետ, և կ'յաղթէ նորանց և կ'սպանէ նորանց:
8 Եւ նորանց դիերը ընկած կ'մնան այն մեծ քաղաքի հրապարակումն, որի անունն հոգևորապէս Սոդոմ և Եգիպտոս է կոչվում. որտեղ մեր Տէրն էլ խաչուեցաւ: Եւ կ'տեսնեն ժողովուրդ-
9 ներից և ցեղերից և լեզուներից և ազգերից նորանց դիերը երեք օր և կէս, և թող չեն տալ որ նորանց դնեն գերեզմանների մէջ: Եւ երկրի վերայ բնա-
10 կողները կ'ուրախանան և կըխնդան. և իրար ընծաներ կ'ուղարկեն. վասն զի այս երկու մարգարէքը չարչարեցին երկրի վերայ բնակողներին:
11 Եւ երեք և կէս օրից յետոյ Աստուածանից կենդանի հոգի եկաւ մտաւ նորանց մէջ, և իրանց ոտքերի վերայ կանգնեցին. և մեծ վախ ընկաւ նորանց

անկաւ 'ի վերայ ամենեցուն՝ որ
12 սպանին զնոսա։ Եւ լուայ
զձայն մեծ՝ որ ասէր ցնոսա.
Ելարացէք եկէք աստ. և վերա-
ցան ելին յերկինս ամպովք. և
տեսին զնոսա թշնամիք իւր-
13 եանց։ Եւ 'ի ժամուն յայնմիկ
շարժումն մեծ եղև, և տասնե-
րորդ մասն քաղաքին ընկղմեցաւ,
և մեռան 'ի շարժմանէն արք
եօթն հազար. և յետ այնորիկ
ահ մեծ եղև յամենեսեան, և
փառս տային Աստուծոյ երկ-
14 նաւորի։ Ահաւասիկ վայն երկ-
րորդ էանց, և վայն երրորդ
գայոց է վաղվաղակի։
15 Եւ յորժամ եօթներորդ
հրեշտակն հարկանէր զփողն,
եղև ձայն յերկինս՝ և ասէ.
Եղև թագաւորութիւն ամենայն
տիեզերացս Տեառն մերոյ՝ և
Յիսուսի Քրիստոսի իւրոյ. և
թագաւորեսցէ 'ի վերայ ամե-
նայնի յաւիտեանս յաւիտենից։
16 Եւ քսան և չորք երիցունքն՝ որ
նստէին յաթոռս իւրեանց առաջի
Աստուծոյ, անկանէին 'ի վերայ
երեսաց իւրեանց՝ և երկիր
պագանէին Տեառն Աստուծոյ՝
17 և ասէին. Գոհանամք զքէն
Տէր Աստուած Ամենակալ, որ
էիր և ես՝ և առեր զզօրութիւն
քո մեծ, և թագաւորեցեր։
18 Եւ հեթանոսք բարկացան, և
եկն բարկութիւն քո, և ժամա-
նակ մեռելոց՝ զի դատեսցին. և
տաս վարձս ծառայից քոց մար-
գարէից և սրբոց երկիւղածաց
տեսնողներին վերայ։ Եւ մեծ 12
ձայն ելեալ երկնքիցը որ ա-
սում էր նորանց. վեր եկէք այս
տեղ. և վեր ելան երկինքն ամ-
պով. և նորանց թշնամիները
տեսան նորանց։ Եւ նոյն ժա- 13
մումը մեծ շարժ եղաւ, և
քաղաքի տասներորդ բաժինը
կործանուեցաւ, և այն շարժու-
մից եօթն հազար մարդիկ
սպանուեցան. և մնացեալները
մեծ վախով բռնուեցան, և
փառք տուին երկնքի Աստու-
ծոյն։ Երկրորդ վայն անցաւ, 14
և երրորդ վայն գալիս է շու-
տով։
Եւ եօթներորդ հրեշտակը 15
փողը փչեց, և մեծ ձայներ եղան
երկնքումն որ ասում էին. Աշ-
խարհի թագաւորութիւնները
մեր Տիրոջը և նորա Քրիստո-
սինն եղան. և կ'թագաւորէ
յաւիտեանս յաւիտենից։ Եւ 16
քսան և չորս երէցները որ Ա-
ստուծոյ առջև իրանց աթոռների
վերայ նստած էին, իրանց
երեսների վերայ ընկան և եր-
կրպագեցին Աստուծոյն, ասե-
լով. Գոհանում ենք քեզանից, 17
Տէր Աստուած Ամենակալ, որ
էիր և ես, (և որ գալու ես)որ
քո մեծ զօրութիւնն առիր և
թագաւորեցիր։ Եւ ազգերը 18
բարկացան, և եկաւ քո բար-
կութիւնը, և մեռելների ժա-
մանակը որ դատուին. և որ
վարձը տաս քո ծառայ մար-
գարէներին և սրբերին, և քո

անուան քոյ՝ փոքրունց և մեծա-
մեծաց, և ապականես զապա-
կանիչս երկրի։
19 Եւ բացաւ տաճարն Ա-
ստուծոյ որ յերկինս, և երևե-
ցաւ տապանակն Աստուծոյ 'ի
տաճարն իւր, և եղեն փայլա-
տակմունք և ձայնք և որոտմունք
և շարժումն, և կարկուտ մե-
ծամեծ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ նշան մեծ երևեցաւ յեր-
կինս. կին մի արկեալ զիւրև
զարեգակն, և լուսին 'ի ներքոյ
ոտից նորա. և 'ի վերայ գլխոյ
նորա պսակ աստեղեայ յերկո-
2 տասանից։ Եւ էր յղի, և ճչէր
յերկնելն, և բազում վշտօք
մերձ էր 'ի ծնանել։
3 Եւ երևեցաւ այլ նշան
յերկինս՝ և ահաւասիկ վիշապ
մի մեծ հրեղէն, որոյ էին գլուխք
եօթն և եղջիւրք տասն. և 'ի
վերայ գլխոյ նորա եօթն խոյրք։
4 Եւ տուտն նորա քաշէր զեր-
րորդ մասն աստեղաց երկնից, և
արկ զնոսա յերկիր. և վիշապն
կայր առաջի կնոջն որ հանդեր-
ձեալ էր ծնանել, զի յորժամ
ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ զնա
5 վիշապն։ Եւ ծնաւ կինն արու՝
որ հանդերձեալ է հովուել
զամենայն հեթանոսս գաւա-
զանաւ երկաթեաւ. և յափշ-
տակեցաւ որդի նորա առ Ա-
անուան քոյ՝ փոքրունց և մեծա-
մեծաց, և ապականես զապա-
կանիչս երկրի։
19 Եւ բացաւ տաճարն Ա-
ստուծոյ որ յերկինս, և երևե-
ցաւ տապանակն Աստուծոյ 'ի
տաճարն իւր, և եղեն փայլա-
տակմունք և ձայնք և որոտմունք
և շարժումն, և կարկուտ մե-
ծամեծ։

ԳԼ. ԺԲ

Եւ մի մեծ նշան երևեցաւ 1
երկնքումն. մի կին՝ արեգակն
իր վերայ առած. և լուսինը
նորա ոտների տակ. և նորա
գլխին տասներկու աստղե-
րի պսակ։ Եւ յղի լինելով՝ 2
աղաղակում էր երկունք քա-
շելով և չարչարուելով որ
ծնի։
Եւ մի ուրիշ նշան երևեցաւ 3
երկնքումը. և ահա մի մեծ
վիշապ՝ կրակի պէս կարմիր, որ
եօթը գլուխ ունէր և տասն եղ-
ջիւր, և նորա գլխների վերայ
եօթը թագ. Եւ նորա ագին 4
քաշում էր երկնքի աստղերի
երրորդ բաժինը, և նորանց
գցեց երկրի վերայ. և վիշապը
կանգնած էր այն կնկան առջև
որ պիտի ծնէր, որ երբոր ծնէ,
կուլ տայ նորա զաւակը։ Եւ 5
մի արու զաւակ ծնաւ, որ պիտի
բոլոր ազգերին երկաթէ գա-
ւազանով հովուէ. և նորա որդին
յափշտակուեցաւ Աստուծոյ

տուած, և առ աթոռ նորա:
6 Եւ կինն փախեաւ յանապատ՝ ուր էր տեղի նմա պատրաստեալ յԱստուծոյ, զի կերակրեսցի անդ աւուրս հազար երկերիւր և վաթսուն:
7 Եւ եղև պատերազմ յերկինս, Միքայէլ և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին. և վիշապն պատերազմէր զօրօք
8 իւրովք: Եւ ոչ կարացին կալ ընդդէմ, և տեղի ոչ գտաւ նոցա
9 յերկինս: Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին, որ անուանեալ կոչի Դիեղդերուղ և Սատանայ, որ մոլորեցոյց զամենայն տիեզերս երկրի. և հրեշտակք նորա ընդ նմա անկան:
10 Եւ լուայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր. Արդ եղև զօրութիւն և փրկութիւն և արքայութիւն Աստուծոյ մերոյ՝ և իշխանութիւն Օծելոյ նորա. զի անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ զտիւ և զգիշեր:
11 Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ Գառին, և բանիւ վկայութեան *նորա. և ոչ հաճեցան ընդ վիշապն՝ մինչև
12 ի մահ: Վասն այսորիկ ուրախ լեցին երկինք՝ և ամենայն որ բնակեալ են ի նմա: Վա՛յ երկրի և ծովու՝ զի անկաւ Դիաբոլոս առ ձեզ, որ ունի

մօտ և նորա աթոռի մօտ: Եւ 6
կինը փախաւ անապատը, ուր Աստուածանից պատրաստուած տեղ ունէր, որ այնտեղ կերակրեն նորան հազար երկու հարիւր և վաթսուն օր:
Եւ պատերազմ եղաւ երկնքումը. Միքայէլը և նորա հրեշտակները պատերազմեցին վիշապի դէմ. և պատերազմեց վիշապը և իր զօրքերը: Եւ 7 8
չկարացին դէմ կենալ, և ոչ էլ տեղ գտնուեցաւ նորանց համար երկնքումը: Եւ ներքս գցուեցաւ մեծ վիշապը՝ այն առաջի օձը, որ Դիաբոլոս և սատանայ է կոչվում, այն բովանդակ աշխարհքը մոլորեցնողը ներքս գցուեցաւ երկրի վերայ և իր հրեշտակներն էլ իրան հետ ներքս գցուեցան: Եւ մեծ ձայն 9 10
լսեցի որ ասում էր երկնքումը Հիմա փրկութիւնը և զօրութիւնը և թագաւորութիւնն եղաւ մեր Աստուծոյն, և իշխանութիւնը եղաւ նորա Օծեալին, վասն զի վայր գցուեցաւ մեր եղբայրների չարախօսը, որ խօսում էր նորանից Աստուծոյ առջև ցերեկ և գիշեր: Եւ նոքանք յաղթեցին նորան՝ Գառի արիւնովը և նորա վկայութեան խօսքովը. և չսիրեցին իրանց հոգին մինչև ի մահ: Սորա 11 12
համար ուրախացէք, ով եր-

զցաւումն բաղում. և կացցէ առ սակաւ մի ժամանակս:

13 Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ յերկիր, զհետ եղև կնոջն՝ որ ծնաւ զմանուկն արու:
14 Եւ տուաւ կնոջն երկու թևք արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանապատ 'ի տեղի իւր. ուր կերակրէր անդ ժամանակ և ժամանակս և կէս ժամանակի՝
15 յերեսաց օձին: Եւ եհեղ օձն 'ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն
16 ջուր՝ զի ընկղմեսցէ զնա: Եւ օգնեաց երկիր կնոջն, և երաց երկիր զբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն 'ի
17 բերանոյ իւրմէ: Եւ ցասեաւ վիշապն ընդ կնոջն, և գնաց պատերազմել ընդ այլ զաւակս նորա՝ որք պահէին զպատուիրանս Աստուծոյ, և ունէին զվկայութիւնն Յիսուսի:

18 Եւ կաց 'ի վերայ աւազոյ ծովու:

ԳԼ. ԺԳ

1 Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, և ունէր գլուխս եօթն և եղջիւրս տասն, և 'ի վերայ

կինք, և որ բնակած էք նորանում. վայ երկրին և ծովին, (և նորանցում բնակողներին) վասն զի Դիաբոլոսն վայր իջաւ ձեզ մօտ, որ մեծ բարկութիւն ունի, գիտենալով, որ քիչ ժամանակ ունի:
Եւ երբոր տեսաւ վիշապը, 13
թէ վայր գցուեցաւ երկրի վերայ, ընկաւ այն կնկան ետևից որ արու զաւակը ծնաւ: Եւ 14
այն կնկանն երկու մեծ արծուի թև տրուեցաւ, որ թռչի անապատն իր տեղը. ուր որ կերակրվում է մի ժամանակ, և ժամանակներ և կէս ժամանակ օձի երեսից: Եւ օձն իր բե- 15
բանիցը գետի պէս ջուր թափեց այն կնկան ետևից, որ նորան ընկղմէ: Եւ երկիրն օգնեց կնկան, և երկիրն իր բերանը բացաւ և այն գետն կուլ տուաւ որ վիշապն իր բերանիցը թափեց: Եւ վիշապը բարկացաւ 16 17
այն կնկան վերայ, և գնաց պատերազմ անելու նորա միւս զաւակների հետ, որ Աստուծոյ պատուիրանքները պահում են, և Յիսուսի (Քրիստոսի) վկայութիւնն ունին:
Եւ ծովի աւազի վերայ 18
կանգնեցի:

ԳԼ. ԺԳ

Եւ տեսայ ծովիցը մի գազան 1
դուրս գալիս, որ եօթը գլուխ ունէր և տասն եղջիւր, և նորա

* 'Ի Յոյնն, իւրեանց. և ոչ սիրեցին, զկեանս իւրեանց

եղջերաց նորա տասն խոյր, և 'ի
վերայ գլխոյ նորա անուն
2 հայհոյութեան: Եւ գազանն
զոր տեսի՝ նման ընձու, և ոտք
նորա իբրև զարջու, և բերան
նորա որպէս զառիւծու. և ետ
նմա վիշապն զզօրութիւն իւր՝
և զաթոռ իւր և զիշխանու-
3 թիւն մեծ: Եւ մի 'ի գլխոց
նորա վիրաւորեալ էր 'ի մահ. և
վէր մահուան նորա ողջանայր:
Եւ զարմացաւ ամենայն երկիր
ընդ գազանն, զի ետ նմա
վիշապն զթագաւորութիւն իւր:
4 Եւ երկիր պագին վիշապին՝ որ
ետ զիշխանութիւնն* գազանին,
և ասէին. Ո՞վ իցէ նման գա-
զանիս. կամ ո՞վ կարիցէ պատե-
5 բազմել ընդ դա: Եւ տուաւ
նմա բերան խօսել զմեծամեծս,
և զհայհոյութիւն. և տուաւ
նմա իշխանութիւն զամիսս քա-
6 ռասուն և երկու: Եւ երաց
զբերան իւր հայհոյութեամբ
առ Աստուած, և հայհոյեաց
զանուն նորա և զխորանն նորա,
7 և զերկնային խորանն: (Եւ
տուաւ նմա իշխանութիւն առ-
նել պատերազմ ընդ սուրբս՝ և
յաղթել նոցա.) և տուաւ նմա
իշխանութիւն 'ի վերայ ամենայն
ազգաց և լեզուաց և ժողովրդոց:
8 Օ՛ի երկրպագեսցեն նմա ամե-
նայն որ բնակեալ են ընդ երեսս
երկրի. որոց ո՞չ են գրեալ
անուանք նոցա 'ի դպրութիւն
եղջերաց նորա տասն խոյր, և 'ի
վերայ գլխոյ նորա անուն
2 հայհոյութեան: Եւ գազանն
որ տեսայ ընձու նման
էր, նորա ոտներքը արջի ոտներէ
նման, և նորա բերանն առիւծի
բերանի նման. և վիշապը տուաւ
նորան իր զօրութիւնը և իր ա-
3 թոռը և մեծ իշխանութիւն: Եւ
տեսայ նորա գլխներից մէկը
մեռնելու չափ խոցուած. և
նորա մահի վէրքը ողջացաւ. և
բոլոր երկիրը զարմացաւ այն
4 գազանի ետեւից: Եւ երկր-
պագեցին այն վիշապին, որ
իշխանութիւն տուաւ այն գա-
զանին, և երկրպագեցին գա-
զանին ասելով. Ո՞վ է այս գա-
զանի նման. կամ ո՞վ է կարող
5 դորա հետ պատերազմել: Եւ
նորան տրուեցաւ՝ մի բերան
մեծ մեծ բաներ և հայհոյանք
խօսող և իշխանութիւն տրուե-
ցաւ նորան քառասուն և երկու
6 ամիս էր ո-ւղղեն անելու: Եւ
իր բերանը բացաւ Աստուծոյ
դէմ՝ հայհոյանքով, որ հայհոյէ
նորա անունը և նորա խորանը,
7 և երկնքումը բնակողներին: Եւ
նորան իշխանո-ւթի-ւն տրուեցաւ
որ սրբերի հետ պատերազմ անէ
և նոցանց յաղթէ. և իշխա-
նութիւն տրուեցաւ նորան ամե-
նայն ցեղի և լեզուի և ազգի վերայ.
8 Եւ կ'երկրպագեն նորան երկրի
վերայ բոլոր բնակողները, ո-

* 'Ի Յոյն., և երկիր պագին

կենաց Գառին զենելոյ 'ի
9 սկզբանէ աշխարհի: Այք ունին
10 ականջս լսելոյ՝ լուցին: *Օ՛ի
են ոմանք՝ որք 'ի գերութեան
վարեսցին, և են ոմանք՝ որ
սրով մեռցին, և են ոմանք՝ որ
անձամբ զանձինս սպանանեն".
աստ է համբերութիւն և հաւատ
սրբոց:

11 Եւ տեսի այլ գազան՝ զի
ելանէր յերկրէ, և ունէր
եղջիւրս երկու նման գառին.
12 և խօսէր իբրև զվիշապն: Եւ
զիշխանութիւն զամենայն զա-
ռաջնոյ գազանին գործէր առա-
ջի նորա. և առնէր զերկիր և
զամենայն բնակիչս նորա՝ զի
երկիր պագանիցեն գազանին
առաջնոյ †մինչև ողջասցի վէր
13 մահու նորա": Եւ առնէր նը-
շանս բազումս, և տայր հրոյ
իջանել յերկնից յերկիր առաջի
14 մարդկան: Եւ մոլորեցուցանէր
զորս բնակեալ են յերկիր՝
նշանօքն որ տուեալ են 'ի ձեռս
նորա՝ առնել առաջի գազանին.
‡ասէն ցնա բնակիչք երկրի.
Արա՞" զպատկեր գազանին, որ
15 'ի վիրաց սրոյն եկեաց: Եւ
որոց անունները գրուած չեն
Գառի կենաց գրքի մէջ որ աշ-
խարհքի սկզբից հետէ մոր-
թուած է: Եթէ մէկն ականջ 9
ունի՝ թող լսէ: Եթէ մէկը 10
գերութեան քաշէ, գերութեան
պիտի քաշուի. եթէ մէկը սրով
սպանէ, պիտի սրով սպանուի.
այս տեղ է սրբերի համբերու-
թիւնը և հաւատքը:

Եւ տեսայ մի ուրիշ գազան 11
դուրս գալիս երկրից, և երկու
եղջիւր ունէր գառնի նման.
բայց խօսում էր վիշապի նման:
Եւ այն առաջի գազանի բոլոր 12
իշխանութիւնը բանեցնում էր
նորա առջեւ. եւ այնպէս էր
անում, որ երկիրը եւ նորա
վերայ բնակողները երկրպագեն
այն առաջի գազանին որի մահի
վէրքը ողջացել էր: Եւ մեծ 13
նշաններ է անում, որ երկնքից կրակ էլ է վայր բերել
տալիս երկրի վերայ մարդկանց
առջեւ: Եւ մոլորեցնում է 14
երկրի վերայ բնակողներին այն
նշաններովն որ տրուած էին
նորա ձեռքը, որ գործէ գազանի
առջեւ, ասելով երկրի բնա-
կողներին որ պատկեր շինեն այն

* 'Ի Յոյն., Եթէ ոք 'ի գերու-
թիւն վարեաց՝ 'ի գերութեան
վարեսցի. եթէ ոք սրով սպան՝ սրով
մեռցի

† 'Ի Յոյն., որոյ վէր մահուն
ողջացեալ էր

‡ 'Ի Յոյն., ասելով ցբնակիչս
երկրի, առնել

տուաւ նմա իշխանութիւն, զի
տացէ հոգի պատկերի գազանին,
և զի խօսեսցի պատկերն. և
երկիր պագցեն նմա ամենայն
բնակիչք երկրի. և որ ոչ պագցէ
երկիր պատկերի գազանին,
16 սպանցէ զնա: Եւ արասցէ
զամենայն՝ զփոքրունս և զմեծա-
մեծս՝ և զմեծատունս և զազատս՝
և զաղքատս և զծառայս, զի
տացէ նոցա դրոշմ յաջու ձեռին՝
և ի վերայ ճակատու նոցա:
17 Եւ ոչ ոք կարասցէ գնել և
վաճառել՝ եթէ ոչ ունիցի
զդրոշմ՝ գրոյն՝ և զանուն գա-
զանին և զթիւ անուան նորա:
18 Այստ է իմաստութիւն. որ ունի
միտս՝ համարեսցի զթիւ գա-
զանին. թիւ եղեալն մարդոյ, և
թիւ անուան նորա է այս. վեց
հարիւր վաթսուն և վեց:

ԳԼ. ԺԴ

1 Եւ տեսի՝ և ահա Գառն
կայր ի վերայ լերինն Սիովնի.
և ընդ նմա հարիւր քառասուն
և չորք հազարք, որ ունէին
զանուն նորա՝ և անուն Հօր
նորա գրեալ ի վերայ ճակա-
2 տուց նոցա: Եւ լուայ ձայն
յերկնից՝ որպէս զձայն ջուրց
բազմաց՝ և ձայն որոտման մեծի.
և լուայ իբրև զձայն քնարահա-
րաց, զի հարկանէին զքնարս
3 իւրեանց: Եւ երգէին զերգս
գազանին որ սրի վերքն ունէր
եւ ապրեաց: Եւ տրուեցաւ նո-
15 ցան, որ հոգի տայ գազանի
պատկերին, որ պատկերը խօսի
էլ. եւ անէ էլ՝ որ նորանք որ
չերկրպագեն գազանի պատկե-
ր ին՝ սպանուին: Եւ ստիպուցէ
16 ամենեքին՝ փոքրունքերին եւ մե-
ծամեծներին, հարուստներին եւ
աղքատներին, ազատներին եւ
ծառաներին, որ նորանց դրոշմ
տայ նորանց աջ ձեռուամբ կամ՝
նորանց ճակատուամբը: Եւ որ
17 ոչ ով չկարենայ գնել կամ՝
ծախել բացի նորանից, որ գա-
զանի դրոշմը կամ նորա անունն
ունի կամ նորա անունի հա-
մարը: Այս տեղ է իմաստու-
18 թիւնը. ով որ միտք ունի թող
գազանի թիւը համարէ. վասն
զի մարդու թիւ է, եւ նորա
թիւը վեց հարիւր վաթսուն եւ
վեց է:

ԳԼ. ԺԴ

1 Եւ տեսայ եւ ահա Գառը
կանգնած էր Սիօն լեռան վե-
րայ, եւ նորա հետ հարիւր
քառասուն եւ չորս հազար հո-
գիք, որ [նորա անունը եւ]
նորա Հօր անունը գրած ու-
նէին իրանց ճակատների վերայ:
2 Եւ ձայն լսեցի երկնքիցը՝ շատ
ջրերի ձայնի պէս, եւ մեծ
որոտմունքների ձայնի պէս. եւ
քնարածողների ձայնի պէս լսե-
ցի, որ իրանց քնարներն ածուս

նորս՝ առաջի աթոռոյն՝ և առաջի
չորից կենդանեացն՝ և առաջի
երիցանցն. և ոչ ոք կարէ գիտել
զերգս նոցա՝ բայց միայն հարիւր
քառասուն և չորք հազարքն,
որք ազատեալ են յերկրէ:
4 Սորա են՝ որք ընդ կանայս ոչ
խառնակեցան, և են կուսանք.
սորա զկին երթան Գառին՝ ուր
և երթիցէ. սորա ընտրեցան ի
մարդկանէ առաջի Աստուծոյ և
5 Գառին: Եւ ի բերան նոցա
ոչ գտաւ սուտ՝ զի ամբիծք են:

6 Եւ տեսի այլ հրեշտակ
թռուցեալ ի մէջ երկնից. և
ունէր աւետիս յաւիտենական՝
աւետարանել ամենայն ազգաց
և լեզուաց՝ որ բնակեալ են
7 յերկրի: Եւ ասէր ի ձայն
մեծ. երկիրուք զԱստուծոյ՝ և
տուք փառս նմա, զի եկն ժամ
դատաստանի նորա. և երկիր
պագէք արարչին երկնի և երկրի
և ծովու և աղբերաց ջուրց:

8 Եւ այլ հրեշտակ երկրորդ
գայր զհետ նորա և ասէր.
Անկաւ անկաւ Բաբելոն մեծն
ի գինւոյ արբեցութենէ՝ ի
ցասմանէ՝ ի պոռնկութենէ
իւրմէ՝ որ արբեցոյց զամենայն

էին: Եւ երգում էին մի նոր 3
երգ աթոռի առջեւ եւ չորս
կենդանիների առջեւ եւ երէց-
ների առջեւ. եւ ոչ ով չէր
կարող ուսանել այն երգը բացի
այն հարիւր քառասուն եւ չորս
հազարներից, որ երկրից փրը-
կուել էին: Սորանք են որ կա- 4
նանց հետ չխառնակուեցան,
վասն զի կոյս են. սորանք են
որ Գառի ետեւից գնում են
ուր որ գնայ. սորանք փրը-
կուեցան մարդկանցից Աստու-
ծոյն եւ Գառին էջԸ՝ երա-
խայրի: Եւ նորանց բերա- 5
նումը ենդութիւն չգտնուե-
ցաւ, վասն զի անարատ են (Աս-
տուծոյ աթոռի առջեւ:)

Եւ տեսայ մի ուրիշ հրեշ- 6
տակ թռչելիս երկնքի մէջ, որ
յաւիտենական աւետիք ունէր
որ աւետարանէր երկրի վերայ
բնակողներին. եւ ամեն ազգի
եւ ցեղի եւ լեզուի եւ ժողո-
վուրդի: Եւ մեծ ձայնով ա- 7
սում էր. Վախեցէք Աստուա-
ծանից, եւ փառք տուէք նորան.
վասն զի նորա դատաստանի ժա-
մը եկաւ. եւ երկրպագեցէք
երկինքը եւ երկիրը եւ ծովը
եւ ջրերի աղբիւրները Ստեղծո-
ղին:

Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ 8
նորա ետեւից ասելով. Ընկաւ,
ընկաւ Բաբիլոն մեծ քաղաքը,
վասն զի իր պոռնկութեան
բարկութեան գինուցը խմեցրեց
բոլոր ազգերին. Եւ մի երրորդ 9

9 Հելլանոսս։ Եւ այլ հրեշտակ
երրորդ գայր զհետ նոցա՝ և ի
ձայն մեծ ասէր. Ո՛վ որ երկր-
պագեաց գազանին և պատկերի
նորա՝ և կամ զդրոշմ նշանի
նորա առ ի ճակատս իւր՝ և կամ
ի վերայ աջոյ ձեռին իւրոյ,
10 Այնպիսին արբցէ ի բաժակէ
ցասմանն Աստուծոյ՝ արկելոյ
յանապակէ բարկութեան բա-
ժակին. և տանջեսցի հրով և
ծծմբով առաջի Աստուծոյ և
11 Գառին։ Եւ ծուխս նոցա ելցէ
յաւիտեանս յաւիտենից. և ոչ
ունին հանգիստ՝ որք երկիր
պագին գազանին ի տուէ և ի
գիշերի. և որք երկիր պագին
պատկերին, և առին զդրոշմ և
12 զանուն նորա։ Եւ համբերու-
թիւն սրբոցն ասա է. այս՝ որք
պահեն զպատուիրանս Աստու-
ծոյ, և զհաւատս Յիսուսի.

13 Եւ լուայ ձայն յերկնից՝ որ
ասէր ցիս. Գրեա, Երանի
մեռելոցն՝ որք ի Տէր ննջեցին
այժմիկ վաղվաղակի. զայս ասէ
Հոգին, քանզի հանգիստ յաշ-
խատութենէ իւրեանց. բայց
միայն գործք իւրեանց չոգան
զհետ նոցա։
14 Եւ տեսի՝ և ահա ամպ
սպիտակ, և ի վերայ ամպոյն
նստէր նման Որդւոյ մարդոյ,
և ի գլուխ իւր պսակ ոսկի,
և ի ձեռին իւրում ունէր
գերանդի սրեալ։
15 Եւ այլ հրեշտակ ելանէր
հրեշտակ եկաւ նորանց ետեւից
մեծ ձայնով ասելով. Ով որ
երկրպագութիւն է անում գա-
զանին եւ նորա պատկերին եւ
դրոշմ ընդունում իր ճակատի
կամ իր աջ ձեռի վերայ, Այն-
պիսին Աստուծոյ սրտմտութեան
բաժակիցը պիտի խմէ, որ ան-
խառն ածուած է նորա բարկու-
թեան բաժակի մէջ. եւ պիտի
տանջուի կրակի եւ ծծմրի մէջ
սուրբ հրեշտակների եւ Գառի
առջեւ։ Եւ նորանց տանջանքի
ծուխը վեր է ելնում յաւիտ-
եանս յաւիտենից. եւ հանգիստ
չունին ցերեկ եւ գիշեր նորանք
որ երկրպագեցին գազանին եւ
նորա պատկերին. եւ ով որ
էլ ընդունում է նորա անունի
դրոշմը։ Այստեղ է սրբերի
համբերութիւնը. այստեղ են
Աստուծոյ պատուիրանքները եւ
Յիսուսի հաւատքը պահողները։
Եւ երկնքից մի ձայն լսեցի
որ ասում էր ինձ. Գրիր, Ե-
րանելի են այն մեռելները որ
Տէրումն են ննջում այսուհե-
տեւ. այո, Հոգին ասում է որ
իրանց աշխատանքիցը հանգիստ
կառնեն, եւ նորանց գործքերը
գնում են նորանց ետեւից։
Եւ տեսայ, եւ ահա մի սպի-
տակ ամպ, եւ ամպի վերայ
մէկը նստած Որդւոյ մարդոյ
նման, որ իր գլխի վերայ ոսկի
պսակ, եւ իր ձեռումը սուր
գերանդի ունէր։
Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս

յերկնից, աղաղակէր ի ձայն
մեծ՝ և ասէր. Որ նստիսդ ի
վերայ ամպոյդ՝ առաքեա ըզգե-
րանդիդ քո՝ և հնձեա, զի եկն
ժամանակ հնձոց, և հասեալ են
16 հունձք երկրի։ (Եւ արկ որ
նստէր ի վերայ ամպոյն՝ ըզգե-
րանդին իւր յերկիր, և հնձէր
զամենայն բնակիչս երկրի։)

17 Եւ այլ հրեշտակ ելանէր ի
տաճարէն՝ որ յերկինս, և ունէր
18 և սա գերանդի սրեալ։ Եւ այլ
հրեշտակ ելանէր ի սեղանոյն՝
որ ունէր իշխանութիւն ի վե-
րայ հրոյ, և աղաղակեաց ի
ձայն մեծ առ հրեշտակն՝ որ
ունէր զգերանդին սրեալ՝ և
ասէր. Կիթեա զողկոյզս յայգւոյ
երկրի, զի հասեալ է խաղողդ ի
19 գմա։ Եւ արկ հրեշտակն ըզգե-
րանդի իւր յերկիր, և կիթէր
զխաղող նորա, և արկանէր ի
20 հնձանն Աստուծոյ ի մեծ։ Եւ
կոխեցաւ հնձանն արտաքոյ
քաղաքին, և ելանէր ի հնձանէն
արիւն մինչև ի սանձս ձիոյն. և
երկայնութիւն նորա հազար և
վեց հարիւր ասպարէզ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ տեսի այլ նշան (յերկինս)
մեծ և սքանչելի. հրեշտակս
եօթն՝ որք ունէին եօթն վերս
զկնի. զի նոքօք կատարէր բար-
եկաւ տաճարիցը, որ մեծ ձայ-
նով աղաղակում էր ամպի վե-
րայ նստողին. Ուղարկեր քո
գերանդին եւ հնձեր. որով-
հետեւ քո ժամանակն եկաւ
հնձելու, վասն զի երկրի
հունձքը հասել է։ Եւ ամպի 16
վերայ նստողը վայր գցեց իր
գերանդին երկրի վերայ, եւ
երկիրը հնձուեցաւ։
Եւ մի ուրիշ հրեշտակ դուրս 17
եկաւ տաճարիցը որ երկնքումն
է, որ սա էլ սուր գերանդի
ունէր։ Եւ մի ուրիշ հրեշտակ 18
դուրս եկաւ սեղանիցը որ իշխա-
նութիւն ունէր կրակի վերայ,
եւ մեծ աղաղակով գոչեց սուր
գերանդին ունեցողին ասելով.
Ուղարկեր քո սուր գերանդին
եւ երկրի այգու ողկոյզները
քաղեր, վասն զի նորա խաղողը
հասել է։ Եւ հրեշտակն իր 19
գերանդին գցեց երկրի վերայ,
եւ երկրի այգու խաղողը քա-
ղեց, եւ գցեց Աստուծոյ բար-
կութեան մեծ հնձանի մէջ։ Եւ 20
հնձանը կոխուեցաւ քաղաքիցը
դուրս, եւ դուրս եկաւ արիւնը
հնձանիցը մինչեւ ձիերի սանձքը
հազար եւ վեց հարիւր աս-
պարէզի չափ։

ԳԼ. ԺԵ

Եւ տեսայ մի ուրիշ մեծ եւ 1
զարմանալի նշան երկնքումը,
եօթը հրեշտակ որ վերջի եօթը
պատուհասներն ունէին. որով-

2 կութիւն Աստուծոյ։ Եւ տեսի
որպէս ծով ապակեղէն խառ-
նեալ հրով. և որք յաղթեցին
գազանին՝ և թուոյ անուան
նորա՝ և պատկերի նորա՝ և
դրոշմի նորա, նոքա կային 'ի
վերայ ծովուն ապակեղենի. և
3 ունէին զքնարս Աստուծոյ։ Եւ
երգէին զերգս Մովսէսի առաջի
Աստուծոյ, և զերգս Գառնին՝
ասելով. Մեծամեծ և
սքանչելի են գործք քո՝ Տէր
Աստուած Ամենակալ, արդար՝
և ճշմարիտ են ճանապարհք քո,
թագաւոր ամենայն հեթա-
4 նոսաց։ Եւ ո՞վ որ ոչ երկիցէ և
փառաւորեսցէ զսուրբ անուն
քո. զի դու միայն սուրբ, և
արժանի երկրպագելոյ, զի ամե-
նայն հեթանոսք եկեսցեն և
երկիր պագցեն առաջի քո Տէր՝
*յորժամ արդարութիւն քո
յայտնեսցի"։

5 Եւ յետ այսորիկ տեսի՝ և
բացաւ տաճարն խորանին վկայ-
ութեան՝ որ էր 'ի յերկինս։
6 Եւ ելանէին եօթն հրեշտակք՝
որք ունէին եօթն հարուածս,
և զգեցեալ էին 'ի տաճարին
կտաւս մաքուրս և պայծառս. և
գօտեւորեալ էին առ ըստեամբք
7 իւրեանց գօտիս ոսկեղէնս։ Եւ
'ի չորից կենդանեացն տուաւ

հետեւ Աստուծոյ բարկութիւ-
ներ նորանցով կատարուեցաւ։
Եւ տեսայ իբրեւ ապակեղէն 2
ծով կրակով խառնուած. եւ
նորանց որ յաղթում են գազա-
նին եւ նորա պատկերին եւ
նորա դրոշմին եւ նորա անունի
թուոյն, որ կանգնած էին ա-
պակեղէն ծովի վերայ, եւ Ա-
ստուծոյ քնարներն ունէին։ Եւ 3
երգում էին Աստուծոյ ծառայ
Մովսէսի երգը եւ Գառի երգը,
ասելով. Մեծ եւ զարմանալի
են քո գործքերը, Տէր Ա-
ստուած Ամենակալ, արդար եւ
ճշմարիտ են քո ճանապարհներ-
ը, ով սրբերի թագաւոր։
Ո՞վ է որ քեզանից չվախենայ, 4
ով Տէր, եւ քո անունը չփա-
ռաւորէ. վասն զի միայն դու
ես սուրբ. վասն զի բոլոր ազ-
գերը կ'գան եւ քո առջեւ եր-
կրպագութիւն կ'անեն, որով-
հետեւ քո իրաւունքները յայտ-
նուեցան։
Եւ սորանից յետոյ տեսայ, 5
եւ ահա բացուեցաւ վկայու-
թեան խորանի տաճարը երկն-
քումը։ Եւ դուրս եկան տա- 6
ճարից այն եօթը հրեշտակներ-
ը որ այն եօթը պատուհաս-
ներն ունէին, մաքուր եւ
պայծառ կտաւ հագած, եւ
ստինքների մօտով ոսկէ գօտի-
ներ կապած։ Եւ այն չորս 7

* 'Ի Յունն. զի արդարութիւն քո յայտնեցաւ

եօթն հրեշտակացն՝ եօթն սկա-
ւառակս լի ցասմամբն Աստու-
ծոյ կենդանւոյն յաւիտեանս
8 յաւիտենից։ Եւ լցաւ տաճարն
ծխով փառացն Աստուծոյ և
զօրութեան նորա. և ոչ ոք
կարէ մտանել 'ի տաճարն՝ մինչև
կատարեսցին եօթն հարուածքն
յեօթն հրեշտակացն։

ԳԼ. ԺԸ.

1 Եւ լուայ ձայն մեծ 'ի տա-
ճարէն՝ զի ասէր ցեօթն հրեշ-
տակսն, Երթայք հեղէք զեօթն
սկաւառակսդ ցասմանն Աստու-
ծոյ յերկիր։

2 Եւ գնաց առաջին հրեշտակն՝
և եհեղ զսկաւառակ իւր յերկիր.
և եղև հարուածք չարաչար 'ի
վերայ մարդկան, որ ունէին
զդրոշմ գազանին, և երկիր
պագին պատկերի նորա։

3 Եւ երկրորդ հրեշտակն եհեղ
զսկաւառակ իւր 'ի ծով, և
դարձան ջուրքն յարիւն մե-
ռեալ. և ամենայն շունչ կեն-
դանի որ էր 'ի ծովու՝ սատա-
կեցաւ։
4 Եւ երրորդ հրեշտակն եհեղ
զսկաւառակ իւր 'ի գետս՝ և
յաղբերս ջուրց, և եղև արիւն։
5 Եւ լուայ 'ի հրեշտակէն՝ զի

կենդանիներից մէկն այս եօթը
հրեշտակներին եօթը ոսկի սկա-
ւառակ տուաւ՝ յաւիտեանս յա-
ւիտենից կենդանի Աստուծոյ
բարկութիւնովը լիքը։ Եւ տա- 8
ճարը սրբուեցաւ Աստուծոյ
փառքից եւ նորա զօրութիւնից
եկած ծուխովը. եւ ոչ ով կա-
րող չէր մտնել տաճարը,
մինչեւ որ այն եօթը հրեշտակ-
ների եօթն պատուհասները
կատարուին։

ԳԼ. ԺԹ.

Եւ մեծ ձայն լսեցի տաճա- 1
ռիցը որ ասում էր այն եօթը
հրեշտակներին. Գնացէք եւ
Աստուծոյ բարկութեան ըսկա-
ւառակները թափեցէք երկրի
վերայ։
Եւ առաջինը գնաց եւ իր 2
սկաւառակը թափեց երկրի վե-
րայ, եւ չարաչար պարներ
եղան այն մարդկանց վերայ,
որ գազանի դրոշմն ունէին եւ
նորա պատկերին երկրպագում
էին։
Եւ երկրորդ հրեշտակն իր 3
սկաւառակը թափեց ծովը, եւ
արիւն դարձաւ մեռածի արիւնի
նման. եւ ամեն կենդանի շունչ
սատկեց որ ծովումն էր։

Եւ երրորդ հրեշտակն իր 4
սկաւառակը թափեց գետերի
եւ ջրերի աղբիւրների մէջ եւ
արիւն եղաւ։ Եւ ձայն լսեցի 5

ասէր. Արդար է՝ որ էին և է,
և սուրբ՝ ի գործս իւր՝ զի այս-
6 պէս դատեցաւ. Վասն զի
զարիւն սրբոց և զարիւն մար-
գարէից հեղին ամենարիշտք.
վասն այնորիկ արիւն ետ ըմպել
7 նոցա ըստ արժանւոյն։ Եւ
լուայ ի սեղանոյ անտի զի ասէր.
Այո՛ Տէր Աստուած Ամենա-
կալ, արդար և ճշմարիտ են
դատաստանք քո։

8 Եւ չորրորդ հրեշտակն եհեղ
ի սկաւառակէ իւրմէ ի վերայ
9 արեգական։ Եւ տուաւ նմա
խորշակահար առնել զմարդիկ
հրով. և տապացան մարդիկ ի
տապ մեծ, և հայհոյեցին զԱս-
տուած՝ որ ունի իշխանութիւն
ի վերայ հարուածոցս այսոցիկ.
և ոչ ապաշխարեցին ի փառս
Աստուծոյ։

10 Եւ հինգերորդ հրեշտակն
եհեղ ի սկաւառակէ իւրմէ ի
վերայ աթոռոյ գազանին, և
եղև թագաւորութիւն նորա
խաւարեալ. և ծամէին զլեզուս
11 իւրեանց յախտէ ցաւոցն, Եւ
հայհոյեցին զԱստուած երկնից
ի ցաւոց իւրեանց՝ և յախտէ
դառնութեանն, և ոչ ապաշ-
խարեցին ի գործոց իւրեանց։
12 Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ
ի սկաւառակէ իւրմէ ի վերայ
գետոյն մեծի Եփրատայ, և
ցամաքեցան ջուրք նորա՝ զի
պատրաստեսցի ճանապարհ թա-
ջերի հրեշտակիցն որ ասում
էր. Արդար ես, Տէր, որ ես
եւ էիր եւ սուրբ՝ որ այս դա-
տաստաններն արիր։ Վասն զի 6
սրբերի եւ մարգարէների արիւ-
նը թափեցին. նորա համար
էլ արիւն տուիր նորանց խմե-
լու, վասն զի արժան են։ Եւ 7
մի ուրիշը լսեցի սեղանիցը որ
ասում էր. Այո, Տէր Աստուած
Ամենակալ, ճշմարիտ եւ արդար
են քո դատաստանները։

Եւ չորրորդ հրեշտակն իր 8
սկաւառակը թափեց արեգակի
վերայ։ Եւ տրուեցաւ նորան 9
որ մարդկանց խորշակահար անէ
կրակով. եւ խորշակահար եղան
մարդիկ սաստիկ տաքով եւ
հայհոյեցին Աստուծոյ անունը
որ այս պատուհասների վերայ
իշխանութիւն ունի. եւ չա-
պաշխարեցին որ փառք տան
նորան։

Եւ հինգերորդ հրեշտակն իր 10
սկաւառակն թափեց գազանի
աթոռի վերայ. եւ նորա թա-
գաւորութիւնը խաւարած ե-
ղաւ. եւ իրանց լեզուները ծա-
մում էին տանջանքից. Եւ 11
երկնքի Աստուծոյն հայհոյեցին
իրանց ցաւերի և պալարների
պատճառովը. եւ չապաշխարե-
ցին իրանց գործքերից։

Եւ վեցերորդ հրեշտակն իր 12
սկաւառակը թափեց մեծ գետ՝
Եփրատի վերայ, եւ նորա
ջուրը ցամաքեց որ արեւելքի
թագաւորների ճանապարհը

13 գաւորի եկիցն արևու։ Եւ տե-
սի՝ զի եկանէր ի բերանոյ
վիշապին՝ և ի բերանոյ գա-
զանին՝ և ի բերանոյ սուտ
մարգարէին՝ ոգիք երեք ան-
14 սուրբք իբրև զգորտս։ Քանզի
նոքա էին ոգիք դիւականք, որք
առնէին զնշանս և երթային առ
թագաւորս ամենայն երկրի՝
ժողովել զնոսա ի պատերազմ,
յօրն մեծ Տեառն Ամենակալի.
15 քանզի այսպէս ասաց Տէր. Ահա
գամ՝ իբրև զգող, երանի որ
իցեն արթուն, և պահեսցեն
զհանդերձս իւրեանց. զի մի
մերկ շրջեսցին, և երևեսցին
16 ամօթանք իւրեանց։ Եւ ժո-
ղովեցից զնոսա ի տեղի մի, որ
կոչի Եբրայեցերէն՝ Արմաքե-
դոն։
17 Եւ եօթներորդ հրեշտակն
եհեղ ի սկաւառակէ իւրմէ ի
վերայ օդոյ. և եկ ձայն մեծ
յերկնից՝ և յաթոռոյն՝ ասելով.
18 Եղև։ Եւ եղեն փայլատակ-
մունք և ձայնք և որոտմունք.
և եղև շարժումն մեծ՝ որպիսի
չէր եղեալ ի սկզբանէ՝ յորմէ
հետէ եղև մարդ ի վերայ
երկրի՝ այնպիսի շարժումն մեծ։
19 Եւ եղև քաղաքն մեծ յերիս
մասն, և քաղաքք ազգացն
անկան. և Բաբելոն մեծ յիշե-
ցաւ առաջի Աստուծոյ, տալ նմա
զբաժակն գինւոյ ցասման բար-
20 կութեան նորա։ Եւ ամենայն
կղզիք փախեան, և լերինք ի
21 միջոյ բարձան։ Եւ կարկուտ
պատրաստուի։ Եւ տեսայ՝ վի- 13
շապի բերանիցը եւ գազանի
բերանիցը եւ սուտ մարգարէի
բերանիցը երեք պիղծ հոգի էին
դուրս գալիս գորտերի նման։
Վասն զի նորանք դեւերի ոգիք 14
են, որ նշաններ են անում, նո-
րանք գնում են երկրի եւ բո-
վանդակ տիեզերքի թագաւոր-
ների մօտ որ նորանց ժողովեն
Ամենակարող Աստուծոյ այն
մեծ օրուայ պատերազմի հա-
մար։ Ահա գալիս եմ գողի 15
նման, երանի նորան որ արթուն
է, եւ իր հանդերձները պա-
հում է. որ մերկ ման չգայ,
եւ նորա ամօթանքը չտեսնեն.
Եւ ժողովեց նորանց այն տեղ 16
որ Եբրայեցերէն Արմաքեդդոն
է կոչվում։

Եւ եօթներորդ հրեշտակն իր 17
սկաւառակը թափեց օդի վե-
րայ. եւ մեծ ձայն դուրս եկաւ
երկնքի տաճարից եւ աթոռից
որ ասում էր. Եղաւ։ Եւ 18
եղան ձայներ եւ փայլատակներ
եւ որոտմունք, եւ մեծ շարժ
եղաւ որ այնպիսի չէր եղած,
քանի որ մարդիկ երկրի վերայ
են՝ այնպիսի մեծ շարժ էր. Եւ 19
մեծ քաղաքը երեք կտոր եղաւ,
եւ ազգերի քաղաքները վայր
ընկան. եւ մեծ Բաբիլոնը յիշ-
ուեցաւ Աստուծոյ առջեւ, որ
իր ցասման բարկութեան գինու
բաժակը նորան տայ։ Եւ ամեն 20
կղզի փախաւ, եւ լեռները
չգտնուեցան։ Եւ երկնքիցը 21

մեծ իրրև կշիռ տաղանդոյ միոյ
իջանէր յերկնից 'ի վերայ
մարդկան. և հայհոյեցին մար-
դիկ զԱստուած յերկինս՝ վասն
հարուածոյ կարկտին, զի մեծ
էր հարուածն և սաստիկ:

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եկն մի ոմն յեօթն հրեշ-
տակացն՝ որք ունէին զեօթն
սկաւառակսն. խօսեցաւ ընդ ի-
և ասէ. Եկ՝ այսր՝ և ցուցից քեզ
զդատապարտութիւն մեծ պոռնկին՝ որ
նստի 'ի վերայ ջուրց բազմաց:
2 Ընդ որում՝ պոռնկեցան թա-
գաւորք երկրի՝ և արբեցան
բնակիչք երկրի 'ի գինւոյ արբե-
ցութեան պոռնկութեան նորա:
3 Եւ առ տարաւ զիս յանապատ
հոգւովն. և տեսի կին մի՝ զի
նստէր 'ի վերայ կարմիր գա-
զանի, և լի էր անուամբ հայ-
հոյութեան. և գազանն զոր
տեսի՝ ունէր գլուխս եօթն և
4 եղջիւրս տասն: Եւ կինն
զգեցեալ էր ծիրանիս և կարմիրս,
և զարդարեալ ոսկւով և մար-
գարտով և ակամբք պատուա-
կանօք, ունելով բաժակ ոսկի 'ի
ձեռին իւրում, և լի էր գարշելի
և անմաքուր պոռնկութեամբ:
5 Եւ 'ի ճակատն նորա գրեալ
*անուն՝ խորհրդով.՝՝ Մեծն
Բաբելոն՝ մայր պոռնկաց և
6 գարշելեաց երկրի: Եւ տեսի
տաղանդաչափ մեծ մեծ կար-
կուտ էր իջնում՝ մարդկանց
վերայ, եւ մարդիկ հայհոյեցին
Աստուծոյն այն կարկտի հա-
րուածի համար, վասն զի սաս-
տիկ մեծ է նորա պատուհասը:

ԳԼ. ԺԲ.

1 Եւ այն եօթը սկաւառակ-
ներն ունեցող եօթը հրեշ-
տակներից մէկն եկաւ եւ խօսեց
ինձ հետ ասելով. Եկ քեզ ցոյց
տամ՝ այն մեծ պոռնկի դատաս-
տանը, որ այն շատ ջրերի վերայ
նստում՝ է, Որի հետ պոռն-
կուեցան երկրի թագաւորները
եւ երկրի բնակողները նորա
պոռնկութեան գինովն արբե-
ցան: Եւ ինձ առաւ տարաւ
2 հոգով մի անապատ. եւ տեսայ
3 մի կին՝ նստած կարմիր գազանի
վերայ՝ լիքն հայհոյութեան ա-
նուններով, որ եօթը գլուխ
4 ունէր և տասը եղջիւր: Եւ
այն կինը որ ծիրանի եւ կար-
միր էր հագած, եւ ոսկով եւ
պատուական ակունքներով և
մարգարիտներով զարդարուած
մի ոսկի բաժակ ունէր իր ձե-
ռումը, լիքը գարշելութիւնե-
րով իր պիղծ պոռնկութիւնովը,
5 Եւ նորա ճակատումը գրուած
էր մի անուն՝ խորհուրդ, Մեծ
Բաբիլոն, պոռնիկների եւ երկրի
6 գարշելիների մայրը: Եւ տե-

* 'Ի Յոյն, անուն խորհուրդ

զկինն արբեցեալ յարենէ սրբոց
և յարենէ ամենայն վկայիցն. և
զարմացայ՝ տեսեալ զնա՝ զար-
7 մացումն մեծ: Եւ ասէ ցիս
հրեշտակն. Ընդէր զարմացար,
ես ասացից քեզ զխորհուրդս
կնոջն, և զգազանին որ բարձ-
եալ ունի զնա. որ ունի զեօթն
8 գլուխն՝ և զտասն եղջիւր: Եւ
գազանդ զոր տեսեր՝ որ էր, և
*չէր, և Հանդերձեալ է ելանել
'ի դժոխոց՝ և 'ի կորուստ
երթալ. և զարմացան ամենե-
քեան՝ որ բնակեալ են 'ի վերայ
երկրի. որոց ոչ էր գրեալ
անուանք նոցա 'ի գիր կենաց 'ի
սկզբանէ աշխարհի. †զոր տե-
սանէիր՝՝ զգազանն, զի էր՝ և չէ.
9 և մերձ է: Ասա է իմաստու-
թիւն՝ որ ունի միտս. և եօթն
գլուխն՝ եօթն լերինք են, ուր
կինն նստեալ էր 'ի վերայ նոցա.
և նոքին թագաւորք են եօթն.
և թագաւորք եօթն գոլով,
10 Հինգն անկան, և մին եկաց, և
մինն ոչ է եկեալ. և յորժամ
գայ՝ սակաւիկ մի ժամանակ
11 ունի: Եւ գազանն՝ որ էր՝ և
չէ, և նա ութերորդ է. և է
յեօթանց անտի, և 'ի կորուստ
12 երթալոց է: Եւ տասն եղջիւրն՝
զոր տեսեր՝ տասն թագաւորք
են, որոց չեւես է առեալ ըզթա-
գաւորութիւն, այլ առնուն՝ և
կան իշխանք 'ի մի ժամ. և
սայ այն կինը՝ արբած սրբերի
արիւնովը եւ Յիսուսի վկաների
արիւնովը. եւ երբոր տեսայ
նորան, մեծ զարմանքով զար-
մացայ: Եւ հրեշտակն ասաց 7
ինձ. Ինչու համար զարմացար.
ես ասեմ՝ քեզ այդ կնկան խոր-
հուրդը, եւ այն գազանինը, որ
նորան վեր է առել, որ եօթը
գլուխ ունի եւ տասն եղջիւր:
Գազանը, որ տեսար, կար եւ 8
չկայ, եւ դժոխքիցն է գուրս
գալու եւ կորուստն է գնալու,
եւ կ՝զարմանան երկրի վերայ
բնակողները, որոնց անունները
գրուած չեն կենաց գրքի մէջ
աշխարհքի սկզբից հետէ, եր-
բոր տեսնեն այդ գազանը որ
կար, եւ չկայ, թէև է: Այս 9
տեղ է այն միտքը որ իմաստու-
թիւն ունի. այն եօթը գլուխը
եօթն լեռներ են որ կինը
նորանց վերայ նստած է. եւ
եօթը թագաւորներ են. Հինգը 10
ընկան, եւ մէկը կայ, միւսը
դեռ չէ եկել. եւ երբոր գայ մի
քիչ ժամանակ պէտք է մնայ:
Եւ այն գազանն որ կար եւ 11
չկայ, նա էլ ութերորդն է եւ
այն եօթնիցն է, եւ կորուստն
է գնում, Եւ այն տասն եղ- 12
ջիւրն որ տեսար, տասը թագա-
ւորներ են. որոնք դեռ թա-
գաւորութիւն չեն առել, այլ
թագաւորի պէս իշխանութիւն

* 'Ի Յոյն, չէ
† 'Ի Յոյն, տեսանելով

առնուն նոքա զիշխանութիւն
13 ընդ գազանին։ Սոքա մի կամ
ունին, և զզօրութիւն և զիշխա-
14 նութիւն գազանին տան։ Եւ
ընդ Գառնին պատերազմին. և
Գառն յաղթէ նոցա. զի Տէր
է *նոցա, և Թագաւոր թա-
գաւորաց. և որք ընդ նմա
կոչեցեալք են, ընտրեալք և
15 հաւատացեալք։ Եւ ասաց ցիս.
Եւ զջուրն զոր տեսեր՝ ուր
նստէր պոռնիկն, ժողովուրդք
են, և բազմութիւնք և ազգք և
16 լեզուք։ Եւ տասն եղջիւրքն՝
զոր տեսեր գազանին, նոքա
տեսցեն զպոռնիկն՝ և ատեսցեն
զնա, և զմերմին նորա կերիցեն՝
17 և այրեսցեն զնա հրով։ Զանզի
Աստուած եդ ի սիրտս նոցա առ
ի լինել նոցա մի կամս, և
տալ զթագաւորութիւն գա-
զանին մինչև կատարեսցի բանն
18 Աստուծոյ։ Եւ կինն զոր տեսեր՝
է քաղաքն մեծ, որ ունի ըզթա-
գաւորութիւն ի վերայ թա-
գաւորութեանց երկրի։

ԳԼ. ԺԸ.

1 Եւ յետ այսորիկ տեսի այլ
հրեշտակ իջեալ յերկնից՝ որ
ունէր իշխանութիւն մեծ, և

* Ի Յոյնն, տէրանց

են առնում մէկ ժամ այն գա-
զանի հետ։ Սորանք մէկ կամք 13
ունին, եւ իրանց զօրութիւնը
եւ իշխանութիւնը կ'տան գա-
զանին։ Սորանք պատերազմ 14
կ'անեն Գառի հետ, եւ Գառը
կ'յաղթէ նորանց, վասն զի տէ-
րանց Տէր է, եւ Թագաւորների
Թագաւոր. եւ նորանք որ նորա
հետ են, կոչուած, ընտրուած
եւ հաւատացեալ են։ Եւ ա- 15
սաց ինձ. Այդ ջրերն, որ
տեսար ուր որ պոռնիկը նստած
է, ժողովուրդներ են, եւ բազ-
մութիւններ, եւ ազգեր եւ լե-
զուներ։ Եւ տասն եղջիւրն, 16
որ տեսար, գազանի վերայ, նո-
րանք կ'ատեն պոռնկին, եւ նո-
րան ամայի եւ մերկ կ'անեն, եւ
նորա միսերը կ'ուտեն եւ կը-
րակով կ'այրեն նորան։ Վասն 17
զի Աստուած գրաւ նորանց
սրտերի մէջ որ նորա կամքն
անեն, եւ միակամ լինին, եւ
իրանց թագաւորութիւնը տան
գազանին մինչեւ որ Աստուծոյ
խօսքերը կատարուին։ Եւ կինն, 18
որ տեսար, այն մեծ քաղաքն է,
որ թագաւորութիւն ունի երկրի
թագաւորների վերայ։

ԳԼ. ԺԹ.

Եւ սորանցից յետոյ տեսայ 1
մի հրեշտակ երկնքիցը վայր
գալիս. որ մեծ իշխանութիւն

երկիր լուսաւորեցաւ ի փառաց
2 նորա։ Եւ աղաղակեաց ի ձայն
մեծ՝ ասելով. Անկաւ Բաբելոն
մեծն, որ եղեալ էր բնակութիւն
դիւաց՝ և արգել ամենայն այսոց
պղծոց, և բանտ պահպանու-
թեան ամենայն ոգւոց անսրբոց
3 և ատելելոց։ Վասն զի ի
բարկութենէ գինւոյ պոռնկու-
թեան նորա արբին ամենայն
ազգք և թագաւորք երկրի՝ որ
ընդ նմա պոռնկեցան. և վա-
ճառականք երկրի ի նորա զօ-
րութեանն յօրանալոյ մեծացան։
4 Եւ լուայ ձայն յերկնից՝ զի
ասէր. Ելէք ի միջոյ դորա
ժողովուրդ իմ, զի մի հաղորդ
լիցիք մեղաց դորա, և մի զհար-
5 ուածս դորա ընդունիցիք. Զի
հասին կցեցան մեղք դոցա մինչև
յերկինս. և յիշեաց Աստուած
6 զամբարշտութիւնս դորա։ Եւ
հատուցանէ դմա՝ որպէս և
հատոյցն մեզ, և առցէ դա
երկապատիկ ըստ գործոց իւրոց.
և զբաժակն որով խառնեացն՝
7 խառնեցէք դմա կրկին։ Եւ
որչափ փառաւորեաց զինքն և
խայտաց, այնչափ հատուցէք
դմա սուգ. զի ի սրտի իւրում
ասէր՝ թէ Յամենայն ժամ
նստայց ես թագուհի՝ և այրի
8 ոչ ես եղէց։ Վասն այնորիկ ի
միում աւուր եկեսցեն ի վերայ
դորա հարուածք՝ մահ և սուգ
և սով, և ի հուր այրեսցի. զի
հզօր է Տէր Աստուած՝ որ
9 դատեցաւն զդա. Եւ լայցեն և

ունէր, եւ երկիրը լուսաւորուե-
ցաւ նորա փառքիցը։ Եւ զո- 2
րութեամբ աղաղակեց մեծ ձայ-
նով եւ ասաց. Անկաւ, անկաւ
մեծ Բաբիլոնը, եւ եղաւ դե-
ւերի բնակութիւն եւ ամեն
պիղծ հոգու արգելանոց, եւ
ամեն անսուրբ եւ ատելի թռչ-
չունի վանդակ։ Վասն զի նորա 3
պոռնկութեան բարկութեան
գինուցը խմեցին բոլոր ազգերը,
եւ երկրի թագաւորները նորա
հետ պոռնկուեցան. եւ երկրի
վաճառականները նորա զեղ-
խութեան զօրութիւնից հարս-
տացան։ Եւ մի ուրիշ ձայն 4
լսեցի երկնքիցը որ ասում էր.
Դուրս եկէք դորանից, ով իմ
ժողովուրդ, որ մասնակից չը-
լինիք դորա մեղացը, եւ որ
դորա պատուհասիցը չընդու-
նիք։ Վասն զի դորա մեղքերը 5
հասան մինչեւ երկինքը, եւ
Աստուած յիշեց դորա անիրա-
ւութիւնները։ Հատուցումն 6
արէք դորան ինչպէս դա հա-
տուցում տուաւ ձեզ, եւ եր-
կուապատիկ տուէք դորան իր
գործերի չափովը. այն բաժակը
որ դա լցրեց, լցրէք դորա հա-
մար երկուապատիկ։ Եւ որչափ 7
որ իրան փառաւորեց եւ զեղ-
խացաւ, այնչափ տանջանք եւ
սուգ տուէք դորան. վասն զի
իր սրտումն ասում է. Թա-
գուհի եմ նստած, և այրի չեմ,
եւ բնաւ սուգ չեմ տեսնիլ։
Նորա համար մէկ օրում պիտի 8

կոծեսցին 'ի վերայ դորա թա-
գաւորք երկրի, որք ընդ դմա
պոռնկեցան և խաղացին. և
հեծեսցեն՝ յորժամ տեսցեն
զծուխս կիզման տանջանաց դորա:
10 'Ի հեռաստանէ կայցեն վասն
երկիւղի տանջանաց դորա՝ և
ասասցեն. Վա՜յ քաղաքիդ մեծի
Բաբելովնի. քաղաք հզօր. զի 'ի
միում ժամու եկին հասին դա-
11 տաստանք քո: Եւ վաճառա-
կանք երկրի ողբասցեն և սգաս-
ցեն 'ի վերայ քո, զի բեւեռն նոցա
12 ոչ ոք գնէ: Եւ շահք որ 'ի
քէն՝ ոչ ևս իցէ. ոսկւոյ և
արծաթոյ և ականց պատուա-
կանաց՝ և մարգարտոյ և բեհե-
զոյ և ծիրանւոյ և ոսկեթելի և
որդան, և ամենայն փայտ խնկոյ՝
և ամենայն անօթ փղոսկրեայ՝ և
ամենայն անօթ 'ի փայտէ պատ-
ուականէ և 'ի պղնձոյ և յեր-
13 կաթոյ և 'ի կճոյ, Եւ կինա-
մոմն և ամենայն խունկ և իւղ
և կնդրուկ և գինի և ձէթ և
նաշիհ և ցորեան և ստացուածք
ամենայն, արջառ և ոչխար. և
երիվարաց և կառաց՝* որ վայել
է մարմնոց՝՝ և ոգւոց մարդկան:
14 Եւ ամենայն ցանկութիւն անձին
քո գնաց 'ի քէն, և ամենայն
լուսափայլ վայելչութիւնն,
պարարտն և գէրն և սպիտակն
գնաց 'ի քէն, և ո՛չ ևս գտցես
15 զայդ: Եւ ամենայն շահավա-
ճառք այսոքիւք մեծացեալք՝ 'ի

գան դորա վերայ իր հար-
ուածներք՝ մահ, և սուգ, և
սով, եւ կրակով կ'այրուի,
վասն զի զօրաւոր է Տէր Աստ-
ուածք՝ դորա դատաստանն ա-
նողք: Եւ լաց եւ կոծ կ'անեն 9
դորա վերայ երկրի թագաւոր-
ներք որ դորա հետ պոռնկուե-
ցան եւ զեղխութիւն արին.
երբոր կ'տեսնեն դորա այր-
ուելու ծուխը, Հեռու կանգ- 10
նած դորա տանջանքի վախիցը,
կ'ասեն. Վա՜յ վա՜յ քեզ, մեծ
քաղաքդ Բաբիլոն, զօրաւոր
քաղաք. որ մէկ ժամուն եկաւ
քո դատաստանը: Եւ երկրի 11
վաճառականներք ողբ եւ սուգ
կ'անեն նորա վերայ, վասն զի
այլ եւս ոչ ոք չէ առնում նո-
րանց ապրանքը, Ոսկու եւ ար- 12
ծաթի եւ պատուական ա-
կունքների եւ մարգարիտի եւ
բեհեզի եւ ծիրանի եւ ոսկե-
թելի եւ որդան կարմիրի ապ-
րանքը, և ամեն խնկէ փայտը եւ
ամեն փղոսկրեայ անօթը, եւ
ամեն ազնիւ փայտից եւ պղնձից
եւ երկաթից եւ մարմարիոնից
շինած անօթը, Եւ կինամոնը 13
եւ խունկերը եւ իւղը եւ կընդ-
րուկը եւ գինին եւ ձէթը, եւ
նաշիհը եւ ցորենը եւ արջառ-
ներն ու ոչխարները. եւ ձիանքն
եւ կառքերը, եւ մարմինները
եւ մարդկանց հոգիները: Եւ 14
քո հոգու ցանկացած պտուղ-

* 'Ի Յոյն., և մարմնոց

քէն 'ի բաց կայցեն վասն երկիւ-
ղի տանջանաց քոց՝ լալով և սուգ
16 առնելով: Եւ ասասցեն. Վա՜յ
վա՜յ քաղաք մեծ, որ զգեցեալ
էիր բեհեզս և ծիրանիս. և
որդան, և ոսկեզօծս՝ և քարինս
պատուականս և մարգարիտս.
17 Զի 'ի միում ժամու պակասե-
ցաւ այսչափ մեծութիւն քո. և
ամենայն նաւավար և ամենայն
որ 'ի տեղիս տեղիս նաւեն, և
նաւաղք և որք միանգամ ուղ-
կանաւ գործեն՝ 'ի հեռաստանէ
18 կայցեն լալով, Եւ աղաղակես-
ցեն՝ տեսանելով զծուխս կիզման
նորա, ասելով. Ո՞ նման է
19 քաղաքիս այսմիկ մեծի: Եւ
արկցեն հող 'ի վերայ գլխոց
իւրեանց՝ և գուժալով ձայնիւ
մեծաւ՝ լալով և սգալով ասաս-
ցեն. Վա՜յ վա՜յ քաղաք մեծ.
որով ամենեքեան մեծանայաք՝
որք ունէաք զնաւս 'ի ծովս.
վասն պատուականութեան քո՝
զի 'ի միում ժամու ապականեալ
20 կործանեցար: Ուրախս լերուք 'ի
վերայ նորա երկինք՝ և սուրբք
առաքեալք և մարգարէք. զի
դատեցաւ Աստուած զդատաս-
տան ձեր 'ի դմանէ:

21 Եւ առ հրեշտակն հզօր՝ քար

ները գնացին քեզանից, եւ ամեն
շքեղ եւ լուսափայլ վայելչու-
թիւնները գնացին քեզանից, եւ
այլ եւս բնաւ չես գտնիլ նո-
րանց: Եւ այս բաների վա- 15
ճառականները, որ նորանից
հարստացան, հեռուից կ'կանգ-
նեն նորա տանջանքի վախից
լաց եւ սուգ անելով, Կասեն.
Վա՜յ վա՜յ մեծ քաղաք որ բե- 16
հեզ եւ ծիրանի եւ որդան
կարմիր էիր հագած, եւ ոսկով
եւ ազնիւ քարերով եւ մար-
գարիտով զարդարուած: Վա- 17
սրն զի մէկ ժամի մէջ այդչափ
մեծութիւնը աւերակ եղաւ. եւ
ամեն նաւավար և այն ամենքն
որ նաւով գնում են տեղ տեղ,
եւ նաւաստիները եւ նորանք որ
ծովումն են գործում, հեռուից
կանգնեցին, Եւ աղաղակում էին 18
նորա այրուելու ծուխը տեսնե-
լով եւ ասում. Ո՞րն է նման
այս մեծ քաղաքին: Եւ հող 19
ցանեցին իրանց գլխների վերայ,
եւ մեծ ձայնով աղաղակեցին
լաց եւ սուգ անելով եւ ասաս-
ցին. Վա՜յ վա՜յ մեծ քաղաք որ
նորանում հարստացան բոլոր
ծովի վերայ նաւեր ունեցող-
ները նորա պատուականութիւ-
նից. վասն զի մէկ ժամի մէջ
աւերակ դարձաւ: Ուրախս եղէք 20
նորա վերայ, երկինք եւ սուրբք
առաքեալք եւ մարգարէք, վասն
զի Աստուած ձեր դատաստանը
դատեց դորա վերայ:
Եւ մէկ զօրաւոր հրեշտակ մի 21

մի իբրև զերկան մեծ, և ընկէց 'ի
ծով՝ ասելով. Այսպէս յար-
ձակմամբ անկցի Բաբելոնն քա-
ղաք մեծ, և այլ ոչ ևս գտցի:
22 Եւ ձայն քնարերգաց և երաժշ-
տականաց՝ արուեստականաց և
փողահարաց՝ և թմբկի, այլ ոչ
23 ևս լուիցի 'ի քեզ: Եւ լոյս
ճրագի և ձայն երկանի՝ այլ ոչ
ևս երևեսցի 'ի քեզ, և ձայն
փեսայի և ձայն հարսին այլ ոչ
ևս լուիցի 'ի քեզ. և ոչ վաճա-
ռականք քո՝ փառաւորք և
մեծամեծք երկրի, որ զուարճա-
ցեալ էին 'ի քեզ, վասն զի
կախարդութեամբ դեղատուու-
թեան քո մոլորեցան ամենայն
24 ազգք: Եւ 'ի քեզ ամենայն արիւն
մարգարէից և սրբոց գտաւ, և
ամենայն գրեալց յերկրին կեն-
դանեաց:

ԳԼ. ԺԹ

1 Եւ յետ այնորիկ լուայ ձայն
մեծ բազմութեան յերկինս ասե-
լով. Ալէլուիա, փրկութիւն և
փառք և պատիւ և զօրութիւն
2 Աստուծոյ մերում. Զի ճշմ-
արիտ և արդար են դատաս-
տանք նորա. զի դատեաց զպոռ-
նիկն մեծ 'ի պոռնկութեան
իւրում, և խնդրեաց զվրէժ
արեան ծառայից իւրոց 'ի ձե-
3 ռաց նորա: Եւ կրկին անգամ
օրհնեցին և ասացին, Ալէ-
լուիա. և ծուխ նորա ելանէր
քարտ առաւ մեծ ջաղացաքարի
պէս եւ գցեց ծովն մէջ ասե-
լով. Այսպէս ուժով պիտի
վայր ընկնի Բաբիլոն մեծ քա-
ղաքը, եւ այլ ևս չգտնուի:
Եւ քնարերգների եւ երա- 22
ժիշտների եւ սրնգահարների,
եւ փողահարների ձայնն այլ
ևս պիտի չլսուի քո միջումը
եւ այլ ևս ոչ մի արուեստա-
կան ընաւ չիգտնուիլ քեզանում.
եւ ջաղացի ձայն այլ ևս չի
լսուելու քեզանում. Եւ ճրագի 23
լոյս այլ ևս լոյս չի տալու քեզա-
նում. և փեսայի եւ հարսի ձայնը
այլ ևս ընաւ չի լսուիլ քեզա-
նում. վասն զի քո վաճառա-
կանները երկրի մեծամեծներն
էին. քո կախարդութիւնովը
մոլորուեցան բոլոր ազգերը: Եւ 21
նորանում գտնուեցաւ մարգարէ-
ների եւ սրբերի եւ երկրի վերայ
բոլոր սպանուածների արիւնը:

ԳԼ. ԺԹ

Եւ սորանցից յետոյ լսեցի 1
շատ բազմութեան մեծ ձայնի
պէս ի յոյն երկնքումը որ ա-
սում էր. Ալէլուիա, փրկու-
թիւնը և փառքը և պատիւը և
զօրութիւնը մեր Տէր Աստու-
ծոյն: Զ՝ասն զի ճշմարիտ և 2
արդար են նորա դատաստաննե-
րը. որովհետև այն մեծ պոռնի-
կը դատեց իր պոռնկութիւ-
նումը, և իր ծառաների արիւնի
վրէժն առաւ նորա ձեռքից:
Եւ երկրորդ անգամ ասացին, 3

4 յաւիտեանս յաւիտենից. Եւ
անկան քսան և չորք երիցուն-քն
և չորք կենդանիքն, և երկիր
պագին Աստուծոյ՝ որ նստէին
յաթոռս փառաց, ասելով. Ամէն՝
5 Ալէլուիա: Եւ ձայն յաթո-
ռոյն ելանէր՝ ասելով. Օրհնե-
ցէք զԱստուած մեր ամենայն
ծառայք նորա, և որք երկնչիք
'ի նմանէ՝ փոքունք և մեծամեծք:
6 Եւ լուայ ձայն բազմութեան
մեծի՝ իբրև զձայն ջուրց բազ-
մաց, և իբրև զձայն հզօր
որոտման, ասելով դարձեալ.
Ալէլուիա վասն զի թագաւոր-
եաց Տէր Աստուած մեր Ամ-
7 նակալ: Խնդամք՝ (և ցնծամք) և
տամք փառս նմա, զի եկն
հարսանիք Գառին, և կին-
հարսն նորա պատրաստեաց
8 զինքն: Եւ տուաւ նմա զգենուլ
բեհեղս սպիտակս սուրբս և
լուսափայլս. որ է բեհեղն ար-
դարութիւն սրբոցն: Եւ մի
9 յերիցանցն ասէր ցիս. Գրեա՝
զայդ, Երանելիք են ամենե-
քեան՝ որ կոչեցեալ են յընթրիս
10 հարսանեաց Գառին: Եւ ես
անկեալ առաջի ոտից նորա,
երկիր պագի նմա: Եւ ասէ
ցիս. Նայա՝ մի՛ անկանիր ա-
ռաջի իմ. քանզի և ես ծառա-
յակից քո եմ, և եղբարց քոց՝
որք ունին զվկայութիւնն Յի-
սուսի Քրիստոսի. Զեառն Ա-
ստուծոյ միայն երկրպագեա.
քանզի հաստատութեամբ Յի-
սուսի է տեսիլք, և հոգի մար-
Ալէլուիա. և նորա ծուխը 3
բարձրանում էր յաւիտեանս
յաւիտենից: Եւ քսան և չորս 4
երէցները և չորս կենդանիները
վայր ընկան և երկրպագեցին
Աստուծոյն որ աթոռի վերայ
նստած էր և ասացին. Ամէն,
ալէլուիա: Եւ աթոռիցը մի 5
ձայն գուրս եկաւ ասելով.
Օրհնեցէք մեր Աստուծոյն, ով
նորա բոլոր ծառաներ, եւ նո-
րանից վախեցողներ, փոքրներ
և մեծեր: Եւ լսեցի մի մեծ 6
բազմութեան ձայնի և շատ
ջրերի ձայնի պէս, սաստիկ ո-
րոտմունքի ձայնի նման ի յոյն.
որ ասում էր. Ալէլուիա, վասն
զի Ամենակալ Տէր Աստուածը
թագաւորեց: Խնդանք և ու- 7
րախ լինինք, և փառք տանք
նորան. վասն զի եկաւ Գառի
հարսանիքը, և նորա կինը պատ-
րաստեց իրան: Եւ տրուեցաւ 8
նորան որ սպիտակ սուրբ և
լուսափայլ բեհեղ հագնի. (վա-
սն զի բեհեղը սրբոց արդա-
րութիւնն է:) Եւ ասաց ինձ. 9
Գրիր, Երանելի են Գառի
հարսանիքի ընթրիքին կանչու-
ածները. և ասաց ինձ. Սորանք
Աստուծոյ ճշմարիտ խօսքերն
են: Եւ ես ընկայ նորա ոտքերի 10
առջև որ երկրպագանեմ նո-
րան, և ասաց ինձ. Օգոյշ
կաց, մի անիր. ծառայակից եմ
քեզ և քո եղբայրներին, որ Յի-
սուսի Քրիստոսի վկայութիւնն
ունին. Տէր Աստուծոյն երկրը-

դարէուԹեանդ. զի վկայուԹիւն Յիսուսի է Հոգւովն Սրբով, որ ի մարդարէսն էր:

11 Եւ տեսի զերկինս բացեալ, և ահա ձի սպիտակ. և որ հեծեալն էր ի նմա՝ Հաւատարիմ և Ճշմարիտ, և արդարուԹեամբ
12 դատի՝ և պատերազմի: Եւ աչք նորա բոց հրոյ, և ի վերայ գլխոյ նորա պսակս բազումս. և ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք
13 գիտէ՝ բայց միայն ինքն: Եւ արկեալ զհագուստս հանդերձ ներկեալ արեամբ. և կոչէր անուն նորա՝ Բան Աստուծոյ:
14 Եւ զօրավարքն երկնից՝ և զօրք երկնից զհետ երԹային նորա ձիովք (սպիտակօքն), զգեցեալ բեհեզս սուրբս և սպիտակս:
15 Եւ ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ. զի նովաւ հարցէ զազգս. և նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաԹեաւ, և նա կոխեսցէ զհնձան գինւոյ՝ ցասման բարկուԹեան Աստուծոյ
16 Ամենակալի: Եւ ունէր ի վերայ պատմուճանի իւրոյ, և ի վերայ անդամոց իւրոց գիր գրեալ. ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՏԻՐ ՏԻՐԱՆԱՑ:

17 Եւ տեսի այլ հրեշտակ՝ որ կայր ի վերայ արեգական, զի աղաղակեաց ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով. Եկայք

պագիր. վասն զի Յիսուսի վըկայուԹիւնը մարգարէուԹեան հոգին է:

Եւ տեսայ երկինքը բացուած, 11
և ահա մի սպիտակ ձի, և նա որ նորա վերայ նստած էր, կոչվում էր Հաւատարիմ և Ճշմարիտ, և արդարուԹիւնով է դատաստան անում և պատերազմում: Եւ նորա աչ- 12
քերը կրակի բոցի պէս, և նորա գլխի վերայ շատ պսակներ. և անուն ունէր գրած, որ ոչ ով չէր գիտում՝ բայց միայն ինքն:
Եւ իր վերայ հանդերձ էր հա- 13
գած արիւնով ներկուած, և նորա անունն Աստուծոյ Բան է կոչվում: Եւ երկնքի զօրքերը 14
նորա ետևից գնում էին սպիտակ ձիանց վերայ սպիտակ և մաքուր բեհեզ հագած: Եւ 15
նորա բերանից դուրս է գալիս սրած սուր, որ նորանով զարկէ ազգերին. և ինքը հովուում է նորանց երկաԹէ գաւազանով. և ինքը կոխում է Ամենակարող Աստուծոյ բարկուԹեան և սրտմտուԹեան գինու հնձանը: Եւ իր հանդերձի վե- 16
րայ, և իր ազդրի վերայ գրած էր անունը, ԹԱԳԱՒՈՐԱՑ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ՏԻՐԱՆԱՑ ՏԻՐ:

Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ 17
որ կանգնած էր արեգակի վերայ, և մեծ ձայնով աղաղակեց ասելով ամեն թռչուններին որ երկնքի մէջ թռչում են. Եկէք

ժողովեցարուք յընԹրիս մեծին
18 Աստուծոյ. Եւ կերիջիք զըմարմինս Թագաւորաց, (և զմարմինս հզօրաց,) և զմարմինս երիվարաց՝ և ամենայն հեծելոց ի նոսա, և զմարմինս ազատաց և ծառայից՝ մեծի և փոքրու:

19 Եւ տեսի զգազանն՝ և ըղԹագաւորս երկրի՝ և զզօրս նոցա ժողովեալս առնել պատերազմ ընդ այնմ, որ հեծեալն էր ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նորա:
20 Եւ ըմբռնեցաւ գազանն, և որ ընդ նմա սուտ մարգարէն՝ որ առնէր զնշանսն առաջի նորա, և զորս մոլորեցոյց. և նա առնուլ զդրոշմ գազանին՝ և զերկրպագուս պատկերի նորա. և կենդանեայն արկին զնոսա ի լիճ
21 հրոյ այրեցելոյ ծծմբով: Եւ այլքն մեռան ի սրոյ հեծելոյն ի վերայ ձիոյն, յորոյ բերանոյ ելանէր սուրն. և ամենայն թռչունք յագեցան ի մարմնոց նոցա:

ԳԼ. Ի

1 Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի իջանէր յերկնից, և ունէր զբանալիսն դժոխոց, և շղթայս
2 մեծ ի ձեռին իւրում. Եւ ըմբռնեաց զվիշապն՝ (զօձն) զառաջին, որ է Բանսարկուն և

հաւաքուեցէք մեծ Աստուծոյ ընԹրիքին. Որ ուտէք թագա- 18
ւորների մարմինները, և զօրավարների մարմինները և հզօրների մարմինները. և ձիանց և նորանց վերայ նստողների մարմինները, և ամենի մարմինները՝ ազատների և ծառաների, մեծերի և փոքրների:

Եւ տեսայ գազանը և երկրի 19
թագաւորները և նորանց զօրքերը մէկ տեղ ժողովուած որ պատերազմ անեն ձիան վերայ նստողի հետ և նորա զօրքերի հետ: Եւ գազանը բռնուե- 20
ցաւ, և նորա հետ սուտ մարգարէն էլ որ նշաններ էր առնում նորա առջև, որոնցով մոլորեցրեց նորանց որ գազանի դրոշմն առին, և նորանց էլ որ երկրպագեցին նորա պատկերին. և երկուսն էլ կենդանի կենդանի գցուեցան կրակի լճի մէջ որ ծծմբով այրվում է: Եւ մնա- 21
ցեալները սպանուեցան ձիու վերայ նստողի սրից, որ նորա բերանից դուրս էր գալիս. և բոլոր թռչունները կշտացան նորա մարմիններից:

ԳԼ. Ի

Եւ տեսայ մի հրեշտակ վայր 1
գալիս երկնքից, որ դժոխքի բանալին ունէր, և մի մեծ շղթայ իր ձեռքումը: Եւ բռնեց 2
այն վիշապին այն առաջի օձին որ է Բանսարկուն և սատանան,

Սատանայ, և կապեաց զնա
3 հազար ամ. Եւ արկ զնա յան-
դունդս դժոխոց, և փակեաց և
կնքեաց զնա՝ զի այլ մի՛ ևս
մոլորեցուսցէ զազգս, մինչև
կատարեսցի հազար ամն. և
յետ այնորիկ պարտ է լուծանել
նմա սակաւ մի ժամանակ։
4 Եւ տեսի աթոռս. և նստան
՝ի վերայ նոցա. և դատաւորու-
թիւն տուաւ նոցա, ընտրել
զՀոգիս չարչարելոցն վասն
վկայութեանն Յիսուսի՝ և վասն
բանին Աստուծոյ. և զորս ո՛չ
երկրպագին գազանին, և ո՛չ
առին զդրոշմ՝ նորա ՝ի ճակատս
իւրեանց՝ և ո՛չ ՝ի վերայ աջոյ
ձեռին իւրեանց. և կացին՝ և
թագաւորեցին ընդ Քրիստոսի
5 հազար ամ։ Եւ* յետ այսո-
րիկ՝ ՝ի մեռելոց ոչ ո՛ք եկաց,
մինչև ՝ի կատարել հազար ամին.
այս է յարութիւն առաջին։†
6 Երանի սրբոյն, որք ունին՝
բաժին ՝ի յարութեանն ա-
ռաջնում. ՝ի վերայ սոցա
երկրորդ մահն ո՛չ ունի իշխա-
նութիւն. այլ եղիցին քահա-
նայք Աստուծոյ՝ և Տեառն
Յիսուսի Քրիստոսի. և թա-
գաւորեսցեն ընդ նմա հա-
զար ամ։
7 Եւ յետ հազար ամին լուծցէ
զՍատանայ՝ և հանցէ ՝ի բանտէ
անտի. ելցէ և մոլորեցուսցէ

և կապեց նորան հազար տարի։
Եւ գցեց նորան անդունդի մէջ, 3
և փակեց և կնիք դրաւ նորա
վերայ որ էլ չմոլորեցնէ ազ-
գերին, մինչև որ հազար տարին
լրանայ. և նորանից յետոյ պէտք
է որ նա մի քիչ ժամանակ
արձակուի։
Եւ տեսայ աթոռներ, և նո- 4
րանց վերայ նստեցին. և դա-
տաւորութիւն տրուեցաւ նո-
րանց, և նորանց հոգիքը որ
գլխատուել էին Յիսուսի վը-
կայութեան համար և Աստու-
ծոյ խօսքի համար, և նորանց
որ չերկրպագեցին գազանին և
ոչ էլ նորա պատկերին, և նորա
դրոշմը չառին իրանց ճակատի
և ոչ էլ իրանց աջ ձեռի վե-
րայ, և սորանք կենդանացան և
Քրիստոսի հետ թագաւորու-
թիւն արին հազար տարի. Իսկ 5
մեռելների մնացեալները չըկեն-
դանացան, մինչև որ հազար
տարին լրանայ։ Այս առաջի
յարութիւնն է։ Երանելի եւ 6
սուրբ է, որ բաժին ունի առաջի
յարութեան մէջ. սորանց վերայ
իշխանութիւն չունի երկրորդ
մահը. այլ Աստուծոյ և Քրիս-
տոսի քահանայք կ՚լինին. և նորա
հետ կթագաւորեն հազար տարի։
Եւ երբոր հազար տարին 7
կ՚լրանայ՝ կ՚արձակուի սատանան
իր բանտից. դուրս կ՚գնայ որ

* ՝Ի Յոյն, յայլոց անտի
† ՝Ի Յոյն, Երանելի և սուրբ է, որ ունի

զազգս ամենայն ընդ չորս կող-
մանս երկրի. և զԳոգ և զՄա-
գոգ առցէ ՝ի ձեռս՝ ժողովել
նոքօք զամենայն զօրս ՝ի պատե-
րազմ. որոյ թիւ նոցա իբրև
8 զաւազ ծովու։ Եւ ելցին ՝ի
լայնութիւն երկրի, և պատես-
ցին շուրջ զբանակս սրբոցն, և
9 զքաղաքին սիրելւոյ։ Եւ իջցէ
հուր յերկնից առ ՝ի Յաստու-
ծոյ՝ և կերիցէ զնոսա և զզօրա-
գլուխն նոցա զՍատանայ՝ որ մո-
լորեցոյց զնոսա. և արկցէ զնոսա
՝ի ծովն հրոյ և ծծմբոյ, ուր էր
10 գազանն՝ Եւ սուտ մարգարէն.
և չարչարեսցին զտիւ և զգիշեր։
11 Եւ տեսի աթոռ սպիտակ
մեծ. և ՝ի վերայ նորա նստեալ՝
յորոյ երեսացն երկնչէին և
փախչէին երկինք և երկիր, և
12 տեղի ո՛չ գտաւ նոցա։ Եւ տեսի
զմեռեալս մեծամեծս և ըզփո-
քունս, որ կային առաջի աթո-
ռոյն. և գրեանք բացային. և
այլ գիրք բացաւ կենաց, և
դատեցան մեռեալք ՝ի գրելոցն՝
13 ըստ գործոց իւրեանց։ Եւ ետ
ծով զմեռեալս իւր, և մահ և
դժոխք զիւրեանց մեռեալս. և
դատեցան իւրաքանչիւր ըստ
14 գործոց իւրեանց։ Մահ և
դժոխք մատնեցան ՝ի լիճ հրոյն.
15 (այս է մահն երկրորդ։) Եւ
որ ո՛չ ո՛ք գտաւ ՝ի գիրն կենաց
գրեալ՝ արկաւ ՝ի լիճ հրոյն։

մոլորեցնէ այն ազգերը, որ
երկրի չորս անկիւնումն են, և
Գոգը և Մագոգը, որ հա-
ւաքէ նորանց պատերազմի, ո-
րոնց թիւը ծովի աւազի չափ
է։ Եւ վեր գնացին երկրի 8
լայնութեան վերայ, և սրբերի
բանակը և սիրելի քաղաքը
շրջապատեցին։ Եւ երկնքիցը 9
կրակ իջաւ Աստուածանից և
լափեց նորանց. և Դիաւոլն
որ նորանց մոլորեցնում էր
գցուեցաւ կրակի և ծծմբի լիճը,
ուր որ էին գազանը և սուտ մար-
գարէն։ Եւ կ՚չարչարուին գիշեր 10
և ցերեկ յաւիտեանս յաւիտենից։
Եւ տեսայ մի սպիտակ մեծ 11
աթոռ, և նորա վերայ նստողին.
որի երեսից երկինքը և եր-
կիրը փախան. և տեղ չգտնուե-
ցաւ նորանց համար։ Եւ տե- 12
սայ մեռելները մեծ և փոքր
կանգնած աթոռի առջև. և
գրքեր բացուեցան, և մի ուրիշ
գիրք էլ բացուեցաւ, որ է կե-
նաց գիրքը. և մեռելներ դատուե-
ցան այն գրքերում գրուածնե-
րից իրանց գործքերի համեմատ։
Եւ ծովն իր մէջի մեռելները 13
տուաւ, և մահը և դժոխքը
իրանց մէջի մեռելները տուին. և
ամեն մէկն իրանց գործքերի
համեմատ դատուեցան։ Մահը 14
և դժոխքը գցուեցան կրակի
լճի մէջ. սա երկրորդ մահն
է։ Եւ եթէ մէկը գրուած 15
չգտնուեցաւ կենաց գրքի մէջ,
կրակի լճի մէջ գցուեցաւ։

ԳԼ. ԻԵ.

1 Եւ տեսի երկին նոր՝ և երկիր
նոր. քանզի առաջինն երկինք և
երկիր էանց. և ծով ոչ դոյր:
2 Եւ զքաղաքն սուրբ զնորն
Երուսաղէմ՝ տեսի՝ զի իջանէր
յԱստուծոյ՝ և յերկնից, զար-
դարեալ և պատրաստեալ որպէս
3 հարսն առն իւրոյ: Եւ լուայ
ձայն յերկնից՝ որ ասէր. Ահա-
ւասիկ խորանն Աստուծոյ 'ի
մէջ մարդկան, և բնակեսցէ ընդ
նոսա. և նոքա ժողովուրդ նմա.
4 և սա Աստուած նոցա: Եւ
ջնջեսցէ զամենայն արտասու յա-
չաց նոցա. և մահ ոչ ևս գոյ,
ոչ սուգ՝ և ոչ աղաղակ, ոչ
ցաւք՝ և ոչ աշխատանք ոչ ևս
5 գոյ, զի առաջինն էանց: Եւ
ասաց ցիս՝ որ նստէր 'ի վերայ
աթոռոյն. Ահաւասիկ առնեմ
զամենայն նոր. և ասէ ցիս,
Գրեա՛. այս բանք ճշմարիտ են
6 և հաւատարիմ: Եւ ասէ ցիս.
Եղէ՝ ես Ալֆա և Ով, սկիզբն
և կատարած. ես ծարաւեալոցն
տամ յաղբերէ ջրոյ կենաց ձրի:
7 Որ յաղթէ, ժառանգեսցէ զայս
ամենայն. և ես եղէց նոցա Աս-
տուած, և նոքա եղիցին ինձ որ-
8 դիք: Եւ ծուլացն և անհաւատից՝
սպանողաց և պոռնկաց՝ և կախ-
արդաց և կռապաշտից՝ և զեղա-
տուաց, և ամենայն ստոց՝ ամ-
բարշտաց, որոց բաժինն իւր-
եանց 'ի լճին այրեցելոյ հրով

ԳԼ. ԻԵ.

Եւ տեսայ նոր երկինք և նոր 1
երկիր. վասն զի առաջի երկինքը
և երկիրն անցաւ. և էլ ծով
չկայ: Եւ ես՝ Յովհաննէս 2
տեսայ սուրբ քաղաքը՝ նոր Ե-
րուսաղէմը վայր գալիս Աստ-
ուածանից երկնքիցը պատրաս-
տուած ինչպէս մի զարդարուած
հարս իր մարդու համար: Եւ 3
մի մեծ ձայն լսեցի երկնքիցն,
որ ասում էր. Ահա Աստուծոյ
խորանը մարդկանց հետ, և նա
կ'բնակէ նորանց հետ, և նո-
քանք կ'լինին նորան ժողովուրդ,
և ինքն Աստուած նորանց հետ
կ'լինի նորանց Աստուած: Եւ 4
կ'ջնջէ Աստուած բոլոր արտա-
սունքը նորանց աչքերից. և
մահն այլ ևս չի լինիլ, ոչ
սուգ, և ոչ աղաղակ. և ոչ
ցաւ այլ ևս չի լինիլ, վասն զի
առաջիններն անցան: Եւ ա- 5
թոռի վերայ նստողն ասաց.
Ահա ամեն բան նոր եմ անում.
և ասաց ինձ. Գրիր. վասն զի
այս խօսքերը ճշմարիտ և հա-
ւատարիմ են: Եւ ինձ ասաց. 6
Եղաւ. ես եմ Ալֆան և Օմե-
գան. սկիզբը և վերջը. ես ձրի
կ'տամ ծարաւին կենաց ջրի աղ-
բիւրիցը: Ով որ յաղթէ, ա- 7
մենը կ'ժառանգէ. և ես կըլի-
նիմ նորան Աստուած, և նա
կ'լինի ինձ որդի: Իսկ վախ- 8
կոտների և անհաւատների, և
պիղծերի և մարդասպանների

և ծծմբով. որ է մահն
երկրորդ:

9 Եւ եկն առ իս մի յեօթն
հրեշտակացն, որք ունէին
զեօթն սկաւառակսն լցեալս
եօթն վախճանաւ կատարա-
ծովք, խօսեցաւ ընդ իս և ասէ.
Եա՛կ՝ ցուցից քեզ զՀարսն և
10 զկին Գառնին: Եւ առ տարաւ
զիս 'ի լեառն մի բարձր և մեծ՝
հոգւովն. և եցոյց ինձ զքաղաքն
մեծ և սուրբ՝ Երուսաղէմ. զի
իջեալ էր յերկնից առ 'ի Ա-
11 ստուծոյ, Եւ ունէր զփառն Ա-
ստուծոյ. և էր 'ի նմա լուսա-
ւորութիւն, նմանեալ ականց
պատուականաց՝ քար յասպիս
12 սառնատեսակ և կենդանի: Եւ
էին պարիսպք նորա մեծ և
բարձր, և ունէր դրունս եր-
կոտասան. և յերկոտասան դը-
րունսն երկոտասան հրեշտակ,
և անուանք իւրաքանչիւրոցն 'ի
վերայ դրանցն գրեալ էին՝
ըստ երկոտասան ցեղիցն Ի-
13 սրայելի: Յարևելից կողմանէ
դրունք երեք, և 'ի հիւսիսոյ
կողմանէ դրունք երեք, և 'ի
հարաւոյ կողմանէ դրունք երեք.
և յարևմտից կողմանէ դրունք
14 երեք: Եւ պարիսպ քաղաքին
ունէր հիմունս երկոտասան, և
'ի նոսա երկոտասան անուանք
երկոտասան առաքելոց Գա-

և պոռնիկներին, և կախարդնե-
րի և կռապաշտների և ամեն
ստախօսների բաժինը այս ը-
ճումը կ'լինի որ կրակով և
ծծմբով վառուած է: Այա է
երկրորդ մահը:

Եւ այն եօթը հրեշտակներից 9
մէկը, որ եօթը սկաւառակ ու-
նէր վերջի եօթը պատուհաս-
ներովն լցուած, ինձ մօտ եկաւ,
խօսեց ինձ հետ և ասաց. Եկ
ցոյց տամ քեզ այն հարսը, որ
Գառի կինն է. Եւ առաւ տա- 10
րաւ ինձ հոգով մի մեծ և բարձր
լեառն, և ինձ ցոյց տուաւ այն
մեծ քաղաքը՝ սուրբ Երուսաղէ-
մը, որ վայր էր գալիս Աստ-
ուածանից երկնքիցը. Եւ Ա-
ստուծոյ փառքն ունէր. և նորա 11
լուսաւորութիւնը պատուական
ակունքի նման ինչպէս բիւրե-
ղացած յասպիս քար: Որ մեծ 12
և բարձր պարիսպ ունէր, և
տասներկու հրեշտակ, և նո-
րանց վերայ անուններ էին
գրուած որ Իսրայէլի որդոց
տասներկու ցեղերի անուններն
են: Արևելքից երեք դուռ, 13
հիւսիսից երեք դուռ, հարաւից
երեք դուռ, և արևմտից երեք
դուռ: Եւ քաղաքի պարիսպը 14
տասներկու հիմունք ունէր, և
նորանց վերայ Գառի տասներ-
կու առաքելոց տասներկու ա-
նուններն: Եւ ինձ հետ խօ- 15
սողը մի ոսկի եղէգ ունէր, որ
չափէ քաղաքը, և նորա դռնե-
րը, և նորա պարիսպը. Եւ 16

15 ոլոն։ Եւ որ խօսէրն ընդ իս,
ունէր եղէգն ոսկի ՚ի ձեռին
իւրում զի չափեսցէ զքաղաքն՝
և զդրունս նորա՝ և զպարիսպս
16 նորա։ Եւ էր քաղաքն քառա-
կուսի. և որչափ երկայնութիւն
նորա՝ նոյնչափ և լայնութիւն
և բարձրութիւն՝ հաւասար. և
էր չափ երկայնութեան նորա
երկոտասան հազար ասպարէզս.
և լայնութիւն նորա և բարձ-
17 բութիւն միաչափ՝ կիսկոս։ Եւ
չափեաց զպարիսպն նորա՝ հա-
րիւր և քառասուն և չորս աս-
պարէզս. չափ մարդոյ՝ որ է
18 հրեշտակի։ Եւ էր շինուած
պարսպաց քաղաքին յասպիս. և
քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման
սուրբ և սպիտակ ապակւոյ։
19 Եւ հիմունք քաղաքին յամենայն
ականց պատուականաց. հիմն
առաջին պարսպին յասպիս,
երկրորդն շափիղա, երրորդն
պղնձագոյն, չորրորդն զմա-
20 րուխտ, Հինգերորդն եղեգնա-
քար, վեցերորդն սարդիոն,
եօթներորդն ոսկեքար, ութե-
րորդն բիւրեղ, իններորդն տպա-
զիոն, տասներորդն քրիսոպրա-
սոս, մեռասանն յակինթ, երկո-
21 տասներորդն ամեթիստոս։ Եւ էին
երկոտասան դրունք յերկոտա-
սան մարգարտաց՝ միաձև. և
իւրաքանչիւրոցն դրունքն էին
մի մի դուռն՝ ՚ի միոյ միոյ մար-
գարտէ. և ընդարձակութիւն
քաղաքին ոսկի մաքուր՝ որպէս
22 ղապակի պայծառ։ Եւ տաճար
քաղաքը քառակուսի էր. և
նորա երկայնութիւնն այնչափ
է որչափ նորա լայնութիւնը, և
չափեց քաղաքը եղէգովը, և
նորա չափը տասներկու հազար
ասպարէզ, նորա երկայնութիւ-
ներ և լայնութիւնը և բարձրու-
թիւնը հաւասար են։ Եւ նորա 17
պարիսպը չափեց հարիւր և
քառասուն և չորս կանգուն.
մարդու չափով որ հրեշտա-
կինն է։ Եւ նորա պարիսպի 18
շինուածքը յասպիս էր.
և քաղաքը մաքուր ոսկի էր
խտակ ապակու նման։ Եւ քա- 19
ղաքի պարսպի հիմունքը զար-
դարուած էին ամեն ազնիւ ա-
կունքներով. առաջին հիմը
յասպիս, երկրորդը շափիղայ,
երրորդը քաղկեդոն. չորրորդը
զմրուխտ, Հինգերորդը և- 20
ղեգնաքար, վեցերորդը սար-
դիոն, եօթներորդը ոսկեքար,
ութերորդը բիւրեղ, իններոր-
դը տպազիոն, տասներորդը քրի-
սոպրասոս, տասնեմեկերորդը
յակինթ, տասներկուերորդը ա-
մեթիստոս։ Եւ տասներկու դու- 21
ռը տասներկու մարգարիտից՝ ա-
մեն մեկ դուռը մեկ մարգարի-
տից. և քաղաքի հրապարակը
մաքուր ոսկի ինչպէս թափան-
ցիկ ապակի։ Եւ տաճար չըտե- 22
սայ նորա մէջ, վասն զի Տէր
Աստուած Ամենակալը և Գառն
է նորա տաճարը։ Եւ քաղաքը 23
ոչ արեգական և ոչ լուսնի
պէտք չունէր, որ լոյս տան

ոչ տեսի ՚ի նմա, քանզի Տէր
Աստուած Ամենակալ տաճար
23 էր ՚ի նմա՝ և Գառն։ Եւ
քաղաքին չէին պէտք արեգական
և լուսնի, զի լուսաւորեսցեն
զնա. քանզի փառքն Աստուծոյ
լուսաւորէին զնա յամենայն
ժամ, և ճրագ ՚ի նմա Գառն։
24 Եւ գնային հեթանոսք ՚ի լոյս
նորա. և թագաւորք երկրի
լուսազգեաց լինէին ՚ի փառաց
25 նորա։ Եւ դրունք նորա ոչ
փակէին ՚ի տուէ և ՚ի գիշերի,
այլ բաց կային հանապազորդ.
և գիշեր ոչ ևս լինէր ՚ի նմա.
26 Ամենայն փառք և պատիւ ազգաց։
27 Եւ ոչ մտցէ անդ ամենայն
չարակամ՝ և պիղծ և ստու-
թիւն, բայց միայն որ գրեալ են
՚ի գպրութիւն կենաց Գառինն։

ԳԼ. ԻԲ

1 Եւ ցոյց տուաւ ինձ մաքուր գետ
կենդանի ջրոյ սառնատեսակ, որ
ելանէր յաթոռոյն Աստուծոյ և
2 Գառինն։ Եւ գնայր ՚ի մէջ
հրապարակաց քաղաքին. և
զեղերք գետոյն աստի և անտի
ծառ կենաց՝ որ բերէր պտուղս
երկոտասան. ըստ միոյ միոյ
ամսոյ տային զպտուղս իւրեանց.
և տերև ծառոյն էր բժըշկու-
3 թիւն հեթանոսաց։ Եւ նզովք
անդ ոչ ևս էին. և աթոռն Ա-
ստուծոյ և Գառին նորա էր ՚ի
նմա. և ծառայք նորա պաշտէին
նորա մէջ. վասն զի Աստուծոյ
փառքը լուսաւորում էր նորան,
և նորա ճրագը Գառն էր։
Եւ փրկեալների ազգերը նորա 24
լուսովը պիտի գնան. և երկրի
թագաւորները իրանց փառքը
և պատիւը կ՚բերեն նորա մէջ։
Եւ նորա դռները չեն փակուիլ 25
ցերեկը, վասն զի գիշեր չի
լինիլ այն տեղ։ Եւ ազգերի 26
փառքը և պատիւը կ՚բերեն նորա
մէջ։ Եւ բնաւ չի մտնիլ նորա 27
մէջ ոչ մի անմաքրութիւն անող
և պղծութիւն և ստութիւն
գործող, բայց միայն նորանք որ
Գառի կենաց գրքի մէջ գրուած
են։

ԳԼ. ԻԳ

Եւ ցոյց տուաւ ինձ մի մա- 1
քուր գետ, կենդանի ջրի ակն-
վանու նման փայլուն, որ դուրս
էր գալիս Աստուծոյ և Գառի
աթոռից։ Եւ նորա հրապարակի 2
միջումը և գետի այս կողմին և
այն կողմին կենաց ծառ կայ, որ
տասներկու կերպ պտուղ էր
բերում. ամեն մէկ ամիս տալիս
էր իր պտուղը. և այն ծառի
տերևը հեթանոսներին բըժըշ-
կում էր։ Եւ այլ ևս նզովք 3
բնաւ չի լինիլ. և Աստուծոյ և
Գառի աթոռը նորանում կ՚լինի.

4 զնա. Եւ տեսանէին զերեսս
նորա. և անուն նորա գրեալ էր
5 'ի ճակատս նոցա: Եւ գիշեր
ոչ անդ՝ և չէր ինչ անդ պէտք
ճրագի և լուսոյ արեգական.
վասն զի Տէր Աստուած լու-
սաւորէր զնոսա. և թագա-
ւորեսցեն յաւիտեանս յաւի-
տենից:

6 Եւ ասէ ցիս. Այս բանք
հաւատարիմ է և ճշմարիտ. և
Տէր Աստուած մարգարէից
սրբոց՝ առաքեաց զհրեշտակ
իւր՝ ծառայիդ իւրում ցու-
ցանել՝ զոր լինելոց է վաղվաղա-
7 կի: (Եհա գամ վաղվաղակի.)
երանի՛ որ պահէ զբան մար-
գարէութեանս զայս:

8 Եւ ես Յովհաննէս լուայ՝ և
տեսի զայս ամենայն. և յորժամ
լուայ և տեսի, անկայ և երկիր
պագի հրեշտակին՝ որ ցուցանէր
9 ինձ զայս ամենայն: Եւ ասէ
ցիս. Ա՛ի անկանիր առաջի իմ և
երկիրպագաներ. քանզի և ես
ծառայակից քո եմ և եղբարց
քոց՝ որ պահեսցեն զբան մար-
գարէութեան գրոյս այսորիկ.
10 Աստուծոյ երկիր պագ: Եւ
ասէ ցիս դարձեալ. Ա՛ի կնքեր
զբանս մարգարէական գրոյս
այսորիկ. քանզի ժամանակս
11 մերձ է: Որ ամբարշտելոցն է՝
ամբարշտեսցի, և որ աղտե-
ղանալոցն է՝ աղտեղասցի, և որ
արդարանալոցն է՝ արդարասցի,
և որ սրբելոցն է՝ սրբեսցի:

և նորա ծառաները կ'պաշտեն
նորան: Եւ նորա երեսը կը-
տեսնեն, և նորա անունը նորանց 4
ճակատների վերայ: Եւ գիշեր 5
չի լինիլ այնտեղ, և ճրագի և
արեգակի լոյս պէտք չէր նո-
րանց. վասն զի Տէր Աստուածը
լուսաւորում է նորանց, և
կ'թագաւորեն յաւիտեանս յա-
ւիտենից:

Եւ ասաց ինձ. Այս խօսքերը 6
հաւատարիմ և ճշմարիտ են. և
Տէրը՝ սուրբ մարգարէից Աս-
տուածն իր հրեշտակն ուղար-
կեց որ իր ծառաներին ցոյց տայ
այն որ շուտով պիտի լինի: Եհա 7
շուտով գալիս եմ. երանի նորան
որ այս գրքի մարգարէութեան
խօսքերը պահում է:

Եւ ես Յովհաննէս՝ այս 8
բաները լսող և տեսնող, և
երբոր լսեցի և տեսայ, ընկայ
որ երկրպագեմ այն հրեշտակի
ոտքերի առջև, որ այս բաները
ցոյց էր տալիս ինձ: Եւ ինձ 9
ասաց. Օգուշացիր. մի անիր.
վասն զի ես ծառայակից եմ քեզ
և քո եղբայր մարգարէների և
այս գրքի մարգարէութեան
խօսքերը պահողների. Աստու-
ծոյն երկրպագիր: Եւ ասաց 10
ինձ. Մի՛ կնքիր այս գրքի մար-
գարէութեան խօսքերը. վասն
զի ժամանակը մօտ է: Անի- 11
րաւութիւն գործողը թող էլ
անիրաւանայ, և կեղտոտը թող
էլ կեղտոտուի, և արդարը թող
էլ արդարանայ, և սուրբը թող

12 Եհա գամ վաղվաղակի՝ և
վարձք իմ ընդ իս, հատու-
ցանել իւրաքանչիւր ըստ գործս
13 իւրեանց: Ես եմ Ալֆայ և
Ով, սկիզբն և կատարած,
առաջին և վերջին:

14 Երանելիք են՝ որ պահեն
զպատուիրանս նորա. նոքա ունին
իշխանութիւն ուտել 'ի փայտէն
կենաց՝ և մտանել ընդ դրունս
15 քաղաքին: Այլ ելցեն արտաքս
շունք և գեղատուք և սպանողք
և կռապաշտք, և ամենեքեան
որ սիրեն զստութիւն:

16 Ես Յիսուս առաքեցի զհրեշ-
տակ իմ վկայել զայս ձեզ
եկեղեցեացդ. ես արմատ և սեռ
'ի Դաւթայ, և աստղ պայծառ
17 առաւօտին: *Եւ Հոգի, և
փեսայն՝ որ գալոցն եմ. և որ
լսէ՝ ասելով թէ Եկ, և որ
ծարաւի իցէ՝ եկեսցէ, և որ ոք
կամիցի՝ առցէ զջուրն կենաց ձրի՝:

18 Վկայեմ և ես ամենայնի որ
լսէ զբանս մարգարէութեան
գրոյս այսորիկ. թէ ոք յաւելցէ
'ի սա, յաւելցէ Աստուած 'ի
վերայ նորա †զկնոթն հա-
րուածսն՝ գրեալս 'ի գիրս յայս:
19 Եւ եթէ ոք պակասեցուսցէ 'ի

12 էլ սրբուի: Եւ ահա շուտով
գալիս եմ և իմ վարձքն ինձ
հետ, որ ամեն մէկին կըհա-
տուցանեմ ինչպէս իր գործքը
կը լինի: Ես եմ Ալֆան և 13
Օմեգան. սկիզբն և վերջն,
առաջինն և վերջինն:

Երանելի են նորա պատուի- 14
բանքները պահողները. որ նո-
բանցը կ'լինի իշխանութիւնը
կենաց ծառի վերայ, և քաղաքի
դռնովը ներս կ'մտնեն: Այլ 15
դուրսն են շները և կախարդները
և պոռնիկները և սպանողները
և կռապաշտները. և ամեն ստու-
թիւն սիրողն ու գործողը:

Ես Յիսուս իմ հրեշտակն 16
ուղարկեցի որ վկայէ ձեզ այս
բաները եկեղեցիների մասին.
ես եմ Դաւթի արմատը և
ցեղը և առաւօտեան պայծառ
աստղը: Եւ Հոգին և հարսն 17
ասում են. Եկ և լսողն ասէ,
Եկ. և նա որ ծարաւ է՝ թող
գայ, և նա որ կամենում է՝
թող առնէ կենաց ջուրը ձրի:

Վասն զի ես վկայում եմ 18
ամենին որ լսում է այս գրքի մար-
գարէութեան խօսքերը. եթէ
մէկը բան աւելացնէ սորանց
վերայ, Աստուած կ'աւելացնէ
նորա վերայ այն պատուհաս-
ները որ այս գրքումը գրուած

* 'Ի Յոյն., Եւ Հոգի և հարսն
ասեն՝ Եկ. և որ լսէ՝ ասասցէ, Ե՛կ,
և որ ծարաւի իցէ՝ եկեսցէ, և որ ոք
կամի՝ առցէ զջուրն կենաց ձրի

† 'Ի Յոյն., Հե՛ء:

50n.

բանից մարգարէութեան գրոյս այսորիկ՝ պակասեցուսցէ և
հատցէ Աստուած զբաժին նորա
'ի ծառոյն կենաց և 'ի քաղաքէն
‡ սրբոց՝ որ գրեալ է 'ի գիրս
20 յայս։ Ասաց՝ որ վկայեացն
զայս. Վասն՝ ես վաղվաղակի.
Ամէն։ Եկ՝ Տէր Յիսուս Քրիս-
տոս։

21 Շնորհք Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի 'ի վերայ ամե-
նայն սրբոց. Ամէն։

* 'Ի Յոյն, սրբոյ

են։ Եւ եթէ մէկն այս գրքի 19
մարգարէութեան խօսքերիցը
բան պակասեցնէ, Աստուած
կ'պակասեցնէ նորա բաժինը
կենաց գրքիցը, և սուրբ քա-
ղաքիցը, և այս գրքում գրուած-
ներիցը։ Այս բաներին վկայողը 20
ասում է. Այո. ես շուտով գա-
լիս եմ։ Ամէն։ Եկ, Տէր Յի-
սուս։

Ո՛ւր Տէր Յիսուսի Քրիս- 21
տոսի շնորհքը լինի ձեր ամենների
հետ. Ամէն։

ՎԱԽՃԱՆ

ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Ну ичная библиотека
7/ 1922
именид Мясни и на
Ա. ՄԱՍԻ ԱՆՎԱՆ
ԱՀ

9704
1286

«Ազգային գրադարան»
NL0028198